ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ

ИНСТИТУТ ИСТОРИИ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

МАТЕРИАЛЫ ПО ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА
КНИГА ВТОРАЯ

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ
АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ
XIV ВЕКА

Составил
Л. С. ХАЧИКЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1950

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47·925)
Լիակ.
091 (=91.99)
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 1961

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԺԴ ԴԱՐԻ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ա III 2469

կազմեց
Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1950

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Միջնադարյան հայերեն ձեռագրերի հիշատակարանները, նման վիմական արձանագրություններին, այն կարևոր սկզբնաղբյուրներն են, որոնց հավաքումն ու գիտական սկզբունքներով հրատարակությունը նպաստելու է հայ ժողովրդի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրությունը խորացնելու գործին: Նրանցում ուշագրավ նյութեր կան նաև հարևան ժողովուրդների՝ վրացիների ու ադրբեջանցիների, և հայկական գաղթավայրերի պատմության մասին:

Սույն ժողովածուն ընդգրկում է ԺԴ. դարի բոլոր հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք մատչելի են եղել կազմողին: Ըստ որում 513 հիշատակարան քաղված է Հայկական ՍՍՌ Միջիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատան (Մատենադարան) ձեռագրերից և 332 հիշատակարան՝ անտիպ ու հրատարակված ձեռագրաց ցուցակներից:

Դրանց մեծագույն մասը հրատարակվում է առաջին անգամ:

Պատմության Ինստիտուտ

Ա. Ի Ա. Ջ Ա. Բ Ա. Ն

Ձեռագրերի գրիչները ու պաշվիրատուները, կազմողներն ու նորոդողները, ընթերցողների հիշատակությանն արժանանալու ակնկալությամբ, ձեռագրերի վերջում և առանձին հատվածների ավարտից հետո թողել են սեղմ ու համառոտ հիշատակարաններ։ Այդ հիշատակարաններում նրանք հայտնել են իրենց մասին որոշ կենսագրական տեղեկություններ, նկարագրել են ձեռագրերի գրչության, նորոգման կամ գնման հանգամանքները, հիշելով ժամանակի աշխարհիկ ու հոգևոր տերերին՝ ժամանակագրական տվյալներ են թողել նրանց մասին, և, շատ հաճախ, նկարագրել են իրենց ժամանակի պատմությունը՝ երկրի վիճակը, քաղաքական անցուդարձերը և այլն։

Դրանք անգնահատելի վաստակից սկզբնաղբյուրներ են ժամանակի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրման համար։ Որպես այդպիսիք, համեմատած այլ կարգի պատմական սկզբնաղբյուրների հետ, նրանք ունեն ուշագրավ առանձնահատկություններ.

ա) Գրված լինելով պատմվող դեպքերին ականատես ու ականջալուր մարդկանց կողմից, նրանց հաղորդած տեղեկությունները վստահելի են. ժամանակագրական ու պատմական անճշտություններ ու սխալներ զրեթե իսպառ բացակայում են հիշատակարաններից։

բ) Նրանց հեղինակները, ըստ մեծի մասին, լինելով հաստրակության աշխատավոր խավերից դուրս եկած զրագետներ և կամ ստորադաս եկեղեցական պաշտոնյաներ, մոտ են կանգնած եղել ժողովրդին։ Նրանք աշխատավորների կրած զրկանքների, աշխարհավեր արշավանքների, ծանր հարկերի ու բռնադատության մասսայական ու կոնկրետ փաստերի թարմ ազդեցության ներքո գրանցել են այնպիսի կարևոր պատմական տվյալներ, ինչպես և կենցաղային մանրուքներ, որ անտեսվել կամ վրիպել են միջնադարյան պատմագրիներից շատերի տեսադաշտից։

գ) Ըստ այդմ էլ, ի տարբերություն միջնադարյան պատմիչների, որոնք, լինելով գերազանցապես տիրապետող վերնախավերի և քրիստոնեական եկեղեցու իդեոլոգներ, պատմական անցուդարձերը դիտել ու մեկնաբանել են իրենց դասակարգային նեղ շահերի պարփակ ու բեկբեկուն պրիզմայի տակ, հիշատակագիրները, ընդհակառակը, երևույթներն ու պատմական անցուդարձերը դիտել են այլ դիտակետից ու տեսանկյունով։ Նրանք իրենք կրել են ժամանակի արհավիրքների դառնությունը, վշտացել են ժողովրդի վշտով, ուստի և, համեմատաբար, օբեկտիվ կերպով են նկարագրել ու գնահատել պատմական եղելությունները։

Այս ուշագրավ ու կարևոր արժանիքների հետ մեկտեղ, հիշատակարանները, որպես պատմական սկզբնաղբյուր, ունեն մի շարք թերություններ ու բացասական կողմեր։

ա) Հիշատակարանները մեծ մասամբ գրվել են գոյություն ունեցող օրինակելի համարված կաղապարով։ Ըստ այդ կաղապարի՝ հիշատակագիրը մի ընդարձակ, երբեմն մի քանի էջ բոնող, «փառք» է ձոնում սուրբ երրորդությանը, որի բարյացակամությամբ ու խնամքով, իբր, կարողացել է ավարտել ձեռագրի ընդօրինակությունը, նա դրվատում է ընդօրինակված ձեռագրի բովանդակությունը աստվածաբանական տարտամ ու անարժեք դատողություններով։ Այնուհետև, գովեստի ու մեծարանքի անամեջ տողերի է արժանանում ձեռագրի պատվիրատուն կամ գնորդը՝ ըստ էության աննշան մի անձնավորություն։ Ամենուրեք նա հանդես է գալիս որպես «աղքատասեր», «հեղահոգի», ընդարձակորեն դրվատվում են նրա «բարեմտնություններ», հիշատակության են արժանանում, և հաճախ մի քանի անդամ, նրա մերձավոր և հեռավոր աղգականները և այլն։ Դրանից հետո միայն գրիչը խոսում է իր մասին, հայտնում է իր ով լինելը, վատաբանում է իրեն որպես «տգետ», «անխմաստ», ու «մեղապարտ», կոչում է իրեն «փծուն» ու «անարհեստ», նույնիսկ այն դեպքում, երբ մեծ չնորհքի ու արվեստի տեր, դեղեցկագիր գրիչ է, և այլն։

Հիշատակարանի պատմական ու. ամենաարժեքավոր մասը տրվում է միայն վերջում, այստեղ է, որ հիշատակագիրը համեմատաբար ազատ է դրում իրեն ճնշող կաղապարից և ընդունված նորմերից, իր ընդունակության ու կարողության չափով։ դիտում է շրջապատը և մի քանի տողերով նկարագրում այն դառն ժամանակը, որի ընթացքում, ծանր դրկանքների գնով, հաջողվել է իրեն ի կատար ածել տվյալ ձեռագրի ընդօրինակությունը կամ նկարագարդումը։

բ) Հիշատակարանների մյուս բացասական կողմը գրիչների սահմանափակվածությունն է։ Նրանց տեսադաշտի հորիզոնը շատ նեղ է, սակավ դեպքերում է միայն դուրս գալիս իրենց բնակավայրի կամ վանքի նեղ շրջանակից։ Ազգաքական խոշոր անցուդարձերը, պատերազմական գործողությունները, սակավ բացառությամբ, նրանց հետաքրքրում ու հուզում են այն ժամանակ միայն, երբ դեպքերի շրջապտույտը իր մեջ է առնում նաև տնտեսական կապերով արտաքին աշխարհից կտրված նրանց բնաշխարհը։ Նրանք պատմական իրադարձությունների շղթայի միայն մի օղակն են նկատում, ուստի և, շատ ավելի մեծ չափով քան մշջնադարյան պատմիչները, զուրկ են դեպքերը կապակցելու, օրինաչափություններ որոնելու հնարավորությունից։

Մոնղոլ բռնակալները ծանրացնում են հարկային լուծը, կեղեքում ու մաշկում են ժողովրդին, սուն ու համաճարակները հազարավոր զոհեր են կլանում, մորեխն ամայացնում է դառն քրտինքով աճեցրած դաշտերը, հիշատակագիրները այդ բոլորը, տիրող կղերական մտայնության ազդեցությամբ, բացատրում են իրենց գործած ծանր մեղքերով։ «Վասն ծովացեալ մեղաց մերոց», ահա պատրաստի այն բանաձևը, որով պատճառաբանում են հիշատակագիրները իրենց ժամանակի բոլոր արհավիրքներն ու աղետաբեր իրագարձությունները։

Նշված բացասական կողմերով հանդերձ, հիշատակարանները, կրկնում ենք, միջնադարյան կյանքի բազմապիսի երևույթների, երկրի քաղաքական ու կուլտուրական կյանքի պատմության լուսաբանմանը նպաստող առաջնակարգ սկզբնաղբյուրներ են։

* * *

Հիշատակարանների արժեքը ավելի է մեծանում և նրանք ավելի խոշոր դեր են ոտանձնում կատարելու այնպիսի ժամանակաշրջանների ուսումնասիրման համար, որոնց մասին պատմական գրվածքներ մեզ չեն հասել, կամ հասել են աննշան քանակությամբ։ Այդպիսի դարերից է ԺԴ. դարը։

ԺԴ. դարում Հայաստանի անասնական ու սոցիալական կյանքում տեղի ունեցան խոշոր տեղաշարժեր։ Առևտրի ու արհեստների ծաղկուն կենտրոններ հանդիսացող բազմաթիվ մարզաշատ քաղաքները՝ Անին, Կարսը, Ծլաթը, Մանազկերտը, Արճեշը, Վանը, մոնղոլական էլդանուբյան հարկային դիշատիչ քաղաքականության և քոչվորական հորդաների երկրի արոտավայրերում հաստատվելու հետևանքով, վերջնականապես ղրկվեցին իրենց երբեմնի առևտրական սերտ կապերից արևելյան և արևմտյան երկրների հետ, և տնտեսական քայքայման տևական ընթացքով վերածվեցին արտաքին աշխարհից կտրված, ինքնամփոփ բնակատեղերի։ Սկսվեց քաղաքային բնակչության՝ առևտրականների ու արհեսաավորների, ինչպես նաև գյուղացիական շերտերի մասսայական գաղթ աշխարհից-աշխարհ, երկրից-երկիր, հատկապես դեպի Ղրիմ, Սուլթանիա, Սարայ և այլ վայրեր։

Այդ նույն ժամանակաշրջանում մոնղոլները իրագործեցին նաև հայ ֆեոդալական տների կալվածքների գրավման ու իրավունքների սահմանափակման քաղաքականությունը։ ԺԴ. դարի կեսերին արդեն հայ ֆեոդալական խոշոր ընտանիքները՝ Օրբելյանները, Գռուշյանները, Դոփյանները, Վաչուտյանները և ուրիշները, ապրում էին իրենց հոգևարքը և երկրի քաղաքական կյանքում ակտիվ դեր չէին խաղում։ Հայ եկեղեցին միայն, ծառայագրվելով երկրի հարստահարիչներին, կարողացավ հիմնականում դերծ պահել իր տիրույթները բռնագրավումից, և, որոշ առումով, շարունակել իր գոյությունը որպես խոշոր ֆեոդալական հաստատություն։

Երկրի կուլտուրական կենտրոնները, որ դարի սկզբին, վայելելով Օրբելյանների և Գռուշյանների հովանավորությունն ու տնտեսական աջակցությունը, կուլտուրական խոշոր դեր էին կատարում, աստիճանաբար տկարացան ու մասնատվեցին։ Գլաձորյան համբավավոր համալսարանը ԺԴ. դարի կեսերին արդեն գոյություն չուներ։ Հովհան Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին իրենց դասախոսությունները շարունակեցին շատ ավելի անբարենպաստ պայմաններում, հաճախ ստիպված լինելով վայրից-վայր տեղափոխվել։ Այնուամենայնիվ, չնայած անբարենպաստ տնտեսական ու քաղաքական կացության, ԺԴ. դարի կուլտուրական հաստատությունները կարողացան ուժեղ դոտեմարտերով սանձել երկրի սրտում բուն դրած կաթոլիկ միսիոնարների ու նրանց հայ հետնորդների ասիմիլատորական ձգտումները։

Դրությունը մխիթարական չէր նաև Կիլիկիայում, որտեղ հայ պետականությունն ապրում էր իր հոգևարքը, պայքար մղելով հյուսիսից՝ սելջուկյան էմիրությունների, հարավից՝ եգիպտական մամլուկների դեմ։ Այդ անհավասար մարտերում, 1375 թվին, վերջնական հարվածով ընկավ Կիլիկյան Հայաստանի անկախությունը։

Տնտեսական որոշ բարենպաստ պայմանների մեջ էր գտնվում Ղրիմի

հայ ղաղուքը, որն իր կուլտուրական կապերը պահպանելով մայր եկեղեցու և կիլիկիայի հետ, դեռևս ղեկավար դեր էր խաղում կուլտուրական արգելիների շարունակման ու զարգացման գործում։ Ժդ. դարի հայերեն ձեռագրերի մի զգալի մասն ընդօրինակված է Ղրիմում։

Քաղաքական, տնտեսական ու կուլտուրական այս երևույթները Ժդ. դարի հիշատակարանների նյութերով զառնում են շատ ավելի պարզ և մեկնաբանելի։

Հայտնի է, օրինակ, որ մոնղոլները, Ղազան խանի (1295—1304) ժամանակ, ընդունելով իսլամը, ծանրացնում են հարկային լուծն ու կրոնական հալածանքները Հայաստանում, սակայն հիշատակարաններն են միայն, որ հարուստ տվյալներով պարզում են աշխատավոր ժողովրդի կրած տառապանքների ծանրությունը այդ ժամանակ։

Դանիել Աղթամարեցի գրչի խոսքերով այդ ժամանակ «գաւրացաւ ազգն Իսմայէլի այնչափ, մինչև զարձուցին յիւրեանց ոմնոցի յոյն զամենայն ազգն նևտողաց...։ Եւ նեղին զամենայն քրիստոնեայք դառնալ ի սատիկ յոյն իւրեանց, զոմն նեղեն, զոմն սանջեն, զոմն ոպանանեն, զոմանց զինչն յափշտակեն. և ոչ այնու շահացեալք, այլ և եղին ի վերա ամենայն քրիստոնէիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերա ուսոց քիկանցն կտաւս սեաւս, զի որք տեսցեն զնոսա, ճանաչեսցեն եթէ քրիստոնեայք են և հայհոյեսցենն» (էջ 47)։*

Դրված հարկի քանակը հայտնում է մի այլ հիշատակագիր.

«Առաքեալ [զանն Ղարբանդա],—գրում է նա,—ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և հարկ առնուլ ըստ մարդաթուի Խ. (40) արծաթս մինչ ի Ժ. (10)՝ ըստ կարի» (էջ 46)։

Հարկերն այնքան ծանր էին, որ ժամանակակիցների համար այլևս չկար «յոյս ապաւինի և ոչ տեղի ապաստանի», ուստի շատերը, ստիպված, ի դիմաց հարկի վաճառելին զաղայս իւրեանց, և ինքեանք փախուցեալ յայլևայլ տեղիս» (էջ 102)։ Հարկի դիմաց երեխաների վաճառքի մասին կարևոր է նաև Սարկավագ գրչի 1310 թվին գրած հիշատակարանի տվյալը, նա հայտնում է, որ «ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեալ լինին ուստերք և դստերք աշխարհիս մեր, և լսեցաք գեղք և վանորայք՝ աւեր և անհանդիստ» (էջ 66)։

Կ. Մարքսը, խոսելով մոնղոլական տիրապետության մասին Ռուսաստանում, հայտնում է, որ այն «մի լուծ էր, որը ոչ միայն ճնշում, այլև վիրավորում ու մաշում էր նրա գոհ դարձած ժողովրդի հոգին։ Մոնղոլ թաթարները հաստատեցին սիստեմատիկ ահարեկման մի ռեժիմ, որի գործիքն էին կողոպուտն ու մասսայական կոտորածները»։ Ինչպես ցույց են տալիս հիշատակարաններում գրված տվյալները, Մարքսի այս բնորոշումը, առանց վերապահության, վերաբերում է նաև մոնղոլական լծի տակ ընկած Հայաստանին։

Այդ լծի տակ կեղեքվող, ծայր աստիճանի թշվառության հասած ժողովրդից հարկերի գանձումը, անշուշտ, հեշտ չէր, և փախուստի ոլիմոզների

* Հիշատակարաններից մեջ բերվող հատվածների համար ամենուրեք ցույց ենք տալիս սույն ժողովածուի էջահամառները։

ու իրենց որդիներին վաճառքի հանողների կողքին կային նաև այնպիսիք, որոնք կազմակերպում էին դիմադրություն և հրաժարվում հարկատվությունից։ Այդ իսկ պատճառով հարկահանությունը վեր է ածվում փոքր մասշտաբի պատերազմական գործողության, որին մասնակցում էին հազարից ավելի սպառազեն զինվորներ։ Այդ մասին է վկայում 1318 թվին մի հիշատակագիր, նա գրում է՝

«Դարուն առին զնարկն և աշունն դանն [Ղարբանդա] մեռաւ եւ այլ եկին. ոմն անուն Ազլադու, Սինթամուր և Հասանթամուր ՌԴՃ. (1300) մարդով և կրկին հարկ առին՝ յոյժ անչափ, և ոչ ոք ընդդիմացաւ նոցա» (էջ 138)։

Հարկերից բացի, մոնղոլ բռնակալները նշանակում էին ամենաթողը հանցանքների համար մեծ տուգանքներ և զրպարտություններ բարդելով ռեփականում էին ունևոր մարդկանց գույքն ու ունեցվածքը։

1349 թվին Սարդիս հիշատակագիրը ողբում է «զաոնացեալ ու վըշտացեալ» իր ժամանակը և հայտնում, որ մոնղոլները «զոմանց ինչս յափըշտակին, և զոմանս տուգանեն, և զոմանց տունս բռնատանաւք և հերձաւք և դուր բանիւք աւերել ջանան» (էջ 379)։

Արու-Սուլիդ դանի մահվանից հետո (մհ. 1335 թ.) մոնղոլական էլզանությունն ապրում է իր քայքայման պրոցեսը, սկսվում է մի ջֆեոդալական անընդհատ պատերազմների ու բախումների մի ժամանակաշրջան։ Մեկը մյուսին հաջորդում են կարճակյաց բռնակալները, որոնք անզոր էին խաղաղություն հաստատելու։ Այդ ժամանակ երկիրն ամենուրեք ամայանում է, տիրում է սով, գերեվարություն, կոտորած ու ավեր։

Պատերազմների և աշխարհակործան արշավանքների ոչ լրիվ ատեգրությունը ըստ հիշատակարանների պատկերվում է հետևյալ կերպ։

1336 թ.—Իկոնիայի թուրքմենները հարձակվում են Բասենի վրա և մեծ ավերածություն գործում։

— Նույն թվին Հալեպի նայիպ Ալթուն-Պուղան արշավում է Կիլիկիա, արշավանքը կրկնում է նաև հաջորդ՝ 1337 թվին։ Նրա բանակները, ինչպես հաղորդում է Ներսես Կրակցի գրիչը՝ «աւերեցին զերկիրս՝ զլեառն ու զդաշտս, ու արին բազում սպանուածս, ուառին անթիւ ծառայս» (էջ 295)։

1338 թ.—Իկոնիայի թուրքմենները, Թամուրթաշի գլխավորությամբ, 4 ամիս պաշարում են Երզնկան և կոտորում ու գերում շրջակայքի խաղաղ բնակչությանը։ Այդ առթիվ Մելքիսեդեկ գրիչը հայտնում է.

«Զի եւ ոմն անուն Դամուրտաշ
Եւ արար զազգս մեր ի մաշ...» (էջ 306)։

1343 թ.—Ներսես գրչի խոսքերով՝ «Մուլայիման զանն գնաց ի Յաբաքնին վերայ՝ ի Սերաստիա» (էջ 334)։

1346 թ.—«Մեծ մայրաքաղաքն Թէոդուպալիս անապատ եղեւ ի մարդոյ եւ յանասնոյ ի յազգէն հագարու եւ իսմայելացոցն» (էջ 346)։

1355 թ.—«Անբարեսէր մարդիկ բռնացեալ ունէին զաշխարհս ամենայն, և ամրանային ի զ[ղ]եակս, ի քաղաքս՝ մի զմիմեանս երանելով» (էջ 411)։

1357 թ.—Ծեզի է ունենում Ոսկե Հորդայի դան Ջանիբեկի և Աղբեջանի բռնակալ Մելիք-Աշրաֆի (1341—57) միջև ավերիչ պատերազմ։

1360 թ.—Հալեպի ամիրա Պայտամուրը, «Մսրայ զօրօք», արշավում է Կիլիկիա և գրավում Ատանան ու Տարսոնը (էջ 451)։

1361 թ.—«Անաւրէն դատաւորն՝ տոճիկ Պաքիլն», գրում է ոմն հիշատակագիր, ղերում է «զերկիրն Շիքարոյ և Խարղբերդոյ» և զերիներին վաճառում «ընման ոչխարի» (էջ 451)։

1367 թ.—Տարոնի ամիրա Մինչոքը արշավում է Կիլիկիա «բազում հիծմանն հիծելով և այլ շատ հիտիվալուաք, որ էին իրրև ԺԲՌ. (12000) մարդ, և այլ ավելի» (էջ 477)։

1371 թ.—Հիշատակագիր Սիմեոնը հայտնում է, որ «ազգն Պարսից եկեալ ղԲերկրի գերեցուցին և զԲանդումահի Թալանեցին» (էջ 499)։

1375 թ.—Եգիպտական Սուլթանի զորքերը պաշարում և գրավում են Սիսը, «Էատ Ցաշէլի Թամուրն զԲաղաւորական քաղաքն զՍիս և եղև սուգ մեծ» գրում է մի հիշատակագիր (էջ 516)։ Այսպիսով վերջ է տրվում Կիլիկիայի անկախությանը։

1387 թ.—Սկսվում են Թամուր-Լանկի աշխարհավեր արշավանքները, որոնց մասին շատ արժեքավոր տվյալներ ու աղեկտուր մանրամասնություններ են հաղորդում դեպքերին ականատես բազմաթիվ հիշատակագիրներ (տես էջ՝ 567, 569, 573, 575, 578, 589, 599, 627—629 և այլն)։

1392 թ.—Ամիր-Եղդինը գրավում է Ոստանը։ «Շատ պակասութիւն էտծ քրիստոնէից» հայտնում է ստացող Սիմեոնը։

Պատերազմների ու արշավանքների հարատև այս փոթորիկների մեջ աշխատավոր ժողովուրդը մասսայաբար բնաջնջվում էր կամ ծայր աստիճանի թշվառության հասնում։ Պատերազմներն իրենց հետ բերում էին կոտորած, մահ, վախուստ, նյութական ու հոգևոր արժեքների ոչնչացում և այլ արհավիրքներ։

Հիշատակարաններում հարուստ ու հետաքրքրական նյութեր կան, որոնք լուսաբանում են սփոում ժողովրդի գառն կացության ու տնտեսության քայքայված վիճակի վրա։

Սարգիս գրիչն, օրինակ, արձանագրում է, որ 1340 թվին «մարդպետ գազաններից» 30,000-անոց մի բանակ խուժում է իր հայրենիքի սահմանները.

«Բազում գաւառս,—հայտնում է նա,—գ[ե]րեցին և աւերելով կործանեցին, և գինչ արդիւնաց դամենայնն յափշտակեցին, և զամենեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին, մերկ և բոկ, և ոչ թողին և ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան՝ ոչխարաց և զեզանց, զկովուց և զգլուց, զիշուց և զերիվարաց, և զհանդերձս ի յանձնէ մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց... այնպէս արարին, որ շունք ի սովոյ սատակէին, քանզի զխորս ամբարաց հացից հանէին...», (էջ 324)։

Սովը և համաճարակային հիվանդությունները, պատերազմների անքաժան այդ ուղեկիցները, առատ հունձ ունեին այդ դառն ժամանակներում։ 1349 թվին մի հիշատակագիր հայտնում է հետևյալ սրտաճմլիկ վկայությունը.

«Անկաւ սով սաստիկ, կոտորեցան յերից մասանց Հայոց աշ-

խարն (իմա՝ բնակչության 1/3-ը), եւ յետ սովուս մխիթարութեան հետ աստուածաստաց ըարկութիւն ի վերայ մեր եւ անկաւ մահ տարաժամ յամենայն աշխարհս, եւ տարաւ զկէսայմանն աշխարհիս, եւ այս վասն ծուլացեալ մեղաց մերոց եղեւ» (էջ 375)։

Ինչքան էլ տարաբաղդութիւն համարենք հիշատակարանի տվյալները, այնուամենայնիվ աներկբայելի է, որ մարդկային զոհերը տասնյակ հազարների են հասել։

Աննախընթաց այս վիճակից փրկվելու բոլոր ուղիները գոց էին, ինչում էր միայն մի ծայրահեղ միջոց՝ թողնել հայրենի երկիրը եւ օտար հողերում որոնել աշխատանքի ու կյանքի համեմատաբար տանելի պայմաններ։ Ուստի եւ աշխատավոր ժողովրդի մի զգալի մասը, հատկապես առևտրական ու արհեստավորական շերտերը, բռնում էին գաղթի ճանապարհ, հեռանում օտար երկրներ։

Հիշատակարանները ուշագրավ նյութեր են հաղորդում նաև գաղթի ուղիները, նոր գաղթավայրերը և գաղթողների մի մասի ընդհարհարը պարզելու համար։ Սուլթանիայում, օրինակ, ԺԴ. դարում գտնում ենք մի փոքրաթիվ հայ գաղութ կազմված հիմնականում տնեցիներից, նրանք ունեն նաև իրենց եպիսկոպոսը (եպիսկոպոս Օրաուի կամ Օրտուբաղարի), տնեցիներ հանդիպում ենք նաև Երզնկայում և այլուր։

Ոսկե Հորդայի հեռավոր մայրաքաղաք Սարայ-Բերքեում, 1319 թվին, հանդիպում ենք Յովհաւուր գրչին, որը հիշատակում է իր նոր բնակավայրում հաստատված մի շարք հայրենակիցների՝ «Պատուականաց քաղաք Երևանից գաղթած Տերտեր դրչին հանդիպում ենք նախ Ադախում (Ազով), ապա Ղրիմում։ Սուրխաթում և Ղրիմի այլ քաղաքներում ԺԴ. դարի կեսերից արդեն մեծաթիվ հայ գաղթականություն ենք գտնում։ Հայ գրիչների ու այլ հայազգիների հանդիպում ենք նաև իտալական մի շարք շրջաններում ու քաղաքներում (Լոմբարդիա, Պոլոնիա, Պիզա, Սալեռնո, Վենետիկ, Փերուժ), Կիպրոս կղզում, Ալեքսանդրիայում, Կոստանդնուպոլսում և հայրենի երկրից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող այլ երկրներում ու աշխարհներում։

Հաստատվելով նոր գաղթավայրերում, առևտրականներն ու արհեստավորները զբաղվում են իրենց տիրապետած արհեստներով և կենդանի պահում հայրենի երկրի տրադիցիաներն ու սովորույթները։ Ուստի և, չնայած բուն Հայաստանում ԺԴ. դարում գրված հիշատակարանները արհեստների մասին շատ քիչ տվյալներ են հաղորդում, բայց այդ թերին ուշադրության արժանի վկայություններով լրացնում են հայ գաղթավայրերում գրված հիշատակարանները։ Նրանց մեջ, այլևայլ առիթներով, հիշատակված ենք գտնում մոտ 30 տարբեր մասնագիտության արհեստավորների և առևտրականների անուններ։ Դրանք են՝ ասլրեւիչ, ասպրգործ, բազազ, գինեծախ, դալալ, դանկրար, դարբին, դերձակ, էգեպան, թավկիր (ճաշարանի մատուցող), խառատ, կաւշկար, կոավգործ, հյուսն, դասապ, ճոն, մազման, մսագործ, ներկարար, ոսկերիչ, ջուլհակ, ոսկրգործ, տապաղ, քարգործ, քթանագործ և այլն։

Արհեստավորների դրությունը հայրենի երկրից դուրս մխիթարականչի եղել, այս բանն ակնհայտ է թերևս այն փաստից, որ նրանցից համարյա ոչ մեկը չի հիշատակված որպես ամրողջական մի ձեռագրի դնորգ

կամ պատվիրատու. արհեստավորները, մեծ մասամբ, մուտք են գործել հիշատակարանների մեջ որպես փոքր դրամագլխով ձեռագրի գրուբյանը օժանդակողներ, մի հատվածի կամ մասի ստացողներ։ Որպես այդպիսիք նրանք իրավունք են ստացել հիշվելու միայն ձեռագրի այս կամ այն հատվածի ավարտից հետո, մեկ-երկու տող բռնող փոքրիկ հիշատակագրության մեջ։

ԺԴ. դարի ձեռագրերի ստացողները հիմնականում առևտրականներ, ցածրաստիճան հոգևորականներ և ունևոր գյուղացիներ են, նրանց զոհաբերությունների ու զրկանքների գնով է միայն հաջողվել ձեռք բերել որևե ձեռագիր, որովհետև ձեռագրի նյութի ու ընդօրինակության, նկարազարդման ու կազմելու համար պահանջվել են մեծ ծախքեր։*

Հիշատակարաններում որպես ստացողներ, ինչպես և այլ առիթներով հիշատակված են նաև հայ ֆեոդալական տների մի շարք ներկայացուցիչներ, իրենց մերձավորների հետ միասին։ Նրանց տվյալներով հնարավոր է լինում ճշգրտորեն հետևել Օրբելյանների, Պռոշյանների, Դովլյանների, Վաչուտյանների և մյուս ֆեոդալական ոտների ժամանակագրությանը և աստիճանական տարածման ու մանրացման պրոցեսին։

Դարի վերջում չեն հիշվում երբեմնի հզոր Պռոշյան իշխանական տան ներուններն։ Օրբելյանները, հայրենազուրկ եղած, ապաստարան են որոնում օտար երկնքի տակ։ Դոփյան իշխանական տան շառավիղներին հանդիպում ենք հայրենիքից դուրս՝ Ջղաենա անապատի (Վրաստան) շրջակայքում, ըստ որում այդ տոհմից «մեծազարմ իշխան» Վեգենը խարազանազգեստ կրոնավոր էր դարձել՝ Վրթանես անունով։ Եկեղեցականի սքեմն այդ և հաջորդ դարերում այն ապարան էր, որով հայ ֆեոդալներն ստիպված էին պաշարել իրենց ժառանգական տիրույթները բռնակալների ինքնասեփականման ախորժակներից։

ԺԴ. դարում կրոնավորական սքեմով են հանդես գալիս նաև այլ ֆեոդալական տների ներկայացուցիչներ։ Փ. Սյունիքի իշխան Գրիգորի միակ որդի Սարգիսը, ստնդյա հասակից նվիրվելով եկեղեցուն, 1312 թվին արդեն Նաչենի եպիսկոպոսն էր։ Սյունյաց մետրոպոլիտական աթոռը երկար ժամանակ Օրբելյանների ձեռքին էր գտնվում։ Պատմագիր Ստեփանոս Օրբելյանին այդ աթոռի վրա հաջորդեց նրա ազգական Հովհան Օրբելը, իսկ այնուհետև՝ եղբորորդի Տարսաիճ-Ստեփանոսը։

Որոտանի ու Տաթևի տեր Իվանեի որդին էր նշանավոր Հովհան Որոտնեցին, որը լինելով Արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ եկեղեցական գործիչը, միաժամանակ տեր էր իր «հայրենատեր էին նաև Աղթամարի կաթողիկոսները և շատ այլ բարձրաստիճան հոգևորականներ։

Հիշատակարանները հնարավորություններ են ընձեռում ոչ միայն տեսնելու այդ ուշագրավ երևույթի կոնկրետ փաստերը ԺԴ. դարում, այլ և մի շարք տվյալներ են հաղորդում, որոնք նպաստում են դրա լուսաբանմանը։

---

* Ձեռագրերի արժեքի մասին հիշատակարաններում կան մի շարք տվյալներ։ Ըստ մեծության ու արտաքին ձևավորման տարբեր գներով են վաճառվել ձեռագրերը։ Եղած տվյալների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ մինչև արժեքի ձեռագիրը վաճառվել է 500–1000 սպիտակով (արծաթ գրամ), չնայած եղել են այնպիսիները, որոնց գրության համար ծախսվել է 300 և ավելի սպիտակ։

Ընդունելով իսլամը, մոնղոլները, ինչպես ասացինք, ծանրացնում են հարկերն ու բռնությունները Հայաստանում։ Որոշ ժամանակ նրանք հարկադրում են նաև քրիստոնեական եկեղեցուն ու կղերականությանը, բայց, ինչպես վկայում է Հակոբ զրիչ Վարագեցին՝ «առանց դանի հրամանին» (էջ 138), այսինքն՝ առանց մոնղոլական էլղանության այդ մասին արած հատուկ կարգադրության։

Աղթամարի կաթողիկոս Զաքարիան, 1318 թվից քիչ առաջ, դնում է Մուհամեդ-Օլջայթու (Ղալբրանտա) դանի մոտ և ստանում նրանից առլեխ (ярлык), ըստ որի, կրոնավորներն ու քահանաները հարկերից ազատ են հայտարարվում։ Դեպքերին ժամանակակից հիշատակադիրը հայտնում է, որ «Երիցս երանեալ երջանիկ հայրապետն Զաքարիայ հետ դանին դնացեալ մինչև ի Բարելոն ամ մի ոդջոյն, և առլեխ առեալ ի նմանէ՝ ղկրաւնաւսրքս և ղքահանայսն ազատեաց ի հարկապահանջութենէն» (էջ 138)։

Չնայած եկեղեցու ստացած այս արտոնությունը երբեմն ոտնատակ էր արվում մոնղոլական զորավարների ու հարկահանների կողմից, և եկեղեցիներն ու վանքերը երբեմն նույնպես ավարի ու ավերածության էին մատնվում, այնուամենայնիվ, եկեղեցական կալվածքները անձեռնմխելի էին, իսկ եկեղեցականները՝ արտոնյալ ու ազատ հարկատվությունից։

Ահա այս բանի պատճառով Փ. Սյունիքի մեր կողմից արդեն հիշված իշխան Դրիգորը, իր որդի Սարգսին դարձնելով Աչենի եպիսկոպոս, նվիրում է եկեղեցուն «ընծայս յոլով՝ գիւղսրայս, այդիս, անդաստանս» և այլ արդյունքներ (էջ 84)։

Նման բազմաթիվ տեղեկություններով հարուստ են վիմական արձանագրությունները և ձեռագրերում հաճախ հանդիպող կալվածագրերը։*

Վանքերը, որպես ֆեոդալական կազմակերպություններ, վարում էին իրենց ինքնուրույն տնտեսությունը, շահագործելով վանքապատկան կալվածքներում կախյալ գյուղացիների աշխատանքը, պահում էին խոշոր ու մանր եղջերավոր անասունների հոտեր, մշակում էին այգիներ և այլն։

Հիշատակարաններում նյութերով ի հայտ է գալիս վանական պաշտոնյաների ու «գործաւորների» մի ընդարձակ ցանկ, որը լույս է սփռում վանական միաբանությունների ներքին կազմակերպության և վանական տնտեսությունների վրա։ Հիշված պաշտոնյաներից են՝ վանահայր, վակակալ, լուսարար, մառնպան, հյուրատես, եկեղեցպան, տնտես, տաճարապաս, հացկուր, հացպան, վումպան, հովիվ, մաճկալ, ածպան (այծապած) և այլն։

Կան նաև տվյալներ մի քանի վանքերի թեմերի սահմանների ու նրանց ենթակա գյուղերի մասին։ Այսպես օրինակ, 1302 թ. Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Օրբելու հատուկ կարգադրությամբ Վերի-Նորավանքը ստանում է «ի սեպհական ժողովուրդ և թեմ» Անկեղի, Եղիան, Եղիկանց Զոր և Վազցան գյուղերը (էջ 7—8)։

Տաղաքական ու տնտեսական պայմանները ԺԴ. դարում շատ անբարենպաստ էին շինարարական լայն գործունեություն ծավալելու համար։

---

* Մեր աշխատանքների ընթացքում ձեռագրերից հավաքել ենք մի շարք կարևոր կալվածագրեր, նպատակ ունենք հետագայում, ավելացնելով դրանց վրա ԺՆ. և հետագա դարերից ևս նման փաստաթղթերը, հրատարակել դրանք հատուկ ժողովածուով։

Բնորոշ է այն, որ այդ ժամանակաշրջանում մի շարք եկեղեցիներ ամրացվել, պարսպապատվել և վեր են ածվել ինքնապաշտպանական փոքր ամրությունների։ Շինարարական մեծ ձեռնարկումների միայն եզակի փաստեր են հայտնի հիշատակարաններից, բայց նրածը արժեքավոր է և ուշագրավ։ Հայտնի է օրինակ, որ 1306 թվին Աղթամարի Ջաքարիա կաթողիկոսը «վերստին ի հիմանէ» կառուցել է տալիս Լիմ կղզու սուրբ Գեորգի վանքը «րազում ծախիւք և աշխատութեամբ բերեալ ընդ քարանձ սրա ի վերա մկանանց անդնդահոս ծովուն, ի յերկրէն Վաջբրունեայց, ի մեծ լեռնէն, որ կոչի Ջաջոց կայանք» (էջ 40)։

Մեծ ղժվարությունների ու ծախքերի հետ է կապված եղել նաև Եղվարդի ջրանցքի կառուցումը, որն իրագործել 1318 թվին Եղվարդի տեր Աղեղպակը, իր կնոջ՝ Վախախի հետ միասին։ Ներսես գրիչն այդ առթիվ գրում է. «Եւ շրջապատեալ զլեառն Աբրաամեան (իմա՝ Արայեան), հասուցին զջուրն յորդառատ վըտակաւք վոյքընթաց յԵղիվարդ։ Եւ ղժվարութիւն սահմանացն և զյոլով աշխատութիւնս, և զտուրս արվեստավորացն, և զամենայն ծախսն ով կարէ ընդ գրով արկանել» (էջ 141)։

Հիշատակարանները տատ անեկդոտյուններ են պարունակում դըրչության կենտրոնների, միջնադարյան համալսարանների ու դպրոցների վիճակի, նրանցում սովորող ուսանողների տնտեսական ու կենցաղային դրության, ուսուցման մեթոդների և հարակից հարցերի մասին։

ԺԴ. դարի ամենանշանավոր ու ծավալուն ուսումնական հաստատությունը Գլաձորյան համալսարանն էր, որին ժամանակակիցները կոչում էին «երկրորդ Աթենք», «մայրաքաղաք ամենայն իմաստից», «մեծ դպրատուն», «իմաստից տուն» և այլն։

Հայաստանի ու Կիլիկիայի հեռավոր վայրերից այնտեղ էին գիմում տասնյակ ուսանողներ Եռայր Նշեցու գլխավորած «Հայոց դպրոցում» ուսանելու և վարդապետական դավազան ստանալու համար։ Սակայն ուսուցման պայմանները այնտեղ ևս մխիթարական չէին։ 1314 թ. Գլաձորում սովորող Մխիթար Երզնկացին, իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարաններից մեկում, գիմում է ապագա իր ընթերցողներին հետևյալ խոսքերով.

«Որք ընթերցմամբ հայիք ի սա
Եւ հանդիպիք գանձու սորա,
Ցես թէ քանի՞ աշխատեցայ
Ես՝ Մխիթար՝ գրիչ սորա.
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքըս ցուրտ ու պարզկա,
Ջարտախտ բարձր ու. կրակ չկայ,
Դոններս (=չոր հաց) չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ալ գիտենայ,
Ես յայժ նեղած ու ճար չկայ,
Եւ ես պանդուխտ ու վեղար չկայ...» (էջ 103—104)։

Շատ ավելի ծանր էին ուսման պայմանները ԺԴ. դարի երկրորդ կեսին։ Շարունակական ու հարատև պատերազմներն արգելակում էին ուսում-

նական հաստատությունների նորմալ պարապմունքները։ Ուսուցիչներն իրենց աշակերտներով ստիպված էին հաճախ զավառից-զավառ տեղափոխվել, փախչել հալածիչներից, բացօթյա շարունակել իրենց պարապմունքները։

Մեծանուն Հովհան Որոտնեցու համալսարանի մասին 1386 թվից պահպանվել է հակիր զրչի մեծարժեք հիշատակարանը։ «Այլ մեք,—հայտնում է նա,—ընդ սուրբ և աիեղ[եր]ահամբաւ և երանաշնորհ րաբունապետիս Հայաստանեայց և վերադիտողի տեառն Յովհաննու Որոտնեցւոյ կայաք կարդալ և ի դրել ի համալսարանի սորինն։ Բայց երկար չի տևում հակիր զրիչի և նրա դասընկերների ուսանողության խաղաղ շրջանը.

«Եւ մինչդեռ,—շարունակում է նա,—անճառ ցնծութեամբ և բերկրալից ուրախութեամբ լցեալ կայաք, բարունին Կ.(60) աշակերտօքն, ի բնիկ դաւառն իւր՝ յերկիրն Որ[ո]տան, կարդալով և դրելով զսուրբ մատեանս, մեղքն իմ ծուլացեալ եհան զգունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի։ Որ եկին և առին զերկրն Որոտան, հայրենաղուրկ արարին զպարոն Սմբատն՝ որդի Նանիկին։ Եւ կամէին ձերբակալ առնել զսուրբ րաբունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեան։ Եւ սա կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ. և Բ. (2) ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր, աշակերաօք հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով։ Եւ ես ծանրաբեռն մարմնով, զթուղթ և զօրինակ, զգրիչ և զթանաք ի յուս իմ բարձեալ ի հետ գնայի, կարդայի, և որչափ ժամանէի՝ զսուրբ մատեանս գրէի, բազում նեղութեամբ և չարչարանօք, զի ուր սկսա անգ ոչ էառ զկատարումն» (էջ 560)։

Ուսումնական հաստատությունների մասին հիշատակարաններում կան բազմաթիվ համարժեք փաստալից տեղեկություններ, որոնք, անշուշտ, նպաստելու են այդ բնագավառի մասին մեր գիտելիքների հարստացման և գրչության կենտրոնների պատմության մութ կողմերի պարզաբանման գործին։

Հիշատականներում անսպառ տվյալներ են ցրված ժամանակի նշանավոր կուլտուրական ու քաղաքական գործիչների և համեստ գրիչների, մանրանկարիչների և կազմողների մասին։ Սույն ժողովածուն կենսագրական նյութերի հարուստ մի շտեմարան է, որի օգտագործմամբ պարզվելու են բազմաթիվ վիճելի հարցեր. ճշտվելու են կարևոր դեր կատարած դեմքերի կյանքի ու գործունեության շատ մութ դրվագներ ու տարեթվեր։

Այլևայլ առիթներով հիշատակարանների մեջ մուտք են գործել ԺԴ. դարի հազաբաւոր, մինչ այժմ անհայտ, նշանավոր ու աննշան մարդիկ (տես «Անձնանունների ցանկ»)։ Նրանց մասին եղած տեղեկությունները նույնպես թարմ նորույթ են հայագիտության համար։

Մեծ արժեք են ներկայացնում նաև բնակավայրերի ու տեղանունների մասին եղած հիշատակությունները։ Ժողովածուի վերջում արված «Տեղանունների ցանկում» այբբենական կարգով շարադասված են այդ՝ մոտ 500, տեղանունները, որոնց մի զգալի մասը հայտնի է դառնում բանասիրությանը միայն այս ժողովածուի հրատարակությամբ։

Պատմագիտական այս կարևոր նյութերը մեզ հաղորդել են գերազանցապես ժողովրդական խավերից դուրս եկած չարքաշ գրիչներն ու մանրանկարիչները։ Ծանր են եղել նրանց կյանքի ու աշխատանքի պայ-

մանները։ Հաճախ են նրանք գանգատվում իրենց առօրյայից, հաղորդում ահեղ, բայց պատկերավոր տվյալներ գրչության ծանր պայմանների ու կենցաղային անհարմարությունների մասին։

Նորմալ աշխատանքի հիմնական արգելակիչ հանգամանքը երկրի անկայուն դրությունն է եղել՝ հարատև պատերազմներն ու արշավանքները, և դրանցից բխող սովը, ժխտաւար, հալածանքներն ու գերությունը։

Թագեոս գրիչն, օրինակ, աշխատել է ձի գառն և ի գժընգակ ժամանակի, ձմեռան յեղանակի. բազում տառապանաւք և նեղութեամբ, գրչության աշխատանքին խանգարել են՝ ցուրտն ու ձմեռնային եղանակը («երբեմն ի ցրտս և ի ձմեռնային խստութենէս տառապէի»), մոնդող պաշտոնյաների երկևեկությունն ու ժխդժությունները և երկրի ամայացումը, («երբեմն ի թաթարի գալոյ և գնալոյ ու ի տեղացս աւերութենէն մեք փախստական լինէաք»), և նա ի վիճակի չի եղել ձեռագրի ընդօրինակության իր ցանկության ու կարողության համեմատ կատարելու. «ես հաչնց կամէի,—գրում է նա,—որ ամէն գիր ոսկի էր լե[ա]լ» (էջ 15), սակայն նրա ցանկությունն անկատար է մնացել։

Նույնպիսի ծանր պայմաններից են գանգատվում նաև ուրիշ գրիչներ։ «Ժամանակս անչափ գառն էր ի յանաւրինաց, որ մի ժամ չի կարելի գրել, զամէն վախած ու թագած կու կայաք» հայտնում է Թումա Արծիշեցին (էջ 282). Հովհաննես գրիչը 1338 թվին հայտնում է, որ «ոչ կարէի գրել զգիրս», սրովհետև գառն է ժամանակը, Թամուրթաշը պաշարելով Երզընկան «զերկիրն ի սուր ս[ուսերի] մաշեց, և զոմանց զինչս և զստացուածս յափշտակեց, և ոմանք վախեան՝ և ի ձիւն և ի սառն մեռան, զի ձմերային էր ժամանակն։ Զի որ ի տան ընակէր՝ ի ձեռս նոցա մատնէր, և որ փախչէր՝ ի ցրտոյ տոչորէր. և ի յետին չունչն հասաւ երկիրս։ Եւ իմ լսէի և տեսանէի զայս և ի բազում տրտմութենէն ոչ կարէի գրել զգիրս» (էջ 305)։

Մի այլ գրիչ հայտնում է, որ չորս տարի շարունակ քոռն վրա է ընդօրինակել գիրքը, որովհետև «զամեն վախստական կացինք ի կատարս լերանց՝ քաղցած և պանդխտ, և ամենեքեան մեռեալ էինք կենդանաւին ի չահէ Թամուրին» (էջ 587)։*

Ինչ չեն խանգարել գրիչներին նաև կենցաղային անհարմարությունները, հիվանդությունները, ծերությունը և այլն։

«Ցաւարկն յորում կայաք,—հայտնում է Մկրտիչ գրիչը 1302 թվին,—բացակայ գոլով մածնոյր հանապազ մելանն ի յաւդոյն, ընդ որ յոյժ վշտանայի, ևս և աղմուկ զրուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի» (էջ 7)։

Ոսկյա Հորդայի հեռավոր մայրաքաղաք Սարայ-Բերքեյում հաստատված Նաչատուր գրիչը նույնպես տրտնջում է իր աշխատանքի պայմաններից՝ «զրնական կայանք չունէի ապա ի տեղւոջէ ի տեղի կու դեգերէ[ի]. եւ այլ՝ զի սիրտս վշտացեալ էր։ Եւ այս աշխարհիս ձմեռն խիստ է, հաւայն չէ գրագրու լայէ[ս]», գրում է նա (էջ 156)։

Գրչության արվեստով պարապողները, տարիներ շարունակ զբաղ-

---

* Ձեռագրերի գրչության ծանր պայմանների մասին արժեքավոր տեղեկություններ կան նաև մի շարք այլ հիշատակարաններում։ Առարկայական ցանկի «Գրչության ծանր և անբարենպաստ պայմաններ» հարցի գծմաց ցույց են արված այդ տեղեկությունների էջերը։

վելով ձեռագրերի ընդօրինակությամբ, ձեթի ճրագի տակ՝ կլսախավարում, մարգարտաշար իրենց տառերը նկարելով, տառապում էին վատառեսությամբ (ակնոց դեռևս չկար) և այլ մասնագիտական հիվանդություններով։

Ստեփան գրիչը հայտնում է, օրինակ, որ «յոյժ պակասել էր ճաճանչ լուսոյ յաչացս» (էջ 169), Հովհաննես գրիչն աշխատում է «ի ժամ հասեալ ծերութեան, քանզի պատուհանք լուսարձանաց պակասել և ձեռքս խոպանացեալ դողդոջէր» (էջ 235), Ներսես Կրակցի գրչին, բացի վատառեսությունից, այլ վշտեր էլ են մորմոքում. «ի վշտալից ժամս գրեցի,— հայտնում է նա,—որ է աչքս պակասել ի լուսոյ, և ստամոքցաւ յամէն ժամի, և չունէի մխիթարուզ ոչ եղբաւրէ և ոչ յընկերոջի... եւ էր տեղիքս յորում գրէի խիստ եկ և դարձ մարդի» (էջ 274)։ 1363 թ. Եփեսոսում աշխատող Հովհաննես գրիչը հայտնում է, որ «յոյժ վշտալից էր տեղս ի մժեխից և ի ճանճից և յայլոց, որ սոցին նման էր» (էջ 459)։

Այս և սրանց նման մյուս բազմաթիվ վկայությունները, որոնք ցրված են սույն ժողովածուի էջերում, ուշագրավ են ոչ միայն գրիչների կյանքն ու կենցաղը ուսումնասիրելու համար։ Հայ աշխատավոր գյուղացիության զանգվածները, գրիչների ու ծաղկողների հետ ապրելով նույն միջավայրում, կրել են ժամանակի նույն դառնությունները՝ ավելի ուժգնակի, ապրել են նույն և շատ ավելի դժվար ու ծանր պայմաններում, ուստի և այս տվյալները հնարավորություն են տալիս ծանոթանալու ոչ միայն հիշատակագիրների, այլ ընդհանրապես՝ հայ աշխատավոր ժողովրդի վիճակի ու կենցաղի հետ։

«Դառն ու վշտաբեր» և «բազմաթշվառ» պայմաններում կուլտուրական արժեքներ կերտած հիշատակագիրները դեպքերի չոր ու ցամաք գրանցողներ չեն։ Նրանցից շատերը ձգտել են իրենց հիշատակարանները շաղախել պատկերավոր ու ճոխ լեզվով, իսկ ոմանք, ունենալով կարողություն և վարձատրություն, բանաստեղծական գողտրիկ տողերով են հաղորդել իրենց ապրելիքը։ Այս հատկություններով որոշ հիշատակարաններ թևակոխում են նաև գեղարվեստական դրականության բնագավառը։

Մխիթար գրիչ Անեցին, որին պատմական իրադարձությունները հայրենի քաղաքից հանել ու քշել էին էլղաների մայրաքաղաք Սուլթանիա, 1338 թվին, հաճախ մտաբերում ու մորմոքվում է իր հայրենիքի ու հանգուցյալ ծնողների կարոտով.

«Ցիշեմ զգաւառն իմ հայրենին
Զմայրաքաղաք ամուրն Անին,
Եւ ըստ մարմնոյ իմ ծնօղին
Տէր Յակոբա և Սեդայինն» (էջ 310)

գրում է նա։ Այնուհետև նկարագրում է իր ժամանակը, ուշագրավ տեղեկություններ հաղորդելով Սուլթանիայի հայ գաղութի մասին, ի վերջո, հատուկ բանաստեղծությամբ, աշխույժ ու կատակախառն տողեր է նվիրում ձեռագրի գրչության պայմաններին.

«Մեծ վտանգի կամ յայս նեղուս,
Զի խիստ յաղթեց ցաւն մարմնոյս
Եւ ի ձեռացս ի դողալուս,
Այլ չեմ կարել տալ շար գրոյս,

Եւս առաւել ի յայլ շողուս
Ու ի թանաքի թանձրանալոյս,
Եւ մանաւանդ ի յայս քնուս,
Զաւր հասարակ մրափելուս,
Եւ յանիծեալ այս ճանճերուս
Ի սնավաստակ ա[յ]ն կենդանուս,
Որ միշտ նստին ի վերա դրչուս,
Ծրծեն զթանաքն գրերուս...
Եղբայր, մեղ մի դնէ ցզերուս,
Այս տառապեալ 'ւ ողորմելուս.
Ինչ հնացաւ տարիք մարմնուս
Պէս-պէս ցաւեր յայտնի ծերուս։
Օ՛խ թէ լինէր ճար այս նաւուս,
Որ հասանէր յեղր ի ծովուս...» (էջ 311—312)։

Թամուր-Լանկի աշխարհավեր արշավանքների թարմ ազդեցութեամբ էպիքական շնչով է նկարագրում իր ժամանակաշրջանը Թումա զրիչը։ Ահա նրա չափածո հիշատակարանից մի հատված.

«... Շուն մի եկեալ խորառանցի, Թամուր անուն միակողմի,
Բարկութեամբ լցեալ լինի նման իժի և քարը աւճի...
Մուտ մեծ եկեալ Հայոց ազգի, զի նա յազգէն մուխանաթի
Ջալատ եհան նա ղղուինցի, կաշառ երետ բաղում ոսկի,
Թէ ով ոք զՔրիստոս աստուած ասի՝ բաղում չարեաւք չարչա-
րեսցի...։
Նոքա [ա]ոին սուր երկսայրի, շրջին քան զշուն կատղած յեր-
կրի...
Կոտորեցին անխնայելի զաղգս Հայոց և զվրացի...։
Չարութիւնն Թամուրի որ հողածին պատմել կարի» (էջ 589)։

Գեղարվեստական արձակի ուշագրավ բազմաթիվ նմուշներ կան հիշատակարաններում։ Ծանոթանանք դրանցին մեկի հետ. 1314 թվին Հայաստանում տարածվում է մորեխը, որը ահռելի վնասներ է պատճառում։ Սարգիս Թեոդուպոլսեցի գրիչն այդ առթիվ գրում է. «Արդ, յայսմ տարւոջս եկն մորեխ սաստիկ ի վերայ երկրի, քանզի ոչ ոք ի մերում ժամանակիս ետես այնպէս և ոչ ի հնումն պատմեցին մեզ այսպէս խստագոյնս...։ Քանզի իբրև զհեծեալքս բազում, որ երթայ զաւրն և իջևանին ի գիշերն ամենայն, այնպէս գայր յերիկունն. և ի վաղիւն, յորժամ շոգանա[յ]ր արևն՝ յառնէր. և յորժամ յառնէր այնպես էր նմանութիւն նորա, որպէս սաստիկ ձիւնոյ կամ զանձրևոյ, երթայր և բարձրանա[յ]ր, որ ոչ ոք կարէր տեսանել զբարձրութիւն նորա, և ի թանձրութենէ նորա փոխէր գոյնն արեգականն։ Գոչէր իբրև զգետ, անցանէր իբրև զքամի, և էր աշխարհ ամենայն ի տարակուսանք, լային դառնապէս, ողբային, կոծէին, զմոխիրն ընդ գլխովք արկանէին, ծեծէին զերեսս իւրեանց, և ոչ ուստէք եղև փրկութիւն...» (էջ 102)։

Հիշատակարանները անգնահատելի աղբյուրներ են նաև ծդ. գրի լեզուն ուսումնասիրելու համար։ Հիշատակագիրները փորձում են, անշուշտ,

գրել կրաբար, սակայն շատ քչերին է այդ հաջողվում։ Հ.ւտ մեծի մասին նրանք օգտագործում են խոսակցական լեզվի բազմաթիվ տարրեր, գավառական այս կամ այն խոսվածքին բնորոշ դարձվածքներ ու տերմիններ, որով և միջնադարյան խոսակցական լեզվի ուսումնասիրության համար մատակարարում են արժեքավոր տվյալներ։

Հիշատակագիրներից շատերը, դիմելով իրենց հետագա ընթերցողներին, աղերսել են մտաբերել ու հիշել իրենց՝ զօր ու գիշեր տքնությամբ ու տառապանքով մեր մատենագրության արժեքավոր գանձերը ընդօրինակողներին։

Այժմ մենք՝ սովետական մարդիկս, երախտագիտությամբ հիշում ենք նրանց, և գնահատում ըստ արժանվույն այն հարուստ ժառանգությունը, որ հասել է մեզ շնորհիվ տյդ համեստ գործիչների գառն ու գժվարին աշխատանքի։

Մեր ժողովրդի պատմության այդ մռայլ ու մղձավանջային ժամանակաշրջանում ձեռագրերի ընդօրինակության միջոցով մատենադրական արժեքների բազմացումն ու պահպանումը այն մեծ ու դժվարին գործն էր, որ ի վիճակի էին կատարելու և կատարեցին ժամանակի կուլտուրական գործիչները և այնքան սիրով ու արվեստով։

Նրանց թողած բազմաբովանդակ հիշատակարանները լույն չափով օգնելու են մեր ժողովրդի անցյալի պատմությունը մարքս-լենինյան ուսմունքի լույսով շարադրելու գործին։

* * *

Հիշատակարանների մեջ առկա հարուստ նյութերի օգտագործումը պատմական ու բանասիրական աշխատություններում դարավոր պատմություն ունի։

Դեռևս ԺԷ. դարում, Առաքել Դավրիժեցին իր պատմական արժեքավոր դրվածքում* օգտագործել է հիշատակարաններ, հատկապես Հայոց կաթողիկոսների առաջին գիտական ցանկը կազմելու և այլ ժամանակագրական հարցեր պարզելու նպատակով։** Բայց նա այդ ընագավառում ունեցել է նաև իր նախորդները և բազմարդյուն հետնորդները, որոնցից հատկապես արժանի են հիշատակության Մ. Ջամչյանը և Ղ. Ալիշանը։

Մ. Ջամչյանը, իր «Պատմութեան» շատ մասերում, հմտորեն օգտագործել է իր ձեռքի տակ եղած հարյուրավոր հիշատակարանները, դժբախտաբար, չնշելով իր օգտագործած հիշատակարանների հեղինակների, ժամանակի և հիշատակադիրների մասին անհրաժեշտ տեղեկություններ։ Ղ. Ալիշանը, իր պատմա-աշխարհագրական «Այրարատ», «Շիրակ», «Միսական», «Միսուանդ», ինչպես և մյուս աշխատություններում, ոչ միայն բազմաթիվ տեղեկություններ է քաղել հիշատակարաններից, այլև հաճախ, մեջ է բերել պատմական կարևոր բովանդակություն ունեցող հիշատակարանների ընդարձակ հատվածներ, և նույնիսկ հրատարակել է մի շարք հիշատակարանների լուսատիպ կամ վիմագիր նմանահանություններ։

---

* Պատմութիւն Առաքելի վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884։

** Դավրիժեցին գրում է՝ «ընդմիմեանս կաթողիկոսաց անուանս զամենեցուն ի յիշատակս նոցա գրոց հաւաքեցաք...», անդ, էջ 334։

Սակայն ինչպես վերոհիշյալ, այնպես էլ մյուս բանասերները, որոնք օգտագործել են իրենց աշխատություններում հիշատակարանների նյութեր, ձեռքի տակ ունեցել են մեզ հասած հայերեն շուրջ 23 հազար ձեռագրերի մէկայն մի փոքր մասի հիշատակարանները։

Առաջին լուրջ փորձը համեմատաբար մեծ թվով կազմող ձեռագրերի հիշատակարանների ժողովածու կազմելու ուղղությամբ կատարել է Ղ. Փիրղալեմյանը։ Տասնյակ տարիներ, եկեղեցական գործերով շրջելով Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հայաբնակ վայրերում, նա անդուլ կերպով ուսումնասիրել է զանազան վանքերում ու մասնավոր անձանց մոտ պահվող հայերեն ձեռագրերը և քաղել է նրանցից հիշատակարաններ ու պատմական արժեք ունեցող այլ վկայություններ։ 1878 թվին, իր հավաքած հիշատակարանները ավելացնելով նաև տպագիր աղբյուրներից իրեն հայտնի հատ ու կենտ նյութեր, Փիրղալեմյանը կազմել է հիշատակարանների մի հարուստ ու մեծարժեք ժողովածու, որն սկսվում է 887 թ. ընդօրինակված նախկին Լազարյան ճեմարանի ավետարանի հիշատակարանով, և ավարտվում է 1596 թ. մի հիշատակարանով։ Այդ ժողովածուն այժմ՝ 6273 համարի տակ պահվում է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Գետ. Ձեռագրատունը (Մատենադարանում)։

Ժողովածուի տիտղոսաթերթի վրա գրված է՝ «Ցիշատակարանք կամ նշխարք Պատմութեան Հայոց, հաւաքեալ ի մի յոգնաջան աշխատութեամբ Նուաստ Ղևոնդ Ծ. վարդապետի Տոսպեցւոյ՝ Վարագայ վանուց միաբանի...։ Ցամի տեառն 1378 և ի մերս ՌՑԻԷ. Թուականի, յամսեանն 10,22 փետրվարի, յաւուրն ուրբաթու... սկիզբն արարի գրութեան (իմա՝ մաքրագրութեան) սորին, ի Մանչեսաեր վաճառաշահ քաղաքն Բրիտանիոյ...»։

Մեր Մատենադարանում պահվում է նաև Փիրղալեմյանի այդ ժողովածուի նախնական օրինակը (Ձեռագիր № 6332), որը, սակայն, չի պարունակում այն բոլոր նյութերը, որոնք կան նախորդի մեջ։

Փիրղալեմյանի օգտագործած ձեռագրերի մի զգալի մասը զոհ է գնացել Թուրքական վայրագ բռնակալների հրին ու սրին՝ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում։ Նվ եթե չլիներ նրա կազմած այս ժողովածուն, մենք այժմ տեղեկություն չենք ունենա այն ձեռագրերի մասին, որոնք մեզնից ընդամենը մի քանի տասնամյակ առաջ պահվում էին Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական նահանգներում։ Փիրղալեմյանին հաջողվել է տպագրությամբ լույս ընծայել իր ժողովածուի միայն մի մասը՝ 1393—1467 թ.թ. հիշատակարաններով՝ «Նօտարք Հայոց» խորագրի տակ (Կ. Պոլիս, 1883 թ.)։ Հրատարակության Կանխաբանում հեղինակը հայտնում է, որ «Թէպէտ դոն ի ձեռս իմ յիշատակարանք և այլ օրինակութիւնք յառաջ քան զայդ Թուական, որպէս և յամէ անդի և այսր, դրոս Թողաք ակամայ՝ վասն ինչ-ինչ պատճառաց, նոյնպէս և վասն ծախուց տպագրութեանն»։

Մենք սույն ժողովածուն կազմելիս, օգտագործել ենք Փիրղալեմյանի և՛ ձեռագիր և՛ տպագիր ժողովածուները, քաղելով նրանցից ԺԴ. դարում գրված 55 հիշատակարան։

Փիրղալեմյանի օգտագործած ձեռագրերից շատերը, վտարանդի ու պանդուխտ հարյուր հազարավոր հայերի նման, հայրենադարձ են եղել և այժմ պահվում են մեր Գետ. Մատենադարանում։ Ուստի, մենք հնարա-

վորութիւն ունենք համեմատելու նրա ժողովածուի մեջ մտած հիշատակարաններից շատերը իրենց բնագրերի հետ։ Այդ համեմատութիւնը, ցավոք, յուշից է տալիս, որ բազմարդիւն բանասերը, ամբողջական հիշատակարանների փոխարէն, հաճախ, իր ժողովածուում տվել է միայն նրանց լուսանդակութիւնն կարեոր մասերի տեմառոտ շարադրանքը։

Ծուլից տալու համար Փիլոզելեմյանի կատարած խմբագրութիւնների բնոյթը, թուլլ ենք տալիս մեզ զուգահեռ սյուներով մեջ բերելու 1372 թվին Ստեփանոս գրչի կողմից ընդօրինակված ալեխտարանի հիշատակարանի սուլն ժողովածուում հրատարակված բնագիրը և Փիլոզելեմյանի ժողովածուում գտնվող նրա համառոտութիւնը։

Հիշատակարան, № 622, էջ 505—506

... Արդ, ես՝ նուաստ հոդս Ստեփանոս... շնորհիւն աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցի բդուրը և զկենսունակ աւետարանս ի յիշատակ մեր և նախնեաց, և ծնաւղաց, և ամենայն երախտաւորաց մերոց, և ի պայծառութիւն սրբոյն եկեղեցւոյ և ի զուարճութիւն մանկանց նորին։

Գրեցաւ սա ի թուականութեանս հայոց ՊԻԱ. (1372), ի Դարանաղեաց գաւառիս կամխայ, հանդէպ սրբոյ դևրևղմանի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, ի սուրբ և գերահռչակ անապատս, որ կոչի Աւազ, և կարապետին Յովհաննու, և բաղմահաւաք սուրբ նշխարացս, որ աստ [կան]։

Արդ... աղաչեմ յիշեցէք սրտի մտաւք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվցուն և զխոշոր գբչակս զՍտեփ[անոս]...։

Յիշեսջիք և զծնաւղսն մեր՝ զՍտեփանոս քահանայն և զամենայն աղգատոհմ, որք յուսով առ Քրիստոս են փոխեալ։ Յիշեսջիք զներսէս հարազատ եղբայր մեր։ Յիշեսջիք զՏղնաղ[գ]նաց, զառաքինասէր հայր Կիւրակոս՝ զառաջնորդ սուրբ ուխտիս, որ բաղում քարուքեանց աւիք եղև մեզ և բաղմաց, որոյ տէր աստուած վարձահատոյց լիցի ի գալստեան իւրումն Յիշեսջիք և զմխթարնութիւն եղբայրութեանս, որ կան աստ առաքինի և սուրբ վարուք...։

Փիլզ. ժողովածու. Չևռ. № 6273, էջ 166

Փառք անսկզբնականին հօր և որդւոյ նորա միածնի և ամենասուրբ հոգւոյն՝ եւղի նորին էութենէ. և գրեցաւ յաւետարանս ձեռամբ Ստեփանոս կրօնաւորի, ի խնդրոյ հարազատ եղբօրն իւրոյ Ներսէսի]* ի թուականութեանս հայոց ՊԻԱ. ի սուրբ և գերահռչակ անապատս, որ կոչի Աւազ [վանք], ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնի և կարապետին Յովհաննու և սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և սրբոց առաքելոցս, և բաղմահաւաք սուրբ նշխարացս, և կենսակիր սուրբ նշանացս, ի Դարանաղեաց գաւառիս կամխայ, հանդէպ սրբոյ գերեզմանի լուսաւորչին Գրիգորի, յառաջնորդութեան սրբոյ ուխտիս տեառն Կիրակոսի։**

---

* Փակագծերի մեջ առնված հատվածը Փիլոզելեմյանը գրել է կարմիր թանաքով։ Այդպես է վարվում նա իր կողմից մտցված նախադասութիւնները և բառերը բնագրից անջատելու համար։

** Համմտ. նաև № 666 հիշատակարանի հետ, նույնի հետևյալ համառոտութիւնը՝ «Փառք միասնում... բայց գրեցաւ սա ի դուռն սուրբ զամբաբանի սրբոյն Գրիգորի լուսաւորչին և Սաղեմա սուրբ նշանին և սուրբ Աստուածածնին, և սուրբ կարապետին, ի թվիս հայկազեան սեռի ՉԼ. (1381), ղծողիս Տաւներիչ» (Փիլոզ. ժողովածու, ձեռագիր № 6273, էջ 169)։

Ինչպես ակնհայտ է, Փիրղալեմյանը կաշկանդված չի զգացել իրեն հիշատակարանի շարադրանքը փոխելու և այն համառոտելու։ գործում, այնուամենայնիվ, նա հիշատակարանի հիմնական լուսանդակությունը ճիշտ է ներկայացրել, ուստի և նրա ժողովածուի հիշատակարանները, որոշ վերապահումով, ի վիճակի են բավարար չափով փոխարինելու իրենց կորած բնագրերին։

Փիրղալեմյանը չի պահպանել նաև իր հավաքած հիշատակարանների ուղղագրությունը. այդ նրա ժողովածուի (և ընդհանրապես ԺԹ. դարում հրատարակված համարյա բոլոր սկզբնաղբյուրների) մյուս թերությունն է։ Նա, օրինակ, միշտ գրում է «յօրինեալ», «համառօտ», «տօմար» և այլն, երբ բնագրում համապատասխան բառերը գրված են «յաւրինեալ», «համառաւտ», «ասւմարա» կամ «տումտար» ձևերով։ Փիրղալեմյանն սվելորդ է համարել նաև նշել, թե բնօրինակ հիշատակարանը ձեռագրի որ էջերի վրա է գրված և այլն։

Հիշատակարանների հավաքման ու հրատարակման գործում մեծ վաստակ ունի նաև անվանի բանահավաք Գ. Սրվանձտյանը։ Նա նույնպես իր շրջագայությունների ընթացքում այցելել է Թյուրքիայի հայաբնակ շրջանները (Բագեշ, Վան, Մանազկերտ, Երզնկա, Կամախ, Ակն, Խարբերդ, Զմշկածագ, Բալու, Տիգրանակերտ և այլն), եղել է հեռավոր վանքերում ու գյուղերում և ընդօրինակել է իրեն հանդիպած ձեռագրերի հիշատակարանները, նկարագրել է պատմական ուշագրավ հուշարձանները, գրի է առել ժողովրդի երգն ու հեքիաթը։

Իր տարիների աշխատանքի արդյունքը ձեռագրերի ուսումնասիրության գծով նա հրատարակել է «Թորոս Աղբար, Հայաստանի ճամբորդ» աշխատության մեջ, որի Ա. հատորը հրատարակվել է 1879 թ. Բ. հատորը՝ 1885 թ., Կ. Պոլսում։ Մեզ համար հատկապես արժեքավոր են Բ. հատորում՝ «Ձեռագիրք և յիշատակարանք» գլխի ատակ, բերված ավելի քան 350 ձեռագրերի նկարագրությունները և հիշատակարանները։

Ցավոք, Սրվանձտյանը նույնպես հիշատակարանները հրատարակել է ոչ թե անաղարտ բնագրերով, այլ տեղ-տեղ համառոտել է, տարբեր հատվածներ կցկցել է միմյանց և խմբագրել է ոճն ու շարադրանքը։

Հայերեն ձեռագրերի նկարագրության և հիշատակարանների հրատարակության գործը պատշաճ գիտական հիմքերի վրա դրեց հայագետ Հ. Տաշյանը, 1891 թվին հրատարակելով Վիեննայի նախկին կայսերական Մատենադարանի, իսկ 1895 թ. Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի հայերեն ձեռագրերի օրինակելի ցուցակները։

Նրան հետևեցին ուրիշները, և մի երկու տասնամյակի ընթացքում հրատարակվեցին հայերեն ձեռագրեր ունեցող մի շարք հաստատությունների ու մատենադարանների ժողովածուների ցուցակները (Հռոմի, Մյունխենի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Գողթն գավառի, Թավրիզի, Թեհրանի, Նոր Բայազետի, Օքսֆորդի, Բրիտանական թանգարանի, Վասպուրականի և այլ վայրերի)։ Որպես կանոն այդ ցուցակների մեծ մասում ամբողջությամբ մեջ են բերված նաև նկարագրվող ձեռագրերում եղած բոլոր հիշատակարաններն ու հիշատակագրությունները։

Հայոց պատմության ու բանասիրության հարցերով զբաղված մասնագետները, ձեռքի տակ ունենալով վերոհիշյալ ցուցակները և աշխատելով

անձամբ ձեռագրական ժողովածուների վրա, սկսեցին իրենց աշխատությունների մեջ ավելի մեծ չափով օգտագործել հիշատակարանների հագորդած պատմական ավյալները։ Բայց հիշատակարանները ցրված էին տարբեր ժողովածուների ու ամսագրերի մեջ, և ժամանակագրական հերթականությամբ չէին դասավորված։ Այս հանգամանքն արգելակում էր, և շարունակում է արգելակել, հիշատակարանների լայն օգտագործմանը այն բոլոր հարցերի լուսաբանման համար, որոնց մասին նրանցում կան արժեքավոր նյութեր։

Բայի այդ, շնորհիվ այն բանի, որ մեր Պետ. Մատենադարանի ձեռագրերի ցուցակը մինչ այժմ չի հրատարակված, այդ հարստագույն ժողովածուի հիշատակարանների մեծ մասն անմատչելի էր դիտական աշխատանքով զբաղված մասնագետների լայն շրջաններին։

Վերոհիշյալ նկատառումներով Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտը, 1948 թվին, հանձնարարեց ինձ ի մի հավաքել և պատրաստել հրատարակության մեր Մատենադարանում պահվող ԺԴ. և հետագա դարերի բոլոր հայերեն ձեռագրերի հիշատակարանները։

Առաջնահերթ համարվեց ԺԴ. և ԺԵ. դարերի հիշատակարանների հավաքումն ու հրատարակությունը, որովհետև, ինչպես հայտնի է, դրանք մեր պատմության ամենաամուլ դարերն են։ ԺԵ. դարից մեզ հասել է միայն Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Թամուր-Լանկի» (հրա. Փարիզ, 1860) աշխատությունը, որը, չնայած իր կարևորության, ընդգրկում է միայն ԺԴ. դարի վերջի և ԺԵ. դարի սկզբի քաղաքական անցուդարձերի պատմությունը, այն էլ աշխարհագրական ու պատմական նեղ շրջանակով վերցրած։

Ահա մեզ հանձնարարված այդ աշխատանքի արդյունքն է ԺԴ. դարի հիշատակարանների սույն ժողովածուն։

* * *

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների սույն ժողովածուի մեջ ժամանակագրական հերթաշարով դասավորված են 1301—1400 թթ. և ԺԴ. դարում գրված որոշակի տարեթիվ չունեցող բոլոր այն ձեռագրերի հիշատակարանները, որոնք մատչելի են եղել մեզ իրենց բնագրերով կամ նկարագրված են ձեռագրերի անտիպ ու հրատարակված ցուցակներում և առանձին աշխատությունների մեջ։

Ստորև նշում ենք մեր կողմից օգտագործված ձեռագրական ժողովածուները և ձեռագիր ցուցակները։

1) Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատան (Մատենադարանի) հայերեն ձեռագրերի ժողովածուն, բաղկացած շուրջ 10,000 ձեռագրերից։

Սույն ժողովածուի մեջ ընդգրկված 845 հիշատակարաններից 513-ը, այսինքն՝ ամբողջի ավելի քան 60%-ը Պետ. Մատենադարանի ձեռագրերից են։

2) Վրաստանի Ս. Ն. Ջանաշիայի անվան Պետ. Թանգարանի* Ձեռագրա-

---

* 1949 թ. հունիսին, գործուղվելով Թբիլիսի, ծանոթացա Թանգարանի և Ախիվի հայերեն ձեռագրերի հետ և կազմեցի նրանց համառոտ ցուցակը։

կան բաժնի հայերեն ձեռագրերի ժողովածուն, բաղկացած 207 ձեռագրերից, դրանցից ԺԴ. դարում են դրված 5-ը։

3) Վրաց. ՍՍՌ Պետ. Կենտրոնական Պատմական Արխիվի (ֆոնդ 233) 36 հայերեն ձեռագրերը, որոնցից միայն մեկը դրված է ԺԴ. դարում։

4) Թիֆլիսարնակ պրոֆ. Դ. Պ. Դորդևեի սեփական դրադարանի հայերեն 12 ձեռագրերը, որոնցից 2-ը գրված են ԺԴ. դարում։

5) Ղ. Փիրղալեմյանի կազմած հիշատակարանների ժողովածուն, որի սեպագիր և մաքրագիր օրինակները պահվում են Պետ. Մատենադարանում, առաջինը՝ 6332, իսկ երկրորդը՝ 6273 համարների տակ։ Այդ ժողովածուից քաղել ենք ընդամենը 55 հիշատակարան։

6) Հանգուցյալ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյանի կազմած «Նկարագրութիւն Նոր Ջուղայի Ամենափրկիչ և այլ վանքերի ու մասնավոր անձանց մոտ գտնվող հայկական ձեռագրերի» անտիպ ցուցակը, որը պահվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի արխիվում (գործ № 48)։ Ցուցակում նկարագրված են 580 հայերեն ձեռագրեր, որոնցից քաղել ենք ԺԴ. դարի 20 հիշատակարան։*

7) Ե. Լալայանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց վասպուրականի» աշխատության առաջին պրակի (հրա. Թիֆլիս, 1915 թ.) անտիպ շարունակությունը, որի մեջ ըստ վստահելի տվյալների, պետք է լինեին ոչ պակաս քան 1048 ձեռագրերի նկարագրություններ (№№ 481—1529), սակայն Պետ. Պատմական Թանգարանի Ադգագրական բաժնի Ե. Լալայանի արխիվում, այժմ, պահվում է միայն մի թղթապանակ (№ 134), ուր գտնվում են միայն №№ 481—708 ձեռագրերի նկարագրությունները։ Մեզ, ցավոք, չհաջողվեց պարզել, թե որտեղ է գտնվում Լալայանի անտիպ ցուցակի ա՛յուս՝ մեծագույն՝ մասը, շուրջ 822 ձեռագրերի նկարագրություններով և հիշատակարաններով։ Ցուցակի մեր օգտագործած մասից քաղել ենք ԺԴ. դարի 5 հիշատակարան։

8) Մատենադարանի Արխիվում պահվող երկու անտիպ ցուցակները՝ ա) Ceneral Catalogue of the Armenian Manuscripts in the Bodleian Library at Oxford—Օքսֆորդի Բոդլյան գրատան 132 հայերեն ձեռագրերի մանրամասն ցուցակ (Արխիվային բաժին, «Անհատական արխիվներ» ֆոնդ, թղթապանակ 119—122)։**

բ) Catalogue of the Armenian Manuscripts in the sir John Rylod's Library at Manchester—Մանչեստրի 24 հայերեն ձեռագրերի ցուցակ (Արխիվ. թղթ. 118)։

Այս երկու ցուցակների մեջ նկարագրված ձեռագրերից ԺԴ. դարից են 13-ը։

Այսպիսով, ձեռագիր աղբյուրներից են քաղված սույն ժողովածուի 845 հիշատակարաններից 614-ը, այսինքն ամբողջի մոտ 73%-ը։

---

* Ցուցակում նկարագրված է նաև մի ձեռագիր՝ գրված 1333 թ. Նաչատուր սարկավագի կողմից, Աճանա գավառում։ Սակայն, ցավոք, այդ ձեռագրի հիշատակարանը այժմ տեղում չի գտնվում։

** Հայերեն ձեռագրերի այս ժողովածուն նկարագրել են նաև Ս. Պարոնյանն ու Ֆր. Կոնիբերը և հրատարակել են 1918 թ. Օքսֆորդում։ Սակայն հրատարակված այդ ցուցակի համեմատությամբ վերոհիշյալ ցուցակն ունի մի շարք առավելություններ, ուստի հիշատակարանները քաղել ենք նրանից։

Տպագիր աղբյուրներից օգտագործել ենք հետևյալները (սկզբից տալիս ենք աղբյուրների ընդարձակ վերնագրերի փոխարեն սույն ժողովածուի մեջ օգտագործած մեր համառոտագրությունները).

1) Ագուլիս—*Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերա գեղջ եւ անձանց մասնաւորաց—«Արարատ» ամսագիր, 1911 թ.*

2) Ալիշան, Այրարատ—*Այրարատ. ընաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890.*

3) Ալիշան, Հայապատում—*վենետիկ, 1901.*

4) Ալիշան, Սիսական—*Սիսական (տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի), Վենետիկ, 1893.*

5) Ալիշան, Սիսուան—*Սիսուան, համազրութիւն հայկական կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885 թ.*

6) Բակուրան, Կիպրոս—*Բակուրան, Կիպրոս կղզի, ա. աշխարհագրական և պատմական տեսութիւն, բ. Հայ գաղթականութիւն, Նիկոսիա, 1903.*

7) Bibl. Nation.—Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale, par Frédéric Macler, Paris, MDCCCCVIII.

8) Բրիտ. թանգարան—A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick C. Conybeare, Lonbon, 1913.

9) Գողթն—*Ե. Լալայան, Օրգուրադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան և կամ Գողթն—«Ազգագրական Հանդէս», գիրք XII, Թիֆլիս, 1905 թ. էջ 109—173.*

10) Գովրիկյան—*Գր. Գովրիկեան, Դրանսիլուանիոյ Հայոց Մետրոպոլիսը կամ նկարագիր կեդրա հայաքաղաքի ի գիր և ի պատկերս, Վիեննա, 1896.*

11) Թավրիզ—*Հ. Աճառեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910.*

12) Թորոս Աղբար. Ա.—*Գ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար. Հայատոտանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879.*

13) Թորոս Աղբար. Բ.—*Նախորդի Բ. մասը, Կ. Պոլիս, 1885.*

14) Թօփճեան—*Ց. Թօփճեան, Յուցակ ժողովածուաց Դպրեան Ներսիսեան վարժապետի, մասն Բ. (1878—1898), Վաղարշապատ, 1900.*

15) Կայսր. Մատենադ. Վիեն.—*Յուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, կազմեց Յ. Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1891.*

16) Հալէպ, սբ. Մնկ.—*Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկանց եկեղեցւոյ և մասնաւորաց. կազմեց Արտաւազդ Սիւրմէեան, Երուսաղէմ, 1935.*

17) Հալէպ, Անթիլիաս ու. մասն.—*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու. մասնաւորաց, Բ. հատոր, կազմեց Ա. Սիւրմէեան, Հալէպ, 1936.**

---

* *Այս ցուցակում, № 37-ի առիթով, նկարագրված է մի Դանձարան, որն, ըստ հղատարակչի, ընդօրինակված է 1380 թվին։ Մենք այդ ձեռագրի հիշատակարանը չմուծեցինք մեր ժողովածուի մեջ, որովհետև իրականում այն գրված է ոչ թե 1380, այլ 1423-ին։ Հիշատակարանում գրված է «Ողգէս Հայոց թըլականին կրկին քառակ 'ւ երկու հարիւրին, եւթանասուն երկու ամին դրեցաւ գանձս...»։*

18) Հռոմ—Յովհ. վրդ. Մխիթճեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Վատիկանու ի Հռոմ—«Հանդէս Ամսօրեայ», 1892 թ.

19 Ճանիկյան—Ց. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895.

20) Մատեն. Հայկ. բառգմ.—[Դ. Զարպհանալեան], Մատենադարան Հայկական Թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889.

21 Նօտարք Հայոց—Նօտարք Հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ Վարդապետի Փիրղալեմեան Տօսրեցւոյ, Վարդապետ վանուց վանականի... Կ. Պոլիս, 1883° թ.

22) Ջալալեան—Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Սարգիս վարդապետի Ջալալեանց, մասն Ա., Տփխիս, 1842.

23) Սեբաստիա Ս. Նշան—Թ. Գուշակեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա—«Հանդէս Ամսօրեայ», 1923 թ.

24) Սմբատեանց, Երնջակ—Մ. Սմբատեանց, Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակոյ և շրջակայից նորա, Տփխիս, 1904.

25) Վասպ.—Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, պրակ առաջին, Թիֆլիս, 1915.

26) Վենետ. Ա.—Բ. Սարգսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Ա., Վենետիկ, 1914.

27) Վենետ. Բ.—Նախորդի Բ. հատորը, Վենետիկ, 1924։

28) Վիեն.—Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Ծակոբոս Տաշեան, Վիեննա, 1895.

29) Քօսեան—Ծակոբ Քօսեան, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հատոր Բ., Վիեննա, 1899։

Վերոհիշյալ ցուցակների ցանկից բացակայում են Սևանի (1892 թ. Ն. Մառ) Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի (1893 թ. Ստ. Կանայանց), Կաբինի Սանասարյան վարժարանի (1909 թ. Հ. Աճառյան), Նոր Բայազետի (1924 թ. Հ. Աճառյան) և այլ վայրերի հրատարակված ցուցակները, ինչպես և մի շարք աշխատություններ, որոնց մեջ կան ԺԴ. դարի ձեռագրերի նկարագրություններ ու հիշատակարաններ, որովհետև նրանց մեջ նկարագրված ձեռագրերը այժմ պահվում են մեր Պետ. Մատենադարանում և մատչելի են եղել մեզ բնագրերով։

Հիշատակարանների սույն ժողովածուն զերծ չէ, և չէր էլ կարող զերծ լինել թերություններից, որովհետև հայերեն ձեռագրերի ամենահարուստ ձեռագրատներից մեկի՝ Երուսաղեմի Ս. Ցակոբի վանքին կից Մատենադարանի, ձեռագրերի ցուցակը մինչ այժմ չի հրատարակված*, իսկ Վենետիկի Մխիթարյան միաբանության ժողովածուի մայր ցուցակի միայն Ա. և Բ. մասերն են հրատարակված, ընդամենը 319 ձեռագրերի նկարագրությամբ։

---

* Վերջերս, երբ սույն ժողովածուի մի մասն արդեն տպված էր, հայտնի դարձավ, որ Ա. Սուրմեյանը հրատարակել է Երուսաղեմի մատենադարանի հայերեն ձեռագրերի մայր ցուցակի առաջին պրակը և Եվրոպայի այլևայլ թանգարաններում ու գրադարաններում ցրված հայերեն ձեռագրերի ցուցակը։ Մենք հնարավորություն չունեցանք օգտագործելու այդ ցուցակներում եղող ԺԴ. դարի հիշատակարանները։ Չկարողացանք ձեռք բերել և օգտագործել նաև 1920, 21, 22, 27 և 1930 թթ. "Revue des etudes Armeniennes" ամսագրի էջերում Ֆ. Մակլերի հրատարակած Եվրոպայում գտնվող շուրջ 50 հայերեն ձեռագրերի նկարագրությունները։ Սրանց մեջ, ըստ տեղեկությունների, ԺԴ. դարից են մեկ-երկու ձեռագրեր։

Հասկանալի է, որ մենք հնարավորություն չունեինք ժողովածուն հարստացնելու Երուսաղեմում և Վենետիկում պահվող ԾԴ. դարի բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններով։

Հայտնի է, որ Փարիզի ազգային գրատունը, Տյուբինգենի համալսարանում, Բեռլինում, Բուդապեշտում, Լվովում և այլ վայրերում նույնպես կան ԾԴ. դարի հայերեն ձեռագրեր, հայտնի են նաև այդ ձեռագրերի մասին որոշ տվյալներ, սակայն նրանց մասին մեր ձեռքի տակ եղած աղբյուրներում հիշատակարանները չեն հրատարակված, և մենք հնարավորություն չունեցանք օգտագործելու նաև այդ հիշատակարանները։*

Անհրաժեշտ է նշել նաև, որ Վիեննայի Մխիթարյան միաբանությունը. Հ. Տաշյանի ցուցակի հրատարակությունից (1895 թ.) հետո, հարստացրել է իր Մատենադարանը հարյուրավոր նոր ձեռագրերով, որոնց ցուցակը՝ կազմված Հ. Ոսկյանի կողմից, դեռևս չի հրատարակված։

Անշուշտ. ԾԴ. դարի մի քանի ձեռագրեր պետք է լինեն Լենինգրադում գտնվող մի քանի հարյուր հայերեն ձեռագրերի շարքում, սակայն, ցավոք, մենք պատեհություն չենք ունեցել ծանոթանալու այդ ձեռագրերի հետ։**

Այսպիսով, ԾԴ. դարի հիշատակարանների սույն ժողովածուի հրատարակությամբ, որը պարունակում է 845 արժեքավոր հիշատակարաններ, չեն սպառվում այդ դարում գրված բոլոր հայերեն հիշատակարան-

---

* Նրանց մասին հետաքրքրվողը համառոտ տեղեկություններ կարող է քաղել հետևյալ աղբյուրներից՝ 1) Catalogue des Manuscrits Armeniens et Georgiens de la Bibliotheque Nationale, par F. Macler, Paris, 1908. (ԾԴ. դարից են № 66—Շարակնոց, 1319 թ., № 67—Շարակնոց, 1341 թ., № 79—Դանձարան, 1361 թ., № 80—Գանձարան, 1380 թ., № 95—Ժողովածու, 1400 թ. № 119—Ճառք Դր. Նաղիանզացու, 1319 թ. № 120—Տօնական, 1362—1380 ԹԹ., №121—Ժողովածու, 1386 թ. № 122 —Ժողովածու, ԾԴ. դար, №180—Ցայսմաւուրք, 1316 թ., № 281—Բանք չափաւ Ներսիսի Շնորհալւոյ, 1374 թ.), 2) Verzeichnis der Armenischen Handschriften der Königlichen Universitatsbibliothek zu Tübingen, von Franz Nikolaus Finck und Levon Gjandschezian Tübingen, 1907. (ԾԴ. դարից են՝ №-Ma XIII. 2—Ճեւտարան, 1313 թ., № 10— Մեկնութիւնք, 1313 թ., № 22—Շարակնոց, 1316 թ. № 52—Թուղթ ընդհանրական, 1313 թ.) 3) Սրվանձտյանցի «Թորոս Աղբարի» թ. հատորում տեղեկություններ կան Արղնի մարձրահայց սուրբ Աստուածածնի վանքի ԾԴ. դարի ձեռագրերի մասին (դրանք են № 44—Վարք Ներսէհ Ճգնաւորի Հզրեալ ի թվ. ՉԿԸ (1319), ի գաւառս Վայոց ձորոյ, ի վանս Գլաձորայ, № 67—Աւետարան Հզրեալ ի թվ. Հայոց Ջ. (1351)... ի Հռոմկլայ, № 113- Աւետարան Հզրեալ ի թվ. ՋԾ. (1361), ի քաղաքն Համբէն, № 119—Աւետարան «զրեալ յԱղթամար ի թվ. ՋԾԲ. (1363)», № 120—Մեկնութիւն գործոց առաքելոց, 1310 թ.), 4) Ս. Գոլանչյան, Ռումինահայոց մոքի գանձարան «Հայ մշակույթի տունը»—«Էջմիածին», 1948թ. հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 60—61. (համառոտ տեղեկություններ է տալիս մի շարք հայերեն ձեռագրերի մասին, որոնցից ԾԴ. դարի են երկուսը՝ 1313-31 ԹԹ. կարապետ գրչի կողմից Երուսաղեմում գրված մի Ճաշոց և 1351 թ. Կաֆայում գրված մի Աւետարան)։

Սրանցով, անշուշտ, չեն սպառվում դանադան պարբերականներում և բանասիրական աշխատություններում մեջ, այլևայլ առիթներով հիշատակված ԾԴ. դարի հայերեն ձեռագրերը։ Դրանց թիվը շատ է, իսկ նոր թվարկումը՝ մեր նպատակների տեսակետից անօգուտ։

** Մոսկվայում՝ Լենինի անվան գրադարանի ձեռագրական բաժնում, Պատմական թանգարանի ձեռագրական բաժնում և Արևելյան արվեստների թանգարանում, պահվում են շուրջ 40 հայերեն ձեռագրեր։ 1947 թվին ծանոթացել ենք այդ ձեռագրերի հետ և կազմել նրանց համառոտ ցուցակը։ Դրանց շարքում ԾԴ. դարի ձեռագրեր չկան։

ները։ Պետք է հուսալ, որ վերը նշված բոլոր հավաքածուների օգտագործմամբ հնարավոր կլինի այդ թիվն ավելացնել և հասցնել առնվազն 1000-ի։*

* * *

Հիշատակարանները սույն ժողովածուի մեջ շարադասված են ժամանակագրական հերթականությամբ։ Գրության թվականները որոշելիս, ամենուրեք, առաջնորդվել ենք «Հայոց մեծ տոմարի» թվականով, որի առաջին տարին համընկնում է մեր թվարկության 552 թվին։

Այդպես ենք վարվել, որովհետև հիշատակարանների ճնշող մեծամասնության մեջ գրության ժամանակը ցույց է տրված միայն Հայոց թվարկությամբ։

Հնշուշտ կան, և ոչ քիչ թվով, հիշատակագիրներ, որոնք հայոց թվականին զուգահեռ նշել են նաև տարեթիվն ըստ փրկչական թվականի։ Սակայն նման դեպքերում նույնպես առաջնորդվել ենք «Հայոց թվականի» տվյալով, որովհետև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում բոլոր քրիստոնյա ժողովուրդների կողմից համատարած գործածության մեջ գտնվող թվարկություն գոյություն չուներ։ Այս հարցի կապակցությամբ ուշագրավ է Մարկոս գրչի հիշատակարանը, որի մեջ ձեռագրի գրչության տարեթիվը հայտնված է այսպես՝ «ի թվարերութիւնն ի ծննդենէն Քրիստոսի ըստ Հայոց հաշուի ՌՅՂ . (1390), եւ ըստ Յունաց՝ ՌՅՂՋ. (1396), եւ ըստ Յոհաննեաց ՌՅՉ. (1388), եւ ըստ Ասորոց՝ ՌՅՀԺԱ. (1381*), և ըստ Հարեթական տոմարիս հայոց՝ ՊԼԷ. (1388)» (էջ 575)։

Ինչպես ակնհայտ է, Մարկոս գրիչը շատ որոշակի տարբերել է քրիստոնեական թվականը «ըստ Հայոց հաշուի», «ըստ Յունաց հաշուի», «ըստ Յոհաննեաց հաշուի» և այլն։ Բայց ոչ բոլոր հիշատակագիրներն են տարբերել այդ, ինչպես և ոչ բոլոր բանասերները, որոնք ժամանակագրական ու տոմարագիտական հարցերով են զբաղված։** Այսպիսով, ստեղծվել է մի խառնաշփոթություն, որից դուրս գալ կարելի է միայն առաջնորդվելով «Հայոց մեծ տոմարի» թվականով, դումարելով նրան 551։

Հիշատակարաններում ամսաթվերը, մեծ մասամբ, հայտնված են կամ ըստ հուլյան տոմարի (հունվար—դեկտեմբեր) և կամ ըստ Հովհան Սարկավագի մշակած անշարժ տումարի։ Սարկավագադիր տոմարի ամանորը՝ նավասարդի 1-ը, միշտ համապատասխանել է հուլյան տոմարի օգոստոսի 11-ին (այս համադրությամբ են կազմված եկեղեցական գրքերը՝ «Գանձարանները», «Ցայսմաւուրքները» և այլք)։ Սակայն, հակառակ բանասիրության մեջ ընդունված կարծիքի, ըստ որի 1318 թվից հետո հայկական շարժական տոմարը գործածությունից դուրս է եկել, ԺԴ. դա-

---

* Լենինգրադում պահվող հայերեն ձեռագրերի հիշատակարանները և ԺԴ. դարի մի քանի այլ հիշատակարաններ հնարավորություն կունենանք հրատարակելու հիշատակարանների ժողովածուի հաջորդ հատորի (ԺԵ. դար) հավելվածում։

** Միջնադարյան պատմական ու ժամանակագրական աղբյուրներն օգտագործելիս, միշտ պետք է հիշել, որ հայերի կողմից օգտագործված քրիստոնեական թվարկությունը, այժմ համատարած օգտագործման մեջ գտնվող թվարկությունից երկու տարով առաջ է ընկած եղել, ուստի որևէ պատմական դեպքի ժամանակը որոշելիս, եթե նրա թվականը «ըստ հայոց հաշվի» է տրված, պետք է առաջարկված թվականից երկու տարի դուրս գալ։

րում կան հիշատակագիրներ, որոնք համառորեն կիրառում են կամ միայն հին՝ շարժական տոմարը և կամ ամսաթիվը հայտնում են երկու կամ մի քանի տվյալներով՝ ըստ շարժական և ըստ անշարժ տոմարների։

Այսպես, օրինակ, № 412 հիշատակարանը գրված է «ի թվ. ՉՂԱ. (1342). ի մարտի Լ. (7), սահմի ի ԺԲ. (12)» (էջ 332). 1342 թվին Նավասարդի 1-ը շարժական տոմարով համընկել է դեկտեմբերի 26-ին, ուստի և սահմի ամսվա 12-ը, իրոք, համապատասխանում է մարտի 7-ին։ № 687 հիշատակարանը գրված է 1384 թվի «յաւգոստոս Իէ. (27), ահկի ԺԶ. (16)՝ Մեծ Հայոյն, և Սբբրայեցւոց Թ. (9), և Սարկաւագին՝ նաւասարդ ԺԷ. (17)» (էջ 551)։ Այստեղ «ահկի ԺԶ. (16)»-ը շարժական տոմարի ամսաթիվն է, իսկ «նաւասարդի ԺԷ. (17)»-ը՝ սարկավագադիր կամ անշարժ։*

Այսպիսով, հիշատակարաններն օգտագործելիս պետք է ի նկատի առնել նաև այս հանգամանքը, և ամեն մի կոնկրետ դեպքում որոշել, թե ինչ տոմարով է առաջնորդվել հիշատակագիրը։

Ժողովածուի մեջ, միևնույն տարեթվի հիշատակարանները շարադասելիս նույնպես առաջնորդվել ենք ժամանակագրական սկզբունքով, իսկ երբ հիշատակարանների ամսաթվերը հայտնի չեն եղել, արժեքավոր ու հետաքրքիր տվյալներ պարունակող հիշատակարանները դրել ենք մյուսներից առաջ։

ԺԴ. դարում գրված, բայց որոշակի տարեթվեր չունեցող հիշատակարանները մասամբ գտել են իրենց դրության հավանական կամ մերձավոր տարեթվերը պատմվող հայտնի քաղաքական դեպքերի կամ ծանոթ գրիչների, ծաղկողների և հիշատակված այլ անձանց միջոցով։ Իսկ այն հիշատակարանները, որոնց գրության մերձավոր ժամանակի որոշման համար որևէ կռվան չենք գտել, այդպիսիք տեղադրել ենք ժողովածուի վերջում՝ «ԺԴ. դարի անթվական հիշատակարաններ» խորագրի տակ։ Այս բաժնում հիշատակարանները շարադասված են հիշատակագիրների անվանց այբբենական կարգով։

Հիշատակարանների ուղղագրությունը պահպանել ենք նույնությամբ, առանց նույնիսկ աննշան շեղումների։**

Տառասխալները մատնացույց ենք արել օգտագործելով շղագիր տառեր։

Բոլոր կարգի համառոտագրություններն ու հապավումները (պատվոգրեր, գաղափարագրեր և այլն) բաց ենք արել, առանց նշելու այդ մասին։

Հիշատակագիրների մեծագույն մասը գործ է ածել անկանոն, նույնիսկ արտառոց, կետադրություն։ Անփոփոխ պահպանելով նրանց գործածած կետադրությունը, մենք կդժվարացնեինք հիշատակարանները հասկանալու և նրանցից օգտվելու գործը։ Ուստի, համոզված լինելով, որ կետադրության պատմությամբ հետաքրքրվող մասնագետները գերադասելու են միշտ անձամբ դիմելու ձեռագրերին, մենք, սակավ բացառությամբ ամբողջովին փոխել ենք հիշատակարանների կետադրությունը։

---

* Ուշագրավ տոմարական դուգահեռներ կան նաև 576, 594 և այլ էջերում։

** Տպագիր աղբյուրներից քաղած հիշատակարանների ուղղագրությունը նույնպես պահել ենք հարաղատությամբ, չնայած որոշ հրատարակություններում, համոզված ենք, փոխված է ուղղագրությունը և հարմարեցված ԺԹ. դարի ուղղագրական կանոններին։

Հիշատակարանների սկզբի մասը («Փառք»-ը), որը պարզ է պատմական արժեքից՝ չենք հրատարակել, բայց ենք թողել նաև բացարձակ կրկնությունները և աստվածաբանական անրովանդակ ու անարժեք դատողությունները, որոնք որոշ հիշատակարաններում շատ ընդարձակ տեղ էին բռնում։ Դուրս ձգած մասերը ցույց ենք տվել բազմակետերով։

Մաշվածության, պատռվածության և այլ պատճառներով անընթեռնելի դարձած տողերը, բառերը և վանկերը ցույց ենք տվել երեք ուղղահայաց գծիկներով՝ | | |։ Եթե այդ գծիկները դրված են հիշատակարանի վերջում, այդ նշանակում է, որ ձեռագրից թերթ է ընկել, շարունակությունը չի պահպանվել։

Հիշատակարանների օգտագործումը հեշտացնելու նպատակով, հայկական այբուբենի տառանիշերով դրված թվերի կողքին, ամենուրեք, շեղ փակագծերի մեջ՝ ( ), տվել ենք նույն թիվը՝ արաբական թվանշաններով արտահայտած. այսպես՝ ԾԵ. (55) և այլն։ Հայկական մեծ տոմարով դրված տարեթվերի կողքին տվել ենք ոչ թե նրանց թվաբանական համարժեքը, այլ, գումարելով 551, վեր ենք ածել մեր թվարկության սիստեմին և ստացված թվականն արտահայտել ենք արաբական թվանշաններով։ Այսպես՝ ՊԺԱ. (811) թվականին կից, փակագծերի մեջ, գրել ենք 1362, այսինքն՝ 811+551։

Ուղղագիծ փակագծերը՝ [ ], օգտագործել ենք, երբ ըստ իմաստի կամ ենթադրաբար ստիպված ենք եղել վերականգնել որևէ անընթեռնելի տառախումբ, բառ կամ նախադասություն։ Երբեմն, բնագրի իմաստը պարզելու, կամ սխալ գրված բառը ճշտելու նպատակով ավելացրել ենք որոշ բառեր կամ տառեր, այդ հավելումները նույնպես առել ենք ուղղագիծ փակագծերի մեջ։

Սակավ դեպքերում օգտագործել ենք նաև սուրանկյուն փակագծեր՝ < >, դրանց մեջ առնված են այն բառերը կամ տառերը, որոնք սխալմամբ կրկնված են հիշատակագիրների կողմից և կամ դրված են թյուրիմացաբար։

Ամեն մի նոր տարեթիվ սկսվում է նոր էջից, էջի վերևում ունենալով գլխագրեր։ Էջերը տեխնիկապես ձևավորված են հետևյալ կերպ. վերին ձախ անկյունում տրված է տարեթիվը հայկական տոմարով և հայկական թվանիշերով արտահայտած, աջ անկյունում՝ նույն տարեթիվը ըստ մեր թվարկության, արաբական թվանիշերով արտահայտած։

Յուրաքանչյուր հիշատակարան ունի իր հերթական համարը (1-ից մինչև 855), համարից հետո, շատ համառոտ կերպով, տրված է այն ձեռագրի վերնագիրը, որից քաղված է տվյալ հիշատակարանը։

Վերնագրին հաջորդող տողում տրված է ձեռագրի հասցեն՝ որտեղ և ինչ համարի տակ է պահվում այն և կամ որ հրատարակված կամ անտիպ աղբյուրումն է նկարագրված։ Այսպես, օրինակ, էջ 16-ում, 17 համարի տակ գրված է «Աստուածաշունչ» (ձեռագրի վերնագիրը), հաջորդ՝ մանր տառերով տպված տողում՝ «Երևան 182», այդ նշանակում է, որ ձեռագիրը պահվում է Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից պետ. Ձեռագրատան (Մատենադարանում) № 182-ի տակ։ Նույն տողում, փակագծերի մեջ դրված է՝ «Տես նաև 1658 թ.», որ նշանակում է, թե նույն այդ ձեռագրում հիշատակարան կա նաև 1381 թվից։ Այնուհետև տրված է հիշատակագրի անունը

(Մարտիրոս) և նրա առնչությունը ձեռագրին (գրիչ)։ Հաջորդ տողում տրված է ձեռագրի ղրչության վայրը (վայր՝ Գոռներ)։

Եթե մեկնույն ձեռագրում նույն տարեթվին գրված մի քանի հիշատակարաններ կան, ապա նրանք անջատված են միմյանցից հայկական թվահամարներով՝ ա, բ, գ և այլն, և յուրաքանչյուրի համար տրված է հիշատակագրի անունը ու ղրչության վայրը, եթե, իհարկե, այլ մարդու կողմից է գրված և այլ վայրում։

Էջերի ձախ ընդերկայնական լուսանցքում գրված թվանշանները ցույց են տալիս ձեռագրի էջահամարները։ Էջը փոխվելու դեպքում, նոր էջից սկսվող հատվածի առաջին բառի սկզբից դրել ենք ուղղահայաց երկու գծիկները՝ ||, իսկ այդ տողի դիմաց՝ ձախ լուսանցքում՝ նոր էջահամարը։

Մեր ծանոթագրությունները, որ տրված են անմիջապես էջերի տողատակերում, հիմնականում տեքստաբանական և որոշ չափով նաև աղբյուրագիտական հարցեր են շոշափում։ Ուսումնասիրել ենք պատմա-բանասիրական ծանոթագրություններով բնագիրը ծանրաբեռնելուց։

Վերջում տվել ենք ընդարձակ ցանկեր։

Առարկայական ցանկում, բացի երկրի քաղաքական ու տնտեսական պատմությանը վերաբերող հարցերից, հատուկ ենթագլուխների տակ, բերված են՝ հիշատակարաններում գործածված բոլոր տիտղոսները, պաշտոնական ու ադմինիստրատիվ տերմինները, արհեստները և այլն։

Տեղանունների ցանկում մեջ են բերված, որոշ կոմենտարներով, հիշատակարաններում գործածված բոլոր (շուրջ 500) բնակավայրերի ու աշխարհագրական վայրերի անունները։

Անձնանունների ցանկում ամփոփված են հիշատակարաններում այլևայլ առիթներով նշված բոլոր հայտնի և անհայտ անձինք, ըստ որում կան հաբյուրավոր տարրեր բնագավառներում աշխատած գործիչներ, որոնք առաջին անգամ են տպագիր խոսքով մատչելի դառնում մեր բանասիրությանը։

Այս ժողովածուն աղբյուրագիտական խոշոր ծավալի մեր առաջին աշխատությունն է, որը, հարկավ, զերծ չէ թերություններից։ Սիրով սպասում ենք մեր մասնագետների քննադատական խոսքին ու խորհուրդներին, հաջորդ գործերի հիշատակարանները ավելի ու կատարյալ հրատարակելու համար։

Լ. ԱՋԻԿՅԱՆ

20.X.1950 թ.

ՀԸՑԵՐՆ ՉԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

1301—1400 թթ.

ՉԾ 1301

1.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն.

Վաղապուրական, 76, լալ. ծուց. այուն. 139—142.

Գրիչ՝ Խաչատուր
գրչութեան վայր՝ Լիմ

ա

... Եւ ես, յողնամեղ և վհցունս ի գրչաց խաչատուր, տեսեալ ղվաւրագ և զսէր սորա [Աստուածատուր քահանայի], *յանձն առեալ ըստ իմում կարի՝ յանգ հանեալ կատարեցի շնորհտւք և ողորմութեամբն աստուծոյ, յամի ՉԾ. (1301): Դրնցաւ սա յանապատիս, ի կղզիս, որ կոչի Լիմն. ընդ Հովանեաւ ուրբր Աստուածածնին և սուրբ Կարապետի և սուրբ Գէորգա զաւրավարի, և ի հայրապետութեան Հայոց աստուածահաճոյ և սրբասնունդ հայրապետին տէր Զաքարիայի և յաոաջնորդութեանն սուրբ ուխտիս պատուական եպիսկոպոսին՝ Տէր Ցովան:*

Արդ, աղաչեմ զամենեսեան սիրովք աստուծոյ՝ ընթերցաւղդ և լսաւղդ, յիշման արժանի առնել զվերոյասացեալ պատուական քահանայն՝ զստացաւղ տուիս և զծնաւղս իւր...:

Ընդ նոսին և ես՝ ամենամեղս ի գրչաց սուտանուն խաչատուր աբեղայս, յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպեալդ սմա, յիշել և զիմ անարժանութիւն և զծնաւղսն իմ, զեղբայրն իմ զՊարոնիկ և զպապն իմ զՄարտիրոս և զքեռին իմ զՍարգիս և զերիս քոյրսն իմ՝ զհանդուցեալսն ի Քրիստոս...

Ստացող՝ Աստուածատուր

բ

Ի թուականութեանս Հայոց ՉԾ. (1301) ես, Աստուածատուր *քահանայ, ըստացայ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց առ ի յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց, ընդ նմին և ամուսնոյ իմո* Մարթայի *և զաւակաց իմոց՝* Սեդրակի *և* Միսաքի *և* Հռիփսիմեայ: *Արդ, որք կարդայք կամ զգաւիար առնոյք ի սմանէ, մեզաց թողութիւն հայցեցէք յամենառատ պարգևողէն Քրիստոսէ ինձ և ծնողաց իմոց և ամենայն ննջեցելոց մերոց...:*

Զստացող սուրբ աւետարանիս՝ ղխաչատուր քահանայն և զաւակն՝ զԿարապետ քահանայն և զամենայն արեան մերձաւորսն յիշեցէք ի

Քրիստոս և առաւած ողորմի ասացէք, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։*

2.

ԱԽԵՏԱՐԱՆ

Փիլպ. 6273, էջ 102 (Ամասիայի սուրբ Աստուածածին եկեղեցի)

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Բերկրի

... Արդ, ղրեցաւ նամակս աստուածայինս... ի թուաբերութեանս յոբելեան տումարիս ՉԺ. (1301), ի քաղաքիս Բերկրի, ընդ հովանեաւ սուրբ նահատակիս Գէորգեայ զօրավարի, ի թագաւորութեան Ղազան ղանին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ըստ խնդրոյ և փափաղանաց հաւատարիմ և ուղղափառ պատուական պարոնին Դանիէլի ... և ի վայելումն որդեկիլն իւրոյ և պատուական քահանայի Մարաբրոսի... ձեռամբ Յովհաննէս սուտանուն ղրչի...

3.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Նբև. 1527 (տես նաև՝ 1303 Ք. ե 1379 Ք.)

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Կիլիկիա

ա

608 ա *Ջմեծ պարոնն և զտրքայորդին հայոց զԱւշինն, հանդերձ եղբարբք և ծնաւղաւք, աղաչեմ յիշել ի տէր Ցիսուս։ Այլ և զԲարսեղ քահանա Լեռնկցի՝ ստացաւղ կտակիս յիշեալիք ի Քրիստոս, և զամենայն եղբայրութիւն սրբոյ անապատիս։ Եւ ղողորմելիս Վարդան զր[աղիբ] յերեսս անկեալ աղաչեմ յիշել՝ հարբ և եղբարբք և քրբ Թեփանօի[ւ], որ յոյժ սպասաւորէ մեզ։ Եւ որպէս պարզևէք, նոյնպէս և ձեզ տացէ Քրիստոս՝ որդին աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ ՁԱւշին ղպիր՝ մեր աշակերտ այլ յիշեցէք աղաւթիւք և աստուած ղձեզ յիշէ։*

բ

616 ա *Ցայսմ ամի, ՉԺ. (1301) մեծ թուականիս Հայոց, յապրիլեալի ամսոյ ի յերկու աւրն, ի մեծի զատկի յարութեան կիւրակէին, հանգեաւ ի Քրիստոս Բարսեղ Լեռնկցին, ստացաւղ սուրբ գրոցս, ոչ ժամանեալ յաւարտ գրչութեանս, որոյ ողորմեսցի նմա Քրիստոս և թողցէ զամենայն զսխալանս նորա, զի ո՞վ է մարդ, որ կեցցէ և ոչ մեղիցէ։ Այլ և զախտապաշար անպիտան ծառայ՝ տեառն Վարդա՞ա գր[աղիբ] և ամենայն սրոց ամէն ասեն, ամէն**։*

* Ձեռագիրը 85 համարի տակ պահվել է Լիմ անապատի Մատենադարանում։ Հիշատակարանը համառոտակի արտագրված է նաև Ղ. Փիլդալամյանի ժողովածուում. տես Նբև. 6273, էջ 102։

** «Ամէն» բառը գրված է վակագրով։

4.

ԴՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՈՒՂԹՔ

Հռոմ, 10 (Cod. Arm. X)

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Փերուժ

89 բ Արդ, գրեցաւ գործք Առաքելոցն և կաթողիկէք ձեռամբ յոգնամեղ Դաւթի, ի թուին ՉԾ. (1301), ի մայրաքաղաքին Փերուժ [Perugia] կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյն Մատթէոսի Բառնաբաւ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ օրինակէք, յիշեսջիք և մեզոց թողութիւն խնդրեցէք ինձ՝ մեղաւորիս Դաւթի և ծնողաց իմոց։ Այլև յիշեսջիք զեպակոր քահանա և զԳրիգոր միայնակեց Պկոտն կոչեցեալ, որք են առաջնորդ տանս։ Ընդ նմին և զսպասաւորք սուրբ եկեղեցոյս՝ զմեծ Յակոբ և զՄաթեոս, որք են քահանայք։ Յիշեսջիք զգործաւորքս՝ զեովհաննես սարկաւագ և զՊարոնիկ միակեց և տէր աստուած յիշողացդ ողորմեսցի, ընդ նմին և զներսես սարկաւագ։

5.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑ ՊՕՂՈՍԻ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ. 202. Տ.—Ավետեան, Ցուցակ, էջ 1270—1271 (տես նաև 1602 թ.)

Գրիչ՝ Թոր[ոս]
վայր՝ Հուպ առ Բարձրբերդ

ա

326 բ ... Ազքանազեանըս զըրոհի
Թուաբերութեանըս համարի
Եւթնհարիւր ընդ յիսնեկի (1301)
Զըրաւ եղև այսմ տառի,
Ի գաւառս կիւդիկեի,
Հուպ առ ղղեկիս հռչակելի,
Որ և անուամբ Բարձր կոչի։
Մովսես մեղաւք մեռեալս ոգի,
Որ սպասաւոր գոլով բանի,
Ստացաւղ եզէ այսմ մատենի,
Ցարղեանց այլոց ձրից պարգևի։
Ցերես անգեալ միշտ ամենի,
Մաղթեմ ղեկեալըդ մեր զըկնի
Ցիշել ի տէր յայսմ վայրի
Զերախտաւորս այս մատենի.
Եւ դուք լիջիք ի նոյն բարի,
Ցահեղ աւուրն աներեկի.
Եւ տէրն աւրհնեալ յամենայնի,
Ամէն, ամէն [և] եղիցի։

Ո՛հ, աղաչեմ յիշել զմեղաւք դատապարտեալ զծողակս զԹոր[ոս] և զրաբունին Մով[ս]ես, հանդերձ ամենայն զորմի[ւ]...։

բ

177 բ *Զմեղաւոր Մարտիրոս աշակերտ զրոց յիշեա ի տէր, ո՛, խմաստուն ընթերցաւդ։*

6.

ԼՈՒԾՄՈՒՆՔ Ի ՍՈՒՐԲ ԴՐՈՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Ծբե. 8132

Դրիչ՝ Թո[րոս]

ա

60 բ *Զսրբասէր եպիսկոպոսն և զկորովիմաստ բարուն զտէր Ստեփանոս՝ զհանդուցեալն աո Ջրխատոս, որոյ շնորհաւք զլրքս ձեռակերտի, որ վայելէք, յարաժամ յիշեցէք, աղաչեմ։**

բ

133 բ *Ո՛վ, վայելող սուրբ տառիս, զսակաւ ջծիկս ընկալ և զանհմուտ և դնորուսումն մանուկս զԹո[րոս] դպ[իր]** մի մոռանար, այլ յիշեա, աղաչեմ, և տէր լղձեղ [յիշէ], ամէն։*

---

* Համանման բովանդակության հիշատակագրություններ կան նաև ձեռագրի 29 ա, 32 ա և 72 ա էջերում։

** Հավանորեն նախորդ հիշատակարանի գրիչ Թորոսն է, ուստի անթվական սույն հիշատակարանը տեղագրում ենք նրան առընթեր։

ՉԾԱ 1302

7.

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Ե. Լալ. անահիպ, 581 (Լիմ 241)

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամա՞ր

Ի Թու. ՉԾԱ. (1302) գրեցաւ. Գրակքս Առաքելոց ձեռամբ Դանիէլի անարժան[ի]. ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ի վայելումն որդոյ իմոյ Գրիգորիսի և քահանայապետին [*], զորս փրկեսցէ Քրիստոս յամենայն փորձութենէ, ամէն...։

8.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ

Նբևան 6558

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Գլաձոր—Թեղենեաց ուխտ

...Որում յոքնատենչ ըղձիւք բաղձացեալ քաջահանճար վիլիստ-
637 բ *վայն և բանիբուն ճարտարն, միջամուխ մակացուն || աստուածայնոց տառից, աստուածխմաստ և տիեզերալոյս բարեւնապետն Նաայի, որ ի նուաղեալ ժամանակիս առաքինասէր վարուք պայծառացեալ և աստուածաշունչ կտակարանացն իմաստիւք գերալրացեալ իբրև զարեգակն փայլէր յաշխարհի, որ և ի վերա ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն կատարի առաքինութիւն, և ղուսուցչապետութեանն ևս զգործ ի կիր արկեալ ընդ առնելն լծակցելով և զամենայն եկեալսն առ ինքն յաստուածային ուղղէր ճանապարհ, աղբիւրաբար բխելով դիոգենոյն սրբոյ վարդապետութիւնս ի լսելիս աշակերտելոցն։ Զոր տէր Յիսուս շնորհեացէ զսա եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն ժամանակս խաղաղական կենաւք։ Որոյ կցորդեալ կամացն, բարեսէր յաւժարութեամբ և ձեռնտու աւժանդակութեամբ հոգւոյն շնորհաւք ծաղկեալ, սրբազան և աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելականն դիմման քահանայականն դասու կատարողապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի, որ է ամենայն առաքինութեամբ զարդարեալ։ Զորո խնամքն աստուածոյ պահեսցէ զնա խաղաղական կենօք, շնորհելով եկեղեցոյ սրբոյ ընդ երկայն աւուրս։*

Բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղև ի գաւառին Վայոյձոր կոչեցեալ, ի սուրբ և ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ Աքեռն, ձեռամբ ուրուքն սրբազան քահանայի՝ առն իմաստ-

նոյ և ճարտարի, որ էր ամենայն աստուածաշունչ կտակարանաւքն վարժեալ՝ սպասաւոր գոլով բանի, մերձ ի կատարելութիւն, Յովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր քաղաքէն Նզնկայ կոչեցեալ։ Արդ, զկէս Մեկնչի Սաղմոսին գրեաց սոյն այր, և ապա սակաւ ինչ այլ ոմն Վարդան անուն, ի նահանգէն Կիլիկիոյ, որոց զվարձս հատուցէ տէր։

Եւ ապա, ըստ պատահման ինչ, դիպեցաւ վեր յիշեցեալ բարեպաշտին ելանել յիւրոյն կայանէ և երթեալ շրջէր յԱյրարատեան գաւառն, ի վանորայսն, որ յայնմ նահանգի, աղաւթից պատճառաւ։ Եւ զամ մի ողջոյն այսր անդր շրջեալ, դառնայ վերստին ի Վայոյձոր՝ յիւրն մենաստան, և հրամայեաց իմում անարժանութեանս զպակասն ի յերկուց գրչաց, որք նախ քան զմեզ գրեցին, զերիսին ևեացեալ ի նոցանէ՝ լնուլ. զոր և յանձն առեալ գրեցի վճռուն մատամբ և անարհեստ գրչաւ, ոլպէս և ի ստորակայէս յայտ երեակ ցուցանի։ Արդ, ոչ եթէ իբրու ճարտար գրչով յարհեստ գրչութեան յանձնապաստան յամարձակութեամբ ձեռնամուխ եղէ ի գործ, որ ի վեր էր քան զկարն
638 ա իմ, այլ ի յոլով խնա || մս վայելեալ նախայիշեցեալ սուրբ բարեպաշտին և անիճահ վար[կս]եալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ նորին, զխարիսխ յուսոյն յատուած ընկենլով, ձեռն ի գործ արկի։

Եւ եղև աւարտ գրչութեան սորա յԱյրարատեան նահանգիս, յաստուածաբնակ և ի գերահոչակ սուրբ ոյխոս Թեղենեաց, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ և սրբոյ կաթողիկէիս և այլ աստուածակիր նշանաց, ձեռամբ քարմատար և անարհեստ գրչի Մկրտիչ կոչեցեալ, անուամբ միայն բաբի, ի սոյն անապատի։ Եւ հրեշտակակրաւն եղբարքս սիրով սպասաւորէին մեզ, ես առաւել հոգևոր հայ[ր]ս Իսաւիք, որ էր առաջնորդ սուրբ ոլխոյս, որք լցին զամենայն պէտս կարեաց մեր, որոց տրիտուր հատուցմանն ի տեառնէ պարգևեսցի, զորս խնամքն աստուծոյ հաստատուն և անշարժ պահեսցէ զմիաբանութիւնս զայս մինչ ի միւսանգամ գալուստն իւր սուրբ։ Եւ էր շրջագայութիւն ամանակաց թուաբերութիւն հայկազեանս տումարի յարաբարդեալ ամաց հինկետասան յիսնեակաց ընդ միակի շարամանելոյ (15.00+1+351= 1302), յորում ժամանակի ունէր զաթոռ հայրապետութեան հայոց տէր Կրիգորիս մակհորջորջեալ Անավարզեցի, որ էր համանուն սրբոյ լուսաւորչին մերոյ, այր մեծիմաստ և հոգևահանճար, ի բռնակալութեան կողմանցս արևելից բաժնին Ասիոյ, ի վերա հոլովից տիրեալ ազգաց խուժադուժ և բարբարոս ազգին նետողաց, որոց գլխաւորին անուն Ղազան կոչի։ Ընդ սոդա գրաւեալ ծառայութեամբ ծանրագոյն լծոյ հարկապահանջութեան յոքունց ազգաց, ևս առաւել տունս Հայոց, որպէս երբեմն Իսրայէղի, ի ժամանակս անիշխանութեանն։ Ի սոյն ամանակի վարէր զառաջնորդութիւն թագաւորութեանն Կիլիկիոյ Հեթում որդի Լևոնի, այր աստուածասէր և հեզ հոգի, կատարեալ ամենայն բարեացն արդասիւք, զոր խնամքն աստուծոյ պահեսցէ խաղաղական կենաւք հանդերձ հարազատովքն իւրովք, որ էր և նա [Հեթում] մնեալ ընդ վերասացեալս հարկաւ։

Ուրդ, աղաչեմ ամենայն պատահեալսդ սրբոյ մատենիս, որք աւդտիք ի սմանէ ընթեռնուով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրամատոյց յաղաւթս ձեր դվերադրեալս ի սմա՝ զնոգեհանճար և զգեղիմաստ բարուեսպետն իմ՝ զհայրն հոգևոր զեսաիաս, զստացող սուրբ կտակիս, զոր տեր Յիսուս Քաղաղական կենաւք պահեսցէ զնա յաստիս, և զկնի ելիցն յաշխարհէ՝ ի դասս սրբոց վարդապետացն ընկալցի ի խորանն լուսեղէնս և անթառամ պսակաւքն պսակեսցէ, հանդերձ ծնողօք իւրովք և ամենայն արեան մերձաւորաւք, յարդուարձ բերկրիլ յանտրտում ուրախութիւնն։ Եւս առաւել զնոգևոր հայր սորին և դվարժապետն աստուածային իմաստիւք, զայն աստուածազգեաց և
638 բ երանաշնորհ դշտեմարանն աստուածային գանձուցն՝ զհոգե || կիր բարեսպետն Ներսես, զհանդուգնեալն առ Ք֊րիստոս, դի կայանս իմաստնալեացն ընկալցի զնա ընդ որդիս անդրանկայ վերին Սիոնէի, ընդ նոսին պարել դիմանալի գեղապարութիւնն, զոր աղաչեմ յիշման բարւոյ արժանի առնել ի մաքուր աղաւթս ձեր։

Ասաանաւր յերկնս անկեալ կրկնապատիկ մաղթեմ դիւմբս ընտրելոցդ սրբոց, որք միանգամ պատահէք հոգևորական բերկրանաց տեսութեամբ ինչ կամ մտաւորական վերծանութեամբ սրբոյ մատենիս, սխալանաց զըչիս ներեցէք, իբրու տկար բնութեան, վասն դի, որպէս յառաջն ասացի, սչ ներհուն դոլով մեր յարհեստ գրչութեան, որպէս պահանջէ մեծապոյն այսր իւղոդութեանս վարկ, սակայն և ոչ ըստ կամաց եղև մեզ դիպիլ տեղոյ, քանդի յարկն յորում կայաք բացակայ դոլով, մածնոյր հանապազ մեզանն ի յաւդոյն, ընդ որ յոյժ վշտանայի, ես և աղմուկ դրուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի, վասն որոյ և ոչ կարողանայաք ճանդակի հանդիպիլ ի գործ արհեստիս, վասնորոյ թախանձեմ աղերսիւ, դի բարի մտաւք յիշեսջիք յաղաւթս ձեր զհոգնամեղ գրիչս և ծնողն իմ և զեղբարսն, դի թերևս արժանի լիցուք աղաւթիւք և ամենայն սրբոց մասն ողորմութեան գտանել յաւրն վերջին։ Եւ զսխալն սիրով սւղղեսջիք, դի և զձեր սխալանսն ջնջեսցէ ամենագութ տէրն։ Յիշեսջիք, աղաչեմ և զՅովաննես և զՎրթանես սրբասէր քահանայք, որք և հարաղատք [են] իմ և սպասաւորք, ևս և զպատանիս՝ զՍարգիս դպիր, որ յոլով ոպասաւորեաց մեղ՝ յիշեսջիք աղաւթիւք, դի յիշեցեալքս և յիշողդ առհասարակ արժանի լիցուք ողորմութեանն Ք֊րիստոսի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

9.

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼԻ ԱՍՈՐԻՈՑ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 243, Տեր-Ավետիսյան, էջ 1787

Յովհաննես Օրբել
վայր՝ Նորավանք

232 բ Ծանուն ամենակալին աստուծոյ, ես տէր Յովհաննես, յազգէ Աւրպելեանց, պոսաւորթրանտէս Հայոց մեծաց և մետրապաւլիտ Սիսակ[ան] նահանգի, եկայք ի Վերին Նորավանս, ուր վարդապետն

Դաւիթ և Արբայ. խնդրեցին ի մէնջ ժողովուրդ ինքեանց ի սատար սուրբ ուխտիս, և մեք սուաք սոցա ժողովուրդ զԱՆկեղի, զնղիան, զեղիկանց Ջոր, զՎադցան ի սեպհական ժողովուրդ և թեմ, որ զամենայն հաս և զիրաւունք սոքա սոցա տացին։

Եւ սոքա կարդեցին ի տարին Ռ. պատարագ, ի տունի ծննդեան։ Եւ մի ոք իշխեսցէ հանել զտոոայ ի սուրբ ուխտէս, ի մերոց կամ յաւատարացւ։ Եւ որ սք հակառակի կամ հանել չանայ ՅԺՐ. հայրապետացն նզոված եղիցի, մասն և բաժին զՑուզայ[ի]ն և զՄաչէհանուացն առցէ և ինքն ելցէ ի շնսրհացն առաւածայ, ամէն։ Գրեցաւ ի թուականիս Հայոց ՁԺԱ. (1302), առաջի սուրբ Միօնիո և վարքայպետիս Դաւթի։ Հաստատ է գիրս կամաւն առուածայ։*

10.

ԱԻԵՏԱՐԱՆ

Մխրատեանց, երնջակ, էջ 230—238 (տես նաև 1676 թ.)

Գրիչ՝ Յովհաննէս [Օրբել]
վայր՝ Սիւնիք

ա

...Սիրոյ աւրինացն յոյժ տեղեակ գոլով հոգևոր տեառնդ, զի զաւրաւորք են և ուժեղք, մինչ զի անհնարինս ձեռնարկել տա և մոռացուսս արկանել մահուն այնոցիկ, որք դուզնաքեայ լինն յաւժարութեամբ նմա հետևին և ներանձնիցին ըղձանօք Ջանայցեն նմա հասանել, և այս կրկին ունելով տեսութիւն՝ երկնաւոր և հոգևոր, ըստ մասինս և երկրաւորս, բայց յոլով իրաք տարբերեալք ելով ի միմեանց, յաղթող երևի հոգեորն ըստ պատշաճին իւրում։ Քանզի երկրաւորն առժամանակ մի է և անկատար, իսկ որ բստ այն է ոչ ունելով խափանումն և ի ձևսյն ոչ երբէք անկանի, ըստ առաքելոյ՝ թէպէտ և ամենայն ինչ խափանի և լուէ։ Որ և իմ անարժան անձինս պատահեաց սակաւիմաց և տխմար մտաց տեսութեամբ, որ հոգևորն է սիրով** աստուածայինն գլխ[աւոր] տէրդ Ստեփաննոս, որդի փառաւոր իշխանաց իշխանին Տարսայիճին, զի հարկեալ ի հրամանատարութեան ձերոյ բարձրութենէդ և ի սիրոյ և ոչ յանձին կարողութիւն վստահանալով, ձեռնարկեցի այս գործառնութեան և տառակերտեցի նշանախեցիւք։ Բայց դու ընկալ զձերոյ հրամանատարութենդ կատարումն, թէպէտ և ոչ ըստ կամաց և պարագայից ամաւք վայելելով դուարճօրէն բարձրութեամբ, զյետինս ի ծանօթից ձերոց՝ զՅովհաննէս՝ որդի եղբօր ձերո և խթատու և բանին ծննդեամբ՝ ծառայ և որդի ձերումգ սրբութեան, յիշեա բարի յիշատակաւ ի Քրիստոս, որ և դուք լիջիք

* Ձեռագիրն ընդօրինակված է, հավանորեն, ԺԴ դարավերջին։ Ստացողն է Դավիթ վարդապետը, որի մասին 246ա էջում պահպանվել է հետևյալ հիշատակութիւնը. «Ձստացող սուրբ գրոյս Միխայէլիս ղնեամ (երևի՝ ղնեամ) ոգի Ռ. սուկանուն վզ. աղաչեմ յիշել սրտի մտաւք»։

**Ցվված է ասերով»։

յիշեալ բարեաւք առաջի ամենասուրբ երրորդութեան, հանդերձ ծնողօք և զարմիւք ձերաւք։ Եւ թէ սխալ դտանէք, թարց մեղադրութեան թաղցես զմեղ, ոնյիշաչար աչբ, ուսեալդ ի մարդասիրէն Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Թանաքին արուեստն չգիտացաք։ Ստացողին և գրչին յիշումն բարի պահանջեմ։*

բ

Զգերաբուն բանի սպասաւորն և զարեգակնափայլ լուսատուն հոդոց՝ զմեծարապօլիտն Սիւնեաց՝ զտէր Ստեփաննոս ստացող, յիշեցէք ի տէր։

Ծաղկող՝ Մոմիկ

գ

Աղաչեմ զհանդիպեալքդ այսմ աստուածաբան տառիս յիշել զանխմաստ նկարողս Մոմիկ և սխալանացն անմեղադիր լինել, դի թէպէտ անչմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տունս նսեմ, և աստուածբ դյիշողդ յիշէ յիւր անբաւ ողորմութիւնն, և նմա վաղք յաւիտեանս, ամէն։ Ի թվիս ՉԾԱ. (1313)։

Թերին լրացնող՝ Գրիգոր

դ

Գոհութիւն հաւր անեղին
և միածին նորա բանին,
Համից գոյից արարողին,
հոգւոյն որրոյ զարգարողին,
Ի յաղաւաժէտ անձնէ՝ կրկին
աւետարանս գրողին։
Գրեալ էր նախ սա Օրբէլիճ,
Սիւնեաց արհի մեծարապօլտին,
Որ էր իշխան նա վիճակին,
տանն Սիւնեաց մեծ նահանգին,
Բարուն արի քարտուղարին
և քաջաբան վարդապետին։
Վասն խնդրոյ Ստեփաննոսին՝
իւր հօրեղբաւրն և Բիւրքելիճ,
Արի և քաջ վարդապետին
և Սիւնեաց եպիսկոպոսին,
Համեալ և իմ դիրս ընդ նմին,
Գրիգորիս տէր Աւրբելիճ,
Դասակից լինել նմին,
աղքատս յետին՝ անփարթամին,
Աստուածաբան վարդապետին
և քաջիմաստ հռետորին,

* Վերջին երկու տողը գրված է կարմիր թանաքով։

Պետ և արհի հայրապետին
Սիւնեաց աթոռոյ Տաքևից,
Ես անպիտան յամենայնի՝
Գրիգոր գծող այսմ տառի,
Տեսի զկըտակս ցանկալի՝
դաւետարանս Ք֊ի֊ստոսի,
Ի թուականիս ութհարիւրի
յիսուն ու հինգ ամ աւելի (1406)։
Էտու քաջալերս իմ սրտի,
աշխատութեամբ գծագրեցի։
Աւետարանս էր այս թերի,
միայն Ցոհան էր ի կարգի,
Ցերից ղկիսոց սակաւ ունի
զսկիզբն և դաւարան ի պաշտաճի։
Սակս սրոյ հոգս ինձ արարի,
յաւժար կամաւք զթերին լցի։*

11.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փերդ. 6273, էջ 103 (Վանի Ս. Նշան եկեղեցի)

Գրիչ՝ Սերոբ

... ՁԺԱ. (1302) Թուականութեան Հայկազեան տումարիս, ի հայրապետութեան տեառն Գրիգորայ հայոց վերապիտողի և կաթուղիկոսի, ի ժամանակիս Ղազան զանին՝ որդւոյ Արղունին... Ցիշեսջիք զտրուպ գրիչս զՍերոբս** ի շնորհարաշխ յաղօթս ձեր և զծնողան իմ փոխեցեալան ի Ք֊ի֊ստոս, զԼիացն հայրն իմ և զմայրն իմ զՏիրացն և զեղբարան իմ՝ զՊարոցլուսն՝ զնահատակեալան ի ձեռաց անօրինաց վասն սիրոյն Ք֊ի֊ստոսի...։

---

* Տողերի սկզբնատառերով հոգվում է «Գրիգոր վարպետի է այս». Ձեռագրի մասին Մ. Մաթեւոսյանը տալիս է հետևյալ ծանոթությունը. «Աւետարան պատերազմի անանեալ, փոքրագիր բոլորգիր. Տերունական ոսկեզօծ նուրբ և շնորհ պատկերք, բերեալ ի Մեծոփայ վանից Վառզուբակեան, ընդ ձեռն գաղթական Նաչատրոյ և Նոսրովու Գրիգորեան, առ որս և գտանի աւետարանս, գրեալ ի վերայ մագաղաթի և ի տեղիս—տեղիս բամբակեայ թղթի»։

** Հիշատակագրանի ընդօրինակող Ղ. Փերդալամյանը կարմիր թանաքով ավելացրել է «քահանայ», հավանաբար հիմք ունենալով հիշատակարանի չարտագրված մասին, կամ նույն ձեռագրում եղած մի այլ հիշատակագրության համապատասխան տվյալը։

12.

ԱԻԵՏԱՐԱՆ

Սեբաստիա, Ս. Նշան, 18. ՀՄ, 1924. էջ 515—516

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Եկեղեցեաց գաւառ

327 ... *Ի թվ. ՉԺԱ. (1302) ղրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Կարապետի մեղաւորի, թշուառական կրաւնաւորի, ի յանապատիս, որ կոչի Տիրաշէն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և կենսակիր սուրբ Նշանիս և այլ վեհագոյն սրբոցն, ի հայրապետութեան տէր Գրիգոր հայոց կաթողիկոսի և ի թագաւորութեան Հեթմոյ բարեպաշտի, և ի յառաջնորդութեան գաւառիս Եկեղեցաց տէր Ներսէսի, Թոռին տէր Սարգսի. եղև ցանկացող այսմ Քրիստոսի մատենիս պատուական և սրբասնեալ քահանայն Ղուկաս և յաւժարութեամբ | | |* *

* Թերթ է ընկած։

13.

ԳԷՈԳԱՑ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

Երևան, 1364

Վայր՝ Սիւնիք

ա

46 ա Հաստատող դրացս, զերջանիկն ի վարդապետս, զերիցս երանե[լ]ւն զՅովհաննէս մականուամբ Աւրբել յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ։

բ

60 ա Բարեխաւսութեամբ սրբոյն Ստեփաննոսի, Քրիստոս աստուած, աւգնեա Յովհաննիսի, և պահպանեալ և ընդ այնեայսն դասեա զմեծափառ իշխանն զԼիպարիտ և զնաւայն՝ զծնողսն սոցա, ամէն, եղիցի։

գ

142 բ Քրիստոս, յոյս հաւատացելոց, զո սուրբ և երջանիկ տոհմէդ բարեխաւսութեամբ, յերկար ժամանակաւ և պարագայն ամուր պահպանեա զսուրբ բարուն || զՅովհաննէս՝ ստացող սորա, և ողորմեալ երկիւղալից և աստուածահաճոյ ծնողաց նորա, մեծափառ իշխանաց իշխանին Լիպարտի՝ հաւր սորա և ամենաւրհնեալ սուրբ դշխոյին Նաւային՝ մաւր սորա, ամէն և եղիցի։*

14.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՑ

Թիֆլիս, 1017 թ., էջ 517—520 և Փիլդ. 6273, էջ 105—107

Գրիչ՝ Դաւիթ
Վայր՝ Աղթամար

... Ընդ որհնօք ամենակալին աստուծոյ հօր և միածին Ցխսուսի Քրիստոսի և սուրբ հոգւոյն ճշմարտի, աստանօր յանգ ելեալ աւարտեցաւ գեղեցկայարմար պատմութիւնս այս, զոր արարեալ աստուածանուեամբ անյաղթ և գիտնական վարդապետին Թովմայի, սկսեալ

---

* Հովհ. Օրբելյանը Սյունյաց մեծրոպոլիա էր 1303—1324 թ.թ. (տես՝ Ջազբակյանք կամ Պոդչյանք, էջ 187—8)։ Այս ձեռագիրն ստանալու ժամանակ նա դեռևս սոսկ վարդապետ է և ոչ եպիսկոպոս, ուստի ամենայն հավանականությամբ այս հիշատակագրությունները գրվել են մինչև նրա մեծրոպոլիա դառնալը՝ այսինքն մինչև 1303 թվականը։

ի յԱղամայ մինչև ցնոյ. և անտի եկն աստիճանաւ վերուստ ի վայր, մի տո մի, և բազում աշխատանօք ճշդրտարար եկն եհաս ի յաղգն Արծրունեաց, և միըստմիոջէ շարակարգեալ զազգն և գիրն և զպատճառս նոցա. և թէ որպէս բազում ջանք և աշխատութիւն կրեալ նոցա հանգերձ պատերազմաւ ընդդէմ այլազղեաց և բարձին զչարութիւն նոցա ի բազում տեղեաց, որչափ և կարողութիւն նոցա եհաս. ես առաւել աստուածապսակ և բարեպաշտ և ամենիմաստ թագաւորն Հայոց Գագիկ, որ իմաստութեամբ և ուզղափառ վարուքն իւրովք և կամօքն աստուծոյ տիրեաց բազում աշխարհաց, զոր կայ յիշատակեալ ի սմա, և խոտաղութեամբ պահեաց զամենայն աւուրս կենաց իւրոց ի հինից թշնամեաց և եղև առիթ շինութեան եկեղեցաց, ևս առաւել ղերահոչակ և սքանչելագործ սուրբ եկեղեցոյս սուրբ Խաչիս Աղթամարայ. ընդ որոյ հովանեաւ շարագրեցաւ պատմութիւնս այս ի թուականութեանս Հայոց յեօթնհարիւրերորդի յիսներորդի երկրորդի (1303), և յաշխարհակալ թագաւորութեանն Ղազանի, հրամանաւ և ծախիւք աստուածապատիւ և երջանիկ երիցս երանեալ ամենիմաստ հայրապետիս Հայոց տեառն Զաքարիայի, որ է յոյժ բարի և առատամիտ և աղքատասէր և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ, և ի խնդրոյ աստուածարեալ գիտնական և արդիւնական վարդապետի, միանգամայն և արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփաննոսի, որ է ակն արեւելեան և աթոռակալ մեծի Սիւնեաց տանն: Եւ եթէ նախնականօքն քննեսցուք զնա՝ ոչ ոք է յիշխանացն և յիշխեցելոց արևելից կողմանցն բարձրագոյն քան զնա, զի ամենեցուն քաջայայտ է ազգն և նախնիքն նորա, և նա այնպէս է ի մէջ նոցա փառաւորագոյն և պայծառ, որպէս զարեգակն ի մէջ աստեղաց: Եւ նա վասն սիրոյն աստուածայինն խնգրեաց զպատմութիւնս ի մերոյ սուրբ լուսաւորչին ի տեառն Զաքարիայէ. իսկ սա մեծաւ ջանիւ ետ գծագրել զսա յաղագս խնդրոյ նորա: Եւս առաւել կամեցող եղեալ այսմ գործոյ ամենիմաստ և բարեմիտ, հեզ և խոնարհն, հարազատ եղբայր տեառն Զաքարիայի Ամիր Կուրգին, զոր տէր աստուած զնոսա ընդ երկայն աւուրս արասցէ, անփորձ պահելով յամենայն որոգայթից թշնամեաց՝ յերեսելեաց և յաներեւութից, հոգւով և մարմնով զամենայն աւուրս կենաց իւրեանց, ամէն:

Եւ ես ամենամեղս և անարժանս և անյիշելիս ի կարգս գրչաց և կրօնաւորաց Դանիէլ անուն, ըստ իմում տկարութեանս յանձն առի գրել զսա, ի դուռն մեծ և պանծալի սուրբ Խաչիս Աղթամարայ, զոր վերագոյնն յիշեցաք. և դարձեալ յերես անկեալ աղաչեմ զբարի ընթերցողս և անմեղադրութիւն խնդրեմ վասն սխալանաց գրոցս, եթէ աւելի կամ պակաս գտանիցի ի սմա, եթէ կէտ, եթէ տուն և եթէ ստոր և եթէ յայլ ինչ բառ, ի Խ կամ ի Հոյ. զի գիտնականքն քաջ գիտեն, որ ի հին գրեանք այսպիսեացս ոչ ինչ փոյթ է արարած. և ես անհմուտ գոլ սոցա՝ զոր ինչ լսեալ էաք յեկեղեցական գրոց ի բառիցս յայսցանէ՝ զնոյն գրեցաք, և զոր արտաքոյ սոցա էր՝ ոչ գիտելով թէ որպէս էր. և ի ձէնջ խնդրեմ, զի ըստ աստուածասէր կամաց

ձերոց՝ միայն զաստուած ողորմին շնորհէք մեզ և ծնօղաց մերոց, զի դուք զտջիք զողորմութիւն յաստուածոյ յաւուրն աներեկ գալստեան նորա։ Եւ ինքն եղիցի օրհնեալ, գովեալ և բարեբանեալ յամենայն արարածոց՝ յիմանալեացն և ի զգալեացս, այժմ և հանապազ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Դարձեալ կրկին աղաչեմ և զուսցիչն իմ զՍիմէօն պատուական քահանայն, որ ի բազում արուեստից իւրոց զսակաւ գիրս մեզ ուսոյց, և զնա յիշել ի տէր սրտի մտօք և զծնօղսն նորա։ Եւ Քրիստոսի աստուածոյ մերոյ փոխոք յաւիտեանս, ամէն։

15.

ՀԱՒԱՔՈՒՄՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵԶԵԿԻԷԼԻ. ԵՄԱՑԵԱՑ ՆԶԵՑԻՈՑ

Երեան 5566

Հեղինակ՝ Եսայի Նչեցի
վայր՝ Գլաձոր

356 բ ... Արդ, ըստ հայցման հաճութեան բարեսէր կամաց երջանիկ և գերիմաստ նախասացեալ արհիականին [Ստեփաննոսի Օրբելեանց] յաւրինեալ շարադրեցի զտեսութիւն աստուածաբան մարգարէիս կարճ և համառաւտ տեսութեամբ, ի թուիս Հայկազեան տոհմիս տումարի ըստ հոլովման ամաց եւթնհարիւր յիսուն և երկուց (1303), ի գառն և անբարի ժամանակիս, որ տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ և արտաքուստ, որ ափշութիւն գործէր տեսականին և ընդմիջումն գործոյս քննութեան։ Սակայն ըստ կարի իմովս անարգութեամբ հարկեցուցիչ հրամանաւ, ի ձեռնտուութենէ հոգւոյն, գրեցի զսա աղքատ և չքաւոր սեղանով զծառայակիցսն կերակրելով, և հայցեմ յամենայնէ ներումն գտանել սխալանացս, որ աստ գտանին։ Իսկ եթէ յաւգուտ ումէք լինիցի՝ շնորհակալութիւն հոգւոյն շնորհաց եղիցի և կաթ ազաւթից ձերոց ցուղեսցի ինձ ի աստգան իմ գերեզմանին։ Եւ եղկելի մատանցս այս վաստակ մտերիմ և խոհեմ քննողացդ ի վայելս մեծ և յաւգնութիւն եղիցի։ Նաև զաշխատասէր և զառատամիտ վարդապետն Յոհաննէս*, զծնեալ որդեակն իմ ի Քրիստոս, ի ձեռն որոյ սրբագրութիւն տառիս եղև, յիշեցէք բարի** կամօք, զի ըստ աշխատանացն գհատուցումն ընկալցի ի տեառնէ։ Եւ դուք, ով աշակերտք բանի, որք պատահէք այսմ աստուածային հանդիսի, աւրինակելով զսա, գրեսջիք և զսակաւ զայս արձան յիշատակին մերս տաժանմանց, զի մի լինիջիք բազմիս առօղ և սակաւին ոչ տուօղ, այլ ընկալեալ

---

* Լուսանցքում, նոր ձեռագրով, գրված է՝ Որոտնեցին սխալ ծանոթությունը։
** Հիշատակարանի շարունակությունը, վերջին թերթի կորստի պատճառով չի պահպանվել այս ձեռագրում, պակասը լրացրել ենք Երևանի № 1241 ձեռագրից, էջ 313 աե

ի ձեռաց մերոց յըղկեալ վէմն այս կենդանի յամայիս արգելանի, առեալ գիցի ի հիմունս նոր Սիոնի, որով աւրհնեալ փառաւորեսցի ամենասուրբ երրորդութիւնն, անբաժանեալ ի ներկայս և յապառնին և յանսպառ յաւիտենին, ամէն։

16.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՑԱՍԱՆ ՄԱՐԴԱՐՂԻՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Ընկան 3606 (տես նաև՝ 1337 թ.)

Գրիչ՝ Թադէոս
վայր՝ Նռնաւնից վանք

ա

Ծորժամ գրեցաւ և յանկ ելեալ աւարտեցաւ. բացայայտութիւն դպրութեանս աստուածախաւս երկոտասան մարգարէից, դիտապետք Հայոց տէր Գրիգոր, տէր Զաքարէ և տէր Ստեփանոս Աղուանից և
275 բ *վարժապետ Սաւայեայ || և ստացաւղ սորին՝ պատուական և աստուածախաւս բարեւնին Յոհաննէս և Թագաւոր՝ Հեթում՝ այր բարեպաշտ և իմաստասէր և մանաւանդ աստուածասէր և կայսր՝ աշխարհակալ Խազան գան՝ յազգէն Նետողաց, տիրելով Հայոց և Ասորոց, Վրաց և Աղուանից, Մարաց և Պարսից, Թուրքաց և Հագարացոց։ Բայց գրեցաւ հրամանաւ վերասացեալ առնն աստուածոյ Սա[յեայ] բարեւնապետի, ի խնդրոյ Յոհաննէս վարդապետի և ձեռամբ Թադէոսի անարհեստ գրչի, ի թուիս Հայոց ՉՃԲ. (1303), ի գաւառիս Այրարատեան, ի վանքս, որ կոչի Նռնաւնից, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ կենսակիւք սուրբ նշանացս։ Այլ և գրեցաւ ի գառն և ի գժընդակ ժամանակի, ձմեռան յեղանակի, բաղում տառապանաւք և նեղութեամբ։ Եբբեմն ի ցրտո և ի ձմեռնային խստութենէս տառապէի, երբեմն ի թաթարի գալոյ ու գնալոյ ու ի տեղացս աւերութենէն մեք փախստական լինէաք ու մխիթարութիւն ոչ ուստէք. ու ես հայնց կամէի, որ ամէն գիր ոսկի էր յե[ա]լ. ապա մեր կտրողութիւնս այդ չափ էր, աստուածոյ սիրոյն համար անմեղադիր լերուք. որոց՝ հանգիպելոցդ սմին հայցեմք ի ձէնջ յիշատակիլ բարի յիշատակաւն Քրիստոսիւ ստացող սորին Յոհաննէս վարդապետ և աշխատողքս, ի փառս աւրհնեալոյն յաւիտեանս, ամէն։*

276 ա *Եւս և զաղաչինն տեառն՝ ղԱռաւղայն յիշեսջիք ի Քրիստոս, քանզի ի նորա սակս յիշատակի տուեալ եղև գծագրել զսայ, ի վարժս աւգտի մանկանց նորոյս Սիոնի։ Աւդտեալքդ յայսմ տառէ զվեր յիշատակեալ զաղաչինն աստուածոյ զԱռաւղայն յիշեսջիք ի տէր։*

Գրիչ՝ Մխ[իթար]
վայր՝ Գայլիծոր

բ

330 ա Դրեցաւ վերլուծութիւնս Դանիէլի մարդարէի յանապատիս Գայլիծոր անուանելոյ, ի թուի ՉԾԲ. Իրրորդի (1303), աւժանդակութեամբ մերոյս սրբազան և արդիւնական Նահապետ անուն առաքելոյ, ի ստացուածն և ի խնդրոյ պատուական և առատաձեռնահաճոյ Ցոհ[աննէս] վարժապետի և իմոց հոգւոյ հարազատի, ձեռամբ անպիտան և անարժան Մխ[իթար] պիտականուն վարդապետի. և որք հանդիպիք այսմ տողերի արգասաւորի ղԲրիստոս Աստուած Ողորմեսցին անյապաղ հաւանջիք մերումս հոգւոյ, որուհի յաւէտ կարաւտիմ։

333 բ Ւրայց սաստկանալ եղև մահտնես աստուածախտովք, յիշատակ աղախնոյն աստուծոյ Ասուղա կոչեցեալ, վերափոխելոյն ի Քրիստոս տղա և տհաս հասակաւ, ժամանեալ մինչ յաւուրս քառնամեայ՝ ավելի կամ նուազ, վախճանեալ ղկեանս իւր, փոխեցաւ ի Քրիստոս յոյժ աղէտ և ողբմի թողեալ ծնողացն իւր, քանզի միայն ունէին զնա։ Արդ, պատահողք այսմ տառի՝ ղվերառացեալ աղախինն Քրիստոսի ղԱսուղայն յիշեսջիք ի Քրիստոս, զի յիշեցելոյն և յիշողացդ եղիցի ողորմութիւն յամենառատ ողորմութենէն Քրիստոսի աստուծոյ մերոյ՝ աւրհնելոյն յաւիտեանս, ամէն, եղիցի։

17.

ԱԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 182 (տես նաև 1658 թ.)

Գրիչ՝ Մարտիրոս
վայր՝ Գուճեր

ա

238 ա ՉՄարտիրոս վարդապետ աշակերտ Գեորգեայ Սկևռացւոյ՝ ղդրաւղ դրոցս յիշեցէք ի աէր, ընդ նմին և զվարդապետն իմ և զուսուցիչ զԳեորգ բարեւնապետ, նաև զծնաւղսն իմ և զամենայն աղգատոհմն, և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն և ինքն եղիցի աւրհնեալ յաւիտեանս, ամէն, ամէն։

բ

205 ա Ես Մարտիրոս՝ սպասաւոր բանի և աշակերտ գրոց, ըստ ըղձի և փափաքման սրտի գրեցի զսա ի վանքս հռչակելի, որ Գուճեր կոչի, մերձ ի Բարձրն կոչեցեալ Բերդ, ի մեծ թուականիս Հայոց ՉԾԲ. (1303), ի յամսեանն մայիս ըստ Հռոմայեցւոց անուանց ամսոցս, որ աւր ԻԷ. (17) էր սորին ամսոյ, յորում լուաք ի նոյն աւրս չար համբաւ, զի ոտէր երկրիս մերում չոգաւ ի Շամքն կոչեցեալ աշխարհ

հանդերձ մատղաչն կոչնչեալ զաւրաւք և ընդ մեզայ մերոց յաղթեալ յանաւրինաց, վախճառեա նուէ յաշխարհն Բաբելացւոց, առ խանն Խազաց կոչեցեալ. և է աշխարհս մեր յոյժ ի տարտարոսի։

գ

265 բ Զմարտիրոս վարդապետ և ղպրիչ սորա յիշեցէք յաղաւթս, ո եղբարք, որք հանդիպիք։ Գրեցաւ սա ի Դուինեայ, ի թվականիս Հայոց յեւթնհարիւր յիսուն և երկուքն, յուլիս ԻԹ. [29]։

դ

671 ա Զմեղապարա վարդապետ Մարտիրոս աղաչեմ յիշել ի աէր Քրիստոս։ Գրեցաւ սա ի Խուականիս ՁԾԴ. (1304), յամսեանս յուլիս, յերկիրս Կիլիկիոյ, մերձ ի Բերդս Բարձր, յանապատս Խաչատրոյ, ի վերայ գետոյս Սոլիայ, ի քարանձաւ և ի նեղ անկիս, ի դառն ժամանակիս, յորում ամենեան նկիւն մահմետական դաւրքն ի Շամբեհն և առին սիրով ղրկերդն Թիլ և ուխտազանց եղեալ դաշանցն՝ կոտորեցին զարս զոմն անդ. և բազումք, վախստական եղեալ ի նոցանէ, գետացոյց եղեալ ի մեծ գետն Ջահան, և այս ամենայն վասն մեղաց իմոց։*

18.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՂԻՆ ԴՐԻԴՈՐԻ ՆԻՍԱՅԻՈՑ

Շուշի, 18. Թումճան, 3ուց. Խաչիկ վրդ. Բ. էջ 47

Դրիչ՝ Խաչատուր Երզնկացի
վայր՝ Արատես մեծատան

132 ա ...Գրեցաւ ի թվիս հայոց ՁԾԲ. (1303), ընդ հովանեաւ սուրբ մենաստանիս՝ մականուն կոչեցեալ Արատես...։

Զարմիեպիսկոպոսն... զտէր Ստեփաննոս, զվառաւոր իշխանին որդին զՁարսայիճն՝ ստացաւղ սուրբ տառիս... յիշեցէք... դրիչ զխաչատուր Երզնկացիս։**

19.

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՆՈՒՐԲ ԴՐԵԱՆՑ ՅԱԿՈԲԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Երեան 598

213 բ ...Ո՛վ սուրբ հարք և եղբարք, որք պատահիք այսմ վիպուն տառիս, որ է սայ լուծմունք սուրբ և ընտրեալ վարդապետին տեառն Յակոբայ, զոր արարեալ ի Հարցողացդ Դրոցն, զոր զգի զոա յոյժ պլատանի ի շահ աւգտութեան մանկանց Սիոնի և յոյժ տարվմամբ սիրո

* Այս հիշատակագրությունն ամբողջապես գրված է կարմիր թանաքով։
** Գեռագիրը պատկանել է Ավետիք Բահաթրյանին։

գրեցի զսայ վիցուն և դողդոջեալ ձեռօք, սրտէս ի դրէտ ճանաչեաւ Սրտի յաւժարութիւնն զնեղեաց զօրութիւնն տանի, քաջ դիակ՛ք։ Արդ, յերես անկեալ աղաչեմ, անմեղադիր լերուք՝ կրկին աղաչեմ, ապա թէ գտանես կամ կէտ ի վերա դրի, կամ սուրակէտ, կամ այլ ինչ՝ զակնարկութիւնն յօրինակն տար, որ էր սա դրեալ ձեռամբ Ստեփ[անոս] վարդապետին, որ նա ինքն է կանտիւռոն, այն աստուածոյ աւրհնել հոգին հայնց անսխալ էր դրեալ, որ մին դիր չդոի սխալ, դուք այլ զինքն յիշեցէք յաղօթս ձեր։ Ընդ նմին և զիմ վարդապետս՝ Յովհաննես Երզնկացի, որ և զիս իրրև զսահակ ծառա քարշէ ի վերա երեսաց, թերևս զերծուցէ ի հնդզանալոյ, և ոչ թէ կարիս ինչ ունելով առ այս ճղտորել զիրս, զայս մի ոք վարկցի, զի այնքան երազ էր ի գիր արուեստին, որ ոչ դիպաւ աւրինակի. և ճշմարտութիւն բանիս նոքա վկայեն, որք մերձ եղեալ հանգիպեցան նմայ. վասն սրս աղաչեմ յիշել զվարդապետն իմ ի մաքրափայլ աղօթս ձեր, և զիս՝ զանարժանս յամենայնի յիշել աղաչեմ սրտի մտօք ի մեղաց թողութիւն. և որ մէղ բանիւ հայցէ, նմա գործով եղիցի ի Քրիստոսէ աստուածոյ մերոյ, յօրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ ի թ։ իս ՁԾԲ. (1303), ի փառս Քրիստոսի։

20.

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՄԽԻԹԱՐԱՑ ԳՈՇԻ

Երևան 2593

Վայր՝ Երզնկա*

231բ ... Գրեցաւ գիրքս այս լսրատ անը | | | ոմ[անց՝ յիւրաւունս և ամանց ի սաստ և ի յանդի[մանութիւն]. և մեր հայեցեալ ի բանս աւգտութեան սորա.յ | | ՝է ես նուաստաք Ֆռանկ և եռու զսա գրել | | | և ի կրթութիւն ուսման տկար անձին իմոյ և ի սրաղ | | | աց իմոց և ի պատճառս սգաստութեան ճանաչել և | | | անթիւ համարս երախտեաց իմոյ արարչին և | | | յա]ղաժամ մատուցանել զդոհա-բանութիւն գերադ | | | եաց, այլ և ի յիշատակ ինձ և զաւակաց իմոց և յա | | | իմ յաշխարհէ և ի ծնողացն իմոց պարոն Կար[ապետ]ին և պարոն Ըճճկուճ և նահանե[աց իմոց հա]նդուց[եալց ի Քրիստոս]։

Արդ, գրեցաւ սայ ի մայրաքաղա[քս Եզնկա՞յ], ընդ հովանեաւ կաթողիկէ եկեղեցւոյ, ձեռամբ | | | քահանայի, ի թվիս հայոց ՁԾԲ. (1303), ի հայրապետութեան [տեառն] Գրիգորիոսի և յառաջնորդութեան Եղնկայիս՝ տէր Ն[երս]իս[ի], [ի թո]գաւորութեան Հեթմոյ աստուածասիրի և բարեպաշտի և [ի ժա]մանակս աշխարհակալ և մեծ դանին Ղազանիճ։

232ա Արդ, աղաչեմք զամենեսեան, || որ ոք հանդիպեսցի սմայ ըն-

* Թերթի եզրերը չափազանց մաշված վիճակում են, ըստ կարելվույն վերականգնում ենք բնագիրը. երեք ուղղահայաց գծիկներով ցույց ենք տալիս անընթեռնելի տեղերը։

թերցմա[մբ] կամ աւրինակով [յիշ]ել [աղաւ]թիւք զտացող սորա զպարոն Ֆոռանկ և խնդրել երկարամեա կեանք ի Քրիստոսէ իւր և ծընընդոց իւրոց՝ սրբասո[ւել] զաւակաց և աղանց և ծնողացն իւրոց, հանգուցելոցն [ի Քրիստոս], խնդրել քաւութիւն և թողութիւն յանցանաց. և յիշողք[դ յիշեալ լի]նիք յողորմութիւնն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

21.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ

Երևան 1527 (տես նաև՝ 1301 և 1339 թ.թ.)

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Կիլիկիա

667 ա Կատարեցաւ մեկնութիւն սաղմոսացըս, արարեալ տեառն Ներսէսի Տարսոնի եպիսկո[պո]սի* Լամբրունեցւոյ, սրբազան առն և հանճարեղ վարդապետի, ի թուականիս Հայոց ՁԾԲ. (1303), ի հայրապետութեանն Գրիգորի և ի թագաւորութեանն Հեթմոյ և Լեւոնի, ծախիւք և հրամանաւ Բարսղի քահանայի, որ ոչ ժամանե[ա]լ ի կատարումն գրչութեանս, զորոյ զլփավ[ուղ] նորա եւից քուերորդին իւր՝ Գրիգոր, և ստիպեաց զմեզ յաւարտ հանել զաստուածապատում տառս, որոց ողորմեսցի Քրիստոս որդին աստուծոյ յառաջասացեալ ծերունի քահանային Բարսղի Լեռն[կցոյ] և ցաւղեսցէ ցաւդ ողորմութեան ի յոսկերս ն[ո]ա և թողութիւն արասցէ գաղտնեաց կ| | |նորա և վայելել տացէ զսայ Գրիգորի սարկաւագի, որ զպակասութիւն գրոցս [եւիցէ] յաւժարութեամբ և բնաւին զաբ[մից յանգուցելո]ղ ի տէր՝ հարց և եղբարց և որք | | | տրաւք ողորմութեան ի գիրքս | | | եղ]բայրութեան սրբոյ անապատ[իս | | | առաջ]նորդաց և միեղէն եղբայ[րութեանս], նաև անարժանի Վարդ[ան]այ գրագրի ող]որմեսցի Քրիստոս՝ ծնողաց և եղ[բարց] և Աւշնի զպրի. և որք յա[զաւթս յիշեն], տացէ նոցա Քրիստոս բստ կամաւ յի[շմանն] յաւի[տեանս, ամէն]։

22.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ

Երևան 5343

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Ռշտունի՞ք

254 ա ... Գրեցաւ սուրբ և Քրիստոսաճիր տառս աստուածայնոց փողոյն և տիեզերաց վարդապետին Պաւղոսի... ի Թուականութեանս Հայոց ՁԾԲ. (1303), յամսեանն արաց ԻԴ. (24), յաւուր շաբաթի...։

---

* Ուղղագիծ փակագծերում տալիս ենք այն տառերը, որոնք ձեռագրի նորոգութեան ժամանակ ճնացել են լուսանցքին փակցրած թղթի տակ, չեն ընթերցվում և կամ բոլորովին բացակայում են ձեռագրի սույն՝ 667 թերթի ընկած լինելու պատճառով։

Արդ, աղաչեմք զամենեսեան զսուրբսդ զընթերցողսդ՝ զստացաւդ դրոցս աստուածծին, որ ստացաւ զոս յարդար վաստակոց [ւրո[ց]՝ զԳրիգոր արեզոյն և զծնողսն և զեղբայրն՝ զԳրիգոր կրաւնաւոր որբ- բասէր քահանա և զհայր վանուց զնաչատուր և զեղբայ[ր]ն նորա զՎարդան յիշեցէք ազաւթիւք ի Ֆրխատոս և նոցա մեղացն թողու-
254 բ թիւն || խնդրեցէք. թերևս տացէ նոցա Ֆրխատոս աստուած զարքայու- թիւն իւր... Թողէ զրաղում մեղս և սխալանս զԳրիգոր արեզակին, զծնողսն և զեղբաւր նորա և արեան մերձաւորաց նոցա և զնոցին միաբանաց եղբարց և ծնողաց նոցա, սպասաւորաց սուրբ ուխտին Վարդանաց սրբոց* և զաշխատաւղացն։ Սկրտիչ սուտ կրաւնաւորս, որ զգիրքս զրեաց... Խնդրեցէք ի Ֆրխատոսէ աստուծոյ մերս զԹողու- թիւն մեղաց ամենայնիւ սրբեցելով և տալով մեզ մասն ինչ առ ոտս ձեր յարքայութիւն աստուծոյ...։

23.

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4052

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Արցախ

258 բ Փառք... որ եւս զաւրութիւն ակամբ և անխմաստ գրչի՝ Ստեփա- նոս սուտանուն սարկաւագի հասանել ի կատարումն այսմ աստուա- ծարուխ տառիս, զոր բազում ցաւաք կատարեցի ես և եղբար մեր հողեաբ, որայ անուն Յակոբ կոչի։

Բայց գրեցաւ ի քաղաքիս, որ կոչի Արեհշ, ընդ հովանեաւ սրբոյ
259 ա Սարգսի զաւրավարի, ի թագս, որ կոչի Հօռոմվոցք || ... Աղաչեմ զձեզ, ով սուրբ քահանայք, որ ընթեռնոյք սուրբ աւետարանս, յիշեցէք սրտի մրտաւք զՎարդան սրբասնեալ քահ[անայն], որ կամակից եղև սմա և ընդ հովանեաւ ժողովեաց զմեզ, որպէս հաւ, ղի ժողովէ զձագ[ս] իւր ընդ թևաւք իւրովք... Դարձեալ աղաչեմ յիշեցէք զնաչատուր գր[ագիր], որ ի սմանէ աւգտեցաք ի գրչական արուեստից սակաւ մի...։

Ի թվիս ՋԾԲ. (1303)։

24.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ

Երևան 1106

Գրիչ՝ Դանիէլ

344 ա Ի թուականութեանս Հայոց ՋԾԲ. (1303) գրեցաւ իմաստասիրական հանճարունակ աստուածախաւս մատենս այս սրբոյ առն աստուծոյ

---

* Սուրբ հիւսատակարանը, փոքր ինչ համառոտած, ունի նաև Ղ. Փիլոզոլամյանը (Ձեռ. 6273, էջ 104), ըստ նրա Սուրբ Վարդանանց ուխտը կարող է լինել այն, որ ընկած է Հի մէջ Նարեկայ և Գառնականից... Ուշտունեաց գաւառինն։

Սողոմոնի, ի թարգմանութիւնս արարեալ քրիստոսակիր հոգիընկալ անձին Ներսիսի եպիսկոպոսի նշանաւորն Տարսոնի կիլիկեցոյ, հրամա-նաւ խոչակրաւն և խաչաբարձի և հետևողի սրոյն աստուածոյ բարու-նին Յովհաննիսի, ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց, որում աստուած վարձս բարեաց հատուսցէ կրկին կենաւք, Յիշեսջիք և զգրիչս Դաւիիլ՝ ի հոգևորն ունայն և ի ձեռագործս յանդգնութեամբ մատեալ և ոչ յիմաստութենէ. Աղաչեմ զսրբասնեալ ընթերցողդ ոչ ձանձրանալ ի յիշել զպատժեալս յայնմ ահաւոր ատենին և զծնողսն մեր, ասելով սուրբ բերանով ձերով՝ Աստուած թողէ նոցա զյանցանս իւրեանց. և ամենայն սխալանաց անմեղադիր լինել, զի բազում պատճառս կայր, բայց ոչ՝ այլ ես և տգիտութիւն իմ, որ ոչ աշխատեցա ի վերա արուեստիս, աղաչեմ անմեղադիր լինել, զի ձեզ յիշողացդ և յիշեցե-լոցս անմեղադիր լինի բաշխողն պարգևաց յիւրում գալստե[ա]նն, ամէն, ամէն։

25.

ՄԱՇՏՈՑ ԱՌՕՐԵԱՑ

Երևան 966

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Վժանա վանք

238 բ ...Եւ արդ, ես նուաստս յամենայնի Ներսես սուտանուն գրիչ յերեսս անկեալ աղաչեմ յիշման արժանի արարէք զիս և զաշակերտն իմ | | | և զծնողսն մեր | | |։

Եւ էր թիւս հաց ՉԾԳ. (1304)։ Ծրեցաւ ի վանքս Վրժաձայ, և աւանգեցաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Նշանիս, ի վաոս Գրիստոսի աստուծոյ, որ է տէհնեալ, յաւիտեանս։*

26.

ԳԱՐՈՁԻ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՑԳԵԿՑԻՈՑ

Երևան 714

Գրիչ՝ Աւագերէց

Եւ արդ, սկսայ և կատարեցի զդիրքս քարոզութեան Վարդանայ վարդապետի, որ ի Մարաթոյ. և է հայ թուականիս ՉԾԲ. (1303) ՉՂԹ.** գրեցաւ, ի հոռոմի ամիս դեկտեմբերի ԺԸ. [18] աւրն։

81 բ Ջմեղաւոր տառապեալ և դնտաքեկեալ և զմեղաւոր լցեալ սուտանուն տէր Աւագերէց, զի քահանայ անունս ելել, զահագին աւրն չէմ հիշել, ոչ տէր մեղայ եմ ասացել, զերթ խոզ ի տիղմ եմ թաւալել...։

27.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. 77. Լալ. Ցուց. Մյուն. 141—143.
(տես նաև 1374 թ.)

Գրիչ՝ Զաքարիայ
վայր՝ Վոսպուրական

...Արդ, ընդ ընթացից արեգական ըստ չափոյ բերման հայկազեան տոմարիս եաւթնհարիւրից և յիսուն և երից ամաց (1304)

---

* Այնուհետև, 14 տողերով, գրիչը խնդրում է հիշել ի Գրիստոս զերթ ստացողին և այլոց։ Հիշատակարանի այդ սյունակի աջ մասը պատռվել է, որի պատճառով անհնար է վերականգնել ստացողի անունը և այլ մանրամասնություններ։

**Դժվար է որոշել թե կողք կողքի գրված սույն՝ ՉԾԲ (1303) և ՉՂԹ (1350) թվա-

դրեցաւ սուրբ աւետարանս ի թադաւորութենանն Ղազաճ դանին, որ է թադաւոր լմաստուն և լարնէթոր և անկելոց կանգնող, որ աէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ, ի վերակղխտողութեան տեառն Զաքարիայի կաթողիկոսի, ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի Զաքարիայի և նկարողի և կաղմողի, ի վայելուչն [Թումայի] քահանայի և Հայրապետի, Գօրգոյ և դաւակաց լուբնտնց, [որ] ստացաւ զսայ ի [հա]լալ և յարդար վաստակոց լուբեանց և յիշատակ հաւրն լուբեանց՝ | | | ոն քահանայի և մաւրն լուբեանց | | | տիկնայ...*

Եղբարք, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք այսմ տառի՝ անմեղաղիր լինիք սխալանաց, զի ոչ կայր աւրինակ և յոյժ վշտացայ վասն աւրինակի, որ սկ զոյր։ Եւ իմ առնալ զտետրակն աստ և անդ բաղում աշխատութեամբ գրէի։ Եւ կայր մեզ այլ դիրս գրելոյ հաղտետրակո** և շարականոցս Երկուս, առնէի զտետրակս հաղին և գրէի երես մի և դնէի առ ի ցամաքել, ապայ զշարակնոցի տետրակսն և ապայ յետոյ դաւետարանի տետրս։

Եւ տեսանէի զիւրաքանչիւր գրիչքն, որ ոչ լինէին ողջ, այլ աւերեալ և ջարդեալ. վասն զի ոչ կայր մեզ տեղի առանձին և հաստատ։ Եւ իմ վշտացեալ և ձանձրացեալ, բաղում աշխատութեամբ գրեցի զաւետարանս։ Աղաչեմ զձեզ չիշելոյ մի մսռանայք, ողջ լերուք***։

28.

ԱԽՑԱՐԱՆ, ԻՆՔՆԱՏԻՊ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՎ ԵՒ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐՈՎ

Երեան 3722

Գրիչ՝ Ցակովբ
վայր՝ Նախիջաւան

...Ասաանաւր յանդ ելեալ աւարտեցաւ լուսալոյծ և աստուածապատում աւետարանական հրամանս մարմնացելո քանին աստուածոյ...

Զոր և իմ՝ եղկելոյս Ցակովբս, լմացեալ զանհամեմատ փառ-
355 բ քամութիւն || սրբա, մեծաւ յուսով և եռափափագ տենչմամբ բուռն հարի դաստուածակերտ կտակարանէս, վասն զի լոյս են և լոյս տան աչաց։ Գրեցի զսա մեծաւ աշխատութեամբ ի լոյս հոգւոյն և ի թեթևութիւն. մարմնոյ, ի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւր իմոյ՝ Ցոհաննիսի և մաւր իմոյ Աննայի, եղբարց իմոց՝ Ալեքսիաննոսի, Զաքէոսի և Գրիգորի՝ հանգուցելոցն առ Քրիստոս և դստեր իմս Ղազարիճ,

---

կաններից որն է հիշուս ենթագրել, որ ձեռագիրը սկսել են գրել 1303 թվին և ավարտել 1350 թվին, անհավանական է։ Հիշատակարանը գնում ենք 1303-ի թվաշարքում կասկածանքով։

* Դուրս ենք թողնում մի քանի եղծված տող։

** Իմա «Հաղ տետրակ» կամ «հագտետր» (մանրուսմունք)։

*** Հիշատակարանն անգամահատված վիճակում արտագրված է նաև Ղ. Փիրղալեանի ձեռագիր ժողովածուի մեջ (Երևան, 6273, էջ 107)։

կենակցի իմոյ՝ Փառանձեմայ և մաւր իւրոյ՝ Ծաղկանց տիկնոջ և միւս գաւառ իմոյ՝ Մարթայի և որք աշխատ եղեն ի սմայ և սպասաւորեցին մերում տկարութեանս, որոց վարձս հատուսցէ տէր աստուած ամենեցուն հարիւրապատիկ, բիւրապատիկ աստ և ի հանդերձելումն։

Արդ, վերաւարտեալ եղև սայ ի թուաբերութենանս ըստ յարևթական տումարիս հրնդետասան յորելենիս յաւելեալ եռակի թուով (ա0. 15+3+551=1304), և ի յելանելոյ նախաստեղծին ի վանըջաբեան
357 ա վայրէն և ծագկազարդ բուրաստանէն մինչև* || ցսոյն ամ յարաբարձին միահամուռ միանդամայն ամք իրրև ՉԻ. և Չ. յաւելեալ քառակի թուով (6704). Եւ ի կենտրաթ յայտնութենէն աստուծոյն բանի մինչև ցսոյն ամ շարժմանեալ պարփակին ամք իրրե Ռճ. և Չ. (1306), յորում և թուականս Հայոց ՁԺԳ. (1304) էր։ Ի թագաւորութեանն Հայոց Մեծաց երիցս երանեալ և խաղաղանաղեաց ճգնաւոր կրաւնաւորին մեծին Հեթմոյ։

Ի սոյն ամի ինքնակալն Ղազանն վճարեցաւ ի կենացս և սուդ մեծ եհաս ամենայն տանս արևելից, մանաւանդ հեղել աղդացս քրիստոնէից, որոյ յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի և ընդ սրբոց թագաւորացն գահակալեսցի. վասն դի ի սորա ժամանակս խաղաղացաւ երկիր իրր դդրախտ աստուծոյ, բարձաւ ամենայն հարկապահանջութիւն աշխարհաց։ Սմա ետ տէր աստուած, ըստ Սաղմոսողին, զիրաւունս արքայի, վասն դի սա էր որդի Արդուն զանին՝ իրաւարար արքային, և Թէ՝ պատիւ արքայի** զիրաւունս սիրէ։

357 բ Ի սոյն ժամանակս բարձրավիզ և հպարտապարանոց, || խայտաբղետ և գոռոզ աղդն Իսմայիլի գլխակորել ընկրկեցան և բարձրացաւ եղջիւր եկեղեցւոյ սրբոյ, աճեցին ձայնք սաղմոսաց և երգք աւետաւորացն հաւատոք քրիստոնէից։ Աստանաւր կատարեցաւ բանք ամենալսանելին Եսայեայ, որ ասէ՝ դայլք և գառինք ի միասին ճարակեսցին։ Առնէր սա իրաւունս այրեաց, երարձ գոռոգոսիս պարտուց և դարձոյց զզրկանս զրկելոց։ Երարձ սայ զերթևեկութիւն դեսպակաց, եկելոց և արդուզեաց և կարդեաց յամենայն տեղիս սուրհանդակաց, որ են շքրիկք, և սակս արդար իրաւանցն, զոր առնէր, վակեաց տէր աստուած զամենայն թշնամիս սորայ ի ձեռս սորայ։

Գնաց սայ մեծաւ ուժով և ձիախրոխտ որոտմամբ, բազմախուռն նիզակաւք և խառնիճաղանջ բազմութեամբ, յոքնախաւմբ խմբիւք, էառ նուաճեաց զամենայն տունն Ծամայ, եհար կոտորեաց մեծ և սաստիկ պատերազմաւ զղուրն Մսրայ և արևան ճապախիս ոչ սա[կ]աւ գործեաց, մինչ գրեթէ մարմինք մարդկան և անկեալ դիակացն ի վերայ արեանցն տարաբերել զաւղիւր, որպէս տերևս թզենոյ.
353 ա և հետամուտ եղել || մինչև ի մուտս արևու անյագաբար ի սուր սուսերի մաշեցին զնոսայ։ Եւ զարձաւ մեծաւ ուրախութեամբ ի թագա-

* 356-րդ թերթը 357-ի կրկնությունն է, դժվարանում ենք բացատրել թե ինչու գրիչը երկու անգամ է արտագրել այդ թերթի բովանդակությունը, իսկ եթե պարզապես սխալվել է, հապա ինչու է կրկնված թերթը թողել ձեռագրի մեջ։

** կրկնված՝ 356 էջում՝ «թագաւորիւ»։

ւորանիսան Խաճավրիժ, Եւ այսպիսի քաջութիւնս բաղումս գործեաց, զոր ոչ կարեմք պատմել միբստմիօջէ, և որ լսեքդ՝ աւրհնութիւն ղինեա արձակեցէք։

Բայց զրեցաւ սայ ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջաւան, մեծ նահապետին Նոյի շինեալ ձեռամբ տունս իւր, Եւ կատարեցաւ նաղաշութիւն ուրայ ի մեծ դաստակերտն Ասատպատ կոչեցե[ա]լ, առ ալին հեղաշարժ և ծիածաւալ զետոյս Երասխայ։

Եւ որք հաիք ի սա, թողութիւն մեղաց խնդրեցէք զծողի սորա Յովհրայ. Ո՜հ, ահ, այոյ, այոյ, աղաչեմք յիշեալ ի բարի մասին՝ զծագկողն և զկազմողն՝ զՍիմէոն ասեմ, հեղ և հանդարտ կրաւնաւոր և բաշխող զասինն անարատ մարմնոյ տեառն, զի բաղում աշխատեցաւ։ Եւ որ յիշեքդ զմեզ սրտի մտաւք, թողութիւն հայցելով ի տեառնէ, և արարիչն աստուած՝ բևեռեալ մեսիէն թողութիւն արասցէ ամենայն յանցանաց ձերոց, ամէն, ամէն։

29.

ԿՈՉՈՒՄՆ ԸՆՏԱՑՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑՒՈՑ

Երևան 3770

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Կարփի

314 ա ... *Արդ, գրեցաւ սա ի գաւառս Այրայրատեաց, ի գեղաքաղաքիս Կարփի, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սրբուհոյ Աստուածածնին։ Արդ, հայցեմք յամենեցունց, ի ձէնջ, ով լուսերամիկդ դասք, որք լուսաւորիք ի սմանէ և շահաւետիք, յիշել ի սուրբ յաղաւթս անմոռաց զստացող սուրբ տառիս՝ զհաւատարիմ ծառայն աստուծոյ զԱրզուման և զղուղալիցն իւր | | ։ զի ջերմեռանդ սիրով ստացաւ զսա, և զծնաւղան իւրեանց՝ զՏուրքն և զՏիկնանցն և զհաւրեղբայրն իւր զնագրիկն և զԱրքայն և զամենայն աղգայինսն իւրեանց։ Ընդ սոցին յիշեսջիք վասն սիրոյն Քրիստոսի և զեղկելիս զՄկրտիչս և զծնաւղան իմ, նաև զսպասաւորսն իմ. և որք յիշեքդ յիշեալ լինիք ի Քրիստոսէ աստուծոյ մեծոյ յաներեկ մեծի աւուրն, ուր բանք սպառին և գործ|ք| թագաւո-*

314 բ *բեն, || այլ մեղ յիշելոցս և ձեզ յիշողացդ եղիցի ընդ բարեգործ ծառային մուտ յուրախութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Յիշեսջիք և զԱստուածատուր երէց, որ յաւժարեցոյց ի գործս բարիս զստացաւղ սորա։*

Իսկ յորում ամի աւարտեցաւ տառս էր Թուականս ՁԺԴ. (1304)։ Ցայսմ ամի նստաւ յաթոռն փաշահ դանն, որ կոչի Խարպանդայ. տացէ նմա Քրիստոս Թագաւորն բարեպաշտութեամբ և քաղցրութեամբ խնամել աղղիս քրիստոնէից, ի փառս Քրիստոսի աստուծոյ աւրհնեալոյն յաւիտեանս, ամէն։

Արդ, վերստին աղերս մաղթանաց առ բարեմիտ ընթերցաւղդ՝ յիշել զպատուական և զբարեսէր տիկինն զԹեհմինայն, խնդրելով ողոր-

մութիւն և քաւութիւն մեզաց ի Քրիստոսէ և համարձակութիւն՝ մատնել յարքայութիւնն աստուծոյ, և որ առատն է մեզ և ձեզ ողորմեսցի, ամէն։

30.

ԴՐՈՒԹԻՆՐ ԵՊԻՓԱՆԻ ԿԻՊՐԱՑԻՈՑ

Երևան 4750

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Աւանս գիւղ

358 ա ... Արդ, ղրեցաւ ի հայրապետութենէն անառն Զաքարիէ Աղթամարայ և յառաջնորդութիւն դերայ՝ոչակ և սուրբ ուխտիս Վարագայ* Յոհաննու վարդապետի յոյժ իմաստասիրի, հեղի և խոնարհի, և յաղթահակալութեան աղդի նետաւդի, ի հայկազեան տումարի և թուաբերութեամբ Հայոց մեծաց ՁԾԴ. (1304). վասն դի յայսմ ամի վճարեալ եղե ի կենաց աստի բարեյաղթն և իրաւարարն և խնամակալն աղդիս Հայոց Վազաճ դանն և սուրբ մեծ եթող քրիստոնէիցս. և ի ոխան նորա նստեալ եղև յաթոռ աշխարհակալութեան եղբայր նորա, որ կոչի Խարպանդաւդի. նոյնպէս և նա ցուցանէ բարի մարդկան աղդի։ Արդ, աղաչեմ զամենիսեան, ոյք ընթեռնուք, յիշեսջիք ի Քրիստոս զստա-
358 բ ցող սուրբ տառ || իցս, զառաջասացեալսն ընՍիմէոնն և զորդի իւր՝ զերջանիկ քահանայ զՋաքարիա, համաղդայնիս...

Ընդ նոսին յիշեսջիք ի Քրիստոս զերից երանեալն և զոդիացեալն՝ զՅոհաննէ վարդապետ և զհարազատ եղբարսն իւր, որ առաջնորդ եղև մերում տկարութեանն և դաւրինակն պարգևեաց... Եւ ես աղաչեմ, ընդ նոսին յիշեսջիք ի Քրիստոս զաշխատողս և զվիրուն զրիչս Յովաննէս քահանա և զծնաւղսն իմ և Քրիստոս աստուածն բոլորից համայնից ողորմեսցի մեզ և ձեզ, ընթերցաւղացդ և լսաւղացդ, ամէն, ամէն։

Դրեցաւ և կազմեցաւ ձեռամբ մեղապարտի Յովհաննէս քահանայի ի դաւառիս Վանա, ի դեաւղս, որ կոչի Աւանս, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյս՝ սուրբ Յովաննու Կարապետի և սուրբ Գրիգորի Հայոց Լուսաւորչի։ Արդ, աղաչեմք զամենիսեան, ոյք հանդիպիք այսմ տառի, խոշորութեան դրոցս և սխալանացն, որ ի սմա լինի, անմեղադիր լինել և եղբայրարար ուղղել և վարձս բարեաց ընդունել ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

31.

ԱԻԵՏԱՐԱՆ,

Օքսֆորդ, Ms. Arm. D. 3. Տիրայր վրդ. 51. Թղթ. 120. էջ 877—878

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Կիլիկիա*

297 ա Փառք... որ արժանաւորեաց զիս հասանել յաւարտ դծիս սուրբ աւետարանիս։ Շնորհաւք սկսայ և ողորմութեամբ տեառն կատարեցի

* Բնագրում՝ ՀՎՎԲԳԱՅՑ։

զլուսատու և ղպատուական մարգարիտս զայս, յաղքատ և ի դառնաբեր ժամանակս, բաղում ջանիւ և խանդաղակաթ սիրով, գծագրեցի և ղսբղարեցի զանազան ծաղկովք և գունակ գունակ դեղաւք. ես Կարապետ մեղաւոր և անարժանս ի քահանայս. ըստ փափաքմանն իմոյս սկսա, դի թէպէտ և գոյին ինչք [պա]տրաստականք ըստ մեծամեծ նիւթից, սակայն սէր աստուածային բարեաց առատապէս շնորհեաց գծախոն սուրբ աւետարանիս։

Եւ ես մեղուցեալ ծառայս Մարգարէս, յետնեալ ի քահանայս տո[ւ]ի դրել զսուրբ աւետարանս և զսայ ունելով բարեխաւս և յիշատակ ինձ և ծնողաց իմոց...

Կատարեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ՁԾԳ. (1304), յունիսի ամսոյ Իե. (25), ի կաթողիկոսութեան տեառն [Գ]րիգորի և. ի [թ]ագաւորութեան Հեթմոյ։

ՁՍամուէլն՝ զպատուական քահանա[յ]ն, յորս հանդուցանէ* զնայ Քրիստոս ի դասս հրեշտակացն, և զոքանչն իմ, որ սիրով ընդունէր զիս, յիշեսջիք ի սուրբ աւետարանս, և զԱմիրխեր ոսկերիչս, որ զարդարեցի զաւետարանս և մարն իմ, որ երետ զարծաթն, որ զարդարեցաւ, յիշեսջիք ի սուրբ աւետարանս...։**

32.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6253 (տես նաև 1419 թ.)

Դրիչ՝ Սարգիս

366 ա ...Յամի Ջ. երորդի Ծ. երորդի և երրորդի (1304) թուականութեան Հայկազնեան տոմարի կատարեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Սարգսի յոգնամեղի ի մայրաքաղաքս | | |*** առ դրան սրբուհոյ Աստուածածնիս, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, ի ստոյգ և ի լաւ աւրինակէ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զամար գրոգս՝ զՍարգիս և զհայրն իմ զՍամուէլ և զմայրն իմ՝ Սաճաճիկն*** և զեղբայրն իմ զՅովհաննէս և զամենայն ազգականս իմ և զսիրելիսն հանդերձ ծնաւղաւք իւրեանց, նոյնպէս և զուսուցիչն
366 բ մեր։ || Աղաչեմ զձեզ. անմեղադիր լերուք սխալանաց սորա, դի անհմուտ էի գրչի, բայց դիպափաթն և զսէրն ունեաք և յուսալով յաստուած սկիզբն արարաք և յանկ ելաւ ողորմութեամբ նորա։ Քանզի սա եղիցի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց։ Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զձեզ մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ և. ծնաւղաց իմոց, զի և դուք

---

* Ձեռագրում «հանգցնէ»։

** Վերջին պարբերությունը գրված է այլ ձեռագրով, բայց ըստ Տիրայրի՝ մասն է կազմում ամբողջի։

*** Գաղաքի անունը քերված է։

**** 111բ էջի հիշատակագրության մեջ այս անունը երևում է «Մանանեակ» ձևով։

յիշեալ լիցիք ի Քրիստոսէ աստուածոյ մերոյ. աղաչեմ զձեզ յիշեսջիք զՆերսէս քահանա, զհոգեւոր եղբայրն մեր, որ զմեզ հմտացոյց զրիս և ծաղկեց զաւետարանս և գլխագրեց, նաև զայլ հոգև[որ] եղբարսն մեր՝ զԳրիգոր քահանա և զՄարգիս քահանա. որ մականուն կոչի Խաչենցի, նոյնպէս և զՅակոբ միակեցն, քանզի սոքա բազում անկամ աշխատել են ի հետ մեր ու զպարիկն ու զկտորակն պատրաստել են մեզ...:

33.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վեհետ. 109 (546), Ծուց. հա. Ա. էջ 488

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ Ծփխիս

316 ա Փառք, Քրիստոս աստուած ճշմարիտ, որ արժանի արարեր զմեզ աւետարանի քո Մարտիրոսի՝ ստացաւղի սուրբ աւետարանի քո, որ ստացաւ զսա ի բարեխաւսութիւն և ի յիշատակութիւն ծնաւղաց իւրոց՝ Ո՛վ մանկունք լուսոյ, յորժամ հանդիպիք այս աստուածաշունչ գրիս, յիշեցէք սրտի մտաւք յողաւթս ձեր զծնաւղսն իմ՝ զՏնկիկն և զՔեմբրն, զԱստուածատուրն և զՄինա տիկինն և զիս՝ զմեղուցեալ Մարտիրոսս և զկողակիցն իմ զԹարբան և զեղբարսն իմ զՅակոբ և զԳրիգորն, և աստուած զձեզ յիշեսցէ և ողորմեսցի յիւր մխսանգամ գալստեն...:

Արդ, գրեցաւ սա ի թագաւորական քաղաքս ի Ծփխիս, ձեռամբ Խաչատուր սարկաւագի, մեղուցեալ և անպիտան գրչի. ի վայելումն Մարտիրոսի որգւոյ Աստուածատրի | | | ընդ հովանեաւ սուրբ տիրուհո և Մարիամու Աստուածածնի և այլ սրբոցս. Գրեցաւ ի թվիս Հայոց ՉԺԴ. (1304), ի յաւդոստոս Ք. (9), ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ և վրաց՝ Դաւթի, ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց կաթուղիկոսի, ի յաշխարհակալութիւնն Խարպանդին՝ եղբաւր Ղազանին, որգոյ մեծի Արղաւնի ինքնակալի...:

34.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4018 (տես նաև 1318 թ.)

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Վծանձայ վանք

ա

208 բ ...Գծաղրեցաւ աստուածարեալ և պատուելի և պաշտելի գանձս և պատուէր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրամանաւ և արդեամբք Սարգսի անապատաւորի և միայնաւորի, որ կոչի Գրակազմ, ի վանս Վծանձայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Նշա-

նես և յայլ սրբոցս, ձեռամբ մեղապարտ և սուտանուն գրչի Ներսիսի. ի յողոմպիադի ի ստեղծման Ադամայ [Զ]ՌՈՁԲ. (6682) և ի մարմնացելո բանին [Ա]ՅԺԶ. և Բ. ամի (1318°) և մերո թուականիս ՉԾԳ. (1304) և նորոյ շրջանիս ՄԻԱ. (221)։

Արդ, որք կարդայք և որք հայիք ի սուրբ յաւետարանս, յիշեսջիք զստացող սորայ զՍարգիս գրակազմ և զնայր իւր զՏիրատուր և զմայր իւր և զամենայն աղգականս, ղի ողորմեսցի նոցայ Քրիստոս յաներևակ աւուրն։ Յիշեսջիք և զիս զՆերսես, զծնաւղսն իմ և ասաուած յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի։

Ծաղկող՝ Բարդուղիմէ

Բ

253 ա Ձծաղիկող և զնկարիչ սուրբը աւետարանչայս, զանպիտան Բարդուղիմէ, յիշեցէք ի բարի[ն և Քրիստոս աստուած] յիշեսցէ ըղձեզ ի զալըստեանն իւրում, եղի[ցի]։

35.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թորոս Աղբար, Բ. էջ 421 (Տիգրանակերտ)

Գրիչ՝ Աւետիք
վայր՝ Երզնկայ

Գրեալ ի թվ. հայոց ՉԾԳ. (1304), յասաուածաղարդ հայրապետութեան տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի և ի քրիստոսապսակ թագաւորութեանն Հայոց Հեթմայ և յարժ[անապատիւ] եպիսկոպոսութեան սրբասէր և աստուածամեծար արքեպիսկոպոսիս մերոյ տէր Ներսիսի։ Գրեցաւ սա ի գաւառիս Եկեղեցեաց, ի մայրաքաղաքիս Երզնկայ, ձեռամբ նուաստ և անպիտան գրչի Աւետեացս քահանայի. նաև տեղի հանդստեան մերոյ յորում գրեցաք, յանապատիս, որ կոչի յանուն սուրբ եկեղեցւոյս Սուրբ Կիրակոս, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս և Սուրբ Կիրակոսիս, և ի հայրապետութեան Ստեփաննոսի և ծեր Ստեփաննոսի և այլ միաբան եղբարցս առհասարակ, որ կանք՝ Մխիթարն և Դաւիթ, Կարապետն և Կոստանդին և հաւատարիմ սպասաւորն մեր Վահանն... յիշեսջիք... զԱւետիք արեղայս և զնայրն իմ զՎասիլ։

36.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. 78. Լալ. 8ուց. Սյուն. 145—146

Գրիչ՝ Սիմեոն
վայր՝ Արճէշ

... Արդ, այսմ ղաղավարութեան [ցանկացեալ] երջանիկ ոմն և աստուածային ձրիւքն բարղաւաճեալ, որոյ անուն իշխան Շնոփոր յորջորջի՝ աստուածասէր և բարեպաշտ...։

Եւ ես, յոգնամեղս և վիցունս ի գրչաց, յանձն առի, այլ ըստ իմում կարի յանդ հանեալ կատարեցի շնորհաւք և ողորմութեամբն աստուծոյ, յամի ՁԾԴ-երորդի թուաբերութեանս Հայոց (1304), ի դտոն և ի վշտաբեր ժամանակիս, ի քաղաքիս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակովբայ։

Ով արդ, աղաչես զձեզ տէրամբ՝ ղընթերցուղսդ և ղլուղդ, յիշման արժանի առնել զբարերարոյ ստացուղդ տառիս, զՅովփոր և զամենայն արեան մերձակայս իւր և զհամքարձեալս ի Քրիստոս զծնաւղսն իւր՝ զպարսն Ֆուաճ...։ Ընդ նոսին և ես, ամենամեղս ի գրչէդ Սիմէոն, յերեսս անկեալ աղաչեմ յիշել և զիմս անարժանութիւն և զծնաւղսն իմ և զայնոսիկ, որք յանձնեցին զինքեանս յիշել ի աէր...։

37.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 7928 (տես նաև 1337 թ.)

Ստացող՝ Ղուտակես

Ի թվ. Հայոց ՁԾԴ. (1304), ես Ղուստակես երէցս ստացա զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց
237 բ *և զաւակաց իմոց՝ Ներսիսի և Գրիգորիսի և Վրթանիսի || և ամենայն աղդատոհմիկ իմոց՝ Ցուցանի և զաւակաց իւրոց Ահ[ա]րոնի և Թորոսի և եղբաւր նորին Գրիգորիսի և Մեն-տիկնա՝ կենակցին Ցուցանի և այլ աղդայնոցն...։*

38.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վասպ. 79 լալ. 8ուց. Սյուն. 147—148 (տես 1585 թ.)

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Վանկա՞յ

ա

211 ա *...Ի թուականութեանս մեծ Հայկազեան տումարիս ի Ջ. երորդի յիսներորդի երրորդի (1304), դրեցաւ գերարփիս այս, գերալոյս և աստուածախաւս աւետարանս ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի տէր Գրիգոր քահանայի | | |**

Ստացող՝ Ուստոյենց Խաչօ

բ

228 ա *Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՈւստոյենց Խաչօն, որ մանկակից եղաւ զՎահկայ աւետարան, որ գերի էր ընկած անօրէնքն ի Զուլքիկ,*

* *երկու տող ջնջված էր*

և հանդիպաւ նոր օրհնեալ Մալխասն, որ և փրկեց զսայ, յիշատակ իր և ծնողացն և եղբարցն և կողակցին և որդոցն։ Աստուած ի յօրն ահեղին զձեզ ի չար սաստանայի ներսւթենէն ազատէ, ամէն։

39.

ԱԽԵՏԱՐԱՆ

Ալիշան, Սիսական, էջ 134

Գրիչ՝ Ոսկան
վայր՝ Գլաձոր

Ոսկան ոմն վարդապետ յամի 1304 ընդօրինակելով աւետարան մի ի վանս Գլաձոր Ս. Ստեփանոսին», ասէ ժամանակին ի դաստիարակութեան Հայոց ղպրոցի՝ նաայի վարդապետին»։

40.

ԱՌ ՈՐՍ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ

Նբեան 4149

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Եզնկայ

ա

... Շնորհտուք ամենակալին սկսա և նորին ողորմութեամբն կատարեցի սուրբ և գերայհոչակ պատմական մարդարիտս և դանձս աստուածականս, որ կոչի Առ Որս [Գրիգորի] Աստուածաբանի, ի հայրապետութեան տեառն Գրիգորի և ի թագաւորութեան Հեթմոյ, ի մայրաքաղաքիս Եզնկայիս, առ սրբոյ Կաթուղիկէիս։ || Ի թվականիս Հայոց ՁԺԴ. (1304), ի նոյեմբերի ԺԵ. (15), ի խնդիր պատուելի և իմաստուն ղերահոչակ հաւրն Ահարոն վարդապետին։ Եւ ետ գրել ինձ՝ մեղապարտ ծառայիս Կարապետ երիցու։ Աղաչեմ զձեզ, ով դասք լուսերամից, մանկունք վերին առագաստի, որ աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք զիս՝ դմեղուցեալ գրագիրս՝ զԿարապետս և գծնաւղսն իմ, զառ ի Քրիստոս հանգուցեալսն և ձեզ յիշողացտ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի մարդասէրն աստուած, որովհետև փառք յաւիտեանս, ամէն։

ր

[Աւրհնութեամբ երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեանն], 131 ր որ և մեր տկարութեանս աւժանդակեալ աւգնեաց սկիզբն առնել մատենիս և ի լրումն հասանել ի թվականիս Հայոց ՁԺԴ. (1305)*, և

* Այսպիսով, ձեռագրի ընդօրինակութիւնը սկսվել է 1304 թ. նոյեմբերին և ավարտվել է 1305 թվականին։

ի Հայրապետութեան աեառն Գրիգորի և ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ և ի վերաղիտողութեան մայրաքաղաքիս Եզնկայի աէր Ներսէս Եպիսկոպոսի, որ վախճանեցաւ ի սմին ամի, որոյ ողորմեսցի Ի[ր]իստոս աստուած, որ է աէր ամենայնի, և թողէ ղյանցանս սորա՝ ղղաղանի և դհայտնի, ի սմին քաղաքիս եղեւ կատարումն ղծաղրութեան մաաենիս, որ է Աո Որս Աստուածաբան[իւ], կամաւք և ծախսիւք յեաին և նուաստ սպասաւորի բանին Ահարոնի, մականուն յորջորջել՝ Գրիգորի։ Արդ, որք աւդտիք ի սմանէ ընթերցմամբ կամ դաղափար առնելով սակս մակաղրութեան, սրտի մտաւք և կարեկցութեամբ յիշեցէք յաւդութիս ձեր առաջի աստուծոյ վախճոյղրնալ սաստուղ սորա՝ պԱհարոն վարդապետ, որոյ ողորմեսցի աէր աստուած և

232 ա *թողէ ղյանցանս || նորա։ Յիշեցէք և զհայրն իւր՝ զՕտարև և զերկու զքոյրսն իւր՝ զառաջադոյն վախճանեալսն ի Ի[ր]իստոս, մեղայ նոցա թողութիւն խնդրեցէք։ Յիշեցէք և զպապաշխարող մայրն իւր զՄհնտիկին. որ ի թվականին հայոց ՉՀէ. (1298) վճարեաց զմարմնաւոր դկե[ա]նքս իւր և յաւելաւ ի հողեորն աո Ի[ր]իստոս, յամսեանն հոկտեմբերի Ծ[Ի]. (18), յերեքշաբաթի դիշերի, չորեքշաբաթի լոյս, որոյ ողորմեսցի Ի[ր]իստոս աստուած և թողէ ղյանցանս նորայ։*

...Յիշեցէք և զկրաւնաւոր և զծնեալ եղբայրն իւր զՄտրտիւրոս քահանա, որ ի թվականին հայոց ՉԾՔ. (1303), յամսեան նոեմբերի ԻՔ. (22), յաւրբաթ դիշեր, որոյ շաբաթն լուսանայր, վաղջանեցաւ մարմնով և աւանդեաց դհոդին իւր ի ձեռն աստուծոյ...։

Յիշեցէք և զայնոսիկ, որ աւդնական են եղել ի ծախ դրոցս մեզ և որ բնակութեամբ հանդուցել են դմեզ և երախտաւորք են մեզ ի տուրս պարդևաց։

233 ա *...Յիշեսջիք և դիս, զանարժան և զյետնեալ զրաղիրս զԿաթողիկոս երէցս և զծնուդան իմ՝ զԳրիգոր և զՀազրևարդ, զառ ի Ի[ր]իստոս հանդուցեալսն, և զաստուածատուր զպատանեակն իմ զՊօրոս ի ձեր մաքրափայլ տղաքս...։ Եւ զերկիցինն իմ զՄուլքեր, որ ի[*] մարմնաւորս է կենակից իմ, աղաչեմ, որ յիշման արժանի առնէք։*

Գ

262 ա *Տէր աստուած, ողորմեա ստացողի զրոցս Ահարոն վարդապետի և լնձ գրողիս՝ մականուն Սարբախս, ամէն։*

Դ

389 ա *Տէր աստուած, ողորմեա ստացողի գրոցս Ահարոն վարդապետի և ի[ծ]ուն դոչիս Շահինշահի**, ամէն։*

---

* *Բնագրում՝ ԷՀ։*

** *Ձեռագրի գրչության մեջ մասնակցություն են ունեցել երեք գրիչներ՝ Կարապետ, Սարգիս և Շահինշահ։*

ՉԾԴ 1305

41.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ե. Ե. Սարգիս Ակեղեցի, Տ.—Ավետիսյան, Յուցակ Ն. Ջուղայի ձեռագրերի, էջ 135—136

Դրիչ՝ Եղբայրիկ

ա

350 *... Աստանօր յանկ ելեալ աւետարեր սուրբ կըտակս գեղաքաղաքս, որ կոչի Սիմէօն երից յիշեցուք [՝], ընդ հովանեաւ գեբահոչակ սուրբ տաճարիս, որ է անուանակիր փրկչին, ձեռամբ նուաստ արեղաի Եղբայրիկ կոչեցեալ, ի թվ. ՉԾԴ. (1305), ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորիսի, և ի թագաւորութեան Հեթմ բարեմաշա արքայի, ի փառս կաթուղիկէ եկեղեցոյ և ի հրճուանս մանկանց նոր Սիոնի...*

Արդ, աղաչեմ զամենասին, որք ընթեռնուք և լուսաւորիք ի հոգևոր փարթամութենէ սորա, զնուաստ գրողս յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր և զծնողսն իմ, և զեղբայրն իմ զՍտեփաննոս քահանա, որ ի ծաղիկս աշխատեցաւ, Եւ զպարկեշտ քոյրիկն իմ զՆազատիկին, որ բազում գթով սպասաւորեաց մեզ, և զհոգևոր եղբայրն իմ զՍտեփաննոս, որ շատ սիրեցոյց մեզ...

Ո՛վ եղբարք, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զստացաւղ սուրբ աւետարանիս զՍիմէօն երէց Իերդակեցի, և զկենակիցն իւր զԽոնդն, և զզաւակսն իւր՝ զՆիսաբէթ և զՄատարյան [՞]. և զհանգուցեալ սրդիքն իւր՝ Նսայի և զԱստուածատուր, և զհայրն իւր զՈհաննէս, և զմայրն իւր զԲուրաստան, և զեղբայրն իւր զՊապն, և զորդիքն իւր՝ զԽդրշայ և զԴաւլաթշայ և ամենայն արեան մերձաւորք իւր. և զվարպետն իւր զՅակոբ կրաւնաւոր և զՍադոն: Որ և տեսեալ զսուրբ աւետարանս քաջահաւատ երէց Սիմէոն յոյժ փափագմամբ և սիրով էառ ի յարգար վաստակոց իւր, յիշատակ հոգւո իւրոյ, և յետ աստեացս ելանելոյ՝ բարեխաւս առ աստուած:

Հետ, ստացող՝ Մխիթար

բ

Շնորհիւ [և] ողորմութեամբ Քրիստոսի... Մխիթար անուն պատուականն և աստուածասէրն, զարդարեալ ամենայն առաքինութեամբ, ստացաւ զկենաց կտակս զայս ի հալալ արդեանց, յիշատակ հոգոյ իւրոյ և ի վարժուհի որդոց իւրոց: Արդ, որք լուսաւորիք յայսմ աստուածախաւս սուրբ աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՄխիթար քահանա, և զզուգակիցն իւր զՆվքիկն, և զանդրանիկ

որդին իւր զՍտեփաննոս, և զքահանա որդին իւր զԽաչգեղդ, և զԳրիգորդ, և զՎահանդ, և զամենայն ազգաին իւր՝ զկենդանիս և զմեռեալս, ծիշեսջիք և զԹուխրդ, որ ձեռնտու եղեն ի ծախսն, և զՄխիթարիչն, և զԱմեն-տիկին, և զԱզագ-տիկին, և զՎասակ, և զՍաուսայն, և զՄամ-տիկին, զՓոխր-տիկին, զԹամարն:

42.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վէնն. 324. Տաշ. Ծուց. էջ 771

Գրիչ՝ Տիրացու

վայր՝ Կիլիկիա, Խորիզ աւատաս

162 ա ... Արեամբ տեառն գնեալք և ի մաքուր յարդանդէ եկեղեցւո, հոգս հաւատար ծառայս ձեր, մեղապարտս գծող ժողովածոյ դրոցս, ըստ կարի աղքատութեամբ ի մի ածեալ հաւաքեցի Տիրացու անարժան կրաւնաւորս...: Եղբարք, յիշեցէք ի տէր զսրբասէրս և հեզ և խոնարհ հոգի կրաւնտուորս և զարժանապատիւ քահանայն զՈվաննէս և իւր և ծնօղաց իւրոց մեզաց թող[ութիւն] խնդրեցէք, որ զդիւրքս է կապել | | | *

Արդ, եղև զրաւ ցանկալի այսմ տառի ի նահանգիս Կիղիկեի, յանապատի առակելի, որ անուն Խորին ճանաչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ի թուականութեան Հայկազնի ՉԾ. և չորրորդի (1305), և ի հայրապետութենն տեառն Գրիգորի, և ի թագաւորութենն Հեթմի, ի դւսն և ի չար ժամանակի, նեղեալք յազգէն Իսմայելի, որ ի յայսմ ամի եմուտ զաւրք եգիպտոսի, ի յաշխարհս Կիլիկեի, վասն գործոց իմոց չարի, բազում տեղիս մատնեաց անողորմ պատուհասի, դերիաստարդն և զտղայսն տարեալ դերի. Ծացեալքս կամք ի տագնապի, զարհաւրեալք ի տուէ և ի զիշերի...:

43.

ՄԱՐԳԱՐԷՈՒԻՔԻՆ ԵՄԱՅԵԱՑ

Երեան 1609

Գրիչ՝ Յոհաննէս

վայր՝ Խաղտեաց գաւառ, Բերդակ մենաստան

85 բ Աստանաւր յանդ ելեալ կատարեցաւ տառս աստուածաշունչ բարձրաքարող սուրբ մարգարէին Սայեայ ի գաւառիս Խաղտեաց, ի հռչակաւոր սուրբ մենաստանս, որ կոչի Բերդակն, ընդ հովանեաւ հրաշազարգ և գեղեցկաշէն տաճարի, որ յանուն սրբո[ւ]հոյ Աստուածածնին և սուրբ Լուսաւորչին Գրիգորի Հայաստանեաց, ի ստոյգ և ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի, զոր սուրբ վարդապետին Յովսեփայ գտեալ Թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղրատ, ձեռամբ հոգնամեղ և թարմատար գրչի Յոհ[աննու], ծախիւք և արդ-

* Մոտ կես էջ քերված է: Շարունակությունը չափած է:

համբք առաքինազարդ կբաւնաւորի Մարուգեի կուսակրաւն աբեղայի, ի փրկութիւն հոգւոյ իւրոյ և ի դաստիարակութիւն անձին իւրոյ։ Արդ, աղաչեմ զսուրբ դասս լուսերամից, որք աւգտիք ի սմանէ կամ
86 ա զաղափարէք, յիշես ‖ ջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՄարուգի...
Գրեցաւ ի թու[ականիս Հայոց] ՉԾԴ. (1305), ձեռամբ Յոհաննու աբեղայի և մեղապարտ գրչի, յիշեսջիք աղաչեմ ի տէր Ցիսուս։

44.

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Թղթաւն 500

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Կիլիկիա

ա

239 բ Զարժանապատիւ հայրապետն Հայոց գտէր Գրիգորեոս՝ ստացաւղ գրոցս, աղաչեմ յիշել ի տէր, ծնողաւք, քերբք, և եղբարբք, և բնաւին զարմաւք, որպէսզի ողորմեսցի նոցա Քրիստոս. ընդ նոսին և մեղաւոր գրչիս Վարդանա, և իմոց ծնողացն, և որոց ամէն ասեն։

Նվիրող՝ Գրիգոր կաթողիկոս

բ

380 բ Տէր Գրիգորիս ծառայ աստուծոյ և ողորմութեամբ նորին կաթո-
ղիկ[ոս] ամենայն Հայոց ընձեռեցի զդիրքս Նաայի վարդապետին, ի ձեռն մեր հաւատարիմ լիկտին՝ տէր Կռատաձդեա արքեպիսկոպոսին Կեսարու, առաքեալ յարևելս ի թվիս ՉԾԴ. (1305)։

Հետ. ստացող՝ Նաայի Նչեցի

գ

446 ա Նաայի վարդապետին է գիրքս. յաղագս որոյ միշտ յիշել աղաչեմ յողորմութիւնն աստուծոյ։

45.

Մ Ա Շ Տ Ո Ց

Թղթաւն 2839

Ստացող՝ Ցովհաննես

231 բ Ցամի Չ. և Ծ. և Դ. (1305) թուականիս Հայոց, ի թագաւորութեանն ազգին նեստղաց Խաչպաղդի, ի հայրապետութեանն տեառն Ներսէսի։ Արդ, յայսմ ժամանակի քահանա ոմն, անուն կոչեցեալ նմա Ցովհաննես, ցանկացող եղեալ այսմ տառի ի տղայական հասակի, և ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և զաւակի իւր յետ իւր։ Արդ, վայելել տացէ Քրիստոս աստուած զտառս զայս Ցովաննես քահանայի, առողջ անձամբ և խաղաղական կենաւք, ամէն։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի տէր ղՑովաննես և զծնողսն իւր, աղաչեմ։

46.

ԱԻԵՏԱՐԱՆ

Եբևան 2744

Գրիչ՝ Սիմեոն
վայր՝ Արցախ

ա

299 բ ... Արդ, այսմ գաղափարութեան [ցանկացեալ] երջանիկ ոմն, աստուածային ձրիւքն բարգաւաճեալ, աստուածապատիւ կարգաւ տէր Սիմոն, ախորժական կամաւք, մեծաւ տենչմամբ ստացաւ զսա անջընջելի արձան ի մխիթարութիւն անձին և յոյս փրկութեան։ Եւ ես՝ յոգնամեղս և փցունս ի գրչաց, յանձն առեալ ըստ իմում կարի, յանգ հանեալ կատարեցի շնորհաւք և ողորմութեամբն աստուծոյ ի թուականիս Հայոց ՁԾԴ. (1305), ի քաղաքիս Արցախ, ընդ հովանեաւ սրբոյն Յակովբայ։

Եւ արդ, աղաչեմ զձեզ տ[երամ]ր՝ ընթերցաւդող և լսաւղող, յիշման արժանի առնել զվերոյստացեալ զտէր Սիմոն ստացաւղ տառիս, և
300 ա զծնաւղան իւր, և զեղբարս իւր, ես առ ‖ աւել ի ժամ սուրբ և սոսկալի պատարագին, զի արժանասցին ողորմութիւն ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։ Ընդ նոսին և ես, ամենամեղս ի գրչաց Սիմէ[ոն], յերեսս անկեալ աղաչեմ յիշել և զիմս անարժանութիւն և զծնաւղան իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս...

Ստացող՝ Տէր Սարգիս
վայր՝ Վարագ

բ

Եւ արդ, ես՝ տէր Սարգիս, առաջնորդ սուրբ ուխտիս Վարագա միարան եղբայրութեան դասուս, ըստ կանոնական սահմ[ան]ի կարգեցաք հաստատուն հրամանաւ, որ յամէն տարի նոր կիւրակէն Բ. (2) ժամ առնենք ստացողի սուրբ աւետարանիս, մի՝ տէր Սիմոնի, և մի՝ Ցոհաննէս իրիցու. և որ յետ մեզ լինին առաջնորդք և եկեղեցայպանք, անխափան արասցեն զպ[ատարագն...]։

47.

ՇԱՐԱԿԱՆՈՑ

Վէնն. 212. Տաշ. Ծուց. էջ 535

Գրիչ՝ Գրիգոր

ա

309 ա ... Գրեցաւ եղանակաւոր տառս թուականիս Հայոց ՁԾԴ. (1305), ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ և ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ձեռամբ Գրիգորի սուտանուն[է], ի խնդրոյ պատուական սարկաւագի Ստեփաննոսի, ի վայելումն անձին և ի յիշատակ հոգւոյ և

ծնաւղաց իւրոց։ Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կամ ընգաւրինակէք՝ յիշեսջիք զՍտեփաննոս սարկաւագ և զծնաւղս սորին, որ ստացաւ զսա յարգար վաստակոց իւրոց։ Ընդ նմին և զիս զանարժանս՝ զգծողս սորա՝ զԳրիգոր քահանայ, և զծնողս իմ ի տէր աղաչեմ յիշեսջիք։

Ստացող՝ Ստեփաննոս

բ

... Արդ, ես՝ նուաստս Ստեփաննոս սարկաւագ, վերջինս յորդիս եկեղեցոյ, ցանկացայ բաղցմամբ սիրոյ այսմ եղանակաւոր տառիս... ստացա զսայ յոյժ աշխատութեամբ ի տառապեալ կեանս իմ, ի քրտնաջան վաստակոց իմոց, դի լինիցի ինձ աւժանդակ ճշմարիտ կենաց, և համանունդ հոգևոր եղբաւրս իմ Յակոբ քահանայի, և ծնօղաց իւրոց, որ միխոխրհուրդ կամաւք կամք աւտարացեալ ի գաւառէն մերմէ...։

48.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ներսէն 4819 (տես նաև 1423 թ.)

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Արճէշ

Փառք անպարագիծ էին... որ տրամադրեաց զմատունս մեղսամած վերջացեալ տկար ոգւոյ Սիմէոնի նուաստ քահանայի զրեալ և կարդեալ զճառս երախտեաց աստուածազործ սքանչելեացն...

303 ա ... Արդ, այսմ զպաղատարութեան [ցանկացեալ] երջանիկ ոմն և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ, որոյ անուն իշխան Շնոփոր* յորջորջի՝ աստուածասէր և բարեպաշտ, սա ախորժական կամաւ և մեծաւ տենչմամբ ելեալ ի խնդիր աստուածեան հրամանացս, որ կեանս տայ կամայորդոր լսաւղաց, ստացաւ զսա անջնջելի արձան ի մխիթարութիւն անձին, ՁԾԴ. երորդի թուաբերութեանս հայոց (1305), ի գառն և ի վշտաբեր ժամանակի, ի քաղաքիս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակովբայ...։

49.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Փերզ. 6273, էջ 107 (Կարնոյ Սբ. Աստուածածին եկեղեցի)

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Գաւրքերուենից գաւառ

... Արդ, գրեցաւ սա ի թուականութիւնս Հայոցն ՁԾԴ. (1305), ի գաւառիս Գաւրքերուենոյ, յանապատիս, որ կոչի Սուրբ Կուսածիք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ձեռամբ յոգնամեղ և փցուն գրչի Սարգսի, ի խնդրոյ որբասէր և ժրաջան կրօնաւորի Թոռոսոյ, [որ] Հոխփսիմայ կոչի, որ փափաքէր հանապազօր այսմ տառիս։

* «Շնորհաւոր» անվան բարբառային ձևերից է։

50.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Ն. Ջուղա. Ամենափրկիչ, 18. Տ.—Ավետիսյան, Ցուցակ, էջ 1638 (տես նաև 1573 և 1689 թ. թ.)

Գրիչ՝ Ցորդանաց
վայր՝ Տարօն, ար. Կարապետի վանք

411 բ ... Ցամի եւթնհարիւրերորդի յիսներորդի չորրորդի (1305) եղև կատարումն սուրբ և աստուածային մեղսաքաւիչ պատարագի մեկնչիս ձեռամբ Ցորդանաց արեղայի՝ ապիկար և պիտականուն կրաւնաւորի, զոր ետ գրել սուրբ և երջանիկ բարունին մեր Ստեփանոս վարդապետ, տեսուչ և վերադիտող Տարօնոց սուրբ Կարապետին, յիշատակ իւր, և ծնողաց, և եղբարց իւրոց, և ամենայն աղգատոհմին իւր, և սուրբ հովուապետին, հեղահոդի և ճշմարիտ դիտին տէր Ցովանիսի, առաջնորդի սուրբ ուխտին սրբոյ Կարապետին և ամենայն զաբմից իւրոց...։

51.

Մ Ա Ղ Մ Ո Ս

Բրիտ. թանգ. 25 (Add. 11,857), Կոնիբ. Ցուց. էջ 47 (տես նաև 1590 թ.)

Գրիչ՝ Բարսեղ

ա

181 ա ... Արդ, գրեցաւ աստուածային տառս մարգարէին Դաւիթ թվին Հայոց ՁԺԴ. (1305), ձեռամբ յոգնամեղ գրչի Բարսղի։

բ

181 ա Մղալ և շփոթումն եղև, զի աւրինակն այսպէս էր, և մխոքս չէր ի վերայս, և գլետին գուբլային մոռացայ։

52.

ԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՒԱԳՐԵԱՑ ՊՈՆՏԱՑԻՈՑ

Մատենադարան Հայկ. թարգմ. էջ 427

Գրիչ՝ Մխ[իթար]
վայր՝ Մեծոփայ վանք

... Գրեցաւ հոգիբընկալ և աստուածազարդ մատեանս առ ի չնւագրէ սրբոյ անապատաւորէ արարեալ սատար օգնականի հոգւոց մերոց, ի թուի ՁԺԴ. (1305), յաստուածաբնակ անապատիս Մեծոփայ վանք առաքյնելոյ։ Ջանզի նախ այսմ մատենի ի սոյն տեղւոջ սկիզբն արարեալ գծագրութեամբ, յայլում տեղի փոխելով, և անդուստ դարձեալ յայլում վայրի զսայ ընդ մեզ կրելով. իսկ դարձեալ, ըստ նախնամելոյն աստուծոյն իմոյ Ցիսուսի, ի սոյն տեղի եկաւորութեամբ զսա յանդ հանեալ կատարեցաք, ընդ հովանեաւ սուրբ մաւրս

լուսոյ Աստուածածնին, յառաջնորդութեան տեառն Սուրգսի և վերակացուի հոգւոյ մերոց։ Դրեալ եղև ձեռամբ անպիտան և յետին սպասաւորի բանի Մխ[իթար] պիտականուն վարդապետի...։

53.

ՄԵՌՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երեան 1180

Գրիչ՝ Մխ[իթար]

115 բ Զստացող աստուածային դանձուցս՝ ղՏարսեղ սպասաւորբանին, և զծնոզս իւր յիշեսջիք ի տէր Ցիսուս, ընդ նմին և զհամար գրիչ Մխ[իթարս].*

* Այս Մխիթարին նուիրնացնում ենք նախորդ հիշատակարանի նուիրանուն գրչի հետ, քանի այդմ հիշատակարանը տեղադրում ենք նրան առընթեր։

54.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Փիլր. 0273, էջ՝ 108—111 (Ագթամար)

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Ագթամար

...Աստանօր սկզբնաւորեալ այս հոդևոր և աստուածային գանձս ևկեղեցւոյ, զոր աստուածապատիւ և առաքելաշնորհ հոգիացեալն ի հոգւոյն օծմանէ, Արջանիկ և աստուածային ձրիւք քարզաւաճեալ տէր Յաբարիա կաթուղիկոս Հայոց ցանկացող եղեալ... աստուածունակ տառիցս... և շնորհեաց զսա ի յաղթող քաջ նահատակն՝ ի սուրբ Գէորգն Լըմաճ, զոր և վերստին ի հիմանէ հաստակառոյց շինութեամբ արձանացոյց՝ սրբազործ խաչագրոշմ յօրինմամբ, ամենիմաստ հնարաւոր ձևակերպութեամբ: Զոր բազում ծախիւք և աշխատութեամբ բերեալ զնիւթ քարանց սորա ի վերտ մկանանց անղնդահաս ծովուն, ի յերկրէն Ռաջքերուենից, ի մեծ լեռնէն, որ կոչի Ռաջաց Կայաճ. և կատարեալ զսա մեծաւ զօրութեամբն աստուծոյ...:*

Եւ արգ, զգեղեցկութիւն հաղենոլոգ հաբաստութեան տեառն Զաքարիայի, զարի և զքաջ հովուապետիս բարեձևութիւնն ո պատմեսցէ, զրանս բարիս և զամենունակ առատականս, զսիրտ սուրբ և զհոգին խոնարհ, զաղքատասէրն և զգարմանիչն կարօտելոց, զիմաստունն և զհանճարեղն, զտեսիլն բարեձև և զպատկերն գեղեցկայարմար: Վասն որոյ մեծաւ փափագմամբ յօրինեաց զտաճարն աստուածընկալ և ստացաւ զսուրբ գիրքս ի վայելումն անձին իւրոյ՝ յարաժամ և յերկար ժամանակս, և յետ ելից յաստեացս՝ յիշատակ բարի ինքեան և ծնողաց իւրոց՝ բարեպաշտ պարոն Սէֆեդինի, և աստուածասէր տիկնոջն Մարիամու, և գեղեցիկ բարեմիտ շառաւիղին եղբօրն պարոն Գորգոյ, և դարձեալ երկուց եղբարցն՝ տէր Ստեփաննոսի կաթուղիկոսի և պարոն Կուռեղի Բէկի, և քեռն՝ Թագուհոյ և Մարթայի՝ հանգուցելոցն ի Քրիստոս:

Եւ արգ, ես՝ ունայնս և թափուրս ի գործոց բարեաց... Դանիէլ անարժան գրիչ և մեղուցեալ կրոնաւոր, ներողութեամբ նորին սկսայ և ողորմութեամբն կատարեցի զաստուածախօս տառս ի յաստուածընակ հայրապետանիստ աթոռս, որ կոչի Ագթամար, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչի և սուրբ Նշանի, ի նոյն հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի թուականիս Հայոց ՉԾԵ. (1306)-երորդի, և

* Իմա՝ Լեմ անապատէ:

թագաւորութեան Հայոց Կիլիկիոյ կողմանց երկրին Հեթմոյ, և յաչխարհտզալութեան նետողական ազգին, յորում մխոհամուռ ամենեքեան ընթացան զհետ ոչընչին և գտանին զոչինչ, զարձան ի մոլար օրէնսն Մահմեդի, որ արձակ ճանապարհաւ տանի ի կորուստ. և բռնադատեն զամենեսեան դառնալ ի սնոտի և ի պատիր յոյսն իւրեանց. հալածեն, նեղեն և տառապեցուցանեն՝ զոմանց գինչսն յափշտակելով, զոմն տանջելով, զոմն հայհոյելով, զխաչ և զկենդեցի նախատելով, և այս ամենայն վասն մեղաց մերոց...

Ցիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զստացող սուրբ գրոցս զվերոյիշեցեալսն ոսկեր Զաքարիայ...։ Հնդ նոսին և ամենամեղս ի գրչաց՝ Պաւիհել, յներես անկեալ ազաչեմ յիշել և զիմ անարժանութիւնս... և ծնողսն իմ՝ զՍտեփաղն և զԹամարն... ի տէր հանդուցեալսն, նաև զուսուցիչն մեր՝ զպատուական և զերջանիկ քահանայն զՍիմեոն, և զծնողսն նորին,... և զբազմերջանիկ կրօնաւորն զԽաչիկ և զծնողսն իւր,... զի յոյժ և բազում աշխատանք կրեաց յաղագս շինութեան սուրբ եկեղեցւոյս [Լմայ] սուրբ Գէորգեայ։

55.

ԱԽԱՏԱՄԱՆ

Թորոս Ագթաբ, Բ. էջ 253 (Բազէշ, ի վանս խնդրակատար սբ. Աստուածածնէ), տես նաև 1444 թ.

Գրիչ՝ Աբրահամ
վայր՝ Լիմ կղզի

Սրբասէր և իմաստուն քահանայ Խաչատուր... ստացաւ զսա անջնջելի արձան ի մխիթարութիւն անձին իւրոյ եւ յոյս փրկութեան անձին իւր եւ ննջեցելոց իւրոց։ Ես յոգնամեղս եւ փցուն ի գրչաց Աբրահամս... յանձն առեալ կատարեցի...։ Գրեցաւ ի կղզիս Լիմն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, եւ սուրբ Կարապետին, եւ սուրբ Գէորգայ զաւրավարին։ Ցիշեցէք զ| | |եան Զաքարիա, որ զհաւատս Հայոց նոր գնեաց ի յանաւրէն առաջնորդաց, եւ զեկեղեցիքս ազատեաց աստուածոյ տեսչութեամբն եւ ձեռաւք իւրովք։ Հնդ նմին եւ զառաջնորդս տեղւոյս յիշ[եցէք]՝ աէր Յոհաննես. ի թուիս ՉԾԸ* (1306)-երորդի հայկազեան սեռի, ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, յորում ամի եւ ըստ մեղաց մերոց այս ամենայն հարկապահանջութիւնս ևկն ի վերայ մեր...։

---

* Տպված է ՉԾԸ=1506, ուղղում ենք ՉԾՆ., որովհետև ա) 1506-ին Աղթամարի կաթողիկոս էր Ատոմը, բ) Լիմ անապատի առաջնորդ Յովհաննէսը ԺԴ դարու սկզբի մարդ է և հիշատակվում է 1315 թվականին Աբրահամ դպչի կողմից ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում (տես), գ) Զաքարիա Ա. Սֆեղինյան կաթողիկոսը (1296—1336), որը դնել է Հռհաւատս հայոց... ի յանաւրէն առաջնորդաց, ինչպես նշված է սույն հիշատակարանում, և գ) Փիլոզամյանը իր հիշատակարանների ձեռագիր ժողովածուում (Երևան № 6273, էջ 108), ընդօրինակելով սույն հիշատակարանի համառոտությունը, տալիս է ՉԾՆ. և ոչ ՉԾՆ. թվականը։

56.

ԱԻԵՏԱՐԱՆ

Դաղթն, Ազգ. հնդ. դիբք XII. 1903, էջ 171

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Եղեգիս

ՁԺԵ. (1306) Թուին Դանիէլի պատուերով գրիչ է Սարգիս կրօնաւորը. «Ի մայրաքաղաքին Եղեգիս, ընդ հովանեաւ Երից Տաղաւարացս, սուրբ կաթողիկէին, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Նախավկային, ի յաշխարհակալութեան զան Խարպաննտին, զոր ազգն Իսմայէլի սուլթան անուանին, ի թագաւորութեան Հայոց Հեթմա, եւ իշխանութեան այսմ նահանգի իշխանաց իշխանի, բարեպաշտ և ամենաւրհնեալն Իւրքէլին և Բալդուի, որդոց քրիստոսասէր և վառաղարդ իշխանաց իշխանի Էլիկումին, որդո մեծին Տարոսիենի, զոր աէր Յիսուս յերկար ժամանակս արասցէ մեզ ընդ երկայն աւուրս, ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Գրիգորի Անաւարգեցւոյ հայ[ոց] կաթողիկոսի, ի վերադիտողութեան տանս սուրբ Սահակայ՝ սուրբ և ընտրեալ քաջ հռետորի և անյաղթ մոլեստի տէր Յովհաննէսի Ուրպել արքեպիսկոպոսի, որդոյ իշխանաց իշխանի Լեպարդի, յաջորդող և աթոռակալ ղկնի տեառն Ստեփաննոսի, զոր տացէ դուս մեզ տէր ընդ երկայն աւուրս ուղիղ վեհակացութեանն։

57.

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 4806. նաև՝ վասպ. 80. լալ. 8ուց. Սյուն. 148—150

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Բերդակ գյուղ

ա

367 ա ... Արդ, այսմ աստուածապատում կտակիս... տենչացեալ ամենիմաստ և իմաստակեաց քահանայիցս՝ Սախիկ քահանայիս և Թումայիս, յաղագս փափաքանաց նոցա ի վեր քան զկարն արարին մտաբեր ինձ, որով մակագրեցի զսա վասն փրկութեան հոգոց և մարմնոց նոցա և ննջեցելոց իւրեանց, և ի վայելումն նոցին և զաւակաց իւրեանց...։

Արդ, ընդ ընթացից արեգականն ըստ չափոյ բերման Հայկազեան տումարիս ՁԺԵ. (1306) ամաց գրեցաւ սուրբ աւետարանս ի թագաւորութեանն Ալլջաթու սուլտանին, որ է թագաւոր իմաստուն և բարեխորհ և անգնելոց կանգնող, որո տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ զնայ, ի կաթողիկոսութիւն տեառն Զաքարիայի և վե-*

* Վերջին թվանշանը գրված է այնպես, որ կարելի է կարդալ նաև ՀԺ-ն, այդ դեպքում հիշատակարանի գրության տարեթիվը կլինի 1308-ը։

բաղխողի, ձեռամբ յոգնամեզ և անարժան գրչի Յովսեփաց նուաստի և նկարողի և կազմողի, ի յերկրիս Տարբերունւոյ, ի գեղ Բերդակ, ընդ հովանեաւ սուրբ և կենսաբեր նշանի խաչին Քրիստոսի, և սուրբ զաւրավարացն՝ սրբոյն Գէորգեայ և սրբոյն Մարգսի զաւրավարի, որ և բարեխաւս իսկ են վասն մեր և ամենայն քրիստոնէից առ Քրիստոս միշտ և հանապազ։

Աղաչեմ զձեզ, ով սուրբ քահանայք և բաշխողք աստուածային
367 բ խորհրդոյն, յորժամ ի վեր ամբառնա՛|այք զկառկառեալ ձեռս ձեր և զաստուած բոլորովին ի մատին ունելով և քաղցրաբարբառ ձայնիւ պատասխանեմ նուաղաբանեք և զարարիչն ընդ արարածս հաշտեցուցանէք, կրկին աղաչեմ զձեզ, ի նմին ժամու իմոյ, յանցանացս մեղաւք լցեալ ոգոյս Յովսեփաց նուաստի, և ծնողաց իմոց Շիրկանց և Հռիփսիմոյ, և եղբաւր իմոյ Յակոբայ, և քուրոյ իմոյ Աւաք տիկնայ և Շնաւխորի, և զաւակաց իմոց Թաթուլի և Զաւճարի, և այլոցն առհասարակ, և տղայատիպ հասակաւ ի Քրիստոս փոխելոցն՝ Մարեմի և Մեծացի, Յովաննի և Թաթիկվարդի, և սուրբ ճգնաւորաց կրաւնաւորի Աստուածատրոյ՝ վարդապետի իմոյ, և Վարդիկ կրաւնաւորի, և բարեմիտ և պատուական եղբաւրն մերոյ Մերչոյ, որ և փոխեցան բարի մահուամբ ի Քրիստոս, և ինձ՝ անարժանիս յանձին արարին գրել զնուռանոն
368 ա նոցա ի մատենիս, վասն յիշելոյ զինքեանս ի սուրբ և || ի մաքուր յարժանացեալ յաղաւթս ձեր, աղաչեմ զձեզ, վասն սիրոյն Քրիստոսի յիշել զնոսա և զմեզ...։

բ

368 բ Ես՝ Մերչես ու ես՝ Տնգիկս ու ես՝ Մարգարես, մեք՝ խամկա որդիքս ու Ըոզկանս, գնեցինք զսուրբ աւետարանս յիշատակ մեզ, և ծնողաց մերոց, և զաւակաց մերոց, և ննջեցելոց մերոց յայսմ աշխարհիս, և յետ աստի կենացս՝ ի հանդերձեալ յաշխարհին և ի կեանսն յաւիտենական, և տուաք ի ձեռն քահանային Թումայի, որ քանի որ այս աւետարանս կենա՝ առ Թումա իրիցուն կենա, և իւր զաւակացն, և իւր աղգին, ու մեզ յիշատակութիւն առնեն անխափան, զծառզարգ[ար]ի կիրակի ժամն անխափան կատարեն, առ ով որ այս սուրբ աւետարանս լինի. և մի ոք իշխեսցէ հանել զսա ի Թումա երեցուէն, ոչ մեք և ոչ աւետարք։ Եւ եթէ ոք յանդգնի ու աւելի պակաս ասէ և կամ յիշատակարան կտրէ՝ կապած և դատապարտած լինի յաստուծոյ և զինքն Քրիստոս ջնջէ ի դպրութենէ կենաց...։

58.

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Նբևան 2520

Գրիչ՝ Յոհաննես Սրգնկացի

143 բ Կարգիս և զանձն իմ եղկելի
Եւ մեղսաներկ արհաստ գրչի,
Զոր և մատամբ ծրագրեցի

Ես՝ Ցռի[ռնիկոս] աղքատ ողի,
Տառապանօք թանձրագունի,
Կարօտութեամբ անպատմելի,
Սակայն փափաք յոյժ տենչալի
Եւ աչխորժանք անքննելի
Զիս յորդորեաց յայս գործ իրի՝
Զսա շարել ի քարտիսի.
Զի յայս տեղիքս յորում էի
Էր դպրութիւն հրաշալի.
Եւ ես կարօտ այսմ տառի,
Զի յիւր տեղին սա հասանի,
Շատապեցա յաւէտ կարի,
Բայց իւր տեղոյն սչ հասուցի,
Զի եկն եհաս սա ի կարգի,
Ընթեռնելոյ ի հանդիսի,
Տակաւ կիսով չափ է թերի,
Հանգէտ գոլով սա աւարտի։
Զոր աղաչեմք, որք հանդիպի
Ասաւածախօս այս մատենի,
Ցիշման գոլով ղմեզ արժանի
Ջենման գառինըն առաջի
Եւ մաղթանք աղերսալի
Խոշորութեանս ներելի։

Բ

344 ա Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս և զիս՝ զաարժանեալ մեղսաներկ ողիս՝ զնուաստս Ցռի[ռնիկոս] եզբնկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափաք սորին, գրեցի իմով իսկ տխեղծ մատամբ ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ, և ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի, և ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ և ամենայն նախնեաց, փոխեցելոց ի Քրիստոս արեան մերձաւորաց, և համօրէն ամենայն երախտաւորաց՝ հոգևորաց և մարմնաւորաց, զի և զուք յիշեսջիք ի Քրիստոսէ աստուածոյ յուսոյն մերոյ՝ օրհնելոյն յա-ւ[իտեանս]։

Գրեցաւ ի թիւ. ՉԾԸ. (1306), ի քսանևինն մարտի ամսոյ։

59.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Երևան 3606

Գրիչ՝ Անդրիաս

213 ա ... Գրեցաւ... ի թուականութեանս Հայկազնեան տումարի ‖ և յամս աստուածապատիւ տեառն Զաքարիայի Հայոց վերապիտողի, ՉԾԸ. (1306)։ Արդ, աղաչեմ... յիշեսջիք... զՅովհաննես վարդապետ ծնողիւք

իւրովք հանդերձ, ընդ նմին և զստացող գրոցս ընդհանուր ճգնազգեաց քահանայ և ղծնաղան իւր... ընդ նմին և ղղծող գրոցս՝ զանարժանս զևնդրիաս...: Յոշորութիւն գրիս անմեղադիր [լերուք] և պակասութիւն, զի այս էր կար մեր. քիչ մի շտապեցա, խոշոր եղև: Եւ Ջրխատոսի վաոք յաւիտեան[ս] յաւիտենից, ամէն:

60.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2806

Գրիչ՝ Վարդան

վայր՝ Մոկաց գաւառ, որ. Խաչ վանք

291 բ ...Բայց գրեցաւ լուսազարդ աւետարանս ի Թուին հայոց ՉԾԵ. (1306), ի գաւառիս Մոկաց, ի վանքս, որ կոչի սուրբ Խաչ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և այլ բազմածողով մասանցս:

Եւ եթէ կամիցիք դիտել, թէ ո՞վ եղև առիթ, կամ ընդ աղագաւ ստացաւ գրս, Կարապետ սրբայսէր և պատուական քահանա, ի գեղջէ, որ կոչի Աձկոր....

...Եւ դիս՝ զստուտանուն կաւնաւոր զՎարդան՝ զգրող սորայ, աղաչեմ յիշել և մեզաց Թողութիւն խնդրել, և աստուած յիշողացդ ողորմի, ամէն, ամէն:

61.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 3674

Նախագաղափարի գրիչ

80 բ *Ի ժամանակի յորում էր թուականս մեր ՉԾԶ. (1307), ի պակասել արդարութեանց և ի բազմանալ անօրէնութեանց մերոց, առաւել բազմացաւ բարկութիւն և սաստկացաւ չարութիւն աղին նետողաց ի վերա մեր՝ աղգիս քրիստոնէից, քանզի եւ տղայ հասակաւ այր մին ի Խորասանայ միականի, համանման նեռինն, որ գալոցն է, անուն նորայ Խաբբանդա, որ թարգմանի իշու ծառայ, որդի Արղունիի որդւոյ Հուլայուինի։ Սա բառնալ կամեցաւ զքրիստոնէութիւն աշխարհէս հայոց և վրաց, զոր խափանեաց տէր և ոչ կատարեցաւ չար խորհուրդ նորայ։ Ցետոյ այլ բանս մտաւ ածեաց արբանեակն սատանայի, առաքեաց ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և հարկ առնուլ ըստ մարդաթուի Ի. (40) արծաթոյ մինչ ի Ժ. (10)՝ ըստ կարի։ Ցայս ի դառն ժամանակի եղև աւարտուածն սորա, ձեռամբ...**

62.

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՑՈՒԹԵԱՆ ԿԻՒՐՂԻ

Երևան 4881 (տես նաև 1696 և 1723 թ.թ.)

Գրիչ՝ Դանիել
վայր՝ Աղթամար

272 ա *Աստանաւր սկզբնաւորեալ անկողոպտելի գանձս եկեղեցոյ, յաստուածարնակ և ի հռչակաւոր սուրբ ուխտս Աղթամար կոչեցեալ, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչի և սուրբ Նշանի, և աստուածամուխ սուրբ Գեղարդեան, ի հայրապետութեան ուրբ և անբիծ տեառն Զաքարիայի, զոր տէր աստուած անսասան և անդրդուելի պահեսցէ զսոսա յերկար ժամանակաւք ի վերա աշխարհի, աղաւթիւք ամենայն սրբոց։*

Իսկ դրեցաւ սա ի թուականութեանս Հայոց յեւթնհարիւրերորդի յիսներորդի վեցերորդի (1307), ի խնդրոյ աստուածարեալ և երջանիկ կրաւնաւորի Մխիթարայ. վասն զի վառեալ սիրովն աստուծոյ և ելեալ

* Հիշատակարանի արտագրությունը թողնված է քերի։

ի խնդիր այս անջինջ արձանիս, զոր քաջ ախոյեանն՝ սուրբ Հայրապետն Կիւրղիոս դրեաց յշմարիտ հաւատոյ հերձուածողացն, որք ոչ հաւատան ուղղափառ հաւատով զտնաւրէնութիւն առաւծոյ բանին՝ միածնի սրդւոյն աստուծոյ, զոր ի վախճան աւուրցս կատարեաց վասն մերոյ փրկութեան։

273 բ Իսկ սա՝ ընարեալ կրաւ || նաւսրս Մխիթար, ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց՝ Փոքրկայ, և Նազխաթունի, և եղբաւրն Գրիգորոյ և Վարդան միայնակեցի՝ հանգուցելոյն ի Քրիսատոս, և ազգայնոցն ամենեցուն՝ կենդանեաց և ննջեցելոց. և ետ զսա նուէր ի նոյն աստուածարնակ ի սուրբ Ջաչս Աղթամարայ, ի վայելուչն մանկանց սորա...

Եւ արդ, ես՝ ունայնս և դատարկս ի գործոց բարեաց, ներփանաք և ինդունս ի գրչաց Թեոդիկէ սուտանուն կրաւնաւսր, եղեգնադիծ դրոշմեցի զսա իմով մեղսամած մատամբս ըստ իմում տկարութեանս, ի դառն և ի տարտարոս ժամանակիս, յորում զաւրացաւ ազգն Իսմայէլի այնչափ, մինչև դարձուցին յիւրեանց սնոտի յոյսն զամենայն ազգն հետողաց, որ ոչ ճնաց մի ի նոցանէ, որ ոչ հաւատաց սուտ և խաբեբայ հաւատացն նոցա, որ արձակ ճանապարհաւն տանի ի գոռւսան։ Եւ նեղն զամենայն քրիստոնեայք դառնալ ի պատիր յոյսն իւրեանց, զոմն նեղեն, զոմն տանջեն, զոմն սպանանեն, զոմանց զինչսն
273 ա յափշտակեն. || և ոչ այնու շահացեալք, այլ և եդին ի վերա ամենայն քրիստոնէիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերա ուսոց թիկանցն կտաւս սեաւս, զի որք տեսցէն զնոսա՝ ճանաչեսցեն եթէ քրիստոնեայք են և հայհոյեսցեն. և ամենևին ջանան, զի մի երեսցի քրիստոնէութիւն ի վերա երկրի։ Եւ այս ամենայն վասն մեղաց մերոց, զի ոչ գառնամք և ապաշխարեմք գանուղ[ղ]ա գործս մեր, այլ աւրըստաւրէ զառածանիմք և յաւելումք ի չարիս, վասն զի վոխանակ ոխրելոյ և ցաւակից չինելոյ միմեանց՝ ատեմք և անտես առնեմք, և վոխանակ պատուելոյ զեղբարս և մեծարելոյ՝ անարդեմք և մորոս կարդամք, և բիւր ազգի ազգի մեղաւք կուրացեալ կամք, և ոչ իմանամք, զներողութիւնն աստուծոյ, զի քաղցրութիւն նորա զմեզ յապաշխարսւթիւն ածէ։

Եւ արդ, դարձեալ աղաչեմ զամենեսեան պանդխտեալսզ սմա՝ ղրնթերցողսզ և զլսողսզ, յիշեսջիք յաղւթս ձեր զվերոյ յիշեցեալն
273 բ զՄխիթար սրբասէր կրաւնաւոր՝ ստացող սորա, և զը || ծնողսն իւր զոր յիշեցաք, նաև զիս, զանարժան և զմեղուցեալ գրիչս ՊԱՅՈՒՆ, և զծնողսն մեր զՇահապ և զԹամար՝ զհանգուցեալսն ի Քրիստոս և զամենայն ազգատոհմն մեր՝ զկենդանիսքն և զննջեցեալսն։ Նաև զերախտաւորքն մեր և զսրբասէր քահանայն զՍիմէոն՝ զուսուցիչն մեր, և եղբայրս մեր զՍտեփաննոս կրաւնաւոր, որ աւգնական և ձեռնտու եղև մեզ ի նիւթ թղթիս, աղաչեմ յիշելոյ արժանի առնել ի Քրիստոս Յիսուս, սրպէս զի ազաւթիւք ձերովք և ամենայն սրբոց ողորմածն աստուած ողորմեսցի ամենեցուն առհասարակ՝ յիշողացդ և յիշեցելոցս, կրկին կենաւք և երկու աշխարհաւք, ամէն...։

274 ա Յիշեցէք յաղաւթս ձեր, զծերունի հոգևոր հայրն մեր զՍտեփաննոս սրբասնեալ կրաւնաւորն, որ առիթ և միջնորդ եղև այսմ գործոյ, նաև զծնողսն իւր, աղաչեմ։

63.

ԱԻՏԱՐԱՆ

*Վասպ. 81, կալ. 8ուց. Սյուն. 181—154**

Գրիչ՝ Խաչեր
վայր՝ Բերկրի

ա

...Կատարեցաւ համաշխունչ սուրբ և կե[ն]սաձիր** աւետարանս ի մայրաքաղաք***, որ կոչի Բերկրի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և սրբոյն Յակոբայ Հայրապետին, ի թուաբերութիւն Հայոց ՉԾԶ. (1307), ի թագաւորութիւն**** ազդին Նետոդաց, ի ժամանակին, յոր և եղին նշանս ի վերայ քրիստոսական հաւտին*****, ի հայրապետութեան տէր Զաքարիայի և յառաջնորդութիւն տէր Յովաննիսի։ Որք կարդայք յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր զպարոն Նհճնհէ****** և զծնաւղսն, որ են՝ զՎասոս և զԹամսեր, զի արժանիք արասցէ Քրիստոս անմահական սեղանոյն, և զդրոդս զհաչեր քահանայն և զծնողսն իմ։

Յիշեսջիք ի մաքրափայլ և ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր զպարոն Նհճնհճն, և ծնաւղսն իւր, և զգաւակսն՝ զԱւագ պարոն, զՅաճապոդինճ և զԱզիզ տիկինն, եւս առաւել զԱմիրճ և զծնողսն իւր, քանզի բազում փափագանաւք զսուրբ աւետարանս ստացաւ ի հալալ յաղեանց յիշատակ պարոն Նհճնհիճ և ծնողաց և զաւակաց իւրոց...։

Դարձեալ ևս ամենալարող ողորմութեամբն Քրիստոսի, և հաւրն նորին, և հոգւոյն, ես պարոն Նհճնհէ, որ ստացայ զաստուածաշունչ պատգամս աւե[տե]աց աւետարանիս ի հալալ արդեանց իմոց, իմով յաւժարութեամբ ընձայեցի զսայ մաւրն Քրիստոսի Աստուածածնին Աղթամարա...

Աղդ, սպասաւորք սուրբ Աստուածածնին յանձն առին յամեն տարի Ի. (4) աւր վասն մեր պատարագել ղՔրիստոս. մինն հաւր իմոյ՝ Վասոսի, երկրորդն մաւր իմոյ՝ Թամսերի, և եր[ր]որդն ինձ՝ Նհճնհէի, և չորրորդն կենակցին իմոյ՝ Սուրուխիճ։

---

* Թերի կերպով արտագրված է նաև Ղ. Փիրդալամյանի ձեռագիր ժողովածուում (№ 6273, էջ 113)։

** Փիրդալամյանի մոտ «կե[ն]սարեր»։

*** Փիրդ. «մայրաքաղաքս»։

**** Լալայանի մոտ «իւ թուաբերութեանն», «իւ թագաւորութեանն»։

***** Փիրդ. «հօտին»։

****** «Նէքընէքս» անունից հետո Փիրդ. գրում է «[ղստացող աւետարանիս] և ղգրող՝ ծաչեր քահանայ», որով և վերջանում է հիշատակարանը նրա մոտ։

հաստաբիչքն աւրհնին յոստուծոյ, և խափանիչքն և ըստունգանողքն, որպէս խաբեբայ, դատապարտին յաւուրն Քրիստոսի։ Եւս և թէ ոք յանդգնի գողանալ զայլ, կամ վաճառել, կամ գրաւել, կամ հինչ և է պատճառի հեռացուցանելոյ ի դրանէ Աստուածածնիս Աղթամարայ, ինքն հեռացեալ եղիցի յողորմութենէն Քրիստոսի և սուրբ Աստուածածնին և բաժին ղօուգայիին և դժալոցացն տոցէ, ո ոք և է, թէ երէց, թէ աշխարհական, թէ այր և թէ կին, զի սուրբ Աստուածածնին է սայ անպատճառ...։

Այլ և ժամին սպասաւորքն, որ դան գինի, զնոյն կատարիցեն։ Թվ. ՉԾԷ. (1398)։ Ապա թէ ոչ, ընդ նոյն դատապարտութեամբ են։ Այլ և զամիրն յիշել յաղաւթս հանդերձ ծնաւղաւք։*

Գերութիւնից ազատող՝
բռնս Կարապետ

բ

Յարձեալ յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվաճայ քաղաքի բռնս Կարապետն և զծնողք իւր՝ զԱմիրխան և զխաթուն, և զկենակիցն իւր՝ զԳուլաբաքն, և զորդին իւր՝ զԱմիրխան, և զայլ ամենայն արեան մերձաւորքն իւր, և լի բերանով և ուղիղ սրտիւ աստուածողորմի ասացէք նոցա, որ ազատեաց զսուրբ աւետարանս ի ձեռաց անօրինաց և ետ յարձեալ ի դուռն սուրբ Աստուածածնին Աղթամարայ...։

Գերութիւնից ազատող՝
բռնս Ատոմ

գ

430 ա Յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղօթս ձեր զԱնկզայ բռնս Ատոմն, և զծնողքն, և զազգն ամենայն, և աստուածողորմի ասացէք նոցա, որ զսուրբ աւետարանս ազատեաց ի ձեռաց յանօրինաց, արբիչն աստուած զինքն ազատէ ի ձեռաց սատանայի և ի փորձանաց, ամէն։

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

64.

Վրաց. քանգարան, № 18

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Արճիշի գաւառ, Ընճամէջ գիւղ

ա

...Եւ արդ, նուաստս ի քահանայիցդ Մկրտիչ անուն, ցանկացող եղեալ հրամանաց փրկչին, փափագանաւք և խնդութեամբ սրտի և յաւժարութեամբ կամաւ գրեցի զհրամանս փրկչին Յիսուսի Քրիստոսի

* Ն. Լալայանի Ծուցակում հատվածները հրատարակված են խառնիխուռն դասավորությամբ։ Կատարեցինք որոշ շտկում։

ի վայելուչն անձին իմոյ, և ծնողաց իմոց Պաւղոսու | | | յոյժ աշխատասէր և մնուցանող, և ամենայն աղղականաց իմոց, և ամենեցուն, որ ուղնել են ի սուրբ աւետարանս, բարեխաւսութեամբ աւետարանչացս, ամէն։

Արդ, կատարեցաւ սուրբ աւետարանս և հրամանքն Քրիստոսի ձեռամբ մեղաւոր և փծուն գրչի Մկրտչի քահանայի, ի գեաւղս, որ կոչի Սինամէջ, ընդ հովանեաւ սրբոյ Սիսինի և սրբոյ Դանիէլի, յերկիրս Քաջբերունեաց, որ է Արծէշ, ի թուաբերութեանս Հայկազնեան տումարի ՌՅՀԱՐԻՒՐԵՐՍԻՐԴ յիսներորդի [վեց]երորդի (1307). Աղաչ[եմ | | | ընթեռնոյք ասաուածահրաշ և դիրամանս փրկչին ի ձեռն սուրբ առաքելոցն ի սուրբ պատարագի և յամենայն ժամ, յայնժամ յիշեսջիք զգբողս սորա զՄկրտիչ քահանա, և զծնողսն իմ, և զաւղնիչսն ի սուրբ աւետարանս։ Եւ որ զմեղ յիշեն և յիշման արժանի արասցեն և նոցա ողորմեսցի Քրիստոս ի միւսանգամ գալստեանն իւրոյ, ամէն, ամէն։

Յոշորութիւն գրոյս և պակասութեան մի մեղադրէք, զի յառաջին գիր է և ես չէի հմուտ արուեստի։

Ի թագաւորութեանն նեստորական ազգի որում անուն Խարպանդայ էր և Իսմաէլացոց սուլտան անուանեցին | | |*

բ

Տէր աստուած Յիսուս Քրիստոս, բարեխաւսութեամբ ամենայն սրբոց քոց, ողորմեա ամենեցուն, որք աւգնեցին ի սուրբ աւետարանս, և բազմամեղ ողոյ Մկրտիչ քահանայի և վարդապետին իմոյ Ստեփանոսի, որ հարազատ եղբայր է իմ։ Եւ որ կարդայք, ձեզ ողորմեսցի Քրիստոս։ Ի թվ. ՉԾՉ. (1307)։ Հայոց մեծ վիշտ էր։

գ

Տէր աստուած Յիսուս Քրիստոս, բարեխաւսութեամբ սուրբ աւետարանչիս Մարկոսի, ի միւսանգամ գալստեանդ ողորմեայ Մխիթարա և ամուսնոյն իւրոյ Թամթայի, ամէն։

Եւ փծուն գրչի Մկրտիչ քահանայի և ծնողաց իւրոց | | |

Ստացող՝ Կարապետ

դ

Այլ և ա՛ յետինս ի կարգաւորաց և թափուրս յամենայն բարեաց Կարապետ քահանայ, ստացա զսուրբ աւետարանս ի հալալ վաստակաց իմոց, յիշատակ ինձ և ծնօղաց իմոց։**

---

* Մի տող ջնջված։

** Ունի նաև հետագա ստացող Անդրէասի հիշատակարանը։

65.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, 4210 (տես նաև 1357, 1551 և 1730-ական թ. թ.)

399 ա ... Արդ, ի կարճեալ աւուրս և երեկոյացեալ ժամանակիս, այսինքն ի վերջի դարուս, յորժամ [յ]աղագս ծուլացեալ մեղաց աշխարհիս, իբր երեզալեան իմն մրրկեալ տատանեալ ծփէը ի ըոնութենէ սրոյ աղինն նետողաց, զոր յոլով ժամանակաց աւո[ւրց՞] սաստկացեալ տիրէը հա-մայն ամենայն երկրի, սկսեալ յելիցն արեւու ի ծովէն Կասբից, շրջա-պատեալ զհիւսիսիւ մինչև զա, հասանէ ի ծովն Պոնտոսի, և դարձեալ, ի միւս կողմամբն հարաւայնոյ պատ առեալ, պարունակեալ զաշխարհն Ասբիլացւոց և զհամայն զԱսորիս և զԿուլի[կ]եայ, մինչև ցնոյն ծովն Պոնտացւոց աշխարհին, զբոլոր մէջերկրայս, զողջս և զլեզուս բա-399 բ ղումս || [ընդ ին]քեամբ կալեալ ունէը չար լուծ ծառայութեան նոցա, բան նախատեսութեանն մեծ հայրապետութեան Ներսէսի Հայոց [կա-թուղիկոսի]։ Եւ պակասեալ, նուազեալ զայր հայրապետութեան սեռի սուրբ Լուսաւորիչն Գրիգորի և թագաւորութիւն ազգին Արշակունեաց, լսա տեսլեան սրբոյն Իսահակայ։ Եւ սակս անզգաւութեան մերոյ ոչ զարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է ի պատժել [և] ի պատուհասել, և մեր ոչ ղղջացեալ, մինչև ծուրեալ և ծըդեալ, հիւծեալ մաշեցան ամենայն կեանք մեր, ի մահ և դժոխս մերձեցան անձինք մեր, քանզի թողին զաղանաբարս և այլազէմ և այլալուսու ազգին նետողաց զհայրենի աւրէնս իւրեանց, թողին և հետևեցան չար աղանդոյն կարապետ նեռին Մահմետի, և ևս քան զևս ընդ նեղութեան և ընդ հալածանաւք արկին զազգս քրիստոնէից։

Արդ, յայսմ զառն և ի գժնա ժամանակի, յորում խաւար անլուս և մեք անմխիթար, տարածեալ մածեալ ունէը զամենայն...։*

66.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7601 (տես նաև 1451)

Մտացող՝ Վարդան
վայր՝ Կիլիկիա

448 բ Կամաւք աստուծոյ հաւր կենդանւոյ և կարողի յամենայնի, և միածնի որդւոյ իւրոյ կենարարի... ես | | | ի վերջ հասեալ քահա-նայից, մեղաւոր և անարժան ծառայ աստուծոյ, ցանկացաւդ եղէ այսմ լուսաիղձ և կենսակիր սուրբ կտակիս և զի անձեռնհաս էի վասն աղ-քատութեան։ Փափաքէն ստիպէը զիս և յոյժ ըղձայի. և հանդիպեալ

* Հիշատակարանը հասել է մեզ ժէ. դարի ընդօրինակութեամբ. պահպանվել է միայն այսքանը։ Գրված պետք է լինի մոնդոլների մահմեդականություն ընդունելու ժա-մանակ, որ տեղի է ունեցել 1306—1307 թվականներին։

աստուածապաշտից ոմանց և արարին ինձ ողորմութիւն, և հանապազ
449 ա գթա || ցին ի յիս զուարթմամբ առատութեամբ. Ոմն, որում անուն
կոչիւր Թաւտաւրէ, որ եղև առ իս բարեմիտ, վասն աստուածասիրու-
թեան իւրոյ և վասն յիշատակի հանգուցելոյ զուգակցի իւրոյ, և բա-
րեսիրաշատ աներոյ իւրոյ Աւռաբելի, գործակցութեամբ և յաւժարամտու-
թեամբ զոքընչի իւրոյ Թեմաճայ, և այլ ոմն՝ անուն Ճուան, որ և նա
բարեմտաբար հանապազ գթացեալ է յիս, որոց արդեամբք ստացայ
զայս փոփաճելի կենսունակ սուրբ կաակս, որոյ ես միայն միջնորդ
եմ ստացուածոյս. Եւ ոչ թէ յիմ արդեանց ստացայ, այլ ի վերոյդրեալ
449 բ աստուածապաշտիցն արանց. և ես միայն զայս արարի՝ || դպելով դիս
ի յաւելորդացն, միայն հարկաւորաւն բաւականացայ։ Եւ եաւս գրել
և աւարտել քահանայի ո[ւ]րումն գրչի, որոյ անուն Լևոն, ի ստոյգ և
յընաիր աւրինակէ, զոր յայժ բաղձանաւք և յողնատչեր տենչանաւք,
մեծաւ աշխատութեամբ ստացայ զսա ի լուսաւորութիւն մանկանց
եկեղեցւոյ և յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հաւրն՝ Թորոսի և մաւրն
իմոյ Շարի, և եղբաւրն իմոյ Անդրէասոյ քահանայի, և այլ եղբարցն՝ իմոց՝
Ցօվաննիսի և Աւետաց, և քեռոյն իմոյ տէր Վարդանայ. և այլ ամենայն
զարմից իմոց՝ կենդանեաց և ննջեցելոց։ Վասն ո || րոյ աղաչեմ զսուրբ
450 բ հարս և զեղբարս... յիշեսջիք զսաւուցաւզն զվերոյդրեալն || զՎարդան
ծեր.ունի քահանայ և զայլ երախտաւորսն, և զարդիւնաբարն՝ զՅակոբ
Մուղտսի, և զկին ոմն պարկեշտուհի և սգաստ որոյ անուն Տալիքա, որ
և նա արար արդիւնք ի սուրբ կտակս, և զսակաւ աշխատաւղս ի սմա
վասն ուղղութեան՝ զմեզաւոր հոգս Ստեփաննոս Գոյներիցացն, և երկրա-
հուռ զիմաւք հայցեմ ի հանդիպողացդ ողորմութիւն խնդրել ի Քրիս-
տոսէ յահեղ աւուրն համատաւտի ընդ ամենայն սուրբս իւր, որ է
սուրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւ զկարաւտս ողորմութեանն աստուծոյ զԼևոն սուտանուն քա-
451 ա հանայ, որ ոչս եմ արժանի այսմ աստիճանի, || յերեսս անկեալ աղա-
չեմ զսուրբ հանդիպողսդ՝ գնարս և զեղբարս, զի արժանի առնէք յիշ-
մանն առաջի զէնմանն անմահ գառինն Քրիստոսի զիս՝ զմեզուցեալ
գրիչս, և զծնաւղսն իմ, և զամենայն ազգատոհմն, և աստուած զձեզ
յիշէ, ամէն։

Գրեցաւ ի Թուա[կանութեան Հայոց] ՉԾԶ. (1307), ի թագաւո-
րութեանն տղայ Թագաւորին Լևոնի, որդւոյ Թորոսի, Թոռին Լևոնի։

67.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Փերդ. 6273, էջ 112 (Լիմ)

Դրիչ՝ Մխիթար
վայր՝ Մեծոփայ վանիք

ա

Ծանկ եղեալ կատարեցաւ աստուածախօս աւետարանս... ի թուի
Հայկազեան տոհմիս տումարի ՉԾԶ. (1307), յանապատիս Մեծոփայ

վանք առձայնելոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, յառաջնորդութիւն սրբազան և պատուական հայրապետիս տեառն Սարգսի, ձեռամբ անարժան և պիտականուն Մխիթար վարդապետի*, ի սահմանս մերոյ հարազատի՝ ումեմն Ասետիս քահանայի և կուսակրօն արեղայի, պատճառ և առիթ երկնային և անթառամ պսակացն։

բ

Ես՝ պիտականուն Մխիթար վարդապետ, դրեցի զսուրբ աւետարանս իմով ձեռամբ, և վաճառեցի զսա ընդ աշխատանաց իմոց Ստեփաննոս քահանայի, յիշատակ նորին և ծնողաց իւրոց, և բարեխօս առ որդին միածին, այլում խօսք և դատաստան ընդ նմա ոչ դոյ բնաւ։

68.

ԳՐՈՒԹՅՈՒՆ ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆ ՏԵՍԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Մատենադարան հայկ. ձեռագ. էջ 673, և Փիլոլ. 6273, էջ 111—112 (Բրիտ. թանգ. 19,728)

Գրիչ՝ Ստեփան
վայր՝ Մլիճի վանք, Կիլիկիա

ա

...Գրեցաւ զիրքս այս, որ կոչի Պրոխաւս, որ ունի առ ինք հաւաքեալ զամենայն բանս և զգործս Յովհաննու աւետարանչի՝ եղբաւր տեառն, ի սուրբ ուխտս Մլիճի, ընդ հովանեաւ Տիրամաւր սուրբ Աստուածածնի և տյլ որբոցս, մատս յանառիկ դղեակս Պապառաւնի։ Արդ, ստացաւ Կոստըճդին քահանայ յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն զարմից իւրոց։ ...Գրեցաւ ի թվ. Չ. երորդի յհինգերորդի վեցերորդի (1307)։ Զկոստանդին քահանայ զստացող զրոցս յիշեալիք ի տէր, ընդ նմին և զեղկելի Ստեփան՝ զգրող սորա, և աստուած զձեզ յիշէ յիւրում արքայութեան, ամէն։ Եւ արդ, որ ժառանգէք [զգիրքս] յետ նորա, թողութիւն յաստուծոյ խնդրեցէք Կոստանդեայ քահանային, և մօրն իւրոյ Վալուրչի, և հօրն իմոյ Կատանդ քահանայի, և զքոյրն իմ զՇահանդուխտ, և զքեռին իմ զԳրիգոր կրօնաւորն, և զքոյրորդին իմ զԹորոս՝ զտարաժամ ի[ր]խեալն առ Քրիստոս։ Եւ զհոգևոր մայրն իմ զԹեփանու յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր։**

* Մխիթար Սասնեցի կամ Կերմանեցի մատենագիրն է (1260—1337), որ «յոյժ հմուտ էր յարուեստ դպրութեան և ի ծաղկազարդ նկարակերտութիւնս գրոց» (տես՝ «Մխիթար Սասնեցի», էջ՝ 30)։

** Թվականից հետո եզող հատվածը քաղել ենք Փիլոլաստյանի ընդօրինակությունից։

Գրիչ՝ Աւետիք

բ

...Ախատղելոց բըժիշկ բարի,
կենաց սըւոզ ամենայնի,
Քաւիչ մեղաց լեր Տ[եառ]ըն
Եւ հալածիչ ախտից ժանտի,
Ոչ այնու միայն, որ երեի,
Այլ և ներքինոյն, որ իմանի.
Հանգոյն շնորհին այնըմ մեծի,
Զոր արարէր անբաւ բարի,
Պարգես անճառս անպատմելի
Դու՝ Աբգարու թագաւորի,
Ընդ նմին և ինձ անարժանի,
Եւ արուպ քո ծառայի,
Աւետաց մեղաւորի
Եւ տուտանուն քահանայի,

69.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊՕՂՈՍԻ

Հալէպ. Սբ. Մնկ. 142. Սիւրմ. Ա. 247

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Արձիշ գաւառ, Ասպիսնկայ վանք

442 Գրեցաւ... ի թուականութեան Հ[յ]կազնեան տումարիս ՉԾԶ. (1307), յանապատիս Ասպիսնկայ*, ի հայրութեան Ստեփանոս վարդապետի՝ ժրի և ամբծի, Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Ցարութեանն, և այլ սրբոց։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ աւրինակէք, զստացողս սորա՝ զ[Ի]մեռն կրաւնաւոր և դիս զսուտ[՞] միայնակեաց փցուն գրիչ Ղազար [յիշեցէք]...։**

70.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փլրզ. 6273, էջ 113 (Մեծոփայ վանք)

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Այրիվոր

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի հռչակաւոր մենաստանիս, որ կոչի անուամբ Այրիվոր, ի թուականութիւն հայոց ՉԾԶ. (1307), գրեցաւ ընդ հովանեաւ սուրբ Ցարութեանն, և այլ համօրէն ամենայն

* Տուրուբերանի Արճեշ գավառի մէջ Ասպիսակ գիւղի մոտ նշանավոր վանք։
** Ձեռագրի հաջորդ թերթն ընկած է, հիշատակարանը պակաս է թերի։

սրբոց իւրոց...։ Ցիշեսջիք զստացող սուրբ աւետարանիս՝ զԱստուածատուր... և զիս զամենամեղ անձամբս կորուսեալս՝ գծող և եթ անուանիմ՝ Ներսես կոչեցեալ։

71.

ՃԱՌՔ ԲԱՐՍՂԻ ԿՆՍԱՐԱՁԻՈՑ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ

Երևան 4234

Գրիչ՝ Խաչիկ

36 բ Ձմեղուցեալ ծրողս զխոչիկ սարկաւագ և սպասաւոր բանի յաղօթս յիշեցէք, ով սուրբ ընթերցողք, և ոխալանացն ներումն հայցեմ, զի այսքան է կար մեր։ Ի թուիս ՉԾԶ. (1307), ի հրոտից ի Ժ. (10)։

72.

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ՀԱ. 1922. էջ 154*

Վայր՝ Կիլիկիա

Ի թուականիս Հայոց ՉԾԶ. (1307), ի նոյեմբերի ի ԺԷ. (17) աւրն սպանաւ աւազ պարոն Հայոց Հեթում և գեղուղէշ և ամենաբարի պատանին, եղբաւր որդին իւր՝ Լեռն, որդի պարոն Թորոսի, ի ստորոտս Անարզարու, յանաւրէն Պելարդոյէ, և սուգ մեծ Թողին ազգիս Հայոց։ Արդ, աղաչեմք զամենեսեան, յիշեցէք սրտի մտաւք զվերոյասացեալ պարոն Հայոց զՀեթում և զբարեպաշտ Թագաւորն զԼեռն, որք նահատակեցան ի վերայ աղգիս Հայոց, զի դասեսցէ զնոսա յաջակողմեանն իւրում Քրիստոս աստուած, որ աւրհնեալն է յաւիտեանս, ամէն։ Նայ և զնահատակակից նոցին՝ զԱւշին՝ ասպարապետն Հայոց և զպարոն Վասակ՝ հաւրեղբայրն իւրեանց։

* Ձեռագիրը պատկանել է Ծաք Մաթոսյանին, գրված է 1283 թ. Լևոն Գ. Թագավորի համար։ Հիշատակարանը հրատարակված է լուսատիպ նմանահանությամբ։

73.

ՇԱՐԱԿՈՑ

Երևան 1590 (Տես նաև 1622 թ.)

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Սիս

...Գրեցաւ եղեռնակաւոր ատուս ի թուականութեանս Հայոց ՉԾԷ. (1308), ի պարոնութեանս Հայոց Աւշնի և եղբաւր իւրոյ Ալինախի, և ի հայրապետութեանս սեառն Կոստանդեա Կեսարացւոյ, ի մայրաքաղաքս ի Սիս, ձեռամբ բազմամեղ զրչի Գրիգորի դպրի, ի խնդրոյ պատուական քահանայի Վասլի. ի վայելումն ղեռարոյս որդւոյ իւրոյ
296 ա *Ներսէ || սի դպրի։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ ատուի և աւղտիք ի սմանէ, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զպատուական քահանայն զՎասիլ, զաստուածատուր որդին իւր՝ զՆերսես դպիր, և զմարմնակիցն իւր՝ զՄարեմքագ, և զերկուս այլ որդիսն իւր ըստ աշխարհի՝ զԹորոս և զԳրիգոր, որ ստացաւ դմա յարդար ընչից իւրոց։ Ընդ նոսին և զիս, զեղկելի գրիչս զԳրիգոր. և զծնաւղսն իմ, աղաչեմ յիշել ի տէր, քանզի կարողութեամբն աստուծոյ գրեցի և զարդարեցի ոսկով։ Դարձեալ աղաչեմ յիշել ի տէր զհայրն իմ և զուսուցիչ՝ զՅոհաննէս քահանայ և զմայր իմ։ Եւ վասն խոշորութեան և սղալանաց, որ գտանի ի սմա, աղաչեմ անմեղադիր լինել, քանզի ի դառն և ի ժուռաբին ժամանակիս գրեցաւ, որ յայսմ ամի անտուբէն գլխաւորն Պուլարդու՝ յազգէն Նահողաց, պատրանաւք եսպան զղեռաբոյս մանուկն և զնոր աւծեալ թագաւորն Լևոն, և զաւրք պարոնն Հեթում, և զայլ իշխանսն։ Եւ աստուած յիշսզացդ և յիշելոցս ողորմեսցի ի մխսանգամ գալստեանն իւրում, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

74.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՂԹՈՑՆ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 4673 (տես նաև 1796 թ.)

Գրիչ՝ Յովաննես
վայր՝ Վանայ գաւառ, Աւանս գիւղ

577 ա *Արդ, այսմ հողևոր և աստուածային դանձարանիս ցանկացայ ես՝ մեղուցեալ և անարժան ծառայս աստուծոյ Յովաննես, ի ձեռն Յոհաննէս քահանայի, հողևոր եղբաւր մերոյ, որ առտնորդ եղև այսմ գործոյ...։*

577 բ ...Ի Թուականութեանս Հայկազեան տումարիս ՉՄԷ. (1308) գլեցաւ և կազմեցաւ ձեռամբ մեղաւորի և անպիտանի Ծովանիս քահանայի, յաշխարհականութեան ազգին Նետողաց Խարպանդաւղի դանի, և ի հայրապետութեանն տեառն Զաքարիի Աղթամարայ Հայոց կաթողիկոսի, և յառաջնորդութիւն գերայհռչակ և սուրբ ուխտիս Վարագայ՝ տէր Սարգսի, որ զաւրինակն երեւ, շնորհեսցէ նմա տէր աստուած զանվախճան կեանսն, ամէն: Բայց գրեցաւ ի գաւառիս Վանայ, ի գեաւղս, սբ կոչի Աւռնս, ընդ հովանեաւ սուրբ Ծովաննու կարապետի և սուրբ Գրիգորի հայոց լուսաւորչի, որք են բարեխաւս առ տէր վասն մեր...:

75.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7649 ևս նաև 1338)

Գրիչ՝ Վարդ
վայր՝ Թեոդոյպաւլիս

ա

242 ա Կատարեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ մեղուցեալ և ախմար գրչի Վարդ երիցո, ի Թուաբերութիւն Հայոց ի ՉՄԷ. (1308), ի մայրաքաղաքիս Թեոդոյպաւլիս. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս: Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք, յիշեցէք ի Քրիստոս զմեղաւք լցեալս, զի և Քրիստոս ձեզ ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Հետ. ստացող՝ Թանկ Ցագիգ

բ

312 բ Ես Թանկ Ցագիգ, որ գնեցի զաւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց և զաւակաց իմոց, որք կարդայք կամ ընդաւրինակէք յիշեցէք ի Քրիստոս, և յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի առհասարակ, ամէն:

76.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Շուշի 11. Թովմեան, ծուց. Յակիկ վրդի, Ր., էջ 46

Գրիչ՝ Վազար
վայր՝ Ասպիսնկայ վանք

ա

Գրեցաւ... ի Թուիս ՉՄԷ. (1308), յանապատիս, որ կոչի Ասպիսնկայ, ընդ հովանեաւ սուրբ Ծարութեանս... յառաջնորդութեան Ստեփաննոս

վարդապետին, Դրեցաւ ձեռամբ Ղազարի սուտանուն կրաւնաւորին... ի վայելուչն Հայրապետին,

բ

... Զվերջինն ստացող, ծաղկող և նորոգող սուրբ աւետարանիս տէր Կիրակոս քահանայ և Ներուն ծաղկող յիշելի։

77.

ՄԱՍՈՒՆ ԱՅՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Թղթեան 183

Գրիչ՝ Կար[ապետ]

428 բ Ձմեղաւք զատապարտեալս՝ զկնոյն զրբիչ աւետարանիս՝ զԿա-
բ[ապետ] և զծնաւղն իմ՝ զԱրսենն ի Քրիստոս, յիշեա աղաչեմ, ո՛վ սուրբ բարունեի։

573 ա Գրեցաւ ի Հայոց Թուիս ի ՁԾԷ. [1308],

78.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սիբասաֆա, Ս. Նշան, 21, ՀԱ, 1924, էջ 518—519

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Կիլիկիա

ա

68 Ցաստիս ի վայելս և յաւուրն Քրիստոսի ի պարծանս եղիցի սուրբ աւետարանս աստուածասէր պարոնիս մերոյ տիկին Զապլուճի, և աստուածատուր որդւոց, պարոն Հեթումին և Կապլին և Աւշինն, և իւրոց դստերաց Շահանդխտին և | | |

բ

189 Զաստուածեալս բարեաւք և զիարքամս չարեաւք, զեղկելիս ոգւով և զքշվառականս մարմնով, զծառայից ծառայ զՍտեփաննոս սարկաւագ, աղաչեմ զձեզ, սուրբ հորք և եղբարք մեր ի Քրիստոս, ցաւակցաբար յիշեցէք զանպիտանս ի բարին Քրիստոս, հանգիստ և ողորմութիւն գտանել մեզ և մերոցն յաւուրն այցելութեան. և բա հաւատոց ձերոց առնոյք զվոխարէն ի յայն, որ զոր կամի կարէ տալ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Զոսացող սուրբ աւետարանիս, զբրիստոսասէր և զքաղաղարմն տիկինն, ղղուստր սպարապետի ամենայն հայոց՝ զտիկին Զապլուճ, որդւաք իւրովք և բնաւին զարմիւք, յիշեցէք աղաւթիւք առ տէր, ո՛վ մանկունք Սիոնի։

գ

384 Որք յաստուածապատում սուրբ տասիս լուսաւորիք՝ հարք մեր և եղբարք մեր ի Քրիստոս, զստացաւդ սորա, զտիկին Զապլուճ, դուստր գունդստապլի Հայոց, և զաստուածատուր որդիք իւր՝ զՀեթում և զՎասիլ, զԱւշին, և զերկու դստերսն իւր՝ զՇահանդուխտ և զԱկաց, ծնողաւք նորին, և համայն ընտանեաւք, և ամենայն բնաւին զարմիւք, յիշեցէք ի բարին Քրիստոս...։

Եւ ապիկար գծողիս սորա Ստեփաննոսի սարկվաքգոյս, ողորմեա տէր իմ, տէր։

դ

Ահ, զնուաստ կազմաւդ աստուածախաւս մատենիս, զցածոր Մեծպարոնեայ աղաչեմ յիշել ի տէր ծխուս, ո՛վ աստուածասէր ընթերցաւղք, և աստուած զձեզ յիշեսցէ. և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ի թվ. ՁԾՀ. (1309) կազմեցաւ սայ ընդ հովանեաւ Տղայ սուրբ Գորգոյ։

79.

ԱԻԵՏԱՐԱՆ

Բրեան 3393 (տես նաև՝ 1367, 1383, 1553 և 1657 թ.թ.)

Գրիչ՝ Տիրատուր
վայր՝ Գալիճոր

258 ա ...Գրեցաւ սուրբ աւետարանս ի թվ. ՁԾԸ. (1309), ի մեծ դպրատանս, որ կոչի Գալիճոր, ի վարժապետութեան մեծին Նստյեայ և եռամեծին Դաւթայ, ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր Կիլիկեցոյ: Արդ, աղաչեմ զհանդիպաւղոդ յիշել յարժանաւոր յաղաւթս ձեր դանպիտան ողոչակս և ինքն՝ աէրն ամենեցուն, յիշէ զյիւղոգն մեր յիւրում արքայութեանն, և նմա փառք յաւիտեանս, ամէն:

80.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս Ագբաք, Մ. էջ 57—63

Գրիչ՝ Տիրատուր

ա

... Սուրբըդ Մաաթէ՝ նախ մաքսաւոր
Եւ ի յետո աւետաւոր,
Ցիշեա աո քո տէր երկնաւոր,
Զիս Տիրատուր յոյժ մեղաւոր:

բ

Աղաչեմ զեղկելի գրիչս զՏիրատուր յիշել ի տէր աստուած:

81.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բրեան 1751

Գրիչ՝ Տիրատուր

131 բ Ցիշեցէք յաղօթս ձեր զմեղուցեալ անձն իմ՝ զՏիրատուրն՝ Տէրն տան, որ չափով որ չափէք՝ յալովիւք առնուցուք զփոխարէնն, ամէն:*

82.

ՏՕՆԱԿԱՆ

Բրեան 3931

Գրիչ՝ Յոհաննես

ա

273 ա ... Գրեցաւ ի Նամակ Տաւնակիս հրամանաւ <և> արդիւնագործ սուրբ բարուննոյն Կիրակոսի, ձեռամբ իմով՝ Յովաննես գծողի: Արդ,

* № № 80 և 81 հիշատակարանների գրիչ Տիրատուրին նույնացնում ենք նախորդ հիշատակարանի համանուն գրչի հետ. և ըստ այդմ, սույն անթվական հիշատակարանները տեղադրում ենք 1309 թվաշրջում, № 79-ին առընթեր:

աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, անմեղադիր լինիք խոշորութեանն և խալաթութեանն, զի անհմուտ էի զրոցս այս, ես առաւել աւրինակիս, որ չէի ամենեին լսել զսայ։

Բ

344 բ Ո՛վ, եղբայր Կիրակոս, խոշորութեան և սխալանաց անմեղադիր լեր, զի Ք. դաս առօյի եղեալ կայ, տագնապիմ, ըՁԾ. (1309) դրեցաւ։

83.

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Վեներ. 268, Սաբգս. 8ուց. Բ. էջ 882

Գրիչ՝ Յովհաննես

291 ա Ո՛վ, արքա իմ և տէր, բարունի բարի և իմաստուն, համայն ցանգալի Կիրակոս, զսակաւ զծեալս ընկալ ի մէնջ և զքո աղքատս հողով Յովհաննես մի՛ մոռանայր ի մաքրափայլ յաղօթս քո, իսկ զրոյս անմեղազիր [լեր], զի կար իմ այսչափ էր։*

84.

ԵՍԱՑԻ ԵՒ ԹՈՒՂԹՔ ԳԱՒՂՈՍԻ

Սեբաստիա, Ս. Նշան № 3, ՀԱ. 1923, էջ 72—74 (տես նաև 1380)

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

703 Աստանաւր սկզբնաւորեալ աստուածայինն տառս այս աստուածընկալ սուրբ առաքելոյն Գաւղոսի, ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ի կղզին Աղթամար կոչեցեալ, ընդ հովանեաւն ամենայաղթ սուրբ Խաչի և սուրբ Նշանի և աստուածամուխ սուրբ Գեղարդեան, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, զոր տէր աստուած զնա ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն։

Եւ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՁԾՐ. (1309), ի խնդրոյ աստուածարեալ և հոգեիազարդ կրաւնաւորի Գրիգորի, զոր յոյժ փափագմամբ ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, ի վայելումն անձին իւրոյ, իսկ յետ ելից յաստեացս՝ յիշատակ անչինչ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և եղբարցն և ազգայնոցն ամենեցուն, կենդանեաց և հանգուցելոց։ Եւ ես ամենամեղս և ամենարժան Դանիէլ սուտանուն կրաւնաւորս, տեսեալ զփափագ և զսէր սորա, որ առ հոգեորսն, և ըստ իմում կարի յանձն առի և գրեցի զսա մեղսամած մատամբ իմով։ Իսկ դո՛ւք, հանդիպեալքդ սմա տեսութեամբ, կամ աւրինակաւ, կամ

* Անթվական սույն հիշատակարանի գրիչ Յովհաննեսին նույնացնում ենք նախորդ հիշատակարանի գրչի հետ, և ըստ այդմ հիշատակարանը տեղադրում ենք 1309-ի թվաշարքում։

ընթեռնլով, կամ լսելով, հարք և եղբարք պատուականք և սրբասէրք, աղաչեմ յիշեցէք յընդունակ աղաւթս ձեր զտացաւղ սուրբ գրոցս, զերիցս երանեալ կրաւնաւորն զԳրիգոր, և զծնողսն իւր, և զեղբարսն, և զտղդսն ամենայն, որպէս զի աղաւթիւք ձերովք և ամենայն սրբոց ողորմեսցի Ք՛րիստոս աստուած հոգւոյ նոցա, և յահաւոր գալստեան իւրում քաղցրութիւն շնորհեսցէ նոցա և արքայութեան արժանի արասցէ, ամէն։ Ընդ նոսին և զիս զանարժան և զմեզաւք լցեալս՝ զանյիշելի գրիչս զԴանիէլ, յիշելոյ արժանի առնել... Նաև զծնաւղս մեր, զհանգուցեալսն ի Ք՛րիստոս, և զքոյր մեր՝ զԱւաք, որ յայսմ ամի փոխեցաւ ի Ք՛րիստոս...»

85.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7832

Գրիչ՝ Տիրացուն

վայր՝ Բասենոյ գաւառ, Պատժուան դղեակ

230 բ ... Արդ, եղև աւարտումն գրութեան սուրբ աւետարանիս ի թուականիս Հայոց ՁԾԸ. (1309), յաստուածազարգ հայրապետութեանն տեառն Կոստընդնոյ հայոց կաթողիկոսի, և ի քրիստոսասպասակ թագաւորութեանն Հայոց՝ Սւշինդրի, և յարժանապատիւ եպիսկոպոսութեանն սրբասէր և աստուածամեծար արքեպիսկոպոսին՝ տեառն Ասատուածծայտրրի, որ ի գաւառիս Բասենոյ, կոչեցեալ նաև տեղի հանկրս[տեան | | | մերոյ. յորում ! | | է, ի դղեակս, որ կոչի Պատժուան, ընդ հովանեաւ սուրբ կաթողիկէիս Աստուածածնի. զոր, աւդնականութեամբն աստուածոյ և քրիստոն[է]ից և աշխատութեամբ անձին իւրոյ, նորոգեալ էր վերստին, և աստուածասէր և աղքատասէր յիշատակ բարեաց նմա*, և ծնաւղաց իւրոց, և ազդատոհմից, և բարեխաւս հաշտութեան առ աստուած՝ պարգևիչն ողորմութեան, որոց լուսալիր տաճարացս այժմ ոպասաւոր եմ ես՝ մեղուցեալ ծառայս և անխմաստ և փցուն գրիչս Տիրանուն անարժան կրաւնաւորս...»

86.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Հայեպ. Սբ. Մնկ. 47 Սիւրմ. Ա. 93—94

Գրիչ՝ Հայրապետ

վայր՝ Կիլիկիա, Փոս անապատ

496 ... ՁԾԸ. (1309) թուականիս Հայոց գրեցաւ սուրբ աւետարանս յաշխարհիս Կիւլիկեզւոյն. յուխտս Փոս կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ

---

* Հիշատակարանը, որոշ հապավումներով, ունի նաև Դ. Փերզալամյանը (Երևան № 6273, էջ 113—115), նրա արտագրության մեջ կա հպատուական քահանայն Ղևիէնն՝ դուսուցիչն մերն նախադասությունը, որ բացակայում է Ձ.-ի հրատարակությունից։

** Ընդամէն բառից հետո տողերի արանքում, այլ ձեռագրով ավելացված է մի տող՝ Ընդամէնն մեղաց թողութիւնն Ընդամէնը, ամենայն հավոնականությամբ, ձեռագրի հետագա ստացողներից է։

Աստուածածնին և սուրբ Գրիգոր Լուսաւոր[չ]ին մերոյ, ի թագաւորութեան Աւշնի, և ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեա, որք յայսմ ամի աքսորեցին զմեզ ի կղզւոջն Կիպրոսի, վասն ոչ հնազանդելոյ տւանդիցն Քաղկեդոնի։

Մասն մի գրեալ էր Յովհաննէս քահանա, տացէ նմա տէր աստուած վարձս բարիս։ Եւ այլս աւարտեցաւ ի վայելումն մաքրամիտ և ընտիր կուսակրաւն քահանայի Պետրոսի, ի վայելս անձին իւրոյ Վաագի, և յիշատակ նոցին ոգւոց և զարմից իւրեանց, որոց ողորմեսցի Քրիստոս աստուած մաղթանաւք բոլոր սրբոց իւրոց, գրելով զանուանս նոցա ի դպրութեան կենաց։ Մաղթեմ ընթերցողացգ և ես՝ կրկնաթաւաւք գրաւղս Հայրապետ, յիշել և զիմ անարժանութիւնս և զիմոն ամենայն ի բարի, և բարութեանցն աղբևր զձեզ յիշեսցէ ի նոյն, և ինքն է և եղիցի աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

87.

Ձ Ա Շ Ո Ց

Թուական 4911

Գրիչ՝ Խաչատուր

207 բ Փառք ամենասուրբ երրորդութեանն, հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, որ աւարտեաց զհոդիարուխ տառս ձեռամբ յոգնամեղ և բցուն ղրչի հաչատրոյ, ի խնգրոյ պատուական քահանաի Վարգանա, որ ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ի զուարճութիւն մանկանց իւրոց։ Արդ, աղաչեմ զամենեսեան, ոյք լուսաւորիք ի սմանէ, յիշեցէք զՎարդան քահ[անայ]. և ծնողսն, և զեղբարսն, և զամենայն ար-
208 ա եան մերձաւորսն իւր ի տէր։ || Ընդ նմին և զմեղապարտ ծրող, և զմերսն ամենայն. և որք յիշէք, յիշեալ լիջիք յանյիշաչար տեառնէ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Ի թվիս ՁԾԸ. (1309)։

88.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

Թուական 2174

Գրիչ՝ Աւագ

ա

184 բ Աղաչեմ անմեղադիր լինել վերջին ճառիս, զի աւրինակ տիւմարագիր էր և ես անարհեստ էի։ ՁԾԸ. (1309) թվիս գրեցաւ, յամսենս աւգոստոս, ձեռամբ մեղապարտ և անարժան իրիցու տէր Աւագի. յիշատակ ինձ և իմոցն ամենայն. որք կարդայք կամ աւրինակէք, մեզաց թողութիւն խնդրեցէք և Քրիստոս զձերն թողու, ամէն։

Բ

227 ա Ձմեղուցնալ և դանարժանո ի քահանայս՝ զաէր Աւազ դրողս յիշեցէք աղաւթիւք, ո՛վ սուրբ հայրք և եղբայրք, և անմեղադիր լիք* խոշորութեան գրոյս և սխալանաց, դի ծով աշխարհի տարակուսեալ ծփէի ի մէջ մեղաց. և Ջրխատոս, որ առատն է ի տուրս բարեաց, մեղ և ձեզ ողորմեսցի՝ ղրողիս, և կարդացողացդ, և լսողացդ, և աւրինակին շնորհաւղին, ամէն։

* իմա՝ լիքրուք։

89.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

երեան 380 (տես նաև՝ 1443 թ.)

Ստացող՝ Ս՝ամախիացուն, գրիչ՝ Սարկաւագ
վայր՝ Ցոնաճավանիք

309 բ ... *Որպէս և ես, անարժան աղախինս Քրիստոսի Մամախիացուս, ազատազարմ և իշխանուհի գոլով այսու կենաւքս, մտաբերեցի զանցաւոր և զունայն կենցաղս, և ստացա զսուրբ աւետարանս առաջնորդ ինձ անանց կենացն, և բարեխաւս անաչառ և անկաշառ դատաստանին Քրիստոսի, և յիշատակ հոգւոյ իմոյ յետ ելից իմոց, և ծնաւղաց*
310 ա *իմոց, և եղբարց՝ ազատաց և ազատազարմաց, || և ի լուսաւորութիւն մանկանց նորածնելոց նոր Սիսիէի։*

Արդ, ով սուրբ հարք և առաքելագումար դասք քահանայից, յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ յեղեմատունկ առաւածառոյգ վտակաց... յիշեսջիք զաղախինս Քրիստոսի զՄամախիացուն և զբարեպաշտ ամուսին իմ՝ զպատուելի իշխանն Զաքուռ, որ թէպէտ ազգաւ վիրացի
310 բ *գոլով, այլ կամաւք բարեկամ || ամենայն եկեղեցեաց, և զծնաւղսն իմ՝ զՍաւպայն և զՏիկնամնցն, և զեղբարսն իմ՝ զՀազարբէկն, զԿունկորն և զԱմիրն, և զքոյրն իմ, և զլաւակս իմ, և զամենայն արեան մերձաւորսն. հանդերձ ամենայն զարմիւք՝ կենդանեաւք և ննջեցելովք, զի կենդանիքն պարագայց ամաւք անփորձ պահեսցին, և հանգուցելոցն հանգիստ և ողորմութիւն շնորհեսցի յամենառատ բարերարէն աստուծոյ. զի ձեզ յիշողացտ և մեզ յիշելոցս առհասարակ, ողորմեսցի բարեգութն աստուած, ամէն։*

Արդ, զբեցաւ գիրս ձեռամբ ամենամեղ անձին՝ Սարկաւագիս, յ[ը]նտիր և յոտսյգ աւրինակէ, առաջնորդութեամբ երջանիկ և ընտրեալ
311 ա *բարուհոյն Պետրոսի, զի յոյժ աշխատ եղև աւդնականութեամբ || և ծախիւք մինչ ի վերջ բանիս, որոյ Քրիստոս աստուած, աղաւթիւք ամենայն սրբոց, վարձս բարիս պարգևեսցէ։ Ի թուականիս Հայոց ՉԺԹ. (1310), յաշխարհակալութեան ազգին նետողաց Ղարպանտա զանին, և հայոց թագաւ[որութեան] Աղինախին, և ի դասապետութեան մեծ իմաստնոյ Եսայեայ։ Ի գաւառս Այրարատու Անբերդ կոչեցելոյ, ի սուրբ և յաստուածարնակ հանգիստարանիս Ցոռաճավանիք, ընդ հովտնեաւ սուրբ կարապետիս և մեծաւիտ կաթուղիկէիս զրեցաւ, յեպիսկոպոսութեան և յառաջնորդութեան աթոռոյս տէր Ներսէսի՝ սրբաւիայլ և ճգնազգեաց զուարթնոյ, և յիշխանութեան մերոյ գաւառիս Քղդին, որգոյ Տայիրին, թոռն մեծին և բարեպաշտ Քղդին։*

311 բ Հայց զազէտ և զողբ տարակուսանացս ա՛ || պատմեսցէ, զի ի խիստ և յանհնարին հարկապահանջութենէ ծախեա՛լ լինին ուստերք և դստերք աշխարհիս մեր, և բազում դեղք և վանորայք աւէր և անհանդիստ, և քահանայք տարաշխարհիկ լինին. և այս ամենայն վասն մեղայ մերոյ։

Եւ դարձեալ կրկին ազաչեմ զձեզ, ով դասք սրբազանից, վերստին յիշման արժանի առնել զվերոյդրեալքս ի սմա, զամենաւրհնեալ բարի տիկինն զՄամախաթունն՝ սաացող դրոցս, և զծնաւղսն նորին, և զամենայն արեան մերձաւորսն, և զվարդապետն Պետրոս Ուշոյ վանացն, որ առաջնորդ և կառարուեա եղե բանիս, և զիս զՍարկաւագս՝ ապիկար և յետին դրչաւսկս և կազմող, և զսպասաւորս իմ, որ յոյժ յուսով
312 ա սպասաւորնաց. և || խոշորութեան և սխալանացն անմեղադիր լինիք, զի յոյժ ի տաղնապ ժամանակ էաք. և Ջրխատոս, որ աէր է պարտեաց և տուող ողորմութեան, ձեզ՝ յիշողացտ և մեզ՝ յիշելոցս ողորմութիւն պարգեսցէ, ամէն։

Ցիշնջիք և զվարդապետն իմ զԿիրակոս։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս հրամանաւ և արդեամբք ամենաւրհնեալ Մամախաթունին և ընծաեցաւ Ուշոյ սուրբ զաւրաւորին Սարգսի, մի ոք իշխեսցէ հանել և հեռացուցանել ի վկայարանէ սուրբ զաւրաւորին, և թէ ոք հանդգնի գողանալ, կամ ծախել, կամ այլ ինչ պատճառ՝ դատի յաստուծոյ և մեր մեղացն աէր լինի։

90.

Ա Ի Ե Տ Ա Մ Ա Ն

Երևան 4446

Դրիչ՝ Պաւլոս
վայր՝ Յարատես վանք

m

132 բ ... Դեղազարդ և զերամաքուր սուրբ և երանաշնորհ քահանայն Տէրունական. և զերապատիւ և քրիստոսասէր հայր նորա Ախթաքան... ետուն դրել զսա իմոյ՝ մեղաւք լցեալ հոգւոյ Կաւդոսի սոսկանուն վարդապետի, որով իմ՝ հայեցեալ ի յետափափաք սէր նոցա, որ առ աստուած, ետու զանձն յաշխատութիւն, և լի՛ ծերացեալ ժամանակի | | | * ձեռաւք դրեալ աւարտեցի զսա, ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յիսուսի, ի դրունս սուրբ Սիոնին, և սուրբ Աստուածածնի, և սուրբ Կարապետին, և կենսակիր սուրբ Նշանացս, ի վանս, որ յորջորջի Ցարատես, ի թվականիս ՉՄԹ. (1310), ի խանութեանն թաթար[ին]** խարվանգին, և ի թագաւորութեանն Հայոց Աւշնի, և ի հայրապետութեանն Կոստանդեայ, որոյ թողեալ զկարդ և զաւանդութիւն սուրբ հարցն մերոց ընթացաւ զկնի վոանդաց և հոռոմոց, զոր ինքն տէր Յիսուս

* Մեկ տող ջնջված է։

** Փակագծի մեջ առնված՝ «ին» տառերը ազոտ են պահպանվել, կարելի է կարդալ նաև «թաթար[աց]»։

հոգասցէ, և ի վերազիտողութեան Սիւնեաց նահանգիս տեառն Յովհաննիսի մականուն Ուրպելի՝ արհիական եպիսկոպոսի և ճշմարիտ և
133 ա սուրբ իմաստասիրի, ոյ զոր պահեսցէ Քրիստոս աստուած սուրբ և անբիծ յերկար ժամանակաւ, ի պարծանս և ի լուսաւորութիւն կաթուղիկէ սուրբ եկեղեցոյ, և յիշխանութեան այսմ զաւառի երկու հարազատացն՝ պարոն Բուրքելիւ և պարոն Գաւտայիւ և պարոն Զայսարիւ, զորս պահեսցէ զնոսա Քրիստոս աստուած պարագայս ամաւք՝ զաւրաւոր և յաղթող ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի։

Եւ արդ, աղաչեմ զամենիսեան սիրոյն աստուծոյ, որք կարգայք և լուսաւորիք յաստուածախաւսս տառէս, յիշեսջիք զաւրութիւք և պատանաւք զտոհացուզք սորա՝ զսուրբ և զաստուածազարդ քահանայն, զպատուեալն և զզարդարեալն ի հոգւոյն սրբոյ զՏէրուճակացն... և զհայր նորա՝ զԱզոթքաց, և զմայրն նորա՝ զԲախտաւորն, և զկողակիցն իւր՝ զՄամռոկի, և զաստուածատուր որդին իւր՝ զԳրիգոր, և զհարազատսն իւր...։

Ցիշնացէ բարեգութն աստուած զպատուելի տանուտէրն զՄխիթար։

Ձեռնտու՝ Սուզայ

բ

Ես, աղախին և ծառայ տեառն աստուծոյ Սուզայ, տուընական եղէ ի զին սուրբ աւետարանիս Ճ. [ՌՈՍ] սպ[իտակ], և խնդրեցի, զի յամենայն ամի Ա. աւր պատարագաւ յիշեսցէ զիս Տէրուճակացն | | | *

133 բ Որդ, աղաչեմ զամենիսեան սիրոյն աստուծոյ, ես նուաստ աշխատաւղ սորա Պաւղոս, յիշեսջիք զիս և զիս ի մեղաց թողութիւն, ծնաւղաւք մերաւք և ամենայն զարմիւք...

91.

ՄԱՇՏՈՑ

Փիլդ. 6273, էջ 116 (Լիմ)

Գրիչ՝ Աբրահամ
վայր՝ Լիմ կղզի

...Իսկ կատարեցաւ սա ի յարմարական և ի գեղեցիկ մենաստանիս՝ ի կղզիս, որ կոչի Լիմն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Կարապետին, և սրբոյն Դէորգեայ նորակազմ տաճարիս, և ամենայացեղ Աղիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, որ է ամենևին բարի, աննենդ և անցասումն, նմանեալ աթոռակալին իւրոյ սուրբ Գրիգորի խոնարհութեամբն և համբերութեամբն, որ և նա ի մէջ թունաւոր օձիցն համբերեալ հնգետասան ամ, նոյնպէս և սա ի զառն և ի վշտաբեր ժամանակիս, ի մէջ անօրինաց և արիւնարբու զազանաց ազգին նետողաց, որ հանապազ խոցեն և վիրաւորեն ի

* Երկու տող ջնջված է։

հողի և ի մարմին։ Զոր ուէր աստուած հալածական և նկուն արասցէ զամենայն թշնամիս իւր՝ զերեւելիսն և զաներեւոյթն, և ինքն ընդ երկայն աւուրս արասցէ ի փառս իւրում և ի պարծանս մեր, ամէն։ Եւ ի թուաբերութեանս հայոց ՉԾԹ. (1310), ի յառաջնորդութիւնն սուրբ ուխտիս պատուական եպիսկոպոսիս տէր Յովհաննու, որ ի յառաջնորդութեան իւրում մեզ հանդիստ շնորհեաց։ Եւ ստացայ զսա ի յարդար վաստակոց իմոց [եւ]՝ Աբրահամ կրօնաւոր, և իմ մեղսամած մատամբ գծագրեցի և ընծայեցի զոա ի դուռն սուրբ Գէորգեայ տաճարիս, ի պայծառութիւն և ի վայելումն մանկանց Սիոնի, զոր վերստին նորոգեաց բարի հովիւն և հովուապետն տէր Զաքարիա, որ է կաթուղիկոս ամենայն Հայոց։

ՁՀ.

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Կեղլա, ԼՓ.—Գովրիկեան, Դրանս. Հայոց Մեսրոպոլիսը, էջ 342—346

Գրիչ՝ Ստեփ[անոս] Գոյներիրիցաց
վայր՝ Կիպրոս կղզի, Մադուսայ

ա

... Գրեցաւ պրակք սուրբ Առաքելոյն, կաթողիկէիքն հանդերձ, հրամանաւ աստուածասէր եւ բարեպաշտ պարոնին տիկին Ալիծին, մաւրքաւր թագաւորացն Հայոց, ի մխիթարութիւն կենաց իւրոց եւ յիշատակութիւն հոգւոյ իւրոյ, ի ձեռն իմոյ նուաստիս Ստ[եփանոսի] Գոյներիրիցաց։ Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպաւղոդ՝ յիշել զարժանին յիշատակի՝ զաստուածասէրն եւ զբարեպաշտուհին, հանդերձ ամենայն նախնիւքն իւրովք եւ ծննդովք, այլ եւ զտառապեալ ղրաղմամեղ գրչիս, եւ աստուած առհասարակ ձեզ և մեզ ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ի թու. ՉԾԹ. (1310) գրեցաւ, ի բազմաթշուառ ժամանակի, որոց տարակսաւելոցն այս արասցէ մարդասէրն աստուած, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին, ամէն։

բ

... Գրեցաւ աստուածաբան աւետարանս Յոհաննու ի հրամայական խնդրոյ աստուածասէր եւ բարեպաշտուհի պարոնին տիկին Ալիծի սինեֆալեսի Կիպրոսի, որ էր դուստր պարոն Հեթմոյ, որ տէր էր Լապրունիի՝ յիշատակն նորա աւրհնութեամբ, եւ ողորմեսցի նմա Քրիստոս աստուած, ամէն։

Արդ, վերոյգրեալ բարեպաշտուհի պ[ա]ր[ոնն] բազում ամս խնամարկեաց զիս բազում եւ մեծ գթով, գրեթէ որպէս որդեսէր ծնաւղ զանդրանիկ իւր, այնպէս գթաց ի նուաստս եւ յանարժանս։ Եւ ես՝ յետնեալս յամենայն բարեաց, սուտանուն Ստեփ[անոս], որ ամաչեմ

ի գերագունէ քահանայ անուամբ կոչիլ, այլ մականուամբ Գոյներիբիցացց: Վասն որոյ, որպէս յոյժ պարտական նորա անճառ բարեացն՝ յերեսս անկեալ աղաչեմ զառհասարակ հանդիպաւղող, յիշել ի բարին զվերոյդրեալ բարեպաշտուհի պ[ա]բ[ո]ն[ն], ծնողիւք իւրովք եւ ամենայն զարմիւք: Այլ եւ զմեզաւոր հողս՝ զտառապեալ գրիչս, ծնողիւք իմովք եւ ամենայն զարմիւք: Եւ Քրիստոս աստուած, որ առատն է ի տուրս, առհասարակ ողորմեսցի ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս, ամէն:

Գրեցաւ ի Թու. ՉԿԱ. (1312), ի դեկտեմբ. ԻԲ. (29), ի Կիպրոս կղզի, ի Մադուսայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: Արդ, աղաչեմ, որ ոք հանդիպեսցի սմա՝ մի եպերեսցէ դիս վասն ճապաղ ցանկիս, քէ երբ զայլ աւետարանսն չէ դրեալ, նա ոչ էր պիտոյ սմա ցանկ ճապաղ, այլ ես ոչ կամեցայ յիմ ձեռահիւս պակաս իրք թողուլ, զի ի գեղեցկութիւն՝ պակասն է նախատելի եւ ոչ առաւելութիւնն. ահա յայտնի է, որ ուղիղ մտաւք որոնէ՝ բաւական է իմասանոց: Այլ յինէն, ծերացելոյս մարճով եւ մտաւք, հազիւ այսչափս ծրագրեցաւ, զգեղեցիկն վեհքն ծրագրեն, զտեսանաւղդ աղաչեմ, մեր յանցանացն թողութիւն շնորհել, եւ աստուած ձեզ, ամէն:

93.

ԱԽԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա, Ամենափրկչ 38, Տ.—Ավետիսյան, Ցուցակ, էջ 138—139 (տես նաև 1629)

Գրիչ՝ Տիմաւք
վայր՝ Հռոմ

ա

334 բ ... Ցամի ՀՃ-երորդի Ծ-երորդի ինն[երորդի] Թու. հայկազնեան տումարի (1310) աւարտագործեալ եղև աստուածախուս և կենսատու սուրբ աւետարանս...: Զոր իմ՝ մեղապարտ և սուտանուն քահանայիս Տիմաւքի, ցանկացաւղ եղէ այսմ աստուածախօս մատենի և ստացա զսա ինձ գանձ անկողոպտելի և փրկանս մեղուցեալ հոգոյ իմոյ, ընդ նմին և ծնաւղաց իմոց, և տամ զսա ի տունն Հայոց Փիրուժ քաղաքին, յիշատակ անջինջ ինձ և իմոցն ամենայն...:

Բայց արդ, գրեցաւ սա ձեռամբ հոգնամեղ և սուտանուն և փցուն և յետին գրչի Տիմաւքի, ի լաւ և յընտիր աւրինակէ, ի հոչակաւոր մայրաքաղաքս Հռոմ, ի հանգստարանս Հայոց, առ դրան սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, և սրբուհոյ Աստուածածնին, և որ մերն է Լուսաւորիչ [Գրիգորի] և այլ սրբոցս:

Հետ. ստացող՝ պարոն Ամիր Կափացի

բ

326 ա ... Աստուածաշունչ աւետարանս... անկեալ էր գերութիւն. նայ

պր. Ամիր Կաֆացի գնեց զինքն իւր արդար ընչաւք, ու պատարագեց յաւժար կամաւ ի վայելումն հաճատկատար Աստուածծնիս՝ Իր յիշատակ է, և իւր ծընաւղացն, և իր պսակաւոր կողակցուն՝ Դուխտար Մելիքին, յաւիտենից յիշատակ իւրեանց ծնողացն, Սուրբ քահանայք, յորժամ ընդերկնուք, ձեր մաքրափայլ ագաւքստ յիշէք պր. Ամիրին ծընաւղքն՝ հայրն Ֆրանկշայ և մաւրն՝ անուն Խթա-Մելիքն յիշէք, և դուք յիշեալ լինիք սոսկալի ատենին։

Գրեցաւ աստուածաշունչ աւետարանս թվ. ՊՂԱ. (1442)։*

Ռ. Է. [Ր] Դ. Մ. Թ. որ գրեց,**

94.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՂԻՇԷԻ

Երեան 4809

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Վա՞ն

212 բ Եւ արդ ես՝ մեղաւոր և անարժանս Վարդան, ցանկացող եղէ այս սուրբ տառիս՝ չարչարանաց սուրբ Վարդան[ան]ցն, զոր ունէի վաւրագ ի բաղում ամաց, և կամաւ կամեցողին բարեաց յանկ ելեալ աւարտեցի զսա բաղում աշխատանաւք, և ետու զսա ընծա սուրբ [Գէորգայ Ջաւրավարի],*** որ է ի Վան քաղաքի, հանդէպ սուրբ ուխտին Վարագայ։

Բայց դրեցաւ սա ի թվականութեանն Հայոց ՉԾԹ. (1310), ի նեղ և յանբարի ժամանակի։

Արդ, որ կարդաք կամ աւրինակէք, մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք յաստուածոյ, և ծնողաց իմոց, և եղբարց, և համաւրէն ննջեցելոց իմոց, և երջանիկ վարդապետին իմո Տիրացու սուրբ և խաչընդուս կրաւնաւորին...

213 ա Եւ արդ, չիք ոք որ ունի իշխանութիւն՝ ի վերա սորա, ոչ յիմոց և ոչ յաւտարաց։ Բայց աէր և իշխեցող սորայ աստուած է և սուրբ Առաքեալքս...։

Բայց եթէ խնդրեսցէն զսա վանն կարդալո կամ աւրինակելո, մի՛ խնաեսցեն, վասն զի զսա այսր աղաղաւ եմ դրել, զի ամենեքեան աւդաեսցին և մեղաց իմոց թողութիւն խնդրեսցէն յաստուածոյ, որում փառք յաւիտեանս, ամէն։

---

* Ձոսքը սույն հիշատակարանի գրության մասին է։

** Փոխաբինագիրը ծածկագրով կարդացվում է «Ալ[ե]քս» անունը։

*** Հիշատակարանում ամենուրեք ջնջված է նվիրը ստացող վանքի անունը և ավելացված ձեռագրի հետագա տեր «Պետրոսի և Պաւղոսի Առաքելոց» վանքանունը, նախկին սեփականատիրոջ անունը մատիտով գրված է տողամիջում մեզ անհայտ ձեռագրով։

95.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մատենադարան Հայկ. Թարգմ. էջ 196

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Վանայ գաւառ, Աւանց գիւղ

*... Գրեալ յիշատակ Գեորգ կրաւնաւոր քահանայի... ձեռամբ Յոհաննու ղծաղրող քահանայի, ի հայրապետութեան Զաքարէի Հայոց կաթողիկոսի և յառաջնորդութեան գերահոչակ սուրբ ուխտիս Վարագայ համաշունչ եղբարց՝ տէր Սարգսի և տէր Պետրոսի, որք հեզութեամբ և հանդարտութեամբ հովուէին զբանաւոր հաւտս...։ Գրեցաւ ի գաւառիս Վանայ, ի գիւղն Աւանց, ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու Կարապետին և սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին։**

96.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 280 (անտ նաև 1314 Թ)

Գրիչ՝ Աւագ
վայր՝ Բարերդ

263 ա *... Արդ, ես նուաստս և անարժանս ի քահանայս և տխմարս ի յարհեստ դպչական լԱւագ՝, աւգնականութեամբ կամեցող բարևբարին աստուծոյ, որ հանապազ զբարիս կամի կամարարաց իւրոց, բազում ըղձիւ ես և մանկունք իմ Աւագ Պարոնն և Յուսիկն ցանկացող եղաք,*
264 ա *և իմոյ ձեռամբ գրեցի զսուրբ աւետարանս... ‖ ... ի վայելումն դեռատիս զաւակաց իմոց Աւագ Պարոնին, Յուսկանն, Ղազարին և Գրիգորոյ, զորս տէր աստուած ի կամս իւր պահեսցէ զսոսա մինչ ի խորին ծերութիւն։*

... Բայց գրեցաւ սուրբ աւետարանս ի ՉԾԹ. (1310) թուականութեանս Հայկազնեա տոմարիս, և ի դալստենէ կենարարին ՌՅԲ.
264 բ *(1302°) ամ, ի ձեռն անաչխատ և նուաստս երիցու, ‖ ի գղեակս, որ կոչի Բարերդ, ընդ հովանեաւ սուրբ Յոհնտ և սուրբ Սիոնի աստուածաբնակ տաճարաց, ի լուսաւորութիւն մանկանց նոր Սիոնի։*

Ցիշեսջիք զարժանաւորս ամենայն բարեաց՝ զխոհեմ և զհանճարեղ, զընորհազարդ եպիսկոպոսն մեր՝ զտէր Սահակ, ոգի լինել կրկին կենդանութեամբ և պարագայ ամաւք, զի շնորհեաց մեզ աւրինակ ընտիր։ Ցիշեսջիք և զսրբասէր քահանայ զՍամուէլն և զաւակն իւր, որ ետ կրկին այլ աւրինակ, որ ստոյգնցաք, և զկարապետ քահանայն, որ միւրս աւրինակ այլ շնորհեաց, որ կոչի Մուրղանեցի, քանզի յերկուց և յերից վկայից հաստատի ամենայն բան։ Զի յորժամ յաւարտումն հասաւ, եղաք զերիս ընդդիր և անուանի աւետարանքս և ստոյ-

* Նույնը տպված է նաև Սրվանձտյանի «Թորոս Աղբար»-ում (հա. բ., էջ 411)։

դնցա՛ք, որ մին շառաւնդաւք էին պրած. և մի հայիք ի յախմարու-
թիւն իմ և զանազահեստ գիրս, զի բազում աշխատանս կրեցի մինչ ի
ձեռն բերի զաւրինակերս և ստոյգեցի, որոց՝ շնորհոզաց աւրինակացն,
շնորհնեցէ Տ՛րիստոս աստուած գիւր արքայութիւնն ասա և ի հան-
դերձեալն, ամէն։

97.

ԴՈՒԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ԹՈՒՂԹՔ ՊՕՂՈՍԻ

Ն. Ջուղա, Ամենափրկ. 101. Տ.—Ավետեան, Ցուցակ, էջ 60—61

Գրիչ՝ Թում[այ]
վայր՝ Դաւղայոյ վանք

ա

223 *...ի Թվ. Հայոց ՁԾԹ. (1310) կատարեցաւ, յամսեանն արաց ի*
ԻԲ. (17), յաւուր հինգշաբթի, ի պայծառութիւն սրբոյ եկեղե-
ցոյ և ի վայելումն մանկանց նորին՝ Սահակ վրաւնաւորին, յիշատակ
իւր, և ծնողաց իւրոց, և եղբարց իւրոց, և ազգականաց իւրոց...։

Արդ, ազաչեմ զամենեսեան զընթերցողսդ, որք աւգտիք ի սմանէ
կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զՍահակ վրաւնաւոր և զիւրսն
ամենայն... և պ[արտս՝ զկարևոր իւր, որ աւգնական եղև ընդ գրոյս,
ամէն...։

Ընդ նմին և զմեղապարտ գրողս զթում[այ] և զծնողսն իմ, զհայրն
իմ զԳորգ երէց, և զմայրն իմ զՄեծդս տիկին, և զեղբայրն իմ զՍիմեօն,
և զքեռոյ որդին իմ զԿրիգոր, և զհաւրեղբայրն իմ զԻշան [՞] անուն, և
զայլ ազգասո՛ն...։

բ

25 բ *Ի Թվ. Հայոց ՁԾԹ. կրեցաւ առաքելական սուրբ տառս ձեռամբ*
Թու[մայի], ի յանապատիս Դաւղայոյ վանք կոչի, ընդ հովանեաւ սուրբ
Խաչին, և սուրբ Աստուածածնի, և այլ սրբոցս՝ սրբոյն Սարգսի, և սրբոյն
Յակոբա, և այլ սրբոց, որ կան հաւաքեալ ի յայսմ տեղոջ...։

գ

115 ա *Թարոս, որ զգինս ետ զգրոցս, յիշեալ լիցի ի տէր, ամէն։ Աստուած*
Թողու. զիւր յանցանս, ամէն։

98.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թարս Ագրար. Բ. էջ 445—446 (Տիգրանակերտ)

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Դարաճադեաց գաւառ, Մանէ այր

ա

Գրեալ ի Թվ. ՁԾԹ. (1310), ի գաւառին Դարաճադեաց, ի սուրբ
եւ հռչակաւոր ուխտս Սուրբ Գրիգոր, մերձ առ գամբարան սուրբ
Լուսաւորչին, ի լերին Սեպուհ եւ Մանէ այր կոչեցեալ... ձեռամբ ոու-

տանուն Ալիգոբի...: Ստացաւ զսա... եղբայրն մեր Տաւճակաց յիշատակ իւր եւ ծնողացն իւրոց...

Բ

Յիշատակ է աւետարանս եռօրօվեցց Զօրեցւոյն, որ առաւ յիւր հոգւոյ վաստակոյ եւ եղ յիշատակ ի գլուխն Կարմիր խաչին*:

99.

ԱԻԵՏԱՐԱՆ

Նկարն 3985 (տես նաև՝ 1403 Թ.)

Գրիչ՝ Սերոբէ
վայր՝ Թեոդոպաւլիս

290 բ ...Դրեցաւ սուրբ և աստուածային ճառք բարձրաբան սուրբ աւետարանչացն ձեռամբ անարժան և յետնորդ քահանայի, որ Սերոբէ անուն կոչի: Արդ, աղաչեմ զքաոս լուսերամից յիշման արժանի առնել զմեզ, և զբազմաշխատ ծնողսն մեր՝ դՊետրոս քահանայ, և զբարեպաշտութեամբ լցեալ մայրն իմ, և զհամաւրէն մերձակայս մեր, և որ սրտի մտաւք զամէնն ասացէն, նոքա ևս յիշեալ լիցին ի տեառնէ: Դրեցաւ սայ ի հռչակաւոր աւրինակէ. Թվ. ՉԺԹ. (1310), ի քաղաքիս Թեոդոպաւլիս, ի գրան սուրբ Կարապետիս և սուրբ Ցաւրավարիս:

100.

ԱԻԵՏԱՐԱՆ

Նկարն 5556 (տես նաև 1557 Թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Եգնկա

281 ա Արդ, ի թուաբերութեան հայկազեան տումարիս, որ է Թիւս եկեալ ի ՉԺԹ. (1310) կատարեցաւ, ի Թիւ յունվարի ամսոյն, ի յուրն, որ է Ը. (8), ի հայրապետութեան տեառն Կոստանդնոյ և ի թագաւորութեան Աւշինի, ի մայրաքաղաքս յՆպնպա. առ աթոռակալութիւնս տեառն Սարգսիս, ընդ հովանեաւ սուրբ Կաթուղիկէիս՝ աստուածարնակ սուրբ տաճարիս, ձեռամբ իմոյ՝ մեղուցեալ և անարժան քահանայիս Կարապետիս, յետնեալ անիմաստ և փցուն գծագրիս...:

101.

ԴԱՆՁԱՐԱՆ ՀԻՆ ՏՄՐԱԴՐՈՒԹԵԱՄԲ

Նկարն 2061

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ցիրաշէնն

117 ա ...Արդ, գրեցաւ զանձատետրս ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս և կենսակիր սուրբ նշանիս, ի Տիրաշէնն, ձեռամբ յոգնամեղ և

* Գրչին գեղին մօտ կը կարծուի Կարմիր խաչ (Ծանոթ. Գ. Ալվանձեանի):

տխմար գրչի Կարապ[ետի]. ՁԾԹ. (1310)։ Արդ, ստացաւ բղտա Սերսէս քհ[ա]նայ] ի Մղաջրու, յիշատակ իւր և <իր> զաբմիցն իւրոց՝ Շահին և Թանկշահին, իւր ամուսնոյն՝ Թիմա տիկնայ, և իր փեսին՝ Արիշահին։ Ամենայն որոց բարեխաւսութեամբ Ք՛րիստոս աստուած Թողու զիւրեանց յանցանքն յիւր միւստնդամ գալուստն։

102.

ՇԱՐԱԿՈՑ

Երևան 7034

Գրիչ՝ Իգնատիոս
վայր՝ Կիլիկիա, Զորոյ վանք

300 բ ... Գրեցաւ եղանակաւոր տառս ի Թուին ՁԾԹ. (1310), ձեռամբ անպիտան և անարժան քահանայի Իգնատիոսի, ի մենաստանիս, որ կոչի Զորոյ վանք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնիս, ի վայելումն մանկանց նոր Միոէ[ի], ի լաւ և յընտիր աւրինակէ։ Որք աւդտիք ի սմանէ ուսմամբ կամ գաղափարաւ, սրտի մտաւք յիշեսջիք զգծող սորա Իգնատիոս և զաղգայինն մեր, և աստուած յիշողացդ ողորմեսցի ի միւսանդամ գալուստն, ամէն։

103

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

*Էջմիածին ամսագիր, 1946 թ., № 8—10, էջ 40**

վայր՝ Այրիվոր

Արգ, դրեցաւ սուրբ աւետարանս ի հռչակաւոր մենաստանի, ի թուիս Հայոց ՁԿ. (1311), յանապատիս, որ կոչի անուամբ Այրի Ձոր, ընդ հովանեաւ սուրբ Ցարուխ[թեան ||| հանգստարա]նոցի որբոց։ Բայց գրեցաւ սուրբ աւետարանս ստուգեալ և ընտրեալ, յամենալաւ աւրինակէ։

104

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ե Ա Ց Թ Ո Ղ Թ Ր

Նբեան 154

Ստացող՝ Վարդան
վայր՝ Կիլիկիա Գերմադրեր

298 բ .... Որում ցանկացաւղ եղէ ես՝ Վարդան, ի վերջ հասեալ քահանայից, որ բնակեալ էի ի սուրբ ուխտն Դրազարկն։ Եւ վափազեցի տեսութեան սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, և սրբոյն Յակոբայ, և սուրբ Աստուածածնին. և մեծաւ աշխատանօք գնացեալ տեսի սուրբ տեղիսն, և յայժ վորձութեան հանդիպեցայ ի ծովու և ի ցամաքի։ Եւ գարձեալ անտի եկի ի հռչակաւոր և յականաւոր քաղաքն՝ ի Հռոմ։ Եւ անտի ղէմ եղեալ եկի ի Կիպրոս կղզի և անտ հանդիպեցայ բարեպաշտ արանցն, որ վերայգրեալ կան ի սուրբ աւետարանս՝ Թաւաւրէ և Ճուանի, և մեր յոյժ երեխտաւորին Սարգսին, և բարեպաշտ իշխանին պարոն Պաղտնին, որ է այժմ մարաջախտ հայոց, զոր խնամեսցի տէր աստուած դնա ե զհարազատ եղբարք իւր, որք բարեմտութեամբ և հոդաբարձութեամբ հանգուցին զիս, զոր հատուսցէ նոցա տէր։

Եւ իմ՝ ցանկացաւղ եղեալ սուրբ աւետարանի, և վերոյգրեալ բարեպաշտ արանցն ընչիւք, և ոչ յիմ գոյից, ետու գրել։ Եւ հանդիպեցայ քահանայի միոյ գրչի և ետու գրել աւետարան, ե. ոչ հաւանեցայ վասն

* Ձեռագիրը բեյրութաբնակ Կ. Բիդեճյանի սեփականությունն է կազմում։ Գագել ենք «Ինններորդ գարի ձեռագրական մի հատակոտոր...» հոդվածից։

անվարժ գրելոյն, և նիւթոյն թանձրութեան, և ծաղկին անպատեհութեան։ Եւ վասն երկրիս անհանգստութեանն և գերնլոյն յոնաւրինաց վասն մեզաց մերոց բողում ժամանակս կացաք անտ, և այլ մագաղաթ ճարկեցի բարևպաշտ արանցն ընչիւք։ Եւ գիմեալ ակի յերկիրս՝ յառաջին բնակչութիւնն իմ, ի սուրբ ուխտն ի Դրազարկ, յո և իմ խորհուրդ ւսեալ եկի ի սուրբ ուխտն Գերմաղբեր, յորում բնակեալ էր նախածանօթ և յոյժ սիրելի եղբայր իմ, քահանայ ոմն Թորոս անուն Հռոմկլացի, հմուտ գրչութեան։ Եւ յոյժ աղաչեցի զնա յանձն առնուլ և գրել զնոր կտակարանքն ի լման ի մէկ տունի, և նա յանձն էառ. և ես, ոչ յիմոց ընչից, այլ ի վերայգրեալ աստուածասէր արանցն և յայլ պարոնտցն. ետու գրել։ Եւ թէպէտ այլոց ընչիւք ետու գրել, այլ ես յոյժ աշխատեցայ ի գալ և ի գնալ։ Եւ արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, ոյք աւգտիք ի սմանէ, յիշել ի սուրբ և ի մեզաաքաւիչ աղաւթս ձեր զիս՝ ոտացաւղ գլոցս զՎարդան, և զհարազատ եղբայրն իմ զԱնդրեաս կրաւնաւոր քահանայ, որ սրով կատարեցաւ, և զծնաւղն իմ՝ զԹորոս, և զմայրն իմ՝ զՆար, և զեղբարսն իմ՝ զԱւետիք և զՅովաննես, և զփոքրիկ եղբայրն իմ Սլֆիանոս կոչեցեալ, և զքորան իմ՝ զգնացեալսն առ Քրիստոս։ Յիշեսջիք և զմաւրքոյրսդին իմ զԹորոս կրաւնաւոր քահանայ, յիշեսջիք և զքեռին իմ զտէր Վարդան, յիշեսջիք և զնուցուտն իմ և զմաւրքսյրն Ոսկեցաւդ կոչեցեալ, աղաչեմ յիշել և զամենայն ազգատոհմն իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս։

Յիշեսջիք և զՎասիլ քահանայ Հռոմկլացի և զամենայն արդիւնաբարան, ոյք աւգնական եղեն ընչիւք իւրեանց ի սուրբ գիրքս յայս։ Յիշեսջիք և զյոյժ երեքատաւորն իմ զՀայրապետ վարդապետն՝ գնացեալն առ Քրիստոս և զՍտեփանոս կրաւնաւոր քահանայ։ Յիշեսջիք և զառաջնորդ սուրբ ուխտիս զսրբասէր բարուհին՝ զտէր Կոստանտին, և զփակակալ սուրբ ուխտիս...»*

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՀՃ. և Կ. (1311),**

105.

ՅԱՍՄԱԽՈՒՐՔ

Բակուրուն, Կիպրոս կղզի, էջ 107—109

Գրիչ՝ Կոստանտին եպիսկոպոս
վայր՝ Սիս—Ձոխաք—Ձորոյ վանք

... Արդ, եղև աւարտուհն մատենիս ի մայրաքաղաքս Սիս, որ է առ ստորոտով աստուածայպահ գղեկիս, զոր տէր Յիսուս անդրդուելի պահեսցէ միշտ և հանապազ։ Եւ վասն զի ոչ գոյր սոցայ տեղի անգոբելոյ ի մի վայր, գրեալ եղև մասն ինչ ի Սիս և մասն ի Ձոխաքն,

* Հիշատակարանը թերի է, ձեռագրից թերթ է ընկել։
** Սուրն տողը գրված է նորագույն նոտրգրով ներքին լուսանցքում։

որ է վանք ասորոյ ազգին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և մասն ինչ ի սուրբ ուխտն Ջորոյ կոչեցեալ վանքն, ընդ հովանեաւ սուրբ Նշանացն, և սուրբ Աստուածածնին, և Սիանին ի թուականութեանս հայոց մեծաց ՉԿ. (1311), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ Կեսարացւոյն և ի թագաւորութեան Աւշնի աստուածասիրն և բարեպաշտի, որդւոյ Լեւոնի, որդւոյ Հեթմոյ, զորաւորիկ՝ որպէս ի հնումն դիւաւիթ ընդրեաց աստուած յորդիսն յնսսէ, սայպէս և զԱւշինն ի նորումս ընդրեաց ի մէջ եաւթն եղբարց իւր, և էած թագաւոր տանս Թորգոմայ և ազգիս Հայկայ, յոր և համարձակ կարասցէ կարդալ զաստուածայնուագ մարգարէին բանս, թէ՝ Փոքր էի ես յեղբարս իմ և կրսեր ի տան հաւր իմոյ. Ցոր թէև ոչ արածէր սայ զխաշինս հաւրն, որպէս դիւաւիթ, բայց զաւծումն և զթագն ընկալաւ յաստուածոյ, և խաղաղութեամբ արածէ զբանաւոր հաւտս Հայոց ազգիս, զոր յայլ և յայլ ժամանակս նեղէին յանաւրինաց, յոր և զերկնայինն ի խաղաղութիւն ինքն ընգալցի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, երկար ամաւք և բազում ժամանակաւ։

Արդ, աղաւեմ զհանդիպեալս վերոյգրեալ յիշատակացս հաւաքեալ բազմայչարչար վկայից, որ ի սուրբ մատենիս յաւէտ, որ յետ մերոյ ելից յայատեայցս վայելէք ի սայ հոգևոր մխիթարութեամբ, սրտի մտաւք յիշել յաղաւթս ձեր զիմս նուաստութիւն, զՅոստանդին եպիսկոպոս եւս, և զՔրիստոս հանգուցեալ քեռին իմ և զյոյժ երախտաւորն իմ զՑովհաննէս Կարմիրվանցի. և զքաղցրիկ մայրն իմ զԱղվոր տիկին, ընդ նմին և զհայրն իմ զՎասիլ, և զարեամբ նահատակեալ հայրազատ եղբայրն իմ զՍարգիս, որ մինչդեռ մանուկ էր տիւաք խողխողեալ եղև յանաւրինաց, և զԱւշին, որդի նորին, որ յանցեալ ամի հանգեաւ. խաղաղութեամբ ի Քրիստոս, և է ի պահեստի ի սուրբ ուխտն Ձոխաքն, յամսեանն յու[նու]արի յիրեք աւրն, որ էր շարաթ աւրն։ Ընդ որոյ յիշեցէք և զհանգուցեալ հայրն Յակոբայ՝ զՍարգիս, և զմայր նորին՝ զՄիւհամ Խաթուն, և զհայրազատ անդրանիկ եղբայր ժառանկողի մատենիս Յակոբայ՝ զՍտեփաննոս, որոյ տէր հատուցէ զանսպառ բարիսն աստ և ի հանգերձելումն, և յիշելոցս և յիշողացտ առհասարակ միայպէս ողորմեսցի ի մեծի աւուրն ահագին ժամուն, յորժամ ճարտասանութիւնքն, բանքն սպառին և գործքն թագաւորեն, միայն ունելով բարեխաւս զբազմութիւն աստ հաւաքեալ որոցն իւրաքանչիւր յանուանէ ի Քրիստոս Ցիսուս տէր մեր...

բ

Կազմող՝ Յակոբ

Ո՜հ, զմեղաւոր դատապարտեալ կազմող սորա զՅակոբ երէց՝ զորդի Մեծ-պարոնին, և զեղբայրն իմ զՑոհաննէս, և զհանգուցեալ եղբայրն իմ ի Քրիստոս զԿոստանդին, հանդերձ ծնաւղաւք՝ կենդանեաւք և հանգուցեալովք, յիշեցէք ի տէր Ցիսուս Քրիստոս, աղաչեմ, ով աստուածասէր ընթերցողք։ Ընդ նմին աղաչեմ յիշել ի տէր զպատուական ծերուն[ի] զՎասիլ քահանայն և զծնողսն իւր. աղաչեմ յիշել ի տէր զուսուցիչն իմ զԹոքոս քահանայ՝ զմնձական... կոչեցեալ Երկար,

106

ՄԱՑՐ ՄԱՇՏՈՑ ՍՍՈՑ

Հալէպ. Անթիլ. և մասն. Սիւրմ. Բ. 31—32

Մագաղաթ յղող՝ Թումաս

ա

436 *Երթա մագաղաթս ի վանէժու առ կաթողիկոսն ամենայն [Հայոց] ի տէր Կոստանդին, ի Թումասայ* եպիսկոպոսէ Իքալիոյ:*

Ստացող՝ Կոստանդին Կեսարացի

բ

434 *Նըւասա Կոստանդին կաթողիկոս գտայ զշարաղրութիւնս Հայրապետացն հայոց, գրըեալ ձեռամբ՝սուրբ հաւրն մերոյ Ներսիսի արքեպիսկոպոսի Տարսոնի, և ետու գրել աստ...*

Կազմող՝ Ճաւալիճ

գ

Երկրորդ լուսաւորիչն Հայկազան ազգին տէր Կոստ[անդին], զանարժան և զմեղաւոր ծառայս ձեր՝ղկազմօղ սորայ զՃաւալիճս, յիշեա առաջի Ք՛րիստոսի աեառն մերոյ:

դ

*Ի թուականիս Հայոց ՁԿ. (1311), յամսեանն սեպտեմբերի ի ԺԴ. (14) եղև սինհոդոս, հրամանաւ սրբասնեալ և երջանիկ կաթողիկոսին Հայոց Մեծաց աեառն Կոստանդնոյ, յեկեղեցիս, սր կոչի սուրբ Սոֆիայ, հարցաքննութիւն և հրաւէր եղեալ յաստուածասէր եպիսկոպոսաց և ի սրբասէր քահանայից և սարկաւագաց, սրբասնեալ եպիսկոպոսն Հռոմոյն տէր Ստեփաննոս, արքեպիսկոպոսն Տարսոնի տէր Յովսեփէս, եպիսկոպոսն Ադանու տէր Ստեփաննոս, եպիսկոպոսն Իկոնիոյ տէր Սարգիս: Որոց ի միասին ժողովեալ, քննութեամբ և ընտրութեամբ հրաւիրեցին արժանապէս զԳրիգոր քահանայ յեպիսկոպոսութիւն Սալմասաու:****

---

* *Տպված է «Թումայ»*

** *Սույն Ձեռագրի տարբեր էջերում զանազան ժամանակներում Սսի կաթողիկոսները նշանակել են իրենց գահակալութեան թվականները: Այդպիսի հիշատակություններ թողել են՝ Գոստանդին Բ. Լամբրոնացի (1380), Յովհաննէս (1486), Յոհաննէս Թուլկուրացանլի՛ (1489), Յովանէս (1525), Սիմեոն Ձեյթունցի (1536), Ղազար Ձեյթունցի (1545), Թորոս կաթողիկոս (1548), Ջաչատուր (1551), մյուս Ջաչատուր (1560), Ազարիա Ջուղայեցի (1584), Տիրատուր (1586), Յովհաննէս Այնթապցի (1601), Պետրոս Բերիացի (1608), Սիմէոն Սերաստացի (1633), Թորոս Սսեցի (1784), Թորոսի եղբորորդի Գէրակոս (1797) և այլք:*

107

ՃԱՌՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿԱՆՈՑ

Երևան 3077

Գրիչ՝ Յակոբ Կիլիկեցի

287 բ ... Սակս որոյ բարեմիտ և կուսակրաւն քահանայդ Յովաննէս. ծայրիւ մտաց մատին ճաշակեալ ի քաղցրութենէ իմասաից որ աստ ղումարեալ զոյ*ոզնախոհ իմն մոլութեամբ և յաւէտ տենչմամբ՝ ըստ յատուկ և առանձին բանական բնութեանս և որ կա ի սմայ զաւրութիւն, մինչտ արդիւնական գործս պիտոյից իմաստաւոր խորհով ի կիր արկանել։ յայսպիսի իմանալի գարաստանս վարեալ բերաւ՝ որ լաւագոյն է քան զականս պատուականս։ Ըստ ումեմն վիպելոյ ի հնոցն՝ եթէ ոչինչ է լաւագոյն քան թէ բոլոր ոգոց գաստուածային տիպս աւրինաց ընդունել։ Յաղագս որոյ թախանձեմ զնաւաստութիւնս իմոյ Յակոբայ [կի]լիկեցւոյ առ ի ծրագրել զայս բա[նս] որ աստ գոլով ոգեշահ և իմն | | | եցեալ ի բազում յաւժարութիւն նորին. և
288ա յողնախոհ և իմաստուն տ[են] || չուիմն բերա յայս հանդէս։ Ոչ եթէ լաւագոյն գոլով իմ յայս արհեստ գրչութեան՝ այլ փցուն և վատթար։ վասն որոյ զպարտութիւն խոստովանիմ, քանզի յաղթեալ եղէ ի սիրոյ նորին և երկիւղ իրաց քեցեցի։ Գծագրելով զսա ի յիշատ[ակ] հոգւոյ Յովհաննէ[ի] քահանայի և ծնողաց նորին։ Դարձեալ ծանուցանեմ զայս ինչ՝ զի գաղափար սմին աներաժիշտ և անհարմար ելով ըստ առոգանութեանցն արհեսաի, մանաւանդ ըստ կետիսըս, քան զի ոչ գոլով ի նմա աւարտակէտ, կամ ստորակէտ, կամ միջակէտ՝ այլ խառնուփնդոր շփոթեալ ըստ յոռեղոյն խոհա[րարի]. և իմ տեսեալ զայսպիսի իրս ըստ նուաստութեանս իմոյ ուշ եղի մակածական ելով՝ զի թերևս ի վերայ հասից կետիցն։ Եւ տեղեկանայի էր զոր առ տ[ե]-
288ա ղեաւն, և էր զոր Բ., կամ Գ., կամ ես աւելի տող գրելով || և կամ դէմ մի, կամ թուղթ մի։ Եւ էր զոր ոչ կարէի առ ժամայն՝ թողլով իմ ի միւս աւրն և կամ յերկուս՝ և ապա տեղեկանայի։ Վասն սրոյ աղաչեմ զձ՛ս հղաւրագոյնսդ և զնաղելի ուշիմսդ՝ եթէ գուցէ գտանելով ձեր սխալ ինչ՝ ոչ մեղադրէք՝ զի բազում ջանիւ ըստ տկարութեան իմոյ՝ այդ էր կարն իմ։

Արդ եղև աւարտ գրչութեան սորա ի թվ [ականին] Հայոց ՉԿ. (1311), յանապատեր սրբոյն Գրիգորի ընդ հովանեաւ սրբոյ Կարապետին, և սրբոյն Մինասա, և նորաշէն սուրբ Աստուածածնին՝ որ յայսմ ամի՝ բազում ջանիւ և աշխատութեամբ շինեալ եղև ի գերահոչակ րաբունապետէն Մովսիսէ. աղաչեմ զամենեսեան զի նախասացեալ ստացաւղ սորին զՅով[հաննէս] աբեղայն յակքարմամբ [՞] սրտիւ յիշեսման արժանի առնէք տէր-ողորմայիւ և զծնաւղսն իւր, նաև զվերոյ-

* Սույն հիշատակարանի կետադրությունը պահել ենք անփոփոխ, զի հմուտ գրիչը մտածված կետադրություն գործածող մեկն է։ Նրա գործածած երկու կետերը շատ փոքր են, գրվում են տողից վերև և չունեն մեր վերջակետի նշանակությունը։

289ա ասացեալ ‖ բարւոյն Սովսէս. և դայլ ճղնաւոր եղբարն մեր, որ անդ գոլով, զմիայնակեացսն և զաբեղայսն, զի բազում յաւժարութեամբ աւժանդակ եղեն մեզ, Եւ աստուած, որ առատ է ի տուրս բարեաց, ձեզ ողորմեսցի, և նմա փառք յամենայնի։ Դարձեալ ես մեղսամակարթ և վատթարս ի բարեաց՝ տրուպս Սանկ[ո]ան, կականմամբ ձայնիւ իրը առաջի կալոյ ձերում պարկեշտութեանդ ոդել զայս ինչ։

Ցերեսս անկեալ արտասուալի,
Բոլոր մաղթեմ միշտ ամենի։
Ձյլ և ուշիմքդ նազելի,
Որք պատահէք այսրմ տառի։
Կապեալ սիրովն բնականի,
Մ[եո՞]ն և յրստակ ըստ ցիսուսի
Ոգել բանիւ տէր-ողորմի,
Ինձ և ծնողացն իմ և զարմի,
Բարեաց տրւաւղն ամենայնի
Ցրիստոս աւրհնեալ միշտ եղիցի։

108.

ԱՒԵՏԱՐԱՆ

Թավրիզ, Բերդաքաղի Ս. Աստուածածին եկեղեցի. 1. Ճառեան, Ցուց. էջ 70—74

Գրիչ՝ Տեր

ա

342 ա ... Ցամի հարիւրից ևւթեսնց և տասանց վեցից տարբերութեանն Հայոց տումարիս (1311), ես՝ յոգնամեղ և տառապեալ գրիչս Տեր քահանայ, յանկ հանեալ աւարտեցի զսա բազում ջանիւ և մեծաւ աշխատութեամբ, յամենալաւ և ի ստոյգ աւրինակէ, զոր ի բազմաց վկաեալ, ստացա զսա գանձ անապական յերկինս, ուր ոչ գող մերձենա և ոչ ցեց ապականէ, ի վայելուչ մանկանց եկեղեցոյ նոր Սիոնի, յամս աստուածապատիւ տեառն Կոստընդի հայոց կաթողիկոսի։

բ

268բ Սրբոց աւետարանչացն բարեխաւսութեամբ, Ցրիստոս աստուած, ողորմեա ինձ՝ մեղապարտ գծողիս Տեր քահանայի, և ծնողաց իմոց, և ազգականաց։ Ցիշեսջիք զաւակն իմ զՄարգարէ, և զեղբաւրորդին զՑակոբ, ես առաւել զՆոռնվոր, որ բազում աշխատանք կրեաց ի վերա մեր, աղատեսցէ ի մեղաց, և ծնողաց և ազգականաց թողութիւն շնորհեսց[է] Ցրիստոս աստուած, ամէն։

Ծաղկող՝ Թորոս

Գ

22բ Զանպիտան Թորոս սարկաւագ՝ ղնկարող սուրբ պատկերացս, աղաչեմ յիշեա ի տէր Յիսուս Քրիստոս։*

109.

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6263, էջ 117 (Ջմիւռնիայ, սբ. Սեփաննոս եկեղեցի)

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ակներ

... Արդ, աւարտեցաւ սուրբ աւետարանս... ի սուրբ և ի դերահոչակ ուխտս Ակներ կոչեցեալ, ի թուաբերութեանս Հայոց ՉԿ. (1311), ձեռամբ Գրիգորի անարհեստ գրչաւորի, ի խնդրոյ Գրիգոր միայնակեցի... ստանալով զսա ի յարդար վաստակոց իւրոց և ... պարգեւելով ի հոչակաւոր ուխտն Խոչկայ կոչեցեալ, զի կացցէ հանապազ ի սուրբ տաճարին՝ զոր յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին շինեալ է։ Ծիշեցէք յաղօթս ձեր զստացող սորա զԳրիգոր միայնակեացն, այլ և զառ ի Ք[րիստոս] հանգուցեալ զհայրն իւր՝ զՎասակն... ի ժամանակիս այսմիկ էր թագաւոր աշխարհին Կիլիկիոյ Աւշին և կաթողիկոս Կոստանդին Կաղնոդովկեցին, որոց տէր առաջնորդեսցէ զհոգևոր առաջնորդութիւն և զմարմնաւորն բնդ երկայն աւուրս։

110.

ԱՒԵՏԱՐԱՆ

Թորոս Աղբաբ, Ի. էջ 433 (Տիդրանակերտ)

Գրիչ՝ Կոստա[նդին]
վայր՝ Խորնի Ձոր

Գրեալ ի Ձորս Խորնի, ընդ հովանեաւ սուրբ Էրամաւր և սուրբ

---

* Ձեռագրում կան բազմաթիվ այլ՝ թվականով և անթվական հիշատակագրություններ, նվիրաբերական ակաեր և կալվածագրեր (<Վախմ>-ի դրեր), որոնցից մի քանիսը ԺԴ. դարի են։ Այդպիսի վավերագրերը մտադիր ենք հրատարակել առանձին։ Դրանցից այստեղ բերում ենք մի նմուշ. «Ո՛վ դու լուսերամից, յիշեցէք ի մեղսալքուիչ յաղաւթս ձեր և ի մաքրափայլ, զիս զանարժան ծառայս աստուծոյ զՅուքլուն, ու զիւր դեռայրուս նորածին տղայն՝ զՇմիր Սարգիսն, և զիւր հայրն և մայրն. և միաբանեցայ սուրբ աւետարանիս, որ յամէն տարի անխափան տամ Ա. լրտ. [իմա՛ լիտր] ձէթ յեկեղեցին։ Ով որ դայս գիրս չնչէ, ինքն չնչի ի գալուստենէ կենացն։ Եւ դիս զանպիտան և զանարժան ծառայս աստուծոյ զտէր Զաքարիէս, և աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն, ամէն։ Ի թվ. հայոց ՉՀԴ. (1324), ի համբարձման տաւնիս» (էջ 344բ)։

Նշանաւոն, ի խրոխական միոջ, որ է հարաւակողմն պերճ անապատիս, ի խնդրոյ սուրբ և. ընարեալ կրաւնաւոր քահանայի Պետրոսի, ձեռամբ պիտականուն քահանայի Կոստ[անդեայ] և ողորմելի դերւոյ Հեթմընցւոյ, Թվ. ՉԿ. (1311),*

111.

ՄԱՍՈՒՆՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Երևան 282 (Տես նաև 1558 և 1557 Թ.Թ.)

Գրիչ՝ Ցովհաննէս

192ա Շնորհիվ տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զաստուածաշունչ տառս զայս, զոր հոգին սուրբ տա բարբառել սրբոյ առաքելոցն։

Արդ, դրեցաւ սայ ձեռամբ անպիտան և փծուն գրչի Ցովհաննիսի, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղացն իմոց, որ ի Քրիստոս փոխեցան, և եղբարցն իմոց։

Արդ, ով կարդայք կամ ուրինակէք, մեզաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ աստուծոյ մերմէ, և աստուած հայցողացդ և հայցելոցս առհասարակ ողորմութիւն պարգեւեսցէ, ամէն։

Ի թուական Հայկազեան տումարիս Չ Կ. (1311)։

Կարաւտ եմ աստուծոյ ողորմութեանն և սիրոյն, և եմ տառապեալ, և յոյժ մեղաւոր, և յանցաւոր աստուծոյ պատուիրանին։ Ատուծոյ սիրոյն համար, ով հանդիպիք այսմ տառի, զաստուած-ողորմին անյապաղ շնորհեցէք Ցովհաննիսիս և ծնաւղաց իմոց։

112.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ «ԲՈՂՈՔԱՑՈՒՑԻՉ»-ԻՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ ԵՒ ՄԵԿՆ.ՈՒԹԻՒՆ ԵՐԴՈՑ ԵՐԴՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՑ

Երևան 1460

Գրիչ՝ Կիւրիոն

206ա ... [Ցիշեցէք] նաև զարժանին յիշատակի զրազմերախտ բարուեացն հայրն իմ զՑոհ[անննէս]՝ զծնողն երկամբք հոգւոյ. և զըստ մարմնոյ ծնողսն իմ՝ զվարդան քահանայ ||| և զեղբարսն իմ՝ զմխիթար քահանայ և զեպիսկոպոսուր կրօնաւոր և զմխիթարիչ, և յիշոզացդ տէր ողորմեսցի։

Էր թվականութեանս Հայոց Չ Կ. (1311), յորում աւարտումն եղև ծրագրութեամբ, ձեռամբ յոգնամեղի Կիւրիոնի՝ սպասաւորի բանի։

Զբազմերախտ հոգևոր հայրն մեր զիշխան յիշեցէք ի Քրիստոս։

---

* Հիշատակարանը համառոտված ու սրբագրված է երևում հրատարակիչ Գ. Սրվանձտյանի կողմից։

113.

ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ ԵՒ ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹՑԱՆ ՄԱՐԴՈՑ ԴՐԻԳՈՐԻ ՆԻՍԱՑԻՈՑ

Ներսէն 3463

Գրիչ՝ Կիւրիոն

*Զբազմավէր անձն հիքոյս Կիւրոնի՝ ծրոզի առին, յիշեա ի Քո-ղուքիւն մեզաց, և զՄխիթար քահանայ, և զեաչատուր կրօնաւոր, և զրաբունապետն իմ Յովհաննէս, ամէն։**

* Նախորդ հիշատակարանի գրիչն է, ուստի տեղագրում ենք նույն՝ 1311 թվականքում։

114.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ս. Ջալալ. հտ. Ա. էջ 167—168 (Թարգմանչաց անապատ, մերձ ի Բանանց)

Վայր՝ Փոքր Սիւնիք

Ի ժամանակս և ի դարս աւուրց տիեզերակալութեան և արքայութեան բոլոր աշխարհաց աղգին նետաւդաց, որ տիրէր ի ծովէն Պոնտոսի մինչև ցծոցն Կասպից, և յնփրատ գետոյ մինչև յայնկոյս լերանցն Կովկասու, որոյ գլուխ և ինքնակալ՝ խանն աշխարհակալ Խարբանդայ կոչեցեալ, ի թուին Հայոց ՉԿԱ. (1312)։ Ցայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ և երևելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի զարմէ ղիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց, Գրիգոր իշխան Հայոց՝ տէր և պարոն Փոքր Սիւնեաց՝ Հանդրերդոյ, և Ականւոյ, և բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղուագայ, և գաւառք մեր յանուանէ այս է՝ Սոթ Գլուխ, և Բերդաձոր, և Ճոխացց, Հասկարակս, Ատրեճին, Կալեր, Ուռիաձոր, և Խորուագետ, Դւանից և այլ իւրեանց միջոց մազրոմն ի մեր նախնեաց ճնացեալ հայրենիք է, իւրեանց չորս սահմանօքն, ստոյգ և ճշմարիտ գրեալ կայ յաւետրանիս։ Ամուսնացեալ ընդ գտեր Տարսաիճ իշխանին, ընդ ամէնօրհնեալ պարկեշտ տիկնոջն Ասփայի, ծնանի ի սմանէ ուստերս և գստերս, իսկ մինն, որում անուն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստնդեայ հասակին, որ արժանաւորութեամբ ի կոչմանէ հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան տանն Խաչենոյ, ընդ մարմնական տէրութեան, զոր ունէր ի հարանց, ստացեալ ընկալաւ և գհոգևոր պետութիւն։

Արդ, յոյսմ ամի, որ էր թիւն ՉԿԱ. (1312) փոխեցաւ յաշխարհէս Ասփայ առ Քրիստոս, և եղաւ ի շիրմի ի սուրբ ուխտն Խաչարի վանաց, վանն որոյ և մեծ պարոն Գրիգոր ընծայէ գերեզմանի նորա ընծայս յոլովս՝ գիւղորայս, այգիս, անդաստանս, և զարդարէ զսուրբ ուխտն զանազան սպասիւք և հանդերձիւք, ընդ որս աւրհնեալ շքեղացոյց և սուրբ աւետարանս ոսկենկար կազմածով, և շնորհեաց գերեզմանի նորա և իւր նախնեաց յիշատակ, որում բաղձալով և ընթերցալով սուրբ աւետարանիս, յիշեսջիք զԳրիգորն ի Քրիստոս, և յիշալով յիշեալ լիջիք ի տեառնէ։ Ջմեծ և զամենաւրհնեալ պարոնաց պարոն զԿրիգոր որդի Դաւիթիս, և զամենագովելի զբարեպաշտ ամուսին իւր զպարոն Ասփայն՝ զստացաւղք և զարգարիչիք սուրբ աւետարանիս, յիշեցէք ի Քրիստոս։

115.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Երևան 4679

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ Գլաձո՞ր

ա

144 բ *Զստացող աստուածապատում երգարանիս՝ զԴաւիթ բարունապետն*, յիշեսջիք առաջի ղենլոյն Քրիստոսի, ով գասք [լուսերամբք]։*

բ

211 բ *...Ողորմեսցի տէր Յիսուս հանգուցեալոյն ի յաստեացս ի յոյն կենաց պարոն Ասփայիճ**, զոր և թողեալ զյանցանս նորա Քրիստոս աստուած մեր, որ է աւրհնեալ։*

գ

335 ա *Ո՛վ, ընթերցողք հոգիապատում քնարիս, յիշեսցիւք առաջի ահաւոր և սոսկալի բեմբին Քրիստոսի զծառայն Քրիստոսի զՓռոսճիկ Արճիշեցիս, զի և թողութիւն մեղաց ընկալցի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։ Ընդ նմին և զսուտանուն գրչողիկս զնաչատուր, յոյժ մեղապարտ և բիւր քանքարոյ առողի և ի յաղբս թագուցողի, վասն սրբոյն Քրիստոսի յիշեսջիք առաջի ղենլոյն Յիսուսի, զի և ինձ ողորմեսցի Քրիստոս աստուածն մեր, որ է աւրհնեալ յաւիտեան։*

116.

ՃԱՇՈՑ

Երևան 4687, նաև Փիլդ. 6273, էջ՝ 121—122
(տես նաև 1371, 1488 և 1514 թ.թ.)

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

ա

586 բ *...Զայս ամենայն հաւաքեալ, ի մի վայր ժողովեալ գծագրեցաւ կարգաւորաբար, սկսեալ ի յիշատակի աւուր ծննդեան փրկչին և միոյ նշանով, առանց մոլորութեան, աւարտեալ մինչև ի տաւն սուրբ հայրապետին Բարսղի կեսարու, յըստոյգ և յընտիր աւրինակէ, բազում աշխատանաւք և քրտամբք, հոգւոյն սրբոյ աւժընգակութեամբ, յաստուածապահ և ի գեղեցկատիպ կղզիս Ախթամար կոչեցեալ, ի տեղիս սպաստանի, որ է աթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց, ընդ*

---

* Նուիրացնում ենք Գլաձորի բարունապետ Գավթի հետ։

** Նախորդ հիշատակարանի վստահելի տվյալով Ասփա իշխանուհին մահացել է 1312 թվականին։ Ըստ այդմ սույն հիշատակարանը տեղագրում ենք 1312-ի թվաշարքում։

հովանեաւ ամենայարդի սուրբ Աչի և սուրբ Նշանի և աստուածածամուխ սուրբ Գեղարդեան, ի հայրապետութեանս սուրբ և անբիծ և երջանիկ տեառն Ներսէսի, և տեառն Զաքարիայի, և ի թուաբերութեանս Հայոց յեւթնհարիւրերորդի վաթսներորդի առաջներորդի (1312), ի դառնացեալ ժամանակիս։ Իսկ ես՝ ամենամեղս և անյիշելիս ի ղրչաց

587 ա ‖ Դանիէլ սուտանուն կրաւնաւոր, ըստ իմում տկարութեամբս սկսայ և կարողութեամբն աստուծոյ կատարեցի մեղսամած մատամբ իմով, յիշատակ մեղուցեալ անձին իմոյ և քեռն իմոյ ըստ մարմնոյ՝ Մուրիաճէ հաւատաւորի։ Եւ տուաք զսա նուէր և անջնջելի արձան յաստուածարնակ և ի հոչակաւոր և յանուանի սուրբ ուխտս՝ ի սուրբ Աչս Աղթամարայ, զի և մանկունք սորա վայելեսցեն զսուրբ գիրքս, հրճուին սովաւ հանապազ, և զմեզ անմոռանալի յիշմամբ յիշեսցեն յաղաւթս իւրեանց, եւս առաւել ի ժամ սուրբ և սոսկալի պատարագին, զմեզ՝ զատացողքս սորա՝ զանարժան Դանիէլ կրաւնաւոր, և զՄարիաճէ քոյրն իմ, նաև զեղբայրն մեր ըստ մարմնոյ՝ զԹովմայ, և զհանգուցեալ քոյրն մեր՝ զԱւազ, և զծնողսն մեր՝ զՇահապ և զԹամար՝ զիսոխեալսն ի Քրիստոս, և զամենայն ազգատոհմն մեր՝ զկենդանիքն և զհանգուցեալսն...։*

Բարեխաւս լերուք... նաև ուսուցչին մերոյ պատուականն և ընտրեալ քահանային Սիմէոնի՝ փոխեցելոյն ի Քրիստոս, և նորին ծնաւղացն, և հոգևոր եղբարցս մերոց՝ սրբասնեալ կրաւնաւորացս՝ Ստեփաճոսի և Յովաճնիսի, որք աւգնական և ձեռնտու եղեն մեզ ի նիւթ թղթիս...։

589 բ Աղաչեմ զպատասաւորք սուրբ եկեղեցոյդ, սրտացաւաբար պահել զգիրքս և պատրաստութեամբ սպասաւորել սմա, ոչ վայրապար շրջշրջել զթոյլ նիւթս սորա, այլ խնամովք կարդալ զսա, վասնզի բազում և մեծ աշխատանաւք կատարեցի զսա, զոր քաջ իմանան գիտնականքն և հոգևորքն զաշխատանք սորա, ըստ առաքելոյն, որ ասէ, թէ՝ Որ զփորձ առեալ է, կարող է և փորձանաւորացն աւգնական լինել. ըստ այսմ և դուք արասջիք, դի աւրհնութեանն Քրիստոսի արժանի լինիք, ամէն։

բ

590 բ Ի թուիս ՉԿԱ. (1312) սրբազան կրաւնաւորն Դանիէլ ետ զտաբեգիրքս սուրբ Աչիս Ախթամարայ, յիշատակ հոգոյ իւրոյ, և քեռն իւրոյ Մարիաճոյ, և ծնաւղացն իւրեանց։ Եւ սպասաւորք սուրբ խաչիս յանձն առին, որ յամէն տարի Բ. ժամ առնեն. քանի իւրեանքն կենդանի են, զմէկն հաւրն առնեն՝ Շահապին, և մէկն մաւրն՝ Թամարին, և յետ իւրեանց մահուն, զմէկ ժամն՝ վարդավառի կիրակին՝ Դանիէլին առնեն, և զմէկն՝ աստուածածնի կիրակին՝ Մարիաճոյն։

* 587 ա էջի երկրորդ սյունակից մինչև 589 բ էջի առաջին սյունակի վերջին մասը Դանիէլ գրչի ինքնակենսագրական ու նվաստացման տողերն են, շատ տեղերում գրված գեղարվեստական մեծ վարպետությամբ, բայց զուրկ պատմական արժեքից։

Ով կկեղեցպան լինի զայս Բ. ժամս անխափան առնել տայ։ Կատարիչքն աւրհնին յասուածոյ և ի սուրբ Աչէս, և գհատուցումն ի Ք[րիս]տոսէ առնուն, ամէն։

117.

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 4801, նաև Փիլդ. 6273, էջ 119—120 (տես նաև՝ 1417 Թ.)

Գրիչ՝ Դանիել
վայր՝ Աղթամար

257 ա Աստանաւր աւարտեցաւ սուրբ գիրքս այս ի թուականիս Հայոց ՉԿԱ. (1312), ի կղզիս Աղթամար կոչեցեալ, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Աչէի, և սուրբ Նշանի, և աստուածամուխ սուրբ Գեղարդեան, ի հայրապետութեան տեառն Ներսէսի և տեառն Զաքարիայի։ Զոր ստացաւ գստ յարդար վաստակոց իւրոց երջանիկ և ճգնաւոր ոմն Գրիգոր միայնակեաց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն՝ Դաւթի և Սիրամարգի, և ետ զսա նուէր յանուանի և ի հոչակաւոր սուրբ ուխտս՝ ի սուրբ Աչս Աղթամարա անջինջ արձան։ Իսկ ես ամենամեղս և վշտունս ի գրչաց Դանիել անարժան կրաւնտուոր, տեսի զսէր և զփափագ սորա, որ առ հոգևորսն, և ըստ իմում տկար անձամբս յանձն առի և կարողութեամբն աստուծոյ կատարեցի։ Վասն որոյ աղաչեմ
257 բ զհանդիպեալսդ սմա անմոռաց || յիշմամբ յիշեսջիք յարժանաւոր յաղաւթս ձեր զյաւոյ յիշեցեալն՝ զԳրիգոր միայնակեաց՝ ստացող սորա, և զծնաւղսն իւր՝ զԴաւիթ և զՍիրամարգ, և զազգատոհմն նորա՝ զկենդանիսք և զհանգուցեալսն։ Ընդ նոսին և զիս՝ զմեղուցեալ Դանիել գրիչս՝ և զմեր ծնողսն, և զամենայն արեան մերձաւորքն մեր և զբարեխաւորքն։ Նաև զուսուցիչն մեր՝ զՍիմէոն քահանայ, և զՍտեփաննոս կրաւնաւորն, որ աւգնական եղև մեզ ի նիւթ թղթիս, և զԹովմայ կրաւնաւորն, որ եղև միջնորդ այսմ գրոց, որպէս զի ազաւթիւք ձերովք և ամենայն որբոց ողորմածն աստուած ողորմեսցի ամենեցուն՝ յիշողացդ և յիշեցելոցս, կրկին կենաւք և երկու աշխարհաւք. և ինքն եղիցի աւհրնեալ յամենայն յարարածոց իւրոց, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

118.

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Բրիտ. թանգ. 46 (Add. 18,603), կոնիբ. ծուց. էջ 95—96
(տես նաև՝ 1449 և 1693 թ. թ.)

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Ականց ամապա՞տ

ա

349 բ ...ի թագաւորութեանն Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Կոստանդ[եայ], և ի թուականութեանս Հայոց ՉԿԱ. (1312)

գրեցաւ գիրս այս, որ կոչի շարակնոց, ձեռամբ Ներսեսի՝ քահանայի, ի խնգրոյ կուսակրաւն քահանայի Թորոսի։ Արդ, աղաչեմ զձեզ, որ հանդիպիք և տեսանէք զդիրս զայս, խոշորութեան և սղալանացս անմեղադիր լերուք և գրողի սորա մեղաց թողութիւն խնդրեցէք, և եղբարց իմոց՝ Յովաննէսի և Թորոսի, և ծնողաց իմոց. ընդ նմին և Թորոսի քահանայի՝ ստացողի սորա, որ ետ գրել զսա ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց։ Տէր Յիսուս ողորմեա Գրիգորի քահանայի, որ այժմ հայր է Ականց անապատին, որ սկիզբն արար զրոցս և գրեաց մինչև Ղուտմանցն շարականն։

Ծաղկող՝ Գրիգոր

բ

350 ա Ո՛վ, եղբարք, եղբարք, աղաչեմ յիշել զեղկելի գրիչս Գրիգոր զպիր, որ զգիրս խազեցի և զարզարեցի ոսկով և ծաղկիւ։

Կազմող՝ Յակոբ Սեբաստացոյ

գ

350 ա Ջմեղաւք զատապարտեալ կազմող սորա՝ զՅակոբ երէց Սեբաստացոյ, և զծնաւղսն իմ և զաղդայինսն, աղաչեմ յիշել ի տէր։

119.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆ

Թուական 8023

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Սիս

248 ա ...Գրեցաւ տետրակս այս ձեռամբ Գրիգոր քահանայի ի մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ սուրբ Նշանիս, ի լաւ և յընտիր աւրինակէ Կոստանգէ, ի վայելումն դեռաբոյս սարկաւագի Սիմեոնի* և ծնո[ղաց իւրոց] և որոյ տէր կամեցի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կամ ընդաւրինակէք, մեղաց թողութիւն հայցեցէք Սիմեոնի* սարկաւագի և ծնաւղաց իւրոց, որ ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, ի թուականիս
238 բ Հայոց ՉՃԿԱ. (1312). ի հայրապետութեանն || տեառն Կոստանդեայ, և ի թագաւորութեանն Հայոց Աւշնի։

Ընդ նմին զԳրիգոր քահանայ՝ ղրաւղ սորա, և զծնաւղս իմ, և զդեռաբոյս որդին իմ զՍարգիս, աղաչեմ յիշել ի սուրբ և ի գերամաքուր աղաւթս ձեր, և որ յիշէ, նա ընդ միոյն հարիւրապատիկ առցէ ի Քրիստոսէ, ամէն։ Եւ զտէր Յովաննէս եպիսկոպոսի և առաջնորդ[ի] Արքայկաղնոյն, որ շնորհեաց Գրիգոր սարկաւագի զգին սորա, և

* Սիմէոնի անունը գրված է ջնջված մի անվան փոխարէն, որն, ինչպես պարզվում է հաջորդ շարագրութիւնից, պէտք է եղած լինի Գրիգոր։

զծնաւղսն իւր, և զամենայն ազգատոհմն իւր յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս ի տէրն մեր, ամէն...։

120.

ՄԱՍՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 231 (տես նաև 1426 թ.)

Գրիչ՝ Սահակ
վայր՝ Փերճոց վանք

ա

67 բ

Ո՛վ Պետրոս՝ սիրաւղ բանի,
Քո սուրբ հոգիդ վառաւորի,
Որ ցանկացար սրտի մտաւք
Ասցեալ բանից Սողոմոնի.
Քրիստոս տացէ քեզ սիրտ բարի,
Չի ընթեռնուս զբանս առակի
Եւ զոր ի սայս կա աւգտակար
Ի քո խորհուրդդ համբարի։
Յորժամ կարդաս և զղջասցիս
Եւ միտքդ առ քեզ ամփոփեսցի,
Դու զիս յիշեա սրտի մտաւք՝
ՉՍահակ անունս, զոր գրեցի,
Նա, որ Յիսուս անուն կոչի,
Ինքն ինձ և քեզ ողորմեսցի։

բ

81 ա

Ո՛վ աստուածասէր ընթերցաւղք, որ աւգտիք ի լուսաւոր և ի հոգելից բանից առակացըս Սողովմոնի, յիշեսջիք սրտի մտաւք զերիցս երանեալ և սրբասէր կոյս կրաւնաւորն զՊետրոս, և զՊաւղոս,* և զհայրն իւր՝ զԹուքեն, և զմայրն իւր՝ ը[զ]Զմրուխդ, և զհանգուցեալ եղբայրն իւր՝ զՄուսեղէն, և զմիւս այլ եղբայրն իւր՝ զՍտեփաննոս, և զամենայն հա-մաւրէն ազգակիցս իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս, և մեզաց թողուքիւն խնդրեցէք։ Ընդ նմին և զսրբազան կրաւնաւորն՝ զԿոստանդին փիլիսոփա, որ զաւրինակս շնորհեաց, և զծնաւղն իւր. և ով յիշէ սրտի մտաւք Քրիստոս զինքն յիշեսցէ, [և զնուաստ գրչակս | | | Սա]հակ]։**

գ

368 բ

...Դարձեալ կրկին աղաչեմ զձեզ, ով եղբարք, անմեղադիր լինիք մեր տխմարութիւնս, և խոշորութիւն գրոցս, և սխալանաց, զի մեր

* «Զ»աւղոսն-ը գրված է այլ ձեռագրով՝ տողամիջում։
** Փակագծերի մեջ բերվածը գրված է ստորին լուսանցքում։

կաբս այս չափ էր, զի ի ծերութիւնս ուսաք զայս խոշոր գրիկս։ Գրեցաւ գիրք երկոտասան մարգարէիցս ի թուիս Հայոց ՉԿԱ. (1312), յամսեանս սահմի, ի վանքս որ կոչի Փերնոց, ընդ հովանեաւ սրբոյ մաւր մերոյ Սիոնի... և ի թագաւորութիւն Աւշնի և որ[զւոյ նո]ր[ա] Լևոնի | | | *

121.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վրայ. Քանդարան, № 40 (անս նաև 1328)

Գրիչ՝ Բեներ

վայր՝ Նղեզեաց գաւառ, Նորավանք

... Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թվ. ՉԿԱ. (1312), ձեռամբ սուտանուն կրաւնաւորի Բենեդի, ի գաւառիս յՆղեզեաց, ի վանս, որ Վերի Նոր|ավ|անս կոչի, ընդ հովանեաւ սուրբ Սիոնիս և Մաւրս լուսոյ, յաոաջնորդութեան սուրբ բարունապետիս Դաւթի** և եղբաւրորդոյ իւր Կարապետի։

Արդ, աղաչեմ զձեզ, յով [ձր] ժառանգէք [կա]մ ընթեռնոյք, զվերջասացեալսս յիշեցէք, և աստուած, որ առատն է, մեզ և ձեզ ողորմեսցի առհասարակ, և խոշորութեան և սխալանաց մի մեղադրէք, զի աստուած զկարն խնդրէ, յիշել լիցիք ի Քրիստոսէ աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

122.

ՄԱՇՏՈՑ

Երևան 8266

Գրիչ՝ Սարգիս

120 ա ... Ասասցիք լի բերանով թէ Քրիստոս աստուած ի քո յահեզ դատաստանին ողորմեայ Սարգսի գրչին, և ծնողաց նորա, և վարդապետի նորայ, և ամենայն երախտաւորաց, ամէն. և Քրիստոս աստուած ողորմեսցի մեզ և ձեզ առհասարակ, ամէն։ Գրեցաւ թվիս ՉԿԱ. (1312), ի յայսմ ամի ի Քրիստոս վոխեցաւ տէր Ցակոբ, և մեք զգիրքս ի ս[ո]րայ տունս գրեցաք, և սոքայ շատ ծառայութիւն արարին մեզ։ Քրիստոս աստուած, ի քո յահաւոր և ի միւսանգամ գալստեանդ, ողորմեայ տէր Ցակոբայ, և Տիկնացց տիկնայ, և տէր Բարսեղին, Գրիգորիս վարդապետին, և տէր Աբրահամայ, ամէն... և աւգնական լեր
120 բ պարոն Հապաշին և || Բարողին, աւգնական լեր սոցայ յամենայն վտանգ[է]՝ ի նստել ի տան և գնալ ի ճանապարհի, ի ննջել և յառնել,

* Թերթ է ընկել։

** Ինագրում՝ Հդտի.ɔ։

աջ քո հովանի և պահապան լիցի ոտցայ, ղի մի ոսսանևսցին սոքա յայսմհետէ մինչև յաւիտեան...։*

123.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6273, էջ 121 (Արաբկիրի եկեղեցի)

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Մեծոփայ վա՞ճ

...Արդ, դրեցաւ աստուածախօս և աւետալուր սուրբ աւետարանս յամի ՉԿԱ. (1312), ձեռամբ հոգնամեղ և սուտանուն կրօնաւորի Աստուածատրոյ, ի խնդրոյ աստուածասէր և հաւատացեալ կնոջ, որ անուանի Մելիքայ...։ Ցիշեցէք զՄելիքայ, որ ստացաւ զայս ի հալալ արդեանց։

Արդ, տուաւ սա սուրբ Աստուածածնիս Մեծոփայ, մի ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սորա պատճառաւ իմիք, ղի մի պատիժս կրեսցէ ի սուրբ տաճարէն։

124.

ՇԱՐԱԿՆՈՑ

Վիեն. 202. Տաղ. ծուց. էջ 524 (տես նաև 1617 թ.)

Գրիչ՝ Խաչատուր

ա

165 ա ...Արդ, աղաչեմ զձեզ պաղատանաւք, ով մանկունք Սիոնի, որք հանդիպիք այսմ մատենի տեսութեան, յիշեսջիք ի սուրբ և ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր զանարժան Խաչատուր՝ զյետինս ի կրաւնաւորսն, և զծնողսն իմ, և դուք յիշեալ եղիջիք, ամէն։ Գծագրեցաւ ձեռամբ իմով թվ. ՉԿԱ. (1312)։

բ

23 ա Ք[ր]իստոս աստուած... ողորմեա ծնողացն իմոց՝ Սարգսի և Շամամի, և ինձ՝ ամենամեղ զրչի։

---

* Ձեռագիրը նորոգված է ժէ. դարում, շատ թերթեր գրված են նորից. հիշատակարանից պահպանվել է միայն սույն՝ 120 թերթը, որը գտնվում է այժմ ոչ պատշաճ տեղում։

125.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան 7842 (Տես նաև 1603 թ.)

Գրիչ՝ Պաւղոս
վայր՝ Գլաձոր

335 բ ... Արդ, ես՝ տկարս ի զաւրեղս և ապիկարս ի վարդապետս, չընչինս ի յիմաստս և փանաքիս ի քերթողն՝ Պաւղոս վարդապետ, ծրեցի իմով տկարութեամբ զսուրբ աւետարանս յոլով աշխատանաւք և քրտնաջան տառապանաւք, ի զաւառիս, որ Վայոձոր ասի, և ի մեծ մենաստանիս, որ Գլաձոր յորջորջի, ի գրան սուրբ Նախավկայիս, ի թվականութեանս հայկազենս սեռի Չ Կ Բ· (1313), ի վարժապետութեանս մերոյ մեծի Նահապետ, յիշխանութեանս զաւառիս՝ Պապաքին և
336 ա Էաչո, հայրապետութեանն Կոստանդնոյ Կաթուկցւո, թագաւորութեանն Աւշնի և զանութեանն Խարբ ‖ անդին, որ ճշմարիտ կոչեցաւ նա իշո ծառա, զի ||| * և նա զօրէնսն Քրիստոսի ոչ ծանեաւ և բազմիմաց հնարիւք զերծեաց զազգս մեր յամենայն կարասեաց, զի պահանջեաց հարկս ի յազատաց և յաւտարաց, զոր ի սմա յընտեմաբանեալ բանիցս իմասցիս ցյոլովն...**

126

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6273, էջ 122—123 (Ի Վանս Սքանչելագործ)

Գրիչ՝ Մխիթար
վայր՝ Մեծոփայ վանք

Ցամի Չ Կ Բ. (1313)-երորդի Հայկազեան տոհմիս տումարի, ի փառս զուգական և համապատիւ սուրբ երրորդութեան՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, զրեցաւ աստուածային այս մատեան զանձ անկապուտ և մարգարիտ պատուական..., յանապատիս Մեծոփայ Վանս առաձայնելոյ, ընդ հովանեաւ սուրբ մօրս լուսոյ Աստուածածնի, յաւագնորդութիւն տեղւոյս տեառն Սարգսի, ի տաճարին սրբազան քահանայի Բարսղի կուսակրօն աբեղայի, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, օժանդակութեամբ մերոյ հոգևոր հարազատի և սրբազան ծովհաճնէս վարդապետի, ձեռամբ պիտականուն Մխիթար վարդապետի·

* Երկու բառ անընթեռնելի, ջնջված լինելու պատճառով։
** Շարունակութիւնը զուրկ է պատմական արժեքից։

ի դառնութեան և ի վշտաբէր ժամանակիս, յորում վիշտս վտանգի և աղէտս տարակուսանաց յոգունս հասուցանելով քրիստոնէական ոճոյս ազգաց անօրինաց՝ ուրացելոց ի փառաց որդւոյն աստուծոյ, նեղութեամբ, տառապանօք, հարկապահանջութեամբք և այպանմամբ ծաղանօք։ Որոց հատուցէ նորին ըստ գործոց նոցին հզօր թագաւորն Քրիստոս եօթնապատիկ ի ծոցս նոցա, լսել զհեծութիւնս կապելոցս ի տոհմին մեղաց, և արձակել զորդիս մահապարտաց յանդորը և ի խաղաղ նաւահանգիստ, ողորմութեամբ և գթութեամբ իւրով։ ՁՄԼԺԲՏՐՆ պիտակ անուն վարդապետի ողորմեա աէր Քրիստոս ի քում գալստեան, բարեխօսութեամբ մօր քո և կուսի։ Որոց և ես ըստ իմում կարի կցորդելով՝ անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ, Բարսղ կրօնաւոր, ստացայ զսուրբ աւետարանս ... և ետու զսա բաղձանօք որդի ի վանս Արծկէոյ, ընծայ սքանչելագործ սուրբ Նշանին, ի լուսաւորութիւն և ի հրճուանս մանկանց սուրբ եկեղեցւոյ, որք աստանօր կրօնաւորեալք մերկամարմին մրցանօք, առ ակնկալութիւն յուսոյ տեառն ղինուորեալք։*

127

ՁԱՇՈՑ

Երեան 1890

Գրիչ՝ Դաճիէլ
վայր՝ Աղթամար

299 բ *Աստանաւր սկզբնաւորեալ լուսաեղձ և շնորհաճիր տառս այս ի ստոյգ և յընտիր աւրինակէ, որ ունի շարակարգեալ յինքեան զտաւնս տէրունականաց, նաև զյիշատակս սրբոց նախահարցն, և զհոգելից մարգարէիցն, և սրբոց առաքելոցն, ընդ նոսին և զճշմարտից միանձանցն և զքաջ և զարի զաւրավարացն, այլ և զսուրբ վարդապետացն և զքաջայաղթ մարտիրոսացն սրբոց։ Եւ զկնի այս ամենայնի ունի գծագրեալ զահմանադրութիւն սուրբ հարցն Մաշտոցի։*

Եւ աւարտեցաւ սա յամի եւթնհարիւրերորդի վաթսներորդի երկրորդի (1313), ի գեղեցկատիպ կղզիս Աղթամար, որ է տեղի ապաստանի, ընդ հովանեաւ ամենայաղթ և բազմայարմար սուրբ Խաչի, և սուրբ Նշանի, և աստուածամուխ սուրբ Գեղարդեան, և այլ միահամուռ սրբութեանցս, ի հայրապետութեանն տեառն Ներսեսի և տեառն Զաքարիայի, և ի խնդրոյ աստուածարեալ և սրբասէր կրաւնաւորի Թովմայի և եղբաւր նորին Առաքելոյ՝ միւս կրաւնաւորի, զոր յոյժ փափագմամբ ետ գրել զսուրբ գիրքս յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց՝ Անծրևի և Ղիզդաւռի, և եղբարց իւրոց՝ Մխիթարայ և Պարոնշա-

* *Եղբայրագիր ծածկագրով կարդացվում է՝ «Մխիթարայ»։ «Մ» և «Ր» տառանիշերի փոխարեն օգտագործված են նախորդ՝ «Ճ» և «Տ» տառանիշերը, իսկ ընդհակառակը, մյուսների փոխարեն՝ հաջորդ տառանիշերը, այսպես՝ Ն-ի փոխարեն Տ. Ի—Լ, Թ—Ժ, Ա—Բ, Ց—Ն։*

եի և Վարդերեսի, և այլ ամենայն ազգատոհմին՝ կենդանեաց և հանգուցելոցն ի Քրիստոս։ Եւ արդ, ես՝ ունայնս և թափուրս ի գործոց բարեաց, անարժան կրաւնաւորս Դանիէլ, բազմամեղ և տխմար գրիչս, տեսի զսէր և զվախագ սորա, որ առ հոգեւորսն և ըստ իմում [|]

1?8.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Մանչեսթր, Ms. Arm. 10, Տէրայր վրդ. 8 Թղթ. 118, էջ 155—162
(տես նաև 1637 թ.)

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Տայոց երկիր՝ Շիկբակ գիւղ

ա

255ա Փառք... որ հասոյց զանարժանս և զմեղաւորս ի վերջս գրոցս սուրբ աւետարանիս, թուիս Հայոց ՉԿՀ. (1313), յամսեանն ի սեպտեմբերի Ը. (8), ի թագաւորութեանն Հայոց Աւշնի և ի կաթողիկոսութեանն տեառն Կոստրնդ[ն]ի, ի յերկիրն Տայոց, և ի յերկրակալութեանն պարոն Թադալիճ, ի դեղն, որ կոչի Շիկբակ։ Ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զաւրավարին։ Աղաչեմ զձեզ սուրբ ընթերցողք, որ անմեղադիր լինիք ախտարութեան գրչիս, զի անիմաստ էի և տեղս խալապայ էր։ Արդ, որք կարդայք կամ աւրինակէք, մեղաց թողութիւն խնդրեցէք Հազարշահիճ, և կենակցին իւրոյ Թամամ խաթունին, և ծնողաց իւրոց՝ Խայաքին և Խեր խաթունին և Հաւքայ խաթու[ն]ին, և քուրոջն իւրոյ Տիկնացին ողորմեսցի Քրիստոս աստուած յիւրում գալըստեանն, ամէն։ Եւ Հազարշահի հաւրն Մխիթարա հանդիստ և ողորմութիւն պարգեւեսցէ Քրիստոս աստուած, զի յոյժ վափաէանաւք և ուրախութեամբ սրտիւ աւգնական եղեն մեզ ի սուրբ աւետարանս։ Քրիստոս աստուած թողութիւն արասցէ սոցա յիւր միւսանգամ գալստե[ա]ննն, ամէն։ Եւ ինձ մեղաւորիս Յովաննիսիս՝ սուտանուն քահանայիս, որ միայն զանունս ունիմ և ոչ զգործն, մեղաց թողութիւն խնդրեցէք, աղաչեմ զձեզ։ Եւ ծնաւղաց իմոց Կոստրնդնա և Միքա աիկնայ, և կենակցին իմոյ Վարդ տիկնայ, և եղբարց իմոց և ազգայնոց։ Եւ որ զմեզ յիշէ և մեղաց թողութիւն խնդրէ, յիշեսցէ և զնա բարեգութն աստուած, և թողցէ զամենայն յանցանս նոցա աստ և ի հանդերձելումն, ամէն. եղիցի, եղիցի։

բ

2ա Ես ծառայ աստուծոյ Յովաննէս մեղայպարա սուտանուն քահանայ, ո[րդի Կոս]տանդնեայ, որ սկսա շնորհիւ աստուծոյ, և կարողութեամբն Յիսուսի Քրիստոսի [աւարտեցի] բզսուրբ աւետարանըս, ի յ[ամսե]անն ի մահ[կի] ԻԳ. (23), յաւուր երկուշաբաթի՝ ի մէջ[ւ]էն։ Հրամանաւ [և ձեռնտու]ութեամբ Թամամ խաթունին, որ աւգնական եղև ի գինս թղթոյն, ու ի կապելն, ու ի ծաղկելն, յիշատակ հոգոյ

իրում, յաւժար վախճանաւք, վասն փրկութեան անձին իւրոյ և վասն յուսոյ արքայութեանն Քրիստոս աստուած թողեալ զյանցանս մարդոյն այնմիկ, որ թողութիւն խնդրէ Թամամ խաթունին...։

գ

258 բ Ես. մենք [*] Վխկացի [իմա՝ վահկացիք] աւետարանս գնեցա[ք] ի դերութենէ դեղով, տվաք Լ. (30) ֆլորի, սուպաշուրէն Մելփիզե Տեկիէ*, տանուտիրութէն Ղանտի Մարաշին, մեր հալալ մալովն առաք ղրաք ղուռն ի սուրբ Նիշանին, ով որ կարդայ աստուծոյ մեր մեղացն թողութիւն խնդրէ, սղամարզկանցն՝ արևշատութիւն, աւետարանս զեղի է, ոչ ով դավեյ[ք]ար չկայ, ձեռայդիրս Աւետիք իրիցուս։**

դ

254 ա Ես Դաւիթս. տանուտէր էի. Վխկայ. սիրէր ի. գուսի գեղէ. գայ գիւղս.*** հարս. տանի. ժ։. (12). ստկէն. Զ.(6). թողել է, Զ. (6). կառնում. գեղիս. լման. թողել եմ, ով որ հարսն ան առնու.[ո]վ որ տանու այլնի. զայս զէնս, սուրբ ավետ[արա]նս. նորայ խոով կենայ։****

129.

ՄԱՇՏՈՑ

Երևան 2583

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Արիժոր

175 ա ...Գրեցաւ իմաստասիրս տառս սուրբ հաւրն Մաշթոցի յանապատիս, որ կոչի Արիժոր, ընդ հովանեաւ սուրբ Ծարութեան, և սրբոյ Խաչին, և սրբոյ Կարապետին, և սրբոյն Լուսաւորչին, յառաջնորդութիւն Ստեփանոս վարդապետի՝ ընտրեալ ծառայ[ի] Քրիստոսի, ի թուականիս հայոց Չ Կ Բ. (1313)։ Բայց կատարեցաւ գիրքս յաւուր մեծի հինգշաբաթի, յորում եղեն խնդութիւնք երկնաւորաց և երկրաւորաց, ձեռամբ յիմարի և տառապեալ գրչի Սարգսի, ի վայելումն անձին Ցովաննէս քահանայի՝ բարեպաշտի և մարգասիրի, [որ] ստացաւ զսայ եռայփափագ և ջերմ սիրով և յոյժ ցանկայր սորայ, զի ուր սայ յիշի և ընթեռնու, սովաւ յիշի և յորջորջի անուն սորայ ի Քրիստոս։ Բայց արդ, աղաչեմ զամենիսեան վասն սիրոյն Քրիստոսի, որք հանդիպիք սմայ՝ յիշեցեք զՑովաննէս քահանայ և եղբայրն իւր զՄարաիրոս, զի է բարեպաշտ տանուտէր՝ աղքատասէր և աստուածասէր, և զմիւս եղ-

* Իմա՝ Մելփիզէկ Տեկիէլի չրպեաւթյան ժամանակ։

** Հիշատակագրության ժամանակի մասին նկարագրողը ոչինչ չի ասում, միայն հայտնի է, որ գրված է ձանվարժ բոլորգրով։

*** Իմա՝ գիւղաքաղաք, այսինքն՝ հայս գյուղից՝ վահկայից։

**** Արտագրում ենք նուիրնութեամբ, չփոխելով տաբօրինակ կետադրությունը։

բոյը սոցայ՝ զԱմենաւագն, որ վոխեցաւ ի Ջրխատոս, և զհայր սոցայ և զմայր՝ զվոխեցեալսն ի Ջրխատոս, և զյիմար գրիչս, որ ի հոգևորն ունայն և ի ձեռագործս յանդուգն, և զծնողսն մեր...։

130.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Սերաստիա, Ս. Նշան, № 2. Հ.Ա. 1023

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սերաստիա

ա

504 *... Արդ, ես Նուաստ ծառայ ծառայիցն աստուծոյ...* Ստեփաննոս *ապիկար քահանայ, ի փափաքող եղէ այս սուրբ մատենիս և աստուածաշունչ տառիս, և թէպէտ որ կարի անվարժ էի ու յոյժ անտեղեակ արհեստի գրչութեան, բայց իղձ սրտիս և տենչումն ոգոյս ստիպեաց զիս, և ես յասաւելն քան զկարն իմ նկրտեցայ և յանձն առի, իբր զհմուտ քարտուղարս ստացայ դհամարձակութիւն, և ոխմամբ անձամբ գրեցի զսուրբ տառս, և լցի զփափաք անձին իմոյ։ Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց Ջ. երրորդի Կ. երրորդի և յերկրորդի (1313), ի հոյակապ և յականաւոր մայրաքաղաքս Սերաստիոյ, առ զուրս սրբոյ տաճարիս սուրբ Փրկիչ կոչեցելոյ, որ է հանդէպ վկայարանին զերահոչակ և սքանչագործ արեամբ ներկեալ վկային սրբոց Քառասնիցն՝ մեծի կաթողիկէ եկեղեցւոյն, որ գանձն աստուածային՝ նշխարք սրբոցն անդ կան ի պահեստի։ Եւ եղև դրաւ սորա... ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և ի թագաւորութեան բարեպաշտին Աւշնայ, և յեպիսկոպոսութեան մերոյ նահանգին տեառն Ստեփաննոսի։ Արդ, գրեցաւ սա ի գաւն, և ի դժուարին, և յանքարի ժամանակիս, զոր յոյժ նեղիմք յանաւրինաց, ի յարտաքին չար գազանաց և ոչ նուազ հասանեն նեղութիւնք...։*

բ

602 *... Փառք... որ զաւրութիւն ետ գծողին՝* Ստեփաննոս *քահանային՝ ի սմա բազում աշխատողին, և ծնողացն իւր՝ Սերուճին, այլ [և] զաւրիւնակն շնորհողին՝ պարոն Աւետիք Եքսարխոսին, և որք արժանի զմեզ վարկանին մտաւք ասել զտէր ողորմին, յիշել յայնժամ և եղիցին...*

Եւ արդ, գրեցաւ մատեանս այս աստուածախաւս մարգարէին Մովսէսի, որ է գիրք Արարածոց և Թագաւորութեանց, ի թուիս յաւիտենից, որ է Ադամ՝ ՅՊԻԱ. (6821), և ըստ հայկազան թուականի ՉԿԲ. (1313), յամսեանն յուլիս ԺԸ. (18), յաւուր չերեքշաբթի, և տանուտէր Ոսոյն, ընդ հովանեաւ սուրբ Փրկչին, ի մայրաքաղաքս Սերաստիայ, ի թաղս, որ կոչի Մարբ, ի թագաւորութեան Հայոց պարոն Աւշինի, և յառաջնորդութեան տէր Կոստանդեայ, և յեպիսկոպոսութեան տէր Ստեփաննի...։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ աւրինակէք, մեզաց Քողուքիւն խնդրեցէք ստացողի սորայ, և անիմաստ գրչողի՝ Ստեփաննոսի անարժան քահանայի, և մաւր իմոյ Տիկնացի, և խաչքին իմոյ Մարիամի, և զաւակին իմոյ՝ ի Ք[րիստոս] փոխեցելոյն Սիմոնի, ընդ նմին յիշեսջիք զՅովհաւր եղբարք իմ՝ զՍտեփաննոս քահանայ, որ աւգնական եղև ի քանոնելն և ի քանաք եփելն, և սղալանաց զրոյս անմեղադիր լինել [աղաչեմ], զի կար մեր այս չափ էր...

131.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ

Երևան 821 (Տես նաև՝ 1596 Ք.)

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ակներ

ա

74բ *Կատարեցաւ կցուրդք սաղմոսածք Եփրեմի երանելոյ, ձեռամբ անարհեստ գրողի Գրիգորի՝ սպասաւորի Ակներոյ Վանից, ի թվ. ՉԿԲ. (1313). ի սոյն ամի սկիզբն արարաք շինման բերդին, որ ի Քարտիզկնոցն,*

բ

242ա *Բժշկեա՛ տէր աստուածային սպեղանաւք զո՛ղիրխայթեալ վէրս հոգւոյ գրողական սուրբ մատենիս՝ Գրիգորի սպասաւորի սուրբ անապատիս Ակներոյ, նաև զայնոցիկ, որ զքով աստուած-ողորմի մեզ ասիցեն,*

132.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա, Տ.—Ավետյան, Ցուցակ, էջ՝ 142 (տես Նաև 1456 Ք.)

Գրիչ՝ Ներսես Կլայ[ե]ցի
վայր՝ Ակներ

ա

429ա *... Շնորհիւ տեառն ակա և ողորմութեամբ նորին աւարտեցաւ լուսափղձ սուրբ և տենչալի աւետարանս տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Ք[րիստոս], ձեռամբ յոգնամեղ գրչի Ներսես Կլայեցւո մեղաւորի, ի վայելումն անձին իմոյ և ի յիշատակ հարց և եղբարց իմոց՝ գնացելոյն ի Ք[րիստոս]։ Արդ, զրեցաւ ի յանապատս, որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ Նշանին, և սուրբ Յակոբայ, և այլ աստուածահաւաք սուրբ նշխարաց։ Ի թագաւորութեան Աւշնի բարեպաշտի և ի հայրապետութեան տեառն Կոստանդնոյ Կեսարց[ւոյ], ի թուին ՉԿԲ. (1313)։*

Աղաչեմ զամենեսեան, որ աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի տէր ղդրող, և ղկաղմող, և ղննջեցեալս մեր, և որ յիշողն է բարեաց՝ մեղ և ձեղ ողորմեսցի, ամէն։

133.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենհրիկ 108, ցուցակ Ա. 708

Ստացող՝ Կարապետ
վայր՝ Կիլիկիա, Միակեցեր ուխտ

638 ա Ի Չ. երորդի Կ. երորդի երկրորդի (1313) Թուաբերութեան տուժամբի Հայոց, յառաջնորգութեան տէր Կոստանդնի, և Թագաւորութեան կիւլիկեցւոց Նահանգիս Ուշնի, ես՝ Կարապետս, նուաստս և յետինս յորդիս եկեղեցւոյ, հանդերձ հարազատ եղբարբ իմով Թորոս քահանայիւ, ցանկացաւղ եղաք այսմ լուսայեղձ և կենսակիր քառաջահեան մշտալոյս բանից տեառն մերոյ Յիսուսի Ւրիստոսի՝ աւետեաց աւետարանիս. և ստացաք զսա ի վայելուչն անձանց և ի յիշատակ հոգւոց մերոց և ծնաւղաց։ Մանաւանդ զդծաւղ աւրինակիս և զհանճարեղ գրիչն Ռըստակես յիշեսջիք։ Գրեցաւ սա ի սուրբ ուխտս, որ կոչի Միակեցեր, բնդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Կարապետիս. և Ւրիստոսի աստուծոյ մերոյ վառք յաւիտեանս։

ՉԿԴ 1314

134.

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Երևան 9150*

Գրիչ՝ Պաւղոս
վայր՝ Գլաձոր

... Ցամս Թուաբերութեան ժամանակաց հոլովման շրջագայութեան ամաց Հայկազեանս առվմարի ՉԿԴ. (1314), ես՝ Պաւղոս, ըստ շնորհատուր անուանն սոսկ վարդապետ կոչեցեալ՝ աշխարհաւ Կիլիկեցի, ի սուրբ ուխտէն Ակներ կոչեցեալ, ըստ տատանման մտաց արզարև հողմով մանգուխեան իմոյ, նաև յաղագս փափագման իմաստ ‖ ասիրական արհեստից տարաշխարհիկ եղեալ ի կայս և ի կոյս արևու, եկեալ բնակեցայ ի կողմն նահանգիս Սիւնեաց, ի գաւառս Վայոցձոր կոչեցեալ, ի վանս Գլաձոր. առ ոտս սուրբ երիցս երանեալ րաբունապետին Եսայեայ, որ իբրև զարեգակն լուսաւորեալ պայծառացուցանէ զբոլոր ազգս և զեկեղեցիս Հայաստան աշխարհիս, զոր շնորհեսցէ զսա Քրիստոս աստուած եկեղեցւոյ իւրում սրբոյ ընդ երկայն աւուրս։ Եւ ընդ հովանեաւ ամենաղաւար տիրոյն Յիսուսի գրեցի զսուրբ աւետարանս իմով ձեռամբ, վատեալ ի լուսոյ և պակասեալ ի զաւրութենէ, դողդոջեալ ձեռաւք և մտաւք, հրամանաւ և ծախիւք մեծազարմ և իշխանաշուք լուսաբողբոջ մանզանն ‖ Տարսայիճ կոչեցեալ, իսկ ի շնորհս հոգւոյն սրբոյ Ստեփաննոս անուանեալ, որ է ըստ հայրենի նախնեաց՝ յազգէ և ի շառաւեղէ Որպիլեանց, իսկ ըստ մայրենեաց՝ սերեալ յազգէ մեծ ամիրսպասալարին Զաքարէի, իսկ յորովայնէ մաւր նուիրեալ աստուծոյ, տուեալ զանձն ի կրթութիւն գրոց, և աստուածային աւրինացն և պատուիրանացն հոլու և հպատակ, նաև յիմաստասիրական արհեստս յոլով ժամանակս գեգերեալ ընդ թևաւք խնամոց սուրբ և երանաշնորհ րաբունապետին և տիեզերալոյս վարդապետին Եսայեայ. նաև աստիճանի սարկաւագութեան և քահանայութեան արժանացեալ. և հանդերձեալ է կոչմամբ և ընդրութեամբ սուրբ հոգւոյն ‖ ելանել ի պատիւ և յաստիճան վարդապետութեան և եպիսկոպոսութեան տանս Սիւնեաց, զոր ընգալցի տէր և յաջողեսցէ ի հաճոյս կամաց իւրոց, ի գարդ և ի փառս կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ։

Մրդ, հրամանաւ վերապատուեալ տեառնս իմոյ՝ տէր Ստեփաննոսի մականուն Տարսաիճ, գրեցաւ սուրբ աւետարանս յընդիր ընդիր երանգոց և ի յոսկւոյ սրբոյ, ի վրկութիւն հոգւոյ իւրոյ, և ի վայելուչս անձին իւրոյ և իւրոց զարմից, քրիստոսազաւր իշխանացն՝

* Պահպանվել է միայն հիշատակարանը։ Չնում պատկանել է Ծ. Դադյանին և նկարագրված է նրան պատկանած ձեռագրերի ցուցակի Բ. հատորում։

մեծ Ամիր Պաւրքելին և Պաւղտային, և լուսազարդ հարազատացն իւր՝ Շահիշահին, Ելիկումին և Ադրաւդին, և քրիստոսասէր և գերամեծար
ե ա ծնաւղին իւրոյ՝ պարոն Գոնցային, || որք են իշխանք և տէր նահանգիս Սիսական, զոր տէր Ծիսուս յաջոդեսցէ նոցա յամենայն բարիս, ահարկու և յաղթող արասցէ ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի, աջն հայրական և բազուկն տիրական, որ տարածեցաւ ի խաչին, հովանի և պահապան եղիցի նոցա ի տուէ և ի գիշերի, գնալով դաւրութենէ ի զաւրութիւն և ի փառաց ի փառս, ի փառս փառաւորեցելոյն Ծիսուսի,

Արդ, առաչեմ զամենիսեան միջնորդութեամբ սուրբ աւետարանիս, որք պատահիք այսմ լուսանրկար աստուածաբան կտակիս, յիշեցէք զգեռաբողրոջ և զլուսազարդ պատանին զտէր Ստեփաննոս, հանդերձ բոլոր զարմիւք իւրովք, ի մաքրափայլ սուրբ ագաւթս ձեր՝
ե ր առաջի մեծի զենմանն Քրիստոսի, || որ խորհրդաբար մեռանի և է միշտ կենդանի, Ծիշեսջիք աղաչեմ և զհայր սորին՝ զմեծ իշխանաց իշխանն, զհանգուցեալն առ Քրիստոս զպարոն Զալալն, և զհաւրաքոյրք սորա, զամենաւրհնեալն ի կանայս՝ զպարոն Առփալն և զՄամէթեն, և զմայր սոցին՝ զպարոն Մինա խաթունն, Այլ և զհաւրեղբայր սորա՝ զտէր Ստեփաննոս Նեարապալիա Սիւնեաց նահանգին և զպարոն Ելիկումն, որ վաղ մահուամբ ի տիս մանգուբեան փոխեցան յաշխարհէս առ ստեղծաւղն և յոյսն ամենեցուն Քրիստոս, զոր գասեսցէ զնոսա աստուած ընդ սուրբ և երջանիկ իշխանացն և ի գաս սուրբ հայրապետացն, Եւս առաւել աղաչեմ յիշել աղաւթիւք զսուրբ և զերանա
ե շնորհ բարունին զՄարգիս, զգաստի || արակ և զնուցիչ տեառն Ստեփաննոսի, որ ի մանգուբենէ մինչ ի յարբունս հասակի, մեծաւ ջանիւ և աշխատութեամբ, վաստակեալ ի սնունդ տիրապէս, և յուսումն, և ի հրահանգս հոգևոր և մարմնաւոր, հատուսցէ նմա տէր վարձս բարեաց ընդ միոյն բիւրաբապատիկ՝ աստ և ի հանգերձելումն։

Եւ արդ, ես՝ մեղաւք խաւարեալս և ի տոռունս մեղաց կապեալս կրկին չղթայիւք՝ Պաւղոս անուն վարդապետ, ըստ կարի իմում մեծաւ աշխատութեամբ, վատեալ ի լուսոյ և պակասեալ ի զաւրութենէ, ղոզղոչեալ ձեռաւք գրեցի զսա և բնձայեցի իբր զակն անգին և պատուական ի ձեռս պսակին եկեղեցոյ ի տիս մանգուբեան, զոր տացէ Քրիստոս աստուած վայելեալ յամերամս ժամանակաց, Այլ և մեծաւ բաղձանաւք և արտասուաբաթոր բղձիւ անգեալ առ ոտս պատահելոցգ սմա, եղբայրական ցաւակցութեամբ յիշել զնս աղաւթիւք, և ծովացեալ և անհուն մեղաց իմոց ի Քրիստոսէ թողութիւն խնդրել, և ծնողացն իմոց և ազգականաց. և ինքն՝ բարեգութն և ողորմածն աստուած, ձեզ շնորհեսցէ թողութիւն մեղաց, և աղաւթիւք սուրբ աստուածածնին և ամենայն սրբոց զյիշեցեալքս և զյիշողքդ՝ ամենայն հաւատացելովք Քրիստոսի, միութեամբ միապէս միացուսցէ ի լոյսն անշիջանելի՝ ի հայր և յորդի և ի սուրբ հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

135.

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

*Ե. Լալ. անտիպ. 485(72)**

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Թաւդոյպաւլիս

Արդ, ի ժամանակաշար չափոյն Հայկազեան ՉԿԴ. (1314), և ի կենարար յայտնութենէն աստուծոյ բանին ան մեզ ՌՅԺԶ. (1316), և յելանելո նախաստեղծիցն ի վայելչական վայրէն մինչև ցայժմ ՅԶ. և ԼԹ. (6739) ամ, զոր ձրիւք և պարգևաբաշխութեամբ ողորմածին աստուծոյ, գրեցաւ ձեռամբ վհատեալ և տառապեալ սգոյ Գործք Առաքելական և հրաման[ս] աստուածական, ի վայելումն և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ։

Արդ, գրեցաւ սա յընտիր և ի ստոյգ աւրինակէ, ի քաղաքիս, որ կոչի Թաւդոյպաւլիս, ընդ հովանեաւ սրբոյ Ստեփաննոսի Նախավկայի և այլ սրբոց, [ի ձեռն] անարժան և մեղապարտ գրչի Սարգսի, որ է ունայն յամենայն բարեաց, խորհրդոց և ի գործոց։

Արդ, աղաչեմք զամենեսեան, ով որ կարդայք և կամ աւրինակէք, յիշեցէք ի տէր ղբարեմիտ և զամենայնի առաքինագործ զընտրեալ կարգաւորն, զկուսազարդ կրաւնաւորն, և զծնողս իւր, և զամենայն ազգսինս իւր, ևս առաւել զՄխիթար աբեղայն՝ զհոգեւոր եղբայրն իւր՝ զիոխեցեալն ի Քրիստոս յայսմ տարւոջս, և զմարգարիտն պատուական՝ զՍտեփաննոս քահանայն, և զՅովհաննէս, և զհայրն իւր՝ զձեռով նկարեալն հոգոյն ճշմարտի, և զընտրեալ վարդապետս իւրեանց, որք զարդարեալ էին ամենայն առաքինութեամբ և նմանեալ առաջին սրբոց, քանզի ակն ունեն ամենեքեան սոքա աղաչանաց ձերոց և ողորմութեան բարեբարին աստուծոյ, զի արժանաւորաց զսոսա հանդիպման երկնաւոր փեսային, նորաճաճանչ և անպատում բարեացն և նորոգման յաւիտենական կենացն, ամէն։

Դարձեալ, կրկին աղաչեմ և երեսաստղ մաղթանաւք խնդրեմ ի քրիստոսասէր ընթերցողացդ, յիշել ի տէր զպաթծանաց հայն իմ՝ զՆերսիկն, և զմայրն իմ՝ զՇնոֆոր տիկին, և սոցա ևս խնդրեցէք զՔրիստուէին հոգոյ և մարմնոյ, ամէն։

Նա առաւել յիշեցէք ի տէր զընտրեալ քահանայ զԳրիգոր՝ պարծանաց եղբայրն իմ, և զհոգևոր եղբայրս իմ՝ զՆերսն և զԿարապետն՝ զբազմաշնորհ սարկաւագունսն։

Բայց և գրուիքիւն սորա եղև ի թագաւորութեանս Հայոց Աւշրնի և ի գահուիքեանն ազգին Իսմաելացոց Խարպանդաին, ի նեղ և ի զառն ժամանակիս, որ անգամ ազգս Հայոց ընդ լծով հարկի, և չկայ յոյս ապաւինի և ոչ տեղի ապաստանի. և էր աշխարհ յամենայն ի տառապանք և ի յարկապահանջութիւն. և խպատ նուաղեալ էր ազգս Հա-

* Լալայանի անտիպ ցուցակի ինչպես այս, այնպես էլ մյուս հիշատակարանները աղտագրված են բազմապիսի սխալներով, բառերը ճիշտ չեն անջատված, կան տառասխալներ և այլն, դժվարությամբ է հնարավոր լինում վերծանել։

յոց։ Եւ ի քաղաքիս յայսմիկ [ի Թեւդոպալիս] քակեցին եկեղեցիք բաղում, և ոմանք, թողեալ զհաւատս որ ի Քրիստոս, և զնացեալ դհետ անօրինաց Իսմայելացոց տղղի. և այլք, վաճառեցին զտղայս իւրեանց, և ինքեանք վախուցեալք յայլեայլ տեղիս, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի. ե այլ բաղում վիշտս ե տառապանս, որ կայր ի վերայ աշխարհի վասն մեղաց մերոց։

Արդ, յայսմ տարւոջս եկն մորեխ սաստիկ ի վերայ երկրի, քանզի ոչ ոք ի մերում ժամանակիս ետես այնպէս և ոչ ի հնումն պատմեցին մեզ այսպէս խստագոյնս, քանզի զտասն աւուր ճանապարհն ի Ա. աւուրն անցանէր. և ի ԽԱ. (41) աւուրն այնպէս խստագոյն անցաւ, որ լեզու ոչ կարէ պատմել և ոչ ոք կարէ ընդ գրաւ արկանել զանթիւ բազմութիւնն մորեխին. քանզի իբր զհնձեալքս բազում, որ երթայ զաւրն և իջևանին ի դիշերն ամենայն, այնպէս գայր մինչև յերիկունն, և ի վաղիւն, յորժամ շողանա[յ]ր արևն՝ յառնէր. և յորժամ յառնէր, այնպէս էր նմանութիւն նորա, որպէս սաստիկ ձիւնոյ կամ զանձրևոյ, երթայր և բարձրանա[յ]ր, որ ոչ ոք կարէր տեսանել զրարձրութիւն նորա, և ի թանձրութենէ նորա փոխէր զոյնն արեգականն։ Դուչէր իբրև զգետ, անցանէր իբրև զքամի, և էր աշխարհ ամենայն ի տարակուսանս, լային դառնապէս, ողբային, կոծէին, զմոխիրն ընդ գլխովն արկանէին, ծեծէին զերեսս իւրեանց. և ոչ ուստեք եղև վրկութիւն, ըստ մարգարէին՝ աղաղակէին, և ոչ ոք էր, որ վրկէր զնոսա. կարգային առ տէր, և ոչ լուաւ նոցա, զի այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Ահա, տեսէք, թէ որչափ ցասումն և զառնութիւնն եկն ի վերայ մեր ըստ գործոց մերոց. ժամ մի երաշտութիւն, ժամ մի անձրև սաստիկ և ապականիչք, ժամ մի հողմք դիւականք, և այլք սաստիկք, և ձիւն, և սրհաւիրք ազդի ազդի, որ ըստ մեղաց մերոց խրատէ զմեզ աստուած, և մեք՝ անմիտ իբրև զանասուն, և ոչ իմանամք զկորուստ անձանց մերոց, այլ յոյս ունիմք զՔրիստոս Նազաւրացի, որ անուանի որդի Դաւթի։

Այս անցաւոր կեանքս անցանի,
Համբերողացն է երանի,
Զձեզ աղաչեմ արտասուելի,
Ցիշման առնել զիս արժանի,
Որ ինձ և ձեզ տէրն ողորմի
Եւ մեր մեղաց զիրն ջնջի. ամէն...։

136.

ՊԱՏՃԱՌ ՍԱՀՄԱՆԱՑ ԴՐՈՑ

Ալիշան, Հայապատում, էջ 525—526, Սիսական, էջ 135 և 138

Մտացող՝ Գրիգորիս Ցաղմաձեցի
վայր՝ Գլաձոր

ա

Ցելանելոյն Ադամայ ի դրախտէն մինչ ի յաւարտումն գրոցս էր թիւ ժամանակիս ՑՇԴ. (6504), զի յելանելոյն Ադամայ մինչ ի

Քրիստոս էր ՐՃՂՀ. (5198), և ի ծննդենէն Քրիստոսի ՌՑԺԶ. (1316) ամ. իսկ Թվ. Մեծ Հայոց էր ՁԿԳ. (1314)։

Ես Գրիգորիս, ըաղմավէր և ծանրամեղ ողի, փափագեալ յամենայն բարի և յետնեալ յամենայնի, ըստ տեառն բանին՝ սերմանեցի յապառաժի, ղի ի տղայական հասակի զվանական քահանայութեան բուռն հարի, ձեռնտուութեամբ հօր մերոյ Կոստանդեա. և յետ ամենայնի, ի կատարեալ հասակի՝ բայց յանկատար հոգւոյ, ցանկացայ ընթերցման գրոց՝ անիմաստ մտօք, ղի ոչ զիտացի զչափ գործոյս։ Եւ ղի ծննդեամբ էի յերկրէն Խարբերդոյ, ի գաւառէն Ցաղմաճ կոչեցեալ, և մայրական զրկօք եկեալ ի կաւառն եկեղեաց. և անդ անեալ ի մեծահռչակ վանքն Տիրուշէն, և անդ ուսեալ, որպէս ասացի, և կրօնաւորեալ. իսկ յետոյ, ի գալ վարդապետին Մալոխիսի ի Կիլիկիոյ բազում գրենօք, յորզորեալ և առեալ զմեզ բնակեցաք ի Դարաճաղեաց գաւառն՝ ի լեառն սուրբ և մեծ Լուսաւորչին մերոյ ամս վեց...

Գրիչ՝ Մխիթար Եգնկայեցի

բ

Ջմեղսանելիկ անձն և գղրժող ուխտի կրօնաւորութեան զՄխիթար՝ յիշ[ե]այ. հառաչ[ե]այ խոր, ո՛վ խոհեմ պատահոդ, ասելով, քաղցր Քրիստոս, Քո՛ղ, Քո՛ղ զյանցանս Մխիթրա, և զծնողաց իւրոց, և զվարդապետի իւրոյ զԳրիգորիսի։ Հասոյց [տէր] ի յաւարտ ձեռնարկութեանս այս՝ ի Թուիս ՁԿԳ. (1314) հայկազեան տումարիս։

Բայց զրեցաւ զիրքս այս առ ոտս մեծ վարդապետիս Եսայեայ, ի տեղիս որ կոչի Գլաձոր, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսիս, հրամանաւ մեծ և երանեալ վարդապետիս իմոյ Գրիգորիսի Եգնակայեցոյ՝ բանի սպասաւորի, ի վարժուհի անձին իւրոյ և ամենայն բանասիրաց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ խրթնայայտ կտակիս, յիշեսջիք զառաջասացեալ ուսուցիչն իմ զԳրիգորիս և զծնողան իւր, ընդ նմին և զհոգևոր հայրն իւր զԿոստանդին միայնակեաց, որ բազում առաքինութեամբ զարդարեալ է. իսկ հուսկ յետոյ քան զամենեսեան զաղազուն և զփցուն գրոցս՝ Մխիթար՝ սոսկ անուամբ կրօնաւոր, և զծնողան իմ, գնանզուցեալսն ի Քրիստոս՝ զՊատրոս և զՑիրանց, և զեղբարսն իմ՝ [Մաթէոս և Մարտիրոս] զկրօնաւորեալսն միայնութեամբ, և զքոյրն իմ նոյին հետևող, և զհօրեղբօրորդին իմ Վարդապատ, որ յետոյ եղև կրօնաւոր...*

գ

Որք ընթերցմամբ հայիք ի սա
Եւ հանդիպիք գանձու սորա,
Տես թէ քանի՞ աշխատեցայ
Ես Մխիթար գրիչ սորա.
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,

* Այս անունները, իբ շատ այլ ազգականների անվանց հետ, գրիչը հայտնում է մի ուրիշ հիշատակարանում, որն Ալիշանի կողմից չի հրատարակված։

Աւուրքըս ցուրա ու պարզկա,
Զարաախս բարձր ու կրակ չկայ,
Դոնեբս* չոր ու սպաս չկայ,
Եւ այս Գլաձորն ով դիաենայ.
Ես յոյժ նեղած ու ճար չկայ,
Եւ ես պանդուխա ու վհղար չկայ,
Ինձ հասուցումն յիշման արա
Վասըն փրցուն ղըրի սորա։

դ

Ես նուաստանուն Մխիթար կոչեցեալ ևզնկայեցի, գնալով ի մայրն իմաստից Գլաձոր՝ առ սուս Սսայայ վարդապատի ի վարժուհն ասաւածխմաստ գրոց, և յորդորեալ զիս վարդապետն իմ Գրիգորիս գրել զդիրս դոյս յոյժ աշխատանօք, և հանդիպեալ բարեմիտ և քաղցրատեսակ եղբօր՝ լցեալ ամենայն իմաստութեամբ, ես առաւել զրակնութեամբ և ծաղկողութեամբ, անուն կոչեցեալ Թորոս՝ ի Տարօն դաւառէ, ծաղկադարգեաց զդիրքս դոյս՝ վասն յոյժ սիրելոյ զմեզ, ով որ հանդիպիք՝ յիշեսջիք զինքն և զիւր ծնողսն ի Քրիստոս...

ե

Ի հոլովման ժամանակիս,
Ի մեծ հայոց Թուականիս
Յ ԷՉԿ* և երեքիս (1314).
Ես տկար Մխիթարս
Եւ անարժանս յամէն բարիս,
Գրեցի զվուծմունք նուրբ
Եւ արտաքին կտակարանիս՝
Ցիմաստից տուն Գլաձորիս,
Ի Վայիձոր վիճակիս,
Առ ոտս տիեզերալոյս վարդապետիս
Մեծահռչակ Սսայիս,
Նա և կարեկից մեծազարմին
Աքռուակալ Տարսայիճիս,
Որ է մեզ կարեկից յամէն բարիս,
Եւ օժանդակ յիւր գաւառիս.
Ցիշման առնել զսա արժանիս,
Ծնողիւք, եղբարբք օրհնեալ յաստիս...

զ

Ի Թուականիս Հայոց ի ՉԿԳ. (1314) համարողքն** ի Վայուձորս եկին, ու մինչև ի յամսական տղայն համարէին։

* Դոն—նշանակում է չոր հաց։
** ՉԿ (700+60) կամ ԷՃԿ. (7.100+60)-ի փոխարէն, սխալմամբ գրված է ԷՉԿ (7.700+60)։ Հարյուրավոր Թվերի նման գրութեան այլ օրինակներ նույնպես կան։
*** Մարգահամար անցկացնող և հարկահավաք մոնղոլ պաշտոնյաների մասին է խոսքը։

137.

ԲԱՐՍԵՂԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՎԵՑՕՐԵԱՑ ԳՈՐԾՈՑ ԱՐԱՐՋՈՒԹԵԱՆ

Երևան 1657

Գրիչ՝ Բարսեղ

ա

96 ա *Որք հանդիպիք յայսմ գրի,*
Ջաղցրաբարբառ յայսմ տառի
*ԶԳրիգորիս Եգընկեցի**
Դուք յիշեցէք տեառն առաջի։

բ

182 ա *Յիշեա զԳրիգորիս աշակերտ գրոց և զԲարսեղ փցուն գրող սորին, ծնողաւք հանդերձ։*

գ

227 բ *Յիշեցէք զԳրիգորիս վարդապետն իմ ողորմած,*
Զիս՝ աշակերտ նորին խիստ ցած։

138.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 41, Տ.—Ավետիսյան, Ցուցակ, էջ 144

Գրիչ՝ Առաքել

վայր՝ Տարաւնոյ գաւառ, Ղազարու վանք

Ի թուիս Հայոց ՉԿԴ. (1314) գրեցաւ սուրբ աւետարանս այս ի գաւառիս Տարաւնոյ, ի հռչակաւոր ուխտիս Ղազարու վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոց, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և ի թագաւորութեան Կիլիկեցոց նահանգին՝ Աւշինին, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս մերոյ տէր Թադէոսի, ձեռամբ անիմաստ գրչի և բազմամեղ կրաւնաւորի Առաքելի, ի խնգրոյ սրբասէր և աստուածահաճոյ քահանայի Թումայի. որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, հաւրն իւրոյ՝ Աւտարշահին, և մաւրն՝ Սքլտահայ. և հարազատ եղբարց իւրոց՝ Կարապետին և Թագւորին և Խոցադեղին, և քեռն իւրոյ Մամխաթունին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, և սիրելի բարեկամին իւրոյ Ամիրշահին...

Այլ և գրեցաւ սա ի ստոյգ և յընտիր աւրինակէ, որ զխոշորութիւն գրչին ուղորդութեամբ ծածկէ. և որ զմեզ յիշէ և ինքն յիշեսցի յառատ ողորմութիւնն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

* Գրիգորես Եգընկեցուն նույնացնելով նախորդ հիշատակարանի Գրիգորիս Եգնկայեցի կամ Ճազմանեցի վարդապետի հետ, հնարավորություն ենք ստանում որոշելու սույն հիշատակագրությունների գրության մերձավոր ժամանակը, այն է՝ 1314 թ.։

139.

ՄԱՇՏՈՑ

Թուական 2787

Ստացող՝ Կոստանդին Պեհեսացի

վայր՝ Կիլիկիա, ի գեղն Սուրբ Սիմաւո՞ն

Ցամս ՁԿԳ. (1314),

Ես՝ Կոստանդին եպիսկոպոս Պեհեսացի, ողով աստապետ յամէն բարի, և աստուածով առաջնորդ աստուածաբնակ ուխտի այս՝ Սկեռայի, յաղաղս բարի իմոյ յիշատակի, ի տեսանելն իմ յայսմ ամի գեղն սուրբ Սիմաւոնոյ եկեղեցի աղքատ ի դրոց և յայլ սպասուց սրբարանի, և մանաւանդ ի հարկաւորէն, որ ամենայն աւուր է յոյժ պիտանի* ես եաու դրել դանուանեալս մաշդոց, որ զամենայն քահանայա-
341 բ կան իրագործութեան խորհրդածութիւն յինքն ունի հաւաքեալ, և ‖ տամ զսա ընծայական ի գեղն սուրբ Սիմաւոնու եկեղեցին, որ սուրբ Սիմաւոն անուն կոչի, յիշատակ ինձ և իմոցն ծնողաց և երախտաւոր քեռոյն իմոյ Յոհաննէս քահան[այի], որ մականուն Կարմիրվանիցի կոչի, և քաղցրիկ մաւրն իմոյ՝ Աղուոր տիկնայ, և հաւրն իմոյ՝ Վասլի, և արեամբ նահատակեալ հարազատ եղբաւրն իմոյ՝ Սարգսի, և որդւոյ իւրոյ՝ Աւշինի, և մեծ մաւրն իմոյ՝ Պաեքի, նաև այլ մեծ մայրերոյն իմոյ և մեծ պապերոյն, նաև յոյժ սիրելի ձեռասնունդ հոգևոր որգեկին իմոյ. նաև երախտաւոր սպասաւորին իմոյ՝ Յակովբայ քահ[անայի], որ մահու չափ նահատակեցաւ ընդ իս՝ ի բանդ և ի կապանս, ի ծովու և ի ցամաքի, նաև չորս ամաւք յաւտարութեան պանտխանանալ յաշխարհին Յոռանգաց, և երկու ամաւք յառաջ քան զգրել սուրբ գրոցս, փոխեցաւ ի Քրիստոս վասն սիրայորդոր փութոյ պրճիս և յաւժար կամաւք աշխատելոյ ի վերակացութիւն շինութեան պրճիս, և եթող
342 ա ինձ ‖ մեծ և անմխիթար սուգ։ Յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի և հանգիստ նորա ընդ արդարոցն լիցի։ Նաև միւս սիրելի և ձեռասնունգ հոգևոր որդեկի իմոյ, արեամբ չափ նահատակելոյ ընդ իս ի Հռոմկլայն և ի Պեհեսնի՝ Ստեփանոս քահ[անայ], նաև ի սուրբ ուխտիս իւրով արեամբն նահատակեցաւ յանաւրինաց, ի սպասաւորութիւն սուրբ եկողեցւոյս, ի կեցոցքն սուրբ Սիմաւոն, ոչ հայրապետ կամ հաւքցաւղ գոլով, ապա սպասաւոր իմոյ նուաստութեանս, զիմ թերին լնլով, յիշատակ և նորայն աւրհնութեամբ եղիցի ի տէր, և համաւրէն իմոյ բնաւ զարմի։

Արդ, աղաչեմ զամենեսեան՝ զքահանայս և զսարկաւագունս և զկրաւնաւորսն, որք ժառանգք լինիք յայսմ եկեղեցիս՝ խնամ տանել այսմ դրի, զի մի ապականեսցի, որպէս և տեսի յայսմ եկեղեցի, զի ապականեալ էր յանփոյթ առնելոյ. և աղաչեմ պահել զսա յամենայն
342 բ ջնասուց և զմեզ ‖ յիշել ե մեղաց թողութիւն ի Քրիստոսէ խնդրել. և որ սրտի մտաւք զմեզ յիշեն, որդին աստուծոյ, հարբ և սուրբ հոգւոյն,

* Մինչև այստեղ հիշատակարանը գրված է չափածո։

որ շարժեաց զմեզ դանդաղ հողիս յայսմ գործ բարւոյ, անդադար պահեցէ զձեզ յամենայն առաքինութիւնս, և ի գալըստեան իւրում յիշեցէ յիւր ողորմութիւնն, և ի հանդերձեալն՝ ընդ սուրբս իւր դասեսդէ և պսակեսցէ ի վառս իւր և ի պարծանս մեզ, և ննջելոց մերոց և ձերոց հանդիստ շնորհեսցէ, և որոց զամէնն ասեն. և նմա փառք յաւիտեանս ամէն, ամէն, ամէն։

Ընդ նմին՝ ես տառապեալ գրողս Ներսես*. երես անկեալ աղաչեմ յիշել ի Քրիստոս զիմ դանդաղժանութիւնս, և զծնաւղս իմ, և զբնաւ դարձս, և զպատուական քահանայ[ի] զհաւրեղբայրն իմ՝ զՍտեփ[անոս] ղբիչ՝ զսնուցիչն իմ և զուսուցիչն, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, յիշատակ նորա աւրհնութեամբ լիցի. և սխալանացս և խոշորութեանս աղաչեմ չլինել մեղադիր...։

140.

ՀԱՏՈՒԱԾՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Վասպ. 33. Լալ. Ծուց. Սյուն. 59—62

Ստացող՝ Կոստանդին Պեհեսնացի

վայր՝ Կիլիկիա

... Ես՝ Կոստանդին եպիսկոպոս Պեհեսնացի, և խնամալք անեղին առաջնորդ սուրբ ուխտիս Սկևռայի, ի բազում իրս բազում անգամ տարուբերեալ ի ժամու և տարաժամու վրդովմամբ ի զբաղմանց եռալեան ծովուս միջի անցելոյն և ներկայիս և ապառնւոյն, ընդ հոլով սխալմամբ գրաւեալս, ի վաղ ժամանակէ և այսր մեծաւ փափաքմամբ յղձալի զաստ հաւաքեալ գրեանքս՝ զառակքս Սողոմոնի, հանդերձ Սիրաքայ խրատովքս և զիմաստս հարիւրոցն ճեմարանութիւն, նաև զճնաւոր նահատակին Ցորայ և պայծառ և զլուսաւոր պատմութիւնս. և ոչ լինէր լրումն կատարման իրիս, մինչև նա կամեցաւ, որ զանդադարժան ի բարին զիտէ շրջափոխել և զբեկիւզածացն զկամսն առնել, ինքն յաջողեաց և լրացոյց, որոյ աւրհնաբանութեամբ զոհութիւն միշտ ի ՉԿԴ. (1314), ետու գրել զսա ի սփոփանս ինձ յաստիս և յետ ելիցն՝ յիշատակ բարւոյն։ Արդ, աղաչեմ զժառանգաւղսդ սմին, յիշեցէք սրտի մտաւք զմեզ՝ զարմիւք և ծնողաւք, զիս՝ Կոստանդին եպիսկոպոս և յետ այնոյ ինձ զերախտաւոր քեռին իմ՝ զՅոհաննէս քահանայն՝ կարմիրվանցին, և զհայրն իմ Վառիլ, և զքաղցրիկ մայրն զԱղուոր տիկին, և զարեամբ նահատակեալ հարազատ եղբայրն իմ զՍարգիս, և զորդին իւր Աւշին, և մեծ մայրն իմ Պաւրի։ Այլ և զձեռասուն որդեակն զՅոհոր քահանայ, որ մահու չափ նահատակեցաւ ընդ իս ի բանտ և ի կապանս, ի ծովու և ի ցամաքի, և Դ. (4) ամաւք յաւտարութիւն պանդխտակից [լեալ]՝ աշխարհն Ցռանկաց, և Բ. (2) ամաւք յառաջ քան զդրեվ սուրբ գրոցս (1312) փոխեցաւ ի Քրիստոս վասն սիրայորդոր փութոյ տաճարիս և յաւժար կամաւք աշխատելոյ ի վերակացութիւն շինութեան տաճարիս, յիշա-

* 161 ա էջում եղող հիշատակագրության մեջ գրիչն իր մասին գրում է «... Ընդ նմին աղաչեմ յիշել և զիս զվատթար գրողիկս Ներսեսուկ...»։

տակ նորա աւրհնութեամբ եղիցի. բայց եթող ինձ սուգ մեծ և անմխիթար։ Նա և զմիւս սիրելի և հոգևոր որդեկին իմոյ, արեամբ չափ ընդ իս աշխատելոյն ի Հռոմկլայկ, ի Պեճեսնի՝ Ստեփաննոսի քահանայի, որ ի սպասաւորութեան սուրբ ուխտիս սպանաւ յանաւրինացն, ի կեցոյցն ի սուրբ Սիմաւոն, ոչ հայրապետ կամ լացաւզ*, այլ զիմ տարտամութեանս լնոյր զթերութիւն, յաւժար տանելով սըպաս, մինչ զարիւնն հեղուլ, որոց պսակ և փառս տացէ այն, որ զհոլովսն ի սբբոցն պատրաստ է փառազարդել, ամէն։

Աղաչեմ զի և խնամ տաբջիք սմա, ի ջրոյ, ի հրոյ և յամենայն ապականիչ պատճառէ զգուշացէք և աննախանձ կամաւք ի վերոգբերեալքս յիշեցէք առաջի զենման անմահ գառին աստուծոյ, բարձողին զմեղս աշխարհի. զի և մեզ, ի ձեռն ձեր և ձերով միջնորդական աղաւթից ձեռնտւսւթեան, թողութիւն մեղաց շնորհեսցէ, և հրոյն զերծուսցէ, և պսակ փառաց ողորմած կամաւք տացէ...։

Աղաչեմ մեղաւորս Յովհաննես՝ շարագրաւղ տառիս, թողութիւն մեղաց յաստուածոյ հայցել և սբխալանացս ներել, զի և ձեզ ներեսցէ տէր։

141.

ԳԻՐՔ ԱՆԴՐԻԱՆՏԱՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 4793 (Տես՝ նաև 1356, 1596 թ.թ.)

Գրիչ՝ Կոստանդին
վայր՝ Թիւրքիք ուխտ

ա

348 բ ... Երիցս երանեալ հոգևոր հարքն իմ Գրիգոր և Յովաննես յորոզեցին զիս՝ զարուսս և զախմար գրիչս զԿոստանդին, գրել զսայ յիշատակ մեր և ծնողաց մերոց և ի փրքմամութիւն եկեղեցոյս, զոր իմ՝ զտկարութիւն ի բաց եղեալ և ապաւինեալ յայս սուրբ ուխտս ու ի սուրբ եղբարցս յաղաւթս, <ա> շարահարեցի գրչութեամբ, ոչ որպէս վայել էր խնգրողաց, այլ ըստ կարի մերում և ըստ փանաքի և տկար մտաց մերոց։

Արդ, որք ընթեռնոյք և լուսաւորիք յաստուածային տառիցս, յիշեսջիք զառաջասացեալ հոգևոր հարքն իմ՝ զԳրիգոր և զՅովաննէս, և զհարազատ եղբայրն իւրեանց՝ զսիր Թորոս, և զամենայն ազգայինս իւրեանց։

349 ա Արդ, գրեցաւ ‖ սայ ի թվ. ՉԿԳ. (1314), ի թագաւորութեան հայոց Աւշնի և ի հայրապետութեան տեառն Կոստանդնի, ի սուրբ և ի հռչակաւոր ուխտս, որ կոչի Թիւրքիք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Փրկչիս, և կենսակիր սուրբ Նշանացս, ի յառաջնորդութեան Գրիգորի վարդապետի։

Արդ, աղաչեմ յիշել ի տէր զառաջասացեալ հայր աննապատիս

* Նախորդ հիշատակարանի համապատասխան հատվածում, «Լացաւզ»-ի փոխարեն գրված է «Հաւաքցաւզ», այսինքն՝ «Հոգացող»։

զԳրիգոր վարդապետ, զՅովաննէս փակակալ, զՄա[տ]թէոս, զՍարգիս, զՄեսրոպ, զԳրիգոր, զՎարդան, զՆերսէս, զԹորոս. զԽաչատուր, զՅովա-
ննէ[ս] Կապրեցո[ւ], զԲարսեղ, զՄինաս, Նայ և զգործաւորք՝ զՎասիլ մառըն-
պան, զՅովաննէս ածպան, զԹորոս հացկուռք, զԱնտոն աղաւնմաղ,
զԱստուածատուր, զՄարտիրոս, զԹորոս, զԿոստանդին Սինաւորցին և
զՎռիլն,* զԿոստանդին հիւրատեան, զՎասիլն, զՊաւդոսն** և զայնս-
349 բ սիկ, որ ընդ հովանեաւ*** || սրբոյ եկեղեցւոյս են հանգուցեալ։ Ողոր-
մեսցի Քրիստոս աստուած Կոստանդին Մաշտոյն և երկու եղբարց իւ-
րոց՝ Վասլին և Գրիգորին։

Նայ և մեղաւք մեռեալ գրչիս, յերեսս անգեալ կողկողագին ձայ-
նիւ աղաչեմ զամենեսեան, թողուբիւն մեղաց հայցեցէք ինձ յաս-
տուածոյ, և հարազատ եղբաւրն իմոյ Սուխիաննոսի նորընծայ քահանայի,
և ծնաւղաց մերոց. և խոշորութեան գրոցս և աղքատիմաց բանից և
բառից մի մեղադրէք, զի այդ էր կարն մեր։ Եւ տէրն տէրանց և
արարիչն արարածոց, յիշողացդ և յիշելեացս ողորմեսցի, որ է աւրհ-
նեալ յաւիտեանս, ամէն։

349 բ Մ՛վ սուրբ հարք և եղբարք, յիշեցէք և զմեղաւք մեռեալս զԹու-
րոս՝ գծաղկաւղ և զկազմաւղ գրոցս, և մեղաց թողուբիւն խընդրեցէք
և խոշորութեան և սխալանաց մի մեղադրէք, զի այդ էր կար մեր. և
Քրիստոս աստուած՝ քաղցրն և ողորմածն, ձեզ և մեզ ողորմեսցի, և
նմա փառք յաւ[իտեան]։

ք

145 ա Ի թվ. ՉԿԲ. (1313). յամսեանս նոյեմբերի Դ. (4), փոխեցաւ առ
Քրիստոս բաբի փակակալն մեր Կոստանդին, որոյ ողորմեսցի նմայ
Քրիստոս աստուած, ամէն։

Եւ եղաւ նոր փակակալ Յովաննէս Արեւելցի։

142.

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՑ

Լէոն, Գաթրճեան, Պատարագամատոյցք, էջ 83—84

Գրիչ՝ Նիկաւլայոս
վայր՝ Անարզարբա

... Աստանօր կամօք և խնամօք ամենազօրին աստուծոյ յանկ
ելեալ սուրբ մատեանս պատարագամատուցի, որ ունի ի յինքն բո-
վանդակեալ զաղօթս սուրբ քահանայապետից աստուծոյ, զոր յիւրա-
քանչիւր ժամանակս արարեալ են խորհուրդ պատարագի։ Արդ, եղև
սա գրեալ ձեռամբ մեղաւոր և անարժան քահանայի Նիկաւլայոսի,
յիշատակ ինձ, և ծնողացն իմոց, և եղբօրն մերոյ Յովհաննիսի քահա-
նայի, ի թուականիս Հայոց ՉԿԳ. (1314), ի դղեակս Անարզարբա, ընդ

* Լուսանցքում ծաղկող Թորոսի ձեռագրով գրված է՝ «և զՎարդան»։
** Լուսանցքում՝ «զՅունկն»։
*** Ներքին լուսանցքում՝ «ծիլեցեք ի տէր զմիմեղէն և Շաւուխի և Վասլ հոնն»։

հովանեաւ սուրբ մօրս լուսոյ տիրուհոյ և միշտ կուսին Մարիամու. աստուածածնին, ի թադաւորութեան Աւշնի, և ի քահանայապետութեանն տեառն Կոստանդեայ, և ի մերոյ եկեղեցւոյս առաջնորդութեան տեառնս մերոյ Յովհաննիսի եպիսկոպոսի, որոյ տէր աստուած պահեսցէ զսա հանապազ։ Ցիշեսջիք աղօթիւք զսպասաւորս սրբոյ եկեղեցւոյս և զքահանայս սուրբս՝ զԿոստանդին, և զմիւս Կոստանդին, և զԱնդրոնիկոս, և զԲասիլիոս, և զմիւս Բասիլիոս, և զՍտեփաննոս, և զսարկաւագունս՝ զՎասիլ. և զԹեոդորոս, և զՎարդան Սևլեռնցի, և զՅակոբ, և զամենայն հաւատացեալս սրբոյ երկրպագութեան, որում փառք և զօրութիւն այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ցիշեսջիք ի Քրիստոս և զԹէոդոս երէց, որ վախճեցաւ առ Քրիստոս։ Եւ որ յիշէ զմեզ աղօթիւք և զնա յիշեսցէ Քրիստոս աստուած ի յիւր միւսանգամ գալուստն, որ է օրհնեալ յաւիտեան։

143.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վեներ. 153 ծուց. հա. Ա. էջ 060

Գրիչ՝ Յովսեփ
վայր՝ Արճեշի գաւառ

238 ր ... Ողորմութեամբ տեառն սկսայ և կարողութեամբ նորին կատարեցի զաստուածածոյս սուրբ աւետարանս ի գաւառիս Արճիշոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսիս, յառաջնորդութեամբ նահանգիս տեառն Զաքարիայի, որոյ տէր Ցիսուս պահեսցէ։

Այլ ես՝ Յովսեփ գրիչ, մեղուցեալ ծառայս աստուծոյ, աղաչեմ զամենայն մանկունստ, յիշեսջիք զՅովսեփ գրիչս և ծնողսն իմ։ Ի թվ. ՉԿԹ. (1314)։

Արդ, ես՝ նուաստ և թարմատար ողիս Թորոս, ցանկացող եղէ սուրբ և կենսաբեր աւետարանիս և ստացա զսա զանձ հոգևոր յարդար վաստակոց իմոց, յիշատակ ինձ, և ծնողաց իմոց, և կենակցի իմոյ, և աստուածատուր զաւակաց մերոց, և ամենայն արենառու մերձաւորաց, զի լիցի սա մեզ փրկութիւն հոգոյ և մարմնոյ աստ և ի հանդերձեալսն...

144.

ՇԱՐԱԿԱՆՈՑ

Հալէպ. Անթիլ. ե մասն. 51, Միւրմ. Բ. 146.

Գրիչ՝ կարապետ ճիչող
վայր՝ Եզնկա

744. Ծամի եւթնհարիւրերորդի և վաթսուն ընդ երրորդ երորդի թուաբերութեանս Հայոց (1314)*, ի կաթողիկոսութեան Կոստանդեայ

* Հրատարակիչն այս մշուշապատ թվականը հասկացել է այսպես՝ 700+60+3.3 և արդյունքին գումարելով 551 ստացել է 1320 թվականը ու առանց վերապահության ձե-

Ջրողի և ի թաղաւորութեան Հայոց Աւշնի եղև զրաւ գրչութեան շարակնաց սաղմոս հին և նոր շարականաւք՝ պատարուն և անթերի, ձեռամբ կարապետ Ճիչոզի՝ թարմատար գրչի, ի մայրաքաղաքս Սզնկա, սատարութեամբ Տիրացու քահանայի, ի խնդրոյ ղեռարոյս | | | կրաւնաւորի, Մարտիրոսի որդւոյ Իւրոյ...։

145.

ՄԱՇՏՈՑ

Երևան 8287

Գրիչ՝ Յովաննես

203 ա Աղդ, գրեցաւ ի թվիս ՉԿԴ. (1314), ի թագաւորութեան Աւշնի և ի հայրապետութեան կոստրնդեա, գրեցաւ ձեռամբ մեղապարտ գրչի Յովաննիսի, որք ուսանիք կամ աւրինակէք յիշեսջիք մխով տէր ողորմայիւ և աստուած զձեզ յիշէ. յիշեսջիք զքոյսն իմ զՔաւրխաթուեն՝ դիւոխեալն առ Քրիստոս, զի և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսի ատեանն ի բարի, ամէն։

146.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2189

Գրիչ՝ Յոհաննես Սզնկացի

Եւ զվերջացեալս ի բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս՝ զՅոհաննէս, ծանօթ բանի և տեղեաւ Սզնկացի իսկ այժմ Ծործորեցի, աղաչեմ չմոռանալ ի բարիս զիս և զիմսն զամենայն։ Ի թվականիս փրկչին ՌՅԺԶ. (1316)։*

147.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 027

Գրիչ՝ Խաչիկ
վայր՝ Ճանճինխուզ

ա

71 բ Ջխաչիկ՝ աշխատող սուրբն յիշեսջիք ի Քրիստոս, ով եղբարք, և շտապով դրեցի, ոչ թէ գրոյն ցանկորդ, այլ կարօտ էի բանին, որում

ոագիրը գրված է համարել այդ թվին։ Մեզ թվում է, որ ավելի ճիշտ կլինի նախադասության վերջին ժերորդը», նկատի առնելով, որ նա գրված է մեկ ժբ-ով, կարդալ ոչ թե թվական՝ 3, և հասկանալ այդ մասը որպես ժերեք անգամ երեք (9)», այլ որպես գասական թիվ (700-րգ +63-րգ), այդ դեպքում ստանում ենք ոչ թե 1320, այլ 1314 թ.։

* Սույն հիշատակարանը նախաձաղափար օրինակում եղել է Մխ. Գոշի առակների վերջում։ Գրիգոր գրիչը, արտագրելով իր ժամանակ արդեն պակասներ ունեցող այդ ձեռագրից Գոշի առակների մի մասը, հիշատակարանը սխալ ըմբռնելով, առակները վերնագրել է՝ «Առակք ստեղծականք... արարեալ Ծոհանու Ծործորեցուց, այլ խոսքով դրիչ Ծովհ. Ծործորեցուն դարձրել է հեղինակ։ Հիշատակարանի գրության իրական տարեթիվը, ըստ երևույթին, պետք է համարել ոչ թե 1316, այլ 1314 թվականը, որովհետև «փրկչականն» 1310 -ին համապատասխանում է հայկական ՉԿԴ. (1314) թվականը։

սպասաւոր էի, Պատահեալքդ յաղօթս յիշեցէք. և յուսամ ողորմութիւն գտանել ի Քրիստոսէ, որում փառք յ[աւիտեանս]։

բ

152 բ Ձխաչ[իկ] յիշեցէք, Այլ դրեցաւ ՁԿԹ. (1314) թվականիս, ի ձեռն Գիկխուղն, սուրբ Գրիգորի լուսաւորչին, և Քրիստոսի փառք։

148.

ԱԻԵՏԱՐԱՆ

Նրևան 280 (Տես նաև՝ 1310 թ.)

Ստացող՝ Նորշահ
վայր՝ Վարգահեճ գիւղ

ա

264 բ Ի թվիս ՁԿԹ. (1314) ես՝ Նորշահս, որդի Աւետի, ի Վարգահեճ գեղէ, գնեցի զսուրբ աւետարանս. ի հալալ արդեանց իմոց...

բ

204 բ Ով, սրբասնունդ հայրք, որք կարդաք զսուրբ աւետարանս, յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր զպարոն Նորշահեն, և զկենակիցն իւր զՄարգրիտն, և զհանգուցեալ զաւակն իւրեանց զԱւետն և զՎահեճն, զորս տէր աստուած ընդ սուրբս իւր դասեսցէ, ամէն, և մխիթարեսցէ զնոսա բանիւ սուրբ աւետարանիս, և զկենդանիքն պահեսցէ ի սատանայական փորձութենէ, և յիշատակ պահեսցէ իւրեանց՝ զՁֆեճտն և զԹուխտն, և զքուեբան՝ զվայն և զՄամշահեն, ամէն։ Եւ որք յիշէք, յիշե[ա]լ լիցիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, ամէն։

149.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆԿ

Նրևան 752

ա

42 ա Ձսասացաւզ տառիս՝ զՍահփահոս պատուէլի քահ[անայ]. և զհոգևոր հայր և զուսուցիչ նորին՝ զպատկառելի ծերունի և զառաքինազարդ քահ[անայ] Գրիգոր յիշեցէք ի մեղաց թողութիւն։

բ

145 բ ... Ցամի եւքնհաբիւրերորդի վաթսներորդի երրորդի թուականութեանս Հայոց (1314) դրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի [մանրուսմունք]...։

150.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 192 (տես նաև 1669 թ.)

Գրիչ՝ Աբրահամ
վայր՝ Լիմ կղզի

266 ա ... Արդ, ի կարճեալ աւուրս և յերեկոյացեալ ժամանակիս, այսինքն ի վերջի դարուս, յորժամ յաղագս ծուլացեալ մեղաց աշխարհիս իբր երեքալեան ին մրրկեալ տատանեալ ծփէր ի բռնութենէ սրոյն աղինն նետողաց, զոր յոլով ժամանակաց աւուրց սաստկացեալ տիբէր համայն ամենայն երկրի, սկսեալ յելից արևու՝ ի ծովէն Կասբից, շրջապատեալ զհիւսիսիւ մինչև զտյ, հասանէ ի ծովն Պոնտոսի, և դարձեալ ի միւս կողմամբն հարաւանոյ պատ առեալ՝ պարունակեալ զաշխարհն Բաբելացւոց, և զհամայն զԱսորիս, և զԻւդիւլիկեայ, մինչև ցնոյն ծովն Պոնտացւոց աշխարհին, զբոլոր մէջներկրայս՝ զաղգս և զլեզուս բազումս, ընդ ինքեամբ կալեալ ունէր չարչլուծ ծառայութեան նոցա, ըստ նախատեսութեանն մեծ հայրապետին հայոց Ներսէսի, և պակասեալ նուազեալ կայր* հայրապետութիւնն սեռի սուրբ Լուսաւորչին Դրիգորի և թագաւորութիւն ազին Արշակունեաց, ըստ տեսլեան սրբոյն Իսահակայ, և սակս անդարձութեանն մերոյ ոչ զար-
266բ ձաւ || բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է ի պատժել, ի պատուհասե<ա>լ։ Եւ մեր ոչ զղջացեալ, մինչև ծիւրեալ և ծնգեալ, հիւծեալ մաշեցան ամենայն կեանք մեր, ի մահ և ի զժոխս մերձեցան անձինք մեր և յերկիր մածան մէջք մեր, քանզի թողեալ զաստուածարարու և այլազէմ և այլալուսու ազգին նետողաց զհայրենի աւրէնս իւրեանց <թողին>, հետևեցան չար աղանդոյն Ծարապետի նեռինն՝ Մահմետի, և ևս քան զևս ընդ նեղութեան և ընդ հալածանաւք արկին զազգս քրիստոնէից։ Զորոյ զաղէտս տառապանացն ո՞ ոք կարասցէ պատմել կամ ընդ գրով արկանել։

Արդ, յայսմ դառն և ի զժնա ժամանակի, յորում խաւար անլոյս և մէգ անմխիթար տարածեալ մածեալ ունէր զամենայն երես երկրի, ես՝ Թադէոս կրաւնաւոր և եղկելի անձն, գրել տուի զմարգրէս և զառաքեալս ի յարգար վաստակոց իմոց։ Արդ, աղաչեմ զամենեսեան՝ զդասս լուսերամից և զմանկունս նոր Սիոնի՝ մանաւանդ
267 ա թէ վերնոյն || ...եաի** և ի հանդիսիլին ձեր այս աստուածային տառիս

---

* Բնագրում՝ ձգայր։
** Մի թերթ ընկած է։

ընթերցմամբ և կամ զտղափարելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զերանելի և զպատուական կրաւնաւուր զԹադէոս, և զհայր իւր, և զմայր իւր, և զեղբայր և զամենայն արեան մերձաւորք իւր, և աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն։

Գրեցաւ և կատարեցաւ մարզարէս և առաքեալս անտրժան ձեռամբ սուտանուն Աբրահամու, ի թվականիս ՉԿԴ. (1315), զրեցաւ ի կղզիս, որ կոչի Լիմն, ընդ հովանի[ե]աւ սուրբ Գէորգ[ի]եայ աջիս՝ նորակազմ տաճարիս, հայրապետութիւն տէր Զաքարի և յաոաջնորդութիւն տեղոյս տէր Յովհաննիսի։ Տէր աստուած թողցէ զհանցանս իւր և զննջեցելոց իւրոց, որ հանդիստ արար մեզ ի մարմնաւոր կեանս։ Ես՝ Աբրահամ սուտանուն զրիչ, ըստ իմում տկարութիւնս սկսայ, ողորմութեամբն աստուծոյ և աստեղի* զմարգարէս և զառաքեալս. աղաչեմք զամենեսեան՝ զմանկունս եկեղեցւոյ և զղաստ քրիս-
267բ տոնէից հաւատացել ‖ ոց, որ կարդայք կամ աւրինակէք, մեզաց թողութիւն հայցեցէք յաստուծոյ մեզ և մեր ննջեցելոցն, և հաւր իմոյ Յուսէփայ, և եղբարց իմոց՝ Յակովբայ և Սահակայ, որ երիտասարդական կենաւք վախեցան ի Քրիստոս։ Յիշեցէք և զեղբայրս մեր զԹումայ կրաւնաւոր՝ հեզ և խոնարհ, որ** սպասաւորեաց մեզ ի մարմնաւոր կեանս, և հայր իւր, և զմայր իւր, և զամենայն արեան մերձաւորք իւր՝ զկենդանիս և զհանգուցեալս, մինչ Թումէս զմեզ աստ հանդոյց աստուած զինքն և զննջեցեալսն իւր հանդուսցէ ի վերին Երուսաղէմ և ի դաս արդարոց...։

151.

ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ

Երևան 3778

Գրիչ՝ Ռստակես, ստացող՝ Վարդան
վայր՝ Արտազ գաւառ, սբ. Թադէոսի վանք

464ա ... Արդ, եղև սկիզբն տաուիս այսմիկ սրբոյ գծագրութեան ի գաւառիս կոչեցելումն Արտազ, ի սուրբ և յերկնահանդէս, ի հռչակաւոր ուխտս, ի յաթոռս և ի հանդիստս սուրբ առաքելոյս Թադէոսի, ընդ հովանեաւ ամենազաւրաւ աջոյն Քիստոսի, առ ոտս սուրբ և աստուածածին արեամբ ներկեալ նշանիս՝ սուրբ Գեղարդեանս, և սուրբ կուսին Սանդխտոյ, և այլ բազմահաւաք սրբոցս, ի թագաւորութեան Հայոց
464բ Աւշին կոչեցեալ, և ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, ‖ յառաջնորդութեան այսմ նահանդիս և աստուածախնամ Արտազ գաւառիս՝ սուրբ և առաքելաշնորհ արհիական գլուխն, տիեզերալոյս և աշխատաճաւալ, բարխախոհ և վերագիտող, պարխապ ամրութեան հանուրց եկեղեցեաց, և բերդ հաստատուն քահանայից և ամենայն քրիստոնէից տէր Զաքարիայի, և պարոն եղբաւր նորին Պետրոսի, և զաւակաց սո-

* Թերևս պետք է լիներ՝ հաւատեցիս։
** Բնագրում՝ հւ։

բին, զոր պահեցէ զսոսա Քրիստոս աստուած լուսաւոր վարիւք ի լուսաւորութիւն կաթողիկէ եկեղեցւոյս, ի զարդ և ի պսակ սուրբ և հռչակաւոր ուխտիս և ի պարծանս հաւատացելոց Քրիստոսի, պարագայ ամաւք, խոր խաղաղութեամբ մինչև ի խորին ծերութիւնն, եղբարբք իւրով և ամենայն համացեղիւքն, և յապագայսն՝ սուրբ հայրապետացն աթոռակից և պսակակից արասցէ, ամէն։ Նաև զԼևոնդ քահանայ, վասն որոյ անջատեալ ի մէնջ աննկաւ պարիսպն ամրութեան, և խորտակեցաւ բերդն ապաստանի, և եթող սուգ անմխիթարելի, յամսեանն հրոտից ԻԴ. (24), զոր տէր Յիսուս դասակից և պսակակից արասցէ դնա որբոց քահանայիցն, ա.։ լէն]։

Իսկ ի լրման թուարերութեանս Հայոց ՉԿԴ. (1315), յամսեանն նաւասարդի Ա., ի դառն, և ի դժնեայ, և ի մաշեալ ժամանակիս, յորում բոտ հրամ[ան]ի տեառն, ցամաքեցաւ. սէր բազմաց և թագաւորեաց ստութիւն և ատելութիւն, և մահաշունչ քնարն սատանայի բեղնաւորեալ զուարճանայ յընթհանուրս ամենայն մեծապանծ ճոխութեամբ, ևս առաւել ի յազգս Արամենի, ի սեռս Հայկայ և ի զարմս Թորգոմեան, որով՝ անարժան և ստակործն վարիւք մերովք բարկացուցաք զանբարկանալին աստուած, և շարժեցաք ի սաստ և ի ցասումն զամենագութն և զամենողորմն, զի ի խրատ և ի ցասումն զարթոյց աստուած զթմրեալ բարկութիւնն ի վերայ քրիստոնէից զաղախնածին ազգն Իսմայէլի, որ կախարդասար պատրանաւք խաբել զազգն նեոտողաց, որ բազում ամաւք տիրեալ ունէին ընդ բռամբ զաշխարհս Արևելեան, ի հիւսիսոյ ի հարաւ, մինչև ի ծովն Արևմտական, բայց սակաւ ինչ ի խաղաղութիւն անգորանայր եկեղեցիք քրիստոնէից։

Իսկ ի յայս դառն և ի դժնեայ ժամանակիս զարթոյց աստուած դՀոդիս սուրբ երանաշնորհ քահանային Վարդանայ՝ ի մոռացեալս լինել բազմակուտակ ալեկոծութեանս, դիտելով զդիւրակործան և զապականելի կենցաղս, թէ ընդ գտանելն արագ ունի զեզծումն, կամեցաւ
465ա զանձել զանձ անկողոպտելի և յիշա || տակ աննինջ, որ միշտ և անզրաւ ունի զկայ ընդ աստուծոյ և ոչ ական հատանի ի ճնասակար գողոց, ի հոգւոյն սրբոյ սատարութենէ և ի բարի կամաց վերագիտողիս տէր Զաքարիայի, ետու գրել զանգին գանձս աստուածայինս, զլոյս հաւատոյ և զպայծառացեալ յահս եկեղեցոյ՝ զերգս մարգարէին Դաւթի, զոր սուրբ հայրապետն Սերոբէ մեծաւ աշխատութեամբ մեկնեալ լուսաւոր և պայծառ բացերևութեամբ, ի զարդ և ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ, և ի խրախութիւն բանասէր և մակացու արանց հմտագունից։

Արդ, ես՝ տարժանեալս Վարդան, բազում պաղատանաւք և արտասուաւք յերկիր անկեալ, աղաչեմ զսուրբ հարսդ, և սրբասէր քահանայսդ, և զաստուածահաճոյ կրաւնաւորսդ և զսրբասնունդ մանգունսդ եկեղեցւոյ, որք ընթեռնոյք և լուսաւորիք ի սուրբ պատուիրանացս, յիշեսջիք ի սուրբ և յարժանաւոր յաղաւթս ձեր զաշխատողս սորա զՎարդան և զհայրն մեր ըստ հոգոյ և զերախտաւորն՝ զփոխեցեալն

առ Քրիստոս՝ զՄարգիս քահանայ, որ բազում չարչար[տն]աւք սնոյց զմեզ...։

... Եւ եղեալ ի մտի զայսպիսի յոյժ զիմեցի ամենայն սրտիւ իմով, մեծաւ յուսով, ի սուրբ և ի հոչակաւոր ուխտն Յովհաննու վանիք, և խնդրեցի զղաղափար այսմ մեծափառ կտակիս, և ես ինձէն աշխատեալ՝ անձամբ տարաշխարհիկ լինելով։ Եւ ետու գրել զսա մեծաւ աշխատանուք, և եղի ի սուրբ և հոչակաւոր աթոռս Թադէոսի առաքելոյս, յիշատակ ինձ, և երախտաւոր վարդապետի իմ և հաւրեղբուր՝ Սարգիս քահանայի, և ծնաւղաց իմոց մարմնաւորաց՝ Մխիթարայ և Մամսթոյ, և հարազատ եղբարց իմոց՝ Տուրքին և Պեկերին, և ամենայն աղգայնոց։

468ր Արդ, աղաչեմ զսպասաւորսդ սրբոյ հկեղեցւոյդ, որք այժմիկ և որք յետ ժամանակաց յաջորդեն զաթոռ սրբութեան ուխտիս, դի չկա ոք հակառակ պտղաբերութեանս մերոյ, ոչ ի մերոց, և ոչ յաւտարաց, և ոչ յայլոց հակառակողաց չարաց, դի աստուածոյ է զայս գիրքս և սուրբ առաքելոյս Թադէոսի, իսկ եթէ ոք ի կողմ չարին եղեալ և ըստ հակառակող կամաց նորա վարեսցի, կամ յիմոց, կամ յաւտարաց, և կամ յառաջնորդաց եկեղեցւոյս, և խստավզել հանել ջանայ զայս գիրքս ի սուրբ Առաքելոյս, կտրեսցի ինքն ի Քրիստոսէ, իսկ որ զդիր յիշատակիս չնջէ յետ ժամանակի՝ չնջեսցի ինքն ի կենաց գրոյն, այլ հաստատուն պահողք հրամանացս աւրհնեալ եղիցին ի Քրիստոսէ և յամենայն սրբոց իւրոց, ամէն։

Զտաւնաւղ տաւնից տէրունական և պայծառացուցիչ յիշատակաց որդւոց վերինն առաքաստի, բազմահամբար պատրաստութեամբ ըստ իմանալի մտաց լուցման լապտերաց և բուրման խնկոց անուշահոտութեան, զրաբունապետս զՅովհաննէս և զԿիրակոս յիշեսջիք ի տէր Յիսուս, ընդ նոսին դաստեղն եկեղեցոյ, պաղպաճուն և լուսափայլ ի հարաւային հնչմանէ հոգւոյն շնորհի վիթխեալք՝ զՎարդան հայրապետ, և զՅոհաննէս, և զՍտեփաննոս յիշման արժանի առնիջիք, որ հայրապուր սիրով խնամս տանէին և յորդորէին զմեզ։ Յիշեցէք ի Քրիստոս և զիակակալ սուրբ ուխտիս, և զպասաւորս ըստ մարմնոյ՝ զՇահաւորն, զՏուրքն, զՍարգիս և զԱմիր, ընդ նոսին և զմաճակալ Յովաննէս, զոր տէր Յիսուս բարեխաւսութեամբ սուրբ առաքելոյս Թադէոսի հատուսցէ նոցա վարձս բարիս, ամէն։

Նաև համաւրէն ամենայն աշխատողաց՝ քահանայից, սարկաւագաց, միայնակեցաց, ծերոց և աղայոց, որք յայս քաւարանիս աշխատեալք են, եղիցի ամենեցուն ձեզ հասանել մասին ժառանգութեան սրբոց, ամէն։

Եւ արդ, զարձեալ բազում պաղատանաւք և արտասուաւք յերկիր անկեալ աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի յիշել զողորմելի գծողս զՌոստակես, և զեղբայրն իմ զԹադէոս, և զծնողսն իմ ըստ մարմնոյ, զհայրն իմ զԽոցադէզ, և զմայրն իմ զԳրամիկ, և զԱբամբար, և զեղբարսն իմ զՄարգարէ, զՄխիթար, և զայլսն ամենայն, վասն դի կարող է աստուած ի ձեռն այլոց այլում ողորմութիւն առնել,

ընդ որս և ի մեզ զթասցի Քրիստոս աստուած շնորհել աշխարհի ղեկաղարութիւն, եկեղեցւոյ հաստատութիւն, քահանայից մաքրութիւն, միանձանց ժուժկալութիւն, մեղաւորաց դարձ, յորոց յամենեցունց համաձայնութեամբ ի մի բերան փառաւորի ամենասուրբ երրորդութիւնն այժմ և յաւիտեանս, ամէն։

152.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վարդաշէն գյուղ. Մ. Սմբատյանց, ձեռնշակ, էջ 136

Գրիչ՝ Խաչատուր Կեչառեցի
վայր՝ Եղեգիս

... Աւարտեցաւ սուրբ աւետարանս տիեզերալոյս վարդապետին Քրիստոսի աստուծոյ մերոյ... յամս առաքելաշնորհ արհիեպիսկոպոսի տեառն Յովհաննիսի, մականուամբ Աւրբել կոչեցեալոյ, ձեռամբ նուաստ և ոսկեգիր դրչապետի՝ մեծ բարեւնապետի Խաչատուր Կեչառեցւոյ. գծագրեցաւ ի քաղաքս Եղեգիս, ի տէրութեան արեաց վեհագունի և իշխանաց իշխեցողի, մեծ կոմսի և կոզմնակալի Բուրքելին և նորին հարազատի Բուզդայիճ, ի խնդրոյ սրբասնունդ քահանային Սահակայ։*

153.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 2930

Գրիչ՝ Թոմա
վայր՝ Խորդեանց անապատ

ա

242բ Շնորհիւն աստուծոյ սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ և զկենսաբեր աւետարանս ի թուականութեանն հայոց ՉԿԴ. (1315), յամսեանն յարեգ՝ ԻԲ. (12), յաւուր երկուշաբաթի, Ժ. (10)-եբորդ ժամու, հայրապետութեանն տէր Յովաննէս Աւրպելի...

Համարձակեցա ծրեալ զսա ի վարժուհի մանկանց նոր Սիոնի և ի պայծառութիւն դասակարգութեան սրբոյ եկեղեցւոյ, ընդ հովանև սուրբ Գրիգորիս և սուրբ Սարգիս զաւրավարիս։ Արդ, ի սպառել ժամանակիս և ի նուազումն ամենայն վայելչութեանց աշխարհիս, ես՝ յետինս ի դասէ քահանական կարգի Թոմա անուն, գրեցի զսայ յանապատս Խորդեանց։ Այժմ, որք աւգտիք ի սմանէ յիշեսջիք

* Հրատարակչի ծանոթագրութեան համաձայն ավետարանն ընդօրինակված է «ի թուականութեանս արեթական տումարին ՉԿԴ (1315)»։

զծնողսն իմ, և զսնուցիչն իմ զՄարգիս վարդապետն, որ է ուսուցիչ իմ*, և զծնողսն իմ՝ Վիրապշահ և Թագու[ե]ի և զեղբայրս Իգդատեր[՞] և զամուսնին՝ Մանկու խաթուն, և զաւակս նոցա՝ Ստեփաննոս և Մարտիրոս...՝**

բ

17ա Վանիկն միաբանեցաւ աւետարանիս, ով կարդայք յիշէք ի Քրիստոս, ամէն,

գ

Ծաղկող՝ Մարգարէ

7բ Ով կարդայք զՄարգարէ յիշէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ, ամէն,

154.

ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Երեան 3631

Գրիչ՝ Առաքել

վտյր՝ Տարսւնո գաւառ, որ. Կարապետի վանք

330ա Գրեցաւ՝ աստուածաշունս այս մատեան ի վաոս Քրիստոսի աստուծոյ մերո, ի թուի[ն] Հայոց Ջ Կ Դ. (1315), ընդ հովանեաւ Տարսւնո սրբո Կարապետիս, յաոաջնորդութիւն արհեպիսկոպոսի տէր Յով[հաննիսի] և Ստեփ[անոս] վարդապետի, ի ստացումն սրբազան, երջանիկ և սրբամաքուր կուսակրաւն Ստեփ[անոս] վարդապետի, ձեռամբ նեոգեաալ, պիտականու.ն Առաքել սուտ աբեղաի, Որք հանդիպիքդ այս աստուածաշունս դանձու և մեծագինս մարգարտի առ ի պէտս ինչ աւգտութեան ի ամանէ եղելոյ, առ որս աղաչանս բազմապիս[իս] մատուցանեմ, յիշման աղաւթից առ Քրիստոս արժանի առնել զստացող սորա զՍտեփ[անոս] վարդապետ, հանդերձ իւրովքն ննջեցեալովքն, արժանի լինել սրբոցն դասուց, ընդ որոց և աշխատողիս քաւութիւն յանցանաց հայցել յամենառատ պարգեացն աստուծոյ, զի և ձեզ լիցի մասն երանութեան ի Քրիստոսէ աստուծոյն մերոյ, որ է աւրհնեալ, ընդ հաւր և սուրբ հոգւոյն, յաւիտեանս, ամէն,

Եւ այլ ևս առաւել աղաչեմ չմեղադրել խոշորութեան դրոյս, զի ախմար էաք յարհեստ գրչութեանս, ու առանձին տուն չունէաք, ու այլ պակաս դրելոյն այս շատ պատճառ եղաւ, զի ամրոխ էր. և այս բաւ է՝

---

* Ձեռագրում պահպանվել են սուրբ Մարգիս վարդապետի և Թոմա գրչի նկարները։

** Հիշատակարանի շարունակության մեջ հիշվում են գրչի մերձավոր և հեռավոր ազգականները՝ իրենց որդիներով։

155.

ԱԼԵՏԱՐԱՆ

Վիեննա 460. Ճալ. Ճուց. էջ 034. (տես նաև 1384 և 1650 թ.թ.)

Ստացող՝ Սարգիս

327բ *Կատարեցաւ սուրբ աւետարանս այս ի թվականութիւն Հայոց ՉԿԴ. (1315). ես՝* Սարգիս, Շահիս որդին, *որ ստացայ զսայ ի հալալ արդեանց և դնեցի զսայ ի Պօղ[ոս] վ[ար]դ[ապետէ] Ծ. (50) դ[ահե]-լի[ան], վասն հոգւոյ, որ յիշատակ իմ հանապազ։*

156.

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՑՈՒԹԵՒՆ ԿԻՒՐԳԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑՒՈՑ

Նրևան 976 (տես նաև 1140 թ.)

Գրիչ՝ Դանիէլ
վայր՝ Աղթամար

... Աստանաւր սկզբնաւորեալ աստուածային տառս այս ի թուա-
կանութեանս Հայոց ՉԿԵ. (1316), ի գառն և ի տարտարոս ժամանա-
292 ա կի, ի գլուխ եւ յամուր կղզիս Աղթամար կոչեցեալ, ի հայրապե՛ տու-
թեան տեառն Ներսեսի և տեառն Զաքարիայի, ի խնդրոյ աստուածա-
բեալ և որբտսէր կրաւնաւորի Տիրացուի, որ է գպրապետ, և առաջնորդ,
և տէր սուրբ Վարդանայ, որ է ի Վան քաղաք, որ է իւր սեփական,
զոր բազում ծախիւք և աշխատութեամբ յաւրինեաց ի նմա շինուածս
բազումս: Այլ և յարդար վաստակոց իւրոց գնեաց բազում ոխվս յա-
նուն սուրբ Վարդանայ, զի ի նմա հանգիցեն նեղածք և հիւանդք և
ախտաժէտք, յաղագս բժշկութեանն: Իսկ զուք, հանգիպակալքդ սմա ըն-
թերցմամբ կամ աւրինակաւ, յիշեսջիք յերկնարաց արժանաւոր յա-
ղաւթս ձեր ղյառաջյիշեցեալ ստացող սուրբ զրոցս՝ զպատուական
ընտրեալ կրաւնաւորն զՏիրացու, և զծնաւղսն իւր, և զսզգատոհմն՝
զկենդանիք և զննջեցեալսն: Եւ ես՝ ամենամեղս [և վիցունս ի գրչ]աց
Դանիէլ անար[ժան եպի]սկոպոս, տեսեալ դիպիպագ և զսէր սորա առ
հոգևորսն, և [յ]անձն առի ըստ իմում կարի, և ներող մարգասիրու-
թեամբն աստուծոյ կատարեցի զսա մեղսամած մատամբ իմով յընտոյգ
և յընտիր աւրինակէ, յիշատակ հոգւոյ Տիրացու կրաւնաւորի, և ծնաւ-
ղացն, և ազգացն ամենայնի, վասն զի մանկունք եկեղեցոյ վայելես-
ցեն զսա ընթեռնլով հանապազ և զու[արճա]նալով սովաւ ի տուէ և
ի գիշերի, և յիշելով առաջի աստուծոյ զստացող սորա, զմեղապարտ
գծողս, և զմեր ծնաւղսն, և զազգականսն և զերախտաւորսն մեր, նաև
զուսուցիչն մեր զսիմեոն քահանայ, և զնորին ծնաւղսն, և զսահփանոս
292 բ կրաւնաւոր, և զկարապետ... զի աղաւթիւք ձերովք և ամենայն սրբ ‖ [ոց]
աստուած ոգորմես[ցի յիշո]ղացդ և յիշեցելո[ցս], և արքայութեանն ար-
ժանի արասցէ՝ երկնից հանգստեանն և անսպառ բարութեանցն, ի
Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում վայել է փառք, իշխանութիւն և
պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

157.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վիեննա. 104 ծուց. Հա. Ա. էջ 464—466

Դրիչ՝ Յովաննէս
վայր՝ Հարբայ գաւառ, Դոնեվանիք գիւղ

ա

6 բ ... Շնորհիւ աեառն ոկսա և ողորմութեամբ նորին կատարեցի դաստուածախաւս տառս չորից աւետարանչացն... ի դառն և ի նեղ ժամանակիս, ի թուիս ՉԿԸ. (1316) հայ<այ>կազեան տումարիս, որ եհաս աստուածասաստ բարկութիւնն վասն ծուլացեալ մեղաց մերոց՝ մորեխն, և ըսդում գաւառս աւերեց՝ զԲասենց, զԴերջան, զսոչախս մասն, զՏոռուտափ, և այլ բազումս, որ ով կար[ել]* պատմել լեղուաւ։ Իսկ բարեգութն աստուած ոչ անտես արար զարարած իւր, այլ զթացաւ և երարձ դաստակացե[ա]լ ախտ պատուհասին...։

Ընդ նմին [յիշեցէք] ինձ՝ դրոգիս, սուտանուն Յովաննէս քահ[անայս], որ լուր զանունս ունիմ և գործս ոչ, և զծնողան մեր, որ բազում տանջիւ սնուցին զմեզ, և որք սպասաւորեցին մեզ ի նեղութիւն մերում, և խոշորութիւն և պակասութիւն անարհեստ գրիչս անմեզադիր լերուք, զի այսչափ կարացաք ջանալ և այսչափ էր մեր տկարութիւնս։

Կատարեցաւ ի թուականիս Հայոց ՉԿԸ. (1316), ի յամսեանն մարերի ի ԺԸ. (18). և Քրիստոսի մարդասիրին փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

բ

239 բ ... Կատարեցի ի խնդրոյ աստուածապատիւ Աւետիս քահանային, զոր փափաքանաւք ցանկացող եղև և ետ գրել դաստուածախաւս կտակս յարդար վաստակոց, ի յիշատակ ծնողաց իւրոց՝ հաւր իւրոց Գրիգորոյ, և մաւր իւրոյ Վանենկայ, և կենակցի իւրոյ Նուշկան, և աստուածազարդ դաւակաց իւրոց՝ Ներսիսի և Վարդանայ, և նորաբոյս Ստեփանոսի և Գրիգորի, և որ լինելոց է, նախնե[ա]ց իւրոց՝ Թորոսի, և փոխեցելոյն ի Քրիստոս Մուսիսի, Բազայի, Ստեփաննոսի և այլոց՝ մեծի և փոքու, և որք աւգնական եղեն ի նիւթ սրբոյ աւետարանիս...։

Արդ, գրեցաւ ի գաւառիս Հարբա[յ], ի գեղն, որ կոչի Դոնեվանիք, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին, ի հայրապետութեան սրբ[ո]բանեալ առաքելաշնորհ և ուղղափառ եպիսկոպոսի տէր Աբրահամու, զոր տէր աստուած ընդ երկայր աւուրս արասցէ՝ իւր սուրբ վարդապետաւքն, փիլիսոփայիւք և քահանայիւք, զորս ընդ իշխանութեամբ իւրով են՝ մինչև ի սահմանե[ա]լ կէտ կոչմանն...։

---

* Տպված է ձորով կար պատմել։

158.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4818 (տես նաև 1407 և 1432 թ. թ.)

Գրիչ՝ Յովսիաց
վայր՝ Հազարակն գիւղ

ա

579 ա ... Եւ արդ, գրեցաւ սա ի թուաբերութեանս հայ տումարի յեաւթնհարիւր վաթսուն և հինգ ամի (1316), ձեռամբ յոգնամեղ և վիշնամատն գրչի՝ Յովսիաննի նուաստի, ի թագաւորութեան խարպանդաւղուլ սուլտանին, ի հայրապետութեան աեռոն Ջ=ֆարիայի, ի գեղս, որ կոչի Հազարակն, ընդ հովանեաւ սուրբ Դանիէլի, և սուրբ և կեն-
279 բ սարեր Նշանի խաչի Քրիստոսի. և սուրբ Մինասա. || ի խնդրոյ պատուականն և երջանիկ քահանայի,* որ ստացաւ զսայ ի հալալ և յարդար յարդեանց իւրոց, ի վանելումն անձին իւրոյ և զաւակաց իւրոց, և յիշատակ բարի առաջի աստուծոյ յետ աստի կենացս՝ յաւուրն համառաւտի, ի տիեզերաժողով ատենին, յորժամ բանք սպառին և գործք թաղաւորեն...:

Արդ, որք ընթեռնուք և կամ աւրինակէք, յիշեսջիք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր ստացող սուրբ աւետարանիս** զպարոն
281 ա Յովաննես, || ... դհիւրընդալ և զաղքատասէր ամուսինն իւր՝ զԾովիկ, և զերկոքեան որդիսն նոցին՝ զԱւաքն և զՓոխաճշախն, որոյ տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ դնոսա, ամէն...:

ՋՊատրիկ քարգործն և զամուսին իւր՝ զԹամար [յիշեցէք ի Քրիստոս]:

Բ

217 ա Քրիստոս աստուած ողորմեսցի Շերկանն և Հռիփսիմոյն՝ ծնողաց Յովսիաննն գրչի, ամէն, և թողեալ զմեղս նոցա և յիշողացդ, ամէն:

Ո՛վ, պատուական եղբարք և հարք, յորժամ ընթեռնուք զհողիապողոջ աստուածաշունչ աւետարանս, զպարոն Ղարիպշախն և զամուսին նորա զՋոհար՝ զիսխեցեալքն ի Քրիստոս, յիշեցէք ի ձեր սուրբ ազաւթքս, ընդ նոսին և զնաւոցն, և Քրիստոս զձեզ յիշէ յիւր արքայութեանն, ամէն:

159.

ՍԱՂՄՈՍ

Երևան 3412

Գրիչ՝ Սմբատ
վայր՝ Կիպրոս կղզի, Լևոսիա քաղաք

ա

298 բ Ո՛վ աստուածասէր ընթերցողք և լսողք հոգելից բանիցս, զստացաւղ սորա՝ զսրբասնեալ և պատուական քահանա զՍտեփաննոս, և

* Անվան տեղը բաց է թողնված:
** Շարունակությունը գրված է այլ ձեռագրով:

ղհարաղատ եղբայրն իւր զՃուան պատուական սարկաւագ, և զծնողք սոցա՝ զԳրիգոր քահանա և զՍպիլ յիշեսջիք յաղաւթս ձեր, այլ և զհոգի ամենամեղ գրչիս Սմբատի, և ամենառատն աստուած զձեզ յիշեսցէ։ Գրեցաւ ի թու[ականիս հայոց] ՉԿԸ. (1316)։

Բ

297 ա *... Ցամի եւթնհարիւրորդի վաթսներորդի հինգերորդի (1316) ամի շրջաբերութեան հայոց տումարի, ի հայրապետութեանն Հայոց տեառն Կոստանդնեա, և ի թագաւորութեանն Հայոց Աւշնի, և ի թագաւորութեանս Կիպրոսի Ռեհոռե գրեցաւ գերահրաշ և ամենապայծառ լուսայիղ և բաղմատենչ գիրս սաղմոսաց յոգնագունակ բայիւք և ճոխական իմաստիւք։ Որում ցանկացաւղ եղեալ այսմ գեղեցիկ տառիս բարիանուն և ընտրեալ քահանայն Ստեփանոս, հանդերձ հարազատ*

297 բ *եղբարբն իւրով Ճուան սարկաւագաւն, || որ և ստացան զսա ի վայելումն անձանց իւրեանց և յետ աստեացս՝ բարեաց յիշատակ և զանձ անկողոպտելի յաւիտենական։ Որ և կանգնեցին գգեղեցիկ և զպանծալի տաճարն ի քաղաքն Սաղատամ, յանուն քաջ նահատակին Քրիստոսի՝ սրբոյն Սարգսի, յիշատակ նոցա աւրհնութեամբ [եզիցի]։*

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ ղաղափար առնելով, սրտի մտաւք յիշատակեսջիք զստացաւղք սորա զՍտեփանոս քահանա, և զեղբայրն իւր զՃուան սարկաւագ, և զծնաւղս իւրեանց՝ զԿրիգոր քահանա և զՍպիլ՝ զգնացեալսն առ Քրիստոս։ Աղաչեմ յիշել ի Քրիստոս զՏիկնայեաց Տիկինն, զսինիչալէս

298 ա *աստուածապահ կղզոյս Կիպրոսի, և զծնոդս || իւր, այլ և զսպասաւորսն մեր՝ զԱւատար տիկին և զՄարիամ, զի բազում են աշխատել ի վերայ մեր, յիշատակ նոցա աւրհնութեամբ։*

Արդ, եղև զբաւ գրչութեան սորա ի կղզիս Կիպրոս, ի հոյակապ քաղաքս Լեմոսիա, ընդ հովանեաւ սրբոյ կուսիս Վառվառա, ձեռամբ ամենամեղ և անարհեստ գրչիս Սմբատա, աղաչեմ յիշել ի Քրիստոս և զիմ անարժանութիւնս, և աստուած յիշողացդ առհասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս։

160.

ԿՈԶՈՒՄՆ ԸՆԾԱՑՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԻՂԻ ԵՐՈՒՍԱղԷՄԱՑՒՈՑ

Երևան 780

Ա. մասի գրիչ՝ Սմբատ
վայր՝ Կիպրո՞ս

ա

71 ա *Քրիստոս աստուած, քո սուրբ ծնաւղին բարեխաւսութեամբ և ամենայն սրբոց քոց, ողորմեա մեղապարտ ծառայիդ քո Կոստանդնեա քահանայի, և հանգուցեալ աստուածասէր հաւր իւրոյ Ցոհաննէսի քա-*

հանապ, և բարպաշտ մաւր իւրոյ*, որ ստացաւ զսա յարդար ընչից իւրոց, ի վայելուչն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ։ Որ արժանաւորէք բարի յիշմամբ զստացաւղս և զանարժան գրողս Սմբատ** սուտ քահանայ, յիշեալ լինիլք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։***

Ր. մասի գրչէ՝ Ստեփ[անոս] երիցորդի
վայր՝ Սկևռայ

Բ

227բ Քրիստոս աստուած, ողորմեա ստացողի սորա Կոստանդեա քահանայի և ծնաւղաց իւրոց, և մեղուցեալ դծաւղի Ստեփանոսի, և ծնաւղաց իւրոց, և ամենայն եղբարց սրբոյ մենաստանիս Սկևռայիս, և ծնաւղաց իւրեանց, և որոց զամէնն ասիցեն։

Գ

350բ Զսրբւաղան ընթերցողդ և ղլսաւղդ աղաչեմ՝ յիշէք աղաւթիւք զստացաւղ սորա զկոստանդիևն քահանայ, և զծնաւղսն իւր, և զաղդատհոմն, և զիս՝ զանարժան աշխատողս՝ զՍտեփ[անոս] իրիցորդի, և ծնողսն իմ, և աստուած զձեզ յիշեսցէ ողորմութեամբ։

161.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՅՈՑ

Ալիշան, Հայապատում, էջ 512—513

Հեղինակ՝ Յոհաննէս Եզնկայեցի
վայր՝ ի վանս Ծործորու

Դերապատիւ և զերահոչակ հայրն մեր ըստ հոգւոյ և երկրորդ լուսաւորիչն սուրբ եկեղեցւոյ, ի զարմէ և ի շնորհէ սրբոյն Գրիգորի վայելեալ, կորովամիտ և համեղաբան կաթողիկոսն Հայոց տէր Ներսէս Կլայեցի, աշխատեալ վերլուծութեամբ ի սկիզբն սրբոյ աւետարանիս՝ զեղեցիկ և հանճարեղ բանիւ, և զաղաբեալ վարդապետութիւն նորա ի մուտս վարդապետութեան փրկչին յայսմ վայրի***։ Ոչ գիտելով եթէ ո՞յր աղագաւ եղեւ խափանեալ, վասն որոյ յոյժ ի վարանս մտեալ տագնապէի. զի թէ նա ի խնդրոյ եղբօր իւրոյ Գրիգորիսի՝ վերադիտողի հայրապետական աթոռոյն՝ գրեաց զմեկնութիւնն, որպէս պատմի

* Մոր անվան գրության համար տես է բաց թողնված։

** Այս Սմբատին նույնացնում ենք նախորդ հիշատակարանի գրիչ Սմբատի հետ, ըստ այդմ էլ անթվական սույն հիշատակարանը տեղադրում ենք նրան առընթեր, 1316-ի թվաշարքում։

*** Էջ 9-ից սկսած Սմբատը փոխել է իր ձեռագիրը և սկսել է գրել մեծ բոլորագրով. այս առթիվ թողել է հետևյալ հիշատակագրությունը՝ «գրոյս տէրոյն հրամանաւն մեծագուշի գրիչս»։

**** Այսինքն Մատթ. ավետարանի է. գլխով։

ի սկիզբն նախերգութեան նորին, և ինքն իսկ յետոյ յաջորդեաց զաթոռ կաթողիկոսութեան՝ ամս եօթն, ապա ընդէր եղեւ թերի ճեպեալ աստուածային գործոյս այսորիկ գործառնութիւն։ Եւ յոյժ հետաքրքիր եղեալ՝ ի ստոյգ պատճառէ հասանն ւրիպեցի, քանզի ոմանք զմահն ասացին խափանումն, և այլք զհոդ հայրապետական աթոռոյն, և կէսք՝ թէ զրհաց և չէ ի միջի. բայց սոքա ինձ ոչ ւղեն հաւանելի։

Եւ թէպէտ ոմանք նախ քան զմեզ ձեռնարկեցին գրել ի վերայ շարադրութեան նորին, սակայն ոչ էր կարգաւոր, որպէս սրբոյն, այլ հատակոտոր արարեալ զբանս առաջին մեկնչաց, նաեւ զբնաբանութիւն աւետարանին արտաքս մերժեալ, ուստի ոչ զայր դիւրաւ. յիմացումն ընթերցողացն։

Ցաղագս որոյ, ես՝ նուաստս ի Քրիստոս և յետինն յորդիս Սիոնի՝ ապիկար ողիս Յոհաննէս եզնկայեցի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, այլ և ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսուն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան, յորոց յորդորմանէ և ի փափաքելի խնդրոյ, եղեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոյ աւետարանին Մատթէի, ընդով զթերի նորին ըստ կարողութեան իմում, շահեալ և օգտեալ յառաջին սրբոցն և է ի ծագմանէ նշուլից շնորհաց վերասացեալ առնն աստուծոյ ի միտս մեր, դիցուք տեսութիւնս պիտանացուս յանձնիւր տեղի, խառնելով զնախամատեսակ բանից տգեղութիւն՝ ընդ չքնաղագիւտ և լուսատեսակ իմաստից պայծառութեան։ Եւ. աւանդեցաք մօր մերոյ Սիոնի փարթամութեան և որդւոցն նորին՝ անխոնջ վաստակասիրաց, և հրճուանս հոգևոր խրախութեան, միանգամայն և յառաւտութիւն մտաց և բանի, յաւելուած վարկանելով զտաժանումն կարի քրտանցս մերոց՝ առ բնգարձակութիւն անդնդական խորոց լայնութեան, գիտելով եթէ Պօղոսի շնորհ է վարձս ըստ տնկելոյն և Ապողոսի՝ ըստ ոռոգելոյն։ Վասն որոյ, աղաչեմ զաստուածաբան զընթերցողսդ և զվայելողսգ այս փոքրատեսիլ և չնչին նուիրաց ընծայի՝ որ ի սուրբ եկեղեցի. վստահութեանս մերում ներողս լինել, և զսխալանս մեր, որ աստ՝ ի բառս և ի տեսութիւնս, հարազատ սիրով ուղղել։ Քանզի բնաւորեալ է սէր՝ զթազմութիւն եղբօր յանցանաց ծածկել, և զաշխատանս երկանց մերոց՝ ձեր օգտելով քաւել, և զմեզ, հանդերձ մերովքն ծնողօք՝ հոգեւորօք և մարմնաւորօք, ի տէրունի բարիսն յիշատակել։

Եւ. արդ, եղեւ գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՌՅԺԶ. (1316)։*

* Քրիստոնեական 1316-ին համապատասխանում է հայկական ՉԿԶ. (763=1314) թվականը, ուստի հիշատակարանի գրութեան իրական տարեթիվը համարում ենք 1314-ը

162.

ՇԱՐԱԿՆՈՑ

Ներսէս 5668 (տես նաև 1472 թ.)

Գրիչ՝ Կարապետ

325 բ Ծամի եւ Թնհարիւբորդի վատ[ա]ներորդի հինգերորդի (1316) թուականիս Հայոց, ի հայրապետութեան տեառն Կոստանդեա եւ ի թագաւորութեան Հայոց Աւշնի, գրեցաւ եղանակաւոր տառըս շարականաց, ձեռամբ յետին եւ վիճուն գրչի Կարապետի, ի խընդրոյ սրբասէր քահանայիս*. յիշատակ իւրեանց, և ծնաւղաց, և զարմից։**

163.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վրաց թանգարան, № 130

ա

330 ա Տէր աստուած, ողորմեայ Ներսեսի, և Մովսեսի, և ծնաւղաց նոցին, և զարմից, և որք յիշեն զմեզ ի բարի, և քեզ վառք յամենայնի, ամէն...։

բ

70 բ Ի թվին, ՉԿԵ. (1316) խնդիր եղև այսմ իրի։

164.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ

Փիլդ. 6273, էջ 125 (Լիմ)

Ր թուին ՉԿԵ. (1316), օգոստոս ԺԸ. (18) հանդեաւ ի Քրիստոս երիցս երանեալ Ահարօն վարդապետն, որ ամենայն առաքինութեամբ վարժեալ, զոր ոչ ոք կարէ պատմել զամենայն գործս առաքինութեան նորա՝ զողորմութեան և զխոնարհութեան։

---

* Անվան տեղը բաց է թողնված։

** Կան նաև հետագա ստացողներ Ներսէս քահանայի (1558 թ.) և Հովսէփ Կիրակոսի (1684 թ.) սակավարժեք հիշատակարանները։

165.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Եբևան 353 (տես նաև 1615 թ.)

Գրիչ՝ Կիրակոս

ա

34 ա Զամենամեղ ողի զԿիրակոս գրիչ և ստացաւղ սուրբ կտակացս, և զծնաւղսն իմ, և զերջանիկ բարեւնալետս մեր, որ զօրինակս շնորհեաց յիշել աղաչեմ. գրեցաւ Ծննդոց Գիրքս ի թվ. ՉԿԶ. (1317)։

բ

70 բ Զանալիտան գծող և զստացաւղ սուրբ տառիս, և զեղբաւրորդիս իմ՝ զՅովաննես սարկաւագ, որ զանձն ի յաշխատանս եղ չանակիւց լինել մեզ, մանաւանդ թէ զյոլով մասն սա գրէ, վասն որոյ աղաչեմ յիշ[ել] ի տէր զիս՝ զալիկարս Կիւրակ[ոս], և զՅովաննես, և զծնաւղսն մեր, և աստուած զյիշողսդ յիշէ, ամէն...։

գ

Ծաղկող՝ Թորոս

90 բ Ո՜վ, սրբասնեալ բարւնի Կիւրակոս, անարժան նկարչիս Թորոսի յանցանաց թողութիւն հայցեա ի Քրիստոսէ աստուածոյ։

դ

133 ա ԶՅակոբոս սրբասնունդ կրաւնաւոր յիշեցէք ի Քրիստոս, որ զգլխքիրոնս շնորհեաց, և աստուած զձեզ յիշէ, ամէն...։

ե

203 ա Ամենունակ տէրդ բարի,
Պարունակաւղդ բոլորի,
Եւ խնամածու մարդկան սեռի՝
Բարունոյ Կիւրակոսի,
Եւ Յովաննես քարտուղարի,
Եւ Թորոսի կրաւնաւորի,
Ցահեղ աւուր դատաստանի,
Ցորժամ բազմիս ի մեծ բեմի
Արդարադատ քո աւրինի,
Ոչ արասցէս ի մեր դիմի,

Այլ չնորհաւք քո հրամանի,
Մեր յանցանացն ամենայնի
Լեր դու քաւիչ յայս աշխարհի
Եւ յահաւոր դատաստանի,
Ամէն, ամէն և հղիցի։

Դրիչ՝ Կարապետ

գ

252 բ *Ողորմեա տէր* Կարապետ *երիցու և ծնողաց իմոց՝* Գրիգորի և Հազրևարդի:

է

275 ա *Տէր աստուած, ի քոյ ահաւոր գալստեանդ ողորմեա գրիս գրող ուղի՝* Կիւրակոս *վարդապետի, և ծնողաց իւրոց, և արժանի արայ լսել զերանաւէտ ձայնն, եթէ՝ Եկայք աւրհնեալք հաւր իմոյ, ընդ նոսին զմեղապարտ անձս զԿարապետս և զծնողս իմ։*

Դրիչ՝ Տիրացու

ը

310 ա *Զմեծ բարեւնապետն զնոաչի, և զհետևող նորին՝* զԿիրակոս *վարդապետն, ընդ նոցին և զմեղաւոր հոգս՝* Տիրացու *դրիչ, աղաչեմ յիշել ի տէր։*

ք

632 ա *Տէր աստուած ամենայնի, որ ի բերկեցեր զՅովսէփ յեղբարցն սպանմանէ, և անարատ պահեցեր յեղիպտուհւոյն չար ցանզուքենէ, պահեա զսուրբ բարեւնապետն* Կի[ր]ակոս *և զմեղաւք դատապարտեալ գրիչս ի կամս քո, նաև զծնողսն մեր, և յաւիտենական հրոյն ազատեա զմեղ, և քեղ փառք յաւիտեանս, ամէն։*

ժ

632 բ *Որ սպաներ զվիշապն մեծ՝ զամբարտաւան հայրն չարեաց՝ սպան և զիմ հոգւոյս դրժողն՝ զիմանալի և զդալին, զարձոյ զինասակաւս քո ծառայի՝* Կիրակոսի *վարդապետի, և զանմարմինն անլոյծ կապեա ի շղթայի, այժմ և յաւուրն ապազայի, ամէն։*

166.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Նբևան 6897

Դրիչ՝ կարապետ
վայր՝ Գլաձո՞ր

183 բ *Մեծ իշխանն Հայոց՝ Թոռն Պռաւշ, որդին Հասանայ՝ Խաչի, հանդեաւ ի Քրիստոս Թվկ. ՉԿԶ. (1317), քաղոցի ԺԹ. (10) և դեկտեմբերի ԺՀ. (18), և մեծ սուգ եղև ամենայն քրիստոնէից, աւաղ։**

* Գրված է նեբքին լուսանցքում։

211բ *Ո՛տայը ինձ աղատիլ ի յունայն և սնոտի մարմնական զբաղմանց, երանի թէ լինէը։*

Կատարեցաւ պորփիւրոս ձեռամբ փցուն գրչի Կարապետի, աստուած ողորմի իւր հոգոյն և թողու զիւր [յ]անցանք, և զիւր ծնողացն, և զամենայն արեան մերձաւորաց. ընդէ՞ զձեռագիր մեղացն և գրէ ի զպրութիւնն կենաց...։***

167.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Ալիշան, Այրարատ, էջ 172

վայր՝ Ջուղա

Գրիչ՝ Սարկաւագ Մովսէս

Ներսէս (առաջնորդ Ծովհաննավանուց) ի 1318, ազգական Համազասպայ, սա է հաւանօրէն ներբողեալն յառաջ քան զառաջնորդութիւնն՝ ի յիշատակարանի մեծադիր գրոց Սաբգսի մեկնութեան Կաթողիկեայ Թղթոց՝ գրեալ յամս 1317—20 (որ կայ առ մեզ), և տուեալ է գրել նոյն ինքն աստ ի Ջուղա, և պարգևեալ այլում եկեղեցւոյ։

«Աստանաւր երեւեալ ի շնորհաց աստուծոյ ճգնաւոր ոմն միայնակեաց աստուածահաճոյ վարուք, պանծացեալ կուսակրաւն կարգաւորութեամբ, ընդդէմ հանապազաւրեան թշնամւոյն հանգիստացեալ ի մանկութենէ, ժիր և հպատակ յամենայն աստուածային աւրէնսն. և տարաշխարհիկ լինելով յամենայն ամի ի հեռաւոր քաղաքս յաղագս վաճառաշահութեան, և դմարմնաւորն առեալ՝ հոգեւորին փոխանակէը, Ներսէս անուն. որ և մանկունս գնոց ստացեալ՝ վարժէը աստուածահաճոյ վարուք, և ի չափ հասուցեալ՝ տայր յուսումն բանի սպասաւորութեան. և այլոց բազմաց կարեկից և արդիւնաբար լինէը, յաշխարհականս և ի վանականս. և զամենայն ժամանակս իւր՝ այսպէս անցուցանէը»։

*Ծիշի անգ հարազատ եղբայր նորին Գրիգոր, և ծնողք նոցին Սիրիձիան և Տաւնիա, և «ձեռնասուն հոգեւոր որդեակն իւր Յակոբոս, որ է սպասաւոր բանիս. յիշէ անդ գրիչն Սարկաւագ Մոնոզոն՝ և զեբախտաւորս իւր ոմանս, զՀեթում քահանայ որդի Դաւթի և Ոսկետիկնոջ, և «զՀայր Թադէոս՝ զրոկիկ ճգնաւորն Ջազավանեցի»։****

---

* *Բնագրում՝ «Ձեռայդիւբ»։*

** *Ձեռագիրն ըստ Մատենադարանի ցուցակի գրված է Գլաձորի դպրոցում։*

*** *Ձեռքի տակ չունենալով լրիվ հիշատակարանը, ստիպված ենք հրատարակել հատվածաբար քաղված և համառոտված ձևով։ Ձակերտներից դուրս գտնվող նախադասութիւնները ու լրացումները Ալիշանինն են։*

168.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7781

Գրիչ՝ Հայրապետ
վայր՝ Արճեշի գաւառ, Արջրոյ վանք

250բ ... Գբևցաւ սուրբ աւետարանս յերկիրս Գաջբերունի, որ այժմ կոչի Արճեշ, ի սուրբ ուխտս, որ Արջրոյ վանք կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և որոյ կենսաբեր Նշանիս, ի յառաջնորդութեան կուսակրաւն և ճգնաղգեաց կրաւնաւորի Ներսունոյ, ձեռամբ յոգնամեղի և յետին ի կրաւնաւորս Հայրապետ ոսկանուն վարդապետի. որք հանդիսիք սմա յիշեցէք ի տէր և թողութիւն անջնջելի մեղաց իմոց հայցեցէք ի Քրիստոսէ, նաև զեղբայրն իմ զԱւետիս կրաւնաւոր՝ զկոյսնացեալն ի Քրիստոս, և զծնողսն իմ յիշեցէք ի տէր, աղաչեմ. նաև զՈվաննես կրաւնաւոր, որ բազում վշտաց մերոց եղև մխիթար, յիշեցէք ի տէր, աղաչեմ։ Ի թվ. ՉԿՉ. (1317)։

251ա Ո՛վ եղբայր, թէ գիրս միայն հայիս՝ ունայն դտանիս, ապա թէ ի զաւրս.թիւն բանին հայիս, ոչ ինչ է պատուական, որ արժէ զսա, բսա առտկոզին։

Գիրս մնա, ձեռս գնա, գատիմ հողովս, որ մեղաւք կայ, աւազ, աւազ։

Ստացող Ջալիլայ*

Բ

Ես՝ Ջալիլայ խաթունս, որ ի ժամ մանգութեան և ի աղայական հասակի ըմբռնեցայ ի ձեռն մահու, և ժամանեցին պահանջողք հոգոյ իմոյ, թողի զտուն իմ, թողի զժառանգութիւն իմ, թողի զհայրենիս իմ, լքի զկեանս իմ, մերձեցայ ի գուռն գերեզմանիս, աւտարացայ ի սիրելեաց իմոց՝ ի բարեկամաց և յազդականաց իմոց։ Կսրծանեցաւ հասակս կանգուն, անգաւ բարձրամբարձ աշտարակս, խանգարեցաւ գեղեցկութիւնս, խաւարեցաւ լուսատեսիլ աչք իմ ի լուսոյ, խցեցաւ դրունք լսելեաց, լռեաց լեզուս արագ, հատաւ բարբառ ի բերանսյս...։

251բ Ընգայ տէր քաղցրութեամբ քո զհոգիս, զոր աւանդեցեր առ քեզ, բարեխաւսութեամբ անարատ ծնաւղի քո՝ սրբոյ կուսին Մարիամու աստուածածնիդ և սուրբ աւետարանիս, զոր ըստացայ յիշատակ հոգոյ իմոյ առ քեզ բարեխաւս ի յաւրն վերջին, յորժամ նստիս յաթոռ դատողական և սպառին բանք և թաղաւորեն գործք։ Ընդ նմին և զծնողսն իմ՝ զհայր իմ և զմայր իմ, և զքորքն իմ՝ ղնատապ խաթուն և զխերխաթուն, և զաւակս նոցա, և զամենայն ազգատոխմքն իմ, ամէն...։

* Աւետարանը գրված է ի հիշատակ հանգուցեալ Ջալիլա խաթունի։ Հիշատակարանը Ջալիլայի անունից կազմել է ձեռագրի գրիչ Հայրապետը։

169.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Թվական 76

Գրիչ՝ Ցոհաննես
վայր՝ Արծկե

169բ ... Դրեցի և հաստատեալ կառուցի, աւժանդակութիւն առեալ ի վերին զաւրութենէն, ի դէմս քարտենի, ըստ իմում [տ]կարութեան դրանս աստուածտյնւոյն Սոդոմոնէի աստուածաին հոգւով առլցեալ, ի թուականութեան հայկազեան տոհմիս տոմարիս ՉԿՉ. (1317), ես անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ Ցոհ[աննես] անուն՝ գրեցի ըստ իմում տկարութեան և կարգեցի ի գէմս քարտենի, ի գաւառիս Բզնունեաց, յանապատիս Արծկեռ, ընդ հովանեաւ սրբոյ աստուածա-
170ա ընակ խորանացս՝ || սուրբ Սիոնի, և մաւրս լուսայ Աստուածածնիս, և սուրբ և աստուածընկալ Նշանիս՝ պայծառ անուամբ սքանչելագործիս, որ իր կարողութեամբս հասս ի վերջ գրոցս։ Ո՛վ մանկունք նոր Սիոնի, որք հանգիպիք ընթեռնուլ և մտաւք ճաշակեալ յայսմ յոքնահամեան սեղանոյս, որէ՛ ի պէտս կրթութեան մանկանց նոր Սիոնի, և զսոյն ընդունիք [յիշեցէք] եւ դ[յ]առաջասացեալ գթադեռս աբեղայս, որ վաստաքանաւք և լի հոգւով և յաւժարութեամբ մտաւք ստացաւ զտառս աստուածաշունչս անչինչ յիշատակ իւրն, և ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձակաից իւրոց։

170բ Բայց գրեցաւ սա ի սաստիկ և յընդիր աւրինակէ, ի վաղուց յետէ ստուգնալ և ճշմարտեալ ի նոյն պայմ || անի, բանիւք և բառիւք և տառիւ անթերի և անսղալ գոլով, զի թէպէտ և յաղագս մերոցս կարեաց ի սոյն ձեռնարկեցաք, սակայն և առաւել ևս վասն աւրինակի և գաղափար այլոց լինելով սա՝ ըստ յարմարութեան բանիցն, զի ամենայն ոք համարձակ զայս առցէ առ ի յայլ փոխելոյ, առանց երկբաւութեան և կասկածանաց...։

170.

ՃԱՇՈՑ

Թվական 4760

Գրիչ՝ Թումայ
վայր՝ Աւագս գիւղ

309բ ... Արդ, այս... գործոց սրբոց առաքելոցս սիրաբար ցանկացա ևս՝ տէր Խաչատ[ուր] եպ[իսկոպոս], յիշատակ հոգոյ իմոյ, և ծնաւղաց իմոց, և հայրազատ եղբարց՝ Պապերոյն և այլ եղբարցն՝ հանգուցեալոց, կացցէ հաստատ յիշատակ մեզ ի դրան սուրբ Աստուածածնին Հոգեաց վանից, որ և լիցուք մասնակից ազաւթից և պատարագաց ճշմարիտ մարմնոյ և արեան Քրիստոսի։ Արդ, աղաչեմ զմիաբան սպասաւորք սուրբ Աստուածածնիդ Հոգեաց վանից, զի յիշման և

պատարագաց արժանի արասջիք զտէր Խաչատուր՝ վերադիտող Հոգեաց վանից, զկնի եկից մերոց յաշխարհէ, զի և դուք յիշեալ եղիջիք առաջի Քրիստոսի աստուծոյ մերո, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւ արդ, գրեցաւ գործքս սրբոց առաքելոցն ձեռամբ յոգնամեղի և անարհեստ գրչի Թ[ու]մ[այ]ի, ի թվ. հայոց ՉԿՉ. (1317), յամս աստուածապատիւ և հոգիաշնորհ տէր Զաքարէի հայոց կաթողիկոսի՝ Ախթամարա սուրբ խաչի տոհմէն Գագկայ, և ի վերադիտողութեան գերահռչակ սուրբ ուխտին Վարագայ՝ տէր Պ[ե]տ[րոս]ի՝ հեզի և բարեսիրի, որոյ տացէ տէր աստուած սոցա ժամանակս ընդ երկայն աւուրս, ամէն, ամէն։

Բայց գրեցաւ ի գեղս, որ կոչի Աւագս, ընդ հովանեաւ սուրբ Յով[հաննու] Կոր[ապետի] և սուրբ Գրիգորի Հայոց լուսաւորչի։

Տէր Յիսուս, ի քո միւսանգամ գալստեանդ ողորմեա ստացողի գրոցս, և կարդացողացն, և Նկարայ հոգոյն, որ սակաւ ինչ աւգնեց ի թուղթ գրոց, ամէն։

... Ո՛, աստուածընկալ և շնորհակիր սուրբ տէր Խ[ա]չ[ատուր], զղատապարտեալս մեզաւք ղ[ո]յ[ս]ա գծողս յիշեա ի գրան սուրբ Աստուածածնիդ, զի սուրբ աղաւթիւք ձերովք ողորմեսցի մեղաւորիս։

Հիւր աչացս ծերացեալ է, բայց յետոյ խաւարի, զի ապականացու է։

171.

ՄԵԿՆ. ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Փերդ. 6273, էջ 125—126 (Լիմ)

Ստացող՝ Խերիկ տիկին
Գրիչ՝ Թումայ
վայր՝ ի գաւառիս Վանայ։ Ֆաղամի, Աւագս գիւղ

Արդ, այսմ հոգևոր և աստուածային դանձարանիս ցանկացայ ես՝ մեղուցեալ և անարժան աղախինս Քրիստոսի Խերիկ տիկին, դուստր Վարդանայ, և զաւակն իմ՝ Ազիզ տիկին, և Տիկնայ տիկին...։ Ստացաք զսա յիշատակ հոգւոց մերոց...։ Տուաք զսուրբ գիրքս ընծայ Ստեփաննոս նախավկային, որ ի յՈստան քաղաք, յերկիրն ըՈրշտունեաց, որ է հանդէպ լերինն Արտօսայ։ Արդ, մի ոք հեռացուսցէ զսա ի գրանէ սրբոյն Ստեփաննոսի նախավկային...։

Բայց արդ, գրեցաւ ձեռամբ յոգնամեղի և անարհեստ գրչի Թումայի անարժան քահանայի, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի հայոց կաթողիկոսի՝ Աղթամարայ սուրբ Խաչի առաջնորդի, և յառաջնորդութիւն գերահռչակ և սուրբ ուխտին Վարագայ՝ տէր Պետրոսի՝ հեզի և բարեսիրի, որոյ տացէ տէր աստուած սոցա զժամանակս ընդ երկայն աւուրս, ամէն։

Բայց գրեցաւ սուրբ տառս ի գաւառիս Վանայ քաղաքի, ի գիւղս, որ կոչի Աւագս, ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու Կարապետի և սուրբ Գրիգորի հայոց լուսաւորչի, որ են բարեխօս ստ տէր վասն մեր...։ Նաև զայլսն միանգամայն՝ զհանգուցեալսն առ Քրիստոս՝ զՅովհաննէս

քահանայն մականուն Պզտիկ երէց, գՀայրապետ՝ տարաժամ հանգուցեալ, Ստեփաննոս՝ տարաժամ հանգուցեալ, գՕհր՝ տարաժամ հանգուցեալ..., որք վախճանեցան ի ՉԿՉ. (1317) թուականին։

172.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Թղթոս. Աղբար. Ի. էջ 419 (Տէղրանակերտի սբ. Սարգիս եկեղեցի)

Վայր՝ Որնոյ գաւառ, Բատուց գիւղ

*Գրեալ ի թվ. հայոց ՉԿՉ (1317), ի գաւառիս Որնոյ, ի գեաւղս, որ կոչի Բատուց, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորի եւ սուրբ Ցակոբայ, յառաջնորդութեան տէր Գրիգորի՝ հեղի եւ խոնարհի եւ. մեր իշխեցողի։ Այլ եւ զճարտասան քարտուղարն զԱռտուածատուր կրաւնաւորն, զարծարծիչ տառից եւ զնիւթ շուշանաց մատենից, զխրատիչն իմ... յիշեսջիք...։ Ետ գրել Գրիգոր կրաւնաւորն...։**

173.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Թղթոս Աղբար Ա. էջ 218 (Տիւրիկ, սուրբ Աստուածածնի եկեղեցի)

Գրիչ՝ Վարդան

Վայր՝ Դարանաւ դաշտ, Խոռիճացք գիւղ

... Եւ արդ, աւարտեցաւ աւետարանս... ի թվարերութեանս յոբելեան տումարիս ՉԿՉ. (1317), ի փառս և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի դաշտիս Դարանաւու, ի գեաւղս Խոռիճացց, ձեռամբ Վարդանայ աշխարհի իրիցու, յիշատակ ինձ և իմոցն, հաւր իմոյ Գրիգոր քահանայի, և մաւր իմոյ Աղբրացի, և եղբարց իմոց Մկրտչի, և Աշխեն տիկնոջ։

Դարձեալ աղաչեմք զամենեսեան, որք հանապազ խաչակիր լեալ էք խաչելոյն Քրիստոսի և պղտաբերեալք արգասաւորութեամբ պըտղաւք ի կամս աստուծոյ, յիշել զվարդապետս մեր զՑակոր, [զ]Կարապետ, զՍտեփաննոս, և զՑովհաննես. և զծնաւղս իւրեանց, և զհարազատ եղբայրս նոցա։ Եւ որք կամակից եղեն սմայ ըստ իւրաքանչիւր կարի, Քրիստոս աստուած փառաւորեալ հանդուսցէ զհոգիս նոցա ի խորանս սիրողաց իւրոց, ամէն։

** Հիշատակարանն իր արդյան վիճակում անդամահատված ու համառոտված է հրատարակչի կողմից։*

174.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թորոս Ադբաբ. Բ. էջ 300—302 (Կամախ, Սբ. Թադէոս Առաքելոյ վանք)

Ստացող՝ Յովհաննէս
վայր՝ Կիլիկիա, Կրակայ գիւղաքաղաք

... Արդ, ես տրուպս եւ եղկելի,
Յոհաննէս անուն իմ յորջորջի,
Որ ձեւ ունիմ քահանայի
Եւ ի բարեաց եմ խիստ հեռի...,
Ցոյժ բաղձանաւք զսա գրել տըւի,
Ի գիւղաքաղաքն, որ Կրակայ կոչի,
Ընդ հովանեաւ սուրբ Գրիգորի,
Զեռամբ Կոստանդին քահանայի,
Եւ ինհարիւր հայոց թուի
Վաթսուն և վեց անցեալ ամի (1317),
Ի հայրապետութեան տեառն Կոստանդի՝
Հայոց մեծաց հեղինակի (*),
Ի թագաւորութեան Հայոց Աւշնի՝
Բարեպաշտի եւ յոյժ հեզի։
Արդ, ես նուաստ յամենայնի,
Ծնունդ մալեալ ժամանակի...
Հայցեմ արէք գիս արժանի
Ցաբտաստւելոյն ժամանակի,
Զեզ լսէ տէրն բարի,
Թողցէ զյանցանս իմոյ պարտի,
Նաեւ իմոցն ամենայնի,
Փոխեալքն, որ կան եւ, որ լինի,
Եւ հաւրն իմ Սիրուճի,
Եղբաւր իմոյ Առաքելի,
Եւ Կիրայի ճգնաւորի՝
Մաւր ըստ մարմնոյ մեր պանծալի,
Եղբաւրկանն իմ Ցահաննէսի,
Եւ Մարուգհ կրաւնաւորի,
Եւ Ցոհաննէս քահանայի՝
Զաւրինակն շնորհողի...
Բարեմիտ քեռն իմոյ հեզի,
Եւ որգեկաց իւր ըստ կարգի՝
Վասլի եւ Ցոհաննիսի,
Սիմէոնի եւ Առաքելի։
Տացէ նոցա աէր կեանս բարի,
Երկայնաւրեայ՝ յայսմ աշխարհի.

Ապէնիաղ տէրն բարի
Ամենեցուն ողորմեսցի,
Եւ նմա փառք յեկեղեցի...

175.

ՊԱՏԱՐԱԴԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՄԲՈՐՈՆԱՑՒՈՑ

Փերդ. 6273, էջ 126

Գրիչ՝ Յօհաննէս
վայր՝ Կիպրոս կղզի, Մադուստ բաղաք

Գրեցաւ զիրքս այս ձեռամբ անիմաստ մեղուցելոյ Յօհաննիսի սպասաւորի աստուածային բանի, ի թուականիս հայկազեան սեռի ՁԿՁ. (1317), ի Կիպրոս կղզի, ի դուռն աստուծոյ մօր տաճարին Աստուածածնի, [որ է վանք ա կոչի Կանչուտ]*, ի քաղաքիս Մադուստ:

176.

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Վեներ. 265 ծուցակ. Բ. էջ՝ 857—859

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Գլաձոր

ա

385 բ Ի թվ. հայոց ՁԿՁ. (1317) գրեցաւ սա ձեռամբ Սարգիս սուտասնուն արեղայի, անարհեստի և յոյժ անպիտանի: Աղաչեմ զամենեսեան անմեղադիր լերուք, զի վաւաճումն բանից յաղթեաց զմեզ: Դարձեալ աղաչեմ յիշել զհոգևոր ծնողսն մեր՝ զՄեծտիկին, և զՄարթա, զնուսթի, զՀովաղեղն, զեղբայրն մեր՝ զԴրիգորես, և զամուսին իւր՝ զՄամախթուն, և զծնողսն իւրեանց, և զմարմնաւոր ծնողսն մեր, և զաբեամբ ներկնալ զեղբայրն մեր զՈւատն, որ տարաժամ հասակի սպանաւ յանաւրինաց, և խառնեցաւ բնդ մարտիրոսացն, ևս աղաչեմ զհոգևոր և զմարմնաւոր զեղբարս և զծնողսն մեր յիշեցէք յաղաւթս ձեր. և յիշողքդ եղիցիք աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

բ

485 ա ... Արդ, ես Սարգիս համբակ և սպասաւոր բանի, տկար մարմնով և տառապեալ անձամբ, բաղում երկովք և աշխատութեամբ ծրագրեցի զսայ իմովս միտն և անարհեստ մատամբ, գումարեցի զսայ իրրև

* Սուրբ հիշատակարանը Փերզալամյանը քաղել է ոչ անմիջապես ձեռագրից, մեր կողմից փակագծի մեջ առած ծանոթությունը, հավանաբար, Փերզալամյանն ինքն է ավելացրել:

զմեղու, որ զխորիսին ժողովէ ի վայելուչ բուրաստանաց՝ ի բջիջս մազու իւրոյ, նախ ի սէտս իւր և ապա ի բժշկութեան հիւանդաց։ Այսպէս և ես, կամեցայ զսայ ամբարել ի քարտի՝ ի մարմին, ձևով տառի, և ապա իմանալաբար՝ ի հողի ստացուղացն զսա։ Եւ եղև կատարումն գրոցս ի թվ. ՉԿԷ. (1318), ի դաւառիս Վայոյձորոյ, յանապատս Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի և մեծ վարդապետի և անյաղթ հռետորի՝ Եսայեայ, ի թագաւորութեան Հայոց Աւշնի, և ի կաթողիկոսութեան [Կոստանդնեայ*, և յիշխանութեան դաւառիս Ամիր Հասանայ, որդոյ Իայէ, որդոյ Ամիր Հասանայ, որդոյ Պռօշայ բարեպաշտի, զոր աէր Ցիսուս տացէ նոցա ողորմութիւն, և զկենդանի քիքս պահեսցէ ընդ ամբածածուկ աջովն իւրով։

Արդ, որք աւգտիք ի սմանէ, ասաւոյիք՝ աէր Ցիսուս, ողորմեսցի Գրիգորիսի, և ամուսնոյ իւրոյ Մամախաթունին, և ծնաւղաց նոցայ, և ամենայն արեան մերձաւորաց, որ ձեռնտու եղեն այսմ գրոցս, զոր տէր աստուած հատուսցէ նոցա միոյն հարիւրապատիկ յայս կեանքս և ի հանդերձեալն։ Եւ աղաչեմ յիշել ի տէր ղՊարոնլոյսն և զաստուածապարգև զաւակն իւր՝ զղեռաբոյս ծաղիկն և զգեղեցկատեսիլ մանուկն՝ զՄիրմիրն, զի արասցէ տէր ընդ երկայն աւուրս, անսասան և անսայթաք կենաւք ի վերայ երկրի, և որք յիշէքդ յիշեալ լինիք յաստուծոյ, ամէն։

գ

361 ա Զմեղապարտ և զփցուն գրիչ Սարգիս յիշեայ, և զեղբայրս իմ՝ զԳաւիթ Հազրատեցի, և զԹորոս ծաղկող Տարոնեցի։

177.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4456

Ծաղկող՝ Ամիր-Սարգիս
վայր՝ Գլաձո՞ր

ա

66 բ Ի քրիստոս աստուած, քո կամաւոր խաչելութեամբդ, որ համբերեցեր մահու և խաչի, աւգնեա և փրկեա յերեսելի և յաներևոյթ թշնամեաց զԳրիգորիս քահանայ և զամուսին իւր զՄամախաթունն, որ աւգնութիւն աբար աւետարանիս ծաղկելուն ամենայն իրաւք՝ հացիւ և թոցիւ և հոգութեամբ։

Եւ որք կարդայք զգիրս, միով յիշմամբ թողութիւն խնդրեցէք ի տեառնէ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

բ

191 ա Ո՛վ պատուական քահանայ, յորժամ ընթեռնուս զմեղապարտ և զանարժան և զանպիտան ծաղկողս՝ զԱմիր-Սարգիս յաղաւթս յիշեայ,

* Ջնջված է, վերականգնում ենք 253 բ էջի հիշատակագրության հիման վրա։

ընդ նմին զհայրն և զմայրն իմ՝ զԴաճկլն և զԱզուտխաթունն, նայև զվարդապետան իմ զՄխիթար սարկաւագն և զԳրիգոր գրագիրն յաղաւթս յիշեցէք, որ աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալուստն, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, եղիցի, եղիցի։*

* Սույն գրիչը՝ Սարգիս կամ Ամիր-Սարգիս, 1317/8 ԹԹ. ընդօրինակել է Վենետիկի մատենադարանի № 265 ձեռագիրը—Ոսկեփորիկը (տես՝ նախորդ հիշատակարանը), ուստի հիշատակարանը տեղադրում ենք 1318-ի թվաշարքում։

178.

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԵՒ ԵՍԱՑԵԱՑ ՄԱՐԴԱՐԷՒ

Գողթն, Ազգ. հնդ. գիրք XII, 1905 թ., էջ 163—164

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Վարագայ վանք

Արդ, յամս վերագիտութեան երջանիկ հոգևոր աւետն Զաքարեայի հայոց դիտապետի, և յաոաջնորդութեան սուրբ ուխտիս՝ հոդէկիր վեհիմատոտ հովւապետի տեառն Պետրոսի և նորին [հարազատի]՝ Յովասափի, ղրեցաւ ատոս աստուածայինն, ընդ հովանեաւ սրբոյ Նշանիս Վարագայ, յոյժ տառապանաւք և նեղութեամբ, ձեռամբ մեղապարտ և անարժան կրաւնաւորի Յակոբի. ի թուիս Հայկազնեան տումարիս եւթնհարիւրորդի վեցքանեորորդի եւթնեորորդի (1318), յայսմ ամի յորում ծիլի ամենայն երամք քրիստոսավաոաց ի շնչմանէ նետողական աղդին Պարրաթադաղուլն դանի. վիշնլով ի նա սատանայ՝ հարկ հրամայեաց առնուլ յամենայն քրիստոնէից վաճն հաւատոցն, որ ի Քրիստոս, և նշան կապոյտ հրամայեաց կարել ի վերայ թիկանց հաւատացելոցս։ Եւս աւելի կրաւնաւորացս հարկ առնուին առանց դանի հրամանին։ Յետոյ երից երանեալ երջանիկ հայրապետն Զաքարիայ հետ դանին գնացեալ մինչև ի Բարելոն ամ մի ողջոյն, և առեալ* առեալ ի նմանէ՝ դիրաւնաւորքս և դքտհանայսն ազատեաց ի հարկապահանջութենէ, այլ յաշխարհականացն և ի տղայոցն առնուին։ Որոց** զարդիս խաղաղական կենաւք շնորհեսցէ նմայ տէր, և իւրոցն ամենայն, և գեղիցն (՞) յիշատակ աւրհնութեամբ ի Քրիստոս։ Եւ յայսմ ամի գարունն առին զհարկն և աշունն զանն մնաւ։ Եւ այլ եկին, ոմն անուն Աղլաղու, Սինքամուր և Հատանքամուր ՌԳՃ. (1300) մարդով և կրկին հարկ առին՝ յոյժ անչափ, և ոչ ոք ընդդիմացաւ նոցա։ Եւ վանօրայքս, որ ազատ էին, զոր ըմբռնեցին անհնարին տանջանաւք չարչարեցին և անչափ տ[ուգ]ւ[ցատ] առին։ Մանաւանդ սուրբ ուխտս մատնեաւ ի ձեռս նոցա։ Ցանկարծակի գաղտաբար եկին յերկիւնն և ամենեքեան փախեաք, և զորս ըմբռնեցին՝ անհնարին տանջեցին, որ ոչ կարեմք պատմել. և քաղաքի տաճկին բազում լինչք տուին և հաղիւ թափեցին ի ձեռաց նոցա։ Եւ այլքս, որ փախեաք, այլ չկարացաք դառնալ ի վանքս, զի հանապազ զտիւ և զգիշեր, ի խնդիր ելանին մեզ, և մեր ահաբեկեալք ի նոցանէ ահու և դողութեամբ կէաք զցայգ և զցերեկ ի սուրբ լերինդ, ի խորշս և ի ծերպս վիմաց, և նոքա ամէն

* Իմա՝ առլեխ—Ярлык—հրովարտակ։
** Տպված է Հորոնց։

աւր դայլին. և զեկեզ[եց]եաց դռներն և զխցերոյն դամէն բացին, և յաւարի առան զինչ որ դտան: Բայց սուրբ Յովհաննիսա դուռն միայն ՃՆաց, վասն զի ճղնազդեաց փակակալս մեր Ղազար կր[աւնաւորը], զահ և զերկիւղ ի բաց եղեալ և յեկեղեցին կացեալ բազում աւուրս, և սուրբ Նշանն՝ պահեաց զնոսա, և ափշեցոյց զսիրտս այլազդեացն, որ ոչ մաքառեցան ընդ դուռն երկաթի: Եւ այլ բազում վիշտ, և նեղութիւն, և տառապանք կրեցաք յամենայն դիմաց՝ յամարանի և ի ձմերանի, փախստեայ լինելով և բռցաւթեայ կելով ի սուրբ լերինդ՝ և այլ դժնդակ նեղութիւն, որ ոչ կարեմք պատմել. և մեք ամէն կրաւնաւորքս* կամ աւելի, երիցս երանեալ առաջնորդաւս մերով՝ տէր Պե[տրոսիւ], որ ոչ եթող վարատել մի ոք ի մէնջ, որոց զարդիս խաղա[ղա]կան կենաւք շնորհեսցէ սոցա տէր աստուած միաբան ուխտիս, և զելիցն յիշատակաւ աւրհնութեամբ ի Քրիստոս: Եւ մեք բազում ժամանակս զայս նեղութիւնս կրելով և առաւել քան զսոյն, և առ սէր սուրբ Նշանիս և ի սա ապաւինելով, ի սուրբ ուխտէս ոչ հեռացաք, քաղաքն և երկիրս ամէն այսր անտր փախեան, լուր մարդասատան Ճնաց, և մեք ի տեղս հաստատուն կացաք վասն սուրբ Նշանի սիրոյս:

179.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 356 (տես նաև 1677 թ.)

Դրիչ՝ Ներսէս,
վայր՝ Եղիվարդ

...Արդ, ղըրեցաւ սայ ի թուաբերութեանս Հայկազեան տոմարիս հաւթնհարիւր և վաթսուն և եաւթն (1318), ի խընդրոյ հրաշափառ և
246ա հաւատարիմ ծառայիցն Քրիստոսի՝ պարս || ն Ազիզպէյիճ և ամուսնոյ իւրոյ պարոն Վախախին: Սոքայ էին բարեպաշտ ծնողաց դաւակ և յաղնուական ազդաց և տոհմից, կամարարք և հաճոյարարք արարչին ամենայն եղականաց: Եւ սոքա՝ բարեպաշտ տեարքս մեր՝ քաջ զաւրավարն ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի՝ պարոն Ազիզպեկն և բարեմիտ տիկինն մեր՝ բարձրավիզն ի ցանկութիւն՝ Վաղխախ, ի մանգուխենէ իւրեանց սնեալ և վարժեալք ամենայն բարեպաշտութեամբ, ըբխէին ի բերանոյ իւրեանց զբանս քազ[ց]րաճաշակս ի լրս[ել]իս մարդկան, և զոզորմութիւնս առ ամենայն աղքատս, և զարդիւնս մեծաղինս և զեղեցկատեսիլս առ ամենայն եկեղեցիս: Եւ աջողիչ ամրածածուկ և սիրոյն հայրախնամ վարէին զկեանս իւրեանց, որպէս ղի հաճոյ թվէր ի յաչս եպիսկոպոսաց և վարդապետաց, քահանաից և աստուածասէր իշխանաց, աւրհնութիւն, զովութիւն և փառս մա-
246բ տուցանէին || տվողին այնպիսի [ի]մաստութեան մարդկան: Եւ վիշապն

* Ըստ երևույթին հրատարակիչը անուշադրությամբ բաց է թողել կրոնավորների թիվը արտահայտող տառանիշը:

ահադին բարձրացուցեալ զգլուխս իւր և պշուցեալ հայէր ընդ յանհաս բարեպաշտութիւնն նոցա, ամլեցաւ սիրտ նորա և դէմս արարե[ալ]։ դայր սառ..մամբ ի վերայ նոցայ կլանել զնոսա։ Եւ հայեցեալ ի հեռասանէ դինէ ախս եառս և ահակազակս ի վերա հինդ դրանցն, որ ի վերա մարմնոյ նոցա, և զհինգ ողաարանս նոցայ բեւեռեալս ի սէրն Քրիստոսի, ոչ կարաց մերձենալ առ նոսայ։

Եառս զաչս նոցա, որ միշտ հոսէին դվըտակս արտասուաց ի ժամանակս աղաւթից և պատարագաց, և միշտ ի վեր հայել ի գլուխն իւրեանց ի տէր Յիսուս, և ոչ կարաց մըտանել ընդ նայ։

Եառս զրերանս նոցա պարկեշտս յաւելորդ ուտելոյ և ի խմելոյ, և որոշեալ յամենայն խեղկատականաց, [յ]իշողաց և ի բամբասանաց, և զձեռս նոցա՝ արդելեալս ի զրկելոյ և ի ծեծելոյ, այլ միշտ և անխափան առատ յողորմութիւնս աղքատաց, և զոտս նոցայ՝ յերթևեկս
247ա աղաւթից, և ‖ զուակաց նոցա ի լսել ըղպատուիրանն աստուծոյ։ Եւ դարձուցեալ զդէմս իւր ի նոցա պեղծն խենեղ, և ասէ՝ վաշ, ինձ, բազմազիմի սպառնալեաւք եկեալ յաղթեցա ամաւթխալից, և ասէ պեղծ թշուառականն[ն]՝ տրդ գիտեմ զինչ արարից, արկից զադահութիւն ի սիր[տ]ս ընդանեաց սոցայ, զի որոշեցեն զսոսայ յարկաց իւրեանց։ Եւ արար այնպէս. տնկէ յատ նոսայ նախանձ, և պատերազմ յարսյց ի մէջ եղբարց նոցա, և հողմով դիւական տարուբերէր զնոսայ իբրև զնաւս՝ի հողմահար ալեաց։ Եւ նոցա նախանձ արկել բանիւք բազմա-
զիմ[ի] խոխոջէին զնոսայ։ Եւ նոքայ զմտաւ ածեալս զայն, որ առաքեալն հրամայէ, թէ՝ ով մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն, թէ անձկութիւն, թէ սով, թէ հալածանք, թէ մերկութիւն, զի սովորութիւն է աստուծոյ վւորձել զմարզիկ՝ թէ հարստութեամբն կու սիրէ զաստուած, թէ աղքատութեամբն այլ կու սիրէ, որպէս զ[ծ]որ։
247բ Եւ սոքայ՝ աստուածահաճոյ տեարքս մեր, որոշ ‖ եալ յամենայն ընչից և ոչ հատան յուսոյն, որ առ Քրիստոս, և համբերել ամենայն հնարիցն սատանայի և ուռամբ հոգւոյն չախեցին զգլուխն Բելիարայ։ Եւ հայեցեալ ողորմածին աստուծոյ, զի զբտան յաղթողք ընդդէմ թշնամոյն, ապա ողորմածին աղետիւք ժողովեաց զնոս[ա] ի խնամքն արարչական, և եղ զթշնամիս նոցա պատուանդան ոտից նոցա։ Եկեալ տեսին զբնակութիւն նոցայ աւերեալ և կործանեալ, և զաւանս իւրեանց զնդիվարդ՝ բնակութիւն աւազակաց. և կամակցութեամբ ամենակալին աստուծոյ զամենայն ըզպաբոսն հատուցին և վերստին նորոգեցին ըզգոյ բազում տգնութեամբ և չարաչար վըտանկաւք, մի մի ժողովել զցրուեալսն, բազում և յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տէրանց իւրեանց՝ մեծին Շահինշահի և խոյանդզային, և հեզաբար և հնազանդաբար շրջէին ընդ նոսայ, մինչև ամենայն զիմաւք
248ա հաստատեցին զմեծ մենաստանս՝ զնդիվարդ, շինել զամենայն քանզեալս։ ‖ Եւ յետ այսր ամենայնի հոգին սուրբ շարժեաց ըզնոսայ, և սկսան արգիւնս մեծամեծս մի մի յաւելոյր աստուածատիպ շնորհ ողորմածութեանն և կամք շինութեան զտունս հոգւոյ և մարմնոյ։

Ջաղցրատես և ողորմագութ պարոնէքս մեր Ազիզպեկն և Վախտանգ

սկսան շինել վանս ի կորգոյ՝ զուխտն սրբոյն Յակորայ՝ յանուն սուրբ առաքելոցն, և զարդարեցին զնայ մեծամեծ վայելչութեամբ, ստացան բաղում այդիս շուրջ ղընակութեամբն ուխտին։ Եւ զներքս եկեղեցոյն զարդարեցին քանդակով, նազաշուքեամբ ձեացուցին դպատկեր ամենափրկչին, և զմաւրն իւրոյ Աստուածածնին, և զառաքելոց, և ըզմարգարէից, միչնորդ արարե[ա]լ զնոսա առ բարեգութն աստուած։ Եւ մեծագին գրեանս ազգի ազգի, և մեծագին ագեստիւք զարդարեցին զնայ, և արարին զնայ ընակութիւնս կուսանաց, և ետուն զամենայն պէտս
248բ ագեստից և կերակրոց, և ոչ ինչ կարաւտք եղ[եալ] յամենայնէ, զոր ինչ պիտոյ էր՝ հոգևոր և մարմնաւոր։ Եւ բարեպաշտ պարոնն Ագիզպէկ և աստուածասէր տիկինն մեր Վախախն՝ ուրախութիւն և ցնծութիւն մեծ արարին բազում գաւառաց և մեծ մենաստանիս Նռիվարդայ։

Գնացեալ ի սուրբ ուխտն աստուածընկալ և տեսեալ զգնացս ջրոյն Նռիվարդա աւարեալս և խոպանացեալ, որպէս զի թերևս երևէին հետք նորա, և աստուածային նախախնամութեամբն վառեալ սիրտ նոցայ և աչքին ապենիազ թագաւորին Քրիստոսի, և պնդեցան իրր այր դիէզ ի[ւրեանց և]* արիացան և ոչ հաշվելով զծախսն, որպէս զուարդուն հրեղէն, տագնապէին, ոչ ունելով զհանգիստ և զքուն՝ ի տվէ և ի գիշերի։ Եւ շրջապատել զլեառն Արարատեան հասուցին զջուրն յորդառատ վրտակաւք փոյթընթաց յՆռիվարդ։ Եւ զգժվարութիւն սահմանացն, և զ[յ]ոլով աշխատութիւնս, և զտուրս արվեստավորացն, և զամենայն ծախսն ով կարէ բնդ գրով արկանել։ Եւ զանհասանելի երկրաչափ գեռաւորութիւն տեղոյ, որ ի քաղաքէն Բըջնոյ** մինչև
249ա Կարբի ոչ գը || տանէին ջուր յարբունս մարդկան, և պապակէին անցորդք ճանապարհաց ի տապոյ յաւուրս ամարայնոյ։ Եւ ի գալ և ի մրտանել ջրոյն յանտաստանս մեր, վերստին նորոգեցան ամենայն արմատք, և նորափետուր զարդարեցան և զըւարճացան ամենայն կենդանիք՝ մարդ և անասուն, թռչունք երկնից և գազանք զովանային, զուարճանային և ուրախ լինէին, աւրհնէին, գովէին և փառաւոր առնէին զաստուած, և բազկատարած ձեռաւք և մատնագրեալ պաղատանաւք խնդրէին ի տուողէն բարեաց ի Քրիստոսէ շնորհել զերկայն աւուրս, հանդերձ ամենայն ուրախութեամբ, բարեպաշտ պարոնացն մերոց Ագիզպէկին և Վախախին, կրկին կենաւք և երկու աշխարհաւք պահել զնոսա ամբողջ և անխռով ի կամս ողորմութեան նորայ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Եւ յետ այսորիկ զաւրութիւն բարձրելոյն շրջապատե[ա]լ պահէր
249բ զնոսա || յամենայն հնարից սատանայի։

Արդ, վասն այսորիկ գրեցաք զգնացս վարուց նոցայ, զի բարի աւրինակ էին բազմաց, նոյնպէս և ոյք յառնեն ի սոցանէ ծագիկ գեռայրոյսք՝ արասցեն զվարս նոցայ և դարձեալ պատմեսցեն որդոց իւրեանց, զի մի կորիցէ բարեպաշտութեան վարք նոցայ յաշխարհէ։

---

* Փակագծի մեջ եղող տառերի վրա թուղթ է փակցված վերանորոգողի կողմից, առաջարկվող ընթերցումը ըստ իմաստի և տառերի քանակի ավելի քան հավանական է։

** Բնագրում՝ «Բրջնոյ»։

Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ մեղսասէր քահանայի Ներսեհի, ի յԱյրարատեան գաւառիս, ի մեծ մենաստանիս յՆդիվարդ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Գրիգորիս, և սուրբ Յակորիս, և այլ միտհամուռ որոց առաքել[ոց], հրամանաւ և արդեամ[բ]ք պարոն Ագիգպէկին և Վախախին, յիշատակ ինքեանց և ծնողաց իւրեանց՝ Աւագ պարոնին և Թամարին, Խար Ասլանին և Ըռուզուխանայ, և զաւակաց իւրեանց, ի ժառանգութիւն և բարեխաւս կենաց առ Քրիստոս՝ Թալխանէ, և անդրանիկ որդոյ իւրեանց՝ Աւագին, Յո-
250ա հաննիսին, || Սարաննիսոյին, ևս Ասանթանէ, և ամենայն արեան մերձակայից՝ կենդանեաց և մեռելոց։ Որ եւուն գրել ըզսայ մեծաւ փափաքանաւք ի հալալ արդեանց իւրեանց, և պատուեցին զսայ ոսկով և արծաթով, և ընձայեցին ըզսայ սուրբ առաքելոցն, զի լիցի բարեխաւս և յոյս պարծանաց առ Քրիստոս յաւուր մեծի հրապարակին, զի ընկալցին զսուրբ աւետարանս ի գիրգս իւրեանց բարեպաշտ իշխեցողքն մեր, և տարել ընձայեսցէն Քրիստոսի աստուծոյ մերոյ, և նայ տարել ընձաեոցէ զնոսայ երկնաւոր հաւրն ասելով, եթէ՝ ունին զբանս իմ ընդ յիւրեանս. և նայ դասեցուսցէ զնոսայ յանսպառ ուրախութիւնսն, զի դրեալ է թէ՝ ուր ես եմ անդ և պաշտաւնեան իմ եղիցի։

Արդ, աւարտուաւ արարից, զի ոչ ներէ բանս բազմի։

Արդ, ունկնդիր լերուք սակաւ բանից տեառն իմոյ Վախախին, լուսոյ որդիք Սիոնի, զի ունի ինչ ասել ձեզ։

250բ Արդ, ես՝ Վախախս, ծառա ծառայից Քրիստոսի, պարտականս բիւր քանքարաց տեառն իմոյ Յիսուսի, զմտաւ ածի զսէր արքայութեանն և զըսպառն[ալ]իսն զըժոխոց, և հաեցա ընդ յիս, զի ոչ ունէի թոշակ պատրաստել այն երկայն ճանապարհին, և եմ թափուր յամենայն* բարեգործութեանց, զմտաւ ածի զանաչառ դատաստան Քրիստոսի, և զի միայն եմ գտանելո անտ, առանց զաւրաց, զոր այժմ ունիմ, զի անդ ազքատք թագաւորին և մեծատունք հեռացեալ լինին ի տեսոյն Քրիստոսի, և կապին ձեռք այնոցիկ, որք ի յաղքատս ոչ արձակին։ Արդ, զինչ արարից, զի սարսել դողացաւ անձն իմ, զի թէ մայրն իմ Եւա զմի պատուիրանաւ անցաւ և դատապարտեցաւ, իսկ ինձ, որ բազումս քարոզին և ես անցայ զամենեքումբ[ր]ք, քանզի քանքարս պարտիմ տեառն իմումն։ Արդ, ո՞վ հանցէ զիս ի ծովէս մեղաց, որ տարաբերել ծըփիմ իբրև զնաւս հոգմակոծեալս ալեաց մեղաց, զի ամենեքեան ընձայեն աստուծոյ զիւրեանց անձին զործեալ
251ա բարին, և ես զրկեալ || բոլորովին յառա[տա]ձիր պարգեւացն Քրիստոսի։ Արդ, յոյս և ապաւէն Աստուածածինն ունիմ և իւր միածինն, որ զանառակ որդին ընկալաւ, որ աւազակին զդրախտն էրաց, որ ըզմաքսաւորին զաղաչանսն ընկալաւ, զնայ արարի ինձ յոյս և տեղի ապաւինի, զի գրեալ է, թէ՝ որ ընդունի զբանս իմ և խոստովանեցի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնայ առաջի հաւր իմոյ, որ յերկինս է։ Եւ ես վասն յուսոյն, որ առ Քրիստոս, խոստո-

* Ընագրում՝ ըյամենայրինց։

վանեցայ զնա հաւատով յամենայն սրտէ, և յամենայն մտաց, և յամենայն դաւրութենէ իմ[մ]է, և եռու ղըրել զաւետարանս ի հալալ արդեանց իմոց բաղում յուսով և փափաքանաւք, յիշատակ ինձ, և առն իմում և բարի լծակցին իմ պարոն Ազիզպէկին, և ծնողաց իմոց, և զաւակաց։

Աղդ, աղաչեմ զամենեսեան բոլորով որտիւ, զի ասասջիք այսպէս՝ աէր Ցիսուս զերծոյ զծառայքն քո՝ զԱզիզպէկն և զՎախախն, յաննեբելի տանջանացն, և Ջրիստոս, որ առաան է [ի] աուրս բարեաց, մեզ և ձեզ ողորմեսցի. և Ջրիստոսի վաղք յաւիտեանս, ամէն։

251բ Ըստ նմին և ես, անարժան ծառայս Ջրիստոսի Ներսես գրիչս, արժանի եղայց մատնել ի պատիւս տէրանց իմոց, որ ելեալ ի գաւառաց իմոց մուրական չըջէի տարաշխարհիկ ի վերա ամենայն երկրի, որոշեալ ի ծանաւթից և յազգականաց իմոց, վայրապար և թափառնակի վարուք, որպէս զի ոչ էի հաճոյ յուչս յիմաստնոց։ Եւ բարեպաշտ իշխեցողքս իմ, մնծափառ պարոնս Ազիզպէկն և ծնողագութ տիկինն իմ Վախախն, տեսեալ զվայրապար կացս իմ, ածին զիս առ իւրեանս՝ դրթացնալ ի վերայ իմ, և արարին զիս խնամուտ, ուսուցին ինձ զամենայն հանճարս իմաստութեան և բարի մասն ցուցին ինձ, և անարգիս պատիւ եղին, և ընկալան զիս յարկս իւրեանց, որպէս հաւ, որ ժողովեսցէ զձագս իւր ըմդ թևաւք իւրովք, այնպէս ծնողագութ աղետիւք սիրէին զիս սրտի մտաւք, որպէս զի մարդասէրն աստուած ընկալցէ զնոսայ յարկսն յաւիտենից։ Եւ ես ուխտ արարի միջնորդութեամբ աւետա-
252ա րանիս ծառանալ զնոսա* ‖ մինչև հասցէ առ իս կոչումն ի վերին կոչողէն, զի յետ աստուածոյ եղեն ինձ խնամածոյք և բազմադիմի պաւուով ընկալան զիս։ Եւ ես աղաչեմ զերկնաւոր քահանայապետն Ջրիստոս տալ ինձ արիութիւն և իմաստութիւն ծառայել անվրէպ և անվորձ երկուց տէրանց՝ հոգևորի և մարմնաւորի։ Հոգևոր ծառայութեամբն ծառայել զՋրիստոս, զի կոչեաց զիս ի կարգ քահանայապետութեան, և պաղատանօք խնդրեմ յինքեան անամօթ գործով հասուցանել զկարգս իմ ամենայն գործովք <ած> առաքինութեամբ ի տէր իմ Ցիսուս Ջրիստոս, զի մի յոտան գտայց առաջի ահեղ ատենին, և մարմնաւոր ծառայութեամբ ծառայել զերկու քրիստոսասպասակ իշխեցողքս՝ զպարոն Ազիզպէկն և զքաղցրագութ տիկինն իմ զՎախախն՝ անխաբդաի և անբիկմիտ սրտիւք։

Եւ ես երես անկեալ աղաչեմ զձեզ՝ զսրբասէր որդիքդ Սիոնի, յիշեցէք զիս՝ զանարժան քահանայս՝ զՆերսես գրիչ, և զծնողսն իմ, և զայնոսիկ, ոյք յոյս և ակնկալութիւն ունին ի մեզ, և դուք յիշեալ լինիք ի Ջրիստոսէ աստուածոյ մերոյ, որ է** աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

---

* Հիշատակարանի շարունակությունը պահպանվել է 1677 թվի արտագրութեամբ, որ կատարել է Նսայի Բջնեցին ձեռագիրը նորոգելիս։

** Բնագրում՝ ԸԵՍ, փոխանակ ԸԷՆ-ի։

180.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7575

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Բերկրի

...Եւ արդ, ղրեցաւ սա ի թուականութեանս եւթնհարիւրերորդի վաթսներորդի եւթներորդի (1318), ձեռամբ Յակոբ կրաւնա[ւորի], ի թագաւորութեան ղան Արուսպիտի, ի հայրապետութեան տեառն Զա-
242բ քարիայի, ի քաղաքիս Բերկրի, || ի նեղութեան և ի դառն չար ժամանակի, որ կարի յոյժ հալածումն կայր ի վերա քրիստոնէից և ամենեքեան ղրաւեալ կտին ընդ ձեռամբ նոցա, որպէս թէ կապեալք ի շխթայս, իբրև զինն Իսրաէլ առ Փարաւոնիւ, և ոչ ուստէք ունին ակն փրկութեան, բայց միայն զիրկիչն մեր Քրիստոս, որ մերձ ընդ մերձ կորուսեալ զհալածիչսն քրիստոնէից, և քարագլխեսցէ թաւաղլորելով զնոսա ի վիհն կորստեան, ըստ չարութեան իւրեանց և ըստ գործոց, և հաստատեսցէ զհաւատացեալս անուան իւրո ի հաւատս անսասանելի, մինչև ի սահմանեալ կէտ կոչման, և պահեսցէ անսայթաք և անգթելի ի վերա վիմի հիման մեր նոր Սիոնի։

Եւ գրեցաւ սա ի քաղաքիս Բերկրի, ընդ հովանեաւ սուրբ գա-
243ա րա || պետի և սուրբ Գէորգեա զաւրավարի, ի խնդրո երջանիկ և պատուական սուրբ և մաքուր առն, որոյ անուն Սրապշահ կոչիւր, և ամուսնոյ իւրո, և զաւակաց իւր, որ ստացաւ զսա ի հալալ և յարդար արդեանց իւրոց ի վաճուճն և ի պահպանութիւն անձանց և տանց իւրեանց, և զաւակաց իւրեանց պարսն Կլրուռի և Խութլուբուղայի*, և յիշատակ բարի առաջի աստուծոյ յաւուրն համառաւտի, և բարեխաւս իւրն և ծնաւղաց իւրոց առ աստուած...

243բ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք վերջին գրիս, յիշել ի Քրիստոս զվերադրեալքս ի սմա յանուանէ, և մեղաց թողութիւն շնորհեցէք։ Եւ ինքն ամենակալն աստուած՝ գթածն, ողորմածն՝ ամենեցուն ողորմեսցի՝ յիշողացտ և յիշելեացս, և յորս յիշէք՝ եղիջիք յիշեալ ի նոյն, ամէն։

Ջ'հալաք ապաշխարաւղ և զմինճա յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր։

---

* Ստացողների անունները գրված են այլ ձեռագրով, գրչի կողմից գատարկ թողնված տողերի վրա, մի հանգամանք, որ վկայում է, թե ձեռագիրը գրված է գրչի ձեռնարկությամբ՝ վաճառահանման համար։

181.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 206

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Գլաձոր

ա

113ա Զբարունապետս զնսայի,
Որ է ստացաւղ համայնս տառի,
Է և յայժմուս ժամանակի
Զուր իմաստից մերոյս սեռի,
Յիշել ի տէր տարփմամբ սրտի,
Ցաւետանալ յայսմ գործի,
Զի սընուքիւն մերոյս ազգի
Պղաբերի յիմաստս բանի։
Զստեփ[աննոս] աղաչ[եմ]. յիշել ի տէր։

բ

191բ Զգրիչս ապիկար յիշեա, ով խոհնմ ընթերցաւղ, եւ զպետս վարժիլ աղին թորգումայ՝ նսայի։*

գ

312ա Ամովսածնիս անուննն կրող,
Մարգարէին սուրբ նմանող,
Աստուածային բանին գլուխղ,
Եւ զաշակերտքս ի նոյն վարժող,
Որ և տառիցս այսմ է սիրող,
Այլ բաղում գրեանց ժողովող,
Հին աւրինացն է հաւաքող,
Ի նորս կցել սա յարմարող,
Շարամանէ զսա ի մին տող,
Ի յետ ելիցն յիշատակող,
Զոր և հայցեմք ձրի շնորհող,
Ըստ արժանեաց շնորհաց բաշխող,
Առնես զսա սմին վայելող
Եւ ժամանակաց յերկար կրող։**
Եւ Ներսեսի հռետորի՝
Գնացեալն առ տէր իւր ըղձալի,
Յիշման առնէք զնա արժանի,
Առ բարեգուէն՝ տէրն ամենի,
Ընդ նմին և զմեղաւոր գծողս այսմ տառի։

* Ձեռագրում կան բարձրորակ մանրանկարներ. 439 բ էջի վրա պահպանվել է նսայի նչեցու դիմանկարը։

** Քոսքր ձեռագրի ստացող նսայի նչեցու մասին է։

դ

618բ Զբաղմերջանիկն ի յոքունս և զարժանին յիշատակի՝ զհոետորական բարունապետն և զհողեորական երկամրք զնուրցանուղն մեր՝ զտացաւղն բազում ջանիւ և աշխատութեամբ աստուածաշունչ կտակիս՝ Նռայի, ամենայն արեան մերձաւորաւք և հողեորանունդ զաւակաւք, յիշեոջիք տոաջի զենման գաւինն աստուծոյ, զի արժանի լիցին քաղաքին սրբոյ և ծառին կենաց, ղրեալ ի դիրն կենդանոյն յաւետենից և գաւինն, ամէն, ամէն։ Նաեւ դյոքնաղան մնդաւք զերիս զկիւրակէ* և զքաղցրիկ ծնողսն իմ աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն. և որք յիշեն յիշեալ լիցին ի Ք՛րիստոսէ աստուծոյ մերոյ, ամէն, ոիւխ։**

Գրիչ՝ Յոհաննէս Ծործորեցի

ե

588բ Զաստուածեզէն զանձիս ոտացօղն, զերջանիկ վարժապետն Նսայիաս յիշնօջիք ի Ք՛րիստոս, ընդ նմին և զնուաստ գծող սորին՝ զՅոհ[աննէս] սպասաւոր բանի Սրգնկայեցի, որ և Ծործորեցի, հանդերձ ծնողօք, որ և գրեցի զսա յըստ մեզ մարգնզութեան թուին Ցխսուսի Ք՛րիստոսի տեառն մերոյ ՌԳՃ. և ԾՂ. (1318), և ըստ խոսրովային տոմարին՝ ՉԿԷ. (1318)։

Եւս և զանարժան նկարագրող զԹորոս և զծնաւղոն մեր [յիշնօջիք ի Ք՛րիստոս]։

182.

ՑԱՂԱԴՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ ԴՐԻԴՈՐԻ ՆԻՒՍԱՑԻՈՑ

Ալիշան, Սիսական, էջ 133

Գրիչ՝ Յակոբ Թագորցի
վայր՝ Գլաձոր

...Ի հրեշտակարենակ մենաստանիս, որ կոչի Գլաձոր, զոր համարձակիմ զսա կոչել երկրորդ Աթէնք և մայրաքաղաք ամենայն իմաստից, ...ի վարժապետութեանն քոջ հոետորի և ամենիմաստ փիլիսաւփայի՝ եռամեծի Նսայեայ, ճշմարիտ պատկերի աստուծոյ և հոգւոյն ընդունողի, խոհեմ, հեզ և արի հոգւոյն, յորում կամք դեգերեալ ի դրունս իմաստից սորա՝ բազումք աշակերտեալ բանին ճշմարտութեան. զոր լուսաւորեալ բացայայտէ զբազում խրթին և դժուարալուծանելի և անյայտ իմաստս ծածկեալս, զոր ի գիրս հին և նոր կտակարանաց և վարդապետական տառից, որ ի բազում ժամանակաց խցեալ ի հարանց նախնականաց։ Զոր մաղթեմ աստուծոյ, զի տացէ զսա պարագայց ամօք և խաղաղական կենօք ընդ երկայն աւուրս

* Բնագրում հապավված է այսպես՝ ԹԿիրիէ։
** Փոխարինագիր ծածկագրով ԹուխԽ կարդացվում է ԹամէնՀ։

լուսաւոու և համառօտիչ բանին նուագեալս սեռի հայկեան և տանս Թորգոմայ. և յետ ելիցս աստեացս մասնակից արասցէ սրբոց լուսաւորչացն և աստուածաբան վարդապետացն, Բարսղի, [Գրիգորի] Ասառւածարանին, [Գրիգորի] Նիւսեայ և սրբոյն Մեսրովբայ:

183.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 1419 (տես նաև՝ 1427 և 1686 թ.թ.)

Գրիչ՝ Եփրեմ
վայր՝ Գլաձոր

ա

81ա Ցամի ԷՉ. երսբղի Կ. երորդի Է. երորդի (1318) յանկ ելեալ աւարտեցաւ տառս այս, որ է տեսիլ սրբոյ աւետարանչին Յովհաննու, ձեռամբ անպիտան գրչի կր[տ]սեր համբակի և պատանեկի Եփրեմի, հրամանաւ իմոյ սնուցողի և վարդապետի՝ Մարտիրոս սրբասէր և ճգնազգեաց կրաւնաւսբի, նահ սպասաւորի բանի. զոր ետ գրել զսա բազում ըղձիւ և փափաքմամբ սրտի, վասն իւրոյ աւգտի, և ի պայծառութիւն մանկանց Սիոնի և ի խրատ ոտահակ և անվարժ մտաց, զի սովաւ լուսաւորեսցին խաւարեալքն մտաւք: Արդ, որ աւգտիք ի սմանէ և լուսաւորիք, աղաւթիւք խնդրեցէք յաստուծոյ ողորմութիւն ստացաւղի սորա Մարտիրոսոյ և ծնողաց սորա՝ տալ դանթաոամ պսակն՝ զանանց բարութիւննն: Եւ ես անպիտան գծողիկս Եփրեմ, յերես անկեալ աղաչեմ, յիշել զիս և զիմսն ամենայն, զի և դուք յիշեսջիք ի տեառնէ աստուծոյ. ամէն:

բ

130ա Ցանկ ելեալ աւարտեցաւ մեկնութիւն ադաւթական բանից աստուածարան աւետարանչին Յովհաննու ի թուիս ՉԿԷ. (1318), ձեռամբ ապիկար և փցուն գծաւղի Եփրեմի, հրամանաւ իմոյ սնուցաւղի և ճգնազգեաց կուսակրաւն քահանայի Մարտիրոսի՝ բանի սպասաւորի, ի վայելուչն անձին իւր և յիշատակ հոգոյ և ծնաւղաց իւրոց: Արդ, որք աւգտիք ի լուսաւոր բանիցս, աղաչեմ յիշել զմեզ աղաւթիւք սովորականաւք, յաւարտման գրոցս ասել՝ Ջրիստոս որդի. և յիշել առաջի զենլոյն անմահ գառինն զՄարտիրոս վարդապետն իմ, զՅովհաննէս քահանայ, որ է իմ արենառու, և զՈվանննէս ընկեր նորին, հանգերձ ծնաւղաւք և վարդապետաւք և ամենայն ազգայնաւք. և որք յիշէքզ՝ յիշեալ լինիք ի տեառնէ աստուծոյ ամենակալէն, ամէն, ամէն:

գ

201ա Կատարեցաւ գրկունքս այս, որ է լուծուչն աստուածիմաստ և հոգեշահ բանիցն Եւագրի մեծ ճգնաւորի և աստուածախաւս վարդապետի և իմաստուն հռետորի, ի թուին ՉԿԷ. (1318), ի յամսեանս ապրիլի ԻԵ. (25), ձեռամբ անպիտան գրչի և նոր համբակի՝ Եփրեմի, հրամանաւ իմոյ սնուցաւղի՝ Մարտիրոսի կուսակրաւն և ճգնաւոր

քահանայի, ի վայելուչն անձին իւրոյ և յիշատակ հոդոյ իւրոյ, և ծնաւղաց, և որք յետ նորա ժառանգեն և աւդտին ի լուսաւոր բանիցս այսոցիկ և սրտի մտաւք խնդրեն ի տեառնէ ողորմութիւն և քաւդութիւն մեղաց նորին՝ Մարտիրոս քահանային, և ծնաւղաց իւրոց, և ինձ՝ անարժան դրչի և իմոցն ամենայնի, ևս առավել իմ երկրորդ ծնունդին և բազմելախտ իմ սրտէ սիրեցեալ քեռոյն իմոյ Յովաննէս
201բ քահանայի, որ յայսմ ամի չոքաւ յերուսադեմ. զոր տացէ տէր Յիսուս աղաւթիւք ամենայն սրբոց տեսանել ինձ զնա միւսանդամ և վայելել ի քաղցը տեսոյ և ի դիմոյ նորա. և ևս Յոհաննիսի դրչի, ձեռն տուաւղւոյ յայս գործառնութիւն, դի և նմա թողցէ տէր Յիսուս զմեղանսն իւր և զծնաւղացն իւրոց. և ձեզ յիշաղացդ և յիշեցելոցս առհասարակ ողորմութիւն յաստուծոյ, ամէն, ամէն։

ղ

262ա Կատարեցաւ տառս այս ձեռամբ տպիկար դրչի և համբակի, հրամանաւ ճգնաղդնաց հաւր Մարաիրոսի և իմ սնուցաւղի, ի վանս Գլաձոր, ընդ հովանեաւ ոս[ր]ր Սահմանոսի և սուրբ թաբունադեախս Նսայեայ: Արդ, որք աւդտիք ի սմանէ, յիշեսջիք դմեզ աղաւթիք, և զմերսն ամենայն, և ևս զհայրն իմ հոգևոր՝ զԱռաքել կուսակրաւն քահանայ, դի և դուք յիշեսջիք ի տեառնէ աստուծոյ, ամէն։

184.

Ձ Ա Շ Ո Ց

Թվական 6301 (տես նաև 1320 թ.)

Գրիչ՝ Խաչատուր Երզնկացի
ստացող՝ Սիմոն, վայր՝ Սստուպոտ

ա

...Արդ, դրեցաւ... ձեռամբ Խաչ[ատուր] դրչի Երզն[կացւոյ], ի թվիս
248բ Չկէ. (1318), ի մեհեկի ամիսն, ի դեղս Աստապատ, ընդ ‖ հովանեաւ սրբոյ զինաւորի և մեծ վկային Քրիստոսի Վաղդանայ, ի հայրապետութեանն Հայոց տեառն Կոստանդեայ Կեսարացւոյ, և ի վեղարդինութեան մերոյ՝ սրբոյ լուսաբնակ մենաստանիս սրբոյ նախավկային Ստեփաննոսի և այլ համագումար մարտիրոսաց վկայելոյ ի Քրիստոս՝ տէր Վարդանայ, զոր յուսալով մեզ ի տեառնէ պահել զնա ուղղափառ հաւատով և անփորձ մինչ ի խորին ծերութիւն ուղիղ վերակացութեամբ։

Ես՝ մեղուցեալ ծառայս աստուծոյ Սիմոն աբեղա, որդի Յոհաննիսի և եղբաւրորդի Գեորգա ծերունոյ սրբասէր կրաւնաւորի, ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, ի յիշատակութիւն ինձ և ծնաւղաց իմոց, և ընծայեցի ի սուրբ Նախավկայն, որ յորժամ զղիրքս վճարեն ի սուրբ աւր պենդակոստէին, ի զալուստ հոգւոյն սրբոյ ի վերնատունն, յերեսս

անկեալ աղաչեմք զամենայն մխաբանեալ եղբարսդ և զպատասուորքդ սրբոյ տաճարի աստուծոյ, որ յամենայն տարի ի նոյն տաւնիս մին ժամ ինձ չնորհէք...։

249ա Արդ. որք հանդիպիք այսմ աստուածապատում երգարանիս, յիշեսջիք զասացողդ սուրբ ուխտիս մերոյ զտէր Վարդան, և զպատասուորք մխաբանեալ եղբարցս մերոց՝ ղԼուսիչիկ արեղայն, և զԳորգ՝ ղտաւրեղբարսյրն իմ, զԲարգհեն, զՍտեփաննոս, զՅակոբ՝ փակակալ սրբոյ տաճարիս, զՍիմեոն, Զաքարէ, զՀայրապետ, զՅովաննէս, զՍարգիս, զԴանիէլ Այրիվանեցի՝ մականուն Գամուենփաշ, զխաչատուր, զԱւետաւերն, զՄկրտիչ, զՄարգարէ, զՅովհաննէս, զՊետրոս, զԹադէոս, զՎրքաննէս, զՇմաւոն, զՊաւղոս, զԳրիգոր, զՅոհաննէս, զԿիրակոս, զՍարգիս Մարտիրոսեցի, և զայլ գործակալք սրբոյ տաճարիս՝ զտնտես և զտնտես մանուկ, և զոր յիշնցաք, և զոր ոչ կարացաք յիշել...։

250ա ...Յիշեսջիք և զաբեան մեծաւորն ստացողի գրոյս, զորդի պարոն Պապաւին՝ զԱմիր Սարգիսն և զաւակն իւր, և ասասջիք՝ փրկեսա Քրիստոս աստուած զնայ յերեւելի և յանեերևոյթ թշնամւոյն՝ ի մարմնաւոր կենցաղոյս, և քոյն սուրբ աքքայութեանդ աբժանաւորս արաս։

Յիշեսջիք և զեղբայրն տէր Վարդանայ՝ առաջնորդի մերոյ՝ զպարոն զԱւրամն սրտի մտաւք, և ասասջիք, և թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ աստուծոյ։

Յիշեսջիք և զպարոն Խաչիկն և զամուսինն իւր զՓոխր տիկինն, ով բազում սէր և ընդունելութիւն արարեալ են մեզ. ասասջիք՝

250բ փրկեայ Քրիստոս աստուած զոսոյ իւրեանց աստուածատուր ‖ զաւակաւքն ի խաղաղութիւն, մինչ ի խորին ծերութիւն...

Յիշեսջիք և զնորընծայեալ մանկունք սրբոյ եկեղեցոյս՝ զՅահն և զՇէկն և զԱրգիսն, ասասջիք՝ Քրիստոս աստուած, տուր սոցայ չնորհք և իմաստութիւն, և փրկեայ ի փորձութենէ թշնամւոյն, որսողին ի կորուստն յաւիտենից...։

185.

ԳՈՎԵՍՏ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ 98, Տ. Ավետիսյան,
Ցուցակ, էջ 1645—6

Գրիչ՝ Մաթէ
վայր՝ Նորավանք

96ա Քրիստոս աստուած, քո սուրբ ծնօղիս բարեխօսութեամբ ողորմեա Գրիգորիսի և ննջեցելոց | | |** ըստացաւ զսայ ի վայելուչն անձին իւրոյ և յետ իւր յիշատակ անջինջ։ Նաև իմոցն ամենեցուն, որք կան և որ փոխեալ են*** յաստեացս։ Ո՛, ազնիւ ծառա և հաւատարիմ

* Բաց ենք թողնում մի ընդարձակ հատված, ուր գրիչը ազաչում է «յիշել» իր մեծավոր ու հեռավոր բազմաթիվ ազգականներին։

** Բազմաթիվ բառեր ցնում են անընթեռնելի։

*** Ընդօրինակության մեջ՝ «փոխեբան»։

Քրիստոսի Գրիգորիէ, աղաչեմ | | | վասն սիրոյ նորա, յորժամ ընդ[ունիս] | | | զու արճանաս ներքին մարդոյն, յիշ[եա] | | | տառապեալ ոգիս, մանաւանդ | | | զենմանն Քրիստոսի և Թողութիւն հայցեա | | | բազմա]մեզիս, զի կարող է աստուած ի ձեռն ա[յլոյ այլ]ում ողորմել և խոշորութեանն [մի մեզա]գրիր, զի գիտէն զկարս իմ և | | | մեզ և ձեզ առհասարակ ողորմե | | | եւ նմա փառք յաւ[իտեանս]։

Գրեցաւ տառս ձեռամբ Մաթէի սուտանուն քահանայի, ի տեղիս | | | Նորավանից, ընդ հովանեաւ սուրբ | | | առաւտս, ամէն։ Ներջանիկ բարունապ | | | Դաւթի, Թուիս ՉԿԷ. (1318)։

Բ

123ա Զարիաջան քահանայ և սպասաւոր փրկագործ խորհրդոյն Գրիգորիէ, ընկալ ի | | | նց Նուաստէ Մարտիրոսէ, զխուն ինչ խնդիր քան մեղաղրարար վասն խոշորութեանն | | | զմեզ արժանաւորեա յահագնահայեաց և հոսկալիճ ժամու ուր անգանաւր հաւ | | | գիտմամբ և իմանալի հայեցողութեամբ առ բոլորիցս փրկանք յառեայնայեցին (՞) և զարդիւն իրիս ևս տարեոցես յիշել անմոռաց, զի և զուք քոյաւք յիշեալ եղիցիս առաջի անմոռաց ղ | | | աստուծոյ։

186.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 242

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Կիպրոս կղզի

391բ ...Զսա բազմամբ սիրոյ նուաստս Թորոս գրեցի ձեռամբ իմով՝ ի Կիպրոս կղզի, ի գուռն առենահասին սրբոյն Սարքսի, յոյժ տաժանմամբ, ոչ ունելով պատշաճաւոր տեղի, քանզի հեռաբնակ լեալ յիմ սնընգեան աշխարհէ, և յ[ը]նտանեաց, և ի սիրելեաց, զայս հոգևոր մխիթարութիւնս գաի սփոփանս վշտագնեալ անձինս։

Արդ, որք ի սմանէ տարազաւ իւիք աւգտիք, զանթիւ բիւրուց պարտականս տեառն իմոյ Քրիստոսի, ծնողաւք իմովք, և եղբար[ը]ք,
392ա և քուերբք, ‖ և բնաւ զարմիւք ի սուրբ և ի մաքուր աղաւթս ձեր յիշեսջիք, նաև ևս առաւել և զերախտաւորսն մեր, որ ի հանդերձ և կերակուրս զմեր մարմնական պէտսն լցուցել են, զի ի մեծի աւուր գալըստեան փրկչին առհասարակ յիշեցեալքս և յիշաւզք ողորմութեանն յուսոյն մերոյ Քրիստոսի արժանապէս հանդիպեսցուք, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բայց գրեցաւ սա ի Թու[ականիս] ՉԿԷ. (1318)։

Ցիշեսջիք աղաւթիւք և զՍահակ քահանայ ծնողաւքն և զարմիւքն իւրովք, որ է ի նոյն կղզիս պանդխտակից մեր, որ և կամեաց զգիրքս զայս։

187.

ՄԻՇՏԱՐԱՆ

Երևան 4018 (տես նաև 1304 թ.)

Վաճառող՝ Խաչիկ

ա

253ա *Ի յայտնութենէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կենարար գալստեանն մինչև ցայժմ՝ յորում ամի գրեցի զյիշատակարան գրոց, որ են Ռ. և ՃԾՀ. (1318) և ի թուականութեան հայոց տումարիս ՉԿԷ. (1318), ես՝ նուաստ սպասաւոր բանի Խաչիկ վարդապետս, զաւետարանս զայս ընդ սակաւ գնոց քան զարժանն ետու մեր եղբաւրն՝ Մխիթարայ քահանայի, զի և մեզ մասն լիցի ըստ յուսոյն մերոյ յարդար դատաւորէն, որ հատուցանէ իւրաքանչիւր զվարձս իւր, և նմա վառք յաւիտեանս, ամէն։*

Գնող՝ Մխիթար

բ

Ես՝ Մխիթար անպիտան և անարժան ծառայ աստուծոյ, սուտանուն քահանայ, ցանկացող եղէ այսմ աստուածային գանձիս, որ է աւետարան փրկութեան հողոց մարգկան, և ստացայ զսայ ի հալալ
253բ *ընչից իմոց առ ի յիշատակ ինձ, և կենակցի || իմոյ Մարա խաթունիկն, այլ և ծնաւղաց մեր՝ Յովանիսի և Գոհար խաթունին, այլ և պատուական քահանայիցն և սրբասէր եղբարցն իմ՝ Վարդանայ և Շմաւոնի, և ծնօղացն նոցայ՝ Գանգատին և Գոյրկանն, այլ և ամենայն արեան մերձաւորաց մերոց՝ կենդանեաց և հանգուցելոց, ևս առաւել միամաւր դաւակին իմոյ Սիսկանն։*

Արդ, ես՝ նուաստդող Մխիթար քահանայ, որ ստացայ զսայ ինձ հոգոյ զաւակ ի նեղ և ի դառն ժամանակի, յորում տնաւրէնքս դաւրացեալ են, նեղեն զքրիստոնեայքս չիզացով. բայց Քրիստոս մեծ է, որ փրկէ զմեղ յամենայն վտանգէ։ Այլ սրք հանդիպիք այսմ աստուածային գանձիս, կամ որք կտրգայք, կամ օրինակէք, զվերագրեալքս յիշեսջիք ի սրբամատոյց յաղօթս ձեր...։

188.

ԱՒԵՏԱՐԱՆ

Փերզ. 0273, էջ 128 (Մեծոփայ վանք)

Գրիչ՝ Մխիթար [Սասնեցի]

Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուին Հայոց ՉԿԷ. (1318), ձեռամբ Մխիթար [Սասնեցի] պիտականուն վարգապետի, ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ և երկրպագեալ ընդ հօր և սուրբ հոգւոյն, ամէն։

189.

ԱԻՆՏԱՐԱՆ

Ապուչխ գիւղ, սբ. Նշան եկեղեցի, ձեռագիր, էջ 86

Գրիչ՝ Սիմեոն
վայր՝ Դրազարկ

Գրեցաւ տիեզերալոյս սուրբ աւետարանս ի թուին ՉԿԷ. (1318), ի մեծափառ և ի հռչակաւոր անապատս Դրազարկ, ի հայրապետութեան տեառն Կոստանդնեայ Կեսարացւոյ, ի թագաւորութեան Աւշինի, ձեռամբ Սիմեոնի սուտանուն կրաւնաւորի...

190.

ԱԻՆՏԱՐԱՆ

Երեան 1817

Գրիչ՝ Յովաննես
վայր՝ Ուռնկար անապատ

ա

268բ Գրեցաւ գերարփիս այս... ի յանապատիս Ուռնկար կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և յաղթող և աստուածընկալ սուրբ Նշանի, և սրբոյն Ստեփաննոսի, և առաքելոյն Պետրոսի, ի յաշխարհակալութեանն Բուսայիտ դանին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ի յառաջնորդութեան տեղոյս Ղազար կրաւնաւորի։ Ցիշատակ ամենիմաստ, ամենագով, քաղցրահայեաց և արդիւնայկատար, սրբասնեալ և աստուածահաճոյ, սրբասէր | | |*

բ

76ա Ո՜վ սուրբ Նշան աստուածային... քեզ աղաչեմ ողորմագին, լեր րարեխաւս Տիրացու քահանային, և իւր ծնաւղին, ըստ նմին և գրողին՝ Յովաննես մեղապարտին, իւր ծնաւղին, և ամենայն հաւատացելոց։

Ծաղկող՝ Կիրակոս

գ

1բ Ձկիրակոս ծաղկողս՝ դստւտանուն քահանայ, աղաչեմք յիշել ի տէր. վասն խոշորութեան ծաղկիս անմեղադիր լերուք. ղի կար մեր այս էր։

---

* Գլխավոր հիշատակարանից պահպանվել է միայն այսքանը. ուստի ձեռագրի գրության մերձավոր ժամանակը որոշելու համար պետք է հիմք ընդունել Արու Անիգ (Բուսայիդ) դանի և Աղթամարի կաթողիկոս Զաքարիայի գահակալության տարիները։ Արդ, Բուսայիդը գահակալել է 1318—1335 թ. թ. միջև, իսկ Զաքարիան (տես՝ «Գիւաղանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», էջ 45—58)՝ 1296—1336 թ. թ.։ Ըստ այդմ, ձեռագրի գրության ամենավաղ հնարավոր տարեթիվը 1318-ն է։

Հեռ. ստացող՝ Խնդուրեկ

դ

268ա ...Եւ արդ, ես Խնդուրեկ ղերձակս՝ ի յՈստան քաղաքի, գնեցի ի քրդու, դի էր ղերի բերած սուրբ աւետարանս, յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և կենակցին իմոյ Խաթունմէլէքի: Բայց յետոյ տէրն եկ և գտաւ առ իս, և իմ յաւժար սրտիւ ի տէրն տուի զսուրբ աւետարանս, որ յիւր սուրբ աղաւթքն յիշեսցէ դիս հանապազ...:*

Կազմող՝ Կարապետ

ե

268բ Դարձեալ աղաչեմ զմանկունսդ սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա, յիշեցէք ի սուրբ և յարժանաւոր յաղաւթս ձեր զստացող սորա զպատուական քահանա Յովանէս, և զծնողքն իւր՝ զՅակոբ քահանայ և զրՌուզ, և զքոյրն՝ զԹանկխաթուն՝ հանգուցեալն ի Քրիստոս, և զփեսայն՝ զՊետրոս, և զորդին իւրեանց՝ զՍահակ, և զիւր որդիքն՝ զՅոհաննէս քահանայ և զՍտեփաննոս սարկաւագ, և զԹուունքն՝ զՅակոբ և զԳրիգոր. և զազգականսն իւր՝ զՅակոբ և զԻիտիկ՝ հանգուցեալքն ի Քրիստոս, և զԲրմաճշայ սարկաւագն, և զեղբայրն՝ զՍարգիս մահդասին, և բոլոր սրտիւ և լի բերանով աստուած ողորմի ասացէք ի ժամ սոսկալի սուրբ պատարագին Ցովաննէս քահանին և ծնողաց նորին, և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն:

Ընդ նոսին և դիս՝ դանարհատ կազմողս՝ զԿարապետ յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ, ամէն:**

* Շարունակութեամբ, կարմիր թանաքով գրված է «Ցովաննէս Սարկաւագն և զմայրն իւր Շամամն...»:

** Դ. և ե. հիշատակարանները գրված են մի ևնույն (կարապետ կազմողի) ձեռագրով, հավանորեն ԺԴ. դարու վերջերին:

191.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 4125

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Արծկեու վանք

...Ցամի ՉԿԸ. երորդի ի հայկազեան տոհմիս տոմարիս (1319)... գրեցաւ աստուածային այս մատեան... յանապատիս Արծկեու վանս առ[ձայն]եալ, ընդ հովանեաւ սուրբ զՔանչելագործիս, յառաջնորդութիւն տեղւոյս Սիմեոնի արեղայի, ի ստացուածս սրբազան քահանայի
302բ Թադե[ոսի] | | | ,* և ծնողաց իւրոց, և եղբարց իւրոց՝ Լուսիկ և Աւտարշահ կոչեցեալ, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ ի Քրիստոս կատարելոց, պատճառ և առիթ անմահականն կենաց՝ ընդ սուրբ[ս] ամենայն: Աւժանդակութեամբ մերս հոդեոր[ի] և հարաղատի և սրբասնունդ արեղայի առ տէր կոչեցեալ տառիս և ստացող նոյնանուն Թադեոս[ի], ձեռամբ պիտականուն Վարդան գրչի, ի զառնութեան և ի վշտաբեր ժամանակիս, յորում վիշտս վտանգի և աղետս տարակուսանաց յողունս հասուցանելով քրիստոսական ոճոյս աղղաց՝ անաւրինաց՝ ուրացելոց ի փառաց որդւոյն աստուծոյ, նեղութեամբք, տառապանաւք, հարկապահանջութեամբք և այպանման ձաղանաւք, որոց հատուսցէ նոցին ըստ գործոց նոցին հզաւր Քրիստոս եւթնապատիկ ի ծոց նոցա:

Արդ, աղաչանս բազմապիսի առ որս հանդիպիք աստուածային մատենիս, ի պէտս ինչ աւգտութեան ի սմանէ եղելո, սեռն սիրով ի միտս բարիս և պատկանաւք խնդրուածս զտացողն՝ զԹադեոս քահանա, իւրովքն հանդերձ, և զբարի Բարսեղ աբեղա, որ զաւրինակն շնորհեաց և մխիթարակից եղև իմո տկարութեանս [յիշեցէք]...**

192.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 4738

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Աղթամար

262բ ...Զայս ամենայն հաւաքեալ և ի մի վայր ժողովեալ գծագրեցաւ կարգաւորաբար, սկսեալ ի յիշատակի աւուր ծննդեան փրկչին

* Նորոգութեան ժամանակ ձեռագրի տողերն մասից կարել են լուսանցքը, յիշատակարանի վերջին տողի հետ միասին:

** Շարունակութեան մեջ կրկնում է նույն «Յիշեցէք»-ները:

և միոյ նշանով, առանց մոլորութեան, աւարտեալ մինչև ի տաւն
263ա սուրբ հայրապետին Բարսղի || Կեսարու։

Գրեցաւ յբստոյգ և յբնտիր աւրինակէ, բազ[ու]մ աշխատանաւք և քրտմամբք՝ հոգւոյն սրբոյ տւժընդակութեամբ, յաստուածապահ և ի զեղեցկատիպ կղզիս Աղթամար կոչեցեալ, ի տեղիս ապաստանի, որ է աթոռ սրբոյն Գրիգորի լուսաւորչին Հայոց, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչի, և սուրբ Նշանի անապատի, և աստուածամուխ սուրբ Գեղարդեան, ի հայրապետութեանս հայոց սուրբ և անբիծ և երջանիկ տեառն Ներսէսի և տեառն Զաքարիայի, և ի թուաբերութեանս Հայոց յեւթնհարիւրերորդի վաթսներորդի ութերորդի (1319), ի գառնացեալ ժամանակիս, ի խնդրոյ գերամաքուր և երիցս երանեալ վերադիտողի և առաջնորդի տէր Ստեփաննոսի տան արքունական, որ Մոկս կոչի։

Եւ յայսմ ամի, ի գառն և ի վիշտ ժամանակիս, շինեաց յերկիրն յայն վանք նոր ի հիմանէ և գումբեթաձև եկեղեցի, և կարգաւոր[ե]աց ի նմա սրբասէր կրաւնաւորս և վանականս, ամենայն գործաւորաւքն հանդերձ, անխափան աւետարանաւ և պայծառ ժամատեղաւք, զոր աչաւք մերովք տեսաք, և աստուած ի նոյն պահեսցէ միշտ [և յա]նապազ։ Եւս առաւել զուռճացեալ և զճոխացեալ, որ միշտ պարապի ի սէր և ի գործ տեառն Ցիսուսի, զսրբազան կրաւնաւորն զԿարապետ՝ ստացող գրոցս, որ եռափափագ սրտիւ ետ գրել զաստուածային տառս ի վայելումն անձանց իւրեանց յերկար ժամանակաւ, և յետ աստեցաս՝ յիշատակ հոգւոց իւրեանց և բարի ծնաւղաց նոցին՝ Սարգսի և Մարիամու, Ցռեաննու և Ոսկոյ, հանգեցելոցն ի Քրիստոս, և ամենայն ազգայնոց նոցին՝ կենդանեաց և հանգուցելոց, ամէն։

Իսկ ես՝ ամենամեղս և անյիշելիս ի գրչաց Կարապետ սուտանուն կրաւնաւոր, ըստ իմում տկարութեանս յանձն առի և կատարեցի զսուրբ տառս կարողութեամբն աստուծոյ...։

193.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վիեն. 434. Տաղ. 8ուց. էջ 885. (տես նաև 1341, 1600 և 1644 թ.թ.)

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ ի մայրաքաղաքիս Սարայ,
մերձ առ ծովուն Կասպիականի

441ա Փառք... վասն զի յոյժ փութով եւ բազում բաղձանաւք, ողորմութեամբն աստուծոյ սկսա եւ շնորհաւքն Քրիստոսի կատարեցի, ի խնդրոյ սուրբ եւ արժանապատիւ արքեպիսկոպոսի տէր Պաղոսի եւ քաջ հովուապետի...։ Եւ գրեցաւ սա ի թուաբերութեանս հայկազան տումարիս ՉԿԸ. (1319), եւ ի հունիս Ա., յաւուր ուրբաթու կատարեցաւ Ցամս աստուածապատիւ եւ հոգւոյր տեառն Ստեփաննոսի՝ Արևելեան

կաթողիկոսի Հայոց, եւ տեառն Կոստանդեա՝ Կիլիկեցւոյ կաթողիկոսի, եւ ի թագաւորութենանն Հայոց Աւշնի։

Արդ, յորժամ անգեալ աղաչեմ զձեզ, ով դասք լուսերամից, որք ընթեռնուք զսա կամ ընդաւրինակէք, յիշել սրտի մտաւք զվերոյասացեալ զամէննելջանիկ եւ զսրբազան արքեպիսկոպոսն զտէր Պօղոս եւ զհտբտղաս եղբայրն իւր զԱղթարիկ, հանդերձ ծնողիւք եւ ամենայն զարմիւք, քանզի մեր հոգեւոր տէրս տէր Պօղոս ողորմած էր, յամենայնի նմանելով տեառն Յիսուսի, անտիրաց տէր էր, քանի պիտի եւ զքաղցեալսն կերակրէր ի ժամանակի, եւ արթուն հովիւ էր, զինչ որ պիտի։ Դարձեալ աղաչեմ յիշման արժանի առնել եւ զգնացգեստ աբեղայն զԳրիգոր եւ զծնողսն իւր, քանզի եղեւ առիթ [եւ] պատճառք այսմ լուսաւոր տառի յեզգահոծել (՞) զսա։ Ընդ նմին եւ զիս՝ զբազմամեղ գրիչս խաչատուր յոյժ անարժան քահանայ եւ. զմայրն իմ Ճոր տիկին աղաչեմ յիշել ի բարին Ք՛րիստոս։ Եւ զաշխատութիւնս ի սմա, որք զնիւթս կոկեցին, եւ որք երախտաւորք եղեն ի սմա, զամենեսեան աղաչեմ յիշման արժանի առնել։ Եւ որք յիշէքդ յիշեալ լինիք ի Ք՛րիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Եւ կրկնակի դարձեալ եւս առաւել աղաչեմ զձեզ, ով առաքինիքդ հոգով, որ յաղագս սխալանաց, կամ եւս այլ պատճառանաց՝ լինել անմեղադիր, զի բնական կայանք չունէի, ապա ի տեղւոջէ ի տեղի կու գեգերէ[ի], եւ այլ՝ զի սիրտս վշտացեալ էր։ Եւ այս աշխարհիս ամեն խիստ է, հաւայն չէ գրագրու լայէի։ Բայց գրեցաւ սա ի մայրաքաղաքիս Սարայ, որ է ի հիւսիսոյ կողմ, մերձ առ ծովուն Կասպիականի, ընդ որում շուրջ պատէ գնովաւ մեծ և հզօր գետն Էքիլ, եւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ կենսակիր սուրբ Նշանին։

194.

ԺԱՄԱԳԻՐՔ ՕՇԻՆ ԹԱԳԱՒՈՐԻ

Հալէպ. Սբ. Մնկ. 6, Սիւրմ. 8ուց. Ա 11—12

Գրիչ՝ Յակոբ

188 ...Շնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբն նորին կատարեցի զսաղմոս երգարանս հաւրն Դաւթի ի յընդորդ աւրինակէ ի Դառնեցոյն։ Փոյթ ունիցիք անխիղճ մտաւք կարդալ զգիր սաղմոսարանիս Արգ, արարիչն ամենեցուն վայելել տացէ ըզսա բարեպաշտ և աստուածասէր թագաւորին մերոյ Աւշնի, զի փափաքմամբ սիրով խնդրեաց զսայ ի տէր Թորոս աւագերէց, զոր եւս գրել զսաղմոսարանս ձեռամբ անարժան քահանայի Յակորա։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք կամ աւրինակէք ի սմանէ, աղաչեցէք զփրկիչն մեր Ք՛րիստոս, զի տացէ ժամանակ բարեպաշտ թագաւորին Հայոց Աւշնի և որդւոյ իւրոյ Լեւոն[ի], զի պահեսցէ զսոսա ընդ երկայն աւուրս։ Գրեցաւ

սաղմոսարանս ի թվ. հայոց ՁԿՀ. (1319), ի յամսեանն յունիսի ի ԺՀ. (18) աւրն, և Գրիստոսի վառք յաւիտեան։

բ

330 *...Աղաչեմ յիշել ի տէր ըղտէր Թորոս աւագերէց* ղրան արքունի, որ ետ ղգիրս զայս ղրկել ձեռամբ Յակոբ քահանայի...։*

195.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6273, էջ 129—130 (Վան, Տիրամայր եկեղեցի)

Գրիչ՝ Յովտնէս

վայր՝ Խորվագետ գիւղ, Գեղարբունի մեծաստան

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի մեծաստանիս, որ յորջորջի Գեղարբունի, ի գեաւղս, որ կոչի Խորվագետ, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյս և սուրբ Գրիգորի, ի ղանուքեան Իւսայիտի, ի յաբբանեկուքիւն նորին՝ Զօպանի. ի թագաւորութեան [Հայոց] Ոշնայ, և ի հայրապետութեան տեառն Կոստանդնի, և յեպիսկոպոսութեան [Սիւնեաց վիճակին] տէր [Յովհաննու. Ծրբ՝ի]. գրեցաւ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Յովանիսի, ի թուականութեանս Հայկազեան սեռի ՁԿՀ. (1319)։

196.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 3276

Գրիչ՝ Ներսես

150բ *Ի թուականութեան Հայոց ՁԿՀ. (1319) գրեցաւ մատեանս այս, զոր արարեալ է մեծ իմաստասէրն Դիոնէսիոս, ձեռամբ Ներսես բանի սպասաւորի, ի լաւ և ի հին օրինակաց, ի թարգմանչաց մեկնչացն, որ բնաբանն ուրիշ կայ գրած և մեկնիչն ուրիշ եղեալ, հոռոմ գլուխ նշանեալ, որ դժուարին է ընթեռնուլն և գրելն. և մանր գիրն, որ ի լուսանցն գրած կայ՝ այն լուծմունքն է, զոր մեծ բարեւնապետն Նոային է արարեալ իւր գիտնական իմաստութեամբն։***

---

* Թորոսն ունի երկու փոքր հիշատակագրութիւններ, որոնցից մեկում իրեն անվանում է՝ «Գիրչիկ Թորոս կացէ» իսկ մյուսում՝ «Հռոմկլացի»։

** Սուրբ հիշատակարանը, որ բերված է Դիոնիսիոս Արիոպագացու աշխատութիւններից ու թարգմանիչ Մատթէոսին Սիւնեցու հիշատակարանից հետո, ոչ թե գրիչ Ներսեսի ինքնագիրն է, այլ նրա վերապատումը տրված ԺՀ. դարում։

197.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Նրեան 3589 (ամս՝ նաև 1652 թ.)

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Ակն[ե՞]ր

344բ ...Եւ ղձեզ աղաչեմ, որք պատահէք զինչ աւրինակաւ և իցէ, յիշել աղաւթիւք զնղկելիս Վարդան և զՍիմեոն՝ հայրն իմ, որ յոլովս է աշխատեալ վասն իմ. և անհարմարութեան և սխալման զրոցս ներեցէք, զի բազմավիշտ ոգւով, և խաւարեալ մտաւք, և յոյժ ցաւած մարմնով գրեցի։ Բայց աւրինակաց անվոյթ չարաբի, թեպէտ և ի բազմաց վկայեալ էին աւրինակքս, այղ երից և ի չորից, է զի և ի հնգից աւրինակաց, որչափ կարացի՝ ուղղեցի։ Ցիշնցէք զհոգևոր հայրն իմ զիմաստուն բարուքն, զսրբազան եպիսկոպոսն Վարդան, և զհոգւոյ եղբարսն իմ՝ զՊետրոս և զՄարտիրոս քահանայ, և զԹորոս կրաւնաւոր, որ զդին նիւթոյս ետուն, և զՄարտիրոս քահանայ՝ որ յուզեցն աշխատեցաւ յաւժար կամաւք, և զՄինաս քահանայ՝ ձեռնտու մեզ. և աստուած յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի։

Գրեց[աւ] ի թվ. ՁԿԸ. (1319), յԱկ[ներ]րոյ վանքս, առ գուբս տաճարի Տիրամաւրն, և սուրբ Առաքելոցն, և այլ սրբոց, ի թագ[աւորութեան] Աւշնի, և ի կաթո[ղիկոսութեան] Կոստ[անդեայ], յառաջ[նորդութեան] վան[իցս] Ւրիգորի, յորդորելով եղբարցս, որոց ողոր[մեսցէ] Քրիստոս, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Տէր Վարդանայ է գիրքս*

198.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փերզ. 6273, էջ 128—129 (Աղթամար)

Գրիչ՝ Ովաննես
վայր՝ Ուռնկար անապատ

Գրեցաւ գերարփիս այս... ի յանապատիս Ուռնկար** կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և յաղթող և աստուածընկալ սուրբ Նշանիս, և սրբոյն Ստեփաննոսի, և առաքելոյն Պետրոսի, ի յաշխարհակալութեան Բուսայիտ դանին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ի յառաջնորդութեան տեղւոյս Ղազար կրօնաւորին... ձեռամբ Ովաննես գրչի, ի խնդրոյ Տիրացու քահանայի... ՁԿԸ. (1319)։

* Այս տողը գրված է կարմրագեղ գլխատառերով։

** Ուռնկար անապատը ըստ Փերզալամյանի գտնվում է ևի ծայրն Աորերանի գաւառին Վասպուրական նահանգի, յարևելից կուսէ Ջաղբերունեաց։

199.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վիննետ. 1 (1508) 8ուց. հա. Ա. էջ 19—20

Գրիչ՝ Յովհաննէս

ա

411ա ...Եւ՝ մեղաւորս Յոհաննէս, ըստ կարի զփափաքս իմ լցի յանկ ելանելովս, և այս եղև ներելոյն աստուծոյ, զի յանարժանէս թերևս արժանաւոր այս գործ եղև յանկեալ, և զայս ոչ ասեմ վասն գեղա- պաճոյճ շարագրութեանցս, այլ վասն աղնիւ աւրինակիս, զոր սուրբ և երանեալ վարդապետին Գեորգեայ [Սկևռացւոյ] ձեռացն շարահիւսեալք էին...։

բ.

41ա Ձմեղաւոր հողս Յոհաննէս՝ զդրաւոս սուրբ տառիս, և զծնաւղսն իմ՝ [զպարկեշտ մայրն իմ զՄամաւսաթուն]*, և զեղբարսն իմ՝ զՍմբատն և զՎասիլ, և զամենայն աղգատոհմն իմ յիշեցէք, ով սուրբ ընթեր- ցաւղք և տեսաւղք, և տէր ղձեզ յիշէ. և անուն մի քերէք, զի չար սովորութիւն է, և թէ արժանի էք՝ գրեցէք և զձեր անունդ յայլում տեղւոջ։

գ

352բ Ձկարաւտս ողորմելոյ, կտտամահ ի մեղաց լեալս՝ զՅովհաննէս, յարդար գործոց նուաղեալս, զսուրբ մարգարէիցս մեղսաշաղախ ան- ձին ստացողս յիշեցէք Ո՛. տէր ողոմայիւ և մի հայր մեր յերկինս, և տէր ձեզ տայ անբաւ բարի։

[Ի թվ.] ՁԿՀ. (1319)։

Ծաղկող՝ Սարգիս

դ

443ա Որք ընթեռնոյք զսա ի յարկի,
Կամ ի յանկեան սուրբ տաճարի,
Քահանայիցդ սրբոյ գրնդի,
Դուք նըմանեալ Ահարոնի,
ՁՍարգիս՝ լըցեալ մեղաւք ի լի,
Մաղթեմ վասն տեառն բանի,
Վասն իմ մեղացն, որ գործեցի,
Թէ զոր թողոյք՝ թողեալ լիցի
Եւ ձեր բանիւդ չնչեացի։

Եւ զհանգուցեալ հայրն իմ զԳրիգոր քահանայն, և զծնողն իմ, և զամենայն ազգայինս իմ, և զորդին Գրիգոր՝ երկարամեայ լինել յերկրի, որ ոսկով և ծաղկով զարդարեցի զսուրբ աստուածաշունչս...։

* Փակագծում մեջ բերված հատվածը քաղել ենք 312 էջի հիշատակագրությունից։

200.

ԱԻԵՏԱՐԱՆ

Սեբաստիա, Ս. Նշան № 19, ՀԱ. 1924, էջ 516—517

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Կիլիկիա Փոս անապատ

548 Գրեցաւ սուրբ աւետարանս ի թվ. Հայոց ՁԿԸ. (1319), ի հայրապետութեան տեառն Կոստանդիա, եւ ի թագաւորութեան Հայոց Աւշնի, ի յանապատս, որ կոչի Փոս, ընդ հովանեաւ Կաթուղիկէիցն եւ սուրբ Նշանին, ի խնդրոյ պատուական եւ Քրիստոսասէր քահանայ Պօղոսի, վասն զի բազում վաստականօք եւ ըղձալի սրտիւ ետ զսա գծել եւ նկարակերտել ի յիշատակ իւր եւ ծնօղաց իւրոց՝ Աբղ, աղաչեմ զամենեսեան, որ ընթեռնուք զսա, յիշեսջիք զվերոյգրեալ քահանայ, յիշեսջիք տէր-ողորմայիւ եւ զննջեցեալսն սորա, զԽաչէր հայրն, եւ զմայրն, եւ զհաւրնպարան իւր՝ զԳրիգոր եւ զԹորոս եւ զՅովսէփ եւ զՎասիլ, եւ զամենայն ննջեցեալս սորա։ Յիշեսջիք աղաչեմ եւ զմանկադոյն քահանայ զՅովհաննէս, որ աշխատեցաւ ի կոկել թղթոյս։ Նա, յիշեցէք աղաչեմ զամենայն բնակիչս սրբոյ ուխտիս Փոսոյ՝ զքահանայս եւ զկրաւնաւարսն, որք այժմ են, եւ որք ննջեցեալն են, եւ որք գալոցն են, եւ զլինողքն սուրբ եկեղեցւոյս եւ ուխտիս, եւ զմխաթանալսն ի սա։ Վերջոյ ամենիւդ եթէ խնարհիք, աղաչեմ, բաշխեցէք եւ ինձ վշրանս, յիշելով զամենայն եղկութեանց արժանիս, զլցեալս զանազան չարեօք, զՅոհաննէս զրաւղ սորա, եւ զԽաչիկ հայրն իմ, եւ զմայր, եւ զհաւրեղբարսն իմ, եւ զամենայն ազգայինս մեր՝ զկենդանիս եւ զանդուցեալսն։ Որ գրեցի զսա յոյժ կորացեալ հոգւով եւ խաւարեալ խորհրդով եւ սղծեալ ցնսրութիւք ազտեղեալ ի գործս, թերանալ ունելով զառաջնորդսն զկնի չարչին ի նորին կամսն, զոր աղաւթիւք ձեր եւ ողորմութեամբ իւրովք ուղեսցէ զսա տէր, այլ եւ յոյժ ձեռնտուութիւն եւ աղօթք եղբարցս յայսչափ էած, զոր չունէի ակն...։

Աբղ, գրեցաւ սա յառաջնորդութեան վանիցս Կոսաանդեայ եւ Հայրապետի՝ վակակալի սրբոյ տաճարիս...։

Աբղ, աղաչեմ յիշել ի տէր զՅովհաննէս, զկարապետ, զԳրիգոր, զԿոստանդին, որ աշխատեցան յղարկելն, եւ առտուած յիշողացդ ողորմեսցի։

201.

ՅԱՅՍՄԱԻՈՒՐՔ

Երևան 3658

Գրիչ՝ Սիոն
վայր՝ Կիլիկիա

258ա ...Ցամի հիմնահրիւրերորդի ութերորդ[ք] թուականութեանս հայոց (1319) գրեցաւ տառս տէրունական աստուածային գանձուցն,

որ ունի յինքեան բովանդակեալ զամենայն տաւնս և զյիշատակ սուրբ
և աստուածախաւս մարգարէիցն, և զսրբոց առաքելոց, և գՀայրապե-
տաց, և զարնամբ նահատակեալ մարտիրոսաց, և զսրբոց կուսանաց,
258բ և զընթանուր ամենայն սրբոց, որոյ յիշատակողքս և տաւնողք || սո-
ցա աւրհնութեամբ եղիցին ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։

Ապգ, գրեցաւ սա ի խնդրոյ աստուածասէր և տաւնասէր կրաւ-
նաւոր քահանային Կոստանդեա, ի յիշատակ իւր, և եղբաւր իւրոյ
Թորոսի, և ծնաւղաց իւրոց, քանզի յոյժ փափագէր հասանել ի գրաւ
սորա վասն առաւել տաւնելս և յիշատակ առնելոյ սուրբ վկայիցն։
Որո բարեխաւսութեամբ սոցա և աղաչանաւք սուրբ աստուածածնին,
և անբարբառ բարեխաւսին՝ սուրբ խաչին, և երկնային զաւրու-
թեանցն՝ սուրբ հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիէլի, և սուրբ
ճղնաւորացն Քրիստոս աստուած ողորմեաւ ստացողի գրոցս՝ Կոստան-
դին քահանայի, և եղբաւր իւրոյ Թորոսի, և ծնաւղաց իւրոց, և ամե-
նայն զարմից։ Ցիշեսջիք և գհոգևոր որդին իւր զ[illegible]եսրոս։

Եւս առաւել աղաչեմ գհանդիպողքդ, և զընթերցողքդ, և գլսաւղքդ,
259ա որ աւգտիք ի սուրբ գրոցս՝ յիշեսջիք սրտի մտա || ւք և աստուածա-
ողորմի խնդրեցէք ի բարերարէն աստուծոյ Յիսուսէ Քրիստոսէ ինձ՝
տնարժանիս և բազմամեղիս և փծուն և ախմար գրողիս Սիոնի, և
եղբաւր իմոյ Սիմեոնի՝ կազմողի գրոցս։ Եւ որ զմեզ ի բարին յիշէ,
և աստուած-ողորմի ասէ յաւժար կամաւք մեզ և մեր ծնաւղացն,
նա Քրիստոս աստուած յիւր միւսանգամ գալուստն իւր և իւր ննջե-
ցելոցն ողորմութիւն և թողութիւն շնորհեսցէ, ամէն։

202.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7651 (տես նաև 1387 թ.)

Ստացող՝ Ստեփաննոս Սեբաստացի

III

269ա *Ալդ, ես՝ նուաստ ծառայիդն Քրիստոսի՝ Ստեփաննոս պիտակ անուամբ եպիսկոպոս Սեբաստիոյ մայրաքաղաքի, անարի հեղինակս և մոլար հովիւս ընթացա յաստուածազան աշխարհն Կիլիկիոյ, յերկրպագութիւն սուրբ աջոյն և աթոռակալին յողնաչարչար և բազմերանեալ Երախտաւոր փուրը հաւրն և լուսաւորչի հայկազեանս ոեոի սրբոյն Գրիգորի, և յոյժ պատուեալ և մեծարեալ զամայ ի հայրապետէն տեառն Կոստ[անդեայ] և ի Քրիստոս առատած հաւատարիմ արքայէն Աւշին կոչեցելոյ. Իսկ բարեզաշտ արքայն Աւշին կամեցաւ պարզևս ընձեռել իմս նուաստութեանն, և ես զմարմնաւոր գոյս առ ինչ ոչ համարեայ, այլ եռափափագ սիրով ըղձացա կենաց քարոզիս և յարձր պատուիրանիս աստուածպատում սուրբ աւետարանիս: Եւ հրամանաւ արքայի մատ յարկեղս տանն, ուր հաւաքեալ կային սուրբ կտակարանքն, և քէպէտ և պատահեցայ բազմաց և զանազանից, այլ ընդ սա հաճեցայ, զոր էր ըրեալ արագ և դեղեցկագիր գրչի և բազմերանգ ծաղկուք*

269բ *զար ‖ գարեալ յողնահանճար նկարակերտի, այլ ոչ յաւարտ հասուցեալ, զի ի տեառն տնաւրինականացն բաժին մի նկարեալ էին, և զկէսն նշանագծեալ, և զյոլովս թողեալ զտեղիս: Եւ իմ առեալ զսա խնդութեամբ մեծաւ. և ևեալ ի խնդիրս քաջ նկարագրի, և գտի զսքերտասէր քահ[անայ]՝ զՍարգիս մականուն Պիծակ, յոյժ հմուտ նկարագրութեանն: Եւ տուեալ իմ ի հալալ արդեանց իմոց Ռ. և Յ. (1300) դրամ. և նա յանձն էառ, և բազում աշխատութեամբ կատարեաց և ևլից զպակասութիւն ոսկեգնակաւ պատկերացն որ ի սմա, զոր ընկալայ և զուարճացա ներքին մարդովն:*

Արդ, եղև դրաւ. ոորա ի Թվ. Հայոց ՉԿԹ. (1320), ի գառն և ի զժնեա և յանդարձ ժամանակի, զոր աւելորդ համարեցաք առ ի դրել զդպանութիւն ժամանակիս ի հայրապետութեան տեառն Կոստ[անդեայ] Կեսարացոյ և յարքայութեանն Աւշի արքայի: Եւ ևս՝ վասնիչս տէրունի զանձուց և քանքարատիպոյ եպիսկոպոս Սեբաստիոյ Ստեփ[աննոս], յերես անկեալ աղաչեմ զձեզ տնման զեմման պատարագին՝

270ա *սպասաւորքդ և զսրբազան զունտ պաշտաւ ‖ նէից եկեղեցւոյ սրբոյ, որք վայելէք ի սմանէ լմանալի և զղալի աչաւք և խրախանայք ընթեռնելով, կամ գլզտփտրաւ, կամ այլ սարտաւ իւիք, յիշեսջիք սրտի մտաւք և ուղիղ կամաւք զիս՝ Ստեփ[աննոս] նուաստ եպիսկոպոս, զըս-*

տացող և դյանկ հանող սուրբ աւետարանիս, և զծնաւղն իմ՝ զՏաճատ քահանայ և զ'Ելիքիայ, և զաստուածարնալ նախնիսն իմ՝ զտէր Գրիգոր վարդապետ, և զմիւս տէր Գրիգոր, և զհաւրեղբայրն իմ՝ զտէր Սերսեհ, որոյ յիշատակն՝ աւրհնութեամբ, և զեղբայրն իմ զԿոստանդին քահանայ, և զքուէրսն իմ, և զՅակոբ կր[աւնաւոր], և զամենայն հարազատիսն իմ, և զպարսն Շահնշահ, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս, որոյ ողորմեցի Քրիստոս և սրբոց իւրոց դասակից արասցէ։

Յիշևջիք և զսուրբ զիտապետն Հայոց զտէր Կոստ[անդին] և զրաբեպաշտ [հայր][աւորն] Աւշին, հանդերձ արքայորդւովն և ամենայն զարմիւք։ Եւ զհոգևոր որդեակն իմ զտէր Սիմէոն, որ յայսմ ամի կոչեցաւ ի վեհագոյն պատիւ եպիսկոպոսութեան, և զհոգով հարազատսն իմ զՅօհաննէս կրաւնաւոր և զ'Այրապետ դրիչ, և զամենայն միաբանուիքին հոգևոր եղբարցս, որք ‖ են ընդ քաղցր լծով ծառայութեան 270բ սուրբ ուխտիս, որ յանուն աստուածունակ սրբոյ Նշանիս Եւս առաւել յիշևջիք զառաջին աշխատողն՝ զղծաւղն և զծագկաւղն, և զվերջին աշխատողս՝ զՍարգիս քահանայ...։

Զգծող սակաւ զրոյ յիշատակարանիս՝ զհայրապետ ողորմելի դրիչ, յիշել աղաչեմ։*

Վայր՝ Կաֆա

բ

Եւ զարձեալ, ես՝ անարժանս Ստեփաննոս եպիսկոպոս մայրաքաղաքին Սեփաս[տ]իոյ, զանտուկ զանձս, կենաց քարոզս և բարձր պատուիրանս՝ աստուածապատում սուրբ աւետարանս առի վախճուտականն ի յայլազգաց և ևկի ի մայրաքաղաք ի Կաֆա, կոյր յոլով ժամանակս ինչ և զառնամ ի տունս մեր հայրևնի. հրաման արարչին եհաս, զրի յիշատակ զսուրբ աւետարանս ի Կաֆա. ‖ չունի ոք իշխա- 271ա նութիւն տէր ելանել, կամ զրաւական դնել, կամ ծախել. լաւ պահողքն աւրհնին աստուծոյ, և ովոր [յ]անղրդնի լրբենի գիմուք տէր ելանէ, կամ զրաւական դնէ, կամ ծախէ՝ զպատիժ ի'ղկայենի և զՅուդայի առցէ, լաւ պահաւղքն աւրհնին յաստուծոյ, ամէն, հայր մեր։*

203.

Ա Խ Ծ Ա Ր Ա Ն

Երևան 4186 (Տես՝ նաև 1457 թ.)

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Սաղմոսավանք

258ա Բայց զրեցաւ սայ ձեռամբ թարմատար և վառանդուշ ուղղ (*) կածնի (*) Աստուածատրոյ անսասւ (*) կրաւնաւորի, ի թվ. հայոց Ջ ԿԹ.

* Մինչև այստեղ Ստեփանոս եպիսկոպոսի անունից գրել է հայրապետ գրիչը, իսկ շարունակությունը գրել է ինքը՝ Ստեփանոս եպիսկոպոսը իր ձեռագրով։

** Այս ավետարանի նկարագրության գործին մասնակցել են ութ նկարիչներ, որոնցից են նաև Թորոս Ռոսլինը և Սարգիս Պիծակը։ Գիլիկյան մանրանկարչական դպրոցի ամենափայլուն և ժնձարժեք արտադրանքներից մեկն է։

(1320), ի սուրբ քաւարանիս, որ անապատ կոչի և Վաճէ Սալմասի, և է աստուածալ, որոց աղաւթիւք սոցա աւժանդակել դրեցի զլուսաշարգեալ մատեանս աստուածոյին, ստուգդրանեալ ի բուն աւրինակացս։ Նաև այլ յոլով դիրս աստուածաշունչ դրել իմ, ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցոյ, և բարեխաւս սո Քրիստոս, վասն վրկութեան ոգւոյ մերոց։ Եւ արդ, աղաչեմ զամենեսեան ի դէպ ժամանակի, սրք աւդտիք և լուսաւորիք ի սմանէ ընթերցմամբ կամ աւրինակաւ, յիշեսջիք ի սուրբ և յարժանաւոր յաղաւթս ձեր զՊաւղոս և զԹադդէոս, և զմայրն նորին զՄանկու, և զքոյրն Մամախաթուն, զՊետրոս, և զհայր նորին՝ զԹուխան, և զմայրն Կուռնի խաթուն, զՊարսամ, և զհայր նորին զՑակոբ, և զնոգևսր հայրն սոցա՝ զՆրեւիայ կլուսնաւոր քահանայ, և զնոցոյ եղբարքս՝ զՍարգիս Նորագաւթեցի և զԴալուստ կր[ուն]աւոր քահանայք. որ կամեցող են յառնուլ զրոցս, և զպատաւորքս՝ Վաւդաճ, և Վիրապիկ, Գրիգոր, և Ասլան պէկ, և Արտաւա...

234ա Եւ աստանաւր յերես անդեալ աղաչեմ յիշել և զարժանաւորքս յիշման՝ զՍարգիս և զՄխիթար ճգնաւորք և կուսակրաւն քահանայք, որք կ. (60) ամ ժուժկալեալք բաղում և աղղի աղղի ճգնութեամբ հոգևորք. և մեք աւտարք և պանդուխտք. հոգով և մարմնով, և սոքա ընկալեալ զմեզ ի յարկս իւրեանց սպասաւորելով...

204.

ՃԱՇՈՑ

Երևան 7451

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Տարօն

211ա Կրեցայ սուրբ տառս այս ձեռամբ անարհեստ գրչի Յովաննիսի, յարդար և յընտիր աւրինակէ սրբոյ ուխտին Առաքելոցն Տարաւնոյ, ի դառն և ի նեղ ժամանակիս, որ և եղեալ կայ հարկ ի վերայ ազգս քրիստոնէից, և կան ի տառապանք յայլասևոից, և է ամենայն ուրէք բարեկարգութիւն նուազեալ։ Այլ և աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, որք ընթեռնուք զսա, կամ աւրինակէք, կամ աւրդըտիք ի սմանէ, յիշեսջիք աղաւթիւք զսուրբ և զընտրեալ կլուսնաւոր զԱռաքեալ՝ զսա։ Ով աւրինակիս, և զծնաւղսն նորա, և զամենայն արեան մերձաւորսն նորա։ Ընդ նմին և զիս՝ զանպիտան գրոզս զՅովաննէս, և զծնաւղսն մեր. և ինքն, որ առատն է ի սուրս բարեաց, յիշողացդ և յիշեցելոցդ ողորմեսցի, ամէն։

205.

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ

Երևան 9233դ

Գրիչ՝ Սարգիս

...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ նուաստ քահանայի Սարգսի՝ մեղապարտս և անպիտան գրչի, քանզի բազում փութա-

զանաւ-ք և լղձալի որոյ. աւարտեցի զսուրբ աւետարանս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և Նախավկային, ի թվ. Մեծաց Հայոց ՉԿԹ. (1320), ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ի թագաւորութեան Բուսաիտին, ի զառն և ի վշտաբեր ժամանակիս, Արդ, յիշեցէք զնղկելի զբիչս և զծնաւղսն իմ՝ զՍուբիտս և զՄելեքՁազ...

206.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 1098

Գրիչ՝ Մխիթար

375բ Մխիթար՝ մեղաւ-ք մեռեալ ոգի,
Յերեսս անկեալ միշտ ամենի,
Աղաչեմ յիշել յայսմ վայրի,
Այլ և ծնողաւ-ք մեր և զարմի,
Եւ դուք ի նոյն լինջիք բարի,
Աւրհնելոյն յամենայնի,
Ի հնազետասան յորելինի
Եւ յինն և տասն Թուի,*
Ծագրեցաւ մատեանս հոգելի,
Որ հոգիացելոցն ախորժելի,
Բայց վայուն գրօղս ողորմելի,
Որ չ'ի հմուտ այսմ տրհեստի,
Թողութեան արարէք գիս արժանի
Եւ ձեր բարեացն վարձս յայտնի.
Եւ տէրն աւրհնեալ յամենայնի,
Ամէն, ամէն և եղիցի։

*) Տասնևհինգ հորելյանը հավասար է 750-ի (30×15), զուգարելով սրան 10 և 351, ստանում ենք 1320 թվականը։

ՉՀ 1321

207.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Բրիտ. թանգ. 14 (Add. 13,411), *կոնքր. 8ուց. 22—24 (տես նաև 1368 և 1621 թ.թ.)*

Գրիչ՝ Կիւրիոն
վայր՝ Գլտձոր

ա

310ա Ահդ, ղրեցաւ սա ի թվականութեան մերոյ հայկազեան տումարի ՉՀ. (1321), ի գահն և անբարի ժամանակիս, յորում ունէր զիշխանականութիւն բոլոր աշխարհի Հայոց և վրաց ազգն նեստդայ, ի թագաւորութեանն վրաց Գորգին կոչեցելոյ, և Հայոց Մեծաց թագաժառանդ թագաւորին մերոյ Լևոնի, և ի հայրապետութեանն տէր Կոստ[անդեայ], և վերադիտողի տանս Միւնեաց՝ տէր Յովհաննէսի և տէր Ստեփանոսի, և ի զօրավարութեան և իշխանութեան գաւառաց յորում եմք՝ Բուրբելի և Ամիր Հասանայ, և ի վարժապետութեան սուրբ և բազմերջանիկ քաջ հռետորաց Հայոց՝ երկուց ամուլաց ճշմարիտ հաւատոց մերոց՝ Դաւթի և Նսայեայ՝ ի հռչակաւոր և սուրբ մեհնաստան համալսարանին Գլաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի և աստուածընկալ վերատացեալ դպրապետացս, ձեռամբ մեղսամակարդ և տարաշխարհիկ անձին՝ Կիւրիոնի* սպասաւորի բանի, հրամանաւ և յորդեամբք սրբամիտ և կուսակրօն քահանայի Մարտիրոսի։**

բ

88բ Բարեւնապետին Մարտիրոսի է սուրբ աւետարանս, մեղաւոր Կերիոնի գրած, յիշեա ի Քրիստոս։

գ

241ա Զսրբամիտ սպասաւոր բանի զրազմերախտ եղբայրն իմ՝ զՄարտիրոս՝ զստացող գանձուս յիշեա ի տէր։ Նաև զրազմավէր հոգիս զԿերիոն գծողիս, ամէն։

Ծաղկող՝ Թորոս

դ

9բ Զնկալօղ սուրբ պատկերացս զԹորոս յիշեա ի տէր։

---

* Տպված է Հիւրեղ, հայորդ հիշատակագրության որոշակի ոճյալի համաձայն ուղղում ենք Հիւրիոն։

** Օգտագործել ենք նաև Փիրդալամյանի ընդօրինակությունը (Երև. 6273, էջ 130-130), որի միջոցով ուղղել ենք մի քանի տպագրական սխալներ։

Ստացող՝ Դաւիթ

Ե

91ա Նուաստս ի շարս ուսուցչապետաց Դաւիթ, շնորհեցի զոուրը աւետարանս ուրը Աստուածածնին և առաջնորդի սուրբ անապատին՝ Մկրտչին՝ հողևոր որդևկին իմոյ, ի յիշատակ հողոց իմոց...

208.

ՄԱՇՏՈՑ

Երևան 4195 (Տես նաև՝ 1611 թ.)

Գրիչ՝ Մատթէ
վայր՝ Տաթև

Ա

298ա ...Բոյց եղև դիպս այս ի թվականութեանս Հայոց Չ. և Հ. (1321), յաշխարհակալութեան Բուսաիլին, և ի զաւրապետութեան Զոպանին, և յիշխանութեանս մեր՝ աստուածասէր և բարեպաշտ մեծի և քրիստոսասաղատ իխանին պարոն Իոյրթեյին, և ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդիայ, ի սուրբ ուխտս և յաթոռս հոյակապ և ի մեծ մայրաքաղաքս Տարև, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցս և աստուածակիր նշանացս, հրամանաւ և աւժանդակութեամբ աստուածապետիս և առաքելաշնորհ արհեպիսկոպոսի մերս տէր Յովհաննիսի՝ հղի և մարդասիրի, որ և ղիմ տարտամութիւնս վստահացոյց ի վերուն դիպս ձեռնարկել, իբր անարգամեծար դնալով զաւրացոյց զիս և զնիւթ քարտեներս շնորհեաց։ Եւ. ես՝ եղկելիս և ամենաթշուառս Մատթէ, ըստ յա-

298բ բաւեղին և եղջերւաքաղին ունելս || ի միայն դանուն և զձև, և ոչ զէութիւն քահանայութեան և վարժապետութեան, ի մարդասէր կամս տեառն իմոյ վստահացեալ և ի թախանձական խնդիր համ[ա]քան եղբայրութեանս ձեռն ի գործ արկեալ, ըստ կարի կատարեցի սպաւ և փոյն զրուել, որպէս տեսանէք. վասն որոյ պրպիւն աղաչանք է մեր, զի անմեղադիր լինիք, զի թէպէտ և յոյսն մեր վառեաց ի սոյն, այլ առաւել հարկ տիրական հրամանին և կամք հարազատ մխիթարեանս...*

209.

ԳՐՈՒԹԻՒՆՔ ՄԽԻԹԱՐԱՑ ՍԱՍՈՒՆՑԻՈՑ

Երևան 952

Հեղինակը՝ Մխիթար [Սասնեցի]

218բ Առաջին այս զրեցաւ սովփեր հողևորական տառիւ իմով ձեռամբ՝ Մխիթար պիտականուն վարդապետի, որ և հաւաքեցի զսայ

* Հիշատակարանի հետաքրքրութեան զուրկ մասերը, սկզբից՝ հինգ, վերջից՝ մեկ թերթ բաց են թողել

յաստուածաշունչ մատենից աշխատութեամբ երկոց, ի փառս սրբոյ երրորդութեանն յաւիտեանս, ամէն։

Ի թուի ՉՀ-երորդի հայկազեանս առնմի տումարի (1321), ես՝ անպիտանս ի ծառայս տեառն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի՝ Ալսիթար անուն, կրտսեր վարժապետաց և յետին բանաւիրաց, կարդացի և հիմնացեալ կատարի զայս մատեան հոգևորական տարից յանուն և ի փառս որոյ երրորդութեանն հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, յուսալով հողեալ աւդից մանկանց եկեղեցւոյ սրբոյ, ղործակցութեամբ ընտրեալ և սրբազան Յոհաննու բարեկամ և մերում հարազատի՝ հողեալ եղբաւր, այլ և տւղնականութեամբ տղաւրիկ Ալարսեղ աբեղայի, ծառայի տեառն Յիսուսի Քրիստոսի՝ սրգւսյն ասաւծոյ...։ Ջ Ւկրտ։ն արկա և դաշակերտ բանին ճշմարտութեան յիշնջիք լարի կամաւք առ տէր Յիսուս*

210.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Թորոս աղբար, Ր. էջ 341—347 (Խարբերդ, որ. Նշանի ձեռագիր)

Դրիչ՝ Ստեփաճ Ցերկայց
վայր՝ Երուսաղեմ

ա

Ցամի եւՔՆհարիւրորդի եւՔանասներորդի մեծ Թուականին մերոյ (1321), ի հայրապետութեան տեառն Կոստաճդեայ Լամբրոնացւոյ եւ ի թագաւորութեան գեղարոյս պատանեկին Լեւոնի որդւոյ Աւշնի, դրեցաւ սուրբ եւ լուսալիզճ եւ կենսակիր, աստուածաւնդ, աստուածախաւս սուրբ աւետարանս ի սուրբ քաղաքս Երուսաղեմ, ի դրունս սուրբ եւ փառաւոր տաճարիս Քրիստոսի՝ սուրբ Յակոբայ, ձեռամբ իմով՝ անարժան եւ մեղսաթաւալ փանաքի եւ անարհեստ գրչի Ստեփաճ Ցերկայց կոչեցեալ, ի խնդրոյ աստուածարեալ եւ սրբասէր քահանային Վարդ իշխանայ, եւ հոգեւոր դստերն իւրոյ Շահար հաւատաւորի, որ եաուն գրել զսա մեծաւ փափագանաւք, յիշատակ նոցին անջնջելի, եւ աւանդեցին սուրբ Հրեշտակապետացն, Եւ ես՝ ողորմելի գերիս, յանձն առի եւ բոտ կարի իմում չանացի ի ժամանակ ծե-

* Սույն հիշատակարանը, մի փոքր համառոտած, արտագրված է նաև Երևանի №3276 ձեռագիր ժողովածուի մեջ (ծէ դար)։ Ձեռագրի գրիչը հիշատակարանին կցել է նաև նախագաղափար օրինակի գրիչ Գրիգոր աբեղայի հիշատակարանը (տես՝ 1334 թվի տակ) և հետևյալ հետաքրքրական ծանոթությունը՝ «Եւ այլ բաղում ճառս ասացեալ է վասն միութեան, բնութեանն և կրիցն կամաւորական պատարագին, և մեղսաքաւիչ խորհրդոյն, և վասն ջուր արկանելոյ ի խորհուրդն, և գեներտու քահանայական, հրկրորդ գալստեան, յարութեան, Նիկողիմոսի, ծնանելոյն ջուրցն, և այլ բաղում բանս ասացեալ է. այս Մխիթար Գոշն է մեծ, որ դպատատանագիրքն այլ նա է արարեալ, գրձեալ՝ պատճառ Քրիստոս Մնեալ գրոցն Գրիգորի Ամատուածարանի, դի հարկ էր, որ ընդ գրոց իւր գրել, այլ ոչ հանգիպեցաւ, վասն այսորիկ յայսմ տեղւոջ եզաքս։ Ինչպես դժվար չէ նկատել, այս ծանոթության մեջ գրիչը սխալմամբ նույնացրել է Գոշ և Ամանեցի (կերմանեցի) նույնանուն մատենագիրներին։

թութիան, որ յոյժ պակասեալ էր ճաճանչ լուսոյ յաչաց եւ պակասեալ ի զաւրութենէ. Արդ, թէպէտ եւ անարհեստ էի ղրչութեանս, փոնաքի եւ անյարմար, այլ հանդիպեալ լաւ եւ ընտիր աւրինակի, որ ղբած էր Ստեփաննոս Գոյներերիցացց, այն որ լի էր եւ պատրուն յարհեստ ղրչութեան եւ ընդ բնաւս հռչակեալ, նաեւ բանիւ կատարեալ եւ հոգւով լցեալ, որպէս ոտա յայտնի է իմաստնոց եւ ստոյգ դիտողաց, զի լի եւ կատարեալ էր արուեստիւ, ի բանս, ի բառս, ի լծորդս, եւ ի բայսառս, եւ ի սրոհմունս առողանութեանց; եւ ես՝ մեղաւոր հոգս, յոյժ բազձանաք եւ յաքնառչոր ունչանաւք, ալէոտանջ երկաւք, մեծաւ աշխատութեամբ, ըստ կարի ղծազուցի զոտ ի լուսաւորութիւն մանկանց ևկեղեցւոյ. Արդ, երես անկեալ աղաչեմ զամենեսեան... յիշեոջիք զստացողն սուրբ կտակիս, զյառաջասացեալ պատուական քահանայն Վարդ իշխան, եւ զկենակիցն իւր, եւ զամենայն ազգայինս՝ զկենդանիս եւ զհանգուցեալս, և զՇաբար հաւատացուրն, որ աշխատեցաւ յոյժ ի կոկել թղթոյն, եւ որք սպասաւորեցին մեզ ի պէտս մարմնաւորս, եւ զիս՝ զխաւարեալս միղաւք Ստեփաննէ եւ զիմոն ամենայն ողորմութիւն գտանել յահեղ աւուրն համառաւտի...: Եւ որ յիշեսցէ զվերոյդրեալքս Քրիստոս աստուած զինքն յիշէ...: Մի ոք իշխեսցէ հանել զսուրբ աւետարանս ի սուրբ Հրեշտակապետացն. կամ զրաւական զնել, կամ գողանալ, կամ իւր սեպհականել, կամ յինչ եւ իցէ պէաս հանել ի սուրբ եկեղեցւոյն, այլ կացցէ, մնասցէ հանապազ է վերայ սրբոյ սեղանոյն... եկեղեցւոյն: Եւ եթէ ոք իշխանութիւն ի կիր արկցէ եւ հանցէ, Քրիստոս լինի նմա դատաւոր յաւուրն այնմիկ անթեան, եւ ելցէ ինքն իւրայնովքն ի կենաց ղրէն, Իսկ եթէ ոք վասն հեծելի եւ կամ վասն այլ իրիք խոռվութեան հանցէ, եւ յորժամ խաղաղի դարձուսցէ ի տեղի իւր, աւրհնի յաստուածոյ...: Ո՛վ եղբարք, ոչ թէ վասն մարմնաւոր ինչ լումայի զրնցաք զսուրբ աւ[ետարանս], այլ վասն զմեզ յիշելոյ...:

Ի մայիսի ԻԱ (21) սկստ եւ յաւդոստոս ԻԱ. աւարտեցաւ:

Հետ. ստացող՝ Մաքեոս

Բ

Յիշեցէք զՄաքեոս պատուական քահանայն, որ կազմեաց զսուրբ աւետարանս իւր ծախիւք եւ աշխատութեամբ... յիշեոջիք եւ զՄաթեոս ջուլհակն եւ զամուսինն իւր Տուխթար,... որ զսուրբ աւետարանս վերստին զարդարեցին արծաթով, եւ սկւոով, եւ տերունական նշանաւ, եւ սուրբ պատկերաւ,... եւ զՍտեփաննոս աբեղայն, որ շատ աշխատեցաւ ի յարծթելն,... եւ զՍկրտիչ ոսկերիչն...:

211.

ՃԱՌՆՏԻՐ

Մատենադարան հայկ. թարգմ. էջ 728 (Երուսաղէմի մատենադարան)

Գրիչ՝ Վահան
վայր՝ Դրազարկ

Յեւքինհարեւրերորդի եօթանասներորդի հայկազեանս աւետարւն (1321), ղրնցաւ ատուածաղաղդ ճառընտիրս այս, ձեռամբ մեղսաթաւալ եւ յոդնամեղ անձին Վահանայ անարժան քահանայի, ի վանքս Դրազարգի, ի մեծաւուր եւ հռչակաւոր անապատն, ի դուռն սուճարի մօրս լուսոյ Աստուածածնի, ի թաղաւորութեան տղայ արքայի Լեւոնիկ՝ որդի Աւշին թաղաւորի, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ... Եւ՝ ողորմելիս Վահան, յոտարեալ տչօք, ի հալալ արդեանց իմոց եւ աշխատութեամբ, ղրնցի դա պաշար կենաց իմոյ եւ յոյս համարձակութեան առ աստուած ըաղմարիւծ անձին իմոյ,... մանաւանդ Զապլուենիկ՝ դստեր Լեւոնի արքային Հայոց, եւ ամենայն ղբայրութեանս...

Եւ արդ, ծանուցանեմ ձեզ՝ սուրբ հարք մեր եւ ղբարք... երկրամերձ ղիմօք աղաչեմ, զի կամիլ գոլ եւ լինիլ երկրպագութեան արժանի աստուածային գերեզմանիդ ու չյայդողեցայ... ես զինչ ուղէկ դիրք գոայ ի վանքս... պատմութիւն, ես ձեզ գրեցի, որ ընթեռնոյք, ուրախանայք ու զիս յիշէք։

212.

ԱՒԵՏԱՐԱՆ

Մաքսուդ, Յուց. Ադուլիսի 21. Արարատ, 1911, էջ 564—565 (տես նաև 1348)

Գրիչ՝ Պաւդոս
վայր՝ Վայոց Ձոր

343բ *Գրեցաւ Ջէ.(1321) թվիս, ի յերկիրս Վայոց Ձորու*, || ...ձեռամբ Պաւդոս վարդապետի, յաղագս խնդրոյ սրբասէր կրաւնաւորի Սահակ անուն, որ ստացաւ գոայ ի յարդար և ի խալալ վաստակոց իւրոց, յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց, և եղբարց իւրոց, որք աւգտիք ի սմանէ | | |*

* Թվականի և գրչության վայրի հիշատակությամբ այս վկայությունը դտնվում է 103բ էջի վրա։

213.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 2961

Գրիչ՝ Մխիթար Անեցի

ա

313ա *Ի եւթնհարիւր* թիւ. կտաւարեալ,*
*Հւթանասուն** ի նոյն անկեալ (1321),*
Կատարեցաւ բանըս չափեալ,
Ի համբակէն նուաստացեալ։

բ

39բ *Ո՛վ, ամենիմաստ և բազմահնճաբ վայելող այսմ բազմիմաստ աստուածային տուիցս, զմեռեալս մեղօք, զպարտականս բիւր քանքարաց մեղաց, զփուփազմամբ փրցփրցուն զանարժան ղծողս՝ զՄխիթար Անեցի, միշտ բարի յիշման արժանի առնել զչարս և զանարժան, զի վասն այդմ բանի յայսմ հեղ և ի նսեմ, զառն և ի ղժնեա աւուրքս դրեցի, որ էր սով սաստիկ, և սրածութիւն, և սասանութիւն, և չարիս պէս պէս և զանազան, վասն մեղաց իմոց։*

214.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 3505 և Վասպ. 85. լալ. ձուց. սյուն, 167-168
(տես նաև 1343 և 1504 թ.թ.)

Գրիչ՝ Յո[վաննես]
վայր՝ Ապահունեաց գաւառ
դիւղ՝ Արսէ

222ա *...Արդ, դրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՉՀ. (1321), յերկիրս Ապահունեաց, ի նշանաւոր գեղուկս, որ կոչի Արսէ, ընդ հովանեաւ սրբոյ Ստեփաննոսի նախավկայի և ամենակարող երազահաս սրբոյ զաւրավարիս Գեւորգեայ, ի խնդրոյ իմաստուն և հաւատարիմ քահանայի, զոր մականուն Ներսէս կոչի։*

... Ես առաւել աստուած ողորմի Աստմին, և որդոցն՝ Յովաննէսին և Կակոսին և Կարապետին, և մօրն՝ Խանզադին, հարսին՝ Թէկիջանին։

Արդ, յերես անկեալ աղաչեմ, սրք ընթեռնուք կամ աւրինակէք, զծողի սորա թողութիւն շնորհեցէք, սուտանուն քահանայի Յո[վհաննէս]ի, և սխալանաց և խոշորութեան դրոյս անմեղադիր [լերուք], զի մեր կարն այսչափ էր, և Քրիստոսի թաղաւորին փառք։

---

* Ձեռագրում՝ «էհ.» (100)։
** Ձեռագրում՝ «Հ՝ն» (70)։

215.

ԱԽԵՏԱՐԱՆ,

Երևան 3708

Գրիչ՝ Յակովբ

վայր՝ ի գաւառիս Աւրճկա, ի վանիս Թառոցու

342ա ...*Արդ, այսմ անմահական ըմպելոյ և անդիւտ մարդարեիս և ամենաղով աւրինակիս վերածաւղ եղեալ սրբասէր և մաքրակրաւն քահանայն Սիմէոն, եա զաղափարել զոա ձեռամբ Յակովբ կրաւնաւորի, ի ժամանակս վերջինս, ի թուականու.քեանս Հայոյ ՉՀ.(1321), ի գաւառիս Աւրճկա, ընդ հովանեալ սուրբ Առաքելոցս, ի վանքս Թառոցու։ Արդ, ողաչեմք զամենեսեան, որք ընթեռնուք զոսա աւետարանս զայս, կամ զաղափարէք, կամ հանդիպիք, յիշեսջիք աղաչիւք զսրբասէր քահանայն զՍիմէոն, և զծնողսն իւր, և զեղբարսն, և զքոյրսն, և զնահապետեացնալ եղբայրն՝ Գաոնեակն, զԿարապետ քահանայ, որ զաւրինակն ընօրինաց, և զքոյրն իմ զԷլխաթուն։*

216.

ԳԻՐՔ ՄԱՂԹԱՆԱՑ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Փիրղ. 6273, էջ 130 (կոտոր անապատ)

Հեղինակ՝ Վարդան

վայր՝ Երուսաղէմ

...Արդ, ասացաւ և գրեցաւ սուրբ և աստուածային տառս, որ է մաղթանք ի բոլոր ամենայն սուրբ տնօրինականք Քրիստոսի աստուածոյ, որ է յԵրուսաղէմ, ի Վարդան վարդապետէ, ի թուականութեանս Հայոց ՉՀ. (1321), և ի թագաւորութեան Հայոց Լևոնի՝ որդւոյն Օշնի, և յաստղնորդութիւնս Երուսաղէմի աէր Վարդանայ:

217.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 4059

Գրիչ՝ Կարապետ

ա

323բ ...*Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի թվականութեան ապինս Հայկայ ՉՀ. (1321), ձեռամբ անիմաստ անձին և եղկելի հոգւոյ Կարապետի՝ [ոտան և վատթար գրչի, ի ստոյգ և ընտիր աւրի[նակէ]* | | |

Կաղմող՝ Յովաննես

բ

322բ *Չհողացեալս մեղաւք զՅովաննես սուտանուն սարկաւագ, որ կաղմեցի զսուրբ աւետարանս, աղաչեմ յիշել միոյ աէր ողորմայիւ։*

218.

ՅԱՂԱԳՍ ԵՒ ՅՈՐՀՐԴՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԹՈՎՄԱՑԻ ԱԳՈՒԻՆԱՑԻՈՑ

*Երևան 2315**

Թարգմանիչ՝ Յովհաննես Եզնկացի
վայր՝ Մոքսոյու վանք

ա

82ա Հաստատածային և դերկնաւոր իմացուածդ ամենասուրբ հոգւոյն, զոր ընդ աղաւտ ցանկացան տեսանել հրեշտակք, զոր շնորհեաց աստուած եկեղեցւոյն Հռոմայ, շինել ի վերայ վիմին Պետրոսի զսուրհուրդս սուրբ եկեղեցւոյ՝ մկրտութեանն ասեմ, զկնքոյն, և զսուրբ պատարագին, և զպսակին գիտութիւնն, զոր յարմարեալ տրամաբանական արուեստիւ և ապացուցական մակացութեամբ, համառօտ բանիւ և հղօր զօրութեամբ իմաստուն ումեմն վարդապետի ֆրա Թումայ կոչեցեալ, ի կարդէ բրաջուբացն, առաքինութեամբն կատարեալ և ի ծայրս իմաստասիրութեան ելեալ, լատին բարբառով, որում տեղւոյս հոգւով նուաստ ոգիս և յայժ կարաւտս բանի՝ Յոհաննէս Եզնկացի և այժմ կոչիմ Մոքսոբեցի։ Եւ մեծաւ թախանձոնաւք խնդրեցին զմեզ ի հայ բարբառ հրամանաւ պապին Հռոմայ, և ձեռնտուութեամբ արհիպիսկոպոսին տէր Զաքարիայի, սուրբ առաքելոյն Թադէոսի վերագիտողի, և միջնորդութեամբ տէր Բարդուղիմէոսի՝ հեպտոգի Ֆրանկ** եպիսկոպոսի և յայժ գիտնականի։ Եւ աւանդեցի զսա եկեղեցացդ Հայաստանի ընծայ անգին և գանձ պատուական, աչխատեալ իմովս տկարութեամբ և յղկեալ ըստ կարի զբառս և զբանս։ Արդ,

82բ որք աւգտիք ի նմանէ եթէ զտանիջք ի սմա սխորժ կերակուր և համ իմաստից յառողջութիւն մտաց ձերոց և ի պարարուիճ հոգւոց իմաստից և ի նիւթ գիտութեան խորհրդոյ սուրբ եկեղեցւոյ՝ տեառն իմոյ և աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ազիցի գոհութիւն... և թէ ոչ գտցի ի սմա ըստ կատարեալ իմաստից ձերոց կատարեալ և առողջարար կերակուր՝ մերում ակարութեանն լիցի պակասութիւն, դի ոչ կարացաք յանդղնդական ծովէն քարշել կաթիլս ջրոյ գործնական իմացմամբ մերով, յարբուսն պատքեալ անձանց և վարքմամութիւն կատարեալ գիտնոյ, միայն աղաչեմ ի բասրանաց զմեզ աղատել, դի ցանկութիւն ողջախոհ և մտի առանց թևոց թռչել տայ և առանց դաւրութեանցն նահատակել։ Վասն որոյ աղաչեմ դաստուածասէր պատուհոգւոյդ յիշատակել ի տէր յորի կամաւք դյառաջասացնալ աւժընդակն այսմ իրողութեան, և ընդ նոսին զմեր նուաստութիւնս կրկին ծնաւղաւք մերաւք և հրախտաւորաւք, դի և ձեզ լիցի մասն յիշատակի ընդ յիշատակեալսն յաւիտենական արդարոցն։ Եւ որք աւրինակէք զսա, գրեսջիք և զայս սակաւ դիր յիշատակի աշխատելոցն ի սմա, դի և դուք գրես-

* Հիշատակարանի ընդհիրը կամենալս օգտագործել ենք նաև Երևանի № 560 ձեռագրում պահված ընդօրինակութիւնը, ինչպես նաև Զարբհանալեանի հրատարակութիւնը (տես Մատենադարան, Հայկ. Քարտ. էջ 274—275)։

** «Մատենադար. հայկ. Քարտ.» մէջ «լատին» փոխ. «Ֆրանկ»։

ՅԻՔ Ի ՂԼԲՆ ԿՀՆԴԱՆԻ, Ի ԴՂՐՈՒԹԻՒՆ ՎԼԵՐԻՆ ԿՀՆԱՑՆ՝ ՇՆՈՐՀԱՒՔՆ Ք֊ԲԻՍՏՈՍԻ, ՈՐ Է ԱՒՐՀՆՆԱԼ ՅԱՒԻՏԱՆԱՆ, ԱՄԷՆ։

83ա ԴՐՆՑԱՒ ՂԼԲՆ ԱՅՍ ԽՈՐՀՐԴՈՅ Ի ԹԻ ՏԱՒՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ Ք֊ԲԻՍՏՈՍԻ ՌՂԱՀԻՆ. (1325), ՅԱՄԱՆԱՆՆ Ի ՀՈԿՏԵՄԲԵՐ Ը. (8), ԵՐԿՈՒ ԱՄԱՒ ՅԱՌԱՋ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ. ԵՒ Ի ԹԻՒ ՀԱՅՈՑ ՁՀ. (1321)*, ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ԵՒ ԴՐԵԱԼ Ի ԴՈՒԱՆ ՕՐՁԱՐԱՒ, ԸՆԴ ՀՈՎԱՆՆԱՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ, ՈՐՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՇՆՈՐՀԱՒՔ ՆԳՆ ԿԱՏԱՐԱՒՑՆ ՍՈՐԻՆ։

Ստացող՝ Տիրատուր
վայր՝ Գլաձո՞ր

Բ

ԵՍ՝ ՆԱՒՍՏԱԿ ԵՒ ՅԻՍԻՆՈ՞Վ Ի ԲԱՆԱՒԻՐԱՑ Տիրատուր ԲԱՐՈՒՆԻ, ՍՏԱՑԱ ՂԱՒԱՍ ԴԱՅՈ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ, ՈՐ ԷՐ ԺՈՂՈՎԵԱԼ Ի ՀՈԳԵԿԻՐ ԵՒ ՅԻՄԱՍՏՈՒՆ ՎԱՐՂԱՊԵՏԷ ՓՐԱ ԹՈՒՄԱ ԿՈՉՆՁՆԱԼ, ԵՒ ՆՈՒԱ ԴԱ
82ա ԴՐԵԼ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ, Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՁԻՆ ԻՄՈՅ || ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ԱՄԵՆԵՑՆ ԱՐԵԱՆ ՄԵՐՁԱՒՈՐԱՑ. ԵՒ ՈՐՔ ՅԱՏ ՄԵՐ ԺԱՌԱՆԳԵՆ՝ ՅԻՇՄԱՆ ԱՐԱՍՑԵՆ ԶՄԵԶ ԱՐԺԱՆԻ ԱՌԱՋԻ ԱՆԱԲԻՒՆ ՊԱՏՍՊԱԳԻՆ, ԵՒ ՈՐՔ ՅԻՇԵՔՑ՝ ՅԻՇԵԱԼ ԼԻՉԻՔ ՈՒՀԱՍՍԱԱՐԱԿ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ Ք֊ԲԻՍՏՈՍԻ, ՈՐ Է ԱՒՐՀՆԱԼ ՅԱ[ՒԻՏԱՆԱՆ, ԱՄԷՆ]։

219.

ԼՈՒԾՄՈՒՆԻ ՍՈՒՐԲ ԴՐՈՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐՏԱՆՁՈՒԹԻՒՆ

Երևան 750

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Այա՞ս

233բ ՁԱՒԻՐՈՂՆ ԱՅՍՄ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՆԻՑՆ՝ ԶԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԵՒ ԴՈՒՂՂ ՀԱՒԱՏԱՑՑԱԼՆ ՀԱՄԱԳՈՅ ՍՈՒՐԲ ԼՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ՝ ՁՊԱՐՈՆ ԿՈԱՏ[ԱՑ]ՑՑ՝ ՈՐԴՒՔ ԹՈՐՈՍ ՊԼՒՄՃԾԽՈՒՆ*** ՀԱՆԴՈՒՑԼՈՑՆ Ի Ք֊ԲԻՍՏՈՍ ԵՒ ՁԾՆԱՒՂՆ ԻՒՐ ՅԻՇԵ՛ՔՈՒՔ Ի Ք֊ԲԻՍՏՈՍ, ՈՐ ՊԱՒԼԻՆԱԿՆ ՇՆՈՐՀԱՑԱ, ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ՊԱՒ՝ ԶԱՆԱՐԺԱՆ ԾՈՒԱՅԱ ԱՍՏՈՒԱԾՈՅ ՁՍԱՐԳԻՍ, ԵՒ Ղ[ՀԱՆԴՈՒ]ՑՆԱԼ ԾՆԱՒՂՆ ՄԵՐ՝ ՁՍՏԵՓԱՆՈՍ ԵՒ ԴՀՈՒՔԱՅ, ԵՒ ԶԱՅԼ ԱՂԴԱՅԻՆՆ ՄԵՐ, ԵՒ ՈՐ ՅԻ[ՇԷՔՔ] Ք֊ԲԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՁՆԶՔ ՅԻՇԷ ՅԻՒՐ ՄԻՒՍԱՆԴԱՄ ԴԱԼ[ՈՒՍՏՆ], ԱՄԷՆ։

* Աշխատությունն այսպիսով, թարգմանվել է 1321 թվին և արտագրվել է երկու տարի թարգմանությունից հետո 1323 թ.։ Հիշատակարանում 1323-ի փոխարեն կարդում ենք 1325, որովհետև թարգմանիչը Ք֊բիստոսի թվականն օգտագործել է ըստ հռոմեական տոմարի։ Ջարրհանալյանը կրկնակի սխալ է դործում, երբ թարգմանության թվականը համարում է 1325-ը։

** Տիրատուր բարունու հիշատակարանը դրված պետք է լինի 1323 թվից ոչ շատ ուշ։

*** Հավանաբար Ջոֆրեկլայի տեր Թորոս Պողոսիմոան է (Proximus— «համարակալ և ոստիկան եղբ և մոխ»), որը հիշատակվում է որպես մանուկից 1307 թվին Սսում և 1317 թ. Աստանայում հրավիրված ժողովների Ալիշանը (Սիսուան 368, 486) հիշատակում է Պոստանդ անունով մեկին, որը 1321-ին Այա՞ց բաժտան գլխաւորն էր։ Նույնացնելով Թորոսի որդի Պոստանդին բաժան պլխավոր ոսյն Պոստանդի հետ, հիշատակարանը տեղադրում ենք 1321-ի թվաշարքում։

220.

ՅԱՂԱԴԱ ԵՒԹՆ ՀՈՐՀՐԴՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՅՐԱ ԹՈՎՄԱՑԻ

Երեան 360

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Գլաձոր

յոյս Յիշելոյ և աստուած ողորմոյ արժանի առնէք զյոքներանեալ, սրտագոն և հնգահոգի վարդապետն Սարգիս, ընդ նմին և զծնօղսն իւր և զամենայն արեան մերձաւորսն, որ եռափափագ սրտիւ ետ ղրկել զդիւրքս իմաստասիրաց, և սա խոհայ և բաղձայ ի տուէ և ի դիշերի արնաստից և մակայուքեան և իմաստասիրաց արանց։ Ընդ նոսին և զեղկելի և զտառապեալ հոգի Թորոս, որ զդիւրս գրեցի, և զծնաւղսն իմ, և զնարազատ եղբարսն իմ յիշելոյ արժանի արարէք, ո՛վ սուրբ ընդհելոցդ, յարտասուաքօր և ի մաքրափայլ աղաւքս ձեր, առաջի գինչոյն Քրիստոսի աստուծոյ մերոյ, աղաչեմ, և խոնարհութեանս անմեղազիր լերուք։

Գրեցաւ գիրքս ի վանս Գլաձոր, մօտ ի մեծ վարժապետն Եսայի, ընդ հովանեաւ սուրբ ուխտիս Ստեփաննոսի։*

* Այս հիշատակարանը գրված է աչքատեսյան խորդմանիչ հովհ. Ծորժորեցու հիշատակարանից անմիջապես հետո։ Տարեթիվը չի նշանակված, սակայն ակնարկ է գրված լինի խորդմանության՝ 1321 թվից ոչ շատ հետո։

ՉՀԱ 1322

221.

Ա Ի Ե Տ Ա Բ Ա Ն

երեան 7450

Գրիչ՝ Յակոբ

վայր՝ Կապան, Վահրաւայ գիւղ

ա

... Արդ, ազաչեմ զսրբասէր ընթերցողդ, որք կարդայք կամ աւրինակէք զաստուածային քնարս՝ զսուրբ զաւետարանս, զպատուական և զսրբասէր քահանա զՏիրացուն՝ զստացող և զկնդրող աստուածային սուրբ կտակիս յիշեցէք ի սուրբ և ի մաքուր յաղաւթս ձեր, և զծնողն իւր՝ զհայր իւր զՅովաննէս և զմայր իւր | | |, և զիե-

331 ա նակիցն | | | աւտուտ, և զդեսա[բոզ]բոջ զնորածին մանուկն իւր՝ զսիրական որդին՝ զԱնդեաս: Եւ զերկոքին զնդրաքն իւր՝ զՇահինշահն և զԿանձշահն, և զամենայն ազգատոհմն իւր՝ զհնդանիս և զհանդուցեալս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս և ի սուրբ յաղաւթս ձեր և աստուած-սղոցմի արձակեցէք ի վերայ նոցա, և աստուած զձեզ յիշէ, ամէն:

Արդ, կրկին յիշման արժանի արարէք զնուիրեալ սարկաւագն, որ զքուղթս կտկտայ և աւգնական եղեւ:

Յիշեցէք ի սուրբ [ազօխ] և զբարեպաշտ կին ոմն զԱլիճար:

Արդ, ես յետինս ի կարդաւորաց և առաջինս մեղաւորաց, անպիտանս և պիտանեաց և ան[ար]հնաս գրչաւորաց, զմեզամաւորքդ զրիչս՝ սուտանուն կրաւնաւորս, հլի և մայրաքաղաքէն Իմոի Խլաթա և ևի պատահմամբ յերկիրն Գողթան: Եւ քահանայս այս սրբատնեալ և աստուածապատիւ, որ կոչի Տիրացուն, հլեալ խնդիր աստուածային տառիս, և ևին առ մեզ և երեք զմեզ յերկիրս իւր, յերկիրս Կապաճուց, և մեծ յուսով և ջերմեռանդ փափաքանաւ եաս զբել զսուրբ զա-

331 բ ւետարանս ի վայելումն անձին և յիշատակ հոգւոյ իւրոյ, ‖ և ծնաւղաց իւրոց, և ամենայն մերձաւորաց: Եւ արդ, ես՝ ամենամեղ զրիչս Յակոբ, զրեցի զսս ի վայելուչ և ի զեղեցիկ ձորս, ի գետւղս երկայնաձիգ, որ կոչի Վահրաւայ, ընդ հովանեաւ սրբոյ Գրիգորի Լուսաւորչիս, ի յարեւելեան սահմանեն տէր Որպէլին, ի գանուքեան երիտասարդին, որ կոչի Բռւսաիտ, ի թվ. ՉՀԱ. (1322):

Արդ, ազաչեմք զամենեսեան զերաշխատաւորքն, որ կամակից և աւգնական են լեալ ի սուրբ յաւետարանս, յիշեցէք ի Քրիստոս՝ զԲրաքշահն, և զխալաշ[ա՛հն], և զՇահինշահն, և զՍուլ[լ]տանշահն, և զԱիմեոն երէց, որ զընտիր և զզեղեցիկ աւրինակն շնորհեաց՝ զսուրբ զաւետարանս:

ՀՄանաեսեան, և զսրբիս իւր զՄխիթար, և զՍիս պապն. և զՄուրն, և զԹագվորն, և զՀայրապետն, զՄեղրեցի Մաղիկ երէց, և զպարոն

Գրիգորը, և զԹորոս զերձիկն, յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր, աղաչեմք։

բ

ԶՏիրացուն քահանայ՝ ստացող սուրբ տառիս, յիշեցէք ի Քրիստոս, և զեղբայր իւր՝ զՍոսրով. և զԻւանե, և զՍաքուս, և զիմոհեցևալսն ի Քրիստոս՝ զորդին նորա զՅովաննես, և զեղբայրն իւր զԽաչատուր, և զՋոպաննը, և զորդիքն՝ զԽաչատուրն և զՍտեփաննոս յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ։

222.

ՇԱՐԱԿԱՆ

Երևան 8438

Գրիչ՝ Յոհաննես
վայր՝ Մաշկևոր անապատ

316ա ... Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութեանս Հայոց յիսնէն հայրոյր և իսնթանասունն և մի ամի (1322), ի թագաւորութեանն Հայոց Լեվոնի՝ որդւոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեանն Հայոց տէառն Կոստանդնէ Լամբրունցոյ, ի հրոչակաւոր անապատս, որ Մաշկևոր կոչի, ընդ հովանեաւ ամենաւբհնեալ սրբուհոյ Աստուածածնին և սրբոյն Յովհաննու Կարապետի և սուրբ Առաքելոցն Քրիստոսի, ձեռամբ յոգնամեղ և անպիտան հողոյս Յոհաննիսի, ի վայելուչս հնդասնակի անձին տէր Պաւղոսի եպիսկոպոսի, սպասաւորի սուրբ Կարապետին, որ ստացաւ զսա ի վայելուչս անձին իւրոյ և յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ յիշեսջիք զստացող տառիս զտէր Պաւղոս եպիսկոպոս։ Ընդ նմին և զիս՝ զանարժանս՝ զղծող տառիս զՅոհ[աննէս], և զծնաւղսն իմ, նաև զպաշտելի եղբայրն իմ՝ զորբասէր քահանայն զՆերսես, յիշեսջիք ի տէր,
316բ որ զաւրինակն շնորհեաց մեզ։ Յիշեսջիք ի տէր զեղբայրն մեր զԳրիգոր՝ զնանդուցեալն ի Քրիստոս. և աստուած յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի. և նմա փառք յաւիտեանս, ամէն։

223.

ՔԱՐՈԶԳԻՐՔ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՑԴԵԿՑԻՈՑ

Երևան 8356

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Կիլիկիա, Կամբրիկ անապատ

130բ Փառք... որ արժանի արար զանարժան ծառայս իւր կատարել զգիր քալուղութեանն սուրբ վարդապետին Վալդանայ, որ ի Մարաթոյ, ի թուականութեանս Հայոց ՉՀԱ. (1322), ի թագաւորութեանս Հայոց Լևոնի և յոյժ մանկագոյն պատանեկի, որոյ սաջէ աստուած չսորհ[էր]ս և իմաստութիւն ի կամս աստուծոյ, զի թեթևացաւ լուծ կամոյն սատանայի, ի մեծաշուք և յերկնահանդէս անապատս, որ կոչի

171ա || Կամրիկ, ընդ հովանեաւ մաւր տեառն և վիմին հաւատոյ և այլ հաւաքեալ սրբոցս, մերձ յանառիկ ղեկաւս Մասլեաւց. և բնակեցաւ սուրբ ուխտիս՝ սրբասնեալ քահանայիցս աղաչեմ խոստովանիլն մեզայ խնդրել՝ Ցռհաննիսի, և Պետրոսի, և մեւս Պետրոսի, Գրիգորի, Ցովաննիսի, Ներսեսի, Առամաւոսի, Պաւղոսի, Սահեփաննոսի, նաև ստացողի տուրբ ղրոցս՝ Ստեփաննոսի մեղապարտի, և բարեսէր քահանայի՝ Ցռհաննիսի, և ողորմելի մաւր իմոյ՝ Ջասղունի, և եղբարց իմոց՝ Թորոսի, և արեամբ նահատակեալ եղբաւրն իմոյ՝ Ներսեսի, և քեռց իմոց՝ Փիլիպպի և Ակացի, և հեղահոդի վեսին իմոյ՝ Ուշնի, և ուսուցչին իմոյ, հոգւով լցեալ ծերունոյ սրբոյ Ցռհաննիսի*, և նախնեաց մերոց, և ամենայն ողղայնոց, զի որ լի սրտիւ և հաստատուն հաւատով խոստովանին խնդրէք, միոյն հարիւրապատիկ և բիւրապատիկ տացէ Քրիստոս յոյսն ամենեցուն, և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս։

224.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թորոս ազգաբ, Ի. էջ 389 (Արդնոյ բարձրահայեաց սբ. Աստուածածնի վանք)

Գրիչ՝ Սիճաս
վայր՝ Ակներ

*... Գրեալ ի հռչակաւոր անապատին, որ կոչի Ակներ, ի բազմավըրդով ժամանակիս, ի հայրապետութեան Կոստանդեայ եւ ի թագաւորութեան Լեւոնի պատանեկի, զոր նշխանեալ... եւ ասպատակ արարեալ ընդ ամենայն երկիրս, եւ պանծալի քաղաքն աւերի առեալ, զծովահայացն ղեզեայն, որ է Այաց, եւ զքրիստոնեայսն զամենեսեան...։ Թիւ ՉՀԱ. (1322), ձեռամբ եռաքշուառ զրոզիս Սիճաոայ, որոյ խորտակեալ է հոգւոյ ոսկերքս։**

225

ՎԱՅՔ ՈՂՔՈՑ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐԱՇԱՑԻՈՑ

Երևան 108

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Երուսաղեմ

ա

273բ ...Որպէս և հոգևոր քահանայս Ցակոբոս***, որ եաս պայս նուաւք հոգևշան և պատուղ բարեաց ի հոգոյն սրբոյ ազդեալ ի լնդուս սուրբ վարդապետաց՝ քաղսւածոյ առաւաւծաշունչ ղրոց, յաղագս աւղղի որ-
276ա դոց մարգկան զծա(զրել ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց)*** || և ամե-

---

* 62բ էջի հիշատակագրության համաձայն գրչի ուսուցիչ Ցոհաննէսը Սիսեացի էր։

** Հիշատակարանը համառոտված է հրատարակիչ Գ. Սրվանձտյանի կողմից։

*** 113բ էջի հիշատակագրության մեջ սաստոցողը կոչվում է «Ցակոբոս երէց Արևելցի»։

*** Փակագծի մեջ առնվածից միայն մի քանի տառերի հետքեր, որոնց միջոցով, այնուամենայնիվ, հնարավոր է լինում վերականգնել տողն առանց կասկածի։

նայն ղարմից և հբախտաւսյաց, և որք ողորմութիւն ունին ի սմա յիշել առաջի աստուծոյ։

Դրեցաւ սա ի թուին Հայոց ՉՀԱ.(1322), ի սուրբ և ի հռչակաւոր քաղաքս Երուսաղէմ, ի հանգստարանիս Հայոց, առ դրանս սուրբ Ցակոբա և տիեզերալոյս առաքելոյս՝ եղբաւրն Ցովհաննու աւետարանչի։ Արդ, ես՝ թափուրս ի գործոց բարեաց և լցեալ ամենայն յանցանաւք, ղերեսս ի մայրն եղեալ, աղերսահայցմամբ մաղթանաւք խնդրեմ յամենեցունց, դի ոք և իցէ հանդիպեսցէ սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ, սրտի մտաւք և կարեկցաբար, իբրև եղբաւր սիրելոյ, աղաւթից և յիշմամբ արժանի արասջիք զՑակոբոս քահանայ և գծնաւդո
2։6բ իւր, ընդ նմին և ինձ՝ եղկելոյս՝ մեղաւոր գրչիս | | | [Թորոսի],* դի սովոր է աստուած ի ձեռս այլոց այլում ողորմել, դի և որ կամակից լինի այսմ բանի, կամեսցի Քրիստոս և իւր հոգին դասել ընդ երամս արդարոց։ Ցիշեսջիք գհոգեւոր մայրն իմ զ | | | [որ սպտ]նաւորէր ի կերակուրս մեր...։

Գաղմող՝ Մաքեոս

բ

Ո՜հ, գմեղաւք դատապարտեալս զկազմող սորայ՝ զՄաքեոս զեղկելի և զմեղաւոր հոգս, յիշեց[էք, և] գծնողն իմ, և աստուած [զձեզ յիշէ և] ողորմեսցի, ամէն։

226.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 732 (տես նաև 1401 թ.)

Ներբողեան առ ստացողն գրոյս՝
պարսն Սողոմոն, ի Մկրտիչ գրչէ

ա

382ա Հաւրն երկնաւորի անսկզբնական,
Ձև անթերի և աննմանի,
Պատկեր յիւրակ արքայական,
Լցեալ շնորհաւքն պետական,
Եւ միածնին, որ է հաւր բան,
Մշակ արի և բղձական,
Հոգւոյն սրբոյ ճշմարտական,
Համբար շնորհաց ևս դանագան՝
Պարոն Սողոմոն՝ տիպ տենչական,
Հանգոյն տպին արարչական,
Ժիր ծառայ տեառն և քաջալան,

* Թերթի ներքին մասը պատռված է, իսկ պահպանված մասը՝ ծալոված ու մաշված, ուստի չենք արտագրում 276ա-ի վերջից և 276բ-ի սկզբից մի քանի տողեր, որոնց մոտավոր իմաստը հնարավոր է վերականգնել, բայց որոնք ոչինչ նոր չեն ավելացնում եղածի վրա։

Գործես յայդի աեառն անխափան,
Եւ անհանդիստ դաւրն ի լման
Հասնիս ի ժամն մնոատան,
Ո՛, պարծանապ պարսն և պատուական,
Եւ պլուխ եղբարդ քո բանական,
Ինքն, որ զաղանեացն է նախածան,
Ըկքեզ ընդրեաց ի մէջ մարդկան,
Ւայդ կամք սրտիս իմ բաղձական
383ա Զիս յորդորեաց ու արար հա ‖ ւան
Գրել բանիւ ձեզ նախեբգան
Վաելչալի ներբողական,
Ցաուկ ղէպ ձեզ, առանձնական,
Հրաւիրելոյդ յորգեղրութեան,
Զոր կոչեցաք իսկ նախնական
Փառացն հաւր հաճայական,
Հողևոր պարոն և սքբազան,
Եռաս հոգովն գՔ ական,
Բաղում որդիս քեզ մխբան
Ածես ի փառան հայրական,
Այն քեզ լինի բանից պայման,
Սկիզբն աղաւթից ընդունական,
Որ:ւ աւրինի աստուածն բան,
Ջեզ աա դպարդևան անմահական
Երբորդութեանն յանգիման։

... Արդ, եղև աւարդ գրոյս ի թվ. ՉՀԱ. (1322), ի յոնդրոյ պատուական պարոնին Սողոմոնի, որք աւդիք ի սմանէ մեղայ Քողութին հայցևցէք յաստուածոյ Սողոմոնի և ծնողաց նորա, ամէն։

բ

342ա Աղաչեմք յիշել զտատացաւղ սորա զՍողոմոն։

Զնուասա Մկրտիչ աղաչեմ յիշել, ով ընթեռնաւղ, և խոշորութեան ղրոցս ոչ մեղաղիր լինել, դի կար մեր այս էր։ Այլ որչափ պակասութիւն ունի դիրս ի տեսոյ գևղեցկութեան, այնքան առաւելութիւն ունի բանիցդ ստուդութիւնն, դի յոյժ հաստատած է ի բազում վարդապետաց...։

Նուիրատու՝ Թադէոս

գ

456ա Ընկալ ի նուասա ևպիսկոպոսէ ի Թադէոսէ, ով աստուածասէր որդեակ Սողոմոն, դիտքը | | | մի և ճաշակեա մեծամեծ և քաղցրահամ և անմահական պտուղք ի սմանէ, որովք յագիս ի կեանսն յաւիտենից շնորհօքն Քրիստոսի, դիս յիշեա յաղօթս։

227

ՃՄՈՒՆՏԻՐ

Նբեան 7441

Դրիչ՝ Աբրահամ

ա

1ր Տաւնաւղ աստուածահրաշ սուրբ յայտնութեանս, որք հանդիպիք լսողութեան սուրբ ճառիս, յիշեսջիք զարժանաւոր քահանայն զՅովաոապ, և զՍարգիս քահանայ, և զԻմէոն կրաւնաւոր, և սպասաւոր Աստուածածնին, և զՅովհաննես, և զն[ո]ցեցեալսն ի Քրիստոս՝ զհայր և զմայր, նաև զաղկաղկ բազմավէր զրիչս [Աբրահամ քահանայ], որ չեմ արժանի լսել զործոց, այլ լսել ողորմելոյ, և Քրիստոսի վարք։

բ

113ր Զսրբտդան քահանայն զՅովաոապ, և զպարկեշտ ամուսինն իւր, և զընաբեալ որդեակք նոցա՝ զՍարգիս քահանայ, և զՍիմէոն տաճարապետն, և զՅովաննես բարձ(՞)մանուկն, և զհամայն ազգատոհմս նոցա յիշեսջիք ի տէր, աղաչեմ։*

գ

439ր Թիւ զլքիս** է հայոց թիւէն ՉՀՎ. (1322), ի թագաւորութեան Լեւոնի և ի կաթողիկոսութեան Կոստանդեայ։ Ես Գրիգոր երէց*** ձեռամբ իմով գտա ու գրեցի, դուք ասացէք աստուած ողորմի, ամէն։****

* Համառման բովանդակութեամբ պահպանվել են բաղմաթիվ հիշատակարանները։

** Բնագրում՝ ՀՔՐՔԻՍ։

*** Բնագրում՝ ԷՐԷՃԱ։

**** Գրիգոր Երեցի ժամանակ գոյություն ունեցող հիշատակարանը, ուր կար նաև ձեռագրի գրչության ժամանակի մասին ավյալ, այժմ բացակայում է։

228.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6289

Սաադող՝ Եսայի Նչեցի
վայր՝ Գլաձոր

ա

Ըստ ընթացից հոլովման լուսապատառն արաւսակի, որ ժողովէ բարդէ զժամանակ բոլոր եղականաց դսյից, շնչականաց և անշնչից, ՉՀՌ. յաւիտականս առւմարի (1323), յաշխարհակալութիւն մեծ ինքնակալ խանին Պուռաիտ կոչեցեալ, ի թագաւորութեանն Հայոց Ղևոնի՝
283ր *նստեալ ի գահն Կիլիկեցոց, և տանն Վրաց ‖ և Մեծաց Հայոց թագաւոր Գուրգի, և յաւուրս տէրութեան մեծ իշխանաց իշխանին տանս Սիւնեաց Բուրթելի՝ ամենաբարեպաշտի և քաջի և միշտ յաղթողի, Աղդ, յայսմ ժամանակի ևս՝ նուաստ Եսայի կրսեր բանասիրաց և յետին վարժապետաց, ցանկացող եղէ աստուածաբան և աւետարեր աւետարանական տառից, ետու դրել զսա ի լրումն փափազանաց իմոց, և ընձաեցի զսա | | |* քաւութեան իմոյ մեղուցեալ անձինս և յիշատակ բարեաց վարդապետին իմոյ Ներսիսի՝ մեծ և քաջ հոռեաորի և առաւածախաւս վարժապետի, և որք ըստ մարմնոյ ծնան զմեզ և անուցին, և այլ ամենայն երախտաւորաց, մանաւանդ աշակերտեալ մանկանցո՝ զոր ծնաք բանին երկամբք, որ զեղերին ի կրթութիւն տեսական և գործական իմաստից և ամենայն աստուածաշունչ աստուածից, բոլոր կենցաղական հոգոց բարեաւ ծնեալ ասացեալք: Իայց տեղի*
284ա *դրութեան սորա եղև ի գաւառիս ‖ Սիւնեաց, ի նեղ և յանձուկ աւթեվանիս: Իսկ յիշխանութիւն և ի տէրութիւն վերոյգրեալ մեծ իշխանաց իշխանին և յաղթող սպայապետին Բուլթելիւ, և երկու արեգակնանման, գեղեցկագեղ, հարազատ զաւակացն իւրոց Պեշխենայ և Իւանեի, նաև ամենայն գովութեամբ բարգաւաճեալ ամենաւրհնեալ ամուսնոյ իւրո Վախախին, որք են յարանց և ի կանանց ազգ ընտրեալ և գովեալ, լի հաւատովք և կատարեալք ամենայն գործովք առաքինութեան, ի ձեռն որոց յոլով շինութիւն և խաղաղութիւն գործեցաւ մեզ և ամենայն եկեղեցեաց Քրիստոսի, ըստ որում հայցեմք ի ստեղծողէն բնաւից՝ բարձր և հաստատուն առնել զաթոռ իշխանութեան սոցա, իբրև զաւուրս երկնից և վերա երկրի, դի կացցեն ծաստցեն ընդ արևու յառաջ քան զլուսին յազգէ մինչև յազգ, զարմաւք և զաւակաւք իւրեանց. որք ի հասարտկախնամ բարեաց սոցա ընդ*

* *Սաացող եկեղեցու կամ վանքի անունը քերված է։*

ամենեսեան և մեք մեր աշակերտաւք բաղում և անթիւ դուխս բարեաց դասաք ի սոցանէ, որ զաւտարութիւնս մեր ժողովեցին, և ընկալան զմեզ ոչ իբրև դուտար, այլ իբրև յինքեանց հարազատ ‖ ծնեալ 281բ մանկունս, զիով և սիրով զմեր ստահակութիւնս ընկալան։ Ըստ որում արքունն ակն ամենահայեաց ի նոսա հայեացի, և վարձահատոյցն Քրիստոս հատուցէ նոցա և զաւակաց իւրեանց կրկին կենաւք և երկու աշխարհաւք զամենայն փառս և զմեծութիւն, այլ և զերկարութիւն կենաց, ասանց ցաւոց և տրտմութեան տացէ նոցա տէր։

Դարձեալ յեռեալ հիւսեցի ընդ յիշատակեալս ամենայն բարի յիշման արժանաւորն, արդիական վերատեսուչ տյոմ նահանդի, որ է աղն սորին* ըստ մարմնոյ, վարժն յիմաստս և վստմն ի գիտունս աէր Յովհաննէս մականուն Աւրպել, մեծապատուելի և այցելու Սիւնեաց երկոտասան դաւտղանաց՝ մանաւանդ իմաստութեամբ և ուղղափառութեամբ՝ ամենայն տշխարհի, որ է մեր սիրելի որդի ըստ յիրկազարծ եղիանց քանին ծնընդեան։ Այլ և զնորին արեանառու մեծաւոր և անունդ, ամենամաքուր աէր Ստեփաննոս մականուն Տարսայիճ, որ է և նա մեր որդի ի բանէ ծնեալ, մանուկ տիաք առեալ դաշխիճան արհեպիսկոպոսութեան, զոր աէր աստուած կատարեսցէ 283ա զոստ երկար ամանակս ի գլուխս եկեղեցւոյ իւրոյ, ‖ յորոց և մեք բաղում զուխս և խնամս տեսաք և վայելեցաք ի սոցանէ, ըստ որում եղիցին սոքա ըստ աւետարանիս և յանմոռաց յիշատակն Քրիստոսի արձանտրեալք։

Ձեռ ամենեցուն և գիս՝ զամենամեղ անձն եսայի, յիշեսջիք ծնօղաւք և վարդապետաւք յոդորմութիւնն աստուծոյ, և զուք յիշեալ լինիջիք ի Քրիստոսէ յայժմուս և յապագային և յանսպառ յաւիտենին, զամէնն և զեղիցին ասասցեն հրեշտակք և սուրբք ամենայն։

Ծաղկող՝ Թորոս Տարօնացի

բ

283ա Ես և զանարժան Թորոս ի Տարօնոյ, ‖ քաղաքէ Մշոյ. և զծնօղսն իւր յիշեցէք ի տէր Յիսուս Քրիստոս, որ բաղում աշխատեցաւ ի խոբան, ի ծաղիկ, ի գլխագիր։

գ

225բ Զմեծ բարեւնապատն Եսայիաս և զծնաւղսն իւր յիշեցէք ի տէր Յիսուս Քրիստոս և զծրող Թորոս և զծնաւղսն իմ։

դ

90ա ԶՏիրացու աշակերտ և սպասաւոր բանի յիշեցէք ամենայն սրտի մտաւք, հանդերձ ծնողաւք, որ զմազապախս գնեաց, և զկարմիր ոսկին չատ բաժին ընձաեաց։**

* Իմա՝ Բուրթելի։

** Ձեռագրում կան նաև հետագա ստացողների և կազմող Իրբլանոսի (1622 թ.) սակավաբեմ հիշատակարանները։

229.

ՃԱՇՈՑ

Երևան 4514

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Ապահուենեաց գաւառ, Գումբայք գիւղ

ա

403ա ...Աւարտեցաւ քրիստոսահիմն և առաքելահաւս, մարգարէաշէն հողիարուխ այս տուս ի թուականութիւն հայկազեան սեռիս տումարի ՋՀԲ. (1323), ի հայրա[պետութիւն] Հայոց տեառն Կոստանդնեա, ի թագ[աւորութիւն] Հայոց առաւտածասէր և բարեպաշտին Լեւոնի, յաշխարհակալութիւն մեծ զանին Պուսայիտին, ի հոյակապ և ի նշանաւոր գաւառիս Ապահուենեաց, որ կոչի Մանծկերտ, ի գեաւղս, որ անուամբ կոչի Գումբայք, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնին և սրբոյն Դանիէլի. ի գաւառիս Ապահուենեաց, որ ունի յինքեան զհրոչակաւսը ուխտն՝ զդիր և զչիրիմ գերեզմանի սրբոյն Դանիէլի ազեալ և հիմնացեալ, ձեռամբ յողնամեղի և մեղսամակարթ, փցուն և անարհեստ գրչի՝ Ներսեսի, մեզապարտ և ազկելի ղբպրի, ի խնդրոյ... ընորհալից քահանայի Տէրտերի, յիշատակ իւր և ծնողաց իւրոց։

403բ ...Արդ, աղաչեմ զամենեսին, որք հանդիպիք սմա յիշեսջիք ի Քրիստոս զՏէրտեր քահանայ, և զհայր իւր զՄարտիրոս, և զմայր իւր զՏիկնաց, և զամուսին իւր զԽսւաճղն, և զեղբայրսն իւր՝ զԽաչատուրն և զամուսին իւր զՏիրոցն, զԱստուածատուրն և զամուսին իւր զԹումայն, զՔրիստոսատուրն և զամուսին իւր զԹուխիկն, զԽաչհաճեսն և զամուսին իւր զՇնորհվորն, զՎարդանն և զամուսին իւր զԱրգուն, և զծնողսն իւրեանց, և զբոլոսնունդ որդիսն իւրեանց՝ զԱկոբն, զԱւիքշաւեն, զԱմիրպեկն, զՄալտիրոսն, զԽոջատղեղն, զՍիրմայն, և զՈւսլուն, ընդ նոսին և զեզկելի գրիչ և զծնողսն իմ և զնդրարսն...։

Հետ ստացող՝ Տուրիկ

բ

161բ Ո՛վ հսկողք արքունեաւն և մարմնաւոր հրեշտակք, սուրբ և անբիծ քահանայք և ռամիկք և մանկունք հաւր մերոյ Սիոնի, որք արբէք յաստուածածարուխ անձրևէն և լիանայք ի հայրական գանձարանէս, յիշեսջիք ի սուրբ և ի մաքուր յաղաւթս ձեր զհաւատարիմ ծառայն աստուծոյ զՏուրիկ...։

Արդ, պարտ է զայսպիսի այրս յիշման արժանի առնել, զի ձեռն սուրբ և անմահ պատարագին հոսցէ հատուցումն իւր յինքեան և ի ծնաւղսն իւր՝ յԱռաքել, և ի Մարգսարիտ, և յայլ ամենայն կենդանիսն և ի ննջեցեալսն, ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ողորմեսցի Քրիստոս ատաւուծ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

230.

ՀՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երեան 1986

Աւազող՝ Պաւղոս

ա

188բ *Ի թուակ[անին] Հայոց ՁՀԲ. (1323), ես՝ նուաստս Պաւղոս աբեղայս, սր ցանկալի տեսանել և լսել աստուածային յայտնութիւնս Յոհաննու, և աստուած լցույց դիւաբանս իմ ի ձեռաց եղբարց մերոյ Գրիգորի քահանայիւ եւ ես եառ. դրել զսայ յարղար վաստակոց*
189ա *իմոց ի յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց՝ Յոհաննեսի քահանայի, ‖ և մաւր մերոյ, հանգուցելոց ի Քրիստոս, և եղբարց իմոց՝ Վահան քահանայի և Սարգսի, և Գրիգորի մեղսւցեալ քահանայի՝ գրողի սորայ։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որ կարդայք և լսէք կամ աւրինակէք զսայ մեղաց մերոց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ, և ծնաւղաց և եղբարց մերոց, և աստուած զձեր մեղքն ջնջէ, և զլսողացն, և որ ամէն ասէ...

Հեղինակ ճառի՝ Ստեփաննոս Վահկայցի
վայր՝ Կիլիկիա

բ

Ո՛վ, պատուական հովիւ քաջ բանաւոր հաւտի [սուրբ Գրիգոր
90բ *Լուսաւորիչ]... ‖ ...պահնա զամենեսեան և զմեզ զանպիտան ծառայքս, մինչ ի վերջին աւր կատարման մերոյ և ի յարութեան համաւրէն մանկանց եկեղեցոյ սրբոյ քո և ընդառաջ սիրով, և դրկեա համբուրիւ. և վարատեա զմէգ մեղաց տեսակաց, զոր բանսարկուին պատրանաւք մեղուցեալ եմք, և քաւեա աստուածայնապէս, և ասա առաջի տեառն և իրկչին բոլորեցուն՝ ահաւասիկ ես և մանկունք իմ զորսետուր ինձ՝ զարեամբ զնեալքս քո. ընդ սրս և զԱշիճ՝ ծնողաւք իւրովք և զարմիւք, և զծառայս մեղապարտ՝ զՍտեփաննս Վահկայցի, որ ձեռամբ իմով շարեցի զճառս ներբողական սուրբ Լուսաւորչիդ...։*

գ

38ա *Զպարոն Աշիճ որդի պարոն Թաւտաւրեի, որ ստացաւ զաստուածային զգանձս զայս ի վայելուչն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողաց նորին, և ամենայն զարմից նոցա, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի, և դուք՝ մանկունք սուրբ եկեղեցոյ, յիշեցէք ի բարին, ի Քրիստոս աստուած մեր։*

---

* Բ. և Գ. հիշատակարանները գրված պետք է լինեն 1323-ից առաջ, և, հավանորեն, ընդօրինակված են այստեղ նախաղապատիր ձեռագրից։

231.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վիեն. 342 Տաշ. Ծուց. էջ 885 (առն նահ 1550 թ.)

Դրիչ՝ Վարդան
վայր՝ Ակներ

318թ Փառք... որում վտիտդմամբ ոլորել եւ ջնարհն հաւատով սրբանուեղ եւ կուսակրաւն քահանայ Յոհաննէս ցանկայր սատնալ...։ Իսկ մեր տեսեալ զրարի յաժարութիւն կամայ նորին, կամեցաք և մեք վանն սիրոյն Քրիստոսի տալ նմա զրով զսուրբ աւետարանս...։

Արդ, ապաչեմ յընթերցողքս սուրբ սուխս անմեղադիր լինել խոշորութեան եւ ոգալանայց զրիս, վասն զի կար մեր այսչափ էր, այլ եւ ողորմութիւն հայցեցէք յողորմածէն աստուծոյ, որք պատահէք և կամ աւրինակէք, նախ Յոհ[աննէս] քահ[անայինն] եւ ծնողաց նորին, եւ ինձ մեղաւորիս Վարդանա, նուաստ եւ արուսպ վարդապետի, որ զդիւրս զրեցի, եւ ծնողաց մերոց...։

Զրեցաւ սուրբ աւետարանս ի լաւ եւ ի յընտիր աւրինակէ, ի զերահռչակ անապատս, որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ աստուածընկալ Նշանացն եւ այլ բազմահոյլ նշխարաց սրբոց, եւ երջանիկ մխիթէն եղբայրութեանս, որք սիրով ընկալան մեզ եւ ուժանդակ եղեն զործատնութեանս, որոց վարձատրեսցէ նոցա աէր, եւս առաւել հեզահոդի եւ յոյժ բարեմիտ ճգնաստեաց կրաւնաւորն Հայրապետ մանկանն ձեռնաւոր եղեւ զրութեան սորա, որոյ Քրիստոս իւր լիցի ձեռնաւոր։

Ո՛վ սուրբ եղբարք, յիշեսջիք եւ զհարազատ եղբայրն իմ զԲարսեղ եւ զրարի զրացինն մեր զՄխիթար, եւ աստուած զձեզ յիւր բարին յիշէ։

Եղեւ զրութիւն սորա ի թուին Հայոց ՉՀԲ. (1323)։ Ցայսմ ամի էջ խանն խազան բազում եւ անթիւ զաւրաւք յաշխար[հ]ն, որ կոչի Շամբ, զի սոքաւք հասուսցէ աստուած զչարիս Իսմայելացոցն ի զլուխ իւրեանց առնուլ զվրէժ սրբութեան իւրոյ։

Ո՛վ եղբայր եւ սիրելի մեր Յոհաննէս, ընկալ սիրով զաշխատութիւնս մեր եւ աղաչեմս արա վասն մեր, եւ անմեղադիր լեր խոշորութեան եւ ոգալանայց, զի ծածկադէտն եւ շնորհաբաշխն դիտէ, որ այս էր կարողութիւն մեր...։

232.

ԱԳԱԹԱՆԴՂԵԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Երևան 1481 (տես նաև 1323 և 1660 թ.թ.)

Գրիչ՝ Դաւիթ Բջնեցի*
վայր՝ Ակներ

ա

Յայս ի | ¦ | թար եղեալ ի բազմաշահ մեծադին գանձուցս սուրբ եղբարց մեծ և հռչակաւոր անապատիս Ակներ կոչեցեալ, ղի ունելով այլ ղիրս գժուարընթեռնելի, ղի ոչ ախորժէին ընթեռնուլ ի ժամասեղ կամ ի սեղանն համարձակ, իսկ կամակից եղեալ առաջնորդք ուխտիս փոխեալ զսայ յայլ ղիր, որով և իմ յանձն առեալ
366բ դրամատուր ի պատուականն հարց և եղբարցս գրել զսա ¦¦ |[ինամ]ա, ք ամենա[կարողին] կատարե[ցաւ | ¦ | | կարողութեան | | |** ոչ եթէ ղիտէի զարուեստս ղբչութեանն յանդգնեցաք ի գործս, այլ ըստ յուսոյ մեր, որ ի սուրբ յուխտս և ըստ հրամանի պատուականն եղբարցս, որպէս և գրեալ է թէ կեանք է լսողութիւն։

Եւ արդ, աղաչեմ և մաղթեմ զձեզ, ով ամենամաքուր և հոգիապայծառ սուրբ դասք քահանայից և միայնակեցաց, որք հանդիպիլիք այսմ տառի կամ ընթերցմամբ կամ զտզտիար առնելով, յիշել առ Քրիստոս զպատուական հայրն՝ զԳրիգոր մաքրակրօն քահանայ, և զէջր Բարսեղ, և զՎարդան վարդապետ՝ սքանչելի վարուք փայլեալ ի մէջ եկեղեցոյ, և զփակակալ Սիմեոն, և զՀայրապետ՝ ամենայնի սրբասէր և աստուածահաճոյ, նաև զնոզևոր եղբայրս իմ՝ զՆերսէս և Յոհաննէս՝ յոյժ պիտանի և աւկոտկար ի գործս բարիս, և զայլ ամենայն եղբայրսութիւնս, որ ոչ էր կար մի ըստ միոջէ անուանել։ Աղաչեմ յիշել և զԹօրոս միակեայ և զԳրիգոր, որ աշխատեցան ի կոկ թղթիս, նաև զտնտես, և զմարմպան, և զնուացպան, և զփոմպան, և զամենայն աշխատողս սո Քրիստոս յիշել, զսուրբ ծերունիք՝ զՍարգիս և զԿարապետն ¦ ¦ ¦,***

Յուցից և ձեզ, սիրելիք, փոքր ի շատէ զթշուառութիւն իմս տկարութեանս, որ տրուպ և անարդ և անպիտան յամենայն գործս, զի չեմ ստացեալ գործ բարի, այլ զամենայնն խոտոր և չար և անշահ։

Է և ինձ պատմել, զի գոլով իմ ի նահանգէն Այրևելից, յԱյրարատեաց գաւառէն, ի ղեակէն Բջնոյ, և իմ խոցեալ չար վիրաւք հոգւով զանազան մեղաւք, ապա այնուհետև, որպէս զչար վիրաւք հարեալ մարդ ի խնդիր ելեալ բժշկի, և ոչ ուրեք գտեալ, այլ միայն ղէմ եղեալ ղնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և ի Հռոմ՝ ի պատկերն

---

* Գրչութեան թվականն անհայտ է, բայց պիտք է գրված լինի մերձավորապես 1323 թ., որովհետև այդ թվականին Ակներում գրված Ավետարանում (տես նախորդ հիշատակարանը), հիշատակված են վանքի նուէն՝ Բարսեղ, Հայրապետ և Վարդան միաբաններըւ

** 366բ էջի ձախ կողմի վերին չորս տողից պահպանվել է միայն կես մասը, պակասը հնարավորին չափ լրացրեցինք ըստ բովանդակութեանւ

*** Այս տողը կիսով չափ պասսված է, մի բառ ջնում է անընթեռնելիւ

անձհոգործ և դուրբ Պետրոս և Պաւղոս, նաև յԱստուածածնին, որ
ի ծաղս ալեզերաց, և ի սուրբ տոաքելոն Ցանկոբ։ Վանդի ոչ եմք
վասն պանծանոյ գրեմ զայս, այլ վասն մեծ մեղադ իմոյ, որ ան-
հուն է և անչափ է։ Իսկ զարձեալ զհամբար բարեաց և սուրբ կրօնք
և կանոնք այսմ մենաստանիս Աղներոյ լու[ս]ոյ և յոյժ ցանկալի. և
եկեալ իմ յուսով մեծաւ և աշխատութեամբ յոյժ և սուայ[տուքնամբ]։
Տեսեալ զիս աւասր և պանդուխտ ողևոյէ եկրարցս, և զթացին յիս
իրրե ծնաւղ, և ցուցին ինձ սէր իրրև զաէր Ցիսուս, զոր հաստատեցէ
Ք[րիստոս ասդա...

367բ ...Եւ ևս՝ ոչ ունելով զձև. սայս և դկալոլ, զի ամենակեան իրրև
զնրեշտակս առաուծոյ ալթոն և զուարթուն ի յաւրհնարանութիւնս
աստուծոյ ի տուէ և ի դիշերի անդրադ և անդանդիտ. և զայս տես-
անելով իմ, վայ և հղուկ ասելով անձին իմոյ, զի թափուր գոլով
ի կրաւնից ոգոյ և յառաքինութենէ։

Բամեալ զիս այնուհետև դմաու ածի զղործս զայս, թեպես լի-
նիմ կցորդ բարեաց սոցա, ուրեմն և [յ]որդորելով զիս և խրախուսե-
լով սուրբ հարցդ, որ ի վերոյ գրեցաք՝ քանզի և մեր սէրն անար-
գամիծար է, ընդունի զաշխատութիւնս իմ սրպէս զխերևեշ այրոյն և
զմաղ այծեաց ի սպաս տաճարին։ Եւ զարձեալ մխորամած զիմաւք և
սրտաուչ հառաչմամբ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, անմեղադիր լինել
սխալանացս և սիրով ուղղել, զի այս էր կարողութիւն իմ։ Այլ ի
սոցդ աւրինակէ գրեցի և բոտ չափու զրադարձ | | |

բ

15բ Ո՛վ եղբարք, խիլի թէ պակաս է յայս գէմս. և ի յաւրինակէս է,
որ չդնես մեզ, վասն աստուածոյ։

գ

47ա Տէր Ցիսուս սղորմեացի Վահրամ մխայնակեցի, որ զիմ չուխայն
կոխել երեաւ։

դ

48ա Ո՛վ, համադումար դասք սրբազանից, յորժամ ընթեռնոյք կամ
լսէք, յիշեցէք ի Ք[րիստոս ղ[յ]սրղորիչ գործոյս, զՀայրապետն և
զՍիմեոն փակակալ, և զանմաքուր գծողս թէ արժանի առնէք յիշո-
տակի վասն սիրոյն Ք[րիստոսի, զի և դուք յիշեսջիք յաստուածոյ մերմէ։

ե

247ա Զամենամեղս և զբազմաչարս, զանարժանս յոքունց՝ զդրիչս
Դաւիթ, յիշել աղաչեմ առաջի սուրբ տառիս աստուածապատում, և
զծնողսն մեր, և զամենայն հզրայրութիւնս, նաև զներսես զոզևոր
հզրայր, և որք յիշէք յիշե[ա]լ լինիք ի Ք[րիստոս], ամէն։

զ

325ա Ողորմութեամբն աստուծոյ սկսայ ի յամսեանն դեկտեմբերը
ԺԵ. (15), և շնորհաւք սուրբ հոգոյն կատարեցի ի մայիս Լ. (30)։ Որ
հասուցեր զմեզ ի դիծ վերջի այսմ նամակի՝ սուրբ երրորդութիւն,
քեզ փառք յերկնաւորաց և յերկրաւորացս և ի համայն եղելոցս։

233.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 1858

Գրիչ՝ Յուսէփ
վայր՝ Նախիջևան

315բ ... *Մնծաւ յուսով և եռափափաք սենչմամբ առի զսայ ի լոյս հողոյ և ի թեթաւութիւն մարմնոյ, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ Ղարաճային և Ցոռոռը տիկնայ, և ինձ՝ Կարապ[ետ] քահանայի, որ սատցայ զսայ մեծ յուսով ի հալալ արդեանց, որոց վարձս հատուսցէ աէր աստուած ամենիցուն հարիւրապատիկ, և ինձ եղկելի գրչի Յուսէփ քահանայի | | |**

*Արդ, վերատարա եղև սայ ի թսւաբերութեանս Հայոց ՉԻԳ.(1324), ընդ հովանեաւ սուրբ զինաւորի Սարգսի, ի մայրայքաղաքիս Նախիջևան: Եւ որ հայիք ի սայ թողութիւն մեզաց խնդրեցէք աշխատաւորաց և երախտաւորաց այսմ հոգևոր տառիս: Ցիշեսցիք և զԱւաք տիկին, և զԱմիրշահն, և զԹագւորաշահն**, և զաւակս նորա ի սուրբ յաղաւթս ձեր, որ երախտիք հոգևոր ունիցին ի վերայ մեր, աստուած ողորմի ասայէք սոցա, ամէն:*

234.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 1553 (տես նաև 1426 թ.)

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Իտալիա, Պաւլաւնիա քաղաք

346ր ... *Զայս դանձ մեծութեան անվաճառ և անվատնելի ի դանձս երանէ մուր մեր կաթողիկէի՝ ջանաց, հնարեցաւ, կամեցաւ, ստացաւ, կատեւաց, բարդեաց, դիզեաց, յաւել մանաւանդ ի դանձանակ իւրոյ հոլւոյն սենեկի հայրն դավիթ վանաց վանական և կոյս կրաւնաւոր քահանայն Ճաճարիաս, ի միշտ և յանվճար յիշատակ, ի վայելումն կենաց իւրոց և ի փրկութիւն հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և առհասարակ իւրոցն ամենեցունց:*

Արդ, որ ոք պատահիք այսմ ստուածաքնար մատենի սուրբ
347ա *ընթերցուածոցս, յիշեցէք ի լարին Քրիստոս զհայրն Զա[ք]արիաս և*

---

* Ծռեալ տող պատռված է և անընթեռնելի:
** Հապավված է այսպես՝ զթ[ագւոր]շահն:

զծնողն իւր, զի մեծ սիրով՝ մանուանդ և արդեամբ և ծախիւք ջանայ և ատեայ դայ։ Այլ և զրստ հոգւոյ հայրն իւր՝ զտուրը եպիսկոպոս զտէր Թումաս, որ և նա կատարեալ զտա քահանայ և կարգեալ հայր վանայս։ Որոյ տէր Յիսուս Ք՛րիստոս յոյժ ամենեցուն տայէ առհասարակ նոցա ամենեցունց դանստոտ բարեացն պարգևան, նոյն և յիշողացդ ընդ յիշեալեցդն զանվախճան փառացն խոստմունս յատուած և ի տէր մեր Յիսուս Ք՛րիստոս, որ և աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ, զրեցաւ սա յաշխարհս Իտալացւոց, ի յանուանեալ քաղաքս Պսուլտուիայ ըստ իւրեանց լեզուի, ի թվ. համարոյ մերս տումարի ՉՀԳ. (1324), յամենամեղ և բազմայանցան զրչէ ի Սեբաստոսի, զոր և խնդրեմ յամենեցուն և ինձ Քողութիւն, զի ըստ իմում կարի և ջանուց զայսքան կարացի...։

Իսկ վասն աւրինակացս գժուարաղրութեան և եղանակացս և ժամուցս գժնդակութեան անկարիք է ասելն, զի բազմաց է յայտ ոչ այս և էր։ Բայց և արդ զոհութիւն Ք՛րիստոսի յոտոյն իմոյ և առաւածոյ, այժմ և յաւիտենից յաւիտեանս, ամէն։

235.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

երևան 8187

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Ակներ

... Շնորհիւ շնորհատու սուրբ հոգւոյ սկսայ և աղօթիւքեամբ
344ա նորին կատարեցայ աւետարս ||նս ի հոյակապ և յակնառուր մենաբանիս, որ մակապրեալ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս, և կենսակիրը սուրբ նշանացս, և մատանոյ տէրունականաց, և նշխարաց սրբոց, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և ի թագաւորութեանն Լևոնի՝ ազգին, զորս պահեսցէ տէր աստուած խաղաղութեամբ ամենայն սրբոյ աղաւթիւք։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ, յիշեսջիք զամենայն աղզայինս մեր՝ զկենդանիս և զննջեցեալսն, յիշեսջիք և զքաւերսրդին մեր զներսես քահանայ, նայ և զՓարոս քահանայ և զՅովհաննես, որ ի յուղղելն աշխատեցան։

344բ Յիշեսջիք, աղաչեմ, և զքշտաւո զրողս Վարդան, ի յոյժ երկայն աւուրս զրեցի զսա աստուածանաւք ցաւոց, որ խորտակեալ է հոգւոյս ոսկերք վասն զևս և անառակ դնացից։

Գրեցաւ ի թվ. ՉՀԳ. (1324), ի տեառն Ք՛րիստոսի աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Որ զմեզ յիշէ և ինքն յիշեսցի ի տեառնէ։

236.

ԺՈՂՈՎԱԾՈ

Օրօֆորդ Ms. Arm. E. 2. *Տետրայր վրդ. 17. քղք. 119, էջ 311*

Դրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սկևռա

130ա Փառք... որպէս և ապա ղևրեջանիկս յիմաստ Սբրահամ ծերուն, ճշմարտին աստուծոյ կրաւնաւոր... պայս ընտրեալ սնփական ժառանգութիւն և ստացաւ... վարք աստուածընկալ աւետարանչին Յոհաննու ոքանչելի պատմութիւնս և սոսկալի տեսլեանս յայտնարանութիւն... յարդար վաստակոց իւրոց...։

Գրեցաւ ՁՀԴ. (1324), յանապատս Սկևռա, ընդ հովանեաւ սուրբ և փրկագործ Նըշանիս և սուրբ Աստուածածնիս, ի փառս միածնի...։

Յիշեցէք ի Քրիստոս զմեզ ուղեցեալ գրոզս զՍտեփաննոս։

237.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 4174

ա

338բ Յամի հեթենարեւ ըերորդի հաւթանասներորդի երրորդի (1324), ի թաղաւորութեան Լևոնի | | |*

բ

92բ Քրիստոս աստուած, զո սուրբ աւետարանչացս բարեխաւսութիւամբ և ամենայն սրբոց զոց ողորմեա Վարդաճեա քահանայի և ծնողաց իւրոց, ոտացողի սուրբ աւետարանիս, և ամենայն հաւատացելոց զոց, և բազմամեղ ղրչիս, և որք զոմէնն ասեն, ամէն։

238.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 2837

Դրիչ՝ Վարդան

261բ ... Բայց զբեցաւ լուսազարդեալ աւետարանս ի լուսալրական ժամանակի, ի թուականութեան հայկազնեան Ալեքսիական տոմարիս ՁՀԴ. (1324), ձեռամբ անպէտ և բազմամեղ Վարդան գրչի։

* Թվականս հիշատակարանից պահպանվել է միայն այս հատվածը, ձեռագիրը վեր-ջից քիչ է։

239.

ԴԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԴԱՐԷՑԻՑ ԵՒ ՅՈՐԱՑ

Թորոս Աղբաք, Բ. էջ 330 332 (Խարբերդ)

Գրիչ՝ Սարգիս

վայր՝ Քաջբերունեաց գաւառ, ի մեծաստանս Խառաբատա

... Արդ, ի կարճեալ աւուրս եւ յերեկոյացեալ ժամանակիս, այսինքն ի վերջին զարուս, յորժամ յաղագս ծովացեալ մեղաց աշխարհի իբր երեքալեանն իմն մրրկեալ տաապանեալ ծփէր ի բռնութենէ սրոյն հետողաց, զոր ի յոլով աւուրց սաստկացեալ տիրէր համայն ամենայն երկրի, սկսեալ յելից արեւու՝ ի ծովէն Կասպից, շրջապատեալ զհիւսիսիս, մինչեւ զայ հասանէ ի ծոցն Պոնտոսի, եւ դարձեալ զմիակողմանեան հարաւայնոյ պարս առեալ պարունակեալ զաշխարհն Բաբելացոց և գհամայն Ասորիս եւ գԿիլիկիա, մինչեւ ցնոյն ծոցն Պոնտացւոց աշխարհին, զրոլոր միջերկրացս, զաղգս եւ գլեզուս բաղումս ընդ ինքեամբ կալեալ ունէր լուծ ծառայութեան, ըստ նախատեսութեան մեծ հայրապետին Հայոց Ներսիսի. եւ պակասեալ նուաղեալ զոյր հայրապետութիւն սեռի սուրբ Լուսաւորչին Գրիգորի եւ թագաւորութիւնն աղին Արշակունեաց՝ ըստ տեսլեան սուրբ Սահակայ, եւ սակս անդարձութեան մերոյ ոչ զարձաւ բարկութիւն նորա, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է ի պատժել եւ ի սրատուհասել. եւ մեր ոչ զղջացեալ, մինչեւ ծիւրեալ եւ ծնկեալ մաշեցան ամենայն կնանք մեր, ի մահ եւ ի դժսեռ մերձեցան անձինք մեր, եւ յերկիր մածան մէջք մեր. քանդի... եւս քան զեւս ընդ նեղութեամբ եւ ընդ հալածանաւք արկին զոգզոգ քրիստոնէիս, զորոյ զաղէտս տարակուսանաց ո՞ք կարասցէ պատմել եւ կամ ընդ դրով արկանել

Արդ, յայսմ դառն եւ դժնեայ ժամանակի, յորում խաւար անլոյս և մէգ ամխիթար տարածեալ մածեալ ունէր զամենայն երեսս երկրի, եւ՝ առեալեալ եւ նկուղեալ անձն Սարգիս կրտնուսուր... ցանկացեալ այսմ աստուածաճաճ... մատնի այսուածազան եւ աստուածարեալ որոյ մարդարէիցն երկաւասանիս եւ. Դանիէլի նախատեսութեանցն, ընդ նմին Քղթոյն Ցորայ եւ համբերողի մնծի, զորս շարայարեալ կազմեալ եմ զսոսա ի մի տիպ. Գրեցաւ սա ի թվ[կանութեան] Հայկ[ազեան] տումարի ՁՀԴ. (1325), ի գաւառիս Քաջբերունեաց, ի մենաստանս Խառաբատ[տ]ա, ի վանս որ կոչի Սուրբ Աստուածածնին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որ է աւրհնեալ յաւիտեանս Յառաջնորդութեան տեղւոյս Վազար առն՝ հեղի եւ խաղաղարարի, համառեալ... նախանձն Վազարու, զի կամեցող հղեւ մեզ եւ սիրով ընդ

կալաւ զմեզ ընդ իւր, ընգոտնգի եւ զինքն աստուած...։ Ծիշեցէք գՍարկաւագ կր[աւնաւոր] եւ զ Ցովսեփ կր[աւնաւոր], որ զաւրինակն շնորհեցին մեզ, յիշեսջիք զվարդապետն իմ զՅովսեփ...։

Վա՜յ ինձ հազար անգամ։

240.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ, ԱՐԱՐԵԱԼ ԲԱՐՍՂԻ ՎԱՐԴԱԳԵՏԻ

Եբեան 1314

Հեղինակ՝ Բարսեղ
վայր՝ Մաշկուոր վանք

308ա Շնորհաւքն և սղորմութեամբն աստուծոյ հաւր՝ սկզբնաբարի դրոյս և ձեռնտուութեամբ և աւգնական լինելոյն Քրիստոսի Ծիսուսի որդւոյն աստուծոյ ի գլուխ հանեալ կատարեցի ես՝ լոկ անուն վարդապետս Բարսեղ, զմեկնութիւն սրբոյ աւետարանիս, որ ըստ Մարկոսի, որչափ աջողեաց և զաւրացոյց տալով մեզ միտս և բանս հոգին սուրբ աստուածն ճշմարիտ, վասն որոյ աղաչեմ զգիտաւղող բանի և դպրութերցաւղաց սորին տառի յիշել զմեզ ի բարի՝ ծնաւղաւք, զարմիւք և երախտաւորաւքն մերովք, զի մեծ տաժանմամբ և յոլով աշխատութեամբ եղև զբաւ սորա, և որ դրէք զսակաւ բանս և յիշէք ի բարին, դրեսջիք և դուք ի դիրն կենաց և յիշեալ լինիք ի միշտ բարւոյն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Արդ, եղև վճար այսր մեկնութեան ի թագաւորութեանն Լևոնի՝ որդւոյ Աւշնի, նորընծայ և դեռաբոյս մանկանն՝ յոյժ երկեղածի և աստուածասիրի, զորոյ զթագաւորութիւնն յաղագս տղայութեան իւրոյ խնամեն և հոգան երեք մեծագոյն և փառաւոր իշխանքն, երկու եղբարքն հարազատ՝ պարաւն Աւշին և պարոն Կոստանդին, որք աստիճանաւ աւագ պարոն և գունդուստապլ կոչին, և երբորգն՝ պարոն Հեթում Նդրցի, որ խառնեալ և միացեալ է ընդ նոսա, որպէս միտք ընդ հոգի և ընդ մարմին, ուղղելով զբոլոր տունն արքունի ի բարին, որպէս բարի միտքն զհոգին և զմարմինն. զորս տացէ Քրիստոս աստուած՝ զթագաւորն և զսոքա՝ տոհմաւք և զարմիւք իւրեանց, այսմ
308բ աշխարհի և եկ ‖ եղեցւոյ իւրոյ սրբոյ միշտ և հանապազ. և ընդերկարեսցէ զտէրութիւն սոցա, անցանելով ի հաւրէ յորդի մինչև ի գալուստն իւր միւսանգամ։

Եւ գրեցաւ սա ի վանս, որ կոչի Մաշկուոր, ի հայրապետութեան տեառն Կոստանդեա կաթողիկոսի Դրազարկեցւոյ, որ բազում աշխատութեամբ ջանայ և հնարի զխաղաղութիւն այսմ աշխարհի։ Որ և մինչև ի Մոր առ Սուլտանն անձամբ անձին գնացեալ, ոչինչ համարելով դաշխատութիւն, թէպէտ ծեր և տկար էր մարմնով, և զխստութիւն և զգառնութիւն նորա ի կակղութիւն և ի քաղցրութիւն յեղաշրջեալ փոխեաց, զորս տացէ զսա Քրիստոս ընդ երկայն աւուրս եկեղեցւոյ իւրում սրբոյ։ Եւ էր ի ժամանակիս յայսմիկ վերակացու

և առաջնորդ սուրբ ուխտիս տէր Հայրապետ եպիսկոպոս, այր հեզ և բարեբարոյ, որ բազում խնամաւք խնամէր զմեզ ամենայն մարմնաւոր պիտոյիւք, և իրրև զհայր հոգևորապէս ի վիշտս և ի տրտմութիւնս սփոփէր և մխիթարէր. վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոյ յիշեցէք զսա ի բարին և խնդրեցէք յաստուածոյ զի ըստ տրոցն և բարի կամացն իւրոց, զոր առ մեզ ցուցեալ է, տացէ սմա ասա հարիւրապատիկ, և անդ՝ իւր [և] ծնողացն իւրոց կեանսն յաւիտենից պարգևեսցէ։ Եւ էր թիւ հայոց ՁՀԴ. (1325)։

241.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ՊԱԽՂՈՍԻ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 1414

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ակներ

ա

... Գրեցաւ ի թուին հայոց ՁՀԴ. (1325), ի թագաւորութեանն բարեպաշտ և քրիստոսասպասակ թագաւորին Լևոնի որդոյ Աւշնի և ի հայրապետութեան տեառն Կոստանդիա, ի վանս գերահռչակ, որ կոչի
368ա Ակներ*, ընդ || հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Յակովբայ, և այլ բազմահոյլ վկայիցն, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս հաւր Ստեփաննոսի, և փակակալի սուրբ տաճարիս Ստեփաննոսի:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւդտիք ի հոգևոր բանիցս կամ ընդաւրինակէք կամ ժառանգէք, յիշեսջիք յարժանաւոր յաղաւթս ձեր զընակիչք սուրբ ուխտիս՝ զծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան, և զԱեփաննոս հայրն, և զՍտեփաննոս եկեղեցպանն, և զայլ համաւրէն մխաբան եղբայրութիւնս, որոց ողորմեսցի Քրիստոս աստուած ի զաւրստեանն իւրում, ամէն։

Աղաչեմ յիշել և զրազմամեղ և զանարժան գրիչս՝ զստացաւղ գրոցս՝ զԳրիգոր զանպիտան քահանայ, և զհպյրն իմ՝ զՎահրամ, և զմայրն իմ, և զչորեսին եղբարսն իմ՝ զՍտեփաննոս քահանայ, և զԱնդրեաս կբաւնաւոր, և զՍարգիսն և զԹորոսն՝ զառաջնեալսն առ Քրիս-
368բ տոս, որոց ողոր || մեսցի տէր Յիսուս։ Յիշեսջիք և զքոյսն իմ որդեաք իւրովք, և զհոգևոր հայրն իմ զԿոստանտին՝ զաւակաւք իւրովք։ Աղաչեմ յիշել ի տէր և զքեռորդին իմ զԿոստանտին քահանայ, և զհայրն իւր զՍմբատն երէց, և զմայրն իւր, և զքորսն, և զամուսինն իւր, և զաստուածատուր որդին իւր՝ զՊետրոսն, և զղստեբսն, զորս պահնսցէ տէր Յիսուս ի չարէն աղաւթիւք ձերովք, ամէն։

Յիշեսջիք ի տէր և զեղբաւրորդիսն իմ և զամենայն ազգայինս իմ՝ զհեռաւորս և զմերձաւորս։ Արդ, յիշողացդ և յիշելեացս և ամե-

* 237բ էջի հիշատակարանի մեջ գրութեան վայրը նշված է ընդհանուր անապատ ձևով։

նայն աշխատողաց ի սա, թէ շատ և եթէ սակաւ, ողորմեացի Քրիստոս աստուած և իւր սուրբ առաքելոցն մասնակից և պսակակից արասցէ. նաև ամենայն հաւատացելոց ողորմեացի Քրիստոս աստուած՝ կենդանեաց և մեռելոց, ամէն։ Ողորմեացի Քրիստոս աստուած կուսակրաւն քահանայիցն Գրիգորիոն և Սերովբիոն, որք յղորդելն աշխատեցան, և այնոցիկ, որ զաւրինակն էին գրել։

Բ

369ա Ողորմեացի Քրիստոս Բարսեղ քահանային և ծնաւղաց իւրոց, որ ղղիրքս կաղմեաց, և Կարապետին, սր ծաղկեաց. և խոշորութեան գրոյս և սղալանաց՝ որ ի սմա, անմեղադիր լերուք։*

242.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ԿՈՂՈՄԱՑԻՈՑ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, Տ.-Ավետիսյան ծուցակ, էջ 1273—4

Դրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ակներ

169ա ... Շնորհօք և ողորմութեամբ բարերարին աստուծոյ աւարտեցաւ մեկնութիւն Թղթոյն Կողոսացւոց, զոր արարեալ է զերանելի սուրբ հայրապետն Ցոհան Ոսկիբերան տիեզերաց վարդապետն, ի վարժուհի մանկանց եկեղեցւոյ և ի փառս աստուծոյ. ի Թուին Հայոց ՉՀԴ. (1325), ի թագաւորութեան բարեպաշտին Լևոնի, և ի հայրապետութեան տեառն Կոստանդ[ին], ի վանս գերահռչակ, որ կոչի Առաքելոցն և այլ բազմահոյլ վկայիցն։

Աղդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք յայսմ գրոց կամ ընդօրինակէք, յիշեսջիք յաղօթս ձեր սուրբ ուխտիս Ակներոյ զծերունի սուրբ վարդապետն՝ զհէր Վարդան, և զՍտեփաննոս հայրն, և զամենայն եղբայրութիւնս, որոց ողորմեացի տէրն Քրիստոս Յերեսս անկեալ աղաչեմ, զի և զմեզ անտես չառնիցէք, այլ և զմեզ յիշեսջիք յաղօթս ձեր, զանպիտանս Գրիգոր դրիչ, և զհայրն իմ զՎահրամ, և զմայրն իմ, և զչորեսին եղբարսն իմ՝ զՍտեփաննոս քահանայն, և զԱղդրէաս կրօնաւոր, և զՍարգիսն, և զԹորոսն՝ զյաւուրսն առ Քրիստոս. յիշեսջիք և զքեռին իմ՝ զՍիմեոն երէց, և զորդին իւր՝ զԿոստանդ քահանայն, և զամենայն զաղգայինս իմ, և աստուած, որ առատն է ի տուրս պարգևաց, ձեզ յիշողացդ և մեզ յիշելեացս առհասարակ ողորմեացի։ Դարձեալ յիշեցէք և զվերջին ստացօղ սորին՝ զյետնեալ ծառայս ձեր և ողբոց բազմաց սփոփակայեալս զՅովսեփ անարդիւն քահանայն և զծնողսն իմ, ընդ որս և դուք յիշեալ լինջիք ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

* Այս հիշատակագրությունը Գրիգոր գրչինը չէ։

243.

ՃԱՌԸՆՏԻՐ

Վհնետ. 238 (1708) ծուց. հա. Բ. էջ 571—572

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Ակներ

31ա ...Ի թուին Հայոց ՁՀԴ. (1325), ի թագաւորութեան բարեպաշտին Լեւոնի, ե ի հայրապետութեան տեառն Կոստանդեա, ի վանս զերահոչակ, որ կոչի Առաքելոցն եւ այլ բազմահոյլ վկայիցն։ Արդ, ապաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ գրոյ կամ ընգաւրինակէք, յիշեսջիք յաղաւթս ձեր սուրբ ուխտիս Ակներոյ զծերունի սուրբ վարդապետն՝ զտէր Վարդան, և զՍտեփաննոս հայրն, ե զամենայն եղբայրութիւնս, որոց ոզորմեացի տէր Ջրիստոս։ Երեսս անկեալ աղաչեմ զի եւ զմեզ անտես չառնիցէք, այլ եւ զմեզ յիշեցէք յաղաւթս ձեր՝ զանպիտանս Գրիգոր գրիչ, եւ զհայրն իմ զՎահրամ, եւ զմայրն իմ, զչորեսին եղբայրս իմ՝ զՍտեփաննոս քահանայ, եւ զԱնդրէաս կրաւնաւորն, եւ զՍարգիսն, եւ զԹորոսն՝ զյաւաջելեալսն առ Ջրիստոս։ Յիշեսջիք եւ զքեռին իմ զՍիմէոն երէց, եւ զորդին իւր զԿոստանդ քահանայ, և զամենայն ազգայինս իմ։

244.

ՆԵՐԲՈՂ ԿԱՄ ՃԱՌ ԵԱՉԻ

Հալէզ, Ս. Մնկ. 141, Սիւրմ. ծուց. Ա. 246

Գրիչ՝ Գրիգոր Ակներցի

ա

181. ՋԳրիգոր Ակներցիս աղաչեմ յիշել յաղաւթս ձեր, հվ տեսողք և վայելողք սմին։

բ

302 Ջգծաւղ և զստացաւդ քաղցրաճաշակ ճառիցս՝ զԳրիգոր Ակներցի աղաչեմ յիշել ի տէր, և տէր յիշողացդ և յիշելոցգ ողորմեացի և որ զամէնն ասէ, և Ջրիստոսի փառք յաւիտեանս։*

245.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5708 (տես նաև՝ 1423 և 1502 ԹԹ.)

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Սկևոայ

267ա ... Երանելի քահանայս Սարգիս, բոցով սիրոյն աստուծոյ կենդանախաթրուկեալ, ստացաւ զսուրբ աւետարանս անձին ի վայելս և

* Հիշատակարանն անթվական է։ Տեղագրում ենք 1325-ի թվաշարքում, որովհետև նույն այդ թվին Գրիգոր Ակներցի գրչին ընդօրինակել է երեք այլ ձեռագրեր (տես №№ 241, 242 և 243 հիշատակարանները)։

յապագայն՝ յիշատակ իւր և որոց ծնան զնա։ Արդ, որք հանդիպիք և աւգտիք, յիշեցէք ի բարին Ք[րիստոս] զՍարգիս և զծնաւղսն իւր՝ զՄարտիրոս և զՄամա տիկին, որ բարւոք ծնան և ուղղութեամբ սնուցին և աստուածոյ աւանդեցին, նաև զհամաւրէն զարմն՝ զկենդանի և զմեռեալ։ Եւ որք յիշէք սրտի մտաւք, յիշեսցէ և զձեզ որդին աստուծոյ յաւրն, զոր ոչ փոխանակէ գիշեր, և տացէ ձեզ, որ յիշէք և որոց յիշեն, զանբաւ բարիսն։

Աղաչեմ և ես, մեղաւորս Ցովաննէս շարահիւսաւզս, արժանի զանարժանս առնել և յիշել յաղաւթս, զի մեծ յուսով ակն ունիմ խնամոցն աստուծոյ, և այն՝ աղաւթիցն ձեր մխիթարգևոյն...։

Դրեցաւ ՁՀԴ. (1325), ի թագ[աւորութեան] Լեւոնի և կաթող[իկոսութեան] Կոստ[անդնի], յանապատն Սկևռայ, ի լաւ աւբինակէ, տէրամբ Յիսուսիւ, որում փառք յաւիտեանս, ամէն։

բ

130ա Ստացաւղի սորա՝ Սարգիս քահանայի, և ծնողաց, և զարմից յիշատակ բարի, և յաստուածոյ Թողութիւն յանցանաց ի տկար մարմնի։ Եւ որք յետոյ ժառանգէք զսա, անուն կամ գիր մի քերէք զառաջնոցն՝ ու զձերն ի տեղն գրէք, ապա յոյլ տեղի գրեցէք և զձերն անուն։ Եւ թէ ոք՝ մեծ կամ փոքր, քերէ յառաջնոյն անունն՝ ջնջի ի կենաց գրոյն, մի՛, մի՛ գործէք, զի չար է և մեծ չար։ Աղաչեմ և ես կոյր շարագրաւղս Ցոհաննէս, զի և մեզ բարի յիշուսցի։ ՁՀԴ. (1325)։

Ծաղկող՝ Սարգիս

գ

9ա Որ վ եղբարք, որք ընթեռնոյք զսուրբ աւետարանս, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զՍարգիս սուտանուն քահանայ և զծնողսն իմ, զի յոյժ աշխատեցայ և ծաղկեցի զսա։ Եւ այլ, յիշեցէք զքրիստոսասէրն տանուտէրն զԼևոն Գորգոնց զաստպաղն, և զծնողսն իւր, և զամուսնի իւր, զի զոյս առաջի խորանս ոսկով ինքն ետ շինել, ի յիշատակութիւն Ցնալոյ իւր և իւրոցն. և որ յիշէ, յիշեալ լիցի ի Ք[րիստոսէ] աստուծոյ մերոյ, ամէն, ամէն։

246.

Մ Ա Ն Ր Ո Ի Մ Ո Ի Ն Ք

Թղթեր 2388 (տես նաև 1440 թ.)

Գրիչ՝ Սիմեոն

վայր՝ Գալու աճապատ

216բ ... Ի թվ. Հայոց ՁՀԴ. (1325), ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի աստուածասիրի և բարեպաշտի, որգւոյ ի Ք[րիստոս] հանգուցեալ թագ[աւորին] Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Կոստ[անդնի] Լամբրո[նացւոյ] գրեցաւ եղանակաւոր տառս մանրուսման, յաստուածա-
217ա բնակ անա || պատս, որ կոչի Գալու, ընդ հովանեաւ սուրբ Աստուա-

ծածնին և այլ որբոցս, ձեռամբ մեղապարտ և անարժան քահանայիս Սիմեոնի, ի ինգրոյ սրբասէր և պատուական սարկաւագի և հոգեոր եղբաւր մերոյ Ցովաննիսի գրակազմի, ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, և ամենայն զարմից։

Աղզ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւրինակելով, յիշեսջիք զտացաւղ սորին զՑովաննես և զծնաւղսն
217բ իւր։ ‖ Ընդ նմին աղաչեմ յիշել և զանարժան հողս զՍիմեոն գրիչ և զծնաւղսն իմ՝ զՑակոբ քահանայ, գորգի Մեծպար[սնի]՝ զհանգուցեալն ի Քրիստոս։ Աղաչեմ յիշել և զհոգևոր որգեակս և զեղբարս իմ ի տէր՝ Զաքլ[ո՞ւն] դպ[իր] և զփոքր Ստեփա[նոս] դպ[իր]. և որ յիշէ յիշեալ լիցի յոդորմութիւնն աստուծոյ, ամէն։

Բայց գրեցաւ սա ի լաւ և ի ստոյգ աւրինակաց երկու[ց]՝ Կաստա[նղևա՞] և Վաւծ.* զոր էր գրեալ Գրիգոր Զորուկ...։

247.

ԿՑՈՐԴՈՑ ԳԻՐՔ

Ալիշան, Սիսուան, էջ 341

Վայր՝ Կիլիկիա

Տէր աստուած իմ Յիսուս Քրիստոս, զո սուրբ ծընընդեամբդ, և սուրբ մկրտութեամբդ, և սուրբ աստուածածնին բարեխաւսութեամբ ողորմեա ստացաւղի սորա պարոն Կոստանդեայ սպարապետի Հայոց, և եղբաւր իւրոյ պարոն Աւշնի, և որդւոյ իւրոյ պարոն Հեթմոյ, զորս պահեսցէ զսուսա Քրիստոս ընդ երկայն աւուրս։ Դարձեալ աղաչեմ, որք հանդիպիք այսմ երդոյս յիշել սրտի մտաւք զերկոսին հարազատսն ի բարին Քրիստոս, ողորմութիւն և թողութիւն գաանել ի Քրիստոսէ ծնաւղաց իւրոց, և եղբաւր իւրոյ Կիաւդնի՝ փոխեցելոյն առ Քրիստոս, որոց ողորմեսցի Քրիստոս աստուած, որ է աւրհնեալ յաւիտեանս, և ինձ՝ եզկելոյս։**

248.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Վիեն. 353. Տաղ. ծուց. էջ 807

Վայր՝ Գլաձո՞ր

ա

68ա : Աղզ, գրեցաւ եւ կատարեցաւ ըստ իմումս կարի, հրամանաւ սուրբ եւ երիցս երանեալ առնն աստուծոյ Եսայիաս րաբունապետի, ի վայելումն անձին իմոյ եւ այլոց, որ զեզեբեալ կան ի զբունս իմաս-

* Թողնում ենք հապավված ձևով։

** Հրատարակված է վիմաքիզ նմանահանութեամբ. «Կցորգոց գիրք գրեալ յամի 1325, վան Կոստանդնի Դունդստապլից» մակագրութեամբ։

ոխց սորտ, իսկ յետ աստեացս՝ ի յիշատակ սորա. յիշել ազաչեմ յաղաւթս եւ հանապազ զերանի ումբ թողութիւնն խնդրեալ։ Արդ, յիշեսջիք ընդ տեառնս իմոյ եւ զիս, զի ողորմեսցի տէր զծոդիս, եւ դուք յիշեալ լիջիք...։

Ի թուի. ՁՀԴ. (1325) դրեցաւ։

Հետ. ստացող՝ Սարգիս

Բ

161բ *Ձ*Սարգիս քահանայն, որ ազատեաց զղիրքս ի ծառայութենէ այլազգեաց եւ ետ Դհարգ վարդապետին, ազաչեմ յիշել յազօթս, եւ աստուած զձեզ յիշէ ամէն։

249.

ՃԱՇՈՑ

Երևան 6235

Գրիչ՝ Խաչատուր

վայր՝ Ջուղայ

160բ ... [Հ]անեալ ի վերջին ըլիծս ճաշոցիս ձեռամբ անարժան քահանայի Խաչատրոյ, ի թվարերութեանն Հայկազեան տումարի ՁՀԴ.*(1325)* դրեցաւ, ի դանուբեանն Պուսաիտին*, որդո Խարբանդին, ի թագաւորութեան Կիլիկեցոց Լեւոնա, և ի հայրապետութեան մերո տէր Կոստընդնա, և յեպիսկոպոսութեան մերո տէր Վարդանայ։

Արդ, եղև աւարտ սուրբ գրոցս ի Ջուղայ, ընդ [հովանեաւ | | | **

250.

ՇԱՐԱԿՆՈՑ

Ալիշան. Սիսուան, էջ 153

Գրիչ՝ Կոստանդին

վայր՝ ի Ձորս Խորին ածապատի, ի վանէս Փերիներ

Ցամի եւթնհարիւր և եւթանասուն և չորսերորդի թուականութեանն Հայոց (1325), ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի՝ որդւոյ Աւշին թագ[աւորի], և ի կաթողիկոսութեանն Կոստանդեայ Լամբրունցւոյ, գրեցաւ երգս այս շարականք ի ձորս Խորին անապատի, ի վանքս Փերիներ, ընդ հովանեաւ սուրբ Սիոնի և սուրբ նշանացս Քրիստոսի, ձեռամբ պիտակ և ձևով տնւամբ քահանայի Կոստ[անդեայ], ի խնդրոյ սրբասէր և աղաւնատիպ ծերունի հաւրն Թուխանի, ի վայելումն դեռաբոյս պատանեկին՝ քեռորդոյ նորին Պաւդոսի։

Արդ, աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի յիշեցէք ի բարին Քրիստոս զվերոյգրեալս այս՝ զծերացեալ կրաւնաւորն Թուխան,

* *Բնագրում «Մուսաիտին»։*

** *Հիշատակարանից պահպանվել է միայն մի կիսատ թերթ, ուստի սկզբից և վերջից այն թերի է։*

և զբարեպաշտուհի քոյրն Թանկ, և զծնողսն իւր զհանգուցեալսն ի Քրիստոս՝ զհայրն իւր Անծրև, և զմայրն իւր, և զամենայն զարմն իւր։ ...Ընդ նմին յիշեցէք զհեզն և զբարեբոյս միւս քեռորդին իւր Կիրակոս, նաև զողորմելի գերիս՝ ծրագրաւղ սմին Կոստ[անդին], և անմեղազիր լերուք, դի կար մեր այսչափ էր. և յընտիր աւրինակէ էր։

251.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս ազբար, Բ, էջ 293 (Երզնկայ սբ. Սարգիս եկեղեցի)

Գրիչ՝ Ներսես

վայր՝ Ի Վանս կոչեցեալ սուրբ Կիրակոսի

... Եղեւ զրաւ գրութեան սորա ի Թուաբերութեան Աբեթեան զրոհի ՉՀԳ. (1325), եւ ի գալստեան կենարարին մերոյ ՌՅԺԶ. (1316), իսկ յելտնելոյն նախնի մարդոյն յանուշակ վայրէն՝ ՅՉԼԸ. (6738)...։

Գրեցաւ տառս աստուածայինս... աւետարանս ի վանս կոչեցեալ սուրբ Կիրակոսի և մաւր նորին Ծուղիդայ, ի հայրապետութեան* տեառն Լեւոնի...։ Ազաչեմ խնամով եւ զգուշութեամբ պահել, եւ զստացողք սորա՝ զՄխիթար քահանայ, եւ զորդի սորին զՍիմէոն քահանայ, եւ զհարազատ եղբարքս՝ զՅովհաննէս եւ զԳրիգորիս, եւ զՏաւնիկն, այլ եւ զդեռաբոզբոջ մանկունս սոցա՝ զԱհարոն զպիր եւ զՄովսէս, եւ զազգայինսն մեր զամենայնսն, որ այժմ կան, եւ զգնացեալսն առ Քրիստոս յիշել...։ Եւ զերջանիկ վարդապետն մեր զԲարոնդ, որ զյիշատակարանս շինեաց... նաեւ զեղկելի ոգիս՝ զնեանեալս զՆերսէս գրագիրս, որ բազում աշխատանաւք եւ ջանիւք գրեցի զսա ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ, որ ի Կիլիկիա յերկիրն, արքայեզրայր անուն կոչեցեալ Յոհաննէս եպիսկոպոս, որ իւրովք ձեռաւքն էր գրեալ լաւ եւ ընտիր աւրինակէ...։

252.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐՈՑ ՓԻԼՈՆԻ ԵՐՐԱՑԵՑՒՈՑ

Երևան 2100

Գրիչ՝ Կարապետ

336ա ... Ցանկ ելեալ կատարեցաւ տառս աստուածային հինգ հատուածովք՝ Երևեցաւն, Նախախնամութեանն, Նահապետացն, Այլաբանութեանն և Հիւսեացն, շարագրեալ ի յեռամեծէն Փիլոնէ։ Ի թվ. ՉՀԴ. (1325) թվականիս գրեցաւ, ձեռամբ մեզացելոյս Կարապետ երիցու, ի խնդիր սրբամաքուր և հոգիացեալ վարդապետին Կիրակոսի։ Երես անգեալ ազաչեմ զձեզ, ով դասք լուսերամից, մանկունք վերին առաքաստի, որք հանդիպիք այսմ տառի, յիշման արէք զմեզ արժանի, թէ տէր Ցիսուս ողորմեսցի Կարապետ գրագրի, ամէն, ամէն և եղիցի։

* Գրչական սխալ է, պետք է լինէր՝ «ի թագաւորութեանն»։

253.

ԱԽՏԱՐԱՆ

Երևան 4122 (տես նաև 1643 թ.)

Գրիչ՝ Յոհաննես

ա

193բ Բարէիրաւսութեամբ սուրբ աւետարանչիս Ղուկասու թողն, անյիշաչար տէր, զյանցանս մեղուցեալ գրչի Յոհաննիսի, և ծնողաց իմոց, և ամենայն հաւատացելոց։ Գրեցաւ. ի թվ. Հայոց ՁՀԴ. (1325), սեպտեմբերի ԺՀ. (18)։

Գրիչ՝ Սերեր

բ

251ա Սուրբ աւետարանիչ Յոհաննէս... ողորմեա ստացողի կենսաբեր աւետարանիս Քաւուն միայնակեցին, և ծնողաց նորա, և Սերեր գրչի, և այնոցիկ, որք մեզաց թողութիւն հայցեն։

254.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7519

Գրիչ՝ Յովաննես
վայր՝ Բզնունեաց գաւառ, գիւղ Աղէք

...Եւ արդ, ես՝ կր[ա]ս[ր]ս յորդիս եկեղեցւոյ և անպիտանս ի քահանայս Յովաննէս, ցանկացող եղէ աստուածախաւս և աւետաբեր ուրբ աւետարանիս, և զտի ստոյգ և ընտիր աւրինակ, զոր գրեալ էր Թորոս փիլիսոփայն ի Դրազարկն և յուղարկեալ հռչակաւոր ութոտին սուրբ առաքելոցն Տարաւնոյ, որ կոչի Ղազարու վանք։ Եւ իմ առեալ գրեցի զսա անարժան ձեռաւք իմովք, ի մեծ Թուիս ի յեղա-
244ա նական շրջադայութեան արևգական ստորիչիւք || երկնաչուճանապարհաւ յերկնից յերկիր հայելով, ըստ արարչութեանցն չափեալ, յԱդամա մինչև ցայսր* ամք 8ՀԾԲ. (6752), իսկ ի հայոց Թուականիս ՉՀՉ. (1327), ի գաւառիս Բզնունեաց, ի գեաւղս, որ առ ափն ծովուս, որ կոչի Աղէք, ընդ հովանեաւ սրբոյ Կարապետիս, ի հայրապետութիւն Կիլիկեցւոց տեառն Յակովբայ, և ի մերոյ հայրապետութեան Աղթամարեցոյ տեառն Զաքարիա, և ի թագաւորութեան Կիլիկեցւոց նահանգին քրիստոսասպասակ և բարեպաշտ Ղևոնի, և ի կայսերական բռնակալութիւն ազգին Նետողաց Պուռայիտ խանին, ի թշուառ և ի չար ժամանակի, յորում է արդարութիւն կոչմն նուաղեալ և անիրաւութիւն յամենայն կողմանց զաւրացեալ։ Եւ կատարեցաւ բանն մարգարէական ի վերայ մեր, որ ասէ, թէ գայ ժամանակ, որ ասիցեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր և բլրոց, թէ՝ ծածկեցէք զմեզ։

Արդ, որք ընթեռնուք զսա կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաք-
244բ բաւիայլ յաղաւթս ձեր զստացող սորա՝ || զՇնոհավոր երէց** և ամենայն արեան մերձաւորսն նորա, զկենդանիս և զյանզուցեալսն առ Քրիստոս։ Ընդ նոցին և զիս՝ զանարհեստ գրիչ զՅովհաննէս քահանայ, և զծնաւղսն մեր...։

Ցիշեսջիք աղաւթիւք զբրբասէր և զհոգելից կրաւնաւորն զԹադէոս, որ զաւրինակն շնորհեաց...։

---

* Բնագրում՝ ցգայրս։

** Ստացողի անունը Հղշնոհվոր երէց գրված է հատուկ այդ նպատակի համար դատարկ թողնված տողի վրա ժէ. դարի ձեռագրով։

255.

ԱԻԵՏԱՐԱՆ

Հալէպ. սբ. Մնկ. եւ մատն. 32 Մխիթ. Ծուց. Ա. 395

Գրիչ՝ Ծոհաննէս
վայր՝ Կիլիկիա

585 ...Գրեցաւ աստուածային և կենսաբեր սուրբ աւետարանս տեառն մերոյ և փրկչին Քրիստոսի ի թուականութեանս Հայոց ՉՀՉ. (1327), ի հայրապետութեան տեառն Յակովբայ, և ի թագաւորութեան Հայոց Լեւոնի Ջորրորդի՝ բարեպաշտի և աստուածասիրի, որդի արքային Հայոց Աւշնի, ձեռամբ հոգնամեղ և անարժան ծառայի աստուծոյ Ծոհաննէսի գրչի, ի յիշատակ հոգւոյ իմոյ, և ծնաւղաց իմոց, և ամենայն զարմից, այլ և ի վայելումն մանկանց եկեղեցւոյ, որդւոյ իմոյ Միքայէլի ընթերցողին։ Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ և լուսաւորիք ընթեցմամբ կամ աւրինակաւ, յիշեսջիք ի Քրիստոս զառաջասացեալս՝ զծոհաննէս գրիչ, և զծերունի հայրն իմ <և> զՊետրոս, և զհարազատ եղբայրն իմ զԹորոս, և զծնաւղսն մեր, զհանգուցեալսն ի Քրիստոս...։

Ցայնմ նշանաւոր ամի եղև գրաւ գրչութեան սորա և կատարումն, որ բարեպաշտ ծերունին և աստուածասէր իշխանն՝ տէրն Հեթում Նդրցի*, ճանապարհորդեալ եղև յաշխարհն եգիպտոսի վասն հանգստեան քրիստոնէից, զոր տէր Յիսուս ողորմեսցի նմա։ Նաև ի յիշատակ հոգւոյ քրիստոսասէր և բարեպաշտուհի աղախնոյն աստուծոյ Ալծի՝ փոխելոյն առ Քրիստոս, որոյ տէր Յիսուս ողորմեսցի նմա և թողցէ զյանցանս իւր։

Ողորմեսցի Քրիստոս աստուած և ծերունի աղախնոյն Թանգերի, որ եւս գրել զսուրբ աւետարանս ի յիշատակ հոգւոյ իւրոյ և հարսինն իւր Ալծի՝ գնացելոյն առ Քրիստոս։ Ողորմեսցի Քրիստոս աստուած... հոգւոյ եղբարցն մեր Կիւրակոսի, որ առիթ և աւժընդակ եղև գրելոյ սուրբ աւետարանիս, և տացէ նմա մասն բարի տէր աստուած մեր։ Եւ դուք մանկունք առաքաստի, որք վայելէք ի սուրբ և կենսաբեր աւետարանս, յիշեսջիք ի Քրիստոս զյառաջասացեալքս ի սմա, զծոհաննէս գրող և կազմող սորին և զծնաւղսն իմ։ Ընդ նմին զատացաւղ գրոյս զծերունին Թանգեր, և զորդի որդւոյն իւրոյ զՍտեփաննոս, և զքոյրն իւր զՄիքայէլաքուն, և զմայրն իւրեանց՝ զփոխեալն առ Քրիստոս՝ զԱլիծ, յորոյ յիշատակ աւետարանս գրեցաւ։ Յիշեսջիք և զծերունին զԱմեն տիկին...։ Յիշեսջիք և զԿիրակոս, և զբարեպաշտուհի ամուսինն իւր զՏալիքթայ, և զորդին իւրեանց զՍտեփաննոս...։

* Տպված է «Նդրեցի»։

256.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երեան 1882 (տես նաև 1372 թ.)

Գրիչ՝ Անդրօնիկոս
վայր՝ Իտալիա, Սալեռն[ո] քաղաք

256բ ...Ի թուիս Հայոց ՉՀՉ. (1327), շնորհաւք ամենասուրբ հոգւոյն յանկ եղեալ աւարտեցաւ աստուածակերտ այս տառ և աստուածազարդ մատեանս հոգեպատում...

259բ Արդ, ես՝ եղկելիս և անուամբ միայն քահանայ Անդրօնիկոս, յոյժ փափաքմամբ ցանկացող [ցոյ]ր աստուածային բանիցս, և գրեցի զսա ի մխիթարութիւն բազմամեղ անձին իմոյ, և ի յիշատակ, ինձ և ծնողաց իմոց։

Արդ, յերես անկեալ աղաչեմ զձեզ, որք աւկտիք ի սմանէ յիշեսջիք զանարժանս զԱնդրօնիկոս, և զծնողսն իմ՝ [զմեծ հայրն իմ զԿոստանդին, և զհայրն իմ՝ զՄ՚իխայլ, և զմայրն իմ զՃուլիցար]*, և զընաւ ազգատոհմ մեր, նաև զբարի ձիւաւորն՝ զմեր Ստեփաննոս, և որ զմեզ յիշէք աստուած ողորմ[հայ]իւ, և դուք ողորմութիւն գտջիք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեան[ս]։

Ճիշտջիք և զպատուելի հայրս մեր զՆերսէս՝ զառաջնորդ սրբոյ անապատիս սուրբ Մկր[տ]չիս Քրիստոսի, որ ի Սալեռն, նաև զհոգևոր եղբայրն մեր՝ ըզՆիկօլայոս, և զծնողսն իւր. և ինքն տէր աստուած, որ առատն է ի պարգևս բարութեան, յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի։

Գրեցաւ սա ի յաշխարհս Ֆռանգաց, ի քաղաքիս, որ կոչի Սալեռն, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս և Մկր[տ]չիս Յովհաննու. և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

257.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Մաքսուդ. ծուց. Ադուլիսի, 16. Աբաբատ, 1911, էջ 469

Գրիչ՝ Աստուածատուր

258բ ...Այլ և գրեցաւ յամի ՉՀՉ.(1327) թուականութեանս Հայոց, ի հայրապետութեանն տեառն Ջաքարիայի, ձեռամբ մեղուցեալ և անարհաս գրչի Աստուածատուր իրիցու, ի խնդրոյ սրբասնունդ և պատուական քահանայիցն՝ Հայրապետի և Կարապետի...:

Ո՛վ սուրբ մանգո՛ւնք եկեղեցոյ, յորժամ հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զվարդապետսն իմ զՊաւղոս և զԱստուածատուր, և զսարկաւագ Կիրակոսն, և զհայրն իմ

* Ուղղագիծ փակագծերում բերված հատվածը լրացնում ենք 264բ էջում եղող հիշատակագրությունից։

զՅովաննէս, և զմայրն իմ զՏիկին մայր, և զքոյր մաւր իմոյ՝ զՏիկներես, և զեղբարսն իմ՝ զՏ[ի]րատուր, զԿարապետ, զՄեծատուր, զՀայրապետ, զՄովսես, և զքոյրն իմ զՈսկի, և զիս՝ զրազմամեղ զԱստուածատուր...:

258.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Բրխա. ՔՆԳ. 13 (Or. 2680), կոնքը. ծուց. ԷՂ 26—21 (տես նաև 1563 Թ.)

Գրիչ՝ Աստուածատուր

256բ ...Աւարտեցաւ... աւետարանս... ի Թուին ՉՀՉ. (1327), ձեռամբ ամենամեղիս Աստուածատրս սուտանուն իրիցուս... յիշեսջիք զմեղաւորս և զվարդապետսն իմ զՊաւղոս քահանայ՝ զփոխեալն ի Քրիստոս, և զԱստուածատուր կրաւնաւոր, և զՍարկաւագ, ընդ նմին՝ զսրբասէրն քահանայ զՍտեփաննոս, որ ուսոյց ինձ զդիրս, ընդ նմին զսրբասնեալ քահանայ զՅոհաննէս, որ ընձեռեաց ինձ ի գործն աստուածոյ, և զծնողսն իմ՝ զՅոհաննէս և զՏիկին մայրն, և զնսաի քահանայ, որ զաւրինակն շնորհեաց:

259.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փլրդ. 6273, էՂ 134 (նւդոկիա, ի Գիզաւու սուրբ Յովհ. Ոսկեբերանի վանք)

Գրիչ՝ Սէք

Շնորհիւ տեառն և ողորմութեամբ անհասին աստուծոյ կատարեցի զսուրբ աւետարանս... Սէք [քահանայ], յիշատակ ծնողաց իմոց՝ Յուսիկ քահանայի և Տիրա տիկնոջ, և տղայիկն իմոյ, որ Յուսիկ անուն նա յորջորջի, ի պայծառութիւն եկեղեցեաց, ի Թուականիս Հայոց ՉՀՉ. (1327), ի նեղ և ի զառն ժամանակի...:

260.

Ո Ս Կ Ե Փ Ո Ր Ի Կ

Վենետ. 248 (13), Մարգս. ծուց. հա. Բ. էՂ 698

Գրիչ՝ Իսրայէլ
վայր՝ մերձ Յուժաճ

ա

64ա Մերձ ի Յուժաճ, ի Հուսայինն ի գեղն պարպեցաւ, ի յուրբաթի օր, ի յօդոստոսի ՃԷ. (7), ի պատիւ սուրբ կուսին ամենօրհնեալ տիրուհոյն:

բ

174ա Զնուաստ գծողս Իսրայէլ, որ ուղիղ սրտիւ ու դաշնակից գոմ այսմ դաւանութեան ուղղափառ, յիշել ի տէր աղաչեմ:

գ

193բ Ի թվ. ՉՀՉ. (1327), ի Փրխատոսէ՝ ՌԳՃԻԷ. (1327). ի Գոմինիկոսէն և ի Ֆրանցիսկոսէ ՃԻԸ. (125) տարի է։

261.

ՄԱՇՏՈՑ ԵԻ ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Երևան 898

Գրիչ՝ Ցռիաձհս
վայր՝ Մելիտինէ*

ա

73բ Ո՛վ պատուական և սրբասնեալ հոգևոր հայր տէր Ստեփաննոս, ընգալ զսակաւ գիրս ի նուաստ Ցռհաձիսէ, և աղաչանաց մի մեղադրել, զի կարս մեր այս չափ է, և աղաչեմ յիշել զմեղաւորս ի ձեր մաքրափայլ աղաւթս։

բ

78բ Որոյ տէր աստուած վայելել տացէ զայս ձեռնադրութեան դիրգս՝ տէր Յովաննիսի Մելտենոյ շնորհաբաշխ եպիսկոպոսի, ամէն։*

* Ձեռագրի գրչութեան տարեթիվը հայտնի չէ. 115բ—116ա էջերում ևս սարկաւագն քարոզէ... հատվածում հիշվում են Հայոց կաթողիկոսը և Լևոն թագավորը (ե...վասն հայրապետին տեառն Ցակորայ և պատուական քահանայութեանն, և որ ի Փրխատոս սարկաւագութիւն, և ամենայն ժառանգի, և ժողովրդեան զտէր [աղաչեցուք], վասն բարեպաշտ և աստուածասիրահ թագաւորին մերոյ Լևոնի և ամենայն պաղատին և գինուրեալ մանկանց նորա...)։ Ըստ այմ ձեռագիրը գրված պիտի է լինի 1327 թվից ոչ առաջ՝ Հակոբ կաթողիկոսության առաջին տարին, և ոչ ուշ քան 1342 թիվը՝ Լեոնի մահվան տարին։

ՉՀԸ 1328

262.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վրաց. Քանդարան, № 40 (տես նաև 1312 թ.)

Սաացոդ՝ Ռըզուխան
վայր՝ Սիւնիք

ա

Շնորհիւն աստուծոյ հաւր ամենակալի, և ողորմութեամբ բարեբար միածնի՝ սրդոյ նորայ, և կենդանաբարի և ազատիչ սուրբ հոգւոյն, և համագոյական հրրորդութենամբն խնդրեցի դ[ը]դձալիս յոքունց, որով ազատեցան համաւրէն ծնունդք Ադամայ լուսաւորեալ քանիւ կենաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ո[րո]վ ուրախ[աց]եալ ցնծան մանկունք նոր Սիոնի ի կարդ սպասաւորութենան առաքելական եկեղեցւոյ։*

*Արդ, ոմն աստուածասէր ասասւածային շնորհին վարձեալ և ցանկէր** վրկադործ սուրբ աւետարանիս, հանդերձ պատուե[ա]լ ե ծաղ[ի՞կ]*** շքեղագեղ ե գեղեցկատես և բարի զաւակաւքն, որոյ անունն էաչի նանաչի, զոր պահեսցէ Քրիստոս աստուած ընդ երկայն աւուրս, ամէն, ստանալ վրկանս աստուածասէր անձին իւրեանց։*

Արդ, այս աստուածասէրս, որոյ անուն Ղորզուխան ճանաչի, բարեյամիտ և լի հաւատով, ի հռչակաւոր և ի մեծ ազգէ, քանզի այլք բազում ոմանք մարճական շահիւք ընթանան ընդ ծով և ընդ ցամաք ոսկոյ և արծաթոյ, այլ սա ոչ այնպէս, իմաստութեամբ սուրբ հոգւոյն ի մտի եղե[ա]լ շինել տանաք հոգևորական երկնաւոր մտողաց և զարգաբեալ մարդարէական և առաքելական շնորհիւն։ Արդ, ես՝ աղաչին Քրիստոսի Ղորզուխանս, ստացայ զաստուածաշունչ և զաշխարհալոյս զկենսաւնակ սուրբ աւետարանս ի հալալ արդեանց [յիշ]ատակ ինձ և տե[ա]ռն իմոյ՝ [Ա]միր Հասանայ, ի վերելում թագաղարդ և պարծանաց սրդոյս մերոյ՝ Էաչոյ, և Թուղտիկին, և հանդուցեալ պարոնացն Վ.արհամայ, և Միքա խաթունին, ե տուաք ի վանս Լևայ, զոր էր ընդ իշխանութեամբ մերով և էր մեր մուր(*) գերեզմանատեղ, ի ձեռն լուսափայլ եպիսկոպոսին Դաւթի, որ էր առաջնորդ տեղացս. և խոստացան Ա. պատարագ ի տարումն Ղորզուխանին հոգւոյն, ի ծառազարդին, որ է դալուստ վրկչին մերոյ Յիսուսաղէմ ամով։ Որ զաւետարանս

---

* Բոլոր ընդգծված նախադասությունները գրված են կարմիր թանաքով։

** Իմա՝ «ցանկայր»։

*** Վերջին երկու առեները (<ւկ>) չեն կարդացվում, ավելացնում ենք լինքներս հասկածանքով։ Կարող է լինել նաև «ծաղ[կա]չքեղագեղ»։

հանել ջանայ, ի սուրբ Ստեփաննոսէս ու կամ զժամն խափանէ՝ զատի յաստուածոյ, նոանց աշխարհի աւերի։

Արդ, ով ժառանգէք և ընթեռնոյք, ասացէք լի բերանով թէ Ջրխատոս աստուած, ողորմի Որզուքացին, և Ամիր Հասան[այ], և ծնողացն իւրե[ա]նց, ամէն, և այլ վեր[ա]գրելոցս, ամէն։

[Ի թուականին Հայոց] ՉՀԷ. (1328). Հաստա[ա է] կամաւն աստուծոյ։

Պարոն Էաչի

բ

Փառք ամենայնի սուրբ երրորդութեան, ամէն։

Այս իմ գիր է պարոն Էաջոյ [և] զԱմ[իր Հ]ասան զիմ [ո]րդին. [և] տէր Վա[ր]քանիսի [յար]կն ղրաք ղաւետար[անս], Վարքանիսի տուաք, որ մեր հոգոյ առաջնորդ էր. իմ | | | սիրակ*, որ զայս աւետարանս Վարդանիս տվի, թէ նայ է, թէ յիր ազգէ | | |**

263.

ԴԻՐՔ ՋԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Փերդ. 6273, էջ 134—135 (Կ. Պոլիս, Միջադիէի Թանգարան)

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Սի՞ս

Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան յամի ՉՀԷ. ի թուականութեանս Հայոց (1328), ի թագաւորութեան Լևոնի Չորրորդի, որգւոյ արքային Հայոց Ուշնի, և ի պարոնութեանն Հայոց մեծի գունքին Սավրիոյ՝ պարոն Ուշնի, և ի հայրապետութեան տեառն Յակոբոյ, քուերորդւոյ տեառն Գրիգորի հայոց կաթուղիկոսի, ի լաւ և յընտիր օրինակէ, ի հնգրոյ պատուական և երջանիկ արքեպիսկոպոսին տէր Ստեփաննոսի Խրիմի աշխարհին։

[Ծիշեցէք յաղաւթս] զԴաւիթ սրբասնեալ քահանայ, որ յանձն առ զմահ, և եղբայրական սէրն ի գլուխ հանեալ, և երկու հետ ի յաշխարհէն իւրմէ նաւակոծեալ եկն յաշխարհս Հայոց, ի քաղաքս, որ կոչի Սիս, վասն պատուական արքեպիսկոպոսին տէր Ստեփաննոսի, և զմիւս եղբայրն տեառնս՝ զբարի պարոնն զՏուրայն, և զվերադիտողն Խրիմին, ընդ նմին և զիս՝ զանարժան զդպիրս զՍարգիս քահանայ։

---

* Պարոն Էաչիի ընդունգիր հիշատակարանի վրա ձախ կողմից, նորագման ժամանակ, թուղթ են վակցրել, շատ տառեր ջնում են. թղթի տակ 4—5 տառ չկարողացանք վերծանել։

** Շարունակութիւնը չի պահպանվել։

264.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐՈՑ ՓԻԼՈՆԻ ԵԲՐԱՑԵՑՒՈՑ

Երևան 2057

Գրիչ՝ Յակոբ Կրակցի
վայր՝ Գերմաղբիւր վանք

ա

309ա ...Ես՝ տկար ոգի և բազմամեղ անձն Յակոբ, կր[ա]սեաս բանասիրաց և յետինս վարժապետաց, ի քաղաքէն Կրակկայ հոչեցեալ, յորում որակ որակ գոյնս քարանց ելանէ, զոր ոմանք հրահալելի արւեստիւ և փք[ով] կայծակունս արծարծեն և յառաջ բերեն զանազան ղործս երկաթոյ, ատ ի պէտս ազդի ազդի անաւթոց։ Հոգոյն ձեռնատուութեամբ և բոտ անձին իմոյ բաղձանաց ետու գրել ղէ. (7) տաոս իմաստասիրական, որ է շարադրեալ յեոամեծ իմաստասիրէն Փիլոնի։ Եղև դրաւ գրչութեան սորա ի վանքս, որ կոչի Գերմաղբիւր. և է այժմ
309բ դասատուն կարգեալ ի թագաւորէն Հայոց Զորրորդ Լևոնի և ի ‖ թագադրին և պայլին Հայոց Աւշնի՝ տէր Կաւռիկաւսոյ, ձեռամբ Առաքելի՝ որբասէր և կուսակրաւն քահանայի։ Արդ, ստացայ զսոյ ի վայելուչն անձին իմոյ և ի յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղաց իմոց և ամենայն արեան մերձաւորաց։ Զոր աղաչեմ զամենեսեան, որք վայելէք յայսմ դրուցս ուսմամբ կամ աւրինակաւ, յիշեսջիք ի Քրիստոս զիս՝ զանարժան սոսկ անուամբ վարդապետս Յակոբ, և զծնաւղսն իմ, և զեղբարսն՝ զնացեալքն առ Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորսն իմ, նաև զԱռաքել գրիչ և զծնաւղսն իւր, որպէսզի հանգիստ և ողորմութիւն շնորհեսցէ յերանական կեանս և ի փառսն իւր, որում մեզ՝ յիշելոցս և ձեզ՝ յիշողացդ ողորմեսցի գթութեամբն իւրով Քրիստոս աստուածն մեր, որ է աւբհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Ընդ թիւն Յաբեթականս տումարի և Հայկազեանս սեռի ՉՀԷ. (1328), ի թագաւորութեանն Հայոց Զորրորդ Լևոնի, որդւոյ բարեպաշտ թագաւորին Աւշնի, և ի պայլութեանն Հայոց Աւշնի՝ տիրոջն կաւռիկաւսոյ, և ի կաթողիկոսութեանն Հայոց տեառնն Յակոբայ, որ է քուէրորդի տէր Գրիգոր կաթողիկոսին, զոր աղաչեմ և զսոսա ևս յիշել ի Քրիստոս ողորմալիւ, ամէն։

բ

150ա Ո՛վ, ուսուցեալդ եղրարք և սղասաւորք բանին, յիշեսջիք ի Քրիստոս զվերծնաւղն մեծ զՅակովբ և զծնաւսն իւր, որ եա գրել զսա ի վայելուչն անձին իւրոյ, և | | | քահանայ Կրակցի յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր, և Քրիստոս ասաւած, որ առաան է ի պարգևս բարեաց, և զձեզ յիշեսցէ յիւր արքայութիւնն, որում փառք յաւիտեանս, ամէն։

գ

150բ Ո՛վ խոհեմագոյն վերպծնաւղք, յորժամ յընթեռնուլն տեսանէք զերկս փութոյ իմոյ յաղղելն զսա ի կէտ, ի ստորակէտ, ի շեշտ, ի

բուք և յայլ ևս առոգանութիւնս, աղաչեմ յիշել յողորմութիւնն աստուծոյ զՅակոբ Կրակցի սոսկ անուամբ վարդապետ. նաև զծնաւղսն և զեղբարսն իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորսն իմ...։

դ

309բ Ի Հայոց մեծ թուականիս
Ութհարիւր և յիսնեկիս,
Եւ ութերորդ յաւելորդիս (1409)
Ցերուսազհմայ եկաք ի Սիս,
Ցողջոյն մեր սուրբ Լուսաւորչիս
Եւ Հայոց մեծ պաարխարգիս*

265.

Ա Խ Տ Ա Ր Ա Կ

վրաց. Գետ. արխիվ, ֆոնդ 233, ձեռ. 584. (տես նաև 1404 և 1480 թ.թ.)

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ ի քաղս Դուդուշի

...Գրեցաւ սառս տատուածայ[ին այս աւետարանս ձեռամբ սուսանուն քահանայի Մկրտչի, ի քաղս Դուդուշի, ընդ հովանեօ սուրբ Գորգու և սուրբ Մարգսի, ի հայրապետութեանն տեառն Յակովբա, և ի թագաւորութեանն Լեւվնի։ Արդ, աղաչեմ զձեզ զա՛ք քահանայից, ոյք հանդիպիք այսմ առտուածախաւս կտակիս աւրինակելով, կամ տեսանելով, կամ զազափար դնելով, յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զգրօղ սորա և ծնաւղսն իմ, զմայր՝ որ ի յաշխատելս առ աստուած վոխեցօ, և զամենայն ազգատոհմ, և դուք յիշեալ լինջիք բարի աւրհնելոյն յօետ և յանվախճան յաւիտեանս, ամէն։

...Սրբազան և պատվելի բարւնիս Յովհաննես... եռավաւրագ սիրով աստուածայինն շարժեալ ի բարեգործութեան... [ստացաւ] զաստուածապարգև գանձս...։

Նաև զեղկելի ոգիս, զյետնեալս, զՄկրտիչ գրագիրս, որ բազում աշխատանօք և ջանիւք գրեցի զսա ի ստոյգ և յընտիր աւրինակէ, որ ի Կիւլիկեա յերկիրն արքայեղբայր անուն կոչեցեալ Յովհաննես եպիսկոպոս, որ իւր ձեռօքն էր գրեալ լաւ և ընտիր աւրինակ, նայ ես յայնոր գրեցի զսայ, և որ յիշէքդ ի բարի յոյն և դուք յիշեալ լինջիք ի բարի յօրհնելոյն այժմ և յաւիտեանս յօետնէից, ամէն...։

Ի թվիս ՉՀԷ. (1328), ի կատարելն մարտի։

* Ձեռագրության հեղինակը չի թողել իր անունը, անհայտ է մնում նաև նրա առնչությունը ձեռագրի հետ։

266.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ԵՒ ՃԳՆՈՒԹԵԱՆՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 1733

Գրիչ՝ Ստեփան[ոս]
վայր՝ Սահփանոս Ուլնեցու վանք

...Արդ, գրեցաւ պատմութիւն վարուց երիցս երանեալ քահանայապետին, տիեզերաց վարդապետին, և եկեղեցեաց Քրիստոսի լուսաւորչին Յովաննու Ոսկեբերանին ի սուրբ և ի մեծափառ և ի հռչակաւոր ուխտս սուրբ Ստեփանոսի Ուլնեցոյն [և] երիս || ուն և չորս ընկերաց իւրոց, ձեռամբ մեղաւորի և անարժանի Ստեփան[ոսի], ի թուին Հայոց ՉՀԷ. (1328), ի թագաւորութեանն բարեպաշտին Լեռնի, և ի հայրապետութեան տեառն Յակոբա, ի ժամանակի առաջնորդութեան և վերատեսչութեան սուրբ և քաջամարտիկ վկայիցս՝ հաւր Թորոսի՝ ուսուցչի իմոյ, և հեզահոգի փակակալի Կոստանտնի, և այլ մխաշուլնկ եղբարցս՝ Կարապետի, Թորոսի, երկու Յովհաննիսի, և Ստեփանոսի՝ հասակակցի իմոյ, և միւս Ստեփանոսի, և Վարդանա, Ցիշեցէք զվերոգրեալ անուանս ի սրտահառաչ պաղատանս ձեր, և մեղաց թողութիւն խնդրեցէք սոցա ի Քրիստոսէ աստուածոյ մերոյ։ Ցիշեցէք զԲարսեղ տնտես մեր, և զԹորոս կրաւնաւոր, զՍտեփանոս գպիրն, զԿոստանտին գպիրն | | |

267.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վենետ. 19 (212) ձուց. հա. Ա. էջ 158—160

Գրիչ՝ Մխիթար
վայր՝ Եկեղեցի գաւառ, Երկայնի վանք

350ա Արդ, ես՝ նուաստս յերաստս բանի և թարմատարս ի հոյլս բանահիւսաց, ախտապաշար և յոչնամեղ անձնս Մխիթար, պիտակ պատկեր և գրժաւղ կրաւնաւորութեան, որ թափուր և ունայն եմ ի հոգեկան և ի մարմնական բարեաց և ի յարգասեաց։ Վասն որոյ խուն ինչ աշխատեալ ազգուն և փոյն գրով տառատպեցի զպատմութիւն հնոյ դատաւորացն և թագաւորացն, որ ունի բազում հրաշս և սքանչելիս յինքեան ամբարեալ ի հրաշագործողէն աստուծոյ եղեալ առ մարդիկ ի դարս և ի ժամանակս, զի թերևս պատահաւղք գրոցս ընթերցմամբ, կամ լսելով, կամ զաղափար առնելով, բարեմիտ լինելով առ մեզ՝ ներսէմն և չնչուն սխալանաց մերոց հայցեսցեն։ ... Տէր աստուած, ձրի տուր զքո արքայութիւնդ Մխիթարայ՝ բարեխաւսութեամբ ամենայն սրբոց։ Նաև յիշման արժանի արարէք զծնողսն իմ՝ զՊաւղոս և զՏիրացս, և զնարազատսն իմ՝ զՄատթէոս և զՄարտի-

բոս զկբաւնաւորեալսն, և զքերսն նոցին հեաւե[ա]լ՝ զմինձայ և զմարքայ, և զորգեակն իմ զԹարսեղ արեզայ, և զամենայն երախտաւորսն իմ կրկին կենաց...։

Աղղ, գրեցաւ գիրքս այս ի գաւառն Նկեղեաց, ի վանսն, որ կոչի Սրկայնի, յորում է մեծ և հռչակաւոր վարդապետն Կիրակոս, արժանաւորն ամենայն գովեստի և յիշման, ի մեծի Թուաբերութեան Հայոց ՉՀԷ. (1328)։*

268.

ՇԱՐԱԿԱՆՈՑ

Երևան 1576

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Դրազարկ

ա

368բ Աղղ, գրեալ եղև ոսկենկար շարակնոցս ի Թուին ՉՀ. և Է. (1328), ձեռամբ Ստեփաննոս վանական քահանայի, ի Դրազարգ անապատն, որ ի Սիս,

Եւ յետ ՅԻ. և Գ. (323+1328=1651 Թ.) ամին ստացօղ սմին Պօղոս քահանայ ոմն ի յԱրզրում քաղաքէ փո | | |**

Գրիչ՝ Մովսես

բ

360ա Զբմբռնեալս ի ժանիս կամակոր օձին, Մովսես ծրօղս, մաղթեմ կականագոչ հեծեծմամբ, ով երանեալ հայր, օգնեա ինձ։

գ

364ա Զապիկար և Թարմատար Մովսես գրիչս յիշել մաղթեմ ի վայելողացդ։***

---

* 167բ էջի հիշատակագրությունից պարզվում է, որ ձեռագրի սկզբի մասի արտագրությունն ավարտված է եղել ՉՀՋ. (1327) Թվին։

** Ձեռաղրից Թերթեր են ընկել, պահպանվել է միայն այսքանը։

*** 360ա և 364ա էջերի հիշատակագրությունները կասկած չեն Թողնում, որ ձեռագիրն արտագրված է Մովսեսի կողմից, այդ դեպքում ով է Ղ. հիշատակարանի «Մահափանոս վանական քահանայն»։ Մեզ Թվում է, որ 1328 Թվի հիշատակությունը վերաբերում է նախագաղափար օրինակին, որն արտագրված է եղել Դրազարկում Ստեփաննոսի կողմից, իսկ սույն ձեռագիրը ընդօրինակված է 1651 Թվին Մովսես գրչի կողմից, հավանաբար Արզրումում։ Հնագրական տվյալները նույնպես խոսում են հօգուտ այս ենթադրության։

269.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆ

Բբխ. Թնգ. 41 (Or. 2337) կոնքը. ծուց. էջ 87

Գրիչ՝ Յով[հաննես]

ա

181ա *Փառք... ի թուականիս Հայոց ՉՀԸ. (1328) գրեցաւ եղանակաւոր գիրս ձեռամբ Յով[հաննես]ի անիմաստ գրչի, ի խնդրոյ քեռորգոյ իմոյ՝ սուրբ և կուսակրօն բեմբական քահանային Ներսիսի, ի վայելուչս անձին իւրոյ և ի յիշատակ ծնողաց մերոց..., յիշեսջիք զսրբասնունդ քահանայն Ներսես, և ծնողս իւր՝ զհայրն իւր զՎահրամ քահանայ, և զմայրն Ութքա, և զեղբարս իւր զԳրիգոր քահանայ և զՍահփաննոս քահանայ, և զհաւրեզբայրն իւր զՍտեփաննոս կուսակրօն քահանայ, որք յառաջ զնացին յաստեացս. նաև զիս՝ զՅով[հաննես] անպիտան գրիչ, և զծնողսն իմ՝ զհայրն իմ զՍահփ[աննոս] քահանայ և զմայրն իմ զՄեծտիկին, և զեղբարսն իմ՝ զԹորոս քահանայ, և զԿոստանտին, և զՊօղոս, որք արեամբ նահատակեցան: Յիշեսջիք և զծնողսն հայրն իմ զՆերսես անապատական քահանայ, զի նա ուսոյց զիս...:*

Հետ ստացող՝ Միքայել

բ

182ա *Եւ ես աղաչեմ այս հանդիսի*
Յիշման արէք զիս արժանի՝
Միքայել գրիչ անցաւորի,
Որ գրեցի ի Կեսարիի,
Հասեալ աւարտ աղուհացի,
Մարտի ամսոյ քսան և վեցի:

270.

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 5972

Գրիչ

274ա *Ի յեւթհարիւր հայոց թվի,*
Եւթանասուն և եւթնեկի,
Ի քսան և վեց ամսո հոռի,
Ի ի քսան և ինն յունվարի,
Վճարեցաւ երգ սրբալի,
Զոր ասացեալ տէր Ներսեսի
Կ ըլայեցո և Տարսոնցի,
Ի յիշատակ Ամիր Սարգսի .
Եւ ծնաւղաց իւրոց բարի,

Որ և աղաչեմք զտէրն ամէն[ի],
Պահել ամբողջ յայսմ աշխարհի
Զինքն, իւրոյսն հաւատովի,
Ցերկար կենաւք լինել յերկրի,
Եւ յեկանելն իւրում յաստի
Հնդ Ս իշխանացն պրսակ[ի],
274բ Հնդ Աբրահամու և ընդ Դաւթի
Եւ այլ սըրբոց հարցըն[ե] նախնի,
Զի ետ գրել ըղձմամբ սրտի,
Զսա, որ Ցիսուս Որդի ասի,
Զի յորժամ գա տէրն ամէնի,
Նստի յաթոռ դատաստանի,
Այնժամ տացէ սմա տեղի
Ցեզեմ գրախտըն հայրենի,
Եւ ես մեռեալ մեղաւք ի լի,
Որ անըզգայ եմ ի բարի,
Շատ մի բաներ կայր ի մտի,
Որ շարէի յայս նափորտի,
Բայց ոք չըկայր յայսմ վայրի,
Որ միտ դնի [ի]մում բանի,
Եւ ես աւտար այս գաւառի,
Ի գըբան սրբո Գարապետի,
Դարձեալ ըզ | | |

271.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6273, էջ 134 (Ի ճոպչէն գիւղն Վանայ)

Գրիչ՝ Սոսթաճէս

...Շնորհօքն [աեառն] սկսայ և ողորմութեամբ կատարեցի զլուսաւոու և զպատուական մարգարիտս զայս յաղքատ և ի դառնաբեր ժամանակիս։ Բազում չանիւ և խանդակաթ սիրով գծագրեցի ես՝ Սոսթաճէս յանցաւոր և անարժան ի քահանայս...։ Կատարեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ՉՀԷ. (1328), ի սեպտեմբերի ԺԷ. (17), ի կաթողիկոսութեան տեառն Ցակոբայ, ի թագաւորութեան [Լևոնի] | | |

272.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. Հալ. 91. Ծուց. Մյուն. 179—182 (Վանի Հայկավանից եկեղեցի)

Գրիչ և ծաղկող՝ Թորոս
վայր՝ Տարօ՞ն

...Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ ունն անուն Պարոնշահ, որդի Մարտիրոսի, ստացաւ զսուրբ աւետարանս, յիշատակ իւր և կենակցին իւրոյ Փոփրխկանն, փոխեցելոյն՝ ի Քրիստոս, և բարի ծնաւղաց իւրոց Մարտիրոսի և Փոխր տիկնայ, և ի վայելումն սրտի իւրում Թաթուլի և այլ եղբարցն, որ եռափափագ սրտիւ ցանկացեալ այսմ հրաշագործ բանից փրկչին Յիսուսի Քրիստոսի, ստանայ զսա յարդար գոյից իւրոց, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և որդոցն՝ Թաթուլին, և Աւետվորին, և Նաթանիէին, և Սրանոսին, և պարոն Վարդին, և բարի կենակցին իւրոյ Իգդեղին,... և Սարգիս քահանային, որ կամակից եղև Պարոնշահին, որ ստացաւ զսուրբ աւետարանս:

*Բայց յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս էր թիւ ժամանակի գրութեան սորա յելից նախաստեղծից մարդոցն ի դրախտէն՝ ՋՌ. և ՆՃՂ. և ինն սմ (6599), ըստ եւթանասնից, որում մեք վարիմք. և է ի մարչեղութենէ բանին աստուծոյ, անժամանակ էին և փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս՝ ՌՅԻՀ. (1328), իսկ ըստ Քուոյ խոսրովային Յաբեթեանս տումարի ՁՀ. (1329), և էր մեծ ղրլանին՝ ՄԽԳ. (243), ի յաոաչնորդութեան արքեպիսկոպոսի տէր Սահփաննոսի, և յաշխարհակալութեան մեծ ինքնակալին Բուսայիդ դան կոչեցեալ, որ տիրէր բազում ազգաց, ունենալով ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն Կասբից և մինչև ի գետն Ջահուն կոչեցեալ:**

Ձմեծն իմաստից և զպետն վարժից, զկայծակնամաքուրն և զբեզակնամիտն Նոայեաս՝ զդլուխն արևելեան տոհմիս, զի իբրև զարեգակն փայլեաց ի կորնթարթն երկնից, ընդ որոյ թևօք բազումք տարբանան: Ընդ որում և ես անարժան Թորոս, ընդ հովանեաւ նորա բազում ժամանակս խնամօք աշխատեցայ ի գիր և ի ծաղիկ, և զօրինակ սուրբ աւետարանիս նովաւ ըզորգեցի: Որոյ յիշատակ սորա օրհնութեամբ և գովութեամբ և գոհութեամբ եղիցի, ամեն և յամենայն ժամ:

Ո՞վ կարէ պատմել, մեք ոչ կարեմք պատմել, զպէտն, և զողբումն, և զլալումն, և զսրածութիւն, և զսգին, և զգերութիւնն, և զա-

---

* Լալայանը ծանոթագրում է՝ «Մի թերթ ընկած է»: Փերզալամյանը ձեռագրի հետ ծանոթացել է, երբ հիշատակարանն անթերի է եղել, ուստի Հալ. Ծուցակի պակասը լրացնում ենք Փերզալամյանի արտագրությունից (№ 6273, էջ 135—136):

սանուքիւնն, և զայլ ազգի ազգի պատուհաս, որ եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց ի Տարօն աշխարհին, քաղաքին, և երկրին, և ամենայն շուրջակայ գաւառացն, ի յանօրէն ազգէն քրզսաանաց սրբա-
[ջինջ եղև ամենայն աշխարհն ի քրխստոնէից։

273.

ԲԱՐՕԶԳԻՐՔ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ

Վիեն. 312, Տաշ. Ծուս. էջ 741

Հեղինակ՝ Բարթուղիմէոս
վայր՝ Երընջակոյ գաւառ, գիւղ Քռնայ

ա

13ա Եւ արդ, քանզի քարոզեէն եւ ուսուցանելն յոյժ պատուական եւ օգտակար գործ է, եւ անպատշաճ է զգիտուքիւն և զուսումն խնաել եւ թաքուցանել, վասն այնորիկ ես՝ Բարթուղիմէոս Քռանկ եպիսկոպոս Մարաղոյ, ի կարգէ սրբոյն Դոմինիկոսի, երկեա աստուծոյ, եւ ոչ կամեցա զքանքարն տուեալ ինձ աստուծոյ՝ թաքուցանել...։ Վասն որոյ չան եղեալ կարգեցի քարոզգիրք վասն օգտուքեան հոգոց, զի որք կարեն ընթեռնուլ ի գիրքս ըստումս եւ անտի սահմանեալ ոեղան խորտակց...։ Եւ թէ ողալումն ինչ գտցի՝ թողուքիւն արասցէ, վասն զի օտար լեզուով, որ ոչ գիտէի կատարեալ՝ թարգմանեցի, այսինքն պարսիկ լեզուով ի հայս,...։ Եւ թարգմանեցաւ գիրքս այս ի ժամանակի, սրում էր թիւ մարգեզուքեան Քրխստոսի աստուծոյն մերոյ Ռ. եւ Գճ, ԼԱ. (1331), յաւուրս սրբազան պապին Հռոմայ, որ Ցովաննէս կոչիւր, եւ էր նա նստեալ աթոռն Պետրոսի քսաներորդ երկրորդ Յոհաննէս անուամբ, եւ ի կաթուղիկոսուքեան Հայոց տեառն Յակոբայ, որ էր յոյժ հնազանդ սուրբ եկեղեցւոյն Հռոմայ եւ հրամանակատար։

Թարգմանիչ՝ Յակոբոս

բ

Եւ ես նուաստս եւ յետինս իքրանասիրաց Յակոբոս, որ արժանի եղէ միարանուքեան սուրբ եկեղեցւոյն Հռոմայ, եւ հասա առ ոտս առն աստուծոյ տէր Բարթուղիմէոսի, եւ իրրև ծարաւ ոք գտեալ գջրհորս ոսկեղէնս լի կենդանի ջրով, եւ խեցեղէն եւ բեկեալ ամանով հանի սակաւ մի յաղբերէս, եւ զովացուցաք զծարաւ մեր։ Զի տէր Բարթուղիմէոս ուսեալ էր զպարսիկ լեզուն, նաև ես սակաւ մի ծանօթ էի այն լեզուին, որով և զգիրքս զայս բազում ջանիւ փոխեցաք ի հայս, ի գեղեցկանիստ երկիրս, որ կոչի Երընջակոյ գաւառ, ի գեղս Քռնայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որ նոր շինեցաւ զօրուքեամբ կուսին Հ. (70) աւր։ Եւ այս ամենայն բարեաց եղեւ պատճառ ուսումնա-

սէր եւ արիացան, վառեալ աստուածային հրով ի սէր միաբանութեան սուրբ եկեղեցւոյն Հռոմայ Յռնոց վարդապետն, որ Քոնեցի կոչիւր, եւ. որ յոյժ հմուտ եղեալ էր ի մէջ ընկերաց իւրոց Հայաստանեայցս ուսմանն։ Եւ այնու ոչ լցաւ վաւաչք բանասիրութեան իւրոյ, զի առեալ էր ստկաւ մի զճաշակ դիտութեան Հռոմայեցւոցն։ Վասն որոյ իբրեւ զցնծասս Նաւեա երթեալ լրտեսեաց զերկիր Աւետեացն՝ այսինքն ճշմարտութիւն Հռոմայեցւոցն, եւ երեր ի նոցանէ պտուղ գեղեցիկ եւ ողկոյզ բարեհամ լծակաւ՝ բազում նեղութեամբ՝ ղվերոդրեալ այրն աստուածոյ զսուրբն Բարթուղիմէոս՝ եւ բնակեցոյց ի դեւղս Քոնցայ, ծառայելով նմա իբրև մի ի սրբոցն, եւ ետ շինել զհրաշալի եկեղեցիս եւ զընակութիւնս բարեպաշտ առն պարոն Գորգայ առաջնորդի դեղջս Վռնցայոյ։ Եւ ոչ թաղոյց զայսպիսի գանձս միայն վասն ինքեան, այլ եւ բազումս յորդորեաց ի միաբանութիւն սուրբ եկեղեցւոյն Հռոմայ եւ քաջ վարդապետութեան նորա, եւ բերե[ա]լ զընկերակիցս իւր՝ արար կցորդ այսմ մեծի բարութեանս։*

274.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեւան 7659 (տես նաև 1504 թ.)

Գրիչ՝ Գրիգոր
ստացող՝ Ասլան
վայր՝ Օրտուրազար

ա

352բ ...Արդ, այսմ աստուածային և հոգևոր գանձուցս և անշիջանելի լապտերացս և ամենագով գերահրաշ պարգևիս ցանկացօղ եղև աստուածասէր և արդարամիտ, հեզահոգի և հաւատարիմ քրիստոն[ե]այս Ասլանս,** և ստացաւ զսուրբ աւետարանս զայս և ետ գրել զսայ ի հալալ արգեանց իւրոց, յիշատակ անջինջ իւր, և ծնօղաց իւրոց՝ հօր իւրոյ Սամադավլին և մօր իւրոյ Մարգարտին, և եղբօր իւրոյ Զաքարէխին, և Շեռփոր տիկնայ՝ յօժանդակի սորա, և ամենայն արեան մերձաւորաց և սիրելի բարեկամաց սորա, որոց լիցի սայ առ ամե-
353ա նեցուն պատճառ փրկութեան և առաջնո || րդ երկնաչուք ճանապարհին։ Ընդ նմին յիշեսջիք զփծուն և զանարհեստ գրիչս՝ զԳրիգոր երէցս և զծնօղսն մեր ի Քրիստոս։

---

* Հիշատակարանի բնագիրը կազմել ենք մի շարք ձեռագրերի (հատկապես Երևան 6564), և Ղ. Ալիշանի համառոտ հրատարակության («Սիսական», էջ 374—375) օգտագործմամբ։ Հիշատակարանը տեղագրում ենք 1329-ի թվաշարքում, որովհետև ծ-դ. գարում գործածվող տոմարով քրիստոնեական 1331 թվականին համապատասխանում է արդյան թվագրության 1329, կամ հայկ. տոմարի ՉՀՀ. թվականը։ Այսպես է վարվել նաև Ղ. Ալիշանը։

** Հիշատակարանի սկզբից, ուր գրիչը ընդարձակորեն փառաբանում է ավետարանի արժանիքները, հետաքրքրական են միայն Ասլանի հոգևոր հայր Յովհաննէսի մասին գրված հետևյալ տողերը. «Բարեպաշտ և մաքուր կուսակրօն ծերունիս մանկատաւդ Յովաննէս, հոգևոր հայր գոլով ստացողի սուրբ աւետարանիս՝ Ասլանիս» (էջ 351բ)։

Արդ, աւարտեցաւ լուսապարիսակ և աստուածային սուրբ մաանանս այս յբսա մեզ ի մարդեղութենէն տեառն մերոյ և կենարար փրկչին Յիսուսի Քրիստոսի ի ՌԴՃԼՒ. (1332) ամն, և ի լուսաւոր վարդապետութենէ սուրբ ծնողին մերս և երջանկին Գրիգորի ՌՃԼ. (1130) ամն, և ի թուականութեանս Հայոց տումարի, որ Արևթական կոչի ՉՀԸ. (1329), և ի վաքը թվի ՄԽՉ. (246). ի թագաւորութիւն նեռոդական ազգին Ռուսայիտ Բահատուր դանին, և ի թագաւորութիւն Հայոց աստուածասիրին և բարեպաշտին կորովամիտ առաքինոյն Լևոնի Չորրորդի ի կարգս թագաւորացն Հայոց Լևոնեանց, և սիրեալ ի քաջ նախնեաց կայծակն, ուղղափառ յոյժ, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, և ի յաոաջնորդութիւն || աստուածապահ 353բ
նահանգիս Օրտուրագրնուս՝ Սարգիս քօր[եպ]իսկոպոսի հայրապետական աթոռոյն:

Արդ, ես՝ ամենամեղ անձն և տկար ոգի Ասլան, ստացող սուրբ աւետարանիս, ի ձեռն Սարգիս քօր[եպ]իսկոպոսի նըւէրս ընծայեցի զսայ Օրտուրագարի մեծի եկեղեցւոյս սրբոյ Սարգսի զօրավարին, ի յաճուձն և ի հարստութիւն անկապոյտ դանձուցն աստուածայնոց, որ ի նմա մթերեալ և ամբարեալ կա. զոր տէրն մեր և աստուած հաստատ .և անդրդուելի պահեսցէ զսայ ի վերայ առաքելական վիմի: Եւ մի ոք իշխեսցէ շորթել կամ զոդանալ զսայ ի յայս եկեղեցւոյս, և կամ կտրել, կամ չնչել զյիշատակ մեր աստի, զի մի և ինքն չնչեսցի ի գրոյն կենաց: Եւ որ զմեզ յիշէքդ, յիշեալ լինիջիք ի յարդար դատաւորէն ողորմութեամբ
354ա և քաղ || ցրութեամբ զթութեանն, ի հանդիստն սիւոդաց և ի խորանն սրբոց իւրոց: Նայ և դիս արարէք յիշման արժանի, զանարդ և զանպիտան հոդս յամենայնի, զզրկեալս ի տիրապէս շնորհաց հոգւոյն և զխաւարեալս մեղացն սրագասեօք, ի գլուխս զատաստանին հասեալս և երկեղիւ դատաւորին պակուցեալս՝ զևագ զպիրս, որ և նկարեալ ծաղկեցի և կազմեցի զսուրբ աւետարանս: Ցիշնոյիք և զծնողսն մեր և զբարեմիտ աշակերտս մեր զՆոփոր զպիրը, ա. շատ աշխատասիրեցաւ ի սմա: Եւ տէր Քրիստոս յիշոզացդ և կարղացսզացդ ողորմեսցի, և յիշեսցէ յանճառ բարութեանն, և արժանաւորս արասցէ լսել դերանաւետ բարբառն, եթէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ, և թէ՝ մտէք յուրախութիւն տեառն ձերոյ, ամէն:

Բ

349բ Ցիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ, ըզզանապատս ի բարեաց զևագ զպիրս, որ զսուրբ աւետարանս ցանկագրեցի մեծ սիրով ի յընդիր օրինակէ մեծ վարդապետին Եսայեա, և տէր զձեզ յիշէ ողորմութեամբ և զթութեամբ, ամէն:

275.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա, Տ.-Ավետիսյան, Ծուցակ, էջ 148

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ակներ

346ա ...Գրեցաւ սա ի Կիլիկեցւոց աշխարհ, ի լեռնային կողմանս, յաստուածարնակ և ի հռչակաւոր ուխտս Ակներ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոցս, ի յոյժ ազնիւ աւրինակէ, զոր է սւղղեալ մեծիմաստ և սուրբ վարդապետն Գեորգ Լամբրուճեցի, ձեռամբ ամենաթշւառի Կարապետի՝ ժանտատես գրով և բազմաշփոթ մտաւք։ Որք հանդիպիք սմա խոնարհեցաբուք սիրով առ իմ նուաստութիւնս, և մի ըստ արժանոյն բամբասէք զհամարձակութիւնս իմ, զի ոչ յանձին զաւրութիւն վստահացեալ գրեցի, այլ ի փափագ սիրոյ, թերևս պատճառ լիցի փրկութեան հոգւոյ իմոյ և զերծուման յանշէջ հրոյն, նաև ծնողաց իմոց և ամենայն զարմից, յիշմամբ տէր ողորմեայիւ պատահողի սմա սուրբ եղբարց։ Եւ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՉՀՀ. (1329), ի հայրապետութեան տեառն Յակովբայ և ի թագաւորութեանս* Հայոց Լևոնի որդւոյ Աւշնի։ Արդ, որք պատահիք սուրբ տառիս յիշեսջիք զեղկելի գրոգիկս զԿարապետ, և զծնողն իմ, և զհաւրեղբայրն իմ՝ զՎարդան քահանայ, և զմաւրեղբայրն իմ՝ զհայրապետ՝ դուսուցիչն իմ, և զհանգուցեալ եղբարսն իւր | | | ** զԿարապետ և զՍարգիս։ Աղաչեմ յիշել ի տէր զարեամբ նահատակեալ քահանայ զՎարդան, որ զաւրինակս էր գրոյ, *** յիշեսջիք ի տէր և զ[Թ]որոս քահանայ, որ յուղղելն | | | աշխատեցաւ։ Եւ ես զարձեալ յերեսս անկեալ աղաչեմ յիշել զժանտատես գրոգ սորա և զկաղմաւղ զԿարապ[ետ]...։ Յիշեսջիք ի տէր և զՍարգիս քահանայ և զծնաւղ իւր, որ զդիրքս ծաղկաղարգեաց...։

276.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ, ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Ալիշ. Սիսուան, էջ 155 և 156

Վայր՝ Ջորոյ սուրբ Թորոսի վանք

Գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՉՀՀ. (1329), ի թագաւորութեանն Լեւովնի աստուածասիրի՝ որդւոյ Աւշնի, և կաթողիկոսութեանն տեառն Յակովբայ, ընդ հովանեաւ քաջայաղթ վկայարանիս, որ կոչի Ջորոյն ոսւրբ Թորոս, ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ,

* Ս. Տեր-Ավետիսյանի ընդօրինակության մեջ՝ չի թուականութեանս։
** Մի անուն չի կարդացվում։
*** Կարելի է կարդալ նաև ետ գրելոյ։

աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։ Ողորմեացի Քրիստոս աստուած կարապետ քահանայի և ծնողաց իւրոց, որ զծայրս ճառիցս ծագկազարգեաց։*

...[Յիշեցէք] զմիաբան եղբայրութիւն հրեշտակաբնակ ուխտին Անկեաղոյ, զհոզեոր հարքն մեր, զծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան, և զպատուելի քահանայն զՍտեփանոս փակակալն, և զԽրիմզորն, և զԿաստանդին զհեզահոգիսն, և զԹորոս ժառանկն, որ ի վերայ ամենայն երախտեացն, զոր արարեալ էին մեզ, յաւելին և զայս, և լցին զփափուղ սրտի իմոյ, և շնորհեցին զօրինակն՝ որ դրեցի զսա..., և զյիշման արժանին՝ զսուրբ քահանայն՝ զարեամբ նահատակ[եալն]՝ զՎարգաց, որ բազում տառապանօք էր գրեալ զօրինակս, երիս օրինակս մերձ ունելով, և մեզ դիւր ճանապարհ էր կազմեալ։**

277.

ՄԵԿՆԱԿԱՆ ՃԱՌՔ Ս. ԳՐՈՑ

Երևան 867

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Կրակայ գիւղաքաղաք

145բ Արգ, դրեցաւ գիրքս այս ի ժամանակս հայրապետութեան տեառն Յակովբա Հայոց կաթողիկոսի, և ի թագաւորութեան աստուածասիրի և բարեպաշտի Հայոց Լևոնի:

Ետ գրել զկենսաբեր գիրքս զայս Թորոս քահանայ, որ է ի սպասաւորութիւն աստուածային և իմաստասիրական բանիս, ի վայելուչն իւր՝ ի հոգւոյ և ի մարմնոյ, որ է ստոյգ և յընտիր աւրինակէ, և զիւր քաղցրիկ հայրն Մարտիւրոս անուն քահանայ, և զմայր իւր, և զեղբայր իւր զՊաւղոս, աղաչեմ զձեզ, ով եղբայր մեր, որ հանդիպիք սմայ, թէ ի յաւրինակելոյ կամ կարդալոյ, յիշել սուրբ սիրով և սրտի մտաւք առ տէրն մեր։

Գրեցաւ ծաղիկս այս ի Թուա[կանիս] Հայոց ի ՉՃ. և Հ. և Ը. 146ա (1329), ի գեղաքաղաքն, որ կոչի անուն || Կրակայ, ընդ հովանեաւ սրբոյն սուրբ Միմէոնին, յորժամ բառնայք՝ նա և բանայք, ով քրիստոսեան քահանայք, սպասաւորք սուրբ բանիցս, աղաչեմ յիշել սուրբ սիրով և սրտի մտաւք զանարժան և զաւտանաւն քահանայ զԹորոս, որ զդիրքս գրեցի, և զեղբայրն իմ զՅոհաննէս քահանայ, և զմիւս եղբայրն

---

* Հիշատակարանի այս մասը հրատարակված է վիմագիր, 150 էջում։

** Հիշատակարանի շարունակությունը իր շարադրությամբ վերապատմում է Ալիշանը, փոքրիկ մեջբերումներ անելով բնագրից, այսպես. «Յիշէ և զայլս բազումս, որպէս։ Յովհաննէս քահանայ և եղբայր նորա «Մարտիրոս սարկաւագ, որ սքուղթս կոկեաց». հոդեւոր հարքն՝ Գրիգոր միակեց, և եղբայրն Մարտիրոս՝ եղբօրորդիք Սմաւելի քահանայի արեամբ նահատակելոյ. Հզորոց, ասէ, ի մանկութենէ գոհ էի, ևս առաւել այժմ, ի զոհունս ետուն, որ հանգեալ ի գրելս, և յորդորող էին միշտ», որպէս և Ստեփաննոս քահանայն. և Գասիլ մառնպան, «զի և նա ճեզ էր ողորմած», կաւրապես քահանային, «որ զծայրս ճառիցն ծագկազարգեաց», և այլ քահանայք, Մարտիրոս՝ «որ զդիրքս կազմեաց», կարապես, Յովհաննէս, միւս Յովաննէս, Դաւիթ, Միքայել, Գեորգ, Գօդոս»:

դՑով[սէ՞փ], և զծնաւդքն իմ, աւբհնեսցէ է սուրբ եր[ը]որդութիւն, և աւբհնիչք ոոցա աւբհնեալ եղիցին։ Ողորմութիւն հայցեմ և ես տա-ռապեալս Թորոս՝ սուղ և նուաստ գրիչս, դի թողութիւն հայցեսջիք ի Ջրիստոսէ մեղաց իմոց, և ծնողաց, և ամենայն ղարմից իմոց. և Ջրիստոս ողորմեսցի հասարակաց, այն, որ աւբհնեալն է յաւիտեանս յաւիտենից, ամէն։

278.

ՍԱՆԴՈՒՂՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵԼԻՑ

Երևան 3678

Գրիչ՝ Հայրապետ
վայր՝ Փոս ագապատ

ա

422ա ...ի թուիս Հայոց ՁՀՀ. (1329) աւարտեցաւ դիրքս, որ կոչի Սանդուղք Աստուածայինն Ելից, և միւս՝ Ցոհան, որ կոչի Աստուածա-բան, յանապատս Փոս վերակոչեալ, յաշխարհիս Կիլիկեցւոց, ի թագա-ւորութեանն Հայոց Զորրորդ Լեոնի աստուածակարգ արքայի, որդւոյ Աւշնի թագաւորի, ի կաթողիկոսութեան տեառն Յակոբոյ, յառաջնոր-դութեան ուխտիս տէր Ստեփաննոս սրբասէր եպիսկոպոսի, ձեռամբ մեղաւոր Հայրապետի, և վերջին ճառս, որ է միաշաբաթի յարութեան տեառն, ձեռամբ Թորոսի, որդւոյ քեռ մերոյ, յիշեսջիք դաշխատաւքս և աստուած զձեղ յիշեսցէ։

բ

423ա Դիրքս այս վերջին, որ է Աստուածաբան Ցոհաննու, նոր է թարգմանած յասորւոց ի մերս. և ես անպիտան և մեղաւոր գրողս հանդիպեցայ սմա ի վանս Զարդառնոյ, առ ճգնաւորի ումեմն Ատամ կոչեցելոյ, որ էր բերեալ զսա ի Թաբաւրականէն, և ասէր՝ եթէ ոչ կամեցայ գրել կարգաւ, զի ոչ էր ի մերոց վարդապետաց մաւտ, գար-հուրեցայ կարգաւ գրել, զի ահ եղև, զարմանալի իրս է պատմել, որ-պէս ի դրելոցդ է իմանալ։ Վասն այնր սակաւ մի զրեցի, զի ի գիրս գիտութիւն բազում էր և ես երկնչէի, յուսամ յաստուած եթէ գիտ-նական ոք հանդիպի և տեսանէ և իմանա զճշմարիտն։ Ես վասն աւգտի դրեցի, վասն իմ և այլոց։ Աղաչեմ զընթերցաւզսդ յիշել զտա-ռապեալ գրաւզս, և աստուած զձեղ յիշէ յիւր ողորմութիւնն։

Գրիչ՝ Վարդան

գ

334բ ...ՁՀՀ. (1329) թուականիս գրեցաւ... այս մատեանս։

...Եղև աւարտ սորա յեղբայրանոյս Փոս կոչեցեալ, ի հայրապե-տութեան տեառն Յակոբայ, և ի թագաւորութեան Լեոնի, որդւոյ Աւշնի արքայի, ի տաւնի համբարձման տեառն սկսեալ և ի խաչավերաց

տաւնիս վճար եղև ի գրելոյ,* ի վառս Ֆրիստոսի աստուծոյ մերոյ, որ շնորհեսցէ հանգիստ և ողորմութիւն աւրինակիս ղրողին՝ Վարդանայ ամենագովելի քահանայի և արեամբ վկայի, այլ և Պետրոսին, որ յաւժար կամաւք ետ, որ գրեցի...։

279.

ԱԼՆՏԱՐԱՆ

Սերասախ, Ս. Նշան, 20, ՀԱ, 1924, էջ 518

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Փոս ամապատ

050 ...Գրեցաւ աւետարանս այս ձեռամբ մեղապարտ ծառայիս աստուծոյ Ներսեսի սպասաւորը բանի, որոյ վավաճոզ եղեալ երջանիկ քահանայ Գրիգոր, եւ ստացաւ զսա իւր յիշատակ եւ ի վայելուչս երկուց որգւոց իւրոց՝ Թադէոսի եւ Սարգսի, որոց տէր աստուած խաղաղական կենաւք վայելել տացէ նոցին ընդ երկայն աւուրս։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք պատահէք սմին, յիշեսջիք զտառապեալ գրող սորին զՆերսես, և զհարազատ եղբայրն իմ զտէր Թորոս, եւ զհանզուցեալ եղբայր իմ զՅովհաննէս քահանայ, եւ զծնաւզսն մեր, եւ զամենայն ազգայինս, և զստացող մատենիս զԳրիգոր քահանայ, եւ զորդիսն իւր զԹադէոս քահանայ եւ զՍարգիս եւ զԱւագ, հայրն իւրեանց զԱռաքել քահանայ՝ հանգուցեալն առ Քրիստոս։

Ողորմեսցի Ֆրիստոս աստուած եւ շնորհազարդ քահանային Սխիքարայ, որ ծագկեաց զմատեանս զայս եւ կազմեաց։ Տէր աստուած ողորմեա եւ Թորոսի միայնակեցին, սր զնիւթս կոկեաց, քողէ տէր եւ զյանցանս նոցին, որք զաստուած ողորմին ասէն։ Բայց գրեցաւ առ ի սուրբ ուխտս Փոս կոչեցեալ, ի թագաւորութեանս Հայոց Զորբորդ Լեւոնի, եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ, եւ ի թուականիս Հայոց ՁՀՀ. (1329)։**

280.

ՇԱՐԱԿԱՆՈՑ

Վիեն. 180. Տաշ. 8ուց. էջ 497 (տես նաև 1647 թ.)

Գրիչ՝ Յովաննէս Կարնեցի

ա

328ա Գրեցաւ շարակնոցս ի թվ. ՁՀՀ. (1329), եւ ծագկեցաւ եւ կազմեցաւ ձեռամբ բազմամեղ և սուտանուն աբեղայի Յովաննէս մականուն

---

* Ըստ այմ, ձեռագրի գրութիւնը սկսել է մայիսի 12-ին (կամ 17-ին) և ավարտել սեպտեմբերի 14-ին, ուստի շուրջ 120 օրում ընդօրինակել է 334 թերթ, միջին հաշվով օրը 3 թերթ։

** Սուրբ հիշատակարանի հավաստի ընդօրինակությունը գտնվում է նաև Փիլոսլամյանի ժողովածուի մեջ (Երևան 6273, էջ 135)։

Կարեւոր կոչեցեալ, ի ինդրոյ սրբասէր եղբաւր մերոյ Ստեփաննոս կլուխնաւորի։ Աղաչեմ զպատահուղքդ յիշել զտառացաւդս եւ զուշխաաւդս հանդերձ ծնողովք մի աչր ողորմայիւ եւ ասաուած զձեզ յիշէ. եւ անարհեստութեանն եւ սխալանաց մի մեղադրէք, զի ի բազում ամբոխի միջի կայաք, որ անբաւ էր, եւս առաւել աւաարութիւնս։

բ

303բ Ո՛վ եղբայր աչր Յուսիկ,աղաչեմ զքեզ, խիստ շտապով էի, մի մեղ ղնել, այլ յաղաւթս յիշեա։

281.

Ճ Ա Շ Ո Յ

Երեան 6301 (տես նաև 1318 թ.)

251ա Յիշեսջիք և զհողև[որ] զմայրն՝ զԳոճար խաթուն, և զԱզատ զսարգաւաճէն, զՈնաճ՝ և զՍուրուխ խաթուն, աղաչեմ զամենիսեն շնորհեցէք թողութիւն մեղաց, և որք յիշէք յիշել լիցիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, [որ է] աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ամիր Շահն ի թվ. ՉՀՐ. (1329) փոխեցաւ յաշխարհէս և սուգ մեծ եթող սիրելեց իւրոց, Քրիստոս աստուած, յորժամ յաթոռ փառաց նստի, լսել արասցէ, զձայն երանաւետ կոչման արքայութեան երկնից, ամէն։

282.

Մ Ա Շ Տ Ո Ց

Հալէպ. սբ. Մեկ. 100, Մխբմ. Ցուց. Ա. 170

Գրիչ՝ Յովհաննէս

408 ...Շնորհիւ տեառն... կատարեցի զսակաւ գրկունքս ձեռամբ ա-նարժանի եւ ախմար գրչի Յովհաննէս իրիցու, ի հայրապետութեան տեառն Յակովբա, ե ի թագաւորութեան Լևոնի, ե յասպարապետու-թեանն որգւոյ Սմբատա՝ Լեռնի՝ որբասիրի եւ բարեպաշտի. Արգ, աղա-չեմք զամենեսեան, որք ընթեռնայք կամ աւրինակէք, յիշեսջիք զիս՝ բազմամեղս զՅովաննէս երէցս՝ զախմար գրիչս ի սուրբ եւ ի մաքրա-փայլեալ յաղաւթս եւ՝ ե մեղսաքաւիչ պատարագս ձեր, և զծնողսն իմ զհանգուցեալսն ի Քրիստոս, եւ զաստուածասէրսն որդիսն իմ զպարգև-եալն իմ ի տեառնէ՝ զՍմբատն՝ զգերի վտրեալն, զոր եւ ազատես-ցէ զնա Քրիստոս աստուած իւր հայրախնամ վառաւքն, եւ զՅովհան-նէս սարկաւագն զսրբասէրն ե զժիրն | | |

283.

Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 47. Ս. Տ.-Ավետիսյան, Ցուցակ, էջ 150—151
(տես նաև 1606 թ.)

Գրիչ՝ Կիրակոս Օզնկայեցի
վայր՝ Ջուղա անապատ

ա

270բ-282բ ...Արգ, այսպիսի պատուական և անգին մարգարտի բաղձա-յեալ իրրև զիմաստուն վաճառականն մեծազարմ իշխանս Վ ե գ ե ն՝ մականուն կոչեցեալ Վրթանէս, ոյ արհամարհեաց զսնոտի փափկու-թիւն կենցաղոյս՝ խարազանազգեստ եղեալ կրաւնաւորեցաւ, և շինեաց եկեղեցիք մեծապայծառ, հանգերձ եղբարբն իւրով Պիչար իշխանաւն յանուն սուրբ Աստուածածնին. և շինեալ եկեղեցին Դեղձանավանից՝ սալեցին, և զժամանատունն գեղ[եց]կապէս յաւրինեցին, և ժողովեալ բազում կրաւնաւորս, և զցայգ և զցերեկ արտասուաթոր պաղատա-նաւք յաստուծոյ զՅողութիւն յանցանաց և զխաղաղութիւն ամենայն աշխարհի [խնդրէն]։

Արդ, ընդ այլ բարեացն, որ արար և առնէ բազում տեննչանաւք և եռանդնաշարժ բաղձանաւք, ետ դրել և զաւետաբեր կտակս ի վայելումն անձին իւրոյ և եղբարց իւրոց Ագոտային և Պիչարին՝ յաղթող և քաջ իշխանացն բարեսիրաց։

Արդ, դրեցաւ սա ի Թուականութեանս հայկազեան տումարիս ՉՀԹ.(1330). ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և ի Թագաւորութեան Հայոց Լեւոնի, և վրաց Գեորգայ, և ի դանութեան Պաւոայիտիանապատիս Ջղաւեա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և աստուածակիր սուրբ Նշանացս։ Ջեռամբ ամենամեղ և անարժան ծառայի աստուծոյ Կիրակոսի՝ պիտականուն վարդապետի Եզնկայեցւոյ, նշղեհի։

Արդ, աղաչեմ զամենեսեան՝ զպատահողսդ այսմ սոփերի, զվերոյասացեալս Վեգեն ճգնաւոր և զեղբայրն իւր զպարոն Պիչար յիշեցէք ի Քրիստոս, որ յոյժ փափաքմամբ դրել ետուն զաւետարանս և ծաղկել ոսկով, և կազմեցին ոսկետուփ արծաթապատ, և ակամբք և ընդելուզեալ մարգարտով զարդարեցին։ Յիշեցէք և զդեռաբողբոջ մանուկն զՀաոաճ զորդի Իչարին, և զԱլատայն, և զՎարդայն՝ որդի նորա, և զքոյր պարոնացս՝ զխորիշահ, և զգլուխ նորա՝ զպարոն Ջհսարն՝ ամենայն զաւակաւք, և զմիւս քոյրն՝ զՎախախ՝ ամենայն ընտանեաւք, և զմայր պարոնացս՝ զԴաւփ, և զԹաւղթանի՝ զուգակից Պիչարին։ Այլ և զծնաւղսն Վեգենա՝ զպարոն Վարդան և զՄահաճ յիշել աղաչեմ՝ զվոխեալսն առ Քրիստոս, և զհանիկն՝ զՎախախ, զսնուցանաւղ պարոնացս և զյոյժ երախտաւոր՝ զմայր Վարդանա և զհանիկ սոցայ, որ ամենայն բարեպաշտութեամբ զարզարեալ էր։

Աղաչեմ խոշորութեան գրոյս և սխալանաց Թողութիւն շնորհել և զսխալն ուղղել սիրով, զի մեք չէաք հմուտ կատարեալ քերթողական արհեստի գրչութեան, այլ յոյժ սիրով բռնադատեալ եղէ յաստուածասէր առնէս Վեգենա։

Եւ վերջոտին աղաչեմ յիշել զվերոյգրեալսն, և զմեզ՝ ծնողաւք, և վարդապետաւք, և եղբարբք, և զնախնեաւք, որպէսզի մեք՝ յիշեցեալքս և յիշողքս, արժանի եղիցուք ողորմութեամբն Քրիստոսի և արքայութեան նորա, և նմայ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Յիշել աղաչեմ զյոյժ հաւատարիմ պաշտաւնեա միայնակեցիս զՅովաննէս, և զզաւակս նորա, և զմիւս սպասաւորն՝ զՆշրայրատեղն, և զՍնորհէ՝ եղբայր նորա, և զՄոլոշ տնտեսն, որ բազում բարութիւնս արարին մեզ նման աստուածասէր պարոնի իւրեանց։ Յիշել աղաչեմ և զաշակերտն իմ զՄկրտիչ՝ զպաստաւորն իմ և զհետող (՞) մագաղաթիս և զծնողսն իւր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

Յիշել աղաչեմ և զԳեորգ կրաւնաւոր, որ աւգնեաց յուղղելն, և նշղեհակից մեզ էր և ցաւակից յամենայնի, և աստուած զյիշողսդ յիշէ և որ զամէնն ասէ, ամէն։

բ

138ա Զվեցեն ճգնաւոր, ստացաւզ աւետաբեր կտակիս և զԿիրակոս փցուն գրիչ յիշեցէք ի Քրիստոս, և Քրիստոս զձեզ· յիշէ, ամէն։*

284.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, Ս. Ստեփաննոս եկեղեցի. Ս. Տ.—Ավետիսյան, Ցուցակ, էջ 157 (տես նաև 1442 Թ·)

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ գիւղ Լօճգշեն

284բ ...Ըստ նմին աւրինակի սրբասէր և իմաստուն ճոխ տանուտերս այս Կոստանդ և հաւատարիմ· կենակիցն իւր Աւագ տիկինն միշտ հանապազ բորբոքէին ի սէր սուրբ և տիեզերաքարոզ քառավտակ սուրբ աւետաբանիս. և ըստ բնաւոր բարուց բարւոյն, ալորժական մտաւք և մեծաւ տենչմամբ, ի խալալ արդեանց ստացան զսա անջնջելի արձան...և ամէնաւրհնեալ բարի զաւակաց սոցին՝ որգոյն Մովհաննիսի, և զսոերն Խաւանդ խաթունի...

Եւ արդ, ես՝ յոչնամեզս և փցուիս ի գրչաց անպիտան հայհոյսւր սուտ կրաւնտւոր, տեսեալ զափաւ և զսէր սոցա, յանձն առեալ ըստ իմում կարի, յանգ հանեալ կատարեցի զվնդիր սոցա։ Շնորհաւք և ողորմութեամբն աստուծոյ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՉՀԹ. (1330) ամի, ի գիւղս, որ կոչի Լօճգշեն**, ընդ հովանեաւ սուրբ Յովանիսի, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի յաշխարհակալութեան Բուպիտի, ի զառն և ի վշտաբեր ժամանակի, որ հարկ կու տանք վասն Յիսուսի, որ երբ նստի տէրն յատենի, նա զհա[յր]կատուքն պսակի։

Արգ, աղաչեմ զամենեսեան սիրովն աստուծոյ, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ ընթեռնելով, յիշեցէք ի Քրիստոս զպարոն Կոստանդ, և զհոգևոր մայր մեր զԱւագ, և զորդեական իւրեանց՝ զՈվաննէսն և զԽաւանդ։ Յարձեալ յիշեցէք աղաչեմ...զպարոն Հագրպետ, զմեր հոգևոր մայրն՝ զկենակիցն սորին, հանդերձ ծաղկեալ զաւակաւքն իւրեանց, որ· մեզ սպասաւորեցին ի դրել աւետաբանիս, զմեզ կերակրեցին, զմեզ ծառայեցին, զմեզ լուացին, և զմեզ թափեցին յայս յաւտաբութիւնս։

Յարձեալ աղաչեմ յիշել զիս՝ մեղապարտ գրիչս, և զիմ ծնողսն, և զեղբարսն, և զամենայն ազգատոհմսն՝ զկենդանիս և զհանգուցեալս ի Քրիստոս, և որք ի նիւթ թխթիս աշխատեցան։

---

* Ձեռագրի 283ա—287ա էջերի վրա գտնվում է «Գեղամայ երկրի տէր և իշխան» Մելիք Շահնազարի ընդարձակ և պատմական մեծ արժեք ներկայացնող հիշատակարանը, 1608 թվականից։

**Ձեռագրի նկարագրության բաժնում «տեղի գրութեան» հարցի դիմաց տեղանունը գրված է «Լանկչէն» ձևով։

285.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ն. Ջուղա, Ս. Կաթողիկեայ վանք (Ջաբսուքաղ), Ս. Ծնբ-Ավետիսյան, Ծուցակ, էջ 166-167։

Գրիչ՝ Ռստակես
վայր՝ Արտազ գաւառ, սուրբ Թադէոսի վանք

ա

294բ Եւ արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայկազեան տումարի ՉՀԹ. (1330) յա[մ]սեանն յուլիս, ի գաւառս, որ կոչի Արտազ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Թադէոսի և աստուածամուխ սուրբ գեղարդեանս, ի թագաւորութեան Հայոց Լևոնի, և ի հայրապետութեան տեառն Յակոբայ, յառաջնորդութեան այսմ նահանգի տեառն Զաքարիայի և տէր Ծիրացու՝ հզի և սրբասիրի, զոր տէր Ցիսուս անսասան պահեսցէ զսոսա ամենայն համացեղիւք և ամենայն հնազանդելովք* իւրեանց, ամէն։

Այլ ես՝ Մարգարէ քահանայ, ստացա զաստուածաբարբառ և զաւետաբեր սուրբ աւետարանս ի հալալ արդեանց մերոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ Ազասուշաւին, և հաւրեղբաւրն իմոյ Հազարին, և մաւրն իմոյ Ղումարկանն, և հարազատ եղբարցն իմոց Շահարպեկին, և պարոն Սարգսին, և ամենայն զաւակաց մերոց, այլև պարծանաց հաւրեղբաւրորդեացն իմոց՝ Ամիրասլանին և Ամիրշահին, և նախնեաց և աստուածատուր զաւակաց նոցա, ամէն։

Եւ արդ, ես՝ մեղապարտ գրիչ Ռստակես, յերկիր անկեալ աղաչեմ ղաստս լուսեբամ սուրբ քահանայից և սարկաւագաց, ի որք հանդիպիք յայսմ տէրունական հրամանիս կարդալով, կամ լսելով, կամ աւրինակելով [յիշեսջիք] զվերոյգրեալս ի սմա...և զհոգևոր հայրն իմ՝ զպատուական քահանայն զՆիկոս, և զամուսինն իւր զԱմենտիկին, և զամենայն զաւակս նոցա։ Յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զպարոն Էլթանն և զզաւակս նորա, յիշեսջիք ի տէր զպատուական և զերևելի տանուտէրքն՝ զՆլպասան, և զՄելիքշահ, և զայլ մեծ ու փոքր տանուտէրք։ Զպատուելի և զսրբասէր քահանայքն՝ զԿարապետ, և զՑովաննես, զՋատենց (?), և զՆամուել յաղաւթս յիշեցէք, ընդ նոսին յիշեցէք ի Քրիստոս զՑովհաննես քահանայն և զՅակոբոս, որ զաւրինակն ետուն...։

Ծաղկող՝ Ցովսեփ

բ

Յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զպարտապանս տեառն իմում բիւր քանքարաց՝ զՑովսեփ ծագլող սուրբ աւետարանիս։

---

* Ընդօրինակութեան մէջ գրված է՝ հանհնազանդելովք, փոխանակ՝ համ. (ամենայն) հնազանդելովք-ի։

286.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վիեննա. 184 (1885), 8ուց. հա. Ա էջ 769–770

Գրիչ՝ Մարտիրոս

263բ Փառք... որ արժանի արար զմեզուցե[ա]լ ծառայս հասանել ի վերջին գիծս յամի Ջ. երորդի Հ. երորդի Թ. երորդի (1330) հայկազեան ոեոի [տոմարի]...։

Արդ, այս երանելի և բարեհոգի կրաւնաւորս Քառունս ցանկացող եղե[ա]լ սուրբ աւետարանիս, և ետ գրել զսա յարդար վաստակոց իւրոց՝ անձին իւրոյ ճեմարան սրբութեան և վարժարան մաքրութեան, զանձ պատուական, և մարգարիտ գեղեցիկ, և յիշատակ յաւիտենական։

Արդ, երեսասող մաղթանս արկանելով առաջի, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք զսուրբ աւետարանս կամ աւրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս զսրբասէր միայնակեցն Քառունս, և զծնողսն իւր զԱլեքսս՝ զիսոխեցե[ա]լն ի Քրիստոս, և զմայրն իւր՝ զՄինայս, զաւակն իւր՝ Ալեքսս, զհոգեւոր զաւակն իւր զՍարգիսս, և զնորին զաւակն զՍտեփանոսն, և զնորին զաւակն զՇատին, և զմայր նորին Ատրան, զհաւրեղբայրս իւր զԵրաստոսն; և զկենակիցն իւր զՔեմիրն, և զզաւակ իւր՝ զՆմինայ, և զպապն իւրեանց զՔաւուն, և զմեծ Սարգիսն, զՊարոնիկն, և զԼումեկն, և զխաչերեսն, զԱստուրն, և զՆորշահն, և զայլ ամենայն արե[ա]ն մերձաւորս։

Արդ, զարձե[ա]լ, կրկին յերես անկեալ աղաչեմ զամենեսե[ա]ն, ո՞վ ընթերցողք սուրբ աւետարանիս, յիշեսջիք ի Քրիստոս զգրող սուրբ աւետարանիս՝ զծակոր քահան[այն], որ նահատակեցաւ յանաւրինաց եւ ոչ ժամանեաց յաւարտ գրոցս։

Դարձեալ, կրկին աղաչեմ սրտառուչ մաղթանաւք զամենեսեան՝ յիշեսջիք ի Քրիստոս զմեզուցե[ա]լ և զանարժան յետին գրիչ Մարտիրոս սուտանուն, որ գրեցի յիշատակարան, և զճապաղ ցանկ, և զգլխագիր գրոյս։ Ծիշեսջիք և զծնող..., և զաւակն Մանուէլ քահանայն և զմայր իւր զՄամախաթուն, և զՍտեփանոս, և զՍիրան...։

287.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Նբհան 7125

Գրիչ՝ Սարգիս

ա

Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուսուն ի թվակա-
262ա նիս Հայոց ՉՀԹ. (1330)-ն, || ձեռամբ Սարգսի նըւաստ և անարժան քահանայի, ի խնդրո պատուական և երջանիկ կուսակրաւն քահանա-

յի Տիրացուի, ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ համաւրէն ազգականաց իւրոց, ի թագաւորութեանն Լեռնի Հայոց, որդոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ
262բ կամ աւրինակ գնելով, յիշեցէք ի մեղաց թող || ութիւն զպատուական քահանային զՏիրացուն, և զծնողն իւր, և զամենայն ազգականքն իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն ի Քրիստոս. նաև զեղկելի զրաւղ սորին՝ ծագկաւդ և ոսկաւդ՝ զՍարգիս նըւաստ քահանայ, և զծնողն իմ, և զամենայն ազգայինսն իմ՝ զկենդանիս և զընացեալսն առ Քրիստոս, աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, և աստուած, որ առատն է ի տուրս ողորմութեան իւրոյ, տացէ ձեզ ընդ միոյն զհաւրիւրապատիկն, ամէն, ամէն և հազար, ամէն։

բ

180բ ԶՍարգիս անարժան քահանայ, և զհայրն իմ Գրիգոր քահանայ, և զմայրն իմ Հեղինի, և զքոյրն իմ՝ զընացեալսն առ Քրիստոս, աղաչեմ յիշել ի սուրբ աղաւթս ձեր, և որ յիշէ յիշեալ լիցի, ամէն։

288.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն.

Երևան 2929

Գրիչ՝ Սահփանոս

324ա ...Բարեսէր և իմաստուն պարոն Յովաննէս և բարեպաշտ կենակիցն իւր Յուստեանճ մեծաւ տենչմամբ բորբոքէին ի սէր աստուածային զանձուցն, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցոյ, և ի վայելումն մանկանց առաքաստի, և յիշատակ հոգւոյ իւրոյ՝ Յովաննիսի և Յուստիանճի, և ծնողաց իւրեանց, և ամենայն ազգականաց իւրեանց։

Եւ ես՝ յոգնամեզս և փցուն ի գրչաց Սահփանոս մեղապարտ երէցս, տեսեալ զփափագ և զսէր սոցա, յանձն առեալ ըստ իմում կարի, յանդ հանեալ կատարեցի շնորհաւք և ողորմութեամբն աստուծոյ, յամի ՉՀԹ. (1330) ի թուաբերութեանս Հայկազեան ազգի։

324բ ...Եւ արդ, ես՝ Սահփանոս մեղապարտ գծողս, աղաչեմ յիշել և զծնողն իմ՝ զՊետրոս քահանայ, և զմայրն իմ՝ զՋաւահար, և զամենայն ազգակիցս իմ յիշել ի Քրիստոս յոյն ամենեցուն։

289.

ԱԽԵՏԱՐԱՆ

Ձեռգ. 6273, էջ 136, վան, Տիրամայր եկեղեցի (տես նաև 1368 թ.)

Գրիչ՝ Բարսեղ
վայր՝ Սուլտանիայ

...[Ճիշեցեք] եւ զիս՝ զԲարսեղ երէցս, որ շնորհօք տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զհոգեւարզրոջ սուրբ աւետարանս, ի Սուլտանիայ մեծահռչակ քաղաքս, և ծնողաց իւրոց, և ինձ, և իմոցն, ի թուականութեանս հայոց ՉՀԹ. (1330)։

290.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Մրբատեանց, ընդ.ակ, էջ 151 (Գանձակի Ոսկանապատ գյուղի եկեղեցի)

Ստացող՝ Ստեփաննոս
վայր՝ Սիւնիք

... Աւետարանս ի ձեռն ուրուք երէց յաշխարհէն Հայոց, զրեալ ոսկհղաւծ որակաւք ի Դրազարկն, ձեռամբ Թորոս փիլիսոփայի, զոր տեսեալ տեառն Ստեփաննոսի՝ հզաւր և իմաստուն զիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Նոայեայ տիեզերաքարող լուսաւորչին, որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպառազէն մենամարտիկ զինաւորի Զայալին, Թոռն մեծ աթաբակին Հայոց և Վրաց վեհ Տարսայիճին, տէր և վերատեսուչ զահերէց և գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց Տաթևոյ և Նորավանից և Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց, ուրախ եղե իրրև ընծայ ի վերուստ առաքեալ...:

Եւ արդ, ես՝ նուաստ եղկելի Թշուառացեալս Ստեփաննոս, ...աղաչեմ զդասդ սրբազանիցս զպատահողսդ տիեզերաքարող աւետարանիս, սրտի մտաւք յիշել զգեղաղէշ և դարեդակնափայլ եղբայրն իմ՝ զպարոն Շահնշահ, առաջի զենմանն Քրիստոսի...:

*Նաև յիշել զծնողսն իմ՝ զհայրն իմ զՋալալն և զմայրն իմ զամենաւրհնեալ Գոնցայն, և յերկար կենդանութիւն խնդրել երկուց եղբարց իմոց՝ պարոն Էլիկումին և Աղբուդայիճ: Եղև մեղ այս բաւթ տրտմադին ի տաւնի զատկին, ի ՉՉ. Թվ. (1341):**

291

Հ Ա Յ Ր Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 4083

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Ծառուտիձոր գաւառ, Խումիք վանք

238ա *Փառք... որ ետ նուաստ և փցուն գրչիս հասանել ի վերջ գրոցս, և ինքն աւրհնեալ յաւիտեանս:*

---

* *Հրատարակիչը հիշատակարանը լուսյ է ընծայել համառոտած, ուստի մութն է ասում, թե հիշատակագիրն ինչ է ակնարկում, երբ գրում է Եղև մեղ այս բաւթ տըրտմագին:*

Արդ, դրեցաւ հայր մաշտոցս ի գաւառիս, որ կոչի Սառուտիճոր ի վանս, որ կոչի Խումիր, հանդէպ Ծմակավանիցս։

Արգ, ա[յսմ] քառահոս գետոց և աստուածային բարբառոյ <և> եռավաւրեայ բդճիւ ցանկացեալ մի ոմն ի քահանայից Վարդան անուն, շարժեալ ի հողոյն սրբոյ, ի թվական Հայոց ՉՉ. (1331), ի ղ[ան]ու-
235բ թեան Ռուսաիտիցն*, և ի թագաւորու || թեանն Հայոց Լևոնի, և ի թագաւորութիւն Վրաց Դաւրգ., ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորոյ, և ի հայրապետութեանն Աղուանից տեառն Զաքարիայ, յեպիսկոպոսութեան Այրարատեանց գաւառիս տէր Գրիգորոյ, յիշխանութեանն պարոնաց պարոնին Շեխ Հասանայ, և ի մերոց՝ բարեհանուն և քրիստոսասէր պարոնացս, որ ի մեծ սպարապետէն Հայոց սուրբ նահատակին Վարդանայ շառավիղէն յառաջ եկեալ, ի տիրասէր և յաստուածասէր ազգէն Մամիկոնեանց, որդիքն պարոն Վարհամա՝ տէր Ներսես, Արդուին, և Բահլն, և հանգուցեալ ի Քրիստոս եղբայր պարոնացս Սարգիս, և մայր սոցա Դուտիկա, և քոյր սոցա՝ Թամքէրին, և աստուածատուր զաւակի իւրոյ Սելիբին, և աղատածին կենակիցք սոցա Էսուգանն՝ քոյր պարոն-*, և որդոյ սորա քրիստոսատուր
236ա Զանկիկին, և մեւս հարս || ինն՝ Խորիջայի, [որդւոյ իւրոյ ղՀամազասպա]***, քոյր տէր Սարգսի Խաչինոյ տեառն Տաւիեանց, ղի աստուած զսոսա ընդ երկայն աւուրս պահեսցէ խաղաղութեամբ և յաղթող ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի։

Այլ և Վարդան քահանայս, զոր յառաջն յիշեցաք՝ առաջնորդ տեղւոյս, որ կոչի Ջերմառուաց անապատ, և մականուն Խումիք, խորհուրդս բարիս ի հոգին բերել և լուեալ զբարբառս**** զայս, որ ասէ՝ ևրանի, որ ունիցի զաւակ ի Սիոն,... ետ դրել զհայր մաշտոցս ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ հաւր իւրոյ
236բ Մխիթար[այ], և մաւր իւրոյ Ռ || ածերին, և եղբարց իւրոց՝ Վարդանշահին, Հասկանն, Սահնին, և Սուսլին, և քերց իւրոց՝ յիշատակ անչնջելի աստի կենացս և առաջնորդ կենացն յաւիտենական։

Այլ ես, յետինս ի ոարկաւագաց և առաջինս ի մեղաւորաց՝ Մկրտիչ սուտանուն սարկաւագ, որ միայն զձևս ունիմ և ոչ զգործ սարկաւագի, պարտական տեառն բիւր քանքարոյ՝ ղրող և կազմող մաշտոցիս, յերես անկեալ աղաչեմ զամենիսեան, որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի առնէք զՎարդան քահանայ՝ զտացողս սորա, և զՄկրտիչ՝ ծրղող, և զծնաւղն իմ, և զերաքատաւորս՝ զմարմնաւորսն և զհոգևորսն, զնուցիչ վարդապետն մեր զՇմաւոն, որ բազում ամաց աշխատեցաւ, և սնոյց զիս, և հասոյց ի չափ սարկաւագութեան, որ բան և արուեստ՝ զուսումն քահանայութեան և արուեստ

---

* Բնագրում՝ «Մուսաիտինց»։

** Անվան տեղը բաց է թողնված։

*** Ուղղագիծ փակագծերում բերված անունը գրված է տողի վերևում, մանր տառերով։

**** Բնագրում՝ «զբարբրբառոս»։

237ա զբազբութիւնո ուսոյց. յաշխարհի տանջանացս || և ցաւոցս ոչ ինչ
չեմ դիտացել, և յայս ժամանակիս, որ ծերացաւ և աչքն պակասեցաւ,
և ես ի չափ հասա, որ նմա աշխատանացն փոխարէն պէտք էր առ-
նել, բանսարկուն ընթացաւ և հնայն զիս ի նմանէ, զի աստուածն,
որ առատն է ի տուրս բարեաց, հատուսցէ նոցա միոյն հազարապա-
տիկ՝ աստ և ի հանդերձեալն։

Եւ զեղբայրն իմ զՈվաննէս, և զմայրն իմ զՇնոհոր տիկին, և
հայր իմ, որ ոչ զանունն գիտեմ, ոչ զինքն տեսել եմ, յիշեցէք,
աղաչեմ։

Ջմաճակալք տեղւոյս, ղոնտես, զհովիւ, զաշխատաւորքս հասա-
րակաց՝ հանդուցեալ[ք]ն ի Քրիստոս և զկենդանիքս, որք բազում
և որ սակաւ աշխատեալ են յայսմ քաւարանիս, տացէ նոցա տէր
աստուած հարիւրապատիկ և հազարապատիկ աստ և ի հանդերձեալն,
ցաւզ կենաց իջցէ յոսկերս հանդուցելոցս, որք յայսմ [տեղւ]ոջս հան-
237բ *գուցեալ են՝ [առ]աջի սուրբ Գրիդորի, և բուսուսցէ յա | | | և գըն-*
տես տեղոյս՝ զՇրեմ[ի]ա, որ փաքր հասակէ ի վէր տնտես կացել ի
վանքս, յիշել աղաչեմ։

Ցիշեցէք և միաբանք վանից՝ Մեսրոբ քահանայ, զԻռնիհէ քա-
հանայ, յիշեցէք զԱւետիս, որ բազում աշխատեցաւ, գնաց յՆզնեցիս՝
քարտիսի ու վանեըէց ե[կե]ց, ի վերա իմ կերակրոյ համար շատ նե-
ղացաւ հեմ | | | որ պրծաւ։ Ցիշեցէք զՍիմե[ոն Ծ]մակավանից հայրն,
որ զաւրինակն շնորհեաց։

Ցիշեցէք և զհոգեւոր մայրն իմ զԱրբայն և զսիրական եղբայր
մեր զՆզեկիէ, որ անբաւ սիրովն սիրեցին զմեզ և կամեցան զիս, և
բազում աշխատեցան ի վերա իմ։ Ցիշեցէք զաշակերտ իմ զԳնդիկ,
որ զքարտեզս կոկեաց։ Որք կարդայք, կամ աւրինակէք, կամ գաղա-
փար առնուք, յերկնաբաց յաղաւթս ձեր յիշեցէք զՎարդան քահանա,
*որ ի բազում աշխատանաց և ի գառն | | | **

292

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 4217 (տես նաև 1650 թ.)

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Բգնունեաց գաւառ, գիւղ Անդէք

270ա ... *Ուստի և տեսեալ զսոքայս անճառ փրկագործութեան խորհուրդ ոմն*
քահանայ անուն Սարգիս, որդի սուրբ և մաքուր քահանային Յոհան-
նէսիի, որ բարի գործովք հանգուցեալ է ի Քրիստոս, նա ստացաւ
զսուրբ աւետարանս յիշատակ իւր, և կենակցին իւրոյ, և ծնաւղաց իւ-

* *Ձեռագրից թերթ է ընկել, հիշատակարանը ՃԱՄ է թերթ, 237 թերթի եզրը մաշ-*
ված լինելու պատճառով մի քանի բառ կամ տառ ՃԱՄում են անընթեռնելի, և կամ կոր-
ցացվում են երկբայարար, վերջիններս տվել ենք ուղղագիծ փակագծերում։

րոց՝ Սուքիասին և Անդր[է]ասին, զոր վայել տացէ տէր աստուած խաղաղական կենաւք, ամէն։

271ա ... Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Յովաննէսի՝ ‖ անիմաստ և տխմար գրչի. ե իմ, անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարե[ա]լ, այլ ըստ կարի մեբում, զոր պարզեաց մեզ մարզասէր հոգին, բազում աշխատասիրեալ իմ ի սմա, գրեցի անարժան ձեռաւք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ՝ կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ, ի մեծ թուիս, ի յեզանակտն շրջագայութեան արեգական ստորիչիւք երկնաչու ճանապարհաւ յերկինէ յերկիր հայելով, ըստ արարչութեանցն չափեալ յելանելոյն Ադամա ի դրախտէն՝ ՉՈ. ե ՉՃ. և Ա. ամ (6601), ըստ եւթանասնից, որում մեք վարիմք. և է ի մարդեղութենէ բանին աստուծոյ ժամանակ էին և փրկչին Ցիսուսի Քրիստոսի ամս ՌՃԼ. (1330), իսկ ըստ թուոյ Յոսրովային Ցաբեթեանս տումարի ՉՁ. (1331), և էր մեծ շրջանին ՄԽԵ. (245)։ Ի յառաջնորդութիւն տէր Առտուածատրոյ, և յաշխարհակալութեան մեծ ինքնակալին Ռուոյիտ խանին, որ սիրէ բազում ազգաց, ունելով ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն Կասրից, և մինչև ի գետն Ջահուն կոչեցեալ, ի կաթողիկոսութեան հա[յ]կազանց սեռի տեառն Յակովբայ, և ի թագաւորութեան Լևոնի նստեալ ի գահն Կիլիկեցւոց, զոր տէր աստուած պահեսցէ անասասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, զի յիշել զանունս նոցա սասանել սաքրին և ոչ ևս երեին թշնամիք ճըշմարտութեանն։

Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառիս Բզնունեաց, ի գեղս ատ ափն ծովու, որ կոչի Աղեք, ընդ հովանեաւ սրբոյ Կարապետին, ի վայելումն Սուքիասին և Անդր[է]ասին։

271բ Արդ, որք ճաշակէք յաստուածային ‖ բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա՝ վայելողք կամ ընթերցաւղք, յիշեսջիք աղաւթիւք զսաացաւղ սուրբ աւետարանիս՝ զՄարգիս քահանայ, և զծնաւղն իւր, և զկենակից նորա, և զորդիսն իւր՝ զՍուքիասն և զԱնդրէասն, և զամենայն արեան մերձաւորսն ի տէր Ցիսուս, ընդ նոսին զանպիտան գրիչ զՅովաննէս, և զիմսն զամենայն, և որք զմեզ յիշէք սրտի մտաւք յիշեալ լիջիք յառատ ողորմութենէն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Զտուող աւրինակի զթաքուլ և զհայր նորա զՊարոնշահ յիշման արժանի առնել ի Քրիստոս աղաչեմ։

ՉՄարտիրոս Բաղի որդին յիշեցէք ի Քրիստոս, ուր մեղացն թողութիւն հայցեցէք յաստուածոյ, զի բազում ծախաւք աւգնական եղև։*

* Մարտիրոսի մասին հիշատակութիւնը գրված է կարմիր թանաքով։

293

ՄԱՇՏՈՑ

Բբխտ. թնգ. 30 (Օտ. 2682), կոնբբ. ծուց. էջ 58—60

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Արգելոց մեծաստաց

ա

265բ ... Ցամի Հայկազեան տաւմարի Արեգական տոհմի 22. (1331)-երրորդի, թագաւորութեան Արուսայիտ սուլտանի ազգի Նետողաց, և մերում թագաւորի հայոց ազգի Լևոնի թագաւորի, և Իւրքեի իշխանաց իշխանի, ի հայրապետութիւն տեառն Զաքարիայի, եպիսկոպոսութիւն ստացողի գրոց տէր Վարդանայ, ի մենաստանին, որ կոչի Արգելոց, ընդ հովանեաւ Աստուածածնիս, և սուրբ Նշանիս, և Ծուսկայ որդոյ սուրբ գերեզմանիս, ես՝ Յովաննէս մեղապարտ և տնպիտան ի պիտանիս, հարկեալ յեղբարց, գծագրեցի ղշնորհալից զտառս սրբարար և աստուածահրաշ, ըստ խնդրո և վախճադանաց նորակնքեալ եպիսկոպոսի տէր Վարդանա, ի ժամ հասեալ ծերութեանս, քանզի պատուհանք լուսարանաց պակասեալ և ձեռքս խռպանացեալ դողդոջէր վասն բազում ժամանակաց խափանելոյ ի գործոյս, և ոչ դոյր աւրինակ ըստ պատշաճի։ Բայց աղաչեմ զձեզ ի սէրն աստուծոյ չլինել մեղադիր, զի խանկարեալ էր յիշողականս <ս> ի բաղում հողոց և տըրտմութեանց անպատմելեաց, որ հետս ինձ ի բանսարկուէն, ձեռնտու եղև Քրիստոս, և այսչափ յանգեալ շարագրեցաւ։ Այլ վիճնութեան և սխալանաց և այլայլմանց բանիցս աղաչեմ չլինել մեղադիր...։ Աստուած առաջնորդեաց և գծագրեցի զսայ յաւուրս Իր. (22), լալով և յոգոց հանելով, դի այն, որ կարողն էր ի նշանագրութեան յանկարծաղէպ և յեղակարծ ժամու, ոստեալ ի գրկացն աստուծոյ, անգաւ ի գիրկսն Բէլիարա, արտաքսեալ յեկեղեցւոյ խառնեցաւ՝ որք բնակէին ի վրանս հեդարու...

բ

30ա Ձերից երանեալ, զերջանիկ և զաստուածահաճոյ, զպատուական հայրապետ զտէր Վարդան, և զծնողս իւր՝ զՅակոբ և զԱզբրաց յիշեսջիք..., և Մովսես կր[աւնաւոր]՝ զմտերիմ եղբայր մեր..., ընդ նմին և զմեղապարտ գրիչ զՅոհաննէս և զծնողսն իւր... զի ի ծերացեալ ժամանակս այսչափ յանկեցաւ։ 22. (1331), մեհեկի Իր. (22)։

գ

89բ Ձտէր Վարդ[ան] և գհայրն նորին զՅակոբ, որ հաւատարիմ էր մենաստանիս, որ կոչի Արգելոց, և փոխեցաւ ի Քրիստոս ի Թուականիս Հայոց ՉՀԹ.(1330)։...Ընդ նմին և զկենակիցն իւր՝ զԱզբրաց ընդ եղբերից կանա[ն]ցն դասեցէ և ընդ այլ սրբոց կուսանացն։

Դ

103ա Ջստացող հողիալից տառիս՝ զարհիեպիսկոպոս զտէր Վարդան յիշեսջիք, ով կարդացողք և աւրինակողք, զի... ետ դրել զսա... ՉՉ. (1331), ի մեհեկի Լ. (30)։

Հետ. ստացող՝ Հիքում

Ե

37ա Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացաւդ գրոց զաստուածասէր տանուտէր զՀիքումն և զիուր հայրն զՆզոյպարոնն, կենակիցն իւր՝ զԱուռն և զիուր հայր, ազատորդիքն՝ զԹաւրոսն և զՎարդն և զԿովճայն, և զհարսներն իւր՝ Մանուշակն և զԱզլայն, և զմայր իւր զՄարուքն, և զորդիքն Թորոսիկ՝ զՍուլթայն, և զԱկօրն, և զՍարգիսն, և Խաչուկն, և զԽազար, և զԽսկատարն, և զտուստր իւր՝ զՄարգրիտն, և զԿօկոնիկն սրդիքն, և զՄազխասուտն, և զՈւսուքն, և զդուստրն իւր՝ Հատիայիկն, և ամենայն արեան մերձաւորս իւր...։

294

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 5527

Գրիչ՝ Վարդան

վայր՝ Պաւղոսախի դաշտ. գիւղ՝ Աղպիւռար

Փառք... որ զաւրացոյց զտկարութիւնս մեր հասանիլ ի յաւարտուն սուրբ աւետարանիս։

Արդ, աւարտեցաւ քրիստոսահիմն և առաքելախաւս սուրբ հողոյն Քրիստի յառաքեալսն չորեք գետոյն նման ոռոգանել զա || մենայն հաւատացեալ ժողովու[ր]դս, և ի պայծառութիւն մանկանց սուրբ Սիոնի, և ի վայելուչն քրիստոսապսակեալ և երջանիկ հայրապետաց և քահանայից և սարկաւագաց. և զաւակիս մեր Իքնատոսիս, որ եղև ի Թվականիս Հայոց ՉԿԸ. (1317), որ յիւր անուն եմ գրել զսուրբ աւետարանս. վայելեսցէ զերկար ժամանակս՝ զաստիս և զնանդերձեալն, առաքինի վարուք և աստուածահաճոյ կամուք։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք զՎարդան քահանայ, և զհայրն իմ՝ զՍիմէոն քահանայ, և զմայրն իմ Ընիքա, և զեղբարսն իմ, և զքեռերս իմ՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, և զքարի
231ա ամուսինս* իմ, և զաւակս մեր՝ զԱռաքելն և Միհէ տիկին, որ վազահաս մանկական հ || ասակին փոխեցաւ ի Քրիստոս և խիստ տրտմութիւն եղև մեզ, և զԻքնատոս սարկաւագս յիշեցէք ի Քրիստոս...։

Արդ, գրեցաւ սայ ի դաշտս, որ կոչի Պաւղոսախի, ի դեաւղս, որ

* Բնագրում՝ ամուսնիս։

կոչի Ազպիճար, ընդ հովանեաւ սրբոյ Սարգսի զաւթավարի, ի թվ. հայոց ի ՉԱ. (1331)։ Ողորմութեան և սխալանացս անմեղադիր լերուք, զի չէի հմուտ այսմ գործոյ, զի մեր կարս այս էր, այլ զայս եղեալ ի մտի՝ լաւ է փծուն զ[ը]ել քան ունայն չըչել, լցի զփափաճուճն անձին իմոյ, և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն։

295

ԱԽԵՏԱՐԱՆ

Վտսպ. 90 կալ. ծուց. սյուն. 177—178

Գրիչ՝ Դեոսկորոս
վայր՝ Արճէշ

...[Գրեցաւ] յամի թուաբերութեանս հայոց ՉԱ. (1331), ի հայրապետութեան տեառն Ջամարիայի, ի դառն և ի վշտաբեր ժամանակի, ի քաղաքիս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Յակոբայ, և սուրբ Գրիգորի։

Արդ, ես՝ ունայնս յամենայն բարեաց և տխմարս ի գրչաց Դեոսկորոսս, սկսա և կատարեցի ըստ իմում կարի զսուրբ զաւետարանս, ի խնդրոյ ամենիմաստ և բարիանուն, աստուածասէր և բարեպաշտ առն Դեղկաճ։

... Տէր Յիսուս, ողորմեա քաղցրութեամբ ստացողի սորա Դեղկաճ, և ծնողաց նորա, և Գրիգորուճ, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և ննջեցելոց, ամէն։ Նաև սուտանուն գրչի, անարժան քահանայի Դեոսկորոսի, և իմ ծնողացն՝ Սիմեոն քահանայի և Աւագիսաւր (*), և պատուական եպիսկոպոսին տէր Դանիէլի, որ ուսուցիչ և վարդապետ է մեղ և երախտաւոր։*

296

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 4909

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Փոքր Ուռս

ա

268բ ... Գրեցաւ քառավտակ գետ յորդաբուխ սուրբ աւետարանս ի թուագրութեանս հայոց ՉԱ. (1331), առ ոտս սրբոյ Աստուածածնին Ըննճաճեաց, ի տեղիս, որ կոչի Փոքր Ուռս, ընդ հովանեաւ սրբոցն Շմաննեկի և սուրբ Թագաւորի, ձեռամբ անպիտան ծառայի՝ մեղաւորի

* Ձեռագիրը պատկանել է Լիխ անապատի գրադարանին։ Հիշատակարանը որոշ կրճատումներով արտագրված է նաև Ղ. Փիրղալամյանի ձեռագիր ժողովածուում (Երև. 6273, էջ 138)։

քահանայի, որոյ անուն Աստուածատուր կոչի, հրամանաւ և արդեամբք Յովաննիսի, յիշատակ հոգւոյ | | |

բ

86բ Զստացաւդ սուրբ աւետարանիս զՅովաննես և զկենակիցն իւր զՆորտիկին յիշեցէք ի Քրիստոս, և զմեզաւորս՝ գրիչս՝ զԱստուածատուր երէց, և զՅովաննես քահանայ և զՅակոբ՝ զընկերսն իմ, և աստուած յիշէ ի բարի գյիշաւդն։

297

ՄԱՇՏՈՑ

Bibl. Nation. 56, Մաշտ. 8ուց. էջ 27

Վայր՝ Ապահունեաց գաւառ, գիւղ՝ Թոնրակ

... ի վայելուչն Խաչատուր կրաւնաւորի և եղբաւրորդւոյ իւրոյ Բարդաղիմոսի, ի թվականութեան Հայոց ՉՁ. (1331), և ի հայրապետութեան] տեառն Յակոբայ, և յարհիեպիս[կոպոսութեան] տէր Աստուածատրու, գրեցաւ ի գաւառիս Ապահունեաց, ի գեւղս Թոնրակս, ընդ հովանեաւ սուրբ Աստմոյ,

298

ԱԻՆՏԱՐԱՆ

Երևան 7628 (տես նաև 1514 թ.)

Գրիչ՝ Երեմիայ
վայր՝ Փերուժ ֆռոմֆ

159բ ...Յամի Ի՛Ճ. Լրորդի Չ. երորդի թու. Հայկազեան տոմարի (1331) աւարտադործեալ եղև աստուածախաւս և կենսատու սուրբ աւետարանս Քրիստոսի աստուծոյն մերոյ, զոր ընկալեալ յաստուածալուր վարդապետութենէ երկնաւոր հովուապետին սրբոց աւետարանչացն...։

Զոր իմ՝ մեղապարտ և սուտանուն քահանայի Երեմիայի, ցանկացաւդ եղէ այսմ աստուածախաւս մատենի և ստացա զսա ինձ զանձ անկողոպտելի և փրկանս մեղուցեալ հոգւոյ իմոյ, ընդ նմին և ծնաւդաց իմոց...

Արդ, ես՝ թափուրս ի գործոց բարեաց և լըցեալս ամենայն յանցանաւք, զերեսս ի մայրն եղեալ աղերսահայց մաղթանաւք խնդրեմ յամենեցունց, զի ո ոք և իցէ հանդիպեսցի սմա տեսութեամբ, կամ ընթերցմամբ, սրտի մտաւք և կարեկցաբար, իրրե եղբաւր սիրելոյ, աղաւթից և յիշման արժանի արասցիք և թողութիւն խնդրեսջիք առաջի մեղսաքաւիչ պատարագին։

Բայց արդ, գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ սուտանուն և փցուն և
160ա յետին գրչի Երեմիայի, || ի հոչակավոր մայրաքաղաքս, որ կոչի Փերուժ,

ի հանգստարանս Հայոց, առ դրան սուրբ առաքելոյս և աւետարանչիս սուրբ Մատթէոսիս։

Դարձեալ աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, որ հանդիպիք այսմ սուրբ կտակիս, մեզաց թողութիւն հայցեցէք ի պարզեւողէն հասարակաց Քրիստոսէ աստուածոյ մերոյ գծողի սորա՝ Երեմիայի և ծնողաց իւրոց. և որ լի սրտիւ յիշէ, յիշեալ լիցի ի Քրիստոսէ, Եւ վասն խաչորսութեան կամ սղալանաց չլինել մեզադիր, քանզի ժամանակս ձմեռնային էր, որ դրեցաւ, և գծողս ծերացեալ, և կար մեր այս էր, և որ առատն է յամենայնի՝ պարգեւիչն տիեզերաց Քրիստոս՝ մեզ և ձեզ ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Դարձեալ աղաչեմ զամենեսեան, մեզաց թողութիւն խնդրեցէք հաւր վանիցս Ցակոբ քահանայի, և Վասիլ քահանայի, և այլ միաբանն եղբարցս, և Քրիստոսի աստուածոյ մերոյ փառք յաւիտ[եան]...։*

299

ԱՆՍԻՂՔ ԱՆՏԻՈՔԱՑ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՍՄԲԱՏԱՑ

Վիեն. 439. Տաշ. Ծուց. էջ 900. Մատենադարան Հայկ. թարգմ. էջ 307—308, Փիլդ. 6273, էջ 139. (տես նաև 1375 թ.)

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Կիլիկիա

6մր ... Գրեցաւ անսիղք Անտաքոյն և նամաւտ և կանոնք ընթանրական եկեղեցականաց և աշխարհայնոց և Փռանկաց և ամենայն ազգաց ի մի տեղ հաւաքեալ վասն իրաւանց և դատաստանաց, ի թուականութեանս Հայոց ՉՁ. (1331), ձեռամբ Սարգսի նուաստ և անարժան քահանայի և ոսկուդի։ Որ և հրամայեաց ամենաբարի թագաւորն Հայոց Լեւոն՝ որդի ի Քրիստոս հանգուցեալ թագաւորին Հայոց Աւշնի, վասն գրոցս դատաստանաց, որ դրեցան ի յիշատակ ճնալոյ յաւիտեան։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւկտիք ի ամանէ կամ աւրինակէք յիշեցէք ի բարին Քրիստոս զամենաբարի թագաւորն Հայոց ղ՝Եւսն և ի Քրիստոս հանգուցեալ ծնողսն իւր՝ զսուրբ արքայն Հայոց Աւշին և զՁապել թագուհին իւր, և զամենայն արեան մերձաւորան իւր, ընդ նմին և զգրող և զոսկող այսմ գրոցս, և որ յիշէ՝ Քրիստոս աստուած գինքն յիշէ ամէն։

* Շարունակությունը ոտանավոր է, գրիչը խնդրում է հիշել իրեն և իր մերձավորներին. այդ մասը պատմական հետաքրքրություն չի ներկայացնում։

300

ԳԱՍՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՑ

Փերզ. 6272, էջ 139։

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Փոս անապատ

... Ի թուականութեանս Հայոց ՁՁ. (1331), և ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և թագաւորութեանս Հայոց Զոր[ը]որդ Լեւոնի, գրեցաւ գործքս Աղեսանդր թագաւորին ձեռամբ մեղապարտ ծառայի աստուծոյ Ներսէսի, ի սուրբ ուխտս Փոս կոչեցեալ...

301

ԱԻԵՏԱՐԱՆ

Վէննա. 97(16) ծուց. հա. Ա. էջ 436—438.

Գրիչ՝ Թորոս Հռոմկլայցի
վայր՝ Դրազարկ

ա

387ա *... Երանելի քահանայս Սարգիս, բոցով սիրոյն աստուծոյ կենդանախարուկեալ, ստացաւ զսուրբ աւետարանս՝ անձին ի վայելս և յապագայն՝ յիշատակ իւր և որոց ծնան զնա։*

Արդ, որք հանգիպիք և աւգտիք յիշեսցէք ի բարին Քրիստոս զՍարգիս և ծնողսն իւր՝ զՄարտիրոս և զՄամատիկին, որք բարւոք ծնան և ուղղութեամբ սնուցին և աստուծոյ աւանդեցին...

Աղաչեմ և ես՝ մեղաւորս Թորոս Հռոմկլայցի՝ շարահիւսաւղ սորին, արժանի զանարժանս առնել և յիշել յաղաւթս, զի մեծ յուսով ակն ունիմ խնամոցն աստուծոյ, և այն՝ աղաւթիցն մեր միջնորգելոյն...։

Գրեցաւ ի թու. ՁՁ. (1331), ի թագաւորութեանն Լևոնի, և ի հայրապետութեան տեառն Յակոբայ, յերկնահանգէտ անապատս Դրազարկ, ի լաւ աւրինակէ, տէրամբ Ջիսուսիւ, որում փառք յաւիտեանս, ամէն։

Ծաղկող՝ Սարգիս

բ

19բ *Սուրբըդ սրբոց անհասական,*
Որ ծաղկեցար յազգըս մարդկան
Ն. ըզշնորհս քո շրթան
Հեղեր՝ աւրհնեալդ յաւիտեան։

---

* Ձեռագիրը, Փերզալամնյանի ծանոթագրության համաձայն, պահպանել է վանեցի Յալֆայան Համբարձումին։

Ես ըստ իմում տըկարութեան
Զքոյս ընծայեմ քեզ սիփական,
Ընկալ զսա, տէր ղԹուքեան,
Եւ յիս նայեա ողորմութեան,
Եւ զծադկաւղըս անպիտան
Ցողաւքս ձեր առնէք արժան,
Հանուր սեռիւք և ծննդեան,
Սարդիս աբեղ[այ]

գ

18ա Ամենաւրհնեալ աստուածածնին.
Ընկալ զբանս աստուածայինն՝
Զաւետարանս քո մխածնին,
Ինձ յիշատակ և իմ ազգին։
Զի ես՝ Սարգիս, յերես անկեալ
Զքեզ աղաչեմ՝ զայս ուխտս ընկալ.
Ի տղայութեան եմ խոստացեալ
Եւ յոյժ սիրով եմ կատարեալ։

դ

18ա Զձեզ աղաչեմ սուրբ ուխտիս առաջնորդք ՃՁալ սուրբ աւետարանս յեկեղեցիգ, մինչև ի սպառուած ժամանակի. և մի ոք իշխեսցէ հանել զսա յեկեղեցւոյդ, վաճառել, կամ գրաւել, կամ տալ այլ ումեք. և որ յանդըգնի և հանէ՝ մասն զՑուդայինն առցէ ի Քրիստոսէ, այլ կացցէ սա ի սուրբ նշխարինքն մինչև ի կատարած բաբեխաւս մեզ, ամէն։

Գրիչ՝ Գրիգոր

ե.

19բ Զմեղաւոր հողս Գրիգոր և զծնաւղսն իմ, որ զհամաբարբառս և զգլխահամարքս և զնախաձրութիւնքս գրեցի, յիշեցէք ի բարին Քրիստոս, զի և դուք ի նոյն յիշիք. ՉՁԱ. (1332)։

302.

Ա Ր Ա Կ Ս Ո Ղ Ո Մ Ո Ն Ի

Հալէպ, Անթիլ. և մասն. Սիւրմ. Բ, 126

Գրիչ՝ Կոստանդին
վայր՝ Մալեռն դղեակ

Փառք... զի արժանացոյց զանարժանս և զաւրացոյց զտկարս, զրազմափորձ կեանս և զմրրկածուփ կամս անպիտան անձինս կոստանդնեա ի գործ հոգևոր գրչութեան՝ շարադրութեան գրոց աստուա-

ծայինն Սողոմոնի, Քանզի մինչ էի ի դղեակն Մոլհոն արգելեալ մեծաբան հրամանաւ՝ արժանապէս ըստ ումանց կարծեալ իւրաւանց, ըստ որում նոյն ինքն Սողոմոն յիմաստութիւնն ասէ եթէ՝ ձգէր զնոսա արժանն յայնր վախճանի սագնապ։ Եւ իմ անդր գոլով, զսպեալ և ճնշեալ կամաւք բարւոյ նեղասրտութեամբ զսա արարի սխոփանք մխիթարութեան սրտի իմ, ի ձեռս առեալ գրեցի համարձակութեամբ գրչի առաւել, քան թէ գիտութեամբ արուեստի։ Ի թուականին Հայոց ՉՉ. (1331), ի ժամանակս բարեպաշտին, ճշմարտասիրին և գլուխ-մախոհ պատանոյն՝ մեծի արքային Հայոց Լևոնի և իշխողին Կիլիկեցւոց նահանգին, որդւոյ Աւշնի, որդւոյ Լևոնիս, ըստ անուանն չորրորդ գոլով ըստ կարգի։ Վասն որոյ սիրելի եղբարք մեր ի Քրիստոս, որք պատահէք աստուածիմաստ մատենին ընթերցմամբ կամ աւրինակաւ, արգասաւոր կամաւք խնդրեցէք յաստուածոյ ծնողացն իմ և ինձ մեղաց թողութիւն, ընդ նմին և եղբաւրն մերոյ Ակօրա վարդապետին՝ քաղաքակցին և համշրջակցին իմ, ողորմութիւն ի տեառնէ խնդրեցէք, զի նուիրեալ թխտիս նա չնորհեաց։ Այլ և գնժգեհակից ընկերս մեր զերիս՝ զՅովհաննէս և զՅոհաննէս և զՍտեփաննոս, ի մասն բարի յիշատակեցէք։

Բայց և ի ձէնջ մի ծածկեալ լիցի այս, զի եթէ կարգագրութիւն բանից կամ բաժանմունք տանց գրոց ընդ այլ բնաբանս տւրինակաց ոչ համազուգի, մի կարծիս անկանիս եթէ թեւր է աւրինակն, և կամ ի գլելոյն է սխալն, զի վասն պատճառի անզուգութեան աւրինակացն, զի ոչ հետեէր միկնչին աշխատանս, ի յանձն առի և զբովանդակ խնդրոցն Սողոմոնի, որ է ղրեալ ըստ կարգի՝ զբնաբանն ի մեկնըչէն սրբոյն Ներսէսի, արտաքս կորզնցի ուղիղ ըստ իմում կարի, որպէս զի ընթերցողին դիւրահաս լիցի սովաւ զմեկնութիւն իմանալ։ Վասն որոյ, ով եղբարք, յաւժարութեամբ յիշեցէք զմեղ, զի և գուք յիշատակեսջիք ի բարեկամս Քրիստոսի, ընդ արզարան ի կեանսն յաւիտենական, ամէն։

303.

ՄԱՇՏՈՑ

Փիլդ. 6273, էջ 140 (կարին սբ. Աստուածածին եկեղեցի)

Գրիչ՝ Կոստանդին
վայր՝ Աւագ անապատ

... Ես՝ Կոստանդին ծառա Քրիստոսի, գրեցի զսուրբ մատեանս ի խնդրոյ հոգևոր եղբարց մերոց՝ Յովհաննէսի և Գրիգորի...։ Ցիշեսջիք զտառապեալ գրիչս զԿոստանդին, և զծնողսն իմ՝ զհայրս իմ զՀեթում, և զեղբարս իմ զՔարսեղ, հանդերձ Վահրամիւ և Դաւթիւ, և զամենայն ազգայինսն իմ...։

Բայց եղև գրաւ գրչութեան սորա ի սուրբ ուխտս կոչեցեալ Աւագ անապատ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և կենսակիր սուրբ

Նշանիս, ի թուականիս Հայոց ՉՉ. (1331), հայրապետութեան տեառն Ցակոբոյ, և ի թագաւորութեան քրիստոսապսակեալ արքային Լևոնի։

304.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 8116

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Կիլիկիա

277բ ... Դրեցաւ սա ի կիլիկեցւոցս* աշխարհ, ի թուականութեանս Հայոց ՉՉ. (1331), ի հայրապետութեան տեառն Ցակոբա, և ի թագաւորութեանս Հայոց Լևոնի, որդոյ Աւշնի արքային, ընդ հովանեաւ** Աստուածաշինիս և այլ կենսակիր սուրբ Նշանացս, ձեռամբ ամենաթշուառի Դաւթի, ժանտատես գրով և բազմաշփոթ մտաւք, ի յընդիր աւրինակէ։

Արդ, ես՝ տառապեալս ի բարեաց յորպիս եկեղեցւոյ Դաւիթս, զի յոր կոչումն յոր կոչեցայ, զայն ծոյլ և վատթար*** գործովք աղտեղացուցի։

Ցերեսս անկեալ աղաչեմ զձեզ, զի սուրբ հարք իմ և եղբարք, որք հանդիպիք այսմ աստուածախաւս մա[տինիո] | ՝ |

305.

ՇԱՐԱԿԱՆՈՑ

Երևան 1601

Գրիչ՝ Սարգիս

... Դրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ բազմամեղ և անարժան սուտանուն քահանայի Սարգսի, ի թուաբևրութեանս Հայոց ՉՉ. (1331), ի թագաւորութեանս Լևոնի բարեպաշտի, որդոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Ցակոբայ. ի խնդրոյ պատուականն և երջանիկ սարկաւագին Սարգսի, որ ստացաւ զսայ յարդար վաս-
304բ տակոց իւրոց և ի յիշ ‖ [ատ]ակ հոգւոյ իւր և ծնողաց իւրոյ Վասլի և Թագուհէ:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, յիշեցէք ի բարին Քրիստոս զյառաջասացեալ պատուական սարկաւագն Սարգիս, և զհայրն իւր զՎասիլ, և զմայրն իւր Թագուհի, և զեղբայրն իւր՝ զպատուական քահանայն զԿոստանդին։ Ընդ նմին և զիս՝ զանարժանս՝ զՍարգիս նըւաստ քահանայ, զգրիչ սուրբ տառիս, և զհանգուցեալ հայրն իմ՝ զԳրիգոր քահանայն, և զմայրն իմ Հեղինի, և զքոյրն իմ Թեփանուշ՝ զընացեալսն առ Քրիստոս, և զամենայն ազգայինս իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս. և որ յիշէ և սրտի մտաւք մեզաց թողութիւն խնդրէ, նա ընդ միոյն հարիւրա-

* Բնագրում՝ «կիլեկեցւոցս»։
** Բնագրում «հովանեաւն»։
*** Բնագրում՝ «վարթաբ»։

պատիկ առցէ ի Քրիստոսէ աստուածոյ, յուսոյն մերոյ, ամէն, և հաշտարար ամէն։

306.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 149 (անս նահ 1392 թ.)

Գրիչ՝ կարապետ Տիւրբիկեցի
վայր՝ Սրուսադեմ

277բ ... Ցամի եւթնհարիւր և ութսուն թուականի մերոյ (1331), ի հայրապետութեան տեառն Յակոբայ և ի թագաւորութեան դեռաբոյս պատանեկին Լևոնի որդւոյ Աւշնի, գրեցաւ սուրբ և լուսափղձ և կենսակիր, աստուածաւանդ, աստուածախաւս սուրբ նոր կտակարանս, ի սուրբ քաղաքս Սրուսադեմ, ի դրունս սուրբ և փառաւորեալ տաճարիս Քրիստոսի, ընդ հովանեաւ սուրբ հրեշտակապետացս, ձեռամբ իմով՝ անարժան և մեղսաթաւալ, փանաքի և անահեստ գրչի Կարապետի*, բազա մեծաւ վախազանաւք. և ես՝ ողորմելի ներիս, յանձն առի և
ի ըստ կարի իմում չանացի։ Արդ, թէպէտ և անարհեստ էի գրչութեանս՝ փանաքի և անյարմար, այլ հանդիպեալ լաւ և ընդիր աւրինակի, և ես՝ մեղաւոր հոգս, յոյժ բաղձանաւք և յոգնատոչոր տենչանաւք, մե-
278ա ծաւ աշխատութեամբ ըստ կարի գծագրեցի զս ‖ այ ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցոյ։

Արդ, յերես անկեալ աղաչեմ... յիշեսջիք զերջանիկ և գհեզահոգի բարւոնի՝ զառաջնորդ ուխտիս զտէր Վարդան եփիսկոպոս տեղոյս, զի յոյժ հանգուցեալ է զմեզ ի հոգևորն և ի մարմնաւորն։ Յիշեսջիք ծնաւզաւք ի մեզաց Թոզութիւն և այլ մերեղէն եղբարքս զՀրեշտակապետացս՝ զքահանայքս և զկրաւնաւորս, և զսուրբ Յակովբայ զքահանայք և զմխանձունս, և զիս՝ զխաւարեալս մեզաւք զԿարապետ կր[աւնաւոր], և զծնաւզան իմ՝ զպարոն Ցատ և զՃոշարէ**, և զեղբարսն իմ՝ զկայսն և զհանգուցեալսն ի Քրիստոս՝ զԲաղդարգեսն, և զՅոհաննես, և զՆերսես, և զՍարգիս, և քերց մերոց, և զիմոն ամենայն ողորմութիւն գտանել յահեղ աւուրն համատաւտի, ընդ կամարարս իւր ի
ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. և որ յիշեսցէ զվերոյգրեալքս Քրիստոս աստուած զինքն յիշէ ողորմութեամբն իւրով, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ննամով պահող աւրինի յաստուածոյ։

Ցաւգոստոս ԺԷ. (17) սկսայ և դեկտեմբերի Ի. (20) աւարտեցի։**

---

* 254ր էջի հիշատակագրութեան մէջ գրիչն իրեն անվանում է «Կարապետ արեղայ Տիւրբիկեցի»։

** Անվան «շ» տառը քերված է ու հազիվ է ընթերցվում, այլ թանաքով վրան գրված է «հ», ևթե սրբագրությունը գրչինն է, ապա նրա մոր անունը եղել է «Ձոհար»—«Գոհար»։

*** 278 թերթանոց գիրքը, որի յուրաքանչյուր էջի վրա կա մինչև հաշվով 550 տառանիշ, գրչին ընդօրինակել է 123 օրվա ընթացքում, ուստի յուրաքանչյուր օր արտագրել է մինչև հաշվով մոտ 2,5 թերթ (5 էջ)։

307.

Ա Մ Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ

Վենետ. 12, Ալիշան, Հայապատում, էջ 545-550 (տես նաև 1378)

Ստացող՝ Ներսես Տարոնացի
վայր՝ Գլածոր-Ռռնայ

ա

...Աւարտումն եղեւ այսմ աստուածաշունչ հին և նոր կտակարանիս յորժամ էր թիւն ըստ շրջագայութեան ժամանակի՝ ի մարդեղութենէն Քրիստոսի ՌԳՃԼ. (1330), և ի թուականութեանն Հայկազնեայ տոհմին ՉՉԱ. (1332), և ի հայրապետութեան տեառն Ցոհաննիսի մեծի Հռոմի պապին, և ի պատրիարգութեանն տէր Ցակոբայ Հայոց նահանդի, և յեպիսկոպոսութեանն տէր Ջաքարիայի՝ սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի, և ի վարդապետութեան Սո[ա]ղիա րաբունապետի, որ այժմ կայ ի Գայլիձորի, և յաշխարհակալութեան զան Պուսաիտի, և ի թագաւորութեան Հայոց Լեւոնի՝ որդոյ Աւշնի։

Ձսա սկսեալ ի գեկտընբերի աւարտեցաւ ի հոկտընբերի, ի ձեռն երկու քաջ քարտուղարի։ Ես՝ Ներսէս անուամբ վարդապետ, բայց գործով վերջացեալ հող և մոխիր վարդապետաց, որդի Վահրամայ, յաշխարհէն Տարօնու ի գաւառէն, Սանձնու, ի վանացն Վազարու, ի գեղջէն, որ կոչի Կոռ, եղէ ցանկացող ուսման և ընթացայ յարևելս ի գաւառն Վասպուր, ի վանքն Գայլեձոր, և եօթն ամ աշխատեցայ ի վարժուքին հին և նոր տառից և այլ բազում սրբոց բանից։ Ցայսմ ժամանակի եմուտ ի հոգիս իմ ցանկութիւն մեծ վասն աստուածաշունչ գրոց. և ես էի աղքատ և ոչ ունէ[է]ի և ոչ փող մի, բայց միայն զՔրիստոս։ Ապա ուխտ եղի ի մտի իմում, ասացի, թէ՝ տար ինձ աստուած իրք՝ նա ես յաստուածածնէի անուն տամ գրել։ Ցորժամ զայս խորհուրդս ի միտս իմ արարի՝ յայն դէմ եղեալ գնացի յերկիրն Ուրհայ** գեղն, որ կոչի Խաճակաճ, առ եղբարքն իմ և առ ամենայն արեան մերձաւորքն, խնդրել օգնութիւն ի նոցանէ. իսկ նոքա շարժեալ սիրով, և լի սրտիւ՝ ողորմութեամբ սուրբ աստուածածնին ետուն ի ծախս աստուածաշնչիս՝ իւրաքանչիւր ըստ կարողութեան իւրում մասն յիշատակի. Մլեհն ՌՃԺ. (210) սա[խտակ], եղբայր նորա՝ Լեւոն Ղ. (90) գրամ. Ցովան Ղ. (90) դրամ, Թուրան Լ. (30) գրամ, Դամուր Լ. (30) դր., Մխիթար՝ իմ հօրեղբօրորդին ԽՔ. (42) դր., Մխիթար հուան Լ. (30) դր., Վարդան ԼԳ. (33) դր., Հայրապետն ԼՋ. (36)

* Իմա՝ ի կաթոլիկոսութեանն։
** Ըստ Ալիշանի՝ Ադահունյաց գաւառի մասին է խոսքը։

դր., Մարտիր | | | Թադկաց Լ. (30) դր., Լուսեր Ներկարաբ Լ. դր., Զաքար ԺԸ. (18) դր., Ռամաճոսց և իւր մայր ԼԶ. (36) դր., Ֆռանգ Խլաթցիկ Ճ. (100) դր., Անտոն Ի. (20) դր., Ումեկն և իւր որդիքն Ծ. (40) դրամ։

[Եւ] իմ առեալ զայն գնացի յաշխարհն Պարսից ի քաղաքն Թավրէժ, յաղագս քարտիսի, և բազում ահ և աշխատանք կրեցի ի ճանապարհն, և յոլով նախանձ և նեղութիւն յազահ և ի սնապարծ քահանայից և ի հակառակող աշխարհականաց. և անտի ոգորմութեամբն աստուծոյ յարուցեալ գնացի միւսանգամ ի Գայլիձորն, և կալայ միջնորդ զՅոհաննէս Մշեցին՝ զեղբայրն իմ հոգեւոր, որ առնէր միջնորդութիւն ընդ իս և ընդ երկու գրագիր, բնգ Սիրեմ և բնգ Դաւիթն, որ էին կուսան քահանայք. և ապա ի բազում աւուրս հազիւ կարացաք կտրել գրելն, առանց այլ խաբճի ՌՇՃ. (1500) դր., բայց յետոյ զրկեց զիս Իւաիքն, քանզի խիստ ազահ էր և արծաթասէր. ԳՃ. (300) դր. այլ եւ յինէն, վասն որոյ թողէ աստուած զ[յ]անցանս նորա։ Եւ ես յայնժամ յարեայ անտի և գնացի ի սուրբ առաքեալն Թագէոս՝ առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս. և նա ետ ինձ Շ. (500) դր[ամ], և յետ բազում աւուց դարձայ վերստին ի Գայլիձոր բազում նեղութեամբ, քանզի ձմեռն էր աւուրքն, և վճարեցի զմնացեալ պարտքն յաստուածաշունչ գրոցն. և դարձայ ի սուրբ Առաքեալն և դադարեցի անդ սակաւ աւուրս։ Եւ կայր աստուածաշունչս անկագմիլ. և ես թշուառականս կայի հիւանդ հոգով և մարմնով. ապա խընդրեցի ի սուրբ աստուածածնէն, և նա զօրացոյց զիս, և յարուցեալ պնդեցի զմէջս իմ և ուղղեալ գնացի ի Քոնձայ, առ սուրբ եպիսկոպոսն տէր Բարդողիմոս և առ վարդապետքն Հայոց, [որ] առ նմա կային յայնժամ. և Մարգարէ՝ վարդապետն չէր անդ, որ կազմող էր գրոց, այլ գնացեալ էր ի Ճահուկ. և ի ներգործութենէ չարին ես հիւանդացայ մերձ ի մահ զաւուրս ԽԵ. (45), և Քրխտոս յարոյց զիս. և գնացի ի Ճահուկ առ Մարգարէ վարդապետն, և նա յանձն առեալ կազմեաց յաւուրս Ծ. (40) և ետ ցիս։ Եւ իմ ուրախացեալ ղէմ եղի գնալ յերկիրն Տարուն, և ամենեւին ինչ ոչ ունէի խաբճ ճանապարհին. յայնժամ ծախեցի զփիլոն և զհոզաթաին վասն խաբճի։ Ապա զայս գիտասջիք եղբարք, որ գնալս և գալս զոր ասացի՝ ի բազում տեղի էր, ի մէջ բարբարոս ազգաց. ...որ մահմետականք կոչին, որ բռնացեալ ունին զաշխարհս Հայոց վասն մեղաց մերոց. և յամենայն տեղիս օգնեց ինձ սուրբ աստուածածինն և անվնաս ճնացի. և զամենայն թերի զոր ունէի՝ ելից և կատարեաց։ Բայց խարճն, որ եղեւ այս աստուածաշունչ գրոցս՝ ընդ ամենայն միանամուռ ՌՒՌԾ. (2200) դրամ է...*

* Հիշատակարանը հրատարակված է նաև «Մատենադարան հայկ. թարգմ.» աշխատութեան մէջ (Վենետիկ, 1888, էջ 147–149) և մասամբ՝ Բ. Սարգսյանի կազմած ցուցակում (հտ. Ա. էջ 128–127)։ Բնագիրը կազմելիս նկատի ենք առել նաև այդ հրատարակութիւնները։

Գրիչ՝ Դաւիթ

բ

...Արդ, խնդրեմ յամենեցունց՝ յերեսս անկեալ, զի որք պատահիք առ ի սմանէ օգտութեան՝ թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ ստացօղի սուրբ գրոցս Ներսէս վարդապետի, և տառապեալ ոդոյ Դաւիթ գրչէս, և դուք յիշօղդ յիշեալ լինիք ի Քրիստոսէ, նաև զպատուական քահանայ զՅոհաննէս սպասաւոր քանի, և զհոգեւոր երկնողն իւր զտէր Ստեփաննոս՝ զհանգուցեալն ի Քրիստոս, որ զօրինակն շնորհեաց այս երեք գրոցս։

Ծաղկող՝ Թորոս [Տարօնացի]

գ

Վարդապետ Ներսէս, յիշեա՛ յաղօթս զԹորոս ծաղկող, և զպապն իմ Սիար, և զհայրն իմ Սարգիս, և զմայրն իմ Մարիամ՝ ի քաղաքէն Մշոյ։

դ

Զելպասան Զարդրաենցին և զհօրեղբօրորդին իւր զՏօդաենն յիշեցէք ի Քրիստոս աստուած յաւուրն դատաստանի, վասն որ ըստ իւրեանց կարողութեան օգնեցին։

308.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԴԻ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Ալիշան, Սիսական, էջ 487

Վայր՝ Կուխոյ վանք

....Զոր ըղձիւ խնդիր արարեալ պատուական և բարեմիտ Մարկոս կրօնաւոր, և յետոյ գտեալ | | | գրուագրեաց ըստ պատշաճին։ Եւ գրել ետ զսայ ի վանս Կուխոյ, ի տան մեծի սրբարանիս և աստուածարնակ տաճարիս Աստուածածնիս և սուրբ և ահեղ, հզօր նշանիս՝ Հաղա[ր] ու Բուրայս, ի յիշատակ իւր և ծնողաց իւրոյ։

Արդ, ղրեցաւ սա ի ժամանակս հայրապետութեան Հայոց տեառն Յակովբա, և ի թագաւորութեանն Լևոնի, և ի բարեպաշտին Յեսաեա, և ի յիշխանութեան նահանգիս մերոյ Թոռին Պռոշա, զոր ի յազգէն Վարդանանց՝ Վասակա, զոր աստուած յերկարասցէ զժամանակս նոցա։ Ի խաղ[ա]ղութեանս Պուսախսին, զոր ԺԸ. (18) էր ամ խանութեան նորա, և ի յառաջնորդութեան ուխտիս մերոյ տէր Սարկաւագին։*

* Այսքանը հրատարակված է վիմատիպ ընդօրինակութեամբ, այնուհետեւ, Ալիշանը համառոտ պատմում է հիշատակարանի չհրատարակված մասի բովանդակութիւնը։ «Ցիշէք զրոդն և դվարդապետս իւր և զեղբօրն՝ զՍարգիս և զՅովհաննէս» (դհաքս նոցին Յոհաննէզ և Մխիթար, և զմարսն՝ Հոռոզ և Թամամ. զեղբարսն՝ Շարան, Դաւիթ, Ձոճեր և Գրիգոր). և վասն գրչութեան իւրոյ անմեղադրութիւն խնդրելով՝ ծանուցանէ, «զի առաջինն է և այլ չէի գրել, և օրինակն խիստ դժար էր»։

309.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ընթան 481ե (տես նաև 1438 թ.)

Գրիչ՝ Կարապետ

279ա | | | եւ յաւուրսն երջանկութեան վանիցս՝ տէր Յակոբոյ, եւ ի թուականութեան Հայոց ՉՉԱ. (1332) գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս, ի խնդրոյ գերամաքուր և երիցս երանեալ Մխիթարայ և Սիմեոնի հարազատ եղբարցն, որ յոյժ փափագմամբ և սիրոյն, որ առ Քրիստոս ունէին, յիւրեանց արդար վաստակոցն գրել ետուն զաստուածախաւս աւետարանս ի վայելումն անձանց իւրեանց և յիշատակ հոգւոց իւրեանց և բարի ծնողացն՝ Յոհաննիսի և Իսխլիկի" | | | տա*րաժամ փոխելոյն ի Քրիստոս, և հաւրեզբարն Մարսուման միակեցին, և այլ ազգայնոցն ամենի՝ կենդանեաց և հանդուցելոցն։

Ցեր[ես ան]կեալ աղաչեմ զ[ընթեր]ցոդսդ և զսպասաւորսդ սուրբ աւետարանիս աստէնս և յապագայն, սերտ սրտիւ և լի բերանով առէք Քրիստոս աստուած ողորմի ստացոդի աւետարանիս Մխիթարայ, Սիմեոնի, ծնոդացն, և եղբարն, և ամենայն արեան մերձաւորացն, ամէն։

279բ ...Ի գառն և ի վիշտ ժամանակի գրեցի զաւետարանս, կարողութեամբն | | | փրկչիս և մաւր սո[ւա աստուա]ծածնին։

[Աղ]աչեմ զձեզ, ով սիրելի եղբարք, վասի սիրոյն Քրիստոսի, ձեր սուրբ բերանովդ ասացէք՝ Քրիստոս աստուած ողորմի անարժան և մեղսասէր Կարապետ գրչի [Աղթամարեցւոյ], և մեր ծնոդացն՝ Ըռամշահի | | | կնեսի՝ փոխելոյն ի Քրիստոս | | |

Զմանուիհլ և զՎարդան, որ յաւտարութեանս իմում մխիթարակից լինէին մեզ, այլ և զնոդևոր եղբայրն զԱտամ յիշելոյ արժանի առնէք, որ ի կոկ Թղթիս աւգնական եղև մեզ։

Ցիշելոյ և աստուած-ողորմոյ արժանի առնէք զեղբայրն մեր ըստ մարմնոյ զԱւետիսն, որ ե. (7) ամ է, որ չեմ տեսել, և զհաւատարիմ քոյրն՝ զԱտաղ տիկին, որ յոյժ չարչարանաւք և աշխատութեամբ զուգէր զմար | | |, Քրիստոս աստուած անմահական հացիւն զինքըն կերակրէ և լուանայ և մաքրէ զմեղս իւր, ամէն։

Նաև զանապատաւոր, սրբազան մաքրազարգեալ ճգնաւոր հայրն մեր Կիրակոս, որ անսուաղ պահելով զանձն յամենայն կերակրոց պիտոյից, յիշելոյ արժանի առնէք։ Եւ յիշողացդ և յիշե[ել]ոցդ Քրիստոս աստուած ողորմեսցի յիւր յարքայութեան, ամէն։

---

* Թերթի աջ եզրի վերին մասը պատռված է, որի պատճառով անընթեռնելի է 3ում 3 տող։

** 280ա էջի ձախ եզրի վերին մասից մաշվել ու ընկել է 2—3 տող։

Ո՛վ եղբարք, զ ||| ի ցին զԱզատշահ ող ||| ցին յիշեցէք ի Քրիստոս, որ զթուղթս մեզ բերին և Քրիստոս աստուած զձեզ յիշէ։

310.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ընձան 7630 (տես նաև 1652 թ.)

Գրիչ՝ Մելքիսեդեկ
վայր՝ Ի ձորս խազտեաց, ի բանակետս Լոռի

ա

...Այսմ աստուածազարդ բուրաստանի, լուսաշաւիղ տումարի, երկ-
319բ *նաչու շաւղի, տիեզերածաւալ || վտակի... յաւարտումն ժամի յանբարի ամանակի և յանլոյս վայրի, որ յամենայն կողմանց նեղ և զառն է ժամանակս, նա ևս առաւել տումի քրիստոնէ[է]ից, որ բնաջինջ եղև աւանս մեր ի զառն և յաղի ազգի պահանջողաց, յոբում և աստուածազարդ տումարս կատարեցաւ փանաքի և ախմար գրչութեամբ, ձեռամբ երկուց ապիկարաց՝ Վարդանայ և Մելքիսեդեկի, ի ձորս խազտեաց ի բանակետս Լոռի, ընդ հովանեաւ սբբոց տաճարացս Աստուածածնի, սուրբ Սիովնի, և համայն սբբոցն, որ աստ հաւաքեալ կան։ Ցամի աբեթական տումարի՝ հնգետասան [յ]օրելիսնի և եւթնեակ քառեկի և եզակ եռեկի (1332).* յամսեանն սեպ[տեմբեր]ի յերկտասան և եռակի (23), ի վեցեակ շրբինի, յաւր չորեքշաբաթի։ Արդ, որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ զաղափարաւ, յիշեսջիք ||*
320ա *ի մաքրափայլ յաղաւթս ձեր զաշխատաւղք սորա՝ զհայրն իմ զՎարդան քահանայ, և զմայրն իմ՝ զյոյժ սպասաւորաւղ, և զեղբարս իմ, և զքոյր, և զամենայն արեան մերձակայս։ Նաև թէ արժանի համարիք՝ զյետնեալս ի բնաւին բարեաց և զառաջարկաւղս ամենայն չարեաց, զթշւառս ի սննդակիցս և ի համայն տպակիցս՝ զՄելքիսեդեկ, զսակաւ աշխատաւղս ի բնակս աւետեաց համայնս փրկութեան և խոշորութեանն և ամենայն սզալանացն զներելն խնդրեմք, զի կայր մեր այս էր, և նուրբ և նեղ ճանապարհիս բնաւ անծանաւթ և մերժէաք տեղով և կրելով. և այժմ խնդրեմք զմի ինչ, զի ամենայն ոք, ո և հանդիպեսցի, ըստ իւրում գիտութեանն զբարեաց ձիրս մեզ շնորհեսցէ, զի բնաւից պարգևատուն զանծախելին պարգևեսցէ ի գալստեան յիշելոցս և յիշողացտ, ամէն։*

բ

320բ *Ի յաբեթական համարոյթ տուարերութեան ՁՁԴ։ (1335), աստուածասէր ոմն յազատ տոհմէ Ազատ անուն... համեստ ամուսնաւ իւրով՝*

---

* Հնգետասան յոբելեան>-ը 750 տարի է, <ենթնեակ քառեակ>-ը՝ 28, <եզակ եռեակ>-ը՝ 3։ 551 գումարելով այս թիվերին, ստանում ենք ընդօրինակության թվականը՝ 1332։

բարետոհմիկ Ճուճարիւ, և ստացաւ զանմուտ արեգակնս լուսատու ինքեան, և զարմից, և ծննդոց, համայն արեան մերձակայիւք։

Արգ, ով ոք ընթերցցի, կամ աւրինակէ, կամ շահեսցի յանմահական ջրոյս, յիշեսջիք զվերագրեալս ի սմա՝ զԱզատ և զՃուճար, զխրատեալս աստուծոյ՝ զԱլ, և զորդիսն՝ զՍարգիս ե զՍահակ, և
321բ զհայրն՝ զՍարգիս, և զմայրն, և զեղբարս՝ զԱւտրիկ և զՎարդազատն, || և զամենայն արեան մերձակայս, հանգերձ ամենայն զարմիւ...։

Նաև զկենսակարաւտ և զվարդափթիթ պատանին, զեռաթառամ և վաղամեռիկ գրարշ գլխիր՝ զԵլիմելէ փեսայն, որ և զծննաւգս իւր լացոյց անմխիթար, յիշեսջիք, և զծննաւգս Ճուճարին՝ զՎարդել և զԹագեր, ե զեղբարն, և վարձահատուցին փառք և ունայնութիւն, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

գ

108ա Զստացուղ սուրբ և աստուածակեցոյց տումարիս ի յանբարի ժամանակս, ի նսամեցեալ մրղուղ ամայս, որ ամենայն զմարմնականս խորհին, և գհոգի ամենայն ոք մոռացեալ է, և գհոգեկորոյսն խորհ զղնացս։ Ի յայսմ ժամու ուշաբերեալ ի յանլոյս վա[յ]րի, և իմացեալ զվաթթամութիւն և զամենակարաւղ ուժգնութիւն սորա, և ստացաւ զաւակ ի Սիոնէ և ընդանեակ յԲրուսաղէմ՝ յիշատակ ի ներկայս և ապաւէն յապառնին. և կարծիս և յոյս սորա և վասն յիմանէ։ Արգ, որ յիշէ յիշեալ լիցի յամենապարգևողէն աստուծոյ, որ է աւրհընեալ յաւ[իտեան]։

311.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ըբևան 6403 (տես նաև 1430 թ.)

Գրիչ՝ Յակոբ

վայր՝ Նկեղեաց գաւառ, առուբ Կիրակոսի վանիք

ա

282բ ...Արգ, այսմ աստուածախաւս և աւետաքարող սուրբ աւետարանիս ցանկացող եղէ ես՝ Ղազարս և իւր(՞) որդիքն Հեթումն և Յովաննէսն, ի գեղջէ, որ կոչի Դեղձքար։ Ես Ղազարս զսուրբ աւետարան գրել տուի յիշատակ ինձ և կենացին իմոյ Հեղինէ տիկնոջն, որ փոխեալ է առ Քրիստոս։

283ա ...Արդ, եղև աւարտումն գրութեան սուրբ աւետարանիս ի թուականութեան Հայկազեան տումարիս ՉՉԱ. (1332), ի սուրբ և հրաշակաւոր վանքս, որ կոչի սուրբ Կիրակոս, ի գաւառիս, որ կոչի Նկեղեաց։ Բայց գրեցաւ սա ձեռամբ անարժան քահանայի՝ Յակոբի...

312.

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Երևան 1347

Գրիչ՝ Գրիգոր

վայր՝ Մերձ յոմրոցն, որ կոչի Անդրուընիկ բերդ

ա

Ի լրման տառատպութեանն՝ լիակատար գոհութիւն աստուծոյ...

Զոր տեսեալ զսրբոյ աւետարանին թարգմանութիւնս, որ ըստ Յովհաննու, բազմամեղ և տրուպս Գրիգոր, գրեցի զսա ե ստացայ ի վայելուչ մանկանց նոր Սիովնի, և ի յիշատակ ինձ, ե ծնողաց ի-
418բ *մոց, և եղբարց, յոյժ ցաւած անձամբ հոգեկանաւք և մաբմնակա ‖ նաւք, ոչ ոք ունելով ձեռնտու ի գրելն, այլ միայն զողորմութիւնն աստուծոյ և զաւգնութիւն աղաւթիւք սրբոց իւրոց։*

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ լսելով, յիշեսջիք աստուածահաճոյ աղաւթիւք զմիաբան եղբայրութիւն հրեշտակաբնակ ուխտին Ակներոյ, զհոգեոր հարքն մեր, եւս առաւել զծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան և զՍահփանոս փակակալն, որ զաւրինակն շնորհեցին, և զՈւրբհնն, որ գրեալն էր զաւրինակն և զվաստիլ ճգնաւորն, և զծնաւղս նոցին, և զեղբարս, գրեսցէ տէր զնոսա ի գիրն կենաց, ամէն։

Յիշեսջիք ի տէր և զայնոսիկ, որ ի զին քաղթոյս և հացկանն մերոյ երախտիք ունին, և զԱնպետն, և զծնաւղսն իւր, զի ե նա ետ մեզ հաց, գրեսցէ զնոսա տէր ի գիրն կենաց զհացն անմահութեան, ամէն։

Եւս վերջոյ թէ արժանաւորէք յիշել ի տէր զերիցս եղկելի և զժանտամիտ գրաւղս և ստացաւղս զԳրիգոր, և զհայրն իմ զՎահրամ, և զմայրն, և զեղբարսն՝ զԱնդրեաս կրաւնաւոր, և զՍարգիս, և զԹորոս՝ զյաոաջնալսն առ Քրիստոս, և զմիւս եղբայրն՝ զպատուելի քահանայն զՍտեփաննոս, և զՍիմեոն երէց՝ զքեռի իմ, և զորդի իւր՝ զԿոստանդին քահանայ, և զմանկունսն իւր, և զՄիխայլն, և զորդիսն իւր, և զամենայն աղգայինսն մեր...

Գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՉՉԱ. (1332), ի թագաւորութեանն Լեւոնի աստուածասիրի՝ որգւոյ Աւշնի, ի կաթողիկոսութեանն տեառն Յակովբա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Նշանին, մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրուընիկ բերդ, ի փառս Քրիստոսի աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս, ամէն, ամէն։

Ողորմեսցի Քրիստոս աստուած Յովաննէս քահանայի, որ աշխատեցաւ ընդ մեզ յղորգել զբոցս աւրինակաւն, և կրաւնաւորացն Ճաւփքունիկ, և Պաւղոսիկ, և Թորոսիկ առ որովք հանգաք ի գրելն, և ամենայն հաւատացելոց՝ կենդանեաց և ննջեցելոց, և նմա փառք յաւիտեանս։

բ

180ա ...Ջժուժկալ և զխոյիճն յաստուածային բանից ընթերցուածն և զհամբերաւղն ի խստակրաւն պահս և յաղաւթս, զերջանիկ ծերունի սուրբ վարդապետն զտէր Վարդան՝ դյորդորաւղն մեր ի դրել դրոց, աղաչեմ յիշել ի տէր, և զՍտեփաննոս փակակալ Ակաց վանացն, որ զաւրինակս շնորհեաց, և զԱխիքար հայրն, և զայլ մխաբան եղբայրութիւնն, որ կամակից եղեն ի տալն, յիշեսջիք ի տէր, քրիստոսասէր ընթերցաւղք և լսաւղք, և եղկելի գրաւղս, և աստուած զձեզ յիշէ։

գ

194ա Ճգնազգեաց կրաւնաւորացն Վասիլիւ, և Թորոսիւ, և ծնողաց նոցին ողորմեսցի Քրիստոս աստուած, և գրողի գրոյս, և իւրոցն, և որք ասեն ամէն։

դ

197ա Ողորմեսցի Քրիստոս աստուած հոգևոր եղբարց մերոց՝ պատուական քահանայիցն՝ Ստեփաննոսի և Մարտիրոսի, և ծնողաց նոցին, և որդւոյ, և բազմասխալ գրողի գրոյս, և որք ասեն ամէն։

ե

422բ Ողորմեսցի Քրիստոս աստուած պատուական քահանային՝ Մինասի և ծնողաց իւրոց, որ զայսմ նախերգան ճառիս թուղթն շնորհեաց, զի յայլ աւրինակ գտի զսա և գրեցի, և բազմամեղ գրողի գրոյս, և ծնողաց իւրոց, և եղբարց, և այնոցիկ, որ զաստուած-ողորմին ասեն, ամէն։

Կազմող՝ Մարտիրոս

զ

422բ Եւս առաւել աղաչեմ յիշել ի տէր զՄարտիրոս մեղաւոր և անարժան ծառայս աստուծոյ՝ զկազմող սորայ, և մեղաց թողութիւն խնդրել ի Քրիստոսէ, որ յաղագս յիշման զսակաւս աշխատեցայ ի սմայ. և որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոս, ամէն։

Ջեռնտու՝ Պաւղոս

է

422բ Ո՛վ եղբայրք զիս՝ զանարժան աբեղայս զՊաւղոս, բազում մեղաք լցեալ, յիշեցէք, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

313.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան 7664 (տես նաև 1548 թ.)

Գրիչ՝ Գրիգոր Սուքիասեանց
վայր՝ Սուրխաթ ֆաղաք

436ա Շնորհիւն աստուծոյ ամենակալի սկսայ և ողորմութեամբ քանա-
մոց նորա կատարեցի զսուրբ և ցանկալի աւետարանս, յաւրինակէ
սրբոյն Սահակայ հայոց Թարգմանչի՝ երկրորդ լուսաւորչի Հայաս-
տանեայցս։

Ի Հայ թուականիս ՉՉՄ. (1332), յաշխարհս Ղրիմ, ի քաղաքս Սուխթաք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Յակոբայ, և ի թագաւորութեան բ[արեպաշտ] ‖ պատանոյն Լևոնի։ Գրեցաւ սուրբ և ցանկալի աւետարանս ձեռամբ իմով՝ Գրիգորի Սուքիասեանց, ի խնդրոյ աստուածարեալ սրբասէր ընտանոյն, որ Աւետիք [յ]որջորջի, զի ստացեալ ստացուածս աստուածային կեն-
դանի յարդար ընչից իւրոց, յիշատակ բարեաց ինքեան և ծնաւղաց իւրոց։ Արդ, որ ընթեռնոյք և կամ ընդ աւրինակ դնէք, հաստատուն մտաւք հաւատացէք ստուգութեան բանիցդ և ցանկուցդ, և զսրբասէր ընտանին զԱւետիս՝ զստացող սորա և ծնաւղսն իւր յիշեսջիք ի տէր, ով սուրբ հարք և եղբարք։ Ընդ նոսին և զանարժան և զբազ-
մամեղ ծնաւղս՝ զԳրիգոր, և ծնաւղսն իմ, և ‖ զեղբարս յիշեսջիք ի տէր...։

314.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երևան կեդպ. Քանդ 69/244 (տես նաև 1341 թ.)

Գրիչ՝ Յոհաննէս

ա

342ա ...Որք աստուածային սիրոյն փափագեալ հետևին միշտ և հա-
նապազ, ի տուէ և ի գիշերի, բարեպաշտ և աստուածասէր և իմաս-
տուն պարոն Յովհաննէս և բարեհոգի կենակիցն իւր Աւագ՝ բորբո-
քէին ի սէր աստուածային զանձուցն՝ ի պայծառութիւն սուրբ ե-
կեղեցւոյ, և ի վայելումն մանկանց առաքաստի, և յետ աստի կենացս
վճարելոյ՝ յիշատակ հոգւոյ իւրոյ, և կենակցի իւրոյ, և լուսածագիկ
342բ ‖ զաւակաց իւրոց՝ Ամիրի և Մուղրիլի*, և ծնողաց իւրոց Եարվիճայ, և մաւրն իւր Ալամ տիկնայ, և հարազատաց իւր՝ Յակորայ, փոխելոյ ի Քրիստոս, և պարոն Աւագիճ, և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց, զորոյ տէր աստուած ցաւղեսցէ յոսկերս նոցա զցաւղ ողորմութեանն։ Եւս առաւել ի ժամ սոսկալի պատարագին, ցաւղեսցէ ի

* Մեկ ու կես տող գատարկ է թողնված, հավանաբար մյուս զավակների անունները գրելու համար։

հոգի պարոն Յովհաննիսի և կենակից[ի] իւրոյ Աւագի, ղի արժանասցին ի Ւրիսասսէ աստուծոյ մերոյ հանգչել ի գոգն Աբրահամու, որ և ստացան զսա ի հալալ արդեանց ի մխիթարութիւն անձին և յոյս փրկութեան յապագայի, յիշատակ բարի անջնջելի առաջի աստուծոյ։

Ես՝ յոգնամեղս և վշտասնս ի գրչաց, յանձն առեալ ըստ իմում կարի յանկ հանեալ կատարեցի շնորհաւք և ողորմութեամբն աստուծոյ, յամի ՉՉԱ. երոր ։ ղի թուարերութեանս Հայոց (1332), ի զառն և ի վշտաբեր ժամանակիս։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմա՝ յիշեսջիք և դուք՝ ողորմածն աստուած, աւրհնեալն յամենայն աղանց, ողորմեսցի առհասարակ ամենեցուն, կրկին կենաւք և երկու աշխարհաւք, և ինքն եղիցի աւրհնեալ, գովեալ և բարեբանեալ յաւիտեանս, ամէն։

բ

344ա Դարձեալ աղաչեմ յիշել ի Ւրիստոս զեղբարս մեր զշնորհ[ուն] սկ. (սարկաւագունս), և զհարկի շինողս՝ զՄկրտիչ և զԱստուածատուր քահանայ,... և զհոդիացեալ քահանայ Բարսեղ, որ զուարթ սրտիւ զկենցաղականս ի բաց դնելով, շնորհեաց մեզ զաւրինակն, շնորհեսցէ աստուած զերկնից արքայութիւն ի[ւ]ր և ծնողաց իւրոց, ամէն։

315.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Եղևան 2829

Գրիչ՝ Յովաննես

8ր Ցեւքնհարիւր թուականին,
Ցուքսուն երկրորդ սկսեալ ամին (1333),
Ի Հայկան ազգի սեռին,
Ի Թորգոմա մեծի զարմին,
Ի նեղութեանց ժամանակին,
Զոր այլազգիքն նեղէին,
Զքրիստոնեայք նախատէին,
Զեկեղեցիան քակէին,
Եւ ըղհիմունսն շարժէին.
Քահանայք նսեմեալ լային,
Եւ ժողովուրդք գումարէին։
Եւ այսպես է՞ր հանդիպէին.
Վասն մեղացն, որ գործէին,
Որ բազմացեալ էր առ նոսին,
Որպէս զՍուր հեղեղուտին։
Որպէս և ես կամ ի նմին,
Զգայարանքս տասնեսին.
Բազում չարիք, որ գործեցին,
Զայրի հոգիս կողոպտեցին,
Վէրս ի վերայ սորա եղին,
Եւ կիսամահ թողեալ գնացին,
Մինչէ զթայ տէրն ամենին,
Նորոգեսցէ ղրկեալ այրին՝
Միայնակեցն ծերունին։
Ցետոյ եկեալ նա ի մտին
Եւ զղջացեալ ըստ առակին,
Զոր է գործեաց կրասէր որդին,
Զոր հեռացեալ եղև նմին
Ի տար աշխարհ, որպէս պատմին,
Զինչս վատնեաց զհայրենին,
Եւ սովամահ լինէր հացին,
Եւ ոչ ոք էր, որ տայր նմին,
Եւ նա ցանկայր ի յեղջիւրին,
Զոր անբան խոզքն ուտէին։

Ցետոյ դարձեալ առ հայրենին,
Անկեալ ի դիրկս իւր ստեղծաւղին,
Թէ հայր, մեզա քեզ ի յերկին.
Եւ գթացեալ հայրն առ նմին,
Ի ձեռս նորա ետ զմատանին,
Զեզն եղեն զպատարկին,
Եգիտ զմեռեալն զիւր որդին,
Նուխպէշ գտաւ ծերունին,
Անուանակից Սիմեոնին,
Ցաշխատանաց իւրոց չնչին,
Ի յարծաթոյ ժանկտոհարին,
Մտացաւ զդանձո աստուածային
Ի յիշատակ հոգւոյ նմին։
Զսա ետ ի ձեռս քահանային,
Որ յանուանէ Դաւիթ կոչին,
Եւ հայրապատ որդեաց նորին՝
Սարգիս անուն քահանային,
Եւ Յոհաննէս սարկաւագին,
Եւ յետ նորա՝ Մարտիրոսին,
Զոր արժանի լինել նոցին,
Զսա ընթեռնուլ յեկեղեցին,
Ցայնժամ յիշեն զգծող սորին,
Չտառապեալ անձն ի բարին,
ՉՅովաննէս անարժանին,
Չմեզաւք ծածկեալն ի մէջ տղմին։

316.

Ձ Ա Շ Ո Ց

Փիլդ. 6273, էջ 140-141 (Մարզուանի եկեղեցի)

Գրիչ՝ Հայրապետ
վայր՝ մերձ ի Սերաստիայ

Փառք արդարև սեռն եռակն ադովնայութեան, անպարտ անխմա-նալի, անկցորդ պետականի հօր համալրարար որդւոյ տեառնէական հոգ-ւոյն տառիպի (՞) միասնական աստուածութեան։

Արդ, ես... տրուպ և մեզաւոր կրօնաւորս Հայրապետ՝ անուամբ և ձևով միայն, բայց ի գործոց թափուր և ունայն...։

Եւ եռափափագ սիրով և տենչալի ըղձիւ, մեծ յուսով ձեռն ի գիր արկեալ գրեցի զսա ի գառն և ի դժուար ժամանակի, որ ըստ ծովացեալ մեզաց իմոց յոյժ նեղին ազգք քրիստոնէից յանիրաւ հարկապահանջու-թենէ և ի զրկանաց և ի գաղտնի նենգութենէ այլասեռից, զոր ան-խընայ իբր զչար գազան խողխողեն զբանաւոր հօտս Քրիստոսի...։

Արդ, գրեցաւ տառս ի թուականութեանս ՉՁՐ. (1333), ձեռամբ

մեղաւոր և անպիտան գրչի Հայրապետի անարժան կրօնաւորի, ի գեբահոչակ սուրբ ուխտս և ի հրեշտակաբնակ սուրբ մենաստանս, որ բարձրակառոյց հաստատութեամբ շինեալ է յարքայէն հայոց Դաւթայ* յանուն աստուածունակ և լուսակիր սուրբ նշանին Քրիստոսի և սրբոյն Դէորգեայ քաջ զօրականին Քրիստոսի, մերձ ի մայրաքաղաքս Սերաստիայ, ի հայրապետութեան Հայոց տեառն Յակոբայ, և ի թագաւորութեան Լեռնի, և յառաջնորդութեան մերոյ նահանգիս և սուրբ ուխտիս սրբազան մեծ արքեպիսկոպոսի տէր Սիմէոնի, արթուն հովւի և արի հեղինակի, զոր տէր Յիսուս պահեսցէ զսա ընդ երկայն աւուրս։ Արդ, յերես անկեալ աղաչեմ զսրբազան դասս մաքրագունիցդ, որք հանդիպիք սմա և օգտիք...յիշեսջիք սրտի մտօք և թողութիւն մեղաց խնդրեցէք յաստուծոյ բազմամեղ գրչիս Հայրապետի, որ մեծ յուսով դրեցի զսա ի յիշատակ ինձ, և ծնողաց իմոց սիր Ճուանի և Շնոփորի, և եղբարց իմոց՝ Ստեփաննոսի, Սէքի, Սիոնի, և քերց իմոց՝ Տավլաթի և Կիրայի, և ամենայն զարմից, և ի Քրիստոս հանգուցեալ հոգևոր հօրն իմոյ Յոհաննիկ կրօնաւոր քահանայի...։

317.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5651

Գրիչ՝ Կիւրիոն

վայր՝ Վայոցձոր, Վերի Նորավանք մենաստան

228բ Փառք Քրիստոսի աստուածութեանն, որ ետ տկար** մտաց և մատանց ջիլս և ժուժկալութիւն ժամանել յաւարտ աւետարանիս, ի թվարերութեանս Հայոց ՉՉԲ. (1333), ի բռնակալութեան ազգին նեոտոզաց Բուռայիտոյ, ի թագաւորութեանն Հայոց Լևոնա, ի կաթողիկոսութեանն տէր Յակոբա, ի գպրապետութեանն մեծ վարժապետին և իմոյ անլուսաւոր կենացս լուսաւորչի՝ Եսայեա, ի յիշխանութեան | | | Բուր] քեղին, և երկեղագործ ամուսնոյ նորին պարոն Վախախին, և աստուածապարգև զաւակաց նոցա՝ Պէշխինին և Իւանին, և ի յաթոռակալութեան սուրբ աթոռոյս Սիւնեաց տէր Սարգսի, ի գաւառիս Վայոցձորոյ, ի մենաստանիս Վերի Նորավանս կոչեցեալոյ, ընդ հովանեաւ Մօրս լուսոյ և սուրբ Սիոնիս, ձեռամբ մեղսամակարդ անձին Կիւրիոնի | | | ***

* 1022 թվին վաստուրականից Սևբատիա գաղթած Սենեքերիմ թագավորի որդին էր։

** Մի բառ անընթեռնելի։

*** Հիշատակարանից թերթ է ընկած։ Ձեռագրում կան նաև հետագա շրջանի (1587 թ. և այլն) անարժեք հիշատակարաններ։

318.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիլոզ. 6273, էջ 142 (նաբլին)

Ստացող՝ Թորոս
վայր՝ Լիկաոնդոն գիւղ

Արդ, ես նուաստս Թորոս [քահանայ] ստացայ զսուրբ աւետարանս,... մնասցէ այս սուրբ աւետարանս ի սուրբ Աստուածածինն, ի Լիկաոնդոն, զոր ես իմով աշխատութեամբ և ծախիւք կանգնեցի... այնպէս մնայ ի գեաւղն Լիկաոնդոն, ի սուրբ Աստուածածինն, ի թվին Հայոց ՉՁԲ. (1333)։

319.

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՃԻ ԲԱՆՔ

Երեան 2557

Գրիչ՝ Ղազար

131ա ...*Ճամբ ՉՁԲ. (1333) ի խնդիր ելեալ աստուածունակ տառիս յոյժ փափուգմամբ և համառաւտ ետ պրել զայս նուէրս բարեաց ոմն հողիացեալ և աստուածամերձ հաւրն՝ որբասէր և հաւատարիմ եղբայր Սեթ անուն յորջորջեալ, և մնծաւ փափաղմամբ ստացեալ զսայ ի վայելումն անձին իւրոյ և ի մխիթարութիւն հոգւոյ, և յիտ ելից յաստեացս՝ յիշատակ անջնջելի իւրն, և ծնողացն իւրոց, և ամենայն ազգայնոցն՝ զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ։*

131բ *Ես անպիտանս ի մանկունս ակեղեցւոյ Ղազար մակագրեալ անուն, տեսեալ զփափագ և զսէր սորա, յանձն առեալ ըստ իմում կարի և համառաւտ կատարեցի զբանս աստուածարեալ և հողիընկալ սրբոյն Գրիգորի վարժապետի Նարեկա վանից վանականի...։*

132ա ...*Սղալանաց զրկս աղաչեմ մեղադիր չլինել, զի տեղիքս, որ կու գր[է]ի առանձին չէր, այլ և կար մեր այս էր։**

---

* *132ա, 130ա, 149ա, 149բ, 156ա, 156բ և 157ա էջերի ներքին լուսանցքներում ծդ. կամ ծն. գրել ստացողներից մեկը, կարմիր թանաքով, թողել է այժմ խունացած և չափազանց գժվարընթեռնելի գրածի մի հիշատակութիւն։ Մեծ գժվարութեամբ կարողացանք վերծանել այն հետևյալ կերպ՝ «Ո՛վ կարդացեալ չեղբայրք ծավսէ կարդոսրի, որդիք Զաք[էո՞]ի, գարձէք ի չար սերտումանց սատան[այ]ի, և տուք զգր[է]անքն ձեր հայրենի՝ գմեկն <կն> ոգ սուրբ պատարագի և տովմարի, եւ լուծմունք ճ. [հարիւրա]ւորի, զրըժշկաբ- ‖ <ար>ան, հին և նորի։ Գաւառապետք եղն այն որ ի, ‖ յիշեմք զրանն ձերոյ հա[յ]ր եպիսկոպոսի Առաբեալ անուն Վայուձորեցի, որ վշտացեալ էր ‖ հարկապահա[ն]ութենէ ծավ[ա]էի որդոյն էսաի, մեք այլ վշտացաք, ‖ և առաքեցաք զԳրիգոր մեր հոգևոր որդի եր<եր>եսփոխան զորդի պարոն Տարսաիճի ‖ և զ'ուսկանսիլ արեղայդ, զինչ նայ հաղէք (՞)...էզ Ուաելիին եղն և կով կթոց, ‖ ամենից վկայութիւնն մեզ է հասեալ, որ չէ նա տէր առք (՞)։*

320.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 4674 (անս նաև 1459 թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Աղթամար

611ա ...Այսմ հոգեւոր և աստուածային գանձուցս եկեղեցոյ ցանկացաւ այր ոմն բարի շառաւիղ, և ընտրեալն ի տանուտէրանց, և աստուածասէրն ի քրիստոնէից, որոյ անուն Յակովբ ճանաչի. սորա...չարժեալ յազդմանէ սուրբ հոգւոյն, ջեռեալ աստուածական ոիրովն, բորբոքեալ անծախական հոգւովն. ախորժական կամաւք և մեծաւ տենչմամբ ելեալ ի խնդիր այսմ...աստուածական տառիցս, գեղեցիկ և պատուական մարգարտիս, զոր սուրբ և երանելի շնորհալից վարդապետն Սարգիս մեկնեալ, զեւթն թուղթքն կաթողիկեայք...: Զոր աստուածասէրս տանուտեարս այս Յակոբ ստացաւ զսա զաւակ ի Սիոն և ընտանեակ յԵրուսազէմ, անչնջելի արձան ի մխիթարութիւն անձին և ի յոյս փըրկութեանն: Եւ ետ զսա ի տաճար սրբոյն Սահակայ, ի հոչակաւոր և յանուանի քաղաքն Վան կոչեցեալ:

Եւ ես՝ յոգնամեղս և փցունս ի գրչաց, բազմամեղ և դատապարտեալ ծառայս ծառայիցն աստուծոյ անարժան Կարապետ, տեսեալ զփափագ սորա և զսէր, յանձն առեալ ըստ իմում կարի, յանգ հանեալ կատարեցի իմով մեղսամած մատամբս, շնորհաւք և ողորմու-
611բ թեամբն Քրիստոսի, գրելով զսա ի կղզիս, որ կոչի Աղթամար, ընդ || հովանեաւ սուրբ Խաչիս, և սուրբ Նշանիս, և աստուածամուխ սուրբ Գեղարդեանս, ի Թուականիս հայոց ՉՉԲ. (1333), ի հայրապետութեան տեառն Զաքարիայի և յաշխարհակալութեան նեստողական ազգին, ի գառն և ի վշտաբեր ժամանակի:

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան, զհամաւրէն որդիսդ լուսոյ, որք լուսաւորիք աստուածային գիտութեամբ սորա ընթեռնուով և լսելով, վասն սիրոյն Քրիստոսի յիշեցէք ի սուրբ և յերկնաթռուցիկ չաղաւթս ձեր զստացող սուրբ դրոցս՝ զՅակովբ, և զծնաւղսն՝ զՄատթէոս քահանայ, և զկենակիցն՝ զԱւագ, և զնորին ծնաւղսն, և զծագկեալ զաւակքըն՝ զՍտեփաննոս և զայլն ամենայն, և զազգն ողջոյն, զի արժանասցին ողորմութեան ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ և աւրհնեսցին յաւրհնութեանն պահու:

Ընդ նոսին և ես՝ ամենամեղս ի գրչաց Կարապետ, յերես անկեալ աղաչեմ յիշել և զիմ անարժանութիւն, վասն որոյ, չահէ և յերկիւղէ աննեղելի տանջանացն զարհուրեալ, զսուրբ գիրքս զայս արարի պատճառ փրկութեան և առ աստուած բարեխաւս հաշտութեան ինձ, և ծնաւղաց իմոց՝ Թումայի և Մամախի, և եղբարցն, և ազգայնոցն ամենէցուն՝ կենդանեաց և հանգուցելոց, և ամենայն երախտաւորաց: Ցիշեցէք և զայնոսիկ, որք յուսով և հաւատով կամ բանիւ և արդեամբք յանձնե-

ցին ի մեզ զինքեանս յիշել յաղաւթս մեր կամ ղրել ի սուրբ դիրքս յայս. և որք աշխատեցան ի նիւթս սորա կոկելով և ի հարկաւոր պէտս մեր սպասաւորելով, որոց վարձս բարեաց հատուսցէ տէր աս-
512ա տուած։ Այլ և բարեկամաց մերոց և սիրելեաց... ‖ ... և գուսուցչին մեր և դհաւրեգրաւր՝ ղընտրեալ եպիսկոպոսի տէր Դանիէլի, և զիւր ծնողացն, և զսրբասէր կրաւնաւորի Ստեփաննոսի, որ եղև միջնորդ այսմ բարի գործոյ...

321.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փիլդ. 6273, էջ 143 (կարին, սբ. Աստուածածին եկեղեցի)

Դրիչ՝ Խաչատուր
վայր՝ Լիմ Կղզի

Փառք եղակի անճառելոյ...եւ ես՝ ամենամեղս և վշտունս ի գրչաց եպիսկոպոս Խաչատուր, յանձն առեալ կատարեցի [աւետարանս ի թուին] ՉՉԲ. (1333), ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, դրեցաւ ձեռամբ մեղապարտ գրչի, ի Լիմս՝ ի հռչակաւոր և ի մեծ անապատի, ընդ հովանեաւ Աստուածածնի և Դէորգեայ զօրավարիս... [ի խնդրոյ Ահարոն կրօնաւորի]։ Դարձեալ աղաչեմ յիշել զՇատլուս միաբնակեացն և զընկերակիցն իւր զՅոհիա, զՄխիթար և զայլս, որք միաբորհ են և միակրօն, հանդերձ ծնողիւք։ Ընդ սոցին և ես՝ մեղապարտս ի գրչաց Խաչատուր եպիսկոպոս, յերես անկեալ աղաչեմ յիշել և զիմս անարժանութիւնս, և զծնողսն իմ զՅովհաննես կրօնաւոր, որ միշտ և հանապազ մեզ կու սպասաւորէր։

322.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 1270

Դրիչ՝ Մարգարէ

ա

45ա ՈՒ՞ր սուրբ և պատուական բարուն տէր Ահարոն*, բնակալ զսակաւ դիրս և զիս յիշ[եա]։

բ

104ա Զմեղապարտ գր[իչ] զՄարգարէ աղաչեմ յիշել ի տէր Յիսուս Քրիստոս։

---

* Նախորդ հիշատակարանի ստացող «Ահարոն կրօնաւորի» հետ նոյնացնելով սուրբ Ահարոն բարունակն, այս անթվական հիշատակարանը տեղադրում ենք նրան առընթեր, 1333-ի թվաշարքում։

323.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*Երևան 9222,գ**

Գրիչ՝ Յուճաճ
վայր՝ Գայլիձոր

...Ընդ որս և ես՝ յետինս ի յաշակերտս բանասիրաց և կրսերս ի յընկերակցաց Յուճաճ գծող ապիկար, եկեալ առ ոտս մեծիս ի վարժապետաց և առաջինս յիմաստասիրաց Եսայիաս կոչեցեալ, որ յայսմ ժամանակի վայելէ իրրև զարեգակն, լուսաւորելով բանիւ իմաստից զազգս Հայկազեան, նաև զբոլոր տիեզերս շրջակայական. և եղէ ցանկացող այսմ սուիերի. և աշխատութեամբ երկոց մակագրեցի զգիրս յառաջասացեալ իմաստասիրացն, ի վայելս անձին իմոյ տկարի, և յիշատակ հոգւոյ իմոյ հիքականի, և ծնողաց իմոց, և վարդապետաց, և համօր[էն] երախտաւորաց։

Բայց զրեցաւ ի Թուի Հայոց ի յԼԹ[ն]հարիւրորդի ութսունեւրորդի երրորդի (1334), ի Զորս Վայոց, ի յանապատիս մեծափառ Գայլիձոր կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի Նախավկայի և աւգնականութեամբ մեծ վարժապետիս վերասացեալ Եսայեայ, ի յիշխանութեան և տէրութեան համօրէն գաւառացս մեծ իշխանիս Բուրքելի, և որգոց նորին՝ Պեշգենի և Իւանեի, իսկ ի տեղւոյս տէրութեան՝ թոռանց մեծին Պռոշայ՝ Ամիր Հասանայ և Զումայի։

Արգ, յաղերս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ինչ ի սմանէ, ընթեռնուով կամ աւրինակելով, յիշեսջիք առ Քրիստոս գիս՝ զանարժան գծողս և զամենայն երախտաւորքս, որք յիշեցան ի սմա, զի և ձեզ հասցէ մասն բարի ի բոլորեցունց աստուծոյ, որում փառք յաւիտեանս, ամէն։

324.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Թորոս Աղբար, Բ. էջ 375 (կէսօք թէփէ գիւղէ եկեղեցի)

Գրիչ՝ Ոսկան
վայր՝ Գլաձոր

...Գրեալ[եղև աւետարանս այս ի Թվ. Հայոց]...ՉՉԳ.(1334), ձեռամբ Ոսկան վարդապետին, ի Վայոցձոր, ի վանս Գլաձոր՝ առաքք Ստեփան-

* Գտնվում է Մատենադարանի պատկերների ֆոնդից հանված հիշատակարանների ժողովածուի մեջ (Ձեռագիր, № 9222)։

նոսին, ի քաղ[աւորութեան] Հայոց Հեթմոյ ճգնաւորի եւ աստուածասիրի, ի հայրապետութեան տեառն Գրիգորի,* եւ յիշխանութեան այսմ նահանգի պարոն Բուրքէլի, եւ ի վերատեսչութեան հոգւոյ մերոյ տէր Յոհաննիսի, եւ ի դաստիարակութեան Հայոց դպրոցի Նոայի վարդապետին...:

Յիշեցէք եւ զՄլէջաեաց.., զՑիրաւագն, զմայրն՝ զհարն, զաւակն՝ զԱնտոնն, զերէցտիկինն եւ զհաւրաքոյրն՝ զԱզգատիկինն..., զպարոն Նոադարն, զՇոթոիկն եւ զՈւխտոն, զտիկնայքն՝ զՎանենի եւ զՄամխոնն...:

325.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Ալիշան, Սիսական, էջ 20 (Վենետիկ)

Գրիչ՝ Աւագ
վայր՝ Սիւնիք

Մեծ և ամենաերջանիկ մետրոպոլիտն և արհիական գլուխն այսմ [Սիւնեաց] նահանգիս տէր Սարգիս խնդրող լեալ... ի վայելումն անձին իւրոյ սրբազանի և եղբօրորդւոյ իւրոյ Ցավհաննիսի՝ կուսակրօն քահանայի, որ բազում ժամանակս գեղերի յուսումն աստուածաշունչ հին և նոր կտակարանաց և արտաքնոցն եւս ...Այլ և աղաչեմ... յիշել յամենայն սրտէ զարհիական գլուխն զտէր Ներսես, և զազգայինս նորա զամենայն՝ զհայրն Գրիգոր և զեղբայրն նորա Սարգիս սարկաւագն՝ ի Քրիստոս: Եւ դարձեալ կրկին աղաչեմ յիշեցէք և աստուածողորմի ասացէք Ներսես բարեւնապետին:

326.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՔՏԱՄԱՆ ԹՂԹՈՑ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ, ԵՓՐԵՄԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

Երևան 1379

Ստացող՝ Կիրակոս Ագրկցի
վայր՝ Երգնկայի գաւառ

ա

354բ ... Ազքանազեանըս գըրոհի
Թուաբերութեանս համարի
Եւթնհարիւր ընդ ութսուն և երրորդի (1334)
Զրաւ եղև այսմ տառի.
Ի գաւառիս Եգնկայի,

* Թվականը՝ ՉՉԳ. (1334), անտարակույս սխալ է: Հեթում Բ. քաղավորը սպանվել է 1307 թվին, Գրիգոր կաթողիկոս Անավարզեցին գահակալել է 1293—1307 թթ., ուստի սուն հիշատակարանը գրված կարող է լինել մինչև 1307 թ., ամենայն հավանականութեամբ՝ ՉԾԳ. (1304) թվին:

Ի խանութեան Բաւսաիտի,
Հայոց՝ Լևոն Թաղաւորի։
Կիրակոս, մեղաւք մեռեալս ոդի,
Որ սպասաւոր գոլով բանի,
Ստացաւղ եղէ այս մատենի,
Ի յարդասեաց այլոց՝ ձրի,
355ա Ցերեսս ‖ անկեալ միշտ ամենի
Մաղթեմ ղեկեալսդ մեր ղևնի,
Ցիշել ի տէր յայսմ վայրի
Զերախտաւոր այս մատենի։
Եւ դուք լինջիք ի նոյն բարի,
Ցահեղ աւուրն աներեկի.
Եւ տէր աւրհնեալ յամենայնի,
Ամէն, ամէն և եղիցի։

Բ

49բ Ո՛հ հարք և եղբարք, վարժապետք և վարժողք, վարդապետք և աշակերտք, ուսուցիչք և ուսեալք, դասատուք և դասառուք, քննաւղք և քննիչք, խոհեմատուք և խոհեմառուք, հռետաւորք և հռետողք, յորժամ հանդիպիք, բանի սպասաւորք, իմոյս տարսոնականի, անաւթոյս ընդրելի տիեզերալուր վարդապետի՝ երիսս երանեալ Պաւղոսի, որ գրեաց զթուղթս առ Գաղատացիս, շնորհաւք անուամբ Ցիսուսի, յիշատակեցէք ղնեոպարոն ի բարի, որ ետ դրել զսա յաւժարական կամաւք ի լի, սիրահարուստ վարդապետի Ագրիկոյ Կիրակոսի, վարդապետաց վարդապետի, իւր և ծնաւղաց անջնջելի, մինչ ի գալուստն Քրիստոսի, ամէն, ամէն, և եղիցի։

Ողբերգական ճուխ պատատանաց ի խոր սրտէ և ադաչանէ*

Զմեղաւք դատապարտեալս և զանարհեստ գծող տառիս աղաչեմ, պաղատիմ, խնդրեմ, աղերսեմ, հառաչեմ, գոչեմ, ձայնեմ, մաղթեմ մեղաց Թողութիւն խնդրեցէք ի հաւրէ մերմէ և ի տեառնէ Ցիսուսէ Քրիստոսէ, ամէն։ Եւ զերկուսին աշակերտքս իմ այլ յիշեցէք ի տէր՝ զՅովճաննէս և զԳրիգորէս, ինև հանդերձ։

Գրիչ՝ Թորոս

Գ

91բ Զմեղաւք դատապարտեալ և զանարժան Թորոս յիշել ի տէր երկնահանդէս աղաւթիւք ձերովք, և ընդ նմին զարժանս յիշելոյ զՆորրազգն՝ հանգուցեալ ի տէր, զբարեսէր որդեակս նորա՝ ըՄէծպարոն, որ ետ դրել զսա յիշատակ ի փառս անեղին յաւիտեանս, ամէն, ամէն։

* Վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

Միւս դրիչ՝ Մանուէլ

դ

354բ Ջստացաւզ գրոցս՝ ղերջանիկ և զանհուն բարունապետն զկիրակոս, և զեղբաւրորդի իւր զՅովաննէս վարդապետ, և ծնաւղսն նոցա յիշեցէք ի Ւրիստոս. ամէն: Ոհ, աղաչեմ յիշել զմեղաւք մեռեալ հողի զծողակիս զՄանուէլ, հանդերձ ամենայն զարմիւք ի տէր աստուած:

327.

ՁՈՐԵՒՏԱՍԱՆ ԹՈՒՂԹՒ ՊԱՀՂՈՍԻ ԱՌԱՒԵԼՈՑՆ

Երևան 78

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Թաւրէժ

ա

291ա ... Ցամի եւթնհարեւրերորդի ուխտներորդի երրորդի թուականութեանս Հայոց (1334) գրեցաւ տառս աստուածային և երիցս երանեալ սրբոյ առաքելոյն Պաւղոսի... որ չորեքտասանեքումբք թղթովքս պարունակեալ համայն վարս բարեղարդութեան ծնելոց ամաց: Աստանաւր յանդ ելեալ նորոգեցաւ գիրս այս Պաւղոսի առաքելոյ ի մայրաքաղաքս Թավրէժ, որ կոչի վրէժ ընդ հայք և ընդ պարսիկք, ընդ
291բ հովանեաւ սուրբ Աստուածածնիս մաւր լուսոյ և սրբոյ դինաւո || րին սրբոյն Սարգսի և յորդւոյ նորա Մարտիւրոսի:

Այսմ աստուածազարդ սուրբ առաքելոյս ցանկացող եղեալ հաւատարիմ և բարեպաշտ քրիստոնեայն Յոհաննէս,* և ստացաւ զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, զսա ունելով ապաւէն իւր և ծնողաց իւրոց:

Ի վերջնում գիշերին, ի ծագել մեծի և աներեկ առաւաւտին, ընդ ամենայն արդարացեալսն հասանել լուսոյ փառաց որդւոյն աստուծոյ, այցելութիւն գըտանել առաջի ահաւոր բեմին և անաչառ դատաւորին: Ընդ նմին և զապիկար գրիչ զՍարգիս ս[ար]կ[աւագ], որ կարի տաժանմամբ և մեծաւ տառապանսւք ըստ կարողութեան իմոյ
292ա ըստքեցի, || մանաւանդ և ի չանս սաստիկ յածիլ, շրջիլ, ազերս մատուցանել սակս գաղափար առնլոյ սրբաբանութեամբ ընտրեալ, մինչև տեղեման իմոյ ոչ զկնի գտանիլ, զտի զաւրինակս ի նմանս անհամեմատ ստուգութեան: Վասն որոյ ժտիմք պաղատանաւք, որ ընթեռնուք, կամ աւրինակէք, կամ ուսանիք, աղաւթս անմոռաց յարաժամ աւժընդակ տալ յաւղնականութիւն, յիշել ի մոռացումն յանցանաց: Զի թերևս ողորմութիւն գտեալ յաներեկ աւուրն այց առնել փրկչին գրեսցէ ի կենացն գպրութիւն զամենեսեան առհասարակ՝ գյիշողս և գյիշեցեալս, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

* Ստացողի անունը գրված է այլ ձեռագրով:

Սրբագրող՝ Գրիգոր

բ

292բ Առաջնոցդ երախտաւորաց և աշխատողացդ յիշեսջիք և զաշակերտ բանի զԳրիգոր մականուն մեղուցեալ, որ բազում աշխատանաւք փոքք ինչ նպաստ եղէ յուղղութիւն գրոցս՝ ի բանս, ի բայս, ի կէտս և յոլորակս, զորո թէ մանրամասնաբար և մտաղրութեամբ ընթեռնուցուս՝ ղացես, և թողութիւն մեղաց խնդրեսցես բազում և անթիւ սխալանաց իմոց. ընդ խնդրուածոց իմոց և ձեզ եղիցի մասն բարի յամենառատ պարգեացն Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն. ի թուի ՉՂԴ. (1345)։

328.

ՁԱՌՆՏԻՐ

Վէնետ. 232 8ուց. հա. Բ. էջ՝ 511—512

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Կաֆա

ա

207ա Զսրբատնեալ վարդապետն զԱւետիք խոտաճարակն, և հոգևոր երկամբք ծնեալ որդիքն իւր՝ Միխալ միայնակեացն, զՄարկոսն, զՎարդանն, զԹադեոս, զՆերսէսն, զԹորոսն յիշեցէք ի Քրիստոս, որ վասն արքայութեանն յուսոյն եղեն կրաւնաւորք և ետուն զինչս իւրեանց ի աէր վարդապետն. և նա, Թորոս վարդապետին ձեռամբ, ետ շինել զսուրբ Երրորդութիւնն յաստուածապահ քաղաքն Կաֆա, և եղ անդ զտաւնական դիրքս յիշատակ իւրեանց և ամենայն աշխատաւորաց։ Արդ, որք կարդայք և որք լսէք, յիշեցէք երախտաւորքս, որ ասա։

բ

312ա Բարեխաւսութեամբ սրբոցն եւթանասունեերկու առաքելոցս, տէր աստուած, ողորմեա ստացողի սորա Աւետիք վարդապետի, և ծնողաց իւրոց, և ինձ՝ ապիրատ գրչի, և իմոց ամենեցուն, և սորին աշխատողի [Գրի]գորի, և լսողաց, և ընթերցողաց, և Թորոս կրաւնաւորի, և Մարկոս միայնակեցի, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։ Նաև այլ արդ իւնաւորաց գրոցս՝ Յովհաննես երիցու, և քւեր իւր Աննայիկ, և Վասիլ երիցու, որ գյոլով մասն գրոյս ետ ի նիւթ սորա և ի գրիչն, Բահատուր բազպին, պարոն Նասրատինի, Սիմէոն չրախճուն, մանկաւագ Կազուրին, պարոն Ավրատին և այլ երախտաւորաց։

գ

214բ Տէր մեր Յիսուս Քրիստոս... ողորմեա ստացողի սորա Աւետիք վարդապետի, որ յորզորեաց զրաղումս ի բարեգործութիւն և գարգարեաց զեկեղեցի սուրբ. շինեաց զեկեղեցի գմբեթ և յանուն սուրբ Աստուածածնին՝ ի Գամճակ վանքն, և մի եկեղեցի՝ յաստուածապահ

քաղաքն Կաֆա, և ետ գրել տաւնական երկու, զմինն ետ ի Քամճակն և զմիւսն՝ ի Կաֆայիճ եկեղեցին՝ ի սուրբ Երրորդութիւնն, եւ եղ աւրհնութիւն, զի խնամով պահեսցեն և մի ոք ձեռնամուխ լիցի, զի սոքա, որք աւգնեցին ի զին սորա՝ վասիլ երէցն, և Յովհաննէս երէցն, և Սիխալն ասացին, թէ անէծք գրեցէք, որ ի մեր ազգականացն ոք ձեռնամուխ լիցի, նա չկամեցաւ վարդապետն [ասելով], թէ աւրհնութիւն լաւ է քան զանէծք։ Գրեցաւ գիրս ի Քրիստոսի մարդեղութենէն ՌԳՃԸ. (1305),* ամէն։

ՉՉԳ. (1334) հայոց թվին գրեալ է։**

329.

ՄԱՇՏՈՑ

Փիլդ. 6273, էջ 143—144 (Վան, Մանդան գիւղ)

Վայր՝ Արճէշ

... Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ գիրքս հօրն Մաշտոցի ի ստոյգ և յընտիր օրինակէ, ի քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Գրիգորի, և սուրբ Յակորայ, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, և ի թուականութեանս Հայոց ՉՉԳ. (1334)։ Յիշեցէք ի Քրիստոս... զստացողք սուրբ զրոցս զկուսակրօն և զճգնաւոր միայնակեաց զեզբարքն չորեսին՝ զՍարգիս, և զՍէթ, և զՍիմէոն, և զԹումայ, որք շինեցին զսուրբ եկեղեցիս՝ զսուրբ Առաքեալքս յարդար վաստակոց իւրեանց, ի գիւղաքաղաքն Ականց, և եղին անդ զգիրքս մաշտոց յիշատակ հոգւոց իւրեանց և ծնողաց իւրեանց՝ Մառուրի և Արևտիկնայ, և զիմ անարժանութիւնս յիշելոյ արժանի առնէք ի տէր՝ զամենամեղ գրիչս, և զմեր ծնողսն, և զերախտաւորն մեր և զուսուցիչն՝ զՍիմէոն քահանայ...։

330.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վէնետ. 164, 8ուց. հ. Ա. էջ 698

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Կիլիկիա

346բ ... Գրեցաւ սա ի Կիլիկեցւոցս աշխարհ, ի թուականութեանս Հայոց ՉՉԳ. (1334), ի հայրապետութեան տեառն Յակորայ, և ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի որդւոյ Աւշնի արքայի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Նշանիս, ձեռամբ ամենաթշուառի

* Գուցե պէտք է լինի ՌԳՃ[Լ]Ը. (1335)։
** Վերջին տողը գրված է լուսանցքի վրա։

Գրիգորի, ժանտատես գրով և բազմաշփոթ մտաւք։ Ի խնդրոյ հոգևոր եղբաւր մերում, պատուական և սրբասնեալ քահանային Պաւղոսի, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի իւր, և ծնողաց իւրեանց, և եղբարց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք պատահիք սուրբ տառիս, յիշեսջիք ի տէր զպատուելի քահանայն Պաւղոս, և զհայրն իւր՝ զԿարապետ, և զմայրն իւր, և զեղբարսն՝ զՄարտիրոս և զԳէորգ՝ զյաւժեալսն առ Քրիստոս, և զմիւս եղբայրն՝ զԿոստանդին, և զքոյրն՝ Աղրրաց, և զայր նորին՝ զԳրիգոր, և զհոգևոր որդին իւր՝ զՅովաննէս, և զհայր նորին՝ զԱնպետ ոսկերիչ՝ զհանգուցեալն ի Քրիստոս, և զեղբայր իւր՝ զԿոստանդին, և զամենայն ազգայինս նոցա, որոց ողորմեսցի տէր Քրիստոս և շնորհեսցէ յարութիւն կենաց, ամէն...։

331.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 3276

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Մեծոփայ վանք

44ա ...Իսկ յետոյ մակագրեալ եղև* իմով ձեռամբ ի ղէմս քարտիսի՝ Գրիգորի արեղայի և սուտանուն կրօնաւորի, ի թվի Հայոց ՋՁԳ. երորդի (1334), ի լուսազարդ աննպատիս Մեծոփայ վանք առաջնևլոյ, ընդ հովանեաւ սուրբ մօրս լուսոյ աստուածածնի, ի յիշատակ բարի հոգևորական օգտից Վնգենայ կուսակրօն միայնակեացին։

* Նոսքը Մխիթար Սասնեցու աշխատությունների ընդօրինակության մասին է (տես՝ № 200 հիշատակարանի ծանոթությունը)։

332.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 2776

Գրիչ՝ Գրիգոր Երից

... Այս ամենայն աքանչելիքս, որ սուրբ գրաւքս մեզ դուցան,
Ի յԱզամայ եղև սկիզբն, մինչև ի յայս նոր թուական՝
Եւթն հարիւր ութսուն և չորս (1335), որ զաւրացան յազգն
Հագարեան՝
261ա Իսմայէլեանք և մոգականք, որք ընդ իրար կան միաբան,
Ի յայսմ ամի էր զաւրացեալ Բուսայիք ղաճ
Եւ ընդ իւրոյ իշխանութեամբ ունէր զաշխարհս ամենայն,
Խորասան տիրել ուժգին, մինչև ի գետն Ամու անբւան,
ԶԱսորեստան և զՄիջագետն և զԲաբել աշխարհն ի լման,
Զկիլիկիայ և զՀռոմ, նայ և զաշխարհն Պալեաւեան,
Նայ և զաթոռ սաղմոսողին և զգաւառն վրացական:
Ժանտաբարու եղեալ զազան քրիստոնէից ազգիս Հայկեան,
Է ծարաւի մերո արեան գաղանարբու կարճի նըման,
Նայ մարտ եղեալ յեկեղեցիս և տապալէր զամէն սահման,
Եւ խորհուրդ չար միտս ունելով կապուտ կտաւ եղեալ նշան,
Կոփահարեալ յամէն դիմաց զմեզ առնէին հալածական.
Փրկչին հրամանքն աստ կատարի յաւետարանն, որ մեզ
կարդան,
Ի ժողովոյն իւրեանց պղծի զձեզ արտաքսեն վաըըստական,
261բ Մեծ բռնութեամբ լինէր տիրել ուրախալի անվրիպական:
Ի յայսմ ամի էր թագաւոր ազգիս հայոց յոյժ գիտնական
Լևոն անուն, յազգէ մեծաց և հարազատ յոյժ աննմանն:
Այս ամենայն բանքս, որ աստի~անտի ի մի ժողովեցան,
Վանն միոյ պատուականի, որ յայս վայրի ներգործեցան,
Եպիսկոպոս մի հրաշալի, բազմաց պատուած և մեզ ցուցան,
Տէր Մաթէոս սա անուանի՝ որոց 'ւ այրեաց եղեալ պաշտպան.
Հետևելով փրկչին ձայնի՝ հոգալ զաղքատս 'ւ ածել սեղան,
Ցոլով ազաւթս առանձնական սա կատարէր արիական,
Եթէ աստուած փրկեաց զաշխարհս ի խաբողէն իւրմէ սահման,
Բայց հիացումն զիս պատեաց, զինչ սա հոգայր զազգս մարդկան,
Չի հողեղէն մարդ յաշխարհի զանձն կամաւ տվեալ մահուան,
Ի յաշխարհէ չհրաժարելով և տիրելով երանութեան.
Ահա տեսաք նոր աքանչելիք և կատարեալ զփրկչին հրաման,

262ա Թէ վաճառէ, զոր ըՈՒՆ ունիս, լեր իմ դանձին վաճառական,
Հղմեծութիւնն ոչ թողլով, ստացաւ զակունքն պատուական,
Գանձէ զգանձն իւր ի յերկինս, վառաւորեաց զաստուածընդ բան։
Դառն և ի վիշտ ժամանակիս, որ քրիստոնեայք մեղաւք մեռան,
Զսովորական մեղքն չթողուն սրհամարհել զպատուիրան,
Անւամբ կոչեալ են քրիստոնեայք, գործով հեռի յոյժ անպիտան,
Չխոստովանեալ զծածուկ բան, լուկ հաղորդին յոյժ անարժան,
Ապիրատ ՚ւ անբարտաւան, յեկեղեցոյ դուռն ոչ երթան,
Ոչ սրբոց տաւն մեծարեն, ոչ աւտարաց գնեն սեղան։
Տէրն ոչ արար ընդ մեր մեղացն, աստուածութեան կամք
քաղցրացան,
Ցարոյց կրկին կանկնող ընութեանս, րոտ առաջին մաքէոսեան.
Լուսաւորիչ սուրբ հաւատոյս, որպէս Գրիգոր Պարթևական,
Որ զշարժեալ թոյն մահաբեր իժիցն արար փախստական
Ջաղկեդոնի [չար] անգեղով՝ գնեստոր առնէր քշւառական։
262բ Այլ և գալիս բռնաւորաց քաղցրացուցեալ յոյժ աննման,
Որք հանապաղ մեծ վիշտ կամին փոքրիկ գնգիս այս պետրոսեան,
Իսկ սայ նման սուրբ Գէորգայ՝ Թէոդորոս չարին սուզան,
Եւ սուրբ Սարգսի յոյժ զաւրութեամբ, Մեռկեռոսի խաչիւ նշան,
Եւս առաւել տէր Մաքեոս փայլեաց ի յաղգս հայկազան,
Որպէս զարծիւ սլանալով առ թագաւոր և ընդ իշխան,
Շինողացանէր զբարկութիւն, որ բորբոքէր բաբելական։
Ցոյժ տրտմութիւն փարատեցաւ, ի խաւարչէն ղերծեալ լուծան,
Զոհւ և զդիշեր ոչ դադարեալ զաղաւթս առնել, որ իւր սահման։
Ոչ թէ լսել եմ և գրել, այլ իմ տեսած է զինչ գրեցան,
Կամք ունէի յերկար ասել, թէ կարգացուզքն չձանձրանան։
Պիտէր ի յայս ժամանակիս սուրբըն Ներսէս աստուածարան,
Որ նա պաավէր զինչ որ արժէր զիմ հոգևոր տէրս պատուական.
263ա Թէ չէ ես ինչ արժան լինիմ ի դէմ մարդկանց խաւսել մէկ բան,
Եւ կամ շինել ոտանաւոր անճառիցս այս վիպասան,
Զի մեղուցեալ և ապիկար, տկար ոգի անձն անարժան,
Այլ զի տեսի զայս բարութիւնս, որ յիմ աւուրս գործեցան,
Ցայնժամ և զիս ստիպումն հոգոյս յագթեաց ՚ւ ասել ետ ինձ
զայս բան։
Բայց թէ կամիս հարցող լինել չեմ յայս տեղեացս ես բնական,
Այլ և աւտար ի սահմանացս և անբնակ մոլորական,
Զունիմ դադարք ի մի տեղի ոչ մի աւուր հանգըստարան,
Եւ թէ անունս հարցանես Գրիգոր չերէց եմ անարժան,
Որ կարգեցի յայսմ տառի տունքս թվով հարիւր և քսան։

333.

ԱԻՏԱՐԱՆ

Ներան 7599 (տես նաև 1604 թ.)

Վայր՝ Կարին

281ա ... *Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, իմ մահու չափ մեղացն, որ գործել եմ, թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, և մեր ծնաւղացն, հաւրն իմոյ Վարդերեսի, և մաւրն իմոյ Հարկիէ տիկնայ, և արեամբ նահատակեալ եղբաւրն իմ Գրիգորու, զոր և մեղ խնդրէք՝ տացէ ձեզ Քրիստոս։*

Գրեցաւ ի նեղ և զառն ժամանակիս, ի զանութիւնն ա[յ]լազղեաց Բուսուպիտին, ի հայրապետութիւնն մեր տէր Յակոբայ, և ի հայոց թագաւորութիւնն Լեւոնայ, ի թվ. ՁՁԴ. (1335), և ինքն աստուած աւրհնեալ յաւիտե[ա]ն։

281բ *Գրեցաւ ի Կարնոյ քաղաք, րն|դ| հովանեաւ սուրբ Ստեփանոսի Նախավկային, աղաչեմ զգալանաց կամ պակասութեան մի մեղադրէք, ի զառնութեան ժամանակիս և ի նեղութենէս, ի սրտիս տրտմութենէս այս չափս գրեցաւ, մէկ բերանով հայր մեր յերկինս ասացէք և հառաչմամբ սրտիւ թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ, և աստուած մեր յիշողացտ ողորմեսցի, ամէն։*

334.

ԱԻՏԱՐԱՆ

Վասպ. 115. Լալ. Ցուց. էջ 248—249 (Աղթամար)

վայր՝ Ուռնկար անապատ

Գրեցաւ գերարիիս այս և գերալուրս... ի յանապատիս Ուռնկար կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և յաղթող և աստուածընկալ սուրբ Նշանի, և սրբոյն Ստեփաննոսի, և առաքելոյն Պետրոսի, ի յաշխարհակալութեանն Բուսայիդ զանին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, ի յառաջնորդութեան տեզոյս Ղազար կրաւնաւորի։ Ձիշատակ ամենիմաստ, ամենագով, քաղցրահայեաց և արդիւնակատար, սրբաբանեալ և աստուածահաճոյ, սրբասէր | | |

335.

ԱԻՏԱՐԱՆ

Ալիշան, Հայապատում, էջ 527

... Ցայսմ ժամանակի երեւեալ քաջ և արի, յաղթող և բարձրաբազուկ իշխանաց իշխանն՝ յազգէ Վաչէի, որդի Տայիրին, որգւոյ բա-

բեպաշտ և աստուածասէր Քրդին, որ և անուն նորա Քուրդ* կոչի, որոյ անուամբն և քաջութեամբն ինաց դաւառս մեր և վանսբայքս անշարժ և անվնաս յայսմ մեղուաշարժ և դառն ցասմանցս. զի յայսմ նուազեալ և զառնացեալ աւուրս, որ վասն մեղաց մերոց, երեւեալ մեծավայտ և աստուածահաճոյ մեծ զօրավարն և երեւելի նախամարտիկ, պարծանաց և զարդու զաւակն Հայաստանեաց, ամենօրհնեալ Քուրդն. զի ոտնաձայնք երիվարացն նորա, և ճոճիւն նիզակացն, և փայլատակումն սուսերացն, ճայթմունք աղեղացն, և կուռ զրահքն և ասպարափակ լինելն, և այլ ահարկու կազմուածն՝ զարհուրեցուցանէին զթշնամիսն, թող զյաղթութիւն և զքաջութիւն, և բազում պատերազմաց վանումն ի ձեռն նորա, և ազատազօրաց նորա բազմութիւն, զեղեկութեամբ՝ իբրեւ զօր երկնից, և քաշութեամբ՝ իբրեւ զառիւծ կամ իբրեւ քաջարծուի ի վերայ Հայաստանեաց, յամենայն պատերազմունս: Այնու՝ առաջի այլասեռ թագաւորացն՝ Ղազանիւ և Ղարապանդիւ և Պուսայիդի** և մեծամեծ և սպարապետ նոյինացն մեծարդոյ և փառաւոր երեւեալ, և յամենայն շուք և պատիւ և խիլայ ընդունեալ, պահէր խնամօքն և ողորմութեամբն աստուծոյ զդաւառս և զվաներս ի խաղաղութեան, և այլոց դաւառակցայն բազում կարեկից և օգնական լինէր: Ոյոյ՝ աչն անեղին և բազուկն հզօրին աստուծոյ հովանի և պահապան լիցի նմա ի տուէ և ի դիշերի, աստուածասէր և բարեսէր ամուսնաւն Խոյան Խաթունիւն և ամենայն հեծելազօրացն: Դաղցրասցի նմա այնք բոնաւորաց և մեծամեծաց, և թշնամիք նորա առաջի նորա յամօթ և նկուն լիցին, և իբրեւ զկորխ և զդադան յանդունդս իջցեն. և ձեռք նորա հանապազ ի վերայ թիկանց թշնամեաց իւրոց, ամէն:

336.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ ԵՒ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 1141

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Գլաձոր

ա

331ա ...ի թուականութեան հայկազեանս տումարի ՋՁԴ. (1335), և յաշխարհակալութիւն Պուսաիտ խանին, որ յազդէն Նետոզաց. յորժամ կատարեցո մատեանս աստուածային ի գծելոյ, դոյժ տարածեցո թէ Պուսաիտն յօգլո (իմա՝ հաւելաւ) ի հարսն իւր: Թագաւորութիւնն Հայոց Ղևոնի բարեպաշտի, նմանեալ նախնեացն սրբոց՝ Կոս[տանդնի և]

* Վաչրւայան Քուրդի բուն կալվածքն էր Արաղածոտն դավառը Ամբերդ ամրոցով, ըստ Ալիշանի նրանք «թէ Այրարատայ կողմերը տուն տեղ ունէին, և թէ հայ Աղուանից կամ Աղց-խոյ»:

** Պուսայիդ Ղանը վախճանվել է 1335 թվականին (տես հաջորդ հիշատակարանը), ուստի սուտն է № 334 հիշատակարանի դրությանն վերջին հնարավոր եղերը 1335 թվականն է, ըստ այդմ էլ այդ հիշատակարանները տեղադրում ենք 1335-ի թվաշարքում:

Թեսղ[ոսի], ըստ այնմ պատկեալ ի հրեշտակ[աց], և ի հայրապետութեանն տեառն Յակովբա, և ի վարժապետութիւն մանկանց Սիոնի տեառն իմոյ՝ վսեմական անյաղթ հռետորին յՆաւսեա, որ բարի կամօք շնորհեաց ղօրինակս գրել՝ ղպղրութիւնս առակօր հանճարոյ աստուածայնոյն Սողոմոնի, ղոր ըստ յայտնեալ է Ներսեսի արքեպիսկոպոսի Ղամուօնի տեառն և տիեզերալոյս վարդապետի, ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս Վայոցձոր, բարձրադիտակ մենաստանիս Գլաձոր, որ յանհմուտ և գնչու արանց Գայլաձոր ասի, յորս հօագքեալ հրճւին ի սմա հարազատ ծնունդք սուրբ եկեղեցոյ հայկազինս տոհմի, ի տարփուռն սիրոյ անճառ խորհրդոյ տնօրէնութեան անմահ փեսային Քրիստոսի, ըստ էլլադական սահմանն պայմանի, որք յոլովք ի սոցանէ աշխատեցան ի ծրագրութիւն սորա, հրամանս նախասացեալ առնն, ուստի յայտնագոյն հմտաբար տեսողաց յայլատարազ գրչացս։

Արդ, որ ոք պատահի յարձանս անշունչս, բայց բանօր իբր կենդան ընթերցեալ, յիշեսջիք ի բարի զստացօղ սորայ և զվաելօզ՝ զՍարգիս քահանայ, որ հանդերձեալ է զօագան առ[ն]ուլ բարունի, և ղեղբայր իւր միայնակե[ց], և ամենայն մերձաւորաք իւրաւք։ Ո՛ ոք որ հանդիպիք մատենիս կարդալով, յիշեսջիք ի քաղցր յոյսն մեր Քրիստոս և ի հայր նորին և ի հոգին սուրբ և երրորդութեանն անձնաւորութիւն հասարակ միազաղոյն՝ յիշելոցս և յիշողացդ, ամէն, ամէն։

Նաև զիս՝ զգծող մատենիս զԳրիգոր, թերևս արժանի առնէք յիշման, և զմերսն ամենայն ի Քրիստոս Ցիսուս ի տէր մեր, որում փառք յօ[ւս]եան յօ[ւ]եանս։

Բ

44ա Զստացող սուրբ մատենիս՝ զաղոմոնեան առակիս, և զմեկնեալ և զպարզեալս ի Ներսիսէ եպիսկոպոսէ՝ զհամանունակի, զՍարգիս պատուական քահանայ և ընտիր կրաւնաւորս, զստացաւղ սուրբ տառիս դրեալ Քրիստոս ի զիր քո կենդանի, ամենայն զարմիւք իւրովք։ Այլ և զիս՝ զանպիտան և զանարհեստ գրիչ Գրիգոր սուտանուն քահանայ և զծնօղսն մեր։

337.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վասպ. 117. լալ. 8ուց. էջ 253-254 (գաւուց անապատ)

Վայր՝ ի գաւառս Լամպարտ (Իտալիա), ի վանս Սեն-Պենետ

Ցամի [եւթնհարիւրերորդի]* ութսուներորդ և չորրորդի թուականութեան Հայկազեան տումարի (1335) կատարեցաւ սուրբ աւետա-

* Հիշատակարանը յուզոտվելով փչացած է եղել և մեծ մասամբ դարձել է անընթեռնելի. «եւթնհարիւրերորդի» բառը լրացնում ենք ինքներս, որովհետև ծԴ. դարում զրված լինելու համար 84-ով վերջացող թվականի հարյուրավորը միայն կարող էր «եւթնհարիւր» լինել (784+551=1335)։

բանս ձեռամբ յոհնամեղաւոր | | | ի գաւառս, որ կոչի Լոմպարտիա, ի վանս որ է Սուրբ-Պետեր ընդ հովանեաւ սուրբ Եկեղեցւոյս, որ հանգրստարան [է] սուրբ և սքանչելագործ ճգնաւորի Քրիստոսի Սիմէոնի | | |*

338.

ՁԱՌ ԸՆՏԻՐ

Վենետ. 222 Ծուց. հա. Բ. էջ՝ 346—350

Գրիչ՝ Ներսես Կրակցի
վայր՝ Երուսաղէմ

ա

465ա *... Արգ, գերապայծառ գիրքս ցանկալի և զանազան պտղով ի յի, գրախտ ախորժելի և ծաղկաւէտ բուրաստանի տէրունական տունից, և նահապետաց, և մարգարէից, և առաքելոց, և վկայից, և կուսից պատմութիւն ի սմա գտանի, որ ճաշընտիր և տաւնակ[ա]նի ձագ սա կոչի։*

Դրեցաւ ձեռամբ անարժանի և աներկեղի, որ Ներսես անուն կոչի, ստունգանոզ պատուիրանի և յանցաւոր տեառն աւրինի, տուտանուն արեզայի և մեղաւոր յամենայնի. ի Հայկազեանս թուականի ՉՀԴ. (1335) համարի, ի վանս հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի, և ի տեղիքս տէրունի՝ Երուսաղէմի սուրբ քաղաքի։

Բայց ժամանակս էր անբարի, գոլով տեղիքս տեառն գերի, աւերեալ հիմնայատակի, անակնկալ թէ այլ չինի։ Քրիստոնէից ազգք նախատի, անաւրինաց կոխան լինի։ Բայց լսեցաք համբաւ բարի, թէ Փռանգ ազգն շարժի վասն տեղացս տէրունի՝ Երուսաղէմայ սուրբ քաղաքի. երանի թէ այս մեզ լինի, որ մեր բեկեալ սիրտս կանգնի, գլուխ անկեալ մեր ի գետն[ի]՝ մինչև յերկինս բարձրասցի, նշան խաչին պայծառասցի, եկեղեցի զարգարեսցի։

Բայց ըստ գործոցս, որ գեռ գործի, չեմ իմանալ թէ այգ մեզ լինի, Բայց ամենայն ինչ կարելի տեառն աստուծոյ իմ՝ Յիսուսի։

Զայս դառնաշունչ ժամանակի, և ի նուազել հայոց ազգի, անաւրէն ազգն Իսմայէլի յարեան ի վերա երկրին Կիլիկեի. և զամէնն ի սուր մաշեցին սուսերի, և զայլն ի Մսրը վարեցին գերի, և զկէսն՝ ի յերկիրն Խարամնի։

Եւ Յիսուս Քրիստոս՝ տէրն ամենայնի, գերելոցն արասցէ բարի։

Եւ ի սոյն ժամանակի է թագաւոր Հայոց ազգի երիտասարդ ըստ հասակի, որոյ Լևոն անուն կոչի, պճնեալ թագիւ տեառն Յիսուսի. և ի հայոց ազգի հայրապետի տէր Յակովբի, և ի յաթոռակալութեան Երուսաղէմի սուրբ քաղաքի, որոյ տէր Յովաննէս անուն կոչի, և իւր ծնողացն և քաւրն Մուրեմբեգի՝ հայրապատի, որ արդեամբք յորգորեաց զիս ի գրել ճառի....

* Երկու տող անընթեռնելի։

Ո՛վ, կաբզացուզք այսմ գրի և հանդիպիք սղալի, նա զուք ուղղեցէք սիրով և մի ապերեխի, զի ի վշտալից ժամս գրեցի, որ է աչքս պակասել ի լուսի, և ստամոքցու յամէն ժամի, և չունէի մխիթարուզ ոչ եղբաւրէ և ոչ յընկերոջի, բայց միայն յաստուծոյ ամենայնի։ Եւ էր տեղիքս յորում գրէի խիստ եւ զարձ մարդի։

Արդ, տեսա զիս մեղաւք ի լի, զջան ի սրտի գրի, և ձեր ազաւթիւք սուրբ տառքս ի զլուխ [հանի], զի սա ինձ բարեխաւս լինի առ Յիսուս աստուածն իմ և ամենայնին, որ ինձ և ձեզ ողորմեացի։ Այլ և հոգւով ցանկալի, որ յիմ ձեռացս գրի կենայք ի գուռն սուրբ Սիոնի և սուրբ քառասուն վկայիցն Քրիստոսի, զի յաւուրն աներեկի բարեխաւս լինին հոգւոյ իմոյ և մարմնի. այլ և ծնողացն իմոց՝ Աւտարշահի և Սնռեփորի, և քաւրն՝ Ավծի, և իր տղայոցն ամենայնի, և Սեք պարոնի, և քեռեցն իմոց՝ միակեց Յովաննիսի՝ ի հետ աստուածոյ ինձ երախտաւորի, և ծեր Հաճիսիհն, և տէր Պապի, և Կոստանցի, և Աւետի, և Վասլի, և մաւրքաւրեացն՝ Սիմոյ, Ֆիմի, և Ֆրի, և Բաւկարխաթունի, Մամախաթունի. և Կիրայի, և Գորգ Մազմնի, և իւր տղայոցն ամենայնի, և Ստեփան Նազանի, և Լևոնիհ, և Հեթումիհ, և իր տղայոցն ամենայնի, և Կոստանգիհ արեղին, և իր ծնողացն և քերցն ամենայնի, և Անխալատի, և իր տղայոցն, Տիկնացտիկնի, և Տնդնի, և այլոց ամենայնի, և բնակչաց Կրակոյն ամենայնի, ևս առաւել, որ են ի գուռն Սիոնի՝ առաջնոցն և վերջնոցն, որ են յայսմ ժամանակի, հոգևոր հաւրն՝ Մարտիրոս քահանայի, և իրիցկնոջն, և իր տղայոցն՝ Թորոս արեղայի, և Պաւղոսի, և Յովաննես քահանայի, և Հեթում քահանային, և նորընծայ քահանայիցդ Թոլոսի, և իր եղբաւրն Յովաննես արեղի, և Բ. Սիմեոնիհ, և Ստեփաննոսի, և այլոց հարցն և մարդգ, որ կան ի գուռն սուրբ Սիոնի, զոր տէր Յիսուս յիշեսցէ ի բարի, և երախտաւորաց սուրբ Սիոնի՝ Պակէ և Սիրի, և իր տղային տէր Կոստանգնի, որ հալածեալ է վասն սուրբ հարցն ուղիղ կանոնի, և ննջեցեալ քահանիցն Թորոսի և Ձաւշլնի, և իր տղային Վասլի, և սուրբ եղբարցս, որ բնակեալ են ի սուրբ քաղաքս Երուսաղէմի...։ Եւ կուսակրաւն հոգևոր եղբաւրն մեր Մատթեոսի՝ զրոց կապողի, և իր ծնողացն, և եղբարցն ամենայնի..., և գրողիս և ստացողի· այսմ տառի միշտ թողութիւն մեղաց խնդրի յարարչէն ամենայնի, որ ձեզ և մեզ շնորհէ ձրի, որ ոչ ստացայ այլ ինչ յիրկէրի, բայց զգիրս ցանկալի...։*

բ

128բ Ո՛վ եղբարք, յազգի յազգի խապրնոցս չգիտեմ թէ ինչ կու գրեմ, զի կու ասեն՝ թէ զհատի մի տաճկինին այսացիք կոտրել են։

գ

144բ Հազար վայ ինձ և ամէն Երուսաղէմացեց քրիստոնէիցս, որ զետ նինուէացիքն կու տապինք յահէ անաւրինացս, թէ ոչխարազինիս չար

* Ամբողջ հիշատակարանը գրված է անկանոն տաղաչափությամբ։ Շարունակությունը չի բերված հրատարակչի կողմից։

տաւին իւրեանց, զամէն հայ քրիստոնէքս ի մէկ տեղի պիտի ժողովեն և սպանեն, զի կու հաչեն՝ թէ ձեր տյասցիքն դխատին և զգանրշմներն սպոնել են, ամմէնք զքէն ի ձեզ պիտի հանէք. և ամէնքս ի դող կանք. և բաժին մի փախեան դէպ ի հոռոմ գեղանն. և զառաջակայն՝ աստուծոյ յանձին է և իւր ծնողին։

դ

166ա Ո՛վ եղբարք, ի չար խապրնոյս, որ կու ասեն, թէ սուլտնայ տղայն բաղում գաւբաւք ի վերայ Սօռս կու երթայ. նա միտքս խաւրել է, իսկի չդիտեմ թէ ինչ կու դրեմ, և այլ, որ իսկի մխիթարիչ չունիմ եղբարց կամ յորդորող. և են ամէն ընկերքս հոռնացիք, և Քրիստոսի յուսոյն մերոյ վաոք յաւիտեանս, ամէն։

ե

382բ Ո՛վ եղբարք, յորժամ հանդիպիք սղալի, նա դուք ուղղեցէք սիրով և մի եպերելով, զի ըղուղս Կրակցի է։ Զի վարդապետ մի յղբրկեց զաշակերտն, թէ զնա ղլուխ դնէ. նա գնաց գնեց՝ ու կերաւ զանջն ու զլեզուն ու դըղուղն, ու երեր զգանգն առաջեն եղէր, նա [վարգապետն] հարցաւ, թէ ո՞ւր է ականջն. նա ասաց, թէ ականջ չուներ՝ խուլ էր, ո՞ւր է լեզուն, լեզու չունէր՝ լեզատ էր, ո՞ւր է ըղուղն, ի Կրակայն էր արծել, ըղուղ չունէր։

զ

76բ Ո՛վ եղբարք, ի յայս ննջեցելոց ճառիցս գրելն, մեծ փորձութիւն հասաւ ի վերաս, որ ոմն անուն Գրիգորէս Խարտբերդցի, նման Յուլիանոսի և գործարար Յուդայի, որ գնաց առ տէր Ճաւշլիճ Ոսկեւրեցին, ու. ասաց թէ Կարապետ փիլիսովայն Խարտբերդցին և քո Ներսէս Կլակցին չեն այնել դտաւ[ն]քն ի յուրբաթին և ի չորեքշաբաթին, և ոչ պաշտեցին ի տաւնի սուրբ Կարապետին, որ էր տաւն ըստ Հոռոմին։ Նա տէրը շարժեալ յազդմանէ չարին և լսեց իւր չար խորհրդակցին, յղրկեց չորս արեղայ նման լեզէոնին, որ էին նման չորս դինւորին, որ զԹովմաս առաքեալն աշտիշուք ի կողն խոցեցին։ Եկին ի գուռն Ներսիսին, ու զիմ ոահ ու զգիրգ ի յարեգակն հանին, և զդուռն փակեցին և գրալնիքն առին. և այլ յերջև գնացին ի տունն Կարապետին, և դհայան տաշտոնն ի գուրսն դրին և զայլ ամէն ոահնին. և առին զերկուքս և տարան ի վերի վանքն, ի դուռն Սուրբ Յակոբին, թէ այս են, որ ոչ հնազանդին կանոնաց քաղկեդոնին և նզովեն զտումարն Լևոնին։ Յառաջ մատուցին զԿարապետն ի դարպասին, և առանց հարցափորձին դվեղարն առին ու ձգեցին յերեսս տիրին, և տարան ի դնգան բանդին։ Յերջեւ դմսկին ներսիսուկս առին ու վերամբարձ տանէին, նա ջանցի թէ ի դուրս վազէի ի տանէ բռնաւորին, նա յերջեանց առին զվեղար վեզրգտակին, և դիս թողին գլխիբաց ի մէջ հրապարակին, և տարան առ ընկերն իմ ի բանդին, և պինդ զգուշացուցին, որ վաղուն տամ դնել ի յերկաթքն Մելէք Նասրին։ Նա եկին

ամէն շներն, որ հնազանդել էին չար հրամանին և աղաչեցին, որ խալըսեցաք ի տանէ բանդին, զոր հատուսցէ նոցա տէր ըստ իւրեանց անխրատ դատաստանին.* Ո՛վ եղբարք, զայլ աւելին չկարցի գրել:**

339.

ԱԻԵՏԱՐԱՆ

Օքսֆորդ, Ms. Arm. D. 4. Տիրայր վրդ. 52. Քղք. 120, էջ 891—896 (տես նաև 1341 և 1606 թ.)

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Նկեղեաց գաւառ,
ռուրբ Կիրակոսի վանք

328ա ... Արդ՝ ես նուաստ յամենայնի Մելիքշահս, ի զեղջէ Թիլուխարձէն, զմտաւ ածի զայս ամենայն և յիշեցի զայն, որ ասէ Քէ՝ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանեակ յԵրուսաղէմ. և դրեալ տվի զսուրբ աւետարանս զայս ողորմութեամբն աստուծոյ յիմ հալալ արդեանց, յիշատակ ինձ, և զաւակի իմոյ Ստեփանոս քահանայի, և զաւակին իւրոյ Սարգիս տղային և ի վայելուչն անձանց մերոց և յիշատակ ծնաւղաց իւրոց:

Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՁՁԴ. (1335), ձեռամբ սուտանուն արեզայի Ներսէսի, ի թագաւորութեանս Հայոց Լևոնի որդւոյ Ուշնի, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, ի դառն և յամբարի ժամանակս, ի գաւառս Նկեղեաց, առ ստորոտով լերինն Բղքնոյ, ի վանքս սրբոյն Կիրակոսի և սուրբ Նշանիս:

Եւ արդ, աղաչեմք զձեզ, ով մանկունք նոր Սիոնի, որք հանդիպիք այս սուրբ գրոցս՝ կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք սրտի մտաւք յաղաւթս ձեր զՄելիքշահն, և զկենակիցն իւր զտիկին Վրացն, և զզաւակն նոցա զՍտեփանոս քահանայն, և զերիցակինն իւր զՄարքայն, և զմիւս զաւակն զԱստուածատուրն, և զկենակիցն իւր՝ զթանխաթունն, և զմիւս այլ զաւակն զԹագհոսն, [և զկենակիցն իւր՝ զփոխեալն առ Քրիստոս զՂազրացն], ծնաւղաւք և ամենայն նախնեաւք...

340.

ՇԱՐԱԿՆՈՑ

Թորոս Աղբար, Բ. էջ 449—450 (տես նաև 1617 թ.)

Գրիչ՝ Սաճուկ
վայր՝ Թիւրքի ամատատ

Փառք քեզ, հոն արեզսազոն կիսազնզի եւ դեմեարի, արարիչ յամենայն արարածոց յիմանեալեաց եւ ի զգալեաց, ի մարմնաւորաց

* Այս միջադեպի նկարագրությունը նույնպես գրված է չափածո, բայց այնքան անկանոն տաղաչափությամբ, որ բարվոք ենք համարում հրատարակել արձակ ձևով:

** վերջին տողը առօրին լուսանցքի վրա:

եւ յանմարմնոց, ի հողեղինաց իմանալեաց ղուարթնոց եւ յամենայն զոյից, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ, եղեւ [աւարա] սորա ի թվ. հայոց ՁՁԴ. (1335), ի թագաւորութեան Հայոց չորրորդ Լեւոնի, զոր պահեցէ տէր աստուած պարգ[այց] ամաւք, ընդ երկայն աւուրս, ի հայրապետութեան տեառն Յակոբայ, ի մեծ եւ ի հռչակաւոր անապատս, որ կոչի Թիւրքիի, երգ աւրհնութեան, եւ ձայն սաղմոսաց, եւ լուցումն լապտերաց, եւ բուրումն անուշահոտ խնկոց մի պակասեսցի ի սմանէ մինչեւ ի կատարած աշխարհի։ Ի խնդրոյ պատուական եւ երջանիկ առաջնորդի սուրբ ուխտի՝ տէր Գրիգորու, զոր տէր աստուած պահեսցէ ըստ կամաց իւրոց, ամէն։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք այսմ աստուածային մատենիս, յիշեսջիք յաղաւթս ձեր զստացող զրոյս զերիցս երանեալ եւ զծագկեալ ալեւոր զհայրապետն զտէր Գրիգոր՝ ծնողիւք եւ բարեկամաւք հանդերձ, ամէն։

Նաեւ զիս, զմեզաւք մեռեալս եւ աշխարհի կենդանիս, զտառապեալ ողիս զՄանուէլս՝ գրող սորա, եւ զծնողսն իմ. եւ զողալս եւ զխոշորութիւն սորա ուղղեցէք եղբայրաբար, զի ժամանակս ձմեռնային էր եւ հիւսիսային սաստիկ, եւ տեղիքս լեռնային, եւ ես անարհեստ էի քերականութեան...։

341.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ

Օքսֆորդ. Ms. Arm. F. 6. *Տիրայր վրդ. 99. Թղթ. 122, էջ 1776*

Գրիչ՝ Մանուէլ
վայր՝ Ուղագու վանք

40ա ...Փառք... որ ետ զօրութիւն տկարութեան իմոյ հասանել ի վերջ տառիս։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք զմատեանս փիլիս[ո]փայական արհեստից յիշեսջիք ի սուրբ աղօթս ձեր զմեծ հռետորն մեր զՍեթրոպ՝ քաղցրահոգի և հեզաբարոյ։ Տացէ տէր աստուած բազում վարձս աշխատանաց իւրոց յաներեակ աւուրն։ Ընդ նմին և զանարժան գծողս՝ զՄանուէլ սարկաւագ, վծուն գրիչ, սալատաւոր բանիս։

Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՁՁԴ. (1335), յանապատս, որ կոչի Ուղագու վանք, ընդ հովանեաւ Նախավկային, ամէն։

342.

ՃԱՇՈՑ

Ալիշան, Սիսուան, էջ 118–119

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Մաւշրեփի գիւղ

ա

...Վասն գառնութեան ժամանակիս և վասն ծովացեալ մեղաց իմոց, որ ի յայսմ ամի ազգն, որ կոչի Ծաբտման՝ մտեալ էր ընդ

երկիրս Կիլիկիոյ, և բաղում ինչս գործեցին ի տեղիս տեղիս: Եւ ես պանդխտեալ նստէի ի դղեակն, որ կոչի Գանձակ, առ ստորոտով լերինն Տիւրոսի, և դրեցաւ մասն ինչ ի սմանէ անդ. և աւարտ սորա եղև ի դեղս՝ որ կոչի Մաւշրեֆի, ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս Կիւրակոսի: Բայց դրեցաւ սուրբ տառս ի յընչից ճղնաղղեաց միակեցին Ալեքսի, որ է եկեղեցապան այնմ դեղջի, որ ետ դրել զսա վասն յիշատակի հոգւոյ իւրոյ... և հօր իւրոյ Ամիրշահի... որ ստացաւ զսա ի յարդեանց իւրոց, և ետ ի դեղն Խոզկրտի, ի յեկեղեցին՝ որոյ անուն է սուրբ Հոգի:

բ

Տեսեալ պատուելի քահանայիցն՝ բնակիչք դեղջն որոյ անուն Խոզկրտի յորջորջի, Բարսեղ և Յոհաննէս և ընկերք նոցին, և փափաքանօք խնդրեցին և ետուն գրել:

գ

Ցիշէ Սիմեոն գրողն և ծաղկով զարդարող՝ զքոյր իւր Ճօճար, և այլուր* զգստացող տառիս՝ զբբասէր կրաւնաւորն զԳրիգոր և զհարբատ եղբայրն իւր զպր. Հնթում՝ զհանդուցեալն ի Քրիստոս:

343.

ՆՐՒԱՍՏ ՅՈՀԱՆԻՍԻ ԱՐԱՐԵԱԼ ԵՐԴՍ ՈՏԱՆԱՒՈՐ, Ի ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՑՆ ԵՂԵՒ ԲԱՆ ԽԱՒՍԵԼ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑՆ, ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ, ԸՍՏ ԽՆԴՐՈՑ ՀՈԴԵՒՈՐ ԵՂԲԱՒՐՍ ՄԵՐՈՑ ԱՍԼԱՆԻ ԵՒ ԱՑԼ ՔՐԻՍՏՈՆԷԻՑՄ ԹԱՎՐԻԺԻ, ԶՈՐ ՍԻՐՈՎ ԽՆԴՐԵԱԼ

Երևան 2776

Հեղինակ՝ Յովաննէս Տարբերունի
վայր՝ Թավրէժ

... Ես Յովաննէս Տարբերունի,
Որ զսակաւ բանքս երգեցի,
Ո՛չ ղօքաւոր, այլ ըստ կարի,
Դէմ հոռոմոց և ֆռանկի.
ԶԿրքիստոս աստուած զաւանեցի
Ցերկուց բնութեանց լինելով մի,
227բ Որ չհաւատայ այսմ տառի
Ընդ Ցուդայի դատապարտի:
Ցերես անկեալ դէեղ աղաչեմ
Ցիշման առնել զիս արժանի,
Զեղբայր Աղաթս փառաւք ի լի
Եւ զայլ եղբարսդ Թավրիժի.

* Ալիշանի խոսքերն են:

Յիշելիք ձեզ դայս գրեցի
Եւ Քողութիւն ինձ խնդրեցէք.
Եւ Քրիստոսի մարգասիրին
*Փառք և պատիւ յամենայնի։**

344.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6504

Գրիչ՝ Յովաննես
վայր՝ Փոս աճապատ

ա

...Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուիս Հայոց ՉՉԴ. (1335), ի հայրապետութեան տեառն Յակոբա և ի թագաւորութեան Հայոց Լևոնի որդոյ Աւշին Թագաւորի, ի յանապատս, որ կոչի Փոս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ լուսաւորչին մերոյ Գրիգորի, ի խնդրոյ պատուական քահանային Մարտիրոսի, վասն զի բազում վաստա-
324ա *նաւք և ըղձալի սրտիւ ետ զսա գրել ի յիշատակ իւր, և || եղբարց իւրոց քահանայիցն՝ Ստեփաննոսի, Կոստանդնի, Գրիգորի և Իշխանի, և ծնաւղաց նոցին՝ հանդուցելոցն ի Քրիստոս, և ամենայն ազգականաց իւրոց։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք զսա, յիշեսջիք զՄարտիրոս քահանայն, և մեզաց Թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ իւր [և] ամենայն զարմից իւրոց, ընդ նմին յիշեսջիք զհանդուցեալ քահանայն Կոստանդին, և զեղբայրն իւր Թորոս, և զհայրն իւր՝ զԳրիգոր, և զմայրն իւր, և զհաւրեգբայրն իւր զՅակոբ, և զորդիսն իւր՝ զՄարտիրոս և զՅովաննես, և զամենայն ազգատոհմն իւր։

324բ *Աղաչեմ և || ես՝ Յովաննես մեղաւոր ծառայս աստուծոյ, որ զդիրս գրեցի ըստ իմում կարի, չլինել մեղադիր, զի այս չափ էր կար մեր, և մեղաց Թողութիւն խնդրեցէք ինձ և իմոցն ամենայնի և աստուած ձեզ ողորմեսցի, և այնոցիկ, որ ի լսելն զամէնն ասեն, ամէն։*

Ծաղկող՝ Սարգիս

բ

*Ընդ նմին և զիս՝ զանարժանս Սարգիս** սուտանուն քահանայ, և զծն[աւղն] իմ, և զամենայն ազգայ[ինս] իմ աղաչեմ յիշել ի տէր, որ ծաղկիւ զարդարեցի զսուրբ աւետար[անս], և որ յիշէ յիշեալ լիցի, ամէն։*

---

* Հմմտ. Տարբերուներու սույն ոճանավոր հիշատակարանի գրության ժամանակը հայանի չէ։ Ձեռագիրը, որից քաղել ենք, 1338 թվի է, ուստի տեղադրում ենք 1335-ի թվաշարքում։

** Կարող է նշանավոր մանրանկարիչ Սարգիս Պիծակը լինել։

345.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 1318

Գրիչ՝ Ստեփաննոս

138ա Զստացաւզ աստուածային մատենիս զպատուելի տանուտէրն և զրազմաց պիտանին՝ զպարոն Յովաննէս, և զիմաստուն և գհամառա կենաւիցն իւր զՄարխաթունն, և յերկոցունց կողմանց ղծնաւզս նոցա՝ զԱւետշահ և զՄարիամն, և զՍտեփաննոսն և զՆոփորն, և զաստուածատուր զաւակս նոցին՝ զԿիրակոսն, և զՍարգիսն, և զՍտեփաննոսն, և զՆղիսարէթն, զխարիպ խա[թունն], և զՆիկարն, զսեր խաթ[ունն], և զմիւս Աւետշահն, և զՆերսէսն, և զեզբարսն նոցա՝ զՄկրտիչն և զՍարգիսն, և զՇնոփոր տիկինն, զՄայր խաթ[ունն], և զՀեղինէն, նաև զսրբամաքուր քահանայսն՝ զՄխիթարն և զՍահակն, որք միջնորդք եղէն տառիս և յորդորեցին զտացաւզն և զմեղ, ընդ նմին և զեզկելի գրիչս զՍտեփաննոս և զիմսն ամենայն յիշեսջիք առաջի Քրիստոսի, սր է աւրհնեալ յաւիտ[եանս], ամէն։

*

136բ Այս զիրքիս թվական է ՉՃՉԴ. (1335)-ին գրվել է, այլ ուրիշ տեղ գրած էր, այստեղ ես նշանեցի, ով հարցանէ՝ այս է թիւվհն։*

346.

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Վէն. 161, Տաշ., ծուց. ԷՉ 471

Գրիչ՝ Աւետիք

1ա Հայոց թիվն. ՉՉԴ. (1335). | | |

ԶԱւետիքս... զզրաւզ... եւ զծաղկաւզ եւ զկազմաւզ յիշեսջիք... գրեցաւ...**

---

* Թվականի ցուցմամբ այս հիշատակագրությունը գրված է հետագա ստացողներից մեկի կողմից։

** Հրատարակիչը հայտնում է, որ շատ բառեր ջնջում են անվերծանելի։

347.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեան 6257 (անս 1476 և 1557 Ք.Ք.)

Գրիչ՝ Թումայ Արճիշեցի

վայր՝ յերկիրս Գողթան, յանապատիս Կոպատափ

...Արգ, գրեցաւ սուրբ աւետարանս բժիշկ հոգւոյ և մարմնոյ ձեռամբ յոգնամեղ և վշտուն գրչի Թումայի Արճիշեցւո, ի յերկիրս Գողթան, ի յանապատիս, որոյ անուն Կոպա || տափ կոչի, որ յանգիման գեղին Բստոյ։ Ի յայսմ ամի, որում Արևելից աշխարհս առանց թագաւորի եկաց ամ մի, քանզի երեք թագաւոր փոխեցաւ, և մի ի նոցանէ ժամանակ ոչ արար։ Առաջինն անչափ բարի էր քրիստոնէից և նայ հաւատար զՔրիստոս աստուած, իսկ երկրորդն՝ պեղծ և անիծեալ, որ անունն Ալի փաշախ կոչի, նման էր առաջի կռապաշտիցն, յարոյց բազում հալածանս ի վերայ քրիստոնէից, և զեկեղեցիսն փակեաց, և զխաչերն խորտակեաց, և շատ չար արար Քրիստոսի հաւատացելոցս, բայց յետոյ աստուած մատնեաց զնա ի սուր սուսերի և չարամահ արար։

Արգ, եղբարք, այս ամէն, որ եղև յայսմ ժամանակի, վասն մեղաց մերոց եղև։

Արգ, գրեցաւ սայ ի թուականիս հայոց ՉՉԸ. (1336)։

*Աւրհնեալ արարիչն արարածոց, տէրն տէրանց և թագաւորն թագաւորաց Քրիստոս աստուած, որ ետ զաւրութիւն տկարութեան իմոյ հասանել ի վերջ սուրբ աւետարան[ի]ս։ Մեծատուն ոմն յաստուածապահ գեղէն | | | *, որոյ անուն Շախբնշախ կոչի, ստացաւ զայս ի խալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և կենակցին իւրոյ, և ամենայն արեան մերձաւորացն։ Արդ, որք աւգտիք ի սմանէ կարդալով, կամ աւրինակելով, կամ տեսանելով,* 268բ *յիշեցէք || զստացողս սորա՝ զհայր և զպարոն Շախբնշախ՝ ծեր և ծերունի, հեզ և հնազանդ, բարիբարոյ և բարի ծնողաց զաւակ, նոյնպէս և զկենակիցն իւր զտիկին-մայր Նուրբսթի, և զբարի զաւակսն իւրեանց՝ զխութլուշախն, և զխազարբեկն, և զՍայիմբեկն՝ աստուածատուր և ծաղկեալ զաւակ սոցա, զորդիքս և զհարսունքս՝ զխերիֆտիկին, և զՀուիփսիմայ, և զնազեր, և զթոռունքս՝ զԱճանիայ, զագրիայ, զԱմիրբեկ, զԿորգ, զԹումանբեկ, զՋրդանբեկ, զՌաղտատ, և զՄարգարիտ, և զայլ զաւակ սոցա՝ զմեծ և զփոքր, զՇարեր, և զբարի զաւակն իւրեանց զՍիմոն՝ զփոխեալն ի Քրիստոս։*

* Գյուղի անունը ջնջված է։

Այլ, ստացան զսուրբ աւետարանս պարոն պապ Շախընշախ և Նուրրսաքի, ի յարդար վաստակոց իւրեանց, յիշատակ իւրեանց հոգւոյ և մարմնոյ, և ծնողաց, և ամենայն արեան մերձաւորացն, և ննջեցելոցն առհասարակ։

Արդ, յիշեցէք ի տէր զննջեցեալսն իւրեանց, զրարի զաւակն իւրեանց զՍիմոն, որ ի մարզկանէ եղև որոզայթ մահու նորա, զմեծ պապն զԶորգ, և զմայրն զՆազն, և զՄարզման, զՎարթն, զԽայոց, զՆազն, զՇահբոնազ, և զմեծ պապն զՄարզման, և զմեծ մայրն զՀա-
269ա յոց, Որք աւգտիք ի սմանէ, եղբարք || իմ սիրելիք, յիշեցէք ի սուրբ և ի մաքրալուսաթոիչ յաղաւթս ձեր զորս յիշատակեցաք ի սուրբ աւետարանս, և խոշորութեան և փցուն սխալանաց անմեզագիր լեռուք, քանզի ինքն տէրն միայն է անխալատ, և այլ՝ ժամանակս այնչափ դառն էր ի յանաւրինաց, որ մի ժամ չի կարելի գրել, զամէն փախած և թաղած կու կայաք։ Ընդ նմին և զմեղապարտ և զանարժան գրիչս՝ Թումայ յիշեցէք ի տէր, և զծնողսն իմ, և զայլ արեան մերձաւորսն, աստուած ողորմի ամենեցուն առհասարակ, ամէն։

Կազմող՝ Սահակ Ռաջրհորցի

բ

Զնկոր [ա]ռաք սուրբ աւետարանի տախտակս զուգեց, յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

ԶԱնպիտան զՍահակ աբ[եղա] Ռաջրհորցի՝ զսուրբ աւետարանի կազմողս՝ յիշեցէք ի Քրիստոս, և իմ մեղացն թողութիւն խնդրեցէք, և աստուած զձերն ոչ յիշէ, ամէն։

348.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թուական 5968

Գրիչ՝ Թումա
վայր՝ Թավրէժ

243բ Փառք... որ կարողացոյց զտկարս և զանիմաստ և փցուն Թումա անարժան և մեղաւք դատապարտեալ անարհեստ գրիչ հասանել յաւարտ աստուածազարդ... աւետարանիս, ամէն։

Եւ արդ, սկիզբն եղև գործառնութեանն այսմիկ նախախնամութեամբ և ողորմութեամբ սուրբ հոգւոյն, ի մայրաքաղաքս Թավրէժ, ընդ հովանեաւ մաւրն լուսոյ տիրամաւր Աստուածածնին և սրբոյն Սարգսի զաւրավարին, ընդ հովանեաւ սոցա ամբացեալ. յեպիսկոպոսութեան և վերադիտողութեան սրբոյ առաքելոյն Թադէոսի՝ աէր Զաքարիայի և տէր Տիրացւի՝ հեզոց, հանդարտաց և բարեսիրաց, որոց
244ա տացէ տէր աստուած ժամանակ սոցա ընդ երկայն աւուրս, ամէն։

Բայց ես՝ մեղուցեալ ծառայս աստուծոյ Նառնաքունս, ստացայ զսուրբ աւետարանս...։

Ցիշեսջիք ի Քրիստոս Ցիսուս զտացող սուրբ աւետարանիս զնասխաքուն՝ բարեսէր և աստուածասէր քրիստոնէ, և զբարի ծնողսն իւր, և եղբարսն, և զբարիզարմ տղտյսն իւր՝ զԱզիզբէկն և զԹաւաֆալին, զի երկար ժամանակաւ անցուսցեն զկենցաղս, ամէն, ամէն։

Քրիստոս աստուած, յիշեա ի քում յարքայութեանդ զհոգի բարի քրիստոնէին նազխաքունին, և թող նմա զյանցանս իւր՝ զկամա և զակամա, ամէն։

Ի թվ. ՉՉԸ. (1336), յամսե[ան] արեգ ԻԷ. (17)։

244բ Բայց զրնեցաւ սուրբ աւետարանս Քրիստոսի աստուծոյ մերոյ ի ժամանակս վերջինս, որ էր ազգս ամենայն խաչապաշտից ի բազում տառապանս և ի նեղութիւն, վասն բազում դառնութեան, որ վասն մեղաց մերոց յարուցեալ էր ի վերա մեր անեքևոյթ աւտխան մեր և բարիատեցն, որ բարբոքէր զսիրտ անդամաց այլազգից ընդդէմ քրիստոնէից, և ազգի ազգի վիշտս և հալածանս յարուցանէր ի ձեռաց անաւրէնն և թախտուպ նետոզականաց։ Ցաւուրս սուրբ և մաքուր սուրբ քահանային տէր Հայրապետի՝ հեզի և հանդարտի և բարեսիրի, որ բազում զասնութիւնս կրէր վասն քրիստոնէից, այլ ասաւած վերակացու լինելի նախախնամ բարեբարութեամբն իւրով և պահէ յամենայն փորձութեանց և ի նեղութեանց։ Այլ և ազգի ազգի հալածանս յարուցանէին ի վերա քրիստոնէից, կապոյտ տալ[ա]նդ ետուն վաթթել, և ի տեղիս տեղիս եկեղեցիք ի հիմանց տապալեցին
245ա անաւրէն չարագործքն, բայց մեր ‖ յոյս և ակն ողորմութիւն ի Քրիստոսէ է, զոր հրամայէ թէ մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին և զոգին ոչ կարեն սպանանել, և ի վերա այսմ ամենայնի տէր Ցիսուս ողորմեսցի կարգացողացն և լսողացն, ամէն։

349.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5786 (տես նաև 1601 թ.)

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Սիս

ա

339ա Շնորհիւ տեառն աստուծոյ իմոյ սկսայ և ողորմութեամբ նորա կատարեցի զչորեքեան աւետարանս, որ է բանն աստուածային և ամենայն տնաւրէնութիւնն Քրիստոսի, իմով տկարացեալ բնութեամբս՝ բազմամեզ և անարժան սուտանուն քահանայի Սարգսի, յանկ և յաւարտ հանեալ զարդարեցի զսա ծայրէ ի ծայր, զրոշն և գլխագրիւն, ծաղկօվն և ամենայն անաւրինական զարդիւքն, զոր այժմ տեսանէք զրոշմեալ ի սա։ Ցայսմ դառն և չար ժամանակիս, զոր անաւրէն ազգն իսմայէլացց, տունն փարաւոնի, ի մեծ նեղութիւն և ի վտանգի կալան զաշխարհս կիլիկեցւոց. և արշաւեաց զաւրաւք և էառ զամենազարդ և զաստուածապահ բերդն զՆղիրն, նստելով ի վերայ նորա բազում

ժամ, և աւերեաց, և ապա նմուտ յերկիրս, և ոչ քաղաք և ոչ բերդ և գեղ՝ լեռնային և դաշտային, վանաւրեայք և անապատք, զամենայն միրսամիոջէ, և ոչ ինայ տեղ յերկիրս, որ չնաւրէնքն Թողին, որ
339բ չմտանն, և յոյժ զարս բաղ ‖ ումն սրով սպանին, և եկեղեցականս յոլովս՝ երէց և արեղայ, վարդապետ և եպիսկոպոս, սարկաւագ և դպիր, և անբաւ քրիստոնեայս՝ արք և կանայք, տղայք և կուսանք տարեալ գերիս, զոր տէր աստուած հատուցէ նոցա ըստ իւրեանց գործոցն զպոխաբէնն. և այս բաւական է։

Արդ, եղև զբաւ գրչութեան սորա ի մայրաքաղաքս Սիս, ընդ հովանեաւ սուրբ հոգւոյն և այլ բազմահաւաք սրբոց, որք աստ են, ի թվաբերութեանս Հայոց ՉՀԸ. (1336), և աւարտեցաւ ի յամսեանն դեկտեմբերի ԻԹ. (29) աւրն, որ էր կիրակէ, ձեռամբ Սարգսի սուտանուն քահանայի, ի թագաւորութեանն Լևոնի Զորրորդի, որդոյ արքային Հայոց Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, քւեբորդոյ տէր Գրիգորի, ի խնդրոյ և պաղատանաց կուսակրաւն և պատուական քահանային, որոյ անուն Անդրէաս կոչի, Զի սիրով և փափագանաւք ստացաւ զսուրբ աւետարանս և զսայ յոյժ գեղեցիկ ետ զարդարել ազգի ազգի պատկերօվ և ոսկով և ամենայն գարգիւք,
340ա ի վայելուչն անձին իւրոյ և ի յիշատակ հոգւ ‖ ոյ իւրոյ, և ծնաւղաց իւր, և ամենայն զարմից՝ կենդանեաց և ննջեցելոց ի Քրիստոս։

Որք ընթեռնուք զսա ի յարկի
Կամ ի յանկեանս սուրբ տաճարի,
ԶՍարգիս լցեալ մեղաւք ի լի,
Մաղթեմ վասն տեառն բանի,
Թէ զոր Թողուք՝ Թողեալ լիցի
Եւ ձեր բանիւդ չնչեսցի,
Եւ ամուսնոյն իմ Զալտունի
Երկեալն աւրհնէ աստուածունի(*),
Եւ մաւրն, և հօրն իմ Իրիգորի,
Եւ քոյրն իմոյ Խոյաձդ խաթունի,
Որ են գնացեալ առ Քրիստոսի,
Թողուլ մեղաց խնդրէք յերկրի։
Եւ աներոջն իմ Յովսեփի
Եւ զոքանչին Թեփաձեի՝
Հանգուցելոցն առ Քրիստոսի,
Որ զմեզ յիշէ յիշեալ լիցի
Ցարքայութեանն Քրիստոսի։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կամ ընդաւրինակէք, դուք անհոգաբար աւրինակեցէք, զի յոյժ շատ եմ աշխատեալ և ըղորգել ի Գօրգոյ աւրինակէն, որ է բան բանի, և Թէ զիր պակաս կամ աւելի կենայ դուք անմեղադիր լիք, ապա զցանկքն խիստ եմ ըղորդել։

Ցիշեցէք զվերասացեալ ստացաւգ գրոցս զԱնդրէաս, ի գաւառէ

Այրարատայ, ի գեղչէ կողմ, և զծ[նաւդս] իւր, զհայրն Քոքիք, և զմայրն Գոհար խաթուն, և զհարազատ եղբարսն իւր Առիւծ և Գա-
340բ զան, || և զամենայն ազգայինսն իւր, ընդ նմին և զիմ անարժանու-թիւնս՝ զՍարգիս սուսանունն քահ[անայ], և զծն[աւղն] իմ, և զամե-նայն արեան մերձաւորս իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս, և որ զմեզ յիշէ սրտի մտաւք և մեզաց թողութիւն խնդրէ, նա Քրիստոս աստ-ւած, որ առատն է ի տուրս ողորմութեան ընդ միոյն հարիւրապա-տիկ պարգեւեսցէ ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս ի միւսանգամ գալստեանն իւրոյ. և նմա փառք յաւիտեանս, ամէն, ամէն, հազար ամէն։

Կազմող՝ Խաչատուր

բ

340բ Ես Խաչատուր մեղաւք ի լի,
Որ զսուրբ տասըս կազմեցի,
Ըզձե ունիմ սարկաւագի
Եւ ի գործոյն եմ խիստ հեռի,
Զձեզ աղաչեմ աղերսալի
Եւ պաղատիմ արտասուալի,
Որք հանդիպիք այսմ տառի
Առցէք աստուած իր ողորմի,
Հաւրն իմ Տիրուն քահանայի
Եւ իմ մաւրկանն Խոլաւիի։
Զքեզ աղաչեմ սուրբ փակակալ,
Որ ամենայնց ես վերընկալ,
Զաւետարանս հրաշափառ,
Մի հանապազ ի ձեռն տալ,
Որ չաղտոտեն զանգին գոհար,
Աստուածամօր սիրոյն համար։

350.

ԱԽԵՏԱՐԱՆ

Երեան 5734 (տես նաև՝ 1423 թ.)

Գրիչ՝ Բարսեղ

վայր՝ Բառնենոյ զաւառ, գիւղաքաղաք՝ Մըծընկերտ

ա

335ա ...Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՉՉԸ. (1336), ձեռամբ մե-ղապարտ և անարհեստ գրչի Բարսեղի, ի գառն և ի նեղ ժամտնակիս, որում բռնացան ազգն Իսմայէլի ի վերայ ազգիս քրիստոնէից՝ Թա-մուր անուն, աւերելով գրազում եկեղեցիս և զվանորայս, տարաշխ-[արհ]իկ լինելով սուրբ կրաւնաւորաց ի յերկիւղէ անօրինաց։

Արդ, զրեցաւ սա ի գաւառս Բասենոյ, առ հանառիկ գեղաքաղաքն, որ կոչի Մըճըրկերտ, ի հայրապետութիւն տէր Վարդանայ... ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Ամենափրկչիս...։

բ

256բ *Ասաանաւր կատարեցաւ սուրբ աւետարանս ի թվ. ՉՉՀ. (1339), յիշատակ ե դաւակ ի Սիոնի։ Ստացաւ պատուելի կրաւնաւորն Կիւրեղ կոչեցեալ, յիշատակ հոգւոյ որդոյ իւրոյ Ներսէս քահանային, և եղբաւր իւրոյ Յորդանիշի և Շահնշահին, և ծնողաց մերոց Ձօրաքին և Պէշգինին, ... և ամենայն արեան մերձաւորաց մերոց, զորս ոչ կարացաք ըստ դրով արկանել։*

Արդ, ես՝ նուաստ և ապիկար գծողս Բարսեղ, տրուպ ամենայն քահանայից, իմ կամաւ վաճառեցի զիմ աւ[ետարանս] Ներսէս քահանային, որ այլ մարդու հայ ու չէ չկա, և սէր շնահաւոր առնէ ընդ երկար ամաւք մինչև ի խորին ծերութեան, ամէն։

Կրկին աղաչանք առ ձեզ՝ պատուեալ քահանայք, զի յիշման արժան առնէք զպատսւելի մանուկն զՍարգիս կոչեցեալ, որ աւգնական եղև սուրբ աւետարանիս։

351.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՔԱՐՈԶԻՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՅԳԵԿՑԻՈՑ

Երևան 1654

Գրիչ՝ Տէրտէր Երևանցի
վայր՝ Սուրխաթ

200ա *Փառք... որ ետ կարողութիւն նուաստութեանս իմս հասանել ի վերջին գլիծ երդոյս Վարդան վարդապետի և Աթանասի։*

Արդ, գրեցաւ ի թվականիս հայոց ՉՁԵ. (1336), ի մայրաքաղաքս ի Սուրխաթս, որ Ղրիմ կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս պարոն Շահանշահի շինած, ձեռամբ անպիտան և փցուն գրչի Տէրտէր սուտանուն քահանայի, [ի] խնդրոյ անձին իմոյ և յիշատակ ինձ, և ծնողաց իմոց՝ Սարգիս քահանայի և Գոհար Մէլիքին, և քվե-
200բ *բացն իմ՝ Խատերեսին և Մամախաթուն[ին], ‖ և զՍարայ Խաթունն, և զամենաւրհնեալ զաւակն իւր՝ զպարոն Ամիրն և զԷլդիմիրն, և զհայրն իւրեանց զպարոն Սուզահն, և զպարոն Շրվանն, և Զմրուխտ Խաթունն, և զսրբանանեալ հաւատ[աւ]որքն, որ հետ ինձ շատ աշխատեցան և մայրութիւն արին՝ զՀոռոմոխմէն, և զՋուհարն, և զՏաւնիէն։ Արդ, աղաչեմ զամենեսեն, որք կարդայք և աւետիք ի սմանէ, աստուածածինն ձեզ բարեխաւս, յիշեցէք ի Քրիստոս և զուք յիշել լիջիք ի նմանէ։*

Ես՝ Տիրացուս, անձն անարժան,
Ծուլ քահանայ թշուառական,
Որ եմ անկարգ խիստ ու անսահման
Եւ յաստուծոյ ամաւթական,

Սատանայի ճորտ բանական.
Չծուլութիւնն տրի ինձ բան,
Չազահութիւնն խիստ անխոտան,
Հրոյն անզերծ ես կու մնամ,
Հազար եղուկ անձինս ես տամ,
26ւա Սաղմոս || չա[ս]ցի առանձնական,
Ոչ հետ ընկերացն միաբան։
Ցերկրէն եկի այն վրացտաց,
Ի քաղաքէն այն պատուական,
Որ իր անունն է Երևաց,
Խոր Վիրապի նա հարևան։*
Ի ծովս անցայ այս անսահման
Ի քաղաքս ելայ ի ֆռանկ Կաֆաց,
Զղիրքս դրեցի դայս՝ դվարդան.
Որք ուսման ելնիք արժան,
Ի քահանայութիւնն աստուածական,
Գատարագէք ի սուրբ սեղան՝
Ու դպրաւոխաւմէն ասէք ի լման,
ԶՏիրացուս յայս անպիտան,
Դուք յիշեցէք, թող չեմ արժան,
Եւ Քրիստոսի վառք յաւիտեան։

352.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԵՐԱՏՈՒՑ

Երևան 8281 (աես նաև 1648 թ.)

Գրիչ՝ Տէրտէր Երևացի

ա

176ա Ով որ կարդայք ղղիրքս աննման,
ԶՏէրտէր դրիչս այս անպիտան,
Ծոյլ քահանայ թշուառական,
Որ եմ անարգ խիստ ու անսահման
Եւ աստուծոյ ամաւթական,
Դուք յիշեցէք, թող չեմ արժան։

բ

197ա Զատացող սուրբ դրաց նարեկի՝ զՏէրտէր քահանա յիշեցէք ի Քրիստոս, և զծնաւղն իմ՝ զՍարգիս քահանա, և զմայրն իմ Գոհար մխիթ, եւ դուք յիշե[ա]լ լիջիք։**

---

* Գուցէ՝ ձՅորը Վիրապին ա(=է) հարևանց։

** Տէրտէր Երևանցին ընդօրինակած ունի ձեռագրեր 1336 և 1341 թվականներին. նրա սուն և հաջորդ (№ 353) հիշատակարանները տեղագրում ենք 1336-ի թվաշարքում, որովհետև իրենց ձևով նրանք չափազանց նման են նախորդ՝ 1336 թվին դրված հիշատակարանին։

353.

ՓԱՐՈՋԳԻՐՔ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՑԳԵԿՑԻՈՑ

Ներան 6029 (տես նաև 1376 թ.)

Գրիչ՝ Տէրտէր Երևացի

ա

139ա ՁՏէրտէր գրիչս այս անարժան,
Որ զգիրքս գրեցի զայս ղՎարգան,
Ծոյլ քահանայ թշուառական,
Մեղաւք ի լի և պարտական,
Ցերկրէն եկի այն վրացտան,
Ի քաղաքէն այն պատուական,
Որ իր անունն է Երևան,
Խոր Վիրապին ու էջմիածնին է հարևան,
Ի լեռն ի մաւտ Սարարադ[է]աճ,
Անդ ուր տապանն է մեծ Նոյեան,
Ցերկիրս եկի հուսուական,
Ի նոր քաղաքս Կաւկասու անուան,
Զգիրքս գրեցի զպաասուական,
Ինչ որ կարդայք գինքս ի լման,
Զգրիչս յիշեցէք, քոզ չեմ արժան.
Պէք ի գժողքն չգնամ։

բ

171բ ՁՏէրտէր գրիչս Երևացի,
Ծոյլ քահանայ մեղաւք ի լի,
Որբևայրի, խեղճ ու լալի,
Ի մեծ գաշտէն էջմիածնի,
Ի ստորոտէն Սարարադի,
Ցաչխարհս ա[յ]ժ յայս մուղալի,
Զգիրքս գրեցի սուրբ վարգանի,
Ինչ որ կարդայք գինքս յատենի,
Ի ժամատան ու յեզեղեցի,
Զիս յիշեցէք վանց Քրիստոսի,
Պէք իմ մեղաց գէրն չնչի։

354.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Փերդ. 6273. էջ 146 (Վան, սր. Տէրամայր եկեղեցի)

Գրիչ՝ Առաքել

վայր՝ Մոկաց գաւառ, գիւղ՝ Դաշտ

Փառք անսկզբանն... իսկ ըստ Թուոյ խոսրովային յաբեթեանս տումարի ՉՉԸ. (1336), ի կաթուղիկոսութեան Հայկազեանց սեռի

աեաւս Ստեփաննոսի Ադթամարցւոյ, և ի թագաւորութեան* նստեալ ի գահն, զոր տէր աստուած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, զի յիշել զանունս նոցա սասանեալ սաքրին և ոչ ևս երևին [թ]ղնամիք։ Եւ գրեցաւ աւետարանս այս ի գաւառիս Սոկաց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Ցակոբայ, ի գեօղս որ Դաշտ կոչի, ձեռամբ յոգնամեղ գծողի Առաքելի, ի վայելուչն խոջայ Յուսուփին, և յիշատակ ծնողաց նորին։

355.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վասպ. 95. լալ. 8ուց. սյուն. 193—196
(Մոկսի Դաշտի թաղի ս. Ցակոբ եկեղեցի)

Գրիչ՝ Ցովաննէս
վայր՝ Հիզան Բաղաբ

...Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Ցովաննէսի անիմաստ և ախմար գրչի։ Եւ իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեանս և բաղում մեղաց ցնորիւք պաշարեալ, ըստ այնմ, որ ասէ՝ վիշտս յաղգէս, վիշտս ի սուտ ի եղբարց, և քէ՝ յստից մինչև ցղուխս չէք առողջութիւն։ Այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հողին, բազում աշխատասիրեալ իմ ի սմայ, գրեցի անարժան ձեռաւք իմովք յընտիր և ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազմաղէմ ալեկոծ ծվանաւք։ Ի մեծ թըւիս, ի յեղանակ շրջագայութեան արեգական ըստորիշխիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով, ըստ արարչութեանն չափեալ, յելանելոյն Աղամայ ի դրախտէն՝ ՋՌ. և ՋՃԷ. (6607) ամ, ըստ եւթանասնից որում մեք վարիմք։ Եւ է ի մարդեղութենէ բանին աստուծոյ անժամանակ էին և փրկչին Ցիսուսի Քրիստոսի ամս ՌՑՀԵ. (1335), իսկ ըստ թուոյ խոսրովանեան յարեթեանս տոմարի՝ ՋՁՆ. (1336), և էր մեծ շրջանին ՄԽԵ. (245)։ Ի կաթողիկոսութեան հայկազանց սեռի տեառն Ջաֆարբրայի Ադթամարեցւոյ և ի թագաւորութեան* նստեալ ի գահն, զոր տէր աստուած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, զի յիշել զանունս նոցա՝ սասանեալ թաքչին և ոչ ևս երևին թշնամիք ճշմարտութեանն։

Եւ գրեցաւ աւետարանս այս ի գաւառիս (՞), ի քաղաքիս Հիզան, ընդ հովանեաւ սրբոյն Աստուածածնին, և սրբոյն Մարգսին՝ զաւրավարին, և Գեւորգայ, ի վայելուչն աստուածարեալ և պատուելի հայրապետին Մարկոսի։ Արդ, ո[ր]ք ճաշակէք աստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, յիշեսջիք ադաւթիւք ստացող սուրբ աւետարանիս՝ զՄարկոս հայրապետ, և զծնողսն իւր՝ զհայրն Մարտիրոս, և զՑօհաննէս կրաւնաւորն՝ զքեռին իւր, և զմայրն իւրն Շնորհավորն։ Եւ զմխարան կրօնաւորքն զԿիրակոս, և զՄկրտիչ, և զմիւս Կիրակոս,

* Թագավորի անունը գրված չի եղել։

և զՄովսես յիշեսջիք ի Քրիստոս աստուած բոլորով սրտիւ, և զամենայն արեան մերձաւորն նորա։

Ընդ նոսին և զիս, զանարժան գրիչս զՅովաննէս, և զծնողն իմ՝ զհայրն իմ զՄկրտիչ քահանայ, և զմայրն իմ, և զպատուիկն մեր զԹաթուն, որ յոյժ աղխատեալ և սնուցեալ էր զմեզ և յորդորիչ ի գրելս, և չարքն, որ վիշտ հատուցին մեզ՝ չարաւ կորսւսին...։

356.

ՇԱՐԱԿՆՈՑ

Երևան 1622

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Աւագ անապատ

316ա ...Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուիս հայ[ոց] ՉՉԸ. (1336), ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, ի զառն ժամանակիս, յորում նեղին ազգ քրիստոնէից յանաւրէն ազգէն Թուրքաց, զոր տէր խորտակեսցէ, ի յԱւագ անապատիս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և կենսակիր սուրբ Նշանիս, ձեռամբ մեղսանեղկ և անարժան քահ[անայի] Թորոսի, ի լաւ և յընտիր աւրինակէ Գրիգորի դպրի, որ մականուն եաւլ կոչիւր։

357.

ՄԱՆՐՈՒՄՈՆՔ

Ալիշան, Սիսուան, էջ 201

Գրիչ՝ Սիմեոն
վայր՝ Կիլիկիա, Գալու անապատ

ա

Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուսուհի, ի թուիս Հայոց ՉՉԸ. (1336), ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի աստուածասիրի և բարեպաշտի, որդւոյ ի Քրիստոս աստուած հանգուցեալ թագաւորին Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, ի սուրբ անապատս, որ կոչի Գալու*, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և այլ սրբոցս որք աստ։ Ձեռամբ բազմամեղ և անարժան քահանայի Սիմեոնի։

Ծաղկող՝ Յակոբ

բ

...Հղյետնեալս ի նկարիչսն զՅակոբ դպիր՝ զծառայ աստուծոյ և ձեր, զծաղկող գրոցս, ի ծունկս անկեալ աղաչեմ սրտի մտաւք յիշել

* Գանվում է Դաշտային Կիլիկիայում։

գիս և զծնողսն իմ. և որ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսէ։ Աստուած ողորմի այս ծաղկողիս և իր ծնաւղացն հոգւոյն, ամէն։*

358.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5019 (ևս նաև 1648 թ.)

Գրիչ՝ Թումա
վայր՝ Թավրէժ

Փառք... որ կարողացոյց զտկարս և զանարժանս հասանել յաւարտ գործառութեանս այսմիկ գծայգրութեան միայն աւետաքարող աւետարանիս սուրբ աւետարանիս, ամէն։ Եւ արդ, 189ա սկիզբն եղև գործառութեանս այսմիկ նախախնամու | | | մայրաքաղաքիս Թավրէժ, ձեռամբ անարժան և դատապարտեալ նուաստ Թումա գրչի, յիշատակ բարեպաշտ և աստուածապաշտ քրիստոնէին Սարգսի և ամուսնոյ իւրոյ Աղաւ[ն]ի խաթունին...։

Բայց գրեցաւ սուրբ աւետար[անս] ի թուականս[թեան] Հայոց ՉՉԸ. (1336)։ Տէր Յիսուս Քրիստոս աստուած յիշեա ի քում յար-քա[յ]ութեանդ զհոգի բարեպաշտ քրիստոնէին Սարգսի, և զամուսնոյ իւրոյ զԱղուի խաթունին, և զհոգի ծնողաց սոցա՝ զՄեճաւագին, և զՎարդանէն, և զԽոցադեղին, և ողորմեա հոգւոց սոցա ի միւսանգամ քո գալստեանդ, ամէն։

Տէր Յիսուս ողորմի կարդացողացն և լսողացն, ամէն, ամէն։

359.

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Մատենադարան Հայկ. Թարգմ., էջ 553 (Վենետիկ)

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Սրուանդակ

... Շնորհիւ տեառն կատարեցաւ... մատեանս աստուածայինս՝ վարք և խաւսք հարց սրբոց, ի լաւ և ընտիր աւրինակէ, ի սուրբ քաղաքս Սրուանդակ... ընդ հարկաւ սրբոյն Ցակորայ... ի թվ. ՉՉԸ. (1336)... ի թագաւորութեան հայոց Լեւոնի, ի հայրապետութեանն Յակովբայ, ձեռամբ մեղապարտ և անարժան յիշման և ոչ գրչի, այլ Շապաթեփեցի [Յովհաննու]...

---

* Այս հիշատակարանները հրատարակված են վիմատիպ նմանահանութեամբ, Ալիշանը հայտնում է նաև, որ ձեռագրի կազմողն է Յաչատուր դպիր Սրուանդէմացին։

360.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Եբևան 212 (Տես նաև 1578 և 1631 թ.թ.)

Գրիչ՝ Աւագ
վայր՝ Ատրպայկան աշխարհ,
Սուլտանիա—Թավրէժ

309բ ... Ցօրոց միջի հասեալ աչողակութեամբ և դեր քան զբնաւս յընդրուքիւն բարւոյն, զեղաղէշ և չնորհաշուք յորդիս Սիոնի անդրանիկն և Հայոց Մեծաց թաղաղարմից ժառանգն, տէր տանն Սիսակայ՝ մեծիմաստ պարոնաց պարոն Պեշգէն, անեալն սրբութեամբ, սիրող եղեալ սրբազանից կտակարանաց, դիտելով խոհեմ ընդրութեամբ զնոտի կենցաղս անհաստատ բերուն, յաղագս որո զձեռն յուսոյ ի գործ արկեալ մեծաւ տարփանօք, և ստացաւ զանհամեմատ փառքամուքիւնս, և որ պահին մշտնջենապէս տալով ընդ աղալի յոյվութեան զանձուցն և զանչափ յոժարութիւն ըղձից, և ստացաւ զպատ-
310ա ւակա || ն մարգարիտս զայս ի վարժուն և ի վայելս ներհուն և սրբազան մտաց իւրոց, և նորաբոյս ոսկերողոջ աստուածատուր հարազատ ծիրան[ա]ծին և բարենշան զաւակին իւրոյ Էլիկումին, և աստուածապատիւ և մեծաշուք ծնողաց իւրոց աստուծով զօրացելոց՝ մեծ իշխանաց իշխանին և մեծահաւատ բարեպաշտին պարոն Բուրքելին և մեծուհոյն՝ պարոն Վախախին, նաև պարծանաց սիրալիր հարազատին իւրո՝ պարոն Իւանեի, և ի յիշատակ մեծայոյս և երկեզաղարդ ամուսնո իւրո՝ փոխեցելոյն ի Քրիստոս։

Արդ, եղև սկիզբն և աւարտ տառատպութեան աստուածային մատենիս յաշխարհն Ատրպայկան, յարքայանիստ քաղաքն Սուլտանիայ և Թավրէժ, ընդ հովանեաւ սրբոյ մօրն լուսո և սրբոյն Սարգսի զաւրավարի, ձեռամբ անիմաստ և անարհեստ փցուն ղրչի և ոսկենկար ծաղկի Աւագի՝ յետին կարօտի քանի, ի թվաբերութեան ամի մարդեղութեան տեառն մերո և փրկչին Յիսուսի Քրիստոսի ի Ռ. և Գճ. և Ի. (1340)
310բ ամի, և ըստ գրոյս ՔՎո ՉՀՀ. (1337), || ի բռնակալութեան աղգին նեստորաց կարճակեցին Արփայի, և յիշխանութեան զօրացելոյն Յիսուսիւ և փառաց ի փառս բարձրացելոյն կրկին կենօք և աշխարհօք՝ մեծ իշխանաց իշխանին պարոն Բուրքելին, հօր վերասացեալ զարդու զաւակին պարոն Պաշգենին՝ ստացողի աստուածային զանձուս, և ի վերատեսչութիւն եպիսկոպոսութեան տեառն Սարգսի մետ[ր]ապօլտի, ի գպրապետութեան մեծ հռետորին Նաայեա։ Այլ ա, որք օգտիք և

վայելէք աստուածային բուրաստանէս ընթերցմամբ կամ գաղափար ունելով, յիշեսջիք ի սրբամատոյց և աստուածահաճոյ աղօթս ձեր զտէրն մեր ըստ մարմնոյ. զայրն զուարթնոց ցանկութեանց զխոհեմ խորհրդանն զմեծայոյս պարոնաց պարոնն զՊետզհեն, բարեյաղթ ծնողօք, զարմօք, հարազատօք, որ մեծաւ սիրով և կատարեալ հաւատով զաւակ ի Սիոն ստացաւ զսա և ետ նուէր արձան անմոռանալի ընդ
311ա այլ բազմութեան արդեանցն և զոսկեծաղիկ բազմածախ, անգին և անհամեմատ աւետար || անս յիւր սեփհական և գերահոչակ մեծ ուխտն Տաթևոյ, ի յիշատակ գերեզմանի աղաքնոյն Քրիստոսի և յոյժ չքնազազեղոյն Փաշայիճ, որ էր ամուսին նորին և աղա հասակաւ փոխեցաւ յաստեացս. Զոր և աղաչեմք զամենեսեան խնդրել ի Քրիստոսէ նմա և վերոյգրելոցդ և մեզ տալ զանվախճան զկեանսն, և ուրախութեամբ վայելել զաստիս, և զմշտնջենաւորն՝ ընդ Քրիստոսի յանըսպառ յաւիտեանն։ Այլ և ոք մի իշխեսցէ զսուրբ աւետարանս գողանալ, կամ թուղթ կտրել, կամ հանել ի սուրբ և ի գերամաքուր յուխտէ Տաթևոյ մեծի եկեղեցոյն, մասն և բաժին չնայենին, զծուղային և զխաչահանուացն առցէ և անէծս ցաւագինս ժառանգեսցէ, ամէն։

Դարձեալ, մեծաւ աղերսանօք կրկին աղաչեմ զհանդիպողսդ սուրբ աւետարանիս, միով տէր-ողորմայիւ յիշել զիս զԱւագս կարօտ բանի և զծնողն իմ, զի յոյժ սիրով, փրցփրցուն գրչաւ և տարտամ ձեռամբ գրեցի, ոսկեցի ծաղկերանգ* և կազմեցի։ Ու որպէս յիշէքզ՝ յիշեալ լինիք։

361.

ՃԱՌԸՆՏԻՐ

Թուական 3787

377ա Զստացաւղ սուրբ գրոցս զՊարոնիկ ոսկիսն և զպարոն Տուածծ՝ տամբ և տղայիւք յիշեսջիք ի սուրբ տաւնի աստուածաղաւր վկային, և զՊրիգոր քահանայ կամեցող բանիս, և զհանդիպեալս աստ՝ զտէր Աւագ գրիչ,** և զամենայն աշխատեալքս ի սմա, և որ յիշէ յիշել լեցի յարարչէն ամենեցուն։

362.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ՄԱՐԴԱՐԷՑ, ՆԵՐՍԷՍԻ ՀԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ

Թուական 3606 (տես նաև՝ 1303 թ.)

Ստացող՝ Աւտխեր
վայր՝ Գայլիձոր

Արդ, աղաչեմ զամենիսեան, որք հանդիպիք այսմ աստուածա-

* Քեռագիրը զարդարված է բարձրաբվեհ մանրանկարներով։

** Ամենայն հավանականությամբ նախորդ հիշատակարանի գրիչ և ծագիզ Աւագն է, ուստի հիշատակարանը տեղագրում ենք նրան առընթեր։

շունչ մատնիս երկոտասան մարգար[է]ից վերստուութեանս և Դաե[իկի մարդ[ար]էին, յիշեսջիք* զանարժան և նուաստ Աւագահր սպասաւոր բանի, որ անուամբ միայն եմ վ[արդա]պ[ետ] և ոչ ելով
277a զարդինական, սրով տեսական աւրինի, || որ բազում ժամանակս աշխատեցայ առ ոտս մեծ բարեւնապետացն Յեսայի և Տիր[ատր]ոյ. և գնեցի զսայ ի հալալ ընչից իմոց՝ ի Ճ. (100) մխալ արծաթ, ի Գայլիձորին, ի թվ[ին] հայոց ՉՉՉ. (1337)։ Արդ, երես առու (այսպէ՛ս) անկեալ աղաչեմ զարձեալ կրկին, որք ընթեռ[ն]ոյք զաստուածային տառս, յիշման արժանի արարէք զԱւաքահր վարդապետ[ս], մեր ծնաւղաւքն հանդերձ. և ով գիրքս անկանի տարէն ինձ Բ. պատարագ մատուցանէ։

363.

ԱԽԵՏԱՐԱՆ

Ս. Ջալալ. ձանապարհ. մասն Բ. էջ 158—160 (Ն. Նախիջևան սբ. Լուսաւորիչ եկեղեցի)

Ստացող՝ Վառիլ
վայր՝ Կիլիկիա Այա՞ս

... Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Ստեփաննոսի գրչի ի թուականիս հայոց ՉՂՉ. (1297), ի թագաւորութեան հայոց Սմբատայ, ի հայրապետութեան տեառն Գրիգորի, ի յիշատակ մեղուցեալ քահանայ Մանուէլի, և կողակցի իւրոյ Իշխանաւրհ, և ծնողաց իւրոց, և ամենայն զարմից, ի վայելումն որդւոյ իւրոյ Ծովհաննեհս դպրի։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք օգտիք և ընթեռնուք զսուրբ աւետարանս, յիշեսջիք զդրօղս սորա զՍտեփաննոս քահանայ, և զծնօղս իւր, և զամենայն զարմս իւր, զմեզօք դատապարտեալ ծառայս աստուծոյ զԳրիգոր քահանայ, և զծնօղսն մեր, և զկողակիցս մեր զՀեղինեհ, և զորդիս մեր, զի ոսկւով զարդարեցի զսուրբ աւետարանս այս առ ի յիշատակի հոգւոց մերոց։ Եւ որ յիշենն զմեզ՝ յիշեալ լիցին ի նոյն ողորմածն աստուած, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

Արդ, յետ կատարելոյ զսուրբ աւետարանս ամենայն օրհնութեանց արժանիքն, զորս յիշեալ են յիւրեանց յիշատակարանն, անկեալ էր սուրբ աւետարանս ի հանգուցեալ հոգին՝ ի տէր Սիրուհիհ, որ էր դռնապան արքային հայոց Լևոնի։ Եւ նա՝ շնորհեալ էր ի յԱտանայ խէչ (=մօտ) իւր տնոյն, որ կոչի Անհամբերք Աստուածածինն։ Նա, ի բազմանալ անօրէնութեան մերոյ՝ վասն բազում մեղաց մերոց անօրէնն նայիպն Հալպայ Ալբուն Պուդայն, իբրև զոսփսակ և զանձն առաջին, խաբեալ զարքայն հայոց Լևոն բազում բանիւք և անհոգ ցուցեալ, և էր արքայն անհոգ նստեալ յԱտանայ, և աշխարհն ամե-

* Բնագրում՝ «յիշեսցիք»։

նայն անհոգ. ամէն մարդ ի յիւր տուն ու յիւր գործն, վստահ ի սուլտանին ամանաթն, և ի յայն, որ մեր դեսպաններն ճնալոնքն առ սուլտանին և առ անօրէն ամիրայս։

Եւ սա խարէութեամբ առեալ զՀալապայ հնծեալն, անուանելով թէ յՆփրատ ի ճանապարհ կու երթամ, ու յիշուից յերկիրս ի ԻՋ. (26) մայիսի, ի հինգշաբաթի, յաւուր համբարձման փրկչին։ Եւ հրէկ զորդ ի Մլուճն, ի յԱտաճայ ու ինչվի Տարսուս, և առեալ բազում լուզակս, ու մարգ, ու անասուն, ու արար ուժով սպանումն, ու արար բազում աւէր ու այրեցումն։ Եւ արքայն հազիւ զերծեալ յԱտաճայ, ու գնացեալ իմու Լևոնին առջև։ Եւ կեցաւ ինն օր յերկիրս ու ելաւ, և վարեցաւ զերի սուրբ աւետարանս ի Հալապ, հետ այլ անօթից եկեղեցւոյն։ Եւ դտեալ զսա օրհնութեանց արժանին, պատուելի իշխանն՝ պարոն Պետրոս Խպաեանց, որ առաքեալ էր դեսպան առ անօրէն ամիրայս, և վանն աստուծոյ սիրոյն և գիտելոյ, որ մեր եկեղեցւոյն էր՝ գնեալ զսա և բերեալ յերկիրս, և ետ յանարժան ծառայս աստուծոյ և ձեր ի վայելս, որ եմ թղթագիր արքայիս, և առեալ զգինն, զոր գնեալ էր յանօրինացն։ Եւ ես մեծաւ սիրով և յոյժ փափագանօք ընկալայ զսա ի վայելս սուրբ եկեղեցեաց և սուրբ տաճարին տիրամօր Աստուածածնի։

Եւ յետ աւերելոյ զերկիրս անօրինացն, դարձեալ խարէութեամբ, թէ՝ այն զոր եղաւ՝ եղաւ, սուլտանն ընդ ձեզ սէր է, տուք զմարն. ու առ խաստատ մի մալ՝ ի մէնէ, որ էր ՃՃՌ. (600,000) դր[ամ], ու տարի մի ի բուն, ինչվի մէկ այլ ապրիլն, ծեծելով ու հարամով անցոյց զերկիրս։ Եւ յետ մալին առնելոյն սուլտանին ուզեց զբերդերն, զգետին այն դեհին, զոր այլ էր տուած։ Նա արքայն Լևոն առաքեաց զպարոն Պաղտին մարաջախտն ու զիս՝ զանարժանս զՎասիլս առ սուլտանն Եգիպտոսի Նասրն, ուզելով ամանաթ, որ ինքն՝ արքայն երթայր առ ինքն վասն փրկութեան երկրիս։ Նա տնօրէնս այս Ալթուն Պուդայս արգել զմեզ ի Հալապայ բերդն ի զնդան։ Եւ ինքն մտաւ հնծելով յերկիրս և էառ զնդիրն։ Եւ յետ բազում տանջանացն ի զընդանն, հետ է. (7) ամսոյն հասեալ վախճան [Պաղտին] մարաջախտուն, որոյ ողորմեացի տէր Ցիսուս և տացէ իր պակ մարտիրոսական, և բերեալ մարմինն ի Հայէ։ Եւ զիս արգել անօրէն ամիրայն բոլոր տարի մի։ Ու կուզէր սուլտանն, զոր Ջահան կտրէր, ու շատ չանաց արքայն վասն փրկութեան երկրին ու չկարաց։ Եւ երկրորդ տարին մտեալ նոյն ամիրիս այլ վայր յերկրիս, բազում հնծելով արարքնով (այսպէս), ու աւերեցին զերկիրս՝ զլեառն ու զդաշտս, ու արին բազում սպանումն, ու առին անբաւ ծառայս ու առ, ու կու կորսնէր երկիր։ Նա անճար կեցաւ թագաւորն ու կատարեաց զսուլտանին կամքն, ու հրետ, զոր կտրէր Ջահան՝ բերդերոնքն ու զերկիրն ու զպանծալին այս Այաս, զոր բազում ծախիւք շինեալ էր։

Եւ հասեալ ի յանարժան խնամքն աստուծոյ բարձրելոյն, բարեխօսութեամբ իր սուրբ մօրն սուրբ կուսին Մարիամայ, ազատեաց ի բանտէն ու եկի յերկիրս։

Եւ ի սոյն ամի տագնապ մեծ էր յերկիրս Կիլիկիոյ յահէ անօրինացն, ի սրոյ, ի գերութենէ և ի սովոյ, որ չՓաց չէն յետ ի բերքերոյն, զոր Ծնացին, ոչ մարդութիւն յետ այնոց. որ ի բերդերն ի փախուստ էին ակն ունելոյ ողորմութեան աստուծոյ։

Արդ, աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Քրիստոսի, որք օգտիք ի սուրբ աւետարանէս կարդալով կամ օրինակելով, յիշեցէք առաջի Քրիստոսի և մեզաց թողութիւն խնդրեցէք, նախ և առաջին ստացողաց սուրբ զրոցս, և երկրորդ ստացողին զսա՝ սիր Սիքուճին, և իշխանին պարոն Պետրոսին, որ ազատեաց զսա յանօրինացն, և յետոյ անարժանիս Վասիլի, և ծնողացն իմոց Ստեփաննոսի և Մարիամու, և Ալէձին, և ամուսնոյն իմոյ Սպլի, զեռաբոյս որդեկին իմոյ անդրանկին՝ Ցակոբայ, որպէս զի ընդ միով հարիւրապատիկ հատուցէ աստուած աստ և ի հանդերձեալն։ Գրեցի զսա ի դառն և ի յետին ժամանակիս, ի մարդեղանալոյն Քրիստոսի աստուծոյ, յուսոյն մերոյ ՌԳՃԼՀ. (1337), և ի հայոց թվ. ՉՉՉ. (1337), և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

364.

ԱՒԵՏԱՐԱՆ

Ազգ. Հանգէս, Բ. գիրք. 1897 թ. էջ 284 (Ջաւախք, Վաչէան գիւղի եկեղեցի)
(տես նաև 1349 թ.)

Գրիչ՝ Ցովհաննէս
վայր՝ Բզնունեաց զաւառ, գիւղ՝ Ազէք

...[Գրեալ] ի յստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ, ի մեծ թուիս ի յեղանական շրջագայութեան արեգական ստորիջիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով, ըստ արարչութեանցն չափեալ՝ յելանելոյն Ադամայ ի դրախտէն ՋՌ. և ՋՃԱ*. (6601) ամ, ըստ եօթանասնից, որում մեք վարիմք, և է ի մարդեղութենէ բանին աստուծոյ անժամանակ էին և փրկչի Ցիսուսի Քրիստոսի ամս ՌՑԼԹ. (1339), իսկ ի թուոյ խոսրովային յաբեթեանս տոմարի ՉՉՉ. (1337), և էր մեծ շրջանին ՄԽԵ. (245)։ Ի յաոաջնորդութեան տէր Զաքարիայի, և ի յաշխարհակալութեան մեծ ինքնակալին Մահմուտ խանին, որ տիրէ բազում ազգաց, ունելով և ծովէն Պոնտոսի, մինչև ի ծովն Կազրից և մինչև ի գետն Ջահուն կոչեցեալ։ Ի կաթողիկոսութեան հայկազանց սեռից տեառն Ցակոբայ, և ի թագաւորութեան Լեւոնի՝ նստեալ ի գահն կիլիկեցւոց, զոր տէր աստուած պահեսցէ անխափանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, դի յիշել զնուանս նոցա սասանեալ սաքրին և ոչ ևս երեւին թշնամիք ճշմարտութեան։

Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառիս Բզնունեաց, ի դեղս

* Տպված է «ՋՌ. և ՋՃՌԱ».

առ ափն ծովու, որ կոչի Ադեք, ընդ հավանեաւ սրբոյ Կարապետին, ի վայելումն եղբաւրորդոյն իմոյ Պետրոս քահանայի։

365.

ԳԻՐՔ ԵԻԹՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՑ

Երևան 46

Թարգմանիչ՝ Ցակոբոս
վայր՝ Քռնայ

335ա Արդ, յամի ծնընդեան փրկչին մերոյ հազարերորդի երեքհարիւրերորդի երեսներորդի իններորդի* թարգմանեցաւ գիրքս եւթն առաքինութեանց, եւթն պարգեւաց հոգւոյն սրբոյ և եւթն երանութեանց ի լաթին բարբառոյ ի հայս, հաւաքեալ ձեռամբ փրա Պետր[ոս]ի ազգաւ լաթին և աշխարհաւ ԵՒրազօնկի, ի կարգէ քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, որոյ թարգման էր Ցակոբոս ազգաւ հայ, և սա դարձեալ ի կարդ[է]ն Դոմինիկոսի։

366.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա՛ Ն

*Ալիշան, Սիսական, էջ 95***

Վայր՝ Սիւնիք

... Ի տէրութեան տանն Սիսակայ մեծի սպարապետին Հայոց և Վրաց՝ թագազարմ իշխանին Բուրթելիճ, և լուսընծայ ծիրանածին զօրու և գամիր քաջ զաւակաց նորին Պեշգենի և Իւանէի, որ ամենայնիւ նման գոյ հօրն բարեպաշտի, այսինքն խոհանակութեամբ և մատակարարութեամբքն զաշխարհս և զզօրս, նաև յառաջադէմ յարքունիս և մեծափառ, զի մեծարանս արար տէր երեսաց սոցա։

367.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 6151

Վայր՝ Վայոց-ձոր, Բոլորածոր աճապատ

395բ Փառք ամենակարող և անբաւժանելի սուրբ երրորդութեանն, որ հաւոյց զմեր տկարութիւնս ի յաւարտուիճն և ի վերջին գիծս սուրբ աւետարանիս։

---

* Ուշ. (1339) թվականին համապատասխանում է հայկական ՉՀՉ. (=1337) թվականը (տես, օրինակ նախորդ հիշատակարանը), ուստի տեղագրում ենք 1337-ի թվաշարքում։

** Ձեռագրի բովանդակության մասին հրատարակիչը տեղեկություն չի տալիս։

Արդ, գրեցաւ. սա ի թվականիս Հայոց ՉՃՉՉ. (1337), ի Ձորիս վայոյ, ի յոնապատիս, որ կոչի Բոլորածոր | | |

368.

ՄԱՍՈՒՆՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Վիեն. 274. Տաղ. 8ուց. էջ 695—696

Գրիչ՝ Մարգարէ
վայր՝ Բերդձոր դղեակ

373ա *Փառք... գրեցաւ աստուածային հոգեբուխ գիրք առակաց իմաստնոյն Սողոմոնի, աստուծոյ պատուեալ թագաւորին, ի թու. Հայոց ՉՉՉ. (1337), ձեռամբ անարհեստ եւ մեղսասէր գրչի Մարգ[արէ] կոչեցեալ, հրամանաւ սրբասնեալ քահ[անայի] Ղազարու, ի դղեակս, որ կոչի Բերդձոր. ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն եւ բարիակրաւն ճըգնաւորացն Դանիէլի եւ Ղազարու. Արդ, ես նուաստ գրիչս աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք յայսմ հոգէաբուխ աղբերէս ընթերցմամբ կամ ընգաւրինակելով, յիշեսջիք ի Քրիստոս զսրբասնեալ եղբայրս մեր զՂազար քահանա, եւ թողութիւն հայցեցէք հանգուցելոցն մերոց՝ հաւրն մերում Դանիէլի եւ մաւրն Մարթայի, ընդ նմին յիշեսջիք զննջեցեալ քորքն մեր՝ զՀռիփսիմէ եւ զՆորխաթուն...:*

369.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 767 (ակս նաև 1511 թ.)

Գրիչ՝ Ներսէս

... Եղև գրաւ գրչութեան սորա ի թվաբերութեանս հայոց տումարիս ՉՉՉ. (1337), ձեռամբ յոգնամեղ և սուտանուն քահանայի, որ և Ներսէս անուն կոչի, ի խնդրոյ սրբամաքուր քահանայի, զոր և Մկրտիչ անուն կոչի. Այլ և տացէ տէրն ամենի ժառանգել զսա ուրա-
112ա *|| խալի, շնորհաւք տեառն Յիսո[ւ]սի. և լիցի իւր և զաւակաց իւրոց յիշատակ անջընջելի, այժմ և յաւէտ յապագայի և յանսպառ յաւիտենին. Գարձեալ աղաչեմ ես՝ Ներսէս մեղաւք ի լի, յիշման առնել զիս արժանի, Թողութիւն խնգրել անթիւ մեղացն, զոր գործեցի. և յիշողացդ Թողեջ տէրն բարի, այն՝ որ առատն է յամենայնի, և նմա փառք յաւիտեանս յամենայնի.*

*Կատարեցաւ ի յամսեանս. ի հոկտեմբերի ԺԳ. (13), աւուր երկուշ[աբաթի],**

* Գրված է անկանոն տառաչափությամբ:

370.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թվական 7928 (տես նաև 1304 թ.)

Ստացող՝ Իոդուպ

237բ *Ես՝ ծառայս աստուծոյ Իոդուպս, և Մեծ-խաթունս, որ ի մեր հալալ արդեանցն տվաք յիշատակ ի սուրբ Ամենափրկիչն շուրջառ մի ծիրանի խաւուն (՞), որ քահանա, որ սպասաւոր լինի ի յաղաւթքն յիշէ զմեզ և յամենայն տարի Դ. (4) պատարագ առնէ. Բ. Մեծ-խաթունին և Բ. իւր մաւրն՝ Հիլալին։ Եւ մի ոք իշխեսցէ հանել զշուրջառն ի սուրբ Փրկչէն։ Եւ թէ յանզգնի ոք, մասն և բաժին զաստուածասպանիցն առցէ, այլ ինասցէ մեզ յիշատակ և մեր ծնաւղացն, և կատարաւղքն աւրհնին յաստուծոյ, ամէն։*

Ի թվ. ՉՀՉ. (1337)։

371.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թվական 2844

Գրիչ՝ Աստուածատուր

176բ *Թվ. ՉՀՉ. (1337) Ի[նդրեմ զմեզ]պարտ դպիր զԱստուածատուրն և զծնողսն իմ [յիշման] արժանի առնէք, աղաչեմ. և Քրիստոս զձեզ յիշէ, ամէն։*

372.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԵԱՆՑ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՄԱՑԻՈՑ

Երևան 749

Գրիչ՝ Վարդաց
վայր՝ Գլաձո՞ր

122բ Վիմարդեան գլուխ բանի,
Ինձնեակ թուով յաւէտ խօսի,
Տէրն է քարող բարձր ի վիմի,
Աշակերտացն տեառն Ցիսուսի։
Ահա ասել զտեառն ձայնի
ոյժ աղքատացն երանելի,
Հոգով լինել իբր զոսկի,
Մաքուր մարմնով մինչ ապակի.
Բախ լինել, հեզ և բարի,
Ծառանգ վերինն կայանի,
Հաւատ և յոյս է կենդանի,
Միշտ ելանել յերկիր բարի։
Դիտումն է լոյս զգայականի,
Սգաւորք լինել ի յաշխարհի,
Ցորժամ հոգի տեառն հնչի
Մխիթարիչ հոգոց լինի։
Ահա քաղցեալքն երանելի,
Որ ի սեղան հօրն բազմի,
Առել զսէր այս աշխարհի
Եւ ճաշակել բան կենդանի.
Նախկնաբար մեզ քարոզի
Ցաստուածայինն բանն և հոգի,
Թէ ողորմածն երանելի,
Տէր մարդասէր առ նա ձայնի,
Հաց քաղցելոյն ճաշակողի,
Ցառաջընթաց ի յաւետնի,
Ցորմէ Ցիսուսն այն սոսկալի,
Հատուցանէ զգործ բարի՝
Նայիա վարժապետի,
Ջիմանալի հաց ծառկողիս

*Ի վարդաճա աշակերտի,**
Որ մեզ հայցէ առ տէրունի
Ջթողութիւն յանիտենի,
*Եւ ինքն դուցէ յամենայնի։***

373.

ԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԵԱՑ ԱՐԻՈՊԱԳԱՑՒՈՑ.

Երևան 167

Գրիչ՝ Յովաճեռ Հառոմիայրեցի

ա

337բ *... Այս տառս սրբազան մեծին Դիոնոսիոսի Աթենացւոց եպիսկոպոսի գրեցաւ ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ի հռչակաւոր ուխտէն Հաղրատայ, հրամանաւ և արդեամբք եռամեծի և անյաղթ վարժապետի և ժրաջան հոետորի Նաաեայ։*

Արդ, որք աւգտիք ինչ յաստուածազարդ տառէս և կամ աւրինակ առնոյք, յիշեսջիք զսրբազան բարեբնապետն իմ զՆաայի, հանդերձ ծնողաւք և վարդապետաւք։ Ընդ նմին և զիս, զամենաթշուառ գրիչս Յովաճեռ Հառոմիայրեցի, աղաչեմ յիշել ի տէր, և յիշողքն յիշեալ լիցին, ամէն։

Ստացող և մեկնիչ՝ Նաայի Նչեցի.

բ

*Զնուաստ և մեղապարտ ոդի Նաայի մի՛ մոռանայք յիշել ի բարի, որ ուղեցի ի սա գաւտր, զկէտ, և զբան, և զտուն։ Եւ ի տեղիս դժուարալոյծ բանիցն զրեցի լուծմունս իմով ձեռաւք, որպէս տեսանէք, զի ի ձեռն սակաւուս շահեցայց ի ձէնջ յիշել միշտ ծնողաւք և վարդապետաւք։*****

---

* Առաջին վեց քառյակների սկզբնատառերով հոդվում է գրչի անունը՝ «Վարդան», որ հավանաբար Նաայի Նչեցու աշակերտ, նշանաւոր գրիչ ու ճաշակով գրված մի քանի ոտանավորների հեղինակ Վարդան Բարձրբերդցին է։

** Նաայի Նչեցու անվան հիշատակութեամբ որոշակի տարեթիվ չունեցող հիշատակարանների դրութեան մերձավոր ժամանակը որոշելու համար կարևոր է պարզել նրա մահվան ճշտված տարեթիվը։ Տարաբախտաբար, այդ նշանավոր գործչի կենսագրության հետ կապված շատ հարցեր, որոնց թվում նաև մահվան թվականը, մթության քողով են պատված։

Հիշատակարանների սույն ժողովածուի նյութերով Նաայի Նչեցին 1337 թվականին դեռևս կենդանի էր (տես գրիչ Աւագի № 360 և ստացող Աւաքտէրի № 362 հիշատակարանները), և շարունակում էր իր գործունեությունը, որպես «պարապետ» կամ «բարեբնապետ»։ Սակայն հաջորդ՝ 1338 թվականին արդեն, վայոցձորում գրված հիշատակարանների մեջ, նրա փոխարեն որպես վարժապետ «ընդհանուր հայկազեանս սեռիս» հիշատակվում է նրա փոխանորդ Տիրատուրը (տես հիշատակարան № 377)։ Այսպիսով, Նաայի Նչեցին պետք է մեռած լինի կամ 1337-ի վերջին, կամ՝ 1338-ի սկզբին։ Ուստի և նրա անվան հիշատակութեամբ, որոշակի տարեթվեր չունեցող սույն և հաջորդ հիշատակարանները տեղադրում ենք 1338-ի թվաշրջում, որը նրանց գրության վերջին հնարավոր ստեթիթն է։

*** Նաայի Նչեցու մեկնութիւնները, ինչպես և սույն հիշատակարանը, գրված են ձեռագրի լուսանցքներում, տողերի միջև, խառն գաւառատառերով։

374.

ԳԻՐՔ ՊԻՏՈՑԻՑ

Երևան 1681 (տես նաև 1553 և 1757 թ.թ.)

Գրիչ՝ Կիւր[ակոս]
վայր՝ Գլաձո՞ր

ա

233ա Ո՛հ, աղաչեմ, զողորմելի դերիս յիշել՝ զԿիւր[ակոս], և զծնաւղսն իմ ի մեղաց թողութիւն, և որք յիշեն յիշեալ լիցին ի Քրիստոսէ, ամէն։

բ

259բ Զգերաբուն բանի սպասաւոր և ղրարեաց արժանաւոր յիշատակի՝ զրաբունապետն մեր զեսայի [Նչեցի] աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, հանդերձ զարմիւք իւրովք. նաև զգրող սորին և զծնաւղսն իւր աղաչեմ առնել յիշատակի արժանի, և յիշողքն յիշեալ լիցին ի Քրիստոսէ, ամէն ամէն։

գ

Թէ դրելոցդ հաւանիս՝ բնկալ և թէ ոչ՝ ի կամս քո է, այլ զգրոցս իմ աղաչեմ յիշել ի Քրիստոս։*

375.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վեհնեռ. 9, Մաքգ. 8ուց. Ա. էջ 100

Գրիչ՝ Եզեկիէլ

ա

105ա Զմեղապարտ գրիչ Եզեկիէլ ս[ար]կ[աւագ], բարի մտօք յիշել ի տէր, յերեսս անկեալ աղաչեմ զընթերցողդ։

բ

190բ Մեծ դիտապետն սրբազան
Եւ քաւչապետն արհիական,**
Որ զօրինակս ետ մեզ ի բան,
Քրիստոս պահէ զինքն անսասան՝
Հանդերձ իւրովք միաբան,
Այժմ և յաւէտ և յապագայն։
Նաև գրիչս արէք արժան
Բարի կամօք ի տէր յիշման։

---

* Այս հիշատակագրությունը գրված է 259բ էջի սորին լուսանցքում՝ կարմիր թանաքով։

** Սուրբ հարբազան գիտապետի անունը չի պահպանվել։ Հավանաբար նույն Նչեցին է։

376.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 1183

Գրիչ՝ Մաքեոս Սեբաստացի

Ո՛վ վարդապետ սուրբ և բարի
*Եւ պուետիկոս մեծ բարունի,**
Ցորժամ, որ դիրքս ատ քեզ լինի,
Որ է մատեան մեծի Դաւթի,
Ցիշման առնես դիս արժանի
Հզ Մաքեոս Սեբաստացի,
Հզսևացեալ մեղաւք հոդի
Եւ դունակցեալ այծից նմանի.
Ի յահեղ աւուր մեծի,
Ցորժամ զործիք մարդկան յայտնի,
Ուր ամենայն բանք սպառի,
Հեզուս ճարտար անդ պապանձի,
Ի հարցանել դատաւորի
Ոչ ունենամ պատասխանի։
Ցայնժամ հաիմ ողորմելի,
Զաչերս ածեմ արտասուալի,
Համ 'ւ հառաչեմ կողկողալի,
Ողորմած ացն ոք չողորմի,
Զի մինչ յաշխարս 'ի կենդանի
Զողորմութիւն ոչ սիրեցի.
Ի քէն խնդրեմ սուրբ բարունի
Եւ աշակերտաց քոին բանի
Իմ հոգիս ձեզ յանձն եդիցի,
Ցիշման առնէք դիս արժանի։

377.

ԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԵՆԱՑ ԱՐԻՈՊԱԳԱՑԻՈՑ

Ալիշան, Սիսական, էջ 125

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Վայոց-ձոր, Հերմոնի վանք

... [Գծագրեցաւ] ի նահանդիս Վայոձոր, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի... յիշխանութեան և ի տէրութեան տեղւոյս մեծ և բարեպաշտ իշխանին Բուրքելի, և զաւակաց նորին՝ Պհշ-ջենի և Իւանի, և ի վարժապետութեան ընդհանուր հայկազեանս սեռի

* Ակնարկված է նայլ նչեցին, ուստի դրված պետք է լինի վերջինիս կենդանութեան օրոք, այն է՝ 1338-ից առաջ։

*երջանկի, մեծի և երից երանեալ հռետորի Տիրատուր առաքյնելոյ, առ որ կամք ղեզերեալ ի վարժս կրթութեան... որպէս զաւակ առ ծնօղ, որ սփոփէ զկեանս մեր՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։**

378.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7643 (տես նաև 1521 թ.)

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Եզնկա—Ձլիմոն

ա

313ա *... Ի շրջագայութեան ժամանակաց յամի եւթնհարիւրերրորդ[ղ]իՁէ .Հայոց Թուականի (1338), ի թաղաւսրութեանն Հայոց Լևոնի որդւոյ Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Յակովբայ, և ի եպիսկոպոսութեան մերոյ տէր Սարգսի։ գրեցաւ Դ. գլուխ աւետարանս այս՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յոհաննէս։*

Արդ, ստացաւզ եգեն սուրբ աւետարանիս Մարխաթուն հաւատաւորն ի հարանայդուստր Մուվարի, և Հերթիկն ի Կեռսեռուրէն, որդի
313բ *Վահրմին, որ են այժմ ի գ[եղս. որ]** կոչի Խարաթուղ. ‖ և եգին զսա յիշատակ իւրեանց և իւրեանց ծնաւղացն ի գեղս, որ կոչի Խարաթուղ, ի մեծ և ի հռչակաւոր եկեղեցիս, որ յանուն սուրբ Աստուածածնինն։ Արդ, որք ընթեռնուք զսա յիշեսջիք զստացաւղս սորա զՀերթիկ ժամկոչն և զծանաւգան իւր՝ զհայրն իւր զՎահրամ և զմայրն իւր զՇուշան տիկին, և զՄարխաթուն հաւատաւորն, և զծնաւգան իւր՝ զհայրն իւր զՍուրվա[ր և զ]մայրն իւր զՍովհաթ, և զայլ ամենայն զարմն իւրեանց՝ զկենդանի և զհանգուցեալ։ Ընդ նմին և յիշեսջիք և զիս՝ զրազմամեղ գրոզս զՅովաննէս, և զծնա[ւ]զն իմ, զհայրն իմ զՄարտիրոսն հիւսն, և զմայրն իմ՝ զՍնծտիկին՝ զիոխեցեալն առ Ջրխոտոս, և զմիւս մայրն իմ հոգևոր՝ զՇամիրամ, և զայլ ամենայն զարմ իմ՝ զկենդանի և զնա[ն]կուցեալ։*

*Արդ, գրեցաւ սա ի յեկեղեց·գաւառս, ի յԻզնկայս, և վասն գառնութեան ժամանակիս ի հինգ տեղիս փոխեցեալ եղաք ի գրել։***
314ա *Ո՛վ եղբարք, ի[ոշոր]ութեան գրոյս և [սխալա]նաց մի մեղա·գ[րէք]***, զի ի դառն և ի նեղ ժամանակի գրեցաւ։ Զի յայսմ ամին՝, որ Տամուրտաշ յայտնեցաւ, և եկն ի վերայ աստուածապահ քաղաքիս*

---

* *Հիշատակարանի սուն հատվածից հետո Ղ. Ալիշանը գրում է. «Ցայսմէ գրչէ ի նմին մատենի՝ առաջին գրիչն մեծն Գրիգոր կոչի, և աշակերտ նորա Սարգիս մեծ բարեբանապետ։ Գրված է 1338 թվին։*

** *Պատռված է։*

*** *Էջի ներքևին լուսանցքում գրչի կողմից գրված է «և գիրքս մխակեցն յիշեցեք, որ գգրողիս մուշտակն կարեցե»։*

**** *Ջնջված և խունացած տողեր են, վակագծերով առաջարկված տառերը չեն ընթերց-*

եզնկայիս, և ժողովեց զամենայն շուրջակայիցս զքուրթ և զթաթար, և պաշարեաց զքաղաքս։ Եւ նստաւ ի վերայ սորա ամիսս Դ. և ի զառն նեղութիւն հասոյց, բայց քաղաքին ոչինչ կարաց ՚ի[ա]սել, զի | | | բութիւնն* պահէը զ՚ի[ա], ապա զերկի[ր]ն խիստ զառ | | | ի սուր ս[ուսեր]ի մաշեց, և ղոմանց զինչս և զստացուածս յափշտակեց, և ոմանք փախեան՝ և ի ձիւն և ի սառն մեռան, զի ձմերային էր ժամանակն։ Զի որ ի տան բնակէը՝ ի ձեռս նոցա մատնէը, և որ փախչէը՝ ի ցրտոյ տոչորէը. և ի յետին շունչն հասաւ երկիրս այս։ Եւ իմ լսէի և տեսանէի զայս և ի բազում տրտմութենէն ոչ կարէի գրել զգիրս.

314բ | | | եղև աւարտումն սորա ի Ձլիմոնիս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Գէորգեա զաւրավարին, և սուրբ Կաթուղիկէիս և այլ սրբոցս։ Եւ արդ, յիշեսջիք և զեղբայրն իմ՝ զդեռաբոյս արեւդայ զՍարգիս, որ զթո[ւ]զթս կոկեց և սպասաւոր էր գրողիս։ Ընդ նմին յիշեսջիք և զհայր վանիցս Ձլիմոնոյս՝ զԳրիգորիս աբեղա, և զայլ միաբանքս զՍոսթենիս ծերունի աբեղա, և զՍէք աբեղա, և զՅ[ով]աննէս աբեղա, և զԿարապետ աբեղայ, և զՍարգիս աբեղա, և զՅովաննէս սուտանուն աբեղա՝ ղգրող սորա։ Եւ արդ, յիշեսջիք և ղքահանայքս զգեղ խարաքշոյ՝ զՅովաննէս քահանայ, և զ՚Իսւիթ քահանայ, զՆերսէս քահանայ, և զՍտեփաննոս քահանայ, և զաւաք տանուտէրքս՝ զՍողոմոնն և զՓիրոսն (*), և զայլ պաղի զմեծ և զփոքր, և ինքն, որ առատն է ի տուրս բարեաց և ողորմութեան, ձեզ՝ յիշողացս և մեզ՝ [յիշ]եցելոցս առհասա[րա]կ ողորմեսցի, և նը[մա] փա[ռք] յաւիտ[եանս], ա[մ]մէն]։**

Բ

2բ Զնկարաւզ պատկերիս, զՅովաննէս անվամ[բ] եպիսկոպոս և ոչ ղործաւք, յիշեսջիք ի Քրիստոս։***

---

* Այս է հաջորդ չորս տողերը խիստ եղծված են և մասամբ պատռված։ Սուրն բառը գուցե հնարավոր լինի վերականգնել ե[ամ]բութիւնն կամ ե[զաւ]բութիւնն ձևով։

** Հովաննես գրիչը մանր հիշատակագրություններ է թողել նաև 1բ, 89բ, 148բ և 244ա էջերում, որոնք, սակայն, նոր բան չեն ավելացնում գլխավոր հիշատակարանի վրա։

*** Շատ հետաքրքիր ու ինքնատիպ են Հովաննեսի նկարած ավետարանիչները, նրանց առաջ գարսված են գրչության և նկարչության համար անհրաժեշտ բոլոր իրերի ու գործիքների շատ բնորոշ պատկերները, իրենց անուններով։ Այսպես 2ա էջում, Մատթեոս ավետարանչի աջ կողմում, վերից վար գրսված են ջանոնն, ջեղթի կոկիչն, ջհաղ[ա]մարն (2 հատ), ջգրիչն (2 հատ), ջմկրատն, ջձևիչն, ջդանակն (մեծ և փոքր), ջսնտուկն (ըստ երևույթին փայտից, փորագրված զարդաքանդակներով. մինչեւ երեւում են երկու՝ կարմիր և սև, ներկի ամաններ), ջխուփն (սնտուկի կափարիչ, նույնպիսի զարդաքանդակներով)։ Ղուկաս ավետարանիչի առջև (էջ 149բ), բացի վերոհիշյալ առարկաներից, նկարված է նաև ջմարմարն (մարմարյա տախտակ, հավանաբար ներկերի պատրաստման և փորձարկման համար)։

379.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թուական 4813

Գրիչ՝ Մելքիսեդեկ

ա

... Արդ, գրեցաւ չորեքվտակեան գետս աստուածահոս՝ ձեռամբ
187բ մեղաւոր և վշտուն գրչի Մելքիսեդեկի, || ի խնդրոյ պատուական քահանայի Հայրապետի յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց՝ Աստրոյ և Նազխաթունի, և զաւակաց իւրոց*, և եղբարց իւրոց՝ Աղշիրեկի և Տալիթայի և էմնայի, զոր վայելել տացէ նմա տէր աստուած ժամանակս բազումս, և յետ աստի կենացս բարեխաւս ընդունելի առ աստուած, Ընդ որս աղաչեմք առնել արժանի յիշման զվերագրեալս ի սմա և մեղաց թողութիւն խնդրել, զի և ձեզ թողցէ տէր աստուած զյանցանսն ձեր։

Այլ աղաչեմք, զի և դիս՝ ըզվշտուն գրիչ զՄելքիսեդեկ, և զծնողսն իմ՝ զՍտեփաննոս քահանայ և զկաթուն, և զեղբարսն իմ զՆերսէս քահանայ, և զՍիրախաթուն, և զԹանկխաթուն, և զՄարեմ տիկին, և զամենայն արեան մերձաւորսս յիշել ի Քրիստոս. և ինքն աստուած, որ առատն է ի տուրս, որ հաբբստանայ ընդ տալն քան թէ ընդ առնուլն, և բազմանան զանձք նորա ի ցրուելն քան ի ժողովելն, տացէ ձեզ զգանձն անկապուտ և զկեանսն անկողոպուտ։ Եւ խոշորութեան գրոյս անմեղադիր լինել, զի ամենայն մարդ սխալի ի գործս, և ես առաւել քան զամենայն ոք, զի աշխարհս աւտար էր, և աւուրքս չար, և ժամանակս դառն, և ես պարտականն ևս առաւել հոգւով։ Ընդ որս աղաչեմ խնդրել թողութիւն սխալմանս մերոյ, զի և ձեզ թողցէ տէր զյանցանս ձեր։

Զվարդան քահանայ՝ զհոգևոր եղբայրս մեր, և զՅոհաննէս, և զՍտեփաննոս, և զՇնոխվոր, և ծնողսն իւր՝ զՄերուն, և ըզՄարթայ, և
188ա զԴաւիդ, և զամենայն երախտաւորսն մեր յիշեցէք || ի Քրիստոս, և յորս յիշէք զմեզ և դուք ի նոյն լիջիք, ամէն։

Գրեցաւ ի Թուականի հայոց ՉՉԸ. (1338), ի ժամանակս որ ոչ զան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իրրև զնաւ յերերման, և քրիստոնեայք էին հալածական և ի խախտական.

Չի եւ ոմն անուն Դամուրտաշ
Եւ արար զազգս մեր ի մաշ,
Եւ Քրիստոս ետ նմա մահու ճաշ,
Եւ եղև յաչս մեր հրաշ.
Քրիստոսի անմահին վաշ,
Որ արար զնա լաշ։

բևին աղաչեմք յիշել զՀայրապետ քահանայ, և զկենակից իւր զԳինոց և զքւերս իւր՝ զՄիլա, և զՍիրմա, և զՔուչիկ, և զհոգեսէր տա-

նուտէրն զԿիրակոս, և զՆազիկ, և զՏիրամեր, և զԱմէն տիկինն, և Աբրահամ ի Քրիստոս, և զձեզ Քրիստոս յիշէ յիւր արքայութիւնն և նմա փառք։

ՉԳուամաճ զհոգևեսէր աղախին յիշեցէք ի Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրեցէք, և Քրիստոս զձեր մեղքն թողու և զմերն ոչ յիշէ, ամէն։

ՉՄամախաթուն՝ զհոգևոր քոյր մեր յիշեցէք ի Քրիստոս։

բ

147ա ... Գրեցաւ ի զաւն ժամանակիս, որ էր թիւն ՉՉԷ. (1338)։ Ցայսմ ժամանակի եղ ոմն անաւրէն անուն նորա Դամուրտաշ և աւար եհար զազգս Քրիստոնէից. և Քրիստոս զինքն կորոյս յետոյ, հետ Ալիտաշիի։*

գ

147բ Ցիշեցէք և աստուած-ոզորմի ասացէք Ազարիայիի, որ ի կազմել սուրբ աւետարանիս խաղող երեր կերանք, աստուած ողորմի ասացէք, ամէն։

Թղթի կոկոզ՝ Սրբիմ

դ

89բ ՉՍրբիմ սարկաւագ, որ զթուղթս կոկեցի, յիշեցէք ի Քրիստոս, և զծնողսն իմ՝ զՍիմեոն քահանայ և զՍիրախաթուն, և Քրիստոս զձեզ յիշէ, որպէս դուք զմեզ, ամէն։

380.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 1429

Գրիչ՝ Մխիթար Աճեցի
վայր՝ Սուլթանիա

ա

148բ [Հ]ասարաթ ունիմ ի յիմ սրտիս,
Միշտ տագնապիմ վասն այս բանիս,
Որ մինչ հոգիս է ի մարմնիս
Ես տեսանեմ զթամամ գրբիս։
Ոսկով զուգած այս խորանիս
Եւ զանազան այս ծաղկնիս
Զքնազագեղ այս սուրբքնիս,
Պարպէ Աւագն, հայնց որ կամիս,
Նաև կազմեմ ըստ իմ սրտիս
Եւ յաւանդ տամ յիմ սիրելիս,

* Անվան հետ տառը պարզ չի ընթերցվում, կարող է լինել նաև «Ալիբաշին»։

Որ և զմեզօք մեռեալ հոգիս,
Ցիշման առնել միշտ արժանիս։
Մինչ այլ տղայ [՝ի ՝է] ուժս առ իս,
Ես փոյթ չարի այսմն ըանիս.
Ի զանազան զրազմանն սրտիս.
Այս յո՜ւր լինէը ի յիմ մրտիս։
Երբ գնաց ուժս, երեկ ալիս,
Եւ ի լուսո վատեց աչվիս,
Այս իմ յիմար խելքս եկն առ իս
՝Ի ապա սկիզբն ածի գործիս
Այս, որ պիտէը գործս բարիս
Ու խիստ հմուտ այսմ արհեստիս.
Որ զթարկն ասէը զաստընվորիս
՝Ի ապա հպէը նա յայս գործիս։
Ես ոչ ունիմ գործս բարիս,
՝Ի ոչ հմուտ եմ այսմ արվեստիս
Եմ կապել սէը աստընվորիս,
Միշտ թաւալիմ ի մէջ տղմիս,
Ապա այս մէկս յաղթեց ղիս,
Եւ հանգչնիլ երետ լըրբիս,
Թէ ոչ ունիս գուստը ու սրգիս.
՝Ի ոչ յիշատակ յեկեղեցիս.
Քեզ պատշաճ է, որ աշխատիս
՝Ի այն պատճառաւըն Թէ յիշիս.
Արդ, Թէ գովիս, Թէ քամահիս,
Լուր մէջ յեղբարցն Թող յիշիս։
Արդ, համբուրեմ ըղձեր ոտվիս
Մեզ մի ղընէք անլի ըանիս,
Մի բանբասէք զայս եղկելիս,
Ք՝ ինչ կու հաջէ այս անհարկիս։
Մինչ զեռ էի ի մէջ բանիս
Նա կու նեղէը ցաւըն կշտիս,
Ես զայս եղի ի յիմ սրտիս՝
Լինի չհասնիմ յեզըը գըծիս։
Արդ, փուք է կեանք աստընվորիս,
Մահու կասկածըն նեղէ զիս,
Ջառնէք անտես զաղերս ծերիս՝
Ցիշման առնել միշտ արժանիս,
Թէ հաւանիս, Թէ չհաւանիս,
Թէ բանբասես կամ սիրտ ելնիս,
Թէ բարկըն բարկըն ծիծաղիս,
Թէ ինչ կու ասէ այս աղտեղիս։
Եւ Թէ խղճաս այս անմրտիս
Եւ ողորմիս այս յիմարիս,

Անտես առնես ըզկարդ բանիս,
Միայն ի սիրտս դու հայիս։
Աստուած բարի՝ ինձ ողորմիս
Եւ հայրաբար խնամ տանիս
Այս մեղաւոր տառապելիս,
Որ է մեղօք մեռեալ ողիս,
Ինձ՝ անարժան փծուն գըչիս՝
Ողորմելի Մըխիթարիս,
Որպէս յիշէքզ յիշեալ լիցիս,
Առնուք միոյն հազար բարիս,
Եթէ ոք խէթ ունի ընդ իս,
Զի ձեզ արել եմ շատ չարիս,
Ես ձեզ մեղա, ողորմելիս.
Թողէք ը[յ]անցանս մեղապարտիս,
[Դ]արձեալ կրկնեմ ծունը կրկին,
Միշտ աղաչեմ անլռելին,
Ցիշման առնել միշտ արժանին,
Ըզվեհապոյնքս, որ հեմ յիշին,
Ըզհանգուցեալ իմոյ փրկչին,
Ըստ չափոյ տեառըն խնամողին,
Մեր երջանիկ ղլխոյ վեհին,
Առաջնորդաց այս նահանգին,
Տէր Սարգսի, տէր Գրիգորիւ,
Որ միշտ ճնան անգրդվելին։
Բազում աւուրք յոտս սոցին
149ա Ես զովացա յիւրեանց շըքին։
Մեծ օժընդակ այսմ գործին,
Արի և քաջ քարտուղարին
Ի անհամեմատ նկարողին
Շնորհաց Աւագ սարկաւագին,
Այնչափ վերայ ինձ հոգ տանին,
Որպէս տանի ոք զաւակին,
Արդ, զտրիտուր փոխարինին
Զբարին առցեն յօրըն վերջին.
Եւ բազմերախտ հանգոյն ծնօղին,
Մեղաւորիս գաւառակցին՝
Գրիգորու քահանայիւն,
Սըննդակցին իմ պարոնին,
Նայ և Սարգիս սարկաւագին,
Մարտիրոսի և Սարգսիւ,
Եւ Տրգատա քահանայիւն
Եւ այլ ընդրեալ քահանայիցն
Սուլթանիու յեկեղեցին,
Ստեփաննոսըն՝ Բարերդցիւն՝

Սիրով զմեզ ընդունողին,
Նայ և Բարսեղ կրօնաւորին՝
Քաղցրաբարբառ երգեցողին,
Եւ Յովհաննես վկակալին,
Եւ Հայրապետ քահանային.
Անկեղծ եղբաւրն իմ Ներսեսին,
Ի Աստուածատուր ոսկերչին,
Նայ և Շնաւոր սարկաւագին,
Եւ Պետրոսին, և Մժդնին,
Գարոն Սարգսի, և Խորիշին,
Եւ Մարտիրոս իւր անդրանկին,
Քաղցրիկ եղբօր մեր Փօլատին,
Առ մեզ շատ սէր ցուցանողին,
[Ց]իշեմ զգաւառն իմ հայրենին,
Զմայրաքաղաք ամուրն Անին.
Եւ ըստ մարմնոյ իմ ծնօղին՝
Տէր Յակորա և Սեդայիս,
Եւ իմ եղբարցն հարազատին՝
Գեորգա և Գրիգորիս,
Նայ և քվերն իմ՝ Զալալիս,
Որք են ննջել ի տապանին.
Սարգսիս և Լիսոտիս,
Եւ փեսային իմ Գրիգորիս
Ի իւր ամուսնուն՝ Խեր խ[ա]ք[ուն]իս,
Թաւաբալուն՝ իւր անդրանկին,
Զոր հավանի լիցի սոցին
Ամենակալ աչն անեղին.
Զոր ծնողաբար խնամէին,
Երէց եղբօրն իմ Գեորգիս,
Ըղկնի իմ շատ աշխատողին
Եւ առաջին իմ ուսուցչին,
Եւ որք առ մեզ սէր ցուցուցին
Եւ ըղձանգըս հանգուցին,
Եւ որք մի օր կերակրեցին,
Կամ բաժակաւ ջուր արբուցին,
Ոչ կորուսցէ գվարձըս նոցին,
Վասն անսուտ տեառըն հրամանին,
Այլ հատուսցէ հարիւր՝ մէկին,
Աստ և յաւուրն աներեկին.
Ցիշողացս և յիշողին,
Առհասարակ ի միասին։
Ցիշող[ք]ն մեր յիշեալ լիցին
Այն աներեկ յօրըն վերջին,

Որպէս յիշեն այնպէս յիշին
Առջև ահեղ թագաւորին.
Ինքն, որ կարող յամենայնին,
Ներող, գթած, քաղցր ու բարին
Հայի ի սիրտս հայցողին
Եւ տայ առատ զփափաքելին՝
Մեզ՝ յիշողացս և յիշողին,
Կարդացողաց և լսողին,
Եւ ինքն աւրհնեալ յամենայնին
Ցարարածոցս ի բնաւին։
[Ե]ւ աշակերտքն իմ աստ յիշին՝
Արտսրուդին և Թաթոսին,
Սայիներեկին և Գրիգորին,
Լինին արժան իւրեանց կարգին։
. . . . . *
Նայ և Կոստանդ քահանային,
Ի Աբրահամու՝ իւր անդրանկին,
Զոր բարեբար կամաւ վրկչին
Զա[ր]ն ոչ կարէ յաղթել սոցին։
Ցեօթնհարիւր ՚ւ ութսուն թվին
Եւ եօթներորդ աւելորդին (1338)։**
Աշխարհս հայնց է ի վշտին,
Որպէս պատմեն վասն նեռին,
Զի չէ լուեալ ամենևին,
Թէ թագաւորք լեալ եկին,
Այլապ թէ չէ օրըն վերջին,
Որ սրով միմեանց կոտորեցին։

բ

247բ Մեծ վտանգի կամ յայս նեղուս,
Զի խիստ յաղթեց ցաւն մարմնոյս
Եւ ի ձեռացս ի զօղալուս,
Այլ չեմ կարել տալ շար գրոյս.
Եւս առաւել ի յայլ շղուս
Ու ի թանաքի թանձրանալոյս,
Եւ մանաւանդ ի յայս քնուս,
Զաւր հասարակ մրափելուս.
Եւ յանիծեալ այս ճանճերուս
Ի սնամաստակ ա[յ]ն կենդանուս,

* Մի տող ընկած է, հաջորդ տողերը գրված են 148բ և 149ա էջերի ներքին լուսանցքներում։

** Բնագրում՝ ՌՑեօթն Ե. ՚ւ Զ. թվին և է. երորդ աւելորդինՃ։

Որ միշտ նստին ի վերա դրչուս,
Ծրծեն զթանաքն գրերուս,
Կելնեմ ի սիրտ այո ոչընչուս,
Զդիտեմ թ'ինչ առնեմ նզովծնուս
Եւ ի քթիս միշտ հոսելուս
Եւ հանապազ ի ծորալուս,
Այլ երբ կու տա իմ աչքս լուս,
Որ ես այլ շար տամ դրերուս,
Եղրար, մեզ մի դնէ ցդերուս.
Այս տառապեալ 'ւ ողորմելուս,
Ինչ հնացաւ տարիք մարմնուս
Գէս-պէս ցաւեր յայտնի ծերուս
Օ՜խ, թէ լինէր ճար այս նաւուս,
Որ հասանէր յեղր ի ծովուս,
Որ ես տեսնում զվերջք դրուս
Ու ապա հասնի մահն հոգուս։
Աստուածածին, անարատ կոյս,
Միշտ բարեխօս լեր առ Ցիսուս,
Զառնել անտես զիմ արտասուս,
'Ի ոչ ի յուսոյդ առնել անյուս
Այլ տա զհայցւած փոփաքելուս։

Գ

319բ Զկնի իմոյ վայելողք, անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս և սխալանաց սորա, զի էի տկար մարմնով և մեռեալ հոգւով. աղաչեմ անտրտունջ ղորգել և զմեզ անրամբասանս արձակել. յօժարութիւնս հայեաց և մի յարհեստն։

381.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վասպ. 97. Լալ. Ծուց. այուն. 195—198
(Մոկսի Դաշտի Քաղի ս. Ցակոբ եկեղեցի)

Գրիչ՝ Առաքել
վայր՝ Մոկաց գաւառ՝ գիւղ Դաշտ

Այլ գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Առաքել գծողիս, անիմաստ և ախմար գրչի, և իմ անընդունակ գոլով յարուեստ գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, ըստ այնմ, որ ասէ՝ վիշտս յազգէ, վիշտս ի սուտ եղբարց, և թէ՝ յոտից մինչև գլուխ չիք առողջութիւն, այլ ըստ կարի մերում, զոր պարգեւեաց մեզ մարդասէր հոգին աստուած, բազում աշխատասիրեալ իմ ի սմայ, գրեցի անարժան ձեռաւք իմովք յընտիր և ի ստոյգ աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազմադէմ ալէկոծ ծփանաւք։ Ի մեծ թուիս, ի յեղանակ շրջադայութեան արեգական ըստորիշիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հա-

յելով, ըստ արարչութեանցն չափեալ՝ յելանելոյն Աղամայ ի դրախտէն ՉՈ. և ՉՃ. և Ե. (6605) ամ ըստ եւթանասանից, որում մեք վարիմք։ Եւ է ի մարդեղութենէ բանին աստուծոյ անժամանակ էին և Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ ՌՅԼԸ. (1338) ամս, ըստ Թուոյ խոսրովային յարեթեանս տումարի՝ ՉՉԷ. (1338), և էր ի մեծ շրջանին ՄԽԵ. (245)։ Ի կաթողիկոսութեան հայկազանց սեռի տեառն Ստեփանոսի Աղթամարեցւոյն, և ի թագաւորութեան նստեալ ի գահն (*), զոր տէր աստուած պահեացէ անսասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական, զի յիշել զանունս նոցա, սասանեալ թաքչին և ոչ ևս երևին ի շնամիք ճշմարտութեան։

Եւ գրեցաւ աւետարան[ս] այս ի գաւառիս Մոկաց, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ և Անջոզոց սուրբ Աստուածածնին, ի գեաւղս, որ Դաշտ կոչի, ձեռամբ Առաքել անպիտանն գծողիս, ի յիշատակ հոգոյ իմոյ և ծնաւղացն իմոց՝ հաւրն Կարապետին, և մաւրն Թագուխին, եղբարցն՝ Մկրտչին, Մարտիրոսին և Ստեփանոսին, քուերն՝ Թուրուանդին, և որդոցն իմոց՝ Կարապետին և Յովանիսին, մաւրն Խերմկէին, և հաւր պապուն իմ՝ Ստեփաննոսին, և եղբայրն՝ Յովաճէս քահանային, Ատոմին, Գրիգորին, Թումին, և Կարապետ սարկաւագին, և ամենայն արեան մերձաւորացն մերոց, ամէն։

382.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. 128, լալ. 8ուց. էջ 275—276 (Վանի Արարուց եկեղեցի)

Ծաղկող և գրիչ՝ Առաքել Մոկացի

Ես մոլորեալ մըտօք գերի,
Որ ցընորեալ կամ յաշխարհի,
Վայ ե եղուկ յամենայնի,
Առաքել հողըս Մոկացի*,
Դառըն ցաւօք չըրջիմ յերկրի.
Որպ[էս] ըզբու յաւերակի,
Կամ տատանեալ բեկեալ նաւի,
[Որ] հանապազ հանգիստ չունի։
Զաւետաբանըս ծաղկեցի
Մատամբ իմով մեղսամածի։
Ըզձեզ աղաչեմք եղբարք բարի,
Ինձ ասացէք տէր-ողորմի.
Ցորժամ կանգնէք ի յատենի,
Ցիշման առնէք գիս արժանի,
Չի և փըրկիչն ձեզ ողորմի
Ցաւուր մեծի դատաստանին։

* Առաքել Մոկացին նախորդ հիշատակարանի գրիչն է։ Ըստ այմմ, ուշն անթվական հիշատակարանը հրատարակում ենք նրան առընթեր, 1338-ի թվաշարքում։

383.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Թղեան 8870 (տես նաև՝ 1815 թ.)

Գրիչ՝ Առաքել
վայր՝ Զորովանք

198բ ... Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուսումն և առնեն՝ կցուրդ փոխման աստուածածնի, ի թվին ՉՁԷ. (1338), ի թագաւորութեան հայոց Լեւոնի, որդւոյ արքային Աւշնի, և ի հայրա|պետութեանն] տեառն Յակոբա, յանապատս, որ կոչի Զորոյվանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և կենսաբեր սուրբ Նշանիս, ձեռամբ բազմամեղ, եղկելի և անիմաստ գրչի Առաքելի, ի խնդրոյ արբասընունդ, արբասէր և պատուական սարկա[ւագին] Ներսիսի, ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի հոգւոյ և ծնաւղաց իւրոց:

199ա Արդ, աղաչեմ զա || մենեսեան, որ աւդտիք ի սմանէ կամ աւրինակէք, յիշեցէք զյառաջաստացեալ ստացաւզ սորա՝ ղներուս և զամենայն արեան մերձաւորս իւր՝ ղկենդանիքն և ղնանդուցեալքն, ընդ նմին՝ զբազմամեղս Առաքել և զիմն ամենայն. և որ զմեզ յիշէ, յիշեալ լիցի յառաջ ողորմութիւնն աստուծոյ, որ է աւբհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

384.

ԱԻԵՏԱՐԱՆ

Հալէպ. սբ. Մնկ. 33. Մաւրմ. ծաւղ. Ա. էջ 72—73. (տես նաև՝ 1631 թ).

Գրիչ՝ Ծովաճ
վայր՝ Արծկոյ վանիք

ա

604 ... Ցամի ՉՁԷ. (1338)-երրորդի հայկազեան տոհմիս տումարի... գրեցաւ աստուածայինս այս մատեան... յանապատիս Արծկոյ վանիս առաքինելոյ, ընդ հովանեաւ սուրբ մաւրս լուսոյ Աստուածածնի, և սուրբ Նշանի Սքանչելագործի, և այլ հաւաքեալ սրբոցս. յառաջնորդութիւն տեղւոյս Յատիճենիս հաւր: Ի ստացումն սրբազան քահանայի Հայրապետի կուսակրաւն արեղայի...: Ձեռամբ անպիտան գրչի Յովանիի մեղապարտ քահանայի. ի դառն և ի վշտաբեր ժամանակի, յորում վիշտս վտանգի և աղէտս տարակուսանաց յոքունս հասուցանելով քրիստոսական ոճոյս աղգաց անաւրինաց՝ ուրացելոց ի վառաց որդոյն աստուծոյ, նեղութեամբ և տառապանօք, հարկապահանջութեամբք և այպանման ձաղանօք, որոց հատուսցէ նոցին ըստ գործոց նոցին հզաւր թագաւորն Քրիստոս եւթնապատիկ ի ծոցս նոցա...: Ընդ նմին և զՅովդաճաճ կուսակրաւն արեղայ և զծնաւղսն իւր, և զիս՝ զանպիտան գրիչ, և զծնաւղսն իմ յիշման արժանի արարէք...:

Ծաղկող՝ Կիրակոս

բ

20 *ՁԱնպիտան ծաղկող սուրբ աւետաբանիս՝ զնուաստ և սուտանուն Կիրակոս... Ձիմ զանարժան երեսս ի գետինն պագանեմ, յիշման արժանի արարէք զիս և զվարդապետն իմ Ուռհպ քահանայ, և աստուած յիշողացդ ողորմի. անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր...*

385.

ՁՈՐԵՔՏԱՍԱՆ ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ

Նրևան 260

Գրիչ՝ Սահփանոս
վայր՝ Մեծոփայ վանք

217ա *Գրեցաւ մատեանս աստուածայինն ի փառս համապատիւ և մանանական սուրբ երրորդութեանն, հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, ի թուի հայոց ՉՉԷ. (1338)-երորդի, յանապատիս Մեծոփայ վանս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ձեռամբ Սահփանոսի՝ պիտականուն և անարուեստ և փցուն գրչիւ։ Ի Քրիստոս աստուած յիշել զմեզ հայցեմ, զի բազում աշխատութեամբ գրեցի զդիրքս զայս ի սուրբ և յընտիր աւրինակէ բարունոյն մերոյ՝ [փոխ]եցելոյն ի Քրիստոս, որ զաւրինակս, այլ | | | անս* եթող ի վանքս յիշատակ իւրն և | | | աղաչեմ զամենեսեան յիշեցէք ի Քրիստոս | | |*

217բ *Ձկարապետ պարզամիտ կրօնաւոր, ստացող աստուածայինն գրոցս յիշեցէք, որոյ տէր աստուած վայելել տացէ ընդ յերկայն աւուրս խաղաղական կենաւք։*

386.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Հալէպ, սր. Մկն. 7. Սիւրմ. 8ուց. Ա. էջ 24

Վայր՝ Կոպիտառայ դղեակ

ա

400 *... Գրեցաւ տետրակս այս մանրուսման ի թուիս հայոց ՉՉԷ. (1338), յանառ դղեակս, որ կոչի Կոպիտառայ, ընդ հովանեաւ սուրբ Դաւթայ և կենսակիր սուրբ Նշանիս Վասլի, ի հայրապետութեան տեառն Յակովբայ և ի թագաւորութեան Լևոնի բարեպաշտի, ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի, ի խնդրոյ սրբասէր և պատուական սարկ[աւագի] Թորոսի, ի վայելումն անձին իւրոյ, և յիշատակ բարի*

* Ձեռագրի կարկատման ժամանակ վերջին երեք տողերի ոչ եզերն փակցված է թուղթ, որոշ բառեր, ծալով թղթի տակ, չեն ընթերցվում։

հոգւոյ և ծնողաց իւրոց, որք բարիոք սնուցին և աստուածոյ նուիրեցին...։

Ծաղկող՝ Սարգիս

բ

Ձ500 Ձ[Սարգիս անարժան քահանայ՝ ղծաղկօղ և զսկաւղ սուրբ տառիս, և զծն[ողքն] իմ, աղաչեմ յիշել ի տէր։ Եւ որ զմեզ յիշէ ի մեղաց թողութիւն՝ Քրիստոս զինքն յիշէ, ամէն։

387.

Մ Ա Շ Տ Ո Ց

Ալիշան, Սիսուան, էջ 203

Վայր՝ Գոտռում գիւղ, սուրբ Ղեւոնդեայ ուխտատեղի

Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՉՉԷ. (1338), ի սուրբ և փառաւորեալ անապատս, ի սուրբ Ղեւոնդեայս, մերձ ի գեաւղն Գոտռում։*

388.

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ

Գ. Սբվանձտ. Թղթոս Ագրաբ, բ. էջ 402
(Ձեռագրէն Սբբահայեաց սբ. Աստուածածնայ վանք)

Գրիչ՝ Սարգիս

Նղբայրս մեր ներսես սարկաւագ... ստացաւ զսա զաւակ ի Սիոն... յիշատակ իւր և ծնաւղացն...։ ատ ի բարեխաւս լինել յաւուր որոտընդոստ գալստեան փրկչին...։ Ցիշեցէք զՍարգիս ապիկար գրիչս...։ Ի թվին ՉՉԷ. (1338)։

389.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7049 (տես նաև 1308 թ.)

Հետ. ստացող՝ Աբրահամ

Ես՝ Աբրահամ երէց, գնեցի զաւետարանս յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց և ազգականաց, և աւգնական եղեն ի գին | | | Յով]հաննէս։ Արդ, որք կարդայք կամ աւրինակէք յիշեսցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սորայ, և յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս առհասարակ, ա[մէն]։ Գրեցաւ ի թվականիս ՉՉԷ. (1338)։

---

* Տպված է «Ջամալի»։
** Գանվում է Դաշտային հիւանդանոցում։

390.

ԲՐԵՎԻԱՐ (ԺԱՄԱԳԻՐՔ)

Բրքս. Քնգ. (Add. 16,408), կոնքր. ծուց, 158—160
(Տես նաև 1450, 1505, 1517 և 1532 Թ.Թ.)

Թարգման՝ Յակոբոս Գոճեցի
վայր՝ Գոճայ

Ցամբ ծննդեան* վերկչին մերո	Ը
Որ և հազարն ընդ նմին Թ. վեր	Ա**,
Հայկազան զշրջանա	Կ
Այլ և ընդ նոյն միաց	Ո,**
Ներարհեստիւ թարգմանութեամ	Բ
Վարժեա ուսմամբ լաթինաց	Ո,
Արդասանեալ ֆրաթ Պետրո	Ս
Ոտեմ ընդ այս գթեթգու	Թ,
Դասեալ ի կարգ եմ ընդ սմ	Ա,
Արգասաւորս մատեանս յարմա	Ր,
Պատգաստ ի Գոճա վան	Ջ,
Եւ [գ]շխնողք սորա, որ համագա	Մ
Տիա պարոն Գորգ ի Քրեն	Ա,
Ներհուն հռետոր ոմն իմաստու	Ն,
Որ և Ցոհաձ իսկ յորջորջ	Ի,
Բամեաց զրաբունս երբնագունա	Կ,
Կորովամիտ և ուշիմ	Ա,
Որ ըստ յԵսուա խոստմանց յերկի	Ր
Ջնաշխարհի*** յիմաստ և կար	Գ
Եւ զգիրս սուրբս Թարգման	Է
Ցօդով շնորհաց հոգւոյն լցեալ	Ջ,
Եւ արդ զրբեվիար ազգին լաթին	Ա,
Առ արգասիւք սորին յարմա	Ր
Լինել ի գարգ եկեզեց	Ո,
Քան[զի] օրհն[եալ] եղբայր և քե	Զ,
Ռետոր հմուտ ազգին իւր	Ո,

* Թարգմանության թվականը տրված է անորոշ և անհասկանալի։ Այս ժամանակաբաժնի մեջ այլ ընդօրինակություն պահվում է Փարիզի Ազգային Գրատունը (Bibl. Nationale, № 105)։ Ըստ Ֆ. Մակլերի այն թարգմանված է 1330 թվականին։ Ալիշանն իր «Միսսաղոնիշ» 375 էջում թարգմանությունը կատարված է համարում 1338-ին, իսկ 385 էջում՝ 1333-ին։ Մեծ կասկածանքով հիշատակարանը տեղադրում ենք 1338-ի թվաշարքում։

** Տպված է «Ցձ», ուղղում ենք «Ո», որովհետև տողերի սկզբնատառերով ու վերջնատառերով հոդվող նախադասություններն այդ են պահանջում։

*** Տպված է «Ջենա աշխարհ»։

Նա հայրապետ ժիր աղերսս	Ղ*
Եւ արդ, ի կիր առնողք զս	Ա**
Ցակաք (՞) զՈհան ուղ[ղ]իչ հոգս	Ց
Իսկ Յակոփոս թարգման սորի	Ն։
Ցեղս հարիւրից և երեսնո	Ց
Որ և զօթնեակն ընդ նմին յետ	Ա,***
Համ ութսուն էր և ութ	Կ,
Առ գվեցհարիւրն և գասե[ց]	Ո։
Նպաստ եղև միչնորդութեամ	Բ
Վասն ինքեան յազգէ այնմ գոլ	Ո.****
Առեալ իւր հայր զՏօմինկո	Ս.
Րարուն թարգման թէպէտ եմ բ[ո]ւ	Թ
Դադմատ աղքատ և ազգաւ հ	Ա,*****
Առեալ զաւարտ և զկոպլա	Ր,
Պարապ ածեալ եղբարքս, որք կան	Ֆ։
Ես ամուսինք զոյգ համերա	Մ,
Տիկին Ալիկն, որ ընդ նմ	Ա,
Նոյն և ըստ հոդոյ որդի սոցու	Ն,
Որոյ անուամբն վանքս շին	Ի,
Րամեաց զվաթինս ընդ հայս հասա	Կ,
Կամաւ ղիմեաց յաթոռ Հռոմ	Ա,
Ուղապետեաց մեզ անբոյսի	Ր,
Զքննաղս վոխեցի հայս նուա	Գ։
Եւ զհայկազանս լուսաւոր	Է,
Ցանկան, որ բանն սորա լուեալ	Ֆ։
Ես, որ տրուպ եղբայր սոր	Ա,
Անսխալ եղի ի հայս բառբա	Ր,
Լուսաւորել զաչս հոգ	Ո******,
Ֆարակատող եղեալ ընդ մե	Զ,
Ռէմին հնազանդ հռոմաց	Ո*******,
Նա բանին տեառն է քարսղո	Ղ,
Ծղէք մաղթողք մեզ յաբակ	Ա,
Ցանկ զասեացէ տէրն սրբո	Ց,
Ի ձէնչ յիշեալ լիցի ընդ սմի	Ն********,

---

* Տպված է «Ց»։

** Տպված է «Ալայ»

*** Տպված է «յետ Ց»

**** Տպված է «այն նմգլո»

***** Տպված է «Ադգաւ և Ա»։

****** Տպված է՝ «Հոդո Ց»։

******* Տպված է՝ «Հոռմաց Ց»,

******** Տողերի սկզբնատառերով երկու անգամ հղվում են «Ցոհան վարդապետն, որ կոչեցեալ Ֆռնեցի», իսկ վերջնատառերով՝ «Ցակոբոս Թարգման ի կարգէ քարոզողացն նախադասութիւններըւ

391.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱԼԲԵՐԹԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՑ

Ընկան 3640

Գրիչ՝ Մաքեաս*

ա

119բ *Ձտառապեալ ոգի՝ ծրօղ և ստացուղ տառիս՝ զՔրա Մատթեոս յիշեցէք ի Քրիստոս, որպէս յիշէք եղիյիք և գուք յիշեալ ի նոյնն։*

բ

Տէր ներսեաց շատ աշխատեցաւ։

---

* Ամենայն հավանականությամբ Մաքեաս Երզնկացի գրիչն է, որն ընդօրինակել է լաւկներեանից 1338 թ. (՞) թարգմանված Բրեվիարը (Manus. Bibl. Nation. 46), ուսուի և ապրել է շուրջ 1338 թվին։ Այս նկատառումով անհայտ տաքեթվով սուլն հիշատակարանը տեղադրում ենք 1338-ի թվաշարքում։

392.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7837 (տես նաև 1666 թ.)

Գրիչ՝ Նատեր

ա

281ա ...Չի յայսմ աւուր որում գրեցաւ || աստուածաբան աւետարանս էր Թվական Հայկազանց տումարի ՉՉՀ. (1339) և կենաբարին ՌՃԽԱ. (1341), և էր յոյժ նեղ և նուրբ ժամանակ ի վերայ Քրիստոնէից, և այն՝ վասն մեղաց ամենայն մարմնոյ, զի վասն խստութեան ժողովրգեան Թագաւորէ այր կեղծաւոր, Ու լաւ էր եթէ մի այր էր Թագաւոր և կեղտ, այլ ամենայն իշխան ե ապարատն, զոր ընգ գրով ոչ մարթասցի բաւանդակել։

Արդ, յայսմ ամի զրաւ եղև իմով ձեռամբ՝ նուաստ և յետին և անարհեստ գրչի Նատեր մեղապարտի, կամաւ հեզահոգի հոգևոր եղբաւր մերոյ և յաւէտ սիրելոյ՝ Առաքել շնորհազարգ նկարչի, որք գիտիք այսմ աստուածահոտ վտակացս...յիշեցէք գրչիս և զնկարիչս ի նոյն ինքն ի տէր մեր Ցիսուս Քրիստոս...։

բ

Աւետարանս խիստ հաստատ է, ապա օրինակն ի Սրսցուն է։

393.

Մ Ա Ն Ր Ո Ի Ս Մ Ո Ի Ն Ք

Երևան 764

Գրիչ՝ Ներսես Կելըցի
վայր՝ Նկեղեաց գաւառ, սուրբ Կիրակոսի վանք

246ա ...Գրեցաւ եղանակաւոր տառս ի Թիւս արեթական գրոչի ՉՉՀ. (1339), ի Թագաւորութեանս Հայոց Լևոնի որդւոյ Աւշնի, և ի հայրապետութեան տեառն Յակոբայ, ի գաւառիս Նկեղեայց, առ լերամբն Բգնոյ, ի յանապատիս սրբոյն Կիրակոսի, ձեռամբ Ներսես գրագրի, եղբաւրորդեկիս մերոյ Սարգիս տղայի, ի վայելումն անձանց մերոց և
246բ յիշատակ ծնաւղաց մերոց։ || Արդ, աղաչեմք զամենեսեան, որ դասք լուսերամից և մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք այսմ եղանակաւոր տառիս ուսանելով, կամ աւրինակելով, կամ գաղափար

զնելով, յիշեսջիք զանպիտան գրիչս՝ զներսես Կելըցցիս, և զեղբաւրորդիակս՝ մեր զՍարգիս տղայն, և զծնաւղսն մեր, և զքոյր մեր զՇնորվօրց, և զծնաւղսն իւր, որ շատ բարուքեամբ առ մեզ աշխատեցան՝ տալով և աւգնականուքեամբ, տէր աստուած վարձս հատուցանէ քան
247ա գործոց նոցա, և աստուած յիշողացդ և յիշ || եցելոցս ողորմեսցի, ամէն։

394.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վասպ. 99, լալ. ծուց. սյուն. 201–202, Ջուլամերիկի Փոկան գյուղի եկեղեցի (տես նաև 1388 թ.)

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Տարօն, Ղազարու վանք

...Գրեցի յընաիր ե ի ստոյգ աւրինակէ, ի թուականիս Հայոց ՁՁՐ. (1339), ի գաւառիս Տարաւնոյ, ի հռչակաւոր ուխտիս Ղազարու վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյս, ի հայրապետուքեան տեառն Յակորայ, և ի թագաւորուքեան Կիլիկեցոյց նահանգին՝ Լեւոնի, և յառաջնորդուքեան սուրբ ուխտիս Ղազարու վանից տէր Յովհաննեսի՝ հեզոյ և հնազանդոյ։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք աւդաիք ի սմանէ յիշեսջիք բղդրող սորա՝, զսուտանուն կրաւնաւոր զՍտեփաննոս, որ զայս մատեաքս ի նահ ածի։ Զի յառաջն աւետարան էր, և անկեալ էր ի ձեռս այլազգեաց, և թուխթ թուխտ էր արած, ես լուացի զինքս ու շատ աշխատեցայ, այնոր համար, որ ըզգիրն դժար կու առնէր ու զզծալնեք | | |

395.

ԿԱՐՈՋԳԻՐՔ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՅԳԵԿՑԻՈՑ

Ճանիկյան, Հնութիւնք Ակնայ, էջ 81

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Ագռխ

Ճանկացող եղէ ես ՝ նուաստ ծառայ աստուծոյ Սարգիս Լոռեցի և եռու դրել զսա ի վարժուհն և ի կրթութիւն անձին իմոյ...։Արդ, դրեցաւ սա ի քաղաքս Ագռխ, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի, ձեռամբ անխմաստ և անարժան սուտ քահանայի, անուամբ միայն կոչեցեալ Մկր[տչի]...։

ՁՁՐ. (1339), ղեկտ[եմբեր]։

396.

ԱԻՏԱՐԱՆ

Թղթան 7511

Գրիչ՝ Առաքել Բաբերթացի
վայր՝ Վահանշէն գիւղ

ա

38բ ...Շնորհիւն աստուծոյ սկսայ, և ողորմութեամբ Քրիստոսի և կարողութեամբ սուրբ հոգոյն կատարեցի զՈհան զլուխ աւետարանս* և զգործք առաքելոցն, որ կոչի յինունք, ՁՁՀ. ի թվակ[ան]ութիւնն Հայոց (1339), գրչաւ և աշխատութեամբ նուաստ և անարժան քահանայի Առաքելի Բաբերթացւոյ, ի դեղ Վահանշինոյ։

բ

150բ Աստուած ողորմի ստացողի սորա Առաքելի մեղապարտ քահանայի։

397.

ԱԻՏԱՐԱՆ

Վասպ. 98. լալ. ծուց. այուն. 197-200 (Շատախ, Թագ գյուղ)

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Նրուսադէմ

...Շնորհիւ ամենակալին աստուծոյ աւարտեցաւ սուրբ աւետարանս յաստուածակոխ քաղաքս Նրուսադէմ, առ դրան սրբոյն Յակոբայ։ Ձեռամբ մեղապարտի Յոհաննիսի, ի թուականութեանս Հայոց ՁՁՀ.(1339)։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ, յիշեսջիք տէր ողորմայիւ ի թողութիւն մեղաց զղծաւղ և զկազմաւղ սորա զՅոհաննէս, որպէս զի և զձեզ ողորմեսցի Քրիստոս աստուած, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Վ Մ Ե * * Թ Բ Ի Ո Է Ր Դ Ո Ե Ո Ե ։ * * *

Իմա՝ աւետարանս Յովհաննու։

* Սխալմամբ տպված է հէ> փխ հե>-ի։

*** Փոխարինագիր ծածկագրով կարդացվում է հէրքս է աւետարանէ։ Շարունակությամբ գծակետային ծածկագրով գրված է մեղ համար անհասկանալի հետևյալ տողը՝ | | :: : | •• |||| • |||•|| : | :• |||| :: |||••• |• |||•

398.

Ձ Ա Շ Ո Ց

Թուական 5320

Գրիչ՝ Աւետ[իս]

1339ա Տէր աստուած, ողորմեա յողնամեղ և անարհեստ գրչի Աւետ[իս] անարժան քահանայի, և ծնողաց մերոց, և երախտաւորաց, և ամենայն արեան մերձաւորացն, և ստացողաց սուրբ գրոցս՝ Ռէսի և ծնողացն, և եղբարց, և ամենայն ազգայնոցն, և գծողին։ Եւ որք մեզ յիշեն աւրհնութեամբ և սիրով, աստուած ողորմի ասելով, նոքա յիշեալ և աւրհնեալ եղիցին ի Քրիստոսէ աստուծոյ, ամէն։

ՁՁՐ. (1339), մեհեկանի ի Ժե. (25),

399.

Ճ Ա Շ Ո Ց

Գողթն, Ազգ. հնդ. դպրք XII, 1905 թ., էջ 165

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Աղաւնից վանք

Գրված է Սարգիս կրօնաւորի ձեռքով ՉՉԹ. (1340) թուին ի վանս Աղաւնից, ի հայրապետութեան Ստեփաննոսի,* որ և աղատեաց զազգս քահանայից ի հարկէ հալածչեաց, և նոյն ինքն տեսանէ զաղատութիւն իւր ի թագաւորութեան, զոր ոչ գոյ, այլ բարձեալ է թագաւորութիւն, քանզի իշխանք են խոովարարք և տատանեալք, ի վերայ միմեանց ազմկեալք։ Զոր ոչ կարէ բերան պատմել, զոր յայտ ամի տեսին աչք մեր զաղէտ տարակուսանաց ի հեծելեաց, զորս երեսուն հազար մարգագէմ զազանաց ի վերայ երկրիս մերում։ Եւ ով կարէ պատմել զանաւրէնութիւնս նոցա, զոր արարին և գործեցին. քանզի բազում գաւառս գ[և]րեցին և աւերելով կործանեցին, և զինչս արգիւնաց զամենայնն յափշտակեցին, և զամենեսեան զքրիստոնեայք կողոպուտ արարին, մերկ և բոկ, և ոչ թողին և ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան՝ ոչխարաց և զեզանց, զկովուց և զգլուց, զիշուց և զերիվարաց, և զհանգերձս ի յանձնէ մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց. քանզի որ աչք բաւէ տեսանել զաղիողորմ տարակուսանաց, և կամ որ անձն բաւէր տեսանել և տանել այնմ չարչարանաց. որ յերեկ տան տանուտէր և ամենայն իրաւք լիև այսաւր բեկեալ սրտիւ և տրտմեալ և մերկ, ի վերայ մոխրոյ նստեալ։ Քանզի այնպէս լի էր երկիրս ամենայն բարութեամբ և յանկարծակի այնպէս արարին, որ շունք ի տովոյ սատակէին, քանզի զխորս ամբարաց հացից հանէին. և այնպէս բարկութեամբ և սրտմտութեամբ ի վերայ բոլոր երկրիս արձակեցան, որ և հարիւր անձն սրով խողխողեալ նահատակեցան, որ և ծաղկողի սորա մայրն նետով խողխողեալ փոխեցաւ ի Քրիստոս։

* Մինչև այստեղ հրատարակիչ Ն. Ղալայանի խոսքերն են, բուն հիշատակարանից մնում բերված հատվածը սկսում է «որ և ...» բառերով։

400.

ՃԱՌԸՆՏԻՐ

Վէնետ. 207 Մարգս. 8ուց. Բ. էջ 173—175

Գրիչ՝ Գրիգորիս
վայր՝ Եզընկայ

277ա ...Արդ, աւարտեցաւ հոգէպատում տառս ի շրջագայութեան ժամանակիս՝ յայս ամի, յորում էր յելանելոյն Ադամայ՝ վառակենցաղ դրախտէն ամք ՉՈՒՃԿԶ. (6766), եւ ծնընդենէ կենարարին մերոյ ամք ՌԴՃԽԳ. (1343), եւ ի թուականութեանս հայկազեան տումարիս Չ[ՁԹ]. (1340), յամսեանն Հոռովմայեցւոց սեպտեմբերի Ա. աւրն. յՍկեղեաց գաւառս, ի մայրաքաղաքս աստուածապահ Եզընկայ։ Ընդ հովանեաւ սուրբ երկնանման տաճարիս սուրբ Կաթողիկէի, և սուրբ Առաքելոցն, և սրբոյն Սարգսի, և սուրբ Աստուածածնին։ Զհամար դեռաբոյս և անիմաստ քահանայիս Գրիգորիսի, որ զքահանայութեան անունն միայն ունիմ և զգործն ոչ, զոր տէր Ցիսուս անտես արասցէ զյանցանս ծառայի իւրոյ, ամէն։

Արդ, ես՝ անարժանս Ծառուրս, ստացայ զսայ ի վայելումն և ի մխիթարութիւն անձին իմոյ, և ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն։ Արդ, ով սուրբ մանկունք նոր Սիոնի...յիշեսջիք ի մեղաց թողութիւն զԱստուածատուր մեղաւք մեռեալ ոգիս, յիշեսջիք և զծնաւղսն իմ...։

Ցիշեսջիք և ի սրբամաքուր աղաւթս ձեր զիս՝ զանպիտան զհոգո հաւատար, զանարժան և զանիմաստ, զվկցուն և զյետնեալ գրիչ սոքա զԳրիգորիս, և զծնաւղսն իմ՝ զՄկրտիչ քահանայ և զՃալիք երիցկինն, և զայլ ամենայն արեան մերձաւորան իմ՝ զկենդանիս և զհանդուցեալս...։ Եւ արդ, աղաչեմ չլինել մեղադիր սխալանաց և անաբհաստութեան գրիս, զի ի գառն և ի յանհանդիստ ժամանակիս գրեցաւ, զի վասն ծովացեալ մեղաց մերոց զաւրացեալ են ազգն նետողաց ի վերա քրիստոնէից, և ի սուր սուսերի մաշեն, և յաւարի հարկանեն, և ի գերութիւն վարեն զբազում գաւառս, և բազում և անիրաւ հարկապահանջութեամբ զատեն զամենեսեան, և այլ բազում չարիս լինի ի ժամանակիս մերում, զոր ոչ է կար մի ըստ միոջէ պատմել կամ ընդ գրով արկանել։ Իսկ մեք ոչ ունելով հանդիստ, այսր անդր շրջելով և վախստական լինելով, էաք որպէս գառինս ի մէջ գայլոց, զոր տէր Ցիսուս պահեսցէ ընդ ամբարծածուկ աջոյ իւրոյ զհաւատացեալսս անուան իւրոյ, ամէն։ Եւ որ ս[ր]տի կամաւ և յաւժարութեամբ արժանացնեն զմեզ միոյ տէր-ողորմայի, Քրիստոս աստուած զինքն իւր անճառ բարեացն արժանացնէ, ամէն։*

* Հրատարակիչը հիշատակարանի թվականի մասին գրում է. «Թուական աշխարհի կամ ելիցն Ադամայ է դրախտէն, որ կը նշանակուի գրչէն սոյն յիշատակարանիս մէջ ՉՈՒՃԿԶ. (6766), կը ցուցնէ թէ ամ սեռան պարթեւն լինել 1342 ի Թուական Հայոց ՉՂԱ, ըստ ժամանակագրութեան Անդրէասեայ տումարագրի, որ աշխարհի սկզբէն մինչև ցծնունդն

401.

ՄԱՆՐՈՒՄՈՆՔ

Վէնն. 183, Տաղ. ծուց. էջ 409

Գրիչ՝ Մկրտիչ

227բ . Ցամի ՉՉՔ. երորդի (1340) թուաբերութեանս Հայոց գրեցաւ ատրբս եղանակաւոր ծախիւք եւ արդեամբք Ներսէսի քահանայի՝ որդւոյ Գրիգորիս քահանայի, եղբաւր Թորոսի՝ բանի սպասաւորի, զարդարելոյն իմաստիւք հոգւոյն, որ եւ յայսմ ամի ընկալաւ զաւազանն ի մեծ բարւոնոյն՝ խոտաճարակ յԱետիսս։ Աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, յիշեցէք ի Քրիստոս զՆերսէս քահանայն եւ զընտրհազարդ որդիսն իւր՝ զԼազարն, զՌոստակեսն, զԳրիգորիոն, զԱճատատն, եւ զհանգուցեալսն ի Քրիստոս՝ զՅոհաննէս կրաւնաւորն, եւ զբարեսէր մայրս սոցա Թագուհիե, եւ զքրւերսն,* ընդ նմին եւ զապիկար աշխատողս զՄկրտիչ երէց յիշեցէք։

402.

ՇԱՐԱԿՆՈՑ

Բլեան 1603

Գրիչ՝ Ստեփաննոս

294բ Գրեցաւ եղանակատար ատոս ի մարդեղութենէն Քրիստոսի աստուծոյ մերոյ [illegible]. (1340)**, ի հայրապետութեան տեառն Մխի-թ[ա]րա, ի թագաւորութեան հայոց Լեւոնի, ձեռամբ Ստեփաննոսի, ի վայելումն կուսակրաւն կրաւնաւ | | |

Քրիստոսի կը գնէ 5420 կամ 5424 ամ...։ Սակայն մենք հիշատակարանը գասում ենք 1340 թվականի շարքը հիմք ունենալով ձեռագրի 185ա էջի տվյալը, ուր փրկչական ՌՒՃՀԸ. (1275) թվականի դիմաց գրված է հայոց ԷՇՒԱ. (721) թվականը, այսինքն հայոց ու փրկչական թվականների տարբերությունը հաշված է ոչ թե 551, այլ 553 տարի։ Այս տվյալի հիման վրա հայոց թվականի վերջին երկու՝ քերված թվանշանները վերականգնում ենք՝ ՀՁՔ (80)։ Իսկ ՉՉՔ. (788) հայոց թվականը համապատասխանում է ոչ թե 1343-ին (ինչպես գրել է գրիչը) կամ 1342-ին (ինչպես նշանակում է հրատարակիչը), այլ 1340-ին։

* Մի տող դատարկ է թողնված։

** Գրչի ձեռքով գրված թվականը քերված է և ավելացված այլ ձեռագրով ՌՃԽ. թվանշաններից հետո, ազոտ կերպով նկատվում է մխավոր ինչ որ թվանշանի հետք, որը կորոշ է եղած լինել ՀԸ։ Այդ դեպքում ձեռագրի գրության ժամանակը կլինի 1345 թ.։

403.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 2653 (տես նաև 1566 թ.)

Գրիչ՝ Նատեր

վայր՝ Տայոց գաւառ, գիւղ Վարդնշէն

226ա *Այս աւետարեր հրամանս փրկչին... յանգ ելեալ կատարեցաւ ձեռամբ անիմաստ և յետին գրչի Նատեր մեզապարտի, ի թվիս Հայոց ՉՂ. (1341), յապրիլ Բ.* (2), ի գաւառիս Տայոց, ի գեղս, որ կոչի Վարդնշէն։

Այլ և Բ. գլուխն առաջինք յառաջ գրեալ էր ումեմն Ստեփանոս իրիցու, որ էր ի Կանու քաղաքէ, և ոչ էր ժամանել ի կատարումն սորա, ի ձևոն հասաբակադիր հայրենական հնչմանն հոգմոյն մահու, և փոխեալ էր յաստեացս առ Քրիստոս. և զկնի ամաց իբրև, թոռն նորա Գեորգ սարկաւագ ետ զսա աւարտել մերոյ նուաստութեանս, և մեք կարողութեամբն աստուծոյ յանգ հասուցաք։ Եւ էաք եկք յանտառիկ ղեկէչն Բաբերդոյ գաւառէն, բնակեալ ի գեղն, որ կոչի Կաճ,

226բ սկսաք || անդ ի գրել մասն ինչ։ Եւ եղև փախուստ ամենայն գաւառին, նա ևս քաղաքին միահամուռ՝ քրիստոնէից և իսմայելացի[ոց] և ամենայն բնակչացն ի ձեռաց Ք. իշխանաց, որոց ոչ է պարտ գրել զանուն նոցա։ Եւ ամենայն ոք փախաւ, և չուեցին յերկիր աւտար. և եղև ի լերինն Վավակա հոգմ ձիւնաբեր, և հեղձան անդ սակաւ մարդ և անասուն յոյժ, և յայլ լերին, որ կոչի Տեռեանց՝ բազում մարդ և անասուն յոլով, զոր աղէտ խղճալ ո՞ կարէ գրել. և յաւուր քառասնեքորդ պահոց, տաւնի Քառասնիցն։ Եւ այն ամենայն եղև վասն մեղաց և բազում սխալանաց մարդկան։

Արդ, որք հանդիպիք այսմ լուսաւոր աստուածախաւսութեանս յիշեցէք ի տէր աղաւթիւք ձերովք և առաջի զենլոյն Քրիստոսի թողութիւն խնդրեցէք առաջին գրողին՝ Ստեփաննոս քահանային, որ իւրով ձեռամբն գրեալ էր և ոսկով զարդարեալ՝ յիշատակ իւր, և բարեխաւս առ Քրիստոս, և զաւակ ի Սիոն, և գանձ յերկինս, և ի ժառանգութիւն իւրոց զաւակաց և ազգականաց։ Յիշեցէք ի տէր և զԳեորգ սարկաւագ, որ է ժառանգ նորա, որդի որդւոյ նորա, որ նորոգեալ եսս, և ի կատարումն յանդել և հաստատել զմեծանձնութիւն հաւուցն իւր, յիշեցէք և զմայրն նորա, որ կամակից եղև և աւժն[գ]ակ լրման սորա, և զեղբայր մօր նորա՝ զԱւագ դալչն, նաև զմեզ՝ զծրոգքս՝ ամենայն եղբարբք և ազգաւ, և որք յիշէք՝ յիշիք ի Քրիստոսէ։

---

* Տարեթվի լրացման համար տես է թողնված։

404.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վէնետ. 8. Ծուց. Ա. էջ 93—95 (տես նաև 1355 թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Սուլտանիայ

ա

2ա Ջստացող աստուածագումաբ տուրիս՝ զամենեցելանիկ և զճոխացեալն ամենայն իմաստութեամբ՝ զերանաշնորհ քահանայն զԳրիգոր, ծնողօք, զարմօք և զաւակօք աղաչեմ յիշել ի տէր...

Նաև զնկարակերտող սորա՝ զԱւագ զայիր, ծնողօք հանդերձ յիշեցէք ի Քրիստոս, և զայլ աշխատողսն։ Ընդ նոսին և զփցուն զրչիկս զԿարապետ յիշատակի արժանի արարէք։

բ

448ա ...Աստուածային ճոխութեանն անձկացեալ փափագմամբ ...վեհիմաստ քահանայն աստուծոյ Գրիգոր, որ և ինքն իսկ ունէր զշնորհս վարդապետութեան՝ զօրեղ բանիւ լեզուաց և վկայութեամբ սուրբ գրոց, և լիապէս զարդարեալ առաքինութեամբ և իմաստութեամբ զմասունս հոգւոյ իւրոյ և մարմնոյ, և բազում աշխատութեամբ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց և ի ժառանգութիւն զաւակի իւրոյ՝ պատուական քահանային Սիրեմի, ի թվականութեանն Հայոց ՋՂ. (1341), ի յաշխարհակալութեան փոքր Շեխ Հասանի, և հիւպատոսութեանն և սպարապետութեանն Հայոց Բիւրթելիւ, ի քաղաքն Սուլտանիայ, ի քրեպիսկոպոսութեանն օրտուի տէր Սարգսի, և եպիսկոպոսութեան տէր Գրիգորի....

Նուիրող՝ Սիրեմ

գ

Եւ արդ, ես՝ նուաստ Սիրեմ քահանայ, որ ունէի զգիրքս ասաւածաշունչ ի հօրէ իմմէ Գրիգոր քահանայէ, նուիրեցի և ետու զսա ուխտին Վարագայ սուրբ Նշանին, յիշատակ ինձ և ծնողաց իմոց։

405.

ՔԱՐՈԶԳԻՐՔ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՑԳԵԿՅՈՑ

Երևան 8030

Գրիչ՝ Տէրտէր Երևանցի
վայր՝ Ազախ քազաք

327բ ...Արդ, դրեցաւ ճառընդիրս ի սուրբ և ընտիր աւրինակէ ձեռ[ամբ] ամենայմեղ սուտանուն քահանայի Տէրտիրի, ի խնդրոյ ինձ,

և ծնողաց իմոց՝ Սարգիս քահանայի, և մաւրն իմ՝ Գոհար Մելիքին, և ամենայն ազգականաց իմոց յիշատակ, որ կամաւքն աստուծոյ յաւժարացա ղրել վաւաճանաւք, ի թուականութեանս Հայոց Ջ. ու Ղ. (1341), ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի՝ որդոյ Աւշընտրի և ի կաթողիկ[ոս]ութեանն տէր Մխիթարայ։ Գրեցաւ գիրքս յաշխարհիս ամենաւրհնեալ խան Աւգպէդին և բարեհամբաւ որդոյ իւրոյ Դինիպէդին, ի քաղաքս յԱզախս, առ դրան սուրբ Դրիգորոյ Լուսաւորչին, ի յայսիկոպոսութեանն տէր Ստեփանոսի՝ որդոյ Գրիգոր քահանայի Սուղ-
328ա տացոյ, և յաւադիրիցութեանն տէր Սարգսի՝ որդոյ Մանու ‖ իկ քահանայի։

Ես՝ Տիրացուս անձ [ա]նարժան,
Ծոյլ քահանայ թշուառական,
Սատանայի ճորտ բանական,
Զծուլութիւնն արի ինձ բան,
Զաղտութիւնն խիտ անխոտան.
Սաղմոս չա[ս]ցի առանձնական
Ու ոչ հետ ընկերացն մխաբան.
Հազար եղուկ անձինս ես տամ,
Որ ի դժոխքն կու զնամ։
Զոչ ոք ունիմ անդ աւգնական,
Զաւետ զմայրն վրկչական,
Որ աղաչէ զաստուածն բան,
Թափէ ի հրոյն անչիջական,
Ծառնէ ի հաւաքն սրբազան
Այս մոլորեալս և անպիտան։
Ցերկրէն եկի այն Հայաստան,
Ի քաղաքէն այն պատուական,
Որ իր անունն է Երևան
Ու Վիրապին ու Էջմիածնին է հարևան,
Ի լեռն ի մաւտ Սարարադեան,
Անդր, որ տապանն է մեծ Նոյեան,*
328բ Ու նշխարն ի նեսն է մեր նախ ‖ նեան։
Ի ծովս անցայ այս անսահմանն,
Ի քաղաքն ելայ՝ ի Ֆռանկ Կաֆան,
ՑԱզախս եկի այս աննմանն,
Գիրքս գրեցի զայս՝ գՎարդան։
Որք որ ուսմանն ելնիք արժան,
Ու պատաբազէք ի սուրբ սեղան,
Ու զմանն վերցնէք զքրիստոսական,
Ու զպրաւսխումէն գոչէք միաբան,
Ջներտեր գրիչս այս անպիտան
Դուք յիշեցէք, թող չեմ արժան։

* Ինագրում ընոյենն։

406.

ԱԻԵՏԱՐԱՆ

Օքսֆորդ, Ms. Arm. D. 4 Տէրայր 52 Քղք. 120, էջ 801—806
(տես նաև 1335 թ.)

Հետ. ստացող՝ Դաւիթ երէց

331ա *Ես՝ Դաւիթ երէցս, ի գեղջէ՝ Վարդնցեցս, որ վերստին գնեցի զաւետարանս ի Ստեփանոս էրիցու յիմ հալալ արդեանց, ի յիշատակ ինձ ծնաւղաց իմոց և զուակաց իմոց, և տուի ղին | | | * ոսկ[իտակ]։ Ո՛վ բարեմիտ ընթերցաւդ, աղաչեմ զձեզ յիշեցէք սրբափայլ աղուէս ձեր զիս՝ զԴաւիթ քահանայս և զերիցակինն իմ զՄանճանայն, և մեզաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ...։*

Գրեցաւ գիրս ի թուականիս Հայոց ՁՂ. (1341), ի մայիս ամսոյ ԺԵ. (15), ի միաս Հրիւտոսի աստուծոյ, յուսոյն մերոյ, որ է տէրհնեալ յաւիտեանս, ամէն։

Դարձեալ աղաչեմ յիշեցէք յաղաւթս ձեր զՄարտիրոս միայնակեցն և զծնաւղս իւր, տղաչեմ։

407.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, Հերպարվ. Քնգ. 69/244 (տես նաև 1332 թ.)

344ա *Զայս աւետա[րա]նս ձեզ** եմ ի գնել, Շ. (200) սպ[իտակ]։ Ես Շրգիրն վկա եմ՝ Ասպրգործի որդ[իս], ես Խտպիս Պխդրաւս (՞) վկայ եմ, ես Մահմատս վկաւս (՞) վկայ եմ, ես Տիրապետ՝ Հրպետի որդիս վկա եմ, ես Հրեհիսն Թագորշախ[ի] որդիս վկա եմ, ես Սուլտանշիհ Լուսկայ որդիս վկայ եմ, Թվ[ի]ն ՁՂ. (1341), մարգաց։*

408.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վիեն. 434. Տաշ. 8ուց. էջ 885 (տես նաև 1319, 1600 և 1644 թ.թ.)

Ստացող՝ Նաթխաթուն
վայր՝ Ազախ քաղաք

443բ *Ի Թվին Հայոց ՁՂ. (1341), ես՝ Աֆեճտի զուստր Նաթխաթուն, գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց ի Բ. սոմ. եւ տվի ի սուրբ Գրիգորի Ազախ քաղաք՝ եկեղեցին տէր Մանուէլի, յիշատակ հոգւոյ իմոյ եւ հանգուցեալ որդւոյ իմոյ Սիրպէկի, զոր տէր աստուած յարութիւն պարգեւեսցէ նմա։*

---

* Թանակի տեղը ծակած է, սակայն մի քիանշան է մնայն երևի։
** Իմա՝ ձեռս։

409.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փիլդ. 6273, էջ 151 (Կարինի եկեղեցի)

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Թավրէժ

...Ընդ նմին յիշեսջիք զփծուն և զանարհեստ գրիչս զՍարգիս երէցս... Արդ, աւարտեցաւ լուսապարփակ և աստուածային սուրբ մատեանս այս ի թուականութեան Հայոց տումարի ՉՂԱ. (1342), ի թագաւորութեան նեստոզական ազգին Սուլայիման Բահադուր խանին եւ ի մեծ նոյինքի Սեխ Հասանին՝ որդւոյ Թամուրքաշին, զոր տէր աստուած ընդ երկայն աւուրս արասցէ զինքն, ամէն. և ի թագաւորութեան Հայոց աստուածասիրին և բարեպաշտին, և ի հայրապետութեան տեառն Մխիթարայ, և ի յաւագնորդութեան աստուածապահ նահանգիս Թավրիժու քաղաքիս տէր Տիրացուի եպիսկոպոսիս Արզ, մեք՝ ամենամեղ անձինք և տկար ողի Հուճար խաթունս և Սիոն, ստացոզ[ք] սուրբ աւետարանիս, նուէր ընծայեցաք զսուրբ աւետարանս սուրբ Սարգսի՝ Թավրիժոյ եկեղեցւոյ։*

410.

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1973

Գրիչ՝ Գրիգորիս
վայր՝ Նգնկայ

ա

327բ *...Գրեցաւ դիրքս այս, որ է տումար, ի Հայոց թուականիս ՉՂԱ. (1342), ի դեկտեմբերի Դ. (4), ձեռամբ մեղուցեալ և անարժան հոզո հաւատար ծառայի՝ Գրիգորիոի սուտանուն քահանայի, անւամբ միայն և ոչ գործով, ընդ հովանեաւ սուրբ և երկնանման տաճարիս սուրբ Կաթողիկէի և այլ բազմութեան սրբոցս, որ կան ի սմա հաւատքեալ, ի քաղաքիս Նգնկայի, ի խնգրոյ սրբամաքուր և առաքինազարդ, շնորհաշուք քահանային Աբրահամու։ Արդ, աղաչեմ զամենեսեան դնանզիպաւղող յիշել ի սուրբ յաղաւթս ձեր զստացաւղ սորա զԱբրահամ քահանայ և զծնաւղսն իւր | ։ |*

* Թագավորի անունը գրված չի եղել, ըստ Փիլոտլամյանի «Քեղևա յեա մանուան Լևոնի դեռ չէր նստեալ Կոստանդին Գ.»։

Հետ. ստացող Յովաննես

բ

1ա Ես՝ Յովաննես երէցս սուրբ Տհննայ, որ տվի գառւմա[բ] գիրքս յիշատակ ի յէրանին վանքն, ի գուռն սուրբ Դէորգայ և սուրբ Աստուածածնին յիշատակ իմ հոգւոյս և իմ ծնողացն՝ Կարապետին և Ջարամ խաթունին, և իմ հաւրեղբաւրն՝ Առաքել երիցուն, և Ներսէսին, և տէր Պապուն, և այլ ամենայն մերձաւորաց մերոց. ոչ ով չունի իշխանութիւն, ոչ ի զաւակաց, և ոչ յազգականաց, և ոչ յաւտարաց, որ զայս սուրբ գիրքս հանէ, որ թէ յանզգնի և հանէ ծախելով կամ գրաւելով, ի յահեղ գատաստանին Ջրիստոսի պարտաւոր լինի սուրբ Դէորգայ, Աստուած աւրհնէ զհնամաւղ-պահաւղն, ով որ սէր ունենայ ուսանելով կամ աւրինակելով. Թող Ներսես արեգին կամաւքն լինի, որ զհընամքն ի վերայ կալնու։

411.

ՃԱՌԸՆՏԻՐ

Մատենադարան հայկ. Թարգմ. էջ 730

Վայր՝ Եզնկայ

...[Գրեցաւ] ի Թուականութեան Հայկազեան տումարիս ՉՂԱ. (1342)... յՆկեղեցս գաւառս, ի մայրաքաղաքս աստուածապահ Եզնկայ, ընդ հովանեաւ սուրբ և երկնանման տաճարիս սուրբ Կաթուղիկէի, և սուրբ Առաքելոցն, և սրբոյն Սարգսի, և սուրբ Աստուածածնին։

412.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԴՐՈՑ ՓԻԼՈՆԻ ԵՒՐԱՑԵՑԻՈՑ

Երևան 2102

Ստացողք՝ Կիրակոս և Յովհաննես

154ա Ձստացաւղ աստուածային մատենիս, զերանաշնորհ եռամեծ բուրունապետն Կիրակոս և զնուաստ ծառայ նորին՝ զՅովհաննես պիսականուն վարդապետ՝ ստացաւղք սուրբ տառիս Փիլոնի Մեծի, յիշեցէք ի տէր Յիսուս Ջրիստոս, և հայցնեցէք թողութիւն մեղաց մեր և ծնողաց մերոց, և յիշողքդ յիշեալ լինիք յողորմութիւն բարերար փրկչին, որում փառք յաւիտեանս, ամէն։ Գրեցաւ ի թվ. ՉՂԱ. 1342), ի մարտի յէ. (7), սահմի ի ԺԲ. (12)։

413.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7642 (տես նաև 1657 թ.)

Գրիչ՝ Սիմէոն

ա

387ա *Ի թու. Հայոց ՉՂԱ. (1342) յանկ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շարաղրեալ ի չորից ամոլաց, ի ստոյգ և ընտիր աւրինակէ կոչեցեալ Մուրղանեցոյ, զոր ստացաւ ի հալալ արդեանց մեծաւ. փափաքանաւք <ի> սրբասնեալ քահանայս Գէորգ, յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և աշխատողացն ի սմա, եթէ ոք յանդղնի | | | ով կամ հատանելով ինչ ի սմանէ, տարամերժի ի կենացն յաւիտենից և ընդհատի ի զպրութենէն...։*

բ

386բ *Ձմեղաւք լցեալ գրիչս զՍիմէոն հրեց և զծնաւղսն իմ յիշել աղաչեմ։*

414.

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Վիէն. 173, Տաղ. Ծուց. էջ 489

Գրիչ՝ Ներսէս

ա

231ա ...Գրեցաւ շարակնոցս ձեռամբ մեղաւոր եւ սուտանուն սարկաւագ Ներսիսի, ի լաւ եւ յընտիր աւրինակէ, որ կոչի Խըլկցի, ընդ հովանեաւ սրբոյ Ծակորայ, Կապոսի։ Ի գառն ժամանակի էաք, որ երեկ Սուլայիման գաննն ու գնաց ի Ծարաքնին վերայ՝ ի Սերաստիայ, նայ աստուծով յաղթեց Ծարաքնին ու փախստեայ արար զնոսայ. ի թվ. ՉՂԲ. (1343)։ Արդ, աղաչեմ զձեզ եղբարք, անմեղադիր լերուք...։

Ցիշեցիք զհեզահոդի վարդապետն իմ զՅովաննէս փիլիսոփայն եւ զկրաւնաւոր եղբայր իւր զՄովսես ծազկօզն, որ բազում աշխատեցան ի հետ ինձ եւ խնամս առան ի վերայ իմ...։

ստացող՝ Պաւղոս

բ

231բ Ջստացաւդ սորին զՊաւղոս սարկաւագ և զծնաւղս իւր, զպատուեալ ծերունին զԹագուոր մանկտաւագն, եւ զմայր իւր զփոխեցեալն առ Ջրիստոս՝ զՄէն տիկինն, եւ զեղբարսն իւր՝ զՍիմէոն եւ զայլսն յիշեսջիք, եւ զՀարպետն, եւ նոցա մեղաց Թողութիւն խնդրեսջիւ։ Տէր աստուած վայել[ել] տացէ զսա Պաւղոսին ընդ երկայն աւուրս, ամէն։

415.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Եքեան 5505 (տես նաև՝ 1321 և 1504 Թ.Թ.)

Վայր՝ Խլա՞թ

222բ Ի թվ. ՉՂԲ. (1343), որ Ղարայ Հասան զխլաթ Թախթանեաց, ու աւետարանս պարոն Զարուխն պահել էր. աղաչեմ զձեզ յիշել զպարոն Զարուխն ի մաքրափայլ յաղաւթս ձեր, և զկենակիցն իւր զՍՆոռվորն, և զորդին իւր զԷվատն, որք յիշէք զսոքայ և դուք յիշել լիցիք ի բարեց տվողէն աստուծոյ, ամէն։

416.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԲԱՆԻՑ ԵՒԱԳՐԵԱՑ

Երեան 1981

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Գլաձո՞ր

ա

91ա ...երջանիկ և ղրաղմաշնորհ ղերիցս ե[րանեալ բարու]նասիտն Դ[ավի]թ* յիշեցէք ի Քրիստոս, և ղիս՝ զՅով[աննէս] նուաստ | | | **

բ

131բ Ո՛վ հայր հոգևոր և տէր մարմնաւոր, ընկալ զսակաւ ծրեալս ի քո մեղապարտ աշակերտէս Յովաննիսի քո յառանձինն յաղաւթս, և աստուած ղձեղ յիշէ, և նմայ փառք։

417.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Բբիա. քնգ. 74(Add. 19,729). Ձեռնբր. ցուց. էջ 189

Գրիչ՝ Շմաւոն

ա

189բ ...Եւ ընդ նոսին պսակաւսրեալ...բերկրեսցի... ստացող մատենիս՝ գործնական և արդիւնական վարդապետ Դաւիթ***, իւրովքն ծնողաւք և հարազատաւք, և զմեզուցեալս աստուծոյ զՇմաւոն գրիչ, այլև զՎարդան, զՄխիթար, զՍարգիս, վասն սիրոյն Քրիստոսի յիշեցէք առ տերամբ։

բ

63ա Ջարժանապատիւ բարւոյն Դաւիթ և ղծքոյս Շմաւոն, այլ և զՎարդան, և զՄխիթար, զՍարգիս, վասն աստուծոյ յիշեցէք ի Քրիստոս։

---

* Ամենայն հավանականությամբ Գլաձորի համալսարանի նշանավոր վարդապետ Դավիթն է, որը դեռևս կենդանի էր 1340—43 թ.թ. (տես ՀԶԳրակ. քնգ., էջ 208)։ Ուստի սույն և հաջորդ հիշատակարանների գրության ժամանակագրական վերջին եզրը մեծավորապես կարելի է համարել 1343 թվականը։

** Հիշատակագրությունը գրված է կարմիր թանաքով, մի քանի բառեր մաշված են և անընթեռնելի։

*** Տես նախավերջին ծանոթությունը։

418.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վէնետ. 181, Մարգս. 8ուց. Ա. էջ 755

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Սուրխաթ

327ա Շնորհիւն աստուծոյ ամենակալի սկսայ և ողորմութեամբ լնա-
մոց նորա կատարեցի զսուրբ աւետարանս յաւրինակէ սրբոյն Սա-
հակայ Հայոց Թարգմանչի և երրորգ լուսաւորչի Հայաստանեայցս,
ի հայ թուականիս ՁՂԲ. (1343), յաշխարհն Ղրիմի, ի մայրաքա-
ղաքս Սուրխաթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապե-
տութեան Հայոց տեառն Մխիթարայ, և ի թագաւորութեան* բարե-
շնորհի Սարգսի, ձեռամբ իմով՝ Սիմէոնի՝ մեղուցեալ յետին և անար-
ժան երիցուի և ապիրատ գրչի, [ի] լինդրոյ աստուածարեալ սրբասէր
կրօնաւորի Առաուածատրի, զի ստացեալ զտացուածս աստուածային
կենդանի յարդար ընչից իւրոյ, յիշատակ բարեաց ինքեան և ծնող-
ողաց իւրոց...

419.

Ճ Ա Ռ Ը Ն Տ Ի Ր

Երևան· 4709

Գրիչ՝ Յովաննէս

ա

431բ Ջրխստոս աստուած, ողորմեա ամենայն հաւատացելոց, ևս առա-
ւել ստացողի սուրբ գրոցս էլմէլէքիճ, և ծնողացն իւրոց, և ինձ՝ մե-
ղաւոր գրողիս Յովաննիսիս, և իմ ծնողացն, և քեզ փառք յաւիտեան։

Գրիչ՝ Դեոսկորոս

բ

413ա Ջրխստոս աստուած ողորմած, ողորմեա ամենայն հաւատացելոց
քոց, ևս առաւել ստացաւղ սուրբ գրոցս էլմէլէքիճ, և ծնողաց իւրոց,
և ինձ՝ մեղաւոր գրողիս Դեոսկորոս սուտանուն քահանայիս, և իմ
ծնողացն, և կարդացողաց և լսողացն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։**

* Գետք է լինել՝ հայաջնորդութեան։

** Նման հիշատակագրություններ պահպանվել են բոլոր գլուխների հետև։

Հետ. ստացող՝ Յարքեն

Գ

612ա Ի թուականութիւնս Հայոց ՁՂԲ. (1343), ի դառն և ի վըշտալից ժամանակիս, ի հայրապետութենանն աէր Ստեփաննոսին [գրեցաւ մատեանս]...*

420.

ՃՈՒՐՆՏԻՐ

Երևան 1523 (անս նաև 1668 թ.)

Գրիչ՝ Յովաննէս

182ա Ի թլխատուս աստուած, քո սուրբ և հրաշալի յարութեանդ բարեխաւսութեան յարող զամենայն մեղաւք մեռեալ հողի հաւատացելոց քրիստոնէից, եւ առաւել զհողի էվսեկիէին՝ զատացողի սուրբ դրոցս, և զծնաւղացն իւրոց, և զամենայն արեան մերձաւորաց, և զիմ՝ զմեղաւոր զրչիս զՅովաննիսի, և զիմ ծնողացն, և զաղդականացն, և զկարդացողաց, և զլսողաց, և քեզ փառք յաւիտ[եանս],**

421.

ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂ

Երևան 7784

185բ ...Շնորհիւ տեառն չարադրեցի զխնուռիս հոգևզան [խնդ՞]րուածոյ[թ]եանս աստուածաղարդ կտակիս ի թելադրութենէ հողոյն սրբոյ, զյոբնակից իմաստից զի[ւ]տըս յաւրհնութիւնաբեր ցուցակէս սակաւ բանիւք րովանդակեալ՝ զնահապետացն [աս]եմ, և որ ի նոցանէ մարդարէական պարք զլխ[աւոր]ա[լք] ի Քրիստոս, զառաքելոցն, զսրբոց հարցըն՝ նոցին հետևողաց, ուղղափառ քարոզչացն, վսեմաբան վարդապետաց, զի արբեալ ի հոգւոյն սրբոյ նախնիքն մեր և յաբմարեալ աստուածային գանձարանս հասուցին առ մեզ, որով և սնվա[լ]ս զամենայն զաս քահանայից առ Քրիստոս յուղարկե[ցի] աղգս հայաստանեաց և ծնունդս լուսաւորչին։

Արդ, զրեցաւ քահանայաթաղս ի | | | առաւք լի և անթերի [յ]ևրկստասան աւո[րս], ի թուաբևրութեանս հայկազնեան տումարի ի ՁՂԲ. (1343), յամսեանն մայիս ԺԴ· (13)։ Արդ...***

---

* Ձեռագրի զրութեան տարեթվի մասին սույն հիշատակագրությունը թողել է ձեռագրի հետագա ստացողներից ժմեզաւոր Յարքենց-ը, 1795 թվին։

** Գրիչն ու ստացողը՝ հովանես և էլմելեք, նույնանում են նախորդ հիշատակարանի Ա. հիշատակագրության գրչի ու ստացողի հետ։ Այս տվյալի հիման վրա սույն հիշատակարանը տեղադրում ենք նախորդին կից՝ 1343-ի թվաշարքում։

*** Հիշատակարանի շարունակությունը չի պահպանվել։ 185 թերթի աջ եզրը ջնջված է, որոշ բառեր լրիվ չեն կարդացվում, ուղղագիծ փակագծերում տալիս ենք հավանական ընթերցումներ։

422.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴՐՈՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՑ

Վիեն. 293, Տաշ. Յուց. էջ 720

Թարգմանիչ՝ Յակոբ Ռոճեցի
վայր՝ Ռոճայ

227ա ...Արդ, ի յամի ծննդեանն փրկչին մերո հազարերորդի երեք-հարիւրերորդի քառասներորդի չորրորդի (1344), եւ ի թուականութեանն հայոց՝ եաւթնհարիւրերորդի [ի]ննսներորդի երկրորդի (1343) թարգմանեցաւ վերլուծութիւն ի վերայ շարադրութեանցն Պորփիւրիոսի, եւ տասն Ստորոգութեանցն Արիստոտելի, վեցից Սկզբանցըն, եւ Պէրի արմէնիասին, ի լատին բարբառոյ ի հայս՝ հաւաքեալ ձեռամբ Ֆրա Պետրոսի՝ ազգաւ լատին եւ աշխարհաւ Արագօնացի, ի կարգէ քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, որոյ թարգման էր Ֆրա Յակորոս ազգաւ Հայ, և նա ի կարգէն Քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, ի վերին վանս Ռոճո, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որոյ առաջնորդ եւ հոգաբարձու էր Յոհաննէս վարդապետն, որ մականուն կոչի Ռոճեցի, յորոյ անուանն շինեցին զսուրբ ուխտս աստուածասէր եւ բարեպաշտ. պարոն Գորգն եւ ամուսինն իւր տիկին Նլքիճ. եւ սոքա երեքեան՝ Յոհաննէս վարդապետն եւ պարոն Գորգն եւ տիկին Նլքիկն, ինքնայօժար կամօք նուիրեցին զվանքս կարգին քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի տուրք յաւիտենական։ Արդ, վերոասացեալ վարդապետն Յոհաննէս եղեւ պատճառ բազում բարութեան, զի ժողովեաց աստ վարդապետք Լատինացոց եւ ի Հայոց, տածելով զամենեսեան ըստ հոգւո և ըստ մարմնոյ, եւ թարգմանեաց եւ թարգմանէ զիրս բազումս ոգեշահս եւ լուսաւորիչս...։

Արդ, որ ի կիր առնոյք զողջոյն զիրքս զայս, զողորմութիւն լինդրեցէք յաստուծոյ վերոասացեալ աշխատողացս եւ նոցին երախտաւսրացն, եւ աղաչեմ զի որք օրինակէք զգիրքո՝ զսակաւ յիշատակարանս դրեցէք, եւ դուք դրեալ լիջլիք ի գիրն կենաց, ամէն։**

* Օգտագործել ենք նաև հիշատակարանի ընդհանի № 1616 ձեռագրի մեջ պահպանված ընդօրինակությունը։

423.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7637 (տես. նաև 1583 թ.)

Գրիչ՝ Նատեր

209ա Ց[ունի]ս ամսոյ տասն և հնգի
Ո | | | ի կէտ հասի*
Հ | | |, ինձ ողբալի
Ա | | | գուգոց կսկծալի,
Նուաստ Նատերս ողորմելի,
Է ինձ եղուկ յայս կենցաղի.
Սուգ ժամանեաց ողորմ աղի
Որով ողբոց եմ արժանի,
Բամեալ ժողովք այս նահանդի
Դասք լուսերամ պաշտաւնէի,
Եկէք տեսէք արտասուալի
Այս թշուառիս, որ նուաղի.
Կամ և հառչեմ ի խոր սրտի,
Ինձ մխիթար խնդրեմ բարի,
Մաղթանք առ տէրն մեր բարի,
Վասն բարոյն, որ դուրկ եղի,
Այս Յովաննէսն էր իմ որդի
Ցաւուրս հասեալ քսան ամի,
Էր ամենայն շնորհիւ ի լի
Զարթ և պարծանք մերոյ սեռի,
Բասգուն մտաւք և հոգեվի,
Կարդացողաց էր ցանկալի,
Ունէր ճաշակ եղանակի
Ղորդ ի յարհեստ երաժշտի,
Արդ, զգրչին գովասանի
Ցուցմանն ի գիրս դտանի,

* Սույն հիշատակարանը գրված է գրչի որդու մահվան ծանր տպավորության ներքո, և, չնայած թվականին վերաբերվող երկրորդ տողը եղծված է, հնարավոր է հաստատապես որոշել գրության ժամանակը՝ 1347 թ. ընդօրինակած ավետարանում (տես), Նատեր գրիչն իր հովանես որդու մասին գրում է՝ «Վախճանեալ է Գ. (3) ամաւ յառաջ», ուստի՝ մահը, ինչպես և սույն հիշատակարանի գրությունը տեղի է ունեցել 1344 թվականին։

Սարսո յաւուրս ոչ ոք դտուի
Ի հոյլս արանց գրչկանի,
Քանի գովեմ բան չհասնի.
Էին շնորհիւն էր ծագկալի,
Նա ամենայն դեղեցկալի,
Անձն և պատկերն ցանկալի,
Ցիմաստն մարդ սակաւ հասնի,
Վարքն գործաւքն գովելի,
Աւաղ հազար բերան ի լի
Ցայսմ ժամու, որ ես հասի,*
Զունիմ ճարակ ապաւինի,
Այլ դոգին սուրբ թէ ինձ հասնի,
Ապաւարելոյս թէ յոյս ծագի,
Միջարեկիս թէ այժ շնորհի,
Նմա դիւրին է թէ կամի.
Թէ ձեր աղաւթք աւժնդակի,
Քրիստոս գթով մեզ ողորմի,
Առ իմ որդեակն յուսով տանի։

424.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեան 7048

Գրիչ՝ Գրիգոր Սուրիասանց
վայր՝ Սուրխաթ

212բ Շնորհիւն աստուածոյ ամենակալի սկսայ և ողորմութեամբ խնամոց նորա կատարեցի զդուբբ և ցանկալի աւետարանս բազում ջանիւ և մեծաւ աշխատութեամբ, յօրինակէ սրբոյն Սահակայ հայոց Թարգմանչի և երկրորդ լուսաւորչի Հայաստանեայցս, ի հայ Թուականին ՋՂԳ. (1344), յաշխարհս Ղրիմի, ի մայրաքաղաքս Սուրխաթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան Հայոց տեառն Մխիթ[ա]րայ, և ի թագաւորութեան Կոսս[անդեայ]։

Գրեցաւ սուրբ և ցանկալի աւետարանս ձեռամբ իմով՝ Գրիգորի Սուրիասանց մեղուցեալ, յետին և անարժան գրչի, յիշատակ բարի ինձ և ծնողաց իմոց։

213ա Արդ, որք ընթեռնոյք և կամ ընդ օրինակ դնէք, հաստատուն մտօք հաւատացէք ստուգութեան բանիցդ և ցանկուցդ, և զմեղուցեալ գրչակս զԳրիգոր, և զծնօղսն իմ, և զեղբարս յիշեսջիք ի տէր, և Քրիստոս աստուած յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս, ամէն։

---

* Մինչ այստեղ առղերի սկզբնատառերով հոդված է՝ ԵՒՈհաննէս որդեակ իմ վայ է զրկոզացս ի Քէն, այ, վայ։

** Ձեռագիրը մեզ հասած սակավաթիվ կրկնագիրներից (палимпсест) մեկն է։

425.

ԱԻԵՏԱՐԱՆ

Մերսուռիա, Ս. Նշան, № 72, ՀԱ. 1920, էջ 237—238 (տես նաև 1407 թ.)

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ Կաֆայ

580 *... Արդ այսմ... աստուածասարգև տառիս փափաքող եղև հոգեաղարդ կուսակրաւն քահանայն Սկրտիչն՝ ընական Բաբերդցի, և նա գրել զաս ի վայելումն կենաց իւրոց և յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, հաւրն՝ Իշխանին և մաւրն՝ Հռաւրին, փոխանցելոյն առ Քրիստոս յոյն մեր, և եղբարցն՝ Մեհրազին, Աստուածատրին, Վրքաձեսին, Աստվածեսին, և փոխեալսկ եղբարցն՝ Ասքանիսին և Ցռվանիսին, և քուերցն՝ Մամախաթունին և Գոհարխաթունին, հանգուցելոցն առ Քրիստոս: Եւ մխս քւերն Վարդեթիին, և հաւրքաւրօն Շամամին, և զասևը իւրոյ՝ Պողրազատին, որ յայսմ ամի հանգևաւ առ Քրիստոս և մասն ինչ ունի ի գիրքս...*

Բայց եղև զրաւ. ջրչուքնան սրբա ի թուաբերութեանս Հայոց ՁՂԴ. (1344), ի դառն ժամանակիս, ի պաշարմանն Կաֆայինս. Յիշեւ[ի]ք զմխիթար քահանայն՝ դաւաւցիչն իմ՝ զիոխեալն առ Քրիստոս, և զևւետիէ քահանայն, և զծնողսն իւր, զփոխեցեալսն ի Քրիստոս, և զնաւթաքևռն իմ զխաժիկն և զորդիսն... ամէն:

426.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7588

Գրիչ՝ Սիմեոն
վայր՝ Սուրխաթ

279ա *Շնորհիւն աստուծոյ ամենակալի սկսայ և ողջմուքեամբ [նա]մոյ նորա կատարեցի զսուրբ և ցանկալի աւետարանս բաղում ջանիւ և մեծաւ աշխատութեամբ, յաւրինակէ սրբոյն Սուրակայ Հայոց թարգմանչի և երկրորդ լուսաւորչի Հայաստանեայցս, ի Հայ թուականին ՁՂԴ. (1344), յաշխարհս Կրիմի, ի մայրաքաղա[քս Սյուրխաթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի կաթողիկոսութեան Հա[յոց Մխի]թրայ և քա[դաւորութեան] Կոստան[դեայ] | | |**

279բ [Ջեռամբ] Սիմեոնի մեղուցեալ, յետին և անարժան ղրչի, ի [ընդ]րոյ Սեբ քահանայիցն, որ բաղում վափաղանաւք ստացաւ զաս ի վայելումն մարմնոյ իւրոյ և յիշատակ հոգւոյ:

Արդ, որք ընթևռնոյք և կամ ընդ աւրինակ ղընէք՝ հաստատուն

* Թերթը ներքևից մռլված է և մասամբ պատռված, ուստի վերջին տողերը չեն պահպանվել, իսկ որոշ տողեր պահպանվել են թերի բառերով:

մտօք հաւատացէք ստուգութեան բանիցդ և ցանկութիւդ, և զվերոգըրեալ զսրբազան քահանային զՍէք, և զհայրն իւր Պատռոս, և զմայրն իւր Գրոց, և զեղբայր՝ զՄարտիրոս, և զքոյրն [յիշեցէք] | | |

427.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թորոս Աղբաբ, ր էջ 354—350 (Խաբերդի Տովք գիւղի սբ. Նշան եկեղեցի) տես նաև 1470 թ.

Գրիչ՝ Կարապետ

Ես արդ, յայսմ տարտարոս և ի զառն և ի վշտալից ժամանակիս, որ էր ՁՂԴ. (1344)...։ Այցելու որբոց և այրևաց պարտն Յովաննես մեծ սիրով և յոյժ փափաքանաւք եւս գրել զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Կիրակոսին և Շուղտիկնայ, և կենակցին՝ Թագուհւոյն, և զաւակացն... և Հռիփսիմի հաւատուրի...։ Յիշեցէք զանյիշելի գրիչս... զԿարապետ կրաւնաւոր..., զմայրն՝ Անլմելիք, և զքոյրան զՍուլթանմելիք և զՋանմելիք, և զզաւակն՝ զՅոհաննես և զԳուռջիւրեկն..., և զբարի յիշատակն իւր՝ զՌոյս որդին...։

428.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 936 (տես նաև 1450 թ.)

Գրիչ՝ Թումա

222բ Ընդատապարտեալս մեղաւք, զանարժան Թումա փցուն գրիչ յիշեսջիք ի տէր Քրիստոս Յիսուս, աղաչեմ, և զներսես սրբասնեալ քահ[անայ], ստացող զրոց, և զընտրեալ պատանեակն իւր՝ զԳրիգորիս, սիրուն ուսումնասէր և վարժող իմաստութեան և հանճարոյ, տէր աստուած վայելել տացէ ընդ երկայն աւուրս, և ողորմեսցի կարդացողացն և լսողացն, ամէն։

Թվ. ՁՂԴ. (1344), յամիս արաց։

429.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փիրզ. 6273, էջ 151—152 (Հայաստանի լրագիր 1851, թիւ 73)*

Ստացող՝ Կոստանդին արքայ

Ի թուականիս Հայոց ՉՂԴ. (1345) ես՝ Կոստանդին Հայոց տրքայ, ստացայ զսուրբ աւետարանս, որ էր կաղմեալ արծաթեղէն և ոսկեղէն նկարակերպ գեղեցկութեամբ գաբգարեալ, որ և ստացա զսա յարդար արղանաց իմոց, զոր յառաջին նախնեաց մերոց հասեալ եղև ատ մեղ նշան բարեաց, և նովաւ ետու զսուրբ աւետարանս ծածկել գեղեցիկ կերպարանօք և շնորհեցի զսա սրբոյ եկեղեցւոյ, ըստ փափաքանաց սրտի իմոյ և մեծ յուսոյ, միշտ յիշատակ լինել ինձ և ամենայն զարմից իմոց, և հօրն իմոյ տէր Պաղտին մարաջախտուն՝ հանդուցելոյն ատ Քրիստոս, այլ և վասն երկար կենդանութեան մերոյ և աստուածծպարգև որդւոցն իմոց Աւշնի և Լեոնի։

430.

ԳԻՐՔ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԹՈՎՄԱՑԻ ԱԿՈՒԻՆԱՑԻՈՑ

Երևան 68

Թարգմանիչ՝ Յակոբ Քոնեցի
վայր՝ Քոնայ

276ա ... *Արդ, յամի ծննդեան փրկչին մերոյ հազարերորդի երեքհարիւրերորդի քառասներորդի հինգերսրդի (1345) և ի թուականութեան հայոց եօթնհարիւրերորդի [ին]ն[ու]ներորդի չորրորդի (1345) թարգմանեցաւ գիրքս տնօրէնութեանն Քրիստոսի, որ է առաջին հատոր եր[րոր]գ մասին երանելոյն Թովմայի, ի լատին բարբառոյ ի հայս, ձեռամբ Ֆրա Պետրոսի աղդաւ լատին և աշխարհաւ Արագօնացի, ի կարգէ քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, որոյ թարգման էր Ֆրա Յակոբոս աղգաւ հայ, ի կարգէն քարոզողաց սրբոյն Դոմինիկոսի, ի վերին վանքս Քոնոյ, բնդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որոյ առաջնորդ և հոգաբարձու և վերահանամող կարգին միաբանելոց՝ Յո-*

* *Մեզ չհաջողվեց գտնել Կ. Պոլսում 1846—52 թ.թ. հրատարակված «Հայաստան» շաբաթաթերթի համարները, ուստի հիշատակարանը մեջ ենք բերում Փիրզոլամյանի ժողովածուից։*

հաճ մականուն կոչեցեալ Քոճեցի, ի յորո անուն չինակին դուբր ուխտս աստուածասէր և բարեպաշտ պարոն Գորգն և տմուսին իւր տիկին Էլթիկն։

Եւ ոչքա երկքեան՝ վերախնամսդն և պարոն Գորգն և տիկին Էլթիկն ինքնայօժար կամօք նուիրեցին զմանքս կարդին քարոզոցս որոյն Թոմինիկոսի աստրք յաւիտենական։

Արդ, վերստաց[ն]նել խնամսդն եղիկ պատճառս բաղում բարեբնեան, զի ժողովեաց առաջ մարդասիրաբ յաստինացոյց և ի հայոց, տածելով զնոսա ըստ հոգւո և ըստ մարմնո, և քաջքմտնեայ և քաջքմտնել զիրս լաղատմս ազիշխան և յուսուերիս...։

431.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԴԱՒԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ

Երևան 731

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Դաւրէժ

ա

... Զոր հաստատիմ, քոջ, և արի, բարի ծառայ աստուծոյ Ներսէս, ուսեալ պաշտաւնեան աստուծոյ և հաստատեալ ուղղափառ հաւատով, լեալ սիրելի Երէտասի, ոչ կամելով սչարահոսութիւն ի ճշմարիտ հաւատս, այլ ի Երէտասէ Յիսուս, և յոգւոյ յոյժ սիրոյ
232ա աստուածային տուեալ միաժամ || անօք և ապաչնօք ետ դնել զսուբր դիրքս, զի սուրբ յանդիմանեսցէ դներձուածողսն, և յամօթ արասցէ դիտասովանողսն Երկու բնութեան ի Երէտասէ, և հաստատեսցէ զուղղափառսն ի հաւատս անտատանելի և հաստատուն։

Արդ, ո՞վ ըստս լսեսցէ՝ քահանայք և սարկաւագունք և ամենայն ուխտք ևկեղցս, յորժամ հանդիպիք ի վաթժուն աստուածաշունչ սուրբ տառիս կարդմամբ կամ օրինակիւով, յիշեցէք արժանի արաքէք զընդրևալսն ի դասս տարկաւագաց և սիրեցեալս յաստուածոյ ըստ սրբոց նախատիկացին, զամենասքանչո և զաստուածատեսրս և զհաւատարիմ ծառայս աստուծոյ՝ զնորոգիս և ծնողսն իւր՝ զհէր Յովաննես և...**

232բ Եւ զիս՝ զեղկելիս և զամենամեղս և զչարաչար և զանպիտանս ծառայ աստուծոյ զներսես երէցս, որ գանունս ունիմ և զգրծո ոչ ունիմ, և զվարդապետեան իմ զՍտեփաննոս ասկաւագն՝ զխնդրեալն ի

---

* Ձեռագրի գրչութեան տարեթիվը (1345) կասկածելի է։ Ձեռագրի 6ր—7ա էջերում կա Տոնացուցք ցանկ, որ սկսվում է ՁՂԴ. (1345) թվից և ավարտվում ՉԾ. (1361) թվով։ Կարծում ենք, որ դրիչն արտագրել կամ կազմել է այդ ցանկը պրակների նպատակներով, ուստի ցանկի առաջին թվականը համարում ենք ձեռագրի դրչության հավանական տարեթիվը։

** Տեղ է բաց թողված անունների լրացման համար, գրիչը ներքին լուսանցքում մանր տառերով գրել է՝ «զոր կամս յիշատակիլ յիշեալ և գրեալ»։

Բրիսաոս, և ծնողն իմ ովանենս, և զմայրն իմ զՈռհաք Տիկին՝ զիսոհեալն ի Բրիսաոս, աղաչեմ յիշել ի աչք. և զզալանացն մի մեղաղրէք, ոլ կարի յոյժ զօրինակն կու յիշպատմնէին՝, և եթէ սղալ գասնիս՝ ողորդեալ և գաստուածողորմին հանապազ ասա. և աստուած ամենատառատն և ձեզ ողորմեսցի յիւր մխանդամ գալուստն, ամէնս Աբգ, գրիգոյաւ և կատարեցաւ ընդ հովանեաւ գօրավարիս Քրիս-
253ր տոսի սուրբ Մարդոս, ի մայրաքաղաքս։ Գաւրիժ, ընդ Հայս և ընդ Փարսիս։

ՈՁ Կարապետ

բ

253ա Որ գընորհս գայս աստուածային և անպարագիծ գաբդևեաց սիրելոյ իւրոս, գոլ և ընկալեալ ամենևքեանիկ և գայ հանատրն, ըստ հոդոյ եղելոյն մեր պարոն Բաներիզեան, որ և Նորօգեռն, ի յիւր գնատեալ և ի յաստուծոյ ընդունեալ հոգևոր եղբօրէն՝ ի տէր Ներսեսէ քահանային, ի լուսաւորութիւն մտաց իւրոց և մանչանց եկեղեցոյ, ընդ որ և գանանիքդքդ այսմ աստուածաշունչ առոխ՝ դյիշեալք ի սմա յիշնօիք ի Բրիսաոս և գանաչժան Կարսպեան։

432.

ԱԻՆՏԱՐԱՆ

Վենետ. 123, Բ. Մատ. Ջուղ. Ա. էջ 344։*

Հետ. ոտացող՝ Աստուածատուր

2ա Համաւն աստուծոյ ես՝ անարժան քահանայ Աստուածատուր, գնեցի զսուրբ քառասնաւրեայ հգիմարուն ուսուտարանն ի հալալ աշխատանց իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի վայելուշ գաւակաց իմոց, ի քահանայէ ամենն Սարգսէ,** [որ] գրեր գոչի Յոհաննես Գաւշայկեցացոյ, Աբգ, որք ընդհանոյք և ասկոիք ի սմանէ, յիշեցէք ի Բրիսաոս գնայրն իմ զՍարգիս և գմայրն իմ զԱֆարքի(՞) և ... արուալ զԱստուածատուրս, և աստուած յի ողաց և յիշեցելոցդ աղաքմեսցի։ Ի թվ. ՉՂԴ. (1345)։***

* Ուշում է ասել «առաքելցնում էինք»։

** Ավետարանն ըստ Բ. Մարդոյանի գրված է թ—ժ դարում։ 4ա էջում, համաձայն նրա ավելի, կա մի մէնոլոգիք՝ «էի Թ. Ե.»։ որ նա ըողնում է առանց մեկնութեան։ Այն մեր կարծիքով պետք է կարդալ «էի մուկն ևհ.» (360+551=911), ուստի, վենետիկի Ն. 123 ձեռագիրը ավետարանը գրված է 911 թվականին։

*** Ջեռագրում՝ «Ռեգէ» (հապավված)։

**** Հնարավոր է կարդալ նաև «ՇՂԴ.» (1145), բայց անհավանական է։

433.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՀԱ, 1926, էջ 344

Նորոգող՝ Յովհաննէս Նազաշ
Վայր՝ Խաղտեաց գաւառ, դղեակ Բաբերդ

Ալդ, ցանկացող եղեալ այսմ... աւետարանին պատուելի այրն աստուածոյ Խոսրովշահն, եւ ետ զսա վերստին նորոգել, զոր տէր աստուած նորոգեսցէ զմանկութիւն նորա, ամէն։ Ի նեզ եւ ի զառն ժամանակիս, յորում մեծ մայրաքաղաքն Թեոդուպաւլիս անապատ եղեւ ի մարդոյ եւ յանասնոյ ի յաղէն հաղարու եւ իմայելացոցն։ Նաեւ արեւելեանքն ամենայն, տուն վկրաց. որ յոլովք ի սուր սուսերի մաշեցան եւ այլք ի սովոյ մեռանէին, որ ոչ ոք կարէ պատմել զանցս աղետիցս, զոր եկն ի վերայ ազգիս քրիստոնէից, եւ այն վասն առաւել յաճախ մեղաց մերոց։ Որ բազում տանուտեարք եւ քահանայք մուրողք տարաշխարհիկ շրջէին ի հայրենի գաւառաց...։ Երեմիայ պիտէր, որ լայր զանընդբռնելի վիշտս քրիստոնէից, եւս առաւել ազգիս հայոց։ Արդ, ստացաւ զսա զաւակ ի Սիոն... եւ աստեացս ի վարժուեաց ուսուեասիրաց, ի յիշատակ իւր, եւ եղբարն իւրոյ Շերիճշահիկ, եւ ծնաւղացն՝ Ումիկիկ եւ Թագուհէ, Պարոնշահիկ, եւ Սիրատիկնայ՝ փոխեցելոցն ի Քրիստոս, զոր տէր աստուած բարձակից արասցէ զնոսայ նահապետ[ի]ն Աբրահամ[ու]ն, ամէն։

Արդ, եղեւ վերջին նորոգումն սուրբ աւետարանիս ի Թուականութեանս հայոց ՉՂԵ. (1346), ի գաւառիս Խաղտեաց, ի յանտիկ գղեակս, որ կոչի Բաբերդ, ձեռամբ սուտանուն մահտեսի Յովճաննէս նազաշի եւ կազմողի, առ զրան սրբոյ Աստուածածնիս եւ սրբոց Հրեշտակապետացս, ի հայոց վերագիտողութեան տեառն Մխիթարիս, եւ ի հայրապետութեան այսմ գաւառիս տէր Սահակայ եւ տէր Ստեփաննոսի, եւ ի թագաւորութեան հայոց Կոստանդնի, եւ յիշխանութեան աշխարհին Հոռմաց Յորաքնայիկ, որ էր այր բարեպաշտ, զի յոլովք ի յաշխարհի նորա լնուին հաղիւ զսովեալ անձինս, զոր տէր աստուած յերկար առնէ զպետութիւն նորա, ամէն։

*Արդ, որք աւգտիք ի սմանէ՝ քահանայք եւ ժողովուրդք, յիշեսջիկ ի սբբընթաց եւ ի մաքրամատուց աղաւթս ձեր զբարեմիտ այրն զՅոսրովշահն եւ զայլ ամենայն համացեղս իւր՝ զվերագրեալսն, եւ Քրիստոս յոյն ամենեցուն... յիշողացդ եւ յիշելոցս ողորմեսցի առհասարակ, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն։**

---

* Հրատարակչի ծանոթագրութեան համաձայն ճմասեանս է աւետարան, որ կը գտնվէր Սոֆիայի Գուլկար Ազգ. Մատենադարանին մէջ։

434.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան 7655 (տես նաև 1547 թ.)

Հետ. ստացող՝ Աւագ
վայր՝ Այրեբուլաց գիւղ

81բ Ի թվիս Հայոց ՉՂԵ. (1346), ես՝ անպիտան ծառայս աստուծոյ Աւագ՝ Այրեբուլաց* ձեռնաւուր, գնեցի զսուրբ աստուածարան աւետարանս՝ պարիսպ և պահապան աստուածապատիւ պարոնին իմոյ պարոն Զումին, և տեառն որգեացն իմ՝ պարոն Արղուքին և պարոն Զարխիկին, և ի պատճառ խաղաղութեան և շինութեան գեղիս մերոյ Այրեբուլաց: Քրիստոս աստուած իւր սուրբ աւետարանիս մխիթար[դ]ութեամբն և բարեխաւսութեամբ զիմ պարոնն զՋումայն և զիւր աստուածատուր զաւակքն խաղաղութեամբ պահէ և փրկէ յամենայն փորձութենէ: Եւ ես՝ մեղուցեալ ծառայս աստուծոյ Աւագս, յերեսս անկեալ
82ա աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և որք լսէք || իմ շատ մեղաց և յանցանացն թողութիւն խնդրեցէք. յիշեցէք ի Քրիստոս և զծնողն իմ՝ զհայրն իմ զԳերգ և զմայրն իմ զԱմեն տիկին, և զկենակիցն իմ զՀուրիամ, և զորդին իմ զԱստուածատուր, կենդանեացս մեղաց թողութիւն խնդրեցէք և մեռելոցն հանգիստ և ողորմութիւն հայցեցէք. և որ ուղեղ մտաւք և լի սրտիւ մեր մեղաց և յանցանացն թողութիւն առնէ, աստուած իւր մեղաց և յանցանացն թողութիւն արասցէ, ըստ անսուտ բանին Քրիստոսի, որ ասաց՝ եթէ թողուք մարդկան զյանցանս նոցա, և հայրն երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր...՝**

435.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երեան 7636 (տես նաև 1602 թ.)

Գրիչ՝ Նատեր
վայր՝ Սուրխաթ

ա

275բ ...Արդ, յամի ՉՂԵ. (1346)-երորդի թվականութեանս Հայոց գրեցաւ սուրբ աւետարանս ի խնդրոյ քրիստոսասէր և ողջախոհ քահանայի Աբրահամ իրիցոյ, որ յոտսով ստացաւ զսա յարդար ընչից իւրոց՝ բարեխաւս վասն հոգւոյ իւրոյ, և յիշատակ աստի կենացս, և որդի յաւիտենականին, և ընտանի ի վերինն Երուսաղէմ: Որք հանդիպիք այսմ աստուածարան մատենիս յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ աղաւթս ձեր զԱբրահամ երէց, և զորդի իւր՝ զժառանգաւոր սորա զԿա-

* Գուցե «Երբեմնի» գյուղանվան հնագույն ձևը լինի:
** Հիշատակարանը Ավանի անունից գրել է Սեդեկ գրիչը, որն իր մասին, 81բ էջի վրա, թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Ես գիս՝ դանարժան ծառայս աստուծոյ Սեդեկ յիշեցէք ի բարիս»:

բասկա արեղայ, և զՎարդապետն, և զԻմմէոնն, և զծնողսն իւր՝ զԱստուածատուրն և զԹագուհին, և զեղբարսն իւր՝ զիոհաննէսն, նաև զիրիցակինն իւր՝ զիոհաննան, և զորդիսն, և զամենայն արեան մերձաւորսն, որք ահաւն են պաշտաւնեայք, և ճանաչել զնոսա, որք կան և որք գնային [առ] աչր, սրում ողորմեսցի նոցա և սոյա բոա մնձի ողորմութեան իւրում։ Ընդ նոսին և զմեղապարա զրիչս գ՝ատեբս, և զորդին իմ զԱւետիք, որ ծաղիով զաշղարեայ սա և կաղմեայ, և զամենայն եղբարսն իմ, և զծնօղսն, և զղաւակսն, և որք աւղնեցին ի սուրբ աւետարանն և մասնակից եղեն սորին սարնաց հատուցման ողորմեացի յիշելոյս և ընթերցողացդ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Արդ, զբնցաւ սա յաշխարհս ի հիւսիսոյ, որ կոչի Խրիմ, ի քաղաքս, որ ասի Սուրխաթ, յաշխարհակալութենանն Ճանիպեկ խանի, ի վերաղիտողութենանն տէր Ստեփաննոսի, և յաթոռակալութենանն Յովհաննիս կրաւնաւորի։

Ցայսմ ամի շինեցաւ սուրբ Աստուածածինն մերձ ի վանքն սուրբ Ավբեննտի, ձեռամբ Աւետիս խոտաճարակ լարուհոյ և Աբրահամ իրիցու, որ երկուց բարեաց եղև գործակից՝ սուրբ աւետարանիս և սուրբ տաճարին, որ յանուն սուրբ յաստուածամօրն շինեցաւ, և յայսմ աւուր վիրաւորեալ խո[տա]ճարակին [Աւետիս] գնաց ատի։

բ

84ա Ջատագովաց աստուածաշունչ հրամանիս զԱբրահամ երէց, և զծնողսն իւր, և զեղբայրսն իւր, և զորդիսն իւր, և զամենայն ազգեան մերձաւորսն և զերախտաւորսն, և որք աւղնեցին ի գին սորա՝ թէ շատ և թէ սակաւ, ամենեցուն ողորմութիւն և թողութիւն խնդրեսկք, ով սուրբ ընթերցողք, գի և դուք գտջիք ողորմութիւն յաստուծոյ։ Ընդ նոսին և զառիկար զրիչս գնատեր, և զծնաւղսն իմ, և զեղբարսն, և զքուեբսն, և զորդիսն՝զԱւետիս ծաղիաւղ և կաղմաւղ, և զՅոհաննէս սաբկաւագ, որ աղա հասակաւ ել ատի և համառ առ Քրիստոս, իսկ մեղ սուղ անմխիթար և վիշտ անմոռանալի ձեաց, և քոյր նորա զկնի նորա գնաց, ողորմութիւն գտցին նոքա յողորմածէն աստուծոյ ձեռով սուրբ աղօթիւք. և մեզ վհատելոցս յիշող լերուք ի թողութիւն, գի և ձեղ լիցի թողութիւն յաստուծոյ՝ յաւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

ՁՄարան Տաթեւացի յիշեցէք ի տէր և զքոյր նորա զՄայրապետն և ատառաւած զձեղ յիշէ։

Ծաղիող՝ Աւետիս, որդի Նատերի

գ

214բ Ո՛վ սուրբ ընթերցող աւետարանիս սրբոյ, յիշեա զրաղմամեղ Աւետիսս՝ գնկարող և զսանտրող այսմ, և խոշորութեան արեւստին մի մեղաղրէք։

Կրկին աղաչեմ յիշեա և զդովելի անձն, զյանկալի տիկն, զեղբայր թշուառութենանս իմոյ՝ զՅովաննէս սարկաւագ, որ ի մանկու-

թեան հասակ վոխեցաւ ի կենացս և ղիս եթող ի մէջ բաղմածուի ալեաց, զոր և հայցեմ զսուրբ մանկունսդ խնդրել աղաւթիւք, զի տէր մեր արասցէ դասակից արդարոց զեղբայրն իմ, և ինձ՝ մեղաւորիս շնորհեսցէ զթողութիւն, ղի և գուք զջլիք զողորմութիւն ի Քրիստոսէ։

դ

Որք հանդիպիք այսմ աստուածարան մատենիս յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս զձեր զՇահեերց, և ղկենակիցն իւր, զՓոքր տիկինն, և զաւակսն իւրեանց՝ զկարապետն և զԱմիրբայն, որ աւդնական եղեն աւետարանի ծախսն և որք արեանն [Քրիստոսի] են պաշտաւնեայք, և հատոյ զպարտս նոցին ըստ ընդարձոյս առաս ողորմութեան քում աստ և ի հանդերձելումն, և Քրիստոսի վարձք յաւիտեանս։

436.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թորոս Ագրար. Բ, էջ 426—427 (Տեղրանակրա)

Դրիչ՝ Նատեր
վայր՝ Սուրխաթ

Ցամի ՁՂԵ. Թուականիս Հայոց (1346) եղեւ զրաւ գրչութեան աստուածաշունչ տառիս ձեռամբ մեղաւոր Նատերի*, ի խնդրոյ պատուական եւ մաքուր կրաւնաւոր եւ հեզահոգի արեղայի Գրիգորի եւ եղբայր իւրոյ Վահան արեղայի, յաշխարհս հիւսիսոյ, ի մայրաքաղաքն Ղրիմի, եւ հոյակապ եւ ի հռչակաւոր բազմաժողով տեղիս, որ կոչի Սուրխտ, յառաջնորդութեան առաքելական իշխանութեան տեառն Ստեփաննոսի, եւ յաթոռապահութեան հանճարեղ հոետորին Յոհաննէս արեղային, յաշխարհակալութեան Ճանիպեկ դանին, եւ ի քաղաքապետութեան Ռամատնայ, որ այժմս արժանի յիշատակելի է վասն իրաւադնացութեան ի վերայ սահմանի ըստ աւրինի քաղաքականութեան...։

437.

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 7353

Հետ. ստացող՝ Հայրապետ
վայր՝ Միլիվա՞ճ

ա

1բ [Կամա]ւն աստուծոյ ես՝ Հայրապետ քահանայս՝ [Հ]այրապետ որդիս Միլիվանճեացի, որ փափաք ունայի պատարագի եւ սուրբ աւետարանի, որ նոր կարգ առի, ամ աստուած չէթող, որ պատարագ ելի կամ զաւետարանս կարդացել, սիրովդ լցել Ո՛վ սուրբ քահանայք, աղաչեմ զձեզ, ի հալալ ընչից իմոց դրամ տվի ու առի իշատակ ինձ

* Տպված է «Նատիրբէյ»։

եւ ծնողաց իմոց՝ Հայրապնոյ, ե եղբարց իմոց՝ Մանուիսի, Ոսկանիս[ի] եւ այլ տղայոցս։ Ես Հայրապնուն Գերգու պտուղ, ու. մեր հաւրն Գրիգորոյ, ու մաւրն Հազրեւարդայ, ու Առյան Խաւթունայ եւ ամենայն աղգականաց, գնեացաք զաւետա[րա]նս մեզ, մեր աղայոցն իշա[տա]կ։ Ամ աղէն աստուած պոռեցաւ, մեք սրտայրեկ ու լալագին աչաւք ի վայր ձեացաք, ով սուրբ վարդապետք և քահանէք. ով կարդէք ե զաստուած պատարագանէք, աղաչեմ զձեզ վանց սիրին Ք՛րիստոսի իշէք զմեզ՝ զմոլսրելքս ի սուրբ ատղթս ձեր, եւ աստուած ողորմի ասէք որդոյ մերոյ Հարապետայ նորայկնուք հրիպին և ծնողացն և ազգականացն իւրոց. սուրբ աստուածածին, բարեխաւսութեամբ սուրբ առաքելսցն, մարդտրէիցն, մա[ր]տիրոսացն, սուրբ ճգդայաւորացն սոցա մեղն | ! | *

Թ[ու]. ՉՂԸ. (1346)։ Աւրհնել եւ վառայվորել է աստուած, ամենսղորմն աստուած ողորմի | | | **

Բ

210բ Երբ Վարդանն ընձայեցաւ՝ թիվն ՉՀՔ. (1323), ի յամսեն տրէ։
Երբ Աւծել ընձայեցաւ՝ թիւն ՉՉԴ. (1334) էր, ի յամսէն տրէ. և Քրիսաոսի մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն։

438.

ԱՒԵՏԱՐԱՆ

Կերլա. ժա. ՀՄ, 1895, էջ 304

Գրիչ՝ Կիրակոս
վայր՝ Սուրիաք

... Ցամի եւթնհարիւրերորդի [ին]նսուներորդի հինգերորդի, թուաբերութեանս Հայոց նոր տումարիս (1346), ի գաւառիս Խրիմի, ի մայրաքաղաքիս Սուրիաք կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ աստուածածնի եւ սուրբ Գրիգորի Լուսաւորչի, ի հայրապետութեան տեառն Մխիթարայ եւ յեպիսկոպոսութեան ամենայն հիւսիսային կողմանցս տէր Ստեփանոսի արհիեպիսկոպոսի, ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի եւ գերհոչակելի եւ գերապանծ, պաշտելի եւ երկրպագելի սուրբ աւետարանս, ձեռամբ մեղօք լցեալ եւ անպիտան հոգւոյ՝ Կիրակոս սարկաւագի, յամսեանն աւգոստոսի ի ԺԵ. (15), ի փառս Քրիստոսի՝ աւրհնելոյն յամենայն ըերանոյ յաւիտեանս, ամէն։ Արդ, աղաչեմ զամենեսին ղգաստ լուսերամիցդ, որք հանդիպիք այսմ աստուածախաւսութեան սուրբ աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զԿիրակոս աւաէ սարկաւաէ եւ զծնողս իմ՝ զԿարապետ քահանայ, եւ զմայրն իմ զԱննայ՝ զիոխեցեալն առ Քրիստոս, եւ զկուսակրօն քահանայ զՄինաս՝ զեղբայրն իմ, եւ զսոցին հարան զնայաք՝ զիոխեցեալն առ Քրիստոս՝ զուգակից իմ։ Արդ, կրկին աղաչեմ

* Մի տող կտրված է։ Շարունակությունը գրված է լուսանցքի վրա։
** Երկու բառ անընթեռնելի։

ձեզ, սրտի մտաւք յիշել զվերոյգրեալսդ, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Նայ եւ զԳրիգոր քահանայ յիշեսջիք ի տէր մեր, որ զօրինակն շնորհեաց, եւ անմեղադիր լերուք, ո՛վ սուրբ հարք, վասն անտրուեստ զրոյս եւ սղալանացս, որ ի ժամ, ղի կայր իմ այս չափ էր, եւ չէի տեղեակ այսմ արհեստի, այլ հարկէ եւ փափաքանաց սրտիս համարձակեցայ ի սմա եւ նոյն ինքս պարզեւեաց ինձ ի կատար ելանել սմա, ի փառս սուրբ երրորդութեան, որ է աւրհնեալ յաւիտենից երանոյ, ամէն։

439.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 2187

Գրիչ՝ Թորոս Տարօնեցի

ա

162բ *Զծրօղ Թորոսս յիշեա և ասա միշտ տէր ողորմեա, ի թվ. Հայ[ոց] ՉՂԵ. (1346)։*

բ

245ա *Զստացօղ սուրբ ասացուածոցս՝ զՄարտիրոս քահանայ Սաճաճնեցի և զծրօղ Թորոս Տարօնեցի, աղաչեմ զձեզ, յիշեցէք զմեզ մաքուր աղօթիւք, ի թուիս Հայ[ոց] ՉՂԵ. (1346)։*

440.

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

*Երեան 4166**

142բ *Շինեցաւ սուրբ և հռչակաւոր բազմաժողով մեծ մենար[ան]ն Հայոց Թառ ի սուրբ Քարքմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հայոց և ի Մեսրոպի վարդապետէ ԴՃ. և ԻԳ. (426) ամի ծնընդեանն Քրիստոսի, ի թագաւորութեանն Հայոց Վռամշապ|հ|այ, ի թագաւորութեան Հռոմոց Արկադեոսի և Ոնորիոսի, և ի պատրիարգութեան Յոհաննու Ոսկեբերանի։*

*ԲՌԼՃ. և ԺԷ.** (2717) ամով յառաջ քան զնոյ թուականն (իմա, 2166 թ. ն. մ. է.) շինեցաւ գեղաքաղաքն Գառնի ի Գեղամայ և ի Գառնկոյ։ ԳՌՆՃ[ԺԲ.] (3512)*** տարի է մինչ ի յայս, որ է թիւս ՉՂԵ. (1346)։*

---

* Ձեռագիրը, ըստ հնագրական տվյալների, գրված է ԺԳ դարու վերջին, Սարգիս գրչի կողմից, ում թաղագինի հիշատակին (էջ 35ա–ի հիշատակագրության մեջ կարգում ենք «թաղադիւ արեամբ ներկեալն, յիշեա»)։

** Սույն թվականը հետագայում, գուցե նույն գրչի կողմից, փոխված է, և «ԲՌԼՃ. և ԺԷ.»-ն գարձված է՝ «ԲՌԹՃ. և ԿԱ.», այսինքն՝ 2961։ Հաստատ կան անընթեռնելի բառեր, որոնք, համաձայն թվականից առաջ գրված՝ ⊕ նշանի, վերաբերելու են բնագրի այս մասին։

*** Փոխված է նաև այս թվականը, և վերը բերվածի փոխարեն գրված է «ԳՌԼԷՃՀ.»։ Մեծ դժվարությամբ միայն հնարավոր է լինում վերականգնել նախկին գրածը։

Ի հայոց թուին ՃՀ. (681)· չինեցաւ սուրբ Սիոն ի կուբասլազատին, ի վերայ Գառնոյ հողահատին**, տէր Ներսիսի հրամանաւ։

Գառնոյ մին կողմերն այս է, մինն՝ Շաղուաքայ***, մին[ն]՝ Կոտուայ**** Շահատահն,***** մինչ ի ծովն.******

· Նուիրակս փոխված է, «ՃՀ.»-ի փոխարէն այժմ կարդացւում է «ՄՀԴ» (=795)։

** Սուրբ բառն այնքան մաշված է, որ առաջարկված ընթերցվածքի («հողահատին») ճշտութեան վրա կարելի է կասկածել։

*** Հնարաւոր է կարդալ նաև «Շոսլուաքայ»։

**** Մաշված է և դժուարընթեռնելի, կարելի է կարդալ նաև՝ «կոտուայ», «կոտուց» և այլն։ Եթե ճիշտ լինի վերջին («կոտուց») ընթերցվածքը, ապա, անշուշտ, հիշատակված է «կոտայքն»-ը։

***** կամ դյուղի անուն է (հմմտ. «Շահրխաբ»), և կամ, առավել հաւանականութեամբ՝ ճանապարհի («առևտրական ճանապարհ», «արքունի ճանապարհ»)։

****** Ով ասելով հիշատակվելը, անտարակոյս, նկատի է ունեցել Սևանա լիճը։

441.

Ճ Ա. Շ Ո Ց

Պրոֆ. Դ. Գ. Գորդևևի ձեռագրերից (Թբիլիսի)

Հետ. ստացող Կիրակոս
վայր՝ Անի

Ընդ նմին յիշեսջիք ոյնտի սատցաւղ գրոց գԿիրակոս եր[էց] և զամուսին իմ զԳայիանէ յաղաւթս ձեր, և աստուած յիշողացդ ողորմեսցի յիւրում գալըստեան։ Բայց գրեցաւ սայ ի յԱնի, ի թվ. ՉՂԱ. (1342), ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ, և իրիցկնոջն, և ծնողաց իմոց՝ հաւր իմոյ Շահպատնիկ, և մաւր իմո Նուրայ խաթունին, և եղբարց իմոց՝ Սիմեոնիկ, և Ստեփաննոսիկ, և Աստուածատրիկ, և քուրոչն՝ Թանկ Ազիզիկ։ Ի թվ. ՉՂԶ. (1347),

*Ի յՆզընկան եկի խաղաղութեամբ և եղև մահ տարաժամ, և Քրիստոսի վիճակ յաւ[իտեան]։**

442.

ՄԵՆՆՈՒԹԻՆՔ ՍՈՒՐԲ ԴՐՈՑ, ԲԱՌԱԳԻՐՔ

Թուական 1138

Ստացող՝ Մխիթար
վայր՝ Սիս

ա

417ա *... Զոր և ոմանք սրբամաքուրք և գերիմաստ քաչ բարունիք հայոց, իբր զաշխատասէր մեղու քրտնաջան աշխատութեամբ բազմաբերձ լերանց գյոյժ քաղցրատամ և գլուսատու միտս հաւաքեալ, ծանկեալ ի յագուռն մանկանց եկեղեցւոյ ուսումնասիրաց՝ համառաւտեալ և պայծառացուցեալ բացայայտեցին [աստուածաշունչ քնարս հին և նոր կտակարանացդ]**, որոց յիշատակ նոցա աւրհնութեամբ եղիցի։*

Զոր և ոմն վանական և կուսակրաւն քահանայ, որոյ անուն Ստեփաննոս վերակոչիւր՝ Կանչցի, բազում աշխատութեամբ ի մի տուեալ հաւաքեալ զնախկին բացայայտեալսն ի սրբոց հարցն աստուածազգեցիցն։ Զոր և ես՝ նուաստ ծառայ Քրիստոսի և տրուղ ամենեցուն, ապաստաւոր բանի տեառն Մխիթար կոչեցեալ, ի կողմանց Աղուանից, յաղագս տառապանաց և չքաւորութեան տարաշխարհիկ լինելով եկի

* Կան նաև հիշատակարաններ ՌՁԴ. (1634) և ՌՃԾՐ. (1663) թվականներից։

** Փակագծի մեջ առնվածը մեջ ենք բերում հիշատակարանի սկզբի մասից, որը ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում։

ի նահանգս Կիլիկեայ, ի գառն և յանբարի ժամանակի, ի մայրաքաղաքս Սիս: Եւ տեսայ զցանկալի մատեանս զայս, և յոյժ տոչորմամբ սրտի իմոյ վառեցաւ ի սէր սորա, և ցանգալի՝ թէ լինէր հնար զսա գաղափարել: Եւ վասն զի ոչ էի կարաւղ անձամբ ի կիր արկանել, զի անտեղեակ էի գրչի, և վանաքի մարդով, և կարի աղքատ ի գոյից. և վասն այսր մեծաւ ցաւաւք տարակուսանալ կայի, և տրփմամբ ըզձիւ այրէի ի սէր սորա: Իսկ սփոփիչն ամենայն տարակուսելոց ոչ եթող զիս ի բաց, այլ ոմն քանիւ յորդորելով, և ոմն տրաւք, և ոմն անձամբ աշխատութեամբ, և աւգնականութեամբն աստուծոյ սկսայ: Եւ արարի զաւրինակն յերկուս հատուածս, և եւս զառաջին հատորն ի վանական ոմն գպիր Մկրտիչ անուն, զոր և մեծաւ աշխատանաւք և շնորհիւն աստուծոյ փութով յանկ հանին և լցին զփափագ սրտի իմոյ: Արդ, եղև սկիզբն և աւարտ սորա ի յաստուածապահ մայրաքաղաքս Սիս, ոչ իմոյ կարողութեամբ, այլ շնորհիւն աստուծոյ և աւգնականութեամբ բարի արանց, ի թուականութեանս հայոց ՉՂԶ. (1347), ի հայրապետութեան տեառն Մխիթարա, և ի թագաւորութեան Հայոց Կոստընդեա, և յառաջնորդութիւն քաղաքիս տէր Բասիլիոսի: Արդ, որք վայելէք յայսմ սեղանւոյ յոգնահամ բարեաց, աղերսարկու մաղթանաք աղաչեմ յիշել ի տէր զհոգևոր և զմարմնաւոր երախտաւորսն
417բ մեր, ևս առաւել ։ զայնոսիկ, որ ի գրաւոչէքն մասնակցեցան, ընդ որս և զպարոն Հաճեռ Զագունկն, որ զմեզ յոյժ հայրաբար կու խնամէ. նաև աւբինակին շնորհոզին, և իմոյ անարժանիս Մխիթարայ, և ծնողացն իմոց՝ հոգևորաց և մարմնաւորաց, և եղբարց և ազգայնոց, զոր և հայցեմ յամենատես փրկչէն, զի զյիշաւղգ և դյիշեցեալսն առհասարակ գրեսցէ ի գիրն կենդանի, ի մատեանն վերին դպրութեանն, և վարձ զանճառելին տացէ յորժամ գայցէ փառաւք հաւր փառաւոր լինել ի մէջ սրբոց խւրոց, ամէն:

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ, կամ կարդալով, կամ աւբինակելով, աղիաձեռս մաղթանաւք և բոլորով սրտիւ յիշեսջիք ի Քրիստոս մխով տէր ողորմախն զիս՝ զսուտանունն գրիչս զՄկրտիչ գպիրս, որ զանուն միայն ունելով և գործս սչ, և գհարազատ եղբայրն իմ զտէր Ցոհաննէս մականուն Դանիլմազ, և զծնաւղսն մեր, և որ յիշէքդ, յիշեալ լինիք առաջի Քրիստոսի, ամէն:

Եւ արարի զսկիզբն հատորոյն իմոյ ի մարգարէէն Ցունանու, որ է մինչև ցայժմ քանի տեառ: Սխալանաց և խոշորութեան և անաքհատութեան, որ ի սմա, անմեղադիր լերուք, զի այս չափ էր կար մեր, և յոյժ նեղեաք յազգէն ամայէլեան:

Գրիչ՝ Դաւիթ

բ

101ա Անմահ թագվորն, որ է աստուած,
Հաստատ է իւր գործ արարված,
Փառք իւր վայել է միշտ, զորս է երդած,
յժմ և յաւէտ միշտ զարդարած:

Ո՛վ, սուրբ անբիծդ ըրաբունի,
Ի յայս ի պեղծ ժամանակի
Դու այր արդար ես ի յերկ[ր]ի,
Զոր դու բնակիս ի Սիա քաղքի,
Նա իւր թշնամին շոյտ կործանի.
Յորժամ կարդաս, զոր աստ գրեցի,
Ցիշման արժան գնդրիս լինի,
Որ եմ հմուտ պատվիրանի,
Եւ չեմ զործել ըստ արժանի,
Սուրբ աղօթիւք քո զայս գրեցի,
Շնորհէ առատն, որ ձրի կոչի,
Ես եմ յուսով հաւատալի,
Որ զոր խնդրես յոլով կատրի,
Ես օտաչիս՝ Դաւիթ կոչի
Եւ մականուն՝ Խորիճ գրոդի,
Հօրն իմ՝ Յակոբ իբէց առի,
Որ էր վարպետ այսմ արհեսաի,
Ցիւրմէ փոքր ինչ ես մասն առի,
Զնոյնն և զնաց յիշատակէ,
Որ իմ երկրորդ ստեղծող նաց է,
Դու զվարձն առնուս ի Քրիստոսէ,
Որպէս իւր բանքն հրամաէ,
Մ իոյն հարոյր ինք պարգևէ,

Սակաւ և տխմար բանիս, զոր սղալել լինիմ ի գիրն, մի մեզազրէք, զի ատորնօք էր, և զկատաբել յիշատակարանն ի յերջքն* տեսէք։

գ

183ա ...Նաց, ի ժամանակիս յայս, յոր ի մեծ վիշտ կա երկիրս Կիլիկիոյ յանօրինաց, և ի մեծ նուազութիւն հասեալ, յոր և ի յերկիրն ամենայն ոչ գոյ գեա[ւ]զ քան քաղաք միայն, որպէս մեղուի, որ անցեալ են և ի տեգիս տեղիս ճիռ է ճացեալ, նաց խնդիր ելեալ բարի շաոաւեզ դրոցս սրբասնեալ և պատուական քահանայս ճշմարիտ սուրբ ըստ կարգի Մելքիսեդեկի Մխիթար աբեղայն, որ է բարուն և ինք ոչ առնու յանձն, զորոյ աստուած իր վայելել տացէ և փոխեսցէ զվարս իւր և զզոր[ծ]ս փառաց ի փառս, հաճոյ լինել աստուծոյ հօր և որդոյ և սուրբ հոգոյն, յոր և եկեսցէ առ ինք աստուածութիւն և հանգիցէ և աւթեանս առ նմա արասցէ, և յետ աստից փոխելոյ զվերին հանգիստն տայ իր ընդ ի[ւ՞ր] հաճոյացեալ սրբունքն, և զծնաւղս իւր՝ զհայրն զՈնդրիաս և զմայրն զԼիբատճաճ, և զեղբայր իւր Մխրտիչ, և զամենայն ազգատոհմն իւր։

Նաց ևս աղաչեմ զամենաբարի հեզտ, զխոնարհդ, զնմանող սրաբչին մերոյ, զի և տառապեալս և զմեղաւոր գրիչս, որ չեմ արժան

* Իմա՝ «վերջքն»։

գրել զաստուածաշունչ գիրս գայս, որ կատարեցի զինդրուածս քո և գրեցի պատվական գիրքս գայս, նայ յառանձնական աղօթս ձեր
183բ յիշես, թերևս || ողորմութիւն դտցեմ ի Քրիստոսէ սուրբ աղօթիւք ձերովք, և գուք միոյն զհարիւրօորն առցէք ի յայն, որ պարգևողն է բարեաց առատ՝ ըստ կամաց խնդրողին, որպէս հրամայէ ինք՝ վերկիչն, թէ բախեցէք և բացից, հայցեցէք և գտչիք, խնդրեցէք և տացի ձեզ. նա ըստ սոյն յուսոյ և ես բախեմ, հայցեմ, խնդրեմ ողորմութիւն ի ձէնջ և յաստուածոյ տառապել դերոյս Դաւիթ քխթագրիս, որ ազատէք ի մեղաց, զի զոր գուք աստ թողոյք և տէր յերկինս, ըստ իր անսուտ հրամանին։ Կատարեցօ գիրքս ի բայժին գիրս ի յամսեանն օգոստոսի ԺԷ. (17), որ տօն էր ամենօրհնեալ սուրբ տիրուհոյն Աստուածամօրն, ի մեծ թվին ՉՂՉ. (1347), և վասն այսր գրեցի զյիշատակարանն, որ ի դէմս էր վերջք գրոյս։

443.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5736

Հետ. ստացող՝ Ստեփանոս
վայր՝ Տարօն, սուրբ Կարապետի վանք

314բ Ի թվ. Հայոց ՉՂՉ. (1347) գողացան զսուրբ աւետարանս ի սուրբ Կարապետէն և տարան ի գեղն, որ կոչի Լաւսորմ։ Զոր տեսեալ պատուական քահ[անայն] Կիրակոս, և գնեց զայն ի յարդար ընչից իւրոց, և ետ վերստին ի սուրբ Կարապետս, ի յիշատակ իւր, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց։

Աղղ, որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԿիրակոս քահանայ, և զամուսին իւր՝ զՄարթայն, և զհայրն իւր՝ զԹորոս քահանայ, և զմայրն՝ զփոխեցեալ ի Քրիստոս, ընդ նմին և զպարոն Սերովբէն և զծնողս իւր։

Ես՝ Ստեփանոս հայրպետս, ու այլ միաբանք, որ ուխտեցաք ի սուրբ Կարապետս, որ յամէն տարի ի սուրբ Կարապետի տաւնին զպատարագն իւրեանց առնեանք։*

---

* Գնված և նվիրաբերված ձեռագիրը մի փառահեղ, խորաններով, գլխատառերով ու լուսանցազարդերով հարուստ ավետարան է, գրված 1290 թվականին, Դրագարկում, Թորոս գրչի և ծաղկողի կողմից։ Ձեռագրի մանրանկարչական գործերը կարծել են տալիս, որ վերոհիշյալ Թորոսը կտրող է նույնանալ մեծահռչակ Թորոս Ռոսլինի հետ։ Եթե հաստատվի այս ենթադրությունը, ապա գրչի կողմից գրված ընդարձակ հիշատակարանից հնարավոր կլինի պարզել Ռոսլինի անհայտ կենսագրությունից որոշ դրվագներ. ա) Հայրը եղել է Շատախցի («Ճիշելով իմ զպատմութիւնս ծերունի հաւրն իմո զհայրենի գաւառէն Շաասխ կոչեցելոյ»). բ) Հեռն Բ. թագավորը եղել է նրա հովանավորն ու խնամածուն. նա գրում է՝ «Բ. ամաւ յառաջ տէրն իմ և խնամողն, և անընդմիջելի սիրով սիրողն և անուցողն զիմս նուաստութիւն, բարեպաշտ և աստուածասէր թագաւորն հայոց հանգեաւ ի Քրիստոս ՉԼԷ. (1288), յամսեանն վիտրուարի Զ. (6), յաւուր շաբաթուն», գ) Սույն ձեռագիրը գրել և նվիրել է Տարոնի սուրբ Կարապետի վանքին, որի միաբանները ի դիմաց այդ նվիրաբերության, խոստացել են Թորոսի և նրա ծնողների հոգու համար տարին մի օր պատարագ անել. («Մի աւր զպատարագն ժամարարքն ինձ և իմ ծնողացն արասցեն»)։

Թորոսի ընդարձակ հիշատակարանը գտնվում է ձեռագրի 310բ—314ա էջերի վրա։

444.

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱԽՑԱՐԱՆ

*Երևան 5509**

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Ուրհէ գիւղ

177բ ...Գրեցաւ աստուածայինն... խորհուրդ սուրբ տնաւրենութեանն Քրիստոսի... [ձեռամբ] մեղաւոր և անարժան սոսկանուն քահանայի Ստեփաննոսի, ի գեղս, որ Ուրհէ կոչի, ընդ հովան[ե]աւ սուրբ Աստուածածնի և սուրբ Թորոսի, ի թուականն Հայոց ՄԽԹ. ՁՃՂԶ. (1347), ի թագաւորութեանն Կոստանդնեայ, որդւոյ պարոն Պաղտնի, ի նեղ և ի դառն ժամանակի | | | ։** Որք կարդայք կամ աւրինակէք անարժան և մեղաւոր ախմար գրողիս մեղաց թողութիւն խնդրեցէք, և որք յիշէքգ՝ յիշեալ լինիք յանսիաո ողորմ··թիւնն Քրիստոսի։

445

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7742 (տես նաև՝ 1466 և 1480 ԹԹ.)

Գրիչ՝ Նատեր
վայր՝ Սուրխաթ

ա

250ա Աստանաւր աւարտեցաւ աստուածախաւս մատեանս...

...Այլ և մտաւք սլացեալ և նկատեալ զգերակայիցն կայանս՝ այրս աստուածահաճոյ, սրբասնունդ և սրբագործ քահանայ Մկրտիչ.... կամեցաւ ըստ ազնիւ ծառայիցն արկանել զարծաթն իւր ի տրապէզս ողբոյ...

Աղդ, որք հանդիպիք այսմ փառաւոր և գերազարդ տէրունական պատգամացս, յիշեցէք ի սուրբ և ի մեղսաքաւիչ մաքուր պաւլիս ձեր, նաև առաջի ղենլոյն Քրիստոսի զճշմարիտ և զհեզահոգի քահանայ՝ զՄկրտիչ երէց, և զհայր նորա՝ զՍարգիս երէց, և զմայր՝ զՄարոց, և զերկու եղբայր նորա, զզեղեցկատիպ պատանիքն՝ զՀամազասպ և զԳրիգորն, որ աղայ հասակաւ և մատաղ տիւք յայս ամ փոխեցան յերկրէ, և ելին յերկինս, և խառնեցան ի դաս անմարմնոցն՝ յանխառն խաղաղութիւնն, ըստ ասելոյ իմաստնոյն, եթէ՝ հոգիք արդարոց ի ձեռին աստուծոյ, և ոչ մերձենայ ի նոսա մահ, և եթէ այդպէս է, որպէս և է իսկ ճշմարիտ, այլ սուգ անմխիթար ունաց սիրելեաց և ծնողաց, որոց լիցի մխիթար հոգին սուրբ աստուած։

250բ Ցիշեցէք ի սուրբ պաւլիս ձեր զՄկրտիչ երէց, ամենայն զարմաւք և արեան մերձաւորաւք, ի պապանց մինչ ի թոռունս, նաև զբարեմիտ ամուսին նորա՝ զիբրիցկին Կիրակոսն, այլ և զծնաւղսն

* Ձեռագրի 219ա—221բ էջերում պահպանվել է շատ հետաքրքիր ժամանակագրություն՝ շժամանակագրութիւն ըստ եւթանասնից թարգմանութեանն, ուր գրանցված են հիւրիկյան անցուդարձերը մինչև ՁՂԴ. (1344) թվականը։

** Մի բառ չի կարդացվում։

նորա, և զեղբարսն՝ զգովելիքն և զցանկալիքն բազմաց, որք երիտասարդ և մանուկ ախաւք, յայս ամ միահամուռ եհատ վախճան, և թողին սուգ անմխիթար և տրտմութիւն անբերելի, որոց ողորմեսցի Նոցա տէր Քրիստոս, և թողցէ զամենայն յանցանս նոցա և յերկնայինսն դասեսցէ ընդ ամենայն սրբոցն զասսն, զյիշատակքն մխիթարեսցէ սուրբ հոգին՝ ամենայն ախեղերաց մխիթարիչն։ Ընդ ամենեցուն հուսկ յետոյ յիշեցէք ի Քրիստոս, ով սրբազան դասք լուսերամից, զմեղապարտ և զանիմաստ գրիչս զՆատեր, և զծնաւղսն իմ, և զեղբարսն, և զքուերսն՝ զփոխեալքն ի կենցաղոյս, և զտղայսն իմ զՅովաննէս սարկաւագ, որ քսանամեայ և նա վախճանեալ է Գ. (3) ամաւ յառաջ, և զստրիկն իմ Տիկինն, որոց ողորմեսցի և Նոցա Քրիստոս՝ հարթ ի հոգւով, Այլ և զնկարիչ սուրբ աւետարանիս՝ զորդի իմ զԱւետիս սարկաւագ,* և զմիւս Բ. (2) որդիսն՝ զՍտեփաննոսն և զԳրիգոր՝ պատանիքն, և զՀեղինէն, և զմայր Նոցա՝ զՄլեաւանն, և որք յանձնեցին ի մեզ յիշատակել ի գիրս արուեստից մերոց՝ զբարի հոգին և զնաղրաւղն արքայութեանն աստուծոյ զՄարաք խաթունն, և զքոյր նորա զՄայրապետն. և որք յիշէք թողութիւն խնդրեցէք ամենայն յիշեցելոցս, զի բան ձեր առատ է և տէրն բազումողորմ լուիցէ աղաչանաց ձերոց և զթացեալ կեցուսցէ, զի նմա վայել է փառք, իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւ[իտենից, ամէն]։

Ի ծագմանէ յատնութեանն որդւոյն աստուծոյ էր թիւ ամաց ՌՁԽԹ. (1349), ի դեկտեմբերի Ժ. (10),

Այլ գոյ բան յիշելոյ և յոյժ զարհուրելի. զի մինչև ցայժմ ԺԵ. (15) ամիս է, որ անպատմելի և անթուելի մեռան տարաժամ մահուամբ, սկսեալ յարևելից՝ հիւսիսական կողմամբք մինչև աստ, և զնաց մինչև յարևմուտս, զոր ոչ ոք կարէ ընդ գրով արկանել, զի վասն մեղաց մերոց եկն ի վերայ ամենայն աշխարհի, և դեռևս մինչև ցայսաւր, և ոչ ոք է որ անցուցանել կարէ զբարկութիւնս եկեալ, այլ յոյս մեր և ամենայն ապացելոցս աս ինքն է, որ է ողորմած և գթած, բարերար և բազումողորմ, որ է աւրհնեալ յամենայն արարածոց, յաւիտեան։

բ

251ա ...ի թվ. Հայոց ՁՂՋ. (1347) կատարեցաւ սուրբ մատեանս՝ աստուածախաւս յաշխարհս Հռոմոց, որ այժմ Ղրիմ ասի, ի մեծ և ի հռչակաւոր քաղաքս Սուրխաթ կոչեցեալ, ի հոգետնեաս վերի, աս ոտն սուրբ Նաչին, ի հայրապետութեանն տէր Մխիթարայ, և յեպիսկոպոսութեան տէր Սահփաննոսի, յաթոռակալութեանն Ցռհաննէս իմաստուն և սուրբ կրաւնաւորի, ձեռամբ ամենամեղ և անարհեստ գրչի Նատերի, ի խնդրոյ սրբազան քահանայի Մկրտիչ իրիցու. որք աւգտիք կարդալով կամ աւրինակելով յիշեցէք յաղօթս ձեր զասացօղն և զգրողս, և դուք յիշիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ, յաւիտեանս։

* Ձեռագրում պահպանված նկարները վկայում են Ավետիս սարկավագի բարձր արվեստի մասին։

446.

ՁԱՌԸՆՏԻՐ

Թղեան 3707*

Գրիչ՝ Նատեր
վայրը՝ Սուրխա՞ք

ա

50ա Ով սուրբ ընթերցողք, յիշեցէք ի սուրբ ազաւթս ձեր զտացողք տառիս զԹադէոս ներկարարն, և զորդին իւր զՄուրատն, և զնախնիս նոցա՝ զննջեցեալսն, և զիս՝ զանիմաստ գրիչս զՆատեր՝ իմովք ծնողիւք. և որք յիշէք յիշեալ լինիք ի Քրիստոսէ...։

բ

37բ Քրիստոս որդի աստուծոյ, քո սուրբ ծննդեամբդ յամենամաքուր ծնաւղէն մաւր քո աստուածածնին Մարիամու, ողորմեա ստացողի տո-րա Աբիմելէքայ և ծնողաց իւրոց և քւեր, զի յուսով և սիրով քո ետ գրել զսա. և տուր ի քո անճառ բարեացն մասն և բաժին ընդ սուրբս քո, և զիս մի մոռանար, այլ յիշեա ի քում արքայութեանդ, և քեզ փառք։

գ

40բ Զստաց[ող] ճառիս, զբարեմիտ ծառայն աստուծոյ զՏալիթն յիշեշեցէք ի Քրիստոս...։

դ

46ա Տէր աստուած, քո սուրբ մարդեղութեամբ ողորմեա ստացողի տոր-ա Մարոցին, և թող զմեզս նորա, զի գու տէր կամեցող ողորմութեանց ես և կեցուցիչ հոգւոց. և զքո մեղաւոր գրիչս զնատեր յիշեա ի քում արքայութեանդ, և ասա՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։

ե

50ա Զհեզահոգի և զիմաստնահամիա ծառայն աստուածոյ զծերունի կաւշ-[կա]կարն զՊարոնշահ յիշեցէք, ով քրիստոսասէրք, ծնողաւք, և թո-ղութիւն խնդրեցէք յաստուածոյ...։

---

* Սույն ձեռագրի ընդօրինակության մերձավոր ժամանակը և վայրը որոշվում է հետևյալ կերպ։ կէ. (37) հիշատակագրության մեջ Նատերի կրտսեր որդի Գրիգորը հիշատակվում է որպես ջահանեակ։ Այդպիսին է Գրիգորը նաև 1347 թվականին (տես նախորդ հիշատակարանը)։ Իսկ 1357 թվականին այդ պատանին արդեն վարպետ գրիչ է և իր ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում (ծեռան 8388, էջ 165ա), գրում է «Հայրն իմ զնատեր, պատուական ծերունին, գրագմաց գովելին, յիշեցէք։ Ուստի սույն ձեռագիրը գրված պետք է լինի մերձավորապես 1347 թվականից մեկ-երկու տարի առաջ կամ հետո։ Այդ ժամանակ Նատերը բնակվում և աշխատում էր Սուրբ Թաթուլում, այսպիսով, մեծ հավանականությամբ, որոշվում է նաև գրչության վայրը։

Գ

57բ ԶՀամազասպն և զԳրիգորն՝ զվախեալն յաստեացս մատաղ տիօք ի տարաժամ մահուանէ, և զծնօղս նոցա՝ զՍարգիս քահանայ և զՄարգոցն յիշեցէք ի տէր, ո՛վ սուրբ ընթերցողք։

Է

64ա Զբարեմիտ և զքրիստոսասէրն տիկինն՝ ՍՈՒՀԱՆՈՒՇԻՆ. ծնօղաւք և զաւակաւք յիշեցէք ի Քրիստոս, և զմեղաւորս գրիչս մի մսոանայք յիշել և թողութիւն հայցել ի Քրիստոսէ, զի և ձեզ եղիցի թողութիւն։

Ը

66ա ԶԿարապետ բազազն՝ ծնողաւք և ամենայն զարմաւք, յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սուրբ ընթերցողք և ունկնդիրք, և զմեղսամակարդ գրոցս միով ողորմայիւ ի տէր, և տէր զձեզ յիշէ յիւր փառսն։

Ք

66բ ԶՆզիսէ աստուածասէր ծերունին իւր ծնողաւքն յիշեցէք ի Քրիստոս, և ողորմութիւն խնդրեցէք և թողութիւն մեղաց, և ձերն թողցի աստուծով։

Ժ

71ա Բարեխաւսութեամբ սրբոյն Վահանայ գթած Քրիստոս աստուած ի հոգի...* և թող զմեղսն նորա, և ժողովրդեանս, որ կան և լսեն զնահատակութիւն սրբոյն Վահանայ [Դողթնացւոյ], և զմեղաւոր գրիչս մի մոռանար ի քո արքայութեանդ։

ԺԱ

74ա Զծերունի և զքրիստոսասէրն բարեմիտ տիկինն...** յիշեցէք ի Քրիստոս, ո՛վ սուրբ քահանայք և ժողովուրդք, և թողութիւն խնդրեցէք յաստուածոյ և ինձ՝ գրողիս, և աստուած թողցէ զձերն և զմերն։

ԺԲ

85բ Զցանկացաւղն տեսոյն աստուածոյ զքրիստոսասէրն այրն [զտէր Աւաք եկեղեցպանս]*** յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր...։

ԺԳ

92բ ...Յիշեցէք ի Քրիստոս դվխոխեալն ի կենացս Ա. (40)-ամեայ զՄարտիրոս կնքաւորն իմ, և զմեղաւոր գրիչս զՆատեր, և դու՛ք յիշիք ի Քրիստոսէ...։

---

* Մի տող գատարկ է թողնված, հետագայում ստացողի անունը լրացնելու համար։

** Անվան տեղը գատարկ է թողնված։

*** Փակագծի մեջ առնված նախադասությունները լրացված են այլ ձեռագրերով, հետագայում, գրչի կողմից գատարկ թողնված տեղում։

ժդ

100բ Հայցմամբ սրբոյ վկայիս, Քրիստոս աստուած, ողորմեա ստացողի սորա [Կիրակոս ճոճի] և իւրոցն ամենայն՝ կենդանեաց և մեռելոց, և զմեղաւոր հողս զնատեր գրիչս յիշեա ի քո բարի յիշումն...։

ժե

104բ Սրբոյ վկայիս բարեխաւսութեամբ, Քրիստոս աստուած, ողորմեա ստացողի սորա [Կիրակոսի և որդւոյ նորա Աստուածատրին և Թադուլին], և ինձ գրողիս, և տուր ողորմութիւն։

ժզ

119բ Բարեխաւսութեամբ սուրբ վարդապետացս զքեզ Քրիստոս աստուած ի հոգի ստացողի սորա [Թորոս չուլճակին, և տուր զքո արքայութիւնդ], և ամենայն ժողովրդեանս՝ արանց և կանանց ողորմեայ...։

ժէ

140ա Բարեխաւսութեամբ սրբոյն Սարգսի զաւրավարի, և որդւոյ նորա Մարտիրոսի, և ամենայն սրբոց վկայիցս, ողորմեա Քրիստոս աստուած ստացողի սորա Սարգիս բազազին, և հաւր իւրոյ Խաղութա*, և եղբաւր իւրոյ Խաչատրին, և մաւր իւրոյ, և ամենայն զարմից նորա... և զմեղաւոր գրիչս զնատեր ընկալ ի քո սուրբ արքայութիւնդ՝ իմով ծնողաւք, և եղբարբք, և քւերբք, և տղայիւք, և քեզ փառք յաւիտ[եան]։

ժը

148ա Բարեխաւսութեամբ սքանչելի վկայիցն, Քրիստոս աստուած, ողորմեա ստացողի սորա [Վարդերեսին որդւոյ Նիրատցին, որ է մականուն], և արա արժանի պսակակից լինել նոցա...։

ժթ

150ա Բարեխաւսութեամբ սրբոց Ոսկեանցն և սուրբ Հուսաւորչին Գրիգորի ողորմեա, Քրիստոս աստուած, ստացողի սորա [Մելիխսեդ ոսկերչին և եղբաւր նորա Ասիլին], և Թող զմեղս նորա և զիւր ամենայն ազգացն...։

ի

161ա Քրիստոս աստուած, որդի աստուծոյ, բարեխաւսութեամբ քոյ նահատակացս, որք վասն անուան քո չարչարեցան, ողորմեա ստացողի սորա [զՈւռումպեկի ոսկերիչն] և իւրոցն ամենայնի...։

իա

177ա Բարեխաւսութեամբ սուրբ վարդանանցս ողորմեա Քրիստոս աստուած ստացողի սորա [Սարգիս սարկաւագի, և ծնողաց նորա՝ Գորգուլ], և գրողիս, և ամենայն ժողովրդեանս, և քեզ փառք յաւի[տեան]։

* «Խաղաղութիւն» անվան աղճատված ձևն է։

իբ

198բ Տէր աստուած...զստացող ճառիս զՄելիքն և զբարեմիտ ամուսին իւր զՈսկին արա արժանի միում յաւթեվանաց տան հաւր քո երկնաւորի...։

Սուրբ ընթերցողք այս մատենի
Ցիշման արէք զմեղ արժանի,
Ի յետ ելիցս այս կենցաղի,
Ցորժամ մտեմ ի մէջ հողի,
Ի նեղ 'ւ ի նուրբ աննել բանտի,
Առանց ուրուք աւգնականի,
Կարաւտ լինիմ ես մաղթողի
Եւ բարեկամ բարեխաւսի.
Ի սէր փրկչին մեր Քրիստոսի,
Վասն միոյ ողորմայի
Հայցեմ ի ձէնդ աղերսալի՝
Տէր ողորմեա Նատեր գրչի,
Աղաչանաւք սուրբ Գրիգորի
Հայաստանեայց լուսաւորչի
Եւ Յոհաննու Ոսկիբանի,
Եւ յիշողացդ ողորմեացի,
Այն, որ միայն ընութեամբ բարի,
Եւ նմա փառք յաւիտենի։

իգ

205բ Քրիստոս աստուած...ողորմեա ստացողի սորա [ներկրար Գորգու, և կողակցին նորա Գոհար տիկնայ, և զօակի], և գրողիս...։

իդ

209ա Զաւրինակին տուօղն՝ զՅովաննեսն, և զհայրն նորա զՅովաոուսի քահանայ, և զեղբարք նորա՝ զՍարգիս քահանայ և զՍիմեոն վրաւնաւորն յիշեցէք ի աէր։

իե

270ա Զոսացաւղ ճառիս՝ զԳրիգոր ծերունին յիշեցէք ի Քրիստոս, ով սուրբ ընթերցողք...։

իզ

287ա Զսաացաւղ ճառիս զԹագուորշան և զամուսինն իւր յիշեցէք ի Քրիստոս, և Թողութիւն մեղաց հայցեցէք, և որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ։

իէ

293ա Քրիստոս աստուած... մաքրեա և տաճարացս զհոգի ստացողի ճառիս [զՆղիոսիրին], և զգրողի՝ մեղապարտ Նատերի, և զօրինակիս շնորհողին՝ Յովաննիսին...։

իը

305բ Զստացաւղ սորա յիշեցէք ի տէր՝ զԿիրակոսն, որ ստացաւ զսա յիշատակ իւր...

իբ

310բ Ո՛վ սուրբ ընթերցողք և հաւատացեալ ունկնդիրք, յիշեցէք ի Քրիստոս զստացաւղ ճառիս՝ [զգանկրար Սարգիսն, և զիւր ծնօղքն...], և զապիրատ գրիչս...։

լ

316բ Քրիստոս աստուած,... Թող զյանցանս զստացաւղի ճառիս զՀայրապետ քահանայի և զիւր ծնողացն...։

լա

324ա Քրիստոս աստուած ընդ սրբոյն Յովսեփայ ողորմեա և ընկալ զհոգի ստացողի ճառիս զՄարգարէ ջուլհակին, և զիւր ծնողացն, և զգրողիս, և զկարդացողիս, և որք լսեն սիրով։ Եղիցին աւրհնեալք նաև զոգի եղբաւր Մարգարէին՝ զԱետիք ջուլհակին, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս՝ յառաջ Գ. (3), ամաւ, և ետ գինս գրոցս յիշատակի, Թող նմա տէր աստուած զյանցանս նորա։

լբ

326բ Զստացաւղ ճառիս՝ զպատուելի [ծերն զԱմպէտ կտաւագործն, իւր ծնողաւքն] յիշեցէք ի տէր, ով սուրբ ընթերցողք, և զգրողս...։

լգ

327բ Զստացաւղ ճառիս [զՅովաննէսն և զբարի ամուսինն իւր՝ զԳրոցն] յիշեցէք ի Քրիստոս...։

լդ

333բ Սուրբ յարութեանդ քո, Քրիստոս աստուած, արժանի արա յարութեան կենաց զստացաւղ ճառիս [զՃաշիկ երէցն, ծնաւղաւքն], և զգրողս...։

լե

338ա Ո՛վ, աստուածասէր ընթերցողք և ունկնդիրք այսմ հոգևոր պատմութեանս, յիշեցէք ի սուրբ աղաւթս զստացաւղ ճառիս զՅոն Կիրակոսն և զիւր ծնողսն...։

լզ

340ա Զստացաւղ սուրբ ճառիս՝ զՅահն յիշեցէք ի Քրիստոս, և զԿոստանդ քահանայ, որ փոխեցաւ ի կենացս առ Քրիստոս՝ յոյսն ամենեցուն, և զմեղաւոր հողս՝ զնատեր գրիչս...։

լէ

344բ Հայր ամենակալ...մաքրազարդեա զհոգի և զմարմին ստացողի ճառիս զՄեծպարոնն և զծնողաց նորա...։

ԼԸ

349ա Զստացաւդ ճառիս զՍտեփաճ Վաճեցի յիշեցէք ի Ջրիստոս և թո-
ղութիւն մեղաց խնդրեցէք, և զՍտեփաճոսճ, որ ետ գրել զսա յանուն
Ստեփճա, և զապիրատ գրիչս...։

ԼԲ

388բ Ո՛վ ընթերցողք... յիշեցէք յաղաւթս ձեր զստացաւդ սորա գՒա-
բելի ոսկերիչճ, և թողութիւն խնդրեցէք յաստուծոյ նմա և իւր ծնաւ-
ղացն, զի քէպէտ փոքր է սա քանակիւ, այլ յոգնակի ուրախութեամբ,
և որք յիշէք և խնդրէք արքայութիւն, նոյնպէս ձեզ լիցի թողութիւն...։

ԽՆ

369բ Սուրբ փառաւորեալ տիրուհի աստուածածնին Մարիամ, բարե-
խաւսեա առ սուրբ երրորդութիւնն, զի թողցէ զյանցանս ստացող ճա-
ռիս քո հրաշալի վոխմանն [զՄարգարէ էթանզործճ, և զեղբայր նորա
զԱւետիք ննջեցեալ], և զամենայն ժողովրդեանս...

ԽԱ

390ա Ջրիստոս աստուած...տուր...ստացաւդի ճառիս Սատաւճ ապրե-
փեցին և մեղաւք մեռեալ գրողիս զկենդանութիւն ուրախութեամբ,
զի քո ամենայն ինչ կարելի է, եթէ կամիս...։

ԽՐ

393ա Զստացաւդ ճառիս՝ ղդիւա սուրբ խաչին պատմութեանն, զՈւս-
տիաճէ կին ոճն քրիստոսասէր յիշեցէք ի Ջրիստոս...։

ԽԳ

396ա Ջրիստոս աստուած, քո սուրբ խաչիս բարեխաւսութեամբ արա
մասնակից սուրբ և երանելի Թադուհոյն Հեղինեայ և սուրբ եպիսկո-
պոսին Կիւրղի զոգի ստացողի ճառիս [զԱճճայիճ՝ դիտեցեալոյն ի
Ջրիստոս]...։

ԽԴ

413բ ...Զստացաւդ սուրբ կտակիս՝ զնեբրողեանս անմարճնոցն, զԹո-
րոս քահանայն և ծնօղս նորա յիշեցէք...։

ԽԵ

435բ Ջրիստոս որդի աստուծոյ... Քող զամենայն սխալանս ստացողի
ճառիս [զԿորգճ, և Գուհար տիկինն, և զՆորշաճ, և զկողակից նորա
զՈւսափաճէճ]...։

ԽԶ

481բ Զստացաւդ ճառիս զքրիստոսազգեաց հայրապետին սուրբ Ի-
գնատիոսի՝ զվարդերես ջուլճակճ յիշեցէք ի սուրբ ազաւթս ձեր, և թո-
ղութիւն խնդրեցէք յաստուծոյ։*

* Գրված է ձեռագրի ստորին լուսանցքում այլ ձեռագրով։

խէ

494ա Ի՛րիստոս աստուած...զքա ի հոգի ստացողի սորա [Ստեփաննոս ժամկոչի], բարեխուսութեամբ քո արիւնաներկ նահատակին Ստեփաննոսի նախավկայի...։

խը

497ա ՋՍտեփաննոս հուսգ* յիշեցէք ի տէր և Քողութիւն խնդրեցէք յաստուծոյ, ով սուրբ պաշտաւնեայք աստուծոյ։

խթ

520բ ...Ողորմեսցի տէր մեր Յիսուս Ի՛րիստոս ստացողի սորա [բարեմիտ և քրիստոսասէր կնոջն Սղիսաբէթի, որ շատ աւգնեաց ի կազմ սորա], և գրոգիս, և Քողէ զսխալանս ամենայն ումեք...։

ծ

535ա Ի՛րիստոս աստուած, կամաւ հաւր և սուրբ հոգւոյդ քում էակից փառակցացդ ողորմեա ստացողաց սորա՝ Աստուածատուր քաւկրին, և մաւր նորա Մարքայի, և Լուսերուն, և ամուսնոյն իւրոյ, և այլոց, որք փոքր փոքր աւգնեցին ընչիւք, ըստ կար և ըստ կամս, դու հատարապատիկ հատո, զի քո գործ է ողորմութիւնն...։

ծա

536բ Յիշեցէք ի տէր զհաւատարիմ պատանին զՄաքի դերձակն և զիւր ծնողսն, և Քողութիւն խնդրեցէք յաստուծոյ, և ձեզ լիցի Քողութիւն, և մեզ՝ գրոգիս, և ամենայն ժողովրդեանս։

ծր

542բ Ի՛րիստոս աստուած...արա մասնակից և պսակակից...զստացաւդ սորա [զերկայն Թորոս, ծնողաւքն, և տամբ, և զաւակաւք], և զգրոգս անարժան...։

ծգ

548բ Ի՛րիստոս աստուած...Քող զմեղս ստացողի սորա [զՂարա-Սարգսին, իւր ամուսնաւն և ծնողաւքն], և դասէ զհոգիս սորա մերձաւորազոյն առ սուրբսն...։

ծդ

561բ Ի՛րիստոս, յոյս արարածոց, սրբոց քոց մանկանցն Նիկեսացւոց բարեխաւսութեամբ արա նոցին մասնակից և պսակակից զստացաւդ սորա զԽաւռասն, որ վասն յուսոյն, որ ի քեզ կալաւ զսա յիշատակ իւր...։

ծե

562ա ՋՄկրտիչ ժամկոչն յիշեցէք ի տէր և զաստուած ողորմիսն ասացէք...։

ծզ

565բ ...Յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր զստացող սորա [զԱվրամ կտաւագործն և զիւր ծնօղքն]....

* Իմա՝ ՀՀիւանդ։

ծէ

572բ Ընտացող սորա [զՄարտիրոսն՝ ղորդի Վարդանայ] յիշեցէք ի Քրիստոս...։

ծը

575ա Քրիստոս աստուած, քո սուրբ առաքելոցն բարեխաւսութեամբ տուր վարձս զբարեպաշտ կնոջն Սոփեա, որ պատեաց զքո սուրբ նահատակին...և տուր ի քո լուսեղէն հանգերձիցն այս բարեպաշտ կնոջն սալիթիս, որ այս մատեանի երեք ծածկոց վասն սիրոյ զքեզ, տէր, և որք քո են, և քեզ փառք։

ծբ

582ա Ո՛վ սուրբ քահանայք, ընթերցողք և ունկնգիրք, յիշեցէք ի տէր ...ստացօղ ճառիս սուրբ Մկրտչին՝ զՄկրտիչ դանկագործն, և զհայրն իւր զՎարդապետն, և զմայրն իւր, և թողութիւն խնդրեցէք յաստուածոյ ամենայն մեղաց, և ձեզ լիցի թողութիւն, և Քրիստոսի փառք յաւիտեան։

կ

590բ ...Յիշեցէք յաղաւթս ձեր զստացող սորա [զԹաւտա բազազն], և խնդրեցէք յաստուածոյ թողութիւն...։

կա

617բ Քրիստոս աստուած քո սուրբ և լուսաւոր նշանաւն լուսաւորեա զհոգի ստացողի սորա [զՀեքում դարբինն], և զխաւարեալս մեղաւք՝ զգրող սորա...։

կր

619բ Ո՛վ երանելի սուրբ նահատակ [Դաւիթ Դունեցի]... աղաչեա զտէրն վասն ստացողի սորա [զԱզբարշահ գինեծախն] և գրողիս...։

կգ

621ա Քրիստոս աստուած...ընկալ զոդի ստացողի սորա... [զԳրիգորէս հգեպանն]...։

կդ

630ա ...Խնդրեցէք յաստուածոյ... ի զթասցի և թողցէ զյանցանս ստացողի սորա [սանդրգործ Պարոնշահին] և զգրողիս...։

կե

639ա Տէր աստուած...զխնդիրսն, որ ի քէն ընկալեալ է, տուր ստացողի սորա՝ բարեմիտ և սրբասէր կնոջս Մանանայինն, և արա մասնակից սրբոյն...

կզ

649ա Քրիստոս աստուած... գթա ի ստացող սորա [զՑռվանէս կտաւգործ] և ի մեղաւոր գրողս...։

կէ

658ա ԶԳրիգոր պատանեակն՝ զկր[ա]սեր որդին իմ յիշեցէք ի տէր, զի ի Թղթին կոկելն չատ աշխատեցաւ, հատուսցէ նմա տէր վարձս բարեաց աստ և ի հանդերձեալն։

կը

664բ Եփեպան Տուրբին է ճառս յիշատակ։*

կթ

667բ ...Ողորմեա ստացողի սորա [զՆերկայն Կարապետ ջուլհակին] և ամենայն մերձաւորաց։

հ

671բ Զստացող սորա զՇահ Պալենցին և զԿոստանդ երէց՝ զվոխեալն յիշեցէք և աղաւթեցէք...։

հա

700բ Տէր աստուած, ողորմեա, ստացաւղի սորա Գրիգորու, որ ուրախութեամբ ետ զգինս սորա ըստ տեառն բանին, թէ վաճառեցէք զինչս ձեր և տուք տեառն. և միոյն հազարապատիկ հատուսցէ ձեզ, եւ սա ի չքաւորութենէ իւրմէ զանձն խաբեաց և զհողին ուրախացոյց և արկ ի սեղանն տեառն, և զսա յիշման արժանի արարէք, և որք յիշէք յիշել լիցիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որում փառք։

հբ

713բ Զստացաւղ ճառիս | | | միայնակեացն, որ էր ի տղայութեանն յազգէն Բոծորայ, և երաց Քրիստոս զաչս նորա, և հայեցաւ ի Քրիստոս, և հաւատաց, և եղև միանձնաւոր և սուրբ ճգնաւոր, յիշեցէք յաղաւթս, ով ընթերցողք։

* Գրված է այլ ձեռագրով։

447.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Բբլ. Քնգ. 6 (Or. 2679) կ-նիբր. ծուց. էջ 8

Հետ. ստացող՝ Ստեփաննոս

291ա ...Արդ, յայսմ դառնայեալ և ի տարտարոս ժամանակիս, որ է Թիւս Հայոց տումարիս ՉՂԷ. (1348), քանզեալ և աւերեալ եղև աշխարհս ամենայն առհասարակ յարիւնարբուս ազդէն Նետողաց, և եղև անապատ ի մարդոյ և յանասնոյ, և տարածեցաւ սով... և բազում առաքելաշէն եկեղեցիք դրունքն փակեցան, և աղաւթք և սուրբ պատարագք խափանեցան, և սպասք և սուրբ աւետաբանք գերի վարեցան։ Ծորում հանդիպեալ այսմ սուրբ աւետաբանիս աստուածասէր և երջանիկ քահանայն Ստեփաննոս...ստացաւ զսա յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց Գրիգորոյ և Ղրէլի, և եղբարցն Ըռստակիսի և Ներսէսի, և տիրուհոյ իւրոյ Տիկարի, և քուրոջն Մարքայի, և զաւակացն Թումայի, և Սաղդամելիքի, և Թաճմելիքի, և ազգայնոցն ամենեցուն...։

Արդ, ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց և ի վաստակոց... և ետ վերստին ծաղկել և կազմել զսա...։*

448.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 37, Տ.-Ավետիսյան, ծուցակ, 170-171
(տես նաև 1351)

Գրիչ՝ Սիոն
վայր՝ Վայոց Ձոր, Հերմոնի վանք

289ա-291ա ...Պայծառ և ոսկիանկար աստուածաշունչ զիրս ստանալ կամեցան երկիւղածքն Քրիստոսի Այնախօջայ և բարէպաշտ ամուսինն իւր Բախտիկն, զայս՝ այս աստուածային կըտակ, ի վայելուչն անձին և յիշատակ բարի անուանցն առ աստուած, և ծնողացն իւրեանց, և զաւակաց՝ Մի[ր]անայ և Մարիամիի, և ամեն[այն ա]րեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց։

---

* Ունի նաև այլ հիշատակագրություններ, որոնց բովանդակությունը վերապատմում է հրատարակիչ Գոնիբերը անգլերեն լեզվով. դրանք են. ա) Ռբ.(1553) Թ. Ատուրի (՞), նրա կին Խուվանդի և նրանց որդիների կողմից սուրբ ավետարանը նզովյալի սուրբ Աստվածածին եկեղեցուն նվիրելու մասին (տես նույն ի յիւրհայ ի սուրբ Աստուածածինն, էջ 292), և բ) «Ճիշդեցէք գԴաւիթն, ոչ գնաց գաւետարան[ա]ն և Դ. (4) արծաթն և խաչ մի, որ ի վերայ բեւեռեցին...» (էջ 292)։

Ոբդ, եղև սկիզբն և կատարումն սորին ի նահանգիս Սիւնեաց, ի զաւառս, որ կոչի Զար Վայս, ի մենաստան Հերմոնի վանս անուանեալոյ, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի, ի թուականութեանն Հայկազեանս տոհմի եաւթնհարիւր ևսուն և եաւթն (1348)-երորդի, ձեռամբ Իիոնի, ի գառն և ամբարի ժամանակի խազմ և խռովարար բռնակալւոյն՝ ջնջելոցն ի դպրութենէ անուանդն, ի տէրութեան և յիշխանութեան, որ ի կայս և ի կոյս նահանգաց Սիւնեաց, աստուծով զօրացեալ մեծ իշխանաց իշխանին Բհշքեհնայի և հարազատ եղբօրն նորին Իվանեի՝ որդոց բարի պաշտպամամբ փոխեցելոյն առ Քրիստոս յոյսն ամենեցուցն պարոն Բիրքելիճ:

Արդ, որք հանդիպիք ի վայելումն աստուածային սուրբ աւետարանիս յիշեցէք զարժանին յիշատակի և օրհնութեանց զԱյցախօջհն, և զամուսինն իւր զԲախտիկն, և զաւակս նոցայ՝ զՄիրաճն և զՄաքիաճէ, և զծնողս նորայ, և զամենայն արեան մերձաւորսն:

449.

Մ Ա Շ Տ Ո Ց

Թորոս Աղբաք. Բ. էջ 307 (Սբ. տաճար Թորգանայ)

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Տիվրիկոյ գաւառ, Աւթմճա վանք

...Գրեալ ի գաւառին Տիվրիկոյ, ի վանք, որ կոչի Աւթմճա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ձեռամբ...Ներսիսի. ի թուակ[անութեան] Հայոց ՁՂԷ. (1348), ի սեպտ[եմբերի] Ժ. (10): Արդ, ազաչեմ չմեղադրել սղալանացս...քանզի տեսանէք զբազում դիակունս մարդկան մեռեալս առաջի մեր, եւ ցնդէր միտս իմ իբրեւ զվայրենագնաց գազան եւ հազիւ առ իս ժողովէի յերկիւղէ մահուն, եթէ ոչ ժամանէի յաւարտումն տառիս, քանզի առ մեզ այլ եհաս ի ցաւոց տաբաժամ մահուան, այլ ներողութեամբն աստուծոյ զերծաք...

450.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7857 (տես նաև 1433 թ.)

Գրիչ՝ Աւետիք որդի Նատերի
վայր՝ Սուրիաք

ա

288բ ...Ցամի թուաբերութեանս...տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... ՌՃԾ. (1350) և ի Հայոցն թուականի ՁՂԷ. (1348)* եղև զբաւ դրչութեան սրբոյ աւետարանիս ձեռամբ Աւետիս սարկաւագի՝ նուաստ և յետին գրչի, յաշխարհս Հանաց, որ այժմ Ղրիմ յորջորջի, ի հոչա-

* Թվականի վերջին թվանշանը գրված է այնպես, որ կարող է կարդացվել նաև Ճ, սակայն, ի նկատի առնելով այն, որ քրիստոնեական թվականը նշանակված է 1350, կարելի է անհատած համարել ՁՂԷ. ընթերցումը:

կաւոր և ի հոյակապ քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ի հողմանեաս վերի, որ Ճղրնիս անուանի, առ ոտն սուրբ Աստուածածնի, ի հայրապետութեան տէր Ա[խիքարայ, և յեպիսկոպոսութեան նահանգիս տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի ամենայն հիւսիսական կողմանց, և յերկրորդի նորին Յոհաննես կաւնաւորի՝ կորովամիտ սոփեստի և յոյժ ուղղափառի։ Ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ տեառն Պաւղոսի, ձեռնտուութեամբ Վարդ[ա]ն քահանայի, յիշատակ անջնջելի Յովաննէսի, որ է որդի Պաւղոսի, ի տիս երիտասարդական մեկնեալ յամենայն ցանկութեանց, ցանկալի բաղմոց ի վայրս սրբութեան և ողջախոհ իմաս-
289ա տութեամբ, մաքուր քո|ղաքավարութեամբ վկայեալ ի բաղմոց, կայր խաղաղութեամբ ըստ իւրում կենցաղավարութեանն։ Եւ յանկարծակի իբրև զդող գիշերի եհաս ի վերայ նորա տարաժամ հայրենադիր խորշակ հնչման հողմուն մահու, որ տիրեալ է ի վերայ ամենայն նանրատեսակ բնութեան մարդկան, ժամանեաց ի կէտ կոչման հրամ[ան]աւ անմահին աստուծոյ, և փոխեցաւ ի կենացս, և եմուտ առ Քրիստոսն՝ յոյն ամենեցուն, զանունն ի յերկրի եղող և հոգւով սրբով ել յերկինս, ուր տէրն մեր կամեցաւ, և սուգ անմխիթար և կսկիծ անմոռանալի եղող ծնաւղաց իւրոց՝ Պաւղոսին և Աւագտիկնայ, և եղբարց իւրոց Լուսերոյն և Շնոհրթրին,* և ամենայն ծանաւթից իւրոց. իսկ յաւանդել հոգւոյ իւրոյ զիմաստութիւնն Սողոմոնի արար, որ ասէ թէ՝ իմաստութիւնն յելս ճանապարհացն զովի և զոր ունէ ինչս յաստուածոյ շնորհեալ պարգևացն ոչ եղող անարդ յերկրի, այլ էարկ ի սեղան հոգևոր և զանձեաց յերկինս, որ է եկեղեցի յերկրի, և ետ հրաման, որ զամենայն արդար ստացուած[ս] իւր ժողովեալ՝ ի պէտս քահանայից և եկեղեցւոյ աւան[գի]ցն,** որ և մի է ի յիշատակացն սուրբ և աստուածախաւս աւետարա[նս], որ գրեցաւ յիշատակ և բարեխաւս առ Քրիստոս։ Արդ, որք հա[յն]դիպիք այսմ աստուածաբան մատենիս յիշեցէք ի սուրբ աղաւթս զՅովաննէսն, և զծնօղսն նորա, և զնեղբարսն, և զամենայն մերձա[ւորսն], և զվարդան քահանայ, որ ետ դրել զսա, և զեղբայր նորա զԱ| | |քահանայ, և զնուաստ գրիչս զԱւետիք և զնկարիչ***, և զհ[այրն] իմ զնատեր, և զմայրն իմ, և զեղբարսն. և որք յիշէք՝ [Քողու]թիւն խնդրեցէք ամենայն յիշեցեալոցս, և աստուած զձերն թող[ցէ]։

Բ

Ցիշեցէք և զհոգևոր եղբայրն մեր զվարգիս գանկրարն, զի յոյժ սիրող է և պահող պատուիրանացն տեառն, և հանձնեաց | | | ի գիրս մեր, զոր և դուք պարտիք յիշել ի Քրիստոս, և առ նմին | | | զանպիտան գրիչս զԱւետի[ք], և դուք յիշիք ի Քրիստոսէ, և որ յանդգնաբար ի ջնջե[լ] փութայ բանիցս,որ է | | | և ինքն ի կենաց զպրութենէն։****

* Անունը ջնջված է, բերված ձեր՝ կասկածելի։

** Վերջին տողերի աջ եղերը մաշված են, որոշ տառեր չեն ընթերցվում։

*** Ավետարանիչների նկարները շատ հաջող են։

**** Այս հիշատակագրությունը գրված է 288բ–289ա էջերի ներքին լուսանցքներում։

451.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, ԱԼԲԵՐՏՈՍԻ

Նբևան 104

Գրիչ՝ Անդրէաս
վայր՝ Կաֆա

398բ Ցամի մարդեղութեանն Քրիստոսի աստուծոյն մերոյ ՌՅԾ. (1350),* յամսեանն Նոյեմբերի ի Ը. (8) դրեցաւ տառս, որ կոչի Ալպերտ, ի մայրաքաղաքն Կաֆայ, ընդ հովանեաւ սրբոյն Նիկոլայոսի, յորոյ առաջնորդ և հոգաբարձու էր առաքելաշնորհ եպիսկոպոսն տէր Ոհաննէս, ձեռամբ նուաստ փրտ Անդրէասի, որ է ի կարգէ միաբանողաց...։ Ո՛վ եղբարք, որ և կարդաք և կամ օրինակէք, անմեղ-
399ա դիր լերուք սգալ գրիս, ես դրա ‖ դիր չէի, այլ հարկ արարին ի վերայ իմ գրել։ ։ ։

452.

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ֆ

Վիեն. 293, Տաշ. 8ուց. էջ 721 (տես նաև 1377 ք.)

Գրիչ՝ փրտ Յակոբ
վայր՝ Կաֆայ

Ա

299բ Այս գծածք հանդիսադիր խմբից առաջնոցն տառից տրամախո՛ իմաստասէր մակացու արանց ի Դաւթէ եռամեծէ ընթաղրեցաւ։ Արդ, աղաչեմ զամենեսեան մի՛ վհա՛տ տէր ողորմաիւ յիշել զապերախտս Յիսուսի իմո՝ զաղքատս փրա Յակոբս. յիշո՛ղք յիշեալ եղիջի՛ք...։

Բ

299բ Ցամի ծննդեան տեառն և փրկչին Ռ Յ. եւ Ծ. երորդին (1350),** եւ ի յամսեան յուլիսին կատարեցաւ գիրքս սուրբ առաքելոյն Յակոբա տօնին, փրա Յակոբս աղքատ հոգին, միաբանողաց եղբարց կարգին, ձեռնտուութեամբ աստուածային, գրեցի զգիրս, որ է փիլիսոփայական արուեստին, որ և Սահմանքն Դաւիթ Անյաղթ փիլիսոփին ընդ նմա լինին, ի փառս տեառն համազօրին, եռականին եւ միակին եւ ի պատիւ իսկ միշտ կուսին՝ Մարիամու աստուածածնին, ի մայրաքաղաքն ի Կաֆաիս, ընդ հովանեաւ սրբոյն Նիկոլաոսին, սքանչելագործ հայրապե-

* Ընդօրինակութեան տարեթիվը համաձայն ենք ոչ թե 1350-ը, այլ 1348, որովհետև առաջնորդվում ենք հայկական թվականներով. իսկ քրիստոնեական ՌՅԾ. (1350)-ին համապատասխանում է հայկական ՉՂԷ. (1348) թվականը (տես նախորդ հիշատակարանը)։
** Տե՛ս նախորդ ծանոթությունը։

աին՝ Ո՛վ եղբարք՝ իմաստ բանին, անմեղադիր լերուք անիմաստնին...»*

453.

ԱԻՏԱՐԱՆ

Փչրզ. 6275, էջ 153—153 (Աբուիչբի ակեցեց)

Կազմող՝ Կարապետ
վայր՝ Մատնեռոյ վանիցն

Արդ, ի յայսմ գառնացեալ ժամանակիս, որ է թիւս Հայոց ՉՂԷ. (1348), երջանիկ և ընտրեալ կրօնաւորն Ստեփաննոս՝ հայր և առաջնորդ սուրբ ուխտին Մատնեռոյ վանիցն* և աքանչելագործ զօրավարին սրբոյն Գէորգայ, վերստին ետ կազմել զսուրբ աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն երախտաւորաց սուրբ ուխտին։ Ես՝ ունայնս ի գործոց բարեաց՝ սուտանուն Կարապետ կազմող, աղաչեմ զհանդիպեալսդ սուրբ աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՍտեփաննոս սրբասնեալ կրօնաւորն՝ զհայրն վանից և զմիւս զՍտեփաննոսն՝ զծերունի հայրն, զերանելի կրօնաւորն, որ է բարի բարուք և սուրբ վարուք։

454.

ԱԻՏԱՐԱՆ

Մաքսուդ. Ծուց. Ագուլիսի. 21, Աբարան, 1911 թ., էջ 564—565
(տես նաև 1331 թ.)

368բ ...Ըստ նմին աւրինակի և սրբասնեալ և ուղղափառ, քաջ և արի յաղթող քահանայս Գրիգոր անուն կոչեցեալ, առեալ զսուրբ աւետարանս ի հալալ յարդեան իւրոյ, յիշատակ իւր, և կենակցին իւրոյ Սիմիկիճ, և ամենայն մերձաւորաց իւրոց, և ի վայելումն որդոյ իւր Սեբեկայ և Յորդանանու. և աչ եզև կատարեալ սիրոյ իւրոյ Սեբեկայ ելանել ի կենցաղոս, տղայ մանուկ կենաւք, և եթող սուգ մեծ և գառն կսկիծ հաւր և մաւր և եղբաւր իւրոյ։

Ես Գրիգորս տուի իմ սրտի յաւժարութեամբ զսուրբ աւետարանս Գադիառոյ սուրբ Գերգին, Գրիգոր արեզի ձեռամբն, իմ որդւոյն՝ Սեբեկիճ հոգւոյն յիշատակ, որ քանի աւետարանս կենդանի է յեկեղեցու դռանն, տաքէնն Բ. աւր ժամ կատարեն, մի աւրն քառասնից տօնին, շարաթ աւրն, սպասաւորք սուրբ Գերգին անխափան կատարեն, կատարողքն աւրհնին յաստուծոյ։ Ով յանդգնի, ի հանել ջանայ յեկեղեցոյն, գրաւէ, կամ ծախէ, կամ գողանայ, գվարձքն Ծուգայի

---

* Գրված է անկանոն տառչափութեամբ։

** Փչրզ.ամյանը կցում է հետևյալ ծանոթությունը. «Ընկու Մատնավանք անուամբ ուխտ կայ ի Հայս, մինն ի Տարօն և մէնն ի Բղնունիս, յարևմտից կուսէ Ռշտունեաց ծովուն, բայց ի տղեներ որն է, չէ ինձ յայտ»։

առնու և զԳայեհին և զխաչահանուացն Քրիստոսի, և ոչ լինի քողութիւն և փրկութիւն՝ ոչ աստ և ոչ ի հանդերձեալումն։ Ես Գրիգոր արեղէս վկայ,ես Բոզեդս (*) վկա, ես Գերգո վկա, Ի թվ. ՁՂԷ. (1348), Ես Ստեփանոս այրեզէս, որ զգիրս գրեցի, վկայ եմ,

455.

ԲԱՐՁՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱՊԱԴՈՎԿԱՑԻՈՑ ՅԱՂԱԴՄ ԿՐՕՆԱՒՈՐԱՑ

Եղեան 2811

Գրիչ՝ Ցռեաձես

146բ Քրիստոս աստուած, քո սուրբ և ընտրեալ հայրապետին Բարձրի բարեխաւսութեամբ, և աղաչանաւք ամենայն սրբոց և սիրողաց քոց, ողորմեա ստ[աց]աւղի գրոց, որ չերմեռանդ սիրով ինգրեաց Ստեփանոս կուսակրաւն կրաւնաւորի, ընդ նմին և անարժան գծողիս՝ Ցռեաձես արգելականի, և անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս, զի սիրո է պտուղ և ոչ այլ ինչ իրաց, յիշեցէք և զՅակոբ սա[ս]աւոր մեր և զՄխիթար պատանեկ, և ինքն, որ առատն [է] ի տուրս՝ ձեզ և մեզ ողորմեացի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, Ի թվականիս ՁՂԷ. (1348) գրեցաւ գիրքս։

456.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ե. Լալայան, անտիպ (Վաբգաշէնի սբ. Աստուածածնի եկեղեցի)

Հետ. ստացող՝ Թուղքաճի իշխանուհի
վայր՝ Սրբերան վանք

ա

Փառք...որ արժանի արար զամենայն հաւատացեալս պէս պէս եւ զանազան եղանակաւք զտանել զարքայութիւնն աստուծոյ. ոմանք պահաւք եւ աղօթիւք ապրեցան ի տանջանաց, ոմանք ողորմութեամբ զողորմութիւն ընկալան ի Քրիստոսէ, ոմանք տկարագունիցն աւգնեալով ողորմութիւն զտին յաստուծոյ, ոմանք աղքատութեամբ եւ վասն Քրիստոսի անընչութեամբ ապրեցան, ոմանք մեծոզութեամբ եւ բարեպաշտութեամբ զգանձս իւրեանց յեղլով ի գուռն եկեղեցւոյ՝ հաճոյ եղեն աստուծոյ, որպէս եւ երանելի եւ բարեպաշտ իշխանաց իշխանս Թուղքաճի, դուստր Իւանէ թագաւորատոհմ եւ բարեպաշտ իշխեցոզի Որոտան գաւառի։ Արդ, սայ հարսն բերեալ ի տունս· Հայոց մեծաց եւ թագաւորատոհմն, հարազատ եւ քաջազաւր իշխանաց իշխանին՝ որդոյն Շահուռեցոյ՝ նահանգակալի Հայկազեն գաւառիս Վայոց Ձորոյ, Վահրամայ անուն կոչեցեալ, յազգէն մեծ Տարսայիճենց, եւ ամուսին սորայ՝ նուիրեալս թագաւորատոհմ եւ իշխանաց իշխան, բարեպաշտ եւ աստուածասէր, որոյ անուն Գոհցայ ճանաչէր։ Արդ, Վահրամ իշխան երիտասարդ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս եւ եթող սուգ անմխիթար յետսեացաց իւրոց։ Եւ ունէր երիս որդիս՝ նորայրոյսք եւ ըստընդեայք, թողեալ յաշխարհիս։ Ամուսին սորա Գոհցայ բազմաջան աշխատութեամբ եւ դառն չարչարանաւք հասուցեալ ի չափ հասակի, որ էին պարծանք Հայոց աշխարհիս ցոցայ(*) կոչի Ուխաճ, Ամատայ եւ Հասան, սոքա սպառազինութեամբ քաջացած ընդդէմ այլասեռից, նահատակեցան ի վերայ քրիստոնէից եւ թեքալատար օրով ի Քրիստոս փոխեցան, եւ կրկին թողին սուգ անմոռանալի ծնաւղաց իւր և կենակցաց իւրեանց։

Արդ, Թուխքաճի, կենակից գոլով կորովի եւ քաջայղաւր իշխանին Ամատային, որ ի վերայփոխիլն իւրում եթող մեծ աշխարուճն եւ սուգ տանու Վայոց Ձորոյ։ Եւ ամուսին սորա Թուխ[ք]աճի անմխիթար գոլով յամենայնի, բայց միայն զաստր մի ի սփոփուճն եւ ի մխիթարութիւն անձին իւրոյ՝ Նաթիլ անուն, դեռաբոյս եւ նորայպսակ, զոր տէր աստուած հասուսցէ զնայ, գլխովն իւրով խորին ծերութիւն, ամէն։

Արզ, բարեպաշտ Թուխքաճի յելից զբան հին եւ նոր կտակարանաց, որ ասէ թէ՝ երանի, որ ունի զաւակ ի Սիոն եւ ընտանի ի վերին Երուսաղէմ, եւ զբանն մարգարէին Դաւթի, որ ասէ՝ մարդոյ որպէս խստոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի, այնպէս ծաղկէ, շնշէ ի նմայ հողմն, ոչ է եւ ոչ երեւի տեղի նորայ։ Սայ յիշելով թէ սուտ է կենցաղս այս՝ եղ զյոյս իւր ի գուռն եկեղեցոյ, որ տանէ զարքայութիւն, այս լինի փրկանք առն իւրում Ամատայիւ. եւ գնեց զաւետարանս ի հալալ արդեանց իւրոց յիշատակ իւր եւ ծովայծախալ, եւ գեղեցիկ եւ քաղցրահայեց, եւ առիւծաբազուկ առն իւրում Ամատ[այ]ին, եւ զեռայոյս զաւակին իւրոյ՝ Նաթիլին, եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց, ամէն։

Արդ, ես՝ անարժան Թուխքաճի, դուստր Իւանէ Որոտան իշխեցողի, քոյր քաչ քարտուղարի եւ երջանիկ բարեբունպետի Յովաննէս վարդապետի, հարսն մեծ Շահուռեցեանց, կենայկից հզաւր եւ մեծ իշխանին Ամատին, շինեցի զՆերսէս ժամատունս զԱստուածածնին, եւ դասեր լալեցի (*), եւ գնեցի զաւետարանս ի հալալ արդեանց իմոց եւ ետու Ներսէս սուրբ Աստուածածնին, յիշատակ ինձ, եւ առն իմում Ամատին, ըսկեսեր եւ սնուցչին եւ երախտաւորին իմոյ՝ աստուածասէր եւ բարեպաշտ պարոն Գոնցին, եւ զաւակին իմ Նաթիլին, եւ հաւր իմ Իւանէ, եւ մաւր իմ Տիկնանց տիկնայ, հարազատ եղբարց իմոց Հասանայ և Ջաֆարէի, եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց։

Ով որ զայս եկեղեցիս ծառայեսցէ՝ տարբէն երեք աւր պատարագ կատարեն՝ զտաւն զաւազ հինզշաբթին եւ զվարգեւաւրին եւ զծաղազարդարին, որչափ ես կենդան եմ՝ Ամատայիւ** առնեն, ինչ ես մեռնեմ՝ ինձ առնեն, կատարիչքն աւրհնին յաստուծոյ եւ խափանիչքն դատին ի տեառնէ։

Եւ գնեալ եղեւ սայ ի գառն եւ ի նեղ ժամանակի, ի բռնակալութեան տաճկաց Մելիք Աշրափին եւ Աշտարին(*), եւ ի դանութեան էղիլ Շրւանին, որ էին դատաստանք նոց[ա] ստւերք եւ անիրաւ, եւ իշխանութեան քաչ զաւրավարին Հայոց, աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Բեշխենայ եւ Իւանէ, եւ յետ աստուածասէր եւ երկիւղալից Թազաւորայ[ն]որհ պարոն Բիւրդելին եւ Վախախին, որ ի Քրիստոս փոխեցան։ Ետ սոցա մահուանն անկաւ սով սաստիկ, կատրեցան յերից մասանց Հայոց աշխարհս, եւ յետ սովուս մխիթարութեան եհաս աստուածասաստ բարկութիւն ի վերայ մեր, եւ անկաւ մահ տարաժամ յամենայն աշխարհս, եւ տարաւ զկէսայմասն աշխարհիս, եւ այս վասն ծովացեալ մեղաց մերոց եղեւ։ Եւ գեռ ոչ կու դառնանք, այդ կու աւելունք չարիս՝ նման անաւրինաց։ Եւ զայս ամենայն տեսանելով երկիւղալից Թուղքաճի, ստացաւ աստուածային զանձս հոգևոր։ Ով որ հանդիպիք, կամ ուսմամբ, կամ աւրինա-

---

* Մեր ձեռքի տակ եղած ընդօրինակության մէջ՝ «համա[մ]տին» (*), ուղղում ենք ըստ իմաստի՝ «Ամատային»։

կաւք, յիշեսջիք զաստուածասէր եւ զբարեպաշտ զԳոնցա եւ զՔուղթանի եւ զամենայն վերոյգրեալս ի սմա։ Մի ոք իշխեսցէ հանել զսայ ի սուրբ Աստուածածնէն երեքան, կամ գողանալով, կամ իւիք պատճառանաւք։ Ով որ զայս յիշատակարանս ջնջէ՝ ջնջի ի կենաց գրոյն, ով զայս աւետարանս արտաքս հանէ՝ արտաքսեալ եղիցի յարքայութենէն աստուծոյ։

Գրեցաւ յիշատակարանս ի վանս երեքան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ Գէորգայ զաւրավարիս, ձեռամբ անարհեստ եւ մեզսայմակաւ[գ] եւ փցուն գրչի Վահանայ, ի թուականութիւն Հայկազեան տումարիս ՉՂԸ. (1340)։ Ադաչեմ ընդ վերայգրեալն զիս յիշման առնել արժանի, ով սուրբ մանկունք Սիոնի, եւ աստուած յիշողացդ եւ յիշեցելոցն առհասարակ ողորմեսցի։ Ամէն, եղիցի, եղիցի։

բ

Եւ այս զաւրավարս՝ քաջ Ամատայս, էր նիզակակ[ալ] եւ կորովաձիգ ասպարապետ ի դրան թագաւորաշուք իշխանաց Բիւրքելին եւ Վախախին, սիրեցած յամենից, որպէս հարազատ որդի։ Եւ յորժամ փոխեցաւ առ տէր եւ տրտմեցոյց զամենեսեան, ոչ գոլով ժառանգ հայրենեաց իւրոց։ Եւ վասն յոյժ սիրոյ, որ սիրէին պարոն Բիւրքելն եւ Վախախն զպարոն Ամատայն, եւտուն զՔոռն իւրեանց՝ զորդի Բեշֆենայ զԿուկայն,* ժառանգ էաո(՞) յետայմնաց եւ տէր հայրենեաց Վարեամայ սրդոյ Շահուռեցոյն՝ երեքան եւ Վանցացն եւ Քալատակին եւ այլ հայրենեացն ամենայնի։

Արզ, Կուկայս այս գովելի, սայ որդի մեծ իշխանի Բեշֆենայ քաջ զաւրավարի, որդի մեծի Տարսայիճի։ Սա հրամանաւ իւր մեծ նախնին երեկ տէր այսմ գաւառի, տէր և աստուած յամենայնի տացէ սմա զաւրք գովելի. ըտենց, որ նմանն չլինի։ Յիսուս Քրիստոս՝ յոյս աշխարհի, աւրհնէ զպարոն յայսմ նահանգի, զԿուկոնից զեղեցիկ, զեղեցիկ եւ զեռ[արոյս] կենակիցն իւր զՆայ[քի՞], երկու կենաւք եւ երկու աշխարհաւք պահեայ անսասան մինչ ի խոր ծերութեան սմա։

Արզ, որք այս հա[յրենի]ե[ա]ցս զաւի ան[ի կամ հա]նելոյ չանայ կա[մ] | | | ելն դրկելոյ [հայր]ենեացս | | | հայրապետ[աց նգ]ոված** եւ | | | եւ մասն զՈւզայրն ու զխաչա[հանուացն առցէ՞]***

---

* Ընդօրինակութեան մէջ՝ «զկնի այնց», ուզում ենք ըստ բովանդակութեան։

** Ընդօրինակութեան մէջ՝ «Ով Աձ» (Աստուած)։

*** Այս և ուշհարյուրի չափ այլ ձեռագրերի նկարագրություններ, որոնք եղել են Ե. Լալայանի Ձեռագրաց Ցուցակի անտիպ մասում, այժմ բացակայում են Գետ. Պատմական Թանգարանում պահվող Ե. Լալայանի արխիվից։ Վարդապետի սբ. Աստվածածնի եկեղեցում մի ժամանակ պահվող սուրբ ավետարանի հիշատակարաններին հետ մենք ծանոթացանք պատահական մի ընդօրինակությամբ, որը կատարված է Լալայանի Ցուցակից, 1920-ական թ.թ. վերջերին։ Ձեռագիրը գրված է 1314—15 թվերին։ Գ, դ, ե, զ, հիշատակագրությունները պետք է որ տեղադրվեին նշված թվականի տակ, սակայն մեր ժողովածուի սկզբի մասում լրացումներ կատարելն, արդեն, կապված լինելով մեծ դժվարությունների հետ, մենք 1349 թվաշարքում տեղագրեցինք Թուխթանի իշխանուհու հիշատակարաններից բացի, նաև ձեռագրի մյուս հիշատակարանները։ Մեր ձեռքի

Ձեռագրի գրիչ՝ Բարդող
վայր՝ Նղեգիս ֆաղաք

Գ

Աւարտեցաւ սուրբ եւ տիեզերալոյս վարդապետութիւնս Քրիստոսի աստուծոյ մերոյ կամաւ հաւր եւ նախախնամութեամբ հոգւոյ նորա...ի խուսաբերութեան Ցաբեթական տումարի ՉԿԴ. (1315), յամս տաճքելաշնորհ արհիեպիսկոպոսի տեառն Յովհաննեսի մականուամբ Արքպել կոչեցեալոյ. ձեռամբ նուաստ եւ ոսկեգիր զրչտպետի Բարդողի, աշակերտի մեծ բարեւնապետի Խաչատուր Կեչառուեցի, գծագրեցաւ ի քաղաքիս յԵղեգիս, ի տէրութեան արեաց վեհագունի, իշխանաց իշխողի, մեծ կոմսի եւ կոգմնակալի Բուրքելիս եւ նորին հարազատի Բուղտային, ի խնդրոյ սրբասնունդ քահանայի Սահակայ, որոց ողորմեսցի Քրիստոս աստուած վերագրելոցն ի սմա յահաւոր ի միւսանգամ գալստեան նորա։ Ցիշեցէք յաղաւթս զՅՈհովոր տիկին՝ զմայր Պարսց Շահին, որ բարիոք սպասաւորեց սրբոյ աւետարանիս։

Արդ, ես՝ նուաստ քահանայ Սահակ անուն, որ ստացայ զաստուածընկալ աւետարանս ի հալալ արդեանց իմոց յիշատակ ինձ եւ բարեպարիշտ ծնողաց իմոց՝ Սարգիս քահանայի, եւ մաւր իմոյ Դալաթին, եւ ամուսնոյ՝ Մարիամ, եւ մանկան նորա՝ Յուսկայ, նայ եւ եղբարց իմոց՝ Աբգլմսեհին, եւ Սարկաւագին, եւ Ամենաւագին, Գրիգորոյ, եւ տէր Աւագին, եւ Մուսիսին, Յակորայ, եւ Սեթին, և քուերաց իմոց՝ Տիրամաւրն, եւ Տիրոցմաւրն, եւ Անճա Խաթունին, որով ողորմեաց ի մեզ եւ նոցա Քրիստոս աստուած, | | | յիշեցէք բարի մտաւք զԳրիգորէս, եւ զՈւռուզռաֆանն, եւ զՍարգիս ներկարարն։

Ծրանի զրիս, որ Ճայ կենդանի եւ աւաիս ձեռինս, որ հողանա ի գերեզմանի։

Դ

Միրելի եղբայրն իմ զՊատրիկն, որ բազում կերակրաւք եւ ըմբելեաւք ծառայեաց զմեզ, յիշեցէք ի Քրիստոս։

Ծաղկող՝ Խաչատուր Կեչառեցի

Ե

Բոլորակիս շրջապատի
Դուք յիշեցէք զիս բարուն՝*
Զխաչատուր Կեչառուեցի,
*Թվ. ՉԿԴ. (1314).***

տակ եղող ընդօրինակութեան կատարողը հայտնում է, որ ձեռագրի նկարագրությունը էհատարված ըլլալով շատ անպէտան ձեռագրով, անընթեռնելի է բաղում ուրեք, ուստի և սույն հրատարակությունը ևերծ չէր կարող լինել թերություններից։ Աշխատել ենք, հնարավորին չափ վերականգնել հիշատակարանների աղճատված մասերը՝ ուղղագիծ փակագծերով ու հատուկ ծանոթություններով ցույց ենք տվել մեր ուղղումներն ու լրացումները։

* Թվում է պետք է եղած լինի՝ ղեմ։ Այդ դեպքում հիշատակագրության հեղինակը կլինի ոչ թե Խաչատուր Կեչառուեցին, այլ նրա աշակերտ Բարգադը։

** Գրված է մի շրջանաձև զարդանկարի շուրջը, երկաթագիր տառերով։

Ստացող՝ Սահակ

գ

Աղերս է այս եւ աղաչանք ընտացուլի դրոցս Սահակ քահանայի, քանզի յետ մահուան մերոյ յով որ անկանի գանձս աստուածային [պարտական] են ինձ առաջի աստուծոյ, զի յամենայն ամի երիք պատարագ կատարեսցեն հոգւոյ իմոյ։ Կատարիչքն աւրհնին յաստուծոյ, և որ անփոյթ առնէ, պարտական է մեղաց և յանցանաց իմոց։*

457.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Երևան 1365

Գրիչ՝ Մովսես

վայր՝ ի Ձորս Վայոց, ի վանս Հերմոնի

ա

212բ *Գրեցաւ աստուածային և հոգեբուխ մատեանս ի փառս սուրբ երրորդութեանն և մի աստուածութեանն՝ հաւր և որդւոյ և սուրբ հոգւոյն, ի նահանգիս Սիւնեաց, ի Ձորս Վայոց, ի վանս Հերմոնի, ընդ հովանեաւ սուրբ քաւարանիս Գրիգորի, առ ոտս մեծ վարժապետիս Տիրատուր կոչեցեալ, կամօք և ձեռնտուութեամբ սորին, ձեռամբ Մովսես կրաւնաւորի, անարժան քահանայի, յետին և տկար ի սպասաւորս բանի, ի թուականութեան յարեքեան տոհմիս տաւմարի մերձ*

213ա *|| կատարման վեցտասան յոբելինին, պակաս երկուամ՝ ՉՂՀ. (1349)։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ճաշակէք յանմահական սեղանոյս, յիշեսջիք սեռն սիրով ի միտ բարիս և ի պատկանաւոր խընդրուածս զսուրբ վարդապետն իմ և զհայրն ըստ հոգւոյ՝ զվերոյասացեալդ, այլ և զՍամուէլ կուսակրաւն քահանայ և զՅոհաննես, ընդ որս և զծնողսն իմ և զերախաւորսն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Այլ և զկրտսեր եղբարս իմ Նորսես, որ սպասաւորէր ինձ պղերգութեամբ և յոչ կամաց, և զիս՝ զքազմամեղ դրիչս, դի ի փափագմանէ սրտի գրեցի ի վայելուչն անձին իմոյ։ Եւ նիւթս ոչ պատահաց որպէս կամէի, բայց բանիցն ի ճշմարտութենէ ոչ ինչ նուազեալ...։

Նուիրատու՝ Մովսես

բ

Ես Մովսես վարդապետ զիմ ձեռացագիր նարեկեցիս տվի Նահապետ արեղին յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, ով ոք յիմոց կամ յաւատրաց դաւի առնէ, անէծք զՅուդային առնու և դայլ խաչահանուացն։

* «Պարտական» բառն ավելացնում ենք իմաստը հասկանալի դարձնելու համար։

458.

ԱԽԵՏԱՐԱՆ

Ոգդ. Հանդէս, Բ. դիրք, 1897 թ., էջ՝ 285 (Ջավախք, Վաչիան գիւղի եկեղեցի), տես նաեւ 1337 թ.

Գրչի ևղբայր՝ Սարգիս
վայր՝ Ցղնա՞յ

Ի յայսմ ամի թուաբերութեանս Հայոց ՁՂԸ. (1349), ի գառնացեալ և ի վշտացեալ ժամանակիս, յորում դաւրացեալ է աղդն Իսմայէլի, և բաղում նախատանաւք և արհամարհանաւք տանջեն և նեղեն զազգս քրիստոնէից, մինչև զոմանց ինչս յափշտակեն, և զոմանս տուգանեն, և զոմանց տունս բռնխտանաւք և հերձաւք և զուր բանիւք աւերել ջանան. զոր և սմա իսկ՝ Դանիէլ տանտիրոջս բազում անգամ արարին, որ ի սուտ և ի զուր մատնեցին և հազար դահեկան առին, և սա սրտի մտաւք և յաւժար կամաւք, վասն Քրիստոսի սիրոյն, եա զայն ամենայն, և ոչ տրտմեցաւ, զի փոխարէնն առցէ հաբիւրապատիկ և հազարապատիկ և բիւրապատիկ աստ(՞) և ի սուրբ դատաստանին, ամէն։ Բայց գրեալ իսկ է ի սուրբ աւետարանիս, թէ ընդ ամենայն դատարկ բանից զորս խաւսեցին մարդիկ տացեն համար յաւուրն դատաստանի, զոր արժանի է կրել հերձասացն և բուխաանասացն և զուր մատնագն զպատիժ պատուհասի յարդար դատաւորէն Քրիստոս, և ընդ խաչահանուացն մատնեցին ի հուրն անշէջ, և որդն անքուն, և ի տարտարոսն նեբքին, և թոզուբիւն մի լիցի նոցա, ամէն։

Եւ արդ, սա՝ Դանիէլ տանուտէրս, ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ, և զծնողաց իւրոց Խաղուքնի և Շնռհվորի, և կենակցին իւրոց Թանին, և զաւակացն՝ Խաղուքնի և Խեքնի և Առիւծուն՝ տարաժամ հանգուցելոյն ի Քրիստոս, և այլ զաւակացն՝ մեծի և փոքու, և ամենայն յարեան մերձաւորաց, և ետ զսա անջինջ յիշատակ ի գեղեցիկ և յաստուածարնտկ տաճարս Ցղնոյ՝ մեծի այն սուրբ Աստուածածնին, սր հտնապտղ մանկունք սորա հրճուին սովաւ յընթեռնուլն զսուրբ աւետարանս։

459.

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 2195

Գրիչ՝ Յովաննես*

ա

*Գանձդ անապական և պահապան ամենայն եղելոցս, ազատեալ ի հրոյն յաւիտենից զստացող սորայ զելխաքունն և զծնողս նորայ։***

* *299ա էջի աջ լուսանցքի լուսանցազարդի մէջ գրված է՝* Յ ո վ ա ն ե ս, *հավանաբար գրչի անունն է։*

** *Գրված է 152ր էջի ձախ լուսանցքում։*

բ

Իրքաճոս քահանային մահն, որ ի Քրիստոս փոխեցաւ, ի թվականիս ՁՂԸ. (1349)։ Ակացն* միջնանցն փոխեցաւ։**

Հետ. ստացո՞ղ՝ Ավագ

գ

219ա Մուրը հարք Կոճերեաց ըերթի անապատիզ, դանապատս ի բարեաց ղԱվագ վայդեպյետ*** յիշեցէք ի ժամ ընթերցման ղղիրքս տօնապատճառ ի տօնս տէրունականս, և միով տէր-ողորմի ասելով օգնական լերուք ինձ՝ մեղուցելոյս, թերևս ողորմեացի մեղուցելուս, զի սովոր է ի ձեռն այլոց այլում ողորմել. և սրպէս յիշէք յիշեալ լինիք ի Քրիստոս, ամմէն։

460.

ՏԱՂԱՁԱՓՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Վիեն. 212. Տաղ. 8ուց., էջ 1020

Ցիշատակարան տառիս ի ստացողէ սորին՝
ի նուաստ Յովճաճիսէ Սեբաստացոյ

217ա ...Այլ ես՝ նրւաստըս քո ծառայ
Ցոյժ անպիտանս պաշտօնեայ,
Ձերանելոյս*** գիրն ընթերցայ...
Վասն այնորիկ կարօտացայ
Գրրել ի նիւթ մագաղաթեայ,
Գրչաւ ճարտար, զոր ես ծանեայ,****
Գրճնեալ ոսկւով ի գոյն ծաղկեայ.
Քարեա տախտակն, որ ըստացայ,
Ցիս անմոռաց պահել ըզսայ,
Եւ յիշատակ ինձ առյապայ,
Եւ ինձ եւ իմոցըն մըշտակայ։
Նոյնպէս եւ սոյն տառիս գրողին,
Աշխատողին եւ ստուգաւղին,
Գայծառ ծաղկօք զարդարողին,
Ի շար եւ կապ աւարտողին,
Փափագանաւք ընթերցաւղին,
Ձմիտս ըանկց քննաւղին,
Մաքուր մըտօք աղաւթողին

* Իմա՝ Հագուհացքէ։
** Գրված է 1366ր էջի ներքեն լուսանցքում։
*** Իմա՝ Հայրապետաց։
**** Իմա՝ Ներսէսի Շնորհալւոյ։
***** Գրչին ու ծագկողն է Գրիգոր, գրվել է հավանաբար Սուրբխաչում։

Եւ ստացողիս յըղձմամբ սըրտին,
Ինձ եւ յիմոցըն ամենայնի,
Որ տարփանօք սիըոյ կրկին,
Ետու գրել ինձ ըզսորին։
Ի ծննդենէ մարմնով քոյին,
Ի թիւ յատուկ մի հազարին,
Եըեքհարիւր եւ ի յինին,
Եւ ի մի ամ սկսեալ ամին.
Սակայն ի թիւ ասքանաղեան,
Ցեւքնհարիւր տօմարական,
Ի յիննըսուն աւարտական,
Եւ ի յութեակ թիւն յանգական (1349),
Իսկ ի փոքրիկըն մեը շրջան,
Ցերկուհարիւրն թուական,
Եւ վաթսուն եւ հինգ աւարտական,
Ի վեցերորդ ամին սկըսման։
Ի՛նդ մատուցի նըւերական,
Ձտառըս մաքուր աղօթական,
Ես, որ ծառայս եմ անարժան,
Ի՛ո՝ Յովհաննէս այր անպիտան,
Զի յաներեկն օր քո ծագման,
Ձմեզ ընկալցիս յայոյն կողման։
Եւ քեզ տացուք փառս անվախճան,
Այժմ եւ յապայն եւ յաւիտեան։

461.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 8597 (տես՝ նաև 1614 թ.)

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սարի որ. Գեորգեայ վանք

ա

254բ Գրեցաւ աստուածային այս մատեան ի թուի[ն] Հայոց Ջ Ղ Թ. (1350)-երորդի, յանապատիս Սարի ուրբ Գեորգեայ վանս առաջնելոյ, ընդ հովանեաւ սուրբ մաւրս լուսոյ Աստուածածնի, յառաջնորդութիւն տեղոյս Կիրակոս կրաւնաւորի, ի վայելումն անձին իմոյ և յիշատակ հոգւոյ իմում և ծնողաց իմոց՝ ի Քրիստոս կատարելոց, և որոց ղթացին ի կեանս մեր, ամէն։

Բազձանք հոգևորական սիրոյ զերաղանց զոլով քան զամենայն եսս ցանկալիս մին[չ դ]ի որոց առեալ ունիցին զնա, մոռ[ացո]ւմն ամենայն մարմնականաց իրաց առն[է], որում և ես կցորդեալ ըստ
255ա կարի ‖ ամենաթշուառս հոգւով, տաժանմամբ երկոց ջանացեալ զրեցի զլուսազարդ և զդեղեցկայնոց մատեանս արգասաւոր, ասացեալ և յարգարեալ գործակցութեամբ հոգւոյն սրբոյ յաստուածայնւոյ առն սրբոյն Գրիգորիոսէ Նարեկայ վանաց վանականի, աստուածաշունչ վարժապետի, ի ստոյգ և յընդբելագոյն աւրինակէ, ես՝ Ստեփաննոս կրաւնաւորս, ի վայելումն անձին իմոյ հիքականի և աւժանդակ մխիթարութեան տրտմեցելոյս մեղաւք...։

Աւ որս աղաչանս բազմապիսի, որք հանդիպիք աստուածայինս այս գանձու... ղթողութիւն մերոցս յանցանաց հայցել յամենատառ պարգևացն աստուծոյ և ննջեցելոց մերոց՝ ի Քրիստոս հանգուցելոց, և ամենայն երախտաւորաց՝ նախնեաց իմոց՝ Յորգորոյ և Յորգանաց. Սանվիելի և Սնսրատպի, Թումայի, և Յոհաննիսի, և Գորգոյ, հաւրեղբայրաց իմոց՝ Սիրատրոյ և կենակցի իւրոյ, Հայրապետի և կենակցի իւրոյ, Կարապետի, և այլ առհասարակ ամենեցուն՝ մաւր իմոյ Մարքայի, և Վարդան քահ[անայի], և Աղբարց իւրոց, և ծնողաց նոցին Մ[երու]նոյ | | | * հանգիստ և ողորմութիւն խնդրել ի Քրիստոսէ աստուծոյ փրկչէն մերմէ, որ և ձեզ հասցէ [յոյս]ն փրկութեան
256ա աներևկան ցնծութեամբ ի ‖ նմանէ գտանել յաւուրն յետնում և յանապատ յաւիտենին։ Ընդ նմին յիշեցէք զՄովսես կր[աւնաւոր], և զԿիրակոս կր[աւնաւոր], և զՄարտիրոսեանս կր[աւնաւորք], և զԱնդ-

* Պատռված է։

բհաս կր[աւնաւոր], և զհարազատ եղբայրն իմ զՅոհաննես, զի կայցեն սոքայ ըստ կամացն աստուծոյ, աջն հայրական և բազուկն Քրիստոսի պահեսցէ անարատ, և զաւրհնութիւնն ի բերանոյ աստուծոյ հանգիցէ ի վերայ սոցայ...։ Կրկին աւրհնեսցէ Քրիստոս աստուած զՄովսես և զԿիրակոս կրաւնաւորք, [որք] յոյժ կամակից եղեն գծագրելոյ սոր[այ]։

256բ Աւրհնեսցի Քրիստոս աստուած զՍիմեոն կրաւնաւորն, որ բազում հոգայր ի վերայ մեր, ըստ հոգևոր խրատուց. ընդ նոսին յիշեսցի*, որ զպէտս պակասութեան մերոյ տայր հանապազ։ Աւրհնեսցէ աէր աստուած զանտեսս մեր զԱպրիլուս, որ սպասաւորէր մեզ յաւժարութեամբ։ Ցաւղեսցէ Քրիստոս աստուած զցաւզ ողորմութեան իւրոյ ի հողի և յոսկերս ննջեցելոցս, ընկերաց մերոց՝ Վարդանայ, և Դանիելայ, և Յոհաննիսի, և Վարդիկ իրիցու, և մաւրն իմոյ, և քւերն, և Մարգիս կրաւնաւորացն, և Սուջոդին, որ մլքատէր էր սուրբ ուխտիս, ոլոց ողորմեսցի Քրիստոս աստուած ամենեցուն, և քաղցրութեամբ նայեսցի յամենեսեան՝ յառաջնոցն մինչև ի վերջինսն, և յիս՝ յանպիտան գրիչս, որ չեմ արժանի անուանս կրաւնաւորու[թեան], ով զմեզ յաւժար կամաւք [յիշ]է, հայրն երկնաւոր զնոսայ ընդ առաքելոցն դասեսցէ, ամէն։

257ա Ո՛վ եղբայր և հոգւոյ իմում հարազատ, որ աւրինակ ընգունիցիս զսա ի յայլս գրելոյ, յոյժ վստահացիր ի բանս սորա, զի ի ստոյգ և ի ճշմարիտ աւրինակէ գրեալ և ուղղեալ եմ զսա, ի նմանէ, որ Մխիթար վարդապետն էր գրել և ուղղել, որ ոչ ինչ պակաս գտանիւր ի ճշմարտութենէն։ Եւ այնպիսի խնամ տարեցս սմա, որպէս զքոյին մատանց գրեալ և տաժանեալ ի սայ, որպէս և ես, ոչ ինչ բան և կամ բայ և տառ քերելով ի սմանէ, և կամ յաւելուլ ինչ ի սմայ. այլ և զգուշացիր յամենայն ժժրողաց զսայ՝ ի ցեցոյ և ի կերչաց և ի հիւթոց և յամենայն վատնողաց զվայելչութիւն գորա, միանկամայն և վերարկու ծածկութիւ հոգ տարեցս դմայ, որպէս և իմաստուն վաճառական պատուական մարգարտաց։ Ո՛վ, ստացող սորայ, յորժամ գրաւեսցես զսայ ընթեռնո[ւով] կամ աւրինակելով, ծունր [աղաչե՛մ] կրկն[ել] վասն իմոյ և քոյոյ փրկութեան...։

Վաճառող Յոհաննէս

բ

250ա Ես՝ Յոհաննէս, Աստուածատուր իրիցու որդիս, Ստեփաննոսի եղբայրս ծախեցի զնտրեկացիս Մկրտիչ կրաւնաւորին առաջի աստուծոյ և ամենայն սրբոց | | |**

Գնող՝ Մկրտիչ

գ

257բ Ես՝ Մկրտիչ կրաւնաւորս ստացայ զհոգեշունչ մատեանս՝ զսուրբ Նարեկացիս ի խալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնօղաց իմոց՝

* Անունը ջնջված է։

** Շարունակությունը՝ 6 տող, քերված է։

Ներսեսի և Թաճ Խաթունի, և եղբաւրն իմոյ Յովաննիսի, և քրւերն իմոյ Խէր Խաթունի։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով յիշեցէք յերկնաւորիչ յաղաւթս ձեր զվերոյդրեալսն՝ զմկրտիչ կրաւնաւորն, և զհայրն իւր զՆերսես, և զմայրն իւր զԹաճխաթուն, և զամենայն արեան մերձաւորան։ Կրկին աղաչեմ զձեզ, ո՛վ սուրբ ընթերցողք, յիշման արժանի առնել զհոդևոր մայրն իմ՝ զԹամթայ, զի յոյժ գթայր ի վերայ մեր ծնօղաբար, տէր աստուած զնա՝ իւր ծնօղաւքն, և զյիշողդ զմեզ զամենեսեան հանգուսցէ յարքայութեան իւրում, եւս առաւել զլի սրտիւ աստուած [ողո]րմի սաացողն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Հետ սաացող՝ Ստեփաննոս Սագարածեցի

դ

559ա Զվերջին սաացող սուրբ գրոցս՝ զՍտեփաննոս արեդայն, որ մականուն Սագարածեցի կոչի, յիշեցէք ի Քրիստոս, որ սաացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց՝ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց։ Արդ, որք հանդիպիք սուրբ գրոցս յիշեցէք ի Քրիստոս զՍտեփաննոս կրաւնաւորն և զամենայն մերձաւորքն իւր՝ զկիրակոս վարդապետն և | | |

559բ Արդ, ես՝ Ստեփաննոս կրաւնաւորս՝ սաացող սուրբ գրոցս, եաւ զսուրբ գիրքս Պատրկի վանից սուրբ Աստուածածնիս և սուրբ Գէորգ զաւրավարին, անդինդ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց, ամէն։

Արդ, մի ոք իշխեսցէ ծախել, կամ դրաւ դնել, և կամ հեռացուցանել ի դրանէ սուրբ Աստուածածնիս և Գէորգեա զաւրավարիս, եւ եթէ ոք յանգգնի ծախել և կամ հեռացուցանել, նա մասն գՕուդային առնու և դայլ խաչահանացն, և որոշեալ լիցի ի Քրիստոս, ամէն։*

462.

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆ

Թորոս Աղբաք, Բ. էջ 411 (Տիգրանակերտի սբ. Սարգիս եկեղեցի)

Վայր՝ Վանայ գաւառ,
գիւղ՝ Աւանց

Գրեալ յիշատակ Գեորգ կրաւնաւոր քահանայի, ի Թուա[կանութեան] հայոց ՉԽԹ. (1350), ձեռամբ Յսե[ռնեիս] գծագրող քահանայի, ի հայրապետութեան Զաքարէի հայոց կաթողիկոսի, եւ յառաջնորդութեան գերահռչակ սուրբ ուխտիս Վարագայ՝ համաշունչ եղբարց՝ տէր Սարգսի եւ տէր Պետրոսի, որք հեզութեամբ եւ հանդարտութեամբ հովուեն զբանաւոր հաւտս...։ Գրեցաւ ի գաւառիս Վանայ, ի գեաւղն Աւանց, ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու Կարապետին եւ սուրբ Գրիգորի հայոց Լուսաւորչին...։

* Ըստ հնագրական տվյալների բ. գ. և դ. հիշատակագրություններդ գրված պետք է լինեն կամ ԾԴ. դարի վերջին և կամ ԾԵ. դարի սկզբներին։

463.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 8772 (տես նաև 1371 և 1391 թ.թ.)

...ի թուաժռղովոյ Հայկազեան տոմարի ՉՂԹ. (1350)** գրեցաւ
271ա աւետարանս և ||| կաթողիկեօքն ի ընդիր ||| ** այլ և զգլուխ հո[յ]ակապ ուխտի և զարժանաժառանգ յաջորդ սուրբ առաքելոյս Թադէոսի վիճակի զտէր Զաքարիայ՝ զհանկուցեալն ի Քրիստոս։ Եւ զժառանգ նորին զտէր Տիրացուն, որ է այ[ր բար]եխորհ և իմաստուն, յոյժ անուանի և ամենեցուն մեծա<ր> մեծաց սիրելի, վասն որոյ աղաչեմ զձեզ, զի խնդրեսջիք ի տեառնէ կրկին մաղթանօք, ամենայն սրբոց միջնորդութեամբ և աղերսանօք, զի տացէ զսայ մեզ ընդ երկայն աւուրս, և պայծառութիւն սուրբ եկեղեցոյ և ջահ լուսատու լինել բանիւ և գ[որ]ծով նուաղե[ա]լ ազգիս մերոյ, հանդերձ հարազատ եղբար[ր]ք իւրովք, այլ և նախնեօք հարց և հաւուց, և ամենայն արեան մերձաւորօք՝ կենդանեօք և հանգուցելովք։ Եւ յետ աստէս հրաւիրանաց գասեցի դաս լուսեղինաց երանաշնորհ սուրբ դիտապետացն և հայրապետացն խմբից կաճառակեցեսցէ [իւր]այօքն հանղերձ ||| **

464.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թորոս Ագթաբ, Բ. էջ 391—392
(Արդնոյ Բարձրահայեաց սբ. Աստուածածնի վանք)

Վայր՝ Սուխտաք

...Դրեալ ի թվ. ՉՂԹ. (1350), ի հայրապետութեան տէր Մխիթարայ ուղղափառ հայրապետի, ի թագաւորութեան Կոստանդիանոսի, յեպիսկոպոսութեան այսմ նահանգի հիւսիսական կողմանցս հեզահոգի եւ գեղեցկատիպ եւ յոյժ ողորմածի տէր Ստեփաննոսի, եւ երկրորդի նորին՝ Յոհաննէս արեղայի Սերաստացւոյ՝ ուղղափառ հռետորի եւ իմաստասիրի, եւ յաշխարհակալութեան Զանիպէկ դանի, եւ իշխանի քաղաքի Ռամատնայ՝ իմաստուն դատաւորի։

---

* Ջնջված հնի վրա հետագայում, նոր թանաքով, գրված է ՆՂԲ. (1050) սխալ թվականը, համոզված ենք, որ ՀՆ-ի տակ գրված է եղել ՀՉ, իսկ ՀԲ-ի տեղ նշանակում ենք ՀԹ, որովհետև այն վերափոխվածի տակից կարդացվում է և այսօր։

** Թերթ է ընկել։

465.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ ԵՊԻՓԱՆՈՒ

Վիեն. 11. Տաշ. Ծուց. էջ 107

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Սերաստիա*

857 Փառք...շնորհել մանկանց յատագաստի յիշատակ Ասլանին, եւ ի վայելուչն Աւետիս* քահանային...զոր ընկալցիս աստուածորդի... զճգնութիւն սուրբ Գրիգորի...Հայոց ազգի լուսաւորչի, տէր Սիմեոնի հայրապետի, որոյ գաւառս Սերաստի, աթոռ սորա մենաստանի, եւ սուրբ Նշան եւ Սուրբ Գէորգ զօրավարի...յիշատակ պարոն Ասլանին, եւ կենակցին՝ Թանմելէքին, եւ ծնոզացն Պարոն Ծերին, եւ Քիմիա խաթունին, եւ եղբարցն Տումանին, եւ յաստուած փոխեալ Սիճանին, եւ Պախր խաթունին, եւ զաւակացն՝ Պարոն Լուսին, եւ Ծերին եւ Ասաբբէկին, Սանամ խաթունին, եւ զաւակացն՝ Սրապին, եւ կենակցին Տայուս խաթունին, Անպետին եւ Կուճաշին...

Գրեցաւ զիրքս աստուածային ի թուականութիւնս Հայոց ՁՂԹ. (1350), ի վայելուչն Ասլանին... եւ գրողի սորա Ներսես կրոնաւորի, հարց եւ մարց եւ եղբարց մերոց, մեր մեղացն եւ յանցանացն թողութիւն խնդրէ...՝**

* Տպված է «Աւետիս»:

** Սույն հիշատակարանը Նպիփանի ճառերի ժողովածուի հետ մեկտեղ արտագրել է 1853 թվին Սահակ վարդապետ Ամասիացին, իր արտահայտությամբ «յօյնպիսի օրինակէ, որոյ գրիչն գոլով անարհեստ, բազումս աշխատեցոյց զմեզ»:

466.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 37, Տ.- Ալէքսեյան, ծուցակ, էջ 170—171
(տես սկիզբը 1348 թ.)

Նուիրատու՝ Բախտիկ
ծաղկող՝ Գրիգոր
ստացող՝ Մաթեւոս

Արդ, ես՝ ծառայ տեառն, աղախին,
Բախտիկ անուն կամ և տանջիմ,
Զօրն կու յիշեմ ես զահագին,
Ծորում գործեալք մեղք մեր յայտնին,
Ցայնժամ վառի հուր գեհենին,
Բազում ոգիք մարդկան այրին,
Գայ Թագաւորն այն մխածին,
Նստի յաթոռ դատաստանին,
Աջակողմեանքն ուրախ լինին,
Ձախակողմեանքն պապանձին,
Հրեշտակք ի յայն յահէն [սարսին],
| | | արկեալ Թագաւորին (*)։
Ցայնժամ չօքտէ մարդկան տոհմին.
Ազգք և ազինք անյայտ լինին։
Չօքտէ զաւակ և իւր որդին,
Դստերք ծնողաց չերբեխաւսին։
Ցայն ատենէն ես ինց փրկիմ,
Կամ ով ինձ տա վկայութիւն.
Զաստուածածինն ես յոյս ունիմ,
Եւ բարեխաւս առ իւր որդին,
Ով զիս փրկէ յայնմ ժամին,
Ի յայն յահեղ հրապարակին,
Բայց յիշելով այժմին սարսիմ
Եւ ես ի յայն ահէն հալիմ։
Զմտաւ ածի Թէ ինչ լինիմ

Կամ որ ծիսով ես պրծանիմ*

. . . . . .

Կանգնի զիմաց սուրբ սեղանին
Մեղսաքաւիչ պատարագին,
ԶԱյցախօջեն, որ կէանք էր իմ,
Թաֆ և պարծանք գլխոյս էր իմ,
Նայ ե զծնողն, որ մեր էին
Եւ զմերձաւորն, որք մեր էին։
Նուաստ Գրիգորն, որ գրեցի,
Զծաղիկս և գիրքս կազմեցի,
Ի Հայկազեան թուականի
Ցուլհարիւրին (1351) կատարեցի,
Ի գառն և ի նեղ ժամանակի,
Որ հալածին բազում յերկբի,
Ոմանք ծնացի[ն ի] մէջ թփի,
Ոմանք կերակուրք ելան գայլի,
Սովով անցան շատ մին ոգի
Հարք ուրացան զիւրեանց որդի,
Ամ իմ կամք չէր, որ ես ծաղկի
Ու·կամ կամաւ ես կազմէի,
Ես վատատես յաչէցս** էի,
Բայց հարկ արին ու ամաչէի.
Ես աղաչեմ զձեզ մէկ բանի՝
Զպատճառէք վասն սխալի,
Ցիշման արնէք զիս արժանի
Սուրբ աղօթից վասն Ցխսուսի։
Արգ, ես՝ Մաթուխլ, որ յանձն առի,
Եւ չորս ամեայ փափաք կացի,
Զքանս Ցխսուսի գրել տվի,
Մինչև տեսայ ծաղկով ի լի,
Ի յիշատակ Այցախօջի
Եւ կենակցին իւր Բախտիկին
Ցիշեսջիք | | | յամ | | | ն ան. առ | | |

. * Մի շարք տողեր, թղթով կարկատված լինելու պատճառով, մասամբ գրձել են անընթեռնելի. այդ տողերից կարդացվում են հետևյալ բառերը.ը | | | ող ելայ եո հրա- | | | ման | | | յորում գրեալքնըն փ | | | ն, թէ գանձեցէք ձ[ի՞ղ գ]անձ անդէն, որց | | | ւսէ գողք հատան | | | այժմն գտեալ եմ գա[նձ ա]նգէն, յօժարութ[եամբ | | | ավի դէն։ Ով ընթերցող բանիս փ | | | ն կամ փափաքի | | | լինակէն, յիշե[ցէ]ք զիս, որ ես փըր- | | | կիմ, | | | է անցանքն իմ քա | | | Զգիրքս [տվի] ես տէր Մաթուէոսին | | | յն կուսակ- | | | րօն օհին. (քահանայէն), որ զիս յիշէ | | | ժմէն | | | որ | | | խորհուրդ նա | | | փրկչէն։

Շարունակությունը պահպանվել է առանց տուժելու վերանորոգումից (տես վերը)։

** Ընդօրինակության մեջ ըաչիչա։

467.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 2745 (տես նաև 1557, 1604, 1616, 1619 և 1738 թ. թ.)

Գրիչ՝ Կիրակոս
վայր՝ յՈրկիրս Լևոնոյ (Կիլիկիա)

ա

6ա Զստացողք սուրբ աւետարանիս զՅոհաննայ, և զծնաւղսն ի[ւ]ր՝ զՀարուն և զԽրել, և զբարի կենակիցն իւր զՈսկին, զբարի ծաղկեալ զաւակ սորա՝ զՅովաննես, և զՀարուն, և Սարգիսն, և զՄխիթարն, և զԽազարրեկն, և զհանգուցեալ մայր սոցա՝ զՍիրեն, և զկենակիցք սոցա յիշեցէք, և զհանգուցեալ եղբայրն՝ զՍտեփաննոսն, և զզաւակ սոցա՝ զՅուսէփն և զԱմիրն յիշեցէք ի Քրիստոս, որ ստացան զսա ի խալալ արդեանց իւրոց յիշատակ իւրեանցն, և ծնաւղաց իւրեանց, և ամենայն արեան մերձաւորաց իւրեանցն, և յիշատակ բարի հոգոց իւրեանցն; ի վայելուչն բարի ծաղկեալ զաւակաց իւրեանց...։

Աղղ, ղրեցաւ յիշատակարանս սյս. Թվ. Պ. (1351), ի չար և ի դառն ժամանակիս, զի փախ[ուցեալ] էաք յերկրէն Ախբակո, ի պատերազմէ այլազգաց [| | | իշխանէն՝ Աշրաֆին, և գրեցաք յերկիրս Լևոնոյ, ի բարձր | | | այս, բացաւթ էաք ի ծաղկազարդ վայելչութիւնս և մ[աւտ ի յա]կունս Տիգրիս գետոյս, ի պանդոկի միոչ, զի ոչ գոյր | | | հովանոցք մեր, և մեք զաւրն ամենայն ահաբեկ լինէաք և | | | ըստ այլ (՞) ի տեղիս տեղիս։ Աղաչեմ զձեզ յիշեցէք զիս [գրե]ալարտ գրիչս և զնկարող և զկազմող սորա՝ զկիրակոս [քահ]անա, և զծնողսն իմ ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ. և զմեզ և զձեզ հ[րաւիր]է ի խոստացեալ հանգիստն և զամենայն հաւատացեալսն | | | մէն. և Քրիստոսի աստուծոյ մերս փառք յաւիտեանս, ամէն։

բ

2բ Զարուեստ նկարագրութեան և ծաղկերանգն գունոց ոչ գիտեմ։ Զհամաբարբառս ընկալ և զստ[աց]աւղ սորայ և զաշխատողս յիշեսջիք ի Քրիստո., և Քրիստոս զձեզ յիշէ ի բարի, ամէն։

468.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս Աղբաբ. Բ. էջ 356—357 (Ավշան գիւղէ սբ. Գէորգ եկեղեցի)

Գրիչ՝ Ազարիա
վայր՝ Նկեղեաց գաւառ

...Սուրբ աւետարանիս ցանկացող եղեալ Հայրապետ քահանայն եւ ետ գրել զսա յիշատակ իւր եւ զաւակի իւրոյ Յակոբայ...Աւգնա-

կանուխեամբն աստուծոյ առեալ զսա յանձն քահանայ ոմն Սիմեոն անուն, եւ գրեաց զմաթէոս գլուխն ի լրման եւ զմարկոսն մինչեւ ի հարիւր եւ ի տասն համար, առ գրան Հայրապետ երիցու եկեղեցւոյն՝ սրբոյն Յակոբայ եւ սուրբ Թորոսու։ Եւ եղեւ, զի վասն չար եւ գառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց, բազում գեղ աւէր եւ անբնակ եղեն ի մարդոյ եւ յանասնոյ, սա ելեալ յՍկեղեաց գաւառէ գնացեալ հեռաբնակ գաւառն, եւ ինացեալ սուրբ աւետարանս քերականաւոր ժամանակս բազումս։ Իսկ նախասացեալս Հայրապետ երէց, եղբայր գոլով մեր ըստ մարմնոյ, յոյժ բռնագատեաց վասն սորա զի զկատարս։ Եւ առցէ։ Եւ ես ոչ առնուի յանձն յաղագս տկարութեան անձին իմոյ եւ զի չէի հմուտ այսմ գրչութեան աբեհասի։ Ապա նա եւս առաւել յորդորեալ զմեզ, զի հանապազ եկեղեցին մեր կացցէ յիշատակ մեզ և ծնողաց մերոց, և ի ժառանգութիւն զաւակի մերոյ Յակոբայ, եւ ես վստահացեալ ի զաւրութիւն աստուծոյ, առեալ ի ձեռն զսա գրեցի եւ զպակասութիւն սորա լցի ըստ կարողութեան անձի իմոյ...։

Գրեցաւ ի գաւառիս Սկեղեաց, ի յանապատիս, որ յանուն սուրբ Կիրակոսի, մերձ առ ի ստորոտս լերինն Բքնոյ, զի է տեղի հանգըստարան մերոյ, ի թուականութեանս Հայոց Ղ. (1351)...։ Ծիշեցէք... եւ հայցեցէք գթողութիւն մեղաց առաջին աշխատողին եւ գրողին սորա Սիմեոն երիցու... այլ եւ մեղուցեալ անձին իմոյ Ազարիա աբեղայի, որ զյետին գիրս գրեցի...։

469.

Ա Խ Ծ Ա Ր Ա Ն

Վէնետ. 00, Մաքս. 8ուց. Ա. էջ 400—410

Հետ. ստացող՝ Յակոբ
վայր՝ Հռոմ

ա

276բ Զվերջին ստացաւդ սորա զՅակոբ կրաւնաւոր, որ ստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց, ի Հռոմ քաղաքի, ի թվին Հայոց Ղ. (1351), ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի Քրիստոս զբարի ծնողսն իմ զԱստուածատուրն և զԱսլիմհիջն, նայ և զեղբարսն իմ, և զքոյրսն իմ, և զազգաինսն իմ միով տէր ողորմեաւ. նայ և զիս՝ զբազմամեղս՝ Յակոբ աբեղաս, որ անուամբս կոչիմ աբեղա և գործովս լի եմ ամենայն մեղաւք։ Ո՛վ սուրբ ընթերցաւզք, յերես անկեալ աղաչեմ զձեզ, յիշեսջիք զմեղաւոր հոգս...։

բ

83բ Ես՝ Յակոբ արեղաս, ի կարգէն սրբոյն Բասիլիոսի, ավի զիմ աւետարանն ի սուրբ Աստուածամաւրն Հայոց եկեղեցին, ու առի Դ. (3) սոմ(՞) Հոռմայ ճամբուն, որ մարզ ան աւետքնին տէր չի լինի քան սուրբ եկեղեցին, ոչ ես |ոչ| իմ եղբա[յ]ր, բայց միայն սուրբ Աստուածածին, ով այլ տէր ելնէ, վախէ աստուծոյ մաւրէն։ Այս իմ ձեռացս գիր է, Յակոր արեղայիս վկաւութեան բանիս, ինքն Քրիստոսի (՞) անդարձ | | |*

470.

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Տրեան 8400

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Մերտին, Թվին մեճաստան

266բ ...Գրեցաւ սա ի թվ. Պ. (1351), ի մայրաքաղաքս Մերտին, ի մենաստան Թվին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յովհաննու Կաթապետիս, ձեռամբ յոգնամեղ փցուն և անարհեստ գրչի Վարդանի** սուտանուն քահանայի, ի խնդրոյ մանկագոյն քահանայի Բարսղի, որ ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ուսմամբ, կամ աւրինակելով և կամ տեսութեամբ, յիշեսջիք ի Քրիստոս զվերոյգրեալն զՔարսեղ քահանայ, և զծնողսն իւր զՅակովբ և զԱդեկտիկին, և զկենակիցն նորին, և զդեռաբոյս որդին զԱռաքել, և զամենայն մերձաւորս նորին, ընդ նոսին և զմեղապարտ գրիչն, և ծնողս իւր զԱռաքել քահանայ և զՆազեր, և զեղբարսն իւր՝ զՆերսես, և զՅուսիկ, և զՄարգիս՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, և զքուերսն՝ զԽելաւքն՝ իւր տղայաւքն, և զԱդեկն՝ իւր տղայաւքն։ Եւ որք զմեզ յիշէք և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Եւ խոշորութեան և սխալանաց անմեղադիր լերուք, զի կար մեր այս էր, և զորս սխալ գտանէք եղբայրաբար ուղղեցէք։

Ցիշեցէք ի Քրիստոս. և զհոգևոր որդին մեր զտէր Աւագն, որ սպասաւորէր զմեզ, և զպարոն մզոսի Թաթուլն, որ զթուղթն շնորհեաց յաւգնութիւն գրոցս. եւ որ առատն է ի տուրս բարեաց՝ Քրիստոս աստուածն[ս] մեր՝ ձեզ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

* Թերի է։
** Բնագրում՝ «Վրդիչ»։

471.

ՃԱՇՈՑ

Ե. Լալ. անտիպ. 678, Պատմական թանգ. (Վանի Արարուց եկեղեցի)

Նորոգող՝ Գրիգոր

Զսուացող վարդափրիք բուրաստանիս զԻրրիաննոս քահանա, և զհայր իւր զՏիրատուրն, և զմայր իւր՝ Մամբաե, և զեղբայրս իւր, և զամուսին իւր յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նոսին և զեղկելի գրիչ... զԳրիգոր սուտանուն քահանայ ի մաքրափայլ յաղաւթս յիշեսցէք զիս, և զծնաւղսն՝ զԻրրիաննոս քահանայ, և զմայրն իմ՝ զՄամիկ, և ասասջիք միշտ տէր ողորմեայ։

Թվ. Պ. (1351), ահեկի. Լ. (30) աւրս նորոգեցաւ։

472.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6273, էջ 153 (Մարդուան, սր. Աստուածածնի եկեղեցի)

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Եզնկայ

...Եղև գրաւ գրչութեան սորա ի թուաբերութեան արեթական գրոհի Պ. (1351), Գրեցաւ տառս աստուածայինս և տիեզերաքարող աւետարանս ձեռամբ սուտանուն քահանային Յակոբայ, մայրաքաղաքս Եզնկայ՝ ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին, ի հայրապետութեան Հայոց տեառն Մխիթարայ։ Արդ, աղաչեմ զձեզ՝ դասք քահանայից, որք հանդիպիք այսմ աստուածախօս մատենիս կարդալով կամ տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զեղկելի գծողս Յակոբ, և որ առատն է ի տուրս բարեաց՝ ձեզ և մեզ ողորմեսցի։

473.

ՄԱՆՐՈՒՄՈՆՔ

Երևան 758

Գրիչ՝ Գրիգոր

Գրեցաւ տէտրս Լ. (30) աւր։

Արդ, զրեցօ սա ձեռամբ անիմաստ գրչի և յոյժ մեղապարտի Գրիգոր անուամբ միայն արեզայի։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ երգարանի, յիշեցէք յաղաւթս ձեր զիս՝ զանար ‖ ժան
246ա *գծողս զԳրիգոր <գծողս>, և զծնաւղսն իմ՝ զհոգեհորն և զմաքրիանաւորսն, ընդ նմին և զստացաւզ տառիս զՅովսեփ կուսակրաւն քահանայ, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ իւր և ծնո-*

զաց իւրոց։ Արդ, որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք յարաժամ զՅովսէփ մանուկ կրաւնաւորս, և զծնաւղսն իւր զԹումա քահանայ, և զմայրն իւր զՄարեմթազն, և զեղբայրն իւր զՂազարն, և զքոյրն իւր
240բ զԹուրանմելիքն, և զայլսն ամենայն, զի և դուք լիջի || ք յիշեալ ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Թվ. Պ. (1351)։

474.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7750

Գրիչ՝ Մկրտիչ

127ա Յամի ուԹհարեւրեքորդի (1351) կաւարեցաւ սուրբ կտակս աստուածախաւս, որ է աւետիս փրկուԹեան հաւատացելոց ի Քրիստոս, ծախիւք և արդեամբ աստուածասէր առն Սահակայ, որ եւս գրել զսա ի յիշատակ հոգւոյ եղբաւր իւրոյ Սիմեոնիւ, որ մանուկ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս, և ծնողացն իւրոց Մեծկացն և Դրոցիւ, և հարազատ եղբարց իւրոց՝ Կարապետիւ և Սահակիւ, և զաւակաց իւրոց։

Արդ, որք աւգտիք և լուսաւորիք ի հոգենորոգ աստուածարանուԹեան սուրբ աւետարանիս, յիշեցէք յաղաւԹս զստացաւղքս, որ ի սմա աշխատեցան և յորոյ անուն կատարեցին, և Քրիստոս զձեզ յիշեսցէ յիւրսմ գալստեանն, զյիշաւղդ և զյիշեցեալքս, ամէն։*

263բ Ես Մկըրտիչ երէցս գրեցի զաւետարանս յիշատակ Սիմեոնիւ։

* Համանման հիշատակարան գտնվում է նաև 264ա էջում։

475.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թվական 7631 (տես նաև 1466 թ.)

Գրիչք և ծաղկողք՝ Աւագ և Սարգիս [Պիծա՞կ]
վայր՝ Կիլիկիա

260բ *Ո՛հ, զմեղաւոր հողս զԱւագ վարդապետ զանարժանս, զոսկաւոդ և զծաղկող սուրբ աւետա[րանիս], յիշ[ել] աղաչեմ։*

Նայ և զանարժանս Սարգիս երէց, որ բազում աշխատութեամբ, ի զառն ժամանակի, որ էր Թիւս Հայոց ՊԱ. (1352), կատարեցի զսա իմով անձամբ և ձեռաւք, ի խնդրոյ մեծ և հռետոր բարուն[յն] Ավաք կոչեցեալ։ Որ ինքն մեծ բարունին գրեալ էր զաւետարանս զայս մինչև ի յՂուկաս, ու վանց որ այլ մագաղաթ չկայր, նա ձեռացել էր կիսկատար. նա, վասն յոյժ սիրոյն Քրիստոսի, կու ջանայր, որ ի գլուխ ելանէր սուրբ աւետարանս այս։ Ցորժամ կամ եղև աստուծոյ, որ մեծ բարունին Ավաքն եռափուփաք սիրով կու խնդրէր յաստուծոյ, որ ի գլուխ ելանէր, նա կատարեց աստուած գիւր խնդիրքն ու պատրաստեց զանաւքն գրոցս, որ կատարեցաւ ի փառ[ս] աստուծոյ, ամէն...

476.

ՋԱՓԱՐԵՐԱԿԱՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Թվական 4311

Գրիչ՝ Կիրակոս
վայր՝ Աղբակոյ գաւառ, գիւղ Եաշենց

ա

141ա *Ձեզ աղաչեմ, որպիք մարդկան,*
Սիրող բանիս տէրունական,
Ցորժամ կարդայք ղրանս ողբական
Սուրբն Ներսեսի գրաւորական,
Ցիշէք ըզսէրն արքայութեանն,
Սիրտ ձեր ողբայ 'ւ աչերդ լան,
Զկարապետ սուրբ քահանայն
Ցիշէք յաղաւթս ձեր արժան,
Ստացաւ բղսայ մեծ փափաքմամն
Անձինն իւրոյ վայելչական
Եւ յիշատակ իւրոյ անուանն,

Զծնօղ սորայ՝ զսուրբ քահանայն
Թումայ անուն, զմայրն աննմանն,
Առնէք զսոսայ յիշման արժան
Ի յաղօթելն ձեր արժան։
Եւ զԿիրակոս անձն անարժան,
Որ զբանս գրեցի աղօթական,
Առնել զմեզ յիշման արժան
Ցաղօթելսյն ժամուն զղջման,
Ով մեզ առնէ յիշման արժան
Իւր շատ յանցանքըն թեթևանան,
Ի միւսանդամ սուրբ գալըստեանն
Բազմի յերկնից արքայութեանն
Երգել բղվաոս միշտ յաւիտեան։
Գրեցաւ սայ ի յԱղրակոյ գաւառիս,
Ի գիւղ անուն յոյս Խաշնոցիս,
Ընդ հովանեաւ սուրբ Մարիանիս,
Ի յութհարիւր և մի թվականիս (1352),
Ի գառն և չար ժամանակիս։
Ի զօրանալ այլայսեռ ազգիս,
Ի փախըստեան ժամանակիս
Գրեցաւ ձեռամբ մեղապարտիս,
Եւ ի ձմերան ժամանակիս.
Մի մեղադրէք ինձ՝ գրողիս,
Վասըն խոշոր և սխալ գրիս,
Զի դողութեամբ ախն ի սրտիս,
Գրեցի անժուժ զբան Ներսեհսիս,
Զի ահն և դողըն պատէր ղիս,
Զեռս դողայր ի վեր[այ] թղթիս։*

բ

117բ Ով, եղբայր ի յայս մէջս Ե. (ե) թուղթ թողի վասն այն, զի արարչական շարականներ յամէն շաբաթնոց կայ, և թուղթըս սակաւ էր, և անուփախս ի հետ, որ յամէն ոտն մեռանէաք. դու մի մեղադրէք թէ պակաս է, լուր ջանք դիր, որ զայս կարդաս և լուսաւորիս։

477.

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ

Երևան 2233

Գրիչ՝ Մաճուհլ
վայր՝ Երուսաղէմ

338բ ... Արդ, ի մանկութենէ նա՝ [քաջ բանի սպասաւոր Մխիթար

* Սույն հիշատակարանին նախորդում է գրչի կողմից հորինված ընդարձակ և պատմական արժեք չունեցող մի ոտանավոր, որի տնտոտառերը հոդում են՝ ՀԿիրակոսի է երգս այս նախաբասութիւնք։

կուսակրօն քահանայս]*, ի տիս տղայութեանն հետևող գոլով քննութեանց գրոց և բանասիրաց իմաստնոց, և զայն՝ սակս օգտի հոգոց և տենչանաց երկնից արքայութեանն, ջանս և աշխատութիւնս ոչ սակաւ տարեալ եղև ի հաւաքել զրաղում գրեանս, և որ ինչ մարմնաւոր պիտոյից անկանէր ի վաոս աստուծոյ՝ ի մատեանս աստուածայինս ծախեալ լինէր. նոյնպէս և զքարոզղիրքս ետ գրել ի վայելս անձին իւրոյ, և ի մխիթարութիւն հոգւոյ, և յետ աստեցաս՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօր իւրոյ Անդրէասի, և մօր իւրոյ Լիբանանայ և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Արդ, որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով յիշման արժանի արարէք։

Ալդ, զրեցաւ գիրքս այս ի հայրապետութեան տեառն Մխիթարա և ի թագաւորութեանն Հայոց Կոստանդեայ։

Եւ որ եմք ընակեալքս ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, սուրբ և արհի եպիսկոպոսիս մերոյ վեհազոյն աթոռոյ սուրբ առաքելոյս Ցակոբա,
337ա նախ և առաջին սուրբ եպիսկոպոսի ‖ այժմս յայսմդիսի և մեր վերապիտապեսի, հեղի և անարատի, շնորհօք ողորմութեանն աստուծոյ առաքելական աջոյն արքեպիսկոպոսի սուրբ քաղաքիս Երուսաղէմայ տէր Բասիլիոսի, որով ծանիցի լսողաց զկնի սուղ ժամանակիս անցելոյ, զի յաւուրս սորա ոչ երբէք երևեր ի բնակիչս սորա ամբարտաւանն, զի ամբարտաւանք ի սորա կարի և անչափ խոնարհութիւնն հայելով, ամաչեցեալք լինէին, և ոտանաին զեղութիւն և զխոնարհութիւն, և յամենայն տեսակս առաքինութեան զարդարեալ էին, քանզի որպէս և վայել էր աստուածակոխ և աստուածաբնակ քաղաքիս այնպիսի տեսուչ և առաջնորդ, զնոյնն աստուածային տեսլութեամբն շնորհեալ, ի վայելս սուրբ, անարատ և անապական սուրբ Դերեզմանիս, սուրբ Գողգոթայիս, և սուրբ Համբարձմանն, և սուրբ Ժամադրութեանն տեղւոյ, նաև գերեզմանի սրբուհոյ Աստուածածնին. զոր թէպէտ և ժամանակս խիստ էր գառն, սակայն սորին քաղցրութիւնն զամենայն քաղցրութեամբ անցուցանէր։ Եւ ողորմած կամք սորին ոչ միայն յաղքատս, այլև յայնոսիկ, զորս յարկածից չարին, յորս այս հազրից(*) ջնասակարին սահեալ և անկեալք, նոցա. տիրապէս զութ շարժեալ, զիրկս արձակեալ ի ծոց իւր ժողովէր, և սիրով հանգաբտութեան զամենեսեան խրատէր. քաղցելոց՝ հաց, ծարաւեացն՝ ջուր, մերկիցն՝ զգեստ, օտարաց՝ ժողովոց, հիւանդաց՝ այցելու, բանտարգելոցն՝ խնամածու, և առհասարակ ամենեցուն տածող և վերակացու և ծաղիկ մխիթարութեան երևեալ ի հիւծեալ և ի մաշեալ ժամանակիս, զոր տէր Ցիսուս, ըստ վերոյգրելոցս շնորհեսցէ զտէր Բասիլիոս ընդ երկայն աւուրն ուղիղ վերակացութեամբ, պարգեւաց ամօք, երկարեալ ժամանակաւ մեզ ամենեցուն, և ցօղն օրհնութեան սրսկեսցէ ի յոգիս ննջեցելոց իւրոց, և զտրիտուր վոխարինին հատուսցէ նմա աստ և ի հանդերձելումն, և օրհնեսցէ զնա հոգով և մարմնով, կրկին կենօք և երկու աշխարհօք, ամէն։

* Ուղղագիծ փակագծերում բերված է 336ա էջի հիշատակագրության սկյալը։

337բ Այլ և զպատուէլի եղ[բ]արքս մեր, զերկոքին Թորոս՝ զփակակալ և զխոստովանահայր, որ վասն յոյժ խոնարհութեանն և համեստութեանն, թէպէտ հասակաւ տղա գոլով, սակայն խելօքն՝ կարի ուշիմ և հանճարեղ, զոր ամենեցուն հլու և հպատակ հրամանաց, սիրեցեալ յամենեցունց՝ կացուցեալ եղև ի վերայ երկուց մեծամեծ գործոց, զոր տէր Յիսուս պահեսցէ անմատչելի ի գործս իւր, ամէն։ Եւ զմիւս Թորոս՝ հայրպետ մեծահանդէս մենաստանիս սուրբ Յակորայ, և զոր ի սորին համբերութիւնն և յանբերելի խօսակարգութիւնն նաեցեալ, որ ոչ երբէք բարկացող և ոչ զոք անարգող և զառնացուցանող, այլ ամենայն չարի և բարոյ քաղցրութեամբ տանէր, և ամենեցուն լինէր խնամօղ և գթած առ ամենեսեան, վասն որոյ հայրն երկնաւոր պահեսցէ զնա անվնաս ի գործս իւր, և անարատ պահեսցէ հոգով և մարմնով ի կամս ողորմութեան իւր։ Այլ և զհամաշխարհակ և հրեշտակերամ աստուածարեալ եղբարքս համահաւաքեալ յամենայն Հայաստան աշխարհս, ի սահմանաց հեռաւորաց և մերձաւորաց, անսասան պահեսցէ ի միաբանութիւն և յարաշարժ յամենայն առաքինութիւն, հանդերձ հովուապետաւս մերով տէր Բառիլիոսիւ, և զայն ի պարծանս աշխարհս բարեհամբաւեալ և ի փառս և ի պատիւ սրբոյ երրորդութեանն, ամէն։

Ե։ զՄանուէլ քահանայ և զծնողն իմ, որ զգիրքս գրեցի, [ով ընթերց]օղ, աղաչեմ յիշել ի տէր։ Եւ զՄոմեր միայնակեաց, երախտաւոր եղբայր մեր յիշել աղաչեմ։ Եւ աստուած առհասարակ յիշողացդ և յիշեցոլոցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեան։ Թվ. ՊՀ. և ի մին (1352) գրեցաւ, ի քաղաքիս Մար կոչեցելոյ։

478.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վասպ. 1. Լալ. 8ուց. այուն. 5—7

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սուրխաթ

ա

...Ես՝ տկար և անարժան հողս վերջին Քրիստոսատուր կոչեցեալ, ցանկացաւղ և փափաքաւղ եղեալ աստուածապատիւ և յոգնառատ փարթամութեան, ի նեղ և ի գառն ժամանակի... ետու գրեալ զսա ի վայելուչն անձին իմոյ և յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց, ի թուականութեան ասքանաղեան և յարեգական տումարի ՊԱ. (1352), ե ըստ նորում շրջանի ՄԿԹ. (269), և ի գալստենէ կենարարին ՌՅԾԴ. (1354), ի հայրապետութեան Հայոց տեառն Մխիթարայ, և յեպիսկոպոսութեան յամենայն հիւսուսական կողմանց տէր Ստեփաննոսի աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Յիսուս պահեսցէ ի կամս ողորմութեան իւրոյ, ամէն։

... Արդ, այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս

փափաքաւոյ եղէ ես՝ տառապեալ ոգի Քրիստոսատուր կրաւնաւոր, մեծաւ ըղձմամբ և սրտալից յաւժարութեամբ, Քաջահաւատ յուսով և Քրիստասասէր բաղձանաւք եռու դրեալ զսուրբ տառս, որ կոչի աստուածաշունչ ի վայելումն և ի վարժուն անձին իմոյ և յիշատակ հոգւոյ իմոյ, և հաւր իմոյ Կարապետին, և մաւր իմոյ Սուրաբին, և երկուց հաւուցն իմոց՝ Նօսարին և Առիծին, և եղբարց իմոց՝ Մովսէսին և Ծովհաննիսին և Աստուածատրին, և քերցն իմոց՝ Թագուշէ և Մարթային և Սառային, և հաւրեղբաւրն իմոյ՝ Աւետիս քահանային և Սիմեովնին, և պատ[ուական] Անտոնին, և եղբաւր նորին՝ Տաւնականայ՝ փոխեցելոյն առ Քրիստոս, և հաւրաքեռն իմոյ զԱմենտիկնայ, և Ք. որգեաց նորա՝ Պատուականայ և Պիտնայ, նաև քեռոյն իմոյ Ամիրշահին՝ փոխեցելոյն առ Քրիստոս, և ամենայն արեան մերձակայից իմոց...։

Բայց գրեցաւ սա յաշխարհիս Հոնաց և ի յերկիրս Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Սարգսի զաւրավ[արի], ձեռամբ անխմաստ և յետին գրչի՝ Ստեփաննոսի սուտանուն քահանայի, ի լաւ և յընտիր աւրինակէ։

Արդ, աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասս քահանայից, որք ընթեռնուք և լուսաւորիք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զյիշատակեալսս ի սմա զՔրիստոսատուր կրաւնաւոր, և զծնաւղս իւր..., և զսպասաւոր մեր Գոհար խաթունն, որ բազ[ում] աշխատանաւք ըզքուզին նշայեաց և կոկեաց, և զհայրն իմ զԳրիգորիս քահանայ, և զմայրն իմ զԱչխազատն, և զքոյրն իմ Սիրմայն, և Հոիփսիմեն, և զեղբայրն իմ զՅովհաննէսն՝ փոխեցեալսն առ Քրիստոս, և սխալանաց և խոշորութեան գրոյս շնորհեսցէք մեզ, զի կար մեր այսքան էր և ոչ աւելի։

Յիշեսջիք ի Քրիստոս և զՄելքիսեդեկ միայնակեացն, որ բազում աշխատութեամբ և ջանի՝ միջնորդ եղև բանիս և յաւժարեցոյց զՔրիստոսատուրն և զմեզ, տէր աստուած զվարձս բարեաց պարգևեսցէ նմա...։

բ

... Զպատուելի և զհոգեշահ այրն և զլեցեալն ամենայն գործովք բարութեան՝ զպարոն Ստեփաննոսն, և զհամեստ ամուսինն իւր զՈւստիանէն, և զծնաւղսն իւրեանց, և զորդիս նոցին՝ զՅիրացուն, և զՏիմօթն, և զԱստուածատուրն, որ ի գեռ հասակի փոխեցաւ յաշխարհէ և եմուտ առ Քրիստոս՝ յոյն ամենեցուն, և զայլ ամենայն արեան մերձակայս իւրեանց՝ զկենդանիս և զհանգուցեալս, և զհարսունս նոցա յիշեսջիք ի Քրիստոս, որ աւգնական եղեն ի նիւթ սորին, և ինքն աստուած, որ առատն է ի տուրս բարեաց աստ յիշելեացս և ձեզ՝ յիշողացդ առհասարակ ողորմեսցի յիւր մխսանդամ գալստեանն...։*

* Գրված է Մնացօրդաց գրքի վերջում։

գ

*Զստացօղ սորին զԿրիստոսատուր կրաւնաւորն և զծնօղսն իմ յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին և զմեծ հեղինակն՝ զհայրն աշխարհի զԱւետիք վարդապետ, զոր խոտաճարակ կոչեն, որ բազում աշխատութեամբ և ճշդրտիւ սնոյց զմեզ մինչ հասոյց յարքունս հասակի, և արժանի արար զանարժանութիւնս մեր դասել ի կարգս կրաւնաւորութեան, թէպէտ և վեր է քան զարժանն մեր, և ինք փոխեցաւ ի ներկայէս յաղատնութեն. տէր աստուած ողորմեսցի նմա վարձս բարեաց յարքայութեան իւրում և աղօթիւք նորա՝ ամենայն աշխարհի, ամէն։**

պ

*Ո՛վ եղբայր, եթէ ես վարժեալ ի ծաղկութեն բանից, վասն ստուգաբանութեան աւետարանիս իմացիս, եթէ ընթեռնուս մտաւորաբար, և մի ընդ վայր թուի յայս քո, վասն զի գաղափար սորին ի հոգևոր ուխտն էր գրած, զոր Դրազարկն անուանեն. իսկ եթէ աւրինակեո ի յայլ՝ զկէտն, զտունն, զքաշն, զհարն, զգլխագիրն, զհամարքն մի անցանիր, այլ ջանա ջանիւք, զոր ինչ գրած է ի սմա այնպէս գրես և այնպէս ընթեռնուս, և զՍտեփաննոս անխմաստ գրիչ յիշեա աղաւթիւք...։***

479.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7698 (տես նաև 1647 թ.)

Գրիչ՝ Սահակ
վայր՝ Սուրխաթ

262բ ... *Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ նուաստ և յետին գրչի* Ստեփաննոսի *մեղապարտի, ունայնագործ մեղաւորի, ի թվականութեանս ասքանազեան և արեթական տոմարի ՊԱ. (1252) և ըստ նորումս շրջանի· ՄԿԹ. (269)****, *և ի գալստենէ կենարարին ՌՅԾԴ· (1354), ի ստոյգ և յընտիր աւրինակէ, ևս առաւել համարայիցն, զի գաղափար սորին ի հռչակաւոր անապատին էր գրած, զոր Դրազարկ անուանի, ի յաշխարհիս Հոծաց և ի յերկիրս Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի* Սուրխաթ, *ընդ հովանեաւ* ‖ *սուրբ Աստ-*
263ա *ւածածնին, և սրբոյն Սարգսի զաւրավարին, և այլ բազմահաւաք սրբոց, ի հայրապետութեանն Հայոց տեառն* Մխիթարայ, *և յեպիսկոպո-*

---

* *Ծորայ գրքի վերջումն։*

** *Ծովհաննու ավետարանի վերջումն։*

*** *Նոր թվական ասելով գրիչները միշտ ի նկատի են ունեցել ԾՁ. դարի նշանավոր բանաստեղծ, գիտնական և տոմարագետ Սարկավագի տոմարը, որի առաջին տարին համապատասխանում է 1083 թվականին։*

սուրբեան ամենայն հիւսիսական կողմանց տէր Սահփանոսի, աւրհնեալ քահանայապետի, զոր տէր Քրիստոս պահեցէ ի կամս ողորմութեան իւրոյ, ամէն։

263բ ... Արդ, այսմ աստուածապատում ե քրիստոսասէրդ տառիս ցանկացօղ եղեալ աստուածարեալ և պատուական կուսակրաւն քահանային Յովհաննեհս, ետ դրել զսուրբ աւետարանս ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ։ Արդ, որք հանդիպիք ոմն ընթեռնելով կամ զաղափար առնելով, յիշեսջիք ի մաքրափայլ և ի սրբամատոյց յաղաւթս ձեր զպատուելի կրաւնաւորն զՅովհաննեհս՝ զտացօղ սորին, և զհայրն իւր զՎարդան քահանայ, և զմայրն իւր՝ զՇարեր, և զեղբայր իւր զՅովհաննեհս կրօնաւոր, և զքորքն իւր՝ զԲոմզօսն և զՓոբրտիկիննն, և զհաւրեղբայրն իւր զԳրիգօրն, և զեբկու մեծ հաւն իւր՝ զՅովհաննեհս երէց և զՎարդապետ երէց, նաև զեբկու հանն իւր՝ զԹիմայն և զԽնկօֆն, և զԹամարն։ Որ մեծաւ փափագանօք և սրտաջան յօժարութեամբ, և քաջահաւատ յուսով և քրիստոսասէր բաղձանօք ետ դրել զսուրբ աւետարանս ի փրկութիւն կենաց իւրոց և ի լուսաւորութիւն հոգւոյ իւրոյ, յիշատակ իւր և ծնողաց և եղբարց և ամենայն զարմից, զանձ յաւիտենական և անպատճոյճ ճոխութիւն, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ և յուրախութիւն ուխտի մանկանց նազելի մաւր մերոյ նոր Սիոնի։

Արդ, աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դաս քահանայիցդ, որք ընթեռնուք և լուսաւսրիք, յիշեսջիք զվերոգրեալսս ի սմա, և զիս՝ զՍտեփանոս մեղապարտ զրիչ, և զծնօղսն իմ, և զեղբարս, և զքորս, և զամենայն արեան մերձակայս իմ, և որ յիշէ սրտի մտօք և ինքն
264ա յիշեալ լիցի առաջի ահեղ ատենին Քրիստոսի, ուր բանք սպարին ‖ և գործք թաղաւորին, առաջի արդար դատաւորին Քրիստոսի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։ Եւ որ հաւատով ամէն ասէ և նմա ողորմեսցի, ամէն։

480.

ՃԱՌԸՆՏԻՐ

Ըրևան 7443 (տես նաև 1728 թ.)

Վայր՝ Ղրիմ, ի վանքս Քիմնակի

608բ Ցամի ՊԲ. (1352) թուականիս Հայոց գրեցաւ տառս բազմաժողով և պատմութիւնք ընտիրք և ուղղափառք յուղղափառաց շարագրեալ ձեռամբ երկուց գրչաց՝ Անտոն իրիցու և Մելիքսէդ միայնակեցի, ի խնդրոյ և ի ստանալոյ Քրիստոսատուր քահանայի՝ հեղհեղի և մաքրակրաւն աբեղայի, յաշխարհս Ղրիմի, վանքս Քիմնակի։*

* Լուսանցքում, այլ ձեռագրով գրված է՝ «Քիմճակ, որ այժմ Թուրքաց լեզուաւ Թեքէ ասի, զոր յառաջ գիւղ էր եղեալ Քիմճակ անուն, և սուրբ Աստուածածնա [վանք] մի մօա ի գեղն, և անգր է գրեալ ճառընտիրս ի փառս աստուածոյ»

Արդ, որք հանդիպիք այսմ մատենի, յիշեցէք ի տէր զդրողք սորա, և զստացող սորա՝ զՔրիստոսատուր արեղա, և զծնաւղսն նորա՝ զԿարապետն և զՍուրարն, և զեղբարսն՝ զՄովսէսն, զՅովաննէսն, զԱստուածատուրն, զքուէրսն՝ զԹագուհին, զՄարթան և զՍառան, և զպապքն՝ զԱռիւծն և Նոհարն, զքեռին իւր՝ զԱմիրշան, և զհաւրեղբարքն՝ զԳրիգորն, զԱւետիք երէցն, զՍիմէոնն, զհաւրաքոյրն՝ զԱմենեխինն, և զորդիքն նորա՝ զՊետեանն և զՊատուականն և զԱնտոնն, որք կան և որք փոխեալ են, և զամենայն արեան մերձաւորս, ես և զեբարեխաւսորսն, որք աւգնեցին ի գիրս, որ շատ և որ սակաւ՝ ըստ կարի և ըստ հաւատոց, և յիշելոցս Թողութիւն խնդրեցէք յաստուածոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւտեանս, ղի և ձեզ դոցի Թողութիւն...։

Ցայսմ ամի էր վերադիտող այսմ աշխարհի և ամենայն հիւսիսային կողմանց տէր Ստեփաննոս և երկրորդ նորա՝ Յոհաննէս արեղայ, այր ընտրեալ և դովելի յաւրէնսն աստուծոյ, ուղղափառ կրաւնիւք։

481.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7337

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Կաֆա

ա

331ա Շնորհիւն աստուծոյ ամենակալի սկսայ և ողորմութեամբ խնամոց նորա կատարեցի զսուրբ և ցանկալի աւետարանս յաւրինակէ սրբոյն Սահակայ հայոց Թարգմանչի և երկրորդ լուսաւորչի հայաստանեայցս ի թուականիս ՉԱ. (1352), յաշխարհս Ղրիմ, ի քաղաքս Կաֆա, ընդ հովանեաւ սուրբ Ծըրդուբեանն, ի հայրապետութեան հայոց տեառն Մխիթարայ, և ի թագաւորու || թեան Կոստանդիանոսի, և մերոյ առաջնորդութեանս արքեպիսկոպոսի տէր Ստեփաննոսի։ Գրեցաւ սուրբ և ցանկալի աւետարանս ձեռամբ իմով Կարապետի, ի խնդրոյ սրբասէր կրաւնաւորի Յուսիկ հայրապետի, զի ստացեալ զստացուածս աստուածային կենդանի յարդար ընչից իւրոց, յիշատակ բարեաց ինքեան և ծնաւղաց իւրոց։

Արդ, որ ընթեռնոյք և կամ ընդ աւրինակ գնէք, հաստատուն մտաւք հաւատացէք ստուգութեան բանիցդ և ցանկուցդ, և զստացաւղ սորա, և անարժան ծնաւղս՝ զԿարապետ, և զծնաւղսն իմ, և զեղբարս յիշեսջիք ի տէր, ով սուրբ հարք և եղբարք, և Քրիստոս աստուած յիշողացդ և յիշելեացս ողորմեսցի. և նմա փառք յաւիտեանս, ամէն։

բ

Ստացող՝ Յուսիկ

332ա Ես՝ Յուսիկ արեղայ, գնեցի զսուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, սուրբ ուխտիս Աւետեցւոյ։ Ով որ ընթեռնու յիշեսցէ և զծնողսն մեր, զհայրն իմ զՊարոնշահ, և զմայրն իմ զԹաչխաթուն, և

զեղբարան իմ՝ զԿիրակոս և զՊաւղոս և զՇատլուսն, և զքոյրն մեր զԱւաքտիկինն, և զամենայն արեան մերձաւորսն յիշեսջիք ի Քրիս-
տոս, ընդ նմին յիշեսջիք զՄանվէլն, Սանվէլն, և զԴանիէլն, զհայրն մեր զՀեքումն, և զվարդետիկինն, զՄինայն, զվարգանշահն, և զՍա-
ռան, զՍարգիսն, և զԿարապետն, և զՎահրամշահն, զՅովաննէսն, և զՍիր-
ման, և զՇնոֆրէն, զկենդանիսն և զհանգուցեալսն առհասարակ յիշես-
ջիք և աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ գալստեանն, և նմա վառք յաւիտեանս, ամէն։

482.

ՃԱՌԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ ԵՒ ՎԱՐԻ ՍՐԲՈՑ

Երևան 2825

Գրիչ՝ Գրիգոր Թորոսանց
վայր՝ Սուրխաթ

252բ Գրեցաւ պատմութիւն սուրբ վկայիցս և խրատքս վարուց ի թվ. հայոց ՊԱ. (1352), յունվար ԻԹ. (10), ձեռամբ մեղապարտ քահա-
նայի Թորոսանց Գրիգորի*, ի քաղաքս Սուրխաթս, առ ղուկն սուրբ Աստուածածնիս։** Արդ, աղաչեմ զձեզ մեղաց թողութիւն խնդրեցէք զաստուածոյ ծնողացն իմոց՝ մեծ Թորոս քահ[անայի], և մաւրն իմոյ, և կենակցին իմոյ, և եղբարցն իմոց, և Քրիստոս զձերն թողցէ, ամէն.
253ա և զաղալու || թիւն գրոցս ուղղեցէք և մի բամբասէք։ Ես յիշեսջիք զստացող սորա*** և զծնողսն իւր։

483.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 591

Գրիչ՝ Գրիգոր Սուխիասանց
վայր՝ Սուրխաթ

... Գրեցաւ տետրակս, որ կոչի մանրուսմունք, յաշխարհս Ղրի-
միս, ի Սուրխաթ քաղաքս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն [Սիխիքարայ]****, և ի թագաւորութեան Կոստանդիանոսի, և ի մերում նահանգի՝ տէր Ստեփանոսի արհեպիս-
244բ կոպոսի ||. ի թվականին Հայոց ՊԱ. (1352), յօգոստոս ամսոյ, ձեռամբ Գրիգորի Սուխիասանց, ի վայելումն շնորհազարդ քահանային, որ բա-
զում վաստականաւք ստացաւ զսա ի վայելումն անձին իւրոյ և յիշա-
տակ հոգւոյ...։

---

* 252բ էջի աջ եզրի մաշված լինելու պատճառով, գրչի անունը՝ Թորոսանց Գրիգոր, եղծված է, վերականգնում ենք համաձայն 235ր էջի հիշատակագրության։

** Վանքի անունը նույնպես եղծված է, հազիվ նկատվում են վանք տառերը միայն։

*** Ստացողի անվան համար տեղ է բաց թողնված։

**** Գրված և ապա քերված է «Ստեփաննոս» անունը, ժամանակի կաթողիկոսն է Մխիթարը։

484.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Թվական 6795

Գրիչ՝ Սարգիս [Պիծա՞կ]
վայր՝ Կիլիկիա

Ի հայոց մեծաց ի թվականի,
Ի յուքհարըոյը 'վ երկու տարի (1353)
Կատարեցաւ սա ի կարգի
Ձեռամբ Սարգիս քահանայի,*
Աւետարանս Քրիստոսի,
Զոր բժշկեաց տէրն ի յերկրի,
131բ Ցախտէ ցաւոց զարմանալի
Չհիւանդս վազ ժամանակի՝
Զկաղն և զկոյրն յորովայնի
Լուսաւորեաց ազգի ազգի,
Զանդամալոյծն բստ հրամանի
Եւ զայսահարսն այլ ի կարգի,
Զննջեցելոցն մէկ հետ մէկի,
Զամէն գլխոյ հետ իր գրեցի
Եւ ծայր ի ծայր զարդարեցի,
Ոսկով, ծաղկիւ, զամէնն ի լի
Եւ պատկերնով նոր է ի գրի,
Գիտելութեամբն իմ տէր Բասլի,
Քրիստոս նմա ողորմեացի։
Արդ, ես նըւաստս յամենայնի
132ա Սարգիս լըցեալ մեղաւք ի լի,
Ի ծերութեան ժամանակի
Աշխատութեամբ յաւարտ ածի,
Չի եփ զոա ես կու գրէի,
Նա իմ պարոն** անուանեցի,
Սուրբ Թադուհոյն Մարիամեի,
Տէրն այլ համեց, թէ թող լինի,
Չի այլ մարդ այտ ցեղ չանի,

* Ձեռագրում կան բաբերաբար մանրանկարներ, նման Սարգիս Պիծակի նկարներին, ուստի կարծում ենք, որ սույն հիշատակարանի հեղինակը և ձեռագրի ծագիող Սարգիս քահանան հենց Սարգիս Պիծակն է։

** Ձեռագրում՝ ւ Պբէն.ɔ (պատվով)։

Նոքա վայ՛լ է, որ է բարի,
ի վայելուչն յիշատակի,
Նաև որդոցն իւր և զարմի
Եւ իւր ծնաւղացն ամենայնի,
Հանգչել ի գոգն Աբրահամի։
Սուրբ Թագաւորն Կոստաձդին,
Աչուքն աւծեալ է անեղին,
Երկար ամաւք վայելողին,
132բ Ըստ հրամանի մերոյ փրկչին,
Ջաթոռն իւր՝ ըզհայրենին,
Որդովք իւրովք յամենեսին։
Աստուած առնէ ողորմութիւնն
Իւր, և ծնողացն իւր, և զարմին,
Որ զմեզ յիշէ առ ի բարին
Եւ կամ խնդրէ մեզ Թողութիւն,
Քրիստոս, որ առատն է ի բարին,
Թողու զիւր մեղքն, և զիւր ծնողին,
Եւ զՄկրտչին՝ զկազմողին։

485.

ՄՇԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՒԱՑ ԱՐԱՐԵԱԼ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՑՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ Ն. ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Եբևան 5600

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Աղթամար

ա

256ա Արդ, գրեցաւ երկոքին մեկնիչս՝ Յովհաննես, զոր իմով աշխատութեամբ՝ Գր[իգոր] սպասաւոր քանի, և զոր՝ այլոց աւգնականութեամբ, ի վայելս մեզ աստէն, և յիշատակ բարի հոգւոց մերոց՝ վարժապետաց, ծնօղաց, և եղբարց, և ամենայն արեանառու մերձաւորաց։ Բայց գրեցաւ ի ծովամէջ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և այլ սրբոց, որ հանգուցեալ են ի սմա, ի Թուիս հայոց ՊԴ. (1354)-երորդի, ի գառն, ի նեղ և ի նուրբ ժամանակիս, զոր չէ եղեալ ի սկզբանէ աշխարհի, և մի ևս այլ լիցի։

Արդ, որք հանդիպիք օգտութեամբ ինչ ի սմանէ, յիշեսջիք բարի կամօք առ Քրիստոս զվերոյգրեալքս ի սմա, զի և դուք ընգալջիք մասն բարի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

բ

134բ Գրեցաւ մեկնութիւնս՝ հրահանգ բանիցն Յովհ, իմով ձեռամբ՝ մեղաւոր սպասաւորի բանի Գր[իգորի], ի վայելս անձին իմոյ և յիշատակ հոգւոյ իմում, և ծնօղաց, և վարժապետաց՝ Մխիթարա և Տիրատըրոյ։ Արդ, որք հանդիպիք աւգտութեամբ ինչ, յաղօթս յիշեսջիք։

Ի Թուի ՊԲ. (1353), յամսեանն օգոստոսի։

գ

256բ Փառք...ի զօրացոյց զտկարս մեղսամակարդ և բազմավէր անձամբ հասանել ի վերջ սկսեալոյս։ Ի ժամանակս և յամս յայս, յորում ընդարձակեցան ամենայն թշնամիք եկեղեցեաց և քրիստոնէից, և բարձան կարգք և կրօնք հաւատացելոց և քահանայից, և ՚ի՚ս միայն անուն, ձևն և որքանութիւնն, և կորեաւ էութիւն բարերջանկութեանն։ Ա՚ւզ, աւագ, երանի չժամանելոցն ի ժամս յայս, քայց

փառք, փառք և պատիւ արարչին և նախախնամողին յաղագս ամենայնի, զի արժանի սրոց զործեցաքն առնումք զհատուցումն։

Հետ. ստացող՝ Յակոբ Ասպիսքնկցի

դ

Եւ ընդ յառաջին ստացողացն և զվերջինն ստացաւղ սորայ զՅակոբ վարդապետ Ասպիսքնկցի և զԱնդրիաս եղբայր իմ յիշեցէք ի Քրիստոս աստուած, զի գնեցի Գշկ. (360)-ն յիգիտ տրեզաէն, և շատ մունաթով և երախտիւ ետ. ե զուք, որ կարդայք կամ օրինակէք, մեք ձեր աղօթիք աստուծոյ անձին (այսպէս)։

486.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Մատենադարան հայկ. թարգմ. էջ 145—146

Ստացող՝ Եփրեմ
վայր՝ Սուլտանիա

448 ...Աճապարեալ ստանալ զսա վեհիմաստ քահանային աստուծոյ Գրիգոր...և բազում աշխատութեամբ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և ի ժառանգութիւն զաւակի իւրոյ պատուական քահանային Եփրեմի, և ի թուականութեանս հայոց ՉՂ. (1341)*, ի յաշխարհակալութեան փոքր Շեխ Հասանի, և հիւպատոսութեան և սպարապետութեան հայոց Բիւրքելիճ, ի քաղաքն Սուլտանիայ, ի քորեպիսկոպոսութեան Օրտուի տէր Սարգսի, և եպիսկոպոսութեան տէր Գրիգորի։

Արդ, յամի ծննդեան փրկչին մերոյ՝ [ՌՅԾԴ]-ի, և ի թուականութեանս հայոց ՉԴ. (1354), և յամսեանն սեպտեմբերի Ի6. (25) և ի մարելի է. (7), ի մայրաքաղաքս Բաղտատ, ի յաշխարհակալ բռնաւորութեան մեծ Շեխ Հասանի, և ի հայրապետութեան ամենայն հայոց տէր Մխիթարի, և ի քորեպիսկոպոսութեան այսմ նահանգի տէր Սարգսի, Եփրեմ քահանայ՝ որդի հարազատ Գրիգոր քահանայի՝ աստոցողի գրոցս, պարգեւեաց զգիրքս աստուածաշունչ ինքնայօժար կամօք սուրբ Նշանին Վարագայ և նորին եկեղեցւոյն՝ տուրք մշտնջենաւոր և յաւիտենական...։

Արգ՝ ես նուաստ Եփրեմ քահանայ, որ ունէի զգիրքդ աստուածաշունչ ի հօրէ իմմէ ի Գրիգոր քահանայէ, նուիրեցի և ետու զսա ուխտիս Վարագայ սուրբ Նշանին, և ետու այնու դաշամբ, զի միաբանք սուրբ ուխտին և քահանայք նորա, յորժամ հասցէ գիրքս առ նոսա, զկարգ քահանայթաղմանն կատարեսցեն բովանդակ, և արասցեն գզիշերային պաշտօնն, և օծցեն խաչ սուրբ յանուն հօր իմոյ Գրիգոր քա-

* Սխալմամբ տպված է «ՉՂ. (1841)»։

հանայի։ Եւ զեօթն աւուր ընթերցմունքն և զաղօթսն կատարեսցեն կարգաւ...։Այսուհետև հաստատեմք՝ զի ոչ ոք եպիսկոպոս, կամ հայրապետ վանաց, կամ քահանայ, կամ սարկաւագ և կամ այլ ոք կարասցէ հանել զդիրքս ի սուրբ եկեղեցւոյն Վարագայ սուրբ Նշանին, ոչ ծախելով, և ոչ ընդ գրաւականս գնելով, և ոչ օժտելով, և ոչ գողանալով...։ Եւ զարձեալ պարտ է զյիշատակարանս զայս ի յամենայն աւագ հինգշաբթի օր, ի յատեանս եկեղեցւոյն, ի լսելիս ամենեցուն ընթեռնուլ։

487.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒԱԴՐԵԱ ՀԱՐԻՒՐԱՒՈՐԱՑ ՎԵՑԵՐՈՐԴԱՑՆ ԿԻՐԱԿՈՍԻ ԵՐՋՆԿԱՑԻՈՑ

Երևան 1960

Հեղինակ՝ Կիւրակոս

160բ ...Արդ, նորին կարող զօրութեամբն և բարեբարութեամբն ես՝ նուաստ և յետինս ի վարժապետաց Կիւրակոս, ի յուիհարիւր և յեօթք թուականիս Հայոց (1354) արարի զվերլուծութիւն հարիւրօրեաց սուրբ հօրն Նւագրեա, տկար զոյով հոգւով և մարմնով, և անխմաստ և փոքրատար մտօք, հրամանաւ և աղօթիւք երկուց վարդապետացն հոմանունաբար Յովաննէս առաքեալոց և այլ եղբարցս, եթէ հաճոյ լիցի ումէք՝ աստուածոյ շնորհք և երկրպագութիւն տուողին բանից, և եթէ ոչ՝ և այնպէս շնորհք, որ տա զաւօրել շնորհս սիրողացն զնա։ Բայց աղաչեմ զամենեսեան չլինել մեղադիր յանդգնութեանս վասն զի ի սիրոյ հարկեալ եկի յայս, զի սէր մոռանալ տա զտկարութիւն, քանզի սիրոյ զօրութիւն գերազանց է քան զբնութիւն, և զանձն ի մահ գնել յօժարեցուցանէ վասն սիրելոյն, յաղագս որոյ կրկին աղաչեմ անմեղադիր լինել և եղբայրաբար զթերին ուղ[ղ]ել, զի միգապատ և խօսրեալ մտօք այդ չափ կարացաք խօսել, և ոչ կարացաք հասանել մնծարոյս և կորարիր իմաստից մտաց անապատին. վասն որոյ պաղատիմ աղաւել զմեզ ի մեղադրանաց, և անմոռաց յիշել յաղօթս հանդերձ ծնօղօք և վարդապետօք, և աստուած յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի, և որ զամէնն ասէ, ամէն։

488.

ԳԻՐՔ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հայաբ. մատեն. Վիեն. 1. Տաշ. 8ուց. էջ 7 և Երևան 4065

Գրիչ՝ Թորոս Ալվրցի
վայր՝ Պիզ[ա]

221 Կատարեցաւ գիրքս այսմիկ գործոյս յամի մարդեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՅԾ. եւ Դ. (1354), յամսեան | | | ։

Թարգմանեցաւ զիրքս, որ կոչի մեկնութիւն պատարագին, ձեռամբ Թադէոսիկ եպիսկոպոսի Կափայիկ, ի կարգէ քարոզողացն։

Եւ գրեցաւ ձեռամբ տրուպ եւ փցուն գրչի Թորոսի արեղի Ալվրցոյճ,* ի յամին նոյնուհի տեառն մերոյ եւ փրկչին ՌՃԾ. եւ Գ. (1354), յամսեանն աւգոստոսի՝ Ժ. եւ Գ. (13) աւարտեցաւ գիրքս ի քաղաքիս, որ կոչի Պիզ, ընդ հովանեաւ սրբոյն Անտոնի Հայտոն, եւ ի հայրապետութեան պապին Ինոճոցէնցիոս Զ.-երրորդն...։

489.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեան 2843 (տես նաև՝ 1454 թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Աղրամար

312բ Ցամին յուԹհարիւրերորդի ե երրորդի թուաբերութեանս Հայոց (1354) գրեցաւ սուրբ աւետարանս յորդորատատ բղխմամբ յաստուածային հոգոյն՝ յարբուհի պասքելոց անձանց, և ի զարդ պայծառութեան նորոյ Սիոնի, և ի լուսաւորութիւն մանկանց առաքաստի, ձեռամբ անարժան Կարապետի սուտանուն կրաւն[աւ]որի, զոր գրեցի զաս յաստուածաբնակ կղզիս Աղթա[մա]ր կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, և սուրբ Նշանիս անապատի, և աստուածամուխ սուրբ Գեղարդեանս, ի հայրապետութեան տէր Դաւթի Հայոց վերադիտողի, ի գաւն և ի վշտալից ժամանակիս։

313ա Արդ, այսմ աստուածային և աստուածախաւս ‖ սուրբ աւետարանիս ցանկացող եղեալ աստուածասէր և հարկեւոր տանուտէրն Անտն և սրբասնունդ սարկաւագն Թադէոս՝ ծաղ[կ]եալ զաւակն իւր, և յոյժ փափագմամբ և եռանդմամբ սրտիւ ետուն գրել զաս ի հալալ և ի յարդար վաստակոց իւրեանց, ի վայելումն անձանց և յիշատակ հոգոց իւրեանց, և ծնաւղացն՝ Մովսէսի և Գեղեց տիկնայ, և կենակցին իւրոյ Կալիճիկոյ, և նորին ծնաւղացն, և զաւակացն՝ Թովմայի և Սարգսի, և եղբարցն՝ Անտնիայի, Իսրաէլի և Զաքարիայլ քահանայի՝ հանգուցելոցն ի Քրիստոս, և Ցովսէփայ սարկաւագի՝ ուսուհակցի Թադէոսի, և որդոցն Իսրայէլի՝ Հայրապետայ, և Կարապետի, և Մովսէսի, և Մարգարոյ՝ որդոյ Զաքարիայի, և այլ ամենայն արեան մերձաւորաց, և ետուն զաս անչինչ յիշատակ ի սուրբ եկեղեցի, որք
213բ ընթե ‖ ռնուն հաւատով և հոգով և աստուածողորմի ասեն ստացողաց սորա՝ Անտնիայի, և կենակցին՝ Կալիճիկեի, և այլ ամենայն վերոյիշողացն, ամէն։

Եւ արդ, ես՝ ունայ[ն]ս ի գործոց բարեաց, փցունս ի գրչաց, սուտանուն Կարապետ, աղաչեմ զամենեսեան զհանդիպեալսդ յիշեցէք

* Հ. Տաշյանը ծանոթագրում է՝ «Այվար է հին գիւղ Բասենոյ գաւառին (հմմտ. Ղազար Փարպ. տպ. Վենետ. 1873, էջ 470)»։

յաղաւթս ձեր զԱնանիայ տանուտէրն, և զԹադէոս սարկաւագ, և զԹումա, և զՍարգիս՝ զվերոյ յիշեցեալսն և զաղջն ամենայն՝ զկենդանիք և զհանգուցեալսն, ամէն։

Ընդ նոսին և զմեր անարժանութիւնս յիշելոյ արժանի արարէք՝ զկարապետ, և զմեր ծնողսն, և զՋաֆարիայ՝ ծաղկող սորա, և զնորին ծնողքն. և Քրիստոս աստուած զձեզ յիշեսցէ յիւր արքայութիւնն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

490.

ՏՕՄԱՐԱԳԻՅԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 1090

Հետ. ստացող՝ Առաքել

210ա Ի թվ. ՊԳ. (1354), ես՝ Առաքելս, գնացի յերուսաղէմ, տանուտէր կոյսն էր, վերայգիրն Ե. (5) էր, եւնքներակն՝ Ք. (2)։

Ցայսմ ամի եղև ի վերայ երկրի սով, զոր եղև մօրն մինչև ձԺ. (110)*, զոր տէր Ցխսուս խափանեսցէ յերկրէս մերմէ։**

491.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԿԻՐՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՒՈՑ

Մատենադարան Հայկ. Թարգմ., էջ 507—508

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սուրխաթ

ա

Գրեցաւ գիրքս այս և աստուածային տառս, և հոգւոյ և մարմնոյ փրկութիւնս, հաւատացելոց պարծանքս, ի թուականութեանն Հայոց ՊԳ. (1354), յաշխարհս Հոնաց և ի յերկիրս Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքս, որ կոչի Սուրխաթ, ի խնգրոյ աստուածընկալ և կուսակրաւն քահանային Միհռսի՝**, լցեալ շնորհիւ Հմաստութեամբ, և առաւելեալ ամենայն գործովք առաքինութեամբք։

Արդ, աղաչեմ զամենեսեան...յորժամ ընթեռնուք կամ աւրինակէք, զպատուական քահանայս զՄիհռսն, և զծնաւղսն իւր, և զեղբարս և զամենայն ազգայինն յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր։ Ընդ նմին և զնուագեալս յիմաստութեան և զպակասեալս ի զոր-

---

* Հավանորեն՝ 110 գրամ։

** Ձեռագրի սկզբի մասը գրված է ԺԲ. գարում, իսկ այն մասը, ուր գտնվում է սույն հիշատակագրությունը՝ ԺԴ. գարում, կարապետ գրչի կողմից։ 210ա էջում թողած հիշատակագրության մեջ գրիչը գրում է. «Զանարժանս բարեաց յիշատակի զտուտանուն գրիչս կարապետ և զծնողսն իմ ազաչեմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ»։

*** Տալված է «Մնահ»։

ծոց բարեաց, զտարակուսեալս՝ Ստեփաննոս քերաւղ դրոյս...իսկ շնորհատուն աստուած տացէ հոգի և իմաստութիւն ստացողի սորա Միքայել կրաւնաւորի...։

Ստացող՝ Միքայել Դերջանեցի

բ

...Վճար ՚ւ աւարտ եղև սըմին,
Ած ի կողմանս հիւսիսային,
Ցաշխարհս Հոռոց և դաշտային,
Եւ ի Սուլխաք քաղաքի սորին,
Ցիշխանութեան Ճանիպեկին,
Որդւոյ մեծի Օզպեկ խանին.
Իսկ ի մերոյ մեծ արքային,
Որ Կոստանդին անուն ասին.
Եւ ի հանուրց Հայաստանին՝
Տէր Մխիթար հայրապետին,
Իսկ ի կողմանցս Հւսւսային՝
Տէր Ստեփաննոս վերապիտին,
Եւ իմաստուն մեծ հռետորին՝
Տէր Յովաննէս կուսակրաւնին,
Որ է գիտուն աստուածային
Եւ վկայեալն է ի բարին,
Զոր տէր Ցիսուս քստ արժանին
Զնա պահեսցէ կենաւք կրկին։

492.

ԳԱՆՁԱՐԱՆ—ՏԱՂԱՐԱՆ

Հալէպ, Սբ. Մեհ. 119, Սեբմ. Ցուց. Ա. էջ 199

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Սրուսադէմ

870 Փառք...որ ետ կարողութիւն տկար անձին և մեղաւոր լցեալ և աղտեղեալ գծողիս Յով[աննէս]ս լոկ անուն արեղայի հասանել յաւարտ դրոյս, յամի Ջ. և Գ. (1354) Թուականիս մերում, ի սուրբ քաղաքս Սրուսադէմ, ընդ հովանեաւ սուրբ Ցակոբա և այլ սուրբ տնաւրինականացս Քրիստոսի աստուծոյ մերոյ...։

493.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ք

Երևան 3276

Նախագաղափարի գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Եզնկայ

190ա *Կատարեցաւ կանոնական գիրքս ի գառն և ի գժնեա ժամանակիս, յորում ոչ գոյր թագաւոր յազգէն նետողաց, այլ անբարեսէր մարզիկ բռնացեալ ունէին զաշխարհս ամենայն, և ամբանայինն ի զ[զ]եակս, ի քաղաքս՝ մի զմիմեամբք եղանելովւ։ Ի սոյն աւուրս եղև զրաւ սորա ի քաղաքս Եզնկայ, ի ձեռն սուտանուն երիցու Ստեփաննոսի, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որ Ծառով սուրբ Ճակոր կոչի, յորժամ Ճախիայնա պէկն ի քաղաքիս էր, և խօճայ Ճալի սմն բազում զօրօք ի վերայ էր եկեալ, զոր տէր աստուած զբարին աջողէ մեզ։ Բայց գրեցաւ սա ՉԴ. (1355) թվին, յամսեան օգոստոսի Դ. (4), ի վայելումն և յիշատակ Գրիգոր արեղային՝ զրոց աշակերտի և բանի սպասաւորի, որ ետ գրել զսա յիշատակ իւր, և ծնօղաց իւրոց, և ամենայն արեւնատուաց, և համօրէն իւր երախտաւորացն, և սուրբ բարեւնապետացն իւրոց՝ Կիրակոսի և Ցսվաթիսի, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի,*
190բ *և բանք նոցա առաւել պտղաբերեսցի, և կենդանի ‖ աղօթք նոցա յամենայնի մեզ պարհասք եղիցի. և նմա փառք յամենայնի յաւժմ և յաւիտեան։*

494.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 4972 (տես նաև 1575 թ.)

Դրիչ՝ Ցոհաննէս

ա

228ա *... Ես՝ Յոհաննէս գրողս, անբաժինս յուրախութեան ժամանակէս եւ զառնակեցս բնութեամբ, որ ժամանեցի զպատիժ եւ զգառնութիւն, ազգաց իմոց թափուր գտեալ եւ տրտմութեամբ հետամտեալ, գտա աշխատութեամբ զկարգ արուեստիս քերթող վերոգրեալ, որ ողորմութեամբ աստուծոյ եւ կարողութեամբ նորա սկսայ եւ կատարեցի զըբխումն քառավտակ գետոյս զրանս փրկչին Յիսուսի՝ սուրբ աւետարանս։*

Արդ, գրեցաւ ի գառն ժամանակիս, որ վասն մեղաց մերոց ամենայն պէտք մաքառաւոր կերակրոցս մեր երկրիս ունայն գտաւ, զոր

աւրինակ հոգի ոչ կարէ զաւրանալ եւ հանգչել եթէ ոչ բանիւ ճշմարտութեանց քննութեամբ, նոյնպէս եւ մարմին՝ առանց աղքի-աղքի պտղոց կերակրոյ. նաև անարդս եւ անընդունելիս, ես՝ Յոհ[ան] գրիչ, որ զտա յաւուրս յոյս հարեալ եւ վիրաւորեալ սգով անփարատ, վասն զի թռաւ աղաւնեկն յաչաց իմոց եւ կորուսցի զշառաւեղիկն իմ, տղաեկն զՄարգ[ար]:

Աղաչեմ զամենայն սուրբ մանկունս եկեղեցւոյ, սղալանաց մի 228բ մեղադրել, զի սգաւոր գրեցաք եւ լալով։ Այլ ‖ յիշեցէք ի մեղսաքաւիչ յաղաւթս ձեր զիս՝ զանարժան գրողս զՅոհ[ան], եւ զհայրն իմ զՄարգ[ար] քահանայ, եւ զմայրն իմ զՑիրաքցն, եւ զիմ մարմնոյ աչաց լոյսն՝ զկտրեալն սրով հրեշտակին, որպէս զծաղիկ նոան՝ հարեալ ի կարկտէ։

Այլ գրեցաւ ի թուիս Հայոց ի ՉԴ. (1355), ի յետին եւ ի գառն ժամանակս, որ արդարութիւն ցամաքեալ է եւ մեղք ծովացեալ, որ ոչ հոգի գիտութեամբ պարծի ոք։ Դարձեալ, ես՝ անարժան գրիչ Յոհ[ան], աղաչեմ զսուրբ ընթերցողսդ յիշեցէք յաղաւթս զպանծալի եւ զմարգարտայեռ ընդելուզեալ ակն պատուական, առաքելաշնորհ եպիսկոպոսն մեր զտէր Աբրահամ, զի նորին ողորմութեամբ ապրիմք...։

բ

178ա Սիրտս լալով է պաշարած
Եւ իմ աչաց լոյսն տարած,
Իմ մեղքն ահեղ կա բազմացած,
Որ չյաջողաւ ըստ իմ կամաց։
Ի յաղգմանէ կամաց մեղաց
Կամ տատանած, տարէկուսած,
Իմ սիրեցեալ տղեկն փտած
Եւ ես թիւրեալ, սրտաբեկած,
Արագամտիկն յիսնէ առած
Եւ իւր քաղցր աչունքն խաւարած,
Ցականչ սրտիս ձայնն բերած,
Կա առաջիս ինքն կանգնած,
Որպէս ի կենդան էր, անմեռած,
Երկայնահաս անձամբ ստեղծած,
Թող աստուած չլինէ ինձ բարկացած,
Որ յամառեալ եմ և թիւրած։

Ծաղկող՝ Թորոս

գ

178բ Ձծաղկող սուրբ աւետարանիս՝ զԹորոս, որ եմ անուամբ եպիսկոպոս և ոչ գործով, աղաչեմ զձեզ՝ զընթերցուղ սուրբ աւետարանիս, յիշեսջիք ի Քրիստոս ողորմածիւ, և աստուած յիշողայդ ողորմի, ամէն, ամէն, և Քրիստոսի մարգասիրին փառք յաւիտեանս, ամէն, ամէն։

495.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Երևան 6938

Գրիչ՝ Աւետիս որդի Նատերի
վայր՝ Սուրխա՞ք

ա

30բ *Արդ, ես՝ նուաստ և աղկաղկ հողս Աւետ[իս], յերեսս անկեալ աղաչեմ ղրաբի պատահաւղքդ սրբոյ տառիս յիշել զմեզ սրտի մտաւք առաջ ամենագէտ արարչին ի թողութիւն և ի գթութիւն մեղաւք մեռելոյս, որպէս զի աւժանղակութեամբ ամենազօր ձեռինն ելցուք ի վեր ի միջոյ բաղմաթոյն և սրատաճն ժանեաց սպանողին, որպէս երբեմն երանելին Դանիէլ, և չարախօս իշխանն ի խորխարոտ գրին իջեալ բնակեսցէ, և անձամբ իւրով լցուսցէ զտունն խաւարչտին, և տէրն ամենակեցոյց կեցուսցէ զձեզ, և ինքն աւրհնեալ է յաւիտեան։*

*ՊԴ. (1355), հոկտեմբ[եր]։**

բ

Զդատապար[ա] ծառայս ծառայիցդ Քրիստոսի զԱւետիս, որ ի տեսանել զդիրս ցանկացայ փափագեալ սրտիւ, և ղրեցաք զսա նօտար գրչաւ վասն օրինակին փութոյն, զի երեր զսա եպիսկոպոսն Բառեճոյ
120բ *Վարդան, և էր ի վերայ գնալոյ յՆրուսադեմ, և ոչ այլ ոչ գտանէր օրինակ սուրբ տառիս, վասն այսր պատճառի սկսայ, ես՝ անպիտանս, ի սկիզբն, և գրեցի սակաւ ինչ, և զայլն ետու ի հայրն իմ ծերացեալ՝ որոյ Նատեր կոչի, գրեցի և ի միջոցին սակաւ մի այլ, և զրովանդակն նա զլխաւորեաց, և լցաք զտենչումն մեր, թէև փցնագիր էր գիրս. և դուք, որ հանդիպիք գտեալ զանձուս մեկնութեանս, յիշեցէք ի տէր սրտի մ[ա]ւք զտէր Վարդ[ան]՝ զօրինակիս չնորհօղն, և դիս՝ զփափագօղս սուրբ տառիս՝ զԱւետ[իս], և զայլևորեալ ալեաւք ծերունին՝ Նատեր գրիչ, զի թերևս ապրեսցուք ի սառսռելի արհաւրացս, որ աստ կան գրեալ, և հասցուք երանե՛լ և ցանկալի կենացն՝ զոր սբրոցն է պահեալ, սրոյ պատմութիւն որպիսութեանն աստ գտանի՝ փառաց և ժառանգութեանն, որ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում վայել յաւ[իտեանս։ Ի թուին] ՊԴ. (1355), յօղոստոսի Թ (9)-ն գր[եցաւ]։*

496.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4915 (տես նաև 1433 թ.)

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Աղթամար

286ա *... Արգ, զմտաւ ածելով զայս ամենայն՝ եթէ սնոտի է անցաւոր և երկրաւոր մեծութիւնս, այլն յարեպաշտաւն Մուրատ և կենակիցն իւր խուռնդ խաթուն, զաւակն իւրեանց Ամիր-Սարգիս, եւտուն գրել զսա ծախիւք իւրեանց, յարդար վաստակոց և յաստուածատուր մեծու-*

* Ներքին լուսանցքում գրված է «Սաթիճ փոխեցաւ»։

քեանց, իմով ձեռամբ՝ մեղսամակարթս Գրիգորի՝ սպասաւորի բանի, Որով աղաչեմ զամենեսեան զհանդիպողքդ պատահմամբ ի դէպ ժամանակի այսմ աստուածախաւս և նորոգող քաղցրահամ կենաց կտակիս յիշել բարի կամաւք և սեռն սիրով՝ երկնաբացիկ և հաճոյական աղաւթս ձեր... զտացող սորա զՄուրատեճ, բարեպաշտաւն և զհամեստ կենակից իւր զխուանդ խաթուն, և զղաւակքն իւրեանց՝ զԱմիր-Սարգիս, զԱմիր-Մուլէ և զՄիրզա պարոն, որպէս և զՍաղդուք...

286բ ...Արդ, գրեցաւ սա ի թուականիս Հայոց յուքհարիւրերորդի չորրորդի (1355), ձեռամբ Գրիգորի վերջին սպասաւորի բանի, ցանկացելոցն ի միտս ուղղակի, ի կղզիս Աղթամարայ, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, յաւուրս անիշխանութեան, յորում բարձեալ էր տէրութիւն հոգևոր և մարմնաւոր ազգիս հայկազեան, զի բռնացեալ կալան

287ա զմիջերկրեայս ամենայն ազգատոհմ կարապետի Նեռինն || ասացեալ։ Եւ նեզէն յոյժ զազգս քրիստոնէից մինչև յելս ոչուց։ Արդ, յայսպիսի գառն, ի նեղ և ի նուրբ ժամանակիս, յանձն առեալ աշխատութեամբ գրեցի զսա, վասն որոյ, աղաչեմ զամենեսեան սիրով սրբոյն աստուածոյ, յիշել առ Քրիստոս ի պատկանաւոր խնդրուածս ձեր զիս՝ զմեղապարտս, և զձեռնասուն պատանեակս զՏաւճապետ, զի և սա բազում աշխատեցաւ ի կոկելն և ի սպասաւորելն, նաև զհայրն իմ Անդրէաս և զմայրն իմ Փառաց, իբրու թէ ներումն յանցանաց և թողութիւն մեղաց գտանել յահեղ ատենին և յանհաչառ դատաստանին Քրիստոսի, որով ընդ աջեայցն է դասել, զի և դուք գրեսջիք ի դպրութիւն կենացն վերին...։

Նաև զբաղմամեղս՝ զԹումա քահանայ, յիշման արժանի արարէք։ Նաև զՊետրոս կրաւնաւոր՝ զհամախոհ եղբայրակից իմ յիշեսջիք առ Քրիստոս բարի մտաւք։

497.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Տրէան 2283

Գրիչ՝ Յակոբակ

128ա Ի թվ. ՊԴ. (1355) գրեցաւ, յունիս ամսոյ ի Ք. (9)-ն։**

Յակոբակս ողորմելի,
Որ եմ մեղաւք գարշ աղտեղի,
Անուամբս զգաւն և պանծալի,
Բայց եմ ունակ հակառակի,
Զձեզ աղաչեմ մանկունք վեհի
Եւ ծնունդք լուսոյ աւազանի,
Ցիշման արէք զիս արժանի
Առաջի հաւրն երկնաւորի,
Որ ինձ շնորհէ զպարտ քանքարի,
Զոր ի խորխս թաքուցի...

---

* Թուման ձեռագրի ծագիզն է։

** Սույն հիշատակարանը նախագրափար օրինակինն է. Տրէանի № 2283 ձեռագիրն ընդօրինակված է ժէ. դարում։

498.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վէնետ. 8 Յուլ. Ա. էջ 95 (տես նաև 1341 թ.)

Գրիչ՝ Մովսես
վայր՝ Վարագ

ա

538բ Աստուածածին ողորմի Մովսես վարդապետին* Մեծոփայ վանաց և իւր ծնողացն, որ ի ՊԴ. (1355) թվականին զգիրս Առակաց գրեաց ի սուրբ ուխտն Վարագ:

բ

Ես Մարգարէս գնեցի զգիրքս ի հալալ արդեանց իմոց, և վերըստին ընծայեցի Վարագա, յիշատակ ինձ, և ծնողաց իմոց՝ հօրն իմոյ Մկրտչի, և մօր իմոյ Մարթայի, և կենակցին [իմոյ]։

* Մովսես վարդապետն արտագրել է մէյն Սողոմոնի չորս գրքերը։

499.

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Վեն. 26 Ծաց. Ա. էջ 186—187

Դրիչ՝ Վարդ
վայր՝ Մերտին Թուֆին մենաստան

287բ ...Իսկ եղև կատարումն սորա ի թուականութեանս Հայոց Պե. (1256) ձեռամբ իմով՝ անարժան, փցուն և անարհեստ գրչի Վարդի, ի մայրաքաղաքս Մերտին, և ի մենաստանս Թուֆին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յովաննիսի։ Արդ, աղաչեմ զմանկունսդ սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա տեսութեամբ կամ աւրինակ գնելով, յիշեսջիք զերախտաւոր սորա զտէր Աբրահամ, որ աւգնական եղև ի Քրիստի գինն և կազմաւորեցաւ զգրելն, և զամենայն եղբայրութիւնս, և զիս՝ դանպիտան գրիչս և զծնողսն մեր...։ Յիշեցէք ի Քրիստոս և զԴաւիթ զպիր, որ ղթուղթս կոկեց։

Դարձեալ ծանուցանեմ որոց հանդիպիք հոգևոր երգոյս՝ Դաւթեան Սաղմոսիս։ Սովորութիւն էր մեր եկեղեցւոյս, որ հանապազ ծայրաքաղ ասէին սաղմոս, վասն որոյ արքեպիսկոպոսի մեր տէր Աբրահամ, վառեալ աստուածային նախանձու և սիրոյ սաղմոսիս՝ երկարձ զայն զսովորութիւն և սահմանեաց բոլոր, և ի վերայ գրոցս երգել զսաղմոս՝ ըստ առաջին սրբոցն աւանդութեան։ Արդ, աղաչեմ զմանկունսդ եկեղեցւոյ յիշել ի Քրիստոս զտէր Աբրահամ և զծնողսն իւր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, որ չտայք զսաղմոսարանս ի տգայլ ձեռք, որ տախտակ գրեն յիւրմէս, այլ ուղղորդեն...։ Եւ է սա սեփական տուրք սուրբ Աստուածածնիս և սուրբ Յովհաննու Մկրտչիս. և մի ոք իշխեսցէ հանել զսա ի վանացս, ոչ եպիսկոպոս, ոչ քահանայ, ոչ սարկ[աւագ], ոչ միակեց, ոչ ծախելով, ոչ գրաւ դնելով...։

Զաստուածասէր և զհաւատարիմ հայր վանացս զՄովսես կրաւնաւոր, որ կազմել և կապել ետ զսաղմոսարանս, յիշեցէք ի Քրիստոս. և աստուած զձեզ յիշէ, ամէն։

500.

ԴԻՐՔ ԿԱՑՄԱԿԱՆՑ ԲԷԴԱ ՔԱՑԱՆԱՑԻ

Երևան 2037 (տես նաև 1421 և 1677 թ.թ.)

Ցիշատակարան թարգմանչի գրոցս կայծականց

187ա Զթարգմանող սոյն գրոցս ի լատին լեզուէ ի հայս՝ զՔրիստափոր Թումայն Ճահկեցի ի կարգէ միաբանողացն, որ մինչդեռ ծաղկէրն երի-

սաստարդական ախօք՝ լի ամենայն իմաստութեամբ և շնորհօք, թարգմանեաց զգիրքս զոյս ի քաղաքն Կաֆայ: Եւ ապա, ընդ երիցագոյն հարազատ եղբօր իւրոյ՝ Աւաքտէրամբ, շարժեալ նախանձով բարեաց, զիմեցին յաթոռն Հոռմայ, ար... պապն Զ.-երրորդ Իննօցէնցիոս, վասն հաստատութեան սուրբ կարգին միաբանօղաց։ Զոր իբրև եհաս վերոյասացեալ սուրբ պապն զչերմեռանդութիւն նոցա և զխնդիր, որ էր փրկ[ութիւն] հոգոց, հաւանեցաւ առնել զհայցու[ածս] նոցա։ Եւ շնորհեաց նոցա բրվէլէճ,* վասն նախաս[ացեալ] կարգին՝ կենցաղավարիլ և կեալ ըստ կ[ան]ոնաց երանելոյն Օգոստինոսի և ըստ կացուցմանց կարգին քարոզողաց։ Նայ և զասացեալ ֆրայ Աւազտէրն հաստատեաց դուբէռնտօր, այսինքն՝ վերախնամօղ, ասացեալ կարգին, եւ զեղբայր իւր, զվերոյասացեալ զԹօմասն, եպիսկոպոս ձեռնադրեաց Նախիջևանոյ։

Եւ սոքա յուղղի անկեալք անցին ընդ Ծովն Մեծ և հասին ի Կոստանդինուպոլիս, և անդի նաւեալք կամեցան չուել ի Կաֆայն, և ալեկոծեալ ծովահեղձ եղեն ընդ յայլոց բազմաց յամի տեառն ՌՅԾԶ. (1356), յասլրիլ Ա. (1)։ Այլ ըստ ասացելոյն յառաջան, եթէ՝ արդարն իւ իւիք և մեռցի՝ վրկեսցի։ Վասն որոյ աղաչեմ զձեզ, զի որք կարդայք զգիրքս զայս յիշեսցիք ի տէր Քհսուս զվերոյասացեալ եղբարսն, և աստուած զձեզ յիշէ։

501.

Ճ Ա Շ Ո Յ

Երևան 7408 (տես՝ 1361 և 1002 թ. թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ղրիմ

...Որոյ ակնատես լեալ յետինս ի գրիչս և փանակիս ի քարտուղայս,** [թ]շուառս և աղկաղկս ամենայնի, և մոռացեալ զիս և զընիկ տկարութիւնս ցտնկացող եղեալ սմա, թէպէտ և յոյժ անըմբռն, ապաւինեալ յայն, [որ] տայ<ն> ամենայնի առատապէս և ոչ նախատէ, ձեռնարկեցի ի սմա ես՝ Կարապետ երէցս՝ թարմատար մելանաւորս, հասի ի գրաւ գրչութեան սորա ոչ թէ ըստ արհեստից և զաւրութեան անձինս, այլ ի կատարումն ուխտեալ հրամանի մարդասիրին, թէ՝ ամենայն, որ խնդրէ՝ առնու։

Արդ, աղաչեմ գնանդիպողսգ այսմ տառի յիշման արժանի վարկջիք զանարժան գրիչս՝ զԿարապետս և զիման ամենայն՝ գհայրն իմ զԱ[ռ]ուծն, և զմայրն իմ զՈսկիանէ, և զեղբայրսն իմ, և զամենայն արեան մերձակայս՝ զկենդանիս և գնանգուցեալս յիշման առնել արժանի առաջի անմահ զենլոյն Քրիստոսի, զի որ առատն է ի տուրս բարեաց և նախախնամող ամենայնի, անպարագրելի ողորմած զթու-

* Իմա՝ «Գրիվելեգիա»։

** Ձեռագրի վերջին՝ 521—525 թերթերը մաշված բնագրից ակնբախ տառասխալներով արտագրել է 1602 թվին ձեռագրի նորոգող Գրիգորը։

թեամբն իւրով գթասցի ի մեղ և ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն իւրում։

Գատարեցաւ սա յաշխարհիս Ղրիմ կոչեցեալ, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս Ղրիմ յորջորջեալ, ընդ հովանեաւ սուրբ Ցարու-թեանն, ի վեհագոյն տիրական իշխանութիւնն տեառն Մխիթարայ, յարհիական եպիսկոպոսութիւնն տէր Ստեփաննոսի, և առաջնորդ եկե-ղեցւոյ Դարուբեանն՝ Սիմեոն աւազերէցն, որ զօրինակն շնորհեց և զԱռաքել ծաղկոցս,* որ զայս գիրքս ծաղկեց, որ կամակից եղև, և այլ մեղէն եղբարցս, որ ոպաստաւորեն սուրբ եկեղեցւոյս, և զլուսաբարն զԹազվարն, և զԳրիգորն, և այլ եղբարցն, որք սպասաւորեցին զմեզ՝ յիշեսջիք, Քրիստոս աստուած յորժամ գայցէ ի միւսանգամ գալըս-տեանն ողորմեսցի ամենայն հաւատացելոցն և մեզ՝ զթարմատարքս, և նմա փառք։

Ի թուականութեանն Հայոց ՊԵ. (1356) և սեպտեմբերի ԺԵ. (15)-ին աւարտեցաւ**, չորեքշաբթին, զ'ի սմա յիշատակեա[լ]քս և ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ աստուածոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

502.

Ձ Ա Շ Ո Ց

Փիլդ. 6273, էջ 153—154
(Կ. Գօլհ, Ղալաթիայ, սր. Լուսաւորչի եկեղեցի)

Գրիչ՝ Խոսրով
վայր՝ Սուրմաթ

... Եւ ես՝ յետնեալ հողս, մեղապարտ Խոսրով քահանայ, ձեռնարկեցի ի սա։

Ազգ, խնամօք խնամակալ էին եղև զբաւ սորա թէպէտ և անհա-գան ի բազում գբօսանաց աշխարհի, ի ժամանակս յոյժ անբարի, գի վասն ծուլացեալ մեզաց իմոց կողմս հիւսիսական, խրատուք չարին, ի գումարի գոլով մի ամօք, կամք ննջելով ան[յ]իշաչարին այց առնել համայն իւրայնոցս, գի մի գերեալքս և վարատեալքս ի վայրս նժդե-հութեան կրկին կողոպտեսցուք մեղօք մերովք։ Նաև [յիշեսջիք] զմեր մխարանեալ եղբարքս, զժողովեալքս առ ոտս սուրբ Աստուածածնին, և սուրբ Սիմէօնին, և սուրբ Աւքսենտիոսի, զՂազար կրօնաւոր, և զՍտեփաննոս կրօնաւոր, և զմիւս Քրիստոդուտուր կրօնաւոր, և զայլ պաղի*** գործաւորան, զտնտեան, և զմանճակալքն, զհովիւն...։ Գատա-րեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԵ. (1356), յունվար [ԻԲ.] (22), ի հայ-րապետութեան տեառն Մխիթարայ, յեպիսկոպոսութեան արհիւականին տէր Ստեփաննոսի, ի թագաւորութեան Կոստանդիանոսի, յաշխարհա-

* Մեծ արվեստի տեր մանրանկարիչ է։
** Բնագրում՝ հարթեցաւ։
*** Իմա՝ հրապի—այգու։

կալուքիւն ձանիպէկ զանին, ի հռչակաւոր քաղաքս Սուրզար, ի գաւառիս Ղրիմ, առ սաս սուրբ Ստեփաննոսի, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Լուսաւորչին, և սուրբ Գէսրգեայ, և սուրբ Սարգսի, յորում ի հասեալ ժամանակիս պաշտիւր տաճարս երկնահանդէս, և ի սրբամատուր քահանայից արժանաւոր պաշտամամբք եօթն և տասն կարգաւորօք խորհրդական Թուովք, Ծիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զփափագմամբ ստացողն սորա զԿրիստոսատուր կուսակրօն կրօնաւոր, և զհայրն իմ զՅովհաննէս՝ զաբեամբ նահատակեալն, և զմայրն իմ զՆռնճահատն:

503.

ՄԻԿՆՈՒԹԻՒՆ, ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Նբևան 2043

Վայր՝ Ղրիմ

ա

553ա ... Արդ, ամենեքեան, որք ընթեռնուք կամ ընդաւրինակէք, գոհութիւն և աւրհնութիւն տուք մարդասիրին աստուծոյ, և յընթեռնուլն ձեր յիշեսջիք աղաւթիւք ի տէր զստացաւղ սորա զսրբասնեալ և զպատուական քահանայն՝ զտէր կնքաւորն իմ զԿարապետ, և զկենակիցն իւր զԳաւհար տիկինն, և զնորաբոգբոջ աստուածապարգև պոհանորդ շնորհալ քրւերն իւր Հիլալիե, նորին անուամբն Հիլալ, և Աստուածատուրն, և ծնողն նոցա՝ զքաղցրիկ հայրն զԱստուածատուրն, և զգորովագութ մայրն զԱղուրն, և զմայրենի ազգայինն նոցա՝ զմեծ պապ Աւետշահն, և զմեծ մամ Միճասքիճ, և ծնունդսն նոցա, և զթոռունսն՝ զպարոն Խոսրովն, և զպարոն Միրչերն, զՅովհաննէսն, և զՍերովբէն, և զՅովսէփն, զԱռիստակէսն, և Յովհաննէս զպիրն, զՄելքիսեդէկն, և զեալաս խաթունն, և զկրսեր պապ սոցա և զմամ՝ զՍարգիսն և զՇնորհատուրն, և զնոցա ծնունդքն՝ զՍերերն, և զՄովսէսն, և զԱզգերն, զԱղուրն, և զկալ մաւրքուրն, որ զցայգ և զցերեկ աշխատին ի պէտս հոգւոյ և մարմնոյ սոցա, այլ և ընդունեալս սորա՝ զՄամատիկիճն, և զՄամախաթունն, զՄիճասքիճ, և զՀիլալն, և զեղբայրքս սորա՝ զհանգուցեալքն սուրբ Քրիստոս յոյսն մեր, այլև զաստուածապարգև զաւակքն մաւրեղբաւր սորա՝ զԽաչատուրն, և զԵլխաթունն, և զծնաւղս նոցա՝ զՄովսէսն և զՍուրաքն, և զմիւս կողմանն ծնաւղ սոցա՝ զՎարդիգոյնն, և զկենակիցն իւր՝ զՄեծխաթունն, և զՔուրխաթունն, և զզաւակսն նոցա՝ զՎարդերեսն, և զՅովհաննէսն, և զայլսն ամենայն, քահանայք՝ զԱմիրն,
553բ և զՍտեփանոսն. այլ և առհասարակ զամենայն || ուղղափառ հաւատացեալս...:

Այլ և զհոգևոր ծնաւղսն մեր և զարդիւնարար ուսուցիչսն, զարի զժիր քահանայքն, զկամեցաւղ բարեաց ամենայն մարդկան զուսուցիչսն մեր երկիւղիւն աստուծոյ՝ զՎարդան քահանայն, և զընտրեալ զաւակսն, զաբոյանն հաւատոց՝ զՄելքիսեդեկ քահանայ, և զՅովհաննէս քահանայ, և զՆլիմեխէ, և զբարի ծնաւղն սոցա զՋռեաբ մայրն, և զկուսակրաւն անձն զՈւռահաննէս, և զհաւրքոյրն զՔուր խաթունն, և

զհարսունսն իւրեանց, և զաստուածատուր զաւակսն, և զՄարգիս կրաւնաւորն և զՀայրապետն, որք բազում աշխատեցան ի խնդրել աւրինակիս։

Ցիշեսջիք ի տէր զդաստուեալ քահանայն զՏիրացու և զհամեստ կենակիցն իւր, և զզաւակսն, և զծնաւղսն նոցա, զԿարապետն, և զամուսինն իւր զՄուլքայդ, և զեղբարսն իւր զՄկրտիչն, զՏէրն, և զզուղակիցս նոցա։

Զծովածննեսս, և զծոխածննեսս, զհաղաղութիւնն, և զփոքրիկն Վարդան, և զամենայն ազգայինս նոցա՝ զկենդանիս և զմեռեալսն, որք զաւրինակն շնորհեցին, որով լցաւ զփափագումն մեր, տացէ նոցա տէր աստուած վոխարէն զղրիլն անուանց ի զպրութիւն կենաց, և երկու կենաւք վարձահատուց լիցի նոցա ողորմութեամբն իւրով։

Նաև, թէ արժանի համարիք զտկար և զապիկար գրաւզ սորա, և զծնաւղս, և զեղբարս, և զքորքն մեր, և որպէս զմեզ յիշէք նոյնպէս և դուք յիշեալ լիջիք ի նոյն ողորմածն աստուած, որում վաոք
554ա և գոհութիւն ‖ յաւիտեանս յաւիտենից։

Այլ աղաչեմ չլինել մեղադիր վատութեան և սխալանաց գրիս, զի միտք իմ ակար էր և տեղիս՝ երթևեկ բազմաց, այլ զպակասն ուղղեցէք սիրելաբար, և զիս առանց պարսաւանաց թողէք, այլ ոչ է ամենեցուն իշխել դիր յաւելուլ կամ պակասեցուցանել, այլ իմաստուն գիտնականաց, որք հմուտ են հին և նոր կտակարանաց և յորգեալ ուսմամբ արհեստիս։

Եւ մի ոք անաւաղ շաւշափեսցէ զսա և կամ ի գետնի դնէ, այլ պարկեշտութեամբ և երկիւղիւ մերձենալ. և եթէ ոք յանդգնի և թուղթ կտրէ ի սմանէ, կտրեսցի ընդ մէջ և մասն նորա ընդ անհաւատսն ղիցի։

Այլ թագաւորին անմահի և մշտնջենաւորի գոհութիւն և փառք տացուք առլոելի ձայնիւ, որ կոչեաց զմեզ ի կոչումն սուրբ և կարգեաց յաստիճան քահանայութեան, որոշեաց յաշխարհէ և երկնայինս արար, ասելով՝ չէք դուք յաշխարհէ։

Արդ, առ ձեզ են բանքս, ով քահանայք, որ ընթեռնուք, զգոյշ լինել յամենայնի և առանց նախանձու և հակառակութեան. և զհետ երթալ սիրոյ և խաղաղութեան, գաանել և հնարս ընդ ամենայն մարդկան ղխաղաղութիւն ունել, զի ամաւթ է ի հետոց առաջնոցն յետս անկանել, և այն է, որ ատյ բազմաց զուլսն արածել ի վրանս հովուացն, յորմէ փրկեսցէ զմեզ տէր և յաջեսյն առաջնորդեսցէ ընդ հովուին քաջի հովուել բազկաւք, քաղցր ճաշակաց ճաշակողացդ ի հոգևոր սեղանոյ մասն յիշման և զաստուծոյ խնամոցն շնորհէ անփորձ կենօք յաջողուսմն, ամէն։

Բ

555ա ...Արդ, ցանկացաւղ եղեալ այսմ աստուածայինն գանձիս... կուսակրաւն Վրթանէս հերպետն... ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւր և նախնեաց իւրոց, ի վայելումն և ի վարժուսմն մանկանց սրբոյ եկե-

ղևցւոյ։ Բայց գրեցաւ սա ի քաղաքս Ղրիմ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի նախավկային, ի թուականութեանս Հայոց Պե. (1356), ի հայրապետութեան տեառն Մեսրուվրայ, և ի թագաւորութեանն Կոստանդեայ, և եպիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի, և յաթոռակալութեան տէր Յովհաննիսի։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնուք կամ ընդօրինակէք յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զստացող սորա ղվերոգրեալ զտէր հարպետն Վրթանես, և զհոգևոր որդեակն, զշառաւիղն աւրհնութեան՝ զտէր Իրաստակեսն, և զծակօր աբեղան և զընտրեալ կրաւնաւորն, զկամեցաւղն բարեաց ամենայն մարդոյ՝ զԳրիգոր աբեղան, և զքաղցրիկ եղբայրն՝ զՎահան աբեղան, և զՄկրտիչ աբեղան, և զԱբրահամ արնղան, և զպատուեալ ալևօք ծերունին և ծաղկեալն հոգւով որպէս հնրով՝ զԻեռրգ աբեղան, և զեզահոգի կրօնաւորն զՅովհաննես աբեզան, և գբալեմիտն բնութեամբ զՍարգիս աբեղան, և զընտիր կրօնաւորն զՅակովբ աբեղան, և զգթական և զարդիւնաձեռն տնտեսն՝ զհայր Ծերուցն, և զաշխատասէր երկրագործն զՅովհաննես միայնակեացն, և զաստուածատուր աշխատաւորն, և զորգեակն իւր՝ զՍարգիս, և զծնողսն նոցա՝ զԱրևշաձ, և զՄարեմտիկինն, և զքոյրն իւր զԱւտար տիկինն, և զայլ ամենայն ազգայինսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն յաստուածծ ողորմիսն յիշել, և զայլ ամենայն սպասօր սուրբ և երկնայնմսն տաճարիս, որ յանուն քաջ զօրավարին սրբոյն Գէորգեայ, զսուրբ կուսութեամբ քահանայքն, և զճգնազգեցիկ միանձունսն, և զսուղղափառ սարկօագունսն, և զաշխատասէր երկրագործսն, և զընդ հովանեաւ սուրբ եկեղեցոյս ննջեցեալսն, ընդ նմին և զընակիչք գեղիս, զհաւատարիմ ազգարքն՝ զՍխիթար երէցն, և զԱռաքել երէցն, զԳրիգոր ռայիսն, զՋարուխն, և զՄկրտիչն, զԳրիգորն, զՋարուխն, զՅօհաննես, և զեղբայրն՝ զՄանուկն, զՍմբատկն, զՄկրտիչ ժամհարն, զՅովհաննեսն, զԱսիլն, զասիլ (*) պարոն Յովհաննեսն, և զկենակիցն՝ զԱւագ տիկինն, և զայլ ամենայն ժողովուրդ գեղիս, զարս և զկանայս, զծերսն և զտղայսն, զմանկ և զիւրքր, զմերսն, և զօտարսն, զկենդանիսն և զհանգուցեալսն, զբարերարսն և զչարարարսն, զուրախացուցիչսն և զվշտացուցիչսն, զորս յիշեցաք և զորս անմոռաց գիտողին յայտնի է։ Եւ որպէս զմեզ յիշէք և դուք յիշեալ լինիք ի Քրիստոս, աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Վաճառող՝ Կարապետ

գ

356ա *Ես՝ Կարապետ եղէցս՝ ունէի զսուրբ գիրքս առ իս յիմ ընչից շինեալ, և Վրթանես հարպետն ընչիւք խնգրեաց և ետու նմա։*

Յայսմ հետէ կենայ սուրբ գիրքս յիշատակ ի սուրբ Գէորգ վանքս, անչինչ յիշատակ վերոգրեալ յիշելոցս ի սմա, և մի ոք իշխեսցէ հանել

* *Մեսրովբ Ա. Աբրահեցին աթոռակալել է 1359—1372 թ.թ. (տես՝ «Ազգապատում», էջ 1920). ուստի և Պե. (1356) թվականին նրա կաթողիկոս լինելը, չնայած թվականը ձեռագրում գրված է պարզ ու որոշակի, կասկածներ է հարուցում։*

զսա ի սուրբ եկեղեցւոյս, ի յիմ՝ ի Վրքաձհս հարպետիս ազգէ, և ոչ ի Կարապետ երիցուս խամուքեան աղագաւ, ոչ յազգէ և ոչ յայլ մօտաւորէ, ոչ յիմ և ոչ ի տէր Կարապետին, ոչ մեծ և ոչ փոքր, ոչ ծանաւթ և ոչ անծանաւթ, ոչ իմ և ոչ աւտար, ամենևին չունենայ մարդ խաւսք ի հետ գրոցս, զի յարգար ընչից իւրոց ստացաւ զսա յինէն՝ ի Կարապետէս, յիշատակ հոգւոյ և մարմնոյ իւրոյ և ամենայն զարմից իւրոց։ Եւ արդ, եթէ ոք առանց մեր կամաց յանդգնի ընդդէմ գրոցս՝ հանելոյ վանն ի սուրբ եկեղեցւոյս, չունի իշխանութիւն յաստուածոյ, և ի սուրբ եկեղեցւոյս, և ի հարպետ Վրքաձիսէս, և ի Կարապետ երեցոյս, բաւ է։

504.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՑ ԵՒ ԹՈՒՂԹ ՊԱՒՂՈՍԻ

Վիեն. 113, Տաշ. Ծուց. էջ 394 (տես նաև 1601 և 1737 Թ. Թ.)

Գրիչ՝ Գրիգոր

102բ Կատարեցաւ ցանկ առաքելական մատենիս ի փառս Քրիստոսի ձեռամբ յոգնամեղ գրչի Գրիգորի, յօրինեալ և կազմեալ նւթաղի։ Եւ ստացող զսա շնորհալի եւ ուսուցիչասէր գեղաբուսիկ ծաղիկն Տիրատուր պատանեակ, ի վայելուչն անձին իւրոյ եւ յիշատակ ծնողացն իւրոց՝ Յովաննիսի եւ մօրն իւրո Մամախաթունի։ Որք օգտիք ի սմանէ ընթերցմամբ եւ կամ գազափարաւ՝ յիշեսջիք ի Քրիստոս զստացողն Գրիգոր քահանայս,* ընդ նմին գհաւատարիմ զրաբեպաշտ եւ զիմաստուն այրն զպարոն Փախանն եւ զծնօղսն իւր... որ զօրինակն շնորհաց եւ զծոյլս յորդորեաց եւ ժրացոյց, հատուսցէ նմա տէր, ամէն։

Թվ. Գե. (1356), յապրիլ ԻԲ. (22), եւ որք յիշէք՝ յիշեալ լիջիք։

505.

ԳԻՐՔ ԱՆԴՐԻԱՆՑԱՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐՐԱՆԻ

Նբեան 4793 (տես նաև 1314 և 1396 Թ. Թ.)

Գրիչ՝ Յոհ[աննէս]

356ա Թվ. Գե. (1365), փետրուար Ա. (1), ղվերջին կարեաւք ստացաւզ գրոցս զՄատայ, և զգուսար իւր զՏիկնոց, զՄարգիս կաւշկաբ, և զտէր Մարտիրոս, և զԱնդրէաս արեղայ, և զմեղուցեալ գրիչս զՅոհ[աննէս] կարաւտ բանի, [աղաչեմ յիշել...]։**

* Հապավված է այսպես՝ «Գր.քհ»։

** Նոր ժամանակներում լուսանցքները կարել-փոքրացրել են, որի պատճառով վերջին տողից պահպանվել են միայն տառերի վերին եզրերը։

506.

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԱԹԱՆԱՍԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ

Երևան 3046

Գրիչ՝ Գրիգոր Սուքիասացց
վայր՝ Ղրիմ

ա՛

1ա Տիրացու քահանային ի վայելումն է սա, ի թվ. Պե. (1356), յօգոստոսի Ի. (20), գրեալ ձեռամբ Գրիգորի Սուքիասացց։

Հետ. ստացող

բ

1բ ... Նա առաւել զեպիսկոպոսապետն մեր գտէր Գրիգոր և մերոյ սրբասնե՛ալ արքեպիսկոպոս տէր Աւետիքն շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս ուղիղս վա[րե՛ք]։

507.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սիբասախ, Ս. Նշան, № 23, էմ., 1925 թ., էջ 125—127

Գրիչ՝ Գաւազան

վայր՝ Երնջակ գաւառ, գիւղ՝ Նորակերտ

504 *... Որոց եւ ես՝ յետինս ի ընաւից, մեղսամակարթ ծառայս պարտական բիւր քանքարոյ Զհսար, բաղում բաղձանօք ցանկացայ հետեւիլ հետոց նոցին, եւ դի տկար եւ անժոյժ ունէին դկատարումն բարսյն, եւ հանապազ զարտուղեալ դտանէի դիս ի շաւղաց նոցին եւ ընաւին յետնոցն, ի շնորհս սչ կարէի ուղղակցիլ, վասն այն՝ յուսով եւ հաւատով ստացա դսուրբ աւետարանս, լսելով ձայնի տեառն, եթէ՝ որ ընդունի զրանս իմ եւ պահէ զնոսա, նայ է, որ սիրէ զիս: Արդ, ապաւինելով ի նա, առի զհրամանն նորա զրով եւ անդիր ի յօժանդակութիւն ինձ ի հոգևորս, եւ ի պահպանութիւն հոգւոյ եւ մարմնոյ, պարիսպ ամրութեան յամենայն չար պատահարաց, նայ եւ յետ աստի կենացս յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց, հօր իմո՝ Աւթաշէրին եւ մօր իմո Շարուեռ:*

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանգիպիք այսմ աստուածային աւետեաց երգարանիս յօրինակել, կամ յընթեռնուլ, կամ ի լսել, յիշեսջիք բարի կամօք զմեզ ի՞ զվերասացեալ մեր ծնողս ի մաքուր աղօթս ձեր, եւ աստուած յիշողացդ եւ յիշեցելոցդ առհասարակ ողորմեսցի, ամէն:

Ժամիմ եւ ես՝ մեղապարտ անձն Գաւազան, պիտակ անուամբ քահանայ, փանաքի եւ վգուն գրիչս, զպատահեալսդ սուրբ աւետարանի յիշել զուարթ սրտիւ ի մեղսաքաւիչ աղօթս ձեր զմեզ, եւ զծնողսն մեր, եւ զուսուցիչս, եւ զերախտաւորս, եւ տէր եղիցի ընդ ձեզ եւ ընդ մեզ, ամէն. եւ սխալման եւ խոշորութեանն անմեզաղիր լերուք, զի այսչափ էր կար մեր, եւ նուազ եէ խիտ գրեցաւ վասն այն, որ մագաղաթ չկայր:

Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊՋ. (1357), ի գաւառիս Երնջակա, ի գեօղս Նորակերտ, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորիս, ի խնգլոյ քրիստոսասէր եւ ուղղադաւան պարոն Զհսարին, որ ստացաւ զսա հալալ արդեանց ի բարեխօս զերկար եւ խաղաղ կենաց իւրոց, և ի յիշատակ վերոզրեալ ննջեցելոց իւրոց, զորս ի ստոյգն եւ ընտիր օրինակէ շարագրեցաք, զոր տէր աստուած վայելել տացէ կրկին կենօք...:

508.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6332 և Փիլոլ. 6273, էջ 155

Գրիչ՝ Կարապետ

...Եւ արդ, ի յայսմ թուարերութեանս Հայեական տումարիս՝ յութհարիւրերորդի վեցերորդի (1357), երևեալ աստուածասէր և բարիանուն մահդասի, որոյ հնդրաւ յորջորջի... սա ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իւրոց աշխատութեանց, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց՝ Գրիգորի և Մերչա խոթունի, եղբարցն՝ Աւագի
273բ *և Յովանիսի, և ազգայնոցն ամենեցուն՝ կենդանեաց և հանդուցելոց, եւ ետ զսա ի սուրբ ուխտն և յանուանի հռչակաւոր տեղին, ի դուռն սրբոյն Գէորգեայ զաւրավարին, որ հանապազ հրճուին սովաւ մանկունք սուրբ եկեղեցոյ՝ Յովանիս, Ստեփանոս, Ատամ, Աստուածատուր, Յոհաննիս, Յովանիս, Մխիթար*, և հանապազ յիշեն յաղաւթս իւրեանց, և առաւել ի ժամ սուրբ և սոսկալի պատարագին, զստացող սորա՝ զեղնդու մահդասին, և զծնաւղսն՝ զԳրիգոր և զՄերչախաթուն, և զեղբարսն՝ զԱւագ և զՅովանիս, և զաղգսն ողջոյն, ամէն։*

Եւ արդ, ես՝ ունայնացեալս ի գործառնութեան կանուխ ժամանելոցն. յոգնամեղս և փցունս ի գրչաց, սուտանուն Կարապետ, յերես անկեալ աղաչեմ զհայրական և զեղբայրական զութ սիրոյ ձերոյ, յիշեցէք և գիմ անարժանութիւնս, և աստուած-ողորմի ասացէք մեզ
274ա *և մեր ծնաւղացն՝ Թովմայի և Մամասի, և եղ բարցն՝ Մկրտիչ քահանայի և Շահապի՝ տարաժամ հանգուցելոյն։*

Յիշեցէք և զծաղկող սորա զՋաֆարիայ կրաւնաւոր և զԱրդրլմսեխ սարկաւագ, որ աշխատեցաւ ի կոկիզ Թղթիս. և Քրիստոս աստուած. որ առատն է ի տուրս, ձեզ և մեզ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ո՛վ ևղբարք, յայսմ ամի, յորժամ զսուրբ աւետարանս գրէի, ևղև գալուստ զանին յարևելից և ըմբռնումն Աշրաֆին, ապա յետոյ չդիտենք թէ ոնց պիտի լինի, զինչ որ աստուած կամի։

212ա *Եւ արդ, ես՝ եղնդու մահդասիս, որ ըստ աստուածային յաջողութեանն եղէ առաջնորդ սուրբ ուխտիս Գէորգայ, և շինեցի զվանքս, և գնեցի զաւետարանս, և զտարեղիրքս, և զգործ առաքեալն, և զճաոընտիրն, և ևրկու մաշթոց, և շարականոցն, և ղխազտետրն, և զամենայն զարդիւք զարդարեցի զանապատս ըստ իմում կարողութեանս։ Այլ և բերի զեղբաւրորդին իմ, որ է ըստ աւրինաց և կանոնաց իմ որդի, և ևոևոև արարի ինձ հոգևոր որդի և յիշատակ հոգոյ իմոյ, որ և իմ արդար վաստակով ստացած գրեանքս ի վայելումն անձին նորա լիցի՝ Յոհաննիսին, որ և տէր աստուած արժանի արասցէ աստիճանի քահանայութեան և յաւելու ի շնորհսն, որպէս Սաւուէլին, և եղիցի մշակ անամաւթ ընդունելի տեառն և բարի յիշատակ ամենայն հաւատացելոց, ևս առաւել՝ աղգատոհմին իւրոյ, ամէն։*

* *Այս անուննները գրված են այլ ձեռագրով դատարկ թողնված 4 տողերի վրա։*

509.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թղթաւն 8388 (տես նաև 1038 թ.)

Գրիչ՝ Գրիգոր որդի Նատերի
վայր՝ Ղրի՞մ

Ի թվ. ՊՉ. (1357), մայիս ի ԺԱ. (11)։

103ա Զստացաւդ այսմ աստուածախաւս մատենիս՝ զՄարգարէսս կուսակրաւն կրաւնաւսբ և զեղբայր իւր զՍարգիս միաչնակեացն՝ զրազում առաքինութեամբ զարդարեալքն, յիշեցէք ի տէր։

Ընդ նմին և զիս՝ զանարժան և զմեղսասէր գրիչս զԳրիգոր սուտանուն սարկաւագ, և աստուած յիշողացդ և յիշելոցս առհասարակ ողորմեացի։

Զհայրն իմ զԹատեր, զպատուական ծերունին, զրազմաց գսվեւլին, յիշեցէք ի տէր։*

ՊՉ. (1357), Մեծ խանն ի Թաւրէզ գիմեալ գնաց,

510.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թղթաւն 2371

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Սուրխաթ

... Ճառանօթ յանգ ելեալ կատարեցաւ տառս այս իմաստասաստում, որ կոչի քերականն, արարեալ և մեկնեալ զսա մեծ վարդապետին Հայոց Վարդանայ Կիղիկեցւոյ, ի խնդրոյ բարեպաշտ Թագաւորին Հեթմոյ, նաև խրատք Գէորգեայ վարդապետի, և անհաս գրչին Առիստակիսի՝ մեծ հռետորի, ի Քուխս Հայոց ՊՉ. (1357), ձեռամբ Ստեփաննոսի մեղապարտ և յետին գրչի, ի խնդրոյ սրբամաքուր և ընՔերցասէր քահանային Կարապետին, ի վայ ‖ ելուճն անձին իւրոյ և յիշատակ հոգւոյ իւրոյ, վասն զի սա է քանոն և գաղափար ամենայն արհեստից, ևս առաւել որք փութան ձեռնարկել յարհեստս գրչութեան։ Զի որպէս անհնար է թռչնոց ի լուծ չծել և ակաւս պատառել, և կամ եզանց յաւդս վերանալ, նոյնպէս առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան. և որ յանզգնի համարձակել՝ ոչ կարէ գրել զճշմարիտն, այլ եղծանէ զարուեստն և աղաւաղէ զգրելին, բոտ անիմաստ խոհակերի, այսինքն մսագործի, որ ոչ գիտէ զորոշումն յաւգուածին, այլ անհմտարար հանէ զանգա-

202ա

* Այս նախադասութիւնը գրված է այլ ձեռագրով։

մայն միան ի միւս անդամն և զմիւսոյն՝ ի միւս այլն, բայց են ամանք, որ ծաղր առնեն զդէրս զայս, որպէս և է մեր ազգիս հպարտութիւն և բրտավզութիւն, Զի որպէս մարգարէ ի քէրթ խոզի և մանեակ ոսկի ի պարանոց իշոյ, այնպէս է սա ի ձեռն անիմաստ և
202բ անմիտ առնն, այլ ‖ որ արբի սիրոյ սորին, նա միայն գիտէ զճաշակ քաղցրութեան դորա։

Բայց գրեցաւ սա յաշխարհիս Հոռոց և ի յերկիր Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքին, որ կոչի Սուրխաթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեանն Հայոց տեառն Մխիթարայ և յեպիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի՝ աւրհնեալ քահանայապետի ամենայն հիւսուածական կողմանց։

Արդ, որք հանդիպիք սմա ուսմամբ կամ աւրինակաւ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զԿարապետ սրբամաքուր քահանայ, և զծնաւզս իւր՝ զհայր իւր զպարոն Աստուածատուրն, և զմայր իւր զԼղուքն, և զքոյր իւր զՀրիպսիմ՝ զիոխանցեալն առ Քրիստոս, և զհամեստ ամուսին իւր զԳոհար տիկինն, և զնորաբողբոջ զաւակն իւր զՀիլալն, և զՎարդենն։ Հնդ նմին և զիս՝ զեղկելի գրիչս զՍտեփաննոս, և զծնաւզս իմ, և զամենայն արեան մերձակայս իմ, և աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշելեացս առհասարակ ողորմեացի, ամէն։

511.

Ա Ի Ն Տ Ա Ր Ա Ն

Երևան 7740 (տես նաև 1429)

Գրիչ՝ Մխիթար Անեցի
վայր՝ Սուլթանիա՞յ

ա

200բ Ես. առտ ես և յամենայն տեղիս յիշել աղաչեմ զանարժան ծնողս և զկաղմողս՝ զՄխիթար Անեցի. եղև աւարտուն սորա Թվին ՉԶ. (1357)։

բ

...Ես արդ, քանզի ցանկացող եղև այսմ կենսաբեր և տիեզերահրաւեր սուրբ աւետարանիս արդարամիտ և յամենայնի երկեղած բարեպաշտ առնս այս՝ Մամիղէն սարկաւագս... յիշատակ իւր և ծնօղաց
388բ իւրոց, հօրն իւր Շահ[է՞]ին, և մօրն ի[ւր] ‖ Շուշանայ.* և եղբայրց իւր՝ Շահինն, նաև ի Քրիստոս աստուած հանգուցեալ պարկեշտ հաւատարիմ ամուսնոյն իւր Սուլթան-Մելիքին, և մատաղատունկ երկուց արդեանցն իւր, որ աղա ի Քրիստոս գնացին և թողին սուէ անմխիթար հօրն իւրեանց և այլ ամենայն արեան մերձաւորացն...։

Դարձեալ աղաչեմ աղերսալի մաղթանօք յիշել ի Քրիստոս Ջա-

* Այլ գրչով ուղղված է անունը և գրված՝ «Շուշիկայ»։

ֆարիսա] քահանայն, և դաներն իմ զուսթայ Վրացն, և զոքանչն իմ զՄարիսանէ խաթունն, և զքենեկալն իմ Նաւրադին զաստալն, և զքենին իմ զԻ[կ]զա Մէլիքն...։

390ա ...Նաև զիս զրաղմամեղ և դանիմաստ զծող սուրբ աւետարանիս զՄխիթար Անեցի, [որ] ձեր ալևաւք և տկար անձամբ զրեցի զսայ։ Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զամենեսեան առհասարակ, անմեղադիր լինել սխալանաց և խոշորութեան զրիս, վասն զի կարի յոյժ իմ ձեր անձամբ աշխատեցայ ի զրելն սորայ։

390բ ...Զրաղմաւէր ողի զմանկաւաղ Ներսէս՝ զսակաւ աշխատողս ի սմայ, աղաչեմ միով տէր-ողորմեայիւ օգնական լինել, զի և դուք ողորմութիւն գտանէք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ ի ՀԾ. հարիւրերորդի հինկերորդի (1356), ի փառս Քրիստոսի աստուծոյն մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

գ

391ա ...Եւ զրաղմամեղ Զաքարէս՝ ղևինեծախս, ի ձեր սուրբ աղաւթս յիշեսէք...։*

512.

ՏՈՆԱՊԱՏՃԱՌ

Երևան 2039 (տես նաև 1624 թ.)

Գրիչ՝ Անտոն
վայր՝ Կաֆայ

319բ ...Այլ և զայս գրեմք վասն աստուածա||պատում տառիս, որ գրեցաւ ի թուականութենէ յայտնութեան կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՃԾԹ. (1359) և ի Հայ թուականութեանս ՊՋ. (1357)։ Կատարեցաւ ձեռամբ ամենամեղ և անիմաստ զրչի ապիկարի՝ Անտոն անուն անարժան քահանայի, յաշխարհս Հոնաց, որ այժմս Ղրիմ կոչի, ի քաղաքիս աստուածապահ, որ Կաֆայ անուանի, ի վանս կուսանաց, առ ոտս և հովանիս մաւր տեառն մերոյ մաւրն սուրբ Աննայի, ի հայրապետութեան Հայոց տէր Մխիթարա, և ի թագաւորութեանն Կոստանդիանոսի Հայոց, և յառաջնորդութիւն այսմ նահանգի վերատեսուչ և արհիական եպիսկոպոսի տէր Ստեփաննոսի, և երեսփոխանի նորին տէր Յոհաննէս աբեղայի՝ կորովամիտ և ուղղափառ հռետորի Սերաստացոյ։

Արդ, գրեցաւ սա յիշատակ հոգւոց, և ծնողաց, և զաւակաց, և կենաց կցորդի, և ամենայն արևան մերձաւորաց Անտոն քահանայի, որ բաղում աշխատեցաւ ի տես և ի փափագ վայելս սորա, և ձեռամբ իւրով գծագրեաց յոյժ աշխատանաւք, և փորձանս և հակառակութիւն

* Ավետարանը գրված է հավանորեն Սուլթանխայում, մանզոլական արվեստի զգալի ազդեցությունը կրած եվակի հուշարձաններից մեկն է։

ոչ սակաւ կրեաց ի հերձուածողացն, և պատերազմ, որ կայր ի ժամանակին յայնմիկ, և այլ յոլով վիշտս ի բանսարկուին արկածիցն, որ ի մի աւուրն երիցս անգամ կազմրին մարանն վաթեցաւ, և էր ձմեռն ժամանակ, և ի հուրն եփելով էր քանաքն, և այլ շատ ձանձրութիւն ի քնոյ րերէր բանսարկուն յամարային ժամանակին, և խափանուին ջանայր աստուածազարդ տաճիս...։ Այլ և կայ լուծմունք և մեկնութիւն տաճիս ի սուրբ հայրապետացն՝ ի Պետրոսէ Աղեկսանդրու հայրապետին, և ի Գրիգորէ Աստուածաբանէն, և Յովհաննու Ոսկիբերանէն, և յԱնանիայէ վարդապետէ, յեպիփանու, յեփրեմէ և ի Բարսղէ և յայլ սուրբ աստուածազգեաց արանց, որ վասն ծննդեանն և յայտնութեանն և ամենայն տէրունական տաւնից տան վկայութիւն և կարկեն զբևրանս հերձուածողացն, որք ասեն զծնունդն ի դեկտեմբեր Ի՟Ե. (25) և զաւետուին՝ մարտ Ի՟Ե. (25)...։

Արդ, ստացաւ զսա յիշատակ իւր Անտոնն և ամենայն զարմից, յարդար վաստակոց, այն է՝ որ ձեռամբ իւրով դրեաց, և որք աւգնականն եղեն ի գիրս մարթաւոր ընչիւք, անուանք նոցա, որ յիշին աստ այս է՝ Ումեկ ժամկոչն, և Նորշանէ, և Առաքելն, որ ի սղութեան ժամանակս աւգնեցին մեզ հացիւ և արդեամբքն՝ որով կարացին։

Արդ, որք կարդայք զդիրս զայս կամ աւրինակէք, սուրբ հարք և եղբարք, թողութիւն խնդրեցէք յաստուծոյ այժմ յիշեցելոցս, որ աստ կան՝ Անտոնիոն, և կենակցին իւրոյ Թագուհոյն, և զաւակացն
320ա Մագաքի ‖ այի սարկաւագին, և Սահակի՝ եղբաւր նորին, և Յակոբ պատանեկին. և ծնողաց սոցա՝ Խաւթին և Մարիանիին, և Աստուածատրին և Շնոփոր տիկնա, Նորշահին, և հաւր նորա՝ Հաւրատին, և մաւր իւրոյ, և կենակցին՝ Աւագ տիկնա, և կանուխ վախճեցելոյն առ Քրիստոս Մարտիրոսին, որով ըստ անուանն և զկեանս ժառանգեսցէ, և քուրոյս սորին՝ Շնոփոր տիկնայ, Առաքելին, և ծնողաց իւրոց, և Ումեկ ժամկոչին, որ աւելի աշխատեցաւ քան զկար իւր, և ծնողաց նորին, և եղբաւրն՝ Տղայպարոնին, և աւրինակիս շնորհողին՝ Կարապետ քահանային, և ծնողաց նորին։ Աղաչեմ, սուրբ ընթերցողք, ի յաւժար կամաց ձերոց հայցեցէք և խնդրեցէք ի Քրիստոսէ, զի զանուանս սոցա զրեացէ ի դպրութիւն կենաց իւրոց...։

513.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վենետ. 141 ծուց. Ա. էջ 622-614 (տես նաև 1365 թ.)

Դրիչ՝ Յովաննես

վայր՝ Հռոմկլայի գաւառ, գիւղ՝ Ծակաղրիւր

222բ ...Շնորհիւ տեառն սկսայ և աւգնականութեամբ և ողորմութեամբ բարեբարին ածի ի գլուխ և ի կատար զսուրբ աւետարանս ի թուականութեան Հայոց ի ՊԶ. (1357), ի կաթողիկոսութեան տեառն Յակոբայ. և ի թագաւորութեան Կոստանդեա, և ի հայրապետութեանս

մերում ասէր Փիլիպոսի, ի գաւառին Հռոմկլայի, և ի գեաւղս, որ Ծոփաղրիւք կոչի, ձեռամբ իմով՝ անարժան և մեզաթաւալ, փանաքի և անարհեստ գրչի, որոյ անուն Ցովաննես կոչի, և սուտանուն գալի, իշխանութեամբ և հրամանաւ արքայանալ և առաքինասէր եպիսկոպոսին մերս տէր Փիլիպոսի, զոր տացէ տէր աստուած մեզ զնա ընդ երկայն աւուրս, ի յիշատակ Հերում քահանայի, և ծնաւղաց իւրոց, և զաւակաց, և որդւոյ նոցա՝ պատուականն քահանայի Աբրահամու, սա մեծաւ փափագանաւք՝ յիշատակ նոցին անջնջելի, Արդ, թէպէտ և անարհեստ էի ի գրչութեանս՝ փանաքի և անյարմար, այլ հոգևոր հայրն մեր Հերում, որ լի է և պատուական յարհեստ գրչութեան, և ընդ բնաւս հաչակեալ, նաև բանիւ կատարեալ և հոգով լցեալ, որպէս և ահաւ յայտնի է իմաստնոց և ատենդ գիտողաց, զի լի և կատարեալ է արուեստիւ, ի բանս, ի բառս, ի լծորդս, և ի բացատս, և ի սրտմտնա առագանութեանց ծանոյց ինձ խրատով, և ես՝ մեզաւոր հոգս, յոյժ բազձանաւք և յոգնատոչոր տենչանաւք, մեծաւ աշխատութեամբ, ըստ կարի գծագրեցի զսուրբ աւետարանս ի լուսաւորութիւն մանգանց եկեղեցոյ։

Արդ, յերես անկեալ ազաչեմ զամենեսեան, մանաւանդ զպատ քահանայից... յիշեսջիք զՀերում քահանայ և զծնաւղսն նորա, և զորդի նորա Աբրահամ քահանայ, և զկնունակիցն նորա զՋուհաբն, և զբարեբոյս աստուածասուսլ պատկին իւրեանց Զաբարէ, զոր պահեցէ տէր աստուած ամբոզջ ի փորձողէն՝ հոգով և մարմնով, մինչև ի խորին ծերութիւն. և զամենայն ազգայինսն իւրեանց՝ զմեծ հայրն զՎասիլ, և զկինակից նորայ՝ զխոնճեցեալն ատ Ֆրիստոս՝ զզամէն, և զբարեպաշտ զաւակսն նոցայ՝ զՑովաննես, և զհոգեսէր կենակիցն նորա՝ զՁոզսկտիկինն, և զանգրանիկ որդիս նոցայ՝ զԴաճկլն և զՑաքորն, [զիշխանն, և զմեծր նորա զԼուսամայն],* և զՍիքրոնն, և զիւր կենակից նորա զՄինամխաթուն, նորաբոյս զաւակսւք իւրեանց՝ զԹորոս և զՀերում, որ կամակից եղեն և աւգնական սուրբ աւետարանիս աւարտման, ի յայսմ կենցաղս պահել անաւասան և ողորմութիւն գտանել յահեղ աւուրն համառաւտի, ընդ կամակիցս իւր ի տեառնէ մերմէ Յիսուսէ, և որ յիշեսցէ զվերոգրեալսն, Ֆրիստոս աստուած զինքն յիշէ ողորմութեամբ իւրով։ Ո՛հ, և զիս՝ զիսաւարեալս մեզաւք զՑովհաննէս, և զհայրն իմ Սէք քահանայ՝ զհանգուցեալն ի Ֆրիստոս, և հոգևոր եղբարսն մեր զԻւանէն և զՂազար, երկրամերձ դիմաւք յերես անկեալ ազաչեմ զձեզ, ով լուսերամ դասք քահանայից և սարկաւագաց, որք հանդիպիլք և զմ[ոյ]նիք ի կենսաբուխ սուրբ աւետարանէս, յիշեսջիք...

* Փակագծի մէջ բերուածը մանր տառերով գրած է տպագրութեան։

514.

ԱԻՏԱՐԱՆ

Թղթան 4216 (տես նաև 1554 և 1730-ական թ.թ.)

Գրիչ՝ Մկրտիչ
վայր՝ ի Թաղս Դուդուշի

398ա Աստանաւուբ յանկ ելեալ կատարեցաւ աւետարանս ձեռամբ յոգնամեղ և վշուն գրչի Մկրտիչ քահանայի, ի Թաղս Դուդուշի կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս սուրբ Գէորգ կոչեցեալ, հրամանաւ և արդեամբք հաւատարիմ Քրիստոնէին՝ պարոն Հայրապետին, յիշատակ իւր և ծնողաց և եղբարց և զաւակացն, հաւրն իւր պարոն
298բ Մանուէլին, և մաւր իւր Սաֆիրայ խաթունին, և եղբաւր իւրոյ պարոն Կարապետին, և զաւակաց իւրոց՝ պարոն Մկրտչին, և պարոն Ջաջարիայինն, և պարոն Առաքելին, և այլ ամենայն ազգատոհմին իւրոյ, և զարմից, և ամենայն արեան մերձաւորաց և եղբայրասիրաց։

Արդ, որք, հանգիպիք այս լուսազարդ սուրբ աւետարանիս կարգալով կամ աւրինակելով, յիշեցէք յաղաւթս ձեր զվերոգրեալսն, զՄկրտիչ քահանայն, և զպարոն Կարապետն, և զպարոն Հայրապետն, և զամենայն զարմ իւրեանց, և որք յիշէք զմեզ յիշեալ լինիք առաջի Քրիստոսի յիւր սուրբ միւսանգամ գալուստն, և մեք և դուք ի մի բերան աւրհնեսցուք զաստուածն հանապազ։

Բայց գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊՉ. (1357), ի նոյեմբեր ի Ա. (1՝) աւարտեցաւ։

515.

ԱԻՏԱՐԱՆ

Քերդ. 6273, էջ 155–156 (Վան, սր. Վարդան եկեղեցի)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Սրուսադեմ

... Ցամի ՊՉ. թուականութեանս մերոյ, (1357), ի հայրապետութեան տեառն Յակոբայ և ի թագաւորութեան Կոստանդիանոսի գրեցաւ սուրբ աւետարանս, ի սուրբ քաղաքս Սրուսադեմ, ի գրունս ոտից և փառաւոր տաճարիս Քրիստոսի սուրբ Հրեշտակապետաց, ձեռամբ փնանաքի Կարապետ գրչի։

516.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ ԵՓԻՍԿՈՊՈՍԻ

Թղթան 3405 (տես նաև 1363 և 1668 թ. թ.)

Մատեաղ՝ Կարապետ

378բ Շնորհիւ տեառն սկսաւ և զգործուածքեամբ նորին կատարեցաւ աւետարանս քան զնուկա, մեկնեալ Իգնատիոսի եպիսկոպոսի, ձեռամբ

Սաեփաննոսի աշխատասէր գրչի, ի բարեխաւսութիւն ինձ՝ մեղաւորիս Կարապետի, և կենակցի իմոյ Գուհար տիկնա, և զաւակաց մերոց Հէլալիճ, և ծնաւղաց մերոց՝ Նահբերիճ, և Մովսիսիճ, և Ալգերիճ, և ամենայն զարմից, որք աւգտիք մեղաց քաւութիւն հայցեցէք ի Քրիստոսէ աստուածոյ մերոյ։

Ի թվ. ՊՉ. (1357) գրեցաւ, և ի մարտի Ի. (20) աւարտեցաւ, ի վիտոս աստուածոյ։

517.

ՃԱՇՈՑ

Երևան 7435

457բ Աւրհնեալ ես աստուած... որ ետուր զաւրութիւն հասանել ի նաւահանդիստ ծովանման գրչաւորութեանս, որ ի սկսանելն յուսով մտաք և զեղերս աչաւք տեսաք, եղև խնդութիւն, ըստ աւրինակի նաւելոցն՝ ելանել ի նաւէն, և տեսանել զնաւահանդիստն, և զոհանալ զարարողէն, աւրհնութեամբ, զովութեամբ, և երկրպաղութեամբ, յաւիտեանս ամէն։

Ի թվ. ՊՉ. (1357), հոկտեմբեր ամսու է. (7)։*

518.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 5394

Գլխէ՝ Յուսէփ
վայր՝ Թացու գիւղ

244ա ...Տանուտէրն Դաւիթ, որ ցանկացող եղեալ աստուածարան սուրբ աւետարանիս և ետ զրել զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց...։

244բ ...Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ սուտանուն Ցուսէփիս, ի գեւղն, որ կոչի Թացու, ընդ հովանեաւ սուրբ Գէորգա զօրավարին և սուրբ Ատոմա զօրավարին։ Ի թուականիս Հայոց ՃՃՉ. (1357°),** ի հայրապետութիւն Ախթամարա աթոռոյն տէր Ստեփաննոս կաթողիկոսին և պարնութիւն Ուղալ բէկին, ի գառն և նեղ ժամանակիս գրեցաւ. անմեղադիր կալէք խոշորութեան և սխալանաց մերոց, ղի կայր մեր այս է, առաչին գիրն է այս։

---

* Մատենադարանի գույքամատյանում նշում կա այն մասին, որ ձեռագիրն ընդօրինակված է Գայլեխու կղզում։ Ինչ տվյալի հիման վրա է արված այդ նշումը, մեզ համար մնում է մութ։

** Սույն տարեթիվը կասկածներ է հարուցում։ Ձեռագրում տարեթվի «Ճ.» (100) թվանշանը գրված է այնպես, որ կարող է կարդացվել նաև «Չ» (80). այդ դեպքում թերևս հնարավոր լիներ տարեթիվը սրբագրել այսպես՝ Ը[Ճ]ՉՉ. (886=1437), հնագրական տվյալները չէին հակասի այս սրբագրությանը։ ԺԴ--ԺԵ դարերում Աղթամարի կաթողիկոսներից Սանփանոս անունն են կրել երկուսը՝ Ստեփանոս Դ. (1336—1346), և Ստեփանոս Դ. (1464--1489)։ Սակայն նրանց աթոռակալման թվականները չեն օգնում որոշելու, թե վերոհիշյալ թվականներից որն է ընդունելի։ Չկարողանալով ճշտել հիշատակարանի կասկածելի տարեթիվը, այն թողնում ենք 1357-ի թվաշարքում։

519.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երեան 2087

Գրիչ՝ Ցովաննէս

247ա Արդ, ի վերջին ժամանակիս և յերեկոյացեալ աւուրս եղև աւարտումն առատաձախաւս գրոցս ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Ցովաննիսի, ի փառս Քրիստոսի աստուածոյ մերոյ, ամէն։ Ո՛վ գերամաքուր միտք և սրբասէր հոգիք և ամենայն առաքինութեամբ զարդարեալք՝ հարազատ եղ[բարք] և կուսակրաւն քահ[անայք], յիշեցէք զտառապեալ հոգիս զՑով[աննէս] յերկնաթռիչս յաղ[աւ]թս, և թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ բազում յանցանաց իմոց, և աստուած մեզ և ձեզ ողորմեսցի ամենայն սրբոց աղաւթիւք, ամէն։

Արդ, գրեցաւ աղաւթական գիրքս այս ի յայսմ ամի, յորում էր թիւն Հայոց ՊԷ. (1358), յորժամ գչար իշխանն և դաւերուճն աշխարհաց, զարբանեակն սատանայի, որոյ անունն Աշրաւ կոչիւր, ի խնամոցն աստուծոյ եկն թագաւորն հիւսսայիւն, որոյ անուն Ջաճիրեկ կոչիւր, և երարձ զկարապետ Նեռինն ի կենաց, և եղև դագաբուճն չարեաց նորա։

520.

ՍԱՆԴՈՒՂՏ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԵԼԻՑ, ՑՈՎՀԱՆՆՈՒ ԿԼԵՄԱՓՍԻ

Երեան 5202

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Աւրցդաց գիւղ

284բ ...Ի թուաբերութեանս յորելեն հայկազեան տումարի ՊԷ. (1368) կատարձալ յանդեցաւ գիրքս այս սանդուխտ կոչեցեալ, շնորհաւք* և կարողութեամբ աստուծոյ, ձեռամբ նուաստ և անարհեստ մեղսամաւկարդ Գրիգորի քահանայի, որ չեմ արժանի, թէ կոչեցեալ քահանա, ի գեաւղս, որ կոչի Աւրցդաց, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին և սուրբ Գէորգա զաւրա[վարի, ի խնդրոյ] կրաւնաւոր սուրբ և մաքուր ամենայնի Սարգսիկ, որ ստացաւ զսա ի խալալ արդեանց իւրոց յիշատակ իւրն և ծնողաց իւրոց, և որ կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք զհայր Սահակ, և զՍտեփաննոս աշակերտն նորա, և զԿարապետն

* Այստեղից սկսած հիշատակարանը մաշված է ու խուճապած, այն ստիճանի, որ մի շարք բառեր հնարավոր է լինում կարդալ միայն ենթադրաբար։

նըբամիտ կրաւնաւուրն, որ բազում աշխատեցան և աստուած զճեզ յիշէ, զ[Ատոմ] սրբամիտ քահանայ, և զԴաւիթ քահանա, և զՈվաննես, և զԹադէոս, և զփցուն գրիչս, և զհայրն իմ, և զեղբայրն իմ։ Ան-մեզազիր լերուք, այս ի հարկէ եղև առաջին գիր, և այլ չեմ արարել։ Ժամանակս այս է, որ Պ.աւչին տարաւ զմե[զ...] զՎան(՞), խիստ գառնուԹիւն էր ժամս։

521.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վէնետ. 112 ծուց. Ա. էջ 500

Գրիչ՝ Յովաննես
վայր՝ Ղրիմ, Կօֆսու Նորաշէն ֆալամ

295= ...Արդ, աստանաւր յանդ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս ի լաւ և յընտիր աւրինակէ, հոգեկիր և գերիմաստ վարդապետին և քա՞ջ բաբունոյն Գէորգեա [Սկևռացւո՞յ], ի Թվ. Հայոց Գէ. (1358), նո-յեմբ[երի] ԻՀ. (28), ձեռամբ իմով՝ նուաստ և տգէտ, [յ]ոգնամեղ և անիմաստ, Թարմատար և փցուն գրչի Յովաննես կր[աւնաւոր]ի...։ Եղև զբաւ սուրբ գրոյս ի յաշխարհիս Հոնաց, ի Նորաշէն քաղաքս, որ կոչի Կօֆսու, ընդ հովանեաւ Նորաշէն եկեղեցւոյս սուրբ Գրիգորի Լուսաւորչին։ Արդ, որք բնԹեռնոյք կամ աւրինակէք, յիշեսջիք ի Քրիստոս նոյն զգրող գրոյս, զնկարող և զկազմող սուրբ աւետարանիս, զրազմամեղ, սուտանուն զՅով[աննես] կր[աւնաւոր]...։

522.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 7435

Գրիչ՝ Նատեր
վայր՝ Սուրխա՞ք

ա

...Արդ, յամի Թուաբերութեան կենարարին մերոյ, որդւոյն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի յայտնութեանն ՌՃԿ. (1360) և ի Հայկազնեայ տումարի՝ Գէ. (1358) եղև զբաւ գրչութեանս այսմ հոգիանորոգ և պայծառափառ և աստուածապատում մատենիս...։ Զայս փա-459= ռաւոր մատեանս տեսեալ աստուածահաճոյ ընտ || բեալ կրաւնաւորքն Յովաննես և Յոհաննես՝ եղբարք հարազատք և որդիք ճշմարիտ քահանայի Վարդանայ՝ փոխեցելոյ յաստեացս...։

Արդ, որք հանդիպիք այսմ մատենի կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՎարդան քահանայ, և զամուսինն իւր զՇարբր՝ զփոխեցեալսն ի Քրիստոս, և զքոյրքն իւր՝ զԳրոցն, և զՄագիկն, զՄանիարն, զԽաչատաքունն, զԽերխաթունն, զԲաւնքաւսն, զՓոքրտիկիննն, զԹամարն, զՅովաննես երէցն,

զԹիմայն, զվարդապետ երէցն, զԽելաւբն, զՍերովբէն, զԳրիգորն, զՅոհաննն, զՍտեփաննոս արեղան, զՅովաննէս երէցն, զՄուլբան, զՀռիփսիմէն և դայլ ամենայն աղգայինսն՝ զկենդանիս և զննջեցեալսն զկրաւնաւորացս Յովաննիսին և Յոհաննիսին, և Թողութիւն մեղաց և սխալանաց հայցեցէք յաստուածոյ։

Ընդ յիշեցելոցս և ստացողաց մատենիս յիշեցէք զանիմաստ գրիչս զնատեր, զառածեալս մեղաւք և զծերացեալս անիրաւութեամբ, և զամենայն աղղայինսն իմ՝ ծնողաւք, և եղբարբք, և քւերբք, և տղայաւք, և Թողութիւն խնդրեցէք յաստուծոյ վասն մեր, զի և ձեզ ողորմեսցի, և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտ[եան]։

Բ

276բ Նւաստ գրիչս և անպիտան,
զձեզ աղաչեմ որդիք մարդկան,
Այս հրաշալի տաւնիս պաշտման,
որք ընթեռնուք զայս ներբողեան,
Տուք աւրհնութիւն աղերսական
աստուածային հոգւոյն բղխման,
Եմ ես կարաւտ ծարաւական
ձերոյ խնդրոյ ինձ Թողութեան
Րամեալ բոլոր և կատարման
զձեզ յիշել արէք արժան։*

523.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԴՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Վրաց. Թանգարան, № 34

Գրիչ՝ Աւետիս որդի Նատերի
վայր՝ Սուվխաթ

152ա ... Սովին կերպիւ և ձևով եղեալ շնորհընկալ ի հոգւոյն այբս աստուածակոչ Վարդան միայնացեալ, առեալ յանձն զնախատինսն Քրիստոսի զփարթամաբեր աղկաղկութիւն, կորզեցաւ ի բնաւին ընչից կենցաղոյս հիւթականի, զատեալ հեռացեալ և աւտարացեալ ի բուն բնակութենէ, ի սիրելի բարեկամաց, ի յարազատ եղբարց, համախորհուրդ աննդակցաց, ի զահայից բարձակցաց իջեալ, խոնարհեալ, որպէս մանուկ սարտուցեալ ի ստենէ ոչ գնալ ընդ մեծամեծս և ի սքանչելիս, ոչինչ բերելով Թոշակ ինչ ապրանաց մարմնոյ, բայց միայն զխաչն պարծելի տեառն Յիսուսի, ըստ Պաւղոսի, գիմեալ հասանէր ի բուն բնակութենէն իւրոյն կայանի՝ ի քաղաքէ Համիան կոչեցելոյ, բազում գաւառաւք, բարձրաբերձ լերամբք, ահագնատեսիլ ծովօք զանց արարեալ, հասանէր անշունչ կառաւք ընդ երեսս երկնագոյն

* Տողակզբի տառերով հոդվում է գրչի անունը՝ ՀՆաաեր։

դաշտին չու արարեալ, գայ ի կողմնս հիւսոյ՝ յաշխարհս Հոնաց, ի մեծահռչակ և հոյակապ քաղաքս Սուլխաթ կոչեցեալ։ Եւ ըստ բնական սիրոյն կրաւնից մերոյ, զոր ունէր յոգւոջ, որ էր ուսեալ ի հարց
182բ իւրոց, աճնչայր ծանաւթանալ զրոց ընթեռնելոյ, ‖ և զի մերոյս լեզուի անընդգել էր, և հարկ ուսմանն անցեալ, հոգայր միշտ, թէ որպէս հասցէ խնդրոյն. ապա խորհուրդ ըարի ի միտ բերեալ ի տեառն թեւլադրութենէ, որ ասէ թէ ոչ դարձջիք և եղիջիք որպէս զմանուկ՝ ոչ մտանիջք յարքայութիւն երկնից, նախ ի մեղաց դարձեալ ի տղայական անմեղութիւն, և ապա, իբրև մանուկ տհաս խոնարհեալ ի բարձրութենէ մեծանձնութեան իւրոյ, գրէ տախտակ սիղոբայից և ուսանի բազում չանիւ և փութով։ Իսկ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ՝ տէր, շնորհս ետ գիւրաւ ուսանիլ ընդ զրոյն և գլեզուս մեր, և ուսեալ զսաղմոսն Դաւթի և զկարգեալ աղաւթսն քարոզանովքն, և ուրախութեամբ երգէր գուարթանման աննիւթ աչաւք և անհանգիստ իրանամբք, և խնդրէր գտանել զյարկս աստուածոյ Ցակորայ, գըտեալ զճաշակ բանից աստուածոյ, որ ի գիրս սուրբս, լաւ համարեցաւ քան զմեզր բերանոյ։ Ստացաւ և զտառս հոգենորոգ սրբոյ հաւրն մերոյ Գրիգորի զուարթանուն հսկողի և ճշմարտաբան վարժապետի Նարեկայ մեծափառ բարձրապատիւ ուխտի վանապետի, ի դաստիարակութիւն անձին իւրոյ, և յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնողաց և եղբարց և երախտաւորաց, հոգւոյ բարերարաց և մարմնոյ տածողաց։

Արդ, որք հանդիպիք պատուական և սուրբ տառիս տեսանելով, ընթեռնելով և աւրինակելով յիշեսջիք ի տէր դատացող սորա զՎարդան սրբասէրը, որ այժմ ըստ մականուանութեան Հոնի վերակոչի, և զծնողս իւր՝ զպարոն Վարդեր և զԱգգեաիկինն, զեղբարսն իւր՝ զՄելիտոնն և զՇնոփորն, և զբնաւ ազգայինսն և զերախտաւորսն, և թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ յանցանաց սոցա, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Նաև զծնող սորա զԱւետիս, և զհայրն իմ ուսուցիչ՝ զՆատեր, և զմայրն, և զտէր Գրիգոր Նորընծայ եպիսկոպոս՝ զեղբայրն իմ, որ այժմ են ի Բարբրդ,* և զՍտեփ[անոս] քահանայ, և զքուերսն, և զսպասաւոր կենաց մեր յիշեսջիք ի տէր։

Ի թվ. ՊԷ. (1358) գրեցաւ, ի Ղրիմ քաղաքի, ի Հոզետներս վերի, ընդ հովանեաւ սուրբ Ծորանացս, սրբոյն Սարգսի և այլ սրբոցս, խան Պերտին էր։

---

* Այս նախադասությունից կարելի է եզրակացնել, որ իրը Նատեր գրիչը, իր կնոջ հետ մեկտեղ, 1358 թվականին գտնվելիս է եղել Բարբերդում, իր որդի Գրիգոր եպիսկոպոսի մոտ, սակայն հազիվ թե այդպես լինի։ 1359 թվին ընդօրինակած Տօնապատճառի հիշատակարանում (տես № 533 հիշատակարան) Նատերը հայտնում է, որ ինքը գտնվում է Ղրիմ (Սուրխաթ) քաղաքում։ Հազիվ թե ծերունի գրիչը իր կյանքի մայրամուտին հանձն առներ այդքան երկար ու ժժվարին ծովային ճամփորդություն, Ղրիմից գնալով Բաբերդ, և կրկին այնտեղից վերադառնալով իր բնակավայրը՝ Սուրխաթ։

524.

ԱԻԵՏԱՐԱՆ ԵՒ ՃԱՇՈՑ

Հալէպ, սր. Մնկ. 54. Սիւրմ. 8ուց. հա. Ա. էջ 118

Գրիչ՝ Աւագ
վայր՝ Երուսադէմ

443 *... Ցամի ութհարիւրերորդի եւթներորդի մեծ թուականի(ին) մերոյ (1358) գրեցաւ լուսաիղձ և կենսակիր աստուածաւանդ, աստուածախուսս սուրբ աւետարանս ի սուրբ քաղաքս Երուսադէմ, ի դրունս սուրբ և փառաւոր տաճարիս Քրիստոսի սուրբ Հրեշտակապետաց, ձեռամբ անարժան և մեղսաթաւալ փանաքի և անարհեստ գրչի, սուտանուն աէր Աւագ իրիցու, ի խնդրոյ աստուածարեալ և սրբասէր կրաւնաւորացն Գրիգորի և Սիմէոնի, որ և եռուն գրել զսա մեծաւ փափաքանաւք յիշատակ Գրիգորի, ծնաւղաց իւրոց՝ հաւր իւրոց՝ Գանձէ և մաւր իւրոյ՝ Ճոհարի, և եղբարց իւրոց՝ Կարապետի, Կարպիսի, և քերցն իւրոց՝ Տիկնացի, Գոհարի, Մարխաթունի և Մինայի, Սիմէոնի, և ծնողաց իւրոց, հաւր իւրո՝ Սարգսի և մաւր իւրո՝ Քնէուշի, և եղբաւր իւրո՝ Մարտիրոսի, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրեանց...։*

Արդ, թէպէտ որ անարհեստ էի գրչութեանս՝ փանաքի և անյարմար, այլ հանդիպեալ լաւ և յընդելի աւրինակի, որ գրած էր Ստեփաննոս Գոյներ-Երիցանց, այն որ լի էր և պատարուն յարուեստ գրչութեան և ընդ ընաւս հռչակեալ, նաեւ բանիւ կատարեալ և հոգւով լցեալ, որպէս և ահա յայտնի է իմաստնոց և ստոյգ գիտողաց, զի լի և կատարեալ է արուեստիւ, ի բանս, ի բառս, ի լծորդս, և ի բացատս, և ի տրոհմունս առոգանութեանց...։

525.

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՑՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԻՒ

Երևան 4391 ե Թաւրիզ, Բերդաքաղ, 34, Ա.Ճաոյան, 8ուցակ, էջ 28—29

Գրիչ՝ Յակոբ

ա

65բ *Զուն այնս ի բարեաց և զթափուրս ի գործոց՝ զՅակոբ սարկաւագ գրող սորայ, և զծնաւղսն իմ, և զամենայն ազգայինսն յիշեսցիք ի Քրիստոս, ով բարեմիտ ընթերցողք, ընդ նմին և զհանդուցեալքն առ Քրիստոս, զքեռիքն իմ՝ զԱռիւծն, և զԱմիրն, և զՖարմաշան, և զխոստպէկն յիշեսցիք առաջի Քրիստոսի աստուծոյ մերոյ։ Թվ. Պէ. (1358), ի ապրիլ ամսոյ փոխեցաւ ի Քրիստոս Ֆարմաշան*. Եւս առաւել ստա-*

* Ձեռագրի գրչութիւնն ավարտված պետք է լինի ոուն՝ 1358 թվականի ընթացքում, որովհետև Ֆարմաշա[ղ]ի մահվան մասին գրիչը խոսում է որպես ականատես, և վերջաւի դեպքի թարմ ազդեցության ներքո։

ցաւդ սուրբ մատենիս զՄինճաս կրաւնաւորն իւր զարմաւքն յիշեսցիք
ի Ջրիստոս Ցիսուս ի տէր մեր։

բ

19բ Ջեղկելի և զՔշուառական անձս՝ Յակոբ սարկաւագ, և զծնաւղսն
իմ, և զամենայն աղգայինսն իմ՝ զկենգանիս և զհանգուցեալս յիշես-
ցիք ի տէր որսի մտաւք, ընդ նմին և զամուսինն իմ զԹաբիանն,
որ տղայ հասակաւ փոխեցաւ առ Ջրիստոս յոյսն մեր և մեզ խիստ
ե անբաւ մազձանք հասուց, յիշեսցիք առաջի Ջրիստոսի աստուծոյ
մերոյ և զտացաւդ սուրբ մատենիս զՄինճաս կուսակրաւն կրաւնա-
ւորն...։

գ

5բ Ջկարաւտ ողորմութեան և զմեղաւոր գրիչ Ցակոբ սարկաւագ, և
զծնաւղսն իմ, և զամենայն ազգայինսն իմ յիշեսցիք առաջի Ջրիս-
տոսի աստուծոյ մերոյ։ Ընդ նմին և զքեռիքն իմ՝ զՅովհաննոն և
զՅակոբն և զՑոհաննն, իւրեանց զաւակաւքն յիշեսցիք ի տէր, և զտա-
ցաւդ սուրբ մատենիս զՄինճաս կրաւնաւորն յիշեսցիք ի Ջրիստոս
Ցիսուս ի տէր մեր։

գ

15ա Զմեղաւոր խաւարեալ ոգիս և զրաղմասխալ գրիչս Յակոբ սար-
կաւագ...ընդ նմին և զեղբայրն իմ զԽաչերեսն, և զքոյրն իմ զՓաշայ
խաթունն, և զիւեսան իմ զԱբրահամն...։

ե

31ա ...Ընդ նմին և զհաւրաքոյրն իմ զՄարքայ խաթունն, զիւրեանց
զարմաւք...

գ

35ա ...Ընդ նմին և զմաւրաքոյրն իմ զԱոլիմելիքն և զիւր տանու-
տէրն՝ զԽուրլուպեկն, իւրեանց զարմաւքն, և զմիւս մաւրքոյրն իմ
զԽասմելիքն՝ իւր զարմաւքն...։

է

37ա ...Ընդ նմին և զհամեստ հարսներն իմ, որ են ինձ քեռեկինք՝
զԽուրլումելիքն և զՈւսլումելիքն՝ իւրեանց զարմաւքն...։

ը

42ա ...Ընդ նմին և զհանգուցեալ զաւդն իմ զտէր Ցակոբ, և զմանն
իմ զՑովհաք խաթունն, և զհաւրքուրն իմ զՄամուշ, որ կուսութեամբ
գնաց առ Ջրիստոս։

Բ

54բ ...Ընդ նմին և զհանդուցեալն առ Քրիստոս զպապն իմ զԱվրամն, և զմաճն իմ զՍարայխաթունն, և զիւր եղբարքն՝ Ջամարէ աղան և զԱլեքսանոսն, և զիւր քոյրն Մամայխաթուն, և զխթախթաթուն...:

ժ

87ա ...Ընդ նմին յիշեսցիք ի Քրիստոս զհանդուցեալ կնքահայրն իմ զՅակոբ ոսկերիչն, որ էր ինձ աւազանին հայր, և զկնքամայրն իմ զԽերխաթունն, իւրեանց զարմաւքն...:

ժա

97ա ...Ընդ նմին յիշեսցիք ի տէր զամուսինն իմ զԹարքաճ, որ տղայ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս յոյսն մեր և ինձ անմխիթար սուգ էթող. ահ, ահ վշաոյս, որոյ վրկիչն յողորմութիւն շնորհեսցէ իւր միւսանգամ գալըստեանն, և նմա փառք...:

ժբ

107ա ...Եւ. զհայրն իմ զՍիմէոն և զմայրն իմ զՆազմիէիէ...:

ժգ

129բ ...կատարեցաւ գիրքս ընծայութեան, որ ի սրբոյն Կիւրղոյ է ասացեալ, ի փառս Քրիստոսի աստուծոյ տեառն մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:*

526.

ՁԱՇՈՑ

Երևան 7471 (տես նաև 1498 Բ.)

Գրիչ՝ Ստեփաննոս

499բ ...Արդ, յամի թվարերութեան կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՑԿ. (1360) և ի հայոց ազգիս մերոյ տումարի ՊՀ. (1358) եղև զրաւ գրչութեան այսմ փառաւոր մատենիս, ձեռամբ նուաստ իրիցու Ստեփաննոսի, ի ինդրոյ աստուածասէր և բարեմիտ մանկանն Շահնշահի, յիշատակ իւր, և ծնողացն իւրոց, և եղբարցն, և քւերցն և ամենայն արեան մերձաւորացն՝ պապոյն իւրոյ Հոռոմշահ, և Պետկանն, Եղիզբայ, Մանկտուգիւ, Նորտնկին, հաւր Շահնշահին՝ Խնկանն, Կաւստնդնայ, եղբարց սորա՝ Նորշահին, Վահրամշահ, Ամի[ր]շահ, և զեռաբոյս եղբաւրսրգւոյն իւրոյ Մկրտիչ զպլրի, և քւերց իւրոց՝ Թանկտիկնայ, Միքատիկնայ, Զարդնկիւ, Նարխաթունիւ, և կողակցին իւր Վարդտիկնայ...:

---

* Գլխավոր հիշատակարանը չի պահպանվել. բերվածները մանր հիշատակագրություններ են, որ թողել է գրիչը աշխատության գլուխների վերջում:

527.

ԱԻՏԱՐԱՆ

Մաքսուդ. ծուց. Աքուլիսի, 18, Արարատ, 1911, էջ 503
(տես նաև 1593 թ.)

Գրիչ՝ Կարապետ

270բ ...Եւ իմով տկարացեալ բնութեամբս՝ բաղմամեղ և անարժան սուտանուն Կարապետ կրաւնաւորի դրեցի զսա թուարերութեանս Հայոց յութհարիւրերորդի եւթներորդի (1358)։ Զոր աստուածասէր և հաւատարիմ կին ոմն անուն Թանկխաթուն, յոյժ փափագմամբ սրտիւ ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց իւրոց...։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք և աւդաւիք ի սմանէ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զստացող սորա զԹանգլսաքուճն, և զծնաւղսն, և զայրն նորա զՅովաննէս. ընդ նոսին և զանյիշելի դրիչս՝ զԿար[ապետ], և զմեր ծնողսն, և զեղբարսն, և զՋաքարիայ ծաղկող, և Ֆրխստոս աստուած, որ տուողն է, ի տուրս ձեզ և մեզ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

528.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Երևան 8430

Գրիչ՝ Մարտիրո՞ս
վայր՝ Մուշ

... Արդ, գրեցաւ աստուածայինս այս մատեան ի փառս Քրիս-
207բ տոսի աստուծոյ մերոյ ի թուի Հայոց ՊՀ. (1359) || ի քաղաքիս Մուշ, ընդ հովանեաւ սրբոյն Մարիանէի, ձեռամբ մեղապարտ գրչի Մարս. (Մարտիրո՞սի), ի ստացում և ի վաստէուն սրբալղան և կուսական քահանայի Ներսիսի, այլ ծախիւք և թղթով աւգնական լինելով Խութլուպեկին՝ հաւատարիմ և իմաստուն վաճառականի: Արդ, որք հանդիպիք այս աստուածայինս դանձու և մեծագինս Մարգարտի առ ի պէտս ինչ աւղտութեան ի սմանէ եղելոյ, առ որս աղաչանս բազմապիսիս՝ յիշման աղաւթից առ Քրիստոս արժանի առնել զՆերսես քահանայ և զԽութլուպեկն, հանդերձ իւրովք ննջեցեալովք արժանի լինել սրբոցն դասուց, ընդ նմին և մեղապարտ գրչիս և ծնաւղաց իմոց: Այլ և աղաչեմ անմեղադիր լինել խոշորութիւն գրոյս, քանզի յոյժ ծեր էի և ոչ էր ժամանակ դրելոյ, կրկին աղաչեմ թողութիւն յանցանաց հայցել յամենառատ պարգևացն աստուծոյ, զի և ձեզ լիցի մասն երանութեան ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Ջծնաւղս Խութլուպեկին՝ զպարոն Աշրաֆն և զՏիկնացն յիշեսջիք, աղաչեմ:

529.

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Օքսֆորդ, Marsh. 467. Տիրայր վրդ. 25. Թղթ. 110, էջ 371

365բ ... Ցետ մահուան Ղեւոնի, վասն ոչ դոլոյ նմա որդի, առնու զթագաւորութիւն Կոստանդին, որ յազգէ Նորին, որ և...վասն անպարկեշտ վարուց սպանեալ եղև ի զաւրաց իւրոց:... Եւ թագաւորէ միւս Կոստանդին յայլմէ ազգէ, որ այժմ ունի զթագաւորութիւն մինչև ցայս վայր: Եւ է թիւս Հայոց ՊՀ. (1359):*

* Այս հատվածը, որից պարզվում է ձեռագրի գրության տարեթիվը, հայ թագավորների ժամանակագրական ցուցակի վերջին պարբերությունն է:

530.

ԱԻԵՏԱՐԱՆ

Փերդ. 6273, էջ 156 (վան, սբ. Յակոբ եկեղեցի)

Գրիչ՝ Յոհաննես

... Արդ, ես՝ մեղապարտ և անարհեստ գրիչս Յոհաննես սուտա-
նուն քահանայ, յանձն առի գրել զսա հրամանաւ սուրբ և երջանիկ,
իմաստասէր և ժրաջան յամենայն գործս բարութեան Յովհաննես
վարդապետի, որ ետ գրել զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց...։ Ցի-
շեցէք ի մաքուր և յարժանաւոր յաղօթս ձեր՝ զարժանաւոր և զա-
մենամաքուր և զծաղկեալս իմաստութեամբ, զղովելի և զառաքինա-
սէր վարդապետս մեր զՅովհաննես ծնողօք իւրովք հանդերձ։ Այլ և
զհեղ և զխոնարհ եղբարքս մեր զՍէթ և զԿիրակոս, որ օգնական եղեն
մեզ ի կոկել թղթիս և յամենայն պէտս սպասաւորութեան, և զՄկրտիչ
տնտեսն մեր, որ կերակրիկն պատրաստէր մեզ, նաև զՊետրոս քա-
հանայն և զեղբայրն իւր զՍտեփաննոս, որ զօրինակն շնորհեցին...։
Արդ, դրեցաւ սուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ՊԸ.
(1359), ի նուրբ և ի նեղ ժամանակիս, որ կատարեցաւ ամենայն
դրեալքն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Դրեցաւ սա ընդ հով-
անաւ Գամաղիէլի* առ ոտս բարեբարոյ և բարեհամբաւ սուրբ վար-
դապետիս Յովհաննիսի։

առ՝

531.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԻՑ

Նբեան ¢137

Գրիչ՝ Յովսէփ

վայր՝ առ ստորոտով Խրիմ մայրաքաղաքիս

343բ ...Դրեցաւ սուրբ դիրս տո ստորոտով Խրիմ մայրաքաղաքիս, ընդ
հովանեաւ սուրբ անապատիս, որ կոչի սուրբ Գրիգոր, յառաջնորդու-
թեան սուրբ մենարանիս տեառն Յովհաննիսի, որ բարուննական գա-
ւազանաւ և բարձրագահ իշխանութեամբ տիրէ մերումս ժողովրդեան,
ախոյեան յաղթաւղ ընդդէմ աբիոսականացն և հերեսիոտաց, պահեսցէ
տէր աստուած և զաւրացուսցէ [զնա] ի կամս իւր, ամէն։

334ա Արդ, եղև զրաւ սուրբ զանձարանիս, յամի ‖ շրջագայութեան
աբամագեանս տոհմի, հայկականս սեռի՝ ի վեշտասան յոբելինի յա-
ւելեալ ութեակ թուոյ, որ է ՊԸ. (1359) թվակ[ան]...։

...Որոյ, այսպիսի ըղձալի վարքմամութեանց համահաւասեալ,
ամենաշնուառս և բազմամեղս, փցուն գրչակս Յովսէփ և լերդակից
344բ եղբայրս մեր ‖ Գրիգոր սուտանուն կրաւնաւոր, քահանայք միակրաւնք
և համակամք, նշդեհք յաւտարութեան, աւտարք և պանդուխտք, որոյ
եռափափագ սիրով գձագրեցի զսա ի վայելումն անձանց մերոց և յի-
շատակ ևիցն յաշխարհիս...։

* Փերդալամյանի ծանոթագրությամբ ¢է ուխտս ի հիգան գաւառի մերձ ի ցեկու գիւղն։

Արդ, աղաչեմ զամենեսեան մոխրամած երեսաւք, որք լուսաւորիք յայսմ լուսարանէ, յիշեսջիք սրտի մտաւք զեղկելի ղծաւզս՝ զՅովաւի և զԴրիգոր, ծնողաւք, կենդանեաւք և հանգուցեալովք, և ամենայն արեան մերձաւորաւք, և զաւժընդակիչ և զյորդորիչ եղբարքս մեր՝ զԱտտուածատուր և զՄարկոս, զԹորոս և զՆերսես և զամենայն եղբայրութիւնս նոր խոշորութեան և փցուն և ախմար և անարհեստ զրոյս աղաչեմ չլինել մեղադիր, զի այսչափ էր կար մեր, և որ առատն է ի տալն քան ի ճշդելն, տացէ ձեզ յիշողացզ և յիշելոցս զիւր արքայութիւնն, և ամենայն հաւատացելոց, և նմա փառք, պատիւ և աւրհնութիւն յանլսելի ձայնից և յամենայն եղանութեանց, այժմ և յաւիտեանս, ամէն, ամէն, ամէն։

532.

ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍԻ, ՍԱՀՄԱՆԵԱԼ Ի ԲՈՆԱՎԵՆՏՈՒՐԷ ՄԵԾ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Երևան 1736

Գրիչ՝ Առաք Արզրումցի
վայր՝ Սուրխաթ

140բ *Կատարեցաւ լէֆէնթա սրբոյն Ֆրանցիսկոսի ձեռամբ Առաքիս Արզրումցոյ, ի մա[յ]րաքաղաքս Սուրխաթ, որ կոչի Ղրիմ, թվ. հայոց ՊԸ. (1359), դեկտեմբերի ժ. (10) կատարեցաւ։*

533.

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երեան 2040 (առ նաև 1366 թ.)

Գրիչ՝ Նատեր
վայր՝ Ղրիմ

456բ *Փառք... որ զաւրացոյց զտկարս և զապիկար, անիմաստ գրիչս Նատեր, զառածեալս մեղաւք, հասանել ի զրաւ տառիս աստուածապատում մատենիս, որ ծերացեալ կենօք ծրեցի ի խնդրոյ սրբազան և կուսական աբեղայի Մարգարէի, ի թվիս հայոց ՊԸ. (1359), յունիս ամիս Ի. (20), ի [մայրաքաղաքս Ղ]րիմ, ի հոյակապ, հռչակաւոր և բազմամարդի | | |***

Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր զճշմարիտ կրաւնաւորն, զստացաւղ սորա զՄարգարէ աբեղա և զծնաւղսն իւր՝ զՋաւրվարն և զՍիրայն, զԱռաքեալն, զՀոիփսիմէն, զՅոհաննէս երէցն, զԱստարշահն, զՏիրացն, զՏիկնացն, զՄաւլէերն՝ վոխեցեալքն առ Քրիստոս, զպատուեալ ծերունին զՅակոբն և զՍիմեոն՝ որդի նորին, և զերկուս եղբարսն՝ զՅակոբշահն և զԹո-

* *Բոնավենտուրէ այս աշխատութեան թարգմանութեանը, համաձայն 141ա էջում պահպանված հիշատակարանի, կատարվել է ՀԲվ. ՉՀԸ. (1330)... ձեռամբ Ապօնցի Ֆրա Ճուբէի» (Fra Minor-ի բառերը եղբայր)։*

** *Մի քանի տող քերված է։*

բոսն, զԲենիկն և զայլ երախտաւորսն, որ վասն սիրոյն աստուծոյ և երկնից արքայութեանն աւդնեցին և յիշատակ ստացան ի վերինն Սիոն զաւակ և ընտանի յՆրուսաղէմ...։

534.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 783

Գրիչ՝ Անտոն
վայր՝ Կաֆայ

325ա ...Գրեցաւ կտակս Ընդհանրական կանոնացս և Թխթոց դրոցս և Ծորնադի հարցմանցս և Ամենայն չար տանջելին և էակաց դիրգս ի միասին ի թուականութեանս Հայոց ի ՊԸ. (1359), ձեռամբ անարժան քահանայի Անտոնի, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, ի յամուր դղեակս Կաֆայ։ Գտանես ի սմա բազում լուծմունք տարակուսանաց, ո՛վ սուրբ ընթերցողի։ Ծորժամ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զԱնտոն սուտանուն քահանայ և զծնողս իւր, զհայր սորին՝ Աստուածատուր, և զմայր սորին՝ զՍնոփոր տիկին, և զվերստին անուցանողս՝ զԴաւիթ և Մարիամ, և զդաւակս սորա՝ զՄաղաքիա, և զՍահակ, զՅակովբ, և զՄելքիսեդեկ, և զմայր սոցին՝ Թագունի, և թողութիւն մեղաց հայցեցէք ի Քրիստոսէ, և աստուած յիշողացդ և յիշելոցն ողորմեսցի, ամէն։

Ոչ գնով ստացաւ զսա, այլ ձեռամբ իւրով գծագրեաց։

535.

ՃԱՇՈՑ

Օքսֆորդ. ms. Arm. D. 2. Տիրայր վրդ. 50, թղթ. 120, էջ 871—872

Գրիչ՝ Մար[գա]րայ

ա

258բ ...Ի նստել քո յատենի յիշեայ տէր զՄար[գա]րայ քահանայ ու զուր ծնաւղսն, ամէն։ Ով որ մեզ յիշեայ նայ տէրն ամենեցուն՝ զմեզ ու զձեզ յիշեայ յատինին. թվ. ՉՀ. (1359)։

բ

291բ Աստուած աւրհնէ զԳինդրաճից* տանուտէրք՝ զԱտոմն, զՄլեամ, զԿարապետն, զՄկրտիչն, զԱսադ աղէն, զԱղուպ, զԹումեն, որ զԳաւշերաց արտերն տւին ի գուռն սուրբ Աստուածածնին և սուրբ Գողոսին և սուրբ աւետարանին լուսոյ գին, յիշեցէք և աստուած ողորմի ասացէք. ով որ գաւէ, կամ գրաւէ, կամ մատնէ յանաւրէ[նաց], թէ մելիք կամ ըռէս, կամ աշխարհական, յա[ն]էծք և զ[ծ]ուգային առնու, ամէն։

* Տիրայրի ընգօրինակութեամբ Հզդին գրամից։

536.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՂՕԹԻՑ

Նբեան 3933

Գրիչ՝ Կոստանդին

ա

89ա Ձերդող հոգևլից ճառիս զտէր Ներսես, որդի Աւշճի Սեւաստիաւսի ի մտաց և յաղաւթից անմոռաց պահեսցի ի ձերս սըրբոյ սենեկի, հանդէպ սեգանոյ արարչընկալի աստուածաբնակի, ընդ նմին և ստացաւղ բանիս պատուական քահանայի Սիմէոնի խնդրեցէք Թողութիւն մեղաց և ծնաւղաց սորայ ի Քրիստոս Ցիսուս։

89բ Գրեցաւ տեսութեան դիրքս ի թվ. ՉԸ. (1359), ձեռամբ Կոստանդին քարտուղարին։*

բ

128բ Ձստացող ներբողինիս զՍիմէոն և զվերջին գծողս զԿոստանդին յիշեսջիք ի Քրիստոս, աղաչեմ։

* Թվականի և գրչի մասին 89բ էջի հիշատակագրությունն արտագրված է ԺԹ. գրի ձեռագրով, հավանաբար, այն ժամանակ գեռևս գոյություն ունեցող գլխավոր հիշատակարանից։

537.

Ձ Ա Շ Ո Ց

Երևան 7437

Գրիչ՝ Պետրոս

ա

262ա ...Գրեցաւ ի թվ. Հայոց ՊԹ. (1360), ի զառն և յանբաբի ժամանակիս, զոր ոչ կարեմք [ըմբռ] զրով արկանել, բայց միայն լոել։ Աղաչեմ զձեզ, սուրբ ընթերցողք, թողութիւն մեղաց խնդրեցէք ինձ և իմոցն, ամէն։

բ

281ա Աղղ, ով պատուեալ սուրբ հարք և մանդունք սուրբ եկեղեցւոյ, յորժամ ընթեռնուք կամ աւրինակէք զսա զհայրն իմ զՅով[հաննէս] քահանայ, և զմայրն իմ զԹամամ, և զամենայն աղգատոհմս մեր, ընդ նմին զիս, զանարհեստ և զանպիտան գրիչս՝ զՊետրոս սուտասնուն սարկաւագ, և զեղբարքս իմ՝ զԱմղիխոս քահանայ և զԹադիոս յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր, և բուն բարին զձեզ յիշեալ յիւր յանտրտումութիւնսն։

538.

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ի Ն Ե Ս Ա Ց Ե Ա Ց Ն Ջ Ե Ց Ի Ս Ո Ց

Վիեն. 336. Տաշ. 8ուց. էջ 782

Գրիչ՝ Աստուածատուր
վայր՝ Կոստանդինուպոլիս

96ա ...Աղղ, եղեւ զրաւ գրութեան սորա ի յաշխարհս Յունաց, ի քաղաքս Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ սուրբ Սարգսի, ձեռամբ Աստուածատուր աբեղաի, ի թվականիս ՊԹ. (1360)։ Եւ այս են տնօրինականաց անուանք զոր տեսաք, առաջինն՝ Քրիստոսի անկար պատմուճան, Բ. սպունկ, Գ. բեւեռ, Դ. Աստուածածնին պատկերն, Ե. Յովանու աջն. Զ. Վլաշէռնասն, որ է Ջունարն Աստուածածնին, ի սպիտակ ի մարմարէ անդուկի խորանին վեր, եւ այլ շատ սրբոց նշխարք, զոր ոչ կարեմ ընդ զրով արկանել. սոցին բարեխօսութեամբ ողորմիս Քրիստոս աստուած զրողաց եւ կարդացողաց եւ ամէն ասացողաց։

539.

ԱԽԵՏԱՐԱՆ

Թորոս Աղբալ, Բ. էջ 437—438 (Տիգրանակերտ)

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Երուսաղէմ

ա

Գրեալ ի թվ. Հայոց ՊԹ. (1360)...յԵրուսաղէմ, ընդ հով[անեաւ սուրբ] տաճարիս աթոռակալ Առաքելոցս Յակոբեանց, ի թաղ[աւորութեան] Հայոց Կոստանդնի, եւ ի հայրապետութեան տեառն Մխսրոպայ, յաոաջնորդութեան տէր Գրիգորայ եպիսկոպոսի Երուսաղէմի, ձեռամբ... Ստեփաննոս կրաւնաւորի, կամակցութեամբ եւ աւգնականութեամբ եւ խրատ տալով վերծանողի, սպասաւորի բանի, սրբասնեալ Գրիգորի քահանայի՝ փակակալի մնծ եւ հռչակաւոր սուրբ եկեղեցւոյս Յակոբայ եւ ամենայն աստուածընկալ նշանացս, եւ մանաւանդ կազմողի սորին...։

բ

Ցիշեսջիք...զստացող սորին զԹագւորշահ դպիր...եւ զծնողս Ստեփաննոս Արեւելցի՝ աշակերտ Սէք վարդապետի...համանման մեծի եւ առաջին վարդապետաց. եւ խոշորութեան դրիս եւ սխալանացս անմեղադիր լերուք եւ զթերին սիրով ուղղեցէք, քանզի յոյժ անհմուտ էի արուեստի գրչութեան, մանաւանդ ի շեշտ, ի ստոր, ի բոյթ, ի վանկ եւ ի փաղաւութիւն, եւ ի ժ. (10) առոգանութեան...։

540.

ՃԱՇՈՑ

Երևան 7741 (տես նաև 1367 թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Կաֆայ

479բ *...Որոյ ականատես լեալ յետինս ի գրիչս և փանաքիս ի քարտուլայս, չուառս և աղկաղկս յամենայնի, և մոռացեալ զիս և զբնիկ տկարութիւնս, ցանկացող եղեալ սմա, թէպէտ և յոյժ անըմբռն, ապաւինեալ յայն, որ տայն ամենայն առատապէս և ոչ նախատէ։ Զհոնարկեցի ի սմա ես՝ Կարապետ երէցս թարմատար մելանաւսր, հասի ի զրաւ գրչութեան սորա ոչ թէ ըստ արհեստիցս և զաւրութեան անձինս, այլ ի կատարումն ուխտեալ հրամանի մարդասիրին, թէ ամենայն որ խնդրէ՝ առնու։*

Արդ, աղաչեմ զհանգիպողազ այսմ տառի յընշման արժանի վարկչիք զանարժան գրիչս զԿարապետս և զիման ամենայն, զհայրն իմ

զԱռուծն, և զմայրն իմ զՈսկիտճն, և զեղբարսն իմ, և զամենայն արեան մերձակայս՝ զկենդանիս և զհանգուցեալս յիշման առնել արժանի առաջի անմահ զենլոյն Ք՛րիստոսի...։

Կատարեցաւ սա յաշխարհիս Դ.րիմ կոչեցեալ, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս Կափայ, ընդ հովանեաւ սուրբ երրորդութեանն, ի վեհագոյն տիրական իշխանութիւնն տեառն Ստեփաննոսի, և յարհիական եպիսկոպոսութիւնն տէր Ստեփաննոսի, ի թուականութեանս Հայոց ¶Թ. (1360), նոյեմբերի Լ. (30)։Եւ որ ցաւակցաբար յիշեսցէ զ՝ի սմա յիշատակեալքս և ինքն յիշեալ լիցի ի Ք՛րիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

541.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Քօռեան, Հայք ի Ջմիւռնիա, Բ. էջ 83 (Էօտեմիշ քաղաքի ընթերցարան)

Հետ. ստացող՝ Ստեփաննոս

...Մտացս զլուսազարդ եւ զդեղեցկայեզձ մատեանս ես՝ ապիկարս ոգով Ստեփաննոս, ի վայելումն ուսումնասէր արանց կատարելոց, եւ յիշատակ հաղոյ իմոյ, եւ ծնաւղաց իմոց, եւ ամենայն արեան մերձաւորաց աղգաց իմոց։ Արդ, որք աւգտիք ի սմանէ կարդալով եւ կամ տարազու իւիք ինչ առնելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհայրն իմ զՍահակ քահանայ, եւ զմայրն իմ զՑիրանց, և զհաւրեղբայրն իմ զԳրիգոր կուսակրաւն քահանայ, եւ զՄածուր կրաւնաւորն, նաեւ զՅոհաննէս, եւ զկուսակրաւն քահանայսն, եւ զիս՝ զանպիտանս Ստեփաննոս, եւ դուք յիշաւղդ յիշեալ լիջիք ամենասուրբ բարեբարբէն աստուծոյ, ծիշեոջիք եւ զհարազատ եղբայրն իմ զՎարդան կուսակրաւն քահանայ, նայ եւ հոգեւոր եղբարքն իմ՝ զՄարգարէ եւ զՍիմէոն՝ զիաչընդյուս կրաւնաւորքս, որ ընդ իննեւ պանտըխտանան, այլ աղաչեմ զընթերցողսդ, զի խնամ տարջիք սմա, որպէս եւ զձեր մատեան գրեալ։ Գրեցաւ յիշատակարանս վերջինս ի թվին ¶Թ.(1360)։*

542.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս Ագբաբ, Բ. էջ 381. (Արդնի վարի թաղի սր. Սարգսի եկեղեցի)

Վայր՝ Մերտին

Գրեալ ի Մ՛երտին. ի թվ. ¶Թ. (1360), ի թագաւորութեան Կոստանդիանոսի, ի հայրապետութեան տեառն Մ՛եսրոպի եւ յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի...։**

* Ձեռագիրն ընդօրինակված է ՋՁէ (1298) թվականին, Աբճեշում, գրիչ Ծուսեփէ կողմից։

** Հրատարակիչ Գ. Սրվանձտյանի կողմից հիշատակարանը համառոտված է։

543.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, ԱԼԲԵՐՏԻ ՄԵԾԻ

Թուական 9068

Գրիչ՝ Դօմինիկոս Սալիքաղեցի

174— *Ջտառապեալ ողի ֆրա Դօմինիկոս* մականուն կոչեցեալ Սալիքաղեցի յիշեցէք ի յաղօթս ձեր, որ աշխատեցայ ի գիրքս այս, և սխալանացն անմեղադիր լերուք, զի կար մեր այս չափ էր, նաև զմայրն իմ Փոբրմերթ, որ ի Քրիստոս հանգեաւ, յիշեցէք յաղօթս ձեր, Քրիստոսի փառք։*

* Հավանաբար նույն ֆրա Դոմինիկոսն է, որ 1360-ական թ.թ. ընդօրինակել է Հիմառաօս հաւաքածոյի յաղագս հոգւոյ ձեռագիրը (Ձեռ. Բեռլինի, էջ 38), սակայն սույն անթվական հիշատակարանը տեղադրում ենք 1360-ի թվաշարքում։

544.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Երևան 8256 (տես նաև 1619 Բ՝)

Գրիչ՝ Զաքարէ

վայր՝ Ի Զորս Հայքարայ, գիւղ՝ Անապատիկ

ա

113ա Փառք...որ ետ կարողութիւն ինձ տկարիս հասանել ի վերջ գծիս ի նեղ և ի թշուառ ժամանակիս։

Գրեցաւ պատարագի մեկնիչս և սակաւ գաւանութիւն ձեռամբ անպիտան և մեղապարտ գրիչ Զաքարա կրաւնաւորի, որ զանունս ունիմ և ոչ զգործ։ Ու զՆերեմիա կրաւնաւոր, և գհարազատ եղբայրս իմ զՈվանէս, և զծնողսն իմ զԹագուորն և զԷլխաթունն, և զԱկոր քահանայ՝ զհօրեղբայր իմ, որ վերայ ինձ շատ աշխատեալ է [յիշեցէք]։

113բ Արգ, գրեցաւ պատարագի մեկնիչս ձեռամբ Զաքարէ արեղի, ի Զորս Հայքարայ, ի գեաւղս, որ կոչի Անապատիկ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի հայրապետութեանն տէր Սահփանոսի, ի զանուածեանն Ցռիսի, ի գառնութեան ժամանակիս, որ հալածումն էր քրիստոնէից, աղօթք արարէք առ աստուած։ Թվ. ՊԺ (1361) գրեցաւ։ Աղաչեմ զձեզ, ո՛վ եղբարք, որք կարդայք կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՆերեմիա, որ ստացա զպատարագի մեկնիչս յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, որպէս դուք դիս յիշէք նոյնպէս և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Յիշեցէք յաղօթս ձեր զկարապետ քահանայն և զորդին իւր զԴաւիթ քահանայն և զԱլեքսան, որ շատ երախտիք ունին ի վերայ մեզ և կամակից եղան գրոցս։

բ

77բ Գրեցաւ պատարագի մեկնիչս ձեռամբ ախմար և անիմաստ Զաքարէ սուտ կրաւնաւորի, որ զանունս ունիմ և զգործ ոչ։ Ո՛վ եղբարք, աղաչեմ զձեզ, անմեղագիր լերուք խոշորութեան և սխալանաց սորայ, զի ժամանակս գառն ու փախուստ էր, Ի. (20)ամ էր, որ գրիչ ի ձեռս չի առել, միտքս էլ էր մոլորել ու ձեռս էլ հովացել։ Բայց հոգևոր եղբայրն իմ Նրեմիա կրաւնաւոր յոյժ փափազէր, և այլ մարդ չկայր որ գրէր, ինձ բռնութեամբ գրել հրեաւ։ Աղաչեմ զձեզ, որք հանդիպիք կամ կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն։

Ո՜հ, ո՜հ, զգառնութեան աւուրքս, Թվ. ՊԺ. (1361)։

545.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 73

Ոմն ընքերցող

133բ *Ի թուիս Հայոց ՊԺ. (1360). գերեց անաւրէնն դատաւորն տաճիկ Պաէիլն* զերկիրն** Շիւարոյ և խարդեբղոյ. և վաճառեցին նման ոչխարի, ըստ մարգար[էին Դաւթի, որ ասէ՝] վաճառեցին դժողով[ուրդըս քո]։****

546.

ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ՎԱՐՈՒՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Փիլպ. 6273, էջ 156—157

Գրիչ՝ Թորոս Ղռուրիճեաց
վայր՝ Սիս

Շնորհիւ բարեշնորհ կամացն աստուծոյ աւարտեցաւ վայելուչ պատմութիւնս և քաղաքավարութիւն սուրբ քահանայապետին մեծին Ներսէսի ի թուականութեանս Հայոց ՊԺ. (1361), ի թագաւորութեանն Հայոց Կոստանդեայ և ի հայրապետութեան տեառն Մեսրովպայ, ի մայրաքաղաքս Սիս։

Արդ, գրեցաւ սա ձեռամբ մեղաւոր և անարժան քահանայի Թորոսի, որ մականուն Ղռուրիճեաց կոչի, ի խնդրոյ սրբասէր, հեզ, քաղցր և խոնարհ իշխանացն՝ պարոն Լիպարտի և պարոն Վասլի, որգուցն պարոն Թորոսի կապիցոյն՝ սպարապետին Հայոց, ի վայելումն անձանց իւրոց...։

Հայցեցէք յաստուծոյ զկեանս խաղաղական շնորհել պարոն Լիպարաիճ և պարոն Վասլիճ և պարոն Լիկոսիճ գեռա | |։ |

Ի թուին ՊԹ. (1360), ի յամսեան ի մայիսի երեկ Հալպայ ամբրայն Պայտամուրճ Մարայ զօրօքն ի Հայէ, նայ տուին զԱտանայ և զՏարսօճ ու զԲարի-Բարուկն ու զտղայ Լեռնին։ Ո՛վ քաղցը ե բարի պարոն իմ Լիպարիտ, ընկալ զսա և զմեղաւոր հողս Թորոս յիշեաւ։

---

* Կարելի է կարդալ նաև ՀՊաքիչն։

** Գրված ու ընդված է ինչ որ գավառի անուն, թերևս ՀՄանծկերտոյնՀ։

*** Հիշատակագրությունը գրված է ներքին լուսանցքի վրա, վերջին տողն ամբողջովին, իսկ նախավերջինը՝ մասամբ, զոհ են գնացել կազմողի դանակին։

547.

ՁԱՇՈՑ

Թվական 7408 (տես 1256 և 1602 թ.թ.)*

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Կաֆա

ա

5244 ...Գրեցաւ տառս անպատում սրբոցն ի լոյս յարմարեալ իմաստնոց, ի մի հաւաքելով զամենայն տաւնս տէրունականս և դիշատակութիւնս սրբոց զրոլոր տարոյն ի յաշխարհ Հոնոգ, ի կողմանս հիւսիւսոյ, ի քաղաքս, որ կոչի Կաֆա, ընդ հովանեաւ սրբոյ երրորդութեանն, ի հայրապետութեան Հայոց տեառն Մեսրոպայ և մերոյ նահանգիս տէր Սահփանցնոսի արհիեպիսկոպոսի ամենայն հիւսիսականն կողմանց, ձեռամբ կարապետ իրիցու, ի թվին ՊԺ. (1361). Զոր տեսեալ զմիմեանս աստուածային հեղահոդի միայնակեացն հայր Զաքարէ, որ էր ընական յաշխարհէն Արծիշոյ, որգի Յովհաննէսի, և այժմ ընակէր ի ծովեզր քրիստոնէութեան** առ ոտս սրբոյն Սարգսի զօրավարին, և ծառայելով երթևեկաց բազում և առատ կերակրաւք, նմանութեամբ առաջին արդիւնաւոր հարց, զամենայն ինչս իւր վաճառեալ ի պէս[ս] ազքատաց և եկեղեցւոյ, և ըստացաւ գանձս աստուածային յիշատակ հայր Զաքարէ իւր, և ծնեալգաց իւրոց Յովհաննիսի, և մաւր իւրոյ Թոսխաթունին, և ամենայն արեան զարմից, ի վայելուչ եկեղեցւոյ սրբոյն Սարգսի Արզ, որ կարզայք կամ աւրինակէք յիշեայիք ի Քրիստոս զյառաջասացեալ հայ[ր]ն Զաքարէ և զծնեալսն...

Ստացող՝ Զաքարէ

բ

Ես՝ Զաքարէ միայնակեացս, գնեցի զտարեղիրքս*** ՀՃ. (800) գրամ, ի թվականիս ՊԺ. (1361), յետև իմ անցմանս**** մարդ իւրեայ կամ զրուց չունի հետ գրոցս՝ ծախելոյ կամ գրաւելոյ, այլ ինձ յիշատակ է և իմ ծնօղացն, ամէն։

* Հիշատակարանի բնագիրը 1602 թվին, Նորգուքյան ժամանակ, եղծված ու մշված է եղել. Նորոգող Գրիգորն արտագրել է այն որոշ սխալներով ու բացթողումներով։
** Մեկ բառի տեղ բաց է թողնված։
*** Իմա՝ հղեալոցս։
**** Ձեռագրում՝ հանձմանս։

548.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Թուական 7153

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Տշող գիւղ

170ա Արդ, որ աւգտիք ի սմանէ, մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ Արքի քահանային և իւրոցն ամենայնի, և ինձ՝ բազմամեղ և վիճուն գրչի՝ աստանուն Ստեփաննոս քահանայի և մերոցն ամենայնի, և որ զմեղ յիշէ և ինքն յիշել լիցի յանյիշաչար բարեբարբէն Ցխսուսէ Քրիստոսէ, որ է աւբհնեալ յաւիտեանս, ամէն։

170բ Արդ, գրեցաւ աստուածածին այս մատեան ի թուի Հայոց ՁԺ. (1361), ի ղեւազս, որ կոչի Տշող, ընդ հովանեաւ սուրբ ‖ մաւր լուսոյ Աստուածածնի։

Բայց խոշորութեան և սխալանաց գրիս անմեզադիր լերուք, քանզի ծեռացեալ էի և աչս նուազեալ ի տեսանելոյ, և ձեռնս գողայր ի գրելն, և տեղի չկայր առանձին, և ոչ այլ ինչ սահման կամ յաջողութիւն գրագրի ունեաք, այլ զոր գրեցաք՝ զգեղեցիկ և զպիտանիսն ընտրեցաք. և որք աւգտիք կարդալով, կամ լսելով, կամ աւրինակելով, մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ Արքի քահ[անային]՝ ստացողի գրոցս և մեղուցեալ դրողիս, և որ զմեղ յիշէ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ աստուծոյ, ամէն։

549.

ՃԱՇՈՑ

Թուական 4519 (առ նուազ՝ 1456 թ.)

Գրիչ՝ Սարգիս

99բ ...Ցամի աւարտման սուրբ մատենիս ի յութհարիւր և ի ծ. (1361), և ի գալըստեանէ կենարարին մերոյ ՌՅԾՒ. (1352), իսկ յելանելոյն նախնի մարդոյն յանուշակ վայրէն ՅՉՀԴ. (6774), բարեպաշտոնն, ի նախնեաց բարեաց շառաւիղ, երկիր արգաւանդ և դեմատրի ուռթի, ունաւղ լսելոյ ունկանն կենսեղուս հրամայաւղին, թէ ասա ստկաւ ինչ պիտոյ է, և թէ՝ ա՞ն, արիք գնացուք, նայ աւանիկ բացեալ զըշտեմարանս սրտին, և բեղմնաւորեալ զբոյս բազմաւորս և ի տիս տհաս, ծանուցեալ զոչընչութիւն խաբեբայ նիւթականիս պատրագործ իրառնութիւնս, նումեճանակ և հաբաստամիտ այրն կրաւնաւոր, որ Ղազարոս յորջորջիւր մասամբ և բստ յունակ ‖ ան
100ա ձայնի ձիւնացուցեալ զներքին մարդն ի նահմ մրգոյդ ամայս, որ ազգս ամենայն իբր ի յանդշոյլ գիշերի շաւշափեն զխաւար և իբր զճճիս ի տղմուտ վայրի կայտռելով անազայաբար քապկապէս (՞)։

Սա ի նմին յանլուս ժամու հայեցեալ ի լոյս պատուիրանի տեառն ըստ երգողի հոգւոյն, և ստացաւ զսա զաւակ որդի ի վերինն Սիովն, որ է մայր պետրոսեանցն, և գործովք որդւոց նոցին ի գանձարանն անվրէպ, զոր տեառն շինեալ ըստ իմաստուն ըմ[բ]շամարտի, զի ժամու տարագրութեան վուխթայ զտուն և զկարասի յանառիկ ամրոցս ամփոփել, և զամենայն ըստ կնոջ խերեզլեցն տեառն ընձայեալ։ Ցամենայն ժամ բոյս գալար հաճոյ է մարգկան, մանաւանդ յեղանակս ձմերայնոյ, զի ի գուն և ի սուղ տեղիս գտանի նոյնգունակ գործ սորա ի յանրարի ժամուս։

Արդ, որ ոք ականատեսի այսմ բազմախումբ քաղաքի յոգնեբանիկ և երփներփին լուսաշաւիղ պողոտայի, յիշեսջիք ցաւակցաբար ի մաքրավայլ և ի հոգեկեցոյց յաղաւթս զյառաջասացեալ կրաւնաւորն զՂազար, և ծնաւղս նորա, զվոխեցեալսն առ Քրիստոս՝ զհայրն սոբայ զՍարգիս, և զմայրն՝ զՄամիայ, և զհաւբեղբարն սորայ՝ զխաչերեսն, և զայլ ամենայն ազգայինս՝ զկենդանիս և զհանկուցեալսն, և զամենայն ոք, որ բարեմտութեամբ կամաւ աւղնական եղեն ի նիւթ և ի ծաղք աստուածային զանձուցս, Ք՝րիստոս աստուած յիւր միւսանգամ գալըստեանն հատուսցէ զվարձս նոցա, ընդ միոյն հարիւրապատիկ և հազապատիկ։ Նա թէ և զվերջինս ի քահանայս և զիբրցունս ի զրիչս, զեղերնագործ անձս, զթարմատարս զՍարգիս, որդովքըս՝ Մելիխեդեկիւ և Յակորաւ և այլ ամենայն ժառանկաւորաւ. յիշեսջիք և զամուսին իմ զՄարեմ տիկին, և զդուստր իմ զՇամշան, և զեղբարսն իմ՝ զՄարտիրոսն և զՎարդերեսն, և զքուրն իմ զՄարթայ, և զծնաւղսն իմ՝ զվոխեցեալսն առ Քրիստոս՝ զՅակոբ ծերունի քահանայ, և զմայրն իմ՝ զԹաճատիկին, և զեղբայրն իմ զՎահրամ, և զքուրսն իմ՝ զՀռեփսիմիա և զՄեծուխկին, և զհաւատուր մանն՝ զԹամխաթաւն, և զաներն իմ զՅովաննէսն, և զոքանչս իմ զՇամշայն, և զՇամերն, և զՊիլկան, և զԹաճմելիէն...։

550.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 1986

Գրիչ՝ Աճդրեաս
վայր՝ ի դաշտս Գաւտռուց

278ա Թվ. ՊԺԱ. (1362) դրեցաւ, ի պարոնութեան Ամիր ԴիատՓիՓ, ի դանութեան [ՈյխսիՓ]։*

Փառք ամենասուրբ երրորդութեան, որ արժանի արար հասանել յաւարտուին սուրբ աւետարանիս. կատարեցաւ սա | | | դաշտս Գա[ւառ]ուց, ի գեա[ղս, որ] կոչի ան[ուն] | | | անձո։

278բ Ձեռա[մբ | | | մեղա]պարտ | | | Աճդր[եասի] | | | ‖ եւ զաւետարանս, այլ անարժանութեամբ մերձ[եց]ա և դրեցի, վա է ինձ յաւուրն յահնուին։ Արդ, անկեալ աղաչեմք զաստուածահաճո քահան[այք]դ և զպատ[ուել]ի եղբայրքս, [որք հ]անդիպիք [սուրբ ա]ւետար[անիս, Թ]ողութիւն [խնդրեց]էք ի տեառնէ | | | ** զմեզ յիշէքդ յիշեալ լինիք և ի տեառնէ աստուծոյ մերոյ։ Այլ խոշորութեան դրիս և սղալանացն անմեղաղիր լերուք, քանզի խիստ պինտ ձմեռն էր, ու ի տղեկներս մէջ ի, վասն աստուծոյ մի մեղադրէք, զարիպ էաք ու խիստ նեղացած։

279ա Այլ ոմ կամաւորութեամբ կատարեցաւ սուրբ աւետարանս։ Այլ կատարեցաւ սուրբ և պատուելի և աստուածահաճոյ քահանայի Մարտիրոսի, և իւր Թադուհոյն, և իւր որդւացն Թումաի, որ է նոր աւրհնեալ քահանա, և իւր Թադուհոյն և դեռաբոյս մանկանն, որ է անուննս։*** Եւ յիշատակ իւրեանց և ծնողաց իւրոց և ամենայն ննջեցելոց իւրեանց, զոր՝ և իւրեանց կամքն լինի ի վաեչութեան անձանց իւրոց, Քրիստոս աստուած բազում ժամանակաւ և քաղցրութեամբ և անշարժ վա[ել]եալ տացէ և | | | անց սոցա | | | ութիւն հոգ[ւոց իւր]եանց։

---

* Ձեռագրի վերջին թերթերի աջ եզրերը այժմ պատռված են և որոշ բառեր չեն վերծանվում։ Փերզալամյանի մոտ (տես՝ Ցուց. №6273, էջ 187) պահպանվել է հիշատակարանի համառոտությունը այս ձևով՝ «...կատարեցաւ սա ի դաշտս Գաւառաց, ի գիւղս, որ կոչի անուն Սորանց Որբեանց, ձեռամբ Անգրէասի, Թուին ՊԺԱ, ի [պաբոնութեան] Ամիր Քրատին, ի դանութեան Ոյխսինց։ Սրա օգնութեամբ վերականգնում ենք ժամանակի արքակալի, գրչութեան վայրի և գրչի անունները։

** 5—6 տող ամբողջովին պատռված է։

*** Անվան գրության համար տեղ է բաց թողնված։

551.

ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ԱՐԻՈՊԱԳԱՑԻՈՑ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՑԻՆ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ

Երկան 24*

Գրիչ՝ Ա.եետիս Նստերացց
վայր՝ Սուլխաթ

271բ Փառք աստուծոյ ամենակալին և անսկզբան և անժամանակին՝ հաւր և որդոյ և հոգւոյն սրբոյ, որ զաւրացոյց զտկարութիւնս իմ ժամանել ի լրումն գրաւորական քաղցը և վափագելի և գեղահրաշակ տառիս,** յամի ութհարիւրեքորգի տասնեւրորդի առաջներորդի թուականութեան ժամանակի Հայոց (1362)։ Գրեցաւ տառս աստուածային երկնապատում սրբոյս Դիոնէսիոսի Արիսպագացւոյ՝ հետևողի սրբոյն Պաւղոսի առաքելոյն, հրամանաւ և արդեամբք ոճջախոհ և իմաստուն կրաւնաւորի տէր Յովհաննիսի Սերաստացւոյ, աթոռակալի տէր Ստեփաննոսի, որ և ստացաւ մեծափափագ տենչանաւք դղիրքս աստուածարեալ ի սփոփանս մխիթարութեան անձին իւրոյ սրբասիրի։

Արդ, որք հանգիպիք սրբոյ տառիս լուսաբաշխի, յիշեսջիք գվեր[ո]յգրեալ տէր Յոհաննես, և զծնաւգան ըստ մարմնոյ՝ զպարոն Պարոնշահն և զՏիկին՝ զփոխեալսն առ Քրիստոս, և զպատուելի եղբարսն իւր՝ զիմաստուն վաճառականսն զպարոն Յակոբն և զԼազարոս դրամարտիկ, և զպարոն Աւագն՝ փեսայացեալն*** նոցին, նաև զքոյրն և զամենայն արեան մերձաւորսն, որպէս զի տացէ նոցա տէր կեանս կրկինս յայս ուրախութեամբ վայելել՝ անվորձ ի չարեաց, և զապագան՝ համարձակութեամբ ընդդրկել կեանս, ըստ աղնիւ և բազմաշահ ծառայիցն տեառն...։

272ա Այլ և զտրուպս ամենայն գրողաց զԱեետիս Նատերացց յիշեցէք ի տէր, և աստուած զձեզ յիշէ։ Ո՞վ տէր Յոհ[ա]ննես, զտաժանեալս ի սմա յիշեա և զքեզ տէր յիշեսցէ։

Եղև սկիզբն և կատարումն սորա ի մեծահռչակ, բազմամարդ, յոլովաժողով զանձնունակ բարելի քաղաքս Սուլխաթ կոչեցեալ Ղրիմ, ի վերնաբնակ հայաժողով թաղս հոգեյարկեալ, ընդ հովանեաւ սրբոյ խորանացս սրբոյն Սարգսի և այլ սրբոց, ի թագաւորութեանն Հայոց Կոստանդեայ, և ի կաթուղիկոսութեանն տեառն Մեսրոպայ առաքինոյ, և այսմ նահանգի առաջնորդի՝ տէր Ստեփաննոսի։

Արդ, քանզի ոչ զտանէը աւրինակս այս ի քաղաքս և ոչ ի վանորայսն, և փափագ տենչանաց նեղեր զիս, թէ վասն է՞ր ոչ զանի

---

* Ձեռագիրն ընդօրինակված է 1615 թվին՝ Լվովում, ձեռամբ անարժան Գրիգորի Վարդի որդւոյ։ 1362 թվականի տուն հիշատակարանը պատկանում է նախագաղափար օրինակի գրչին։

** Բնագրում այստեղ, և երեք անգամ շարունակութեան մեջ, գրված է «տաքիս» փոխ. «տառիս»։

*** Բնագրում՝ «իենսայացեալն»։

այս գիր պատուական. մինչև հաս ինձ* գնալ յերկիրն Հայոց, ի Թագաւորական քաղաքն Սիս, ոչ թէ վասն տառիս միայն, այլ և վասն կրսերագունի եղբաւր իմոյ Գրիգորի, առնել եպիսկոպոս նահա[ն]գին խաղտեաց։ Եւ գտեալ զաւրինակ սորա գրեցի մեծաւ փափագմամբ, և բերեալ փոխարկեցի և տեառն իմոյ տէր Ցեհաննիսի,
272բ սրոյ յոյժ ուրախացաւ ի գալ աւրինակի սորայ և բա‖զում սէր եցոյց մեզ։

Յիշեցէք և զծնողսն մեր զՆատեր բազմամեայ ծեր գրիչ ժրաջան, և զմայրն իմ, և զնոր աւծեալ վերատեսուչ խաղտեաց գաւառին** զտէր Գրիգոր, որ է իմ հայր ըստ հոգւոյ և եղբայր ըստ մարմնոյ և որգի հոգևոր ըստ ուսման, ըստ Պօղոսի, որ ասէ՝ ես ծնայ զձեզ աւետարանաւն ի Քրիստոս Յիսուս, և զմիւս եղբայրն Ստեփաննոս քահանայ, և զքոյրն միաւոր, և զայլս, որ ընդ մեզ են պչուցեալ վասն աւգտի և կենաց հոգւոյ. և ինքն՝ համակ բարին, որգի բարեբարին, հովիւ բարին, ի բարին իւր կոչեսցէ զձեզ լինել միշտ ի բարին, ի յինքն Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

552.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 170, Տ.-Ավետյան, էջ 1419

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Մհրաին, Թվին մեճաստան

385ա ...Արդ, գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԺԱ. (1362), ի մեճաստանս Թվին կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Յովաննու Մկրտչի, ի հայրապետութեան Հայոց տեառն Մեսրոպայ, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Յակովբայ, և ի թագաւորութեան Հայոց Կոստանդեայ, զրեդաւ հանդէպ մայրաքաղաքիս Սհրտնայ։ Արդ, աղաչեմ զամենեսեան զմանկունսդ սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք այսմ հոգևոր մատենիս և ծաղկաւէտ բուրաստանիս, յիշեալիք ի Քրիստոս զաշխատողս սորա զանարժան [Վարդան] քահանայ, և զծնողսն իմ զԱւետիք քահանայ, և զմայրն իմ զՆազիր, և զեղբարսն իմ՝ զՆերսես և զՅուսիկ և զՍարգիս, և զքսւերսն իմ զՄղտսիճ և զԱղեկտիկին, և զամենայն արեան մերձաւորսն մեր։ Յիշեսջիք և զհոգևոր որդիս մեր զՍտեփաննոս կուսան կրաւնաւոր, որոյ անուն և զգիրս գրեցի։ Եւ ինքն Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողագդ և մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի, և նմա ինառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։ Նաև Մատթեոսին, որ ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր և ծնողաց, նա ամենակարողն աստուած ողորմեսցի Մաթէոսին և տա իւր փոխարէն զկեանսն յաւիտենականս։

* Բնագրում՝ «ինչ»։
** Բնագրում՝ «գաւարինն»։

553.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Փիլդ. 6273, էջ 160 (Վան, Բերդակ գիւղի սբ. Յովհաննէս եկեղեցի)

Գրիչ՝ Պետրոս
վայր՝ յերկիրս Հայքարայ

...Արդ, գրեցաւ սա ի Թուականիս մերում ՊԺԲ. (1363), ի յաւուրս նետողաց ազգին | | |, որ բռնացեալ ունէր զամենայն աշխարհս Հայոց և զայլս բազումս, որում չեմ բաւական պատմել զդառնութիւն և զաւէրութիւն աշխարհիս, որ իբրև զծով խռովեալ մրրկածին օդով զերկնքալեան բերելով զնմանութիւն, ուր ոչ երկիր, և ոչ քաղաք, և ոչ գեաւղ, և ոչ աւանք, և ոչ հրաշատան վանօրեայք զխաղ[աղ]ութիւն գտեալ, այլ ամենայն առհասարակ աւերեալ և քանդեալ ըստ ժարդաբէին...յորում եղկելիս յայսմ ցասմանէ հալածեալ ի սուրբ ուխտէն Բարդուղիմէոսի Առաքելոյն, զերծեալ անկայ ի յերկիրս Հայոց բարայ, [զոր այժմ տիրէ Մարաց իշխանութիւն և ամիրապետութիւն Ամատունի և որդւոց իւրոց]**: Եկեալ բնակեցայ աստ Նղդհուքեամբ և բազում տառապանօք ի մէջ սակաւ քրիստոնէիցս, որ կան աստ բնակեալ յահէ նեղչաց, իբրև ցորեան ի մէջ փշոց պատեալ, ճայմ ժամանակի ես՝ եղկելիս Պետրոս, վերջինս կրօնաւորաց, յաւուր ծերութեան իմոյ գրեցի...: Բայց գրեցաւ սա ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային:*

554.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ

Նբեան 2610

Գրիչ՝ Յով[հաննէ]ս
վայր՝ տուքնթեր Խիզան Բաղաբիս

259ա *Փառք...որ արժանաւորեաց զանարժանս հասանել յաւարտումն տեառնախօս մեկնութեան սուրբ աւետարանիս Մաթէոսի, ձեռամբ անարհեստ և փցուն գրչի՝ պիտակ անուն Յով[հաննէ]ս կրօնաւորի, ի ստացումն և ի վայելս գերապանծ և մեծ բարեբանապետին Յովհաննիսի, յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց, և վարժապետաց, եղբարց, և ամենայն արեան մերձաւորաց, և առաջնորդ վերին գնացմանն:*

---

* *Ըստ Փիլդալամյանի ծանոթագրության գտնվում է Զուլամերիկից արևելք:*
** *Փակագծերի մեջ առնված հատվածը հավանորեն ավելացրել է Փիլդալամյանը:*

Արդ, որք հանդիպիք ի շահս աւգտութեան աստուածախօս մեկնութեանս, զվարդապետն Եսկիանցիս, և զիւրսն, և զանհարմար տառատիպ* սորին, և զիմսն ամենայն յիշեսջիք ի մաքրափայլ և յարժանաւոր յաղաւթս ձեր, զի և դուք յիշեսջիք առ բուն բարին Քրիստոս, որում փառք յաւիտեանս, ամէն։

Նաև զՊետրոս սրբասնեալ կրօնաւոր յիշման արժանի առնէք, որ յառաջոյ և յետոյ զրեաց և աւգնական եղև մեզ վասն անկարգու-
259բ թեանն, զի յոյժ աշտացայ ի բազում ձանձրութենէ։ || Այլ և զՍտեփաննոս՝ կազմող սորայ, սր և գթուղթս այլ կոկեաց, և զմիաբան եղբարքս մեր՝ զՍէթ,զԹորոս և զԴաւիթ, որք աւգնական եղեն մեզ ձեռնտուութեամբ և ամենայն գործովք, և զհոգևոր տնտեսն մեր, որ սպասաւորեաց մեզ լրջմտութեամբ, զամենայն զգրեալքս ի սմա, յիշեցէք ի Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրեցէք, և աստուած զձերն և զմերն առհասարակ թողցէ։

Արդ, գրեցաւ սայ ի նուրբ և ի նեղ ժամանակի, յորում զերիվ և աւար լինին ամենայն ազգք քրիստոնէից վասն ծովացեալ մեղաց իմոց, և ի տառապանս և ի տարակուսանս կայեաք ամենեքեան։

Գրեցաւ սա ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Դամադիէլի, որ կայ առընթեր Խիզան քաղաքիս, ի խնդրոյ սուրբ և առաքինաջան վարդապետի Ցռհաննիսի, յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց, և փոխելոցն առ Քրիստոս, ամէն։

Գարձեալ կրկին յերես անկեալ աղաչեմ խոշորութեանն և սխալանացն անմեղադիր լինել, զի յոյժ վշտալից էր տեղս ի մժեխից և ի ճանճից և յայլոց, որ սոցին նման է։

Թվ. ՊԺԲ (1363)-երորդի։

555.

ԲԱՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԸՆԴԴԷՄ ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՅՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՕՐԲԵԼԵԱՆՑ

Երևան 6886

Գրիչ՝ Նատեր
վայր՝ Գոզուս գիւղ

71ա Գրեցաւ ի Թվ. ՊԺԲ. (1363), յունիսի ԻԸ. (28), ձեռամբ անիմաստ գրչի Նատերի, ի գեղս Գոզուս,* ի դուռն սուրբ Աստուածածնիս։

---

* Բնագրում՝ Հատատպիտ։

** Գոզուց գյուղը գտնվում է Բարերդ գաւառում (տես՝ Նատերը որդի Ավետիսի 1368 թվականի հիշատակարանը), ուստի Նատեր գրիչը 1363-ին գտնվում էր Բարերդում, էր Գրիգոր որդու մոտ։

556.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բբիտ. թանգ. 100 (Add. 19, 732), կոնիբ. ցուց. էջ 248

Գրիչ՝ Սահփաճոս որդի Նատերի
վայր՝ Սուվխաթ

Ըստ թուաքերութեան ամաց տումարի Հայոց ՊԺԲ. (1363)-ն եղև աւարտուճն ատոիս պատուականի...հրամանաւ տէր Յոհաննիսի Սերաստացւոյ՝ ժրաջան կրաւնաւորի և ուղղաբան ճարտասանի...։ Յիշեսջիք զստացաւղ սորա տէր Յոհաննեոս, և զծնաւղս նորին զպարոն Պարսղշահն և զՏիկին..., և զեղբայրսն՝ զպարոն Յակորն, և զՂազար գրամարտիկն | | ¦ և զքորսն և զամենայն մերձաւորսն...։ Հուսկ յետոյ և վասն ինձ լիցի յիշուճն ի ձէնջ սիրելի[ք՞], անարժան քահանայի Սահփաճոսի...այլ և վասն ծնողի իմոյ մարճոյ, և ուսուցանողի այմ՝ Նատեր գրչի, և եղբարց, և քուերց...։*

Աղղ, գրեալ եղև յաշխարհս Հոնաց, ի հռչակաւոր քաղաքս Սուվխաթ, ընդ հովանեաւ տաճարիս սրբոյ Մարգսի, ի հողեոներս վերի։

Ի սոյն ամանակի շփոթուճն դոյ վրդովմանն յաղագս մարճնական աշխարհակալաց, զի գլուխ թագաւոր ոչ գոյ, որ առնէ խաղաղութիւն, ըստ տեառն բանի՝ բաժանեալ թագաւորութիւն ոչ հաստատի, սակս որոյ պետ քաղաքիս փոս հատանէ, խորխորատ փորէ շուրջ քաղաքաւս, և բազում տունք հիճն ի վեր առնէ, և աւերմունք անթիւ, և ամենայն ոք յերկիւղի է...։

ԶԱւետիք գրիչ...յիշեա, ով տէր Յոհ[աննէս], դի փոքր մի ես աւելնեցի դրոյս յառաջս կանոնին և ծաղկեցի...։

557.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Փբղ. 6273, էջ 189 (Սերաստիա, ոբ. Նշանի վանք)

Գրիչ՝ Սամուէլ
վայր՝ Կամախ

Գրեցաւ աստուածայինս այս մատեան ի թուին Հայոց ՊԺԲ. (1363), ի դամբաբանի սրբոյ Լուսաւորչիս Ջորհեանգիստ կոչեցելոյ, ընդ հովանեաւ սուրբ մօրս լուսոյ Աստուածածնին, ձեռամբ մեղուցեալ ոգւոյ Սամուէլի սուտանուն կրօնաւորի...ի յաւուրս և յընդրեալդոյն օրինակէ...ի յառաջնորդութեան հայր Աստուածատրոյ...։ Ո՛հ, որ ինախաք ի վանիցն ի յԵզնկացւոց, և եկաք ի Կամախս՝ ի դուռն սրբոյն Գէորգեայ զօրավարին, և օգնականութեամբ սորա կատարեցաւ տառս, և տէր Դաւիթ սիրով ընկալաւ զմեզ և հոգւով սպասաւսբեաց։

* Տեղ է բաց Թողնված մոբ անվան լբացման համաբ, բայց իզուբ, հովհ. Սերաստացու մոբ անունը «Տիկին» է։

558.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ, ՆԱՆԱՑԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Երևան 2611 (տես նաև՝ 1603 թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ղրիմ քաղաք

132բ ...Արդ, զրեցաւ լուսաշուիղ և աստուածաշունչ գիրքս աստուծոյ ի թուականիս Հայկազեան տումարիս ՊԺԲ. (1363), և յամսեանն աւգոստոսի աւաբտեցաւ ի փառս աստուծոյ, ի հայրապետութեան տեառն Մեսրովբայ, ի թագաւորութեանն Կոստանդիանոսի բարեպաշտի, և յառաջնորդութեան մայրաքաղաքիս Ղրիմի տէր Ստեփաննոսի արքեպիսկոպոսի, և յաթոռակալութիւն տէր Յովհաննիսի՝ կորովամիտ վարդապետի և հոգևոր իմաստասիրի, հերձուածողաց հալածողի և ցոփազնացից ահ արկանողի, զոր այժմ փայլէ ի մէջ եկեղեցւոյ իբրև զսիւն լուսոյ և իբրև զպարիսպ բարձրապատուար շուրջանակի, և մեք խնդրեմք ազաչանաւք ի տեառնէ, զի ընդ երկայն աւուրս շնորհեսցէ զսա աւրինակ բարեաց մանկանց նոր Սիովնի։

Բայց զրեցաւ սա առ ոտս սուրբ Ստեփաննոսի արեամբ նահատակեալ ծառային Քրիստոսի և նախավկայի և այլ ևս հաւաքեալ աստ սրբոցս, ձեռամբ անպիտան և անարհեստ գրչի Կարապետի, միայն անուամբ կոչեցեալ քահանայ և գործովք հեռի...։

...Որք աւգտիք ի սմանէ յիշեսջիք ի տէր զԿարապետ գրիչս, և զկենակիցն իմ զՓօհար տիկինն, և զաստուածապարգև զաւակսն մեր՝ զՀիլալն և զԱստուածատուրն՝ գնանգուցեալսն առ Քրիստոս, և զոր դարձեալ պարգևեաց մեզ տէր զաւակք մխիթարութեան նովին անուամբն՝ զՀիլալն և զՎարդենին, և զծնողսն իմ՝ զԱստուածատուրն և զԱղուր խաթունն, և զմաւրքուրն իմ՝ զվալ խաթունն, և զեղբարսն նոցա՝ զՍերեբն, և զՄովսեսն, և զԱւգերսն, և զՍաւրաքն, և զելխաթունն, և զխաչատուրն, և զՇուշանն, և զԱստուածատուրն, և զեղբարսն և զքոյրսն իմ, յիշեսջիք ազաւթիւք ձերովք, և դուք յիշեալ լինիք առ տէր, ամէն, ամէն։

559.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 7430 (տես նաև՝ 1559 թ.)

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Ղրիմ քաղաք

ա

466ա ...Նաև թէ արժանի համարիք զանարժանս՝ զՅովհաննէսս՝ ապիկար և անիմաստ գրիչս, և զհայրն իմ զԱւետիս քահանայ, և զմայրն իմ զԹագուհին, և քոյրն իմ զՀռիփսիմէ՝ զփոխեցեալն ի Քրիստոս աստուած, ցաւակցաբար յիշման ի փառաւոր և ի սոսկալի առնն։

Կատարեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԺԲ. (1363), մայիսի Գ. (4), ի հռչակաւոր քաղաքս Ղրիմ, առ ոտս սուրբ Ստեփանոսի և այլ միաբան սրբոցն, որ աստ են հաւաքեալ*

Բ

260բ ...Ցիշեա զիս՝ զՅովաննէս ծառայս, ի քո արքայութիւնն...նաև զիս սաացաւղս՝ զՆիմիա քահանայս։

560.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 5608 (տես նաև 1304 Թ.)

Գրիչ՝ Կիրակոս
վայր՝ Նրուսաղէմ

ա

148ա Գրեցաւ դիրքս ի մայրաքաղաքս Նրուսաղէմ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս և այլ բազմահաւաք սուրբ անաւրինականաց, ձեռամբ մեղապարտ և փցուն գրչի Կիրակոսի, ի վայելուչն և յիշատակ հոգւոյ սուրբ հաւրս մերոյ Ներսեհի և առաջնորդի սուրբ ուխտիս։

Աղրդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով, յիշեսջիք ի տէր ղվերոդրեալ ստացաւղ սորա զՆերսես հայրն** և զծնողսն իւր՝ զփոխեցեալսն ի Քրիստոս, զհայրն իւր զԳրիգոր քահանայն, և զմայրն իւր զՇնոփոր, և զհարազատ եղբարսն իւր՝ զՆստաւիս երէց, և զՄնձե երէց. ընդ նմին և զկարապետ քահանայն, զվարդանն և զՅովան, և զրարեպաշտ շահնայն՝ զՍարգիսն, ընդ նոսին յիշեսջիք ի տէր և զնդրայրն իւր զպարոն Զրէինն, և աստուած մեզ՝ յիշելեացս և ձեզ՝ յիշողացդ առհասարակ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Գրեցաւ ի թվականին Հայոց ՊԺԲ. (1363), մարտ ամսոյ ի Դ. (4), և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

561.

ՄՆԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱԽՏԱՐԱՆԻՆ, ՑԻԳՆԱՏԻՈՍԷ

Երևան 3405 (տես նաև 1357 և 1698 Թ.Թ.)

Հետ. ստացող՝ Գեորգեոս
վայր՝ Ղրիմ քաղաք

373ա Ցամի ուրբհարիւրերորդի տասներորդի երկրորդի (1363) ըստ թուաբերութեան Յաբեդական տոհմիս տումարի, ստացաւ զմեկնութիւն սուրբ աւետարանիս, որ ըստ Ղուկայ, արարեալ մեծ վարդա-

* Սուրբ հիշատակարանն արտագրել է այժմ գոյութիւն չունեցող ընագրից ձեռագրի նորոգող Գալուստ սարկաւագը, 1632 Թվին։

** «Հայրն» բառի վրա գրված է պատվի նշան, գուցէ այն պնաք է կարդալ «հայրապետն»։

պետին Հայոց Իգնատիոսի, պատուեալ կրա[է]նաւորն Գեորգեոս՝ յոյժ փափագմամբ և յորդորամիտ սիրով, ի գաստիարակութիւն կենաց ի հոգևորն զարդանալ հասակի, լուսաւորելով ի պատուիրանաց տեառն զսա ներքին մարդոյն, և յետ աստեացս անասցէ յիշատակ անշէջ յեկեղեցիս և յորդիս իւր։ Արդ, որք հանդիպիք փառաւոր և հրաշալաբան մեկնութեան սրբոյ աւետարանիս, ուրախ լինելով ի ճաշակ սորա քաղցրութեան, յիշեսջիք ի տէր սրտի մտաւք զպատուելի || կուսակրաւն 373բ կրաւնաւորն Գեորգեոս՝ զստացուղ սորա և զծնաւղսն իւր՝ զպարոն Յակեհերն և զՄամախաթուն՝ զիոխեալսն առ Ք[րիստոս], և զերդայր սորա՝ զՏատուրն, զեաչատուրն, զՔրիստոդատուրն, զՄարտիրոս, և զքուերսն, և զամենայն աղգայինսն՝ զկենդանիս և զվախճանեալսն, որպէս զի տացէ սոցա խաղաղական կենաւք վարել զկենցաղս ի կամս աստուծոյ և հասանել հանդերձելոյն, և նոցա հանդիստ ընդ հաճոյացեալ սուրբս ի վերինն Երուսաղէմ, ի մայրն որդւոց Սիովնի նորոյ։

Եւ որք սրտի մտաւք և սեռն զիրով յիշեսցէ ի միտս բարիս, յիշեսցի և ինքն ի Ք[րիստոս]է Յիսուէ յԵկայքն, ասել, աւրհնեալք հաւր իմոյ ժառանգել զկեանս յաւիտենա[կանս]։

Եւ քանզի դրեալ էր գիրս ձեռամբ ումեմն Ստեփաննոսի, ի իշընդրոյ Կարապետ քահանայի, իսկ այժմ խանդաղատական սիրով խընդրեալ ի նմին Կարապետ քահանայէ կրաւնաւորս Գեորգ, որոյ հարկեալ ի սիրոյ սորա և ի պատուիրանաց տեառն, թէ ամենայն որ խնդրէ՝ տուր, ետ զսա Գեորգ կրաւնաւորին սեպհական յիշատակ։ Յիշեսջիք և զառաջինն ստացաւղ զԿար[ապետ], և զԱւետիս՝ միջնորդաւղ, և աստուած զձեզ յիշէ, և նմա փառք։

Գրեցաւ ի Ղրիմ քաղ[աքի]։

562.

Ձ Ա Շ Ո Ց

423բ ...Սուրբ տառս կատարեցաւ ի թվ. ՊԺԲ. (1363), յամսեան յունիս ԺԳ. (13)։*

* Գրչի հիշատակարանից պահպանվել է միայն մեկ էջ՝ քայքայված ու անընթեռնելի վիճակում, միակ հետաքրքիր բանը պահպանվածի մեջ բերված երկտողն է՝ թվականի հիշատակությամբ։ Ձեռագրում կան հետագա ստացողների և նորոգողների հիշատակագրություններ, դրանք են՝

ա) ՋՀ. (1459) թվականից, Ծաւլ[աթ] խաթունի կողմից հաշոցը ձի դրուելս սուրբ Ահարոնի նվիրաբերվելու մասին (էջ 425 ա)։

բ) ՌԼԲ. (1583) թ. ձեռագիրը կազմելու մասին։

գ) ՌՃՂԲ. (1693) թ. նորոգության, և մահտեսի Յովհաննէսի կողմից սուրբ Ահարոնի եկեղեցուն նվիրաբերվելու մասին։

ՉԺԳ 1364

563.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 48, Տ.-Ավետյան, էջ 174—175

Վայր՝ Խորձիւն գաւառ, Բռընչիէ ածապատ

ա

Ի բամս Հայկազեան թուաբերութեան տումարին, յորում էր Քիւ համար թուականին Թորգոմեան տոհմին ՉԺԳ. (1364), աւարտագործեալ եղև սուրբ և կենսատու աւետարանս...։

231բ ...Զոր իմ՝ անարժանի և անպիտան ծառայի ծառայիցդ տեառն, տեսի զաւրինակս գովելի և անտղալ վկայեալ ի բազմաց, և ցանկացող եղէ, որպէս պատուական մարգարտի, և գրեցի զսա իմ անիմաստ մտաւքս ի գաւառիս Խորձիւն, յանապատիս, որ կոչի Բռընչիէ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնին։

Արդ, ազաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ աւետարանիս, զմեղապարտ զբիչս, և զծնողսն իմ, և զեղբարսն, ամենայն արեան զարմիւք յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր։ Նաև զսրբասէր և հեզահոգի կրաւնաւորսն՝ զԿարապետն, զԱրգարիոսն և զԿիրակոսն, որ ցանկացան սուրբ աւետարանիս, և բազում փափագանօք խնդրեցին ի յիշատակ ինքեանց և ննջեցելոց իւրեանց, նաև զԱստուածատուր կուսակրաւն քահանայ, որ է հայր հոգւոց մերոց, և զայլ եղբարս միաբան սուրբ ուխտիս, և զԱռաքել քահանայն՝ զիոխեցեալն ի մէնջ առ Քրիստոս, յիշեսջիք առհասարակ ի սուրբ յաղօթս ձեր, և զմարգարէ արեղայն, որ զՔ. գլուխն ինքն գրեաց յիշեցէք առ Քրիստոս, և որ ձեռնտու և աւգնական եղեն սմա, առհասարակ յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս աստուած | | |*

Ծաղկող՝ Ալինախ

բ

6ա Զծաղկաւղ[ի]կս զԱլինա[խ] եպիսկոպոս յիշեցէք յառ Քրիստոս։

* Շարունակությունը չի պահպանվել

564.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

կայսր. Մատեն. Վիեննա, 10, Տաշ. Ցուց. էջ 17

Գրիչ՝ Անանիա

վայր՝ Նկեղեաց գաւառ, սր. Կիրակոսի անապատ

318բ *Ո՛վ քրիստոսաղղեաց մանկունք, որք ի լուսաւոր եւ յաստուածային հոգևշահ պատուիրանացս աւգտիկք ընթերցմամբ եւ կամ աւրինակելով, զստացաւզ սորա զանարժան քահանայ զՆորոգիս հողս, եւ զԱնանիա դրիչս, եւ զծնաւղսն մեր, եւ զամենայն երախտաւորսն մեր յամենայն պէտս մեր յիշեսջիք մեղաց թողութեամբ ի տէր. ընդ նմին եւ դհեղահողի եղբայրն մեր ըստ հոգւոյ զԹումաս կրաւնաւորն, աղաչեմ սրտի մտաւք...:*

Ցամի ՊԺԳ. (1364), յամսեանն յունիս Ի. (27) եղեւ զրաւ գրչութեան աղաւթական բանիցս սրբոյն Ներսիսի Կլայեցւոյն եւ Գրիգորի Սկեւռացւոյն եւ Սեպտեմբի խորին Ասորոյ ի գաւառս Նկեղեաց, յանապատս, որ կոչի սուրբ Կիւրակոս, ընդ հովանեաւ սորին տաճարի, եւ կենսակիր եւ աստուածընկալ սուրբ Նշանիս, եւ այլ բազում նըշխարաց, որ աստ կան եւ են բարեխօս վասն մեր ի Քրիստոս աստուած ի տէր մեր, որ է աւրհնեալ:

565.

ՄԱՇՏՈՑ

Թաւրիզ, Մատենաւորաց, 71, Աճառեան, Ցուց. էջ 135—136

Գրիչ՝ Ստեփաննոս

վայր՝ Ամիք

153բ ...Գրեցաւ մաշտոցս ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի Ստեփաննոս սուտանուն քահանայի, ի թվիս. ՊԺԳ. (1364), ի քաղաքիս Ամիք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, ի խնդրոյ սրբասնեալ քահանային*, յիշատակ հոգւոյ իւրոյ: Որք աւկաիք ի սմանէ յիշեսջիք յաղաւթս, եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս որդին...:

566.

ՏՕՆԱԿԱՆ

Երևան 5228

Գրիչ՝ Ալեքսանդր

11բ *Զմեղապարտ գրիչ Ալեքսանդր յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ [յիշէ]. ՊԺԳ. (1364) թվ.:***

* Ստացողի անվան լրացման համար տեղ է թաց թողնված:

** Գլխավոր հիշատակարանը չի պահպանվել, բերվածի նման հիշատակագրություններ կան նաև այլ էջերում:

567.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷԻՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երեան 1539 (տես նաև 1543 և 1667 թ. թ.)

Գրիչ՝ Նատեր

ա

424ա ...Ցիշեցեք ի տէր, ով սուրբ և սիրելիք աստուծոյ, զմխեղեն եղբայրութիւն, զհեզահոգի կրաւնաւորքն, սպասաւորքն, հանգերձ զլնակիչ սուրբ ուխտին Ալոց վանից, որք եռավաթագ սիրով եռուն գրել զլուսաւոր վարդապետութիւնս։ Ընդ նոսին և զեղկելիս յիշեցէք՝ զծրոգս։

բ

189բ Ներ իմաստիւք հոգւով լցեալ սուրբ բանական,
Աբեզական քատակ գտեալ ճահոդական,
Ծրոհել զլաւն ի վատթարէն ստոյգ ցուցական,
Երանութեան աւուրն արժան այցելութեան,
Րամել խրատ տառիւս ողջմամբ որգւոց մարդկան,
Գոչէ բողոք գէտ բարձրական, գորովական,
Րապաղ թւի և զարշական, որք չեն արժան,
Ի յիմաստնոյն ցուցմունքն կան վկայական,
Զար երևի յաչս պղծոց վարք սրբական։
Եւ* առ գծողս ուժգին ողբամ վասն յաբուրեան,
Եւ աղաչեմ զսուրբ ընթերցողքդ վասն յիշման։**

---

* Ձեռագրում գրված է ԸՁՃ, ուղղում ենք՝ ՀԱՃ։

** 1—9 տողերի սկզբնատառերով հողվում է բաղմաշխատ գրչի անունը՝ Հնատեր գրիչ։ Նատերի արտագրած ձեռագրերը բաղմաթիվ են և գրված են 1339—1363 թ.թ. ընթացքում։ Նա գեռևս կենդանի է, և հիշվում է իր որդի Ավետիսի կողմից 1365 թվականին (տես՝ հաջորդ հիշատակարանը), ուստի սույն անթվական հիշատակարանը գրված կարող է լինել 1339-ից ոչ շուտ և 1365-ից ոչ ուշ։ Տեղագրում ենք 1365-ի թվաշարքում։

568.

ՃԱՇՈՑ

Երևան 4656 (տես նաև 1383 և 1560 թ.թ.)

Գրիչ՝ Աւետիս որդի Նատերի
վայր՝ Ղրիմ քաղաք

ա

806ա Արդ, որք հանդիպիք մատենիս այսմիկ յիշեցէք աղաւթիւք առ Քրիստոս սեան սիրով ի միտս բարիս զՍարգիս քահանայ երէց, զստացող սորա, և զծնաւղ հայրն իւր զՀազարշահն, և զմայրն, որ երկնեաց զնա՝ զԽելաւմն, և զհօրեղբայրն իւր, նաև զամուսին սորին՝ Սարգիս քահանայի՝ զԳարիանէ՝ ղրաբեմիտն և զհամեստ բամբիշն, և զհայրն իւր | | | գառնն, զմայրն՝ զՄարիանէն, և զաստուածապարգև զաւակսըն իւրեանց՝ Սարգիս քահանայի՝ զԽաչատուրն և զՑովանէսն, որք են պայազատ և ժառանգ սոցա և վայելուղ տուրիս սրբոյ, որպէսզի յիշմամբ ձերով գտցեն յամենապարգև տեառնէն զքողութիւն մեղաց և զկոչումն կենաց, թէ՝ եկայք աւրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն. և դուք զնոյն լսէք ի Քրիստոսէ աւրհնելոյն յաւիտեանս, ամմէն։

բ

Զբազմամեղ գրիչս զԱւետիս թէպէտ և անարժան գոլով, սակայն եղբայրական սիրով յիշեցէք առ տէր Ցիսուս և զբազմերախտի ծնօղսն մեր ըստ մարմնոյ՝ զՆատեր գրիչ և զիմաստուն, որ կայ զեռևս, և զմայրն՝ զՄլհատան՝ զդովհանն ի բազմաց, որ հանգեաւ ի Քրիստոս ի գաւառն Բաբերդոյ, ի Վերի Գրոզուն, յոյժ արտասուաւք և կարօտիւ ի մէնջ, կէս ամաւ յառաջ քան զաւարտումն գրոցս, յիշեցէք և զՍտեփաննոս քահանա, և զտէր Գրիգոր եպիսկոպոս Խաղտեաց գաւառի՝ զհարազատ եղբարս իմ և զքաջագրիչսն։

Արդ, գրեցաւ սա ի Ղրիմ քաղաքի, ի հոգետներս վերի, ի թվ. ՊԾԴ. (1365), յամսեանն օգոստոսի ԻԳ. (23), ի մէջ բազմամբոխ վրդովմանց, քանզի բոլոր երկիրս ի Կեչեն մինչ ի Սարուխամանն՝ աստ ժողովեցան՝ մարգ և անասուն. և է Մամայն ի Ղարասուն՝ անթիւ հաթարաւք, և է քաղաքս ի դողման և յերերման, և զառաջակայն ինքն գիտէ, որ ամենեցուն է տէրն և խնամաւղ, որ է աւրհնեալ յաւիտեանս։*

գ

Պատերազմաւ սուղ կալաւ զբոլոր սահմանս Ղրիմ քաղաքիս, զի պետ իշխան սորա ոչ կարացեալ ընդդիմանալ՝ նկուն եղեալ փախեաւ,

* Հիշատակարանը քաղքաղված ընագրից արտագրել է 1560 թվին ձեռագրի կազմող Եօլպեյ Նաղաշ սարկավագը։

և հարին ի զաւրուն իրրև Մ. (2000) այր, և զկարասին զինուք հանդերձ առեալ տարան Մօլ։*

դ

ԶՄարգիս քահանայ՝ ստացաւղ դրոյս, և զԱւետիս զրիչ յիշեալ ի տէր, ով, պատուելի ընթերցաւդ։ Եւ թէ սխալ գտցի ինչ ի սմա՝ զանց արա, դի ի զաւրաշարժ և ի սուղ ժամանակի գրեցաւ։**

ե

303բ Զեռափափագ սիրով ստացաւղ դրոց ժամակարգութեանս՝ զՄարգիս քահանայ, հանդերձ տամբ և զաւակաւք իւրովք յիշեցէք ի տէր, ով եղբարք մեր ի Ղրիմս, և զամենամեղ ոդիս զԱւետիս մի մոռանայք, և աստուած զձեզ յիշէ ի սէրն իւր սուրբ. ի թվ. ԳԾԴ. (1365) գրեցաւ, ի Ղրիմ քաղաքիս։

569.

ՃԱՇՈՑ

Երևան 7458 (տես նաև 1682 թ.)

Դրիչ՝ Կարապետ
վայր՝ Կաֆա

462բ ...Ցիշեսջիք ի մաքրափայլ ա[զաւքս] զփափագմամբ ստացողն սորա՝ զՄկրտիչ աբե[զայն, որ ստ]ացաւ զայ ի հալալ արդեանցն յիշատակ իւր և ծնողաց իւրոցն, մաւր իւրոյ, և հաւրն իւրոյ, և եղբաւր իւրոյ Առաբելին, և ամենայն զարմից, նաև զՀայրապետն, զՅուռիկ, և զնահապետ աբեղայն, և զԴրիգոր միայնակեցն և զծնողսն իւր, որ կամակից եղեն խաւսաւք, և զամենայն եղբարսն, նաև, թէ արժանի համարիք, զանարժանս և զսուտանուն քահանայ զԿարապետ՝ զծողս սորա, եւս առաւել զեղբայրն մեր հոգևոր՝ զպատուելի քահանայ զՍահակն, որ զաւրինակն շնորհեց, պահեցէ տէր աստուած պարագայց ամաւք՝ տամբ և զաւակաւք։

Կատարեցաւ սա ի թուականիս Հայոց ԳԾԴ. (1365), աւգոստոս ԺԵ. (15), ի հայրապետութեան տեառն Մեսրովպայ, յեպիսկոպոսութեան արհիականին տէր Ստեփաննոսի, ի թագաւորութիւն Կոստանդիանոսի, ի հոչակաւոր քաղաքս ի Կաֆա, առ ոտս սուրբ Երրորդութեան, որ է սկիզբն ամենայն արարածոց, ի գառն և ի նեղ ժամանակիս, որ երևեցաւ յայսմ ամի Իսմայէլեան ազգէն Նեռն և ապականիչն՝ զազգս քրիստոնէից սրախոխող արարեալ, որ և կոչի անուն Զալիրեզ, որ և զամենայն աշխարհ, որ մերձակայ էր, ահիւ և դողութեամբ պահեր զցայգ և զցերեկ, որ և աստուածային նախանձմունքեամբն հռոմայական և արիական ազգէն, ըստ հրամանի տեառն

* Գրված է 260բ էջի ներքին լուսանցքում։
** Գրված է 288բ—289ա էջերի ներքին լուսանցքներում։

Ներսեհի, յայսմ ամի հրամանակատար եկեալ ի քաղաք գանձաւլաւս, ըստ հրամանին Հռոմայեցոց, ըստ աստուածային աջողութեանցն զՍուդդա քաղաքն առեալ, և զամենայն ինչ, որ ի նմա գտեալ՝ ձերբակալեալ, և զինչ Իսմայէլեան և Երրայեցիք, որ են Թշնամի խաչին Ք՛րիստոսի և քրիստոնէից, զամենեսեան սպառիսպուռ* կոտորեալ և զինչս դաւաճանեալ։

Եւ յայսմ ամի խռովեցաւ ժողովուրդ քաղաքիս քահանայիւքն դասիւք, սուգ և տրտմութիւն մտեալ ամենեքեան առհասարակ, որ չարն և բանսարկուն, Թշնամին սատանայ մտեալ բանսարկ ի միտս մեծունաց և ի հերետիկոսաց, որ զեկեղեցիս ուղղափառաց, ըստ յորջորջման Աստուածածնին, խլեցին, և հերետիկոսք բնակեցան, և մեծ տրտմութիւն տիրեց ուղղափառաց եկեղեցեացն, զոր տէր աստուած խաղաղութեամբ պահեսցէ զայս եկեղեցիքս անփորձ ուղղափառաց** և զԹշնամին, որ մարտեաւ, յամաւթ | | | լիցի, յայսմ աշխարհիս և ի հանդերձելումն։

463ա Ծիշեցէք ի Ք՛րիստոս զանարժանս՝ զԿարապետ...։

Ք՛րիստոս աստուած յարութիւն պարգեւէ տէր Ստեփաննոս հայրապետին | | | հոգւոյն և իւր եղբարցն, որ զճաշոցս, կապիւ, և կազմիւ, և արծաթ կոճակով, և լաթիւ, և շարքուրիւ զարդարեաց։ Աստուած զիւր ծնաւղացն հոգին զարդարէ յերկնից արքայութիւնն, ամէն։

Հնդ նմին և յիշեցէք զտէր Մաղաքիա հեզահոգի կրաւնաւորն, որ զճաշոցս կապեաց և կազմեաց, յիշեցէք ի Ք՛րիստոս և մեղաց թողութիւն հայցեցէք։

570.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վէնետ. 141 ծուց. Ա. էջ 614 (տես նաև 1357 թ.)

Կազմող՝ Առաքել
վայր՝ Ուռճայ

ա

1ա Աբրահամ հրէց Մակաղրիւրցի՝
Ճառաջ եղել ես Դումշեցի,
Ճետ այսոր ես գու Ուռհայեցի.
Զաւետարանս կազմեցի,
Զքո սրտի կամքդ կատարեցի,
Զքեզ ի յաստուածոյ սէրն վառեցի,
Ես Առաքել եպիսկոպոս զայս գրեցի,
Զքո մտաց աչքդ բացի,
Զքեզ աւետարանս յանձնեցի։

* Լավ չի կարդացվում։
** Մի բառ չափ տեղ պատռված է։

Ի թվին ՊԺԴ. (1365) կազմեցաւ Առիւծն էր տանուտէր, և էր ուժով երաշտ, որ տասն ամիս անձրև չեկաւ։

Բ

223բ *Ես՝ նուաստ ի քահանայից կարգէ Աբրահամ չարժան հրէց, ստացայ զայս սուրբ աւետարանս ի հայել արդեանց իմոց, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ Հեթում քահանային՝ փոխեցելոյն ի Քրիստոս, և դեռարոյս զաւակին իմոյ Խաչատրուն, որ դեռ է. (7) ամաց էր, յորժամ կազմեցաւ աւետարանս ձեռամբ Կարապետ աբեղայի ի յՈւռհայ քաղաքի, ի թվին ՊԺԴ. (1365)։ Ես Առաքել գրեցի վասն յիշելոյ և աստուած ողորմի ասելոյ, և աստուած զձեզ յիշէ, ամէն։*

571.

ԱԽՏԱՐԱՆ

Էջ՝ 235 (տես նաև 1632 Թ.)

Գրիչ՝ Դաւիթ
վայր՝ Բարերդ

ա

256ա *... Արդ, ես՝ Դաւիթ երէց, որ անուամբ կոչիմ քահանայ և դործովք ոչ, որ գրեցի զսուրբ աւետարանս, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն, կամեցող բարերարին աստուծոյ, որ հանապազ զբարիս կամի կամարարաց իւրոց, բազում բզձիւ ցանկացող [եղ]է և փափա[գ]նօք գրեցի զսուրբ աւետարանս ի յանառիկ ամրոցիս ղղեկապատ քաղաքիս Բարերդ կոչեցեալ, ի հայրապետութեան տէր Մեսրովբայ և ի եպիսկոպոսութեան տէր Գրիգորի [գեռ]աբոյս պատանեկի, յիշատակ ինձ [և] ծնողաց իմոց։ Արդ, մեծաւ յ[ուսով և] բազում աղերսանօք*

256բ *[ն]դրեմ..., ‖ որ լուսաւորիք ի կենսաբեր սուրբ աւետարանիս քարոզութենէն, զի յիշեսջիք ցաւակցաբար զիս՝ զբազմամեղս՝ զԴաւիթ երէց և զծնաւղսն իմ, ընդ նմին և զնիզիսաբեր հաւատովորն, որ զբանաքն կու եփէր, յիշեսջիք ի ձեր սուրբ աղօթք։ Եւ որ տէրն է ամենայնի յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի ի յիւր մխսանգամ զլըստեանն, ամէն և ամէն, ի թվ. ՊԺԴ. (1365)։*

Ընդ նմին յիշեցէք և զխոցադեղ ոսկերիչն, որ աւգնական եղև սմայ ոսկոյն. յաղագս պայծառութեան սորա | | | *

Բ

196ա *Քրիստոս աստուած, զո սուրբ և ընտրեալ աւետարանչացս բարեխօսութեամբ ողորմեա ստաց[ող]ի սորա՝ Դաւիթ քահանայի, և ծնօղաց իւրոց Աբրահամ՝ փոխեցելոյն ի Քրիստոս, և ամենայն ազգականաց մերոց, ընդ նմին և զնիզիսաբեր հաւատովորն յիշեցէք, որ աւգնական եղև սմայ քանաքին եփելոյն։*

* Եբէք սող մաշված ու անընթեռնելի։

572.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

Երևան 1244

Հետ ստացող՝ Իշխան

ա

303բ *Զտկուր ոզի Իշխանս՝ զստացողս սուրբ զբոցս, որ զաստուածայշունչ զիրքս [գնեաց] ի բարի և վառաւոր վարդապետ Սիմոնեից ի. (40) դ[ահե]կ[ան]...։ Եղբարք, որք կարդեք կամ աւրինակէք զստացողս սուրբ զբոց՝ զսուտանուն Իշխանս, և զհայրն իմ Յովան, և զմայրն իմ Միայտիկին, և զեղկու քուրքն իմ, և զհայրապատ հայրեղբարք իմ, զաւակաւք իւրեանց, և զնախնիքն իմ, և զմեզուցե[ա]լ Իշխանս յիշեցէք ի Քրիստոս...։*

Գրեցաւ ի թվիս ՊԺԴ. (1365), ի ղիւանուքիւն Ցուլիանոսի, որ նեղէր զնաւատացեալս բազում չարուքեամբ։ Ո՜խ, ոխ, զայն | | | ուս թէ ինչ չար էր։

Վերջին մասի գրիչ՝ Մկրտիչ

բ

311ա *Տէր աստուած վայելել տացէ զսակաւ տետրակս սուրբ վարդապետին Կարապետի, զի զվծուն գրիչս զՄկրտիչ | | | յիշեսցէ ի սրբարիայլ յաղաւթս իւր, վատ | | | անմեղադիր լերուք, զի դրիչս ախմար եմ և թա[փիւր | | |**

573.

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՎԱՐԴԱՆԱՅ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 341

Գրիչ՝ Սիմեոն

105ա *...Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրարիայլ յաղաւթս ձեր զբազմավէր ոզի լցեալ մեղաւք՝ զՍիմեոն պիտականուն սպասաւոր բանի, և որ առատն է ի տուրս պարգևացն, տացէ յիշաւղացդ դանդրաւն ուրախութիւնն յանկէտն յաւիտեանն, և յիշելոցս առհասարակ։ Անմեղադիրս աղաչեմ լինել խոշորութեան գրիս, զի գրագիր չկայր և բանքս էր պիտանացու, հարկեցա գրել։ Գրեցաւ ի թվ. ՊԺԴ. (1365)։*

Յիշեսջիք առ բուն բարին զհարազատ հոդոյ և զերզակից եղբարքս իմ զՍտեփաննոս և զՅոհաննես, որ դաւրինակս ետուն անյաչաղ կամաւք։

---

* Վերանորոգման ժամանակ, թերթի եզրերը կտրել են, որոշ բառեր ջնջում են մասամբ կամ ամբողջովին անընթեռնելի։

574.

ՃԱՇՈՑ

Ն. Լալ. Անթիպ. 674. Պատմ. Թանգ. (Վանի Արթուց եկեղեցի)

Նորոգող՝ Ամիրքաս

Վերստին նորոգեցաւ ընթերցուածս ձեռամբ մնղապարտ Ամիրքասի, յիշատակ Ցովաաթի քահանայի, որ է ճշմարիտ կրաւնաւոր և ժիր մշակ եկեղեցոյ, Քրիստոս աստուած վայելել ասցէ զնա ի յանցինս սոցա և տառջնորդեսցէ սոցա ի կեանս յաւիտենականս։ Արդ, աղաչեմ զսրբասնեալ քահանայքդ, որք հանդիպիք կարդալ կամ աւրինակէք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՑովաաթի քահանայ և զաւակք սորա՝ զԱւետիս քահանայ, ըստ սորին* զՄխիթար, և զծնօղքն սորա զԱւետիս քահանայ, և զմայրն սորա զԹամամ տիկին, և զկենակից սորա զՑնայ (*)։ Եւ աստուած յիշողացդ ողորմեսցի, ամէն։ Թվ. ՊԺԴ. (1365)։

575.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Նբևան 6869 (տես նաև 1684 թ.)

Գրիչ՝ Մարտ[իրոս]

155բ ...Արդ, գրեցաւ աստուածաշնչաւս և իմաստասիրաց դիրքս այս ի Թվ. ՊԺԴ. (1365), ի խնդրոյ սրբալսէր և առաքինի | | ¡,** զոր ստացաւ զսայ յարդար վաստակոց իւրոց, յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց՝ Բարսեղ քահանայի և Մալայ խաթունին, և հարազատ եղբարց իւրոց՝ Սիմէոնի և Սահփանոսի, և քերց իւրոց՝ Աստն խաթունին և Ռուզ խաթունին։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որ հանդիպիք սմայ, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զ| | | և զծնաւղսն իւր, ընդ նմին և զմեղապարտ գրիչս՝ զՄարտ[իրոս], զի յոյժ ծեր էի և ոչ | | |***

576.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Նբևան 8307

Գրիչ՝ Թադէ

310ա ...Գրեցաւ տետրս յընտիր աւրինակէ ի Թվ. ՊԺԴ. (1365), ձեռամբ Թադէ քահանայի, ի վայելուչն չնորհազարդ քահանայի Ցովաննիսի, զոր տէր աստուած վայելել տացէ։

---

* Շատ անփույթ է արտագրված, թվում է պետք է եղած լինի՝ «ընդ նոցինս»։

** Ստացողի անունը քերված է։

*** Շարունակությունը չի պահպանվել։ 264բ էջում գրիչն ունի «Ձծներուկս յիշեա յաղաւթս» հիշատակագրությունը։

577.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 7091

Գրիչ՝ Վարդան Ղրիմցի
վայր՝ Երուսաղէմ

ա

Փառք... որոյ շնորհիւ աւարտեցաւ ողբերգական այս մատեան, զոր ի հոգւոյն սրբոյ շարժեալ [զր]եաց սուրբն ի հարս Գրիգոր Նարեկացի: Որում ցանկացող եղէ ես՝ յետինս [ի] կրաւնաւորաց Թո-

257ա *րոսն | | |* տեառն Յակորայ յերուսաղէմ սուրբ քաղաքս, ղի տեսի զանհամար տղայս մեղաց և ախտից զորս սա թուէ, և ստացա զսա սիրով ինձ հրապարակիչ և զսրովիչ և կառափիչ, ի կենդանութեանս, և զկնի մահուանն, որչափ մնասցէ սա կամաւք տեառն ի ձեռս այլոց պարսաւելով զիս՝ զանառակ որդիս, որ առի զրաժին իմ և յանաւդուտ պէտս ծախեցի և չքաւորեցայ, և եմ լալի և ողորմելի, թէ զինչ տամ պատասխանի ի յահեղատենին՝ ոչ դիտեմ, այլ Թողի ինձ յոյս զաստուածոյ ևեթ մարդասիրութիւնն: Եւ դուք, ով լուսերամ ղ[աս]ք, որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակ դնելով, յիշեսջիք ի Քրիստոս քրտնաճան, ճգնազգեաց, հեզահոգի սարկաւագն Թորոս, և զծնաւղսն իւր՝ զհայրն Սուգիաս և զմայրն իւր զՄիքնայն, և զհղբարս, և զքոյրս, և զամենայն արեան մերձաւորս՝ զկենդանիս և զննջեցեալսն յիշեսջիք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ ի բարի:*

Աւրդ, գրեցաւ ի Թվ. Հայոց ՊԺԵ. (1366): Ի յայս տարի գերեց

257բ *փոռանկն զԱղեքսանդր. և ‖ յայս աշխարհս զինչ քրիստոնեայ կոյր զամէնն կալան և ի գիր հանին, և զինչ եպիսկոպոս և աբեղայ և երէց կայր՝ զամէնն գնտանեցին, և զինչ եկեղեցի կայր՝ զամէնն փակեցին: Սպանին զմեր ըռայիսն, և այլ բաղում երէց և կարգաւոր սպանին, և բաղումք վասն դառն տանջանացն դարձան Թուրք, և մեք յերուսաղէմս զտարոյս շատն ի գնտան ենք կացել, և բաղում վիշտ և նեղութիւն վասն Քրիստոսի տեսաք, զոր ոչ կարեմ ընդ գրով պատմել: Աղաչեմ զձեզ ես՝ Վարդան աբեղայ Ղրիմցի, որ անանգեցա (*) և գրեցի զսա բաղում նեղութեամբ և ահիւ, յամէն աւր կու ծնայաք Թէ երբ չարչարեն կամ սպանեն. սխալանաց սորին անմեղաղիր լերուք և յիշման արժանի արարէք զմեզ և զմերսն ամենայն, և աստուած, որ առատն է ի տուրս, յիշեսցէ զձեզ և զձերս ամենայն:*

* Ստացողի անունը և էլի մի երկու բառ քերված է. «Թորոսն» անունը գրված է այլ ձեռագրով:

բ

Ի սուրբ քաղաքս յԵրուսաղեմ է գրած, ի թվ. ՊԺԸ. (1366), ի յայս ղժար տարիս։

Սեպտե[մբեր] Ե. (5) է գրած այս գիր. և այսաւր է փոխել մխոյ, ընդ որ տէր յաջողեսցէ։

Զվարդան դրողս յիշեա, որ եղբայր իմ։

Զվարդան մեղաւոր ողի յիշէ ի տէր, որ եղբայր բարի, և դուք յիշեալ լինջիք ի Քրիստոս։

Եւ աւարտեցաւ հոկտ[եմբեր] ԺԳ. (13)։*

578.

ԼՈՒՍՄՈՒՆՔ ՍՈՒՐԲ ԴՐՈՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Վենետ. 264 ծուց. Բ. էջ 846

Գրիչ՝ Ատոմ

112բ Փառք... որ ետ կարողութիւն տկարութեանս իմոյ հասանել ի զրաւ տառիս, որ է Վարդան վարդապետի արարեալ բանս ԿՋ. (66), աւկաւոկար և հոգեշահ մանգանց նոր Սիոնի։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով, կամ աւրինակելով, կամ ընդ ձեր իսկ բաժին լինելով [յիշեսջիք] ի մաքրափայլ և երկնաբացիկ յաղուքս ձեր զՍտեփանոս և զհարազատ եղբայր նմին զՈհանէս կրօնաւոր, ընտրեալք երկոքինն, սնեալք սրբութեամբ և արգարութեամբ ի միասին, որպէս զձագս աղաւնեաց, ընդ նմին և զ՝Ի՛սրգ կրօնաւոր, որ առաջնորդ եղև սուրբ ուխտիս, և զՈհան կրօնաւոր, և զ՝Ոսկան կրօնաւոր, որ բազում ջանիւ աշխատէր յաղակս շինութեան սուրբ ուխտիս, որ բազում կամակցութեամբ աւգնեաց մեզ, և զհոգևոր եղբարսն մեր՝ զԹադէոս կրօնաւոր և Ստեփանոս կրօնաւոր, և աստուած զձեզ յիշէ։ Գարձեալ կրկին աղաչեմ զամենեսեան՝ յիշեսջիք ի զենման գառինն աստուծոյ՝ գուռուցիչն մեր զՍտեփանոս ղերջանիկ կրօնաւոր, օր զօրինակն սիրով շնորհեաց, ընդ նմին և դուսումնակիցն մեր զՍտեփանոս կրօնաւոր ի սուրբ խաչէն Ախթամարայ...։

Գրեցաւ ի թվ. ՊԺԸ. (1366), և զԱտոմ կրօնաւոր անուամբ և ոչ գործով յիշեսջիք, որ գրեցի զսակաւ լուծմունքս, և զհայրն իմ զՎարդան քահանայ, և զմայրն իմ զՆղիսաբեդ, և զամենայն արեան մերձաւորսն. և որ զմեղ սրտի մտօք յիշէ, յիշեալ եղիցի յարքայութեան աստուծոյ, ամէն։

Զեռիկս կու մրսէր ի գրե[լն]...։

---

* Ր. համաբէ՝տակ բերվող այս հինգ հիշատակագրությունները գրված են 45ար. 68ա, 81ա, 87ա և 257բ էջերի ներքին լուսանցքներում։

579.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Թուական 2088

Գրիչ՝ Սահփանոս Տիւրիկեցի
վայր՝ Դարանաղեաց գաւառ, Աւազ վանք

...ՊԺԸ. (1366) թուականութեան Հայկազեան տումարիս աւարտեցաւ աստուածախաւս մատեանս...։

240ա *...Արդ, ես եղկելի և ստորասուզեալս Սահփանոս Տիւրիկեցի սուտանուն կրաւնաւոր՝ ստացաւղ զբոց, աստուածով սկսա և շնորհիւ նորին աւարտեցի ի վայելումն անձին իմոյ և հարազատ եղբաւր իմոյ Ներսէսի, և ի յիշատակ ծնաւղաց մերոց՝ Ստեփանոս քահանայի՝ վոխեցելոյն առ Քրիստոս, նաև ամենայն զարմից՝ կենդանեաց և ննջեցելոց...։*

240բ *...Յիշեսջիք և զնորոգիս կուսակրաւն քահանայ, որ զաւրինակն շնորհ[ե]աց, ի սուրբ աղաւթս ձեր։*

Գրեցաւ սա ի սուրբ և ի հռչակաւոր անապատիս, որ կոչի Աւազ վանք, ընդ հովան[ե]աւ սուրբ Աստուածածնին, և կենսակիր սուրբ Նշանացս, և սրբոց Առաքելոցն, և սրբոյն Ստեփաննոսի, և Կարապետին Յովհաննու, և այլ սրբոց նշխարացս, որ աստ կան. և է առաջնորդ սուրբ ուխտիս հայր Կիւրակոսն։

Արդ, որք դմեզ արժանի առնեն յիշել ի մեղաց թողութիւն և ինքեանք յիշեալ լիցին առաջի անբաւ ողորմութեան գթութեանցն աստուծոյ, ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում վառք յաւիտեանս, ամէն։

580.

ԳԱՆՁԱՐԱՆ ԵՒ ՔԱՐՈԶԳԻՐՔ

Թուական 7853 (տես նաև՝ 1082 թ.)

Գրիչ՝ Գրիգորիս
վայր՝ Եզնկա

396բ *Շնորհիւ տեառն սկսա և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ մատեանս զայս, որ է բուրաստան և զբաղեստ աստուածայինն, զարդարեալ զանազան ծաղկաւք։ Գրեցի զսայ ես՝ նուաստս ի քահանայս Գրիգորիս՝ անարժան և բազմասղալ և յոյժ մեղաւոր հողս։ Եւ արդ, զրեցաւ սայ ի Հայոց մեծ թուականիս ՊԺԸ. (1366), յամսեանն ապրիլի Ի. (20)։ Բայց գրեցաւ սա յաստուածապահ մայրաքաղաքս Եզնկա, ընդ հովանեաւ սուրբ և երկնանման տաճարիս Կաթողիկէի, և սուրբ աջոյս տեառն Ներսեսի,. և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան։*

397ա *Գրեցի և կազմեցի ը ‖ ստ իմում կարի, ի խնդրոյ հեզահոգի և սրբամաքուր քահանայի Ներս[եսի], որ յոյժ սիրով և մեծաւ յուսով ետ գրել զսայ ի յարդար ընչից իւրոց, յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց, և ամենայն զարմից՝ կենդանեաց և ննջեցելոց։*

Այլ և յերես անկեալ ամենեցուն, եո՝ նուաստս Գրիգորիս, խնդրեմ յամենեցունց, որ հանդիպիք սմայ, որք էք ի մերում ժամանակի և որք գայք ղկնի մեր, յիշել ի տէր զյառաջասացեալ ստացաւոս զներսես քահանայ, ծնողաւք և այլ դարմաւք։ Նայ և զնուաստս ի քահանայս զԳրիգորիս զանպիտան քահանայ և զծնաւղսն իմ և զամենայն աղգայինսն, յիշել ի աէր միով տէր ողորմալիւ, և անմեղադիր լինել խոշորութեան և անյարմար դրոցս, զի այո չափ էր կար մեր. այլ և յիշել զգանձևրուն ղրողն զՄարկոս կուսակրաւն քահանայ, և դուք յիշիք ի տեառնէ, ամէն։***

581.

ՏՕՆԱՊԱՏՃԱՌ

Երեան 2040 (տես նաև՝ 1359 Թ.)

Հետ ստացող՝ Յուսիկ

457ա *... Արդ, աղաչեմ զդասս [լուս]երամից մանկունք եկեղեցւոյ կրկին, ո ոք հանդիպեսցի այսմ զրոյ, յիշեցէք զստացող սորին՝ զՅուսիկ արեղայ, և զծնողսն իւր՝ զՊարոնշահն և զԹաճխաթունն, և զեղբայրսն իւր՝ զԿիրակոսն և զՇատոյոսն, և զքուրն իւր զԱւագաիկին, և զհաւրեղբարն՝ զՅովհաննես կրաւնաւորն, և զՎասակն, և զՎահրամշահն, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր՝ զվոխեցեալսն ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ՝ զյիշողքդ, յիւր միւսանգամ զալուստն, ամէն։*

Ստացաւ զսա զՅուսիկ հայրապետն ի Թվ. ՊԺԵ. (1366)։

* *Մարկոսը ձեռագրի մեայն երկրորդ մասի՝ Քարոզգրքի գրիչն է։*

** *Հիշատակարանը շարունակվում է նաև մյուս՝ 397ր էջում, սակայն բացի ստացող Ներսես քահանայի ազգականների թվարկումից, այնտեղ ուշագրավ այլ բան չկա։*

582.

ՀԱՄԱՌԱԽՏ ԺՈՂՈՎՈՒՄՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՍԱՀԵԱՑ, ԳԷՈՐԳԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ*

Երևան 1295

Հետ. ստացող

197ա Ի թվաբերութեանս Հայոց ՊԺԶ. (1367)-ն, ի յամսեանն մայիսի Զ. (6) աւրն, ի յաւգմանէ սատանայի արար զաւրաժողովք ամբրայն Տարսոյ Միճչաճ անուն, ժողովեաց ի Շամբուն հիծելէն քանի որ կարաց, և դուրակիր Թուրքմանն զամէննն, և այլ բազում խարաճնցիք, և երեկ ի վերայ աթոռանիս[տ] բերդին Սրոսոյ, ի հայրապետութեանն տեառն Մնսրոպա և ի թագաւորութեանն հայոց երկրորդի Կոստանդեա, որզի ի Քրիստոս հանդուցելոյն ամենադովութեանց արժանաւորին, մեծ և հզաւրին և ամենամեծ ջամբլին Հա[յ]ոց պարոն Հեթմոյ, և ի դունտուստապլութեանն հայոց պարոն Բազուկի՝ պարոն Լեւոն պարոն Բազուկեանց որդոյն, և ի յավաճ մարաջախտութեանն հայոց Լիպարիտ պարոն Թորոս ավաճ մարջախաուն որդոյն։

Նա ի նոյն թիւս, որ ի վերոյ է (1367), ի Զ. (6)-ն ի մայիսն, ի յԱնցմնցկին գիհն բազում հիծման հիծելով և այլ շատ հիտիվաճաւք,
197բ որ ‖ էին իրրե ԺՌՌ. (12000) մարդ, և այլ ավելի։ Նա յաջողութեամբն Ցիսուսի Քրիստոսի ելավ թագաւորն ընդդէմ նորայ՝ հայոց Կոստանդին. և դրին կռիվ՝ հողմն կռիվ։ Եւ ի յահէն սուլտանին ոչ եղև հրաման թագաւորին կռվել ընդ նոսայ, և այլ ամենայն բազմութիւնն քաղաքին հեծմանք և հետիվակք ի կիրէին ի բերդն զինչս իւրեանց։ Եւ ի միւս աւրն յղրկեաց դեսպան առ թագաւորն ուզելով հրաման տալոյ, եթէ դամ առաջի քաղաքին ի ֆռուճ, վասն տեսանելոյ զքաղաքն։ Եւ երբ դայր, նայ խափանաւք մտանէր ի քաղաքն ու այրէր. և այսպիսի խարէութեամբ ուզէր դավաճանել զքաղաքն. և ի միւս աւրն, որ էր ի յամսոյս Ը. (8) աւրն, ի յաւուրն կիրպ ի շաբաթ, իւր իջվանքն էր ի վերա դետին Մախթլշա, նայ ի թող ի տեղն զվրանին քշտած և զիւր մաժառոստունն և զայլ՝ ծանդրոցքն և իառ զզաւրքն իւր և երեկ դէպ Շապլխերոյն ֆարն, ու իրեկ դէպ ի Կրտուճակին ֆարկիքն ու ի Պոլեճացծվուֆն(*) | | | **

---

* Ձեռագրի գրության թվականն անհայտ է, սակայն գրված պետք է լինի ԺԴ. դարի սկզբներին. գրչից պահպանվել է երկու հիշատակագրություն, դրանք են՝ «Ձնուստ գրիչ զՍարգիս արեղայ աղաչեմ յիշել» (էջ 65 ա), և «Ձսպասաւոր բանիս Գրիգոր քահանայ աղաչեմ յիշել ի տէր. եւ ընդ նմին զնուստ գրիչ զՍարգիս աղաչեմ յիշել ի տէր». (էջ 98բ)

** Ձեռագրից թերթ է ընկել. հիշատակարանը մնում է թերի։

583.

ԱԻԵՏԱՐԱՆ

Տե՛ս՝ 8308

Գրիչ՝ Գրիգոր Ակներցի
վայր՝ Երուսաղէ՞մ

...Արդ, դրեցաւ սայ ի թիւս չափոյ քանակութեան համարոյ յեդանականական շրջանակի հոլովման արուսեկի, որ ըստ ընթացման ամանակի այսմիկ նկատի ՊԺԶ. (1367) ամի յաբեթական տոհմիս
331բ տումարի, ի հայրապետութեան տեառն Մեսրոբայ, || և ի թագաւորութեանն Հայոց Կոստընդեա՝ որդւոյ պարոն Հեթմոյ Ախտուց տէր կոչեցելոյ, և ի հայրապետութեան տեառն հեզահոգի և ամենայն բարեձեւութեամբ զարդարեալ հեղինակիս արհիեպիսկոպոսիս, որ այժմ յաջորդեալ ունի զաթոռ տիեզերալոյս առաքելոյս Ճակոբ Ձերենեան կոչեցելոյս՝ տէր Գրիգոր Մարցոյս, ձեռամբ մեղսամակարթ և անարժան յորդիս եկեղեցւոյ Գրիգոր Ակներցոյս, որ դի թէպէտ և ես չէի լի և պատարուն ի յարուեստ գրչիս, ապա աւրինակս էր լի և անթերի, տի նա և յարուեստ բանի ոչ յաննշան գրչէ, այլ լի և կատարեալ արուեստիւ՝ ի բանս, ի բառս, ի լծորդս, և ի բացատս, և ի տրոհ-
332ա մունս առոգանութեանց։ Եւ յոյժ բա || զձանաւք, յոքնատոչոր տենչանաւք, ալէտանջ երկաւք, մեծաւ աշխատութեամբ ըստ կարի գծագրեցի զսա ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ։

...Որպէս և բազմերջանիկ և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, հեզահոգի և խոնարհամիտ կուսակրաւն և պարկեշտ վարիւք կացեալ քահանայս այս, փակակալ սուրբ տաճարիս, յորում զառա-
332բ ջին պատարագն տեառն եղբաւրն է ոստ մատուցեալ։ || ...Մեծաւ յուսով ևմեցաւ ստանալ զըղձալիս զայս ի վայելս անձին իւրոյ և յետ յաստեացս ելանելոյ՝ յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն զարմից։ Եւ ի բազում ամաց թախանձէր զիմս անարժանութիւն գրել զաստուածախաւս տառս զայս ի մխիթարութիւն հոգւոյ և մարմնոյ իւրոյ։

333ա Եւ իմ, զի թէպէտ և անկար գոլով մանով և հոգով, || և բազմայղիմի վշտաւք պաշարեալ էաք, ի բանտ և ի կապանս և ամենայն աւուր առաջի դատաւորաց քաշշեալք, այսմ աղագաւ թէ ըղՍկանդրի* Փրառնկն էառ, և բազում և անթիւ տաճիկ եսպան, և ըղայրս և ըղկանայս գերի վարեաց ի Կիպրոս կղզին։ Իսկ վերագրեալ Անգրիաս փակակալս ոչ կասէր ի յուսոյն և առ ոչինչ համարէր զնեղութիւնս զայս, այլ միշտ ստիպէր ըզմեզ լնուլ ըզփափաք տենչանաց սրտի նորայ։ Ե[ւ] իմ հարկեալ ի պատկառեցուցիչ հրամանէ փրկչին, որ ասէ՝ զամենայն ինչ, զոր խնդրէք ոք ի քէն՝ տուր նմայ, ի բաց եղի զանկարութիւն[ն] իմ, գրեցի ըստ կարի իմում զաստուածախաւս և
333բ ըզկենսատնակ տառս զայս առ դրան տաճարիս և առաքելական ա || թո-

* Իմա՝ ըզԱղեքսանդրիա։

ոոյս Ցակոբ Չեբեղեան կոչեցելոյս, առ ի յիշատակ հոգւոյ վերո-
գըրեալ փակակալիս Անդրիաս կոչեցելոյս և ծնաւղաց իւրոց, հաւրն
իւրոյ՝ Աղերոսի և մաւրն՝ Տիկնաց տիկնի, որոց տէր ողորմեա[ց]ի,
նայ և հոգևոր եղբաւրն իւրոյ տէր Սարգսի, այլ և ուսուցչին իւրոյ
Աւետիս արեգի, և միւս այլ՝ Սարգիս արեղի, որոց յիշատակք սոցա
աւրհնեալ եղիցի, նայ և Յովհաննէս կրաւնաւորի, որ բազում ջանիւ և
աշխատութեամբ հանգոյց ըզմեզ, մարմնական պիտոյիւք աւժընդա-
կեաց ծերութեանս մերում, զոր տէր հատուսցէ նմա վարձս բարեաց։

Աղդ, որք տեսողք և վայելողք լինիք տյսմ աստուածախաւս աւե-
տարանիս, յիշեսջիք սրտի մտաւք ըզվերոյգրեալքս, որ կան ի սմին.
334ա և որք յիշէքդ ըզմեզ ի ‖ բարիս և դուք յիշեալ լիջիք յողորմու-
թիւնն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

584.

ԳՐԻԳՈՐԻ ՆԻՄՍԱԾԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ

Եբևան 1152

Գրիչ՝ Գրիգոր
վայր՝ Խ[ի]զան ֆաղաք

136բ Եւ աղդ, գրեցաւ աստուածաշունչ տառս ի քաղաքիս, որ կոչի
Խզան, ընդ հովանեաւ սուրբ Սարգսի զօրավարին, առ ոտն սուրբ առա-
քելոյս Դամաղիէլի։

Ո՛վ առաքելականաշնորհ վարդապետք սուրբ եկեղեցոյ, յորժամ
հանդիպիք աստուածաշունչ տառիս կարդալով կամ օրինակելով, յի-
շեցէք ի սուրբ և յերկնաթռիչ յաղաւթս ձեր զստացող դրոց՝ զաշխար-
հալոյս վարդապետս մեր զՈհանես անուն կոչեցեալ, և զծնողսն իւր
ըստ մարմնոյ՝ զՓոխանն, և զմայրն՝ զՄեծտիկին՝ զվոխեալսն ի Քրիս-
137ա տոս՝ և ‖ զամենայն արեան մերձաւորս իւր, և աստուած զձեզ յիշէ
յիւր առատ ողորմութիւնն, ամէն։ Ջանգի ցանկայր ի վաղուց հետէ
այսմ աստուածաշուն[չ] տառիս և ետ գրել մեզ, և մեք տկար ան-
ձամբ յանձն առաք գիրքս։

Ո՛վ պատուական և աստուածահաճո կրաւնաւորք, աշակերտեալք
սուրբ գրոց ընդ աշխարհալոյս վարդապետին մերո, զմեղուցեալ Գրի-
գոր սուտանուն քահանայ, և զսոքա՝ զերկու որդիքս իմ՝ զՍտեփան-
նոս քահանայ և զՄկրտիչ քահանայ, յիշման արժանի առնել աղաչեմ,
և խոշորութեանն գրիս և սղալանաց մի մեղադրել, զի կար մեր այս
էր, մեք գրագիր չէաք, լուր վարդապետի սիրտն չկաբացաք թողուլ՝
գրեցաք, ապա մեր բան չէր, մարդ զիւր գործն պիտի որ առնէ, որ
ամաւթով չլինի։ Գրեցաւ ի թվ. ՊԺԶ. (1367), կարդացողքն և լսողքն
և կատարողքն աւրհնին յաստուծոյ և ամենայն սրբոց, ամէն։

585.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Փերղ. 6273, էջ 169 (Վան, Բելու գիւղ)

Գրիչ՝ Յոհաննէս
վայր՝ Մոկաց աշխարհ, Սարի սուրբ Գեորգայ վանք

Գրեցաւ աստուածային այս մատեան ի թուին Հայոց ՊԺԶ. (1367), յանապատիս Սարի սուրբ Դէորգայ վանս առաջնեղոյ, ընդ հովանեաւ մօրս լուսոյ սուրբ Աստուածածնին, ի յաւագնորդութեան Յոհաննէս և Գեորգ կրօնաւորացս, ձեռամբ մեղուցեալ գրչի՝ Յովհաննէս պիտականուն կրօնաւորի...: Ցիշել [աղաչեմ] զՅոհաննէս գրիչ, և զՍտեփաննոս՝ ղեղբայրն զանդրանիկ, և զհայր՝ տէր Աստուածատուր քահանայն, և զեղբայրն նորին զՄովսէս կրօնաւորն, և զվարդապետն մեր Սիմէոն, և զամենայն կրօնաւորք սուրբ ուխտիս՝ զՀայրապետն, զՍէթն, զՅոհաննէսն, զԳեորգն, զՆերսէսն, զԹադէոսն, զՍարգիսն, և զՍտեփաննոսն, զՎարդան, և զԿարապետն, զՅոհաննէսն, և զՄարտիրոսն, և զՍիմէոն, և զհանգուցեալսն ի Քրիստոս՝ զԿիրակոս, և զԴանիէլ, զԱնդրէաս, և զԱկներ։*

586.

Ա ՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 352

Գրիչ՝ Գրիգոր Թորոսանց
վայր՝ Սուղտա—Սուրմար

ա

348ա *Քրիստոս աստուած, քո սուրբ մաւրդ բարեխօսութեամբ ողորմեա Գրիգորի անարժան քահանայի, և հօրն իմ Թորոս քահանայի, և մօրն իմ, և կենակցին իմոյ։ Եւ ղղաւականն իմ պահեա ընդ հովանեաւ սուրբ աջոյդ՝ պատուիրանապահ լինել քո սուրբ բանիդ աւետարանի, խնդրուածօք սուրբ առաքելոցն քոց, ես սիրեցեալ աշակերտիդ, ամէն։*
Ի թվ. ՊԺԶ. (1367), ի Սուղտա քաղաքի։

բ

397ա *...Արդ, սմին՝ այս աստուածաշունչ գրոցս, փափագող եղէ եռանդնոտ սիրով, ես՝ անարժան քահանայ Գրիգոր, որ և Թորոսանց, և իմով ձեռամբ գրեցի զսա ի յիշատակ ինձ, և ծնողացն իմոց՝ Թորոս քահանային, և մաւր իմոյ, և ղուղակցին իմոյ՝ Շահար Մելիքին, և ամե-*

* Քերզալամյանի ձանրթագրության համաձայն Սարի սուրբ Գեորգի վանքը գտնվում է էլ Մոկաց աշխարհի, մերձ ի Մոկս և Մոկաց Թաղ, առընթեր հնկայ լերին Նղերովյ։

նայն արհանառու մերձաւորաց իմոց։ Արդ, գրեցաւ սա ի Սուրբ քաղաքին, յաշխարհին Հռոմոց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի մարդեղութենէ կենարարին ՌՅՀԳ. (1373) և ի հայոց մեծի թուականիս ՊԻ. (1371) ամի*, ի վայելումն զաւակին իմոյ Թորոսին։ Արդ, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և աւրինակէք, մեղաց թողութիւն խնդրեցէք յանցանաց իմոց և մերոցն ամենայն, և այն, որ առատն է ի տուրս պարգեւաց, պարգեւեսցէ մեզ և ձեզ զիւր անճառ բարիսն, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

587.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 3393 (տես նաև 1309, 1383, 1553 և 1657 թ. թ.)

Հետ. ստացող՝ Տիրացու
վայր՝ Ապահունեաց վանք

ա

119բ Վերըստին ստացայ զաստուածախաւս սուրբ աւետարանս ես՝ նուաստ ծառայս աստուծոյ Տիրացուս՝ որդի Ներսիսին, և կենակից իմ Սղիսաբէթ, դուստր Թադէոս իրիցու։ Գնեցաք ի հալալ արդեանց մերոց և եղաք մեզ յիշատակ և տղային մեր Նասապին՝ գնացելոյն առ Քրիստոս, և եղաք ի սուրբ ուխտն ի վանքն Ապահունեաց՝ ի սուրբն Նիկողայոս, առ գերեզմանին սուրբ վարդապետին Գրիգորի, զոր աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք այսմ հոգելից և աստուածային
120ա մատենիս, զի գուք, || որք էք այժմ ի մերում ժամանակիս և որք գայք զկնի մեր, յիշելոյ արժանի առնէք զմեզ ծնողաւք մերաւք։ Նայ և կրկին աղաչեմ զձեզ դասք քահանայից և եկեղեցականաց, զի յիշէք զպատուելի և գհեզահոգի հայրապետն սուրբ վանացս՝ զհայր Անտոնն, զի նորայ յորդորելովն և կամակցութեամբն եղև այս սուրբ աւետարանս վանացս. և որք յիշէ զմեզ միով տէր ողորմայիւ աստուած զինքըն յիշէ ի միւսանգամ գալստեանն իւրոյ, ամէն։

Գրեցաւ գիրս ի հայոց թվական[ին] ՊԺԶ. (1367), մարտին ԻԲ. (22), զի յայսմ ամի գնեցաք։

Հետ. ստացող՝ Յոհաննէս

բ

258բ Ես՝ Յոհաննէս երէցս, որ գնեցի զսուրբ աւետարանս ի Պետրոս արեղէն և վերըստին դարձուցի ի սուրբ ուխտն՝ ի վանսն, որ կոչի Ապահունեաց, առ դրան սուրբ Աստուածածնին և սրբոյ Նիկողայոս հայրապետին, և եղի ինձ յիշատակ, և կենակցին իմոյ Սալիմելիքին, և հարսն իմոյ Տաւճաշին, և մարսն իմոյ Աւգոցին, և եղբարցն իմոց Առլիպարոնին և Անտնին, Նորշին և Շահպարոնին, և զաւակաց նոցին՝ Մուրատին և Իւանէ և Արիսողոմէ, վկայութեամբ Փթաոնու գեղին տանու[տէրացն] | |

* Այդպիսով, ձեռագրի ընդօրինակութիւնը տևել է չորս տարի (1367–1371 թ. թ.)։

588.

ՃԱՇՈՑ

Երևան 7741 (տես նաև 1360 և 1445 թ.թ.)

481ա ...Ըստ բերման յառաջշարժութեան ընթացից լուսոյն մեծի դպաւլոյ, սբ ըստ լրապատարն և լուսակիրն էութեան մղտափարատն նշուլից ակնապարարն ականն արևու ստեղծականն տրսւսեկի համբարէ, կուտէ ամաց բաղմաց յոլովութիւն շընչասպառ կենդանանորոգ առ ուղղեկան յաւիտենիս՝ վեշտասան յորելինի և միակ վեշտասանի ամաց շըրջադայութեան յաթեգական տումարի (16×50+16+551=1367), ոմն աստուածասէր և երկիւղած յաստուծոյ Տիրացու անուն, հանդերձ կապակցաւ իւրով, խորհուրդ բարի ևղեալ ի մտի ստանալ գանձ պատուական... ընտրեցին մտաւք իւրեանց զայս գնդեցկայարմար գիրս ստանալ...։

Արդ, որք հանդիպիք այսմ ըղձալի տառիս, կամ կարդալով, կամ աւրինակ դնելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ըղվերոգըրևալ պարոն Տիրացուն, և իւր որդին պարոն Վարդանիսն, և Մելիքսէթն, Կիրակեն, և Յոհաննիսն, Խուանտ-Մելիքն, Յովաննիսն, Էմին-Մելիքն, Յազիզն, Խաթուն-Մելիքն, Ուլուպեկն, Մարայ-Մելիքն, յՈ[ւ]ստիանեն, զՏիմաւթն, զԱմիր-Սարգիսն, զՄաքսոս քահանայն, զՀոիփսիմեն, զՎարդան քահանայն, զԽաս-Մելիքն, զԱստուածատուրն, Ղիմաթն, զխաչատուրն և զամենայն արեան մերձակայս՝ զկենդանիս և զհանգուցեալսն, նաև զվերոգրեալ հայրն զպարոն Տիրացուն՝ զոդորմածն ասեմ և զաղաւթասէրն, զայցելուն որբոց և տնանակաց, և զաշխատաւորն, որոց ոգորմեսցի Քրիստոս և ընդեսցէ զձեռագիր յանցանաց նորա, և որք յիշէք և թողութիւն մեղաց հայցէք, և ձերն թողցէ Քրիստոս աստուած, ամէն։*

589.

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ

Վիեն. 312. Տաշ. 8ուց. էջ 744

Գրիչ՝ Վասիլ
վայր՝ Ամասիա քաղաք

413ա Աւարտեցաւ քարոզգիրքս յԱմասիա քաղաք, ի դուռն սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ սուտանուն Վասիլ եպիսկոպոսին, ի վայելումն անձին իմո, յիշատակ ինձ, եւ ծնողաց իմոց՝ Մարտիրոս քահանային եւ Պրապիճ (՞), եւ եղբարցն իմոց, եւ ղեռաբոյս հոգեւոր որգոյն իմոյ՝ Սահակ սարկաւագին, զոր տէր աստուած բարով վայելել տացէ ժառանգաւորաց. ի թվին Հայոց Փ· եւ ԾԶ. (1367), ի սեպտեմբեր ամսոյ, Ի·Դ. (24), աւրն հինգշաբաթի։

* 481ը էջում գտնվում է նվիրաբերական բովանդակությամբ մի հետաքրքիր ցուցակ, կազմված ՋՂԴ. (1445) թվականին։

590.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փիլդ. 6273, էջ 162 (Ի վանս Գլակայ սուրբ Կարապետին)

Գրիչ՝ Դաւիթ Մշեցի
վայր՝ Մուշ

...Եւ ես՝ նուաստ Մշեցի Դաւիթ երէցս, ի զառն ժամանակիս, որ այլազգիք նեղէին զազգս քրիստոնէից՝ ես առաւել զհոչակաւոր ուխտն՝ սուրբ Կարապետն Տարօնոյ, և նոքա ի չքաւորութենէ բերեալ գրաւ գնէին այլազգեաց. ես յիշեցի թէ, որ ունիցի զաւակ ի Սիոն և յընդունեակ յՆրուսաղէմ, և իմ հալալ արդեանց տուի երկուհարիւր դեկան, և թափեցի զսուրբ աւետարանս, և վերստին դարձուցի ի սուրբ Կարապետ յիշատակ ինձ և նախնեաց իմոց...։

Ի թուին Հայոց ՊԺԷ. (1368) էր, որ թափեցի։

591.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փիլդ. 6273, էջ 163 (Վան, Տիրամայր եկեղեցի)
տես նաև 1330 թ.

Ի թուականիս Հայոց ՊԺԷ. (1368) ամենայն իրաց առատութիւն էր. բայց ջարդն զօրքն չին ի թողուլ, որ հանգչէաք, աստուած զօրացուցանէ զիւրեանքն ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի։*

592.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Բրիտ. Քնդ. 14 (Add. 15,411), Կոնիբ. Ծուց. 34 և Փիլդ. 6273, էջ 163 (տես նաև 1321)

Հետ. ստացող՝ Աչեր և Նաորադին
վայր՝ Աղթամար

91ա *Որք միանգամ յաստուածայնոցն բաղձան, զիրճ սրտիցն հանապազ ի վեր աճեցուցանեն, վասն զի սուրբ լոյս այս բերեալ եղև*

* Իմա՝ չէին։

ի Սիւնեաց զտւատէն յերկիրս Ընդշտուննեաց, և անկաւ ի ձեռս աթոռակալին Աղթամարա։ Իսկ աստուածասէր տանուտէրքն Աչերն և Նասրադին ի խնդիր ելեալ գնեցին սա ի Մ. և Ծ. (250) դ[ահե]կ[ան], զապականացուն տալով դանանցն ստացան։ Ո՛վ, սրբամիտ հանդիպող սմա, յիշեա ի տէր զպարոն Ումեկն՝ զԱչերու հայրն, և զՄուրատն՝ զնասրադնի հայրն, զԱչերն, զՆարին (իմա՝ զնասրադինն), զամիր Սարգիսն, զխուրլուշեն, զնաւդուզն, զԱյմելիքն, զխուանդն և զամենայն արեան մերձաւորք նոցին...։ Ի թուին ՊԺԷ. (1368)։***

593.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վիեն. 55, Տաշ. ծուցակ, էջ 259
(տես նաեւ 1631, 1637 և 1666 թ. թ.)

Գրիչ՝ Յովհաննէս
վայր՝ Անի՞

ա

51բ Զստացաւդ սուրբ գրոցս զարհի եւ զերջանիկ դիտապետն Բջնոյ մեծ նահանգին՝ զտէր Մանուէլ աղաչեմ յիշել ի տէր։ Ընդ նմին եւ զանպէտ գրիչս զեովհաննէս եպիսկոպոս Անոյ վիճակիս, եւ աստուած զձեզ յիշեսցէ։

բ

365ա ...Արքեպիսկոպոսն զտէր Մանուէլ...հանդերձ հարազատովքն իւրովք՝ Զաքարիայիւ եւ Սարգսիւ, աղաչեմ [յիշել]...։

գ

466ա Զեղկելի ծրոցս զեով[հաննէս] եպիսկոպոս Անոյ աղաչեմ յիշել ի տէր։

Ծաղկող՝ Մելիքսեթեկ

դ

471բ Որք զմտաց տեսանելիս մաքրեալ ունիք յայսմ աշխարհիս, աչօք նայիք յերեելիս եւ իմաստիւք յիմանալիս, աստուածաշունչ սուրբ կտակիս եւ հոգելից սորայ բանիս։ Ցիշեցէք ի մաքրափայլ եւ յերապրնթաց յաղօթս ձեր զստացօղ զրոցս զտէր Մանուէլ, որ ստացաւ զսայ հալալ յարդեանց յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, եւ ի կատարել գրոցս գրելով ինքն փոխեցաւ առ Քրիստոս, եւ մեզ աստուա-

---

* Բնագրում՝ ԺՂՆԲսԻ։

** Թվականը կոնկրետի ծուցակից բացակայում է, լրացնում ենք Ղ. Փերզալամյանի ժողովածուից (Երեան, № 6273, էջ 163)։

ծաշունչս ծաղկելի, | | | ի ձեռս անիր | | | *ընտրութեամբն աստուածոյ տէր Յովաննէս, մանուկ գոլով հասակաւ եւ լի ամենայն առաքինութեամբ իբրեւ ջահ անշիջանելի քայլէր ի մէջ եկեղեցւոյ։ Ա՛ս բաղում աշխատանօք եւ ընչիւք ազատեաց զգիրքս ի ձեռաց անօրինաց եւ ետ ծագկել զսա։ Որոյ տէր աստուած վայելել տացէ նմա բաղում ժամանակս, եւ զիւր ծնողաց հոգին ի ձեռաց սատանաի ազատէ աստուած, եւ որք յիշէք յիշեալ լինիք ի Քրիստոսէ, ամէն։

Նայ եւ զանարժան ծագկողս Մելիքսեթեկ յիշեցէք աղաչեմ։

ե

486բ Շարժաւղն էիցս ամենայնի
Նոր պատուիրան ետ հրամանի...
Շարժեալ ի սէր անճառելի,
Տէր Մաճուհ յոյժ նազելի...
Եւ ետ գրել զաստուածաշունչս գովելի,
Եւ ստացաւ իւրն յիշատակ անջնջելի։
Ո՛վ, վեհագոյն եղբայրք բարի...
Լերուք եւ ինձ քաղցունք բարի,
Առնել յիշման դիս արժանի,
Զմեղսամակարթիս յոյժ եղկելի,
ԶՄելիքսեթեկ վա[տ]թարս, մեղօք ի լի,
Որ եմ ծագկող այսմ տառի։
Նայ եւս էր թիւն տումարին
Ութհարիւր** Հայկեան ազգին,
Տինայ է տասն*** յաւելուածին,
Այլ եւս եաւթն շաբամանին (1368)։****

594.

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ

Երևան 2705 (տես նաև 1600 և 1780 թ.թ.)

Գրիչ՝ Ստեփաննոս որդի Նաւերդի
վայր՝ ի Բաղեշ Կազարիա, որ և Խրիմ առձայնի

486բ ...Արգ, յամենառատ շնորհացն աստուծոյ լցեալ արժանապէս այրն աստուծոյ, սրբազան և առաքինի, վեհիմաստ և հանճարեղ, կրօնավամիտ և խոհեմիմաց, սրբասէր կրաւնաւոր քահանայն տէր Յովհաննէս, աթոռակալ այցելութեան հիւսիսական աշխարհի, ստացաւ

* Բեղված է մի տող։
** Բնագրում՝ «ՀՃ.» (800)։
*** Բնագրում՝ «Ժ.» (10)։
**** Թե տասն-ից առաջ եղող «է»-ն թիւ համարենք, որ քիչ հավանական է, ապա կստանանք ոչ թե 1368, այլ 1378 (800+17+7+551=1378) թվականը։

զգիրքս աստուածաբան մարգարէիցն, և զտառս նորոց կտակարանաց, զքրիստոսախաւս աւետարանութիւնս, և զառաքելոցն սրբոց զգործսն և զքարոզութիւնսն, և զյայտնութիւն ահագին տեսլեանն սրբոյ աւետարանչին Յովհաննու ի մի տուփ, շատ ե յոլով ծախիւք, զարդարելով խորհր[դա]կան նկարակերպութեամբ՝ ոսկիտզարդ և երանգաներկ
487ա գունովք, ի սփռիանս || և ի զուարճութիւն անձին իւրոյ և յիշատակողւոյն առ յապա յաւիտեան։ Եւ այնչափ ունէր փոյթ յանձն իւր և սէր, և սիրէր յոյժ զբանն աստուծոյ, մինչ զի ոչ տալ քուն աչաց կամ նինջ արտևանաց յընթեռնլոյ զգիրս սուրբս և քննելոյ զխորս խորհրդոցն, որ ծածկեալ են ի նմա։ Որ և շնորհաւքն աստուծոյ հասու եղեալ ամենայն մտաց դրելոց սրբոց անտարակոյս լեզուաւ տայր զլոյս բանին աստուծոյ ի սիրտ և յոգի ունկնդրաց, որ քաղցր թուի ի քիմս իմանալոյն, քան զմեղր բերանոյ, որ և ժողովեալ գրեանս բաղում մեկնչաց ի սրբոց հարանց բացայայտեալ զբոլոր աստուածաշունչ գրոց մեկնութիւնս, և զի գրասէր գոլով ստացաւ զամենայն դրեալսն և անյագ փափագմամբ ընթեռնոյր, ուստնէք և ուսուցանէր, ոչ միայն բանիւ, այլ և արդեամբք ի գործ բերեալ արձանացուցանէր զուսեալսն ի գրելոց սրբոց։ Ցորում և ընդ բազում արդիւնաբարութիւնսն զոր առնէր, արմատուցեալ կանգնեաց ի վանս իւր և տաճար երկնանման գեղապաճոյճ, կամարաձև, զըմբեթայարկ, սրբագործ վիմաւք, ոսկեզարդ գեղազանութեամբ, տեղի անտանելոյն և ի հանգիստ անախտ կամացն աստուծոյ և զենարան գառինն անմահի, անուանելով զնա սուրբ Նշան, հինդ խորանաւք, ինն աստիճանաւք յաւբինակ վերնոյն Սիոնի, հլարգեալ ի նմա սպասաւորս սրբեչանմանս, կուսակրաւնս և սրբամաքուրս, հրեշտակազեղս զուարթապատկեր, անդադար բերանով և անհանգիստ բարբառով սպասաւորելով մշտամատոյց փառաբանութեամբ արարչին ամենայն արարածոց՝ աստուծոյ հաւր և Յիսուսի Քրիստոսի և հոգւոյն ճշմարտի, որում փառք։

Աղր, աղաչեմք զկնի եկեալ մեր եղբարսդ սիրոյն Քրիստոսի, որք պատահիք հոգիաձիր տառիս և հանդիպիք աւգտութեան ինչ իւիք, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր և յաստուած զարժանին յիշատակի, զերջանիկ կրաւնաւորն զտէր Յովհաննէս՝ ստացաւզ դրոցըս, զի յոյժ աշխատութեամբ և բազում հոգածութեամբ չանաց յաւարտումն դրոցս, հանելով ինչս բազումս, մինչ յանգ հանեալ աւարտեաց, զոր տէր աստուած վայելել տացէ, ամէն։

Յիշեսջիք և զծնաւգան նորին, զփոխեալսն առ Քրիստոս՝ զպարոն Պարոնշահն և զՏիկին*, մանաւանդ զհարազատ եղբայր տէր Յովհաննէսի՝ զսիրելին և զհամակ արի զՂազար յիշեսջիք ի Քրիստոս, որ յամս յայս փոխեցաւ առ տէր, թողեալ սուգ մեծ սիրելեաց աղգականաց իւրոց, ևս առաւել եթող տրտմութիւն անմխիթար տէր Յովհաննէսին, զի եղբայր կամարար էր նմա, և յամենայն գործս բարութեան կամակից, իբրև գաւազան յենլի և որպէս ցուլ ի ձեռին, իբր

* Նբեք տողի չափ դատարկ է թողնված։

զքաղաք ամուր և որպէս հաստատեալ թագաւորութիւն, և ըստ Դաւթայ՝ վայելուչ էր բնակելն նոցա ի միասին, քանզի և ինքն Ղազար, այր դոլով կատարեալ հաւատով, սիրեաց զմիայնութիւն՝ հետևելով կոչմանն Քրիստոսի, բառնալով յուսն զխաչն տեառն, հոգացեալ գտեառնն միշտ և ոչ զաշխարհի, եղեալ մի ողի միացեալ ի տէր, լինել ամայ յինչից, բարւոք վարուք կեցեալ յաշխարհի, վերափոխեցաւ յանգրանկաց խորանսն երջանիկն ընդ երանելիսն, և թաղեցաւ պատուական մարմին նորա ընդ հովանեաւ նորաշէն սրբոյ տաճարին սուրբ Նշանին, որում և բաղում էր աշխատեալ նոյն ինքն Ղազարն, ի կանգնումն նորին տաճարի։

Հուսկ յետոյ, եթէ ախորժէք, յիշեսջիք ի Քրիստոս և զանպիտան գրիչս զՍտեփանոս քահանայ, որ և ես աշխատեցայ ի սմա, մասն ինչ գրեցի՝ զնսը կտակարանս բովանդակ և զսաղմոսն, բայց ի յայտնութենէն, հրամանաւ տէր Յոհ[ան]իսի], և կատարեցաւ ձեռամբ բաղ[ա]մեղիս։

*Գրեալ էր հին կտակարանս յաշխարհն Փոռանկաց, ձեռամբ արեղայի միոջ Առաքեալ կոչեցելոյ, ի քաղաքն Պաւլաւնիա, և կատարեցաւ ձեռամբ Ստեփանոս քահանայի, որդւոյ Նատերի, ի քաղաքս Կազարիա, որ և Խրիմ առձայնի, ի թուականութեանս մերում ՊԺԷ. (1368), յետ երից ամաց անցելոյ առման քաղաքիս, յուրում և զկնի եկն սով սաստիկ և սատակեաց անհամար և անթիւ ոգիս, որ և գրեալ անկար է։**

595.

ԳԻՐՔ ԵԻԹՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑՒՈՑ

Երևան 5944

Գրիչ՝ Զաքարիա
վայր՝ Քոնայ

91ր *Արդ, զրեցաւ գիրքս այս ձեռամբ Զաքարի ‖ [ի վերի]ն վանքս Քոնո, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի[ի, ի] վայելումն անձին իմոյ և մանկանց եկեղեցւոյ, [որ] են ի կարգէս միաբանողաց, ի թվ. մարդնեղութեանն Քրիստոսի ՌԴՃ. և ԿՀ. և ի հաց՝ ՊԺԷ. (1368)։ Արգ, աղաչեմ զամենեսեան, որ հանդիպիք սմա, յիշման արժանի առնել զանարժանս յամենայնի զԳրա Զաքարիա քարոզողս, որ զսակաւ յետ տետրերս գրեցի, և զծնողսն իմ, նախ զհոգևորն՝ զհօրեղբայրն զԱռաքել վարդապետն, որ սնոյցն զիս և ուսոյց, և ապա զմարմնաւորն՝ զհայրն իմ՝ զՏէրտէր, և զմայրն իմ՝ զԱզատ խաթուն, և զամենայն արեան մերձաւորսն։ Այլ և կրկին աղաչեմ, զի յիշեցէք առաջի տեառն զամենայն գովութեանց արժանաւորսն զԳորգն և զՄարզար*

* Ձեռագրում կան բարձրարժեք մանրանկարներ 194ր և այլ էջերում։

էֆբաթնիս* սուրբ ուխտիս, որ յոյժ սիրով զմեզ հանգուցին, և յիշողդ որով մտօք զմեզ (՞), զորոց զտրիտուրն և զաշխատանաց հատուցումն Քրիստոս հատուսցէ, ամէն։ Այլ և որք յիշեն [զմե]զ բարի մտօք ինքեանք յիշեալ լիցին ի Քրիստոսէ, ամէն։

596.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 5347

Գրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Հ[ի]զան ֆաղաք

295բ ...Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ անիմաստ և ախմար գրչի Ստեփանոսի, յիշատակ կենակցի իմոյ Հերմելհիքի, և հաւրն իւրոյ Գուրթամիրիկ, և մաւրն՝ Տիկին-Մելհիքի, և եղբաւրն իւրոյ Պետրոսիկ։

Եւ արդ, ի յաւարտ սուրբ աւետարանիս, ի հայրապետութեանն Հայոց տեառն Դաւթի, որ ի յայս ամիս փոխեցաւ ի Քրիստոս և սուզ անմխիթար եթող մեզ, զերկնից արքայութիւն տացէ նմա տէր աստուած, ամէն։

Դարձեալ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքս, որ կոչի Հզան, առ գրան սուրբ Սարգսի և առ ոտս Գամաղիէլի և սորին սպասաւորի՝ աշխարհալոյս վարդապետիս մերո Յոհաննիսի, և հաստատ պահեսցէ զսա մինչև ի խորին ծերութիւն, ամէն։

Ո՛վ, սուրբ մանկունք եկեղեցւոյ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր՝ զՏիրուհիրիկ, զհայրն իւր զԳուրթամիրիկ, և զմայրն իւր զՏիկին-Մելիքիկ, և զեղբայրն իւր զՊետրոսիկ, և աստուած զձեզ յիշէ, ամէն։

Իսկ էր թվականիս** ի ՊԺԷ. (1368) յորժամ աւարտեցաւ սուրբ աւետարանս։

Զծովացեալս մեղաւք զՍտեփանոս զծողս յիշեցէք ի տէր։

597.

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Ք

Երևան 659

Գրիչ՝ Մաղաքիա
վայր՝ Կաֆայ

320բ Ի թուիս ՊԺԷ. (1368) յանգ ել[ե]ալ կատարեցաւ քանոնս հաւատոյ քրիստոնէից ձեռամբ Մաղաքիա գպրի, յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ Անուսիկ, և մաւր իւրոյ Թագուհոյ, և եղբարց իւրոց՝ Սահակիկ և Յակոբիկ և Մելիքսեդեկի, որք կարդայք կամ աւրինակէք յիշեցէք յաղաւթս ձեր զսոսա և աստուած զձեզ յիշէ, ամէն.

Ի Կաֆայ գրեցաւ գիրս։

---

* Իմա ՀեղբարքՀ, Լատիներէն Frater—եղբայր բառիցն։

** Ձեռագրում հապաված է այսպէս՝ ՀբվիսնՀ։

598.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 5883

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Արտամէտ գիւղ

ա՛

... Արդ, [ցանկացեալ] այս աւրհնութեանարեր և հոգեհրաւէք յուսալիր և իմաստապաճոյճ տառիս, ես՝ եղկելի և յոգնամեղս սուտանուն չկրաւնաւոր Ստեփաննոս, սիրայորդոր և ջերմ սրտիւ գրեցի
168ա զսա յիշատակ || ինձ, և ծնաւղաց իմոց՝ հաւրն իմ Կիրակոսի, և մաւրն իմ Մելէքի, և քեռն իմ Գինէի, և ամենայն արեան մերձաւորաց, և այնոցիկ որոյ երախտիք կայ ի վերայ մեր։

Արդ, աղաչեմ զամենեսին, որք հանդիպիք սմայ կարդալով և ուսանելով, յիշեցէք ի տէր աստուած զմեզ և զմերսն ամենայն, և բոլոր սրտիւ աստուած-ողորմի ասացէք, և ողորմածն աստուած ողորմի ձեզ և մեզ և ամենայն հաւատացելոց, ամէն։

Արդ, դրեցաւ հոգելից և աստուածային տառս ընդ հովանեաւ Գէորքա զաւրավարիս, ի գեղջս, որ կոչի Արտամէտ, ի հայրապետութեանն տէր Ներսէսի, ի թվականութեանն հայոց ՊԾԸ. (1369), յունիս ի տասն սկսեալ և ի սեպտեմբեր Լ. (30) աւարտեալ։* Զգիրգս յառաջն ի Վարագ սկսաք ի գրել. իժն անիծեալ և չար թշնամին, որ ի սկզբանէ հակառակ է աստուծոյ, յարուցմունք արար ի վերայ մեր, և յանաւրինաց բռնութենէ խիստ ի նեզութիւն կայեաք, և զամն ողջ ի վախուստ, և հալածական շրջէտք, և հեծելոց շարժմունք ի վերայ երկրի։

Մեք ելաք | | |**

բ

Գիրգս Ս[իք]ար վարդապետի աւրինակէն է ըղորդած, աւելին քերած և ստոյգն ի գրած։***

---

* Ձեռագիրը բաղկացած է 468 թերթից, յուրաքանչյուր թերթի վրա կա շուրջ 750 տառանիշ։ Այսպիսով, 8,8 տպագրական մամուլ ծավալ ունեցող ձեռագրի ընդօրինակությունն ի կատար է ածվել 110 օրում, այլ խոսքով՝ գրիչն ամեն օր, միջին հաշվով, արտագրել է 4,5 թերթ։

** Հիշատակարանից թերթ է ընկել։

*** Գրված է 468ր էջի ստորին լուսանցքում։

599.

ՄԱՇՏՈՑ

Փիլդ. 6273, էջ 163—164 (Արապկիր, ի սբ. Աստուածածին եկեղեցի)

Վայր՝ Սեբաստիա, խուռուխօճ գիւղ

Օրհնեալ է սուրբ երրորդութիւն, որ հասոյց զնուաստս ի զրաւ գրչութեանս ի թուականութեանս Հայոց ՊԺԸ. (1369), ի հայրապետութեան տեառն Մեսրոպայ, և ի թադաւորութեան Հայոց Կոստանդիանոսի, և մերոյ առաջնորդիս մայրաքաղաքիս Սեբաստիոյ՝ աստուածարեալ ծերունւոյս տէր Սիմէօնի, հովուի տրոյ և քաջամարտի և առաքելասարաս, լուսանշոյլ, նաև զսուրբ կրօնաւորքն սրբոյ Նշանին՝ զՅովաննէս հայրապետն, և զՆերսէս, և զՄարտիրոս, և զՎարդան կրօնաւորքն։ Արդ, աղաչեմ զամենեսեան վասն սիրոյն Ք՛րիստոսի, որք օրինակէք կամ կարդայք, յիշեսջիք զմեղուցեալքս, և տէր զմեզ յիշէ յիւր արքայութիւն։

Գրեցաւ սա ի զեզս, որ կոչի անուն խուռուխօճ, ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ։

600.

ՄԱՇՏՈՑ

Թորոս Աղբար, Բ. էջ 427 (Տիգրանակերտ)

Գրիչ՝ Սահփաննոս

վայր՝ յերկիրն Մոկաց, ի վանքն Ծպատ

Գրեալ յերկիրն Մոկաց, ի վանքն Ծպատ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչին, ձեռամբ Սահփաննոսի, ի թվ. ՊԺԸ. (1369)։ Ցիշեցէք զՍարկաւագ քահանայն... զՆոր տիկինն... զՏէրանձն... եւ զմեծարգին եւ զմեծահարկն՝ զՅակոբոս տիսալարն... զՄամայ տիկինն, զԱստուածատուր տիսալարն... եւ զկառաւաք ի փառս բարձրացեալ զԳրիգոր տիսալարս, եւ զԹագոսկին...։



ՊԺԹ 1370

601.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վէնետ. 187 ծուցակ. Ա. էջ 779—780

Գրիչ՝ Յովաննէս-Ալիճախ
վայր՝ Սկեղեաց գաւառ, Թլակ աւան

էջ66բ *Ի թուականիս Հայոց ՊԺԹ. (1370), Նոյեմբերի ԺԷ. (17) աւարտեալ եղև։ Աղղ, գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ տխմար և ախմար զբչի, սուտանուն եպիսկոպոսի Յովաննիսի, որ հոմանուն Ալիճախի, Տարաւնոյ սուրբ կարապետի, ի դառն և ի նեղ ժամանակի, որ նեղեալ է աղղ քրիստոնէի ի յաղգէն Իսմայէլի, աւարտ եղեալ այսմ տառի ի դաւառիս Սկեղե[ա]ցի, ի մեծ աւանս, որ Թլակ կոչի։ Ես տարագիր յայս վայր եկի, և էի տգէտ յամենայնի, և ոչ հմուտ այսմ գործի, վասն կարեաց իմ յանձն առի, զի էի աղքատ յամենայնի, վասն այնորիկ զսայ գրեցի, ծաղկով զարդարեցի, և սկեցի, և կազմեցի։* Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զամենեսեան չլինել մեզադիր սխալանացս և խոշորութեանս, զի այս էր կար մեր, զի որք հանդիպիք սմա տեսութեան, կամ աւրինակելով, կամ կարդալով, յիշեսջիք միոյ աստուած-ողորմայիւ զանարժան և զմեղուցեալ ծագրաւղակս զՅովհաննէս եպիսկոպոս Սուրբ Կարապետցիս, ընդ մեզ և զհայրն իմ՝ զպարոն Ներսէս, և զմայրն իմ Մալախաթուն..., զարձեալ կրկին զիս՝ զանպիտան գրիչս զԱլիճախ եպիսկոպոս, և զմեր ազգականս՝ զԿարապետս, ընդ նմին զաւժընդակս զսպասաւորս մեր՝ զԻշխանս, զտան սպասաւորս մեր՝ զմզտեսի Յակոբս, և զԿիրակոս, որ զՅովան գլխոյ թուխտն ինք կոկեաց՝ կրկին յիշեսջիք...։ Դարձեալ յիշեսջիք զԹադէոս քահանայն, և զորգիքն՝ զսարկաւագներն՝ զԵրեմիայն և զՅոհաննէս, որ հացով և ամէն բարաւք աւգնական եղեն մեզ։ Դարձեալ յիշեսջիք զՅովսէփ աւագերէցն և զորգին՝ զՀայրապետ սարկաւագն։ Դարձեալ յիշեսջիք զպարոն-տէր Աւագն, և զդուստրն զԳոհարխարունն՝ զմեր ազգականն, որ առաջի տարին ընկալան զմեզ և բազում բարութիւն արարին։ Դարձեալ կրկին յիշեսջիք զհայրն իմ՝ զպարոն Ներսէս և զազգականն իւր զՄեծխաթուն ծերուկն, որ մխիթարէր զմեզ հանապազ։

---

* Մինչև այստեղ հիշատակարանը չափածո է։

** Այս մասը ապված է այսպես՝ «զսպասաւորս մեր, զԻշխանս զտան սպասաւորս մեր...» Իհարկե, սպասավորների շարքում գրիչը չէր կարող հիշատակել տեղի իշխանին, անկասկած է, որ նախադասության մեջ «Իշխան»-ը՝ անձնանուն է։

602.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ

Երևան 1886

Գրիչ՝ Անտ[ոն]

ա

95ա *Ո՛վ գասք լուսերամիկ, որք աւգտիք կամ աւրինակէք և կամ տեսութեամբ հանդիպիք, աղաչեմ, աղաչեմ մեղաց թողութիւն խնդրեցէք Յովաննէս սարկ[աւագի] և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, որ յոգնատենչ փափաքմամբ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց, նայ և դմեղաւք թաղծեալ և դանարհեստ գրչակս զԱնտ[ոն],* և զծնաւղսն իմ, և զամենայն արեան մերձաւորսն, և զդստրիկն իմ զԵրիանաճ, որ յայսմ ամի փոխեցաւ ի Ֆրխատոս. և որ զմեզ լի սրտիւ յիշէ և մեղաց թողութիւն խնդրէ՝ ինքն յիշեալ եղիցի յարքայութիւնն Ֆրխատոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։*

Ծաղկող՝ Ալիճախ

բ

124բ *ԶԱլիճախ եպիսկոպոս ծաղկաւսկս յիշեցէք ի տէր մի ողորմայիւ, և. աստուած զձեզ յիշէ։***

603.

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՃԱՌԻՑ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ ԱՍԱՑԵԱԼ ԴԱՒԹԻ ՄԵԿՆՉԻ

Վիեն. 336, Տաշ. ծուց. էջ 757

Գրիչ՝ Սիմէոն

ա

278բ–279ա *Փառք... որ ետ կարողութիւն անարժանիս հասանել զրաւ կտակիս Աբդ, ես՝... Սիմէոն սպասաւոր բանի, առաջինս ի մեղաւորաց եւ վերջինս ի կարգ վարժապետաց... գրեցի ի գառն եւ յանանդորը ժամանակիս, որ ոչ գոյր հանգիստ ի տեղի գրելոյ։ Ի թվականի ՊԺԲ. (1363) սկայ ի գրել եւ աւարտուաւ եղեւ ՊԺԹ. (1370)։ Որք ճաշակէք ի քաղցրահամ պտղոյս աստուածաբանութեանն, որ կա ամբարեալ ի սմա, յիշեցեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտառատիպ գծիս՝ զՍիմէոն սպասաւոր բանի, եւ զհարազատ հոգեւոր եղբարքս իմ՝ զՍտեփաննոս, զՅոճաննէս եւ զայլս, որ ի գրելն աւգնական եղեն, զՍարգիս,*

* Գրչի անունը՝ Հանտ[ոն]ս, լրացնում ենք 121ա էջի հիշատակագրությունից։

** Հիշատակագրության հեղինակ Ալինախ եպիսկոպոսը 1370 թ. ընդօրինակել է Վենետիկի № 187 ավետարանը (տես՝ նախորդ հիշատակարանը)։ Ուստի և սույն անթվական հիշատակարանը տեղագրում ենք նրան առընթեր։

զԱմիրեն, նայ եւ զսրբասնեալ հոգևոր որդեակն մեր զՅովաննէս ք[ա]հ[անայն], եւ զվարդան, եւ զՅոճաննես, որք բազումս զթացին ի մեզ...։

Բ

83ա ...Ո՜հ, հհ, զղաոնութիւնս, որ կրեցաք սուտակասպասաց սուտ եւ սոսկ կրաւն[աւ]որաց։

Հետ. ստացող՝ Յովճաննէս

Գ

1ա Ո՜վ սուրբ ընթերցօղք, Յովճաննէս կրօնաւորն զիւր փիլոնն ինձ երետ յիշատակ, որ ժամաւք եւ պատարագաւք զինքն յիշատակէաք։ Զղիրքս բերին ի ծախ, ես այլ ոչինչ չունէի, զՅովաննէս կրաւնաւորի փիլոնն տուի գրոցս ի գինն. ով որ ընթեռնու՝ զՅովճաննէս աբեղայն յիշեցէք միշտ եւ հանապազ յաղաւթս ձեր, եւ աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, զիւր անուն գրէ ի կենաց գիրն, ամէն...։ Եւ զՅովճաննէս կրօնաւորն իւր զծնողաւքն հանդերձ, զհայրն իւր Սիոն եւ զմայրն իւր Սիրմայ, որ զգիրքս երեր թեթեւ գնով ինձ երետ. Քրիստոս աստուած զիւր անունն եւ զիւր ծնոզացն՝ զՍիոնիկ եւ զՍիրմիկ, ի կենաց գիրն գրէ, ամենայն սրբոց բարեխաւսութեամբ...։

Ընդ [սոցա] եւ գիս, զՅովճաննէս վարդապետս, որ զգիրքս գնեցի, եւ զիս յիշեցէք յաղաւթս ձեր՝ միշտ եւ հանապազ, եւ աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն, եղիցի, եղիցի։

604.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թվական 1748

Գրիչ՝ Պաւղոս

ա

289ա Ի թվ. ՀՃԺԹ. (1370), Սարգիս երէց, եղբայր Յովաննէս վաք[ղ]այպետի, նեղե[ա]լ յանաւրինաց և յաղքատութիւնն անկեալ, հեռանայր աւտաք երկիր, և յանկարծ հասանի վախճան մահուան նորա և որդոյն նորա Յովաքիսի, որ էր ծաղկեալ երիտասարդական հասակաւն, և ունէը Ա. (1) զաւակ արու՝ երկուամենից։ Արդ, աղաչեմ զամենիսեն, որք հա[ն]գիպիք այսմ տառի, մեզաց թողութիւն խնդրեցէք Սար[գ]իս. քահանային և Յովաքիսին, որ մինչ առաւա[ւ]տ էր կենացն՝ երեկոյ եղև ամացն։ Եւ զՊաւղոս անպիտանս յիշեցէք, աղաչեմ, և որ յիշէք՝ յիշե[ալ] լիջիք յամենառատ պարգևոգէն Յիսուէ Քրիստոսէ, տեառնէ մերոյ, որում փառք յաւիտեանս, ամէն։

Բ

121բ Տնկիկ Պաւղոս՝ սուտ կրաւնաւոր,
ԶԱրիստոտելի գիրք ծանր ու խոր.
Տառս այս՝ ծաղիկ բազում գունոյ,
Վարդապետաց է սայ պիտոյ,

Դու վախակիս կաթիլ չըլոյ,
Ստ լ վտակ հոսան ղեռոյ,
Եւ դու տկար, որպէս մեղու,
Աստի չկայ ճար ըմպելոյ,
Ես եմ լալի բաղում դիմաւք
Ի բանսարկուէն խոցեալ նետաւք։
Ցիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ, աղաչեմ։

605.

ՄԱՍՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Թուական 150

Գրիչ՝ Մարկոս
վայր՝ Կաֆայ

Ասաանաւր կատարեցաւ մատեան[ս], որ կոչի գիրք Պաւղոս առաքեալ, որ ունի անթերի չորեքտասան գլուխ լիակատար՝ ցանկովին
168բ իւրեանց միահամուռ, ի թվարերութեանս Հայոց ուէթ հարիւրերորդ ‖ դի տասներորդի իններորդի (1370), ի կաթողիկոսութեանն տեառն մերոյ Մեսրովպայ, և այսմ նահանգի դիտաւորութեանն աթոռակալի Յոհաննէս արեղայի կորովամտի, յոյժ հմուտ աստուածաշունչ մատենից, բնական Սեբաստացի, ձեռամբ նուաստ Մարկոսի փցուն գրչի, ի մայրաքաղաքի, որ Կաֆայ անուն յորջյորջի, ընդ հովանեաւ ի յոտս սրբոյն Յակոբի, ամէն։

606.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թուական 3937

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Վանձ

118ա Սորա օրինակս այս էր կարծեաւք, բայց դու զգուշացիր այլ[ի] լաւ դասանես | | | ,* և ղմեղապարտս Ստեփաննոս վար[ղապետ յիշել] աղաչեմ, թվ. ՊԺԹ. (1370),** ի Վանձ։***

* Մի բառ չի ընթերցվում։
** Թվականը գրված է փակագրով։
*** Ի վանձ բառը գրված է Մ. Մխիթարյանցի կողմից, ինչ տվյալի հիման վրա, չգիտենք։

607.

Ա Շ Ո Ց

Թուական 4687 (ասս նաև՝ 1317, 1488 և 1514 թ. թ.)

Գրիչ՝ Զաքարայ
վայր՝ Աղթամար

590բ Եւ արդ, ես՝ ունայնացեալս ի գործառնութենէ կանուխ ժամանելոցն, յղնամեղս և վհցունս ի գրչաց, ծառայ ծառայիցն աստուծոյ, սուտանուն կր[աւնաւոր] Զաքարայ, յետին և վերջին քան զամենեսեան ի յարուեստ գրչութեան, և անիմաստ գոլով... հրամանաւ և քաջալերութեամբ հոգևոր եղբարց մերոց սրբազան կրաւնաւորացս ձեռնարկեցի ի մեծ գործս յայս, և զպակասութիւն և զթերութիւն սուրբ գրոցս ի կատար և ի յաւարտուին հասուցի ի վայելումն մանկանց
591ա Սիոնի, ի նոյն աստուած || աբնակ կղզոյս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանիս, ի գառն և ի վշտաբեր ժամանակիս, և ի թուաբերութեանս Հայոց ՊԻ. (1371)։ Եւ արդ, աղաչեմ զձեզ տէրըմբ և սիրոյն աստուածոյ... յիշման արժանի առնել զմեզ զիս զանարժան գրոցս զՋաքարայ, և զծնողսն մեր..., նաև զուսուցիչ մեր և զսնուցողն՝ զսրբահոգի և զպատուական կրաւնաւորն զԿարապետ՝ զհանգուցեալն ի Քրիստոս...։

Ցիշեա Քրիստոս աստուած ողորմութեամբ քով զսրբասնունդ և զընտրեալ և զերիցս երանեալ կրաւնաւորքս, որ կան այժմ ի գուռն սուրբ Խաչիս և բազում աշխատութեամբ և տառապանաւք և պանդխտութեամբ սպասաւորեն սուրբ եկեղեցոյս, որ ի բազմացն սակաւք են մնացեալ, և են թուով իբրև ԾԵ. (15), որոց անուանքն են
591բ այսոքիկ՝ առաջին, || տէր Ներսէս կաթողիկոս՝ հեզահոգի և աննենգ սրտիւ և հոգւով, և աղգական նորին տէր Զաքարայ՝ սրբահոգի և առաքինի և ժիր քան զամենայն, և պատուական և ծերունի և ալեւք ծաղկեալ հարքս մեր՝ զԿարապետ կր[աւնաւոր], զՍարգիս, և զՊերուճ, որ են մեզ խրատատուք և պահապան և քաջալերիչ ի գործս բարիս և ի վարս առաքինութեան, ընդ նոսին և զմեր ընկերակիցքս՝ զԳրիգոր և զՍտեփաննոս, զԹումայ և զԱսատուածատուր, զԿոստանդ և զխաչիկ, զԱւետիս և զՏիրացու, և զեղբայրս մեր՝ զԿարապետ քահանայ, որ աւգնական եղև մեզ և քաջալերիչ։

Աղրդ, սոքա զոր յիշեցաք, որ կան ի գուռն սուրբ Խաչիս, են անմխիթար և անաւգնական յամենայն կողմանց, ոչ ժողովրգենէ առնուն և ոչ յայլոց, այլ գեռս գիւրեանցն այլոց տան, և բազում աշխատանաւք և չարչարանաւք զհարկաւսր կերակրին պատրաստեն,

և են հնազանդեալ Քրիստոսի քաղցր լծոյն և փոքր բեռան, ընդ որոց վոխարէն տացես սոցա՝ Քրիստոս աստուած, զքո ողորմութիւնդ և զանբաւ բարութիւնդ...։

Յիշեցէք զաստուածասէրը և զհաւատարիմ տանուտէրքն՝ զՇնոհաւոր, զԲարսեղ և զՏէրպապ ի սուրբ յաղաւթս ձեր, որ անխափան և
892ա անձանձրանալի զան ի դուռն սուրբ ¶ եկեղեցոյս և աղաւթք առնեն. տացէ նոցա տէր վարձս ըստ վաստակոց իւրեանց։ Արդ, ով որ կամակից լինի, որ զայս յիշատակարանս յամէն տարի հետ այլ գրիանուցն կարդայ, Քրիստոս աստուած իւր ամէն մեղաց և սխալանաց թողութիւն շնորհէ, և ով որ հակառակէ՝ ինքն գիտէ ու Քրիստոսի դատաստանն, բաւ է իմաստուն լսողացդ։

608.

ՃԱՇՈՑ

Տրևան 7474

Գրիչ՝ Սաեփաննոս
վայր՝ Սուրխաթ

490բ ...Եւ ես՝ յետնեալ հողս մեղապարտ Սաեփաննոս կոչեցեալ, անուամբ և ոչ գործով երիցութեան, անպարապ անձամբ ձեռնարկեցի սա, հրամանաւ և ծախիւք եղբաւր մերոյ Մարտիրոս քահանայի՝ վեհականի և ճշմարտի, որ ի կանուխ ժամանակաց հետամուտ եղեալ վախճելի տենչմամբ իւրով սիրոյ սորայ ետ դրել զսա անպիտան ձեռինս, ամենայն հոգատարութեամբ, անհանգիստ հոգովք երկնեալ ի քառեակ եղանակս՝ զտիւ և զղիշեր, ամենայն աւգնականութեամբ, ես առաւել աղաւթիւք և խնդրուածովք վասն առաւել և ջերմն սիրոյն իւրոյ, մանաւանդ վասն պատուելի երիտասարդական հասակին, զի թերեւս տեսցէ զկատարումն սորա, ի յիշատակ իւր առ տէր և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ։

Արդ, խնամաւք խնամակալ էին եղև դրաւ սորա ի ժամանակս յոյժ անբարի, զի վասն ծովացեալ մեղաց իմոց կողմս հիւսւսականք խրատուք չարին ի գումարի գոլով, իշխանք և հազարապետք զմիմեանս սատակեն, կամք ինալով անյիշաչարին և անօրհնելին այց առնել համայն իւրայոցս, զի մի գերեալքս և վայրատեալքս ի վայրս նժդեհութեան կրկին կոդոպ[տ]եսցուք մեղաւք մերովք...։

491ա ...Կատարեցաւ ի Թուաբերութեանս Աղքանազեան և Ցաբեգական տումարի ՊԻ. (1371), և ըստ նորում շրջանի ՄՋԷ. (287), և ի գալըստենէ կենարարին ՌՃՀԳ. (1373), և յելիցն Ադամայ ի դրախտէն ՅՉՂՉ. (6796), ի հայրապետութեանն տեառն Մեսրովբայ, և յաթոռակալութեանն տէր Յովհաննիսի իմաստնոյ և խոհեմականի, ի թագաւորութեանն Կոստանդեայ, և յաշխարհակալութիւնն տաճկաց Մամայի, յաշխարհիս Հոնաց, և ի յերկիր Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և

սրբոյն Սարգսի դաւրավարի, զոր յայսմ ամի վերստին նորոգեցաւ՝ տաճար պայծառ և վայելուչ։

Եւ որ սրտի մտաւք և յաւժարական սիրով յիշեսցէ զյիշատակեալքս ի սմա, յիշեալ լիցի և նա ի Քրիստոսէ աստուածոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս։ Եւ որ հաւատով զամէնն ասասցէ, և նմա ողորմեսցի Քրիստոս ի միւսանգամ գալստեան իւրոյ։

Եւ մի ոք անաւաղ շաւշափեսցէ զսա կամ ի զետնի զնիցէ, այլ ղղուշութեամբ սպասաւորեսցէ սմա, երկու կամ երիւք գաստառակաւ, ի զգեցուսցէ զնա զգեցուցանաւղն Աղամայ, որում փառք յաւիտեանս, ամէն։

609.

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 7151

Գրիչ՝ Գրիգոր-Խութլուշա [Տաթևացի]

ա

95բ Որ չմոռանաս աղաչեմ զրաղմամեղ ծրողս՝ զԳրիգոր սարկաւագ, մականուամբ Խութլուշա կոչեցեալ, աղաչեմ և զբազմերախտ հողեշահ պարոն՝ զմեծ վարդապետն Յօհաննէս, որդի քաջի Իւանէի՝ Որոտան իշխեցողի, որոյ տէր ողորմեսցի, ամէն։ Յոլորութեան անմեղադիր լերուք, ի կար մեր այդ չափ էր։

բ

93ա Աղաչեմ զձեզ վասն սիրոյն Քրիստոսի,
Զքաջ և զկորովի յիմաստ բանի՝
Զվարդապետն զՅոհաննէս Որոտնեցի՝
Ընդստացող այսմ կրտակի,
Ընդ նմին և զիւրսն ամենայնի,
Ցիշատակել աստ յանուանի,
Առաջի զենման գառինն։
Եւ զմեղապարտս յամենայնի,
Զփանաք գրիչ մեղօք ի լի
Ցիշման առնէք աստ արժանի,
Զի մեր մեղաց դիրն չնջի,
Եւ ձեզ ի տեառնէ տացի բարի,
Որչափ մեզ ի ձէնջ չնորհեսցի,
Եւ զՅակորոս սպասաւոր բանի,
Աշխատողիս՝ Թղթոյս կոկողի,
Ցիշել ի տէր առնէք արժանի։

Եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուածոյ մերմէ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

610.

ԳԻՐՔ ՎԵՑՕՐԵԱՑ ԳՈՐԾՈՑ ԱՐԱՐՋՈՒԹԵԱՆՆ ՏՐԱ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ

Թվական 1659

Գրիչ՝ Գրիգոր-Խութլուշա [Տարևացի]

Արդ, ով սուրբ ընթերնողք և ղազափարողք, որք օգտիք ի սմանէ բարեկամ մտօք, զտայսդ գրոցս զժրաջան և զտիեզերալոյս վարժապետն մեծ՝ զՅովճաճէս Որոտնեցի, յաղաւթս յիշեցէք տոաջի զենման || զառինն. և թողութիւն յանցանաց հայցեցէք հանգերձ իւրայոցն...:

350բ

Աղաչեմ և զայլ ամենայն երախտաւորքս, որք հանդիպեցան ի սմայ, առաջին ղծագրին՝ եփրեմ վարդապետի, որ աշխատեալ եղև ի սմա հրամանաւ և արդեամբ վեհափառ տեառն իմ վարդապետին Յոհաննէս Որոտնեցոյ, որոյ յիշատակ սոցին անջնջելի ճեասցէ այժմ և առ[յ]ապայն, և գիս գտրուպ և զանարհեստ գրիչս՝ զսպասաւոր նմին, որոյ հրամանաւ աշխատ եղէ սակաւ մի զառ ի նորոգումն ևգծելոցն ի սմա՝ զԳրիգոր ս[ար]կ[աւագ] մականուն Խութլուշա, և զկազմող սմին, և զայլ երախտաւորքս յիշել անխարդախ մտօք ի բարի, զոր մնզ ընդ ձեզ [ա]հասարակ տացէ խնգրողացս և բանայցէ բախողացս զանճառն իւր խոստումն ստացիչն մեր կրկնակի ի գալստեանն իւրում, որ ամենակալն է և աննախանձ, և կարող [է] տալ ոչ երկմտելոց զցանկալին ի նմանէ, ընդ որում հօր իւրում և հոգւոյն սրբոյ վայել է փառք, իշխանութիւն, պատիւ, այժմ և ի միշտն յաւիտենից, ամէն:

Թվ. ՊԻ. (1371) նորոգեցաւ:

611.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թվական 6036

Գրիչ՝ Մկրտիչ

232ա

... Ցիշեցէք ի մաքրափայլ և յերկնաթռիչ յաղաւթս ձեր զՄկրտիչ քահանայ զփծուն գրիչս, և զտքա՝ Ի. զաւակս իմ՝ զՈվանէսն և Զաքարէն, և զհայրն իմ՝ զԳրիգոր քահանայ, և զեղբայրն իմ՝ զՍահեփանոս քահանայ, և աստուած, որ առատ է ի տուրս բարեաց, ձեզ ողորմեսցի յաւուրն դատաստանի, ամէն:

Ցիշեցէք զհայրն իմ ըստ մարմնոյ Զաքարէն, և զմայրն իմ զԷլխաթունն, և զայլ արեան մերձաւորս մեր, և որ զմեզ յիշէ աստուած զինքն յիշէ, ամէն: Արդ, գրեցաւ ի թվ. Հայոց ՊԻ. (1371), ի զանութիւն Ոիսին:

612.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 8772 (տես նաև 1350 և 1391 թ.թ.)

Հետ. ստացող՝ Սիմէոն

1բ Թվականիս Հայոց յՀ. հարիւր և ե. չորից (820=1371) ազգն Պարսից ելեալ դԲերկրի գերեցուցին, զԲանռումանի թալանեցին, զսուրբ Կարմիր աւետարան գերեցուցին. Թըռաւ ի գերողի զրկէն և անկաւ ի գեան, մինչև Դ. (4) տարի մարդ չիմացաւ. յետոյ յայտեցաւ երա-
զօք լոյսարարին իւրոյ, և եկաւ լոյսարարն ինձ՝ մեղաւոր տէր Սի-
մէոնիս* ասաց։ Եւ ես ելեալ գնացի յուխտն տէր Յուսկան որդին,
առայ ըզ Ստեփանո՛ս** վարդապետ, զՄարտիրոս վարդապետ, զտէր
Թումայն, զտէր Յովսէփ, զտէր Խաչատուրն, զերայէս Գրիգորն, զերա-
յէս Փանոս, երայէս Կարապետ, և զմեծ ու փոքր ամենեքեան։ Մտանք
յեկեղեցին, աղօթեցաք մինչև յառաւօտն, պատարագէն ելանք միայ-
րան գնացինք ի յեղր գետոյն, տեսաք նոր հրաշք, որ [ջո՛ւրն] ի
մի կողմն քաշեցաւ, գնաց սուրբ աւետարան ի ծերպս վիմին երեւե-
ցաւ., հանինք զսուրբ աւետա[րա]ն. որչափ որ ի մէջ ժողովին հի-
2ա ւանդ ։ և կոյր և գիւաչհար կայր՝ զամէն բժըշկեաց. յետոյ երեք տա-
րօվ յետ վերուցի գտուննս, և զսուրբ Կարմիր աւետար[ա]ն, փախըս-
[տա]կան գնացի ղէպ Քաջբերօնեաց աշխար[ճ]ն։ Գուրգ Իպրահիմ աղայի
աղան, որ ի ծնէ կուր էր՝ լուսաւորեաց, եկեալ հասաք ի գիւղ Մա-
ջար, Մարտիրոս անուն քրիստոնեայ մի կայր, որ նորայ տղայն հինգ
տարու էր՝ կոճղ էր, ծկներ ի փոր էր կպեր, ձեռներ ի սիրտն էր
կպած, երեր առ ոտս սուրբ Կարմիր աւետարանին՝ բժշկեցաւ և ար-
ձակեցաւ ի կապանաց իւրոց, ելիեալ եկաք ի ղէպ Արծնու[ճ]եաց աշ-
խար[հ]ն, ի գիւղ, որ կոչի Առէն, երկու թուրքի տղայ, մէկ կուր էր՝
լուսաւորեաց, մէկ գիւաչհար էր՝ բըժշկեաց, որ չափ որ յերկիր կոյր
և գիւաչհար և ցաւագար կայր, ամէն եկին առ ոտս սուրբ Կարմիր
աւետարանին և բըժըշկեցան։***

613.

ՃՇՈՑ

Երևան 7449

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Ղրի՞մ

...ի թվ. ՊԻ (1371), յապրիլ ԻԱ. (21),

496բ ...Արդ, որք հանդիպիք ի զգալիս յայս կեանս պիտանի տառիս
ի պատիւ տաւնից տէրունեաց, և կամ հաճոյացեալ արանց կատարել

---

* էջ 17-ում նկարված են «Ծտացաւղն Սիմէոն քահանա եւ որդին իւր՝ Ննտուածա-
տուր քահանայ» նստած դեմ դիմաց, հետաքրքիր գլխակապերով ու հագուստներով։

** Կարելի է կարդալ նաև «ըզՓեփանոս»։

*** Անշուշտ, ձեռագրի տեր Սիմեոնը, օգտվելով տիրող խավարամտութիւնից, իր
Կարմիր ավետարանով «հրաշքներ» գործելով, նյութական շահ է ունեցել, և նրա շրջա-
գայութիւնը գավառից-գավառ, ամենայն հավանականութիւնամբ, կատարվել է հենց Կարմիր
ավետարանի նյութական «հրաշքներից» շահվելու և ժողովրդին կողոպտելու նպատակով։

զյիշատակ նոցա, յիշեսջիք ասո տէր զվերոյգրեալ Եբրաեոսն, և զամուսինն իւր զԳոճարտիկիենն, և զերկոսին ծնաւղսն, զիոխեալքն ասո Քրիստոս, զԳրիգորն և Հաւանտիկիե՝ կենակից իւր, և զհաւերեղբայրքն Եբրանոսին զՍիմէոն քահանայն, և զՅովհաննէս, զՍտեփաեոս քահանայն, զԹադէոսն, և Մարտիրոսն, զորզիք Եբրանոսին, զիոխեալքն ասո Քրիստոս՝ զԽաչատուրն, զՂեղխաբէթն, զՀոիփսիմէն, զՄարթան, զՀերիքայն, և որ են այժմ կենդանի՝ զՆերսունն և զԳրիգորն, և զհանգուցեալն ի Քրիստոս՝ զԽաթունն՝ զմայր գաւակացն, և զծնաւղ նորին՝ զՍիմէոնն,
497ա զԱնպէտն և զՔեֆոյշն՝ ծնաւղք Գոճարտիկնոյ. ‖ Զի յոյժ փափաղմամբ և սիրով ստացաւ. զսա յիշատակ մշտնջենաւոր ի վերինն Երուսաղէմ և ասպնջական ի մայրն ամենից...

Արդ, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ զաղափար ընելով յիշեսջիք ասո Քրիստոս սեռն սիրով ի մխոս բարիս զաշխատեալն ի սմա՝ զծագկաւղ և շնորհազարդաւղ այսմ աստուածապատում մատենիս զԱւետիս զպիրն՝ զերեւելի և ականաւոր գրիչն՝ զորգին Նատերի քաջ իմաստասիրին։ Վասն որոյ աղաչեմք զընթերցաւղսդ յիշեսջիք և զիս, զոչ արժանիս յիշելոյ ի բարի, զանարժան ծառայս ծառայիցդ աստուծոյ, զյետնեալս ի յուղիղ և ի հշմարիտ գրչաց՝ զՅովաննէս գրիչս, և զծնաւղսն իմ՝ զԱւետիս քահանայն՝ զիոխեալն ասո Քրիստոս, և զԹագուհի՝ մայրն իմ, որ է այժմ կենդանի, և զեր-
497բ կոսեան ‖ կրտսերազոյն զպիրսն՝ զՄկրտիչն և զԽաչատուրն, որ աւգնական եղեն ինձ թուղթ կոկելով։ Եւ որք յիշէք և աղաւթիւք խնդրէք ի Քրիստոսէ թողութիւն մեղաց զի սմա յիշատակելոցս՝ թողին և ձեզ յանցանք ձեր անուամբ նորա, որում փառք յաւիտեանս, ամէն։

614.

ԹՈՒՂԹ ՊԱՀՂՈՍԻ

Երևան 62

Գրիչ՝ Ստեփ[անոս]

վայր՝ Դարաճաղեաց գաւառ, Աւագ անապատ

323բ ԶՍտեփաեոս գրիչ, անարժանս ի քահանայս, և ծնօղսն իմ յիշեսջիք ի Քրիստոս։

...Ի թուարերութեանն Հայոց ՊԻ. (1371) աւարտեցաւ աստուածարեալ և հոգեպատում սուրբ կտակս ի հռչակաւոր Աւագ անապատս, ձեռամբ Ստեփ[անոսի] անիմաստ և փցուն գրչի, ի յառաջնորդութեանն հայր Կիւրակոսի։ Արդ, որք հանդիպիք սմա, յիշեսջիք զմեզ յաղօթս ձեր։

615.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 6295

Գրիչ՝ Մաղաքիա
վայր՝ Կաֆա

199ա ...Գրեցաւ իմաստութեան մայրս՝ Սահմանքս Գաւթի փիլիսոփայի և Խորհրդոց դիրքս, ի թուիս ՊԻ. (1371), ի Կաֆա քաղաքս, ձեռամբ Մաղաքիա դպրի, յիշատակ իւր և ծնողաց իւրոց և եղբարց իւրոց, և որք կարդայք յիշեցէք յաղաւթս ձեր, ամէն:

616.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Օքսֆորդ, Ms. Arm. G. 1, Տէրայր վրդ. 22. Թղթ. 119, էջ 336

Ստացող՝ Թադէոս

ա

138բ Ցամի ՊԻ. թուականութեանս Հայոց տումարի (1371), ես՝ Թադէոս քահանայ, և Արևշատի միայնակեաց ստացաք զսուրբ գիրքս յիշատակ հողոց մերոց: Արդ, աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմայ, յիշեսջիք զմեզ՝ զբազմավէրքս՝ զԹադէոս քահանայ, և զծնողսն մեր, և զեղբարս՝ զՋաքարիայ, և զԲարսեղ սարկաւագ, զՄելքէսէք, և զՅովաննէս, զԱրևշահ, զՍիրմայ, և զծնողսն մեր, և զամենայն արեան մերձաւորս և զերախտաւորսն մեր: Ցիշողքն յիշեալ լիցին առ բարին Քրիստոս:

Գրիչ՝ Սահփանոս

բ

137բ ՋԹադէոս քահանայ՝ զստացող գրոցս, և զծնողս, և զեղբարս, և զամենայն արեան մերձաւորս նորա յիշել ի տէր աղաչեմք: Եւ զմեղուցեալ գրիչս Սահփանոս: Գրեցաւ ի թվ. ՊԻ. (1371), ի փա[ռս] աստուծոյ:

617.

ԼՈՒԾՄՈՒՆՔ ԳՐՈՑ ԳԻՈՆԻՍԻԱՑ ԱՐԻՈՊԱԳԱՑԻՈՑ

Երևան 168

Գրիչ՝ Նախապետ

152բ ...Զցանկացող սորին խրթնահայեաց զննութեանց՝ [Յովհ]աննէս, Վարդան և Կիրակոս(*) աշակերտ, այլ և զաստուածարեալ բարեւնաշնորհն զՅոհաննէս յիշման արժանի առնէք, որք հանդիպիք սմա, որ զաւրինակն շնորհեաց, և զհամակրաւն եղբարքս մեր, ընդ որս և զմակաղրաւղս՝ Նախապետ, և զԱկոբ, [որ] զթուղթս կոկեաց...:

Գրեցաւ ի թվ. Հայոց ՊԻ. (1371), ձեռամբ մեղապարտ գրչիս, որք հանդիպիք սմա արժանի արարէք զգրող սորա զՆախապետ սարկաւագ, անուամբն՝ ոչ գործով, և աստուած զձեզ յիշէ յաւիտեանս, ամէն:

618.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՂՕԹԻՑ

Երևան 8280 (տես նաև՝ 1384 և 1541 թ.թ.)

638 ...Գրեցաւ զիրքս ի թուականութիւնն Հայոց ՊԻ. (1371), ի յիշատակ հոգւոյ իմոյ։ Որք ընթեռնոյք և որք աւրինակէք՝ զուք սրտի մտաւք մեզաց թողութիւն խնդրեցէք յաստուածոյ մեղասէրտ հոգւոյս, և Ամիրին, և Յակոբին, և Շահպարոնին, և Վասլին, և իւր կենակցին, և Շնովորշային, և Շահենշային, և Գորք մինակեցին, և այլ քրիստոնէից, որ մասնակից են ի պէտսն։

619.

ԱԽԾԱՐԱՆ

Երևան 0422

Հետ. ստացող՝ Աստուածատուր

102ա Արդ, ի յայսմ ամի, որ էր թիւս Հայոց ՊԻ. (1371), ես Աստուածատուր աբեղայ, գնեցի զտուրբ աւետարանս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և ամենայն աղգտկանաց, և ետու վերստին ծաղկել զսա և կազմել և նորոգել։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս՝ զանարժանս զԱստուածատուր կր[աւնաւոր], և զծնաւղքն իմ, և զամենայն արեան մերձաւորքն՝ զկենդանիք և զննջեցեալք, և աստուած զձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս ողորմեսցի, և նմա վառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ջձաքարայ ծաղկող յիշեցէք ի Քրիստոս և աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն։

ՊԻԱ 1372

620.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սբևան 5557

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Երուսաղէմ

311ա ...Ցամի ութհարիւրորդի, քոանևմիերորդի մեծ Թուականի մերոյ (1372), ի հայրապետութեան տեառն Մեսրովպայ, ի թագաւորութեան Կոստանդեա, և յեպիսկոպոսութեան տէր Գրիգորի Մարցո, նուաստ ծառայս ծառայիցն աստուծոյ, ըագմամեղ հողս, որ ամաչեմ կոչիլ ի բարձրագոյն քահանա[յա]կան անուանէն, զի ի դատապարտութիւն է ինձ անունդ այդ, զի անարժան և դազիր գործաւք, բազմամեղութեամբ, լալով ասեմ, զանբարկանալին աստուած յոյժ բարկացուցի։

Այլ ես՝ երկրորդ անառակ որդիս՝ Վարդան արեղայս, որ տարաբդիր եղէ յիմ հայրենի գաւառէն, որ եմ ի Բաբերթու, ի գեղջէ երմնոյ որդի Կիրակոսի, տղահասակ գնացի ի Ղրիմն, ի սուրբ վարդապետ Աւետիս խոտաճարակն ի մաւտ, յետոյ աշակերտեցայ Պետրոս հայրապետին և պաշտեցի զշարական և զտեառ ի վանքն, որ կոչի Ղըզըլտաշ և եղա արեղա, և կեցա ժ. (10) տարի։ Ցետո շինեցաք վանք նոր, զոր Պետրոսի և Խոճայ Սզզի կոչի, յանուն երաշխաւոր սուրբ Աստուածածնին՝ խիստ վայելուչ և սիրուն ամենայն իրաւք։

311բ Եւ ես՝ յետինս ‖ կրաւնաւորաց, ալէկոծէի հանապազ վասն անչափ և զառն մեղաց իմոց, թէ զինչ արարից, զի կենցաղս այս ունայն է և սնոտի...։ Եւ այլ ճարակ չգտա իմ զառն մեղացն, քան զսուրբ առաքեալքն. երես զրի, և բազում աշխատութեամբ և նեղութեամբ հասոյց զիս Քրիստոս և աղաւթք սուրբ առաքելոցն ի մեծն Հռոմ...։ Եւ զարձա ուրախութեամբ ուր նաւահանգիստն էր, և չգտայ նաւ, որ բերէր յԵրուսաղէմ, և զարձայ ի նոյն ճանապարհն, բազում աշխատանաւք և նեղութեամբ մաքնոյ հասա ի տուն։ Ուզէի զալ յԵրուսաղէմ, զմտաւ ածէի թէ զինչ հաճոյ իցէ տեառն իմոյ նուէրք ի մեղաւորէն։ Ցիշեցի զայն, որ ասէ՝ ընկ[ե]այ ի տէր զհոգս քո, և
312ա նա հոգաց և երետ մակազաթ, և գրեցի աւետարան ըստ ‖ կարի իմում, ի յոտն կալով, բազում ճգնութեամբ և աշխատ[ա]սիրութեամբ, ոսկի ծաղկով և արծաթապատ բեւեռաւք։ Եւ բերի յԵրուսաղէմ, ի սուրբ Գողգոթա, ուր Քրիստոս զսուրբ արիւնն իւր վասն մեր եհեղ և փրկեաց զմեզ։ Եւ ուրախացա, զի արժանացոյց զիս Քրիստոս իւր սուրբ տեսոյն, և դարձայ ի տուն։ Եւ հանապազ խիղճ մտացս կու տանջէր զիս, թէ ըր եկի, զայս ամէն աշխատանք պիտի կորոնեմ։

Դարձեալ ապաւինեցայ ի Քրիստոս, թէ զու հոգւոյ դիս, ըստ
կամաց քո զդնացս ուղղեա, և երեր դիս յերջանդիմս։ Եւ կայի ժ.
(10) ամ ի սուրբ Յակովբ, դրեցի Ա. ճաշ.ից Փրկչին և Ա. Դողգողայիկն.
և ձևրացա և բթացաւ ամենայն կարողութիւն մարմնոյս։ Եւ զայաք
ի սուրբ ծնունդս Քրիստոսի և աւետարան և այլ դիրք պիտոյ լինէր,
և չկայր. և իմ զմտաւ ածի, թէ մեր բարեխաւս և միջնորդ սուրբ
Աստուածածինն է, նմա Ա. աւետարան Թող գրեմ, որ ինձ բարեխաւսէ
.312բ առ իւր կուսածին աստուածորդի։ Եւ... ‖ սկիզբն արարի այսմ լու-
սաւոր և կենսակիր աստուածաւանդ սուրբ կտակիս, ի ստոյգ և յըն-
տիր աւրինակէ, տի Նա, և յարուեստ բանի ոչ յաննշան գրչէ, այլ լի
և կատարեալ արուեստիւ ի բանս, ի բառս, ի լծորդս և ի բացատս, և
ի տրոհմունս առոգանութեանց։ Եւ յոյժ բաղձանաւք և յոքնատոչոր
տենչանաւք, ալէտանջ երկաւք, մեծաւ աշխատութեամբ ըստ կարի
գծագրեցի զսա ի լուսաւորութիւն մանկանց ակեղեցւոյ և ի յիշատակ
հաւրն իմ Կիրակոսի, և մաւրն իմ Թաներին, և եղբարցն իմ՝ Յա-
կովբին և Աւետեացն և Աւետաբերին՝ կուսակրաւն կրաւնաւորացն,
և ամենայն ազգականաց և երեխատաւորաց մերոց, և վարդա-
պետացն մեր, և խոստովանորդեցն, և ինձ՝ նուաստ գրչիս Վարդան
խարոդիս...։

.313ա ...Դարձեալ աղաչեմ զձեզ լուսաբար և սպասաւոր եղբայր, վասն
Քրիստոսի սիրոյն և յուսոյ արքայութեանն, որ խնամով պահես, և
քանի որ ահ լինի և մարդ չկենա, տանիս ի սուրբ Փրկիչն, յեկեղեց-
պանն ի պահ դնես, երբ ուզենաս՝ առնուս, և աւրհնիս յաստուծոյ և
յամենայն սրբոց, ամէն։

621.

Ձ Ա Շ Ո Ց

Եբևան 7432 (տես նաև 1653 թ.)

Նուիրող՝ Յովհաննէս
վայր՝ Ղրիմ, Շահնշահի գիւղ

.278բ Այս գիր հոգևորական հրամանի և հաստատութեան է նուաստ
Յովհաննիսի կրօնաւոր քահանայի, ծառայի Յիսուսի Քրիստոսի աս-
տուածոյ մերոյ, շնորհաւք և ողորմութեամբ նորին աթոռակալի Հիւ-
սուսական կողմանց։ Ցաղագս որոյ զգիրքս զայս ասաուածածինն, որ է
ընթերցմունք սրբազանից գրոց հնոց և նորոց կտակարանաց, յամե-
նայն աւուրս տաւնից տէրունականաց և բնաւից բոլորից սրբոց, ի
ձեռն արժանահաւատ և յոլովագոյն վկայից քահանայից և ժողովըր-
դականաց հաստատեալ կարգեցաք ի տաճարի սրբոյն Գէորգեայ արա-
գահաս մարտիրոսի, արի և քաջ նահատակին Քրիստոսի աստուածոյ
յուսոյն մերոյ, ի գաւառ, որ կոչի Շահնշահի, ի գաւառս Ղրիմ քա-

զաքի, յիշատակ անջնջելի առաջի աստուծոյ Վարդանայ քահանայի և ամենայն երախտաւորաց սմին գրոց, որոց անուանքն գրեալ կան յաւարտ սորին գրոց, և որոց ոչ են գրեալ՝ գրեսցին ի գպրութիւն կենաց՝ յերկինս։

Արդ, մի ոք շորթեալ հանցէ զսուրբ գիրքս այս աստուածային ի վերոգրեալ տաճարէս սրբոյն Գէորգեայ քաջ նահատակին Քրիստոսի աստուծոյ, զի մի պատժեսցի յարգարադատէն աստուծոյ և ի սրբոյ նահատակէ նորին Գէորգեայ և յամենայն սրբոց, իսկ կատարեալք հաստատուն և անջրելի գաշանցս աւրհնեսցին յաստուծոյ ամենակալէ...։

Գրեցաւ գիրս յըստ մեզ մարդեզութենէն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ՌՅՀԴ. (1374) թվականին և ըստ հայոց մեծի թվականին ՊԻԱ. (1372), ի դեկտեմբերի ամսոյ ի Իէ. (27)։ Եւ վասն առաւել հաստատութեան նշանեցաք մերով իսկ սովորական ձեռագիր նշանաւս։

[կնիք*]

622.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեան 6364

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Դարանաղեաց գաւառ, Աւազ անապատ

330ա ...Արդ, ես՝ նուաստ հողս Ստեփաննոս...շնորհիւն աստուծոյ և ողորմութեամբ նորին գրեցի զսուրբ և զկենսունակ աւետարանս ի յիշատակ մեր, և նախնեաց, և ծնաւղաց, և ամենայն երախտաւորաց մերոց, և ի պայծառութիւն սրբոյն եկեղեցւոյ, և ի զուարճութիւն մանկանց նորին։

Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԻԱ. (1372), ի Դարանաղեաց գաւառիս Կամխայ, հանդէպ սրբոյ գերեզմանի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, ի սուրբ և գերահռչակ անապատս, որ կոչի
330բ Աւազ, ընդ հովանեաւ սրբոց Առաքելոցս, ‖ և սրբուհոյ Աստուածածնին, և Կարապետին Ցովհաննու, և բազմահաւաք սուրբ նշխարացս, որ աստ [կան]։

Արդ, աղաչեմ...յիշեցէք սրտի մտաւք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվճուն և զխոշոր գրչակս զՍտեփ[անեոս]...։

Յիշեսջիք և զծնաւղսն մեր՝ զՍտեփաննոս քահանայն և զամենայն ազգատոհմ, որք յուսով առ Քրիստոս են փոխեալ։ Յիշեսջիք

* Բավականին մեծ (6×6 սմ) կնիք է, հավանորեն փայտյա։ Համաձայն հիշատակարանի այն պետք է պատկաներ «Հիւսուսական կողմանց» աթոռակալ Հովհաննիսին, սակայն կնիքը, որի տառերը մխաձուլված են միմյանց բարդ փակագրով, դժվարութեամբ ու ճիգով միայն կարելի կլինի կարդալ «Ցովհաննէս կրաւնաւորս»։

զՆերսես հարազատ եղբայր մեր, Յիշեսջիք զՀզնազ[դ]եաց, զառաքինասէր հայր Կիւրեղոս՝ զառաջնորդ սուրբ ուխտիս, որ բազում բարուքեանց առիթ ևզև մեզ և բազմաց, որոյ տէր աստուած վարձահատոյց լիցի ի գա ‖ լստեան իւրում, Յիշեսջիք և զմիարտնուքիւն եղբայրութեանս, որ կան աստ առաքինի և սուրբ վարուք...՝ 331ա

623.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սիբաստիա, սբ. Նշան, 64, ՀԱ. 1926 թ., էջ 44—45

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Դարանաղեաց գաւառ, Աւազ անապատ

...Արդ, ես նուաստ Ստեփաննոս...զրեցի զսուրբ եւ զկենսունակ աւետարանս ողորմութեամբ աստուծոյ, ի խնդրոյ հոգեսէր եղբօր մերոյ Ներսիսի՝ հարազատի եւ աստուածասիրի, որ յորդորեաց զմեզ եւ ետ գրել զսա ի յիշատակ ի՛ւր եւ ծնողաց իւրոց եւ ամենայն նախնեաց։ Եւ գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՊԻԱ. (1372), ի սուրբ եւ գերահռչակ անապատն, որ կոչի Աւազ, ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ Կարապետին Յովհաննու, եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, եւ սրբոց Առաքելոցն, եւ բազմահաւաք սուրբ նշխարացս, եւ կենսակիր սուրբ նշանացս, ի Դարանաղեաց գաւառիս Կամխայ*, հանդէպ սրբոյ դերեզմանի լուսաւորչին մերոյ Գրիգորի։ 602

Արդ աղաչեմ զձեզ...յիշեցէք սրտի մտաւք ի մաքրաիայլ աղաւթքս ձեր զերկու եղբարքս՝ զՍտեփաննոս գրիչ՝ անարժանս ի կրաւնաւորս, եւ զՆերսես՝ հարազատ եղբայր մեր, հանդերձ ծնաւղովք մերովք եւ ամենայն նախնեաւք եւ հանդուցելովքն առ Քրիստոս։ Յիշեսջիք եւ զառաջնորդ սուրբ ուխտիս զԿիրակոս եւ զայլ միաբանութիւն եղբայրութեանս, որ աստ կան։

624.

Մ Ա Շ Տ Ո Ց

Բրիտ. Քնդ. 42. (Add. 19,548), Կոնիբ. Յուց. էջ 89
(տես նաև 1375 թ.)

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Մելիտինէ

Ո՛վ աստուածարեալ արհեպիսկոպոս տէր Յովաննէս Մելիտինոյ, ընկալ զսակաւ գիրս և յիշեա զանարժան հոգս՝ զՆերսես աբեղայս. ի թվ. ՊԻԱ. (1372), հոկտեմբեր ԺԹ.(19) աւրն։ 19բ

* Տպված է՝ ել դուրս նազից գաւառիս կամ Ումայ, անտարակուսս, ընագրում պետք է եղած լինի՝ ել Դարանաղեաց գաւառիս Կամխայ։

625.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 98—99, և Սրվանձա. Թորոս Աղբար, Ի. էջ 323—327 (Բինկայ դյուղի սր. Հրեշտակապետաց եկեղեցի)

Գրիչ՝ Գրիգոր—Խութլուշ [Տաքեացի]
վայր՝ Եկեղեաց գաւառ, Լուսաւորչի անապատ

ա

...Դրեցաւ սուրբ աւետարանս հրամանաւ տիեզերալոյս մեծ բարունապետին Յահաննու Որոտնեցւոյ, յասաւածապաշտ գաւառս Եկեղե[ա]ց, յանապատիս Լուսաւորչի, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս, զոր շինեալ է նոյն ինքն հաւրն մերոյ սրբոյն Գրիգորի։ Որ և ի սմին եղեալ** ձեռնադրութիւն Լուտակեաի։ Ի թվականութեանն Հայոց Պ.-որդի, Ի.-երրորդի, երկրորդի (1373), ձեռամբ յոգնեղկելի եւ բաղմամեղ ղրչի Գրիգորի, սպասաւորի նմին եւ բանի, մակ՝ ըստ նախնոյն*** Խութլուշ, ի յընտիր աւրինակէ ստուգեալ։ Արդ, աղաչեմ զձեզ սրտաստուաքոր պաղատանաւք, ով մանկունք եկեղեցւոյ, տեարք եւ հանգիպողք, ընթերցողք եւ գաղավարողք, յիշատակել առաջի Քրիստոսի զքաջ ախոյանն և ղարի նահատակն զՅահաննես բարունին՝ ղվարժապետն իմ, հանդերձ ծնողաւք եւ ամենայն ղարմաւք իւր, եւ զիս՝ զմեղաւոր աշխատողս, եւ ծնողսն իմ կրկին, զքորս եւ զեղբարս, եւ ասել՝ Քրիստոս որդի, մեզ եւ այլոց աշխատողաց ի սմա, որք ի ծաղկել և ի կաղմել [գործակից եղեն]։ Եւ ի Ղուկաս գլխոյն գրեալ եղեւ մինչեւ ՃԿԵ. համարն։ Որ եւ ամենեցուն ձեզ եւ մեզ ողորմեսցի Քրիստոս։*

բ

*Աստուածաղանից անձանց եւ դասու սրբոց հարց եւ եղբարց եւ որդեկաց, տէրամբ աստուծով աղաչեմ զպատահեալսդ սմա, եւ որ շահիք ինչ ի սմանէ եւ աւրինակէք, դի յոյժ ընտիր աւրինակէ գրեցաւ, յիշեցէք սրտի մտաւք ի Քրիստոս զտիեզերալոյս բարունապետ զվարդապետն իմ՝ զՅովհաննես Որոտնեցին, հանդերձ ծնողաւք իւրով, եւ ինձ՝ մեղապարտ աշխատողիս, հանգիստ հայցել, զոր մեզ եւ ձեզ պարգեւեսցէ քրիստոս։*****

---

* Ճանիկ. «Հանննուշ»։
** Ճանիկ. «լեալ»։
*** Ճանիկ. «միակ ըստ նախնեացն»։
**** Գրված է Մատթեոսի աւետարանի վերջում։

գ

Հաղմաբիծ եւ դատապարտս ողի Գրիգոր սարկաւագ, սպասաւոր բանի, յերեսս անկեալ աղաչեմ զաստուածասէրը եւ զբարեմիտ ընթերցողող յամենայն ամի առնել զյիշատակարանս մեր, եւ Թողութիւն մեղաց հայցել առաջի զենման դառինն տեառն սորա՝ ժրաջան եւ տիեզերալսյս մեծ բարեւնապետին Յոհաննու Արտնեցւոյ, որ եղեւ լուսաւորիչ երկրորդ Հայկազնեան ազգիս, եւ որպէս քաջ ախոյանսն՝ Աստուածարանն Գրիգոր եւ զերանելին Կիւրեղ, կրթեալ երկամբք ի մամուլս դիտութեան հանճարոյ հերքէը եւ հալածէը ի մէջոյ եկեղեցւոյ ուղղափառաց զարիանոսքն, որք են ախթաբմայքն, անուամբ քրիստոնեայք եւ ծածուկ աւձտեալքն ի Դրիսաոսէ...։

դ

*Դարձեալ աղաչեմ [յիշել] ի տէր զրարի եւ զհաւատարիմ, զհեգահոդի եւ զքաղցրարարք սարկաւագն Նիկաւլ, որ ցանկացող եղեալ** այսմ աստուածային գանձուս եռափափագ աենչամբ զցայգ եւ զցեբեկ, եւ վաճառեաց զինչս իւր եւ գնեաց գայս պատուական մարգարիս, եւ եթող յիշատակ յաւիտենական իւր եւ ծնողաց իւրոց, հաւրն՝ Թուխմանուկայ, եւ մաւրն իւր՝ Մինայիե**, եղբարց իւրոց՝ Վասակին եւ Մրուանայ, եւ քերցն իւր՝ Սառային եւ Սիրմայիե...։*

*Ո՛վ եղբայր, զյիշատակարանս յետս գրեցի՝ յերուսաղէմ սուրբ քաղաքս, և կարի արտօրանօք, ի մեծի հինգշաբթւոջ աւուրս Վասն ստուգութեան ի տեղիս ի խաչ նշան եմ արարել ի վերայ անց բանի, որ յայլ աւետարանս լինի յայն տեղն զիր աւելորդ, և կամ քէ այս գիրս յայս տեղս պիտոյ է։ Զմադաղաթս նոյն ինքն մեծ վարդապետն իւր ձեռօքն գործեաց, և մեղ ուսոյց զսոյն արուեստ։****

626.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Ն. Ջուղա, որ. Լուսաւորիչ եկեղեցի. Տ.-Ավետիսեան, Ցուցակ, էջ 177—178

Գրիչ՝ Բարսեղ
վայր՝ Եզընկա, ի դուռն Վասկեոսաու

294ա ...Եղև զբաւ գրչութեան սորայ ի թուաբերութեան Հայոց ՊԻԲ. (1373), գրեցաւ տառս...ձեռամբ սուտանուն քահանայի Բարսեղի, ի

---

* Գրված է Ղուկասի ավետարանի վերջում։

** Ճանիկ. «Եղեւ»։

*** Ճանիկ. «Մենայինե»։

**** Ճանիկյանը բ. և գ. հիշատակագրությունները չի հրատարակել, իսկ դ. հիշատակագրության երկրորդ պարբերությունը («Ո՛վ եղբայր...»), ընդհակառակը, բացակայում է Սրվանձտյանի հրատարակությունից։

մայրաքաղաքս Եզրնկա, ի դուռն Վասկերտու, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին ի Հայս։

Արդ, աղաչեմ ձեզ, դասք քահանաից, որք հանդիպիք այսմ աստուածախաւս մատենիս կարդալով կամ տեսանելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ղդրող, գծաղկող և ղկազմող սորա՝ զԲարսեղ քահանայ, և որ առատն է ի տուրս բարեաց ձեզ և մեզ ողորմեցի, ամէն։

Ընդ նմին յիշեսջիք զաւակն իմ զՄարգարէ և զղեռաբոյս դաւակն իմ զԱլախաթունն։ Եւ այլ աղաչեմ յիշել ի տէր զամուսին իմ՝ Խաթունն և զիւրն ամենայն, և՛ զկենդանիսն, և՛ զհանգուցեալսն։ Արդ, աղաչեմ յիշել ի տէր և զծնողսն իմ, զհանգուցեալսն ի Քրիստոս զհայրն իմ զՄարգարէ քահանայ, զմայրն իմ զՀարսանայ Խաթուն, և զայլ ամենայն աղգայինսն մեր, որոց ողորմեցի Քրիստոս աստուածն։ Ընդ նմին յիշեցէք զեղբայրն իմ զԱռաքել, և զկենակիցն իւր զԳրոց Խաթունն, և զվոխեցեալ եղբայրքն իմ ի Քրիստոս՝ զՄկրտիչն և զԳրիգորն. զոր տէր աստուած հատուսցէ իւրեանց վարձս բարիս, ամէն։

Ընդ նմին յիշեսջիք զՄելիքսէթ սարկաւագն, որ զաւրինակն շնորհեց և աւգնական եղև մեզ ի կոկիլ թղթիս, և ծնողսն իւր, զոր տէր աստուած հատուսցէ իւրեանց վարձս բարի։ Արդ, աղաչեմ զամենեսեան, չլինել մեղադիր խոշորութեան և սխալանաց նորա, զի այլ չէր դրել աւետարան, և վասն այնորիկ գրեցի զսա, զի աւրինակն ազեկ էր և ընդիր։ Նա ես տամահեցա ու գրեցի վասն անձին իմոյ և զաւակաց իմոց, զոր տէր աստուած վայելել տացէ բազում ժամանակաւ, ամէն։

Ընդ նմին յիշեսջիք և զՄարաիրոս քահանայն, որ վաւիքանաւք ստացաւ զսա ի վայելուչն անձին իւրոյ և յիշատակ ծնողաց իւրոց։

Յիշեցէք զԹանտիկիճն, որ աւգնական եղև յիսուն սպ[ի]տ[ակ] ի կոստղխն, զոր տէր աստուած հատուսցէ իւր վարձս բարի, ամէն։

Յիշեսջիք և զհայր Անտոնն, որ աւգնական եղև Ծ. (50) սպ[իտակ] կոստղխն, զոր տէր աստուած հատուցանէ իւր վարձս բարի, ամէն։ Յիշեսջիք և զՄխիթարն, որ աւգնական եղև Ծ. (50) սպ[իտակ] ի կոճկնին, զոր տէր աստուած հատուսցէ իւր վարձս բարի ի գալստեան իւրում, ամէն։

Ստուգող՝ Թադէոս.

Բ

ԶԹադէոս սուտանուն կրօնաւոր յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր, ո՛վ սուրբ ընթերցողք, զի շատ աշխատեցա և ուղղեցի զսա ի ճշմարիտ և յուղիղ աւրինակէ։ Ամենայն արուեստաւոր ի դուրս կանիծեն, և զվատ գրագիրն՝ յեկեղեցին։

627.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐՈՑ

Եբևան 2001

Ա. մասի գրիչ՝ Թումայ
վայր՝ Աղթամար

ա

...Զոր տեսեալ զայսպիսի պայծառ ջահս եկեղեցոյ սրբոյ և
93բ զգանձս պատուական եր || ջանիկ և աստուածային ձրիւքն բարգա-
ւաճեալ, հանճարեղ և ուսուիմասէր քահանայն Ստեփանոս, և ետ փա-
փուտմամբ գծագրել զսա ի վայելուչն անձին իւրոյ աստի կենացս, և
յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց։ Եւ արդ, ես՝ ունայնս
և թափուրս յամենայն գործոց բարեաց, մեղուցեալ և անարժան ծա-
ռայս ծառայիցդ աստուծոյ, անուամբ միայն արեղայս Թումայ, ըստ
իմում տկարութեանս յանձն առի և ամենակարող զաւրութեամբն,
աստուծոյ կատարեցի զսա բազում աշխատութեամբ, զոր քալ իմա-
նան դիտնականքն դաշխատանք սորա, յաստուածախնամ կղզիս Աղ-
թամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և այլ բազմահաւաք սրբոցս, որ
աստ կան հաւաքեալ | | |

Բ. մասի գրիչ՝ Կարապետ

բ

222բ Ցամի ՊԻԲ. (1373) գրեցաւ մեկնիչս տոմարի ձեռամբ մեղաւորի
և անարժան գրչի Կարապետ քահանայի, ի խնդրոյ սրբասէր և կու-
սակրաւն արեղայի Աստուածատրոյ, ի վայելուչն անձին իւրոյ։ Որք
հանդիպիք յիշեցէք ի Քրիստոս զստացողն, և զգրողն, և զաշխատողն,
և աստուած զձեզ յիշէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

628.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Վէնետ. 142, 8ուց. Ա. էջ 616—618

Գրիչ՝ Թորոս
վայր՝ Ամիթ քաղաք

272ա ...Ումին՝ այս աստուածաւանդ սուրբ աւետարանիս, ցանկացող
եղեալ մաքրամիտ և սրբասէր քահանայ Յապտըլ[մսեճ], և ետ դրել
իմոյ ձեռամբ, որ զառածեալ եմ մեղաւք, սոսկանուն քահանայ Թորոս
գրչի. և ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, ի վայելուչն անձին
իւրոյ՝ ի Յապտրլմսեճ քահանայ և իւր որդոյն, և յիշատակ իւր և
որդւոց իւրոց, և յիշատակ հոգոյ իւրոյ, և իւր որդւոյն Մարտիրոսի, և
ծնաւղաց Ներսիսի։

...Այլ և գրեցաւ սայ յաղնիւ աւրինակէ և յամէնընտիր նաև յաբուեսա բանի ոչ աննշան գրէ, այլ լի և կատարել արուեստիւ ի բանս, ի բառս, ի լծորդս, ի բացատս, և ի տրոհմունս առոգանութեանց, ի սաուղութիւն կիտից և ոլորակաց։

...Միջնորդութեամբ կենարար հրաշիւք սուրբ պատարագին յիշեսջիք ի Քրիստոս զստացաւղ սուրբ աւետարանիս զԱպաքլմսեռ քահանայ, և ի դիւր որդին՝ զՄարտիրոս, և ծնաւղս, և զմեղապարտ գծողս Թորոս, և զամուսին իմ զՄարթայն, որ ի տարաժամ մահ փոխեցաւ ի Քրիստոս, և զծնողսն, և զեղբարսն իմ՝ զՍտեփաննոս քահանայ և զՅովանննէս, և զամենայն երախտաւորս և զուսուցիչսն իմ, և քեռց իմոց՝ Մանանիա...։

Այլ և գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊԻԲ. (1373), ի քաղաքիս Ամիք, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգա զաւրավարի, ի թագաւորութեան Հայոց Կոստընդիանոսի, և ի հայրապետութեան տեառն Կոստանդնեայ։ Արդ, սրք հանդիպիք սուրբ աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք զստացող սորա, և զծնողսն իւր զԱսիլ և զՍիրմայն, և զիւր տոհմն, և զամենայն մերձաւորսն իւր։ Ընդ նմին և զմեղապարտ գծողս՝ զսուտանուն զԹորոս զազրալի...։

629.

Մ Ա Ն Ր Ո Ի Մ Մ Ո Ի Ն Ք

Երևան 8587 (տես նաև 1662 թ.)

Գրիչ՝ Գեորգ

ա

Շնորհաւք աջոյն հաւրն անեղի,
Եւ էակցին իւր միածնի,
Եւ սուրբ հոգւոյն իւր վառեկի,
Համայնց սեռից շնորհաբաշխի,
Ի յանկ հանի զայս երկ բանի,
223ա Որ մանրուս || ուսմն յորջորջի.
Ի հայկաղնեա թուականի,
Ի վեշտասան յիսնից ամի,
Եւ ի նորին գոլ շրջանի
Ր քսաներորդ երկրորդ թուի (1373),
Ձեռամբ յոգնամեղի,
Որոյ անունս Գէորգ կոչի,
Ի վայելումն հեզաւղի
Եւ սրբամիտ կրաւնաւորի,
Որ և զդիրքո ղրեցի,
Որոյ անունն Յակոբ կոչի,
Նաև միւս կրաւնաւորի,
Որ Կարապետ անուն կոչի,

Որ աւժանդակ մեզ ի բարի
Կամաւքն իւրովք յերկրի։
Աղաչեմ զհանդիպաւղքդ այսմ գծի,
223բ Թէ և յաւրինակ || իսկ հանդիպի,
Վերոգրեալոց, զոր յիշեցի,
Նաև ծնողաց իւր և զարմի,
Ցիշել մաղթեմ յաւրն վերջի,
Ծորոց և նոյն ձեզ պարգևի,
Ամէն, ամէն և եղիցի,

Բ.լ.ց.ֆ.վ.ը.ն.բ.հ.շ.գ.լ.շ.ղ.ց.գ.բ.խ.ղ.զ.ղ.լ.շ., որք կարդայք յիշեցէք ց.վ,ե.կ.շ.բ.կ.ե.մ.խ.* և զուք յիշեայ լիջիք ի Քրիստոս։

* Ծածկագրի վերջին մասը (‹‹...յիշեցէք››-ից հետո) փոխարինագիրը պարզ ծածկագրով կարգավում է հգդրող տորինն, իսկ առաջին մասը մեզ չհաջողվեց վերծանել։

630.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 7438

Գրիչ՝ Մարկոս
վայր՝ Սուրխաթ, Պիչանիքք դղեակ

469ա ...Եւ ես՝ յետնեալ հողս մեղապարտ, ի սրտէ խոցեալս ի յատանայէ Մարկոսս, անպարապ անձամբ ձեռնարկեցի զսա, ոչ վասն մեզ վայելելոյ, այլ ո և ոք հանդիպի փափագանաւք՝ առնիցէ ծախսմամբ, զի յոյժ աղքատ և կարեաց զէմ էաք, սակաւ սակաւ գրեցաք, զկէս սորին ի մայրաքաղաք Կաֆայիճ աստուածապահ, զկնի երեք ամի՝ առ ոտս սուրբ Ցակորի, և զայլ կէս ինացեալն՝ յետոյ կատարեցաք: Զոր փափագեցաւ փափաղելի աննչմամբ իւրով սիրոյ սորա հնդահողի աւրինավախ Աստուածատուր, և ետ գրել զսա անպիտան ձեռինս ամենայն հոգւաբարձութեամբ, անհանդիսա հոգւովք երկնեալք ի քառեակ եղանակս՝ զտիւ և զդիշեր, ամենայն աւգնականութեամբ. ես առաւել աղաւթիւք և խնդրուածովք, վասն առաւել և ջերմն սիրոյն իւրոյ, զի թերևս տեսցէ զկատարումն սորա, ի յիշատակ իւր առ տէր և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ:

Արդ, խնամաւք խնամակալին եղև զրաւ սորա, թէպէտ և անագան ի բազում զրաւանաց աշխարհի, ի ժամանակս յոյժ անբարի, զի վասն ծուլացեալ մեղաց իմոց կողմանս Հիւսիսական, խրատաւք չարին ի գումարի գոլով, երիս ամաւք կամք ինալով անյիշաչարին և անոխակալին այց առնել համայն իւրայոցս, զի մի գերեալքս և վարտեալքս ի վայրս նժգեհութեան կրկին կոդոպտեսցուք մեղաւք մեբովք:

Այժմ աղաչեմք զամենեսեան զղաստ լուսերամիւց, ո ոք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան, յիշեալիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զփափագմամբ ստացողն սորա՝ զպատուելի հայրն Աստուածատուրն, և զծնուելսն իւր՝ զիոխեցեալսն առ Քրիստոս զՄխիթարն և զաւազ տիկինն Պաղի, զաւակաւքն՝ զՏիրատուրն և զխաչատուրըն, և զքեռ իւր Հերազն, և զաւակն իւր զՍիրայն և զՍուրաքն, և զկենակիցն իւր զՀոռիփսիմէն...:

Նաև, թէ արժանի համարիք, զանարժանս՝ զՄարկոս անիմաստ և ապիկար գրիչս, և զհայրն իմ զՅովաննէս, և զմայրն իմ զԹուրվանդան, և զքուրն իմ զԱննան՝ զիոխեցեալսն ի Քրիստոս աստուած, ցաւակցարար յիշման՝ ի փառաւոր և ի սոսկալի առնն, ամէն:

Կատարեցաւ սա ինացելովն կիսաւք, զոր ի վերոյ գրեցաք, ի

469բ թուականիս Հայոց ութհարիւրեր<ը>որդի ։ քսաներորդի երրորդի (1374), մայիս ամսոյ ԼԱ. (31), ի մուտն յունիս, ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, ի եպիսկոպոսութիւն և ի յաթոռակալութեանն տէր Յոհաննիսի կրաւնաւորի Սեբաստացւոյ՝ կորովամտի, ի հոչակաւոր քաղաքս կոչեցեալ Սուրխաթ, ի գաւառի Ղրիմ, ի ղեկաց անուն Պիչանլիք, որ կան անհաւատ մարդիկք յերիցուէ ի զատ, առ ատս սուրբ ձողաբարձ կենսակիւր խաչին Քրիստոսի։ Ցիշեսջիք զՅովաննէս քահանայ, յոյժ երախտաւորս մեզ ամենայն ղիմաւք, և զկենակիցն իւր բարի և ողորմած՝ զվոխեցեալն ի Քրիստոս, և զկենդանի զորդին իւրեանց՝ յիշատակ հոգւոյ և մարմնոյ...*

631.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՆՔ ԵՐԵՄԻԱՑԻ

Փիլդ. 6273, էջ 167 (Հայկավանք)

Գրիչ՝ Նահապետ

...Արդ, գրեցաւ սուրբ և աստուածաշունչ մատեանս առ ատս սուրբ առաքելոյս Գամադիէլի, ի վայելումն աստուածահաճոյ անձին Ցօհաննէս վարդապետի... ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, որ աշխարհս լի էր տառապանօք՝ երաշտութեամբ, ղերութեամբ, քրքրով, մարախով, յորդ անձրևով, մահարերութեամբ, թանկութեամբ և այլ նեղութեամբ, ի թուին ՊԻԳ. (1374)։

632.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. 77, Հալ. Ցուց. սյուն. 143—144 (տես նաև 1304)

Հետ. ստացող՝ Վարդան

Բաղձանք հոգևորական սիրոյ ղերաղանց պոլով քան զամենայն էս ցանկալիս, մինչ ղի որոց առեալ ունիցին զնայ մոռացումն ամենայն մարմնականաց իրաց առնելով, որում և ես կցորղել, ըստ կարի իմում, ամենաթշուառս ողով Վարդան, և կենակիցն իմ Ոսկի, յոյժ փափագմամբ ստացաք զամենունակ բշտեմարանս զանձուց աստուածաբան աւետարանիս՝ ի փրկութիւն անձանց մերոց և յիշատակ հոգւոյ յետ աստեացս ելանելոյ՝ մեզ, և ծնողաց մերոց, և եղբարց, և ազգականաց մերոց՝ հոգևորաց և մարմնաւորաց։

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սուրբ աւետարանիս, յիշեսջիք զմեզ յաղաւթս ձեր, և զՎարդան, և զկենակից իւր՝ զՈսկի՝ և զամենայն արեան մերձաւորսն։ Եւ սրտի մտօք խնդրեցէք յաստուածոյ մեզաց թողութիւն գնողացն և գրողաց՝ Վարդանայ և | | | և Ջաքարիայի կազմողի, Սարդիս և | | | ահայի, յոյժ աշխատողի,

*) Շարունակությունն անարժեք է։

և բազմավէր Ստեփաննոսի, որ զսակաւ յիշատակարանս գրեցի։ Եւ աստուած առհասարակ ողորմեսցի, նմա փառք յաւիտեան. ՊԻԴ. (1374) Թվ[ականին]։

633.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան, 7874 (տես նաև 1457 Թ.)

Գրիչ՝ Մկրտիչ

...Արդ, ես՝ նուաստս յաւիտենից Անտոն երէց, ծրագրեցի զսա
266բ ...ի վայելուչն հաւատոց || ելոց ի Տրիստոս աստուած մեր։

Արդ, գրեցաւ սա ի Թուաբերութեանս Հայոց ՊԻԴ. (1374), ձեռամբ սուտանուն գրչի Անտոն քահանայի, ի խնդրոյ սրբասնեալ և հեզահոգի, ամենայն իմաստութեամբ առլցեալ քահանային Գրիգորի, և որգւոյ նորա Միքայէլ քահանայի, և զաւակաց իւրոց՝ Անանիայի և Ամիր-Մելիքի, և կենակցին իւրոյ՝ Սղիսաբեթի, և Տամու[րի], և հուանդ
267ա խաթունին...* || ... և զսուտանունն արեզայս Մկրտիչս, որ գյիշատակարանս գրեցի...։

634.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Bibl. Nation. 132. Մակլեր. Ցուց. էջ 72

... [Գրեցաւ ի գաւառիս, ի լեառնս Սեւոնի, յերկրին Ամուրհսւցւոց, ի դեաւղս, որ կոչի Մասարաք, բնդ հովանեաւ սուրբ Յոհաննէսի։**

* Շատ բառեր եղծված-քերված են, և վերականգնվում են մեծ հեղգվի Շարունակությունը, ուր հիշվում են ստացողի ազգականներից շատ ուրիշները ավելորդ ենք համարում մեջ բերել։

** Գրիչն է հեղինակը կրօնաւորը, հիշատակարանը գրվել է ՊԻԴ. (1374) Թվականին։

635.

ԱՆՍԻՋՔ ԱՆՏԻՈՔԱՑ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՍՄԲԱՏԱՑ

Մատենադարան Հայկ Թարգմ. էջ 308, և Վէնն. 439. Տաշ Ցուց. էջ 966 (տես նաև 1331 թ.)

Գրիչ՝ Զաքարէ
վայր՝ Սիս

Ի մեծ Թուին Հայոց, ի գառն եւ ի նեղ ժամանակիս, ՊԻԴ. (1375), յորում ամի առաւ քաղաքն Սիս, եւ ես նուաստ եւ սուտանուն եպիսկոպոս Զաքարէ պատահեցայ անդ. բայց եւ ղողորմաղին բանս, զոր ետես ակն իմ, ո՛ կարէ պատմել դրով, զի տեսի զակունք պայծառ եւ զարեզակունք, զաստեղս եւ զլուսինս, զի կային անկեալ ափի։*

636.

Մ Ա Շ Տ Ո Ց

Բրխտ. Քնդ. 42. (Add. 19,548) Կոնբր. Ցուց. էջ 89 (տես նաև 1372 թ.)

Վայր՝ Կիլիկիա՞

26բ *Ի թվականին ՊԻԳ. (1375) էառ Յաշէխ Թամուրն զթագաւորական քաղաքն զՍիս և եղև սուգ մեծ ի սոյն ամի եղև սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս, և եղաւ չափ մի ց[ո]ր[ենոյ] Ճ. (100) դր[ամ] տահիբի։*

637.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Երեան 1871

Գրիչ՝ Վարդան
վայր՝ Գողթան գաւառ, Ագուլիս

28ա *Արդ, աղաչեմք զամենեսեանդ, որք հանդիպիք այս աստուածախաւս կտակարանիս... յիշեսջիք ի սուրբ սրտէ և ի բարի կամաց զստացող սուրբ տառիս՝ աստուածականն, զսրբայանեալ Թովմա կրաւնաւոր քահանայն, և զհայրն իւր զՅակոբ քահանայն, և զմայրն իւր Աւագուհին, և զքոյրն իւր զՆղիսաբեթ և զՄարթայ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր, և զՅովաննէս փիլիսոփայն, և զհայրն, և զմայրն իւր, և զՅակոբ վարդապետն, և զՍաեփանոս կրաւնաւոր քա-*
28բ *հանայն, որ զաւրինակն շնորհեցին, ‖ տէր աստուած շնորհեսցէ նոցա զերկնից արքայութիւնն, ամէն։*

* Տաշ. Ցուց. զգայինս։

Եւ զիս՝ զանարժան զծողս զՎարդան՝ և զհայրն իմ զԹագորն, և զմայրն իմ, և զողեւոր հայրն իմ և զվարպետն՝ զՅովճաննէս կրաւնաւոր քահանայն, և զայլ երախտաւորն իմ յիշեցէք ի Քրիստոս, և յիշողքդ յիշեալ լիջիք յանյիշաչար տեառնէ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն և յամենայն ժամ։

Եւս յիշեցէք զղծողս և զկազմողս զՎարդան, որ խիստ նեղացաք ի գրելն։ Ո՜վ երկեղալի և քաջահաւատ, խոշորութեան գրիտ և սխալանաց, աղաչեմ, անմեղադիր լեր, քանզի միտքս էր մոլորեալ ի սբազանս աշխարհի, և ես յոյժ նեղեալ կաի, յորժամ զմին գիրն հանէի միտս հազար բան անգանէր, գրիչն թափուր ի վայր ձեռայ։

Գրեցաւ տառս աստուածային ընդ հովանեաւ սուրբ Թումախս, որ է ի վանն յԱգուլիս, ընդ իշխանութեան տէր Զաքարիաին, որ հայրապետ է Գողթ[ան] գաւառին։ Ի հայոց թուականին ՊԻԴ. կատարեցաւ սուրբ տառս՝ ՊԻԴ. (1375)։

638.

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք

Վիեն. 203, Տաշ. 8ուց. էջ 721 (տես նաև 1350)

Գրիչ՝ ֆրա Յակոբ
վայր՝ Ղրի՞մ

Ցամի ծննդեան տեառն և փրկչին ՌՅՀԷ. (1377), եւ ի յամսեան սեպտեմբերին, կատարեցաւ շինուածս Սուրբ Խաչ, ի տօնի վիճիլին. ֆրա Յակոբ աղքատ հողին, ի միարանողաց եղբարց կարգին, ձեռնտուութեամբ եղբարց կարգին, շինեցի դսեղանատունս եւ դտօրմիքոբս վասն միարանողաց եղբարցս կարգին։ Նաեւ զքան շինուքիւնս զայս ԺԷ. (17) ամաւ յառաջ, զոր եւ շինել էի զեկեղեցին ի պատիւ սուրբ Նիկօլտոսի սքանչելագործ հայրապետին։*

*Ո՜վ եղբարք իմաստ բանին, ի ձէնջ հայեցեմք ողորմութիւն, ինձ խնդրեցէք զթողութիւն...։***

639.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7547

Գրիչ՝ Ստեփանոս Սեւագլխոնց
վայր՝ Սուրխաթ

267բ ...*Արդ, այսմ աստուածապատում և Քրիստոսաւանդ տառիս ցանկացաւղ եղեալ ամենայն պարկեշտութեամբ զարդարեալն, համեստ և իմաստուն աղախինն Քրիստոսի՝ տիկինն Շնոֆոր, հանդերձ աստուա-*

* *Հիշատակարանի դրության իրական տարեթիվը պետք է համարել 1378, որովհետև, ինչպես նշել ենք արդեն, ԺԴ. դարում գործածվող փրկչական թվականը մեծ մասամբ երկու տարով առաջ է ընկնում այժմ գործածվող թվականից (տե՛ս, օրինակ, հաջորդ հիշատակարանը)։*

** *Հիշատակարանը գրված է անկանոն ոտանավորով։*

ծաղաշտ և երկիւղած արամբն իւրով, որոյ անուն Իշխաւն յորջորջի, եաւն գրել զսա ինձ՝ մեղապարտ և անարժան գրչի Ստեփաւոսի, ի յիշատակ հոգւոց իւրեանց և ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ։ Ի թուաբերութեանս Աւքանաղևան և Յաբեղական տումարի ի ՊԻԴ. (1375), և ըստ նորում շրջանի ի ՄՂԱ. (201), և ի գալստենէ կենաբարին ՌՃՀԷ. (1377), ե յելիցն Ադամայ ի դրախտէն ՅՊ. (6800). ի հայրապետութեանն տեառն Կոստաւղեայ, և ի թագաւորութեանն Լեւոնի, ե յաթոռակալութեանն ամենայն Հիւսւսական կողմանց Յովաննէսի Սեբաստացւոյ, հանճարեղ և իմաստուն հռետորի։

268ա Ո՞այց գրեցաւ սա յաշխարհիս Հոնաց և յերկիր Խը ‖ բիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ի Հողեւոներս վերի, առ ոտն սուրբ Աստուածածնին, և սրբոյն Սարգսի զաւրավարի, ե այլ բազմահաւաք սրբոց։ Այժմ, աղաչեմ զամենեսեան զդաս լուսերամից, որք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զփափագմամբ ստացաւղ սորա՝ զվերոյգրեալ տիկինն զՇեռոփրե, և զդուզակիցն իւր զպարոն Իշխաւնե, և յերկոցունց կողմանց զծնաւղս նոցա՝ զՄաւուկն և զԴոնար տիկինն, և զՄաւուէլն և զՄիքաւտիկինե, և զեղբարս հոցա զԳիշուկն, և զբՈւզխաթունե, զՅովհաննէսն, և զՀնդօն, և զՏատուրն, նաև զամենայն արեան մերձակայս նոցին՝ զարս և զկանայս, զծերս և զտղայս, զկենդանիս և զհանդուցեալս զպատուեալս և զղանցաբարեալն։ Նաև, թէ արժանի համարիք, զանարժան զծաւղս՝ զՍտեփաւոս մականուն Սեւագբլխոնց, զմեղապարտ ծառայ ծառայիցդ աստուծոյ, և զծնաւղս իմ, ցաւակցաբար յիշման ի փառաւոր և ի սոսկալի ատեանն։ Եւ որ սրտի մտաւք և յաւժարական սիրով յիշեսցէ զյիշատակեալսս ի սմա, յիշեալ լիցի և նա ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտ[եանս]։ Եւ որ հաւատով զամէնն ասացէ, նմա ողորմեսցի Քրիստոս ի միւսանգամ գալստեան իւրոյ, ամէն։

640.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Վիհն. 59, Տաշ. ծուց. էջ 277 (ակս նաև 1520 և 1587 թ.թ.)

Հետ. ստացող՝ Գրիգոր

301ա ...Սայ փափագեցաւ եւ զնեաց զաւետարանս յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց, հաւրն իւրոյ Նորհատին, մաւրն իւրոյ՝ Դիմաքին, ի վայելուչն Գրիգոր քահանային, որ զնեաց զսայ ի հալալ արդեանց իւր, ի յիշատակ իւր եւ ծնողաց իւր, եւ ամուսնոյն իւր Մարքայխաթունին. որք կարդաք կամ աւրինակէք, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զերախտաւորք մատենիս Սիրատանե, եւ զկենակիցն իւր զՀերագանդն, զԱւաք պարոն, եւ զԽորիմշան, եւ զկենակից իւր զՄամուշն, եւ զորդին իւր զԴաւիթն, եւ զԱլխաթունն, եւ զՄխիթար քա-

հանան, եւ զամուսինն իւր զԿուսդեմիկինն, եւ զորդին իւր զԿարապետն, եւ զամենայն արեան մերձակայս, յիշեցիք առաջի զենմանն Քրիստոսի։

Արդ, գնեցաք զսայ ի թվայբերութեանն Հայոց ՊԻԴ. (1375), փետրվարի Զ. (6), յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, ամէն։

Յիշեցիք զՅակոբն եւ զկենակիցն իւր զՄարթայ խաթունն ի սուրբ աղաւթքդ ձեր։

641.

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 9222,գ

Արդ, անկեալ աղաչեմ | | | ուխտի մանկուն եկեղեցոյ սրբոյ | | | աւրինակէք յիշեցէք ի Քրիստոս ըղհոգևոր...տիկին զՀազարշէն | | |, որ գնեց զսա | | | ի հալալ արդեանց իւրոց և ետ | | | ի սուրբ զուռն Աստուածածնին յիշատակ | | | ըլաբի ծնողացն և զաւակացն և ազգ[այնոց]. լսելով սորայ զերանաւէտ բարբառ[ն]՝ որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդոնիկք, [զար]ձեալ աղաչեմ յիշեցէք ի Քրիստոս զպաասւ[ական պ]ետն ըզտէր Ներսէս, որ պատճառ և ա[ռիթ եղև սուրբ աւետ]արանիս, և էառ՝ եղ զսա ի զուռն | | | որ հանապազ ի տեղս կենայ, ոչ ոք | | | հեռացու]ցանել զսա ի զրանէ սուրբ Աստուածածնիս | | |

Թիվ. ՊԻԴ. (1375), ի քաղա[քս | | |*

642.

ԱՒԵՏԱՐԱՆ

Երևան 5317 (տես նաև 1626)

291ա | | | Դերեզ]մանէն սուրբ վարդապետին Գրիգորի, կամ ծախելով կամ գրաւելով, ոչ յիմոց և ոչ յաւտարաց. և որ յանդգնի և ծախէ՝ մասն դաստուածավաճառին առցէ՝ զՈւղային և զխաչհանուացն և զայլոցն։ Ի թվ. ՊԻԴ.(1375)։

* Պահպանվել է հիշատակարանի միայն ձախ եզրը։

643.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փերղ. 6273, էջ 167—166 (կտուց անապատ)

Գրիչ՝ Սխիթար
վայր՝ յերկիրն Մոկաց, ի գիւղն Նաւենց

...ես՝ Մխիթար սուտանուն քահանայ, դրեցի զսա յընտիր օրինակէ, ի թուականութեանս Հայոց ՊԻԵ. (1376), յերկիրն Մոկաց, ի գիւղն, որ կոչի Նաւենց, ընդ հովանեաւ սուրբ Սարգիս զօրավարին, ի զառն և ի նեղ ժամանակիս, որ այլազգիք զօրացեալ են ի վերայ մեզ, վասն ծովացեալ մեղաց մերոց, զոր աէր-աստուած պահեսցէ զազգս Հայոց։

644.

ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Ալիշան, Սիսական, էջ 220

Գրիչ՝ Մելքիսեդ
վայր՝ Որոտան

*[Աւարտեցաւ գիրս] ի դառնութեան ժամանակիս...բարեբարն աստուած լոյս ծաղեաց մթացեալ և խաւարեալ ազգիս՝ զմեծ վարդապետն մանկանց Սիոնի...զրաբունապետն վարդապետաց, զծովհանէս վարդապետ Որոտնեցի, սրդի Իւանէի, որ վերստին զարդարեաց զեկեղեցի, և անուշացանէր զմանկունս Սիոնի, ջամբելով զկերակուրն կենաց հոգւոց և զհանգիստ մարմնաւոր պիտոյից, զգրուեալսն ի բազում թշուառութեանց՝ ի մի ժողովէր, և անևրկիւղ պահէր ի դէմս ամենայն պակասութեանց հոգւոյ և մարմնոյ։**

645.

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 6954 (տես նաև 1563 թ.)

Գրիչ՝ Արիստակէս

Արդ, գրեցաւ գիրքս այս աւրհնաբանի թուականիս Հայոց ‖ 253ա *ՊԻԵ. (1376), ձեռամբ անիմաստ գրչի սուտ* Արիստակիսի, *ի վայելուչն սրբատանեալ եպիսկոպոսին տէր* | | |**

---

* Ալիշանի տված ծանոթութեան համաձայն սույն ձեռագրի ընդօրինակությունն սկսվել է Որոտանում և ավարտվել Տաթևում՝ 1376 թվականին։

** Անունը քերված է։

646.

ՓԱՐՈՋԱԳԻՐՔ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՅԳԵԿՑԻՈՑ

Երևան 8029 (տես նաև 1336 թ.)

Հետ. ստացող՝ Ասլաև Կաֆացի

34ա Դերձակ* Ասլան Կաֆացի,
Որ ի Գոռել Մաճար գնացի
Զաս Վարդան վիրքս գնեցի,
Տիևդերայության վարդապետի,
Զինչ որ կարդայք ի առնին,
Ի ժամայուն, եկեղեցի,
Զծնողս յիշեցէք վասն Քրիստոսի,
Քրիստոս ձեղ ու մեզ ողորմի։
Թվ. ՊԻԵ. (1376)։

647.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Վեներ. 125, Յուց. Ա. էջ 559—560

Հետ. ստացող՝ Ֆիմի
վայր՝ Այաս

322բ Զվերջին ստացող սուրբ աւետարանիս Ֆիմիս Այասցի, կին Վաճ-
րամի, ի դառնութեան ժամանակի աւարուն եւաւ [ամ]րոն բե[ր]-
բի, և դերի բերին ըղսուրբ աւետարանս յԱյաս քաղաքի, նայ ես՝
Ֆիմիս, վասըն սիրոյն Քրիստոսի, գնեցի զսուրբ աւետարանս յիշա-
տակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց։

Ո՛վ սուրբ ընթերցողք աւետարանիս, ի ժամ բաշխման մարմնոյ
և արեանն, դմեղաւք լցեալ ոգիս՝ զՖիմիս և զմայրն իմ զՀռաւփսիմիճ
յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր, ընդ նմին և զեղբեալն գծողս
սորայ՝ զՅովսէփ զպրիկս յիշեցէք, և դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ
աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Վերջի յիշատակարանս զրեցաւ հրամանաւ | | |** տեառն մերոյ
տէր Սիմէոնիս. և քահանայսն, որ աստ հանդիպեցան՝ Վասիլ քահանայ
և Սահփաճոս քահանայ, յիշեցէք ի մաքրափայլ [յաղաւթս ձեր]։***

---

* Բնագրում՝ էթերձակ։

** Ծղծված է երկու բառ։

*** Հրատարակիչ Բ. Սարգսյանը կռում է հետևյալ ծանոթությունը՝ «Էջ պետ և յիշատակարանիս գրութեան թուականը նշանակուած չէ, սակայն աւետարանիս դերբին հանդիպած է հավանօրէն յամբ տէառն 1375 Սիս քաղաքի առման ժամանակ, իսկ գոնուբին և արձանագրութին յամին 1376—1378 (տես Ալիշան, Սիսուան, եր. 85, 227—8)»։

648.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Նբեան 0402

Գրիչ՝ Աւագ

ա

347ա ...Աղը, որք ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա ընթերցմամբ կամ աւրինակելով, յիշեղէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զոտացող սորա զՅոհաննէս քահանայ, և զծնողքն իւր, և զաղգն ամենայն, և զՊետրոս քահանայ, և զԱմիր, և զԱյխարուն, և զեզրիար, և զԹումայ, ընդ նոսին և զանպիտան զրիչս զԱւագ զպիր, և || զծնողքն իմ, և զազգն ամենայն յիշեսջիք, և աստուած-ողորմի ասասջիք ստացողացն և գրողացն ի ժամ սուրբ և սոսկալի պատարագին։

347բ

Նորոգող՝ Զաքարայ
վայր՝ Աղթամար

բ

Արդ, ի յայսմ ամի, որ էր թիւս Հայոց ՊԻԶ. (1377), Յոհաննէս սրբալան քահանայ վեյստին ետ նորոգել զսա և ծաղկել և զլխաղրել և կազմել, զի յառաջն Աւագ վարդապետ, որ գրել էր՝ մահն հասել էր, և ոչ էր ժամանել կատարել զսա։* Ես Զաքարայ սուտանուն կրաւնաւսր՝ անխմաստ և տխմար գրիչ, և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ և տրտում և տխուր, վասն բազում մեղաց իմոց, բազում աշխատանաւք կատարեցի զսա ի կղզոջս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Ծաչիս և սուրբ Նշանացս, և ամենայն սրբոցս, ի հայրապետութեան տէր Զաքարիայի։ Ապա աշխատեցայ և գտնաւրինականքն զամէն մէկ մէկ յիւր տեղն եմ հանել, իսկի իրք պակաս չկայ, ապա ի զէճ տեղ էր գրած և լաւ չէր պահած, թուղթն ամէն տպո ելեր և բրգացել, գրեղն չէր առնուլ, և խիստ վշտացայ։ Աստուած կու գիտէ, որ քան զառաջին գրոգն ես շատ աշխատեցայ, էնոր համար, որ կէս բանին աւելի գեռ ի տեղն էր։ Բայց դուք, սիրելի եղբարք, զասաւածո-ողորմին մի մոռանայք մեզ, և ծնողաց մերոց, և այլ ազգականացն, և ստացողի սորա, յառաջ յիշեցելոյ Յոհաննիսի, և ծնաւղաց
348ա նորա, || և ազգայնոցն ամենայն՝ կենդանեաց և ննջեցելոց։ Եւ ինքն, որ տուողն է բարեաց, ձեզ՝ յիշողացգ և յիշեցելոցս, ողորմեսցի կրկին կենաւք և երկու աշխարհաւք և ինքն աւրհնեալ եղիցի յամենայն արարածոց, յերկնաւորաց և յերկրաւորաց, ի հրեշտակաց և ի մարդկանէ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

* Ըստ այսմ Աւագ գրչի հիշատակարանը գրված պետք է լինի 1377 թվականից տարիներ առաջ։

649.

ՃԱՌԸՆՏԻՐ

Վենետ. 201 Ծուց. Բ. էջ՝ 65—66

Հետ. ստացող՝ Հասան
վայր՝ Մէրտին, Թվին վանք

114բ *Ի Թվականիս Հայոց ՊԻԶ. (1377) եւ՝ մուղտսի Հասանս, հանդիպեցա գրոցս, որ էր ղերեալ և բերեալ ի Մէրտին քաղաք, գնեցի ի դերողէն, և ետու ի սուրբ ուխտն ի սուրբ Աստուածածինն և ի սուրբ Ցսվանէօ, որ մականուն Թվին կոչի, առ ի յիշ[ատ]ակ ինձ, և ծնողաց իմոց, և կենակցի իմոյ, և զաւակաց իմոց՝ փոխեցելոցն ի Քրիստոս, Եւ մի ոք իշխեսցէ հանել ի վանացն, կամ ծախել, կամ գրաւել, այլ միայ սայ անջինջ յիշատակ, Եւ ով ոք կարդա ի սայ, աստուած-ողորմի ասէ Հասանին, և Ջաքարին, և իւրեանց զաւակացն՝ Յովանիսին և Կիրակոս սարկաւագին, և այլ զաւակացն՝ փոխեցելոցն ի Քրիստոս, ընդ նմին և ինձ՝ Յակոբ եպիս[կ]ոպոսի, որ գյիշաաակաբանս գրեցի և էի տեղոյս վերատեսուչ. և որ աստուած-ողորմի ասէ և նմա տէրն ողորմեսցի յահեղ ատենին, Քրիստոս աստուած, քո գալըստեամբդ ողորմ[ե]այ Հասան մուղտսոյն և իւրայոցն առհասարակ, ամէն, եղիցի, եղիցի,*

650.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 4041 (տես նաև 1425 Թ.)

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Թավրէզ

ա

252ա *Փառք...որ արժանացոյց զախմար և զանպիտան և զանարժան գրիչս Ներսէս երէց հասանել յաւարտուիւն այսմ աստուածախօս մատենիս աստուածազարդ և առաքելաշնորհ վարդապետին ասացեալ Գրիգորի Նարեկացոյ, ի խնդրոյ երջանիկ և առաքելանման հօրեղբօրն իմ տէր Յոհաննիսի, որ եռաւիւակ և ըղձալի սրտիւ խնգրեաց զայս աստուածաշունչս տառս, յիշատակ իւրն, և ծնօղաց իւրոց, և եղբարց իւրոց, և ազգականաց, և ամենայն արեան մերձաւորաց, և երախտաւորացն, և բարեկամացն...։*

Արդ, գրեցաւ սա ի քաղաքս ի Թավրէգ, ընդ հովանեաւ սուրբ Սար-
252բ *գսիս, || ի Թուարերս, Թեանս Հայոց ՊԻԶ. (1377)։*

Արդ, աղաչեմ զամենեսեան, զընթերցողող և զժառանգող[դ]ս, յիշեսջիք սրտի մտաւք ի բարի զիս՝ զամենամեղ գրելեակս՝ զներսէս երէց, և զհանգուցեալ հայրն իմ զՅովանննէս, և զմայրն իմ Ղրչախ, և զամենայն երախտաւորսն իմ. և խոշորութեան գրիս անմեղադիր

լերուք, զի ակարանա ամենայն մարդ ի գործս իւր, և աստուած առհասարակ ամենեցուն ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Բ

253ա Ցիշեա Քրիստոս աստուած ի քում յարքայութեանդ զԱրղուն տիկինն և զծնօղն իւր՝ զԴաւիթ և զՀռիփսեմ, որ փափաքելի սիրով ետ դրել զպակասորդ Նարեկացոյս և կազմել. բարեխաւսութեամբ սրբոյն Գրիգորի Նարեկացոյն և ամենայն սուրբ վարդապետացն ՀՆՁԱ զձեռագիր նոցա յանցանացն և դրեա ի դպրութիւն կենաց, և որք հանդիպիք աստուած-ողորմի ասացէք և աստուած ձեզ ողորմեսցի, ամէն։

651.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Թուական 7373

Գրիչ՝ Ցովաննէս
վայր՝ Ղրիմ քաղաք

465բ ...Արդ, որք հանդիպիք այսմ պատուական և հոգիանորոգ տառիս, յիշեսջիք ղվերոյդրեալ այրն աստուածասէր՝ զԱստուածատուր, և ծնաւղսն իւր, և զամենայն արեան մերձաւորան և զկարևոր բարեկամն, որք կան այժմ և որք փոխեալ են ի ժողովն մեծ՝ զՄխիթարն, զԱւագտիկինն, զԽաչատուրն, զՑիրատուրն, զՀերազանդն, զԽոսրով Երէցն, զՓնքուշն, զՆորշան, զԳորգ Երէցն, զՄարտիրոսն, զԱռաքելն, զԳորգն, զԳրիգորն, զՀեզգիկն, զՀերազանդն, զՄիրաթն, զՏղայպարոնն, զՅունանն, զԽաչատուրն, զԽերխաթունն...։

Ընդ նոսին և դպրիչ այսմ տառիս զՑովաննէս քահանայն, և զերանելի և զհոգիազարդ և զրազմաց վկայեալն՝ զԱետիս քահանայն՝ զհայր սորա, և զմայր սորա, և զամենայն ընտանիս, և զզաւակս իւր յիշեսջիք զարձեալ ի Քրիստոս, և որք յիշէք, յիշիք ի Քրիստոսէ Ցիսուսէ տեառնէ մերմէ, որ է աւրհնեալ յաւիտեանս։

Արդ, դրեցաւ սա ի քաղաքս Ղրիմ, յաթոռակալութեանն Ցովաննէս կրաւնաւոր քահանային, քաջ և իմաստուն և ուղղափառ առաջնորդին, ի թուականութեանս Հայոց ՊԻՋ. (1377), յաշխարհակալութեանն Մամայ պարոնաց պարոնին։

Ես՝ Աստուածատուր, ստացայ զդիրքս դայս և ետու իմ սանոյն, վերոդրեալ Վարդան արեղին, զի յետ ելից իմոյ աշխարհէ եղիցի իւր սեպհական, յիշատակ մեր և մերոցն, և մի ոք իշխեսցէ հակառակել, զի տեառն ետու ձեռամբ սորա։

652.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Վէննա. 12. Ծուց. հտ. Ա. էջ 127—128 և Ալիշան, Հայապատում, էջ 548—549 (տես նաև 1332, 1439 և 1577 թ.թ.)

Նորոգող՝ Յովաննէս
վայր՝ յերկիրս Տարուանու

ա

351ա Ի թուին Հայոց տոմարի որ ՊԻ. կոչի, (1371), ի յաղմանէ չարին, վասն ծովացեալ մեղաց մերոց, ի հաբկապահանջութենէ այլասեռիցն աւերեցաւ երկիրս Տարուանու, նաև սուրբ ուխտս Ղազարուղոր և կրօնաւորք սուրբ Առաքելոյս տարաշխարհիկ լինէին՝ անյանձնելով յայլ զաւառ. և կացեալ սուրբ տաճս աստուածաշունչ ի պահեստի բազում աւուրս՝ եղծեալ, այլ և զբազում սուրբ զրենօք և սղեսախչք, և եղեւ տրտմութիւն վանացս. զոր հետ աւուրց ինչ, յորում էր թվ. ՊԻԷ. (1378), ոմն յաղնուականն տոհմէ, բարեմիտ և սրբասէր կրօնաւոր՝ Պօղոս անուն, եղբօրորդի զոլով երջանիկ րաբունոյն Յոհաննիսի՝ փոխեցելոյն աստեացս առ Քրիստոս, որ ստացեալ ունէր զայս աստուածաշունչս, վասն որոյ Պօղոսս եւս առաւել հոգաբ յանձին կալեալ, վերստին եւս նորոգել զդիրքս զայս բազում աշխատութեամբ անձին և ընչից իւրոց, վասն վայելման ինքեան և յիշատակ Յոհ[աննէս] վարդապետին և Պօղոս արեզակ, որ եղեւ նպաստ կրկին նորոգմանս, և եղբօր իւրոյ Յոհաննէս սարկաւագի՝ հանգուցելոյն առ Քրիստոս։ Նաև զեղբայր վարդապետին՝ զՍարգիս քահանայն, և զծնօղսն մեր, և զամենայն արեան մերձաւորսն, աղաչեմ զհանդիպողք այսմ աստուածաշունչ գրոցս, յիշել ի տէր յօժար կամօք զվերոյգրեալքս, զի և զդուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ ի բարին. Նաև զանարժան հողիկս՝ ձՅովաննէս անպիտան գրիչ, որ զսակաւ գիրս ցանցառ գրով ձարտեալ գրեցի և կազմեցի, ոչ յարուեստ ինչ վոտահանալով, այլ ըստ հարկեաց և յօժարութեան կամացս Պօղոսի, վասն որոյ չմեղադրել խնդրեմ և յիշել ի աէր միով տէր-ողորմաիւ։

բ

327բ Զ Պօղոս արեզակ, զստացող սուրբ գրոցս, յիշեցէք ի տէր Քրիստոս՝ աղաչեմ, և զՅոհաննէս սարկաւագ՝ զհանգուցեալն առ Քրիստոս։ Եւս յիշեցէք ի Քրիստոս զաստուածասէր՝ Սիմէոն սարկաւագն և զծնողսն իւր...որ ետ նորոգել և կազմել զաստուածաշունչս, զի խիստ եղծեալ և հնացեալ էր, բազում աշխատութիւնս և ծախս արաբ...։

653.

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Երևան 2680 (տես նաև 1580 թ.)

Գրիչ՝ Մատթէոս
վայր՝ Անկեղակոյտ գիւղաքաղաք

369ա ...Եւ արդ, ես՝ յետինս ի բնաւից և հողոյ հաւասար, ժանգալից մեղաւք խաւարեալրո հողով Մատթէոս* երէց, ի տղայական հասակն, մինչև էի ամաց քսանից, ըաղում բաղձանաւք և խանդակաթ սիրով, ըղձմամբ սրտիւ և տենչանաւք վախճադեցայ այսմ հոդիարաշխ աստուածապարգեւ սուրբ գրոցս, որ անուանի Հարանց վարք, Եւ մեղսամակարթ անձամբ դուեցի զսա հաւաքելով ի համաւրէն աշխարհաց, ի բաղում սուրբ գրոց։ Զոր քաջ գիտէք, դի ոչ դոյ ի մի վայր այսքան ամենալի և անսուշահամ, զմայլեցուցիչ և ծաղկավթիթ բուրաստան, լի կենդանի անմահական բանիւք ե վարուք աստուածահաճոյ սուրբ հարցն։ Որոց յուսով և ըղձափափագ տենչմամբ ցանկացող եղէ այսմ հոդիաբուղխ եղեմական վտակիս փանաք և վտիտ գրիչս Մ[ատ]թ[է]ո[ս], դի զպասքեալ ծարաւ դառնաշունչ մահապարտ հոգոյս սովաւ լցուցից։ Վասն զի յոգնակի սիրով գրեցի զսա ամըս է. (7), առ ի յիշատակ անբաւրի հաղոյս իմոյ և վրկութիւն ադտիզեալ մեղսամակարթ
369բ ։ հիքոյս անձին։ Քանզի սուրբ և պատուական բարեշնորհ, աստուածաբնակ գիրքս այս պարունակեալ ունի յինքեան զմեծամեծ սուրբ հարցն վարք և զբազմադիմի խաւսք և գիտուր նոցա...։ Ցաղագս որոյ ես՝ փանաքի հէքս Մատթէոս, գրեցի զսա սատար սոդոսկեալ հոգւոյս առ ի յիշատակ շեղեալ շուայտեալ մարմնոյս, թերևս գտայց խերևեղ մի ի մասանց վիշտանաց արտաքս ընկելոց արժանաւորն մանկանց սեղանւոյ։ Արդ, աղաչեմ արտասուալից հառաչմամբ և մոխրամած դիմաւք, որք զաղաւիսր[եա]լ ընթ[եռ]նլով լուսաւորիք յայսմ գերազանց աբփիափայլ փայեթոնէ, յիշեսջիք սրտի մտօք ի մաքրափայլ աղաւթս ձեր զստրուկ աղքատս ի բարեաց գործոց՝ զՄատթէոս գծագրողս, և ի Քրիստոս հանգուցեալ ծնօղն իմ, և զեղբարսն, նաև զգերազնամաքուր արեղայսն սրբազան՝ Իգնատիոս և Եսայի, որ են հարազատ որդի վըտիտ գծողիս, եւ զՀռիփսիմի՝ մայր իւրեանց, զյըսնամեայ ապաշխարութեամբ աղաւթեալն, և առաքինասէրը դուստր իւր՝ կուսանն Մարգարիտ։ Եւ որ առատն է ի տալն, տացէ ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս զերկնից արքայութիւնն և զպսակն անթառամ։

Կատարեցաւ հրաշափառ սուրբ գիրքս այս բարեբար շնորհաւք աստուած սուրբ հոգւոյն, ձեռամբ նոյն վերոյգրեալ Մատթէոս իրիցոյ, ի թվիս Հայոց ՊԻԷ. (1378), ի գեղաքաղաքս, որ Անկեղակոյտ կոչի, ընդ հովանեաւ ամենամաքուր տիրուհի փառաւորեալ սուրբ Աստուածածնին։ Եւ արփիաւորչին մերոյ՝ տեառն Գրիգորի Հայոց մեծաց

* Հապավված է Մքռ. ձևով։

սուրբ լուսաւորչի, եւ այլ միեղէն սքանչելագործ զարմանահրաշ սուրբ եկեղեցեաց, որ է Քէթոյվանից սուրբ Գրիգոր, Շաղատայ սուրբ Գրիգոր, Խրոըճատաւնից սուրբ Գրիգոր և Բերդուոյ սուրբ Գրիգոր...։

654.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Նբևան 5558

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Աղթամար

629 Փառք անբաւ մարդասիրութեանն աստուծոյ, որ հասոյց զանարժանս յաւարտ սուրբ տառիս, ի գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԻԷ. (1378), ի կղզիս Ախթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, ձեռամբ ամենամեղ և անիմաստ կարապետ անարժան քահանայի և փղսէն գրչի։

Արդ, յանկացող եղեալ այսմ աստուածային և սուրբ կտակիս, սրբասնունդ և պատուական կրաւնաւորն թումայ։ Եւ ետ գրել զսուրբ գիրքս զայս ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնաւղացն Վարդսանայ և Ավաքտիկնայ, և ազգարցն Յովաննէս քահանայի
630 և Աւետիսի, և ամենայն արեան մերձաւ ‖ որացն՝ կենդանեաց և հանգուցելոց։ Արդ, աղաչեմ զնանդիւղեալսդ սմա կարգալով կամ աւրինակելով, յիշեսջիք յևրկնաբեռիչ յաղաւթս ձեր զընտրեալ կրաւնաւորն թումայ, և զծնաւղքն իւր, և զեղբարքն իւր, և զտապն՝ զՍտեփան, և զհաւրքոյրն՝ զՇուռնվոր, և զհաւատարիմ տանուտէրն՝ զԱմիրբէկ, և զկենակիցն իւր զՋիշաքմելիք, և զդեղեցիկ և զքաղցրատեսակ որդեակն իւրեանց՝ զՍուլտանշայ՝ զփոխեալն առ Քրիստոս։ Ընդ նոսին և զիս՝ զանարժան և զսուտանուն կարապետ քահանայ, և զծնաւղն իմ՝ զՄկրտիչ քահանայ և զԹանկխաթուն, և զեղբարքն իմ, և զհաւրեղբաւր որդին իմ՝ զթումայ՝ զաարաժամ հանգուցեալն ի Քրիստոս։ Մանաւանդ յիշեսջիք և աստուածողորմի ասասցիք ստացողացն, և գրողացն, և աշխատաւղացն, և երախտաւորացն, ի ժամ սուրբ և սոսկալի պատարագին. և ինքն, որ առատն է ի տուրս՝ ձեզ և մեզ ողորմեսցի, և հնար փառք յաւիտեանս, ամէն։

Կրկին աղաչեմ, յիշեսջիք ի Քրիստոս զկարապետ կրաւնաւորն, որ աշխատեցաւ ի գալն և երթալն, և միջնորդ եղև այսմ բարի գործոյ...։

655.

ԱԻԵՏԱՐԱՆ

Վիեն. 272, Տաշ. Ծուց. էջ 692

Գրիչ՝ Յով[հաննէս]

290ա ...Ցամի Թուարերութեանս մերոյ սեռի ՊԻԷ. (1378) կատարեցաւ սուրբ աւետարանս խաւսեցեալ ի բանէն աստուծոյ մարմնացելոյն վասն մեր՝ Յիսուսէ Քրիստոսէ տեառնէ մերմէ։

Աստուածասէր առն ծերունին՝ որոյ անունն Շահինշահ յորջորջի, եւ կենակից նորին Թագուհի, եւ աւազաղոյն որդին նոցին Խոցադեղն, եւ եղբայր Խոցադեղին՝ Սիմէոն դպիրն, եւ հարսն Սիմէոնի դպրին Սարայն, որ մեծաւ սիրով ստացան յաղագս յիշատակի հոգւոյն Գոհարին՝ զտեառ նոցին, որ է քոյր Խոցադեղին եւ Սիմեոնին։ Լաւ համարեցան զոտ քան զամենայն պատուականութիւն վայելման աշխարհիս...ետուն գրել զոտ սիրով եւ մեծաւ հաւատով, որոյ տէր աստուած վայելել տացէ Սիմեոն դպրին, եւ դնոզի հանգուցելոյն զԳոհարին ընդ կուսանաց կայանսն գասեսցէ։

Արդ, որք հանդիպիք սուրբ եւ պատուական աւետարանիս ընթեռնելով կամ զպատիւր ղնելով՝ յիսեսջիք ի Քրիստոս Յիսուս դհրաժարեալն յաշխարհէս զԳոհարն, որ ազա հասակաւ չուեաց ի սուտ եւ յունայն կենցաղոյս եւ ժամանեաց ի մշտնջենաւոր քաղաքն՝ ի վերինն Երուսաղէմ, որ է մայր մեր ամենեցուն։ Ո՛վ ընթերցուղք եւ լսուղք յիշատակարանիս, յիշեսջիք ի Քրիստոս զի սմա յիշատակեալն զՇահինշահն, եւ զկողակից նորին զԹագուհին, եւ զնոցին դաւակն զխոցադեղն, եւ զկողակից նորին զՍուսայն, եւ զնոցին դեռաբոյս դաւակն զԳրիգորն, եւ զնորաբողբոջ եղբայր Գրիգորին՝ զՊետրոսն, եւ զվայելաւղ աւետարանիս զՍիմեոն շնորհաղարդ դպիրն...։

Ընդ նոսին եւ դիս՝ ան[արժա]ն ծառայս ծառայիցդ աստուծոյ զՅով[հաննէս] գրիչս, արժանի արարէք յիշելոյ։ Եւ զիմ հայրն զԱ | | | քահանայն եւ զնորին կողակիցն, եւ դուք յիշիք ի յոյսն* բարի, որում փառք յաւիտեանս, ամէն։

* Տպված է՝ «յայսն», ուղղում ենք ըստ իմաստի։

656.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՄԲՈՒՆԱՑԻՈՑ

Երևան 1527 (տես նաև 1302 թ.)

Վայր՝ Ըռոաց աշխարհ

667բ ...Ի թվականին հայոց ՊԻՀ. (1379) կոչեցաւ ի մեծ դիտապետէն հայոց տէր Յովհաննէս կրօնաւոր քահ[անայ]ն. և սուրբ Ցակոբա պահոցն նաւեցաւ ու դնաց ի մայ[րա]քաղաքն՝ի Սիս: Եւ ձեռնադրեցաւ ի մեծ [դիտապե]տէն տէր Կոստընդնոյ արքեպիսկոպոս [ամենայն Ըռո]ոց աշխարհի և Վլախաց: Եւ ի [դառնալ]ն իւրում յաշխարհն, աէր Յոհաննէս [արքեպիսկոպոսն] երեր զղիրքս զայս, որ է Սաղ[մոսի] Մեկնիչ, մեծ նվերք աշխարհիս Ըռոաց, [ի լուս]աւորութի[ւն] մանկանց Սիոնի: Որպէս [սուրբն] Գրիգոր Լուսաւորիչ մեր երեր մեծ պարդեք՝ դնշխարք մեծին Յովաննու և Աթանազինէ[ի] ի լուսաւորութիւն հայաստան աշխարհին, սոյնպէս և տէրս մեր տէր Յոհաննէս՝ զայս հողիարուդ[խ] մատեանս երեր ի լուսաւորութիւն և ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ, եւ յիշատակ իւր և պարէնք յայնմ աշխարհն, նայ և ծն[ողաց իւրոց]՝ հանկուցելոցն ի Քրիստոս, պար[ոն | | | և հեզահոդի կենակց[ին | | | չա Մաթունին, և հարազ[ատ | | | տէր Ավաք սրբասէր կրօ[նաւորին, և Ալեքսիէ քահ[անայ]ին, և պարոն Ուլ | | | ընտա]նեացն իւր՝ Քրիստոս աստուած ընդ | | | ասցէ. և հանկուցեալոց | | | ացի, Քրիստոս աստուած մեր պարոն Էսաւին | | |, Սալվուճչին և այլ ամենայն | | |, ամէն: Եւ գծողի յիշատակ | | | Կիրա՞կ]ոս արեղիս, որ եմ սպասաւոր. | | | տէր Յով]հաննէս արքեպիսկոպոսիս:*

657.

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՒՐԱՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ

Ձեռագիրը. Ms. Arm. E. 36. Տիրայր վրդ. 89.
*Քղթ. 121—122, էջ 1646—1648***

Գրիչ՝ Գրիգոր Տաթևացի
վայր՝ Տաթև

ճա Զոր այսու յուսով տարփացօղ եղեալ սորին ուղղութեան, վերջինս [ի] բանասիրաց և տրուպս պետաց Գրիգոր կոչեցեալ՝ խնդրող

---

* Հիշատակարանը շատ վատ է պահպանված, հնարավորին չափ աշխատել ենք վերծանել անընթեռնելի մասերը:

** Ձեռագիրը, որի մեջ գտնվում է Գր. Տաթևացու սույն հիշատակարանը, ընդօրինակված է 1689 թ. Սարգիս երեցի կողմից:

բանի, ւլոր ի վաղ ժամանակաց տենչացեալ կարօտ էաք, յեղակարծ ժամու գտեալ եղև ի յարկեղս դրոց յեկեղեցւոջ առաքելական աթոռոյն Տաթևու, յորում ժամանակի էր կրկին ընձիւղեալ զառն և զաժան երկաբնակ աղանդն քաղկեդոնի ի կոչեցեալ դեօղն Գռնա, շրջաբնակ գաւառօք։ Եւ մեք՝ դղիւտ սորա ի հրաւիրմանէ հոգւոյն ընկալեալք, առեալ իւրաքանչիւր ոք օրինակեցաք՝ ի վարժուճն ուղղասէր մտաց։ Որոց և ես բստ իմում կարի տխեղծ մատամբ գծագրեցի զսա, առ ստս մեծի վարժապետին իմոյ Յոհաննու Որոտնեցւոյ, սբ և կրկին ընթերցմամբ լուսաւորեալ առաջնորդեցայ ի սմանէ։ Եւ ապա առեալ ընթացաք ի վերոյ ասացեալ գաւառն, և պարսաքարեալ սովաւ հարաք զհայհոյիչն ճակատ, և ցրուեցաւ փաղանկն աղթարմայութեան, և բազում վանորայս առեալ ի նոցանէ եղև ուրախութիւն ուղղափառաց գաւուց սմս բաղումս։ Ծորում և էր թիւ շրջագայութեան տոմարիս մեծի Գ. և ԻԸ. (1379) ամի։

Արդ, յերեսս [անկեալ] աղաչեմ զաստուածասէր պատահօղդ յիշել առ Քրիստոս զքաղմերախտ* առաջնորդն իմ զվերոյգրեալն՝ զՅոհաննէ[ս] Որոտնեցին, հանդերձ ծնօղօք իւր կրկնակի։ Ընդ որով և նշխար շնորհի ձերդ մաղթանաց աղերսի իջցէ ի գերեզման ոսկերաց իմոց և լուացէ զղաղրացեալ վէրս յանցանաց իմոց, թերևս զտից ողորմութիւն յամէնողորմ պարգևողէ աստուծոյն իմոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք, ընդ հօր իւրում և ամենասուրբ հոգւոյն անկէտ յաւիտենից, ամէն։

658.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 9116

Հետ ստացող՝ Սարգիս
վայր՝ Կիպրո՞ս

ա

433բ ... Արդ, ես՝ նուաստ աբեղայ Սարգիս, չողայ յՆրուսաղեմ, և ի ճանապարհին՝ ի Կիպրոս, պատահեաց ինձ աստուածաշունչ պատուական մարգարիտս, և ես զմարմնաւոր դոյս իմ անյապաղ ետու ի զին սորա, յիշատակ ինձ, և ծնողաց, և եղբարց, և ամենայն ազգայնոց իմոց։ Արդ, որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք զմեզ ի Քրիստոս, նաև
434ա զեղբարսս մեր, համայն միաբանիւք սուրբ ուխտիս Անտոնի, ‖ աղաչեմ յիշել ի տէր...։

Գրեցաւ Թվ. ՊԻԸ. (1379), Նոյեմբերի ԻԹ. (29)։ Տարաժամ մահ է, ևս առաւել տղայոց, զոր յուսամք | | |** փուլթով անցուցանել զցասումն պատուհասի յանցանաց մերոց, բարեխաւսութեամբ սուրբ աստուածածնին և ամենայն սրբոց։

---

* Տէրայր վարդապետի արտագրութեամբ՝ «զքաղմամերեախտ» կամ «զքադմաւերեախտ» (լավ չի կարդացվում)։

** Մի քառ անընթեռնելի։

Հետ. ստացող՝ Մկրտիչ

բ

434ա Ցիշեցէք ի Քրիստոս Ցիսուս ի տէր մեր զվերջին ստացաւղ ղրոցս՝ զվճիտամիտ, դիւզահոդի, զկուսակրաւն զՄկրտիչ տրեղայն, որ վաւրագաւղ եղեալ այսմ աստուածաշունչ կտակարանիս, և զամենայն մարմնաւոր զգոյս իւր անյապաղ ետ ի ղրոցս՝ Ի Դ. (24) Ֆլաւրի, ի յիշատակ իւր և ծնողաց, և ամենայն արեան մերձակայից իւրոց՝ կենդանեաց և ննջեցելոց...։

659.

ՁԱՓԱԲԵՐԱԿԱՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 8477

Ցիշատակս սակաւ Ստեփաննոս գծողի յայժ եղկելի վայր՝ Սխգառւ վանիք

132բ Սուրբ երջանիկ տէրդ Ներսես,
Զքեզ տէր ընտրեաց ի յաշխարհէս,
Տընօրինել հայոց հանդէս,
Զեկեղեցի շնորհօք պէս-պէս։
Երկնօրաց նմանապէս,
Ինքն դասուց խորհրդապէս,
Փառս առաքել երկնահանդէս
Տեառն աստուծոյ ի յիւր հօտէս.
Աւրհնել դիրկիչն անհատապէս,
Ընդ հօր և հոգւոյն անշփոթապէս,
Ներմին վեհի մաղթեա պէս-պէս,
Զքեզ աղաչեմ, տէր սուրբ Ներսէս,
Նուաստ ոգի ես՝ Ստեփաննոս,
Մաղթեա վասն իմ միշտ առ Քրիստոս,
Որով սրբի բորբք մարմնոյս,
Ջնջի յանցանք խաւար հոգւոյս,
Սովաւ զարթնուլ ի խոր քնոյս,
Վերաբերիլ ընդ քեզ ի լոյս,
Ի յախջամուղջ տղմէ գրոյս,
133ա Ինձ ի ձեռնտու լինել և յոյս,
Երգել ընդ քեզ զերգս հաճոյս,
Երրորդութեանն ստեղծող ըզգոյս,
Բարւնաբար ծոյլ և հիքոյս,
Լեր նաւակից ընկղմելոյս,
Գոհարանոզ լինել հոգւոյս,
Տեառն արարչին, որ է մեզ յոյս։

Ի թվ. ՊԻՀ. (1379) գրեցաւ, ի յանապատիս, որ կոչի Սխգառւ վանք, ձեռամբ մեղուցեալ Ստեփաննոս չկրօնաւորի, ընդ հովանեաւ

սուրբ Աստուածածնին։ Արդ, աղաչեմ, ով ոք որ հանդիպի սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի սուրբ աղօթս ձեր զմեզուցեալս և զանարժան գծողս զՍտեփաննոս և զծնողսն իմ, զհայրն իմ զԿիրակոս, և զմայրն իմ զՄելէք, և զքեռն զԳիւռէ, և զամենայն արեան մերձաւորս, || և աստուածոդորմի ասելով <և> թողութիւն խնդրեցէք ինձ 133բ
և ծնողացն իմոց...։*

660.

ՄԱՐԴԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՑ ԵՒ ԴՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Թուական 159

Գրիչ՝ Կարապետ

վայր՝ Ապրակունե[ա]ց գիւղ

..., Գրեցաւ աստուածաշունչ դիրքս աստուածաբանութեան Եսայեայ մարգարէին, և սուրբ առ[աքեալին] Պօղ[ոս]ի և սուրբ Թադէոսին Սողոմոնի ձեռամբ Կարապետի անարհեստ ղրչի, ի վայելումն առաքինասէր Թում[այի] քահանայի, և յիշատակ հօրն նորա ծակոր քահանայի, և մօր՝ Աւագուհու, և քեր[ց] նորա՝ Նդիսարէթի և Մարթայի, որք կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի Քրիստոս աստուած, և աստուած զձեզ յիշէ, ամ[էն]։ 312բ

Թվ. ՊԻԸ. (1379) ղրեցաւ, ի դեօղս Ապրակունե[ա]ց, ի դրան սուրբ Սարգսի, ի յաւուրս Մագ[ա]ք[ի]ա ճգնաւորի։

661.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թուական 3330 (տես նաև 1474 թ.)

Գրիչ՝ Ստեփաննոս

ա

Քրիստոս աստուած, որդի աստուծոյ, քո սուրբ յարութեամբդ ողորմեա ստացողի սուրբ աւետարանիս Ըճճատ** քահանայի, և մեղապարտ գրչի սուտանուն Ստեփաննոս քահանայի, և ձեզ։ 73ա

Ստացող՝ Ըճճատ

բ

Զստացաւղ սուրբ աւետարանիս զԸնքճատ քահանայ՝ զպատուելի և զհեզահոգի, յիշել ի տէր աղաչեմ, ծնողաւք, որ մեծաւ յուսով և բազում փափաղանաւք ստացաւ զսայ յիշատակ բարի իւր և հաւրեզ- 259ա

---

* Ձեռագրի վերջում (էջ՝ 149բ—150ա) պահպանվել է գլխավոր հիշատակարանը, որը տարբերվում է բերվածի արձակ մասից միայն գրչության թվականով, այնտեղ կարդում ենք ՀԳթեցի պոռգելից տաս... թվ. հայոց ՊՀ. (1381)ɔ, ուստի պետք է ենթադրել, որ ձեռագրի ընդօրինակությունը սկսվել է 1379-ին և ավարտվել 1381-ին։

** Ստացողի անունը՝ «Ընքնատ» գրված է այլ ձեռագրով և այլ թանաքով։ Ակնհայտ է, որ ձեռագիրը Ստեփաննոս քահանայի կողմից գրված է եղել վաճառքի համար, առանց նախօրոք պատվիրված լինելու։

ըարց իւրոց՝ Խոսրով քահանայիւն, և Մկրտիչ քահանայիւն, և Մելիքոեք քահանայիւն, որ են գնացեալ մահուամբ առ Քրիստոս՝ յոյսն ամե-
259բ նեցուն...: Եւ ով որ զմեզ յիշման արժանի առնէ, Քրիստոս աստուած գինքն իւր երկնից արքայութեանն արժանի առնէ, ծնողաւք և ամենայն զարմիւք, ամէն:

Ի Թուխս Հայոց ի ՊԻՐ. (1379),

662.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Պրոֆ. Դ. Գ. Դորդևևի ձեռագրերից (Թբիլիսի)

...Գրեցաւ ի թվ. ՊԻՐ. (1379), ընդ հովանեաւ սրբոյն Անտոնի ճգնաւորին: Արդ, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք ի Քրիստոս զտատացուղ մատենիս զՍարգիս կուսակրաւն քահանայ հանդերձ ծնողիւք և հարազատ ազգայնաւք, նաև զծողի սորա, և աստուած յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն:*

* Շարունակությամբ կա ինն տող գրություն, որն այժմ ջնջված է: Ընթեռնելի են միայն մի քանի տառեր:

663.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վիննա. 298, 8ուց. Բ. էջ 1098 (տես նաև 1520 թ.)

Ստացող՝ Կոստանդին կաթողիկոս
վայր՝ Կիլիկիա

ա

28բ Նուաստ Կոստանդնաւ կաթողիկոս գտայ ղշարադրութիւնս հայրապետացն Հայոց, գրեալ ձեռամբ սուրբ հօրն մերոյ Ներսեհի արքեպիսկոպոսի Տարսոնի, և եառու գրել ասա, որ է այս։

Ոմն ընթերցող

բ

Ի մեծ թուիս Հայոց ՊԻԹ. (1380) ամի, յօգոստոս ամսոյ ԺԵ. (15), ի չորեքշաբաթի օր հանդեաւ ի Քրիստոս պատուական [կաթողիկոն] Հայոց տէր Կոստանդին երկրորդ Լամբրոնացին։

664.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՑ ԵՒ ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ

Մեքստէխ, Մ. Նշան, № 3, Հա. 1923 թ., էջ 72—74 (տես նաև 1309)

Գրիչ՝ Նահապետ
վայր՝ Մոկաց գաւառ, սուրբ Կանաց վանք

283 ...Գրեցաւ աստուածաբան մարգարէութիւնս Եսայեայ ի սուրբ եւ յընտիր աւրինակէ, ի գաւառս Մոկաց, ի վանս, որ կոչի սուրբ Կանաց, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս, ձեռամբ յոգնամեղ եւ անպիտան ու փցուն գրչի Նահապետի, ի թվականիս Հայոց ՊԻԹ. (1380)։

Աղդ, յիշեցէք ի Քրիստոս Յիսուս զառաջնորդ սուրբ ուխտիս զՏիրացու, եւ զեղբայր իւր զՍտեփաննոս, և զքուերորդին իւրեանց զՅովհաննէս կրօնաւոր, որ եառն գրել զսայ եռայփաթէ սիրով ի վայելումն անձանց իւրեանց եւ յիշատակ հոգւոց իւրեանց եւ ծնաւղաց իւրեանց, զի որ ընթեռնու եւ աւգտի, ասասցէ՝ աստուած թողցէ ղմեղս սոցա, զի եւ ձերն թողցի։ Աղդ, յերեսս անկեալ աղաչեմ զմանկունս սուրբ եկեղեցւոյ, որք ընթեռնուք զպատգամն Եսայեայ մարգարէի, յիշեցէք ի Քրիստոս զառաջին գրողն եւ ղիս, որ յետոյ գրեցի, եւ անմեղադիր լերուք, դի ի ձմերանի դրեցաւ եւ ցուրտ էր տանն։

665.

Ա. ԻԵՏՄԱՆ

Ըրևան 7862

Գրիչ՝ Յովաննես
վայր՝ Խախտեաց գաւառ

330բ ...Գրեցաւ սուրբ աւետարանս թվ. ՊԻԹ. (1380), ձեռամբ մեղսամակարթ և վիճուն դրչի Յովաննես ուսուցչականի, ի Խախտեաց գաւառի, ի սուրբ մենաստանս, որ կոչի Խախճ, || ընդ հովանեաւ սուրբ Առաւածածնի, և Թէոդորոսի, և այլ բազում սրբոց, որ աստ կան։

Աղղ, աղաչեմ | | | զի խոշորութեան և սղալանաց | | | չլինել մեղադիր, զի այս էր կար մեր։

666.

ՄԱՐԴԱՐԷՈՒԹԻԻՆ ԵՍԱՑԵԱՑ

Երևան 8295

Գրիչ՝ Տաւներ

134ա ...Ի՛այց գլուեցաւ սա ի գուռն գամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և Սաղէմա սուրբ Նշանին, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Կարապետին, ի թվականիս Հայկազեանս սեռի ՊԼ. (1381), և ըստ եւթանասնից,* յԱդամա ի Մովսէս ամք ՎՈՋԹ. (3689), և ըստ Հրէից՝ ՍՆԾ՛. (2453), ըստ Երրայեցւոցն՝ ՍՋԾԳ (2753)։ Անդրէաս ասաց մինչև ի ծնունդն Քրիստոսի՝ ՐՈ. (5600), և մինչև ի մեր թուականն
134բ հաւաքեալ՝ ՃՇԾՋ. (6156), յո ‖ րում իննևտասաներեակք** և եւթներեակք, շրջանք և շարժմունք ժամանակաց անսղալ ոլորանելով աւարտին, և Քրիստոսի մարմնաւորութենէն առ մեզ ՌՃՂՋ. (1396).***

Արդ, որ աւգտիք և վայելէք յուսով յաստուածային մատենէս, ով վսեմաճեմ երաստ աստուածասէր խմբից, յերես անկեալ աղաչեմ, մեզաց թողութիւն հայցեցէք յաստուծոյ շնորհազարգ ծերունւոյն՝ Մկրտիչ փակակալին, ղի ջերմեռանգ սիրով և ջաջ հաւատով ետ զսա գրել։

...Այլ և սիմ նուաստութիւնս աղաչեմ յիշել թողութիւն յանցանաց մեռեալ ոգւոյս, և շաղախեալ և ալեկոծեալ մտացս, անառակ գծողիս՝ Տաւների, նաև գծնողն մեր, և զուսուցիչն իմ՝ գհոգևոր հայրն՝ գիմաստունն և գհանճարեղն զտէր Կիրակոսն. և աստուած զձեզ յիշէ։

667.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 1566 (տես նաև 1418 թ.)

Գրիչ՝ Ատոմ
վայր՝ Մաղարդավանք

334ա ...Ողորմութեամբ հզաւրին Քիսուսի սկսա և աւգնութեամբ նորին կատարեցի, ես՝ անարժանս և մեղաւոր զառածեալս և զտրուպս ի յեղբարց Ատոմ, որ ամաչիմ գրիչ կոչիլ, զկտակ մաղթանաց ամենագով սուրբ և հանճարեղ գերդ ականաւոր մեծանուն հաւր Գրիգորի Նարեկացոյ, զոր հոգին սուրբ մարգասիրարար, սակս կենաց ամենից

---

* Ձեռագրում՝ ՀՀ-իցն։

** Ձեռագրում՝ ՀՔԾ. երեակք։

*** Ըստ երեւոյթին գրչական սխալի հետևանքով բնագրում գրված է ՌՄՂՋ. (1296), ուզում ենք՝ ասոնցմով զվելով հայկական ՊԼ. (1381) թվականով։

իւրաքին յորդայորձան սահմանն և կնիք երկնագնաց ճանապարհին հաստատեաց մեզ բարեգործն, և դուռն մտից կենաց սովաւ վարժելոցն։

334բ Աչդ, որ աւդտիք ի սմանէ, յիշեսջիք ‖ նախ և առաջին զմեծ բարեբունապետն Սարգիս, որ զաւրինակս շնորհեաց, և զստացող սուրբ դրոյս զՍիմէոն, և զիւրսն ամենայն՝ ծնողաւքն հանդերձ, Բայց դրեցաւ ի թուա[կա]նիս Հայոց Պէ. (1381), ի մեծ և ի հռչակաւոր վանքս Մաղարդու, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոս նախավկային, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Գէորգա զաւրավարիս և այլ բազում մասանցս, որ կա ի սմայ, ի յառաջնորդութիւն տէր Գրիգորի։ Աղաչեմ զամենիսեան, որք լուսաւորիք յայսմ աստուածային պատուիրանէ, յիշեսջիք զվերոյգրեալս ի սմայ, ի սուրբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր, և զիս՝ զեղկելի փցուն գրիչս, և զիմն ամենայն, և զամենայն երախտաւորսն մեր և զհանգուցիչսն...։

Զեղբայր, խոշորութիւն գրիս անմեղադիր լեր, տեղս չոէ էր ու ես անձամբ տկար, լուր հանապազ զելն տեսան[է]իւ։

668.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Մաքսուգ. ծուց. Ագուլիսի, 26, Արաբաս, 1911 թ., էջ 849

Գրիչ՝ Ստեփաննոս

վայր՝ Սըխգաու վանք, ճանդէպ Վարագայ

ա

...Ի թուականութեան Հայկազեան տոհմիս տոմարիս Պ.-երրորդի Լ.-երրորդի (1381), ես՝ անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ Ստեփաննոս անարժան չկրաւնաւոր, գրեցի ըստ իմում կարութեան և կարգեցի ի դէմս քարտենի, ի յանապատիս, որ կոչի Սրխգաու վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որ է հանդէպ Վարագայ աստուածարնակ լերինն, ի խնդրոյ երջանիկ, առաքինասէր և պատուական կրօնաւորի Կարապետի, յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց՝ հաւրն իւր Զաքարիայի և մայրն իւր Թամթայի, և հարազատ եղբաւրն իւր Մկրտչի, լինել նմա յայսմ աշխարհիս առողջ կենաւք և յերկար ժամանակաւք...։*

Հետ. ստացող՝ Գրոց

բ

Գրոցո** զայս գիրքս, ի Բաբերդոյ գերութիւնն, ազատեցի ի տաճկի ձեռացն, ով որ կարդայ աստուած-ողորմի ասացէք Խիրացի աղային և Նանայ խաթունին։

---

* Հիշատակվում են ստացողի բազմաթիվ ազգականները, հետաքրքիր են հետևյալ անձնանունները՝ Ամիր-Լուս (արական), Աւան (աբ.), Սըթլալ (իգական), Ղուէն (աբ.), Բուլղա (իգ.), Ռոնգէզ (իգ.), Սուլթան Նուզդա (իգ.), Ռնդու (իգ.), Գիշուկ (աբ.), Զուրաբիկ (աբ.)։

** Անձնանուն է։

669.

ՃԱՇՈՑ

Երևան 7477

Դրիչ՝ Ստեփանոս
վայր՝ Ղրիմ քաղաք

ա

584բ ...Յիշեցէք ի Քրիստոս, ով եկեղեցական դասք և ամենայն հաւատացեալք, յարժանաւոր և յընդունակ աղաւթս ձեր զստացուղ Ճաշոց դրոյս՝ զծերունի քահանայն զԹադէոս, և զծնաւղսն իւր, զՄօվսէս արեղայն, զԿարապետն, զՅովհաննէսն, զներսէսն, զՀռոտակէսն, զՎրթանէսն, զքոյրն զՍիրմայն, զեղբաւրորդիսն իւր զԱստուածատուր քահանայն, զՅովակիմն, և զԲաւնրաւսն, և զՎարդանն՝ տղայիւք իւսվք, որդւովք, որ են ժառանդողք մատենիս։ Զոր Թադէոս քահանայն յիւր հանգստեան աւրն այսպէս էր հրամայեալ, թէ Ճաշոյ դիրքն կննայ մեր եղբարցն և աղղաց յիշատակ և ի ժառանգութիւն որդւոց Վարդանայ, ձևռամբ և իշխանութեամբ Աստուածատուր քահանային և Յովակիմ բռայիսին, եղբաւրորգեացն իմ՝ զՍարգիսն, զԱրկադէսն, զՀերն, զՄարտիրոսն, զՏիրուհին, զՀռոտակէս քահանայն, զԻգնատոսն, զԴաւիթն, զՍաթէոսն, և զամենայն արեան մերձաւորսն իւր, որ վախեալ են առ Քրիստոս և որ վոխելոց են...։

Կատարեցաւ տառս ի թվ. Պլ. (1381), յաւղոստոս ԻԶ. (26), ի քաղաքս Ղրիմ, առ ոտն սրբոյն Մարգսի դաւրավորի, յեպիսկոպոսութեանն տէր Ստեփանոսի, և յառաջնորդութեան եկեղեցւոյ սրբոյ Յովհաննէս կրաւնաւոր քահանայի, և աթոռակալի այսմ նահանգի՝ բարեխաւս և ուղղադաւան վարդապետի, հո[ւ]սկ յետոյ և զմեղաւոր հողս՝ զՍտեփանոս գրիչ, յիշման արժանի արարէք, թէ [և] ոչ եմ արժանի յիշատակի, և զծնաւղսն իմ՝ զնատեր ժրաջան գրիչ, և զմայրն իմ, զեղբարսն իմ մելանաւորք՝ զԱւետիս, զՅովաննէս, զԳրիգոր եպիսկոպոս, զիոխեալսն ի Քրիստոս, և զքւերսն իմ. եւ որք յիշեն՝ որպէս յիշեն նոյնպէս և յիշին ի Ցխսուսէ, որում վառք։

Եւ խոշորութեան և սղալանաց մի մեղադրէք, զի այսչափ կարացի գրմբել։

ԺԴ. դարավերջի ստացող՝ Սարգիս
վայր՝ Մոդկաց վանք

բ

589բ ...Աղղ, ևս՝ Նուաստս և անպիտան ծառայս զՍարգիս կրաւնաւորս, և զեղբայրն իմ զԴանիել կրաւնաւոր, և զծնաւղսն իմ զՄոզիկն, և զմայրն իմ զՆտիլմելիքն, և զեղբայրն իմ զԳրիգորն, և զներսէս, զՄարտիրոս, և զՍահակն, զՔրիստոսատուր, և զքոյրն մեր զԲանուկն՝ դհանդուցեալսն ի Քրիստոս, բնդ նմին և զմաւրքոյր մեր, որ աւգնական եղև գրոցս։

Աղղ, կրաւնաւորս այս Սարգիս... վասն հոգևոր սիրոյն, զոր ու-

նէր առ աստուած և առ աստուածայինս, զամենայն զգոյս իւր վաճառեաց և ստացաւ զցանկալիս ամենեցուն՝ զՏարոյգիրքս, զաւակ ի Սիոն և ընտանի յԵրուսազէմ, կտակ անջնջելի և արձան անփշրելի, ըստ հրամանի աւետարանին՝ եթէ զամենայն զոր ունէր, արկ գոյիւ. չափ զկեանս իւր...։

Ես՝ Սարգիս արեգաս և գեզբայրն իմ զԻանիկ կրաւնաւոր դրեցաք զՏարոյգիրքս ի հազար սպիտակ, վասն յուսոյ արքայութեան և յիշատակ ննջեցելոց մերոց, և շնորհեցաք մեր վանիցն՝ առ ղրանն սուրբ Նշանին, մականուն Մողկաց վանք, յիշատակ յաւիտենական։ Եւ եթէ ոք իշխանարար կամաւք. լրբութեամբ, կամ պատճառանաւք յանդգնութեամբ ձեռնամուխ լինի զրոցս և յափշտակեսցէ՝ մասն զՅուգային առցէ և բաժին զՅայենին և զխաչահանուացն, և ջնջեսցի անուն նորա ի գպրութեանն կենաց։*

670.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 8352 (տես նաև 1395 թ.)

Գրիչ՝ Յոհաննէս

... Արդ, գրեցաւ սայ ձեռամբ մեզսայներկ և յանյարմար գրչի Յոհաննիսի, ի խնդրոյ սրբասնեալ և անյաղթ փիլիսոփային Յոհաննէս կրաւնաւորին, ի վայելուչն անձին իւրոյ, և իւր եղբաւրն՝ սուրբ քա-
259բ հանայն Ստեփաննոս, և յիշատակ իւր ծնողացն, ‖ հաւրն՝ Աստուածատուր քահանայի, և մաւրն Թագուհի, և զամենայն արեան մերձաւորսն իւր, զտէր Մարգարէն, զՄկրտիչն և զայլսն. զարձեալ, զերիցս երանեալ զրաբունապետն մեր զՍիմէոն, հանդերձ ծնողաւք, որ զաւրինակն շնորհեաց. և զամենայն կրօնաւորսն՝ զԹադէոս, և զՍտեփաննոս, զԱստուածատուր, և զՎարդան, զՄխիթար, և զԹումէն, զՅովաննէս, և զՍտեփաննոս, այլ և Ստեփաննոս հայր վանացս, զարձեալ զՍիմէոն՝ զփոխեցեալն ի Քրիստոս, և զամենայն հաւատացեալս ի Քրիստոս աստուածմեր, ընդ նմին զանհարմար գրիչս զՅոհաննէս և զիմ ծնողսն, և որ զմեզ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Եւ ասացէք ուղիղ սրտիւ երանի որում թողութիւն և զայլսն։ Ի թվ. Պլ. (1381)։

671.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 1136 (տես նաև 1399 թ.)

Գրիչ՝ Սարգիս

221բ ... Գրեցաւ մեկնութիւն Արարածոցս ձեռամբ մեղապարտի Սարգսի սուտանուն քահանայի..., ի թվաբերութիւնս Հաոց Պլ. (1381),

* Ձեռագրում կան նաև 1505, 1532 և 1587 թվականներից նվիրաբերական բովանդակությամբ հիշատակարաններ։

գրեցաւ հրամանք Մովսիսի սուրբ մարգարէի, Քրիստոս աստուած ողորմեցի Յոհաննէս արեղայի ծնողացն, որ զօրինակս շնորհեաց Յոհաննէս հոգւո որդի էր Յոհաննէս վարդապետի և յետո վարդապետեցաւ և ինքն։

672.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 8386

Գրիչ՝ Պետրոս

313ա ...Ի թվականութեանս Հայոց ՊԼ. (1381) գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ անարժան իրիցու Պետրոսի, ի խնգրոյ պատուական և ընդրեալ քահանային Ստեփաննոսին, և ի յիշատակ և ի վայելումն աստուածատուր զաւակացն՝ Մխիթարին, Մարգարէին, Դաւթին, Յովանիսին և ամենայն զարմից իւրոյ, ամէն...*

673.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 7447 (տես 1388 թ.)

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ղրիմ

494ա ... Այժմ աղաչեմ զամենեսեան, զդաս լուսերամից, որք հանդիպիք այսմ աստուածային խրախճանութեան, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զփափագմամբ զստացողն սորա...**

494բ Նաև, թէ արժանի համարիք, զանարժանս և զստոնուն քահանայ զԿարապետ՝ գծողս սորա, և զծնողսն մեր՝ զհայրն մեր զԱռաքել, և զմայրն մեր զՈսկիտեկ [յիշեսջիք]...։

Կատարեցաւ սա, որ կոչի Տարոյգիրք ձեռամբ յոգնամեղ Կարապետ քահանայի, ի թվականութեանս Մեծաց Հայոց ՊԼ. (1381), առ ոտս սուրբ Երրորդութեանն, աւարտեցաւ սա յամսեանն յունիս ամսոյ Զ. (6), և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն։

---

* Շարունակության մեջ գրիչը խնգրում է հիշել ստացողի և իր բազմաքանակ ազգականներին։

** 12 տող գատարկ է թողնված ստացողի և նրա մերձավորների անվանց գրանցման համար։

674.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՐԷՈՒԹԵԱՆՆ ԵԶԵԿԻԷԼԻ, ԿԻՒՐՂԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ, ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Օքսֆորդ, Ms. Arm. E. 35, Տիրայր վրդ. 88, Քղք. 121, էջ 1632—1635 (տես նաև 1405 Ք.)

Դրիչ՝ Յոհ[աննէս]
վայր՝ Նաղդեպ Ոստան Բազաբի

ա

186ա ...Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսրբոցս զայսոսիկ մեկնութիւն, զոր արարեալ է սուրբն Կիւրեղ Աղեքսանդրու հայրապետն և տիեզերայոյս վարդապետն եկեղեցւոյ սուրբն Եփրեմ Խօրին Ասորիճ՝ զմեկնութիւնս Եզեկիէլի մարգարէի։ Ընդ նմին և զմեկնութիւն Դանիէլի մարգարէի, զոր արարեալ են սուրբ հարքն և հայրապետքն՝ Եփրեմ, Հիպոլիտեայ, Ստեփանոս. զորս վերստին դարձեալ հաւաքեաց ի մի զամենեսեան զսոսայ սուրբ վարդապետն Վարդան, և առատացոյց լուսաւոր բանիւք, և եթող անչնջելի յիշատակ իւրն ե արեանաուացն, և ետ ի վայելս մանկանց եկեղեցւոյ։

Սոցին վախճոզ եղեալ ես՝ ապիկարս և յետնեալս ի մանկունս նոր Սիոնի, Յոհ[աննէս], և գծագրեցի մեզսամած մատամբ իմով,* հրամանաւ սուրբ բարեացեացն մերոց Յոհաննիսի և Կիրակոսի, որ կան բնակեալ ի սուրբ և հռչակաւոր ուխտն, որ կոչի Սուրբ Խաչ, ի գաւառին, որ յորջորջի Սըպատկերտ, հանդէպ քաղաքին Խիզանայ։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք լուսաւորիք մակացութեամբ, ղերանելի վարդապետքս զՅոհ[աննէս] և զԿիրակոս, առաջի գործառութեան ահաւոր և սարսափելի գենման որգւոյն աստուծոյ յիշեսջիք։ Ընդ նոսին և զարտասանութիւնս ամբասիր** հնգից բազմախոնջ ձեռին Յոհ[աննիս]ի, որ գրեցի փափաքելի և տենչալի սրտիւ, յիշատակ ինձ, և ծնաւղաց իմոց, և ամենայն արեանաուացս, այլ և վարժարան ինձ, և եղբարցն իմոց՝ Յակոբ կրաւնաւորի, և այլոցն, ե որոց հանդիպի զկնի մերս։

Դարձեալ, կրկին աղաչեմ յիշման արժանի առնել զամենայն վերոյգրեալքս ի սմայ, ես առաւել զՅոհ[աննէս] կրաւնաւորս, որ սիրեաց և ընդունեցաւ և օգնական եղև <և> զօրինակն շնորհելով, այլ և զեղբայրն իւր զՍտեփանոս կրաւնաւոր՝ զփոխեալն ի Քրիստոս յայսմ ամի, որ բազում տրտմութիւն եղև եղբօրն և ամենայն սիրե-

* Ձեռագրում «իւրով»։
** Ձեռագրում «համբասաբ»։

լեացն։ Նայ և Մկրտչին, որ պատրաստէր զհացն, և Վարդան քահանային, որ զընակութիւն շնորհեաց, և ամենայն միեղէն եղբարցս, որ ի սմայ ժողովեալ են։ Եւ ղթուամայ կրաւնաւորս, որ զաւրինակն շնորհեաց ղԴանիէլին։* Աղաչեմ յիշել զամենայն երախտաւորսն մեր՝ զհոգևոր և մարմնաւոր, և յիշելոցս և յիշողացդ ողորմեսցի տէր Յիսուս Քրիստոս, ամէն։

Արդ, ըրեցաւ սայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սըրբոյն Գէորգա զօրավարին, հանդէպ Ոստան քաղաքի։ Որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով, խոշորութեան և սխալանացն անմեղադիր լերուք, դի կար մեր այս էր։ Ի թվականին Հայոց ՊԼՄ. (1382)։

Հետ. ստացող՝ Զաքարիայ

բ

187ա Ջստացող գրոցս Զաքարիայ վարդապետս, և զծնաւղսն իմ, և զեղբարսն, և զամենայն արեան մերձաւորս իմ՝ զկենդանիս և զհանդուցեալս ի Քրիստոս, յիշեցէք ի տէր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։**

675.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 7601

Գրիչ՝ Գեորգ
վայր՝ Երուսաղէմ

94ա Ցամի ութհարիւր Հայոց Թուի
Եւ յերեսուն սկսեալ և մի (1382),
Ես Գեորգ նւաստ, մեղաւք ի լի,
Եւ ծառայ ծառայիցդ Քրիստոսի,
Եկի ի տեղիքս այս ցանկալի,
Ի դերեզման տեառն անմահի՝
Ցերուսաղէմս պանծալի
Եւ ի քաղաք մեծ արքայի։
Արդ, դուք, որք դայք զմեր կնի
Եւ հանդիպիք սմին իրի, յիշեցէք ի Քրիստոս զանարժանս Գեորգ և զծնողսն իմ՝ զԱռաքել քահանայ, նաև զամենայն արեան մերձաւորսն՝ եղբարբք և զարմիւք, որք կարդայք կամ աւրինակէք, և դուք յիշեսջիք։ Նայ և զեղբայրս մեր զՅսայի*** յիշեսջիք առ տէր Յիսուս, հանդերձ ծնողիւք, որ աշխատեցաւ ի Թուխտս և ի Թանաք և ի ծաղիկ, բայց ևս մեղապարտ ի յայլակերպութենէն ի հետ դրեցի, ոհ։

---

* Խոսքը Դանիելի մարգարեության մեկնության գաղափար օրինակի մասին է։

** Ուշ հիշատակագրության ժամանակն անհայտ է. գրված է բոլորագրով։

*** 187ա էջում, խորանի մեջ, ծաղկող Նսային գրել է «Յեսայի՝ ղծաղկող սորա, յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեքս»։

676.

ՄԱՏԱՐԱՆ

Երեան 4171 (տես նաև 1411, 1650 և 1727 թ.թ.)

Հետ. ստացող՝ Էլբեգի

3բ *Արդ, ես՝ նուաստ ծառայս աստուծոյ Էլբեգի տեսի զսուրբ աւետարանս ի ձեռն այլասեռից ի գերութիւն կրկին անգամ. և ես, յոյժ զառնացեալ և հեղցամղցուկ սրտիւ տոչորեալ, բազում աղերսանօք և սէր ցուցանելով, <և> ետու Ճ.(100) դ[ահե]կ[ան], այլ և թափեցի զտիրական հրամանքս, յիշատակ ինձ, և ծնաւղացն իմ Բուդիկա, և մաւրն իմոյ Գոհարիկ, ի վայելումս որդո իմոյ Ներսես քահանաի, զոր տէր աստուած վայելել տացէ խորին ծերութեամբն, և որք այլ աշխատեցան ի տուրք և ի գին սորայ՝ Խէրադին ներկարարն, և մայր՝ Թաջխաթունն, և Գոհար-Խաթունն, և դուստրն իւր՝ Նասրաթ: Աղաչեմք զձեզ զասք սրբալոյսն և դլուսերամ քահ[անայիցն], յորժամ կարդայք առաջի սուրբ սեղանոյն. յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս դմեզ, և զերախտաւոր զհոգևոր հայրն մեր զտէր Սահփանոս, և զորդին իւր զՅակոբ քահանայ, դի յոյժ կամակից եղեն և առաջնորդ սուրբ աւետարանիս, և զաւակին իմ Ներսեսին ուսմանն, զոր տէր աստուած վարցայհտտոյց լինի հարիւրապատիկ և ի հանգերձելումն, ամէն:*

Թվ. ՊԼԱ. (1382):

677.

ԳԻՐՔ ՅԱՂԱԳՍ ՎԵՑՕՐԵԱՑ ԳՈՐԾՈՅ ԱՐԱՐՋՈՒԹԵԱՆ, ԲԱՐԹՈՒՂԻՄԵԱՑ

Երեան 1656

Գրիչ՝ Մխիթար

111բ *Զտղքատս և զունայնս ի մարմնոյ արդեանց և առաւել ի բարի գործոց զՄխիթար բանի սպասաւոր յիշման արժանի մաղթեմ, բանի սիրողք, դի ի գիշերի և ի տըւրընջեան թաւնաբար և երկիւղիւ սակագրեցի, վասն տառապանաց աղքատութեանց, որ կայ յերկար ի մարմինս սեռաբար: Եւ անմեղադրութիւն խնդրեմ խոշորութեան և սխալանաց, դի վասն կարեաց և անձեռնահաս լինելոյ այսչափս ժամանակի, ի Թվ. ՊԼԱ. (1382), Լ. (30) օր:**

* Ձանկանում է ասել, որ ձեռագրի ընդօրինակությունն ավարտել է 30 օրվա ընթացքում (ձեռագիրը բաղկացած է 111 թերթից=8,4 տպ. մամուլ):

678.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՏՈՐՈԴՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՑԱՂԱԴՍ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԳՐՈՑՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ, ՑՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՑՒՈՑ

Երևան 5931 (տես նաև 1444 թ.)

Գրանցող և խմբագրող՝ Գրիգոր Տաթևացի

ա

119բ *Ի թուականութեանս Հայոց երկքառից և հարիւրոց և երից տասանց երկ թուոց (2.4.100+3.10+2+551=1383), հաւաքեցաւ լուծմունք սակաւ ինչ ստորոգութեանց և պերի արմէնիաս գրոցս, մատամբ տխեղծ և անարհեստ ձեռին նիրհուն հակողի, բանին խնդրողի, ի լուսաւոր բանից մեծ վարժապետին իմ Ցովհաննու Որոտնեցւոյ, առ. ի վարժուհի աժխոյժ մտաց սւսուհասիրացդ Աղդ, թէ գտցի ինչ ի սմա ըստ կամաց ձերոց՝ տեառն չնորհք և վարժապետին իմ, իսկ նուաղն՝ մերումս տկարութեան, զի միայն վոյթ ունէի ոչ թաէչել բառ ինչ կամ բան, այլ և զպակասն լնուլ և զաւելորդն կշռել։ Եւ սզալանաց մերոց պարտեաց թողութիւն խնդրել աղաչեմ...որ և մաղթեմ զգաղափարօդագ գրել և զսակաւ յիշատակս, զի և դուք գրեսջիք ի գլորութիւն կենաց, ամէն։*

Այլ և զհամշիրակն եղբայր՝ զԳէորգ վարգապետն եզնկացի, որ աշխատեցաւ սրբագրելով զսա յիշեսջիք ի տէր, աղաչեմ։

Գրիչ՝ Յոճաննէս

բ

Այլ և զՅոճաննէս վարդապետ՝ զգրող այսմ տառի, գրեա աստուած ի | | | որդոյ քո միածնի, զվարդապետն աստուածաբնակ ուխտին Մեծոփայ վանից վանականի, ամէն։

679.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փերզ. 6273, էջ 169 (Ղալաթիա)

Հետ. ստացող՝ Սարգիս
վայր՝ Տրապիզոն

ա

Ես՝ մեղուցեալ ծառայս աստուծոյ Սարգիս, որդի Մանկաերիճ, բնական ի խախտեաց գաւառէն, ի Բաբերդու, ի զեղչէն Գոգուայ, ի թուիս ՊԼԲ. (1383), որ Փալատ դանն զկաֆան հզարկ և զինչ ելն (՞) և

զսուրբ աւետարանն զերի տարան ի յԱւրարազարե, ի յէկիկեզն, ես՝ Սարգիս և Յովաննէս՝ Մեհրազի որդին, հանգիպեցաք ի հաւն,* և գնեցաք զսուրբ աւետարանս, ամէն խա[ր]ճով նստաւ ինձ և Յովաննիսին ՃԽ. (140) սպ[իտակ]. ես զՅովաննիսի բաժինն ի յինքն վճարեցի և սուրբ աւետարանս եղաւ ինձ, յիշատակ հոգւոյս և մարմնոյս, ի թուին ՊԼԴ. (1384) բերի ի Տրապիզոնս և ետու ի Զարխափան սուրբ Աստուածածինս։

Հետ ստացող՝ Նարատին
վայր՝ Աւթուզի վանք

Բ

Նոյնօրինակ և ամենագովելի այս Նսարսաինս մականունն Նիկոլայոս՝ ստացաւ զսուրբ աւետարանս...և ետ ի վանս Աւթուզին, որ է յանուն սուրբ Կարապետին և Մկրտչին Յովհաննու։**

680.

ԿԱՐՈԶԳՐԻՐԻ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ

Երևան 2259

Գրիչ՝ Սարգիս
վայր՝ Մակու

297բ ...Արդ, գրեցաւ քարոզգիրքս այս ի մենաստանիս ի Մակու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի, կա[յ] և առ ոտն կացեալ մեր իմաստուն հոետորի Կարապետ րաբունապետի, ձեռամբ նուաստ և տրուպ Սարգսի սպասաւոր[ի] բանի, ի նեղ և ի գառն ժամանակի, զի սաստկացեալ էր մահտաբաժանն վասն ծովացեալ և բազում մեղաց մերոց, ի թվականիս Հայոց ՊԼԲ. (1382), այլ զրաւ եղև ի միւս ամն (1383)։ Արդ, որոց և հանդիպի ոա, գնելով կամ օրինակելով, յիշեցիք ի մեղսաքաւիչ և ի մաքրափայլ յաղօքս ձեր զիս՝ զգծոգս զՍարգիս վարդապետ, որ բազում և գառն աշխատանօք գրեցի զսա, մի՝ զի անվարժ էի գրոյս, և միւս՝ զի ժամանակս ձեռք չէր ի տալ, այլ և ծննողսն իմ զՅովաննէս և զելխաթուն, և զեղբարսն իմ՝ զԹումաշան և զՎարգանշան, և զամենայն արեան մերձ[աւ]որքն իմ, այլ և զՄաթէոս վարդապետն, որ օրինակն անխնա կու շնորհէր, և Ղրիստոս աստուածզյիշողքն յիշէ յարքայութիւնն, ամէն, եղիցի, եղիցի։

* Իմա՝ հօն—այնտեղ։

** Նարատինի հիշատակարանը անթվական է. հայտնի է սակայն, որ նա տէր է դարձել ավետարանին 1383 թվից տարիներ առաջ։ Ըստ Փիրզալամյանի Աւթուզի վանքը գետք է գտնվի Կաֆայում։

681.

ԱԽԵՏԱՐԱՆ

Հալէպ, սր. Մնկ. Ե, Սիւրմ. Ա. էջ 79 (տես նաև 1506 Թ.)

Նորոգող՝ Արիստակէս Սեբաստացի
վայր՝ Կամախ, Աւաք վանք

614 Եւ արդ, սուրբ աւետարանս այս, վասն անարժան շուշափողաց, անկեալ էր ի ձեռն այլազգեաց, զոր ի տեղիս հատեալ էին և կորուսեալ՝ ի դատապարտութիւն անձանց իւրեանց։ Իսկ ոմն քրիստոսասէր եւ յաստուածահաճոյ ժողովրդոց՝ Առաքել անուն, ի Կամխա ներքին երկրէն, ի գեղ Կախմխոյն, ազատեաց զսուրբ աւետարանս ի յայլազգեաց, և զպակասն գրել ետ և եղ ի գեղ Կախմխին, ի դուռն սուրբ Աստուածածնին, առ ի յիշատակ իւր, և ամուսնոյն իւրոյ Պլաւրին, և զաւակաց իւրոց՝ Յովսէփին, Պաւղոսին, Զաքարիին, և դստերաց իւրոց՝ Գոճարին և Բէլուճոյ, այլ և հաւրն իւրոյ Յովսէփին, և մաւրն Մեծխաթունին, և մամուն Ըռաճայիլ, նաև ամենայն մերձաւորաց՝ պարոն Առաքելին, և իւր լիցի բարեխաւս սուրբ աւետարանս առ Քրիստոս՝ ի թողութիւն մեղաց նոցա. եւ այլ ոչ ոք չունիցի իշխանութիւն ծախել կամ գրաւել զսուրբ աւետարանս ի յիւրոց, կամ յաւտարաց, կամ գեղացի։ Իսկ եթէ յանդգնի ոք գաղտ կամ յայտնի և հանէ զսա ի գրանէ սուրբ Աստուածածնին՝ ընդ բանադրանաւք սրբոց հարցն եղիցի, աստ մի հատսարակեսցէ զաւուրս իւր, և ի հանդերձեալն ընդ Հրէից եղիցի մասն նոցա։ Բայց թէ ահ լիցի կամ խռովութիւն, խնամով պահեն գեղին աւագերէցն և տանուտէրն, ի յամրոց ղրկեն, և ի հութ տեղաց ի զատ պահեն, և փոխանակ յաշխատանաց վարձս յաստուծոյ և ի սուրբ աւետարանէս առնուցուն՝ ընդ միոյն հարիւր։ Այլ և յիշեսջիք զայժմու ժամանակիս քահանայքն, որ ի յաստուածապահ գեղս յայս կան՝ զծերունի Սրեւան երէցն, և զՊետրոս աւագերէցն, և զՅովճաննէս նորընծայն, և զբարեզարդ տանուտէրքն՝ զՅոհաննէս և զՊարոնակն, և զայլս ամենայն։

Բայց գրեցաւ պակասորդ սուրբ աւետարանիս և կազմեցաւ ի մեծափառ սուրբ ուխտս, որ կոչի Աւաք վանք, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Կարապետին, և սրբոց Առաքելոցն, ձեռամբ իմով՝ Արիսաակէսի Սեբաստացոյ, վերջին սպասաւորի սուրբ ուխտիս։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան, զսրբամիտ ընթերցողսդ, յիշեսջիք զպարոն Առաքելն և զիւրսն ամենայն, նա և զիս ես՝ զծրող սորա, և զամենայն եղբայրսաւորսն մեր, զերջանիկ բարւոնին իմ գԳեորգեոս, զվերափոխեալն առ Քրիստոս, զկենդանիսն և զփոխեցեալսն առ Քրիստոս...։

Բայց եղև զրաւ սոչա ի թվ. ՊԼԲ. (1383), աւգոստոս ամսոյ ի մինն, ի վաոս Քրիստոսի։ Ո՛հ ոհ, զառն ժամանակիս, զի յամենայն կողմանց աւերք եղև և մահտաբաժամ։

682.

ՃԱՇՈՑ

Երևան 1656 (տես նաև 1365 և 1560 Թ.Թ.)

Հետ. ստացող՝ Ուլուպեկ
վայր՝ Գրիմ

506ա Զվերջին ստացաւղ սուրբ գրոցս զպարան Ուլուպեկն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց և եղ յիշատակ ի սուրբ Սարգիս յեկեղեցիս, յիշատակ իւր, և ծնաւղաց իւրոց, և եղբարց, հօրն իւրոյ պարոն Շահինշայիհ, և մօրն Ջումլայ խաթունիհ, և եղբարց իւրոց՝
506բ Տուկալպեկիհ և Նիկողո ‖ սիհ...։

Ի թուիս Հայոց ՊԼԲ. (1383) և դեկտեմբեր ամսոյ ի Ա. (1) գնեց պարոն Ուլուպեկն զսուրբ մատեանս՝ Ռ. (1000) սպիտակ, ի յԱւետիքեհ, և է այս Աւետիքս եղբայր Ցովել աբեղին, և սոքա որդիք Ցովաննէսիհ, և նա Սարգիս քահանային, և են սոքա յազգէ Նաւեբանց։*

683.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 3303 (տես նաև 1300, 1367, 1553 և 1087 Թ.Թ.)

Գրիչ՝ Առաքել
վայր՝ Ապաւուենաց վանք

120բ Քրիստոս աստուած, ի քո միւսանգամ գալըստեանն ողորմեա Հռեփսիմեայ և ծնաւղաց իւրոց, հաւրն Վարդերեսին և մաւր իւրոյ Ճաւհարին, և Թող զիւրեանց յանցանսն, զի յամենայն ժամ ողորմութիւն կառնէ վանաց՝ ի ձէք և յամենայն պէտս, և ի գիր զիր մեծ խալկինն ի վանքս.** և այժմ աղաչեմք զձեր սրբութիւնդ, զի ով ոք բնակի ի սուրբ ուխտս՝ յԱպաւուենաց վանքս, և պատարագէ զՔրիստոս ի սուրբ Նիկողոսի տաճարս, ի ժամ սուրբ պատարագին, յիշեցէք զՀռեփսիմեհ, զՎարդերեսն և զՃաւհարն, և մեղաց Թողութիւն խնդրեցէք յաստուծոյ, որ պարգեւէ զարքայութիւնն նոցայ և ամենայն հաւատացելոց։ Գրեցաւ ի թվիս ՊԼԲ. (1383), յիշեցէք զգրիչս զԱռաքել սարկաւագս։

Հիշատակարանը եղծված բնագրից ընդօրինակել է 1560 թվականին ձեռագրի կազմող Բալդէյ Նազաշ սարկավագը։

** Անհասկանալի այս բառերը գուցե կարելի լինի սրբագրել այսպես՝ էն եղիր գիւր մեծ խալխն ի վանքս։

684.

Ճ Ա Շ Ո Ց

Եբևան 7402

Գրիչք՝ Յովճաննէս և Մարկոս
վայր՝ Կաֆայ

516բ ...Եւ մեք՝ յետնեալքս՝ Յովճաննէս երէց աղայ հասակաւ, և ես՝ Մարկոս թարմատար կոչեցեալ, անուամբ և ոչ գործով ի կարգ իրի-
ցութեան, անպարապ ձեռնարկեցաք ի սա. ի ծննդենէն փրկչին մինչ ի յարութեան զատկի գրեաց Յովճաննէս վերոյգրեալ երէց, յոյժ աշ-
խատանաւք, երկրորդ՝ ի ծաղիկ և ի կապ, և ի յարութենէն փրկչին մինչ ի վերջն՝ ես անարժան Մարկոսս գրեցի, հրամանաւ և ծա-
517ա խիւք եղբաւր || մերոյ Մարտիրոս քահանայի՝ վեհականի և ճշմար-
տի, որ ի կանուխ ժամանակաց հետամուտ եղեալ փափագելի տենչ-
մամբ իւրով սիրոյ սորա, ետ գրել զսա անպիտան ձեռացս մերոցս,
որդւոյ իւրոյ Յովճաննէս երիցու՝ գրչի, և յետնեալ անպիտան Մար-
կոս գրչի, ամենայն հոգաբարձութեամբ, անհանդիստ հոգւովք երկնեալ
ի քառակս եղանակս՝ զտիւ և զգիշեր, ամենայն աւգնականութեամբ,
եւս առաւել աղաւթիւք և խնդրուածովք, վասն առաւել և չերկն սի-
րողաց սմին, յորդորելով զհոգեոր և զխոստովանող զորդիսն իւր և
զհաւատարիմսն յուսով՝ զերեսին եղբարսն հարտզատսն՝ զՅովաննէս
և զՄէլիքսէթ և զՄկրտիչն, ի հալալ արդեանց իւրեանց ամենայն
ծախիւք յիշատակեցին ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ անջնջելի:

Արգ, խնամաւք խնամակալ էին եղև դրաւ սորա ի ժամանակս
յոյժ անբարի, զի վասն ծուլացեալ մեղաց մերոց կողմս Հիւսւսական
խրատուք չարին ի գումարի գոլով, իշխանք և հազարապետք զմի-
մեանս սատակեն. կամք մնալով անյիշաչարին և անոխակալին՝ այց
առնել համայն իւրայոցս, զի մի զերեալքս և վայրատեալքս ի վայրս
նժդեհութեան կրկին կողոպտեսցուք մեղաւք մերովք...:

517բ ...Կատարեցաւ ի թուաբերութեանն Աղքանաղեան և Ցարեգա-
կան տումարի ՊԼԴ. (1384), և ըստ նորում շրջանի Ց. (300), և ի
գալստենէ կենարարին ՌՁՁՀ. (1386), և յելից Ադամայ ի դրախ-
տէն ՃՈՓ. (6809): Ի հայրապետութեանն տեառն Թեոդորոսի և յե-
պիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի՝ տղայ հասակաւ, և յաթոռակա-
լութեանն տէր Յովաննիսի Սեբաստացւոյ՝ իմաստնոյ և խոհեմականի,
ի թագաւորութեանն մերոյ՝ տէր Թագաւորեսցէ և խնամէ, և յաշ-
խարհակալութեանն տաճկաց Թաւխթամիշ զանի Ապու աղղի, յաշխար-
հիս Հոռոց և ի յերկիր Խրիմի, ի հոյակապ և ի հռչակաւոր մայրաքա-

զաքիս, որ կոչի Կաֆայ, ընդ ափն ծովու, Լաղինացւոց իշխանութեանն, ընդ հովանեաւ սուրբ Ցակովբա Մծբնայ հայրապետի։ Եւ որ սրտի մտաւք և յաւժարական սիրով յիշեսցէ զյիշատակեալքս ի սմայ յիշեալ [լեցի] և նա ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։ Եւ որ հաւատով զամէնն ասասցէ, և նմա ողորմեսցի Քրիստոս աստուած ի միւսանգամ գալստեան իւրոյ, որ է աւրհնեալ յաւիտեան։

Եւ մի ոք անաւաղ շաւշափեսցէ զսա կամ ի գետնի զնիցէ, այլ զգուշութեամբ սպասաւորեսցէ սմա, երկու կամ երիւք դաստառակաւ, զի զգեցուսցէ զնա զգեցուցանաւզն Աղամայ, որում փառք յաւիտեան, ամէն։

685.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վէն. 400, Տաշ. Ցուց. էջ 934 (նաև 1315 և 1650 թ.թ.)

Հետ. ստացող՝ Սարգիս
վայր՝ Օշական՞ե

328ա Ի թվականիս Հայոց ՉԼԴ. (1384) ես...Սարգիս եւ ամուսին իմ Ալթաղաճ, ի ժամանակիս յորում բազում նեղութիւնք...եղեւ աշխարհիս Հայոց, որ բազ | | | եկն եւ աւերեց զամենեսին։ Ի յայսմ ժամանակիս սուրբ օճտարանս ի գերութեան էր յառ Թուրքմանին եւ | | | ի մէջ եմուտ եւ չկարացին առնուլ։ Ես աւաք Սարգիսս բազում չանիւք աշխատեցայ զիմ գլխոյնին (՞) Դճ. (400) դ[ահե]կ[ա]նի, ու Ա. կապոց ճ. (100) գ[ահե]կ[ա]նի՝ տվի ի յիմ հալալ արդեանց եւ գնեցի զսուրբ աւետարանս, յիշատակ ինձ եւ ամուսնի իմոյ Ալթաղիճ, եւ ծնողաց իմոց Հեղուին, եւ. Արուսխաթունին, եւ իմ սրտի աւժարութեամբս ետու զայս ի գերեզման սուրբ Մեսրոպ վարդապետին, եւ քահանայքն խոստացան տարօրն Ի. ժամ. Ա. յաւուր յայտնութեանն, եւ Ա. յօւր յարութեան...։

686.

ԳԻՐՔ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ԹՈՎՄԱՑԻ ԱՌՈՒԻՆԱՑԻՈՑ

Երևան 68

Վայր՝ Նախիջևա՞ն

ա

29ա Երկիրս զառն է և շնոր,
Սիրտս տրտում է և ժխոր,
Ցիմ բնկերացն եմ ես մոլոր,
Վասն այն կու գա զիրս խոշոր։

Բ

51ա Ժուղլ* խիստ է և ժխոր,
Երկիրս չար է շմբնղոր,
Աստուած առնէ շուտօվ անգորը,
Որ ազատիմ ի ծօվոյս խոր։

Գ

103ա Ի հայոց ՉԼԹ. (1484). Սալիբազեցի Սարսուն ֆըա Տերունական խոստովանահայրն կախուեցաւ։

Դ

109ա Մեծ հոգս եղև ինձ այս տարի,
Մահտարաժամս յերկիրս կու ընկնի,
Նախիչևան քաղաք կու անցնի,
Կու մեռանին շատ դարիպնի։

Ե

170ա Աստուած ողորմի Վախախին, ամէն։

Գ

186բ Ի տօնի սուրբ Թօմայի
Վարդապետին Աք[ու]ինացի,
Ծրա Ջուանե առաքի
Առ ժողովուրդն Գողթանի.
Ցետև նորա խիստ շատ լացի,
Աստուած նորա առնէ բարի։

687.

Տ Ի Մ Ա Ր

Թվական 0815

Համբագրող և գրիչ՝ Յոհաննէս

8ա Գրեցաւ տումարս, որ է ընթացք արեգականն, զոր արարեալ է ումեմն իմաստակի՝ Սարգիս փիլիսոփայ, բազում աշխատանաւք, յաղագս դիւրահաս և հեշտագիւտ լինել ուս[ու]մ[ն]ասիրաց և տումարագիտաց՝ մանկանց եկեղեցոյ, որք աւգտիք և վարժիք ի սմանէ և համաւբինակէք, յիշեցէք յաղաւթս ձեր զպատճառ սորայ զՍարգիս փիլիսոփային։

Եւ զիս՝ զմեղաւոր հոգս՝ զգրիչ սորա զՅոհաննէս յանցաւոր, որ բազում փափագանաւք ի խնդիր եղէ բանիս իմաստութեան, և զտի զաւբինակն առ քահանայի միոջ Ներսես անուն կոչեցեալ, և առեալ զազափաբեցի Եւ ըստ իմում տկարութեանս և սակաւ գիտութեանս յաւելի ի սմա

* «Ժուղլ» նշանակում է «գրություն, համմուկ»։

ղժամք գիշերին, և դմասունք նորին, և դամիսք Եբրայեցւոցն և դՄարկաւագին, և զանփոխ եղանակքն, և զմոլոր աստեղացն զտիպսն և զանուանս՝ յիւրաքանչիւր տեղիսն, և զկենդանակերպսն՝ ըստ աղգաց, և զէ. (7) զաւտեացն զտիպսն և զանուանքն։ Վասն զի Սարգիս փիլիսոփայն անփոյթ էր արարել, աւելորդս համարելով։ Եւ. ինձ յոյժ պիտանի եղև, զի շնորհաբաշխ հոգին, որ զրազումս նմա յայտնեաց, նոյն ինքն և զսակաւս մեզ բացայայտեաց, զի մասնակից եղեց աղաւթից նորա, և ձեզ՝ յլշողացդ մերոց։ Վասն զի երևի սայ իմաստուն մտաց զանձ յայտնեալ և աղբեր ջրոյ կենդանւոյ բղխեալ, իսկ անմիտ և անհանճար մտաց՝ սինս և չընչինս, իբրև զմարգարիտս առաջի խոզաց։ Արդ, աղաչեմ զաւրինակաւդդ, գրեցէք զսակաւ յիշատակարանս՝ յիշատակել զարարող սորին զՍարգիս փիլիսոփայն և զիս՝ զՅովաննես յանցաւորս, որ կցորդ եղէ նորին բանի ըստ իմ ախմարութեանս, ընծաեցի պտուղս յանբեր արմատոյ, և վարդ ի փշաբեր ոստոյ, և բան յանիմաստ մտաց, և ընծայս ի քարացեալ սրտէ, վասն զի իմաստք ոչ սպառին յանձնէ մեզուցելո, զի բարերար տէրն ծագէ զարեգակն իւր ի վերա չարեաց և բարեաց, և զցաւղ շնորհաց իւրոց ցաւղէ ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Բայց գրեցաւ ի թվիս Մեծ Հայոյն ՁԼԴ. (1384), իսկ Սարկաւագին՝ Ճ. (300), ի Հոռոմին ՌՃԼԷ. (1137), և յԵբրաեց[ւոց] ՋՁԵ. (985), յաւգոստոս ԻԷ. (27), ահկի ԺՋ. (16)՝ Մեծ Հայ[ոյն], և Եբր[այեցւոց]՝ իլուլ Թ. (9), և Սարկ[աւագի]՝ նաւասարդ ԺԷ. (17)· արեգակն ի կենդանակերպս՝ ի Կոյսն, աւուրս Թ. (9), ի գաւտիսն՝ յարեգակն աւուրս Թ. (9), ի գիրն Շ. Գ. աւր, աստիճանն՝ ԻՒՌՆ. (22400), հոլովն՝ ՃՀԳ. (383), ժամք տվ[ընջեան]՝ ԺՒ. (12). և մասն՝ ԻԱ. (21), և ժամք ¦գիշ[երոյ]՝ ԺԱ. (11), մասն՝ Թ. (9)։

688.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 3276

Գրիչ՝ Ներսես
վայր՝ Մերձ ի Խիգան

121բ Զնուաստ ծառայս յիշատակի արժանի արասջիք։ Ի թվականիս ՁԼԴ. (1384) գրեցաւ սուրբ և ոգեշահ մատեանս այս, զոր ի շնորհաց կարօղատուր հոգւոյն սրբոյ առեալ երիցս երանելի արդիւնաւորս ծերոյն նւագրի մեծի և հզօր վարդապետի, յանապատիս մերձ ի Խիգան, սուրբ Աստ անուն յորջորջական, որք հանդիպիք այս մատենի Ներսես անուն մեղաւորի*

* Ներսեսը գաղափար օրինակի գրիչն էր։ Նրա հիշատակարանը թերի է ընդօրինակվածից

689.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԱՂՕԹԻՑ

Ըրևան 8280 (տես նաև 1371 և 1541 թ.թ.)

Հետ. ստացող՝ Կարապետ

630 ...Ջստացաւղ գրոցս զԿարապետ արեղայ, և զծնողս իմ՝ զՄաթեոս քահանայ, և զՈվանեսէս քահանայ, և զեղբայրն իմ՝ զԳրիգոր սարկաւագ, զքուրն իմ՝ զՀռոփսիմ, և զքեռն իմ զՄխիթար հայրապետ, և զեղբայրն իւր Շնովոր, զկողակիցն իւր զՏաւնայն, և զամենայն արեան մերձաւորսն մեր՝ զորս յիշեցաք [ա] զորս ոչ կարացաք յիշել, զոր Քրիստոս աստուած ի միւսանգամ գալստեանն իւրում հաստուսցէ նոցա և մեզ զիւր երկնից արքայութիւնն, և որ երախտիք ունին...։

Ե, ղբեցաւ ի թվ. ՁԼԴ. (1384), մեհե[կի] Ը.(8), փետրուար ԺԴ. (14), շաբաթ Լ. (30)։

690.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Ըրևան 4113

Եղբայր գրիչ Յակոբի

470բ ...Վասն զի եղև աւարտուիճն հոգեշունչ տառիս ձեռամբ մանկահասակ շնորհալից կուսակրաւն քահանային Յակոբ կոչեցելոյ, որ և ի զրաւ զրոյս կոչեցաւ ի վերին տուողէն ի վերին առաղաստն, ի լուսեղէն խորա[նն, փո]խարէն երկայնան քրտանցն ի սմա, և եթող բազմա[պատիկ տուղ անմխի]թար և ինձ՝ հիքոյս և թշուառականիս | | | եղբայրն իմ, ի թվ. Հայոց ՁԼԴ. (1384), յունուարի | | | լսելով կամ աւրինակելով | | | թողութիւն մեղաց | | | ելով, զի փափագանաւք ցանկացաւ սմա | | |*

691.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Ն. Ջուղա, Ամենափրկիչ, 181, Տ.-Ավետիսյան, Ցուցակ, էջ 49

Հետ. ստացող Գօղոս

Ես՝ Գօղոս կրօնաւորս, որ միայն զանունս ունիմ և ոչ գործք, ցանկացող եղէ այսմ հոգիարուխ և աստուածաշունչ տառիս...և ստացայ զսա ի հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմոյ Էլտարին և մօրն իմոյ Հռիփսիմէ...։

Թվ. ի ՁԼԴ. (1384),

* Հիշատակարանը մաշված և խոնավացած լինելու պատճառով չափազանց եղծվել է։ Ձեռքին 10 տողից վերծանելի են միայն առանձին, ոչինչ չասող, բառեր։

692.

ԿԱՐԴԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ

Երևան 592

Գրիչ՝ Ղազար
վայր՝ Գողթան երկիր, Սիճեական աճապատ

ա

231ա ...Ցանկ ելեալ կատարեցաւ գծագրութիւն աղօթական երգարանի ծ[րագր]ութեամբ տխեղծ մատամբ անարժան | | | կրօնաւորի Կարապետի, [ի վայել]ուին անձին իմոյ և եղբօր ի[մոյ | | | ի և այլ ում հանդիպի | | | հանդիպողդ այսմ առա[ւ] ուսանելով (*) կամ զաղափարելով յիշեսջիք [զստ]ացող և զգծող սորին՝ զվերագր[եալքն], հանդերձ ծնօղօք...:

231բ ...Սկիզբն առեալ ի յերկիրն Որոտան՝ ի դրան սուրբ Կարապետին և աւարտեալ ի յերկիրս Գողթան՝ ի յանապատս Սիճեական, ի դրան սուրբ Յովանիխս, առ ոտս մեծ բարուխապետի Յոճաճիսի, ի
232ա ժամանակս մ || ատէի*, վասն անհուն և ծովացեալ մեղաց մերոց, ի թուականութեան Ցաքեքական տոմարիս ՊԼԴ. (1385) և ի վոքր թուականութեան ՅԲ. (302), ի Հռոմաեցւոց ՌՃ.**

բ

116ա Զստացող պատարագամատուցիս զկարապետ զպլիրն, և զհարազատ եղբաւրն իւր՝ զՄկրտիչ մոնքն, և զծնօղսն իւրեանց յիշեցէք ի յանարիւն զենուճն Քրիստոսի, և ղիս՝ զանարժանս անուն՝ Ղազար սուտանուն քահանայ՝ ծրող սորին, յիշեցէք ի յաղօթս ձեր:

693.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 4870 (տես նաև 1490 բ.)

Գրիչ՝ Զաքարայ
վայր՝ Աղթամար

ա

473բ ...Զոր տեսեալ զայսպիսի զանձս աստուածային և պայծառ լուսով, սրբազան և ընտրեալ և երիցս երանեալ եպիսկոպոսն տէր Թու-

* Առաջին տառը՝ ԺՅ, գրված է անորոշ, բառն անհասկանալի է:

** Հիշատակարանի բառերից շատերը պատռված, մաշված և անվերծանելի են: Շարունակությունը, ընդամենը մեկ—երկու թվի տեղ, պատռված է:

մոյ, և ցանկացեալ այսմ աստուածային փարթամ գանձուցս, և ջերմեռանդ սիրով հոգոյն սրբոյ և մեծ փափաղմամբ ստացաւ զսա յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնաւղացն՝ Շէրինշահի և Շեռհուռը տիկնայ, և հաւրեղբարցն՝ Թումայի, Յովճաննիսի, և հաւր քեռոյն՝ Գրիգորի, և քերցն՝ Տիկնուցի, այլ և եղբաւր իւրում՝ Ստեփաննոս կր[աւնաւորի]
474ա և Յովան || նիսի, և քերցն՝ Նազիւաթունի և Մամխաթունի, և աղդայնոցն ամենեցուն՝ կենդանեաց և հանգուցելոց, և ամենայն արեան մերձաւորացն։ Եւ ետ զսա նուէր և ընծայ ի գուռն սուրբ Խաչիս Աղթամարայ...* ի թուականութեանս Հայոց ՁԼԴ. (1385), ի հայրապետութեան տէր Զաքարիայի։ Վասն որոյ բարեխաւսութեամբ սուրբ և փառաւորեալ աստուածածնի Մարիամու և աղաչանաւք ընտրելոց
474բ սրբոց, Քրիստոս աստուած՝ քահանայապետն երկնաւոր, զտէր || Թովմայ եպիսկոպոս, և զծնաւղսն իւր, և զեղբարքն՝ զՍտեփաննոս կրաւնաւոր և զՅովճաննէս, և զազգն ամենայն առհասարակ, և զամենայն յառաջ յիշեցեալքն խորանակից և դասակից արասցէ սրբոց վկայիցն...։

Դարձեալ և զմեղապարտ Զաքարայ գծագրող սորա, զաղետս տարակուսանաց իմոց առաջի մատուցեալ, աղաչեմ զսրբութիւնգ ձեր, ով սիրելի և հաւատարիմ ծառայք Քրիստոսի...յիշեսջիք և զիմ անարժանութիւնս...։ Նաև զծնաւղքն մեր՝ զՄկրտիչ քահանայ և զԹանկխաթունն, և զեղբարքս մեր՝ զկարապետ քահանայ, և զՅովաննէս, որ աշխատեցաւ ի կոկել Քղթիս, և զխաչիկ, և զամենայն արեան մերձաւորքն մեր՝ զկենդանիսն և զննջեցեալսն, և զուսուցիչն մեր զԿարապետ կր[աւնաւոր], և զայնոսիկ, որք երախտաւորք եղեն մեզ ի պէտս մարմնաւոր պիտոյից։ Ընդ նոսին զաստուածասէր աւնուտէրքն՝
475ա զԿիրակոս, և զտէր Խաչիկ, և զծնաւղս || նոցին, որ միջնորդ և առիթ եղեն այսմ բարի գործոյ...։

Բ

Զփայիկենց Աւոմ յիշեցէք ի Քրիստոս։**

* Մի ընդարձակ հատված, ուր հիշատակվում են ստացողի մերձավոր և հեռավոր ազգականներից շատերը, դուրս ենք թողնում։

** Գրված է այլ ձեռագրով։

694.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՔԱՐՈԶԻՑ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՑ

երևան 2178

Գրիչ՝ Յակոբ Ղոշտօճցի

ա

91ր Ո՛վ սի[ր]ողք իմաստից, որդիք Սիոնի,
Որք փափաքիք այսմ բանի,
Որ է լցեալ յոյժ պիտանի
Աստուածաշունչ և արտաքի.
Թէ միտ դնիք դուք այսմ իրի,
Լինիք հաղորդ այս իմաստի,
Չի առ յիմարն ոչինչ արժի
'Ի առ իմաստունն՝ գին աշխարհի,
Չտառատիպ այսմ գծի
Ցիշման առնէք դուք արժանի՝
Զ[Յ]ակոբ ծրրոդ, մեռեալ ոդի,
Որ եմ յերկրէն Ղոշաօճի
Եւ աշակերտ այս սուրբերի,
Առ ոտն* սուրբ վարժապետի,
Որ մականուն Կախիկ** կոչի։

բ

188ա Չլցեալ մեղօք զՅակոբ աշակերտ բանի,
Որ ոչ ունիմ գործ պիտանի,
Ցիշման առնել գիս արժանի,
Որք ճաշակիք յայս սուրբերի,
Չի քաղցը է սա յայնմ, որ մոխ,
Որ ի սմանէ զճաշակն ունի։

---

* Ձեռագրում՝ «ոտը»։

** Ակնարկված է Հովհ. Որոտնեցին։ Նրա մահը ըստ Մ. Չամչյանի (հտ. Գ. էջ 450) տեղի է ունեցել 1388 թվականին, ըստ Ղ. Ալիշանի՝ 1385 կամ 1386 թ.թ.։ Մենք ճիշտ, ենք համարում վերջին թվականը, հիմք ունենալով Գրիգոր Խլաթեցու «Ցիշատակարան աղետից» գրվածքի (Վաղարշ, 1897, էջ 1) համապատասխան վկայությունը։

Ըստ այդմ, Հովհ. Որոտնեցու կենդանության օրոք գրված հիշատակարանների ժամանակագրական վերջին հնարավոր եղրը համարելով 1386 թվականը, բոլոր այն անթվական հիշատակարանները, որոնցում հիշվում է Հովհ. Որոտնեցին, տեղադրում ենք 1386-ի թվաշարքում։ Նրանք բոլորն էլ գրված պետք է լինեն ոչ ուշ քան 1386 թվականը։

695.

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Վէնետ. 253. Մարգ. 8ուց. Բ, էջ 741—742

Համբագիր՝ Գրիգոր Տաթևացի

ա

68ա Արդ, ես՝ վերջին սպասաւորաց բանին՝ Գրիգոր քահանայ [Տաթևացի], ժողովեցի զծաղկաքաղս՝ մեկնութիւն սակաւուք մարդաբէին Եսայեայ, ի լուսաւոր բանից տեառն· իմոյ և վարժապետին Յովհաննու Որոտնեցւոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի՝ անղրաւ կենօքս Արդ, պիտանութիւն սորա է ի բեմբասացութիւնս, և ի քարոզս բանի, և ի կտրդս զրուցաց։ Զի թէ իցէ ինչ ըստ ախորժակաց՝ տեառն շնորհք, իսկ պակասն՝ մերում տկարութեանս, ներել աղաչեմ։ Որ և մարդասիրեալ եղբայրական խնամօք՝ կաթիլ մի ի ցօղոյս ազօթից ձեր իջցէ յոսկերս իմ, և լուսացէ զբազմաշարաւ ապականութիւն հոգւոյ և մարմնոյ իմոյ, և ծնողացն իմ՝ զներելիսն և զմահացուսն։ Եւ ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ վայելեսցի յոյս հանդերձեալ փառացն ի Քրիստոս Յիսուս, ի տէր մեր։ Առ որ աղերսեմ, որք ընդօրինակէք՝ դրեսջիք և զսակաւ յիշատակս մեր, զի և դուք գրեսջիք ի դպրութիւնն կենացն, ամէն։

Հեղինակ՝ Յովհաննէս Որոտնեցի

բ

185բ Ո՛վ եղբայր, դէտ տեսը էր՝ օրինակ տուի, տարան ի Բօզլի քալանն՝ կորցուցուցին (այսպէս). վերստին կարուտեցաւ յառաջին օրինակէն գծագրելոյ. վասն որոյ ես՝ տկարս վարդապետս Յովհաննէս՝ զառաջինն և զերկրորդս դրեցի, աղաչեմ յիշել սրտի մտօք և անպարսաւ զմեզ Թողուլ*

696.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ

Երևան 3902

247ա Զհոդեկիրն ի մարմնի ե. զներանձնացեալն ի շնորհի, զաշխարհալուսը և զտիեզերածաւալ յայտնիչն իմաստից, զմեծ վարժապետն հայկազեան տոհմիս՝ զՅովհաննէս մականուն Կախեալ ի Սէրբ Աստուծոյ, աղաչեմ յիշել յաղօթս, ով սիրողք իմաստից և աշակերտեալք ճշմարիտ բանին։ Եւ նոյն ձեզ յիշողացդ պարզևեսցի յանաչառ դատաւորէն, որ ըստ գործոց հատուցանեն, ամէն։

Աղաչեմ անյապաղ գրիս ե. սղխալանաց սորա անմեղադիր լերուք, զի յօժարութիւն կամացս մոռացումն արար տկարութեան մտացս, Թողութիւն առ ձեզ է։

---

* Սուրբ հիշատակարանները վերաբերվում են հովհ. Որոտնեցու աշխատությանը, որը ձեռագրում կրում է հետևյալ խորագիրը՝ «Ծաղկաքաղ մեկնութիւն Եսայեայ, ի լուսաւոր բանից... Յովհաննու Որոտնեցւոյ, հաւաքեալ աշխատասիրութեամբ Գրիգորի՝ աշակերտի նորա»։

697.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Վիեն. 322. Տաշ. Ցուց. էջ 764

176բ Ջստացող տառիս՝ զմեծ տէլէտն իմաստից, զրաբունապետն զՅոհաննէս [Որոտնեցի] ընդհանուր սեռի, յիշեցէք ի Քրիստոս, եւ զի կախեալ է սիրով ի սիրոյն Քրիստոսի։

698.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 185 (տես նաև 1405 Բ.)

Գրիչ՝ Պաւղոս

ա

105բ Ստացաւղի սուրբ տառիս, սուրբ և երանաշնորհ րաբունապետի և տիեզերալոյս վարդապետի Յոհաննիսի [Որոտնեցւոյ] ողորմեայ Քրիստոս ի քում սոսկալի և անաւուրատենիդ, և ամենայն զարմից իւրոց։ Այլ և յոգնամեղ և ողորմելի ողւոյ Պաւղոսի, և ծնողաց իւրոց, և ամենայն ի քեզ հաւատացելոց, ամէն։

բ

276բ Ջստացաւղ սորա՝ զսուրբ և զերանաշնորհ րաբունապետն և զկենդանի նահատակն Քրիստոսի՝ զՅովհաննէս, և զամենամեղ հոգիս Պաւղ[ոս], ծնաւղաւք մերովք և ամենայն աղգականաւք աղաչեմ յիշել աղաւթիւք և խնդրուածաւք ի տէր Յիսուս Քրիստոս։

699.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 1178

Հետ. ստացող՝ Սիմեոն

ա

319ա Տէր աստուած Յիսուս Քրիստոս, աղաչանաւք մաւր քո և ամենայն սրբոց քոց, ողորմեա ամենայն աշխատողացն ի սմա՝ գրողացն և ստացողաց, նաև ինձ՝ մեղաւոր բիւր չտրեօք և անարժան ամենայն բարեաց վերջին ստացողի՝ Սիմէոնի տրուպ վարդապետի ի քո անագին և ի փառաւոր գալստեանդ, և որոց դամէնն ասեն...։

Գրիչ՝ Սարգիս

բ

125բ Սիրով էին ներգործական
Համացդ սուրբ եղև վախճան
Անկմամբ տառիս, թէ ու անագան,

Որում ծուլալն եղև խափան,
Բարուն խոհեմ և հեզական,
Ներհուն յարհեստս այս ցանկական,
Գլուխ տողեալ բայիս լրման,
Մաղթեմ չառնել զիմս անպիտան,
Ի տարակոյս ողոյս պայմանն,
Արտազատել իբր անարժան,
Սեղանոյս տալ տաղանդ բաշխմանն
Մխթէ՞ դիպիմ շահոյն պատկանի։*

գ

132բ Թէ յիշէլոյ արժանի առնես, սուրբ վարդապետ Յոճ[աճ], քո հրամանքէ ես խիստ եմ յաղաչել։

ԺԸ. դարի ստացող**

դ

319ա Աստուած ողորմի Յոհաննէս բարուհնաց պետին՝ լուս հոգոյն, որ դիրքս տեառնք ուրախացանք. ԲԺ. (12) աւր ի սայ հայեցանք, փոքրէ-շատէ բան հասկացանք, վասն այս ող[ո]րմիս գիրեցանք։

700.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԲԱՆԻՑ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ, ԳՐԻԳՈՐԻ ՏՂԱՅԻ ԵՒ ԱՅԼՈՑ

Թուին ՇՐԷ (ակս նաև 1401 թ.)

Գրիչ՝ Յակոբ
վայր՝ Խրճջակ

485ա ...Զոր ե ես՝ ծանրամեղ ոգիս Յակոբ պիտակ անուամբ կրօնաւորս, որ միայն զկարգ քահանայութեանս անուամբ ունիմ և գործով անչափ հեռի եմ ի սմանէ, որպէս արևելք յարևմտից, որ եմ կիսակենդան՝ հոգւովս մեռեալ և մարմնով կենդանի, որպէս դիակ իբր ի վերայ երկրի, զոր գծեցի և ի յանկ հանեալ աւարտեցի Ցխսուսի ձեռնտու[ո]թեամբն, հաւատս մատամբ և յողդողդ ձեռամբ, որչափ իմս էր կարողութիւն, ինձ ի սփոփանս, ի դարձև ի զղջումն անձինս շնորհիւն աստուծոյ և սրբոց օգնականութեամբ։ Եւ յետ ելանելոյ յաշխարհէս Թողում զսա մանկանց եկեղեցոյ խրախուսիչն և ի պայծառութիւն, և զղջումն արտասուաց ամենայն ոգոց։ Արդ, աղաչեմ զձեզ, ով բարեսէր ոգիք, թէ հանդիպիք

* Տողերի սկզբնատառերով հողվում է գրչի անունը՝ «Մարգիս»։

** Հիշատակագիրը, ըստ երեւույթին, ծանոթացել է ձեռագրի հետ՝ երբ գեռ պահպանվում էր գլխավոր հիշատակարանը։ Ըստ նրա տեղեկութեան գ. հիշատակագրութեան մեջ հիշվող Հոհանը Ջրաբունեաց պետ է եղել։ Այս տվյալի հիման վրա նուիրացնում ենք այդ Հոհաննին Հոհան Որոտնեցու հետ (մհ. 1386), և սուրբ հիշատակագրութիւնները նուիրված տեղագրում ենք 1386-ի թվաշարքում, որպես նրանց գրութեան վերջին հնարավոր տարեթիվ։

սմա կարդալով, կամ օրինակելով, կամ տեսանելով, կամ սեփհական ղսա իւր ժառանգելով, յիշեցէք սրտի կամօք միով տեր-ողորմ[այ]իւ ղողորմելիս Յակոբ՝ ղտառատիպ սմին, որ միշտ հոգս ակամբս առ ձեր ադօթքտ ակնարկեմ։

Նաև ղմարմնաւոր ծնօղքն մեր և ղնախնիքն՝ ղԳրիգորէս և ղԹումա, ղԴուոմէլիք և ղԱւաքոփկին, և ղքաջահաւատ որդիքն՝ ղԱստմ և ղՂբէլ, մանաւանդ ծնօղքս մեր, [և] դհորեղբայրն իմ՝ ղՅովաննէս կրօնաւոր, որք գնացին առ Քրիստոս, այլ և ղկենդանիքս, որք այժմ ի միջի կան, դհարազատ եղբայրն իմ ղՎարոս*, և ղքուերքն՝ ղԳոճարմելիք և ղՇահաթ, և ղկենդաց կցորդ նոցա՝ ղԽութլուշա և ղԱստոմ, և դայլ արեան մերձաւորքն մեր՝ ի ձեր սուրբ յաղօթքդ յանձն արարաք։ Դարձեալ և դհոգևոր երախտաւորքն մեր՝ ղուսուցիչքն և ղլուսաւորիչքն՝ ղՍիսէոն վարդապետն՝ զարին և զառաքինին Ըոօշտեան դաւառին, ղլծակից և դհամանմանք նորին՝ ղերկու արեգակունքն, ղեղբարքն մարմնաւին՝ ղՍտեփաննոս ընդ Ցովհաննէսին, որ են նազելի փիլիսոփայք և վարպետ ծովու բոլորին, և ղՍիմէոն դհոգևոր վերակացուն մեր, դի դուք, որ զանուանս լսէք, զաստուածորդորմին յօժարութեամբ ի հետ կրկնեցէք, դի և դուք գտանիջիք, դի բաղում յօժարութեամբ ցաւեցան ի վերայ մեր և բազմաց՝ ի յերգս երաժշտական և ի բանս հոգևորական։ Այլ ևս առաւել զանձն քրիստոսակիր, որ առնէ և ուսուցանէ՝ ղՄխիթար վարդապետ իմ, որ է յոյժ ցաւեցող անձին իմոյ և բազմաց, դի ամենեքեան, որ ի սա դիմին՝ հաւատով բարձ-
488բ բանան և վարուք պայծառան ||ան, զոր և հայցեմ Քրիստոսէն իմոյ ես՝ ամենայն հաւատացելովք, ՃՆալ սմա ի մէջ իմանալի դրախտիս, բազում ամօք տևել ի մարճի՝ յօգուտ և ի շահ ամենայն չափու հասակի։ Այլ և յիշեսջիք դհոգևոր եղբարքս մեր՝ ղՅովնաննէս՝ կազմօղ սուրբ գրոցս, և ղԿարապետ՝ ծաղկող, որ ձրի ծաղկեաց, ևս առաւել զբարի շառաւեղքն յօրհնեալ արմատոյն՝ ղԿարապետ կրօնաւոր ի տիսս մանկութեան և զեղբայր սորին՝ ղՄկրտիչ դպեր, որ են աշակերտք մեր, դի բազում աշխատութեամբ ջանացին ընդ մեզ, դի զամէն զԹուղթս սուրբ գրոցս սոքա կոկեցին և տողեցին, այլ և ծնօղք սոցին առաւել քան զմարմնաւոր ծնօղքն մեր գուբ ցուցին, և հարկաւոր պիտոյիւք զմեզ լցուցին, զոր և պարզևատուն աստուած միոյն հազարապատիկ հատուսցէ աստ և ի հանդերձեալն, և զցանկալի զաւակ սոցին՝ ղԿարապետ և ղՄկրտիչ, պահեսցէ անարատ խնամքն տիրական գ|||օք ժրաջան ի կարգ բեմբական, ընդ սուրբ առաքինիսն միաբան, մինչ ի խորին ծերութեան։

Այլ զծագրեցաւ մատեանս աստուածաին ի թուականիս Հայոց ՊԼԸ. (1386), ի ժամանակիս, որ է գառն և լալարեր, դի ամենեքեան մեծէ ի փոքր, ձանձրացեալ կան ի կենաց, ըստ Քրիստոսի բանին, թէ՝ գայցէ ժամանակ, սր ասասցեն բլրոց թէ անկերուք ի վերայ մեր և լերանց թէ ծածկեցէք զմեզ, զոր և տեսաք աչօք մերօք։

* կարելի է կարդալ նաև «զՎալարոս»։

Այլ մեք ընդ սուրբ և տիեղ[եր]ահամբաւ և երանաշնորհ բարեբունասլեահս Հայաստանեաց և վերադիտողի տեառն Յովհաննու Որոտնեցւոյ կայաք կարդալ և ի դրել ի համալսարան սորին, որ յայս անծուկ և խաւարեալ ժամանակիս փայլէը որպէս զարեգակն ի վերայ աշխարհի անուն սորին, ղի զամենայնի զխոց բժշկէը և զկարօտութիւն լնոյը՝ զիշխանի և զազատի, զկաթողիկոսի և զիմաստասիրի, ղի ազգս հայկազեան մեծ պարծանս ունէը զսա ի վերայ ամենայն ազգի։ Զի ժողովէը զհեռաւորս և զմերձաւորս, զորբս և տանընդանիս, երկնէը և ուսուցանէը, և փառաւոր յաստիճանս նստուցանէը, զոմանս բարունս և քահանայս, զոմանս երաժիշտս և փիլիսոփայս, զայլ ոք ծագկող և քարտուղարս։ Զծոյլսն ի յետինս արհամարհէը, զարիսն ի վեր փառաւորէը, ամենեցուն կերակուր և [հ]անդերձ, դիրք և մեկնութիւն, և անիրոռով խաղաղութիւն, և այս վասն աստուծոյ սիրոյն և իւր հոգևորն շահի։

Եւ մինչգեռ անճառ ցնծու.թեամբ և բերկրալից ուրախութեամբ լցեալ կայաք, բարունին Կ. (60) աշակերտօքն, ի բնիկ դաւառն իւր՝ յերկիրն Որ[ո]տան, կարդալով և դրելով զսուրբ մատեանս, մեղքն իմ ծովացեալ եհան զդունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի։ Որ եկին և առին զքեզն Որոտան, և հայրենազուրկ արարին զպարոն Սմպատն, որդի Նաճիկին։ Եւ կամէին ձերբակալ առնել զսուրբ բարունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեան։ Եւ սա կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ. և Բ. (2) ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէը աշակերտօք հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով։ Եւ ես ծանրաբեռն մարմնով, զթուղթ և զօրինակ, դպրիչ և զթանաք ի յուս իմ բարձեալ, ի հետ գնայի, կարդայի, և որչափ ժամանէի՝ զսուրբ մատեանն գրէի, բաղում նեղութեամբ և չարչարանօք, ղի ուր սկսա անդ ոչ էտո զկատարուին։

Դարձեալ քաղցրացոյց աստուած զկամք անօրինացն ի վերայ սուրբ վարդապետիս, և եկեալ սորա անխռով խաղաղութեամբ ի վերայ վանորէից իւրոց, ի դաւառն Երըճկայ, շինէը և հաստատէը զսուրբ զեկեղեցիս շքեղ և փառաւոր ի մէջ անօրէն իշխանաց և բերքաւագաց, և ուրախ և ցնծութեամբ կայաք առաւել քան զառաջինն։*

701.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 557

Գրիչ՝ Գրիգորիս
վայր՝ Եգեկայ

227ա Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ և զլուսազարդ մատեանս ես՝ նուաստ ծառայս ամենայն ծա-

* Հովհան Որոտնեցու մահը Գրիգոր Սլաքեցու որոշակի վկայութեամբ, տեղի է ունեցել 1386 թվականի հունվարի վեցին (տես՝ «Ճիշատակարան աղետից», էջ 1–2)։ Ուստի պետք է ենթադրել, որ սուրբ հիշատակարանը դրվել է այդ թվականի սկզբին՝ այն է օգոստոսի 11-ից (Նավասարդի 1-ից) մինչև հունվարի 6-ը։

ոայիցդ աստուծոյ Գրիգորիս՝ մեղուցեալ և անարժան քահանայ, ի Հայոց Թուականիս ՊԼԵ. (1386), յունիս Ժ. (10), ի խնդրոյ բարի և հաւատարիմ ծառային աստուծոյ Թաճատինի, որդոյ խաւճա Ահրոնի, և ի մարենի դասէն՝ Թոռն տէր Սարգսի, որ մեծաւ յուսով և բաղում փափաղանաւք և ցանկութեամբ խնդրեաց զսայ ի լուսաւորութիւն անձին իւրոյ և ի մխիթարութիւն լսողաց հաւատացելոց։ Կրկին աղաչեմ զա || մենեսեան յիշել ի տէր զստացաւդ սորա զամիր Ճաճատինն՝ 227բ ծնողաւք, և զնուաստ գրչակ՝ ծնողաւք, և դուք յիշիք ի աէր, յորժամ գայ արքայութեամբ իւրով և թողէ զյանցանս ձեր և ծնօղաց ձերոց։

Եւ աղաչեմ չլինել մեղադիր, զի ի ծերութեան ժամանակս [գրեցաւ], այս չափ էր կար մեր։ Բայց գրեցաւ ոայ յաստուածապահ մայրաքաղաքս Սզնկայ, ընդ հովանեաւ սուրբ և երկնանման տաճարիս սուրբ Կաթողիկէիս և սուրբ աջոյս տեառն Ներսէսի, և այլ բաղմահաւաք որբոցս, որ ասա են։ Զոր խնդրեմ յաստուծոյ, զի պահեսցէ 228ա զտաճարս զայս սուրբ՝ հաստատ և անխախտելի || մինչ ի գալուստն Քրիստոսի և | | | յամենայն երևելի և աներև[ոյթ | | | ոյ, Այլ և մի պակասեսցէ ի սմանէ երգ սաղմոսաց, ձայնք պաշտամանց, բուրուճն խնկոյ՝ մի պակասէ ի դրանէ սորայ։ Եւ սպասաւորք սորա և պատարագիչք՝ առաջինքն և վերջինքս, ճնասցեն սրբութեամբ ի կամս աստուծոյ։ Նայ և զաստուածասէր պարոնս մեր զԱմիր-Սուլայիման շնորհեսցէ այս սուրբ տաճարիս և մեզ ընդ երկայն աւուրս, մինչ ի խորին ծերութիւն. և աջ անեղին և բաղուկ հզաւրին պահեսցէ զսայ յամենայն երևելի և յանևրևոյթ Քշնամոյ հոգո[վ և մարմնով]...*

702.

ԱԽԵՏԱՐԱՆ

Փէրզ. 6273, էջ 170—171 (ի վանս Սքանչելագործ)

Գրիչ՝ Խաչատուր
վայր՝ ի ֆռոմիս Արծրունիս

ա

...Եւ արդ, դրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ մեղապարտ Խաչատրոյ անիմաստ և տխմար գրչի, յընաիր և ի ստոյգ օրինակէ, կենօք տառապանօք և բաղում պանդխտութեամբ...։

Իսկ ի Հայկազին Թուականի ՊԼԵ. (1386), ի քաղաքիս Արծրունիս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Մտեփաննոսի, ի հայրապետութեան կիլիկեցւոց տեառն Թեոդորոսի, և ի մերոյ հայրապետութեան Ախթամարայ՝ տեառն Զաքարիայի, և ի կայսերական բռնակալութեան ազգին Նևտողաց Ալեքսի դանին, ի թշուառ և ի չար ժամանակի, յորում է արդարութեան կողմն նուազեալ և անիրաւու-

* Շարունակությունը մաշվել է և նորոգության ժամանակ տուժելով անընթեռնելի է դարձել։ Կարդացվում է ոմն Մանուել-ի անուն, որ է փոխել ի Քրիստոս։

թիւն յամենայն կողմանց զօրացեալ։ Որ և յայսմ ամի բազում նեղութիւն և չարչարանք կրեցին եկեղեցիք և մանկունք նոցին ի ձեռաց անօրինին Ղարայ Մահմատի, զի որպէս ի հնումն յարոյց աստուած զնարուգոտոնոսոր ի վերայ Երուսաղէմի, նոյնպէս և ի մերումս՝ ի վերջին զարիս, ելեալ չար ըռնակալ և խրոխտ Ղարա-Մահմատ, եւ արդ, ես՝ Յովհաննէս մատղաշ, ետու դրել զսա ոչ վասն մարմնական ինչ արդեանց՝ այլ զանձ յերկինս...։

Այլ և ետու զսա ի դուռն Տկոց վանից* եկեղեցոյն, որ կոչի սուրբ Աստուածածին, և մի ոք իշխեսցէ վաճառել զսա կամ փոխել յայլ տեղիս։

ը

Ի յութնարիւր թուականին,
Յեղեսուն և հինգ սկսեալ ամին
Ի Հայկազեան աղգի սեռին (1385),
Ի նեղութեանց ժամանակին,
Զոր այլազգիքն նեղէին,
Զքրիստոնեայք նախատէին,
Զեկեղեցիսըն քակէին,
Զոր մեղաւորս ի թիւ արկի
Եօթանասուն եկեղեցի,
Որ ի դաւառս էր Արծրունի,
Զղրունս նոցա խորտակեցին,
Եւ զսեղանս տապալեցին,
Եւ. զխմունս շարժեցին,
Զկտակարնսն գերեցին,
Ջահանայք նստեալ լային
Եւ ժողովուրդք գումարէին,
Արդ, ո՞վ եղբայր, զսուգ վշտին
Զեկեղեցեացս, որ հասուցին,
Եւ այսպէս է՞ր հանդիպէին.
Վասն մեղաց, որ գործէին։

* Տկոց վանքի մասին Փիլոզալամյանը գրում է. «Ոմն Տկուց վանքն է այժմ աւեր և անկանէ ի Բղնունիս, և կայ բացակայ կէս ժամ հեռաւորութեամբ ի սուրբ ուխտէն Ոքանչելագործին, որ է աթոռանիստ վանքն Արծկոյ։

703.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 4814

Նորոգող՝ Արղուն
վայր՝ Ոստան

266բ Արդ, ի վերջին ժամանակիս, ի թուականիս Հայոց ՊԼԸ. (1386), ես Արղունս,** որ էի յապարանս ամիր Իհիճ-Ասադի, յՈստան քաղաքի, եաու վերստին նորոգել զաւետարանս յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ Քուրդամիրի, և մաւրն իմոյ Հերիխտիկնայ, և այլ ամենայն մերձաւորաց։ Ով որ հանդիպիք սմա յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զԱրղուն և զծնաւղսն իւր, և աստուած զձեզ յիշէ, ամէն։**

704.

ԱԻԵՏԱՐԱՆ

Ակնայ սր. Գէորգ եկեղեցի, 2. Ձանիկեան, էջ 78

Ստացող՝ Խութլուշայ

...ի հայկազան թուականիս ՊԼԸ. (1386) կատարեցաւ աստուածսիրաւս գանձս ուէրունեան...ի հայրապետութեան Հայոց տեառն Ջաֆարիայի և ի թագաւորութեանն, որ ոչ երևի բարեպաշտ, այլ վասն մեղաց մերոց բարձան բարեպաշտ թագաւորքն և աստուածասէր իշխանքն քրիստոնէից, և բազմացան ի վերայ աղգիս Հայոց աղգն | | | որ հալածեն...։

Արդ, ցանկացող եղեալ սուրբ արքայութեան երկնից Խութլուշէն, ետ գրել վաւխտանաւք զաւետարանս յիշատակ իւրն և բարի ծնաւղաց իւրոց, հաւրն Խութլուբէկին, և մաւրն Էլեաթունին, և կենակցին իւր Սիրմային, և ծնողացն իւրոց՝ հաւրն Շատլուսին, և մաւրն Զխանմելիքին, և տղայոց իւրոց՝ Մարտիրոսին և Առաբելին և Կիրակոսին, և Հազարդեղին, և Խուցդեղին, և Խութկէն, Նդիսաբեթին, և Հոթնշին, և Ռովլաթին, և ամենայն արեան մերձաւորացն իւրոց՝ կենդանեացն և ննջեցելոցն։

---

* Հիշատակարանը հրատարակված է նաև Ե. Լալայանի ծուցակում (էջ 117), սակայն նորոգողի անունն այնտեղ աղավաղվել ու գարձել է «Արղումանց»։

** Արղունի կողմից նորոգված այս ձեռագիրն ընդօրինակված է 1294 թվին։

705.

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՑՈՒԹԵԱՆ ԿԻՐՔԻ

Ընդհան 4957 (տես նաև 1538 թ.)

Գրիչ՝ Ծոհաննէս
վայր՝ հանդեպ Վարագայ, Շուշան գիւղ

268ա ...[Գրեցաւ ի թուին Հայոց]* ՁԼԸ. (1386) վարդապետութիւնս կիւրդի, ձեռամբ Ծոհաննէս նուաստ, մեղապարտ քահանայի, ի գեաւղս կոչեցեալ Շուշան, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգեայ զաւրավարին, որ է հանդէպ Վարագայ, Արդ, ով ոք ընթերցցի, յաղաւթս իւր յիշեսցի զտատացող սորա զՅիրատուրն և զդծողս Ծոհաննէս, և ուղիղ սրտիւ ասէ զաստուած ողորմին. և ինքն, որ առատն է ի տուրս պարգևաց, տացէ ձեզ և մեզ, ամէն։ Ընդ նմին յիշեսջիք զհոգևոր որդեակս իմ՝ զԿաբապետ սարկաւագ, որ զթուղթն կոկել է և աշխատել. և Ք՛րիստոս ձեզ և մեզ ողորմեսցի, ամէն։

706.

ՄԱՇՏՈՑ

Փիլդ. 6273. էջ 170 (Վան)

Գրիչ՝ Գէորգ
վայր՝ Վան

Արդ, ղրեցաւ խրատքս այս Թաղման ձեռամբ մեղապարտ...Գէորգ երիցու, որդւոյ Առաքել քահանայի, ի մայրաքաղաքն Վան, ընդ հովանեաւ տաճարիս սուրբ Նշանիս և սուրբ Աստուածածնիս, Թուին ՁԼԸ. (1386),

707.

ԳԻՐՔ ԵՒԹՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՐԱԳՈՆԱՑԻՈՑ

Ընդհան 48 (տես նաև 1606 թ.)

Գրիչ՝ Գրիգոր Տաթևացի
վայր՝ Ալաղատնոյ վանք

ա

80ա Զբարերջանկացեալն երանականն կենաւք և զկայծակնամաքուր հոգիամուխ արփիաւորեալն մտաւք, զտիեզերալոյս բաբունապետն՝ զտէրն իմ Ծովհաննէս Որոտնեցի, հանդերձ ամենայն աշխատողաւքն ի սմա, յարուցեալ զաստւորեսցէ Ք՛րիստոս ի կեանս անմահ, ի պատիւ և ի հաղորդակցութիւն սիրելեաց իւրոց, ամէն։**

* Սկզբից թերթ է ընկել, պահպանվել է հիշատակարանի միայն վերջին մասը։
** Գրված է ստորին լուսանցքում Գր. Տաթևացու ձեռքով, ընդգրկից մանր տառերով։ Ակնհայտ է, որ հիշատակագրությունը և ձեռագիրը արտագրվել են Հովհ. Որոտնեցու մահվանից՝ ուշակի 1386-ից, հետո։

բ

92բ Ո՛հ թէ գմեզօք մեռեալ ոզի,
ԶԳրիգորի փցուն գրչի,
Ցիշման առնէք արժան բանի
Ցօժար սրտիւ զոէբ-ողորմի,
Զոր հասարակ առատասցի
Տալ զպարգեւս հայցողի։

գ

109բ Ցուսոյ զերքս և Սիրոյ*
Որ շազկապեալ | | |**
[Հբ]ամանէ մեծ բարունոյ***
. . . . . .
[Ա.աբ]տեցաւ ի վանքս Վաղատնոյ,
Զեռամբ Գրիգոր Տաղևացւոյ...։

դ

138ա Ո՛հ, կազ իշովս մինչև յերբ հասից յաւարտ գրոցս։

Ոմն կաթուիկ ընթերցող

ե

47ա ...Ո՛ Տաթևացի, ձչ երկնչիս յաստուածոյ խառնելով զթոյնդ անապականի գինւոյ, որ սպանէ ոգիս պարզամտաց։

զ

62բ ...Որոտնեցիք և Տաթևացիք զորում յոգնապատիկ սերմանեալ է ի մէջ սուրբ Գրգիս։***

---

* Պետրոս Արագոնացու աշխատութեան գլուխների վերնագրերն են։

** Հիշատակագրութիւնը եղծված է։

*** Ի նկատի ունի իր ուսուցիչ Հովհ. Որոտնեցուն, որն իր դասախոսութիւնների ընթացքում օգտագործում էր նաև հայ ուղղափառների կողմից ստեղծված քարգմանական գրականութիւնը։

**** Այս հիշատակագրութիւնները գրված են նշված էջերի ստորին լուսանցքներում։ Սրանց անհայտ հեղինակը այդպիսի մի հիշատակագրութիւն թողել է նաև 84բ էջի ներքին լուսանցքում, սակայն ինչպես գ. հիշատակագրութեան սկզբի մասը, այնպես էլ այդ՝ ամբողջովին քերվել է հետագայում։ Ընթերցվող եղակի բառերից կարելի է եզրակացնել, որ նրանց մեջ ևս հիշատակագրութեան հեղինակը մեղադրում է Տաթևացուն կաթուղիկ հեղինակի մտքերն աղավաղելու մեջ։

708.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՂԻՇԷԻ

Թորոս Աղբաք, Բ. էջ 334 (խմբբերդ)

Գրիչ՝ Ոհ[աննէս]
վայր՝ Վան

Գրեցաւ ատուածաշունչ տառս ձեռամբ...Ոհ[աննես] երիցու... ի Թուականին Հայոց ՊԼԸ. (1386), ի քաղաքիս Վան, ընդ հովանեաւ սուրբ Վարդանայ...։Որք հանդիպիք այս ատուածայնի ղանձուցս Եղիշայի...յիշեսջիք զտառացող զտէր ղՆերսէսոս կրաւնաւորն, եւ զծնողսն՝ զեփրեմ քահանայ, եւ զքեւրն՝ զՍտեփաննոս կր[աւնաւոր | | | Ծոշորուքեան եւ սխալանաց գրիս անմեղադիր լերուք, զի մեր կարս այս էր։

Ես Նիկողայոս արեղայ, կամաւն ամենակալին ատուածոյ տառացայ ղվարդանղերքս, եւ եռու զսա ինձ յիշատակ եւ ծնողաց իմոց ի դուռն սուրբ Ծիրամաւրս լուսոյ, որ մի. ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ Ատուածածնիս Խառաբաստայ վանուց, ոչ յիմոց եւ ոչ յաւտարաց։

* Տպված է «ՊԼԻ», որ, իհարկե, տպագրական կամ գրչական սխալի արդյունք է, վերջին թվանշանն ուղղում ենք «Ը» (ə), սակայն կարող է եղած լինել նաև ՊԼՐ. (1383), ՊԼԷ. (1388) և ՊԼՀ. (1389)։

739.

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԴԻՈՐԴԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԴՐԻԴՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

*Երեան 3616**

Հեղինակ՝ Գրիգոր Տաթեւացի
վայր՝ Սահապօճ ամրոց

320բ Ով ա՛յս յաղագս այսորիկ այսքան ըստ բաւականն բանի տուեալ ղլուծումն, այլ ըստ կարի տկարութեանց արտայայտումն, մանաւանդ հարկեալ ի սկզբան գումարդ եղբայրական խնդրոյ, և այս ի խռովութեան ժամու, և յանճուկ տեղւոջ, յորում պաշարեալք ի հինից նետողաց կրկին յարուցեալ, խորտակ տնտեսանեալ յաղգաց, զոր և անբաւ բազմութեամբ աստիճանեալ աւերեալ զաշխարհս Հայոց, Պարսից, Վրաց և զամենայն արևելեայս։ Ոմանք ի զերութիւն վարեալ՝ արք և կանայք, և կէսք առիւծ դիմաւալ սրախող գալարեալ առհասարակ, քահանայ և աշխարհականաք. ղէշ անկեալ դիակամբք, անթաղ ընկեցեալք, և այլ՝ ի բազմաղան տանջանարանս մաշեալք։ Ոմանք հրով կիսայրեցեալք առչորեալք, և այլ[ք] ի սովոյ չաղանաթեկ վաճանգեալք, կէսք խստամբեր կրօնիւք չարչարեալք, և այլք երկեդիւ պակուցեալք։ Որ և մերն ունելով իբր մեռեալս համարուր ի պահոջ Սահապօնս կոչեցեալ ամրոցի, ոչ ինչ ընդհատ լսելով ի մեզ զօրինակ մեծի սասանառուսուն

---

* Ձեռագրում արտագրված են Տաթեւացու «Հարցմանց Գիրքը» և սույն՝ «Հարցմունք Գէորգ վարդապետի...» աշխատությունը։ Ձեռագրի վերջին՝ 281–321 թերթերը, ինչպես նաև միջից մի շարք թերթեր, արտագրված են նորոգողի կողմից, ԺԶ. գարում, հավանաբար՝ ջնջված ու խունացած բնագրից։ Բնագիրը (ձեռագրի մեծագույն մասը), մեր կարծիքով, հեղինակի՝ Գրիգոր Տաթեւացու, ինքնագիրն է։ Ի հաստատություն վերոհիշյալ կարծիքի ունենք հետևյալ տվյալները.

ա) Ձեռագիրը շատ նման է Գրիգոր Տաթեւացու ձեռագրին (հմմ. օրինակ, Երևանի № 16 ձեռագրի հետ՝ «Գիրքք եւթն առաքինութեանց Քրիստոսի», որը Գրիգոր Տաթեւացին արտագրել է Հովհ. Որոտնեցու համար)։

բ) Կան բաց թողնված տեղեր հետագայում լրացնելու համար. և իրոք, մի քանի էջերում դրանք լրացված են նույն, բայց ավելի մանր, ձեռագրով։

գ) Լուսանցքներում, տարբեր դասավորությամբ գրված են բազմաթիվ հավելումներ ու պարզաբանումներ, որոնք արտագրության ժամանակ պետք է մուծվեին (և մուծվել են) բնագրի մեջ։

դ) Կան տողերի ու բառերի ջնջումներ, որ սովորական ձեռագրերում չեն հանդիպում։

ե) Բազմաթիվ հատվածների վերջում, լուսանցքներում, գրված են ծանոթագրություններ տվյալ հատվածը տեղաշարժելու, մի քանի թերթ առաջ կամ ետ տանելու մասին։ Բերենք մի քանի օրինակ. «Զայս Դ. թղթով ի յետին նշանածն գրէր» (էջ 14ա), «զնեղեկիէլի տեսիլն աստ գրէ, Բ թուղթ շրջէ» (էջ 46բ), «Բ. թղթով յառաջ ի նշանածն գրէր» (էջ՝ 78բ), «Գրէ զայս հետ բոպէին (իմա՝ «Վասն բոպէին» հատվածի), ի մին այլ երեսն և այլն և այլն։

զ) Բերված օրինակներից պետք է եզրակացնել, որ այդ ծանոթագրությունները

ատենի։ Նախ որպէս անդանօր ողջունեն զխաղաղութեան և զլինուԲեան գոլ, յեղակարծ ժամու հասանել բարկութեան, նմանապէս և ասա՝ աւուրն կիրակէի ասացեալն կրկնոյ զատկի, յանկարծահաս ժամու շտրժեալ հեղեղաց ուղխից խռովութեան զաւրաց, սաստողին
321ա զոչմամբ և ահագնատեսիլ, սուսերամերկ կորվալիճ նետողաց, ‖ որք պատեալ պահեալ պաշարէին զմեզ։ Ասացեալն նմանապէս և աստ կատարեալ, ոչ միայն անդ ի հեռաստան կամ աղալերկան (*), այլ և ի ղոան կլայիս սակաւ ինչ դանդաղեալ, մեռոն փրկեալ և միւսն գերեալ։ Էր և տեսանել աստ աղէտղորմ տեսիլ միայն արտասուալի զիմաւք և կամարարձ հառաչմամբ, ազդ և սիրելիք, ծնօղք և եղբարք, այլ ինչ ոչ օգնել ի գերութիւն վարելոց, որպէս և յայնմ աւուր՝ ի կորուստ մատնելոց։ Այլ և աստ ապաշաւելն ոչինչ օգնել, որպէս և անդ՝ ոչ լսողացն բեԲանով հաշեալք, որ և ոչ գոյր անդրէն դառնալ, և ոչ կարի աւժարացն շահավաճառ եղևալ, ոչ զիւտ և ոչ ողորմ հանգոյն յիմարացն որիորդաց, զի ունողք բարիկեցիկք կենօք և ոչ նմչնպիսիքն սովամահ տուայտեալք, ի սպառեալ ոլորոյ և հատուն յուսոյ, բազմանալ անօրէնութեանց, և տիրել անզղջութեանց, որ և խղճի որդանց անհանգիստ մտաց, և շրջապարեալ ընդելեաց ի հեռատակ ճիւռաղաց։ Եւ առ այս եկն ինձ, ով քաջ ղուդակշիռ հասարակութեանց մեծատանց և աղքատաց, զի սրոց բաղումն աւանդեցաւ առաւել ինձ պահանջեցաւ, և փքացեալոցն հպարտութեամբ վոխանակ խրախութեանց, ճիչ աղաղակի ընդդէմ հեշտալեաց անհանգիստ խշտիս յերեկօրեայ զառաւաւտ խնդրէաք, և ի նմա՝ զեռանդն երանեալք։ Եւ այս ոչ շաբաթու և աւուրց սպառեալ, այլ ամսոց յերից երկարեալ սորին, և գործելեացն վրէժ ոչ կշիւռ հատուցեալ։

Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջապագայութեամբ տումարի Հայկազեան սեռից՝ հարիւրից կրկնակի քառից և վեցեաց վեցից ($100 \cdot 2 \cdot 4 + 6 \cdot 6 + 551 = 1387$), յորում ամի եղև ծոատօն զատկաց ազդի կոչեցեալ Ցունաց, ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրունեաց։ Եւ այսպէս, տրտմեալ ոգով և թախանձեալ մտաւք, բնծայեցի տխեղծ մատամբ դխունախոյ գնըւէրս բանի իբր զլաւմայս այրոյն՝ քումդ գանձարանի։ Եւ մաղթեմ եղբայրական սիրով, զի ըստ բնածին բարերոյս բարուցդ աշխոյշ մտաւք ուղղապէս որոնել, զթերին լնուլ և զաւելորդն կշռել. հաւա-

---

գրված են արտագրող գրչին ուղղություն տալու նպատակով (գրէ, շրջէ և այլն), և որ «Հարցմանց Գրքի» սույն սեագիրը օրինակը հեղինակի կողմից հանձնված է եղել ոմն գրչի սրբագրության և գեղեցիկ ու մաքուր արտագրության համար։ Նվ իրոք, 277բ էջում պահպանվել է մի գրություն, որը մենք համարում ենք ուղերձ գրված հեղինակի կողմից գրչին. այնտեղ գրված է «Այլ դու, ով այրդ աստուծոյ, մաքրամիտ և ճգնազգաց միայնաւոր սուրբ հայրդ Սահակ, քէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մէնջ, սակայն կարող ես և զթերին լնուլ և զաւելորդն կշռել և զմեզ օգտեցուցանել, ի ներքոյ է քոյին պայծառամիտ սրբութեան սրտի, որովք միշտ երանութեամբ աստուած տեսցես...»։

Թվում է թե բերված տվյալները բավարար են եզրակացնելու համար, որ մեր Մատենադարանի № 3616 ձեռագիրը Գրիգոր Տաթևացու «Հարցմանց Գրքի» ինքնագիր, գուցե նախնական, օրինակն է։

նելեացն՝ տեառն չնորհք, և սխալանաց՝ տկարս անօթոյ, միայն բարեսէր կամօք յիշատակ բարի առ քոյդ արձանագրեսցի, ի տէր ողջ լեր։

710.

ԱՒԵՏԱՐԱՆ

Փիլդ. 6272, էջ 179—180 (Վան, սր. Գօդոս եկեղեցի)

Գրիչ՝ Պետրոս
վայր՝ Քաջբերո[ւնւո]յ երկիր

Ի ծաղման ճշմարիտ արեգականն, և յայտնիլ աստուածն բանի, նորազուարճ բերկրանօք պայծառացան արարածք։ Արդ, զայս պատուական ակս շափիւղայ... առեալ դսա տէր Թումեճ, իւրն հոգևոր պաշար երկնաճիգ ճանապարհին, սբ տանի առ հանդերձեալ և յահագին դատաստանն...։ Սկիզբն արարեալ գրութեան սուրբ աւետարանիս յայսմ ամի. որ էր թիւ Հայկազեան տումարիս ՊԼԶ. (1387), ի դառնաբեր ժամանակիս, որ աւերեցաւ բաղում տեղիք վասն մեղաց մերոց։ Ցարուցեալ յարևելից չար բռնաւոր ազգն մահմետական, անուն նորա Լանկ-Թամուր, բազում և անթիւ զօրօք պատեալ ի Պարսից մինչև Հռոմաց երկիրն, և եկեալ ի տունս Հայոց, քանգեալ և գերեալ զամենեսեան, և սրախողխող արարեալ անողորմ զհայ և զտաճիկ՝ զորս գտաւ։ Եւ ով կարէ պատմել զչարութիւն և զինաս նորա, զոր արար ի տեղիս-տեղիս։ Արդ, կատարեցաւ աստուածախօս գանձս տէրունեան ի յերկիր Քաջբերո[ւնւո]յ, ի յանապատս, որ Մանուկ Սուրբ Նշան կոչի՝ օծեալ Թադէոսի առաքելոյն, և առ ոտս Գէորգայ զօրավարին, ի հայրապետութեան Հայոց տեառն Զաքարիայի, և ի ձեռնակալութեան երկրիս Ղարայ-Իւսիւֆին, որ է չար և դառն և պիղծ և աւերարար երկրի։ Եւ ես՝ թշուառացեալս և անարժանս և անվարժս ի գրչաց Պետրոս աբեղայ, յանձն առի և տառապանօք և պանդխտութեամբ գրեցի վասն ժամանակիս, որ ամենայն բարի և կերակուր պակասեցան, և ոչ խաղաղութեան տեղիք [կոյ յերկրի]. զայս աղաչանքն առ աստուած ունիմք, որ չտայ մեզ այլ տեսնուլ, զոր տեսաք։*

711.

ՃԱՇՈՑ

Փիլդ. 6273, էջ 177—179 և ՀՇ, 1926 թ., էջ 241—242
(Մերաստիոյ սր. Նշան)

Գրիչ՝ Գէորգ
վայր՝ Նզնկայ մայրաքաղաք

Ի բազմազան տառապութեան տառից գծագրութեան վտառաւորեալն աստուած վտառաւորեսցի, այն, որ օրհնեալ է յամենեցունց,

* Սույն հիշատակարանը ձեռագրից հանված և պատառոտված վիճակում այժմ պահվում է Մատենադարանի № 9223 ձեռագրի (Հիշատակարանների ժողովածու) մեջ։ Ունի նաև հետագայի ստացողների հիշատակարաններ 1399 և 1495 թվականներից։

զորս ոանդծ և էած ի զոյութիւն Արդ, զկնի ամենայն վառաւորանու-
թեան... ելոյէ և ի մէնջ օրհնութիւն ի նուազ և ի ակար հոդոյս անար-
ժանութենէս, որ արժանի արար զիս հասանել ի կատարուն զրոյս...։

Ընդ սրս և ես՝ նուաստ և յետինս ծոցին հետոց հեանալ՝ և ոչ զործոց, անուանն՝ և ոչ բարի վաստակոց, թարմատարս և անարժանս յընկերակիցս իմ, ծոյլ և պղերզս ի դասս քահանայից Դեորգ, որդի Առաքել Երիցու, չունիմ պատասխանի բանից խօսելոյ, զի եմ պար-
տական բիւրոց քանքարոյ, պղերզացայ առ ոչէրն ամենի, և թաղուցի զարծաթ տեառն իմոյ։ Եւ զծաղրեցի զսա ի մայրաքաղաքս Սզնկայ, և հղի իմ կամաւ և յօժարութեամբ յիշատակ լինձ, և այս վերոյզրեալ ննջեցելոցս, ի տաճարս, որ կոչի ըստ սուրբ խաչիս.անուան՝ սուրբ Նշան, և կանդնեալ կայ յանուն սուրբ Աստուածածնին Գրիգորի։

Յայսմ ժամանակի, յորում էր թուական Հայոց ՊԼԶ. (1387), եկաւ ադդն խուժադուժ յայլեկից, ի կողմանց* հիւսիսոյ, որ կոչէր Լանկ-Թամուր, և եկն մինչև յԱրզրում**, և բաղում ոճիրս գոր-
ծեաց | | | -** զոր յետս*** զարձոյց աստուած, և ապօքաք սուրբ Լու-
սաւորչին պահեաց զքաղաքս Սզնկայ և զղաւառս իւր, որք են առ մեզ բոլորակայ։****

712.

ՃԱՇՈՑ

Երեան 4884

17բ Ո՛վ հղրարք, անմեղադիր լերուք, զի բաղում խարարս և խեղճս լսէաք ի ձեռաց Թամուրեն. և սրտերս իրրև ընաւահանգիստ կենայր, վասն այն, որ բաղում սխալեցաք ի զիրքս, անմեղադիր լերուք ազա-
չեմ, զի ժամանակն յոյժ դառն էր։*****

713.

ՁԱՓԱԿԱՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Օքսֆորդ, Ms. Marsh. 17, Տէրայր վրդ. 34, թղթ. 119, էջ 467

Նախագաղափարն զրչի՝ Ներսես

132ա Զներսես տարակուսեալ աղաչեմ յիշել, ՊԼԶ. (1387), Զար է ժա-
մանակս ի չարութեանց մերոց չարաց, զի որպէս սերմանքն հան-
գոյն նման, կունձքնք ն որայքն (*)։ Եւ զվերջն նա միայն գիտէ, որ գիտողն է տնտեսիցն և ևս որդոց մարդկան։

---

* ՀԱ «կոդմանց» փխ. «ի կոդմանց»։

** ՀԱ «յԱրզրում»։

*** Ըստ Փերգամյանի ծանոթագրության «Անխոհեմ ձեռք մի... մի էջ գլխովին եղծեալ էր»։

**** Փերզ. «յետոյ» փխ. «յետս»։

***** ՀԱ «բոլորականն»։

****** Ձեռագրի գրության ժամանակը, հավանաբար, պետք է լինի 1387-ը, Լանկ-Թա-
մուրի առաջին անգամ Հայաստան արշաված տարին։

714.

ՊԵՂՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Երեան 2316

Գրիչ՝ Պետրոս

242ա ...Ի թուակ[անութեանն] Հայոց ՊԼՋ. (1387), ես՝ Նուաստս և տարտամս ի դործոց բարեաց Պետրոս սուտանուն սարկաւագս, որ միայն դանուն ունիմ սարկաւագի և գործն ոչ, որ ցանզացայ գրել զաստուածային յայտնութիւնս ի խնդրոյ պատուելի վարդապետացս՝ Ղազար վարդ[ապետի] և Գրիգոր վարդ[ապետի]՝ հաւրեղբարց իմոց, ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ կենդանեաց և հանդուցելոց. Աղղ, աղաչեմ դամենեսեան, որք կարդայք և լսէք կամ աւրինակէք զսա, մեղաց մերոց թողութիւն խնդրեցէք յաստուածոյ և ծնողաց մերոց, և աստուած զձեր մեղքն չնչէ, և ալստղաց, և որք տմէն աանն. և զինչ դուք մեզ ասէք և խնդրէք, գտջիք և դուք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն, և յամենայն ժամ։

715.

Ա Հ Ե Տ Ա Ր Ա Ն

Նրևան 7631 (տես նաև 1320 թ.)

Հնտ. ստացող՝ Պարսկաստ

272բ Զվերջին ստացողք սորին՝ զՊարսկաստ պարոնն, հանդերձ ծնաւղիւք և ամենայն արեան մերձակայիւք, յիշեսջիք։ Յիշեսջիք և զհարսն իմ՝ զՃահան-Մելիքն, հանդերձ ծնաւղիւք, որ ցանկացաւ սայ անգին մարգարտիս և ցանկալի մատենիս, որ է թագաւորական, որ ցանկա-
273ա ցաւ սմայ Ջահան-Մելիքն՝ դուստր տէր Գրիգորին, ‖ և ստացաւ զսայ ի հալալ արդեանց իւրոց, որ ևրետ դիւր նշանն՝ ԴՌ. (3000) սպ[իտակ], և զերեստեսէնն՝ ԴՌ. (3000) սպ[իտակ], և էառ զսա որպէս հրամայեաց փրկիչն, թէ նմանեցաւ արքայութիւնն երկնից առն վաճառականի, որ խնդրեաց մարգարիտս գեղեցիկս, և դտեալ մի պատուական մար-
գարիտ, երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր և գնեաց զայն
273բ մարգարիտ։ ‖ Աղղ, ցանկանալով սայ այս մարդարտիս, զամենայն զոր ինչ ունէր վաճառեաց և ստացաւ զայս անգին մարգարիտս յի-շատակ իւր և ծնողաց իւրոց։

Աղղ, որք հանդիպիք այսմ սուրբ աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք զստացողք սորա՝ զՋահան-Մելիքն, և զհայրն իւր զտէր Գրիգորն, և զմայրն իւր զԽութլու-Մելիքն, և զայլ ամենայն արեան մերձակայսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, ամէն։

Գրեցաւ վերջին յիշատակարանս ի թվ. ՊԼՋ. (1387)։*

---

* Բացի սրանից ձեռագրում կան նաև հետագա այլ ստացողների հիշատակարաններ, որոնց հեղինակներն են՝ Խաչատուր ապխոպոս Զեյթունցին (1621 թ.), Երուսաղեմի նվիրակ կարապետ վարդապետը (1624 թ.) և այլք։

716.

ԴՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԻԱՑ ԱՐԻՈՊԱԴԱՑԻՈՑ

Երևան 166

Հետ. ստացող՝ Յոհաննես

324ա Զվերջին ստացօղս զտէր Յոհաննէս, և զեղբայրն իմ զտէր Պետրոս, և զծնօղսն իմ զՅովաննէս քահանա, և զմայրն իմ Ադրբաց, և զԱզոռն յիշեցէք ի սրբազան յաղօթս ձեր, և աստուածծ, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ և ձեզ ողորմեսցի, առհասարակ, ամէն։

Որ կարդայք և որ օրինակէք սրտի մտօք թողութիւն խնդրեցէք մեղ։

Դրեցաւ յիշատակարանս ի թվին ՊԼԶ. (1387), տրէ Թ. (9), օրն հինգշաբաթի, և ղիս զսուտ ծրողս յիշե[ցէք]։*

* Ձեռագրից գաղելով այս հիշատակագրությունը չի կարող 1387 թվականից լինել, ըստ երևույթին հիշատակագրության վերջին պարբերությունն արտագրել է գրչի այժմ չպահպանված հիշատակարանից ստացող Հոհաննեսը։

717.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Թուական 1144

Գրիչ՝ որդի Ալեքսացի
վայր՝ Սպատկերտ գաւառ

431ա Հրամանաւ և աւժանդակութեամբ բարուննացս մերոց Յոհաննէսի և Կիրակոսի, նաև հոգւո և մարմնո մեր տածողաց, ուխտի որբում հոչակաւոր նախնաւանդ տանս առաջնորդք՝ յատուկ անուամբ Սուրբ Ծաչ յորջորջեալ, կրօնիւք ընդիրք, և ի Քրիստոս մերձաւորութեանն արժանիք, և հմուտք աստուածաշունչ մատենից, որք վարժիչք և ուսուցիչք եղեն վանաքութեանս մերո, զորս և ընդ որս զրեսցէ տէր ծնօղօք իւրեանց ի դպրութիւն կենացն յաւիտենականաց։

Արդ, այսուհետև, զպատահողդ այսմ տառիս յրնթերցումն, յուսումն և ի գաղափար, աղաչեմ մաղթանաւք յիշել ի Քրիստոս զմեզ և զմերսն, զընթացեալսն և զպատրաստեալս, յաւէտ ևս զծնօղսն իմ ըստ մարմնո՝ զԱլեքսացն քահանայ, և զհաւն զՅովհաննէս քահանայ, և զմայրն իմ՝ զհանգուցեալսն առ տէր, նաև զեղբայրն իմ զՅակոբ կրօնաւոր, որ ի տարաժամ հասակի եղ ի կենաց, և զկենդանիսն՝ զՊետրոս կրօնաւոր, և զՄկրտիչ՝ զկազմող սորին, և զայլ ամենայն աբեհանաոուան մեր, այլ և զղեքի կոկոզսն և զամենայն երախտաւորսն ի սմա, որպէս զի ողորմութիւն գտցուք յիշեցեալքս յիշողօքդ հանդերձ յողորմածէն աստուծոյ՝ աւրհնելոյն յաւիտեանս։

431բ Բայց զրեցաւ սա ի թուաբերութեանն Հայկազեան ‖ ՊԼԷ. (1388), ի գաւառիս Սպատկերտ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, ի զառն և ի նեղ ժամանակի, որում այց արասցէ Քրիստոս տառապանաց քրիստոնէից, և զանշարժ խաղաղութիւն իւր պարգևեսցէ աշխարհի, վասն զի կարիք է խաղաղութեան, և ոչ զո ուստէք օգնութիւն, բաց ի խնամոցն աստուծոյ՝ աւրհնելոյն յաւիտեանս, ամէն։

Ցայսմ ամի եկն անօրէն զանն Թամաւր-Լանկ կոչեցեալ ի քաղաքն Վասպուրական, և առ զղղեակն և քարայատակ արար, զոմանս զերեաց, և զոմանս գահավիժեաց, և զայլս ի սուր սուսերի մաշեաց, և զերկիրն հրով ճարակեաց։

718.

ԾԱՂԱԳՍ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑԻՈՑ

Ներան 471

Գրիչ՝ Սէք

28բ *Կատարեցաւ տառս Կուսութեան հրամանաւ երջանիկ և քոջ բարեբունապետացս մերո[ց]՝ Յոհ[աննիսի], եւ Կիրակոսի, եւ աշակերտի սոցա՝ հարազատ եւ ժրաջան հշակին աստուծոյ Յոհ[աննիս]ի կրաւն[աւորի], ձեռամբ մեղսասէր և փծուն ղրչի Սէք սուտանուն սարկաւագի, աղաչեմ յիշել ի տէր սրտի մտաւք, եւ նոյն ինքն Քրիստոս ձեզ ողորմեսցի, ամէն։**

719.

Ա Հ Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. 99. Լալ. 8ուց. սյուն. 202. Ջուլամերիկի Փոկան գյուղի եկեղեցի. (տես նաև 1339 Ք.)

Հետ. ստացող՝ Տիրացու

Արդ, ի վերջին աւուրս, և երևելոյացեալ ժամանակիս, և յետին զարիս ել ազգն նևատղաց, որ կոչի Թամուր, այլադէմ, այլալեզու, նմանեալ երկրորդ Նեռին։ Ելեալ յարևելից և ընթացեալ ընդ ամենայն տիեզերս, սրո ճարակ արարեալ զամենեսեան, և ըղձացեալս դերի վարեցին։ Ըղվիշտ և ըղկակիծ և ղտտնութիւն ժամանակիս ընդ դրով ՚ի կարէ արկանել։ Եւ բերեալ էր բղոուրք աւետարանս դերի։ Ես՝ Տիրացու կրօնաւոր, ստացայ սուրբ աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ Հայրապետին, Դասապետ քահանայի, և տէր Սէքի, և ամենայն մերձաւորաց մերոց, ամէն։

Գրեցաւ ի Թվ. Հայոց ՊԼԷ. (1388). ընդ հովանեաւ սուրբ առաքելոյն Բարթուղիմէոսի և յառաջնորգ[ութեան] | | | առն հզի և խոնարհի | , |

720.

ԳԻՐՔ ՀԱՐՅՄԱՆՑ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Փերդ. 6273, էջ 180 (Լիմ անապատ)

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Թիլկուրաց գիւղաքաղաք

Փառք... որ կարողացոյց և օժանդակեալ հասոյց յաւարտ այսմ հրաշալի փառաղարդ և լուսաշուխղ հարցմանց և մեկնութեանց անհուն ծովոյս և խորին և անհասական լիմաստից աստուածայինն ի լոյս վարդապետէն Վարդանայ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն. ի թուականութեանն Հայոց ՊԼԷ. (1388), ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին Համկատարեալ, ի գիւղաքաղաքս, որ կոչի Թիլկուրաց, ի գառն և

* Տեղադրում ենք 1388 թվականի տակ նույնացնելով սույն և նախորդ հիշատակարանների հովհաննես և կիրակոս բարեբունապետներին։

յետին ժամանակս, որ Թամուր-Կա[ն]կն խաղ[աց]եալ, եկեալ անթիւ բազմութեամբ բարբարոսօք, և աւերեաց զտունն Արևելեան, ի Սմբրդանդ քաղաքէ մինչև յՆիփրատ Տարօնոյ, և ապա դարձաւ: Զեռամբ ասլիկաը և անհմուտ այսմ արուեստի Ստեփաննոս երիցու, ի խնդրոյ երջանիկ և աստուածահաճոյ խոճայ Ղազարին:

721.

ԿՏԱԿԱՐԱՆՔ ՈՐԴՒՈՑՆ ՅԱԿՈԲԱՑ

Վէնն. 126, Տաշ. Յուց. էջ 413

Գրիչ՝ Ստեփաննոս երէց
վայր՝ Թուրկուրաց գիւղաքաղաք

184բ Արդ, ես լցեալս անչափ մեղաւք,
Հիւանդացեալս ամէն դիմաւք,
Ստեփաննոս երէց եւ ոչ գործաւք,
Յանդգնութեամբ դրեցի ձեռաւք,
Ի Հայոց մեծ թուականիս
ՊԼԷ.-երորդիս (1388),
Ի գեղաքաղաք Թուրկուրացիս
ՅԱստուածածին սուրբ սաճարիս,
Ինդրող ընթի | | |

722.

Ճ Ա Շ Ո Ց

Երևան 7447 (տես նաև 1381 Թ.)

Գրիչ՝ Մարկոս
վայր՝ Ղրի՞մ

ա

494բ ...Յանկացող եղեալք սիրոյն Քրիստոսի և իւր արքայութեանն բարեպաշտ և հեզահոգի Յովանես և համեստ զուգակից իւր Նուրմելիքն, և ստացան ի հալալ արդեանց իւրեանց զաստուածապատում Ճաշոց դիրքս գնով արծաթոյ, [յորդորմամբ բարեպաշտ և հաւատարիմ տանուտերոջ պարոն Խաթպէկի]* վեցհարիւր և Ծ. (650) խարճոճի, ի Կարապետ իրիցու եղբաւրորդուէն՝ Ամիր-Սարգսէն, յիշատակ իւրեանց անջնջելի և ծնողաց իւրեանց...:

...Գրեցաւ յիշատակարանս ի թվարերութիւնն ի ծննդենէն Քրիստոսի ըստ Հայոց հաշուի ՌՃՂ. (1390), եւ ըստ Ցունաց՝ ՌՃԼԶ. (1396), եւ ըստ Ֆռանգաց ՌՃՁՐ. (1388), եւ ըստ Ասորոց՝ ՌՃՀԾԱ. (1381°), և Հարեթական տոմարիս Հայոց ՊԼԷ. (1388), ի փետրուարի ամսոյ ԻԹ. (28), նահանջի ամի, ձեռամբ յոգնամեղի անձին՝ Մարկոս դրչի, և Քրիստոսի Յիսուսի փառք...:

* Փակագծի մեջ առնված մասը ջնջված է և դժվարությամբ է վերծանվում

Գնման արձանագրութիւն

բ

Ես Յովաննէս գնեցի զդիրքս ի Կարապետ իրիցու եղբաւրորդոյն Զ. (600) ապ[իտակ], վկայութեամբ տանուտերանց։
Ես՝ Պուզմիշ հոռոմս՝ քարխանաճիս, վկայ եմ զրոցս.
Ես՝ Մելիքսէթ և Մկրտիչս՝ Բ. եղբայրքս, վկայ եմք.
Ես՝ Հնդուշայս՝ ապրնվեցս, վկայ եմ.
Ես՝ Յեվատշայ գինեծախս, վկայ եմք, որդիք Թաֆրեզլուի.
Ես՝ Սարգիս Անտոնու [որգի՞]՝ կարևորս, վկա եմ։

723.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 6480

Գրիչ՝ Պետրոս

ա

81ա ... Արդ, աղաչեմք զմանկունսդ սուրբ եկեղեցոյ յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ աւետարանիս զտէր Թումա, և զեղբայրն իւր զՍտեփաննոս կրաւնաւորն՝ զհանդուցեալն ի Քրիստոս..., և լինի Պետրոս գրչի։

բ

125բ Ո՛վ, դասք լուսերամից, որք հանդիպիք կենսաբեր սուրբ աւետարանիս, յիշեցէք յաստուածամերձ յաղօթս ձեր զստացող սորա զտէր Թումա զերջանիկ եպիսկոպոսն, և զքրիստոսունակ հոգին՝ զՍտեփաննոս կրօնաւոր՝ զիմոխեցեալն ի Քրիստոս, նաև զաստուածասէր ծնօղքն՝ զհայրն զՇիրինշահ, և զմայրն զՇնօհվոր տիկին, և զհօրեղբարսն՝ զԹումա, և զՅովհա[ննես] | | |

Միւս գրիչ՝ Ատոմ

գ

6ա Զմեղուցեալս յամենայնի, զսակաւ տառապող ցանգիս, զԱտոմ սպասաւոր բանին Քիստոսի յիշել ի տէր աղաչեմ։ Գրեցաւ ՊԼԷ. (1388), մարգաց ի ԻԶ. (26) և նոյեմբեր Դ. (4), որ է սահմի ԻԶ. (26)։

724.

ԱԻԵՏԱՐԱՆ

Երևան 9112 (տես նաև 1581 և 1687 Ք.Ք.)

Գրիչ՝ Թումա
վայր՝ Շիրիան

299ա Գրեցաւ բերան և բարբառս փրկչական և աստուածական տեառն մերոյ Քիստոսի Քրիստոսի ստեղծողին<՛ին> մերո ի տեղիս, որ կոչի Շիրիան, ձեռամբ յոգնամեզ և անարհեստ և վշուն գրչի Թումայի՝ անուամբ քահանայի, ի Թվ. ՊԼԷ. (1388), յարեդ ամսու։ Անմեղադիր լերուք, զի տեղիս անհաստատ էր, շտապով գրեցաւ։ Որ զմեզ յիշէ և զերախտաւորսն մեր՝ յիշեալ լինի ինքն և իւրքն ի Քրիստոսէ աստուծոյ մերո, որ է աւրհնեալ յաւիտեանս։

725.

Ճ Ա Ռ Ը Ն Տ Ի Ր

Մաքսուդ, 8ուց. Ագուլիսի. 24, Աբաբաս, 1911 թ., էջ 760—765

Գրիչ՝ Կարապետ
վայր՝ Ախթամար

ա

Վասն գալոյ Լանկ-Թամուրին բազում զաւրաւք և ճեծկովք,
որ կոտորեաց զամենեսեան

528բ Արդ, ով եղբարք և հաւատացեալք Քրիստոսի, լուարուք զպատուհաս բարկութեանն, որ եկն եհաս ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Քանզի ներէր մարդասիրութեամբ և ողորմութեամբ, եռանդնաշարժ սիրով երկայնմտութիւն սիրոյն աստուծոյ, յորժամ էր կամք մարդոյն տրամադրեալ ի բարեբուն բաբին, և կատարող գոլով կամաց արարչին։ Իսկ յորում ամանակի ոչ հնազանդեցան աւբինաց ստեղծաւղին իւրեանց, բարձեալ բարեգութն աստուած զինամ ածելն բարձրութեամբ ձեռինն առ ի հարկանել, և երթալով երթայր ընդ խոտորնակին ուժդին խոտորնակ, որպէս է տեսանել և նախնոյն Ադամայ մինչև առ յապա | | |

Ոմանք երկրակարկափ պատառմամբ յանդունդս տապալեցան, ոմանք այսպէս և ոմանք այնպէս սաստկակափ դանիւ տանջեցան։ Որպէս եղև ի վերջացեալ աւուրս և յերեկոյացեալ ժամանակիս, ի հայկազեան ազգիս թուոյս տումարի ՊԼՋ. (1387), ելեալ այր անաւրէնն ըստ նմանութեան Գոգիսթայ, Լանկ-Թամուր անուն կոչեցեալ, գրեթէ սկաւառակ եւթնեկի լցեալ դառնութեամբ բաժակաւ ի ձեռինն աստուծոյ, զոր եհեղ ի վերայ չարագործ ազգի մարդկայնոց, ըստ նախնոյն Աւսւրայ, Նաբուպաղասբայ և այլոց վայրենաբարոյիցն։ Ուստի շարժեալ յելիցն արեւու, ի շահաստանէն, որոյ անուն կոչի Սմբրղընդ, և ձայն ահարկու արկեալ ի վերայ բազում գաւառաց, զոր կային տէրութեամբ այլոց, և յոլովք արտաքոյ յերկիւղէ և ի կարծեաց յոչ կամաց զետեղեալ | | | զաւրաց բազմութիւն հարիւր հազար սուսերամերկաց երկաթակուռ զինուորաց։ Սկսեալ ի յութհարիւր և յերեսուն (1381) թուին խորհուրդ գալստեանն, և յետ վեց ամի ապա եհաս առ մեզ շշուկն զողացուցիչ։ Զի յամսեանն մեհեկի ազդեաց մահն վաղահասուկ ի բոլոր աշխարհս հայաստանեաց։ Ահա, անդ էր տեսանել դառնասուռ ահաղնահայեցուածեան գազանաբարոյ մարդոց, զի լսողքն սրտաթափ լինէին և հանդիպողքն, տեսանելով ի հեռաստանէ զփոշի ոտից նոցա իբրև զամբ միգախառն, զի աբագէին երիվարք խստեբախ, և հիանալին ազդ մարդկան յանսովոր պատահմանցն։ Թէ լի-

նէր ուրուք գաղթեալ ի բարձրակատար գագաթս լերանց, և անգուստ ի խոնարհ նայելով ի վերայ լեգէոնախումբ կուտակեալ խռովութեան ծովուն, սոսկանայր հոգին ի մարմինն, որ թէպէտ կենգանի, այլ վատթար գոլով քան զրազմաւբեա մեռեալս, ի փայլմանէ սուսերացն, ի ճաւճելոյ բոմբացն, ի գաբրելոյ երիվարացն, ի փորընչելոյ կառացն, ի խրխնջելոյ բարձրապարանոց ծովային ձիոցն, ի ճչելոյ ձայնից, ի տեսութենէ անհուն հեծելոցն, որ եռային, զեռային, զդաշտս ծածկէին, ղլերինս բոլորէին, զլարս լնուին, զյայնանիստ տեղիս փակէին, աշխարհալուր զձայնս առնէին, զերկիր ողջոյն աստղակարկաջ և բոսորաներկ խորանաւք լնուին և ութաւբեայ ճանապարհաց դապանգակ և զկայմ լարուցն մի առ մի հիւսեալ մանէին։ Եւ թէ ոք ընգգիմանայր նոցա անառիկ զզեկաւ, վաղվաղակի անգր ժամանէին իրրև զրազմութիւն մարախոյ, բոլորէին, ճչէին, գոչէին, ոռնային, բառաչէին, հաջէին, հառաչէին, խխընջէին, որոտային, զգետս դմղրմէին, զնազարայան հարկանէին, զչարխն լարէին, զնետոն տեղային, | | | որմբաքարսն հոլովէին, զրլգիհոնն ձգէին, զմճնեղ մեքենայից | | | նէին և յերկնուստ | | | սէին, փակէին, քանդէին, քարայատակէին, փորէին, փոս հատանէին, կռփէին, կռանէին, զամաց հազարաց շինուածս՝ միաւրեա անհետ կորուսանէին։ Իսկ նոքա, որ ի ներքս ամրոցին էին՝ տապէին, տագնապէին, թուլանային, սարսէին, սարսափէին, ծարաւէին, նքթէին, նքողէին, երկիւղիւ երկնչէին։

Անդ էր տեսանել զլաց ծնաւզացն, զաղէտ զաւակացն, զգալբումն աղեացն, զայլայլումն դիմացն, զզեղնանալ երեսացն, զնուազումն ձայնից, զկապումն ոտից, զդագարումն ձեռացն, զհամբանալ լեզուացն, զխափանումն մտացն։ Ոմն աղերսէր, ոմն աղաղակէր, ոմն հայցէր, ոմն պաղատէր, ոմն խնգրէր, ոմն աղաւթէր և ոմն արտասուէր։ Եւ ոչ լսէր հեշտալուրն աստուած վասն մեղաց մերոց և անուղ[ղ]այ գնացից, այլ մատնէր ի ձեռս անաւրինաց։ Իսկ յորժամ բռնանային և առնուին գրերգ ուրուք, | | | աղաղակ բառնային, և ի լեառն քաղաքի կամ բերդի հաւաքէին, գոհ տուեալ առժամայն զղրունս երկաթիս խորտակէին, յամենայն կողմանց ի վեր խաղային, իրրև զծով փրփրաղէղ կո[խակաւք զառհասարական ծածկէին։ Աւազ ժամուն, ոմն արիւնաթաթախ գիագլոր թաւալէր ի մէջ արեան ծովուն, ոմն կիսակտուր գլուխն ի յանձնէն ջուր խնդրէր և ի ծարաւոյ անդէն մեռանէր, ոմն անկեալ գլուխ ի վայր և արեան աղբիւրն ի բերանոյն ելանէր։ Ո՜հ ձայնին, ո՜հ աւաղին, ո՜հ կսկծոյն արտասուագին, ջոկ առ ջոկ, բոլուկ բոլուկ, երամ երամ, ոգկուզաւբէն անկեալ ղնէին, մրցացի, աքացի և ծղացի։ Անգ, վա՜յ, աստ վայ՛ վա՜յ, անդ ա՜ւշ, աստ վա՜շ։ Ահա անդորրացաւ ծով հեծելոցն, ահա ի խոյզ և ի խնդ[ի]ր ելին,* և խնդրէին, հարցանէին զքրիստոնեայսն, և յորժամ տեղեկանային՝ անողորմ սպանանէին | | | Թիւս հազարաց. զհրաշագործ եպիսկոպոսունսն սրոյ բերանոյն տային, զսրբասնեալ քահանայսն քարաջարդ զգլուխսն առնէին, զՔրիստոսի հաւտն կերակուր շանց արկանէին, զտղայսն առա-

* Տպված է «խնդրելին»։

թուր ձիոց առնէին, զկանայսն խայտառակէին, զմանկունս նոցին գերի վարէին. իրրև զկալ կաճառայլից զտղայսն ձիովք կասէին, և փոխան ցորենոյ արիւնս զետոց բղխէին, և փոխանակ յարգի զոսկեբս իրրև զփոշի յերկիր հոսէին։ Ցագեցան գազանք, ձանձրացան թռչունք, տարակուսանացան գայլք, թէ զում ուտէին մին՝ զհայրապետաց, թէ զքահանայից, թէ զսարկաւագաց, թէ զպաշտաւնէից, զճգնաւորաց, թէ զլեռնականաց։ Դարձեալ, ժամանէին յեկեղեցիս, առպալէին զսեղանս, այրէին զղրունս, պզծէին զտաճարս, խորտակէին զտուփս խնկոց և հաղորդաց, ուրացուցանէին ի հաւատոյ և ապա սպանանէին։ Ի սով սատկութեան սովացուցանէին, մինչ զի զշուն, զկատու, զէշ, զձի, զհեզձուկ, զմուրտառ, նախ զսիրասնունդ զաւակն խորովէին և ուտէին. բարձաւ զաւրութիւն հացի և ջրոյ։

Եւ արդ, ճշմարիտ ասեմ ի Քրիստոս, որ ի հազարէն և ի բիւրէն զմինն մասնաւորեցի վասն ձանձրութեանն լսողաց։ Եւ այս ամենայն եղև վասն ծովացեալ մեղաց մերոց։

Ի յայսպիսի դառն և աղէտակոծ ժամանակիս, ես՝ նուաստս ի գրչաւորաց Կարապետ քահանայ, սկսայ զգիրքս այս և կատարեցի, ով հանդիպիք այս ողորմելի պատմութեանս զիս՝ զմեղաւոր գրողս, և զՍտեփաննոս միայնակեացն յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ

...Արդ, ի յայսմ գառն և ի տարտարոս ժամանակիս երեւեալ խաբեբայ և սուտ միայնակեացն Ստեփաննոս, և ելեալ ի խնդիր այո աստուածային անկողոպտելի տէրունական դանձուցս...։ Վասն որոյ մեծ վտիտմանաւք եւս գրել դա Ստեփաննոս միայնակեացն, յիշատակ անջինջ հոգոյ իւրոյ և ծնաւղացն՝ Մկրտչի և Խուանդի, և քերցն՝ Ուզուն-Մելիքի և Շահար-Խաթունի, և փեսային իւրոյ՝ Յովաննիսի, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց։ Եւ եւս զա նուէր և ընծայ ի դուռն սուրբ եկեղեցեացն Ամենափրկչին և Տիրամաւր | | | ի] գեաւղն Գաւաշ...։

Եւ արդ, ես՝ ամենամեղ և անարժան ծառայ ծառայիցն աստուածոյ Կարապետ անարհեստ դրիչ, յանձն առի տկար անձամբ և ծանրաբեռն մեղաւք, ոգէտ գիտութեամբ և անիմաստ մտաւք, անհմուտ գրոց գիտութեամբ և անվարժ արուեստիւք, յանդգնութեամբ ձեռնարկեցի ի մեծ գործս յայս, ոչ ըստ իմում արժանաւորութեանն, այլ ապաւինելով յամենակարաւդ զաւրութիւն պարգևատուին, որ տայ առատապէս և ոչ նախատէ. բազում և մեծ աշխատանաւք հասուցի զա յաւարտուին, յաստուածաբնակ կղզոյս Ախթամարայ, ընդ հովանեաւ ամենայաղթ սուրբ Խաչին և սուրբ Նշանին, ի թուակա[նութեան Հայոց] ՊԼԸ. (1389), ի հայբապ[ետութեան] տէր Զաքարիայի, վասն որոյ բարեխաւսութեամբ սուրբ և փառաւորեալ աստուածածնին Մարիամու և աղաչանաւք ընտրելոց սրբոց և սրբոյն Ստեփաննոսի, Քրիստոս աստուած՝ թագաւորն երկնաւոր... ծովացեալ մեղաց իմոց մաք-

բումն սրսացէ և երկնից խոբանաց մտից արժանացուսցէ ըստ իւրում ողորմութեանն։ Նախ զծնաւղքն իմ՝ զՄկրտիչ քահանայ և զԹագեխարուն, և զեղբարքն՝ զԶաքարիայ, որ զբելոյն աւգնեաց և ծաղկեաց զՅովսեփեան՝ որ աշխատեցաւ ի կոկել Թղթիս, և զեաչիկ, և զքեռին իմ զՊարըզևոս, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և զամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանիք և զննջեցեալք։ Եւ զուսուցիչն մեր զԿարապետ կրաւնաւորն՝ հաւրեղբայր մեր, և զայնոսիկ, որք երախտաւորք եղեն մեզ ի պէտս մարմնաւոր պիտոյից, եւ զկենակիցն իմ զԳուռմեղիբ...։

[Յիշեցէք և զ]պատուական քահանայքն, որ են ի զեաւղն Գաւաշ, զ[Ց]սեփաննես վրիպոփայն, որ է նա որդի մեծ քահանային Թադէոսի, և զերկու Թումայն, և զերկու Ստեփաննոսն, և զՍարտիրոսն, և զԳրիգորն, և Ժամահարն, և զԿիրակոսն, զի վայելելով զերկրքս ուրախասցին սովաւ և յիշեսցեն յաղաւթս իւրեանց զտացողն և զերդողն և զաշխատողն։ Եւ զտանուտէրքն՝ զմեծ և զփոքր, զհաւատարիմ տանտիկնայքն, զայր և զկին, զծեր և զտղայ, պահեսցէ Քրիստոս աստուած ի խաղաղութիւն, և արժանի արասցէ արքայութեան իւրում, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Յիշեցէք ի Քրիստոս զՅովաննես սան իւր և զայլ սաներն և աստուած զձեզ յիշէ։

726.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 3487

Գրիչ՝ Յակոբ Ղրըմեցի

վայր՝ Նկեղեաց գաւառ, Կապոսի վանք

139ա *... Արդ, ես՝ Յակոբ Ղրըմեցիս, ունայնագործս ի բարեաց և ուխտազանց գտեալս ի տեառնէ, նայ և վատթարս ի մէջ սրբ[ա]զանից՝ ըստ անարժան դնացից, դրեցի զերեքեան գիրքս զայս իմով ձեռամբ անարհեստ գրչի։ Առաջին՝ զՀոգոց և զՋաւրութեանց Տոբին, յերկրորդ զԱռաքինութեանց հոգոյն, երրորդ՝ Վասն բնութեան հրեշտակացն։ Ի թվականութեանս Հայոց՝ մեծ թուականին ՊԼԸ. (1389), և փոքրըն ՅԸ. (306), ի գաւառիս Նկեղեաց, ի հռչակաւոր վանքս, որ կոչի Կապոսի, ի ստորոտ լերինս Սեպուհու, ընդ հովանեաւ կենաց բարեխաւսին սրբոյն Յակոբի, և ետու զսա Աբրահամ արեղայինն՝ բանի սպասաւորի և գրոց աշակերտի քոյ հռետորին Տզնկացոյ Գեորգ վարդապե-*

139բ *տին, || զորս յուսամ յապէինազն* աստուած, զի խազաղութեամբ վայելել տացէ զսա Աբրահամ գրոց աշակերտին, երկար ամեօք և յամեբամ ժամանակօք, և հասուցէ յաստիճան կատարել վարդապետութեան, և պահեսցէ ի կամս իւր, ամէն։*

Եւ զբառագիրքն իմ, յորում Փառք ի բարձունսն մեկնչոյն գրեալ է ի սկիզբն, ետու Յովաննես արեղային՝ գրոց աշակերտին և բանի սպասաւորին։

---

* Իմա՝ «ապենքազն»-անկաթօ։

727.

ԱԽԵՏԱՐԱՆ

Վէնետ. 151, ծուց. Ա. էջ 652

Հետ. ստացող՝ Սահակ

337բ Ընդ նմ[ին] և զվերջին ստացողս՝ Սահակ քահանայ, և զղեռայրուս զաւակ սորին Յոհաննէս սարկաւագին, և զեղբայր սորին՝ զԱբրահամ, և զքեր սոցին՝ Ո[ւ]ստիաննէ, և զՆիկիսէ, և Մայրիամ, և զմայր սոցին Տիրոսի. և զծնողսն իմ՝ Գէորք քահանայ, և զհանկուցեալ զմայր իմ | | | ին, և զեղբարսն իմ զհանկուցեալ ի Քրիստոս՝ զտէր Զաքարէ եպիսկոպոսն։ Արդ, բարեխաւս ունիմ սուրբ աւետարանս, զի թողութիւն շնորհեսցէ յանցանաց մերոց և ձերոցդ։ Եւ որք յիշէքդ յիշեալ լինիք և դուք տոալչի ահեղ ատենին Քրիստոսի, և թողութիւն խնդրելով մեղաց մերոց և ձերոց, և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն։ Գրեցաւ ի թվին Հայոց ՊԼԸ. (1389), զվերջին գրող ինաղանց և սխրս պատառ ծոմն. (այսպէս)։

728.

ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ

Եղեան 1142

Գրիչ՝ Ներսես

ՊԼԸ. (1389)։*

543ա ԶՆերսես անարժան սպասաւոր բանի աղաչեմ յիշել և անմեղադրելի արձակել ի բամբասանաց։

* Թվականը գրված է 543ա էջում։

729.

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ

Թղթեան 9223,է (տես նաև 1495 թ.)

Ստացող՝ Թումա
վայր՝ Աղթամար

3ա Ես՝ տէր Թումա՝ յետինս ի հայրապետաց և առաջինս ի մեղաւորաց, յոյս առ Քրիստոս աստուած եղի հաստատուն հաւատով, և եռափափագ սիրով, եռանդնաշարժ սրտիւ, ետու ծրագրել զկենսաբեր սուրբ աւետարանս, և ըստ կարի զարդարել յարծաթ և յոսկի, ի հալալ արդեանց և ի խոնջաքրտն երկանց աշխատանաց։ Եւ ետու զսա ի գուռն գերահրաշ և երկնանման կաթուղիկէիս՝ սուրբ Խաչիս Աղթամարա, յիշատակ անջնջելի և կտակ անդառնալի մեզ՝ երկուց եղբարցս՝ Թումա եպիսկոպոսի և Ստեփաննոս կրօնաւորի, և ծնօղաց մերոց և հօրեղբօրորդւոցն՝ Մկրտչին և Աւետիքն, և ամենայն արեան մերձաւորաց և երախտաւորաց։ Նաև լերդահատոր համշիրակ եղբարց մերոց, որ են սպասաւոր սուրբ եկեղեցոյս՝ Զաքարիա և Կարապետ, Կոստանդ և Աւետիս, Աստուածատուր և Մկրտիչ, Յոհաննէս և Պետրոս, Ստեփաննոս և Յոհաննէս, Գրիգոր և Մխիթար, Ստեփաննոսեանքն և Կիրակոս, Ստեփաննոս և Սարգիս, և Մկրտիչ միակեաց, և Արև, || որ հա-
3բ նապազ աղօթեն բազկատարած մաղթանօք զփրկութիւն ամենայն աշխարհի...։

Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ Խաչիս յափշտակելով, կամ գողանալով, կամ ծախելով, կամ գրաւելով, զատի ի Քրիստոսէ քէ յանգգնի և արասցէ անիրաւութիւն, և մասն գՅուդային առցէ և զայլ խաչահանուացն։ Իսկ առաջնորդք և փակակալք և դասավար, որ զաղաչանս մեր կատարեն՝ կատարեսցի խնդրուածք նոցա առաջի Քրիստոսի աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յերիս յաւիտեանս՝ ընդ հօր և սուրբ հոգւոյն, աստուած ի վերայ ամենայնի, ամէն։

Ի թվին. ՉԼԹ. (1390) վայելչացաւ, ի փառս Քրիստոսի։

730.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Թղթեան 4938

Գրիչ՝ Մերուժ
վայր՝ Ոստան

ա

202բ ...Գրեցաւ սա ի թվականիս Հայոց ՉԼԹ. (1390), ի քաղաքիս Ոստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սրբոյն Ստեփանոսի

նախավկային, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, ձեռամբ ամենամեղ և անիմաստ ե վայ և եղուկ գրչի Ներսուցի։ Արդ, ցանկացող եղեալ այսմ աստուածային և սուրբ կտակիս երջանիկ և պատուական հայրն Յոհաննէս՝ առաջնորդ վանաց սրբոյն Վարդանայ,* որ կոչի Ապազվաձ,** քանզի յոյժ փափագմամբ ետ գրել զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց՝ Յովաձիսի և Թարխաձի, և անուցչին իւրոյ Խուրլուի...։

293ա ...Դարձեալ կրկին աղաչեմ զամենեսեան, յիշեսջիք ի Քրիստոս զերջանիկ և զսրբասնունդ փիլիսոփայն զԹումա, որ զաւրինակն շնորհեաց, պարզեեսցէ նմա տէր աստուած զերկնից արքայութիւնն իւր և ծնողաց իւրոց, և Քրիստոսի աստուծոյ փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

բ

1բ Տէր աստուած վայելել տացէ զսա ՅոհաՆՆէս վանից հաւրն ընդ երկայն աւուրս, և յետոյ՝ անչինչ յիշատակ պահեսցէ զսա հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց։ Եւ զիս՝ զմեղուցեալ ծաղկոդս և զգծոդս՝ զՆերսուն, յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ [յիշէ]։***

Նուիրատու՝ ՅոհաՆՆէս

գ

Ես՝ ՅոհաՆՆէս, առաջնորդ անապատիս Ապազվաձիզ, ետու գնաբեկացիս սուրբ եկեղեցւոյս, յիշատակ ինձ, և ծնաւղացն իմոց, և ամենայն արեան մերձաւորացն...։

731.

ԱՒԵՏԱՐԱՆ

Երեան 4941

Գրիչ՝ Զաքարայ
վայր՝ Աղթամար

ա

278ա ...Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, և ի թուին Հայոց ՊՀԹ. (1390), ձեռամբ Զաքարայ սուտանուն կր[աւնաւորի], անիմաստ և ախմար գրչի...։****

278բ ...Որք պատահիք սմա տեսութեամբ և ընթերցմամբ, յիշեսջիք յաղաւթս ձեր զստացողք սորա՝ զպարոն Թադէոսն, և զծնողքն իւր՝ զՄարտիրոս և զՄարգարիտ, և զեղբայրն՝ զԹաւաքալ, և զազգն ամե-

* «Վարդանայ» գրված է մի այլ վանքի ջնջված անվան վրա, նոր ձեռագրով։
** Գանվում է Նարեկից արևելք, մեկ ժամվա հեռավորությամբ։
*** Ներսուն ծաղկողի սուրբ հիշատակագրությունը գրված է սկզբի քերթի վրա, գրիչ նարեկացու նկարից ցած։
**** Շնորհալի և վարժ գրիչ է։

նայն առհասարակ՝ զկենդանիք և զհանգուցեալքն, և զկենակիցն զխուբլումկիիմ, և զնորին ծնողքն՝ զԱմիր և զՇեռհուր տիկին, և զեղբարքն՝ զՍահփաձոս և զՄկրտիչ, և զտղդն ամենայն առհասարակ։ Եւ. զսրբասէր և զպատուական քահանայն զՅովաննէս փիլիսոփայն, որ յայսմ ամի տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Ք[րիստոս], յիշեցէք և աստուած-ողորմի ասացէք, և զերախտաւոր հոգևոր քոյրն մեր զԱննա հաւատովոր, ընդ նոսին և զանպիտան գրիչ Զաքարայ, և զծնողքըն իմ՝ զՄկրտիչ քահանայ և զԹանկխաթուն, և զեղբարքն մեր՝
279ա զԿարապետ քահանայ և զՅովաննէս, որ աշխատեցաւ ի կոկել ‖ թղթիս։ Եւ զուսուցիչն մեր զԿարապետ կր[աւնաւոր]՝ զհանգուցեալն ի Ք[րիստոս]...։

ԶՍարգիս քահանայն, որ կապելոյն աւգնեաց և աշխատեցաւ, յիշեցէք ի Ք[րիստոս], և աստուած ողորմի ասացէք ծնաւղաց նորա։

բ

...Այրն աստուածայսէր Թադաչարն...ետ գրել զաւետարանս ի
279բ հալալ գոյից իւրոց, եւ ետ զսա սարի սուրբ ‖ Գորգին և սուրբ Աստուածածնին՝ անչինչ յիշատակ իւրն և ծնաւղացն։ Իսկ առաչնորդք սուրբ ուխտին տան ի տարին Գ. (4) օր ժամ Թադաչարին, նաև կենակցին իւրոյ, քանզի շինեաց չաղաց և զայն ևս ետ սուրբ ուխտիս...։

Նուիրատու՝ Թադաչա՞ր

գ

279բ Այլ չնորհեցի զսա ժրաչան քաչ աշխատողաց և ծնաւղք կենաց բանին, զաւրէն մեղուաց չրչելով ի զերբուկս խրթնահայեաց աստուածաշունչ գրոց բերելով զքաղցրահամ գիտութիւն ի բչինչս բանաւոր մտաց քաղցր ոգւոց, մեծն ի պըւէտից, վարժավարժից պետն՝ վարդապետին Սարգիս, և ճգնազգեացն վարդապետ Ցոհաննէս, և Թումայ վարդապետ, և Յովաննէս վարդապետ։ Եւ հեզահոգի հայրն վանից,
280ա որ և անուն ‖ Պատկ յորչորչի, և զայլ միանձունս և զկրաւնաւորս սուրբ ուխտիս...։*

732.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թուական 284**

Նուիրատու՝ Ըսպիլ
վայր՝ Երուսաղէմ

Ի թվականութեանս Հայոց ՉԼԹ. (1390), և ի կաթողիկոսութեանն տեառն Թեադորոսի, և յեպիսկոպոսութեանն Երուսաղէմի տէր Գրիգո-
328ա րիոսի Մըսրցոյ, ‖ բերաւ աստուածազարդ և չորքծագեան եղեմատուխ քառավտակ և աստուածախաւս սուրբ աւետարանս ի Տարսուսոյ

* Շարունակութիւնն անհետաքրքիր է։
** Ձեռագիրն ընդօրինակված է 1272 թվականին։

ի սուրբ քաղաքս Երուսաղէմ։ Զոր երեր հաւատարիմ աղախինն Քրիստոսի Ղազիլ իրիցկինն, և եղ ի սուրբ Ցակոբ, առ ի յիշատակ իւր, և առն իւրում Գրիգոր քահանայի, և զաւակին իւրեանց Յոհաննիսի, նայ և առաջին ստացողին Սմպատայ, և կողակցին իւրոյ Տիրացիին։ Վասն որոյ, առ ոտս անկեալ երկրամած ղիմօք, աս՝ մեղուցեալ Ղազիլ, և աղաչեմ զերաժս եպիսկոպոսաց, և ղքահանաից, և զսարկաւագաց, այլ և զամենայն լսողաց դասս, որք վայելէք ի քաղցրաճաշակ յեգեմայտունկ վուռակաց քառաձայնեայ | | . անաց կենդանական աստուածախաւս [աւ]ետարան բանիցս, առ ոտս անկեալ աղաչեմ, յի-
328բ շեսջիք զիս՝ զմեղուցեալ | Ղազիլ, և զԳրիգոր երէցն իմ, և զաւակն մեր զՅոհաննէս, ընդ նմին և զառաջին ստացող սորայ զՍմպատ, և զկողակիցն իւր զՏիրացն յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, և աստուած ո[յ]իշողդ յիշէ, ամէն։

Եւ եթէ ոք զսուրբ աւետարանս բռնաբար իշխանութեամբ կամ զորութեամբ, վասն իւր ագահ բաբոցն, հանցէ ի սուրբ քաղաքէս Երուսաղէմի, իւր առանձին ստանալով կամ ազգականի շնորհելով, ինքն Քրիստոս լիցի նմայ դատախազ յիւր մեծ և ի սոսկալի ատեանին, և եթէ ոք զ[յ]իշատակս եղծանել կամեսցի ի սուրբ աւետարանէս՝ նոյնպէս զատեսցի ի Քրիստոսէ, ամէն։

Ստեփանոս մեղաւորս գրեցի զսակաւ յիշատակս, աղաչեմ յիշել ի տէր։

733.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Եբևան 2090

Գրիչ՝ Վարդան

վայր՝ Մօտ առ մայրաքաղաքն Սուլղաթ

290բ ...Որում ցանկացաւդ եղեալ Նովք միայնակեացն և ետ գրել զսա, զի ետես զանհամար ազգս անաւրէնութեանց և ախտից՝ զորս սա թուէ առ մեզ բազմապատկաբար կատարեալ...։

291ա ...Եւ զձեզ աղաչեմ, որք պատահէք զինչ աւրինակաւ և իցէ, յիշել աղաւթիւք զՆովք միակեացն, և զծնաւղսն իւր, և զամենայն արեան մերձաւորսն։ Յիշեսջիք զԳրիգոր քահանայ և զՄխիթար, որ զթուղթն շնորհեցին, յիշեսջիք զԱետիս միակեցն, որ ի գինն աւգնական եղև, յիշեցէք զառաջնորդ սուրբ ուխտիս՝ զՅովաննէս միակեցն, որ զմեզ ժողովեց, և ի կերակուր և յամենայն գործս ձեռնտու եղև մեզ։ Յիշեցէք զՆերս և զՄովսէս կրաւն[աւոր], որ մեզ պանդխտակից եղան և խիստ երախտաւոր են, յիշեցէք զպատուելի քահանայ և զիմաստուն՝ զՍտեփանոս, որ մեզ կարեկից եղև և զաւրինակն շնորհեաց։ Ընդ նոսին և զեղկելի գրչակս՝ զՎարդան սարկ[աւագ], զտարտամս ի բարի և զգաստս ի չարիս, զբանական լուսով թերիս և զխաւարաւ բնա-
291բ ւթեն ի լիս, զմոլորեալս յանապատիս, || զպանդխտացեալս յաւտար երկրիս, յիշեցէք յաղաւթս, հանդերձ ծնողիւք մերովք և ամենայն արեան

մերձաւորաւք, զի և դուք յիշեալ լինիք ի նոյն բարի աւրհնելոյն յամենայնի, ամէն։

Արդ, գրեցաւ սա ի թվ. Հայոց ՊԼՔ. (1390), տրէ ԺԶ. (16) և նոյեմբեր ԻԴ. (24), յաշխարհիս Հոնաց, մաւա ատ մայրաքաղաքն Սուլղաք կոչեցեալ, ի սուրբ մենաստանս, որ կոչի Հայր Ցուլաձիսի, ատ գուբս տաճար[ի] տիրամաւրն և այլ սրբոց, ի հայրապետութեանն Թէոդորոսի և յեպի[սկոպոսութեան] աշխարհիս այս տէր Ստեփաննոսի, Կրկին աղաչեմ զամենեսին, որք հանգիտիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք սրտի մտաւք զՆՆովք միա[յնակեցն] և զծնաւղսն իւր, եւ զանարհեստ գրիչս և զծնաւղսն իմ, և խոշորութեանն և սխալանացն մի մեղադրէք, զի կար մեր այսքան էր, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։

734.

ՎԱՍՏԵԱՆ ՈՂՔԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Երևան 1874

Գրիչ՝ Թումա
վայր՝ Վաճ

ա

368ա Փառք...որ հասոյց զանարժանս յաւարտ սուրբ տառիս, զի գրեցաւ սայ ի Թուականիս Հայոց յուԲհարիւրերորդի քառասուներորդի (1391), ի քաղաքս, որ կոչի Վաճ, ընդ հովանեաւ տիրամաւր սուրբ Աստուածածնին, և սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, և սրբոյն Վարդանայ զաւրավարին, և սրբոյն Սահակա, ձեռամբ ամենամեղ և անիմաստ Թումա քահանայի և սուտանուն գրչի։ Զոր տեսեալ զայսպիսի զանձս աստուածային և պայծառ լուսով հոգեկիր և բնտրեալ կրաւնաւորն Սիմեոն, և ցանկացեալ այսմ աստուածային փարթամ զանձուցս և ջերմեռանդ սիրով հոգոյն սրբոյ և մեծափափաքմամբ
368բ ստացաւ զսա յիշատակ հոգոյ իւրոյ և ծնաւղացն՝ ‖ Յովաննիսիոն և Հռիփսիմին, և եղբարցն՝ Մարտիրոս կրաւնաւորի և Մուրատ մահդասոյ, և քեռն՝ Վարդանա, և այլ ամենայն ազգականացն առհասարակ։ Եւ ետ զսա գրել ի յարզար յընչից իւրոց, զոր տէր աստուած վայելել տացէ նմա, և պահեսցէ զնա անսասան մինչ ի խորին ծերութեան. և յետ ելից աստեաց սրբոց կուսանացն մասնակից և դասակից արասցէ, հանդերձ ծնաւղաւք և ամենայն ազգականաւք, ամէն։

Եւ արգ, ես՝ անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց, անկարգս ի կարգաւորաց, անյիշելիս ի գրչաց, անարհեստս ի յարուեստաւորաց, տգէտս ի գիտնականաց, անբանս ի բանականաց բազմամեղս Թումա, տեսի զսէր և զփափաք հոգևոր հաւրն իմոյ Սիմեոն կրաւնաւորի, և իմ տկար անձամ[բ]ս յանձն առի, և ամենակարող զաւրութեամբն
369ա աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս ‖ զայս ի գառնացեալ և ի վշտաբեր ժամանակիս, յորում էր Թիւս Հայոց Պե. (1391), ի հայրապետութեան տեառն Զաքարիայի և մեր հայրապետին՝ տէր Սահակայ։ Այնց չար էր ժամանակս, որ ի չորս տարին բուին գրեցի, զամէն վախստական կացինք ի կատարս լերանց՝ քաղցած և պանդուխտ, և ամենիքեան մեռեալ էինք կենդանաւին ի յահէ Թամուրին։ Այլ, ո՜վ կարէ զայն չարութիւնն պատմել և կամ գրել, եւ դուք հանգիպեալքգ սմա՝ պատուական հարք և եղբարք, բնթերցողք և լսողք և աւրինակ գնողք, յերես անկեալ աղաչեմ զսրբութիւնդ ձեր, ասասջիք լիակատար բերանով՝ Ջրիստոս ճշմարիտ աստուած, յորժամ գաս հայրենի

փառաւք ի դատել զամենայն արարածս քո, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնի՝ ծնաւղի քո, և ամենայն սրբոց քոց, քաղցրալուր բարբառով կոչեա յանուանէ զծառայն քո՝ զՍիւմեոն քահանայ, զծնաւղսն իւր և զազգն ամենայն, և տուր նոցա լսել զաւրհնութեան
369բ ձայն քո, ‖ եթէ՝ եկայք բարի և հաւատարիմ ծառայք, մտէք յուրախութիւն տեառն ձերոյ՝ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իմոյ, ժառանգեցէք զարքայութիւն իմ, ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լուսերամից, ընդ նոսին և ղեղկելիս զանտրժան Թումա գրիչս յիշման արժանի արարէք, և զծնաւղքն իմ՝ զՄուրատ և զնազմելիէ, զհաւրեղբայրն և զուսուցիչն իմ զՍիմէոն քահանայ, որ շատ է աշխատել ի վերայ ինձ, վոխանակ քրտնաջան աշխատութեան նորա տացէ նմա Քրիստոս աստուած զերկընից արքայութիւն, ամէն։ Եւ զեղբայրն իմ զՅովաննէս և զՄկրտիչ, զքոյրն իմ զՇուշանիկ, և զքեռն՝ զՊետրոս և զՍաղոմոն մահդասի, և զամուսինն իւր զԱզիզմելիէ, և զաւակն իւրեանց զՄկրտիչ քահանայ, և զամենայն արեան մերձաւորքն մեր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, և զԹուդէոս, և զՇամշա՝ զկենակիցն իւր, և զմայրն իւր զխալխաթուն, և զերախտաւորս և զսպասաւորսն մեր ի պէտս մարմնոյ, և լի բերանով և ուղիղ մտաւք և ողջամիտ հաւատով աստուածոզորմի ասացէք։

370ա Եւ զվարպետն իմ զՅերուն քահանայ յիշեցէք ի Քրիստոս աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ զանսպառ ուրախութիւն և զարքայութիւն՝ յիշողացդ և յիշեցելոցդ, և Քրիստոսի աստուծոյ մերոյ վարք, պատիւ և զաւրութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Զկիրակոս քահանայ և զկարապետ սարկաւագ յիշեցէք ի Քրիստոս, որ աշխատեցան ի կոկ Թղթիս։

Բ

Ո՛վ սուրբ Գրիգոր Նարեկացի, պարծանք ազգիս Հայկազանի,
Ես չեմ արժան այսմ գործի, որ զքո մատեանս իմ մատամբս գր՛ի,
Ձեռքս, որ ի մեղքն շաղախի, դիմրգ զսա շաւշափեսցի.
Աչքս, որ յերակ յարատ նայի, դիմրգ ի սայ նաել իշխի,
Միտքս, որ զհետ չարին շրջի, դիտ՞րգ զսա ստուգել կարի.
Բոլոր անձամբս եմ. ի չարի, քան զանաւրէն՝ այլ աւելի.
Այս շուն անբանս չորքոտանի, չ՛ի արժանի, որ զայս հոգեշահ տառս գր՛ի,
Այլ ըստ խնդրոյ Սիւմեոնի՝ սուրբ և ընտրեալ քահանայի,
Ինձ հաւրեղբայր էր, և բարի վարպետ, և խիստ ու առաքինի,
Էր կուսակրաւն և ծերունի, զգեցեալ զգեստ կրաւնաւորի,
Միայնակեաց յանապատի, վասն սիրոյն տեառն Յիսուսի,
Փափագմամբ եկեալ առ իս, երես եղեալ իւր ծառայիս.
Այս շուն պոռնիկ չարագործիս և անարհեստ Թումա գրչիս,
Աղտաստւալից աղաչէր գիս, Թէ՝ կատարէ զիմ խնդրելիս,
Խնդրեմ զգանձս հրաշալիս Նարեկա սուրբ վարդապետիս,

Այնչափ չհանդչիմ ես յաշխարհիս, յ[ը]նչուր հայիմ զդիրքս ի գրկիս,
Առնում ի գիրկս ածեմ երեսիս, ապա դիւրընանա խոցած հոգիս,
Ցանձն արար աստուածոյ զիս, թէ ամբողջ Ցնաս ի յաշխտրհիս,
Զայս պատուիրեց իւր ծառայիս, թէ աղաւթք արա ի գրել տառիս։
Ես չար զաւակ եղա զերիս և աւրինազանց ի յայս բանիս,
Ծցեցի զլսելիս, ունկն ոչ գրի բարի խրատիս,
Ոչ արարի բան մի բարիս, այլ անգագար գործի* չարիս,
Մեղք գործեցի ի յաշխարհիս, խիստ անառակ կացի զերիս,
Անկարգ շրջի** ըստ իմ կամիս. ոչ ոք չուն՝ի, որ խրատէր զիս,
Երիտասարդ եմ հասակիս, բնութիւնս չարխիս նեղէ զիս,
Սատանա մարտեաւ ընդ իս, ետ ինձ գործել բազում չարիս,
Ոչ կամեցա զնողոյ բարիս, աւաղ, եղո՜ւկ և վայ է զիս։
Ցորժամ յիշեմ ես զիմ չարիս, նա սասանի սիրտս ի փորիս,
Չ՝աւասամ թէ առնէ տէրն ինձ բարիս, կամ ողորմի այս պոռնկիս,
Ո՞վ ընթերցող ղիւրդ յամիս, ի յանշէջ հուրն կու այրի հոգիս,
Ողորմութեան ՚Ցնա զերիս, ոչ ոք չունիմ, որ թափէ զիս,
Ցորժամ յանձուկ տեղի նստիս, արտասուալից զսա ընթերցիս,
Բազկատարած ի վեր նայիս, աստուած թող զմեզքն Թումա գրչիս։
Ո՛վ, եղբարք, խիստ վիշտ կրեցի զի անյարկինք ու աւուրքս ձմեռն
Ու այլասեռունք յարուցեալ էին ի վերա քրիստոնէից։
Ի վշտաբեր ժամանակի ու ի բազմանալ ազգին տաճկի,
Ջրիստոնէից վճիռ լինի ի յազգմանէ սատան[այ]ի.
Շուն մի եկեալ Ցորասանցի, Թամուր. անուն միակողմի,
Բարկութեամբ լցեալ լինի նման իժի և քարը աւծի։
Զայն չարութիւնն, որ նա գործեց, զայն ո՞ր լեզու պատմել կարի,
Թող հողածին մարդ չհայի զինչ տեսաք մեք յայս ժամանակի.
Փախստական զամէն կացի, մերկ և անյարկ և ղոյզնայի,
Բոլոր աշխարհս յերերմանի, զինչ զբեկեալ նաւ ի մէջ ծովի,
Սուզ մեծ եկեալ հայեոց ազգի, զի նայ յազգէն մուխանաթի
Զալատ եհան նա Ղզուիլցի, կաշառ երետ բազում ոսկի,
Թէ ով ոք զՔրիստոս աստուած ասի՝ բազում չարեաւք չարչարեսցի,
Ոչ թէ տանջի՝ այլ առժամայն գլխատեսցի,
Թէ այնց, որ լսէք դուք կաշառի, նա ձեր գլուխ առ իս բերուի,
Այլ զինչ քրիստոն[եայ] անուն լինի, ամէն ի սուր սուսեր մաշի։
Նոքա [ա]ռին սուր երկսայրի, շրջին քան զշուն կատղած յերկրի,
Որ խոստովանէր զհայր և զորդի, աստուած անմահ՝ տէր կենդանի,
Կոտորեցին անխնայելի զազգս Հայոց և զՎրացի,
Շատ քահանայք առաքինի, սարկաւագունք հեզահոգի,
Ճգնաւորք յանապատի, զամէն ի կեր տուին սրի։
Շատ քակեցին եկեղեցի, և վանորայս, ուխտատեղի,
Այլ և զերկիրս Վասպուրականի քան զամէն տեղ խիստ աւերի,
Առնու զդղեակն զՎան քաղաքի, չողորմի մեծի և ոչ փոքրի,

* Իմա՝ «գործէի»։
** Իմա՝ «շրջէի»։

Ջամէն ի բերդն ի վայր ձգի ու զմնացեալսն գերի տանի։
Ըզչարութիւնն Թամուրի որ հողածին պատմել կարի,
Ոչ գթայր հայր ի յորդի, ոչ մայրն ծիծ տայր տղայի.
Ի յիմ չարեացն, որ գործեցի, նա բարկացաւ տէր կենդանի։
Ով որ ունի հոգի բարի, ի վերջ գրոցս նա ընթացցի,
Որ Թումա անբան չորքոտանի՝ զկատարեալն ձեզ ասի,
Ով որ կարդաս և կամ լսի, սրտի մտաւք արտասուեսցի,
Ջձեռն ի վեր կարկառեսցի, Քրիստոս աստուած, թող զմեղքն Թումա գրչի։

Ծաղկող՝ Սերուն

Գ

1բ Ո՛վ, մանկունք սուրբ եկեղեցոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք յերկնագնաց յաղաւթս ձեր զտառապեալ մեղաւք հոգիս՝ «Սերուն ծաղկողս և զծնաւղսն իմ, և աստուած զձեզ յիշէ յիւր մխսանգամ գալուստն, ամէն։

735.

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳՐՈՑ ԿԻՒՐՂԻ, ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Ընկան 2497

Հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի

142բ Այլ ով քաջդ հռետորաց, համշիբակդ Գեորգիե, ընկալա զհարկեցուցիչ հրաման քումդ եղբայրութեան, և աշխատասիրեալ ըստ կարի տկարութեան ի լուծումն խնդրոյն, որ վասն Պարապմանն Գրոցս, ոչ ամենևին ընդ անկոխն ընթացեալ ուղի, այլ սակաւ ինչ հաւաքեալ ի քրտանց առաջնոց հարց, և իբր ինչ ի լուսաւորը բանից Լուսաւորչին մերոյ,* և բովանդակն իսկ՝ յառատաձիրն շնորհաց։ Այլ է ուրեք յերկարեալ բանից ի թիւս գլխոց ի պէտս բեմասացութեան և ի կարգս զրուցատրութեան, և բազում ուրեք՝ համառօտ անցեալ, ոչ այլ ինչ հոգացեալ բայց միայն զուղղափառ տեսութիւնն, և զայս ոչ վարկ-
143ա պաբազի, այլ բազում աշխատանաւք ի սոյն գե || գերեալ ընծայեցի եկեղեցեաց Հայաստանեացդ։ Արդ, եթէ դտանիցի ինչ ի սմա ըստ ախորժելեաց ձերոց՝ տեառն շնորհք, և նուաճն՝ սխալակիր անօթ ոյս, որ և եղբայրասէր կամաւք աղերսեմ զպակասն լնուլ, զաւելիսն կշռել և չափաւորին աշխոյժ մտաւք հանդիպիլ, և մի հարևանցի տեսութեամբ և բանիւ արշաւել, որպէս ոչ մտերիմ կամ զրախօս, զլացող և բասրասէր դսրովող։ Եւ դարձեալ պաղատիմ աղերս անկեալ, զի ընդ ներել սխալանաց բանից, ներումն հայցել և սխալանաց գործոց անյիշաչարն տեառնէ։ Զի թերևս ցօղ քաղցրութեան ձերոյ իջցէ ի գերեզման մահու մեռելոյս, և լուացեալ բուժեսցէ զբազմազան

* Ակնարկում է Հովհան Որոտնեցուն։

շարաւալիր վէրս հոդոյ և մարմնոյ ամենաթշուառս անձին։ Այլ և լիցի ժառանգ բարեաց և յիշատակ աւրհնութեան լուսաւոր վարժապետին հանուրց Յոհաննու Որոտնեցւոյ, որոյ եղէ ի վերջին ժամու վերջացեալ սպասաւոր նմա, ոչ զոլով ներբաղդատ իրաւք կամ մտաւք, թէև համաձայն կամ առընչական աշակերտեալ՝ պետ անուանեցայ։

Որ և եղև զրաւ վերլուծութեանս ի թվական հայկազնեան տու-
143բ մարի կրկնակի հարիւրոց ‖ չորից և տասանց քառից (2·100·4+10·4+551=1391), ի նեղ և ի ստորասուզեալ ամանակաց, յորում սակաւ ինչ յառաջ հէնք այլասեռ դաւրաց զերկիրս մեր տապալեալ գերեաց և աւերեաց, և այլ բազմավէպ պատիժ յանցանց զմեզ շրջապատեաց և այժմ խնամ վերնական, նայելով ի տառապանս մեր, սակաւ ինչ թոյլ ետ շունչ կլանելոյ, թէև տակաւին ևս ձեռն բարձր [է] ի հարկանել։ Զոր ի ձեռն ձերոցդ սրբանուէր մաղթանաց գարձեալ զաբաւսցէ զպատուհասս մեզաց և կրկին պարգևեսցէ զխաղաղութիւն ըստ խրոյն խոստմանն, զոր ի միասին վայելեսցուք, դուք և մեք, անզրաւ կեանաւք ի Քրիստոս Ցիսուս՝ ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Եւ որք ընդաւրինակէք գրեսջիք զսակաւ յիշատակարանս մեր, և դուք գրեալ լիջիք ի դպրութիւն կենացն, ամէն։*

736.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ Ի ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ

*Երևան 2519***

Հեղինակ՝ Մատթէոս

վայր՝ Երջոկոյ երկիր, Ապրակունեաց վանք

ա

73ա Արդ, ես՝ վերջինս սպասաւորաց բանին և տրուպս բանասիրաց Մատթէոս քահանայ, որ միայն անուամբ և ոչ արդեամբք, տխաղծ մտաւք և տարտամ լեզուաւ. ձեռնարկեցի յայս գործ տեսութեան ոչ աւելի ինչ հոգացեալ, այլ ճշմարտութեանն հետևեալ, միայն այնմ բանի արարաք լուծումն, որ յայս գլուխս առանձնակի գրի, իսկ այլքն՝ հարքն մեր արարին ի Մաթէ[ոս] գլուխ, ընդարձակ հարցմամբ անտ գտցես։ Արդ, է պիտանացութիւն սորա ի քարոզս բանի, և ի կապ դրուցաց, և ի բեմասացութիւնս, և զայս ոչ գիտնոց վասն, այլ մանկանց իմոց խորհրդակցացն։ Եւ արդ, թէպէտ իմաստնոցդ ամենայն յայտնի է այս, բայց յինէն տաժանելի*** կրիւք յառաջ եկն, վասն որոյ աղաչեմ զքերին լնուլ, և զաւելորդն կշռել, և սխալանացն նե-

* Հիշատակարանը համեմատել ենք Երևանի №5931 ձեռագրում եղող ընդօրինակության հետ, և նրա միջոցով ուղղել ենք մի քանի տառասխալներ։

** Սույն ձեռագիրը հեղինակի ինքնագիրն է, օգտագործել ենք նաև Երևանի №№ 2518 և 5232 ձեռագրերում պահպանված ընդօրինակություններ։

*** №2519 ձեռագրում՝ «տաժանելի»։

րել, մանաւանդ՝ ուղիղ մտաւք ընթեռնուլ, ընդ որ և հայցեմ, որք պատահիք, մաղթել առ մարղասէրն՝ թերևս իջցէ մասն ինչ ի սրբա-
73բ ն ‖ ուէր յաղաւթից ձերոց ի շարաւալի հողիս, և սրբեսցէ զաղտ հնութեան մեղաւք մեռելոյս, և ազատեսցէ ի կուտակեալ ալեաց և աբժանացուսցէ յետին մշակացն։

Արդ, եղև ղրաւ համառաւտութեան բանիցդ քարոզութեան ի թու[ին] Հայոց Պ. և Խ. (1391), առ ոտս աբղիւնաբան հռետորին՝ Գրիգորի մեծի [Տաթևացւոյ], յերկիրս յՍրճՋանկոյ, ի վանքս Ապրակունեաց, զոր մեծ ջանիւ էառ ի յազթարմայից երկաբնակացն քաջ նահատակն Քրիստոսի Մատաթիաս, որ և այս ևս ի նորին նշուլից շնորհացն առեալ գծագրեցի առ ի յիշատակ առ յապա եղելոց մանկանց եկեղեցեացդ Հայաստանեաց։ Այլ որք գաղափարէք՝ գբեսջիք զսակաւ յիշատակիկս մեր ի վերջք գրոցս, զի և գուք յիշեալ լիջիք ի տեառնէ. որ և գարձեալ աղաչեմ, ոչ ջնջել կամ հատանել զսակաւ յիշատակս մեր, թէպէտ չեմք արժանի, զի ե մեզ ընդ ձեզ լիցի հասանել մասին սրբոյն ի Քրիստոս Յիսուս ի աէր մեր, որ է աւրհնեալ, յաւիտեանս, ամէն։

Բ

153բ Զաշխատող բանիս և գործող զՄատթէոս սուտանուն մոնազնս աղաչեմ յիշել ի տէր, և անմեղադիր լինել, զի այգչափ կաբացի։

737.

Ճ Ա Շ Ո Յ

Սեբաստիա, սբ. Նշան, 75, ՀԱ, 1926 թ., էջ 241—242
(տես նաև 1387 թ.)

Գրիչ՝ Գեորգ
վայր՝ Երգնկայ

483բ ...Գեորգ երէցս ցանկացող եղէ հոգեզարգ բուբաստանիս եւ առենական ճաշակացս. ողորմութեամբ աստուծոյ սկսայ ձեռամբ իմով գծագրել, եւ շնորհիւ նորին կատարեցի առ ի յիշատակ եւ ի փրկութիւն հոգւոց հաւրն իմոյ՝ Առաքել քահանայի, եւ մաւրն իմոյ՝ Գայիանէ[ի], եղբարց իմոց՝ Մովսէս գպրի, եւ Յովհաննիսի, եւ Սկրտչի, կենակցի մերոյ կարճահասակի՝ նուզտաձ կոչեցելոյ, եւ զաւակի իւրոյ Էլմուզպա՝ փոխեցելոյն առ Քրիստոս, եւ առ դրան տաճարիս են սոքա հանգուցեալ, եւ քրւեր իմոյ՝ Հռիփսիմէ[ի]...։

Յիշեսջիք յաղաւթս ձեր առաջի սրբոյ սեղանւոյս զառաջին շինաւղ սուրբ եկեղեցւոյս զպապն մեր՝ զմեծ Առաքել երէց, եւ զամուսին իւր զ[Ուս՞]տիաճ, զդուստրն իւրեանց՝ զՏիրատիկին, եւ զայրն իւր զԳեորգ քահանայ, որ են պապք մեր, որ եւ նոքա կան հանգուցեալ ի յայս տաճարի։

Յիշեսջիք յաղաւթս ձեր զմայրենի պապն մեր զՎարդան քահանայ, եւ զերիցակինն իւր զՓաւրխաթ, որ եւ նոքա բազում արդիւնս

եւ ողորմութիւնս են արարեալ այս տաճարիս, որ եւ կայ գրեալ առանձինն յիւրեանց գիրքն, որ է յիշատակ առաջի սուրբ Նշանիս, որ կոչի Ճառընտիր, եւ է յիւրեանց հալալ արդեանց։

...Ցիշեսջիք յաղաւթս ձեր կրկին սնուցանողն մեր եւ ղերախտաւորն ղկնի մայրական մեր ծննդեան՝ ղՃաշղ, եւ զեղբայրն իւր զՍարգիսն...։

Ես գծագրեցի զսայ ի մայրաքաղաքս Երզնկայ, եւ եղի իմ կամաւ եւ սիրոյ յաւժարութեամբ յիշատակ ինձ եւ այս վերոյգրեալ ննջեցելոյս, ի տաճարս, որ կոչի բստ սուրբ խաչիս անուան՝ սուրբ Նշան, եւ կանգնեալ կայ յանուն սուրբ Աստուածածնին եւ Լուսաւորչին Գրիգորի...։

Ցիշեսջիք յաղաւթս ձեր զեղբարքս մեր զկարապետ քահանայ եւ զՄկրտիչ սարկաւագ, որք են այժմ առ մեզ եւ սպասաւոր այսմ սուրբ Նշանիս, որք եւ ցանկացան* յիշատակել աստ եւ աւգնեցին ինձ յայսմ գիծ...։

Աւարտեցաւ սայ ի թվ. Հայոց ՊԽ. (1391), յամսեանն հոկտեմբերի։

738.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան 1980

Մտացող՝ Յովաննէս
վայր՝ Երզնկայ, Տիրաշէն վանք

ա

40ա ...Արդ, կատարեցաւ վեցհարիւրեակ սուրբ հաւրն Եւագրեա ձեռամբ Մովսես քահանայի, ի գաւառիս Եկեղեաց, ի քաղաքիս, որ կոչի Երզնկայ, ընդ հովանեաւ սուրբ կարապետիս։ Արգ, աղաչեմ զամենեսեան, զգասքդ սուրբ քահանայից և զայլ աստիճանաւորաց սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք այսմ հոգեշահ նուագիս, աւգտելով կամ աւրինակելով, յիշման արժանի արարէք զանպիտան գրիչս զՄովսես
40բ և զծնողսն իմ։ || Այլ և դիս՝ զՅովաննէս նուաստ ոգի, զստացաւղ այսմ հոգեշահ մատենիս, արեալեան ի գաւառէն, որ կոչի Գեղարքունի, գեղջէն, որ կոչի Վարդենիս, աղաչեմ յիշել ի տէր և զծնողսն իմ՝ զհայրն իմ զՆլուկն, և զմայրն իմ զՇնորհոր տիկինն, և զեղբարսն, և զքոյրսն, զկենդանիսն և զննջեցեալսն, և զամենայն արեան մերձաւորսն իմ աղաչեմ յիշել ընդգէմ սոսկալի պատարագին, և աստուած զձեզ յիշէ յիւր մխանգամ գալստեանն, ամէն։

Գրեցաւ ի թվականիս Հայոց ՊԽ. (1391), ի սեպտեմ[բեր]ի Լ. (30), տանուտէր կշիռն։

Ես Յովաննէս կոչեցայ յաստիճան քահանայութեան և ձեռնադրեցա ի տէր Գրիգորէ յարհիեպիսկո[պո]սէ՝ վերադիտողի Եկեղեաց գաւառի, յորդւոյ պարոն Պեկթամուրին, զոր տէր աստուած պահեսցէ.

* Տպված է՝ «ցանկացաւ»։

զնա, և զհարազատ եղբայրն իւր զպաբոն Յովաննէսն, և զպաբոն Պեկթամուրն՝ զաստուածապաքեւ գաւակն իւր յամերամն ժամանակս խաղաղութեամբ կենալոյ, հանդերձ ամենայն արեան մերձաւորաւք, ամէնն՝ ի թվ. հայոց ՊՔ. (1391), ի նաւասարդի ԺԳ. (13) և դեկտեմբերի ԻՋ. (26), ի տունի մեծ մարգարէին Դաւթի և սուրբ առաքեալն Յակոբայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Կաթողիկէին, և սուրբ Ստեփանոս Նախավկային, և նշխարաց սրբոյն Նիկոլէոսի՝ եղև ձեռնադրութիւնս մեր ի վանքս Տիրաշէն կոչեցեալ, տանուտէր կշիռն էր տարոյն՝

բ

244բ ...ես Յովաննէս նուաստ ոգի
եւ քնական Գեղարքունի,
Որ Գեղամա անուամբն կոչի,
եւ ի գեղջէ Վարդենեցի,
Ջսակաւ բանիցս աշխատողի,
Որ զլուծմունքս գրեցի
ՋԳրիգորի Նարեկացի՝
Հայոց մեծաց հռետորի՝
Ջձեզ աղաչեմ եղբարք բարի,
Ջուսումնասէրքդ ցանկալի,
Թաղծեալ դիմաւք արտասուալի՝
Որք հանդիպիք այսմ տառի,
Ջիս յիշեցէք ի գործ բարի...՝
Ի Հայոց մեծ թուականի
Ի ութհարիւր և քառասնի (1391),
Յուլիս ամսոյ տասն և եւթի,
Եւ ի յարեզ՝ վեցերորդի,
Ի յՆկեղեացս գաւառի,
Ի Տիրաշէն մենաստանի,
Ընդ հովանեաւ տէր Ներսեսի,
Գրեցաւ լուծմունքս բախծալի՝

739.

Ա Խ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 8772 (տես նաև 1350 և 1371 թ.թ.)

Ծաղկող՝ Սերուն

ա

15բ Ջոչ յիշելիս ի գրչաց զՍերուն մեղապարտ ծաղկողս յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ՝

Հետ. ստացող՝ Սիմէոն

Բ

271բ Արդ, ի թուականիս Հայոց Պա. (1391), ես՝ Սիմէոն քահանայս ետու վերըստին նորոգել զսուրբ աւետարանս՝ տնաւրինականաւքն և ցանկաւք և ծաղկաւք, ձեռամբ յոգնամեղ Սերուցի, ի վայելուճն անձին իմոյ և որդոյն իմոյ Աստուածատուր քահանայի և յիշատակ հոգոց մերոց։

Ով որ հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով յիշեցէք յերկնաչնաց յաղաւթս զստացող սորա զՍիմէոն քահանայ և զկենակիցն իւր, զԱստուածատուր քահանայ և զկենակիցն իւր, զԹումա և զկենակիցն իւր՝ զԹամքա, զաւակ | | | զՅաւղիկ, և զեղբարքն իւր՝ փո-
272ա խեցեալ ի Քրիստոս, և զերկու քու || երքն իւր՝ զԽաթունճէլիճ և զԹաղամճիլիճ, և զայլ ամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն ի Քրիստոս, և զՏիրատուր միայնակեցն, և ինքն, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ և մեզ ողորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն։

Ընդ նոսին և զՍերուց մեղապարտ ծաղկող և զծնաւղսն իւր յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զձեզ յիշէ, ամէն, ամէն։*

740.

Ճ Ա Շ Ո Ց

Թուին 7446 (սեպ. նոր 1442 թ.)

Գրիչ՝ Մարկոս
վայր՝ Ղրիմ

528ա ...Արդ, որք հանդիպիք...յիշեսջիք ի տէր զԱռաքել երէցն, և զկենակիցն իւր զՆատափ՝ ղիտեցեալն ի Քրիստոս, և զծնաւղսն իւր՝ զԱռաքել իրիցու, զԱնդրիաս երէց, և զկենակից իւր ըզՓառանձ տիկինն՝ զիտեցեալսն առ տէր, և զեղբայրն իւր զԳրիգորէս, և զքուրն իւր զԱրիայ՝ զնոյնսն՝ առ Քրիստոս փոխեցեալսն։ Յիշեսջիք և զորդեական իւր՝ զԱնդրիաս տղայ՝ աշխարհի երէց, և զկենակից իւր, և ըզաւականսն իւրեանց՝ զՄուսէխ, և զեղբայրն իւր զԱստուածատուրն, և զքոյրն իւր զՃումլախաթունն, և զմայրն սոցա՝ զԽաթունճէլիճն, և զայլ միահամուռ զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն...։

528բ ...Արդ, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ զաղափար զնեալով, յիշեսջիք առ Քրիստոս սեռն սիրով ի միտս բարիս զաշխատեալքըն ի սմա՝ զծագկող և շնորհազարգաւղ և կազմող այսմ աստուածապատում տարեգրոցս՝ զՍտեփաննոս քահանայ Նաահրենց ան[ուն] գրիչ, և զորդեակն իւր զՅոհաննէս քահանայ ծաղկաւղ՝ հանդերձ ազգականաւք։

* 272բ—273ա էջերում գտնվում է վերջաբան նորագրչ երես ձառակ-ի անհատական հիշատակարանը։

Վասն որոյ աղաչեմք ըզսուրբ ընթերցաւղդ յիշեսջիք և զիս՝ զոչ արժանիս յիշելոյ ի բարի, զանարժան ծառայս ծառայիցդ աստուծոյ, ըղհետնեալս ի յուղիղ և ի ճշմարիտ գրչաց՝ զՄարկոս զրիչս, և ըղծնողան իմ՝ զՅովաճէսն և զԹուրվանդաճ...։

Գրեցաւ կրկին յիշատակարանս Առաքելիրիցւ՝ ստացողի վերջին, ի թվ. Պե. (1391)։

741.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վասպ. 166. լալ. ծուց. այուն. 224—226 և Փլրդ. 6273, էջ 183
(Վան, Այնկուաներ եկեղեցի)

Գրիչ՝ Աճդրէաս
վայր՝ յերկիրս Խողճայ

Աղդ, գրեցաւ աստուածտիտուս աւետարանս ԹՁազարդ, չորեքվտակ, յեղեմարուխ, առատարաշխ ընդ ունկն իմաստնոց և ընդ բիր տեսողաց, ընդ տիեզերս ամենայն՝ յերկնային ծովէն ի՝ ծարաւ յերկիր հոսե[ա]լ, որ զոչէ զձայն առիւծու, և զժիր մշակութիւն եզանց, և զաստուածաստեղծ պատկեր մարդոյ, որ ղչորեքնիւթ[ե]այ յաւարտուածն առնէ զմարդոյն։

Գրեցաւ աւետարանս ի գառն և անհանգիստ ժամանակիս, յերկիրս Խողճայ,* ձեռամբ մեղապարտ Աճդրէասի։ Որք հանդիպիք ի սմայ յիշեսջիք զծնողան մեր զփոխեցեալսն ի Քրիստոս, և աստուածամենեցուն յիշողացդ ողորմեսցի, ամէն։

Ի թվ. Պե. (1391) գրեցաւ։

742.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 7648 (տես 1344 թ.)

230բ Ի թւին Պե. (1391) և յունիսի...[ի՞].(25), ղշ. [երեքշաբաթի] օր աւետարանի | | | չգին | | | ա վասն աշխատանաց | | | էջ իրեցկինն | | | քհ. կ. (60) դրամ Ղրիմի, յաղագս իւր իրիցուն հոգոյն | | | [երե՞ս] հոգոյն և մարոսիթին (՞) հոգոյն, Սուխիաս երէցս այլ զապուլ արի։**

* Ղ. Փլրդալամյանը «Խողճայ»-ի դիմաց ունի՝ «Խոզկայ»։
** Զեռագիրը Մատենադարանի սակավաթիվ կրկնագիրներից (палимпсест) մեկն է։

743.

ՄԱՏԵՄԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԴՐԻԴՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Փիլդ. 6273, էջ 184 (Վան, Աքանանց գիւղ)

Հետ. ստացող՝ Սիմէոն
վայր՝ Աղթամար

ՊԽԱ. Թուին Հայոց (1392) էառ Ամիր-Էզդին զՈստան քաղաք յեղբօրէն իւրմէ, նաւասարդի ամիս, ի յայտնութեան պահոց երեքշաբթի, և շատ պակասութիւն էած քրիստոնէից. Ո՛վ սուրբ մանկունք և հոգևոր եղբարք, զայս Նարեկացիս ցաւոր վարդապետ ինձ՝ Սիմէոն վարդապետիս ետուբ. ՋՈստանայ երկիրս աւերեցին, այս յԱղթամար էր, բերաւ ցաւոր վարդապետն ի Վան, յորժամ զօրքն Թուրքաց կոտորեցան, վարդապետն փախեաւ ի Վանայ, և երեկ ի Նաբեկ, հեծելէն նոհատակեցաւ. Գիրքս ծաց ի Վան, մօտ յաշխարհական երէց մի, նա փախուց և տարաւ յԱղթամար. տէր Զաքարէն խաչը տարաւ, ես՝ Սիմէոն վարդապետս, երեսուն թանկայ տուի ու թափեցի։

744.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 3717

Գրիչ՝ Պետրոս
վայր՝ Քաջբերունոյ երկիր, գիւղ Նվրնդի

Աղդ, յանդ ելեալ կատարեցաւ սուրբ աւետարանս և բերանս
327բ *|| Քրիստոսի և քարոզի Յիսուսի տեառն աստուծոյ մերոյ ի յերկիրս Քաջբերունոյ, ի յանապատս, որ Մանուկ Սուրբ Նշան կոչի, աւծեալ առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սորին և առ ոտս սորին, ի գեաւղս Նվրնդի նորշինայ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի, և Յովաննու Կարապետին, Գէորգեա զաւրավարին, և Սքանչելագործ Սուրբ Նշանիս, որ է հանապազ առ մեզ ի պահարանի։ Եւ ես՝ Թափուրս ի բարեաց գործոց Պետրոս անուամբ արեղայ, և գործովք ունայն, ընդ հովանեաւ սրբոցս կատարեցի զսուրբ աւետարանս, մեղսամած մատամբս յաւրինեցի, մխթէ քաւի մեղս ի մարմնի։ Ի թուականն Հայկազեան տումարիս ՊՂԱ. (1392), ի հայրապետութեան տեառն՝ Զաքարիայ, և յերկրակալութեան երկրիս Քաջբերունոյ Ղարա-Յուսուֆի։*

328ա *Աղդ, աղաչեմք զմանկունսդ սուրբ և || կեղեցոյ, յիշեցէք ի Քրիստոս և ի սուրբ յաղաւթս ձեր [զստացաւղ սորա]՝ զԹադէոս կրաւնաւորն, և ծնաւղքն իւր, և զամենայն արեան մերձաւորքն իւր, զվար-*

դապետ՝ Ստեփաննոս փիլիսոփայն, և զեղբայրն՝ զՅոհաննէս վարդապետ, որ բազում աշխատութեամբ ուսուցին զԹադէոսն...։

328բ Դարձեալ յիշեցէք...զաշխատաւղ սորա՝ զկոկաւղ Թղթիս՝ զաշակերտն իմ ընտիր սրեզայ, որ բազում երախտիք տարաւ ի վերայ...։

745.

ՄԱՍՈՒՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Նբևան 149 (տես նաև 1331 թ.)

Հետ. ստացող՝ Յոհաննէս

278բ Ո՛վ, դասք լուսերամից, յորժամ հանդիպիք այս աստուածաշունչ տառիս յիշեսջիք ի վերնաթռիչ յաղօթս ձեր զվերջին ստացող գրոցս՝ զտէր Յոհաննէս և զծնողսն իւր, զհայրն իւր զՈվաննէս քահանայ, և զմայրն իւր զԱղբրաց, և զարհիեպիսկոպոս եղբայրն իւր զտէր Պետրոս, և զամենայն արեան մերձաւորսն։

Թվ[ին] ՊԽԱ. (1392) կատարեցաւ տէր Թեոդորոս Սսոյ կաթողիկոսն բարի խոստովանութեամբ ի Քրիստոս, և յետ սորա, մին այլ տարին, կատարեցաւ ի յայլաղգաց սպանմամբ տէր Զաքարիայն՝ աթոռակալ Ախթամարայ և պատուելի կաթողիկոսն, ով որ յիշէք, յիշեալ լինիք ի Քրիստոս։

746.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Հգգ. Հանդէս, Բ. գիրք, 1897 թ., էջ 281—284
(Ջաւախք, Ռիւխսկա գիւղի եկեղեցի)

Գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի
վայր՝ Ցիպցայ վանք

ա

...Շարադրեցաւ ի խնդրոյ աստուածասէր և երկիւղած քահանայի Ցովհաննիսի բարեպաշտի։

...Եւ՝ ես յոգնամեղս և վիճունս ի գրչաց Գրիգոր պիտականուն վարդապետ, տեսեալ զփափագ և զսէր սորա առ Նա, յանձն առի և յանկ հանեալ կատարեցի ըստ իմում կարի զխնդիր սորա, շնորհաւք և ողորմութեամբն աստուծոյ, ի թուականիս Հայոց ի ՊՆՐ. (1393) ամի, յամսեանն արեգի։

Արդ, եղև սկիզբն սորա ի վանս Սուճարայ, որ այժմ կոչի Խառաբատայ, ընդ հովանեաւ հոյակապ և հռչակաւոր, բարձրաբերձ և պայծառաշէն սուրբ եկեղեցւոյ, որ յանուն սուրբ տիրամաւրն լուսոյ կառուցեալ կայ։ Եւ աւարտեցաւ ի վանս Ցիպցայ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի և Վասիլ Թագաւորի սուրբ Նշանի, որոց խնամաւքն աւարտեցի։ Արդ, աղաչեմ զամենեսեան, որք պատահէք սմա տեսութեամբ կամ աւդտութեամբ, յիշման արժանի արարէք զվերոյասացեալ պատուական քահանային զՑոհաննէս, որ ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ արդեանց և յարդար վաստակոց իւրոց, յիշատակ բարի իւրն և ծնողաց իւրոց՝ Սահիճանոս քահանայի, և ամուսնոյն Ցովաննիսի՝ Ուսլուի։ Որոց ողորմեացի Քրիստոս աստուած այժմ և յաւուրն անեղեկի։ Նաև Թարմատար գրչիս Գրիգորիս և իմոցն ամենայնի, ամէն։ Նաև զբարեմիտ հեզահոգի և զսրբասէր արեղայն զԸորբատակէս՝ կոկաւղ քարտիս, յիշեցէք և աստուած ողորմի ասացէք նմա։

Եւ արդ, զնեղութիւն ժամանակիս ով կարէ ասել կամ ընդ գրով արկանել, զմահ և գերութիւն, զսով և զասասանութիւն, զոր կրեմք ազգս քրիստոնէից ի յայլասեռ անաւրինաց և անհաւատից։ Զի շարժեցաւ տուն Ծորգամին առհասարակ ցեղ թաթարին, գալ աւերել և ապականել զաշխարհս ամենայն։ Եւ մենք ի յահէ նոցին սասանիմք, և աւր ըստ աւրէ մահու ակն ունիմք, և հաւատալով հայեցեմք յաստուածոյ փրկել զմեզ յայնմ ահագին սպառնալեացն։ Այլ և զղառնագին վիշտս, զոր կրեմք ի մերոց իշխանաց, ի թուրքէ և ի քրդէ, յընտանեաց և յաւտարաց, ի ներքուստ և արտաքուստ՝ անասելի և անպատմելի։

Այլ դի և կաթողիկոսքն մեր դերկուսին սպանին ի միում ամի, հերու զտէր Թեոդորոսն ի Սիս սպանին, և մինչդեռ տարին չէը վճարել՝ զտէր Ջաֆարիայն ի յՈսաւաց քաղքէն արարին, թող դայլ նեղութիւնս, զոր ընդ մեզ անցուցանեն։

Ողբ ի գծողէս բանի [ի Գրիգորէ Խլաթեցւոյ]

Բ

Եկայք ողբասցուք եղերաբք զչարութիւն ազգին նեռոդաց,
Ւմաք Հայաստանեայց զաոնացեալք ի յանաւրինաց,
Գաղձըն վնասակար բուսեալ յանդաստանս մեր Հայաստանեայց.*
Սիզտչոր առնեն ըամեզ զրկելով ի մեր հայրենեաց։
Արամ ե՝ Եփրեմ լըծեալ հալածեն ըղտունս Ծուղայանց,
Ցայսմ աւրինակի սոքա՝ Թորղոմեանք և ազգն Մարաց,
Սաստիւ տագնապեն ըղմեզ նեղութեամբ ի յամէն կողմանց։
Գլուխ ոչ գոլով Հայոց, վշտացեալ յամենայն գիմաց,
Րաբունք ժողովոյս մերոյ զմեզ լացէք ի ձեռս այլազգեաց։
Ի թիւ ութհարիւր Հային՝ քառասուն և երկու ամին (1393),
Գառինն աստուծոյ վկայ գհայրապետն մեր արարին.
Որդիք Հազարու զարմին չարաչար զմեզ խոցոտեցին,
Րամեալ ժողովոյս Հայոց ըղդլուխն ի մեղնէ բարձին։
Ի հնգետասան աւրին մեհեկի, չորեքշաբաթին,
Էկին պատեցին զմեր տէրն և յատեան մահու մատնեցին,
Վասն Ւրիստոսի սպանին, զի գլխաւորքն քրիստոնէին
Առին բազանխոն ածին, առաջի պիղծ ամիրային,
Սաստիկ չարախաւսէին, թէ հարեալ է սա զմեր զաղին։
Նա, պիղծ ամիրայն ասէր՝ ուրացիր զՔրիստոս կենդանին,
Զխտչեալ թագաւորն անմահ՝ ըղկապաւղն երկնից կամարին։
Արդ, սուրբ հայրապետըն մեր դաւանէը դորդին միածին.
Քրիստոս է աստուած հաւրիս, արարիչն յաւիտենին,
Ահա հաւատամ ըղնա իառակից հոգւոյ ճշմարտին։
Րամիցն հրաման տըւին ամենայն և մոլնայ, դազին
Իսկոյն խոցեցին ըզտէրն և ընծան պէս զոչեցուցին,
Առին բազանեացն ելին և քարիւ ըղդլուխն հարին,
Կապած էր չըւանն ի վիզն, զոր առեալ ի քարշ տանէին.
Այնչափ զնա հարին սրով և քարիւ մինչ կատարեցին,
Թաւալ ի փողոցն արկին զմարմինն մեր պատրիարգին,
Ուղեղըն ցլուեալ գըլխին, ըղգազաթն վերացուցին,
Ղամպար վառել կամէին ի յայրել ըզնըշխարս մեր տիրին.
Իսկ ամիրապետն ասաց զնա տանել ի յիւր հայրենին։
Կաևան յայնժամ ըռամին հառաչմամբ յերկիր հնչեցին,
Որ ի քարկոծման ժամին վախուցեալ զաւղեալ թաքչէին,
Սաստիկ էը լալիւն նոցին, կոծ և աշխարն ի վերայ տիրին,
Իրը ըղտէրունեան աւրին դստերացն Ե[բուսաղ]էմին։

* Տպված է «գանձըն»։

Նման նախավկային վըկայեալ մեր տէրն յՈստաձին:
Աւաղ, ըզմեզ ասեմ եղբարք, որ հասաք յաւուրս անագին,
Ոց վիրաց առաք ուժգին յայլասեռ ազգէ հրամանին.
Թող մեզ խաւարի այսաւր լոյս լուսնին և ակն արևին,
Աստանաւր և մեք եղբարք կոծեսցուք զաղէտս անագին,
Մեծահանդէս աթոռին Սիս անուն վիճակ մեր վեհին,
Այլ և զհայրապետ նորին, զտեղապահ սուրբ Լուսաւորչին,
Րամից բոլորից Հային զտէր Թորոսն անդէն սպաննեցին,
Այն էր հերունի ամին և զմեր տէրն ի տարելցին,
Ցայսմ ի անաղին վըշտին մեք վիրաւք հարաք զառնագինս*
Տէր Զաքարիա, բարի նահատակ եղեր Քրիստոսի,
Տէր Զաքարիա, արի խաչակից եղեր Քրիստոսի,
Տէր Զաքարիա, ընտրեալ քաջ հովիւ նման Քրիստոսի,
Վասն մեր բարեխօսեա առ Քրիստոս տէրն ամենայնի
Շնորհել մեզ հովիւ բարի՝ զհարազատն քո սիրելի,
Զտէր Դաւիթ հոգւոփն արի, լի շնորհաւք, յաջորգ աթոռի,
Պահել անսասան յերկրի յամերամս ժամանակի:
Այլ և երջանիս տաղ[իս] Գրիգորի անձին եղկելի՝
Մասն ընդ քեզ պարգևեսցի յաննախանձ մեր տեառնէն ձրրի:
Ամէն և այս եղիցի անյաջաւզ զբանս ընդունողի:

գ

Ինքն գիտէ տէրն կայուն,
Որ ի յայրէն մինչև ի նուն,
Ոչ է կտրած գրիչս ի բուն:

747.

ԳԱՆՁԱՐԱՆ

Երևան 5328

Ամբագիր՝ Գրիգոր Խլաթեցի
վայր՝ Ցիպնայ վանք

289ա Ցայս վախճագ[եալ] և ես՝ տրուպս ի կարգաւորաց և յետինս ի բանասիրաց, անուամբս Գրիգոր պիտակաւոր, և ըմբռնեալս ծուլութեամբ ի տիղմս մեղաց, և անընդոստ մըրափած, մեծաւ տաժանմամբ ի հոգս անկեալ ժողովեցի զպիտանի գանձերս, և եղի ի կարգաւ ի միում տրփի զասացեալս ի հոգեկիր արանց յառաջնոցն և յետնոցս, որք արժանի եղեն պարգևաց հոգւոյն սրբոյ և ասացին զանալան ոճով ի կերպ և ի գոյնս ձայնի, ի կարգ և ի շարս բանի՝ զանազան եղանակաւ. ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ և ի զուարճութիւն մանկանց նոր Սիոնի, որ աւր ըստ աւուր գեղեցկաւ փոփոխեն ի փառս աստուծոյ և ի պատիւ սրբոց նորա: Արդ, այսոցիկ ցանկացող եղեալ

* Մինչ այստեղ տողերի սկզբնատառերով հղվում է «Ընդդէմ այս Գրիգորի է վանն Զաքարիա կաթողիկոսին Աբեղամարայ»:

բարեմիա և սրբասէրը վարդապետն Թումայ և իւր մտերիմ և համակամ աշակերտքն՝ Մաթէոս, Պետրոս և Սահփանիոսն, և ետուն դրել զսա եռափափազ և սիրատարափ ողով...։

:89բ Եւ արդ, գրեցաւ սա ի վա‖նս ծիպնայ, ընդ հովանեաւ ամենադաւր սուրբ Նշանի և կաթուղիկեայ սուրբ Սահիանոսի, հանդէպ սրբարար ծովուն, ուր մանր ձկունքն ելանեն։ Ցամս թագաւորութեան ազգին նետողաց Ղարայ-Ուսուփին և որդոց նորին։ Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ և կամ տուղտութեամբ ինչ իւիք, յիշեցէք ի միտս բարիս և ի պատկանաւոր խընդբուածս զվարդապետսն Թումա և զմտերիմ եղբարս նորա՝ զսրբակրաւն աբեղայսն՝ զՄաթէոս, զՊետրոսն, և զՍտեփանոս՝ քբւերորդի վարդապետին, նաև զթարմատար մեղսամած ղրիչս Դրիգոր, և զծնողսն իմ, և զուսուցիչսըն։ Եւ որք յիշէք զմեզ յիշեալ լիջիք և դուք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։*

748.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թաւրիզ, Մատենադրաց, 8, Ձեռ. էջ 83

Ծաղկող՝ Առաքել

...Ցորոց եւ ծաղկեալ լուսով | | | ** մանգուքենէ սրբութեամբ եւ պայծառամիտ մանուկս, ուսումնասէր անձն եւ պանծացեալ հաւատով, ժրաջան մշակ, սուրբ և կուսակրաւն քահանայս Բարսեղ, որ մեծաւ փափագանաւք եւ երանաւետ յուսով վառեալ յաստուածային սէրն. գրեաց զաւետարանս զայս բազում աշխատութեամբ. միայն ինքն պատրաստեալ զամենայն նիւթ, գրեաց ձեռամբ իւրով ոչ զոք ունելով աւգնական։ Եւ կատարեալ զսուրբ աւետարանս ի թվ. ՊՅԲ. (1393) ամին։ Եւ ընթացեալ ինքն ի ճանապարհ ինչ առ կաթուղիկոսն, եւ ի ճանապարհին պատահեալ անաւր[ին]ացն՝ սպանեալ նահատակեցին զնա | ։ | այլ սրբութեան վարուցն ընկալաւ, եւ | | | ետն հեղմանց պսակն ի ապա | | | առ, որ ցանկացեալն էր, որում փառք յաւիտեանս, ամէն։

Եւ ես՝ տէր Առաք[եալ | | | եղբայր նորին, բազում դա | | | փտելով զեղեալսն առ նայ, զեաւթն ամիսս շուրջ գալով յերկրէ յերկիր, բազում աշխատութեամբ խնգբէի զեղբայրն իմ, եւ յետոյ գտեալ յայլոց ի սարն, որ կոչի Եղջախոռ, եւ առեալ զնշխարս նորա եղաք ի տապան ի վանս Վաղագնոյ, առ սեմաւք զրանցն սուրբ Կարապետին։ Եւ յետոյ նոյն ես՝ տէր Առաքեալ, ծաղկեցի զսուրբ աւետարանս եւ զցրուացանգն գրեցի եւ կազմեցի ի թվ. հայոց ՊԾԶ. (1407) ամի,***

---

* ՀԴանձարանՀ ժողովածուի նյութերի հավաքման և խմբագրության մասին Գրիգոր Ալթեցու կողմից գրված սույն հիշատակարանը անթվական է։ Տեղադրում ենք Ալթեցու մի այլ՝ 1393 թվականին գրված, հիշատակարանին առընթեր, չնայած ըստ սրջ ավյալների սա գրված պետք է լինի երկու-երեք տարի առաջ։

** Թերթերի ծայրերը մաշված են, որոշ բառեր թերի են վերծանվում։

*** Հիշատակարանը, այսպիսով, գրված է նահատակված գրչի եղբայր, ձեռագրի ծաղկող Առաքելի կողմից 1407 թ., սակայն այն տեղադրում ենք 1393-ի թվաշարքում, նկատի

ի յիշատակ նահատակ եղբաւրն իմ Բարօճեղ քահանայի՝ գրաւղի սուրբ աւետարանիս։

Արդ, աղաչեմ զամենեսին՝ զսրբակրաւն քահանայս | | | հաւատաւորդ Լ|եղեցւոյ, որ հանդ|իպիք սուրբ աւետարանիս | | | աւրինակելոյ կամ ժառա|նգելոյ | | | յիշեցէք սրտի մտաւք ի [մաքրափայլ յաղօթս] ձեր զաշխատող սուրբ աւետարանիս զԲարսեղ քահանայն. եւ ամենայն սղալանաց նորա թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։ Ընդ նմին եւ զղտնացեալս ոգով զտէր Առաքեալ, Եւ զծնաւղսն մեր զԴաւիթ եւ զՄիքիէ, եւ զամենայն արեան մերձաւորսն մեր, եւ զմեծ բարեւնապետն մեր զԳրիգոր վարդապետն, եւ թողութիւն խնդրեցէք. յաստուծոյ ամենայն սղալանաց մերոց։ Եւ յիշողացդ զմնդ առաջի աստուծոյ եւ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի Քրիստոս աստուած մեր, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն...։

749.

ԾՈՂՈՎԱԾՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐՈՑ

Երեան 2365

Գրիչ՝ Յակոբ Ղրիմեցի

120բ *Արդ, ես՝ Յակոբ Ղրիմեցի սպասաւոր բանի, ուխտաղանցս աստուծոյ, եւտու զարտաքին իմաստասիրական գիրքս համշիրակ եղբաւր մերոյ տէր Խաչատրի բանի սպասաւորի, զոր տէր աստուած վայելել տացէ սմա հանդերձ արդիւնաւոր վարդապետութեամբ, ղի ասէ գիրն սուրբ, թէ՝ որ արասցէ և ուսուսցէ այնպէս զմարդիկ...։**

*Ի թվականիս Հայոց ՊԽԲ. (1393), մարտի ԻԲ. (22),** աւրն շաբաթ։ Արդ, մեղուցեալս յամենայնի և սևերեսս ի Քրիստոսէ. աղաչեմ յիշել յաղաւթս քո, և զերախտաւորք գրոցս, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն։*

750.

ՄԱՆՐՈՒՄՈՒՆՔ

Երևան 765

Գրիչ՝ Մխիթար
վայր՝ Բարերցիէ գիւղ

307բ *Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին աւարտեցաւ գիրքս այս, որ կոչի մանրուսուճ, ի թվ. ՊԽԲ. (1393), հոկտեմբերի ԺԶ. (16)։ Գրեցաւ ձեռամբ բազմամեղ և անարհեստ գրչի Մխիթար իրիցու, ի գեղս, որ կոչի Բարերցիէ, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնի և այլ սրբոցն, յառաջնորդութեան մերոյ նահանգիս տէր Գրի-*

ունենալով, որ ինչպես ձեռագրի գրչութիւնը, այնպես էլ գրչի նահատակութեան հետաքրքրական պատմութիւնը վերաբերում է 1393 թվին։

** Բնագրում գրված է «...ուսուսցէ նա» մէ՞ջ, հապավուածները բացել ենք հիմք ունենալով Մատթեոսի ավետարանի համապատասխան հատվածը (ե. 19)։*

*** Պարող է կարգացվել նաև ԻԳ. (23) կամ ԻԴ. (24)։*

զօրի արքեպիսկոպոսի, ի վայելումն սրբոյ տանելոյ ե հեզաձողի Մանուէլ
308ա կրաւնաւորին, որ ստացաւ զսա յընչից իւ ‖ լ.ոյ։ Արդ, որ աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ՝ աւրինակելով, յիշեցէք զստացաւղ սորին՝ զՄանուէլ կրաւնաւորն, ե զհայրն իւր՝ զԿարապետ քահանայ, և զմայրն իւր՝ զիոհաեալն առ Ք.րիստոս, նաև զերախ[տ]աւոր ուսուցիչն մեր՝ զՍտեփանոս կուսակրաւն քահանայն, որ բազում աշխատութեամբ
308բ զաստիարակեաց և ուսոյց զմեզ...։ Նա և զաւրինակիս շնորհաւղն՝ զկուսակրաւն քահանայն զԹադէոս յիշեսջիք յաղաւթս ձեր առ տէր, և զհաւատաւր կրաւնաւորն, որ զկցիս՝ աւրինակն շնորհեաց։ Եւ զիս՝ զանարժան ղրիչս, որ չեմ իսկ արժանի յիշելոյ, և զհոգևոր հայրքն մեր՝ զՄովսէսն, և զներսէսն՝ կուսակրաւն քահանայն, և զՇ.ակ Մկրտիչ քահանայն, որ զարուեստս ղրչութեան ուսուցին մեզ և առաջ-
309ա նորդեցին ի գործս ‖ յայս, ծնողաւք և ամենայն երաժտաւորաւք մեբովք յիշել առաջի աստուծոյ, և աստուած զձեզ յիշէ՝ յիւր երկնից արքայութիւն։ ամէն։

751.

ՄԱՇՏՈՑ

Փչրդ. նօտարք հայոց, էջ 2—6

Գրիչ՝ Թովմա
վայր՝ Վան

ա

... Արդ, գրեցաւ տառս աստուածային ի խնզրոյ հողեոր և պատուական միայնակեցին Ատոմի։ Եւ արդ, ես՝ անպտուղս ի բարեաց... տնյիշելիս ի գրչաց՝ Թովմա քահանայ, տկար անձամբս յանձն առի և ամենակարող զօրութեամբն աստուծոյ կատարեցի զսուրբ տառս, ի դառնացեալ և ի վշտաբեր ժամանակին, յորում էր թուին հայոց ՊԽԲ. (1393), ի քաղաքիս, որ կոչի Վան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ առաքելոյն Պետրոսի և Պօղոսի, և սրբոյ Սահակայ և սրբոյն Վարդանայ, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի և տէր Սահակայ։ Արդ, աղաչեմ զգասքդ լուսերամից՝ զմանկունդ սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զԱտոմ միայնակեաց՝ զստացող սորին, և զեղբայրն իւր զԹումայ աբեղայ... և ընդ արժանաւորացն զանարժան գծողս զԹումա մաղթեմ յիշել ի սուրբ յաղօթս ձեր. և զհայրն իմ՝ զՄուրատ մահտասի, և զմայրն իմ՝ զնազմիխէ։ Յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զպարոն Թումայ, և զեղբայրն իւր զԹաւխաս, և զծագկեցեալ զաւակս իւրեանց՝ զխալիֆայ և զԱլաձ-Սէլիբ, զոր տէր աստուած պահեսցէ զնոսա անսասան... մինչև ի խորին ծերութեան..., ամէն։

բ

Օրհնած է հայրն մեր հոգւով՝
Ատոմ՝ ամէն ազգատոհմով,
Որ վախճամամբ առ մեզ գալով

---

* Գուցէ ցանկացել է գրել՝ «կկցուրդիս»։

Եւ զայս սուրբ դիրքս ետ գրելով,
Բաղում ծախիւք ազատելով,
Զպէտս մարմնոյ մեղ բերելով։
Ունկ դրէք ղուք լսելով,
Որ ես պատմեմ զամէն կարգով,
Ւերէքը խաղող մեծ կողովով,
Գինի բերէը մեծ տկերով,
Քազա* բերէը անունճ խոնչով,
Եւ զայլ բարիքն ձվ ածէը ի րով։
Այլ ոչ ասեմ ես բան յոլով
Որ չձանձրանայք դուք լսելով։
Բայց ով որ սէր ունի հոգով,
Զմեզ յիշէ բոլոր սրտով,
Տէրն ձեզ ողորմելով,
Զձեր մեղքն և զմերն ջնջելով, ամէն։

752.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան 1908

Գրիչ՝ Զաքարայ
վայր՝ Աղթամար

ա

288ա ...Ուստի և տեսեալ զսորա անճառ փրկագործութեան խորհուրդ սրբասէր և ընտրեալ կրաւնաւորն Թադէոս, և ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ իւր, ծնաւղաց իւրոց Խնկկայ և Ավքայի, և եղբարցն՝ Ստեփաննոսի, Աստուածատրոյ և Մարտիրոսի, և քերցն՝ Թամամի, Էլխաթունի, Մարխաթունի, Մամատիկնայ և Զմրուխի, և պապերոյն՝ Խաչերեսի և Շամամի, Թադէոս քահանայի | | | և այլ ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեաց և հանգուցելոց...։

288բ Այդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչի և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, և ի թուին Հայոց ՊԽԲ. (1393), ձեռամբ անարժան և սուտանուն գրչի Զաքարայի...։

Ստացող՝ Թադէոս

բ

88ա Ես՝ Թադէոս կրօնաւոր, տըւի զսուրբ աւետարանս ի գուռ սուրբ Աստուածածնիս Խառապրատայ վանիցս, յիշատակ ինձ և ծնողաց իմոց։ Մի ոք իշխեսցէ հեռացուցանել ի դրանէ սորայ, ոչ իպիսկոպոսաց, ոչ ի վարդապետաց, ոչ ի քահանայից և ոչ յըռամկաց. և որ յանդգնի հեռացուցանել զվարձս ամենայն չարայգործացն և զՅուդային և զայլ պզծացն ընգալցի։

* Իմա՝ զգաթա։

Այլ աղաչեմ զդաս[ս] սուրբ քահանայիցս խնամ տանել<ով> սորայ։

Եւ որ առաջնորդ լինի սուրբ ուխտիս, տարին Գ. (3) ժամ առնեն, մին՝ սուրբ Ծնընդեանն, մին՝ սուրբ Ցարուբեանն, մին սուրբ իոխման Աստուածածնին։ Կատարողք աղաչանաց մերոց աւրհնին յաստուծոյ և յամենայն սրբոց, ամէն...։

753.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏՆԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 2510

Գրիչ՝ Մխիթար

վայր՝ ի վանս Սուճարու, որ կոչի Խառաբատ

318ա *Փառք ամենազաւր տէրութեանն Քրիստոսի աստուծոյ մերոյ, որ ետ կարողութիւն տկար սպոյ Մխիթար զրչի հասանել յաւարտ մեկնըչիս Արարածոց Մովսիսի Ե. զրոց, յամի ՊԽԲ. (1393) թուականիս։ Եւ արդ, գրեցաւ սա ի վանս Սուճարու, որ կոչի Խառաբատայ, ընդ հովան[ե]աւ հոյակապ և զեղեցկաշէն սուրբ եկեղ[եց]ոյս, որ յանուն սուրբ Աստուածածնի, առ ոտս երջանիկ և հեզահոգի Սարգիս րաբունապետի և վարդապետին իմոյ Գրիգորի։ Գրեցաւ սա ի վայելուչն անձին իմոյ և յիշատակ հողոյ իմոյ և ծնաւղացն իմոց՝ Զապաճիճ և Թանխաթունիճ։*

754.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԳՐՈՑ ԵՒԱԳՐԻ

Փերդ. Նօտարք Հայոց, էջ 2

Համառօտող՝ Մատթէոս

վայր՝ Տաճատփարախ անապատ

Արդ, եղև զրաւ համառօտութեան սորա ի ներքսագոյն անապատիս Տաճատփարախոյ, յորում նստէաք լուիկ ի տան, յամի ՊԽԲ. (1393)-երորդի Թուականութեան Հայոց։ Արդ, աղաչեմ, որք օգտիք ի սմանէ... յիշեսջիք զանարժան աշխատող սմին զՄատթէոս վարդապետն։*

755.

ՃԱՇՈՑ

Փերդ. Նօտարք Հայոց, էջ 2

Վայր՝ հանդէպ Վարագայ

Զօրութեամբ աստուծոյ կատարեցի [զսա] ի դառնացեալ և ի վշտալից ժամանակի, ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ զօրավարիս, որ հանդէպ Վարագայ, և ի հայրապետութեան տէր Սահակայ և եղբօր նորին Պօղոսի, և ի թուին Հայոց ՊԽԲ. (1393)։

* Գտնվում է բարկուշատ գավառում։

756.

Գ Ա Ն Զ Ա Ր Ա Ն

Ինճիճ. Ստորագր. հին հայաստ. էջ 228

Վայր՝ Լիմ կղզի

Գրեցաւ... ի Լիմն կղզիս, ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ հոյակապ և հռչակաւորի, բարձրաշէն և դեղեցկաշէն տաճարիս, յամի ութհարեւրերորդի քառասներորդի և երրորդի (1394), յորում ամի աստուածասաստ բարկութիւնն շարժեցաւ ի վերայ երկրի՝ արիւնարբու զօրքն թաթարին, որոյ անուն դլխաւորին Լանկ-Թամուր կոչիւր... յորոյ սաստիցն զերծեալ մեր ապրեցաք առ ոտս երջանիկ վարժապետին Սարգսի, ի Լրմաճ կղզիս։

757.

Գ Ա Ն Զ Ա Ր Ա Ն

Երևան 3503

Գրիչ՝ Եսայի
վայր՝ Սիս

... Արդ, դրեցաւ եղանակաւոր տաղարանս հին և նոր, զոր առաջին սուրբ հայրքն են նշանակել, ի թվականին ՊԽԳ. (1394), ի հայ-
384բ *բապետութեան տեառն Կարապետի, և ի թագաւոր ‖ ութեան Կիպրոսի Ճագերի, որ և ի վերայ Հայոց այլ աւրհնութեաւ և անուանեցաւ թագաւոր։ Գրեցաւ սա ձեռամբ վերջին և մեղաւթաւալ և անարժան դծաւղի Եսայի տրեզայի, ի քաղաքս Սիս, ընդ հովանեաւ սուրբ Նիկաւլաոսի, և կենսակիր սուրբ Նշանացս՝ Զորովաճիցն, և [Արքա՞]կաղճոյն, և Վաճկոյ սուրբ Նշանին, և աջոյն սուրբ Հուսաւորչին, ի լաւ և յընդիր աւրինակէն Յեսու փիլիսոփային, որոյ աէր ողորմեսցի, ի խնդիրս և ի վախճս անձին իմոյ, և եղբաւրն իմոյ Պետրոս արեղայի, և յիշատակ ծնողաց մերոց՝ Մարտիրոսի, և հաւրեղբաւրն իմոյ՝ Թաթէոս քահանայի, և մաւրն իմոյ Մարթայի և ամենայն ազգականացն՝ կենդանեացն և հանկուցելոցն, ամէն | | |* *

---

* Շարունակութեան մեծ մասը պատռված է։ Պահպանվել է միայն մի քանի անարժեք

758.

ՄԱՍԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

Երևան 3608 (առ նաև 1303 Ք.)

Հետ. ստացող՝ Ահարոն

Ո՛վ, պատուական եղբայր Ըռթոտակես քահանայ, զԱհարոն սուտանուն քահանայս և զմեղաւք փարթամս՝ ըղստացաւղ դրոցս յիշեայ ի մաքրափա[յ]լ աղաւթս ղիս և զծննաւղս իմ ի տէր։ Ի թվականին Հայոց ՊԽԴ. (1394), նուէմբերի Դ. (4) օրս։

759.

ԳԻՐՔ ՊԱՐԱՊՄԱՆՑ ԿԻՒՐԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՑ

Օքսֆորդ, Ms. Arm. E. 20. Տիրայր վրդ. 73. Քղք. 121, էջ 1242—1245

Ստացող՝ Յովհաննէս
վայր՝ Հերմոնի վանք

ա

213ա ...*Զոր այսու յուսով սաքփացաւղ եղեալ սորին ուղղութեան վերջինն բանասիրաց և տրուպս պետաց Յովհաննէս կոչեցեալ, խնդրօղ բանին տեառն Յիսուսի, զոր ի վաղ ժամանակաց տենչացեալ կարօտէաք, յեղակարծ ժամու զտեալ եղև ի յարկեղս զրոց ի հին վարժարանի ի Հերմոնի վանս կոչեցեալ, առ ոտս Ծերուն բարուննայ, ի ձեռն համշիրակ եղբաւր մեր Յովաննիսի. օրինակ մեզ ետ, շնորհեցէ նմա տէր աստուած վարձս բազումս։*

Արդ, ես՝ մեղապարտս ի մանկունս եկեղեցւոյ Յովհաննէս վարդապետ, զրեցի բազում աշխատութեամբ ի վայելումն ինձ և իմոցն՝ Ղազար համշիրակ եղբաւր իմոյ, աղաչեմ զպատահեալսդ ի սմին յիշել առ Քրիստոս զվերոյդրեալսդ և զբազմերախտ զպարոն Ամիրմուլճն, ծաղկեալ զաւակաւք իւրովք և ծնօղաւք հանդերձ, որ զքարտեզս շնորհեաց, և զմիայնակեցունքս մեր, զսուրբ հարքս զմահգասի Ստեփաննոս, և զԻրիցայր, և զմիւս Ստեփաննոս, և զՄարաիբոս՝ զսոքա ծ[նողօքն] հանդերձ, և զիս ծնողօք իմովք...։

Գրեցաւ սա ի թվիս ՊԽԴ. (1394), ի դուռն լուսաբեր անարատ կոյս Մարիամու ծնօղի հայրական [ծոցա]ծին։ | ՝ |

բ

200բ *ԶՅովհաննէս վարդապետ Մեծոփոյ վանաց և զՔովմա խնդրող բանի յիշեցէք ի տէր։*

760.

ԱԻԵՏԱՐԱՆ

Թորոս Աղբաք, Բ. էջ 368—369
(Ջմշկածագի սբ. Աստուածածին եկեղեցի)

Գրիչ՝ Բարսեղ
վայր՝ Սրգսկայ, Կալամըտի գիւղ

ա

... Գրեցաւ սուրբ աւետարանս... ձեռամբ Բարսեղ քահանայի, ի թուականութեան] հայոց ՊԹԴ. (1394), ի կաթողիկոսութեան տէր Կարապետին, ի հայրապետութեան տէր Գրիգորին, ի գաւառս, որ յՍզսկեկոյ, ի գեղս, որ կոչի Կալամըտի, ընդ հովանեաւ սուրբ Թագէոսի եւ սուրբ Կիրակոսի։

Հետ. ստացող՝ Թադէոս
վայր՝ Խարտիշարի վանք

բ

*Ես՝ Թադէոս քահանայս, գնեցի զսուրբ աւետարանս ի հալալ եւ արդար վաստակոց իմոց, յիշատակ ինձ, եւ ծնողացն իմոց Յսհաքին, եւ մաւրն Ճրեէլին, եւ եղբաւրն Պօղոսին..., ի հայրապետութեան Խարտիշարի վանուցս տէր Աստուածատրին, ի գուռն սուրբ Հարապետին եւ սուրբ Սարգսին. վայելել տացէ զսուրբ աւետարանս Թադէոս քահանայիս եւ հարկեւոր եւ երկիւղած եբէցկնոջն իւր Շահմելիքին, որ ետ ի գին սուրբ աւետարանիս զքիմխայ եւ զոսկի աւզերն... աստուած... տայ լսել զերանական ձայնն՝ եկայք աւրհնեալք...։**

761.

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երեան 2189

Գրիչ՝ Գրիգո՞ր
վայր՝ Թավրէ՞զ

ա

434ա *Եւ զպիտակ պետս Գրիգոր՝ վերջին գծող յիշեալ աղաչեմ։*
*Իսկ ըստ հայոց [Ը]ՃԽԹ. (1394) աւարտ եղև գիրքս։***

---

* *Բ. հիշատակագրության ժամանակի մասին որևէ ծանոթություն հրատարակիչը չի տալիս։*

** *Ձեռագրի վերջին թերթերը, որոնց վրա գրված է եղել գրչի հիշատակարանը, 1709 թվականին եղել են եղծված վիճակում։ Ոմն Նաչատուր Հրանի սպասուորդ, սխալներով և անփութորեն, արտագրել է հիշատակարանի միայն մի մասը։ Տուժել է նաև գրչուհյան թվականը։ Ձեռագրում պահպանված մանր հիշատակագրություններից դատելով այն գրված պետք է լինի ԺԹ. դարի վերջին, սակայն Նաչատուրի կատարած սխալի հետևանքով ձեռագրի ընդօրինակության թվականը դուրս է եկել ՀՃԽԹ. (1294)։ Տարեթվի առաջին թվանշանը ուղղում ենք «Հ»-ով։ Հնագրական տվյալները ըստ ամենայնի հիմնավորում են մեր սրբագրությունը։ Ձեռագրի գերը շատ նման է ԺԹ. դարի երկրորդ կիսում Տաթևում գրված ձեռագրերի գրին։*

բ

434բ Արզ, ի փափաքանաց քան զօրութիւն քաջարանաց, վասն զի յորս թեակոխէ մտացն յօժարութիւն, մոռացումն առնէ դժուարագու-նակ կրից եկելոց։ Ծայս տարփումն եռացեալ հողիս, որ ի բոլոր բա-րեաց եմ ունայն և ցուրտ սառուցեալ, որ բ[ն՞դ] զուարթականն առնուն Թմրութեան գործով ընդդէմ ինձ առբերեմ։ Համարձակեցայ հանդգնաբար եւ գրեցի գիտքիկ ձեռագիրս, ի սկիզբն եղաւ գրոյս գրուակ մի քարոզ, և գրուակ յաւաքելական և հայրապետադիր կա-նոնաց, և մասն ինչ վկայութեանց սուրբ գրոց, և յայլ օգտակար և պիտանի բանից վարդապետաց։

գ

Վայ և եղուկ է զմեզ, զի խապարս դառն է և սարսռելի, որ ասեն թէ չազաթէն երեկ, ոչ բարով։

դ

Աւա՛ղ անտանելի գառնութեանս, զոր | | | եկն չազաթայն ի Թավրէզ | | |*

ե

Այսօր ի գուբս ելան մեր հայերս և բերդի թուրքերն և ժ. (10) չազաթա սպանին, և է. (7) մարգ բռնեցին, և բազում աւար առին։

զ

Վաճ, զի չազաթին յահէն սասանեալ կամք և տարակուսեալ և ոչ գիտեմք թէ վերջն ինչ է լինելոց. աւա՛խ անտանելի գառնութեանս։**

* Գաղտված է։

** Դ, դ, ե, և զ. հիշատակագրություններըը գրված են 84բ-85ա, 165ա, 319բ-320ա և 323բ էջերի սորին լուսանցքներում։

762.

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 6925

Գրիչ՝ Ստեփաննոս
վայր՝ Խիզան

87բ ...Արդ, գրեցաւ գիրս հոդեշահ, մահու և կենաց յարմարող և միջնորդ առ աստուած և առ մարգիկ, ի թուականիս Հայկազեան տումարի ՊԽԴ. (1395), ձեռամբ մեղսաներկ և փծուն գրչի՝ սուտասնուն Ստեփաննոսի, ի քաղաքիս, որ կոչի Խիզան, ընդ հովանեաւ սրբուհոյ Աստուածածնին և սրբոյն Սարգսի զաւրավարին, ի հայրապետութեանն Կիլիկեցոց տէր Կարապետի, որ մականուն Բոկիկ կոչի, և ի մերում հայրապետութեանս տէր Դաւթի Ազթամարեցոյ, և ի թագաւորութիւնս այլայսեռից Լանկ-Թամուրի, որ տիրեալ ունէր ի տանէն Սըմըրղընգայ մինչև ի Բաբելոն, և անտի մինչև ի Միջագետս Ասորոց՝ Ուրխա, և անտի մինչև ի գլուխ գետոյն Եփրատայ։ Եւ զչարութիւնն նորա, զոր գործեաց առ եկեղեցիքն և առ եկեղեցականսն և առ հաւատացեալս, ո՛ կարասցէ պատմել, զի բազումք սրով կատարեցան, և
88ա բազումք սովալըլուկ եղեալ, և այլք առ յոս ‖ ձիոց անկեալ կատարեցան չարաչար կոտրտանաւք, զոր տէր աստուած բարձցէ զթագաւորութիւն նորա և անգընդասոյզ արասցէ և տացէ մեզ թագաւոր խաղաղարար։

Ո՛վ, պատուական մանկունք եկեղեցոյ, որք հանդիպիք այսմ տառիս, յիշեցէք ի յերկնաթռիչ յաղօթս ձեր զբաբեպաշտ տանուտէրն զՄուրատն, և զծնողսն իւր, և զբարի կենակիցն իւր զՂըպչախն, և զծընողսն իւր, զի յոյժ փափաքմամբ եւտուն գրել զՄաշթոցս զայս ի վայելումն Կարապետ քահանային...։

Արդ, աղաչեմ զձեզ մանկունք եկեղեցոյ, ես՝...Ստեփաննոս քահա-
88բ նայ, որ զտառս գրեցի, յիշման արժանի ‖ առնել զիս, և զծնողսն իմ, և զծերացեալ հայրն իմ զԳրիգոր քահանայն, զի յոյժ երախտաւոր է ինձ, և զամենայն արեան մերձաւորսն իմ, և զԹղթի կոկոզն, որ վասն մի տէր-ողորմոյ, զինչ ես գրէի նայ յոյժ փափաքանօք կոկէր...։

763.

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ն Ջ Ի

Փերզ։ Նօտաբք հայոց, էջ 6—7

Ստացող՝ Ցուստիանէ խաթուն
վայր՝ Խաղտեաց Ցահանց, Խաղնաձի մեծաստան

Ի թուաբերութեանս ՊԽԴ. (1395), ի հայրապետութեան տեառն Թեոդորոսի... և ի յառաջնորդութեան մերոյ նահանգիս Խաղտեաց՝

Բաբերդոյ տէր Յովհաննիսի արքեպիսկոպոսի, եղեւ հրամանն ի տեառնէ աստուածոյ մերոյ վերափոխել ի տէր Ցիսուս սրբասնունդ և երանաշնորհ եպիսկոպոսին մերոյ տէր Յովհաննի[սի], եղև պակասութիւն ամենայնի մեզ ամենեցուն, ևս առաւել հրեշտակաբնակ մենաստանիս Խալճանեայ, զոր և ի սատրելոյ չարին յարեան ոմանք ի մէնջ, ի մեր ազգականաց, և հակառակեցան վանիցն, և ցրուեցին դուխտ և զամենայն, զոր ինչ կայր ի նմա. զոր տէր Յովհաննէս հանցէ զպատիժ պատուհասին ի գլուխ հակառակողին, ամէն։

Ես՝ նուաստ ոգի՝ քոյր տէր Յովհաննէս եպիսկոպոսի, վերստին հաստատեցի զսուրբ ուխտն Խաղճանեայ, Ուստիանէ խաթուն, և պարոն Թադոս՝ որդի իմ, և ժողովեցաք զչհա և զանօթ սուրբ եկեղեցեաց, և եղաք ընդ ձեռամբ մերով յիշատակ մեզ և ծնողաց մերոց՝ պարոն Աստուածատուրին և մօրն իմոյ խաժիկ խաթունին։

764.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԻ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երևան 6352 (տես նաև 1381)

Վաճառող՝ Յոհաննէս

ա

360ա Ես Յոհաննէս վարդապետս, Աստուածատուր իրիցու որդիս, Ստեփաննոսի եղբայրս, ծախեցի զիմ Սաղմոսի Մեկնիչս Յովաննիսին սպասաւորի բանի, Վարդանա որդոյ։ Մարդոյ զերուց չկայ ի ներս, ոչ իմոց ու ոչ աւտարաց, ով որ դաւի առնէ առենին Քրիստոսի մատնի։

Ես՝ Սարգիս բարեւնապետս վկա. Ես՝ Կարապետս վկայ. Ես՝ Ստեփաննոս, որ դիպեր դրեցի, վկա։ Թվ. ՊԽԴ. (1395)։

Աստուած վայելեալ ոսցէ ընդ երկայն աւ[ուր]ս, ի փառս և ի գովեստս Ցիսուսի աստուծոյ, ամէն։

բ

Այլ և զնոյն վերոգրեալս զՅովաննէս՝ աշակերտ բանի, աղաչեմ յիշել ի տէր, որ մեծաւ ջանիւ և ըստ կարի աշխատութեան, ուղղեաց զմատեանս աստուածային հոգւոյն ի լաւ և ի յընդիր աւրինակէ, որ ուղ[ղ]եալ էր յիմաստուն արանց, և դասիւ առ ոտն էր երջանիկ վարժապետիս մերոյ Սարգսի, ի սուրբ ուխտս Վարագ։ Զի էր տեղիք, որ բանն էր սղալ, և էր՝ որ բառն, և էր՝ որ կէտն և շեշտն, ըստ կարի մերոյ, զոր գիտացաք, և ողորդեցաք և դրաք դհարցականն և դհա[յ]ցական։ Որք կարդայք կամ աւրինակէք, յիշեցէք ի Քրիստոս գառաջին աշխատողն, և զվերջինս, և զգրողս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոս, ամէն։

Եւ գիս՝ զանարժանս ի մանկունս եկեղեցոյ՝ զՍտեփաննոս, որ զյիշատակարանս գրեցի, բարի կամաւք յիշել աղաչեմ։

765.

ՅԱՂԱԴՄ ՄԱՐԴՈՑՆ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ, ՄԱՏԹԷՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Թղեան 512

Հեղինակ՝ Մատթեոս
վայր՝ Տաթև

264բ *Ածղ, ես՝ խոցոտեալ հոգի և մարմին տկարացեալ, և տարտամեալ մտօք և գիտութեամբ, վիրաւորեալ ի բանսարկուէն, մեռեալ ոգի Մատթեոս քահանայ սպասաւոր բանի, առ յանձն աշխատութիւնս զայս, ոչ ղի կարողութիւն էր իմ, այլ հարկեցեալ ի խնդրոյ սրբազան եղբօր մերոյ Սարգսի քահանայի, որ վախճաեաց սմա, հաւաքեցի ի բանից հարանց սրբոց պարզ և յստակ ի հասկացումն, զոր վայելել տացէ տէր աստուած սրբութեան գործով, մանաւանդ ի զուարճութիւն մանկանցդ եկեղեցւոյդ Հայաստանեայց, վասն որոյ երես անկեալ աղաչեմ հանդիպողացդ սմա, զի մտագիւրութեամբ ընթերցջիք՝ զպակասն ուղղելով և զաւելորդն կշռելով, և սխալանացն ներել աղաչեմ, զի այսքան կարացի։*

266ա *Այլ և աղաչեմ յիշել ի մաքրափայլ յազօթ ձեր, թերևս իջցէ շնորհ ողորմութեան աստուծոյ ի յոսկերս մեռելոյս և լուսացէ զաղտ հնութեան իմոյ։ Արդ, եղև գրաւ համառօտութեան բանիս ի թվին Հայկազան առումարի կրկին քառից հարիւրից և քառից տասանց և քառից թուոց (2 . 4 . 100 + 4 . 10 + 4 + 551 = 1395), ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հուրն հարա-*
[ւմ]յին Թամուր կոչեցեալ, և մեք դեգերեալ ի զրանս սուրբ առաքելոյն Եւստաթէի պանդխտական կենօք, առ ոտս երջանիկ բարեւնապետին Գրիգորի, սպասեմք վերին խնամոցն, եւ իմ՝ առեալ աստ, անգեալ կենօք ձեռնարկեցի յայս գործ տեսութեան, Քանզի իմաստունք ոչ կարօտին սմա, զի նոցա ամենայն ինչ յայտնի է, այլ իմ ընկերակիցքն ուսցին ի սմանէ, զի մի անգիտութեամբ խաւարն ամենևին կուրացուսցէ զնոսա։ Այլ և աղաչեմ զզազափարոզսդ, զի զսակաւ յիշատակս մեր գրեսջիք ի կատարումն գրոց...։

766.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ինճիճեան, Ծտրագր. հին Հայաս. էջ 171

Վայր՝ Ընդշտուճիճ, Տշոդ գիւղ

Գրեցաւ ի թուականիս Հայոց ՊԽԴ. (1395), ի յերկիրս Ընդշտուճեաց, ի գեաւղս, որ կոչի Տշոդ...։

767.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Երեան 7700 (տես նաև 1025 թ.)

Նուիրատու՝ Ամիր-Սարգիս
վայր՝ Ախալցիխէ

1ա ...Յիշման արժանի արարէք զվերսդրեալս զայր Ամիր-Սարգիսն, և զամուսին իւր՝ զՆաթելխաթուն, և զդուրն իւր՝ Փաշախաթուն, և զհաւրեղբաւրորդին՝ զՎարթիկուլն, և զհանգուցեալ ծնողսն՝ զպարոն Մխիթարն և զպարոն Միհախաթուն, որ և Քրիստոս աստուած իւր տեսուն արժանի առնէ։

Այլ և ընծայեցաք զսայ ի սուրբ Քառասունքն, ի յԱխալցիխու, ի թագաւորութեան Գէորգին, ի պարոնութեան աթապակ Իւանին, ի կաթողիկոսութեան տեառն Կարապետին, ի հայրապետութեան ի տէր Յակոբոսին և. տէր Ներսէսին, ի թվ. հայոց ՊՀԲ. (1396)։ Զոր տէր աստուած վայելել տացէ քահանաիցն Տիրատրոյ և Սարգսին, որ բազում աշխատանք կրեցին ի սուրբ Քառասունքն աղաւթիւք և պատարագաւք։*

768.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վիեն. 129, Տաշ. ծուց. էջ 416—417

Կազմող՝ Յովհաննէս

235բ Ով՝ոք հանդիպի սուրբ աւետարանիս, յիշեցէք ի տէր զսաստացաւղք սորա զերկու հարազատ կրաւնաւորքն՝ զԹորոս եւ զՍտեփաննոս, եւ զծնողսն իւրեանց, եւ զհայրն իւրեանց զՄովսէս, որ ստացան զսա եւ եռուն վերստին նորոգել թվ. ՊՀԲ. (1396), ի վայելումն ինքեանց եւ յիշատակ հոգոց նոցա եւ ծնաւղաց իւրեանց, ամէն։

Ընդ նոսին եւ զեղկելի կազմողակս զՅովհաննէս աղաչեմ արժանի առնել յիշման աղօթից, ծնօղ|օ|ք մերով հանդերձ։**

---

* Ձեռագիրն ընդօրինակված է 1237 թվականին։ Սույն հիշատակագրության միայն վերջին էջն է պահպանվել։

** Ձեռագրի գրչության թվականն անհայտ է, 235ա էջի հիշատակարանի համաձայն գրված է ձեռամբ Սարգսի կրաւնաւորի հանգուցեալոյ ի Քրիստոս, ի խնդրոյ պատուական կրաւնաւորի Մատթիոսի։

769.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԴՐԻԴՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Ըրևան 5456

Գրիչ՝ Մաքեոս

272բ Ո՛վ վեհամիտ ընթերցող, զատացող աստուածաշունչ տառիս՝ զԱտոմ կուսակրաւն արեղայ և զիս՝ զմեռեալ հոգի զՄաքեոս սուտանուն վարդապետ, որ բազում աշխատութեամբ գծեցի, յիշեցէք ի Ջրխատոս, և աստուած զձեզ յիշէ։*

770.

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

Ըրևան 2478

Գրիչ՝ Ատոմ բաբունի

196ա Աւաղ և եղուկ եղբայր
Թէ այս ինչ բաներ կու լինի.
Մէկ մի գիր կածեր աշխարհի
Եւ յամէն դիմաց ժողովի,
Մեռնիլ չի կամի եղբայր,
Թէ հազար մեռած տեսանի,
Մէկ պահ մահն ի միտն անկանի
Ցորժամ զդին անկեալ տեսանի,
Ի այս ամէն մարդոյ հանդիպի.
ՋԱտոմըս** ծոյլ բաբունի,
Որ միայն ըզանունս ասի
Եւ ի գործոյս եմ յոյժ հեռի.
Զի՞նչ աւգուտ է մարդկին այդի,
Որ ի պտղոյն ինքն չվայելի,
Այսպէս ես գիրք լաւ ընտրեցի
Ի յամենեցուն եմ ամայի։

* Ձեռագրի գրչին նուիրացնում ենք Գր. Տաթեացու աշակերտ, նշանավոր մատենագիր ու քարոզիչ Մաաքեոս վարդապետի հետ, իսկ ստացող Ատոմին՝ Տաթեացու համանուն աշակերտի հետ, որի խնդրանքը նա գրեց իր հայրցմանց Գիրքըշ։ Վերջինս մեռավ 1397թ., երբ Տաթեացին գեռ չէր ավարտել իր աշխատությունը (տես՝ հիշատակարան № 771)։ Այս տվյալների հիման վրա սույն հիշատակարանը տեղագրում ենք 1397-ի թվաշրջում, որը նրա գրութեան ժամանակագրական վերջին հնարավոր եղրն է։

** Տես նախորդ ծանոթությունը։

771.

ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՑ

Երևան 915

Հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի
վայր՝ Տաթև

344բ Արդ, ես՝ վերջինս ի ծնունդս եկեղեցոյ և արուսպս բանասիրաց Գրիգոր պիտակ անուն խնդրեալ բանին, բացայայտեցի զրանս հարցմանցս ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցոյ, ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի ուղղափառի, որ ի վաղուց հետէ թախանձէր եւ ես՝ վասն իմոյ տկարութեանս և ժամանակիս վրդովման, զխնդիրն յապաղէի։ Եւ ապա ի սէր և յանձուկ ժտելոյ նորին, ապաստանեալ ի նայն, որ զաւրացույց զտկարս, ձեռն ի գործ արկեալ աւարտեցի բաղում միջոցաւ և փախըստեամբ ի տեղից, և մեծ ջանիւ փութացեալ։ Որ և ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոյասացեալ խնդրողն, այլ ի հասարակ գրոյս՝ հասարակեաց և նա զկեանս առաւրեա, հասեալ ի գանձն իմաստից և յագրերն գիտութեանց, որոյ չիշատակն աւրհնութեամբ եղիցի, ամէն։

Արդ, եղև դրաւ բանիս ի շրջագայութեան հայկազեան տումարիս ՊԽԶ. (1397) թուի, ընդ հովանեաւ երկնահանդէտ մեծարգոյ ուխտի Սիւնեաց նահանգի, առաքելական աթոռոյ սուրբ առաքելոյս և այլ շրջակայ հրեշտակաբնակ սուրբ մենաստանաց, որոց խնամօքն ամրացեալ փրկեսցուք յամենայն փորձութեանց, ամէն։

Իսկ լուծումն հարցմանցս այսոցիկ ոչ ամենևին աւտարաճայն աւելորդ խուղեալ և ոչ գեղջուկ իմն յաշխարհական խաւսից յարմարեալ։ Այլ զպիտանիս եկեղեցոյ և վարդապետաց ոգեշահ խնդիր հաւատոյ միայն. հոգ տարեալ ուղղակի ճշմարտութեան և անըստգիւտ իմացման, բովանդակեալ ոչ զամենայն, որ ամենեցունց է գիտելի, այլ բանս բազումս, որ բազմաց է պիտանի և խնդրելի։ Արդ, է ինչ սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն. եւ է ինչ ի ներգործութեանց հողոյն աստուծոյ շնորհաց, որ ծածկէ յիմաստնոց և յայտնէ տղայոց, և յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց. եւ թէ այս և թէ այն։

Դու ընկալ զխնդիրդ մտաց առանց ամենայն երկբայութեանց,
345ա իբր ի միոյ կենե || դուտ աղբերէ կենաց ուռճալբացեալ և պտղաւետեալ ի փառս և ի գովեստ նորին տընկագործի և առաջնորդի։ Զոր և ես զաւրէն մշակաց բազմահաւաք պտղոց, կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծագկանց, կամ չնչին թռչնոյ զխորխոխ մեղու, կամ որպէս լոմայս այրոյն, տառապեալ գոյիւ աղերս ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան՝ իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցեացդ Հայաստանեայց և ընթերցասէր մտաց, որ և աղաչեմ զբարեմիտ հանդիպօղս եղբայրական սիրով հաւանել, զպակասն լնուլ և զաւելիսն կշռել, և պիտանեացն փառս վերընծայել այնմ,

որ փառաւորեալն է ի պարգեւս իւր, իսկ զանպիտանս՝ ներել մերոյ փոքրընկալ անաւթոյ և դանդաղկոտ փութոյ։

Դարձեալ, երես անկեալ արտասուալիր ղիմաւք հողս և փոշի սուրբ գաբշապարաց ձերոց, աղերսեմ ի խորոց սրտէ զհարազատգութ հարց և եղբարց մեր հոգեորաց, զի կաթ մի արտասուաց ի կաթիլ գուլէ ձերդ մաղթանաց ցաւղեսցէ ի գերեզման հոգոց իմ տառապանաց և լուասցէ զբազմաշարաւ զաղրացեալ ոսկերս մեղաւք մեռելոյս։ Զի թերևս վասն ձեր սիրալիր մաղթանացդ գասցէ ողորմութիւն յամէնողորմ փրկչէն մերմէ։ Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի Հայոց Ցոհաննու Որոտնեցւոյ եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին աւրհնութեանց և վիճակի ժառանգութեան՝ սբբոցն ի լոյս, զի. նա ծնաւ զմեզ ըստ բանին, բազմաջան երկաւք կրթիլ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի, որ և ձեզ յիշողացգ և մեզ յուսոզացս, առհասարակ, ողորմեսցի բարերար և բազումողորմ մարդասէրն աստուած և տէր մեր Ցիսուս Քրիստոս, ամէն։

Այլ և զերջանիկ գազափարաւզոգ մաղթեմ, որք ընդաւրինակէք զգիրս Հարցմանցս այսոցիկ, գրել և զսակաւ յիշատակս այսոցիկ, որպէս և դուք լիցիք գրեալ ի գիրն կենաց, ամէն։

Ւրեցի և յայսմ տեղւոջ հարցմունք Գէորգեայ վասն բազում վկայութեանց, որ առեալ է ի գիրս յայս, զի անտարակոյս լիցի։ Ընդ ամենայն հարցմունքդ չորեքտասան գլուխ, որպէս յայտ է ի կարդիտ։

772.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թուին 7629

Գրիչ՝ Ռստակէս
վայր՝ Հիզան քաղաք

264բ ...Եւ արդ, ես՝ Մարաիրոսս, յետինս և անպիտանս յորդիս եկեղեցոյ ցանգացող եղէ աստուածախաւս և աւետարեր սուրբ աւետարանիս և ետու գրել զսայ յիշատակ հոգւոյ իմոյ և եղբարն իմոյ Կիրակոսիի, որ գնաց, որ քարգործ բերէր, որ զեկեղեցին շինէաք, և ի Կար[ա՞դ]ի սարն աւազակքն ի վերա անգեալ՝ անմեղութեամբ և պատրանաւք ըմբռնեալ, և իբր նման անմեղին Աբելի և Յովաննու Մկըրտչին և Ստեփանոսի Նախավկային մարտիրոսական պսակաւ ներկեալ արեամբն իւրով՝ պսակեցին զառն տանջանաւք, որ և վայրքն ծաղկաւէտ առողեալ էր կարմիր արեամբ իւրով, եւ իւր գեղեցիկ մանկութեան հասակն իբրև զվարդս պայծառ հաբեալ ի կարկտէ և թափեալ յոստոյ. և Ճացաք ի ճանապարհն նորա հաբելով, եթէ գայցէ բերելով ընդ իւր զքինաւզ եկեղեցոյն։ Եւ մեք ոչ գիտէաք եթէ նա յայնպիսի գառն չարչարանս մատնեալ էր։ Եւ մանուկն այն Կիրակոս ածէր զակն իւր աստ և անտ եթէ ոք յեղբարցն և կամ յազգականացն և յ[ը]նդանեացն երևէր և հասանէր իւր յաւգնական, և
265ա ոչ էր, և ոչ ևս երևէր։ ‖ Եւ ապա լցեալ զակն արտասուաւք աղա-

զակէը՝ Քրիստոս աստուած, համարեա զմահ իմ ընդ մահուան մարտիրոսացն, և առեալ զհոգն խաչաձև արկանէը ի բերանն, և ապա տայը զինքն իրրև զոչխար ի զենուճն։ Եւ մեք գնացաք և գտաք ի քարանձաւք լերինն անփութեալ խոռոչս ձորոց, առեալ բերաք ի տուն | | | *զաւետարանս յիշատակ Կիրակոսիկ և կենակցին իւրոյ Մօջաճին, նաև ծնաւղացն, հաւրն իւրոյ՝ Մերի, և մաւրն իւրոյ՝ Քափուրի. և եղբարցն՝ Մարտիրոսիկ, Յովաճնիհոկ և Եղևոճիկ | | |**, և այլոցն ամենայնի, առհասարակ։

265ր ...Եւ արդ, գրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ մեղապարտ Ռստակէս անխմաստ և ախմար գրչի, յընդիր և ի ստոյգ աւրինակէ Աղեքընցո, ի Ցովաճնէս վիլիսովայէ դրեալ, կենաւք և առատապանաւք և բաղում պանդխտութեամբ։ Ի մեծ Թուիս, ի յեղանական շրջադարձութեան արեգականն ստորիջիւք երկնաչու ճանապարհաւ յերկնից յերկիր հաելով, ըստ արարչութեանցն չափեալ յելանելոյն Ադամա ի գրախտէն մինչև դայս աւր ամք ՅՊԻԴ. (6824), իսկ ի Հայկազան Թուականիս ՊԽԶ. (1397), ի քաղաքիս Հիզան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ զաւրավարացն Սարգսի և Գէորգայ, ի հայրապետութիւնն Կիլիկեցւոց տեառն տէր Կարապետին, և ի մերոյ հայրապետու[թեանս Աղ]թ[ամ]ար[այ | | | Ջաքար[իայի | | | *** և իշխան ոչ գոյ մեր, զի անտէրունչ շրջեաք։ Եւ կայսեր | | | զուԹիւն աղդին նետողաց Թամուր խանին, ի Թշուառ և ի չար ժամանակի, յոր էառ զԲաբելոն, գ|Ի՞|կիաղ, և զՆղեսիա, և զՐա...դեն, և զՄերդին, և զԱմիթ, և զամուրան Աւրնկու, և զամենեսեան ի սուր սուսերի մաշեաց և հրո[վ այր]եաց և զոր գերի վարեաց, և յորում է արդարութիւն յամենայն ուրեք նուաղեալ և անիրաւութիւն յամենայն կողմանց զաւրացեալ, որ և յայս՝ աո ի բաղում նեղութիւն և չարչարանք կրեցին եկեղեցիք և մանկունք նոցին ի հնարից այլասեռից. զոր տէր աստուած յեաս ընդդէմ զարձուցանէ և կործանեսցէ զնոսա և զչարութիւն նոցա | | | ****

773.

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՃԱՌԻՑ

Վէնետ- 315 Յուց. Բ. էջ՝ 1284—1285

Գրիչ՝ Ներսէս
վայր՝ Գամաղիէլի վանք

347ր ...Եւ արդ, ես՝ Ասատ միայնակեացս, եաու գրել զդիրքս զայս յիշատակ հոգոյ իմ և ծնաւղաց իմոց։ Եւ արդ, գրեցաւ սայ՝ ձեռամբ Ներսիսի մեղապարտ ծառայի, անիմաստ և տխմար գրչի, որ և ազա-

* Ներք տող անընթեռնելի։

** Մեկ և կես տող գրված է կարմիր թանաքով, ապա ջնջված ու այլ ձեռագրով ավելացված են հաջորդ չորս բառերը։

*** Մաշված և անընթեռնելի բառեր են։

**** Վերջից թերթ է ընկել։

չեմ ղ՚անդիպողքս գրոցս՝ յիշել յաղաւթս ձեր, և անմեղադիր լինել, զի անընդել գոլով յարւեստ գրչութեան և բաղում մեզաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ կարի մերում, զոր պարգևեաց մեզ մարդասէր հոգին, աշխատասիրեալիմ ի սմայ՝ գրեցի անարժան ձեռաւքս։ Ի մեծ Թուիս...յելանելոյն Ադամայ՝ մինչև ցայսր ամք ՅՈՈ. (6600), իսկ ի Հայոց Թուականիս ՊԽԶ. (1397), ի վանքս Գամաղիել կոչեցեալ, ի հայրապետութեանն Կիլիկեցոց տէր Կարապետին, և ի մեր հայրապետութեան Աղթամարայ տէր Դաւթի, և ի թագաւորութեանն այլասեռից Թամուր-Լանգին, զոր տէր աստուած բարձցէ [զթագաւ]որութիւն նորա [և խորա]սոյզ արա[ցէ], և...փրկեսցէ զմեզ, [ի] նեղչաց մերոց, [որպէս դ]իսրայէլ ի ձեռաց Փարաւոնի։ Եւ այն ան[մահ]ին և բազուկ հզաւր թագաւորին աննասանելի պահեսցէ զաթոռ թագաւորական և հայրապետական, զի ի յիշել զանուն սոցայ՝ սասանել սաքրին, և ոչ ևս երեին թշնամիք ճշմարտութեանն...։*

774.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ

Սքուանձա . Թորոս Աղթաբ, Բ. էջ 385—386 (Աբղնի Բարձրահաեաց եր. Աստուածածնի վանք)

Վայր՝ Սաճաճին

Գրեալ ի լառու գաւառի, ի գերահռչակ սուրբ ուխտն Սաճաճին, ի դրան սուրբ Աստուածածնի եւ սուրբ Կաթողիկէի, ի թուականութեան ամանակիս Աբեթական մեծ տումարիս ՊԽԶ. (1297), յանիշխանութեան աշխարհիս...**

775.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Փերդ. Նօտարք հայոց, էջ 9—10 (ի կարնոյ ակեղեցի)

Կազմող՝ Ցովաննէս
վայր՝ Գուգարաց վանք

...Թվ. ՊԽԶ. (1397) բերաւ սա ի Կիլիկիոյ գաւառէն ի յաստուածապահ զաղեակէն, որ կոչի Մրլեվոն, ձեռամբ Յովաննէս նուիրակիս, և կազմեցաւ ի սուրբ անապատս, որ կոչի Գուգարաց վանք, ընդ հովանեաւ սուրբ Ցովհաննու Մկրտչին և մօր լուսոյ սուրբ Աստուածածնին, աղաչեմ զի և սպասաւորք սուրբ անապատիս՝ զՍերովբ կրօնաւորն, և զՄկրտիչ կրօնաւորն, և զկարապետ հալպետն, և զայլս յիշեցէք առ Ք[րիստոս։

* Շարունակության մեջ հիշվում են գրչի և ստացողի մերձավոր ազգականները։
** Հիշատակարանը համառոտված է հրատարակչի կողմից։

776.

ԱԻԵՏԱՐԱՆ

Մեքասախա, Ս. Նշան, № 65, ՀԱ. 1926 Թ., էջ 45—46

Ստացող՝ Վարդան
վայր՝ Եզնկայ

ա

452 *Արդ, աղաչեմ ամենեսեան, որք կարդայք կամ աւրինուիք զսուրբ աւետարանս, յիշեցէք եւ մեզաց թողութիւն հայցեցէք Վ.արդան քահանայի, եւ ծնողաց սորա Խոսրովի, եւ կենակցի իւրոյ Մամախաթունի, եւ զեռաբուսիկ որդւոյ իւրոյ Պռոխորոսի, Յիշեցէք զկենակիցն Նիկողոսի, ամէն, ի սուրբ աղաւթս ձեր, եւ աստուած զձեզ յիշէ յիւր սուրբ արքայութիւնն, ամէն։ Գրեցաւ վերոյդիրս ձեռամբ Վարդան քահանայի, Թվ. ՊԽԶ. (1397)։*

Գրիչ՝ Մխիթար

բ

452 *Արդ, զրեցաւ յիշատակարանս ի յԵզնկայս, ի յանուն Վարդան քահանայի, որ ստացաւ զսա ի յարդար ընչից իւրոց, յիշատակ իւր, եւ ծնողաց իւրոց փոխեցելոցն ի Քրիստոս, Լուս երիցու, եւ Մկրտիչ երիցու, եւ միւս Վարդան երիցու, եւ այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց, մաւր իւրոյ Զապելիճ, եւ մաւրքուրին Մամատիկիա, եւ եղբարն Նիկողայոսի, եւ զաւակի իմոյ Մկրտիչ սարկաւագի, եւ եղբաւրորդւոյ Յակոբի, եւ Դաւթիճ, որ յաւետարանիս վերագինս աւգնական եղեւ, եւ երիցու կնոջն Հատիճ, եւ իւր մաւրն Քուրխաթունիճ, եւ պապուն Յովաճիսիճ, եւ իւր հաւրն Գիշուկիճ, եւ եղբարն Կարապետիճ, եւս առաւել Մխթալիճ, որ աւգնական եղեւ ի գինս...։*

Եւ արդ, գրեցաւ վերոյգիրս ի սուրբ աւետարան ձեռամբ անարժան երիցու Մխիթարի, Թվ. ՊԽԶ. (1397), յունիս ամսոյ Բ. (2)։

777.

«ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ» ԵՒ ՍԱՀՄԱՆՔ ՀԱՒԱՏՈՑ
ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 1555

Վայր՝ Սրուսադէմ

...Արդ, սկսեալ եղև սուրբ գիրքս, որ է Յիսուս որդի և Հաւատոյ Արմատ, առաջնորդութեամբ հոգւոյն սրբոյ, ի սուրբ քաղաքս Սրուսադէմ, ընդ հովանեաւ սուրբ հրեշտակապետացս, և աստ կատարեցաւ։
328ա *Արդ, աղաչեմ զաղօթասէր եղբարքդ և զուսումնասէր || մանկունքդ սրբոյ Սիոնի, դի յընթեռնուլն ձեր զսուրբ գիրքս յիշեսջիք ի մաքուր աղաւթս զերախտաւորք սուրբ գրոցս, և աստուած զձեզ յիշեսցէ ի խնամս ողորմութեան իւրոյ, ամէն։*

Գրեցաւ սուրբ գիրքս ի թվիս Հայոց ՊԽԶ. (1397), ի յօգոստոս ամսոյ ԻԲ. (22), և փառք տեառն աստուծոյ. իմոյ։

778.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԴԱՄԱՏԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԵՒԵԼՑԻՈՑ

Երեան 1091

Գրիչ՝ Պետրոս

վայր՝ ի գաւառս, որ կոչի Բարմն, որ է Ախբակ

275ա ...ի թուականիս Հայոց ՊԽԷ. (1398) դրեցաւ Արարածոց Մեկնութիւնս ձեռամբ մեղսպարտ ծառայի Պետրոսի փծուն գրչի, ի խնդրոյ արժանաւորեալ կրաւնաւորի՝ Պետրոս քահանայի, որ է քուերորդի տեառն Ստեփաննոսի, որ է յաթոռ սուրբ առաքելոյո Բարղոմէոսի։

Արդ, յերես անդեալ աղաչեմ զղասս սուրբ հայրապետաց և վարդապետաց և զերամս սուրբ քահանաից, որք հանդիպիք այսմ տառիս յիշեցէք ի տէր մեր Յիսուս Քրիստոս զտէր Ստեփաննոս և զտէր Տիրացու, որ է հաւրեզրաւրորդի նորին և յոյժ ցաւակից սուրբ ուխտիս, հանդերձ ծնաւղաւք և ամենայն ազգականաւք, և զտացող սուրբ գրոցս՝ զՊետրոս կրաւնաւոր, որ ցանկացող եղև այսմ հոգևոր աստուածային մատենիս, և յոյժ չխափանաւք և չերմ սիրով ետ գրել զսա, յիշատակ իւրն, և ծն[աւղ]ացն իւրոց՝ հաւրն իւրոյ Ղարամանին, և մաւրն իւրոյ Աւագուհոյ, և այլ ամենայն արեան մերձաւորաց իւրոց, և մեզ՝ ամենայն հաւատացելոց ի տէր մեր Յիսուս Քրիստոս, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Արդ, դրեցաւ սայ ի գառն և ի նեղ ժամանակիս, քանզի բազում ի վշտի կա երկիրս այս վասն ծովացեալ և բազմացեալ մեղաց մերոց, զոր հրամայէ առաքեալ Պաւղոս եթէ՝ այժմու մեղքս առաւել է քան զխաչահանուացն։ Ցայսմ ամի ըմբռնեցին զպարոնն Հայթարա, որ

275բ էր յոյժ խնամակալու ազգիս քրիստոնէից, առ || աւել քան զնախնիքն իւր, զի ըմբռնեցին զնա և դրին ի բանդի ի մէջ ծովու, և զաւրաւք բազմաւք եկին ի Զորն Դիզա, և աւար հարին մինչ ի Զուլամէրկ և ի Գաւառ, զոմանց զտուն այրեցին, զոմանց* զվաստակ կերան և զպահուստն զամէն գտան, և զանառիկ ամրոց Անին առին, և զայն որ խնաեցին, յետո հարկապահանջութեամբ ալարին իրր գկոզպուտ։ Մեր յոյս և ապաւէնն աստուած է։

Մինչ նա կարճէ զչափ չարին,
Աւարտ առնէ պատուհասին,
Կանգնէ զաթոռ թագաւորին,
Եւ առաւել քան, զոր էին։
Պարտ է առ տէրն ապաւինել
Դիրկ արկանել ոտից նորին,

* Բնագրում՝ զոմանց։

Որ չքողու զմեզ իբր զհաւտ,
Առանց հովիւ ի մէջ գաշտին։

Գրեցաւ գիրքս ի գաւառս, որ կոչի Բարմն, որ է Ախրակ, ի դուռնս սուրբ տոաքել[ոյն] Բարգուղիմէոսի, ի հայրապետութիւն տեառն Ստեփաննոսի, և յիշխանութիւն Միր-Ալադնի և Ամիր-Չէնգնի, որ է գեռ ըմբռնած ի մէջ կղզոյն Ախթամարայ։ Եւ խոշորութեան գրոյս և սխալանաց անմեղագիր լերուք, զի կարողութիւնս մեր այս չափ էր։

Արգ, աղաչեմ զամենեսեան գպատահողք սորա, յորժամ ընթեռնուք զսուրբ գիրքս, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զստացող սուրբ մատենիս՝ զՊետրոս, հանդերձ վերոասացեալ անուամբքն և ամենայն ղարմօք, և աստուած-ողորմի ասացէք նմա և իւրոցն, ամէն։ Ընդ նմին գիծուն զրիչս զՊետրոս, և զԱստուածատուր քահանայն, որ զաւրինակն շնորհեց, և զԱկոբ կրաւնաւորն, որ զթուղթն կոկեց, որ և մարգասիրեալ եղբայրական խնամւոք կաթիլ մի ի ցաւոյ աղաւթից ձերոյ իջցէ յոսկերս մեր և լուսացէ զրազմաշարաւ ապականութիւն հոդոյ և մարմնոյ մերոյ, և զծնաւղացն մերոց՝ զներեւիսն և զմահացուսն, և ձեզ՝ յիշողացգ և մեզ՝ լսողացս, առհասարակ, վայելեսցի յոյս հանդերձելոց փառացն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեան։

779.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷԻՑ, ՍԱՐԳՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 7416 (տես նաև 1599 և 1740 թ. թ.)

Գրիչ՝ Պաւղոս
վայր՝ ի քաղաքս Խալատաճ,
ճանդէպ Կոստանդինուպաւլսի

ա

447ա ...*Արգ, ցանկացաւղ եղեալ այսմ աստուածային գանձիս և անգին մարգարտիս աստուածասէր և հաւատարիմ, հեզահոգի և ողորմած, տանց աստուծոյ ղարգարաւղ և սպասաւորաց նոցին տացաւղ Աբլուհամ վաճառական, որ էր վկայեալ յամենեցունց և հաւատարիմ գտեալ մեծամեծաց և փոքունց, և հլու հնազանդ առաջնորդաց եկեղեցոյ, նաև ուղղափառ հաւատով ամրացեալ։ Սա փափաքաւղ եղեալ բանի մարգարէին, թէ՝ երանի, որ ունիցի զաւակ ի Սիովն և ընտանի յերուսաղէմ, և գնացեալ ի ցանկալին ամենեցուն յերուսաղէմ, և երկրպագեալ տնաւրինականացն, և մասնաւորեալ աղաւթարարացն՝ որ անգ յընչից իւրոց և ուրախացուցեալ զամենեսեան հոգևոր ուրհւք և մարմնաւոր։ Եւ խոստացաւ երկնահանգէտ և սուրբ մենաստանին սրբոյն Ցակորայ ղդիրքս ցանկալի, որ կոչի Սարգիս Գիրք։ Եւ ետ գրել իմոյ՝ անարժան քահանայիս և փցուն գրչի Պաւղոսի, որ գրեցաւ ի քաղաքս Խալատաճ, հանդէպ Կոստանդինուպաւլսի, ի նեղ և ի նուրբ ժամանակիս, որ թուրքն խսարել է զմեզ և զՍտըմբաւլն, վասն ծովացեալ մեղաց մերոց, և ակնկալութիւն և աղաւթիւն ի վերուստ լիցի յողորմած տեառնէն, զի այս չորս տարի է, որ բա-*

417բ դումք կու ցանկան մահու, որ եմք ի բանտի։ Եւ ըդ ‖ Ծերունի հայրն իմ՝ զՄատթէոս ժրաջան քահանայն և զանձանձիր ազաւթաւորն, և զմայրն իմ, և զամենայն ազգայինս իմ՝ զկենդանիս և զհանգուցեալս, յիշեսջիք ի Քրիստոս մեզաց թողութիւն խնդրելով։ Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զարժանին յիշատակի զԱբրահամ մղտեսին, որ ետ զմատեանս սուրբ ի մեծ և յաւաղ եկեղեցին՝ ի սուրբն Սարգիս, յիշատակ իւր և իւրոցն ամենայնի։ Եւ մի ոք իշխեսցէ հանել դսա անտի, զի մի պատժեսցի յաստուծոյ և յամենայն սրբոց...։

Արդ, դրեցաւ սա ի թուականութեանս հայոց ՊԽԷ. (1398)։

Բ

419ա Քրիստոս աստուած, ի քո անաւուր և ի սոսկալի գալըստեան ողորմեա ստացողի դրոցս մղտըսի Աբրահամին, և ծնաւղացն իւրոյ՝ Ոսկիծամին և Մարեմտիկնա. և եղբաւրն իւրոյ Յովաննէսին, և քուրոչն իւրոյ Նուրխաթունին, և կնոչն իւրոյ Մամուշխաթունին, և ամենայն համաւրէն ազգականաց իւրոց ողորմեսցի աստուածն ամենեցուն, ամէն։ Նաև ինձ՝ ողորմելի և անպիտան գրչիս Պաւղոսիս, և հօրն իմոյ Մաթէոս քահանայի, և մաւրն իմոյ Արուզին, և երկոսեան քւերցն իմոյ՝ Թամթային և Մարիամէ, և կնոջն իմոյ, և մօրքուրոչն իմոյ՝ Աննային, և որդոյն իւրոյ Յոհաննէս քահանային, և այլ համաւրէն ազգականաց իմոյ՝ կենդանեաց և մեռելոց, ողորմեսցի աստուած ամենեցուն առհասարակ, ամէն։ Այլ և կարգացողաց և լսողաց և ամենայն ժողովրդեանս, և որ դամէնն ասէ, ամէն։ Ընդ նմին յիշեսջիք յաղաւթս ձեր զվարպետն իմ զՍտեփաննոս Նատերացց դանհաս գրիչն, և զանդրանիկ որդին իւր զՅոհաննէս քահանայ, և զծնաւղսն իւր, և զեղբարսն իւր՝ զտէր Գրիգոր եպիսկոպոսն, և զՈւետիք ծաղկաւղ, և զՅովաննէս զանհաս գրիչն, և զամենայն համաւրէն ազգայինս իւր յիշեսջիք յաղաւթս ձեր, ամէն։

Աղաչեմ զդասս սուրբ քահանայիցդ, յորժամ կարդայք և կամ աւրինակէք, նա խոշորութեան և կամ սղալանաց մի մեղադրէք, զի կար մեր այս չափ է, զի ի նեղ և ի դառն ժամանակիս գրեցաւ, որ երեկ անաւրէն թուրքն բաղում զաւրօք և հեծելաւք ի վերայ Ղալաթանիս, շատ աւէր արաւ ի քաղաքիս դուրս, և մեք ի նեղութիւն և ի չարչարանք էաք գիշեր և ցերեկ, և կարաւտ էաք դքալ մ[ը] թացնի։ Ցայս նեղութիւն և ի դառն ժամանակիս գրեցաւ գիրս, կրկին և երեքկին կու աղաչեմ զձեզ՝ զդասս քահանայիցդ, որ սղալանաց կամ խոշորութեան մի մեղադրէք, զի կար մեր այս չափ էր։

780.

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Երևան ՏՏ10

Գրիչ՝ Զաքարայ
վայր՝ Աղթամար

271բ *Արդ, դրեցաւ սուրբ աւետարանս ի կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սուրբ Խաչիս և սուրբ Նշանի, ի հայրապետութեան տէր Դաւթի, և ի թուին Հայոց ՊԽԸ. (1399), ձեռամբ մեղապարտ և անարժան Զաքարայ անիմաստ և ախմար գրչի, և անընդունակ գոլով յարուեստ*
272ա *գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ըստ | | | ում ղոր պարզևեաց մեզ մարդասէր հոդին, [քա]զում աշխատանաւք գրեցի անարժան ձեռաւք իմովք, ի ստոյգ և յընտիր աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ։ Արդ, որ ճաշակէք յաստուածային բուրաստանէս և յամենալի սեղանոյս, որք պատահիք սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ, յիշեսջիք յաղաւթս ձեր [ստացող սորա զԴանիէլ, և զծնողսն՝ զԱբրահամ և զՄարեմ, և զեղբարքն, և զպտղն, և զորդին, և զդուստրն. և ետ զսա ընծայ ի սուրբն Ստեփանոսի Նախավկայն յՈստան քաղաքի, և յորժամ ընթեռնուն յիշեն զԴանիէլ և զծնողսն, և աստուած ողորմի ասեն]։**

Ընդ նոսին և զանպիտան գրիչ Զաքարայ, և զմեր ծնողսն՝ զՄկրտիչ քահանայ և զԹանկխաթուն, և զուսուցիչն մեր զԿարապետ կրաւնաւոր, զհանգուցեալն ի Քրիստոս, և զեղբարքն՝ զԿարապետ քա-
272բ *հանայ և զՅովաննէս, որ աշխատեցաւ ի նիւթ թղթիս, և || զԽաչին, և զքոյրն մեր Խէրխաթուն. որ բարի մահուամբ հանգեաւ ի Քրիստոս, և զամենայն ազգականսն մեր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն։ Եւ որք զմեզ յիշէք սրտի մտաւք և զուք յիշեսջ լիջիք յառաջ յողորմութեանն աստուծոյ, որ է աւրհնեալ զովեալ և բարեբանեալ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

781.

Ճ Ա Ռ Ը Ն Տ Ի Ր

Սրուանձտ. Թորոս Աղբար, Բ, էջ 429—430 (տես նաև 1381)

Գրիչ՝ Յովհ[աննէս]
վայր՝ Շուշանց գիւղ

Գրեալ ի սուրբ ուխտն Վարագայ ձեռամբ Յովհ[աննէս] գրչի, ընդ հովանեաւ սուրբ Նշանին Վարագայ, ի գեաւղս Շուշանց ի գուռն սուրբ Գէորգայ զաւրավարին, ի հայրապետութեան տէր Սահակայ՝

* Ուղղագիծ փակագծերում եղող հատվածը գրված է այլ ձեռագրով ու այլ թանաքով։

առաջնորդին Վարազայ, Հղբաւր Պաւղոսի նախորդ առաջնորդին, ի թվ. Հայոց ՊԽՀ. (1399)։ Ցիշեցէք զՏիրացու կրաւնաւորն, եւ զտէր Ստեփաննոսն, եւ զծնողսն իւրեանց՝ զՀայրապետն եւ զԴաւապետն, զՇնահոր եւ զՍամէլիք, եւ զպապն նորին զՍաւարն, եւ զԱւետիս քահանայն,.զՋեռնխաթունն, եւ զԴուրջիխաթունն...զՆորատիւնն, եւ զՍահմատիւնն...եւ զերիցս երանեալ Սիմէոն բարուն[ապետն, որ եղեւ պատճառ եւ ուսուցիչ գործոյս զրագրութեան, տուեալ նուէր սուրբ առաքելոցն Բարդուղիմէոսի։

782.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՆԳԱՄԱՏԵՆԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ ԱՐԻԵԼՑԻՈՑ

Երևան 1136 (տես նաև 1381 թ.)

Հետ. ստացող՝ Կարապետ

222ա Կամաւն աստուծոյ ամենակալին ես՝ Կարապետ արեղայս, յամի ՊԽՀ. թուականիս Հայոց տոմարի (1399), սաացայ զցանկալիս բաղմաց, զգանձս անկապուտ փարթամութեանց՝ զմեկնութիւնս Ալբարածոց, ի վայելումն անձին իմոյ և ի սփոփանս մտաց՝ աստի կենացս, և յետ աստեացս՝ յիշատակ ինձ, և հաւր իմոյ Զաքարէին, և մաւրն իմոյ Թադա[մէլիքին, և մաւրաքերն իմոյ Խոյանդին, և այլ արեան մերձա[ւորա]ց և երախտաւորաց իմոց և ամենայն ազգականաց։ Որք հանդիպիք զաստուած-ողորմին անյապաղ ասացէք, և աստուածն, որ առատն է ի տուրս բարեաց, մեզ և ձեզ ողորմեսցի, ամէն։

Այլ և դուսթայ Մելիքշէն յիշեցէք։

783.

ՏԱՂԱՁԱՓՈՒԹԻՒՆՔ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Երևան 1537

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Սաճաիին

191ա Արդ, ի սպառել ժամանակի,
Եւ՝ վերջին ալյսմ դարի,
Դէպ մեզ եկև ցնոփոխելի,
Գալ ընակիլ ի յմին տեղի,
Ի ղրան քաւարանի,
Աստուածարնակ այս տաճարի,
Ցերկնահանգէտ տանս սրանձալի,
Զոր Սաճաիին վերաձայնի,
Տկար ոգւով ի պանգըխտի,
Ծաւեալ անձամբ ողորմելի,
Փարատելոյ ճարակ չլինի
Ու ոչ մխիթար ի սոյն վշտի։

...լը, զամենայն վիշատ և զադէտս կոկծելիս ո՞ կարէ պատմել զբեկնահոնդէտ սուրբ աթոռիս, զսպառեալն յիշխանաց և ի հոգեկիր
191բ արանց, թափուր և զատարկ ի վարքմամ արդասեաց։ || Եւ. մեք ի սոյն ժամանակի եկեալ ընակեցաք ընդ հովանեաւ Աստուածածնիս, երիս եղբարքս հարազատս՝ Յովաննէս և Ղազար սոսկանուն վարդապետ, այլ միեղէն եղբայրութեամբ։ Եւ այո ոչ ըստ արժանեաց մերոց այլ թէ ինքս կամեցաւ, զի աւտար և հ[եռի] էաք յայսմ դաւառէ, և կոչեցաք յետին սպասաւոր այս զերահոչակ սուրբ ուխտիս։ Եւ սկսաք շարագրել զերկուս կտակս ի մի ամփեակ, այլ և յուսացաք ի զօրացուցիչն Քրիստոս. և գրեցաք շնորհիւ տեառն զսա անջինջ յիշատակ նախնեաց և հոգւոց մերոյ։ Արդ, գրեալ եղև սա ի ժամանակս թագաւորութեան Գէորգեա որդւոյ Բագրատ յաղթող և հզօր արքայի, զի յաւուրս սորա եղև խաղաղութիւն կողմանն Վրաց, ձեռամբ Յովաննիսի և Յոհաննիսի սիրասնունդ աշակերտի։ Արդ, աղաչեմք զձեզ հեղարար սիրով, զի որք աւգտիք ի սմանէ յիշեցէք ի գերամաքուր յաղօթս ձեր զծնդոզքս և զայլ աշխատակից եղբարքս՝ զԿիրակոս, և զՄաթէոս, և զվերոյգրեալքդ, և կողկողագին զխօք ծնաւղիկն մեր, որ է սպասաւոր այս մխաբանութեանս...։*

* Բագրատ Զ-ի որդի Վրաց Գեորգի Է. թագավորը գահակալել է 1394—1407 թվականներին։ 1399 թվականին Լանկ-Թամուրն արշավեց Վրաստան և «զամենայն արս կոտորեաց...զկանայս և զաղայս դերի խաղացոյց՝ անթիւս և անհամարս» (տես Ա 784 հիշատակարանը)։ Գեորգիի թագավորության հաջորդ տարինները նույնպես արհավիրքներով ու անընդհատ պատերազմներով տարիներ էին։ Սուրն հիշատակարանում, սակայն, գրված է, թէ՝ «Այսուհետև սորա (Գէորգեայ) եղև խորին խաղաղութիւն կողմանն Վրաց», ուստի և այն գրված պետք է լինի 1399 թվականից առաջ։ Վերոհիշյալ նկատառումներով հիշատակարանը տեղադրում ենք 1399-ի թվաշարքում, համարելով այդ տարեթիվը նրա գրության վերջին հնարավոր ժամանակագրական եզր։

784.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷՅՑ ԹՂԹՈՑ ՍԱՐԴՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՑ

Եբևան 5435

Գրիչ՝ Գրիգոր [Խլաթեցի]
վայր՝ ի վանս Սուխարայ, որ այժմ ասի Խառաբատ

ա

469բ ...Զոր և ի նոյն շնորհաց հոդոյն լրացեալ երիցս երանեալ և երջանիկ վարդապետն սուրբն Սարգիս՝ վարուժուչն և անուանի իմաստասէրն Հայոց և խորին փիլիսոփայն, որ վասն խոնարհութեան հոդոյն և լուսաւոր մտացն տեսութեան շնորհընկալ եղև յաստուածային հոդոյն: Եւ. զի Սեաւ Սարդիս անուանեցաւ, վասն զի մթնատես էր և խրթընահայեաց: Սա մեկնեաց զԳաթողիկեայս... ի Թլուականիս Հայոց ի ՉՃ. և Դ. (1154) ամին, և յայտնեաց զիմաստս հոգւոյն, որ ի նոսա, և զանձ անկապուտ եթող եկեղեցւոյ սրբոյ և ուսուցեալսէր մանկանց նորին: Եւ է սա ի պարծանս պայծառութեան Արևելեան տանս Թորգոմեան, այլ և յամենայն ազգս, որպէս և ասի բան, եթէ ի լսել զզարմանալի համբաւ սորայս գեղեցկութեան... ազգն Ցունաց, վաղվաղակի, անյապաղ վուխով տարեալ թարգմանութեամբ ի Հռոմ...:

470բ ...Այսմ երևելի և մեծ ճոխութեանս ցանկացաւ այր ոմն կուսակրօն քահանայ և մանկամիտ արեղայ զՍտեփանոս անուն, լերդահատոր եղբայր հոգևոր մատնադեղև և վրացնագիր ղբծողիս Գրիգորի, յիշելով զասացեալն ի մարգարէէն, թէ՝ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և յիշատակ բարի յԵրուսաղէմ: Վասն որոյ ստացաւ զսա, եռավաւրագ սրտիւ ետ գրել զսա մեղսամած գրչիս: Եւ ես՝ հարկեալ ի սիրոյ և յեռատարփ վախճանից նորա առ ցանկալի մատեանս և ըղձալի կտակարանս, մոռացա զտակարութիւն մարմնոյս և զաղկաղկութիւն եղկելի անձինս տառապելոյ: Եւ ձեռն ի գործ արկեալ գրեցի ըստ իմում կարի, թէև կատարելոյն անախորժելի, և յանկ հանեալ, յաւարտ սորին ժամանեալ հասի, ողորմութեամբ աստուածամաւր տիրածին կուսի, ի դառն և ի չար ժամանակիս, յորում զաւրացեալ է ի վերայ աշխարհիս կարապետ Նեռինն և արբանեակն սատանայի, մարդն անաւրէնութեան, որդին կորըստեան և ժառանգն անղնդային դժոխոց, սեղծն անագորոյն և անխնամ արեանարբուն Լանկա-Թամուրն կոչեցեալ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց անքարկանալին աստուած բարկացաւ և բարեբարութիւն նորին մեզ ի բարկութիւն դարձաւ, քաղցրն դառնացաւ, և բարին յեղափոխեցաւ: Եւ տյս Ռ.

(3) անգամ չարն այն և գաւազանն խրատու սաստիցն աստուծոյ ելեալ ի վերայ աշխարհիս պատուհասիւ։ Նախ և առաջին ելանել աստուածասաստ չարին եզև ի ՊԼԴ. (1385) ամին Թրւականիս մերում, որ ել ի վերայ Պարսից աշխարհին և աւերեալ զերեաց զՊարսկաստան և Հայաստան զամս Բ. (2), մինչ ի յաւարտ ՊԼՋ. (1387) ամին, յորում եղեն շատ աւերք, արեանց բազմաց հեղումն, և սովք, և սասանութիւնք անթիւք։

Եւ դարձեալ ի ՊԽԲ. (1393) ամին ել և էջ ի Բաբիլոն, և աւերեալ զամենայն Ասորեստան, ել յերկիրս Հայոց՝ կրկին աւերմամբ, և գերելով անց ընդ Պահակն Հոռոց, և գնաց բարկութեամբ ի վերայ
471ա արքային Հոռոց, և անդ||արար շատ աւեր և գերութիւն, և յաղթեաց նոցա։ Բայց և ինքն տկարացաւ զաւրութքն ի սովոյ, և անթիւք պակասեցան ի զաւրաց գոռողին այնմիկ։ Եւ անտի դարձաւ ընդ Դուռն Ալանաց, և գնաց յաշխարհն իւր։ Եւ դարձեալ զաւրացաւ. սպայիւք և հեծելաւք, և խաղաց, գնաց ի Հնդուստան, և անտի ևս բազում աւարաւ և փղաւք դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի տեղի իւր՝ ի Սամարղանդ։

Եւ մինչ տակաւ մի խաղաղացեալ երկիր վրքը ինչ ոգի առին մարդիկ ի սաստից ցասմանէ չարին, արքայն վրաց Գէորգի անարի յաղթութիւն ինչ արարեալ... եկն ի դղեակն Երրնջակոյ ի գաւառին Նախջաւանայ, և եհան անտի զորդի Աիմաա զանին՝ զսուլտան Տաճիրն, որ էր հսարեալ ի զաւրացն Թամուր-Լանկին ՅՊԼԵ. (1386) ամէն մինչ ի ՊԽՀ. (1399) ամ Թրւականին, զամս ԺԳ. (13)։

Վասն որոյ մրրմրռեալ գազանութեամբ կատաղին այն Լանկ-Թամուրն, և դարձեալ ել երրորդ անգամ անթիւ զաւրաւք բազմութեամբ, առաւել քան զառաջինն և զերկրորդն։

Եւ եկն, եկաց ի վերայ աշխարհին Վրաց յաշնանային յեղանակէն, մինչև յամառնայինն, ամիսս է. (7), աւելի և ոչ պակաս։ Եւ առեալ բաղում ամրոցս, և սպան ղրաղումս ի նոցանէ, մինչ գրեթէ զամենայն արս կոտորեաց, ղորոց զկանայս և զտղայս գերի խաղացոյց, անթիւս և անհամարս։ Որոց տեսողքն աղիողորմ աղեխին, ոչ միայն քրիստոնէից այլ և յայլասեռից, որք տեսանէին զայնպիսի անմեղ զառինսն մատնեալ ի ձեռս արիւնախանձ և մարդադէմ գազանացն, որ ոչ կանանցն խըղճային, և ոչ տղայոցն ողորմէին, ոչ ի հիւանդսն գթային, և ոչ ի կարիսն նայէին, ոչ ի յալեացն հարկէին, և ոչ ի մատաղ մանկունսն խնայէին, այլ անողորմաբար հետիոտս տանէին՝ մերկ, բոկոտն և գլուխ ի բաց։ Եւ որք ոչ կարէին գնալ՝ քարամբք սպանանէին և անցեալ գնային։ Եւ որք գայնպիսի կրսկիծսն տեսանէին, ասէին լերանց, թէ՝ անկերուք ի վերայ մեր, և բլրոցն, թէ՝ ծածկեցէք զմեզ։

471բ Արդ, յոյս գառն աւուրքս և յահագին ժամանակիս յանկ ելեալ կատարեցաւ սա, ի Թրւականիս մերում ՊԽԹ. (1400) ամի, ի հայրապետութեան տեառն Դաւթի նահանգիս Ախթամարայ, ի գաւառիս Քաջբերունեաց ի վանս Սուխարայ, որ այժմ ասի խառաբաստայ և այլաբանի խեռաբարձայ, Ընդ հովանեաւ հոյակապ և հռչակաւոր,

բարձրարևթ և պայծառաշէն, զըմբեթարդ և հրաշագեղ, դեղեցկայարմար սուրբ տաճարիս, որոյ անուն ամենամաքուր և սուրբ աստուածածին Կուսին Մարիամու կառուցեալ կայ, Ծառայնորգուբիւն սուրբ սխտիս հնգահոդի և բարի հովւի տէր Զաքէոսի եպիսկոպոսի՝ շինարարի և բարեսիրի, առ ոտս երջանիկ և բարեբարուոյ, հանդարտ և հըմտաւարժ վարդապետի, ամենագով և հանճարեղ, գիտնական, իմաստնական, և արդիւնաւէտ, մեծանուն Սարգիս բարունապետի։

Աըղ, գրեցաւ սա ի վերոյասացեալ սուրբ ուխտին Խառաբաստայ։ Եւ վասն վըգովմանց աւուրցս, որ զաւրքն Լանկ-Թամուրիկ պատերազմաց և աւերման աղագաւ անցեալ խաղացին ի տունն Գամրաց։ Եւ մեր խրտեալ ի կայանից մերոց իջաք ի յԱորնջիկ, և անդ գաղարեալ կեցաք աւուրս, և է. (7) տետրիկ անդէն գրեցաւ, և կատարեալ վճարեցաւ լուսազարդ դիրքս ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի և Անանիայի։

Ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա և օգտիք ի սմանէ, յիշեցէք ի Քրիստոս սրտի մտաւք և բարի կամաւք զվերոյասացեալ ստացող սուրբ գրոցս զՍտեփաննոս աբեղայ և զգծող սորին զԳրիգոր՝ խնդրող բանի։ Նայ և զնաչատուր սրբակրաւն քահանայ, որ վասն քաբտիս հող տարաւ և ի գին թղթիս մասնաւորեցաւ, Ուրացցի նաչատուր երէցն ի Բաղիշոյ, այլ և զՅակոբ սարկաւագ կոկիչ քարտիս, և զՍարգիս քահանայ կազմող գրոցս յիշեցէք ի բարի, յիշողն յիշեալ եղիցի, և որ զաստուած-ողորմին ասէ, աստուած նմա ողորմի։ Մանաւանդ սիրելի եղբաւրն մեր Յովաննէս աբեղայի, որ լըբջմիա սրտիւ և յաւժար կամաւք զաւրինակն շնորհեաց։ Ծաշնան, հրորտից ամիսն ի ԻԳ. (13), յաւուր յինանկամտին սկսեալ եղև գիրքս, և յամոան հրսրտից Լ. (30) աւարտեցաւ, յաւուր հինգշաբթոջ, աթոռոց Աստուածածնին։

Ծաղկող՝ Ներսէս

բ

453ա ՋՆերսէս պատանի՝ նրկաբաւղ խորանիս՝ եղբայր վարպետ Յովաննիսիւ, յիշեցէք։

Ստացող՝ Սանւէլ

գ

128ա Նաև զստացող գրոցս՝ զայրն բարեմիտ, զմիակեցն Սանւէլ և զքոյրն իւր զՅիրանց, որ զողջախոհութեամբ անցուցին զկեանս իւրեանց Ճացևալ յամուսնոց, և այլ ոչ զուղեցան ըստ նմանութեան տատրակի, կացին, Ճացին շատ ամաւք չէն տուն ունելով իւրեանց աշխատութեամբն, և բաղում արդիւնս առնէին կարաւտելոց և չքաւորաց՝ ողորմութեամբ և փոխատուութեամբ աղքատաց և տնանկաց, վանաց և ուխտականաց, կարգաւորաց և շրջականաց՝ զամենեցուն կարիս կատարեալ և զկարաւտութիւնս լրցուցեալ, աստուած իւր ամե-

* Սանվելը ձեռագրի երկրորդ ստացողն է, հնագրական տվյալներով նրա հիշատակարանը գրված պետք է լինի 1400-ից մի քանի տարի միայն հետո։

նառատ ողորմութեամբն քաղցր աչաւք հայի ի Սանւէկն և ի Տիրանցն, և ի ծնօղս նոցին՝ ի Կիրակոսն և յՀռոպղնայն, և ի զաւակս նոցին, ամէն։

785.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Երևան 346

Գրիչ՝ Յովաննէս
վայր՝ Հիզան ֆաղաք

ա

555բ ...Եւ արդ, ես՝ յետինս ի մանկունս եկեղեցւոյ և տրուպս ամենայն վարդապետաց՝ Յովհաննէս վարդապետ,* ցանկացող եղէ աստուածախուս և եղեմական ծաղկաւէտ բուրաստանիս՝ աստուածաշնչի, և ետու դրել զսայ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնաւղացն իմոց...։

Եւ արդ, դրեցաւ սուրբ աւետարանս այս ձեռամբ մեղապարտ Յովաննիսի անիմաստ և ախմար դրչի, յ[ը]նտիր և ի ստոյդ աւրինակէ՝ կենաւք տառապանաւք և բաղում պանդխտութեամբ, ի մեծ թուիս Հայկազեան սեռի ՊԽԹ. (1400), ի զաւառիս և ի քաղաքիս Հիզան կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնին, և սրբոյն Սարգսի զաւրավարի, և Գէորգեայ սակաւ հեռի, ի հայրապետութեան Կիլիկեցւոց տեառն Կարապետի, և ի մերոյ հայրապետութեան Ռշտունեաց, որ յԱղթա[մա]ր կղզի՝ տեառն Դաւթի՝ եղբաւրն տեառն Զաքարիայի, զի նման հնոյն մարգարէի վկայական արեամբ վսխի յանաւրինաց։

Որոգայթի բռնեցաւ յանկարծակի,
Բնաւ չկայր մեզ յիւր մարմնի,
Այլ անպատճառ նայ քարկոծի,
Բորբոքեցաւ հուր յՈստանի,
Բարկացաւ տէր նորս Իսրայէլի,
Այլ տէր աստուած ամենայնի
Զսէր Դաւիթ պահէ անսա[սան]էլի։
Եւ թագաւոր մեղ չերևի,
Որ ի մատեանս գծագրէի.
Թամուր-Լանգին Սըմըրղանդի,
Որ կարծրացաւ նայ յաշխարհի,
Աբճանացեալ դէմ ամէնի։
Ալանաց Դուռն բացուի,
Այն, որ վակեալ էր վաղեմի,
555ա Թամուրն եկեալ չար ‖ ուժգնակի
Եւ գկծևացոյց զամէն հոգի։
Եկեալ եհաս ի Վրաստանի,
Էառ բաղում առ և գերի։
Աշխարհս ամէն կայ յերերի,
Որպէս ճնճղուկ, որ ի ճղի։

* 1բ և 441բ էջերում կան այս Հովհաննես վարդապետի նկարները։

Աչրդ, յայսմ նիզ ժամանակի,
Որ բնաւ դառն է և լուի,
Եղև լրումն այսմ տառի,
Աստուածաշունչ սուրբ մատենի,
Որք հանդիպիք դուք այս դանձի,
Եւ կամ աւդաիք սիրով սրտի,
Միշտ յիշեսջիք անձանձրալի
Զմեծն Յովհաննես բարունի
*Եւ զծնաւղսն իւր ըստ մարմնի...։**

Ընդ նոսին և դիս՝ զանպիտան և զախմար դրիչ զՅովաննէս սուտանուն քահանայ, և զհայրն իմ զմկրտիչ քահանայ, որ տաբաժամ վախճեցաւ ի Քրիստոս և սուղ անմխիթար եթող ինձ..., յիշեսջիք զնա, զի յոյժ բարի էր ընութեամբ, և ես վասն այնորիկ զտկար անձս դատեցի, զի սայ և մեզ յիշատակ լիցի, և զմայրն իմ, և զեղբարսն իմ՝ զՋաքարայ քահանայ և զներսես սարկաւադ, և զերախտաւոր մեծ մամն մեր զելխաբուն, որ անոյց զմեզ, և զամենայն արեան մերձաւորսն մեր, և զԳրիգոր քահանայ, և Ստեփաննոս քահանայ՝ որդի նորին, Յիշեցէք ի Քրիստոս զբարեսէր և զընորհազարդ տանուտէրն՝ զպարոն Ամիրմուլէճ, և զծնողսն իւր, և զծաղկազարդ սրդիսն իւր՝ զԱտտուածատուրճ, և զպարոն Ումեռճ, և զկենակիցն իւր զՄօրիմելէճ, որ զքուղքս շնորհեցին զրոցս, եղիցի դիրքս այս յիշատակ սոցին. և ընկալցի զսայ տէր, որպէս պատարագ անուշ, ընդ Աբարեացն և ընդ Սաբայեանցն։ Յիշեցէք ի Քրիստոս և զԴաճիկ իմաստայեզդ տանուտէրն, որ զվարձ գրոցս, զոր ի նայ յանձնեալ, որ անպակաս ի մեզ հասոյց։ Այլ և սխալանաց և խոշորութեան զրիս անմեղադիր լերուք, զի յոյժ աառասպանաւք զրեցի զսայ, և ձանձրանայի յոյժ, և զսխալանսն ի սմայ եղբայրաբար ուղղեցէք։ Եւ աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, տացէ ձեզ՝ յիշողացդ և մեզ՝ յիշեցելոցս առհասարակ զկեանսն անվախճան և զփառսն անպատում, ամէն։

բ

489բ *... Գրեցաւ սա ի քուականութեանս հայոց ՊԼԹ. (1390), ի յանապատս Նորշինայ, որ մանուկ սուրբ Նշան կոչեն, ընդ հովանեաւ սորին և այլ սուրբ եկեղեցեացս. ի վայելումն սայ եղիցի Յովաննէս բարունապետին...։***

գ

Աւաղ ժամանակս ասեմ՝ զտատանեալս յալեկոծութիւն, ի յանպարտելի ազդէն յանողորմ ի թամուր-լանգէն։

---

* Մնողների անվանց լրացման համար դատարկ է թողված մեկ և կես տող։

** Սույն հիշատակագրության տվյալով ձեռագրի ընդօրինակությունն սկսված է եղել դեռևս 1300 թվականին, բայց ավարտվել է 10 տարի անց՝ 1400 թվականին (տես՝ էջ 630)։

Աստէն եմք մեղօք խրտտեալ,
Անպատում սիրւ փախուցեալ,
Ա՛յ, վա՜յ, ընդդէմ անդէնին կապեալ,
Ուր անշէջ հուրըն կայ ի վաո,
Վասն աստուծոյ դինահար։
Զիս յիշ[եցէք] ի Քրիստոս։*

786.

ՄԱՇՏՈՑ

Ներան 6827

Գրիչ՝ Սիմէոն
վայր՝ Տաքև

363բ ... Արդ, ցանկացաւք եղնալ աստուածային և հոգեկեցոյց մատենիս ոմն անուն Երեմիա և սարկաւագ, ըստ բանի մարգարէին, որ ասէ՝ երանի, որ ունի զաւակ ի Սիոնէ, փափագեցաւ տենչմամբ սրտին և ստացաւ իւր յիշատակ յաւիտենից և առիթ փրկութեան հոգւոյ։

364ա Արդ, գրեցաւ աստուածային գանձարանս, || որ կոչի Մաշտոց և Քահանայաթաղ՝ ամենայն որպիսութեամբ, ի սուրբ ուխտս և յաթոռս Եւստաթէի սուրբ առաքելոյս, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և սուրբ Լուսաւորչիս, և այլ միահամուռ սրբութեանցս գումարելոց աստ, իշխանութեան տեղոյս ի բարի շառաւիղէ ճեացեալ պարոն Սմպատի և Բաւրդելի, զոր աստուած ընդ երկայն աւուրս պահեցէ զսոսա, ի յառաջնորդութեան ուխտիս քաջ և տրի հսկողի, բարւոյնց պետի և ընդդիմի հարկանողի, ուղղափառութեամբ և ամենայն ճարտասանութեամբ, հերձուածողացն գնդի [Դրիգորի Տաքևացւոյ], ի գառն և յանձուկ ժամանակիս և անիշխանութեան աշխարհիս Հայոց, որում ի մեծ վտանգի կային քրիստոնեայք ի ձեռն այլազգաց, որ կոչին
384բ Ղզադայք։ || Ձեռամբ մեղսամակարդ և զառածեալ անաւրէնութեամբ և փցուն և անարժան գրչի Սիմէոնի և պիտակ աշակերտի, որ զանունս միայն ունիմ, և ամենայն բարի գործոց թերի։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմք զամենեսեան ըղձմամբ սրտիս, որք հանդիպիք սմա յաւրինակելով կամ կարդալով կամ տեսութեամբ, յիշեցէք զստացաւդ սորին՝ զվերասացեալ մանուկն զՆերեմիա, և զամենայն արեան մերձաւորան իւր ի Քրիստոս աստուած յոյսն մեր, նախ՝ զպապն Ստեփաննոս, և զհայր նորին Սարգիս, և զմայրն Ձհանխաթուն, և զեղբարսն՝ զՅովաննէս և զՍ՝կրտիչ և զԹովմա, և աստուած զձեզ յիշէ։ Նաև զիս՝ զանարժանս, արժանի առնել մխոյ տէր ողորմի,
365ա թերևս թողութիւն զոհից բաղում յանցանաց իմոց, և խոշոր || ութեան գրոյս անմեղագիր լերուք, զի այսչափ էր կար մեր, զոր և աստուած վայելել տացէ մինչև ի խորին ծերութիւնն, զի ստացաւ զսա ի հալ արդեանց իւրոց բազում աշխատութեամբ և սիրով։ Գրեցաւ ի Թուաբերութեանն հայոց ՊԽԹ. (1400)...։

* Գրված է 198ա էջի ներքին լուսանցքում։

787.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Բրևան 84

Գրիչ՝ Ցոհաննէս Ապարաներեցի

ա

44ա Փառք... որ ետ կարողութիւն տկարութեանս իմո հասանել յայսմ նվաղ ի փառէ Քրիստոսի, ի թվականիս Հայկազեանս ոմարիս ՊԽԹ. (1400), և ի թվին մարդեղութեան տեառն մերոյ և փրկչին Ցիսուսի Քրիստոսի ՌԴՇ. (1400), և ի թագաւորութեանն Թամուրին և որդո նորա Միրանշահին: Ցայսմ ամի չարժեցան զօրքն Շամա, որպէ Իլդրումին ի վերայ Թամուրին:

բ

121ա Զնուաստս և զապիկար գրիչս՝ զՔրա Ցոհաննէս Ապարաներեցի, յիշեա Քրիստոս աստուած ի քո սուրբ արքայութիւնդ:

788.

ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑԻՈՑ

Բրևան 3106

Գրիչ՝ Ցովաննէս
վայր՝ Տաթեւ.

491ա | | | առ դուրս | | | սուրբ Նշանացս և աստուածաբնակ [առաճար]ացս սուրբ առաքելոյս Եւստաթէի, և սուրբ Աստուածած[նի, և Լ]ուսաւորչին մերոյ Գրիգորի, առ ոտս վերոյ[ասացեալ վարգա]պետին իմոյ [Գրիգորի], որ սնուցանէ մտերմաբար զմանկունս [եկ]եղեցոյ կրկին ուսմամբ | | | տեսականաւն և գործ[նակ]անաւն, ձեռամբ բազմամեղ անձին Յովաննու պ[իտ]ակ աշակերտի, ի վայելումն մանկանց Սիոնի:

Արդ, [ով] դասք լուսեբամից, որք հանդիպիք ի սմա տեսմամբ, կ[ամ գ]աղափաբելով, և կամ ընթերցմամբ, յիշեցէք... յաղաւթս ձեր զանարժան գծողս, | | | գծնողն իմ, և զվարպետն իմ՝ Աարգիս կուսակրաւն աբեղայ, և սխալանացն անմեղադիր լերուք...:

Արդ, գրեցաւ սա ի թվիս ՊԽԹ. (1400):*

* Պահպանվել է հիշատակարանի միայն վերջին մասը, չափազանց մաշված ու դժվար ընթեռնելի վիճակում:

ԺԴ. ԴՈՐԻ

ԱՆԹՎԱԿԱՆ
ՀԻՔԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ՀԻՄՆԱԴԿԱԳՈՒՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՑ
ԸՕՐՈՒՐԵՆԱԿԱՆ ՀԱՐԱԳԱՄՄԱՐ

789.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Վենետ. 170 Մարգ. 8ուց. Ա, էջ 714

Ծաղկող՝ Անանիա
վայր՝ Մելիտինոյ վանք

295ա Ես՝ Անանիա դպիրս, որ ծաղկեցի զսուրբ աւետարանս ի դուռն ի սուրբ Լուսաւորիչն ի Մելիտինոյ վանքս, և առաջին ծաղիկս այս էր, որ ուսայ իր վարդապետէն իմոյ տէր Սիմեովնի՝ արհիեպիսկոպոսի այս ուխտիս։ Մի մեղադրէք, զի առաջին ուսումս և ծաղիկս այս էր, և ծաղկագրերն աւետարանին գրողն հաներ [էր], ես զքովի ծաղկնին եմ հանել, ով եղբարք, զի կարս մեր այս էր։

790.

ՀԱՄԱՌՕՏ ԺՈՂՈՎՈՒՄՆ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԵՍԱՑԵԱՑ, ԳԻՈՐԳԱՑ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՑ

Երևան 1209

Գրիչ՝ Անդրեաս

218ա Աւարտեցաւ քրիստոսահիմն մարգարէաշէն այս տառ՝ սուրբ և աստուածային երգարանս ի վախլուճն քրիստոսարնակ և աստուածային դանձուցն վերակացու և ուղղափառ տեսուչին Վարդան վարդապետի, զի աստուած վաելել տացէ նմա աղօթիւք. նաև զանպիտան ծառայս՝ զԱնդրեաս գրիչ յիշեսջիք ի տէր, և զծնողսն իմ։ Ողջոյնութիւն զրիս և սգալութիւն անմեղադիր [լերուք], զի շուտ ու ազեկ ոչ լինի, խոստ շտապեցուցին, ու շտապով մեր կարս այս էր։

791։

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ ԵՒ ԱՑԼՆ

Երևան 824

Գրիչ՝ Անկուկ
վայր՝ Երուսաղէմ

ա

257բ Գրեցաւ հոգեշահ բանքս ի յաստուածակոխ քաղաքս Երուսաղէմ, ընդ հովան[ե]աւ սուրբ Հրեշտակապետացս, ձեռամբ անարժան և մեղսաթաբախ անձին, որ Անկուկ* վերակոչիմ։ Ցերես անկեալ աղաչեմ զամենեսեան, որք վայելէք կամ աւգտիք ի սմանէ, յիշեցէք զող | | |

* Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ում չկա այս անունը։

Բ

35բ Ցիշեսցուք զստացող ճառիս՝ զԳրիգոր մխ[յնակեց], և զծնօղս իւր ի Քրիստոս, և զողորմիլի Անկուկս և զիմսն ամենայն, և աստուած զձեզ յիշէ, և նմա վառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

792.

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԴՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

Երևան 6142

Գրիչ՝ Աստուածատուր

154բ Աղզ, ես՝ Գուրգ Մուղդաղիս ետու գրել զաստուածաշունչ ճառերս ‖ ի սուրբ վարդապետէն Գրիգորէ ասացեալ, յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց, և ի վայելուչն զաւակաց իմոց՝ Ցովաննիսի և Մլքոյ, զոր տէր աստուած անփորձ պահեսցէ ղնաստ, Որք հանդիպիք սմայ կարդալով, յիշեցէք ի բարի զմեզ, և աստուած ողորմի ամենայն քրիստոնէից և զ[յ]իշողացն, որ զմեզ յիշեն, և ինձ մեղաւորիս Աստուածատրոյ, ամէն։

793.

ՑԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑ ՆԵՄԵՍԻՈՍԻ ԵՄԵՍԱՑԻՈՑ

Երևան 417

Գրիչ՝ Բասիլ

143բ Ընդ նոսին և ղյետնեալս ի բոլոր բարեաց գործառնութեանց, զսորին զծող՝ զԲասիլ, որ բազում ամօք ծառայեցի զրոյն և ի հոգին ոչ ժամանեցի, աղաչեմ յիշել ի տէր, ո բարեմիտ պատահողք սմին, նաև զաշակերտն իմ զԳրիգոր, և որ առատն է յամենայնի յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի, Եւս և զծնողսն իմ և զեղբարսն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ աղաչեմ յիշել ի մաքրափայլ յաղաւթս, զի և դուք յիշեալ լինիք յողորմութիւն աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

794.

Մ Ա Շ Տ Ո Ց

Երևան 4652

Գրիչ՝ Գրիգոր

ա

Փառս տացուք հաւր անեղին...*
178ա Այլ և պատմեմ ձեզ բան բարի,
Որ յայս կտակս է գովելի,
Մաշթոց անուն վերայձայնի,
Գործ Մեսրոպայ վարդապետի,
Որ է հայր Հայաստանի

* Բաց ենք թողնում 13 անհետաքրքիր տող։

Ցետ սուրբ Գրիգոր Լուսաւորչին:
Այլ և զգիր Հայաստանին
Նմա շնորհեաց աստուած հոգին։
Նմանեցաւ ոա Մովսէսին,
Ի աստուածագիծ սուրբ տախտակին
Գրեալ մատամբն աստուածային,
Ի յաւրինակ ծննդեան կուսին,
Որ վառեցաւ ի մորենին,
Նման կուսին աստուածածնին։
Նոյնպէս և սայ առեալ ղոգին
Տևիլ ետես յարքուն ժամին,
Զի ձեռն ելեալ բարձր ի վիմին
Մատամբն գրել յերկաս պալին։
Զոր նշանեալ սուրբ Մեսրովպին,
178բ Զգիր Հայկազան՝ ըստ || Մովսէսին,
Երեր պաշար մերում լեզուին,
Որ բերէ գհեք մերում բառին։
Ապա առեալ թարգմանեցին
Սուրբն Սահակ ընդ Մեսրովպին։
Ցայնժամ սկսեալ սահմանեցին,
Զգիրս աւրինացն, որ ի կարգին։
Զոր և պատմէ գիրք առակին,
Զլուսեղէն սիւնքն եւթնեքին։
Նախնի պսակն է առաջին,
Որ յաստուծոյ առաջն առին,
Զի գՀողամայն և ղեւտին,
Մինչև ի սպառ ի շար եղին։
Նախ զխաչառհնեայն առաջք եղին
Եւ ղկնունք[ը]ն հետ նորին.
Թէպէտ պսակն է առաջին,
Այլ հետ կնքոյն ի կարղ եղին,
Ցանդի խաչիւն հաստատի
Զինչ աւրինաց բան կայ յերկբի,
Եւ այլ ամէնն, որ կարգի,
Գրեալ ի գիրս Մաշթոցի,
Հնդրեալ ձեռամբն Մեսրովպի
Եւ Սահակայ սուրբ Պարթևի:*
Բարեխաւսութեամբ սոցին
Ցիշեայ զհոգի տէր Պետրոսին,
179ա Ցանդոյն ի || դասս աջակողմին
Զիւր ծնաւղին՝ զտէր Թաւրոսին,

* Գրչին թյուրիմացութեան մեջ է. «Մաշտոց» անվամբ մեզ հասած ծիսարանը կազմավորվել է ոչ քե ն. դարում՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակի, այլ Թ. դարում՝ Մաշտոց կաթողիկոսի (893—898) կողմից։

Եւ զՅակոբոս եղբայր Նորին,
Եւ զտէր Թաւրոս եղ[բ]աւրորդին։

Բ

31ա Ցիշեսդի ի Քրիստոս
Նախկոպոս տէր Պետրոս,
Եւ քահանայ հայրն իւր Թորոս,
Եղբայրն իւր Յակորոս,
Ու եղբաւրորդեակն Նորա Թորոս:

Գ

67ա Զաէր Գրիգոր զծողս յիշեա, ով եղբայր։

795.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ ՆԵՐՍԻՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՑ

Թուական 1143

Գրիչ՝ Գր[իգոր]

147բ Զաստուածասէր և զբարեպաշտ իշխանն՝ զպարոն Կոստաւնտին՝ զստացաւղ գրոյս յիշեցէք ի Քրիստոս, և զիս՝ զմեղաւոր գրիչս Գր[իգոր] աղաչեմ յիշել ի տէր, և աստուած զձեզ յիշէ։

796.

